

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՕՐՊՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ՀՈՒՄԱՆԻՏԱՑՔԵԼԱՂԱՅԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀՈՅՔԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՕՅՔԻՆ՝

www.freebooks.am

ԸՆԴՐՉԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՕՅՔԻՆ:
ՑԱՆՎՈՒՆՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԵՐ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

Հայկազ
նու
Յէկ զիշեր



ընտիր հեքիաբաներ

Երևան «Հայաստան» 1990

ԳՄԴ 82 . 88 /5/
Հ 140

Ռուսերենից թարգմանեցին
ԷԻՎԱՐԻ ԱՂԱՅԱՆԸ
ՎԱԶԳԵՆ ՏԱԼՅԱՆԸ

Խմբագիր՝ Ս. Բ. Հայրապետյան

Հ 140 Հազար ու մեկ գիշերի ընտիր հեքիաթներ /Ռուս. թարգմ. էդ.
Աղայանը, Վ. Տալյանը/.— Եր.: Հայաստան, 1990.— 608 էջ:

Հ $\frac{4700000000}{701 (01) - 29}$ 61-89

ԳՄԴ 82 . 88 /5/

ISBN 5-540-00546

© թարգմանված է հայերեն.— Աղայան է., Տալյան Վ. 1959, 1990

ՀԱՋԱՐ ՈՒ ՄԵԿ ԳԻՇԵՐ

Ավելի քան երկու հարյուրամյակ է անցել այն օրից, երբ Եվրոպայում առաջին անգամ ծանոթացան «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթներին, բայց սրանք մինչև օրս էլ սլահապանել են իրենց հմայքը: Համաշխարհային գրականության մեջ շատ քիչ գրքեր կգտնվեն, որ նույնքան սիրելի լինեն ընթերցողներին, ինչքան Շահրազադեի նշանավոր հեքիաթները: Մենք մանկությունից սկսած հիշում ենք նրա հերոսներին՝ ուրախ, ձեռներեց Ալա էդ-դինին, խիզախ, անհազ հետաքրքրասեր Մինգիբադին, խորամանկ, ծակամուտ Գալիլային: Ավելի հասուն տարիքում մեզ գերել է Ազիզայի հեզահամբույր և ջերմորեն սիրող կերպարը, որը մինչև մահ սլահապանեց հավատարմությունն իր զգացմունքի նկատմամբ, մեզ ծիծաղեցնում է «լռակյաց» սափրիչը:

Գծվար է ասել, թե «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի լավագույն հեքիաթներն մեջ ինչն է ավելի շատ գրավում մեզ՝ սյուժեի հետաքրքրությունը, երեակայականի և իրականի հրաշապատում հյուսվածքը, միջնադարյան Արաբական արևելքի քաղաքային կյանքի կենդանի պատկերները, գարմանալի երկրների նկարագրությունը, թե՛ հեքիաթներում գործող հերոսների ապրումների պայծառությունն ու կենդանությունը, իրադրությունների հոգեբանորեն արդարացի լինելը, պարզ ու որոշակի բարոյախոսությունը: Հիանալի է նաև հեքիաթների վառ, պատկերավոր և հյուսված, երկդիմի ու անավարտ արտահայտություններից դերծ լեզուն: «Գիշերների» լավագույն հեքիաթների հերոսների խոսքը վառ կերպով անհատական է, նրանցից ամեն մեկը այն սոցիալական միջավայրին հատուկ ոճն ու բառապաշարն ունի, որից նրանք սերել են:

«Հազար ու մեկ գիշերի» ժողովրդի ծոցում ծնված առավել արժեքավոր պատմրվածքները, ինչպես իսկական ժողովրդական ստեղծագործության պատուհներ, արտահայտում են աշխատավոր մասսաների երազանքները, նրանց ձգտումներն ու իդեալները:

Հենց այս բոլոր արժանիքների համագրությունն է, որ անմար փառք է ապահովել «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների համար, պայմանավորել է դրանց ազդեցությունը շատ գրողների ու պոետների ստեղծագործության վրա: Ե՛վ Ռուսաստանում, և՛ Արևմտյան Եվրոպայում «Հազար ու մեկ գիշերը» շատ ու շատ համակրողներ ու ընդօրինակողներ է գտել: Արաբական հեքիաթները բարձր էր գնահատում նաև Պուշկինը: Ինչ բան են, ուրեմն, «Հազար ու մեկ գիշերը», ե՛րբ և ինչպե՛ս են նրանք ստեղծվել:

«Հազար ու մեկ գիշերը» մի ժողովածու է արաբական հեքիաթների, որոնք միավորված են դաժան թագավոր Շահրիարի պատմության շրջանակի մեջ, մի թագավորի, որը ամեն օր նոր կին էր առնում և առավոտյան դիմ սպանում նրան: Ու երբ Շահրիարի թագավորության մեջ այլևս չահել կին չմնաց իր վեզիրի դուստր Շահրազա-

գինց բացի, թագավորին ներկայանալու սրա ժամն էլ եկավ: Որպեսզի իբեն փրկի, Շահրազադեն սկսեց հեքիաթ պատմել և առավոտյան դեմ ընդհատեց ամենահետաքրքիր տեղում: Ցանկանալով մինչև վերջ լսել հետաքրքիր պատմությունը, Շահրիարը հեաաձգեց Շահրազադեի սպանությունը: Երեկոյան այդ հեքիաթը ավարտելուց հետո, Շահրազադեն սկսեց մի ուրիշը և նորից կանգ առավ հեքիաթի մեջտեղը: Այսպես շարունակվեց հազար ու մեկ գիշեր: Այդ ժամանակվա ընթացքում Շահրազադեն երեք որդի ունեցավ, և Շահրիարը որոշեց շապանել նրան:

Այսպիսին է այն հեքիաթը, որ բաց է անում և ավարտում է «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուն այն տեսքով, ինչ տեսքով որ հասել է նա մեզ:

Շահրիարի և Շահրազադեի պատմությամբ շաղկապված հեքիաթների գրքի մասին եզած առաջին գրավոր տեղեկությունները մենք գտնում ենք X դարի արաբ մասնագետ ան-Նազիմի երկերի մեջ: Ան-Նազիմն այս գրքի մասին խոսում է որպես վաղուց և լավ հայտնի ստեղծագործության մասին: Գեոևս այն ժամանակներում արաբական հիմքի վրա առաջացած ժողովածուի պատմությունը մոռացվել էր, և մարգիկ այդ գիշերը պարսկերենից թարգմանված էին համարում: Հիշյալ մատենագետի նշած «Հազար գիշեր» անունը կրող ժողովածուի ցանկը և բովանդակությունը մեզ հայտնի չեն, սակայն շաղկապող հեքիաթը այդ գրքում առկա է եզել:

Հետագայում ժողովածուի աստիճանական զարգացումը շարունակվել է: Նրա շատ հարմար շրջանակի մեջ տարրեր ժամանակներում գրվել են տարրեր ժանրի ու տարրեր սոցիալական ծագում ունեցող նորանոր հեքիաթներ: «Հազար ու մեկ գիշեր» անվան տակ տարածված էին բազմաթիվ պատմվածքներ, որոնց կազմողներն ու հավաքողները դրանք գրի առնող պրոֆեսիոնալ հեքիաթասացներ էին, իսկ հետագայում՝ գրավաճառները: Ժողովածուն իր վերջնական տեսքն ստացավ Եգիպտոսում XIV—XVI դարերում, իսկ գրա գրական խմբագրումն ըստ երևույթին ավելի ուշ ժամանակ է կատարվել: Գրա համար էլ այն փորձերը, որոնք նպատակ ունեն որոշելու, թե այս կամ այն հեքիաթն իր նախնական վիճակում ստույգ երբ և որտեղ է առաջացել, դատապարտված են անհաջողության:

Այսպիսով, «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուն առանձին հեղինակի կամ կազմողի ստեղծագործություն չէ. դրա ստեղծողը ժողովուրդն է: Հեքիաթների սյուժեները հայտնի են շատ հին ժամանակներից և վաղուց դարձել են արաբական բանահյուսության սեփականությունը:

«Հազար ու մեկ գիշերը» ուսումնասիրելու ժամանակ սահմանված են լինում ասեն մի հեքիաթ քննել առանձին, որովհետև բովանդակությամբ դրանք մեկը մյուսի հետ կապված չեն: Սակայն որոշ հեքիաթների մեջ կարելի է ընդհանուր գծեր նկատել. որոնք թույլ են տալիս թեկուզ պայմանականորեն դրանք մի խմբի մեջ միավորելու, ինչպես ստեղծման ժամանակի, այնպես էլ այդ հեքիաթը ծնող սոցիալական միջավայրի տեսակետից:

«Հազար ու մեկ գիշերի» հնագույն հեքիաթների թվին պետք է դասել այն պատմվածքները, որոնց մեջ ամենից ավելի ցայտուն է արտահայտված ֆանտաստիկայի տարրը և գործում են մարգկանց գործերում ակտիվորեն մասնակցող երևակայական էակները: Այդպիսի հեքիաթներից են, օրինակ, «Ձկնորսի ու ոգու հեքիաթը», «Սևափայտե ձիու հեքիաթը»: Այդ պատմվածքներն ըստ երևույթին արդեն մտնում էին «Հազար ու մեկ գիշերի» ավելի վաղ գոյություն ունեցած ցանկի մեջ և ժողովածուից մյուս ժողովածու են անցել, ենթարկվելով գրական մշակման: Այս են վկայում այդ խմբի հե-

քիաթները և՛ լեզուն, որ առանձին նրբութեան հավակնություն ունի, և՛ բանաստեղծական մեղքերումների առատությունը, նորոք տեղ-տեղ, անկասկած, մտքված են բնագրի մեջ, արտագրողների կողմից:

Ավելի ուշ խմբի ծագում ունեն այն հեքիաթները, որոնց մեջ արտացոլված են միջնադարյան արաբական առեարական քաղաքի կյանքն ու կենցաղը: Այդ նովելների հիմքում սովորաբար ընկած է սիրային ինչ-որ խճճված պատմություն, որը ծանրաբեռնված է շատ ու շատ արկածներով: Այդ պատմության մեջ գործող անձինք մեծ մասամբ առևտրական և արհեստավորական ավագանիի շարքին են պատկանում: Այս խմբի հեքիաթները լեզվով ու ոճով հրաշապատմաներից ավելի հասարակ են, սակայն դրանց մեջ էլ շատ կան շափածո մեղքերումներ, որոնց մեծ մասը տարփալից բովանդակություն ունի: Սույն խմբի մեջ ղեկավարված քաղաքային այդպիսի նովելների լավագույն նմուշների թվին են պատկանում «Սիրողի ու սիրվողի պատմությունը», «Երեք խնձորի պատմությունը», որն իր մեջ պարունակում է՝ «Նուր-էդ-գինի և Շիմս-էդ-գինի հեքիաթը», ինչպես նաև «Կուզիկի հեքիաթը» մեջ միավորված պատմվածքների մեծ մասը:

Ու, վերջապես, «Հազար ու մեկ գիշերի»՝ ժամանակի տեսակետից ամենաուշ ստեղծված պատմությունները խաբերանների կյանքը պատկերող ժանրի հեքիաթներն են, որոնք ժողովածուի մեջ են մտցվել Եզրիպոսում, վերջին խմբագրությունների ժամանակ: Այս պատմվածքները նույնպես հորինվել են քաղաքի բնակչության միջավայրում, բայց արտացոլում են իրենց գոյությունը պատահական վաստակով պահպանող մանր արհեստավորների, օրավարձով աշխատող բանվորների ու շքավորների կյանքը: Այս հեքիաթների մեջ ամենից ավելի ցայտուն կերպով է արահայտված արևելյան ֆեոդալական քաղաքի բնակչության կեղեքված խավերի բողոքը: Այսպես կոչված խաբերայական հեքիաթների համար բնորոշ է կծու հեզնանքը, աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներին և հոգևորականությանը ամենախիզճուկ վիճակում ցույց տալը: Այսպիսի պատմությունների մեծ մասի սյուժեն բարդ ու խճճված խարդախությունն է, որ ու այնքան կողողտելու, որքան աուժածին հիմար վիճակի մեջ ղնելու նպատակ ունի: Խաբերայական հեքիաթների փայլուն նմուշներ են «Գալիլա-հորամանկի ու կահիրեցի Ալի-Ձեյրակի պատմությունը», որ լի է ամենախճճված ու աներևակայելի արկածներով, ինչպես նաև «Այա-էդ-գինի Աբու-շ-Շամաթի հեքիաթը», «Աբու-Քիրի և Աբու-Սիրի հեքիաթը», «Մաշա-կար Մարուֆի հեքիաթը»:

Այսօրինակ պատմվածքները «Հազար ու մեկ գիշերի» զրավոր տարապատման մեջ են ընկել անմիջականորեն պատմողների շնորհիվ ու միայն աննշան մշակման են ենթարկվել դրանք գրի առնող անձնավորությունների գրչի աակ: Այս են վկայում առաջին հերթին գրանց բառակազմը, որի մեջ առատ են բարբառային ձևերն ու խոսակցական դարձվածքները, և տեքստի հագեցված լինելը երկխոսություններով, որոնք կենդանի և դինամիկ են, ասես լսված են ուղղակի քաղաքի հրապարակում:

Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ ոճով, արկածային պատմվածքները «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ամենաարժեքավոր մասերից մեկն են կազմում:

Բուրբուրյին այլ բնույթ են կրում գրական ծագում ունեցող, շատ հաճախ շափաղանց ծավալուն հեքիաթները, դրանք թված խմբավորումներից ոչ մեկի շարքը չի կարելի դասել: Դրանց լավագույն նմուշն է «Մինդիբադ-ծովազնացի հեքիաթը»:

Այս կամ այն խմբի հեքիաթները ծնունդ են առել որոշակի սոցիալական միջավայրում և ամենից շատ տարածված են եղել այդ միջավայրում: Այդ է վկայում «Հազար ու մեկ գիշերի» ձեռագրերից մեկի վրա մի արտագրողի արած նշումը:

«Պատմողին հարկ է պատմել, հաշվի առնելով, թե ով է լսում իրեն: Եթե դրանք հասարակ մարդիկ են, ապա թող նա շարադրի նրանց համար հասարակ մարդկանց պատմությունները, այդ տեսակ պատմությունները գրքի սկզբում են (հավանաբար, նկատի ունի խաբերանների մասին եղած պատմվածքները.— Մ. Ս.), իսկ եթե լսողները կառավարող մարդիկ են, ապա հարկավոր է պատմել պատմություններ թագավորների մասին և դյուցազունների գոտեմտրտերի մասին, իսկ այդ տեսակ պատմվածքները գրքի վերջում են»:

Հենց այդ միջավայրով է որոշվում ոչ միայն պատմության թեմատիկան, այլև ոճն ու բառային ձևավորումը, այն միջավայրով, որի մեջ հորինվել և, որի համար էլ հատ-

կացված է հեքիաթը: Ասպետական ձգձգված վեպերն ու հրաշապատում հեքիաթները, որոնք օրեր շարունակ կարող էին լավել կառավարողների ու մեծամեծների պալատներում, և որոնք այդ լսարանի ճաշակին էին համապատասխանում, փքուն-վերամբարձ առնով են մշակված, դրանց մեջ առատ են մեծ մասամբ խրատական բովանդակություն ունեցող ընդարձակ շեղումներն ու բանաստեղծական մեջբերումները:

Բանաստեղծական շեղումները քիչ չեն նաև քաղաքային նովելներում, որոնք ամենից շատ հաջողություն էին ունենում հարուստ առևտրականների և արհեստավորների շրջանում, բայց այդպիսի մեջբերումների բնույթը մի քիչ այլ է, ավելի շատ տարփալից են դրանք, բան բարոյախոսական: Այսպիսի հեքիաթներին խորթ չէ նաև անպարկեշտությունը, որը որպես կանոն բացակայում է առաջին խմբի մեջ մանող պատմություններում:

Բուրբուռի այլ ոգով են մշակված խաբեբայական հեքիաթները: Քաղաքային նովելների սիրային դիպվածների երկար պատմություններին խաբեբայական հեքիաթներում փոխարինում են սեղմ, գիպուկ երկխոսությունները: Նման հեքիաթներում բառատեղծական մեջբերումներ գրեթե չկան, շեղվել ու մտնել պոեզիայի ասուլարեզը, ըստ երևույթին, չբավորների հաշակով չէր, այն չբավորների, որոնք խոնվում էին շուկաներում և էթանագին սրճարաններում: Սրանք սիրում էին դվարթ, շարահեծիորեն հյուսված հեքիաթներ:

Սրանք են հեքիաթների հիմնական խմբերը, որ կազմում են «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուն:

Շահրազադեի հեքիաթներն իր հայրենիքի տարբեր սոցիալական խավերի կողմից ասարբեր ընդունելություն գտան: Այն ժամանակ, երբ ժողովրդի և առաջավոր մտավորականության շրջաններում հեքիաթները մինչև օրս էլ օգտվում են մեծ սիրով, մուսուլման գիտնական-բանասերները միշտ էլ խիստ բացասական են վերաբերվել դրանց: Արդեն X դարում, վերոհիշյալ մատենագետ ան-Նազիմը արհամարհանելով ասում է, թե «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթները «չբիկ ու ձանձրալի» են դրված, իսկ ավելի ուշ ժամանակի վատաբանողները դրանք համարում էին անբարոյական ու վնասակար, և հեքիաթները կարգացողներին կամ պատմողներին ամեն տեսակ դժբախտություններ էին Գ շակում: Սակայն դա չխանգարեց, որ արարական հեքիաթները համաշխարհային հռչակ ձևեր բերեն: XVII դարից սկսած «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթները բազմիցս թարգմանվել ու թարգմանվում են աշխարհի շատ լեզուներով և մեծ հաջողություն վայելում ընթերցողների շրջանում:

Շահրազադեի հեքիաթների առաջին առևերն թարգմանությունը ուղղակի արաբերեն բնագրից կատարվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: 1929—1938 թվականներին լույս տեսան այդ թարգմանություն ութ հատորները, որ կատարել էր առղերիս գրողը, ակադեմիկոս Ի. Յու. Կրաչկովսկու խմբագրությամբ, և իրենց մեջ պարունակում էին «Գիշերների» ամբողջ հիմնական տեքստը: Թարգմանիչն ու խմբագիրը ձգտել են ուժերը ներթափանցել չափ պահպանել հարազատությունը արաբերեն բնագրին թե՛ բովանդակության լիակատարության և թե՛ ոճի տեսակետից: Միայն այն դեպքերում, երբ բնագրի հղբիտ վերարտադրումը չէր համատեղվում որևէ գրական խոսքի նորմաներին, այդ սկզբունքից ստիպված էինք լինում նահանջել: Այսպես, օրինակ, ոտանավորները թարգմանելիս ճարտահատյալ հրամարվեցինք ըստ արարական բանաստեղծության կառուցման կանոնների ոտանավորի համար պարտադիր հանգից, որը ամբողջ բանաստեղծության մեջ պետք է լինի միասնական: Պահպանված է միայն բանաստեղծության արտաքին կառուցվածքն ու ուրիշը:

Ութհատորանոց լիակատար հրատարակությունից սույն ժողովածուի համար ընաբրված են լավագույն հեքիաթները: Սրանց մեջ գերակշռողը քաղաքային նովելներն ու խաբեբայական ժանրի հեքիաթներն են:



Շահրբար
արքայի
նախնիքի
պատմություն



Փա՛ռք ալլահին, տիրոջն աշխարհների: Ողջո՛ւյն ու փառաբանություն տիրոջն առաքյալների, տեր և ամենակալ Մուհամմեդին մեր: Թող ալլահը փառավորի նրան և թող օրհնի հավիտյան փառաբանությամբ ու բարեբանությամբ մինչև օրը դատաստանի:

Իսկ արդ, հիրավի, առաջին սերունդների մասին ավանդապատումները հաջորդների համար խրատաբանություն են դարձել, որպեսզի տեսնի մարդ, թե ինչպիսի դեպքեր են եղել ուրիշների կյանքում, ու խրատվի, և որպեսզի խորամուխ լինելով անցած-գնացած ժողովուրդների մասին եղած ավանդությունների մեջ և իմանալով այն ամենը, ինչ-որ պատահել է նրանց, հրաժարվի մեղքերից: Եվ փառք նրան, ով նախնյաց մասին զրույցները իբրև դաս ավանդել է հետագա ժողովուրդներին:

Այդ զրույցների թվին են պատկանում նաև «Հազար ու մեկ գիշեր» կոչված պատմությունները և դրանց մեջ ամփոփված վսեմ պատմվածքներն ու առակները:

Ժողովուրդների ավանդությունների մեջ պատմվում է այն մասին, ինչ որ եղել է, կատարվել, վաղուց անցել-գնացել է (իսկ ալլահն առավել գիտակ է անհայտին և գերիմաստ ու գերափառ և բոլորից առավել առատաշնորհ և բարեգույն և ողորմած), և որ հին ժամանակներում ու անցած դարերում և հարյուրամյակներում Հնդկաստանի ու Չինաստանի կղզիներում եղել է մի արքա, Սասանի՝ տոհմի արքաներից, հրամանատուն զորքերի, ժողովրդի ու ծառաների: Եվ ուներ նա երկու որդի՝

¹ Կիտառասպելական թագավոր Սասանի հաջորդները կամ Սասանյանները թագավորել են Իրանում III—VII դարերում: Շահրիար արքային սասանյաններին վերադրելը ժամանակավրիպություն է, ինչպիսիք քիչ չեն «Հազար ու մեկ գիշերում»: (Ման. սուս. թարգմ.):

մեկը շափահաս, մյուսը գեռատի, և երկուսն էլ քաջակորով դյուցազն էին, բայց մեծը արիությամբ գերազանցում էր փոքրին: Եվ նա գահակալեց իր երկրում և արդարությամբ էր կառավարում հպատակներին, և նրա երկրի ու թագավորության բնակիչները սիրեցին նրան, և նրա անունն էր Շահրիար: Իսկ նրա կրտսեր եղբոր անունն էր Շահզաման, և նա թագավորում էր պարսկական Սամարղանդում: Նրանցից յուրաքանչյուրը ապրում էր իր երկրում, և յուրաքանչյուրն իր թագավորության մեջ իր հպատակների արդար դատավորն էր ամբողջ քսան տարի, և ապրում էր կատարյալ զոհության և ուրախության մեջ: Այդպես շարունակվեց, մինչև որ մի անգամ ավագ թագավորը ցանկացավ տեսնել կրտսեր եղբորը և հրամայեց իր վեզիրին գնալ ու բերել նրան: Վեզիրը կատարեց նրա հրամանը ու ճանապարհ ընկավ և այնքան գնաց, մինչև որ բարեհաջող հասավ Սամարղանդ: Նա մտավ Շահզամանի մոտ, ողջունեց նրան ու հայտնեց, որ եղբայրը կարոտել է նրան ու ցանկանում է, որ նա այցելի իրեն: Եվ Շահզամանը համաձայնություն հայտնեց ու ճանապարհի պատրաստություն տեսավ: Նա հրամայեց դուրս տանել իր վրանները, բարձել ուղտերին, ջորիներին, հանդերձել ծառաներին ու թիկնապահներին և իր վեզիրին երկրի կառավարիչ կարգեց, իսկ ինքը գուրս եկավ և ուղևորվեց դեպի իր եղբոր երկիրը: Բայց երբ կեսգիշեր եղավ, նա հիշեց մի բան, որ մոռացել-թողել էր պալատում, և վերադարձավ ու, պալատ մտնելով, տեսավ, որ կինը պառկած է անկողնում, իր սևամորթ ծառաներից մեկի հետ գրկախառնված:

Եվ երբ Շահզամանը տեսավ այդ, աչքերը մթնեցին, ու նա ինքն իրեն ասաց. «Եթե սա պատահեց այն ժամանակ, երբ ես դեռ չեմ հեռացել քաղաքից, ապա ինչպես կպահի իրեն այս անիծյալ կինը, երբ ես երկար ժամանակ բաժանված լինեմ նրանից՝ եղբորս հետ մնալով»: Եվ նա հանեց սուրը և հարվածեց երկուսին էլ ու սպանեց նրանց անկողնու մեջ, իսկ հետո, նույն ժամին ու րուպեին, վերադարձավ ու հրամայեց շարժվել, ու զնաց մինչև որ հասավ իր եղբոր քաղաքը: Եվ մոտենալով քաղաքին, սուրհանգակներ ուղարկեց եղբոր մոտ՝ իր ժամանումի լուրը հաղորդելու, և Շահրիարը ընդառաջ ելավ ու ողջունեց նրան՝ խիստ ուրախացած: Եղբոր պատվին նա զարդարեց քաղաքը, նստեց եղբոր կողքին, զրուցելով նրա հետ ու զվարճանալով, բայց Շահզաման արքան հիշում էր իր կնոջը և մեծ վիշտ էր զգում, և նրա դեմքը դժգունել էր, իսկ մարմինը՝ թուլացել: Երբ եղբայրը տեսավ նրան այդ վիճակում, կարծեց, թե պատճառն այն է, որ նա հեռացել է իր երկրից ու թագա-

վորությունից, ու հանգիստ թողեց նրան՝ առանց հարց ու փորձ անելու: Բայց հետո, օրերից մի օր, ասաց նրան. «Ով եղբայր, տեսնում եմ, որ քո մարմինը թուլացել է ու դեմքդ դեղնել»: Իսկ Շահգամանը պատասխանեց նրան. «Ով եղբայր, իմ ներսը խոց կա»,— և շպատմեց, թե ինչ է ապրել կնոջ երեսից: «Ես ուզում եմ,— ասաց Շահրիարը,— որ դու ինձ հետ սրսի ու ձկնորսության գաս, գուցե, սիրտդ թեթևանա»: Բայց Շահգամանը հրաժարվեց դրանից, ու եղբայրը որսի գնաց առանց նրա:

Արքայական պալատում պարտեզահայաց պատուհաններ կային. Շահգամանն այդ պատուհաններից մեկի մոտ կանգնած դուրս էր նայում ու հանկարծ ինչ տեսնի. բացվում են պալատի դռները, և այնտեղից դուրս են գալիս քսան ստրկուհի ու քսան ստրուկ, և իր եղբոր կինը գնում է նրանց մեջ, հազվագյուտ գեղեցկությամբ ու հրապուլյրով տարբերվելով բոլորից: Նրանք մոտեցան շատրվանին, և հանեցին շորերը և նստեցին ստրուկների հետ, և հանկարծ արքայի կինը կանչեց՝ «Մասուդ»: Եվ սև ստրուկը մոտեցավ նրան ու գրկեց, իսկ նա էլ ստրուկին: Եվ նա պառկեց կնոջ հետ, և մյուս ստրուկներն էլ նույնը արեցին, և նրանք գրկվում էին ու համբուրվում, գգվում էին ու զվարճանում, մինչև որ օրը թեքվեց դեպի մայրամուտ: Եվ երբ արքայի եղբայրը տեսավ այդ, ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, իմ դժբախտությունն ավելի փոքր է, քան այս աղետը», և նրա խանդն ու վիշտը ցրվեցին: «Մա ավելին է, քան այն, ինչ պատահել է ինձ»,— բացականչեց նա և թողեց ուտել-խմելուց հրաժարվելը: Իսկ հետո եղբայրը վերադարձավ որսից, և նրանք ողջունեցին միմյանց, և արքա Շահրիարը նայեց իր Շահգամանին ու տեսավ, որ նրա երեսի գույնը վերադարձել է, դեմքը վարդագույն է դարձել, և որ նա անդադար ուտում է, թեև առաջ սակավապետ էր: Եվ այդ ժամանակ մեծ եղբայրը ասաց Շահգամանին. «Ով եղբայր, ես քեզ թողեցի դեղնած դեմքով, իսկ հիմա դեմքդ վարդագույն է դարձել, Պատմիր ինձ, թե ինչ է պատահել»:— «Ինչ վերաբերում է իմ դեմքի փոխվելուն, ես քեզ կպատմեմ, բայց ազատիր ինձ երեսիս վարդագույնը փերստանալու պատճառը հայտնելուց»,— պատասխանեց Շահգամանը: Եվ Շահրիարն ասաց. «Պատմի՛ր նախ, թե ինչու էր կերպարանքդ փոխվել ու մարմինդ թուլացել, իսկ ես կլսեմ»:

«Իմացիր, ո՛վ եղբայր իմ, որ երբ դու վեզիրին ինձ մոտ ուղարկեցիր քեզ այցելելու պահանջով, ես պատրաստվեցի ու արդեն դուրս էի եկել քաղաքից, բայց հիշեցի, որ պալատում է մնացել այն մարգարիտը, որ ես ուզում էի քեզ ընծայել: Ես վերադարձա պալատ ու կնո-

չրս գտա սևամորթ ստրուկի հետ իմ անկողնում քնած, և սպանեցի նրանց ու եկա քեզ մոտ այդ մասին խորհրդածելով: Ահա իմ տեսքի փոփոխութեան ու իմ թուլութեան պատճառը. իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե ինչպես վերադարձավ դեմքիս վարդագույնը, թույլ տուր այդ մասին ոչինչ շասել քեզ»:

Բայց, լսելով եղբոր խոսքերը, Շահրիարը բացականչեց. «Հանուն ալլահի աղաչում եմ, պատմիր ինձ, թե ինչու է վերադարձել դեմքիդ վարդագույնը»: Եվ Շահզամանը սլառմեց նրան այն ամենը, ինչ տեսել էր: Այդժամ Շահրիարն ասաց իր եղբայր Շահզամանին. «Ուզում եմ տեսնել այդ իմ սեփական աչքերով»: Եվ Շահզամանը խորհուրդ տվեց. «Այնպես ձևացրու, թե իբր որսի ու ձկնորսութեան ես գնում, իսկ ինքդ թաքնվիր ինձ մոտ, այդ ժամանակ կտեսնես ամեն ինչ և կհամոզվես»:

Եվ արքան անմիջապես հրամայեց մեկնելու փողը հնչել, և զորքը վրաններն առած բաղաքից դուրս եկավ, ու թագավորն էլ նրանց հետ դուրս եկավ, բայց հետո նա նստեց վրանում և ասաց իր ծառաներին. «Քող ոչ ոք չմտնի ինձ մոտ»: Գրանից հետո նա փոխեց իր կերպարանքը և թաքուն մտավ պալատ, որտեղ իր եղբայրն էր, և որոշ ժամանակ նստեց պարտեզահայաց պատուհանի մոտ: Հանկարծ ստրկուհիներն ու իրենց տիրուհին դուրս եկան ստրուկների հետ և արեցին այն, ինչ որ պատմել էր Շահզամանը, մինչև հեռձաշյա աղոթքի կոչունքը: Եվ երբ Շահրիար թագավորը տեսավ այդ, նրա գլխից խելքը թռավ, ու նա ասաց իր եղբայր Շահզամանին. «Վե՛ր կաց, հիմա եեթ հեռանանք. մեզ հարկավոր չէ թագավորական իշխանութունը, մինչև շտեմենք մեկին, որին նույնը պատահած լինի: Այլապես մահը մեզ համար ավելի լավ է, քան կյանքը»:

Նրանք դուրս եկան գաղտնի դռնով և գիշեր ու ցերեկ թափառեցին, մինչև հասան մի ծառի, որ բուսել էր մարգագետնում, որով հոսում էր մի ջինջ առվակ աղի ծովի կողքին: Նրանք ջուր խմեցին այդ առվակից և նստեցին հանգստանալու: Իսկ երբ անցավ ցերեկվա ժամը, ծովը հանկարծ ալեկոծվեց, և նրա միջից բարձրացավ մինչև երկինք ձգվող մի սևաթույր սյուն և ուղղվեց դեպի նրանց մարգագետինը: Այդ տեսնելով, երկու եղբայրները վախեցան ու բարձրացան ծառի գագաթը (իսկ ծառը բարձր էր) և սպասեցին, թե ինչ է լինելու հետո: Եվ հանկարծ իրենց առջև տեսան վիթխարահասակ մի ջինն¹, մեծ գլխով ու լայն

¹ Զինն, իֆրիա կամ մարիդ— բարի կամ չար ոգի արաբական բանահյուսություն մեջ:

կրծքով, իսկ նրա գլխին՝ մի սնդուկ: Նա ցամաք դուրս եկավ ու մոտեցավ ծառին, որի վրա եղբայրներն էին, և, նստելով դրա տակ, բացեց սնդուկը և հանեց դրա միջից մի տուփ ու դա էլ բացեց, և այնտեղից դուրս եկավ սլացիկ հասակով մի երիտասարդ կին, որ փայլում էր պայծառ արևի նման, ինչպես այդ ասել է, և հիանալի է ասել, բանաստեղծ Աթիլյան.

Խավարի մեջ նա երեսց ու լույս տվեց գիշերին,
Շողշողացին նրա փայլից կատարները ծառերի.
Պայծառ լույսով նա ճառագեց արևի պես ցուլացիկ,
Դեմքից հենց որ քողը նետեց, շփոթվեցին ասուկերն էլ:
Խոնարհվում են, ծնկի գալիս արարածները բոլոր,
Երբ անսքող ցույց է տալիս տեսքն իր շքնաղ ու զերող:
Իսկ թե հանկարծ զայրույթի մեջ շանթ ու հուր է արձակում,
Երկնի անձրև-արտասուքն է անկասելի ցած թափվում:

Եվ ջիններ նայեց այդ կնոջն ու ասաց. «Ո՛վ ազնվագարմների տիրուհի, ո՛վ դու, որին ես փախցրի հարսանիքի գիշերը, ուղում եմ մի քիչ քնել», — և նա գլուխը դրեց կնոջ ծնկներին ու քնեց, իսկ կինը բարձրացրեց գլուխն ու տեսավ ծառի վրա նստած երկու արքաներին: Այնժամ նա վերցրեց ջիննի գլուխն իր ծնկներից ու դրեց գետնին և, կանգնելով ծառի տակ, նշաններով ասաց եղբայրներին. «Իջեք, մի վախեցեք ջիննից»: Եվ նրանք պատասխանեցին. «Հանուն ալլահի աղաչում ենք քեզ, ազատիր մեզ դրանից»: Բայց կինն ասաց. «Եթե չիջնեք, կարթնացնեմ իֆրիտին, ու նա կմեռցնի ձեզ շարագույն մահով»: Եվ նրանք վախեցան ու իջան կնոջ մոտ, իսկ նա պառկեց նրանց առջև ու ասաց. «Կոխեք ու պինդ, թե չէ կարթնացնեմ իֆրիտին»: Եվ արքա Շահրիարը վախից ասաց եղբորը՝ Շահզաման արքային. «Ով եղբայր իմ, արա, ինչ որ նա հրամայեց»: Բայց Շահզամանը պատասխանեց, «Չե՛մ անի: Առաջ դու արա»: Եվ նրանք սկսեցին նշաններով միմյանց վրա պահել, բայց կինը բացականչեց. «Դա ինչ բան է: Ես տեսնում եմ, որ դուք ակնարկներով խոսում եք իրար հետ: Եթե դուք շմուտենաք ու շանեք ուզածս, իֆրիտին կարթնացնեմ»: Եվ ջիննի սարսափից երկու եղբայրները կատարեցին նրա կամքը, իսկ երբ վերջացրին, կինն ասաց. «Աթափվեք», — և թևի տակից հանելով մի փոքրիկ տոպրակ, դուրս քաշեց դրա միջից հինգ հարյուր յոթանասուն մատանուց բաղկացած մանյակը: «Դիտե՛ք, թե ինչ մատանիներ են սրանք», — հարցրեց նա, և եղբայրները պատասխանեցին. «Չգիտենք»: Այդժամ կինն ասաց. «Այս բոլոր մատանիների տերերն ինձ հետ գործ են ունեցել այս իֆրիտի եղջյուր-

ների վրա: Դուք էլ տվեք ինձ մեկական մատանի»: Եվ եղբայրները կնո-
ջը երկու մատանի տվեցին՝ իրենց մատից հանելով, իսկ նա ասաց.
«Այս իֆրիան ինձ առնանգեց իմ հարսանիքի գիշերը և դրեց ինձ տու-
փի մեջ, իսկ տուփն էլ՝ սնդուկի մեջ: Նա կախեց սնդուկի վրա յոթ փայ-
լուն կողպեք և ինձ իջեցրեց ասեղազույժի հատակը, ուր ալիքներն են
իրար բախվում, բայց նա չգիտեր, որ եթե կինը որևէ բան ուզենա,
ապա նրան հետ պահել չի կարող ոչ ոք, ինչպես ասել է բանաստեղծնե-
րից մեկը.

Գյուրահավան դու չի նես կանանց մոտ,
Չհավատաս նրանց խոսքին ստահող:
Թե՛ ներումը, թե՛ խռովքը կանացի,
Մարմնականի հետ են կապված, իմացիր:
Ձևացնում են կեզժ սեր, գգվում, փայփալում,
Իսկ խաբկանքը փեշերի մեջ թաքցնում:
Խրատական դաս առ կյանքից Յուսուֆի,¹
Ու կգանես լափը նրանց հարգանքի:
Քո հայր Ադամն էլ, գիտես, որ դրախտից
Վտարվել է միայն կնոջ երեսից:

Իսկ մի ուրիշն ասել է.

Ըվ իմ դժբախտ, բայց անեծքի նման հզոր սիրելի,
Այնքան մեծ չէ հանցանքը իմ, որքան քեզ է ցանկալի:
Չէ՞ որ ես էլ միայն այն եմ արել, ինչ որ շատ անգամ
Տգամարդիկ միշտ արել են ու անում են ամեն ժամ:
Մեծ վարմանքի արժանի է յոկ այն մարդը աշխարհում,
Ով կամացի հրապույցից անխոցելի է մնում:

Հսկելով այդ խոսքերը, երկու արքաները խիստ զարմացան և մեկը
մյուսին ասաց. «Ահավասիկ սա իֆրիտ է, և սրան էլ պատահել է մերից
վատթեւորը, Այդպիսի բան դեռ ոչ ոք չի տեսել»:

Եվ նրանք անմիջապես հեռացան նրանից և վերադարձան Շահրիար
արքայի քաղաքը: Նա մտավ պայատ և կտրեց իր կնոջ գլուխը, և՛ ստրուկ-
ներինը, և՛ ստրկուհիներինը:

Եվ Շահրիար արքան սկսեց ամեն գիշեր իր մոտ բերել տալ մի
անմեղ աղջիկ, տիրել նրան, ապա սպանել, և այդպես շարունակվեց
երեք տարի:

Իսկ մարգիկ մեծ սգով ողբացին ու փախան իրենց աղջիկների հետ,

¹ Ակնարկը վերաբերում է Հովսեփ Գեղեցիկի աստվածաշնչյան առասպելին, որ
թափանցել է նաև մահմեդական պատմողական գրականության մեջ:

և քաղաքում շմնաց ոչ մի աղջիկ, որ պիտանի լիներ ամուսնական կյանքի համար:

Եվ մի անգամ արքան հրամայեց իր վեզիրին, սովորականի նման, աղջիկ բերել իր մոտ, իսկ վեզիրը գուրս եկավ ու փնտրեց, բայց աղջիկ չգտավ և գնաց իր տուն, արքայի երկյուզից ընկճված ու վշտահար: Իսկ արքայի վեզիրը երկու աղջիկ ուներ. մեծի անունն էր Շահրազադե, իսկ փոքրինը՝ Դունյազադե: Եվ մեծը կարգում էր գրքեր, տարեգրություններ ու հին թագավորների վարքագրություններն ու անցած-գնացած ժողովուրդների մասին ավանդությունները և նա, ասում են, հավաքել էր հին ժողովուրդներին ու հին թագավորներին ու բանաստեղծներին վերաբերող հազարավոր գրքեր: Եվ նա հորն ասաց. «Ի՞նչն է պատճառը, հայր, որ դու, ինչպես տեսնում եմ, տխուր ես ու ճնշված և հոգսով ու վշտով սողորված: Զէ՞ որ բանաստեղծներից մեկն ասել է.

Մանր հոգսից տառապողին հիշեցրու,
Որ ոչ մի վիշտ մշտական չէ աշխարհում:
Ինչպես վերջ կա խնդությանը բերկրավետ,
Ճիշտ այդպես էլ անց է կենում հոգսն անհետ:

Եվ, լսելով իր աղջկա խոսքերը, վեզիրն սկզբից մինչև վերջ պատմեց, թե ինչ է եղել իր ու թագավորի միջև: Իսկ Շահրազադեն բացականչեց. «Հանուն ալլահի, աղաչում եմ քեզ, հայր, տուր ինձ այդ թագավորին, և այն ժամանակ ես կամ կապրեմ, կամ մուսուլմանների աղջիկների փրկագինը կլինեմ ու կփրկեմ նրանց արքայից»:— «Աղաչում եմ քեզ, հանուն ալլահի,— բացականչեց վեզիրը,— մի՛ ենթարկիր քեզ այդպիսի վտանգի»: Բայց Շահրազադեն ասաց. «Դա անխուսափելիորեն պետք է կատարվի»: Եվ վեզիրն ասաց. «Ես վախենում եմ, որ քեզ էլ նույնը պատահի, ինչ որ պատահել է երկրագործի եզին ու էշին»:— «Իսկ ի՞նչ է պատահել նրանց»,— հարցրեց Շահրազադեն:

ԵԶԱՆ ՈՒ ԷՇԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացիր, աղջիկս,— սկսեց վեզիրը,— որ մի վաճառական մեծ հարստության ու անասունների նախիրների տեր էր, և ուներ կին ու երեխաներ, և մեծ ալլահը օժտել էր նրան կենդանիների ու թռչունների (եզվի գիտություն): Եվ ապրում էր այդ վաճառականը գյուղում և պահում էր նա մի եզ ու մի էշ: Մի անգամ եզը մտավ էշի գոմը և տեսավ, որ սրբած է հատակը և ջուր ցանած, իսկ ախոռում, էշի առջև, գարի է լրջված ու հարդ է թափված, իսկ էշը պառկած հանգստանում է, և միայն

տերն է երբեմն, եթե որևէ գործ պատահի, նրան նստած տեղ գնում և անմիջապես վերադառնում: Եվ մի օր էլ վաճառականը լսեց, թե ինչպես եզր էշին ասում է. «Երանի քեզ, ես հոգնում եմ, իսկ դու հանգրստանում ես և ուտում ես առջևդ լցրած գարին, ու քեզ խնամում են, և միայն մեր տերն է մեկ-մեկ քեզ նստած տեղ գնում ու հետ գալիս, իսկ ես միշտ վար ևմ անում ու աղացքարը պտտում»: Եվ էշը պատասխանեց. «Երբ դու հանդ դուրս գաս, և լուծը վզիդ դնեն, պառկիր ու մի վեր կենա, եթե նույնիսկ ծեծեն քեզ, կամ ելիր ու նորից պառկիր: Իսկ երբ քեզ հետ բերեն ու բակլա տան, մի կեր, իբրև թե հիվանդ ես, և մի աստենա կերին ու ջրին մեկ, երկու, երեք օր, այն ժամանակ գործից ու շարշարանքից կհանգստանաս»: Եվ վաճառականը լսեց նրանց խոսակցությունը: Իսկ երբ մաճկալը եզանը տվեց երեկոյան կերը, նա շատ բիշ կերավ, և առավոտյան, երբ մաճկալը եկավ նրան վարի տանելու, տեսավ, որ հիվանդ է, և տխրեց ու ասաց. «Ահա թե ինչու եզր երեկ չէր կարողանում աշխատել»: Իսկ հետո նա վաճառականի մոտ գնաց ու ասաց. «Ով տեր, եզր վար չի կարող անել. երեկվա տված կերից նա մի բերան էլ չի կերել»: Իսկ վաճառականն արդեն գիտեր, թե ինչ է պատահել, և ասաց. «Ինչ, էշին տար ու եզան փոխարեն նրանով վար արած, ևզը շնորհակալություն հայտնեց նրան սիրալիրության համար, որ նա այդ օրն ազատել էր իրեն գործից, բայց էշը ոչինչ շասաց ու խիստ զղջաց: Հետևյալ օրն էլ երկրագործը եկավ ու տարավ էշին և մինչև երեկո վար արեց, և էշը տուն եկավ վզի մորթի պլոկված ու հոգնածությունից ջարդված: Եվ եզր, էշին նայելով, շնորհակալություն հայտնեց ու գովեց, իսկ էշը բացականչեց. «Ես պառկած մեկնվել էի, բայց շատախոսությունն ինձ վնասեց: Իմացիր,— ավելացրեց նա,— որ ես քո անկեղծ խորհրդատուն եմ. ես լսեցի, թե ինչպես մեր տերն ասում էր. «Եթե եզր տեղից վեր չկենա, մտազործին տվեք, թող մորթի նրան ու կաշին կտոր-կտոր անի»: Եվ ես վախենում եմ քեզ համար և զգուշացնում եմ քեզ: Ահա և բոլորը»:

Եզր, լսելով էշի ասածը, շնորհակալություն հայտնեց ու աս. «Վաղը ես գործի դուրս կգամ»,— ու հետո կերավ իր ամբողջ կերը և նույնիսկ չեզվով լիզեց ախոռը: Իսկ տերը լսեց այդ ամբողջ խոսակցությունը: Եվ երբ օրը լուսացավ, վաճառականն ու իր կինը դուրս եկան, գոմի մոտ նստեցին, իսկ մաճկալը եկավ, դուրս բերեց եզին ու տարավ. և տիրոջը տեսնելով՝ եզր պոչը ցցեց, փուք բաց թողեց ու տրտինգ տվեց, իսկ վաճառականը ծիծաղից ընկավ մեջքին ու փորը բռնեց:

«Ինչո՞ւ ես ծիծաղում»,— հարցրեց կինը, և նա պատասխանեց. «Ես տեսա ու լսեցի մի գաղտնիք, բայց չեմ կարող բացել այն, որովհետև եթե բացեմ, կմեռնեմ»։— «Դու՛ անպայման պետք է պատմես ինձ և՛ այդ, և՛ քո ծիծաղի պատճառը, եթե նույնիսկ մեռնելու լինես»,— հակաճառեց կինը։ Բայց վաճառականը պատասխանեց. «Ես չեմ կարող բացել այդ գաղտնիքը, որովհետև վախենում եմ մեռնելուց»։ Եվ կինը գոչեց. «Դու, երևի, ծիծաղում ես ինձ վրա»,— և այնքան համառեց ու նրա գլուխը տարավ, մինչև նա հնազանդվեց ու կոտրվեց։ Եվ այդ ժամանակ նա կանչեց իր երեխաներին և ուղարկեց դատաւորի ու վկաների հետևից, կամենալով կտակը կազմել և հետո գաղտնիքը բացել կնոջըն ու մեռնել, որովհետև նա սիրում էր իր կնոջը մեծ սիրով, քանի որ նա իր հորեղբոր աղջիկն¹ էր ու իր երեխաների մայրը, իսկ ինքն արգեն ապրել էր հարյուր քսան տարի։ Հետո վաճառականը հրամայեց կանչել բոլոր բարեկամներին ու իրենց թաղի բոլոր բնակիչներին և պատմեց նրանց այս պատմությունը՝ ավելացնելով, որ երբ ասի իր գաղտնիքը, մեռնելու է։ Եվ բոլորը, ովքեր ներկա էին, սասցին նրա կնոջը. «Հանուն արլահի, աղաչում ենք քեզ, ձեռք քաշիր. որակազի չմեռնի քո մարդը և քո երեխաների հայրը»։ Իսկ նա գոչեց. «Ձեռք չեմ քաշի նրանից, մինչև չասի։ Թող մեռնի»։ Եվ բոլորը լռեցին։ Այդ ժամանակ վաճառականը ելավ տեղից, գնաց մտուրը, որ լվացում կատարի և, հետ գալով, պատմի ու մեռնի։ Իսկ վաճառականն ուներ մի աքաղաղ ու հիսուն հավ, և ուներ նաև մի շուն։ Եվ, ահա, նա լսեց, թե ինչպես շունը դռագոռում է ու հայհոյում աքաղաղին ու ասում. «Դու ուրախանում ես, իսկ մեր տերը մեռնելու է պատրաստվում»։— «Ինչպե՞ս թե»,— հարցրեց աքաղաղը։ Եվ շունը երկրորդեց նրան ամբողջ պատմությունը, և այնժամ աքաղաղը բացականչեց. «Արլահը վկա, մեր տիրոջ խելքը պակաս է։ Ես ահա հիսուն կին ունեմ, մեկ սրա հետ եմ հաշտվում, մեկ նրա խաթրը անում, իսկ մեր տերը մի կին ունի և չի էլ իմանում, թե ինչպես վարվի նրա հետ։ Ա՛յ, թող մի վերցնի թթի ճիպոտները, գնա խորդանոց և կնոջը ծեծի, մինչև որ նա մեռնի կամ զղջման գա ու այսուհետև ոչ մի բանի մասին նրան չհարցնի»։

Իսկ վաճառականը լսեց աքաղաղի խոսքերը, որ ուղղված էին շանը,— պատմում էր վեզիրն իր աղջիկ Շահրազադեին,— և ես էլ այնպես կվարվեմ քեզ հետ, ինչպես վաճառականը վարվեց իր կնոջ հետ»։

¹ Արարական հեթաթների մեջ հաճախ կրկնվող հարջորդում, որ արտացոլում է հին արաբական սովորությունը՝ աղչյան եղբորորդու հետ ամուսնացնելու (Ման. ուս. թարգմ.)։

«Իսկ ի՞նչ արեց նա»,— հարցրեց Շահրազադեն:

Եվ վեզիրը շարունակեց. «Կտրեց թթենու ճիպոտներ, թաքցրեց խորդանոցում և այնտեղ բերեց իր կնոջը, ստելով «Այստեղ արի, ես չեմ ամեն ինչ կասեմ խորդանոցում ու կմեռնեմ, և ոչ ոք թող ինձ չնայի»: Եվ կինը նրա հետ մտավ խորդանոց, և այդժամ վաճառականը փակեց դուռը և սկսեց ծեծել նրան և այնքան ծեծեց, մինչև կինը համարյա ուշագնաց եղավ ու գոչեց. «Ձղջճճեմ եմ»: Իսկ հետո նա համբուրեց մարդու ոտքն ու ձեռքը, զղջաց ու նրա հետ դուրս եկավ, իսկ նրա ազգականներն ու բոլոր հավաքվածները ուրախացան: Եվ նրանք այնուհետև հրջանիկ կյանքով ապրեցին մինչև իրենց կյանքի վերջը»:

Եվ հար խոսքերը լսելով, վեզիրի աղջիկն ասաց. «Ինչ որ ես ուզում եմ, անխօսափելի է»:

Եվ այդ ժամանակ վեզիրը հազցրեց իր աղջկան ու տարավ Շահրիար արքայի մոտ: Իսկ Շահրազադեն սովորեցրեց իր փոքրիկ քույրն ու ասաց. «Երբ ես թագավորի մոտ գնամ, մարդ կուղարկեմ քո հետևից, իսկ դու, հենց որ գաս ու տեսնես, որ թագավորը բավարարել է իր կարիքն ինձանով, կասես. «Ով քույրիկ, խոսիր մեղ հետ և պատմիր մի բան, որ կարճենք անքուն գիշերը»,— և ես կպատմեմ քեզ մի բան, որի մեջ, ալլահի հաճությամբ, կլինի մեր փրկությունը»:

Եվ այդպես, Շահրազադեի վեզիր հայրը տարավ նրան արքայի մոտ, և արքան, նրան տեսնելով, ուրախացավ ու հարցրեց. «Բերե՞լ ես, արդյոք այն, ինչ որ հարկավոր է ինձ»:

Եվ վեզիրն ասաց. «Այո»:

Եվ Շահրիարն ուզեց տանել Շահրազադեին, բայց նա լաց եղավ. և արքան հարցրեց նրան. «Ի՞նչ է պատահել»:

Շահրազադեն ասաց. «Ով արքա, ես մի փոքրիկ քույր ունեմ, ուզում եմ նրան հրաժեշտ տալ»:

Եվ արքան մարդ ուղարկեց Դունյազադեի հետևից, և նա եկավ քրոջ մոտ, գրկեց նրան ու նստեց մահճակալի կողքին՝ գետնի վրա: Եվ այնժամ Շահրիարը տիրապետեց Շահրազադեին, իսկ հետո նրանք սկսեցին զրուցել: Եվ կրտսեր քույրն ասաց Շահրազադեին. «Հանուն ալլահի, աղաչում եմ, քույրիկ, մի բան պատմիր մեզ, որպեսզի կարճենք գիշերվա անքուն ժամերը»:

«Միրով ու հաճությամբ, եթե ինձ թույլ տա արքան անբասիր»,— պատասխանեց Շահրազադեն:

Եվ լսելով այս խոսքերը, անքնությունից տառապող արքան ուրախացավ, որ պատմություն կլսի, և թույլատրեց:



Կաճառակարն
և ոգո՛ւ
ՀԻՔԻԱԿՅՈՐ



ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Շահրազադեն ասաց. «Պատմում են, ով երջանիկ արքա, որ վաճառականների մեջ մի վաճառական կար, և նա շատ հարուստ էր ու մեծ գործեր էր վարում զանազան երկրներում: Մի անգամ նա գնաց մի երկիր, իր պարտքերը հավաքելու, ու շոգը նեղեց նրան, և նա նստեց մի ծառի տակ ու ձեռքը դեպի թամբին կապած պաշուսակը տանելով, հանեց մի կտոր հաց ու խուրմա և սկսեց խուրման հացով ուտել: Եվ, խուրման ուտելով, նա կորիզը դեն նետեց ու, հանկարծ, ի՛նչ տեսնի. իր առջև կանգնած է վիթխարահասակ իֆրիտը՝ ձևաչին մերկացրած մի սուր: Եվ իֆրիտը մոտեցավ վաճառականին ու ասաց. «Ելի՛ր, ես քեզ սպանելու եմ, ինչպես դու սպանեցիր իմ որդուն»: «Ինչպե՞ս թե ես սպանել եմ քո որդուն»,— հարցրեց վաճառականը: Եվ իֆրիտը պատասխանեց. «Երբ դու կերար խուրման ու կորիզը նետեցիր, այն իմ որդու կրծքին դիպավ, ու որդիս մի վայրկյանում մեռավ»:— «Հիրավի, մենք այլահինն ենք և նրա մոտ կնք վերադառնում,— բացականչեց վաճառականը:— Ոչ որ ուժ ու կարողություն չունի, բացի այլահից մեծ ու բարձրյալ: Եթե ես սպանել եմ քո որդուն, ապա սպանել եմ անգիտաբար: Ես ուզում եմ, որ դու ներես ինձ»:— «Ես անպայման պիտի սպանեմ քեզ»,— ասաց ջիննը և բաշեց վաճառականին ու, գետին գլորելով, սուրը բարձրացրեց, որ խփի: Իսկ վաճառականը լաց եղավ ու բացականչեց. «Այլահին եմ հանձնում իմ գործը», և արտասանեց.

Բախտը երկու երես ունի՝ վտանգի ու հանգստի,
Կյանքն էլ երկու բաժին ունի՝ ուրախության ու վշտի:
Ասա նրան, ով պատժում է մեզ շար բախտի հարվածով,
Հակառակ է բախտը նրան, ով դիրք ունի ապահով:
Չե՞ս տեսնում, որ երբ մոլեգնած հողմը փչում է ահեղ,

Արմասախիլ ասպալում է ծառերն ամուր և ուժեղ,
Չե՛ս տեսնում, որ ծովում դիակն էլ երես է դուրս գալիս,
Իսկ խորքերում մարգարիտներն են թանկագին՝ շող տալիս:
Եվ թե բախտի աջն ինձ վրա ծանրացել է գալուսթով,
Ու հարվածում, պատժում է ինձ օրհասական աղետով,
Գիտցիր, շատ են պայծառաշող լուսատուներն երկնքում,
Բայց արևը և լուսինը նրա՛նց համար են մթնում
Եվ որքան էլ շատ են բույսերը շորացած, թե դալար,
Սակայն մարդիկ լոկ պողաբեր ծառերին են նետում քար:

Եվ երբ վաճառականը վերջացրեց, ջիններ ասաց. «Կարճ կապիր: Ալլա՛հն էր վկա, ես անպայման սպանելու եմ քեզ»: Եվ վաճառականն ասաց. «Գիտցիր, ով իֆրիտ, որ ես պարտք ունեմ, և՛ շատ փող ունեմ, և՛ երեխաներ, և՛ տուն, և՛ կին, և՛ ուրիշներից ստացած գրավականներ: Թույլ տուր գնամ, ես կտամ բոլոր պարտքերս, ում հարկավոր է տալ, և քեզ մոտ կգառնամ մյուս տարվա սկզբին: Ես խոստանում եմ քեզ ու երդվում ալլահով, որ հետ կգամ, և դու կվարվես ինձ հետ, ինչպես որ ուզես: Թող ալլահն էրաշխավոր լինի իմ ասածին»:

Եվ ջիններ վստահեց նրա երդումին ու բաց թողեց նրան, և վաճառականը վերադարձավ իր երկիրը և վերջացրեց իր բոլոր գործերը՝ հարկը հարկավորաց տալով: Նա իր կնոջն ու երեխաներին տեղեկացրեց ամեն ինչի մասին ու կտակը կազմեց ու ապրեց նրանց հետ մինչև տարվա վերջը, իսկ հետո լվացում կատարեց, անութի տակ գրեց իր պատանքը և, հրաժեշտ տալով ընտանիքին, հարևաններին ու բոլոր ազգականներին՝ իր կամքին հակառակ դուրս եկավ տնից: Եվ նրանք սուգ ու շիվան բարձրացրին նրա համար: Եվ վաճառականը գնաց, մինչև հասավ այն պուրակը (իսկ այդ օրը նոր տարվա սկիզբն էր), և երբ նստեց ու լաց էր լինում իրեն պատահածի համար, հանկարծ մոտեցավ նրան մի գառամյալ ծերունի՝ հետը շղթան վզին մի վիթ: Եվ նա ողջունեց վաճառականին ու երկար կյանք մաղթեց նրան ու հարցրեց. «Ինչո՞ւ ես մեմմենակ նստել այստեղ, որ ջինների որջն է»: Եվ վաճառականը պատմեց նրան, թե ինչ է եղել իր ու իֆրիտի միջև, և ծերունին՝ վիթի տերը, զարմացավ ու բացականչեց. «Ալլա՛հն էր վկա, ով եղբայր, մեծ է քո ազնըվությունը, և քո պատմությունն էլ ապշեցուցիչ է, և թեկուզ աչքի անկյունում ասեղներով գրված լիներ, խրատ կլիներ մարդկանց համար»:

Հետո ծերունին նստեց վաճառականի մոտ ու ասաց. «Ալլահն էր վկա, ով եղբայր, ես չեմ հեռանա քեզանից, մինչև շտեմես, թե ինչ է տեղի ունենում քո և իֆրիտի միջև»: Եվ նա նստեց նրա կողքին, և երկուսով սկսեցին զրուցել, և վաճառականին տիրեց ա՛հ ու սարսափ ու ծանր վիշտ

ու մեծ մտատանջություն, իսկ վիթի տերը նրա կողքին էր: Եվ հանկարծ մոտեցավ նրանց մի ուրիշ ծերունի, և նրա հետ երկու շուն, և նա ողջունեց (իսկ շները որսորդական սև շներ էին) և ողջունելուց հետո հարցրեց. «Ինչո՞ւ եք նստել այստեղ, որ ջինների որջն է»: Եվ նրան պատմեցին ամեն ինչ սկզբից մինչև վերջ: Եվ նա հենց նոր էր նստել, երբ նրանց մոտեցավ մի երրորդ ծերունի, ու նրա հետ մի ճարտուկ ջորի կար: Եվ ծերունին ողջունեց ու հարցրեց, թե ինչու են նրանք այդտեղ, և նրան պատմեցին ամեն ինչ սկզբից մինչև վերջ,— իսկ կրկնելը օգուտ չունի, ո՞վ տյարք իմ,— և նա էլ նստեց նրանց հետ: Եվ հանկարծ անապատից շարժվեց փոշու պտտվող, վիթխարի մի սյուն, և երբ փոշին ցրվեց, պարզվեց, որ դա հենց նույն ջինն է, և նրա ձեռքին մերկացրած սուբն է, իսկ աչքերը կրակ են թափում: Եվ մոտենալով նրանց, ջիննը քաշեց վաճառականի թևից ու գոչեց. «Վե՛ր կաց, ես պիտի սպանեմ քեզ, ինչպես դու սպանեցիր որդուս, որը կյանքից էլ թանկ էր ինձ համար»: Եվ վաճառականը հառաչեց ու լաց եղավ, և երեք ծերունիները նույնպես լացեցին և սուղ ու շիվան բարձրացրին:

Եվ առաջին ծերունին՝ վիթի տերը, անշատվեց մյուսներից և, համբուրելով իֆրիտի ձեռքը, ասաց. «Ո՞վ ջինն, պսակդ ջինների արքաների, եթե ես քեզ պատմեմ, թե ինչ է պատահել ինձ ու այս վիթին, և դու զարմանալի համարես իմ պատմությունը, կբաշխե՞ս ինձ այս վաճառականի արջան մեկ երրորդ մասը»: — «Այո՛, ծերուկ,— պատասխանեց իֆրիտը,— եթե դու ինձ պատմես մի պատմություն, և դա ինձ համար զարմանալի լինի, ես քեզ կբաշխեմ սրա արջան մեկ երրորդը»:

ԱՌԱՋԻՆ ԾԵՐՈՒՆՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Գիտցիր, ով իֆրիտ,— ասաց այնժամ ծերունին,— որ այս վիթը իմ հորեղբոր աղջիկն է և մի տեսակ իմ միսն ու արյունը: Ես ամուսնացա նրա հետ, երբ նա բուրոսվին դեռատի էր, և ապրեցի նրա հետ մոտ երեսուն տարի, բայց երեխա չունեցա նրանից: Այն ժամանակ ես վերցրի մի հարճ ու նա պարզեց ինձ մի տղա՝ լիալուանի պես գեղեցիկ, ու նրա աչք-ունքը գեղեցկության կատարելությունն էր: Նա մեծացավ ու հասակ տոավ ու տասնհինգ տարեկան դարձավ: Այդ ժամանակ այնպես պատահեց, որ ես մի ուրիշ քաղաք պիտի գնայի, և ճամփա ընկա, զանազան ապրանքներ վերցնելով հետս: Իսկ իմ հորեղբոր աղջիկը՝ այս վիթը, փոքր հասակից կախարդություն ու հմայություն էք սովորել, և նա տղայիս հորթուկ դարձրեց, իսկ այն հարճին՝ տղայի

մորը, կով, և հովվին հանձնեց նրանց: Եվ երկարատև ճանապարհորդութունից ես վերադարձա և հարցրի տղայիս ու նրա մոր մասին, և հորեղբորս աղջիկը ինձ ասաց. «Քո կինը մեռել է, իսկ տղադ փախել, և ես չգիտեմ, թե որտեղ է նա»: Եվ մի ամբողջ տարի ես տխուր սրտով ու արցունքոտ աչքերով նստեցի, մինչև ալլահի մեծ տոնը¹ եկավ, և ես մարդ ուղարկեցի հովվի մոտ ու պատվիրեցի նրան մի գեր կով բերել: Եվ հովիվը բերեց մի գեր կով (իսկ դա իմ հարճն էր, որին կախարդել էր այս վիթը), և ես փեշերս քշտեցի ու վերցրի դանակը, ուզելով մորթել նրան, բայց կովն սկսեց բառաչել, թառանչել ու լացել: Եվ ես զարմացա դրանից, ու մեղքս եկավ: Ու ես բաց թողեցի նրան ու հովվին ասացի. «Մի ուրիշ կով բեր»: Բայց հորեղբորս աղջիկը բղավեց. «Դա՛ մորթիր, ես ավելի լավն ու գեղը շունեմ»: Եվ ես մոտեցա կովին, որ մորթեմ, բայց նա բառաչեց, և այնժամ ես վեր կացա և հրամայեցի այն հովվին՝ մորթել ու քերթել նրան: Եվ հովիվը մորթեց ու քերթեց նրան, բայց ոչ միս դուրս եկավ, ոչ ճարպ, ոչինչ, բացի մորթից ու ոսկորներից: Եվ ես զղջացի, որ մորթել տվեցի այդ կովը, բայց իմ զղջումից օգուտ չկար, ու ես այն հանձնեցի հովվին ու ասացի. «Մի գեր հորթ բե՛ր»: Եվ հովիվը բերեց տղայիս: Եվ երբ հորթուկը տեսավ ինձ, կտրեց վզի թուր և վազեց ինձ մոտ ու սկսեց քսվել՝ լալով ու թառանչելով: Այնժամ մեղքս եկավ և ես ասացի հովվին, «Մի կով բեր, իսկ դրան պահիր»: Բայց իմ հորեղբոր աղջիկը՝ այս վիթը, բղավեց ինձ վրա ու ասաց. «Անպայման այդ հորթը պետք է մորթել այսօր: Զէ՛ որ այսօր սրբազան ու օրհնյալ այն օրն է, երբ մորթում են միայն ամենալավ անասունը, իսկ մեր հորթերի մեջ դրանից գերն ու լավը չկա»:

«Տես, թե ինչ դուրս եկավ այն կովից, որ մորթեցի քո հրամանով, — ասացի նրան: — Տեսնո՞ւմ ես, մենք խաբվեցինք նրա տեսքից և ոչ մի օգուտ չունեցանք, և ես խիստ զղջում եմ, որ մորթել եմ նրան, և հիմա, այս անգամ, ես չեմ ուզում ոչինչ լսել այս հորթուկին մորթելու մասին»: — «Երդվում եմ ալլահով գթած ու ողորմած, որ դու պետք է մորթես դրան այս սուրբ օրը, ապա թե ոչ, դու իմ մարդը չես, և ես քո կինը չեմ», — բղավեց հորեղբորս աղջիկը: Եվ, լսելով նրանից այս ծանր խոսքերն ու չիմանալով նրա մտադրությունները, ես մոտեցա հերթին ու դանակը ձեռքս առա...»:

¹ Ալլահի մեծ տոնը կամ «գրհերի տոնը» լինում է «ուխտագնացության» ամսին (մահմեդական լուսնային տոմարի 12-րդ ամիսը): Այդ տոնի ժամանակ ուխտավորները, Մեքքա ժամանելով, պարտադիր զոհարեցություններ են կատարում:

Բայց այստեղ լույսը բացվեց, և Շահրազադեն ընդհատեց արտոնված գրույցը:

Եվ նրա քույրը բացականչեց. «Ո՛վ քույրիկ, ինչ գեղեցիկ ու լավ ու գրավիչ ու քաղցր է քո պատմութիւնը»:

Բայց Շահրազադեն ասաց. «Ո՛ւր սա և ո՛ւր նա, որ պիտի պատմեմ եկող գիշեր, եթե ապրեմ և արքան գթա ինձ»:

Եվ արքան այդ ժամանակ ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, ես նրան չեմ սպանի, մինչև չսեմ նրա պատմութիւնն վերջը»:

Հետո նրանք անցկացրին այդ գիշերը մինչև առավոտ իրար գրկած, և արքան գնաց դատ ու դատաստան անելու, իսկ վեղիրը եկավ նրա մոտ՝ պատանքը թևի տակ: Եվ դրանից հետո արքան վճիռներ արձակեց ու պաշտոնի նշանակեց ու պաշտոնից արձակեց մարդկանց մինչև օրվա վերջը և ոչինչ չհրամայեց վեզիրին, և վեզիրը անշափ զարմացավ: Իսկ հետո ատյանը փակվեց, և Շահրիար արքան քաշվեց իր ննջարանը:

Իսկ երբ իջավ երկրորդ գիշերը, Դունյազադեն ասաց իր քույր Շահրազադեին. «Ո՛վ քույրիկ, վերջացրու վաճառականի ու ոգու պատմութիւնը»:

Եվ Շահրազադեն պատասխանեց. «Սիրով ու հաճույքով, եթե արքան ինձ թույլ տա»:

Եվ արքան ասաց. «Պատմի՛ր»:

Եվ Շահրազադեն շարունակեց.

«Լսել եմ, ո՛վ երջանիկ արքա և արդար տիրակալ, որ երբ ծերունին ուզեց մորթել հորթը, նրա սիրտը ալեկոծվեց, և նա ասաց հովվին. «Պահիր այս հորթուկը անասունների մեջ» (իսկ այս բոլորը ծերունին պատմում էր ջիննին, և ջիննը լսում էր ու ապշում նրա զարմանալի խոսքերից):

«Եվ այնպես եղավ, որ ջինների արքայից արքա,— շարունակեց վիթի տերը,— որ հորեղբորս աղջիկը, ահա՛ այս վիթը, նայեց ու տեսավ ու ասաց ինձ. «Մորթի՛ր հորթը, նա գեր է»: Բայց ինձ համար հեշտ չէր նրան մորթել, և ես հրամայեցի հովվին վերցնել հորթը, և նա վերցրեց ու տարավ:

Իսկ հետևյալ օրը, երբ ես նստած էի, հանկարծ ինձ մոտ է գալիս հովիվը և ասում. «Տեր իմ, ես քեզ մի այնպիսի բան կասեմ, որից դու կուրախանաս, և ինձ բարի լուրի համար պարգև պիտի տաս»:— «Լավ»,— պատասխանեցի ես, եվ հովիվն ասաց. «Ով վաճառական,

ես մի աղջիկ ունեմ, որը փոքր հասակից կախարդութիւնն է սովորել մեզ մոտ ապրող մի պառավից: Եվ ահա երեկ, երբ դու հորթը ինձ տվեցիր, ես գնացի աղջկաս մոտ, և նա նայեց հորթին ու դեմքը ծածկեց ու լաց եղավ, իսկ հետո ծիծաղեց ու ասաց. «Օ՛, հայրիկ, մի՞թե այդքան քիչ արժեք ունեմ ես քո աչքում, որ դու ինձ մոտ օտար տղամարդիկ ես բերում»:— «Ո՛ր է օտար տղամարդը,— հարցրի ես,— և ինչո՞ւ ես դու լալիս ու ծիծաղում»:— «Այդ հորթը, որ քեզ հետ է, մեր տիրոջ տղան է,— պատասխանեց աղջիկս:— Նա կախարդված է, և նրան իր մոր հետ կախարդել է իր հոր կինը: Ահա թե ինչու ես ծիծաղեցի, իսկ լաց եղա նրա մոր համար, որին սրա հայրը մորթել է»: Եվ ես խիստ զարմացա և հենց որ տեսա, որ արեւը ծագել է, հկա քեզ հայտնելու այս մասին»:

Հովվից այս խոսքերը լսելով, ո՛վ ջինն, ես նրա հետ գնացի՝ ինձ տիրած ուրախութիւններից ու խնդութիւններից հարբած առանց գինու, և մտա նրա տունը, և հովվի աղջիկը ողջունեց ինձ ու ձեռքս համբուրեց, իսկ հորթը մոռնեցավ ու սկսեց քսվել ինձ: Եվ ես սասացի հովվի աղջկան. «Ը՛ի՛շտ է արդյոք այն, ինչ որ դու ասում ես այս հորթի մասին»: Եվ նա պատասխանեց. «Այո՛, տեր իմ, սա քո տղան է և քո սրտի լավագույն մասը»:— «Ո՛վ աղջիկ,— ասացի ես այնժամ,— եթե դու ազատես սրան, ես քեզ կտամ իմ բոլոր անասունները և ամբողջ ունեցվածքս և այն ամենը, ինչ որ հիմա քո հոր մոտն է»: Բայց աղջիկը ծիծաղեց ու ասաց. «Ո՛վ տեր իմ, ես փողի ազահութիւնն չունեմ և այդ բանը կանեմ միայն երկու պայմանով. առաջինը՝ ինձ նրա կինը դարձրու, և, երկրորդ՝ թույլ տուր, որ ես կախարդեմ նրան, ով սրան կախարդել է, և կապանքի տակ դնեմ, որովհետև այլապես ինձ սպառնում է նրա պատժի վտանգը»:

Լսելով այս խոսքերը հովվի աղջկանից, ո՛վ ջինն, ես ասացի. «Բացի նրանից, ինչ որ ուզում ես, քեզ կհասնեն քո հոր ձեռքում գտնվող իմ բոլոր անասուններն ու ունեցվածքը, իսկ ինչ վերաբերում է հորեղբորս աղջկան, ապա նրա արյունը թող քեզ բաշխված լինի, արգելված չէ»:

Եվ երբ հովվի աղջիկը լսեց այս, վեցրեց գավաթը և ջրով լցրեց, հետո ջրի վրա հմայական խոսքեր ասաց և ցողեց նրանով հորթին, ասելով. «Եթե դու հորթ ես մեծն ալլահի արարչութեամբ, մնա այդ կերպարանքով ու մի՛ փոխվիր, իսկ եթե դու կախարդված ես, ստացիր քո նախկին կերպարանքը մեծն ալլահի հաճութեամբ»: Եվ հանկարծ հորթը ցնցվեց ու մարդ դարձավ, և ես նետվեցի դեպի նա ու գոչեցի. «Հանուն ալլահի, աղաչում եմ, պատմիր ինձ, թե իմ հորեղբոր աղջիկը ի՞նչ է

արել քեզ ու քո մորը»: Եվ նա տեղյակ դարձրեց ինձ, թե ինչ էր պատահել իրենց, և ես ասացի. «Ով որդի, ալլահը քեզ է ուղարկեց նրան, ով ազատեց քեզ ու վերականգնեց քո իրավունքները»:

Գրանից հետո, ով ջինն, ևս հովվի աղջկան ամուսնացրի նրա հետ, իսկ այդ աղջիկն էլ կախարդեց հորեղբորս աղջկան՝ այս վիթիւն, և ասաց. «Սա հիանալի կերպարանք է. վայրենի չէ, և տեսքն էլ զգականք չի պատճառում»: Եվ հովվի աղջիկը մեզ հետ ապրեց օրեր ու գիշերներ և գիշերներ ու օրեր, մինչև ալլահը նրան իր մոտ տարավ, իսկ նրա վախճանվելուց հետո իմ որդին Հնդկաստանի կողմերը գնաց, այսինքն երկիրն այս վաճառականի, որին պատահեց այն, ինչ որ պատահել է: Եվ այն ժամանակ ես վերցրի այս վիթիւն՝ իմ հորեղբոր աղջկան, և նրա հետ երկրից երկիր ման եկա, տեսնելու, թե ինչ պատահեց որդուս, և ճակատագիրը ինձ այստեղ բերեց, և ես տեսա այս վաճառականին, որ նստել ու լաց էր լինում: Ահա իմ պատմութունը»:

«Իա զարմանալի պատմութուն է,— ասաց ջիններ,— և ես քեզ եմ բաշխում վաճառականի արյան մեկ երրորդը»:

Եվ այդ ժամանակ առաջ եկավ այն ծերունին, որ տներ որսորդական շներ, և ջիննին ասաց. «Եթե ես քեզ պատմեմ, թե ինչ է պատահել ինձ ու իմ երկու եղբայրներին՝ այս երկու շներին, և դու իմ պատմութունը է՛լ ավելի զարմանալի ու օտարոտի համարես, կբաշխե՞ս ինձ այս վաճառականի հասցանքի մեկ երրորդը»: — «Եթե քո պատմութունն ավելի զարմանալի ու օտարոտի լինի, մեկ երրորդը քոնն է», — պատասխանեց ջիններ:

ԵՐԿՐՈՐԿ ԾԵՐՈՒՆՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացիր, ո՛վ ջինների արքայից արքա,— սկսեց ծերունին,— որ այս երկու շները իմ եղբայրներն են, իսկ ես՝ երրորդն եմ: Իմ հայրը մեռնելով՝ թողեց մեզ երեք հազար դինար¹. և ես կրպակ բացեցի, որ առևարով գբաղվեմ, իմ եղբայրները նույնպես կրպակներ բացեցին: Բայց ես իմ կրպակում երկար շմնացի, որովհետև իմ ավագ եղբայրը՝ մեկն այս շներից, վաճառեց իր ունեցածը հազար դինարով և ալրանքներ ու ամեն կարգի իրեր գնելով, ճանապարհորդության դիմեց: Նա մի ամբողջ տարի բացակայեց և մի օր էլ, երբ ես իմ կրպակում նստած էի, հանկարծ իմ կողքին մի մուրացկան կանգնեց: Ես նրան ասացի. «Ալլա-

¹ Դինար — ոսկեդրամ: XIII—XV դարերում դրա արժեքը եգիպտոսում հավասար էր գրեթե հինգ սուբու՝ ոսկու:

հըն օգնական»։ Բայց մուրացկանը, լաց լինելով, գոչեց։ «Դու արդեն ինձ չե՞ս ճանաչում»։ Եվ այնժամ ես ուշադիր նայեցի նրան ու հանկարծ տեսնեմ՝ իմ եղբայրն է։ Եվ ես վեր կացա ու ողջունեցի նրան ու, կրպակի ներսը տանելով, հարցրի, թե ինչ է պատահել նրան։ Բայց նա պատասխանեց. «Մի հարցրու. փողս գնաց, և բախտը դավաճանեց ինձ»։ Եվ ես նրան անմիջապես բաղնիք տարա, իմ զգեստները հագցրի և բերեցի ինձ մոտ, ապա հաշվեցի իմ կրպակի մուտքն ու ելքը և տեսա, որ հազար դինարի օգուտ ունեմ և իմ դրամագլուխը երկու հազար դինար է։ Ես կիսեցի այդ փողը եղբորս հետ և նրան ասացի. «Այնպես կարծիր, թե դու ոչ ճանապարհորդել ես, ոչ էլ օտարության մեջ եղել»։ Եվ եղբայրս ուրախ-ուրախ վերցրեց փողը և կրպակ բացեց։

Եվ անցան օրեր ու գիշերներ, և իմ երկրորդ եղբայրը, իսկ դա մյուս շունն է, վաճառեց իր ունեցած-չունեցածը և ուզեց ճանապարհորդել։ Մենք փորձեցինք հետ պահել նրան, բայց չկարողացանք, և նա ապրանքներ գնելով՝ ճանապարհորդների հետ մեկնեց։ Նա մի ամբողջ տարի մեզ մոտ չերևաց, իսկ հետո ինձ մոտ եկավ ճիշտ այնպես, ինչպես իր ավագ եղբայրը, և ես ասացի նրան. «Ո՞վ եղբայր իմ, չէ՞ որ ես քեզ խորհուրդ տվեցի չգնալ»։ Իսկ նա լաց եղավ ու բացականչեց. «Ո՞վ եղբայր իմ, այդպես էր վիճակված, և ահա ես հիմա աղքատ եմ։ Ես մի քոռ դիրհեմ էլ չունեմ, ու մերկ եմ, առանց շապիկի»։ Եվ ես նրան վերցրի, ո՞վ ջինն, ու բաղնիք տարա ու նոր հագուստ հագցրի՝ իմ զգեստներից աւելով նրան, իսկ հետո խանութս գնացի նրա հետ, ու մենք կերանք ու խմեցինք, և այնուհետև ես ասացի. «Ո՞վ եղբայր իմ, ես ամեն նոր տարի մի անգամ իմ հաշիվները իմի եմ բերում. և ամբողջ եկամուտը, ինչ էլ որ լինի, իմն ու քոնը կլինի»։ Եվ ես հաշվեցի, ո՞վ իֆրիտ, իմ կրպակի շրջանառությունը, և պարզվեց, որ երկու հազար դինար ունեմ և ես գոհություն հայտնեցի արարչին, և թող բարձրյալ ու փառավորյալ լինի նա։ Իսկ հետո ես հազար դինարը եղբորս տվեցի, և ինձ մոտ մնաց հազար դինար, և եղբայրս կրպակ բացեց, ու մենք շատ օրեր հանգիստ ապրեցինք։

Բայց մի առ ժամանակ հետո եղբայրներս ինձ դիմեցին, խնդրելով, որ ես նրանց հետ մեկնեմ, սակայն ես այդ շարեցի և ասացի նրանց. «Ի՞նչ օգուտ եք սեսել դուք ճանապարհորդությունից, որ ես ինչ տեսնեմ»,— և շլսեցի նրանց։ Եվ մենք մնացինք մեր կրպակներում՝ առևուար անելով։ Եղբայրներս ամեն տարի առաջարկում էին ինձ ճանապարհորդել, բայց ես չէի համաձայնում, մինչև որ այդպես անցավ վեց տարի։ Եվ այդ ժամանակ ես նրանց թույլ տվեցի գնալ և ասացի. «Ո՞վ

եղբայրներ, ես էլ եմ գալիս ձեզ հետ, բայց եկեք տեսնենք, թե որքան փող կա ձեզ մոտ», — և նրանց մոտ ոչինչ չգտա, ընդհակառակը, նրանք ամեն ինչ վատնել էին, շատակերության, հարբեցողության ու վայելքներին արվելով: Բայց ես նրանց հետ շխտեցի և ոչինչ շատացի նրանց, այլ ամփոփեցի կրպակիս հաշիվները և իմ ունեցած ամբողջ ապրանքն ու գույքը փողի վերածեցի, և ստացվեց վեց հազար դինար: Եվ ես ուրախացա և կիսեցի այդ գումարը և ասացի եղբայրներիս. «Ահա երեք հազար դինար ինձ ու ձեզ համար, և դրանով մենք առևտուր կանենք»: Իսկ մյուս երեք հազարը ես հորեցի, մտածելով, թե ինձ էլ կարող է նույնը պատահել, ինչ որ նրանց, և երբ ես վերադառնամ, ինձ մաս մնացած կլինի երեք հազար դինար, սրով մենք նորից կրպակներ կբացենք: Եղբայրներս համաձայնեցին, և ես նրանց տվեցի հազարական դինար, ու ինձ մոտ էլ մնաց հազար դինար, և մենք առանք հարկ եղած ապրանքներն ու սլատրաստվեցինք ճանապարհորդության ու վարձեցինք մի նավ ու նրա մեջ տեղավորեցինք մեր ինչքը: Եվ մենք նավարկեցինք առաջին օրը և երկրորդ օրը և ճանապարհորդեցինք մի ամբողջ ամիս, մինչև որ մեր ապրանքով հանդերձ հասանք մի քաղաք: Մենք ամեն մի դինարին տասը շահեցինք և ուզում էինք վերադառնալ, երբ հանկարծ ծովի ափին ցնցոտիներ հագած մի աղջիկ տեսանք: Նա իմ ձևերը համբուրեց ու ասաց. «Ո՞վ տեր, ընդունա՞կ ես դու ողորմության ու բարեգործության, որի համար ես քեզ շնորհակալություն կհայտնեմ»: — «Այո՛, — պատասխանեցի ես, — ես սիրում եմ բարեգործությունն ու ողորմությունը և կօգնեմ քեզ, եթե նույնիսկ դու շնորհակալություն չհայտնես ինձ»: Եվ այդ ժամանակ աղջիկն ասաց. «Ո՞վ տեր, ամուսնացիր ինձ հետ և քո երկիրը տար ինձ: Ես ինձ քեզ եմ տալիս, եղիր իմ նկատմամբ ողորմած, որովհետև ես մեկն եմ նրանցից, որոնց լավությունն ու բարեգործությունն են անում, իսկ ես երախտագետ կլինեմ քո նկատմամբ: Եվ իմ վիճակը թող քեզ մոլորության մեջ չգցի»: Եվ երբ ես լսեցի աղջկա խոսքերը, իմ սիրտը ձգտեց նրան՝ ի կատարումն նրա, ինչ հաճելի է ալլահին մեծ ու փառավոր, և ես վերցրի աղջկան ու ողորմեցի ու փափուկ անկողին գցեցի նավի վրա ու հոգատար եղա նրանկատմամբ ու պատվեցի նրան: Իսկ հետո մենք շարունակեցինք մեր ճանապարհը և իմ սրտում մեծ սեր ծնվեց աղջկա նկատմամբ, ու ես գիշեր-ցերեկ շէի բաժանվում նրանից: Նրա պատճառով ևս անտարբեր դարձա եղբայրներիս նկատմամբ, և նրանք խանդեցին ինձ ու նախանձեցին իմ հարստությանն ու ապրանքներիս առատությանը, և նրանց տղա՛հ աչքերին այլևս քուն չիջավ: Եվ իմ եղբայրները մտածեցին, թե

ինչպես սպանեն ինձ ու տիրանան իմ փողերին, և ասացին. «Սպանենք նրան, ու նրա բոլոր փողերը մերը կլինեն»: Եվ սատանան բարեզարդեց այդ գործը նրանց մտքերում: Եվ նրանք մոտեցան ինձ, երբ ես կնոջս հետ քնած էի, և ինձ ու նրան վերցրին ու ծովը նետեցին: Եվ այդօր իմ կինը զարթնեց, թափ տվեց իրեն ու դարձավ իֆրիտուհի ու տարավ ինձ ու հանեց մի կղզի: Հետո նա անհայտացավ ու վերադառնալով ինձ մոտ առավոտյան դեմ՝ ասաց. «Ես քո կինն եմ և ես քեզ հանեցի ու փրկեցի մահից մեծ ալլահի հաճությամբ: Իմացիր, որ ես շինն եմ, և երբ ես քեզ տեսա, իմ սիրտը սիրեց քեզ հանուն ալլահի,— իսկ ես հավատում եմ ալլահին ու նրա մարգարեին,— և թող ալլահը փառավորի նրան, և թող մեծարված լինի նա: Եվ ես եկա քեզ մոտ այն կերպարանքով, ինչպես դու տեսար ինձ, և դու ինձ քո կինը դարձրիր, և ես էլ քեզ փրկեցի խեղդվելուց: Բայց ես զայրացած եմ քո եղբայրների վրա և անպայման պիտի սպանեմ նրանց»: Նրա խոսքերը լսելով, ես ապշեցի և շնորհակալություն հայտնեցի իր արածի համար և ասացի նրան. «Իմ եղբայրներին դու մի սպանիր»,— և ես հայտնեցի նրան այն ամենը, ինչ տեղի էր ունեցել իմ ու եղբայրներիս միջև՝ սկզբից մինչև վերջ: Իսկ այդ բոլորն իմանալով, նա ասաց. «Այս գիշեր ես կթռչեմ նրանց մոտ, կխորտակեմ նրանց նավը և կխեղդեմ նրանց»:— «Աղաչում եմ քեզ հանուն ալլահի,— ասացի ես,— մի արա այդ: Չէ՞ որ առածն ասում է. «Ո՛վ շարիքին բարիքով հատուցող, շարագործին հենց այն էլ բավական է, ինչ որ նա արել է»: Ինչ էլ որ լինի, նրանք իմ եղբայրներն են»:— «Ես անպայման պիտի սպանեմ նրանց»,— ասաց իֆրիտուհին: Եվ ես սկսեցի աղաչել-պաղատել նրան, և այդ ժամանակ նա ինձ թոցրեց ու իմ տան կտուրին իջեցրեց: Եվ ես բացեցի դուռը և հանեցի, ինչ-որ հողի տակ թաքցրել էի, և բացեցի իմ կրպակը, բարի մաղթելով մարդկանց և ապրանքների գնելով: Իսկ երբ երեկո եղավ, ես տուն դարձա ու գտա այս երկու շներին, դռանը կապած, և, ինձ տեսնելով, նրանք վեր կացան ու լաց եղան ու փաթաթվեցին ինձ:

Եվ ես հազիվ էի տեսել նրանց, երբ կինս ասաց ինձ. «Դրանք քո եղբայրներն են»:— «Իսկ ո՞վ է նրանց շուն դարձրել»,— հարցրի ես: Եվ նա պատասխանեց. «Ես մարդ ուղարկեցի քոջս՝ հետևից, և նա այդ քանն արեց, ու դրանք տասը տարուց շուտ չեն ազատվի այդ վիճակից»: Եվ, ահա, ես այստեղ եկա, նրա մոտ գնալով, որպեսզի նա ազատի իմ եղբայրներին, քանի որ նրանք արդեն տասը տարի անց են կացրել այդ վիճակում, և ես տեսա այս վաճառականին, և նա պատմեց

ինձ իրեն պատահածը, և ես ուզեցի մնալ ու տեսնել, թե ինչ է տեղի ունենալու քո և նրա միջև: Ահա իմ պատմությունը»:

«Դա զարմանալի պատմություն է, և ես քեզ եմ բաշխում վաճառականի արշան ու նրա հանցանքի մեկ երյուրդը»,— ասաց ջիննը:

Եվ այդ ժամանակ երրորդ ծերունին՝ ջորու տերը, ասաց. «Ես քեզ կուսումեմ այս երկուսի պատմածից ավելի տարօրինակ պատմություն, իսկ դու, ո՞վ ջինն, բաշխիր ինձ նրա արշան ու հանցանքի մնացորդը»:
— Լավ»,— ասաց ջիննը:

ԵՐՐՈՐԿ ԾԵՐՈՒՆՈՒ ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ով սուլթանդ ու գլխավորդ բոլոր ջինների,— սկսեց ծերունին,— իմացած եղիր, որ այս ջորին իմ կինն էր: Ես մեկնեցի ճանապարհորդության և տնից բացակայեցի մի ամբողջ տարի, իսկ հետո ավարտեցի ճանապարհորդությունս ու գիշերով վերադարձա կնոջս մոտ: Եվ ես տեսա, որ նրա հետ, անկողնու մեջ, պառկած էր սևամորթ սարուկը, և նրանք խոսում էին, խաղում, ծիծաղում, համբուրվում ու զվարճանում: Եվ ինձ տեսնելով, կինս հապճեպով տեղից վեր կացավ, վերցրեց ջրի կուժը և, ինչ-որ բաներ արտասանելով, ջուր շաղ տվեց վրաս ու ասաց. «Փոխի՛ր կերպարանքդ և շան տեսք ընդունիր»: Եվ ես անմիջապես շուն դարձա, և կինս դուրս արեց ինձ տնից: Եվ ես դուրս եկա դարպասից ու այնքան գնացի, մինչև որ հասա մսագործի իանոթը: Եվ ես մտեցա ու սկսեցի ոսկորներ կրծել, և երբ խանութի տերը նկատեց ինձ, վերցրեց ու տարավ իր տունը: Եվ մսագործի աղջիկը, տեսնելով ինձ, ծածկեց երեսը և գոչեց. «Դու տղամարդ ես բերում և նրա հետ մտնում մեզ մոտ»:— «Մ՛եր է տղամարդը»,— հարցրեց նրա հայրը: Եվ աղջիկը պատասխանեց. «Այդ շունը մի տղամարդ է, որին կախարգել է իր կինը, իսկ ես կարող եմ ազատել նրան»: Եվ լսելով աղջկա խոսքերը՝ հայրը բացականչեց. «Հանուն ալլահի, աղաչում եմ, աղջիկս, ազատի՛ր նրան»: Եվ աղջիկը վերցրեց ջրով լի կուժը և ինչ-որ բաներ արտասանեց և մի քիչ ջուր ցնցվեց ինձ վրա ու ասաց. «Փոխի՛ր կերպարանքդ և ստացի՛ր նախկին տեսքդ»: Եվ ես ստացա իմ նախկին կերպարանքը և ամբուրեցի աղջկա ձեռքն ու ասացի. «Ես ուզում եմ, որ դու կախարգելս իմ կնոջը, ինչպես նա էր կախարգել ինձ»: Եվ աղջիկն ինձ մի քիչ ջուր ուղեց ու ասաց. «Երբ տեսնես, որ կինդ քնած է, այս ջուրը շաղ տուր նրա վրա և ուզածդ ասա, ու նա կդառնա այն, ինչ-որ դու կամենաս»: Եվ ես վերցրի ջուրը և գնացի կնոջս մոտ և, նրան քնած գտնելով, ջու-

րը ցնցողեցի վրան ու սասացի. «Թո՛ղ այդ կերպարանքդ և ջորի դարձի՛ր»,
Եվ նա իսկույն ջորի դարձավ, հենց այն. որին դու տեսնում ես քո աշ-
քերով, ով սուլթանդ ու գլխավորդ բոլոր ջինների»:

Եվ ջիններ հարցրեց ջորուն. «Ճի՞շտ է»: Եվ ջորին թափահարեց գլու-
խը և խոտեց այնպիսի նշաններով, որոնք նշանակում էին. «Այո, ալլա-
հը վկա, դա իմ պատմությունն է և հենց այն, ինչ որ պատահել է ինձ»:

Եվ երբ երրորդ ծերունին վերջացրեց իր պատմությունը, ջիններ
ցնցվեց հուզմունքից ու նրան բաշխեց վաճառականի արջան մեկ եր-
րորդը»...

Բայց այստեղ լույսը բացվեց, և Շահրազադեն ընդհատեց արտոն-
ված գրույցը:

Եվ քույրը նրան սասաց. «Ո՛վ քույր, ինչ քաղցր է քո պատմությունը
ու լավ ու հաճելի ու նուրբ»:

Եվ Շահրազադեն պատասխանեց. «Ի՛նչ է սա նրա համեմատու-
թյամբ, ինչ որ պիտի պատմեմ առաջիկա գիշերը, եթե ողջ լինեմ, և ար-
բան գթա ինձ»:

«Ալլա՛հը վկա, — բացականչեց արբան, — ես նրան շեմ սպանի,
մինչև ամբողջ պատմությունը շխեմ, որովհետև դա խիստ զարմանա-
լի է»:

Եվ հետո նրանք այդ գիշերվա մնացորդը անցկացրին գրկախառ-
նրված, և արքան գնաց դատ ու դատաստան անելու, և եկան զորքերը,
և վեզիրը, և դիվանատունը լցվեց մարդկանցով: Եվ արքան դատեց,
նշանակեց, պաշտոնից արձակեց, արգելքներ դրեց և հրամաններ ար-
ձակեց մինչև օրվա վերջը: Իսկ հետո ատյանը փակվեց ու Շահրիար
արքան գնաց իր ննջարանը: Եվ գիշերը մոտենալուն պես նա բավարա-
րեց իր կարիքը վեզիրի աղջկա հետ:

Իսկ երբ վրա հասավ երրորդ գիշերը, նրա քույր Դունյազադեն
ասաց. «Ո՛վ քույրիկ, վերջացրու քո պատմությունը»:

Եվ Շահրազադեն պատասխանեց. «Սիրով ու հաճությամբ: Պատ-
մում են, ո՛վ բարեբախտ արքա, որ երրորդ ծերունին պատմեց ջին-
նին երկու ծերունիների պատմածներից ավելի օտարոտի իր պատմու-
թյունը, և ջիններ անշափ զարմացավ ու ցնցվեց հուզմունքից ու ասաց.
«Քեզ եմ բաշխում վաճառականի հանցանքի մնացորդը և ազատում եմ
նրան»: Եվ վաճառականը դարձավ ծերունիներին ու շնորհակալություն
հայտնեց, և նրանք վաճառականին շնորհավորեցին փրկության առթիվ,
և հետո յուրաքանչյուրը վերադարձավ իր երկիրը: Բայց սա ձկնորսի
հեքիաթից զարմանալի չէ»:

«Իսկ ինչպե՞ս է եղել դա», — հարցրեց արքան:





Պատմում են, ո՞վ բարեբախտ արքա,— ասաց Շահրազադեն,— որ մի հասակն առած ձկնորս կար, և նա ուներ կին ու երեք երեխա, և ապրում էր աղքատութեան մեջ: Եվ նա սովորութեամբ ուներ իր ուռկանը օրական շորս անգամ ջուրը գցել, և ո՛չ ավելի, ո՛չ պակաս: Եվ, ահա, մի անգամ կեսօրվա պահին նա դուրս եկավ տնից և ծովափ դնաց ու կողովը ցած դրեց ու, փեշերը հավաքելով, ծովը մտավ և ուռկանը նետեց: Նա սպասեց, մինչև ուռկանը բացվեց ջրի մեջ և հետո թելերը ձգեց, ու երբ զգաց, որ ուռկանը ծանրացել է, փորձեց դուրս բաշել, բայց չկարողացավ, և նա, ուռկանի ծայրը ձեռքին, ափ դուրս եկավ, մի սեպ խփեց գետնին, ուռկանի ծայրը կապեց սեպին և, հանվելով, մտավ ջուրը ու այնքան քաշքշեց ուռկանը, մինչև հանեց: Եվ նա ուրախացած դուրս եկավ և, շորերը հագնելով, մոտեցավ ուռկանին, բայց դրա մեջ մի սատկած էջ գտավ, որի ծանրութեանից ուռկանը պատահաբար ստվել էր: «Չկա՛ ավելի հզոր ուժ ու կարողություն, քան զորությունն այլահի մեծ ու բարձրջալ: Հիրավի, սա շատ զարմանալի ուտելիք է,— ասաց նա այնուհետև և արտասանեց.

Ո՞վ դու, որ առավել ես խաղարը գիշերվա ու գիրկը կորստյան,
 Մի՛ լարիր ջանքդ զուր. չեն տալիս հատուցում գործերին եռանդուն:
 Ա՛յ, նայի՛ր դու ծովին, տես ձկնորսն է, ահա, մոտենում հուսավառ,
 Որսի է նա գալիս՝ գիշերվա առադերի լուսերի հսկումով:
 Զրի մեջ հորձանուտ ալիքները սաստիկ հարվածում են նրան,
 Իսկ նա, տե՛ս, իր ուռած ուռկանից չի դարձնում հայացքը մի վայրկյան:
 Բայց խաղաղ արթնութեամբ ողջ գիշերն անց կացրած, գոհասիրտ այն ձկնով,
 Որի վիղն ամրապես կարթի սուր, մահաբեր կեռիկն է մխրճվել,
 Իր այգ որսը նրան կծախի, ով հանգիստ ողջ գիշերն է քնել,

Քարիքով անսահման ու աստծու շնորհով պաշտպանված հոգսերից:
Գե, փառք տանք արաբչին, որ զրկում է մեկին, մյուսին շնորհում,
Որսում է մեկն այսպես, իսկ մյուսն՝ անվրդով այդ որսը վայելում»:

Հետո նա ասաց. «Մի՛ վհատվիր: Շնորհ անպայման կլինի, եթե մեծն
ալլահը կամենա», — և արտասանեց.

«Թե հանդիպես դու փորձանքի կամ շար բախտի զավերին,
Փառավորյալ մարդկանց վայել համբերությամբ տոգորվի՛ր.
Զգանգատվե՛ս ստրուկ մարդկանց, դա գոնգատ է բարու դեմ
Այն մարդկանց մոտ, որոնք բարիք չեն գործելու քեզ երբ...

Հետո նա ուռկանից հանեց էջը և սկսեց մզել ուռկանը, իսկ մզե-
լուց հետո կարգի բերեց այն և մտավ ծովն ու ասելով. «Հանուն ալլա-
հի», կրկին ուռկանը գցեց: Նա սպասեց, մինչև ուռկանը բացվեց ու
ծանրացավ և ավելի ամուր կառչեց, քան առաջին անգամ, և ձկնորսը
մտածեց, որ ձուկ է լցվել և, ուռկանի ծայրը կապելով, հանվեց, ջուրը
մտավ և այնքան քաշքշեց, մինչև, վերջապես, դուրս պոկեց այն: Նա
չարչարվեց ու մի կերպ ափ հանեց ուռկանը, բայց դրա մեջ գտավ ավա-
զով ու տիղմով լի մի կուժ: Եվ, այդ տեսնելով, ձկնորսը վշտացավ ու
արտասանեց.

«Օ՛, բավ է քեզ, ո՛վ դու զայրույթ շար բախտի,
Գեթ մեզմ եղի՛ր, թե արածդ քիչ է դեռ:
Տե՛ս, երևե՛մ իմ ապրուստը հոգալու,
Բայց ապրուստս էլ սպառված եմ ես տեսնում,
Օ՛, ինչ շատ են հիմարները կաճառում,
Ու որքա՛ն շատ՝ իմաստունները հողում»:

Հետո նա դեն նետեց կուժը և մզեց ուռկանն ու մաքրեց այն և,
թողություն խնդրելով մեծն ալլահից, երրորդ անգամ վերադարձավ ծով
և նորից ուռկանը գցեց: Եվ սպասելով, մինչև ուռկանը բացվի ջրի մեջ,
դուրս բաշեց այն, բայց գտավ դրա մեջ խեցիկներ ու ապակու կտորտանք
ու ոսկորներ: Այս անգամ նա խիստ զայրացավ ու լացեց ու ասաց.

«Այս է, ահա, վիճակը քո,
Եվ չես կարող տնօրինել գործդ դու,
Բախտը չի տա քեզ դյութանքի
Ոչ գիտություն, ոչ էլ ուժ ու զորություն:
Ի սկզբանե բաժանված են
Երջանկությունն ու հոգսերը բոլորին,
Աղքատություն՝ այս մի երկրին,

Իսկ հողերը արգասաբեր՝ այն մեկին:
 Բախտի ձեռքը ձախորդությամբ
 Տանջում, լքում է ուսյալին գիտնական,
 Ու բարձրացնում նրանց, ովքեր
 Արժանի են անարգանքի անսահման:
 Ո՞վ մահ, տա՛ր ինձ, իրոք դաժան,
 Անտանելի է կյանքը այս ինձ համար,
 Քանզի բաղը վեր է թռչում,
 Իսկ խեղճ բազեն իջնում վար:
 Էլ ի՞նչ վարմանք, երբ տեսնում ես
 Կարիքի մեջ արժանավոր մեծ մարդուն,
 Իսկ գաղապում, մոռեգնում է
 Չարը անարգ՝ իշխան դարձած բուրբին:
 Մի թռչունը ման է գալիս
 Աշխարհով մեկ՝ օրվա սնունդ գտնելու,
 Մինչդեռ մյուսն ամեն ինչով
 Ապահով է առանց տեղից շարժվելու»:

Հետո նա գլուխը դեպի երկինք բարձրացրեց ու ասաց. «Աստված, դու գիտես, որ ես իմ ուռկանը օրական միայն շորս անգամ եմ պցել, իսկ այսօր արդեն երեք անգամ պցեցի և ոչինչ շորսացի: Ուղարկի՛ր ինձ, ո՞վ աստված, այս անգամ իմ ապրուստը»:

Այնուհետև ձկնորսը ալլահի անունը տվեց ու ուռկանը ծովը նետեց և սպասեց, մինչև որ ջրի մեջ բացվեց ու ձգվեց այն, բայց չկարողացավ հանել, և պարզվեց, որ ուռկանը ծովի հատակին թախկառել է: «Չկա՛ ավիյի մեծ ուժ ու գորություն, քան գորությունն ալլահի մեծ ու բարձրյալ, — բացականչեց ձկնորսը և արտասանեց.

Թքած կյանքի ու երեսին, թե այս սխտի լինի միշտ.
 Իմ ողջ կյանքում թշվառություն եմ ես տեսել ու լուկ վիշտ:
 Թե անամոք է կյանքը մարդու արշայույսին այս օրվա,
 Մեկ էլ տեսար, երեկոյան խմեց բաժակը մահվան:
 Չէ՞ որ ես էլ այն մարդն էի, որ երբ մարդիկ հարց տային՝
 Ո՞վ է կյանքում երջանիկը. ասում էին՝ ահա՛ նա»:

Եվ նա հանվեց ու ջրի մեջ սուզվեց ու շարշարվեց, մինչև ուռկանը ասի հանեց և, բացելով, գտավ դրա մեջ ինչ-որ բանով լցված դեղին սղոյնձե մի սափոր, և դրա բերանը փակված էր կապարով, որի վրա գրույմած էր մատանին Դաուդի որդի մեր տեր Սուլեյմանի¹, խաղաղու-

¹ Սուլեյման որդի Դաուդի — մահմեդական պատմողական գրականության մեջ սիրված հերոսներից մեկը: Նրա անունը հաճախ է հիշվում «Հաչար ու մեկ գիշերում»: Ըստ ավանդության, Սուլեյմանի մատանու վրա փորագրված էր ալլահի այսպես կոչ-

Թյուն նրանց երկուսին էլ: Եվ տեսնելով անոթը, ձկնորսն ուրախացավ ու բացականչեց, «Ես շուկայում սղնձագործներին կվաճառեմ սա. մի տասը ոսկե դինար կարժենա»: Հետո նա շարժեց սափորը և տեսավ, որ ծանր է, և նկատեց, որ նա ամուր փակված է և ինքն իրեն ասաց. «Տեսնե՞ս ի՞նչ է մեջը: Մի բացեմ ու տեսնեմ, թե մեջն ինչ կա, հետո կժախեմ»: Եվ նա հանեց դանակը և շարշարվեց, մինչև որ կապարը պոկեց նրա բերանից և սափորը կողքի վրա թեքեց գետնին ու ցնցեց, որպեսզի մեջը եղածը թափվի, բայց ոչինչ չթափվեց, և ձկնորսը խիստ զարմացավ: Հետո սափորից ծուխ դուրս եկավ ու բարձրացավ մինչև երկնից ամպերն ու փռվեց երկրի երեսին, և երբ ծուխն ամբողջութեամբ դուրս եկավ, հավաքվեց ու խտացավ ու դողդողաց ու դարձավ իֆրիտ՝ գլուխը երկնքում, ոտքերը՝ գետնին: Եվ նրա գլուխը գմբեթ էր կարծես, ձեռքերը՝ եղաններ, ոտքերը՝ սյուներ, բերանն, ասես, քարանձավ, ատամներն՝ իսկը քարեր, քթածակերը՝ խողովակներ, ու աչքերը՝ լուսատուներ, և մուռլ էր նա, գարշելի:

Եվ երբ ձկնորսը տեսավ այդ իֆրիտին, մարմինը դող ընկավ ու տտամներն իրար խփվեցին ու թուրը ցամաքեց և աչքերը մթնեցին: Իսկ իֆրիտը, նրան տեսնելով, բացականչեց. «Չկա՛ այլ աստված, ալլահից բացի, Սուլեյմանը մարգարեն է ալլահի»:

Հետո նա գոչեց. «Ո՛վ ալլահի մարգարե, մի՛ սպանիր ինձ: Ես այլևս չեմ հակառակի քո խոսքին և չեմ դուրս գա քո հրամանից»: Եվ ձրկնորսը նրան ասաց. «Ով մարիդ, ասում ես, թե Սուլեյմանը ալլահի մարգարեն է, իսկ արդեն հազար ութ հարյուր տարի է, որ Սուլեյմանը մեռել է, և մենք աշխարհի վերջին մոտ ժամանակներն ենք ապրում: Ի՞նչ պատմություն ես ունեցել, և ի՞նչ է պատահել քեզ, և ինչո՞ւ ես դու այս սափորի մեջ մտել»:

Եվ, լսելով ձկնորսի խոսքերը, մարիդն ասաց. «Չկա այլ աստված, բացի ալլահից, ուրախացի՛ր, ով ձկնորս»:— «Ինչո՞վ պիտի ուրախացնես ինձ»,— հարցրեց ձկնորսը: Եվ իֆրիտը պատասխանեց. «Նրանով, որ այս րոպեին քեզ շարագույն մահով մեռցնելու եմ»:— «Այդպիսի բոթի համար, ո՞վ իֆրիտների գլխավոր, դու ալլահի պաշտպանությունից պիտի զրկվեիր,— բացականչեց ձկնորսը:— Ո՛վ անիծյալ, ինչո՞ւ պիտի սպանես ինձ, և քո ինչի՞ն է հարկավոր իմ կյանքը, քանի որ ես եմ քեզ ազատել սափորի միջից ու փրկել ծովի խորքից ու ցամաք հա-

ված իննսունինն անուններից ամենամեծը, որի իմացումը նրան տալիս էր իշխանություն շինների, թռչունների ու քամիների վրա:

նել»:— «Ասա, թե ի՞նչ մահով ես ուզում մեռնել և ի՞նչ պատժով պատրժվել»,— ասաց իֆրիտը: Եվ ձկնորսն ասաց. «Ի՞նչ է իմ մեղքը և ինչի՞ համար ես դու այդպես հատուցում ինձ»:— «Լսի՛ր իմ պատմութունը, ով ձկնորս»,— ասաց իֆրիտը, և ձկնորսը ասաց. «Պատմի՛ր, բայց կարճ կապիր, թե չէ շունչս բերանս է հասել արդեն»:

«Իմացած եղիր, ով ձկնորս,— ասաց իֆրիտը,— բայց ես ջինն ուրացյալներից մեկն եմ, և մենք՝ ես և ջինն Մահրը, շլսեցինք Սուլեյմանին՝ Գաուդի որդուն, խաղաղություն նրանց երկուսին: Եվ Սուլեյմանն ուղարկեց իր վեզիրին Ասաֆ իբն Բարախիային, և նա տարավ ինձ Սուլեյմանի մոտ՝ բռնի, ստորացրած, հակառակ իմ կամքին: Նա կանգնեցրեց ինձ Սուլեյմանի առջև, և Սուլեյմանը, ինձ տեսնելով, իմ դեմ օգնության կոչեց ալլահին և առաջարկեց ինձ ընդունել ճշմարիտ հավատ ու մտնել իր իշխանության տակ, բայց ես հրաժարվեցի: Եվ այն ժամանակ նա հրամայեց բերել այս սափորը և ինձ մտցրեց դրա մեջ ու խցանեց սափորը կապարով, դրոշմելով դրա վրա ալլահի անուններից մեծագույնը, իսկ հետո հրամայեց ջիններին, ու նրանք տարան ու ծովը նետեցին ինձ: Եվ ես հարյուր տարի ծովում անցկացրի ու ինքս ինձ ասացի, որ ինձ ազատողին ես հավիտյանս հարուստ կդարձնեմ: Բայց մի հարյուր տարի էլ անցավ, և ոչ ոք չազատեց ինձ: Եվ անցավ էլի հարյուր տարի, և ես ասացի. «Ինձ ազատողի առջև ես կբացեմ երկրի գանձերը», բայց ոչ ոք չազատեց ինձ: Եվ էլի շուրս հարյուր տարի անցավ իմ գլխով, ու ես ասացի. «Ինձ ազատողի երեք ցանկությունը կկատարեմ»: Բայց ոչ ոք չազատեց ինձ, և այն ժամանակ ես խիստ զայրացա և իմ մտքում ասացի. «Ինձ ազատողին ես կսպանեմ, և կառաջարկեմ, որ ինքն ընտրի, թե ինչ մահով է ուզում մեռնել»: Եվ ահա դու ազատեցիր ինձ, և ես քեզ առաջարկում եմ ընտրել, թե ի՞նչ մահով ես ուզում մեռնել»:

Իֆրիտի խոսքերը լսելով՝ ձկնորսը բացականչեց. «Ո՛վ ալլահի հրաշք: Եվ ես եկել ու ազատել եմ քեզ հենց հիմա՛: Ազատի՛ր ինձ մահից,— ալլահք քեզ կփրկի,— ասաց նա իֆրիտին:— Մի՛ կործանիր ինձ, և ալլահը քեզ իշխանություն կտա քեզ կործանողի վրա»:— «Քո մահը սուխուսափելի է, ընտրի՛ր, թե ինչ մահով պիտի մեռնես»,— ասաց մարիդը:

Եվ երբ ձկնորսը համոզվեց այդ բանում, նորից դիմեց իֆրիտին ու ասաց. «Ննայիր ինձ ի հատուցումն այն բանի, որ քեզ ազատել եմ»:— «Բայց ես էլ քեզ սպանում եմ հենց նրա համար, որ ինձ ազատել ես»,— գոչեց իֆրիտը: Եվ ձկնորսն ասաց. «Ո՛վ իֆրիտների շեյխ, ես քեզ բա-

րիք եմ անում, իսկ դու ինձ շարիքով եո հատուցում: Սուտ չէ ասված, թե.

Մենք բարիք ենք գործում մարդկանց, շարով են մեզ հատուցում,
Այս են, ահա, կյանքս վկա, սին գործերը մեր կյանքում,
Վատին բարիք գործող մարդուն թող հատուցվի ճիշտ այնպես,
Ինչպես նրան, որ բորենուն արյունով է սնուցում»:

Լսելով ձկնորսի խոսքերը, իֆրիտը բացականչեց. «Մի՛ երկարացրու, քո մահն անխուսափելի է»: Եվ ձկնորսը մտածեց. «Սա ջինն է, իսկ ես մարդ, և ալլահն ինձ կատարյալ խելք է պարգևել: Ահա ես կմտածեմ, թե ինչպես նրան հաղթեմ իմ խորամանկությամբ ու խելքով, քանի դեռ նա մտածում է, թե ինչպես կործանի ինձ իր նենգությամբ ու ստորությամբ»:

Չետո նա ասաց իֆրիտին. «Իմ մահը անխուսափելի՞ է»: Եվ իֆրիտը պատասխանեց. «Այո»: Եվ այն ժամանակ ձկնորսը բացականչեց. «Աղաչում եմ քեզ, հանուն մեծագույն անվան, որ փորագրված է Սուլեյման իբն Դաուդի (խաղաղություն նրանց երկուսին) մատանու վրա, ես քեզ կհարցնեմ մի բան, և դու ճշմարիտը պատասխանի՛ր»:— «Լավ,— ասաց իֆրիտը,— հարցրու և կարճ կապիր»,— և նա դողդողաց ու ցրնցվեց, լսելով մեծագույն անվան հիշեցումը: Իսկ ձկնորսը ասաց. «Դու այս սափորի մեջ ես եղել, իսկ սափորի մեջ քո ձեռքը կամ ոտքն էլ չի տեղավորվի, ապա ինչպե՞ս ես դրա մեջ տեղավորվել»:— «Ի՞նչ է, դու չե՞ս հավատում, որ ես դրա մեջ եմ եղել»,— գոռաց իֆրիտը: «Ես քեզ երբեք չեմ հավատա, մինչև իմ աչքով քեզ դրա մեջ չտեսնեմ»,— պատասխանեց ձկնորսը...

Եվ այստեղ լույսը բացվեց, և Շահրազադեն ընդհատեց արտոնված զրույցը:

Իսկ երբ եկավ շորրորդ գիշերը, նրա քույրն ասաց. «Վերջացրու պատմությունդ, եթե քունդ չի տանում»:

Եվ Շահրազադեն շարունակեց.

«Պատմում են, ո՞վ երջանիկ արքա, որ ձկնորսն ասաց իֆրիտին. «Երբեք քեզ չեմ հավատա, մինչև քեզ դրա մեջ չտեսնեմ իմ աչքով»: Եվ այդ ժամանակ իֆրիտը թափ տվեց իրեն ու ծուխ դարձավ, փռվեց ծովի վրա ու հավաքվեց ու քիչ-քիչ մտավ սափորի մեջ, մինչև որ ամբողջ ծուխը լցվեց այնտեղ: Այստեղ ձկնորսը իսկույն վերցրեց մատանու դրոշմով կապարե խցանը և դրանով փակեց սափորի բերանն ու գոչեց իֆրիտին. «Ընտրիր, թե ի՞նչ մահով պիտի մեռնես: Ալլահով եմ երդվում, ես քեզ ծովը կնետեմ և այստեղ ինձ համար տուն կկառու-

ցեմ, և ով որ այստեղ գա, ես թույլ չեմ տա ձուկ որսալ ու կասեմ. «Այստեղ իֆրիտ կա, և ով որ նրան դուրս բերի, նա առաջարկում է, թե ինչ մահով ևս ուզում մեռնել և ինչպես ես ուզում սպանվել»:

Լսելով ձկնորսի խոսքերը և իրեն փակված տեսնելով, իֆրիտը ուզեց դուրս գալ, բայց շկարողացավ, որովհետև այդ թույլ չէր տալիս Սուլեյմանի կնիքը: Եվ նա հասկացավ, որ ձկնորսը խորամանկությամբ խաբել է իրեն, և ասաց. «Ես կատակ էի անում քեզ հետ»: Բայց ձկնորսը գոչեց. «Ստո՛ւմ ես, ով իֆրիտներից ամենազազրելիդ ու ամենակեղտոտդ ու ամենաստորդ»: Եվ հետո նա սափորը տարավ ծովի մաս, և իֆրիտը գոչեց. «Ո՛ւ, ո՛ւ», իսկ ձկնորսը՝ «այո՛, այո՛», իֆրիտը մեղմացրեց իր ձայնը և դարձավ հեզ ու ասաց. «Ի՞նչ ես ուզում անել ինձ, ո՛վ ձկնորս»: Եվ ձկնորսը պատասխանեց. «Ես քեզ ծովը կնետեմ, և եթե դու նրա մեջ արդեն անց ես կացրել հազար ութ հարյուր տարի, ապա ես կստիպեմ քեզ այնտեղ մնալ, մինչև դատաստանի ժամը գա: Ես քեզ չէի՞ ասում. «Գթա՛ ինձ, և ալլահը քեզ կգթա, մի՛ սպանիր ինձ, այլահը քեզ կսպանի», բայց դու չլսեցիր իմ խոսքը և ուզում էիր միայն խաբել ինձ, և ալլահը քեզ իմ ձեռքը հանձնեց, և ես քեզ խաբեցի»:

«Բա՛ց թող ինձ, և ես քեզ շնորհ կանեմ»,— ասաց իֆրիտը: Բայց ձկնորսը բացականչեց. «Ստո՛ւմ ես. անիծյա՛լ: Ես ու դու նման ենք Հովհան թագավորի վեզիրին ու բժիշկ Դուբանին»:— «Իսկ ովքե՞ր են Հովհան թագավորի վեզիրն ու բժիշկ Դուբանը, և ո՞րն է նրանց պատմությունը»:

ՀՈՎՀԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՎԵՋԻՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացած եղիր, ո՛վ իֆրիտ,— սկսեց ձկնորսը,— որ հին ժամանակներում ու անցած դարերում ու հարյուրամյակներում պարսիկների բաղաքում ու հոռոմների երկրում կար Հովհան անունով մի թագավոր: Եվ նա հարուստ էր ու մեծ թագավոր ու նրա հրամանի տակ՝ անհամար զորք ու ամեն կարգի դրանիկներ ու թիկնապահներ կային, բայց բոլոր էր նա մարմնով, և բժիշկներն ու դեղագործները անզոր էին դրա դեմ: Եվ թագավորը դեղեր էր խմում ու քսուքներ քսում, բայց ոչ մի բան չէր օգնում, և ոչ մի բժիշկ չէր կարողանում բուժել նրան: Բայց մի օր Հովհան թագավորի քաղաքը եկավ մի մեծ բժիշկ, մի հարգարժան ծերունի, որի անունն էր Դուբան: Նա կարգացել էր հունական, պարսկական, բյուզանդական ու ասորական գրքեր, գիտեր բժշկություն ու աստղաբաշխություն և յուրացրել էր դրանց հիմունքներն ու կանոնները,

օգուտն ու վնասը, և նա գիտեր նաև բալոր բույսերն ու խոտերը, թարմ ու չոր վիճակում, վնասակարն ու օգտակարը, և սովորել էր փիլիսոփայություն, և գիտեր բոլոր գիտութիւնները և մնացյալ բաները:

Եվ երբ այս բժիշկը եկավ այն քաղաքը և մի քանի օր մնաց, լսեց թագավորի և նրան տանջող բորոտութեան մասին, որով նրան փորձում էր ալլահը, և այն մասին, որ գիտուններն ու բժիշկները չեն կարողանում բուժել նրան: Եվ երբ բժիշկն այդ իմացավ, ամբողջ գիշերը պարապելով անցկացրեց և հենց որ առավոտը բացվեց ու լույսը ծագեց ու արևը շողաց, նա հագավ իր լավագույն զգեստներն ու զնաց Հովնան թագավորի մոտ: Եվ համբուրելով նրա ոտքերի տակի հողը, բժիշկը ցանկացավ նրան հավիտենական փառք ու բարեկեցություն և գերազանց պերճախրսութեամբ արտահայտեց գա, իսկ հետո ներկայացավ ու ասաց. «Ո՛վ արքա, ես իմացա, որ դու հիվանդ ես մաշկի հիվանդութեամբ, և որ բազմաթիվ բժիշկներ չեն կարողացել բուժել այն, Բայց ահա ես քեզ կբուժեմ, ո՛վ արքա, և ո՛չ դեղեր կխմեցնեմ քեզ, ո՛չ էլ քսուքներ կքսեմ»:

Լսելով նրա խոսքերը, Հովնան թագավորը զարմացավ ու բացականչեց. «Իսկ ինչպե՞ս կանես այդ: Ալլահը վկա, եթե դու ինձ բուժես, ես կհարստացնեմ քեզ ու քո որդոց որդիներին և բարիքներ կանեմ քեզ և, ինչ որ ուզես, կտամ քեզ, և դու կդառնաս իմ սեղանակիցն ու սիրելին»: Հետո Հովնան թագավորը բժշկին պատվո հանգերձ ընծայեց և շնորհներ արեց նրան ու հարցրեց. «Դու ինձ կբուժես այդ հիվանդությունից առանց դեղերի ու քսուքների՞»: Եվ բժիշկը պատասխանեց. «Այո, ես քեզ կբուժեմ»: Եվ թագավորը խիստ զարմացավ, իսկ հետո հարցրեց. «Ո՛վ բժիշկ, ո՞ր օրը և ո՞ր ժամին կկատարես քո ասածը: Շտապի՛ր, որգիս»:— «Լսում եմ ու հնազանդվում,— պատասխանեց բժիշկը,— վաղը ես այդ կանեմ»: Իսկ հետո նա քաղաք իջավ ու տուն վարձեց և այնտեղ տեղավորեց իր զբօսըն ու դեղերն ու խոտեղեն թույները, իսկ հետո վերցրեց խոտեղեն թույներ ու դեղեր և լցրեց դրանք մի մականի մեջ, որի ներսը փորել էր, հետո մականի կտթը սարքեց և վարպետորեն նրան հարմար մի գունդ սարքեց: Եվ հաջորդ առավոտյան, երբ այդ բոլորը պատրաստել պրծել էր, զնաց թագավորի պալատը և, նրա մոտ մտնելով, համբուրեց նրա ոտքերի տակի հողը և կարգադրեց նրան մարզարան դուրս գալ և մականով ու զնգակով խաղալ: Իսկ թագավորի հետ էին էմիրները, պալատականներն ու վեզիրները և տերութեան մեծամեծները: Եվ հազիվ էր նա մարզարան ժամանել, որ բժիշկ Դուրանը մոտեցավ նրան ու նրան տվեց մականն ու ասաց. «Վերցրու

այս մուրճն ու բռնիր այս կոթը և արշավիր մարդաբանում և լավ ձգվիր ու հարվածիր գնդակին, մինչև որ մարմինդ ու ձեռքերդ քրտնեն ու դեղնանցնի քո թևերին ու տարածվի ամբողջ մարմնիդ վրա: Իսկ երբ խաղաս վերջացնես, և դեղը տարածվի ամբողջ մարմնիդ վրա, վերադարձիր պալատ, իսկ հետո բաղնիք գնա, լողացիր ու պառկիր քնելու: Դու կառողջանաս, ու վերջ»:

Եվ այն ժամանակ Հովնան թագավորը բժշկից մականը վերցրեց ու ձեռքով ամուր բռնեց ու հեծավ ձին, և առաջ նետեց գնդակն ու արշավից նրա հետևից ու հասավ ու հարվածեց ուժգնորեն, սեղմելով մականի կոթը: Եվ այնքան ժամանակ արշավեց գնդակի հետևից ու հարվածեց դրան, մինչև ձեռքերն ու ամբողջ մարմինը քրտինքով ծածկվեցին, և դեղը մականի կոթով հոսեց նրա ձեռքերին: Եվ այստեղ բժիշկ Դուրանն իմացավ, որ դեղը տարածվել է թագավորի մարմնի վրա, և հրամայեց նրան պալատ վերադառնալ և անմիջապես բաղնիք գնալ: Եվ Հովնան թագավորն իսկույն վերադարձավ, և հրամայեց ազատել բաղնիքն իր համար. և բաղնիքն ազատեցին, և հանդերձապաններն ու ստրուկները հապճեպով վազեցին նրա մոտ, աշխատելով իրարից առաջ ընկնել, ու պատրաստեցին նրա սպիտակեղենը: Եվ թագավորը բողբոջեց մտավ ու լավ լողացավ, և հագավ իր զգեստները բաղնիքում, իսկ հետո դուրս եկավ ու գնաց պալատ ու պառկեց քնելու:

Ահա թե ինչ տեղի ունեցավ Հովնան թագավորի հետ: Ինչ վերաբերում է բժիշկ Դուբանին, ապա նա վերադարձավ իր տունը և գիշերը քնեց, իսկ երբ լույսը բացվեց, նա թագավորի մոտ գնաց և ներկայանալու թույլտվություն խնդրեց նրանից: Եվ թագավորը հրամայեց ներս մտնել, և բժիշկը ներս մտավ ու համբուրեց գետինն ու երգածայն հետևյալ տողերն ասաց, ականարկելով թագավորին.

Վեհ են դարձել արժանիքները քո բոլոր. քեզ նրանց
Հայրն են կոչում, ուրիշներին դրկում այդ մեծ կոչումից:
Ո՛վ գու, որի տեսքը՝ հրե իր շողերով լուսավառ,
Վանում է ժանտ բախտի գլխից վատ գործերի ամպը լար,
Թող միշտ շողա, պայծառ լինի տեսքդ վսեմ, լուսավառ,
Թեև տեսքը ժամանակի շարագնաց է ու մռայլ:
Ենորհներիդ ու բարիքիդ ծովի մեջ ինձ սուղեցիր,
Պարուրեցիր ինձ բարիքով, ինչպես բլուրն՝ ամպերով.
Նետեցիր ինձ հարստության հորձանքի մեջ դու շռայլ,
Եվ դրանով դու տենչալի վսեմությանդ հառարձ:

Եվ երբ նա վերջացրեց իր բեյթերը, թագավորը ոտքի ելավ ու գրկեց նրան ու նստեցրեց իր կողքին ու պարգևեց թանկագին հանգերձներ: (Իսկ թագավորը, բաղնիքից դուրս գալով, նայել էր իր մարմնին և չէր տեսել բորոտության հետքն իսկ, ու մարմինը դարձել էր սպիտակ արծաթի պես մաքուր, և թագավորը խիստ ուրախացել էր դրանից, և սիրտը բացվել էր ու թեթևացել): Իսկ երբ առավոտ եղավ, թագավորը դիվան մտավ ու նստեց գահին, և պալատականներն ու մեծամեծները ոտքի ելան նրա առջև, և ներս մտավ բժիշկ Դուբանը, և թագավորը, նրան տեսնելով, իսկույն ելավ տեղից ու նրան նստեցրեց իր կողքին: Եվ ահա ճոխ սեղան բացեցին, և թագավորը կերավ Դուբանի հետ միասին և անդադար զրուցեց նրա հետ այդ ամբողջ օրը: Իսկ երբ գիշերը եկավ, թագավորը Դուբանին տվեց երկու հազար դինար, բացի պատվո հանդերձներից և ուրիշ ընծաներից, և նստեցրեց նրան իր ձիուն, և Դուբանը գնաց իր տունը: Իսկ Հովնան թագավորը, զարմացած նրա հետոթյունից, ասաց. «Այս բժիշկը բուժեց իմ արտաքինը և ոչ մի քուրք չգործածեց: Ալլահը վկա, սա իսկական իմաստություն է: Եվ ես պետք է այդ մարդուն պատիվ ու շնորհ անեմ և դարձնեմ նրան իմ զրուցակիցն ու սեղանակիցը հավիտյանս հավիտենից»: Եվ Հովնան թագավորը գոհությամբ անցկացրեց գիշերը, ուրախացած իր մարմնի առողջությամբ ու հիվանդությունից ազատվելով, իսկ երբ առավոտը բացվեց, նա դուրս եկավ ու գահին բազմեց, և նրա տերության մեծամեծները կանգնեցին նրա առջև, իսկ վեզիրներն ու էմիրները նստոտեցին նրա աջ ու ձախ կողմերում: Հետո Հովնան թագավորը կանչեց բժիշկ Դուբանին, և նա ներս մտավ ու համբուրեց գետինը, իսկ թագավորը ոտքի ելավ նրա առջև ու նրան իր կողքին նստեցրեց: Նա բժշկի հետ կերավ, ու ցանկացավ նրան երկար կյանք և մատուցեց նրան նվերներ ու հանդերձներ և զրուցեց նրա հետ մինչև մութն ընկնելը, և այնժամ թագավորը հրամայեց բժշկին տալ հինգ պատվո հանդերձ ու հազար դինար, և բժիշկը գնաց իր տունը, շնորհակալություն հայտնելով թագավորին: Իսկ երբ լույսը բացվեց, թագավորը պալատականներով, վեզիրներով ու էմիրներով շրջապատված, մտավ դիվան:

Իսկ թագավորը ուներ մի վեզիր՝ տգեղ, գարշելի: Ու շար, կծծի ու նախանձ, ասես արտրիչը նրան միայն նախանձից էր կերտել: Եվ երբ այդ վեզիրը տեսավ, որ թագավորը Դուբանին իր մերձավորը դարձրեց ու այդքան շնորհներ արեց, նախանձեց նրան և շարիք նյութեց նրա դեմ: Չէ՞ որ ասված է, ոչ ոքի մարմինն ազատ չէ նախանձից, և ասված է նաև՝ անարդարությունը սրտում է պահված, ուժը երևան է հա-

նում այն, իսկ թուլութիւնը՝ ծածկում: Եվ ահա, այդ վեզիրը մոտեցավ Հովնան թագավորին և, համբուրելով գետինը, ասաց. «Ո՛վ թագավորդ մեր ժամանակի ու դարի, դու նա ես, որի շնորհների մեջ ես մեծացել եմ: և ես քեզ համար մի կարևոր խորհուրդ ունեմ: Եվ եթե ես այն պահեմ քեզնից, անառակութեան ծնունդ կլինեմ: Եթե դու հրամայես ինձ հայտնել, ես կհայտնեմ»: Եվ թագավորը, որին վեզիրի խոսքերը տագնապի մեջ գցեցին, հարցրեց. «Ի՞նչ խորհուրդ է»: Եվ վեզիրը պատասխանեց. «Ո՛վ բարեծին արքա, նախնիներն ասել են. «Ով չի մտածում գործի ելքի մասին, բախտը նրան բարեկամ չէ»: Եվ ես մտածում եմ, որ թագավորն ուղիղ չի գործում, վարձատրելով իր բժշկին և նրան, ով նրա թագավորութեան կործանմանն է ձգտում: Իսկ թագավորը սիրալիր է նրա նկատմամբ և մեծամեծ սլառիվներ է անում նրան ու ծայրահեղորեն մակրմացել է նրա հետ, և ես վախենում եմ թագավորիս համար»:

Եվ թագավորը, տագնապահար ու դեմքի գույնը գցած, հարցրեց վեզիրին. «Ո՞ւմ մասին ես խոսում և ո՞ւմ ես ակնարկում»: Եվ վեզիրն ասաց. «Եթե քնած ես, արթնացի՛ր: Ես բժիշկ Դուբանին եմ մասնացրել անում»:— «Ամո՛թ քեզ,— ասաց թագավորը,— նա իմ ընկերն է և ինձ համար բոլորից թանկ է, որովհետև նա բուժեց ինձ ինչ-որ մի բանով, որ ես ձեռքս վերցրի, և ապաքինեց ինձ այնպիսի հիվանդութիւններից, որի դեմ բոլոր բժիշկներն անզոր էին: Նրա նմանին մեր ժամանակներում չի կարելի գտնել ամբողջ աշխարհում ո՛չ մի տեղ, ո՛չ արևելքում, ո՛չ արևմուտքում, իսկ դու նրա մասին այդպիսի խոսքեր ես ասում: Այսօրվանից ես նրան ոտճիկ կնշանակեմ ու հատուցում և կսահմանեմ ամսական հազար դինար, բայց եթե ես նրա հետ իմ թագավորութեանն էլ կիսեմ, ապա դա էլ, հիրավի, քիչ կլիներ, Եվ ես կարծում եմ, որ դու այդ ասում ես միայն նախանձից, այնպես, ինչպես պատմում են տա՛Սինդբադ թագավորի մասին...»:

Եվ Շահրազադեի գիշերը լուսացավ, և նա ընդհատեց արտոնված զրույցը:

Իսկ երբ եկավ հինգերորդ գիշերը, նրա քույրն ասաց. «Ավարտի՛ր բո սպասմութիւնը, եթե քունդ չի տանում»:

Եվ Շահրազադեն շարունակեց.

«Պատմում են, ո՛վ երջանիկ արքա, որ Հովնան թագավորը վեզիրին ասաց. «Ո՛վ վեզիր, այդ բժշկի նկատմամբ նախանձն է քեզ բռնել, և դու նրա մահն՝ ես ցանկանում, մինչդեռ ես դրանից հետո կզղջամ,

ինչպես զղջաց իր բազեին սպանած աս-Սինգբագ թագավորը»։— «Ների՛ր ինձ, ո՛վ ժամանակի արքա, իսկ ինչպե՞ս է եղել այդ»,— հարցրեց վեզիրը։

ԱՍ-ՍԻՆԴԲԱԳ ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ասում են,— իսկ ալլահը դա ավելի լավ գիտե,— սկսեց թագավորը,— թե պարսից թագավորներից եղել է մեկը, որ խրախճանքի, զբոսանքի, որսի ու ձկնորսության սիրահար է եղել, Եվ նա մի բազե էր վարժեցրել ու գիշեր-ցերեկ նրանից շէր բաժանվում, և ամբողջ գիշերը նրան իր ձեռքի վրա էր պահում, իսկ երբ որսի էր գնում, բազեին էլ հետն էր վերցնում։ Եվ թագավորը բազեի համար ոսկե գավաթ էր սարքել ու կախել նրա վզից և նրան ջուր էր տալիս այդ գավաթով։ Եվ ահա, մի անգամ, թագավորը նստած էր, և հանկարծ նրան մոտեցավ գլխավոր բազեպանն ու ասաց. «Ո՛վ ժամանակի թագավոր, ժամանակն է որսի գնալու»։ Եվ թագավորը հրամայեց որսի դուրս գալ ու բազեին զրեց իր ձեռքին։ Եվ որսորդներն այնքան գնացին, մինչև հասան մի հովիտ, այնտեղ ցանցը բացեցին՝ որս բռնելու համար, և հանկարծ ցանցի մեջ ընկավ մի վիթ, և այդ ժամանակ թագավորն ասաց. «Ում գլխի վրայից ցատկի վիթը, նրան կսպանեմ»։

Եվ որսորդները սեղմեցին ցանցը վիթի շուրջը, և հանկարծ վիթը մոտեցավ թագավորին ու, հետևի սաքերի վրա կանգնելով, առջևի ոտքերը ծալեց կրծքին, կարծես թագավորի ոտքերի տակի հողը համբուրելիս լիներ։ Եվ թագավորը գլուխ տվեց վիթին, իսկ նա ցատկեց թագավորի գլխի վրայով ու փախավ անապատը։ Եվ թագավորը տեսավ, որ շքախմբի բոլոր անդամներն աչքով են անում իրար, ու հարցրեց. «Ո՛վ վեզիր, ի՞նչ են ասում նրանք»։ Եվ վեզիրը պատասխանեց. «Նրանք ասում են, թե դու հայտարարեցիր. «Ում գլխի վրայով ցատկի վիթը, նրան կսպանեմ»։ Եվ թագավորն ասաց. «Գլխովս եմ երզվում, ես կհետապնդեմ նրան, մինչև որ բռնեմ ու բերեմ»։ Եվ թագավորը գնաց վիթի հետքերով և նրա հետևից աննահանջ արշավեց սարերով։ Իսկ երբ վիթն ուզեց մտնել անտառ, այդ ժամանակ թագավորն արձակեց բազեին, և բազեն թևերով այնքան խփեց վիթի աչքերին, մինչև որ կուրացրեց ու շմեցրեց նրան։ Եվ թագավորն առավ գավազանը, խփեց վիթին ու գետին գլորեց նրան և հետո իջավ ձիուց, մորթեց վիթը, հանեց մորթն ու կախեց թամբի աղեղից։ Իսկ օրը կեսօր էր դարձել արգեն, և ամայի ու շորացած մացառուտներում ջուր գտնել հնարավոր

չէր: Եվ թագաւորը ծարավ զգաց, և ձին էլ խմել էր ուզում, և թագաւորը շուռ եկավ ու տեսավ մի ծառ, որից յուղի նման ջուր էր հոսում: Իսկ թագաւորը հագել էր կաշվե ձեռնոցներ, և նա վերցրեց բազեի վզից կախված գավաթն ու այն ջրով լցրեց: Նա գավաթն իր առջև դրեց, բայց բազեն հանկարծ թևով զարկեց ու թափեց այն, և այնժամ թագաւորը վերցրեց գավաթը և կրկին լցրեց հոսող յուղով: Նա կարծում էր, թե բազեն խմել է ուզում, և գավաթը դրեց նրա առջև, բայց բազեն կրկին խփեց ու թափեց այն: Եվ թագաւորը գայրացավ բազեի վրա և երրորդ անգամ լցրեց գավաթն ու դրեց ձիու առջև, բայց բազեն դարձյալ թևով շարժեց գավաթը: Եվ այնժամ թագաւորը բացականչեց. «Այլահը բեզ պատժի՛, ո՛վ շարաքաստիկ թռչուն, դու զրկեցիր խմելուց և՛ ինձ, և՛ բեզ, և՛ ձիուն»,— և սրով զարկեց նրան ու թևերը կտրեց:

Այդ ժամանակ բազեն բարձրացրեց գլուխն ու նշաններով հասկացրեց. «Տե՛ս, թե ինչ կա ծառի գագաթին»: Եվ թագաւորն աչքերը բարձրացրեց ու ծառի վրա տեսավ եփդնայի ձագին, իսկ այն հոսող հեղուկը նրա թույնն էր: Եվ զղջաց թագաւորը, որ կտրել է բազեի թևերը, և վեր կացավ ու նստեց ձին ու գնաց, վերցնելով իր հետ վիթը և իր սրսով հասավ վրանը: Նա վիթը խոհարարին հանձնեց ու ասաց. «Վերցրու և խորովիր», իսկ հետո նստեց իր գահին, և բազեն էլ նրա թևին էր: Եվ հանկարծ թռչունը մի կռինչ արձակեց ու սատկեց: Եվ թագաւորը հառաչեց վշտից ու ցավից, որ սպանել էր բազեին, երբ նա փրկել էր իրեն մահից: Ահա և բուրբը, ինչ պատահել է աս-Մինդիբադ թագաւորին»:

Կսելով Հովնան թագաւորի խոսքերը, վեզիրն ասաց. «Ո՛վ բարձրադաս արքա, ի՞նչ վատ բան է արել ինձ բժիշկը: Ես նրանից ոչ մի շարիք չեմ տեսել և այդպես վարվում եմ միայն քեզ խնայելով. իմացած եղիր, որ իմ խոսքերը ճիշտ են, այլապես դու կկործանվես, ինչպես կործանվեց այն վեզիրը; որ մահ էր նյութում թագաւորներից մեկի որդու դեմ»:
Իսկ ի՞նչպես է եղել այդ»,— հարցրեց Հովնան թագաւորը:

ՆԵՆԳ ՎԵՋԻՐԻ ԶԵՔԻԱԹՈՂ

«Իմացիր, ով արքա,— ասաց վեզիրը,— որ թագաւորի մեկն ուներ մի վեզիր, այլև ուներ մի տղա, որը սիրում էր որսորդութունն ու ձկնորսութիւնը, և հոր վեզիրը միշտ նրա հետ էր լինում: Եվ թագաւորը՝ պատանու հայրը, հրամայել էր վեզիրին արքայազնի հետ լինել, ուր էլ որ նա գնար: Եվ մի անգամ պատանին որսի դուրս եկավ և հոր վեզիրն էլ՝

նրա հետ, ու նրանք միասին գնացին: Եվ վեզիրը մի մեծ գազան տեսավ ու ասաց արքայորդուն. «Այ քեզ գազան, նրա հետևից ընկիր»: Եվ արքայորդին սլացավ գազանի հետևից ու աչքից կորավ, իսկ գազանը կորավ անապատում: Եվ արքայորդին մոլորվեց ու չգիտեր, թե ո՛ր գնա և դեպի ո՛ր կողմն արշավի, երբ հանկարծ տեսավ, որ ճանապարհի եզրին մի աղջիկ նստել ու լաց է լինում:

«Ո՞վ ես դու»,— հարցրեց նրան արքայորդին: Եվ աղջիկն ասաց. «Ես Հնդկաստանի թագավորներից մեկի աղջիկն եմ, և ես անապատում էի, բայց ինձ վրա թմրություն իջավ, ես ընկա նժույգից, և այժմ յուրայիններից բաժանված մոլորվել եմ այստեղ»: Եվ, լսելով աղջկա խոսքերը, արքայորդին խղճաց աղջկան ու նրան իր ձիու գավաին տալով, նրատեցրեց իր հետևն ու գնաց: Եվ երբ նրանք անցնում էին ինչ-որ ավերակների մոտով, աղջիկն ասաց. «Ո՞վ տեր, ես ուզում եմ իջնել բնական կարիքի համար», և արքայազնը իջեցրեց նրան ավերակների մոտ: Եվ աղջիկը մտավ ավերակների ներսը և ուշացավ, իսկ արքայազնը, երկար սպասելով, նրա հետևից գնաց, շիմանալով, թե ո՞վ է նա: Եվ հանկարծ տեսավ, որ նա գուլ է¹, և ասում է իր երեխաներին. «Երեխաներ, այսօր ես ձեզ գիրուկ տղա եմ բերել»: Իսկ երեխաները պատասխանում են. «Մայրիկ, բեր նրան, որ մենք լցնենք մեր փորը»: Եվ, լսելով նրանց խոսքերը, արքայազնը համոզվեց, որ կորած է, և երկյուղով լրցվեց ու ծնկները գող ընկան: Նա հետ դարձավ, և գուլը դուրս եկավ ու տեսավ, որ նա կարծես երկյուղած է, վախենում է ու դողում, և ասաց. «Ինչո՞ւ ես վախենում»:— «Ես մի թշնամի ունեմ ու նրանից եմ վախենում»,— պատասխանեց արքայազնը: «Դու ասացիր, թե թագավորի տղա՞ ես»,— հարցրեց գուլը, և արքայորդին պատասխանեց. «Այո»: Եվ այնժամ գուլն ասաց. «Ինչո՞ւ քո թշնամուն որոշ գումար չես տալիս, որպեսզի բավարարես նրան»:— «Նա փողով չի բավարարվի, այլ միայն իմ կյանքով,— պատասխանեց արքայազնը,— և ես ինձ համար եմ վախենում: Ես խաբված եմ»:— «Եթե դու, ինչպես ասում ես, խաբված ես, ալլահին օգնության կանչիր ու նա կփրկի քեզ քո թշնամու շարությունից և այն շարիքից, որից դու վախենում ես»,— ասաց գուլը: Եվ արքայորդին աչքերը դեպի երկինք բարձրացրեց ու բացականչեց. «Ո՞վ դու, որ պատասխանում ես փորձանքի մեջ ընկածին, երբ նա կանչում է քեզ, ու հեռացնում ես շարիքը, ո՞վ տեր, օգնի՛ր ինձ իմ թշնամու դեմ

1 Առասպելական էակ՝ կնոջ կերպարանքով: Արարական հավատալիքների համաձայն, գուլերը հեամատում են մենավոր ճանապարհորդներին և ուտում նրանց:

և հեռացրու՛ւ նրան ինձանից: Արդարև, դու տերն ես քո կամքի»։ Եվ երբ գուլը լսեց նրա աղոթքը, հեռացավ, իսկ արքայազներ մեկնեց իր հոր մոտ և պատմեց վեզիրի արարքի մասին, և թագավորը կանչեց նրան ու սպանեց։

Եվ եթե դու, ո՛վ արքա, վստահես այդ բժշկին, նա քեզ շարագույն մահով կսպանի: Նա, ում դու բարիք ես արել ու մոռեցրել քեզ, գործում է քեզ կորստյան մատնելու համար: Նա քեզ բուժեց արտաքինից՝ ինչ-որ բանով, որ դու ձեռքդ առար, և դու ապահով շես կարող լինել, թե նա շի սպանի քեզ մի այնպիսի բանով, որ դու դարձյալ ձեռքդ կառնես»։

«Դու իրավ ես, ո՛վ վեզիր,— ասաց Հովնան արքան,— ինչպես ապում ես, այնպես էլ կլինի, ո՛վ բարեմիտ վեզիր: Հիրավի, այդ բժիշկը եկավ իբրև լրտես, իմ մահը փնտրելով, և եթե նա ինձ բուժեց ինչ-որ բանով, որը ես ձեռքս վերցրի, ապա կարող է ինձ սպանել որևէ բանով, սրը ես կհոտոտեմ»։

Դրանից հետո Հովնան արքան ասաց վեզիրին. «Ո՛վ վեզիր, ինչպե՞ս վարվեմ նրա հետ»։ Եվ վեզիրը պատասխանեց. «Հիմա եթե մարդ ուղարկիր նրա հետևից, պահանջի՛ր նրան, և երբ նա գա, գլխատի՛ր: Դու կփրկվես նրա շարիքից ու կազատվես նրանից: Խաբի՛ր նրան, նախքան նա քեզ կխաբի»։— «Իրավ ես, ո՛վ վեզիր»,— բացականչեց արքան և մարդ ուղարկեց բժշկի հետևից: Եվ նա եկավ ուրախ-ուրախ, շիմանալով, որ բարեգութը նրան դատապարտել է, նման այն բանին, ինչ-որ մեկը ասել է.

Հանգիստ եղի՛ր, դու, որ բախտի հարվածից ես վախենում,
Միշտ վստահի՛ր գործդ նրան, ով աշխարհն է արարել:
Ո՛վ տիրակալ, այն կլինի, ինչ ալլահն է սահմանել,
Եվ աղատ ես այն շարիքից, որ ալլահը շի դատել:

Եվ երբ բժիշկը մտավ թագավորի մոտ, ասաց.

«Մի՛թե երբեք շնորհակալ ես քեզանից չեմ եղել,
Ասա, արդյոք ում համար եմ երգ ու գրույց հորինել.
Միշտ բարիք ես դու ինձ գործել առանց իմ իսկ խնդրանքի,
Չրնգունելով ներողություն ու հապաղում կողմնակի
Ինչպե՞ս շորհնեմ քեզ՝ բարերար իմ տիրոջն ըստ արժանվույն,
Ինչպե՞ս ապա քեզ լզովեմ և՛ բացահայտ, և՛ թաքուն
Մանր պահես, երբ հիշում եմ բարիքներդ մեծագին,
Հոգսն է ցրվում, թեև հսկա բեռ է ընկած իմ մեջքին»։

Եվ դարձյալ այդ մտքով ասաց.

«Քիկունքդ դարձրո՛ւ բոլոր հոգսերին
Ու քո գործերը վստահի՛ր բախտին:
Կյանքի բարիքը անվերջ վայելի՛ր,
Եվ թող մոռացվեն օրերն վշտալիր:
Չէ՞ որ թե՛ բարիք ու թե՛ հաճույքներ,
Քեզ էլ կբերեն տրամագին օրեր,
Եվ մեծ ալլահը ուզածը կանի,—
Դու անհնադանդ մի՛ լինիր հիմի»:

Եվ դարձյալ.

«Հանձնի՛ր գործերդ տիրոջը գերիմաստուն, մեծաշնորհ...
Հանգիստ պահիր հոգիդ ամեն երկրայինից անցավոր.
Գիտցի՛ր, ոչինչ չի լինելու, ինչպես դու ես կամենում,
Այլ լուկ սյնպե՛ս, ինչպես ուզի դատավորը իմաստուն»:

Եվ դարձյալ.

«Ուրախ եզիր, հանգիստ եզիր ու մոռացիր վիշտ ու ցավ,
Չէ՞ որ վիշտը իմաստունի սիրտն է մաշում անդադար,
Դատողություն պետք չէ անօգ սարուկներին ինքնամերժ,
Խո՛ղ մտքերդ, ու կլինես ուրախության մեջ հավերժ»:

«Գիտե՛ս դու, արդյոք, թե ինչու եմ կանչել քեզ»,— հարցրեց արքան բժիշկ Դուբանին: Եվ բժիշկը պատասխանեց. «Ո՛չ ոք գազտնիքները չի իմանում, բացի մեծ ալլահից»: Իսկ թագավորը նրան ասաց. «Ես քեզ կանչել եմ, որ քեզ սպանեմ և հոգիդ հանեմ»:

Եվ բժիշկ Դուբանը խիստ զարմացավ ու հարցրեց.

«Ո՛վ արքա, իսկ ինչո՞ւ ես սպանում ինձ, և ի՞նչ մեղք եմ գործել ես»:— «Ինձ ասել են,— պատասխանեց արքան,— որ դու լրտես ես և եկել ես ինձ սպանելու, իսկ ես, ահա, քեզ ավելի շուտ կսպանեմ, քան դու ինձ»:

Հետո արքան կանչեց դահճին ու ասաց. «Կտրի՛ր այս խաբեբայի գլուխը և ապահովություն տուր մեզ նրա շարիքից»:— «Գթա ինձ,— կգթա քեզ ալլահը, մի՛ սպանիր ինձ,— կսպանի քեզ ալլահը»,— ասաց այնժամ բժիշկը և կրկնեց այդ խոսքերը արքային, այնպես, ինչպես ես ասացի քեզ դրանք, ով իֆրիտ, բայց դու չգթացիր ինձ և միայն մահս ցանկացար:

Եվ Հովնան թագավորն ասաց բժիշկ Դուբանին. «Ես ապահովության մեջ չեմ լինի, եթե քեզ չսպանեմ, դու ինձ բուժեցիր ինչ-որ բանով, որը ես ձեռքս վերցրի և ես վախենում եմ, որ դու ինձ մի բանով կսպա-

նես, որը ես կհոտոտեմ, կամ էլ մի այլ բանով»։ — «Ո՛վ արքա, — սասաց բժիշկ Գուրանը, — ահա իմ պարզեր քեզանից։ Կաժությունը հատուցում ես շարությամբ»։ Բայց թագավորը բացականչեց. «Քեզ անպայման հարկավոր է սպանել, և առանց հապաղման»։ Եվ այդ ժամանակ բժիշկը համոզվեց, որ թագավորն անպայման սպանելու է իրեն, լացեց ու ցավեց այն բարիքի համար, որ նա արել էր անարժանին, այնպես, ինչպես ասված է.

*Հիրավի, շունի կապիկը ո՛ւ խելք, ոչ դատաւություն,
Թեե իր հայրը ծնվել է խելքով, բանական, խոհուն։
Ով որ անզգույշ քայլում է սահուն տեղով ցամաքի,
Անկասկած է, որ առաջին քայլից պիտի սայթաքի։*

Գրանից հետո առաջ եկավ դահիճը և կապեց բժշկի աչքերը և սուրը մերկացրեց ու ասաց. «Թույլ տո՛ւր»։ Իսկ բժիշկը լաց եղավ ու ասաց թագավորին. «Թո՛ղ ինձ, և կթողնի քեզ ալլահը, մի՛ սպանիր ինձ, — կսպանի քեզ ալլահը։ Եվ նա արտասանեց.

*Արդար եմ ես, սակայն դժբախտ, երջանիկ է խաբեբան.
Անարգանքի արժանացա արդարությամբ անսահման։
Կյանքում արդար էլ չե՛մ լինի, իսկ թե մեռնեմ՝ անիծեք
Արդարներին շմոտենալ արդարությանը երբեք»։*

Այնուհետև բժիշկն ասաց. «Ո՛վ արքա, ահա իմ պարզեր քեզանից։ Գու կոկորդիլոսի հատուցումով ես հատուցում ինձ»։ — «Իսկ ո՞րն է կոկորդիլոսի պատմությունը», — հարցրեց արքան, բայց բժիշկն ասաց. «Ես չեմ կարող պատմել այն, երբ այսպիսի վիճակում եմ։ Երգվում եմ քեզ ալլահով, գթա ինձ, և կգթա քեզ ալլահը»։ Եվ բժիշկը աղիողորմ լացեց, և այդ ժամանակ թագավորի մերձավորներից մեկը ելավ ու ասաց. «Ո՛վ արքա, ինձ բաշխիր այդ բժշկի կյանքը, քանի որ մենք չենք տեսել, որ նա քո դեմ որևէ հանցանք գործի, և տեսել ենք միայն, թե ինչպես նա բուժել է քեզ այն հիվանդությունից, որ շբուժեցին բժիշկներն ու դեղագործները»։

«Միթե դուք չգիտե՞ք, թե ինչու եմ սպանում այս բժշկին, — ասաց թագավորը. — նրա համար, որ, եթե ես խնայեմ նրան, անպայման կմեռնեմ։ Չէ՞ որ նա, ով ինձ բուժեց մի բանով, որը ես ձեռքս առա, կարող է սպանել ինձ մի բանով, որը ես կհոտոտեմ։ Ես վախենում եմ, որ նա սպանի ինձ և ընծաներ ստանա, քանի որ նա լրտես է և եկել է միայն նրա համար, որ սպանի ինձ։ Նրան անպայման պետք է մա-

հապատժի ենթարկել, և դրանից հետո ևս հանգիստ կլինեմ կյանքիս համար»:

«Գթա ինձ, և կգթա քեզ ալլահը, մի՛ սպանիր ինձ,— կսպանի քեզ ալլահը»,— ասաց բժիշկը, բայց համոզվելով, ո՛վ իՖրիտ, որ թագավորն անպայման սպանելու է իրեն, ասաց. «Ո՛վ արքա, եթե իմ մահապատիժն արդեն անխուսափելի է, ինձ ժամկետ տուր, ևս տուն գնամ ու ազգականներիս ու հարեաններիս հրամայեմ թաղել ինձ, և մաքրեմ հողիս ու բաժանեմ բժշկական գրքերս: Ես մի գիրք ունեմ, հատուկների հատուկը, որը ևս որպես նվեր քեզ կտամ, իսկ դու պահիր այն քո գանձարանում»:— «Իսկ ի՞նչ կա այդ գրքի մեջ»,— հարցրեց թագավորը, և բժիշկը պատասխանեց. «Նրա մեջ այնքան բան կա, որ հաշվել չի լինի, և նրա գաղտնիքներից ամենափոքրն այն է, որ, երբ դու իմ գլուխը կտրես, կշրջես երեք թերթ և երեք տող կկարդաս ձախ էջից, իմ գլուխը կխոսի քեզ հետ և կսպատասխանի այն բոլորին, ինչ-որ հարցնես նրան»:

Եվ թագավորը խիստ զարմացավ ու ցնցվեց հաճույքից ու հարցրեց. «Ո՛վ իմաստուն, երբ ևս կտրեմ քո գլուխը, նա ինձ հետ կխոսի՞»:— «Այո՛, ո՛վ արքա»,— ասաց իմաստունը: Եվ թագավորը բացականչեց. «Դա զարմանալի՛ բան է»:

Հետո նա բաց թողեց բժշկին հսկողության ներքո, և բժիշկը գնաց տուն և իր գործերն արեց հենց նույն օրը և եթ, իսկ հետևյալ օրը գնաց դիվան և եկան տերության բոլոր էմիրները, վեզիրները, պալատականները, կուսակալներն ու մեծամեծները, և դիվանը, ասես, ծաղկուն պարտեզ դարձավ: Եվ, ահա, բժիշկը մտավ դիվան և կանգնեց թագավորի առջև՝ երկու պահակների միջև, և նրա մոտ մի հին գիրք կար ու մի անոթ՝ մեջը դեղափոշի: Եվ բժիշկը նստեց ու ասաց. «Սկուսեղ բերեցեք»,— ու բերեցին սկուտեղ, և նա դեղափոշի ցանեց դրա վրա, հավասարեց այն ու ասաց. «Ո՛վ արքա, վերցրու այս գիրքը, բայց մի բացիր այն, մինչև չկտրես իմ գլուխը, իսկ երբ կտրես, սկուտեղի վրա դիր գլուխս ու հրամայիր շփել նրան այս դեղափոշով, և երբ այդ անես, արյունը կդադարի հոսել: Իսկ հետո կբացես գիրքը»: Եվ Հովնան թագավորը հրամայեց կտրել բժշկի գլուխը և առավ նրանից գիրքը, և դահիճը ելավ ու կտրեց բժշկի գլուխը, և գլուխն ընկավ սկուտեղի մեջտեղը: Եվ թագավորը դեղափոշին քսեց գլխին, և արյունը դադարեց, և բժիշկ Գուբանը բացեց աչքերն ու ասաց. «Ո՛վ արքա, բաց գիրքը»: Եվ թագավորը բացեց այն ու տեսավ, որ թերթերը կպել են իրար, և այդժամ նա մատը բերանը տարավ, թքուտեց ու բացեց

առաջին թերթը, և երկրորդը, և երրորդը, ու թերթերը բացվում էին գծավարութեամբ: Եվ թագավորը շրջեց վեց թերթ ու նայեց դրանց ու ոչ մի գիր չտեսավ ու ասաց բժշկին. «Ո՞վ բժիշկ, սրա մեջ ոչինչ չի գրու-ված»:— «էլի՛ բաց»,— ասաց բժիշկը: Եվ թագավորը շրջեց ևս երեք թերթ, և միայն մի քիչ ժամանակ էր անցել, երբ թույնը ստորածվեց թագավորի ամբողջ մարմնով, քանի որ գիրքը թունավորված էր, և վայդ ժամանակ թագավորը ցնցվեց ու գոռաց. «Թո՛ւյնը լցվել է իմ մեջ»: Իսկ բժիշկ Գուբանն արտասանեց.

«Տիրում էին նրանք երկրին.

Բայց տիրակալ եղան դաժան, անողորմ,

Եվ շատ շուտով ի շիք դարձավ

Տերութունը նրանց վայրագ, ինչպես հողմ:

Եթե աղնիվ, արդարամիտ

Տեր լինեին, բախտն էլ նրանց լավ կնայեր,

Մինչդեռ բախտը չարին վշտով,

Թշվառութեամբ, տե՛ս, հատուցեց աղետաբեր:

Եվ արգ բախտի լեզուն, ահա,

Աղդարարում է ամեն կերպ, ամեն օր.—

Մահ ընդ մահվան, արյունն՝ արյան,—

Ժամանակից մի՛ տրտնջաք էլ դժգոհ»:

Եվ երբ բժշկի գլուխը խոսելը վերջացրեց, թագավորն անմիջա-պես մեռած ընկավ:

Իմացի՛ր, ո՞վ իֆրիտ, որ եթե Հովնան թագավորը կենդանի թող-ներ բժիշկ Գուբանին, ալլահը, հավանաբար, կգթար նրան, բայց նա չուզեց ու նրա մահվան ձգտեց, և ալլահը նրան սպանեց: Եթե դու, ով իֆրիտ, գթայիր ինձ, ալլահը, անշուշտ, կգթար քեզ...»:

Եվ վրա հասավ առավոտը, և Շահրազադեն ընդհատեց արտոն-ված զրույցը:

Իսկ երբ եկավ վեցերորդ գիշերը, նրա քույր Գունյազադեն ասաց. «Վերջացրու պատմութունդ»: Եվ Շահրազադեն ասաց. «Եթե արքան ինձ թույլ տա»: «Խոսի՛ր»,— ասաց թագավորը:

Եվ Շահրազադեն ասաց.

«Լսել եմ, ո՞վ երջանիկ արքա, որ ձկնորսն ասաց իֆրիտին. «Եթե դու գթայիր ինձ, ես էլ քեզ կգթայի, բայց դու ոչինչ չէիր ուզում, բացի իմ մահվանից, և ես էլ, ահա, կսպանեմ քեզ, կփակեմ այս սափորի մեջ ու ծովը կնետեմ»: Եվ այդտեղ իֆրիտը ճշաց ու բացականչեց. «Աղաչում եմ քեզ ի սեր ալլահի, ով ձկնորս, մի՛ արա այդ: Գթա ինձ և հատուցում մի պահանջիր ինձնից իմ հանցանքի համար: Եթե ես շա-

րագործ էի, դու բարեգործ եղիր, չէ՞ որ գործածակա՞ն առածներում աս-
վում է. «Ո՛վ շարիքին բարիքով հատուցող, շարագործին իր գործերն
էլ բավական են»: Մի արա այնպես, ինչպես Ումաման Ատիկային
արեց»:— «Իսկ Ումաման ի՞նչ է արել Ատիկային»,— հարցրեց ձկնոր-
սը: Եվ իֆրիտը պատասխանեց. «Հիմա պատմելու ժամանակը չէ, քա-
նի դեռ ես այս բանտում եմ: Եթե դու ինձ բաց թողնես, ես քեզ այդ
կպատմեմ»:

«Թո՛ղ այդ խոսքերը,— ասաց ձկնորսը,— դու անպայման ծովն ես
նետվելու, և ոչ մի հույս չկա, որ երբևիցե այնտեղից քեզ հանեն: Ես
քեզ խնդրեցի ու աղաչեցի, բայց դու միայն իմ մահն էիր ուզում,
առանց դրան արժանի մեղքի, թեև ես քեզ շաբիք չէի պատճառել, և
ես քեզ միայն բարիք էի արել, հանելով բանտից, ու հրե դու այդ բոլորն
արեցիր, ես իմացա, որ դու դաժանաբար ես վաբվում: Եվ իմացիր, որ
ես քեզ ծովը կգցեմ, իսկ որպեսզի քեզ հանողը նորից հետ դցի, ես
կպատմեմ, թե ինչ է տեղի ունեցել իմ ու քո միջև և կզգուշացնեմ նրան:
Եվ դու այս ծովում կմնաս մինչև ժամանակների վերջը, մինչև մեռնես»:

«Բա՛ց թող ինձ,— ասաց իֆրիտը:— Հիմա մեծահոգի լինելու ժա-
մանակն է, և ես խոստանում եմ քեզ, որ երբեք քեզ անհնազանդ չեմ
լինի և քեզ կօգնեմ այնպիսի բանով, որը քեզ հարստացնի»:

Եվ այնժամ ձկնորսը իֆրիտից խոստում առավ, որ նա, եթե ինքը
նրան բաց թողնի, չի վնասի իրեն, այլ բարիք կանի, և վստահելով նրա
խոստումին ու ստիպելով նրան երդվել ալլահի մեծադույն անունով,
բացեց սափորը: Եվ ծուխը վեր ելավ, և ամբողջովին դուրս եկավ ու
դարձավ իսկական իֆրիտ: Իֆրիտը ոտքով հրեց սափորն ու ծովը գցեց:
Եվ երբ ձկնորսը տեսավ, որ իֆրիտը սափորը ծովը գցեց, համոզվեց,
որ ինքը կորած է, և շորերը թրջեց ու բացականչեց. «Մա լավ նշան
չէ»: Ապա նա սիրտ առավ ու ասաց. «Ո՛վ իֆրիտ, մեծ ալլահն ասել է.
«Կատարեք խոստացածը»: Հիրավի, խոստացածի մասին հարցում կար-
վի, իսկ դու խոստացար ինձ ու երդվեցիր, որ չես խաբի ինձ, ապա
թե ոչ՝ ալլահը քեզ կխաբի, որովհետև նա խիստ նախանձախնդիր է, և
հապաղում է, բայց չի ներում: Զէ՞ որ ես քեզ ասացի այն, ինչ որ բժիշկ
Գուբանն էր ասել Հովնան թագավորին. «Գթա ինձ, և կգթա քեզ ալ-
լահը»: Եվ իֆրիտը ծիծաղեց ու ձկնորսի առջևն ընկավ ու ասաց նրան.
«Ո՛վ ձկնորս, հետևի՛ր ինձ»:

Եվ ձկնորսը գնաց իֆրիտի հետևից, փրկության հույս չունենալով:
Եվ իֆրիտը գնաց, մինչև որ դուրս եկան քաղաքից, և նա լեռը բարձ-
րացավ ու իջավ մի ընդարձակ հարթավայր, և հանկարծ նրանք հայտնը-

վեցին ջրով լի լճի մոտ: Եվ իՖրիտը մտավ լճի մեջտեղն ու ասաց ձրկնորսին. «Հետևի՛ր ինձ»: Եվ ձկնորսը հետևեց նրան մինչև լճի մեջտեղը, իսկ իՖրիտը կանգ առավ ու հրամայեց ձկնորսին ուռկանը գցել և ձուկ որսալ: Եվ ձկնորսը լճի մեջ նայեց ու տեսավ զանազան գույնի ձկներ՝ սպիտակ, կարմիր, կապույտ ու դեղին, և շատ զարմացավ դրանից: Հետո նա ուռկանը հանեց ու նետեց, ապա քաշեց դուրս ու գտավ դրա մեջ շորս ձուկ՝ բոլորն էլ տարբեր գույնի: Եվ տեսնելով ձկները, ձկնորսն ուրախացավ, իսկ իՖրիտն ասաց նրան. «Սուլթանի մոտ գնա և նրան տուր սրանք, և նա քեզ այնքան կվճարի, որ քավական կլինի հարստանալու համար: Եվ, ալլահի սիրուն, ների՛ր ինձ» Հիրավի, ես սչ մի բանի ճանապարհը չգիտեմ, քանի որ հազար ութ հարյուր տարի այս ծովում եմ եղել և երկրի մակերեսը միայն այս վայրկյանին տեսա: Եվ այստեղ օրական մեկ անգամից ավելի ձուկ չորսաս»:

Եվ իՖրիտը հրաժեշտ տվեց ձկնորսին ու ասաց. «Ալլահն ինձ կարոտել շտա քեզ», — և հետո ոտքը գետնին խփեց. և գետինը պատովեց ու ներս առավ նրան: Իսկ ձկնորսը քաղաք դնաց, զարմացած նրանից, ինչ-որ տեղի էր ունեցել իր ու իՖրիտի միջև, և թե ինչպես էր պատահել այդ բոլորը:

Եվ նա վերցրեց ձկները և, տուն գալով, կոնքը բերեց, ջրով լըցրեց և ձկները դրա մեջ գցեց, և ձկները խայտացին ջրում: Իսկ հատու ձկնորսը կոնքը գլխին դրեց և ուղևորվեց դեպի արքայական պալատ, ինչպես հրամայել էր իՖրիտը: Եվ երբ նա թագավորի մոտ եկավ և նրան տուաջարկեց ձկները, թագավորը խիստ զարմացավ ձկներից, որ բերել էր ձկնորսը, քանի որ կյանքում դրանց նման ձկներ չէր տեսել:

«Այդ ձկները տվեք խոհարարուհի-աղջկան», — ասաց թագավորը (իսկ այդ աղջկան թագավորին էր նվիրել հոռոմների արքան, և նա դեռ չէր փորձել աղջկան եփելու գործում): Եվ վեզիրը հրամայեց այդ աղջկան տապակել ձուկը և ասաց. «Ո՛վ աղջիկ, թագավորն ասում է քեզ. «Ո՛վ արտասովիկ, մենք փորձում ենք քեզ միայն դժվարության մեջ լինելով: Ցույց տուր մեզ այսօր եփելու արվեստդ ու վարպետութունդ, ինչ-որ մեկն ընծայով սուլթանի մոտ է եկել»:

Հետո խորհուրդներ տալով աղջկան, վեզիրը վերադարձավ սուլթանի մոտ, և թագավորը հրամայեց նրան շորս հարյուր դինար վճարել ձկնորսին, Եվ վեզիրը վճարեց ձկնորսին, և նա փողը թաքցրեց խալաթի փեշերի տակ և, վազելով, տուն փախավ, ընկնելով, ելնելով ու սայթաքելով, ու նա կարծում էր, թե դա երազ է: Ապա նա գնեց իր ընտանիքի համար ինչ որ հարկավոր էր, և ուրախ ու զվարթ գնաց կնոջ մոտ:

Ահա թե ինչ պատահեց ձկնորսին: Իսկ աղջկան պատահեց հետևյալը: Նա վերցրեց ձկները, մաքրեց և տապակը կրակի վրա դրեց ու հետո ձկները դրա մեջ գցեց: Եվ դեռ հազիվ էին ձկները մի կողմից կարմրել, աղջիկը դրանք մյուս կողմի վրա շրջեց, և հանկարծ խոհանոցի պատը բացվեց ու նրա միջից դուրս եկավ գեղեցիկ կազմվածքով, ձվաձև դեմքով, կատարյալ դիմագծերով ու շծարրած աչքերով մի երիտասարդ կին, և նա փաթաթվել էր կապույտ ծոպերով մետաքսե շաղրայի մեջ. ականջներին՝ օղեր, դաստակներին՝ վույգ ապարանջան, և մատներին՝ թանկագին ակերով մատանիներ, իսկ ձեռքին բռնել էր բամբուկե գավազան: Եվ կինը գավազանով խփեց տապակին ու ասաց. «Ո՛վ ձկներ, պահպանո՛ւմ եք դուք պայմանը»: Եվ այդ տեսնելով, խոհարարուհին նվաղեց. իսկ կինը կրկնեց այդ խոսքերը երկրորդ ու երրորդ անգամ, և ձկները բարձրացրին գլուխները տապակից և պարզ լեզվով ասացին. «Այո՛, այո՛», ապա արտասանեցին.

«Վերադառնա՛ս, մենք էլ քեզ հետ կդառնանք.
Հավատարիմ թե դու լինես, մենք էլ նույնը կլինենք,
Իսկ թե լքես մեզ, մենք նույնպես կվարվենք...»:

Եվ այնժամ կինը շուտ տվեց տապակը և նույն տեղը մտավ, որտեղից դուրս էր եկել, և խոհանոցի պատը միացավ, ինչպես առաջ էր:

Այնուհետև խոհարարուհին ուշքի եկավ ու տեսավ, որ շորս ձրկները այրվել են ու սև ածուխի նման դարձել, ու բացականչեց. «Առաջին իսկ արշավանքի ժամանակ ջարդվեց նրա տեղը»¹, — և նորից ուշա-կորույս գետին ընկավ:

Եվ մինչ նա այդ վիճակումն էր, հանկարծ ներս մտավ վեզիրը, և այդ ծերունին տեսավ, որ աղջիկը, խելքը թոցրած պառավի նման, սևը սպիտակից չի շոկում: Նա ոտքով հրեց նրան, և աղջիկն ուշքի եկավ ու լաց եղավ և հայտնեց վեզիրին անցած-գարձածի մասին, և վեզիրը զարմացավ ու ասաց. «Դա, իսկապես, զարմանալի բան է»: Դրանից հետո նա մարգ ուղարկեց ձկնորսի հետևից, և երբ նրան բերեցին, վեզիրը գոռաց նրա վրա և ասաց. «Ո՛վ ձկնորս, բե՛ր մեզ շորս ձուկ, ինչպիսիք բերել էիր»: Եվ ձկնորսը գնաց լիճը, ուռկանը գցեց ու քաշեց և հանկարծ ի՛նչ տեսնի. ուռկանում շորս ձուկ՝ նախորդների նման: Եվ նա վերցրեց դրանք ու տարավ վեզիրի մոտ, իսկ վեզիրը տարավ դրանք աղջկա մոտ և ասաց. «Վե՛ր կաց և տապակի՛ր սրանք ինձ մոտ, որ-

¹ Տարածված առած, որ նշանակում է. առաջին իսկ փորձը անհաջողության մատնվեց:

պեսզի ես տեսնեմ, թե ի՞նչ է կատարվում և ի՞նչպես»: Եվ աղջիկը ոտքի ելավ, պատրաստեց ձկները և, տապակը կրակի վրա դնելով, դրա մեջ գցեց ձկները, բայց հազիվ էին ձկները տապակի մեջ ընկել, որ պատը հանկարծ ճեղքվեց, և հայտնվեց նույն կինը իր նախկին տեսքով, և ձեռքին՝ գավազան: Եվ նա գավազանով խփեց տապակին ու ասաց. «Ո՞վ ձկներ, ո՞վ ձկներ, պահպանո՞ւմ եք, արդյոք, հին պայմանը»: Եվ հանկարծ բոլոր ձկները բարձրացրին գլուխները և ասացին վերը բերված տողերը, այն է.

«Վերադառնաս, մենք էլ քեզ հետ կդառնանք.
Հավատարիմ թե դու լինես, մենք էլ նույնը կլինենք,
Իսկ թե լքես մեզ, մենք նույնպես կվարվենք...»:

Եվ այստեղ վրա հասավ առավոտը, և Շահրազադեն դադարեցրեց թույլատրված զրույցը:

Իսկ երբ եկավ յոթերորդ գիշերը, Շահրազադեն ասաց.

«Լսել եմ, ով բարեբաստիկ արքա, որ երբ ձկները խոսեցին, կինը գավազանով շրջեց թավան ու մտավ նույն տեղը, որտեղից դուրս էր եկել, և պատը դարձյալ փակվեց: Եվ այնժամ վեզիրը ոտքի ելավ ու բացականչեց. «Այդպիսի դեպքը չպիտի ծածկել թագավորից», — և գնաց թագավորի մոտ ու պատմեց, թե ինչ է պատահել և ինչ է տեսել ինքը իր աչքով: Եվ թագավորը բացականչեց. «Ես անպայման իմ աչքով պիտի տեսնեմ այդ»: Եվ նա մարդ ուղարկեց ձկնորսի հետևից ու հրամայեց նրան բերել շորս այնպիսի ձուկ, ինչպիսիք նախորդներն էին, և նրա վրա կարգեց երեք պահակ: Եվ ձկնորսը գնաց լիճը և անմիջապես բերեց ձկները, և թագավորը հրամայեց նրան շորս հարյուր դիներ տալ: Ապա նա դարձավ վեզիրին ու ասաց. «Վե՛ր կաց և ձկները ինրդ տապակի արտեղ, իմ աչքի առաջ»: Եվ վեզիրը պատասխանեց. «Լուում եմ ու հնազանդվում»: Նա բերեց տապակն ու պատրաստեց ձկները և, տապակը կրակի վրա դնելով, ձկները գցեց դրա մեջ, և հանկարծ պատը ճեղքվեց, ու նրա միջից դուրս եկավ մի սևամորթ սարուկ լեռան կամ աղ՛ ցեղից ծնված մարդու նման, և նրա ձեռքին կանաչ ծառի ոստ կար: Եվ ստրուկը ահավոր ձայնով ասաց. «Ո՞վ ձկներ, ո՞վ ձկներ, պահպանո՞ւմ եք դուք հին պայմանը»: Եվ ձրկները գլուխները բարձրացրեցին տապակից ու պատասխանեցին. «Այո՛, այո՛. մենք այն պահպանում ենք.

¹ Աղ ցեղը, Ղուրանում տեղ դասձ առասպելի համաձայն, ալլահի կողմից ոչընչացվել է անհնազանդության պատճառով. աղերը, ըստ առասպելի, արտակարգ բարձրահասակ էին:

Վերադառնաս, մենք էլ քեզ հետ կդառնանք,
Հավաարի՛մ թե դու լինես, մենք էլ նույնը կլինենք,
Իսկ թե լքես մեզ, մենք նույնպես կվարվենք...»:

Եվ ստրուկը մոտեցավ տապակին ու ձեռքի ոստով շրջեց այն և ապա մտավ այնտեղ, որտեղից դուրս էր եկել: Եվ վեզիրն ու թագավորը նայեցին ձկներին ու տեսան, որ դրանք սևացել, ածուխ են դարձել, և թագավորը շշմած բացականչեց. «Այսպիսի դեպքի մասին լուել չի կարելի, և այս ձկների տակ, անշուշտ, մի բան կա թաքնված»: Եվ նա հրամայեց կանչել ձկնորսին, և երբ նա հայտնվեց, թագավորը հարցրեց. «Վա՛յ քեզ, որտեղի՞ց են այս ձկները»: Եվ ձկնորսը պատասխանեց. «Չորս լեռների միջև գտնվող լճից, այն լեռան տակ, որ քաղաքի այն կողմն է»: Եվ թագավորը կրկին դիմեց ձկնորսին ու հարցրեց. «Քանի՞ օրվա ճանապարհ է»: — «Կես ժամվա ճանապարհ, ո՛վ տեր սուլթան», — պատասխանեց ձկնորսը: Եվ թագավորը զարմացավ ու հրամայեց դրանիկներին դուրս գալ ու զինվորներին՝ ձի հեծնել, և ձկնորսը գնում էր բուլորի առջևից, անիծելով իֆրիտին: Եվ բուլորը բարձրացան լեռը և իջան մի այնպիսի ընդարձակ հարթավայր, որ ոչ ոք մինչև այդ իր ամբողջ կյանքում չէր տեսել, և սուլթանն ու զորքը խիստ դարմացած մնացին: Նրանք տեսան հարթավայրը և դրա կենտրոնում՝ մի լիճ չորս լեռների միջև, իսկ լճի մեջ՝ չորս գույնի ձկներ՝ կարմիր, սպիտակ, դեղին ու կապույտ: Եվ թագավորը զարմացած կանգ առավ ու հարցրեց իր շքախմբին ու բուլոր ներկաներին. «Ձեզանից որեւէ մեկը տեսե՞լ է այս լիճը»: Եվ նրանք պատասխանեցին. «Երբեք, ո՛վ ժամանակների տեր, մեր ամբողջ կյանքում չենք տեսել»: Եվ հարցրեց ամենատարիքավորներին, ու նրանք պատասխանեցին. «Մեր կյանքում մենք այստեղ լիճ չենք տեսել»: Եվ այնժամ թագավորը բացականչեց. «Երգվում եմ ալլահով, ես իմ քաղաքը շեմ մտնի և շեմ նստի իմ թագավորության գահին, մինչև այս լճի ու ձկների պատմությունը չիմանամ»:

Եվ նա մարդկանց հրամայեց իջնել ձիերից ու վրաններ խփել այդ լեռների շուրջը, ապա կանչեց վեզիրին (իսկ դա փորձառու և խելոք, խորամիտ ու բանիմաց վեզիր էր), և երբ նա ներկայացավ, թագավորն ասաց նրան. «Ես ուզում եմ մի բան անել և այդ մասին քեզ կպատմեմ: Ես մտածել եմ այս գիշեր մենակ դնալ ու տեսնել, թե դա ինչ լիճ է՝ այդպիսի տարօրինակ ձկներով, իսկ դու նստի՛ր իմ վրանի մուտքի մոտ և էմիրներին, վեզիրներին, պալատականներին ու կուսակալներին

և բուսր նրանց, ովքեր ինձ կհարցնեն, ասա «Սուլթանը վատառողջ է և ինձ հրամայել է ոչ ոքի թույլ չտալ իր մոտ մտնել»: Եվ ոչ ոքի չասես իմ մտադրության մասին»:

Եվ վեզիրը շհարողացավ առարկել թագավորին:

Հետո թագավորը փոխեց հագուստը, թուրը կապեց ու բարձրացավ լեռներից մեկն ու գնաց ամբողջ գիշերը մինչև առավոտ և ամբողջ ցերեկը, և տոթը տանջում էր նրան, քանի որ գիշեր ու ցերեկ նա քայլել էր: Այնուհետև նա երկրորդ գիշերն էլ շարունակեց գնալ մինչև առավոտ և հեովից նրա աչքերին ինչ-որ սև բան երևաց, և թագավորն ուրախացավ ու քացականչեց. «Գուցե, գտնեմ որևէ մեկին, որն ինձ պատմի այս լճի ու ձկների մասին»:

Եվ նա մոտեցավ ու տեսավ սև քարից կառուցված ու երկաթապատված մի պալատ, և դարպասի մի փեղկը բաց էր, իսկ մյուսը՝ փակ: Եվ թագավորն ուրախացավ ու կանգ առավ դարպասի մոտ ու թեթևակի ձեծեց, բայց պատասխան չստացավ. և նա ծեծեց երկրորդ անգամ և երրորդ անգամ, բայց պատասխան չլսեց, և դրանից հետո նա հարվածեց դարպասին ահեղ հարվածով, բայց ոչ ոք չպատասխանեց նրան: «Պալատը երևի դատարկ է», — ինքն իրեն ասաց թագավորը և սրտապնդվելով՝ պալատի դարպասից ներս մտավ, մինչև դռնակը գնաց ու դռչեց. «Ո՞վ պալատի բնակիչներ, այստեղ օտարական ճանապարհորդ կա, ուտելիք չունե՞ք»: Նա կրկնեց այս խոսքերը երկրորդ ու երրորդ անգամ, բայց պատասխան չլսեց: Եվ այն ժամանակ, բաջալերելով ու սրտապնդելով իրեն, նախասրահից անցավ պալատի ներսը, բայց պալատում ոչ ոքի չգտավ, թեև պալատը զարդարված էր մետաքսով, աստղանկար գորգերով ու ցած թողած վարագույրներով: Իսկ պալատի մեջտեղում բակն էր շորս բարձրութուններով՝ մեկը մյուսի գիմաց, քարե նստարանով, և կար այնտեղ ջրավաղանով շատրվան, իսկ ջրավաղանի վրա՝ դեղին, ոսկեծույլ շորս առյուծներ, որոնց երախներից մարգարտի ու հակինթի պես հստակ ջուր էր թափվում, իսկ պալատի շուրջը թռչուններն էին սավառնում, և պալատի վրա ոսկե ցանց էր բաշած, որ արգելում էր նրանց պալատից վեր սլանալ: Եվ թագավորը ոչ ոքի չտեսավ ու զարմացավ ու տխրեց, որ ոչ ոքի չգտավ, որից կարողանար հարցնել այդ հարթավայրի, լճի ու ձկների, լեռների ու պալատի մասին: Այնուհետև նա նստեց դռան մոտ, մտորելով, և հանկարծ վշտահար սրտից բխած հռուշանք լսեց և մի ձայն, որ երգաձայն արտասանում էր.

«Մածկում էի վիշտս, սակայն հիմա ամենքն իմացան,
Եվ արդ փոխվեց քաղցր քունս անքնությամբ մշտական:
Ո՛վ դաժան բախտ, ինձ չես խղճում, խեղճիս դու չես խնայում,
Ու գերի է հոգիս անլուր տառապանքին անհատնում:
Կթացե՛ք միշտ ազնիվ մարդկանց, որ հուր սիրո ճամփեքին
Անկման հասան, հարուստներին, որ ողջ կայքից գրկվեցին:
Կար ժամանակ՝ մեզմ գեփյուռին խանդում էինք քեզ համար,
Բայց շար բախտի դատաստանը կուրացրել է մեզ հիմա:
Ի՞նչ անի հեզ նետածիգը, որ, հանդիպած թշնամուն,
Նետահարել է կամենում, բայց ազեղն իր չի լարվում:
Եվ թե սրբող սրտին տիրի տառապանքը անդագրում,
Մարդ իր բախտից, ճակատագրից էլ ո՞ւր փախչի, դիմի ո՞ւմ»:

Եվ երբ սուլթանը լսեց այդ հառաչանքը, ոտքի ելավ ու գնաց
ձայնի ուղղությամբ և հայանվեց ննջարանի դռան իջեցրած վարա-
գույրի առջև: Եվ նա բարձրացրեց վարագույրն ու տեսավ գետնից մի
կանգուն բարձրությամբ անկողնու վրա նստած մի պատանու, և այդ
պատանին գեղեցիկ էր, բարեկազմ ու պերճախոս, պայծառ ճակատով
ու կարմիր այտերով, և նրա այտին համպարի գնդիկի նման մի խալ
կար, ինչպես բանաստեղծն է ասել:

Օ՛, բարեկազմ իր հասակով, սև մազերով ու տեսքով
Բուր մարդկանց գերում է նա գիշեր, թե օր-ցերեկով:
Մի՛ կշտամբիր իր այտի սե խալի համար դու նրան,
Պուտն է այնտեղ մի կետ դրել՝ իր սև գույնից մի նշան:

Եվ թագավորն ուրախացավ՝ պատանուն տեսնելով, ու ողջունեց
նրան, իսկ երիտասարդը նստած էր եգիպտական ոսկեթելով երիզա-
կարված մետաքսն խալաթը հագին և թանկագին քարերով զարդարված
պսակը գլխին, բայց և այնպես նրա տեսքը վշտահար էր: Եվ երբ թա-
գավորը ողջունեց նրան, երիտասարդը պատասխանեց լավագույն ող-
ջույնով ու ասաց. «Ո՛վ իմ տեր, դու առավել մեծ ես, որպեսզի ես
կանգնեմ քո առջև, բայց թող ինձ ներված լինի»:— «Ես արգեն նե-
րեցի քեզ, ո՛վ երիտասարդ,— ասաց թագավորը:— Ես քո հյուրն եմ և
քեզ մոտ եմ եկել կարևոր գործով: Ես ուզում եմ, որ դու պատմես ինձ
այն լճի, ձկների, պալատի, այս շքեղ պալատում քո մենության և լա-
ցիդ մասին»: Եվ երբ երիտասարդը լսեց այս խոսքերը, արցունքները
հոսեցին նրա այտերով, և նա դառնորեն լացեց, այնպես որ ամբողջ
կուրծքը թրջեց, ապա արտասանեց.

«Ասա՛, լուր առ՛ւր խոով բախտից զրկանք տեսած այն մարդուն,
Քն քանխտի՛ն բախաը գցեց ու քանխտի՛ն տարավ վեր,
Ի ու քնած ես,— քուն չգիտի աչքն ալլահի մշտարթուն,
Որի կյանքն է հավերժական, ժամանակը՝ լուսավոր»:

Հետո նա խոր հառաչեց ու արտասանեց.

«Հանձնի՛ր զործերդ Ամենակալին՝ տիրոջն ամենքի,
Խոհերդ ցրի՛ր, մոռացի՛ր ցավ ու վիշտդ անմեկին:
Մի հարցնի՛ր՝ ինչո՞ւ այս այսպես եղավ և ինչո՞ւ եղավ,—
Ինչպես բախտն ուղի, ամեն ինչ այնպես կլինի, հարկավ»:

Եվ թագավորը զարմացավ ու հարցրեց. «Ի՞նչն է ստիպում քեզ
լաց լինել, ո՞վ երիտասարդ»։ Եվ երիտասարդը պատասխանեց. «Ինչ-
պես չլամ, երբ ես այսպիսի վիճակի մեջ եմ»,— և ձեռքը քղանցքին
տանելով, բարձրացրեց այն։ Եվ հանկարծ ի՛նչ երևաց. նրա ստորին
մասը քար էր, իսկ պորտից մինչև մազերը՝ մարդ։ Եվ պատանուն այդ
վիճակում տեսնելով, թագավորը մեծապես տխրեց ու վշտացավ և հա-
ռաչեց ու ասաց. «Ո՞վ երիտասարդ, դու իմ հոգսերին նոր հոգս ավե-
լացրի՞ր։ Ես ուզում էի իմանալ ձկների ու նրանց ծագման մասին, իսկ
այժմ պետք է հարցնեմ և՛ նրանց, և՛ քո մասին։ Զկա առավել ուժ
ու զորութուն, քան ալլահինը մեծ ու բարձրյալ, Շտապիր, ով երի-
տասարդ, պատմել ինձ քո այդ պատմութունը»։

— «Ինձ բաշխի՛ր քո լսողութունն ու հայացքը»,— պատասխա-
նեց պատանին։ Եվ թագավորը բացականչեց։ «Իմ լսողութունն ու հա-
յացքն ահավասի՛կ»։ Այն ժամանակ երիտասարդն ասաց. «Իսկապես,
այդ ձկներին ու ինձ պատահել է զարմանալի մի բան, և եթե այդ
պատմութունն ասեղներով գրված լիներ աչքերիս անկյուններում, լավ
դաս կլիներ խրատվողների համար»։ «Իսկ ինչպե՞ս է եղել դա»,— հարց-
րեց թագավորը։

ԿԱԽԱՐԻՎԱԾ ՊԱՏԱՆՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ով իմ տեր,— ասաց երիտասարդը,— իմացած եղիր, որ իմ հայրը
այս քաղաքի թագավորն էր, և նրա անունն էր Մահմուդ՝ սև կողիների
տիրակալ։ Նա ապրում էր այդ շորս լեռների վրա և թագավորեց յոթա-
նասուն տարի, իսկ հետո հայրս մահացավ, ու նրանից հետո ես սուլ-
թան գարձա։ Եվ ես ինձ կնության առա իմ հորեղբոր աղջկան, և նա
սիրեց ինձ մեծ սիրով, այնպես, որ երբ ես նրանից հեռու էի լինում,
նա ոչ ուտում էր, ոչ խմում, մինչև ինձ իր կողքին չտեսներ։ Նա ինձ

հետ հինգ տարի տարեց, և մի անգամ էլ, օրերից մի օր, նա բաղնիք գնաց, և այդ ժամանակ ես խոհարարին հրամայեցի շտապ կերպով ուտելու մի բան պատրաստել մեր ընթրիքի համար: Իսկ հետո ես մտա այս ննջարան ու պառկեցի այնտեղ, ուր մենք քնում էինք, հրամայելով երկու աղջիկներին՝ ինձ մոտ նստել, մեկը՝ գլխիս վերև, մյուսը՝ ոտքերիս մոտ: Ծա անտրամադիր էի կնոջս բացակայութեան պատճառով, և քուն չէր գալիս աչքերիս, թեև աչքերս փակ էին, հոգիս արթուն էր: Եվ ես լսեցի, թե ինչպես գլխիս վերև նստած աղջիկն ասաց ոտքերիս մոտ նստածին. «Ախ, Մասուդա, խեղճ մեր տեր, խեղճ երիտասարդութուն: Վա՛յ նրան մեր տիրուհու՝ այդ անիծյալ, լիրբ կնոջ հետ»:— «Հա՛, — պատասխանեց մյուսը, — ալլահն անիծի խաբերա ու պոռնիկ կանանց: Այնպիսի մի երիտասարդ, ինչպիսին մեր տերն է, վայել չէ մեր լիրբ տիրուհուն, որ ամեն օր գիշերում է տնից դուրս»: Իսկ մյուսը, որ գլխավերև էր, ասաց. «Մեր տերը հիմար է, նա հարբած է ու նրա մասին ոչինչ չի հարցնում»: Բայց մյուս աղջիկը բացականչեց. «Վա՛յ քեզ, մի՞թե մեր տերը գիտի, կամ տիրուհին թողնում է սրան ի՞ր համաձայնութեամբ: Ո՛չ, նա ինչ-որ բան է խառնում այն ըմպելիքին, որ սա ամեն երեկո քնելուց առաջ խմում է, և գավաթի մեջ բանջ՝ է լցնում, իսկ սա քնում է ու չի իմանում, թե ինչ է կատարվում, ու չի իմանում, թե նա դուրս գալիս և ուր է գնում: Իսկ տիրուհին, խմեցնելով նրան այդ խմիչքը, հագնում է իր դգեստները, օծվում է և դուրս գալիս նրա մոտից ու կորչում մինչև լուսաբաց: Իսկ հետո գալիս է և մեր տիրոջ քթի տակ ինչ-որ բան է ծխում, և սա դարթնում է քնից»:

Եվ երբ ես լսեցի աղջիկների խոսքերը, աչքերս մթնեցին, ու կարծեցի, թե գիշերն իջավ: Եվ իմ կինը վերադարձավ բաղնիքից, ու մենք սփռոցը բացեցինք ու կեբանք և, ինչպես միշտ, որոշ ժամանակ նրստեցինք զրույցի, իսկ հետո նա պահանջեց այն խմելիքը, որ ես քնելուց առաջ խմում էի, և սափորն ինձ մեկնեց, և ես ձևացրի, թե խմում եմ, ինչպես միշտ, բայց խմելիքը թափեցի ծոցս և անմիջապես պառկեցի ու խռմփալ սկսեցի, իբր թե, քնած եմ: Եվ հանկարծ կինս ասաց. «Ողջ գիշերը քնի՛ր, բուրբուրվին մի վեր կաց: Ալլահը վկա, անտանելի ես ինձ համար, ատելի է քո տեսքը, և հոգիս ձանձրացել է քեզ հետ շփվելուց, և շգիտեմ՝ ե՛րբ ալլահը պիտի հոգիդ առնի»: Ապա նա

1 Քանզ — կանեփի հեղեղի անուան համար: Գրա ծաղկափոշուց պատրաստում են օւժեղ թմրադեղ, որը Եվրոպայում հայտնի է հաշիշ անունով:

վեր կացավ ու հագավ իր լավագույն հանդերձները, անուշահոտություններով օծվեց, և, վերցնելով իմ սուրը, կապեց մեջքին, բացեց պալատի դարպասն ու դուրս եկավ: Եվ ես ելա ու գնացի նրա հետևից, իսկ նա, դուրս գալով պալատից, անցավ քաղաքի շուկայով ու հասավ քաղաքի դարպասներին և յգ ժամանակ արտասանեց ինչ-որ խոսքեր, որ ես չհասկացա, և փականքներն ընկան ու զարպասը բացվեց, Եվ իմ կինը դուրս եկավ, ու ես էլ նրա հետևից (ի՞նչ նա շնկատեց այդ): Հասնելով աղբակույտերին, նա մոտեցավ մի ցանկապատի, որի հետևում աղյուսից կառուցած մի հյուղակ կար՝ մեկ դռնով: Եվ կինս ներս մտավ, իսկ ես բարձրացա հյուղակի կտուրն ու վերևից նայեցի և հանկարծ ի՛նչ տեսնեմ. իմ հորեղբոր աղջիկը մոտեցավ մի սևամորթ ստրուկի, որի մի շրթունքը վերմակի նման էր, իսկ մյուսը՝ մաշիկի, և նրա կախված շրթունքները քարերի ավազն էին մաքրում: Եվ նա տառապում էր բորոտությամբ ու պատառոտուն ցնցոտիների ու քուրջերի մեջ պառկած էր եղեգնի ձողիկների վրա: Եվ կինս համբուրեց նրա առջևի հողը, իսկ ստրուկը բարձրացրեց գլուխն ու ասաց. «Անպիտան, ինչո՞ւ ես այսքան ուշացել: Մեզ մոտ էին մեր հարազատները՝ սևերը, և գինի էին խմում ու հետո գնացին՝ ամեն մեկն իր կնոջ հետ, իսկ ես չհամաձայնեցի խմել քո պատճառով»:

«Ո՞վ իմ տեր, ո՞վ իմ սիրելիս, ով իմ աչքերի զովություն, — պատասխանեց կինս, — միթե դու չգիտե՞ս, որ ես ամուսնացած եմ իմ հորեղբոր տղայի հետ և ինձ զզվելի է նրա տեսքն ու ատելի՛ նրա հետ լինելը: Եվ եթե ես քեզ համար երկյուղ շունենայի, մինչև արևի ծագելը նրա քաղաքը կթաղվեր ավերակների տակ, որոնցում կկոնչային բուերն ու ագռավները և կապաստանեին աղվեսներն ու գայլերը, իսկ նրա քարերը Քաֆ՝ լեռից այն կողմ կլցնեի»:

«Սառ՛ում ես, անիծյալ, — գոռաց ստրուկը: — Երդվում եմ սևամորթների խիզախությամբ (և մի կարծիր, թե մեր քաջությունը սպիտակների քաջության նման է), եթե դու մեկ էլ տանը մնաս մինչև այս ժամը, այդ օրվանից ես կզազարեմ քեզ հետ լինելուց և քո մարմինը շեմ ծածկի իմ մարմնով: Ո՞վ անիծյալ, դու մեզ հետ կատակ ես անում ի հաճույս քո, ո՞վ հոտած, ո՞վ շուն, ո՞վ ստորագույնգ սպիտակներից»:

Եվ երբ ես լսեցի նրա խոսքերը (իսկ ես նայում էի, տեսնում ու լսում, թե ինչ են անում նրանք), աշխարհը մթնեց գլխիս, և ես ինքս

1 Քաֆ — լեռնաշղթա, որը, ըստ միջնադարյան մահմեդական տիեզերագիտների պատկերացման, գոտևորում է երկիրը:

էլ շփտեի, թե որտեղ եմ գտնվում: Իսկ հորեղբորս աղջիկը կանգնել ու լաց էր լինում ստրուկի համար և ստորանում էր նրա առջև, ասելով. «Մ՛վ սիրելիս, ո՛վ սրտիս պտուղ, եթե դու ինձ վրա բարկանաս, ո՞վ ինձ կխղճա: Եթե դու ինձ վանես, ո՞վ ինձ կընդունի, ո՞վ սիրելիս, ո՞վ իմ աչքի լույս»: Եվ նա լաց էր լինում և աղերսում ստրուկին, մինչև որ սա ներեց նրան, և այնժամ նա ուրախացավ ու վեր կացավ ու հանեց շորերն ու շապիկը և ասաց. «Մ՛վ իմ տեր, դու ոչինչ չունե՞ս, որ ազախինդ ուտի»: Եվ ստրուկը պատասխանեց. «Թաց թասը, դրա մեջ եփած մկան ոսկորներ կան, կե՛ր, իսկ այն զավաթում գարեջրի մնացորդ կգտնես, խմի՛ր»: Եվ նա վեր կացավ, կերավ ու խմեց և լվաց բերանն ու ձեռքերը, իսկ հետո մտաեցավ ու պառկեց ստրուկի հետ եղեգի կտորսանքի վրա և, մերկանալով, մերձեցավ նրան. որը ցընցոտիների ու փալասների մեջ էր: Եվ երբ ես տեսա, թե ինչ է անում հորեղբորս աղջիկը, գլուխս կորցրի և, հյուզակի կտուրից իջնելով, ներս մտա ու վերցրի սուրը, որ հորեղբորս աղջիկն էր իր հետ բերել, և մերկացրի այն, մտադրվելով երկուսին էլ սպանել: Ես նախ հարվածեցի ստրուկի վզին և կարծեցի, թե նրա հաշիվը մաքրել եմ...»:

Եվ այստեղ վրա հասավ առավոտը, և Շահրազադեն ընդհատեց արտունված զրույցը:

Իսկ երբ եկավ ութերորդ գիշերը, նա ասաց.

«Լսել եմ, ո՛վ բարեբաստիկ արքա, որ կախարդված երիտասարդը թագավորին ասաց. «Երբ ես հարվածեցի ստրուկին, որ գլուխը կտրեմ ես շհատեցի լծերակները, այլ կտրեցի կոկորդը, մաշկն ու միտը, բայց կարծում էի, թե սպանել եմ նրան, Նա մի ուժգին խոխոոց արձակեց և իմ կինը շարժվեց, իսկ ես հետ դարձա. սուրն իր տեղը գրեցի, բազար գնացի և, պալատ մտնելով, անկողնումս պառկեցի մինչև առտու մտա: Եվ հորեղբորս աղջիկը եկավ ու արթնացրեց ինձ. և հանկարծ ի՛նչ տեսնեմ, նա կտրել է ծամերը և սգազգեստ հագել: Եվ նա ասաց. «Մ՛վ իմ հորեղբորորդի, ինչ որ անեմ, չխանգարես ինձ: Լսել եմ, թե մայրս վախճանվել է և հայրս սպանվել սրբազան պատերազմում, իսկ երկու եղբայրներիցս մեկը մեռել է խայթվածքից, իսկ մյուսն ընկել է անդունդը, այնպես որ ես լաց լինելու և սգալու իրավունք ունեմ»: Եվ լսելով նրա խոսքերը, ես լռեցի ու հետո պատասխանեցի. «Արա, ինչ-որ ուզում ես, ես քեզ շեմ հանդիմանի»: Եվ նա ողբալով ու աղսթելով անցկացրեց մի ամբողջ տարի՝ սկզբից մինչև վերջ, իսկ տարին լրանալուց հետո ինձ ասաց. «Քո պալատում ես ուզում եմ գմբեթի նման մի դամբարան կառուցել և այնտեղ մենանալ իմ վշտերի հետ: Եվ ես «Վըշ-

տերի տուն» կկոչեմ այն»։— «Արա, ինչ-որ ուզում ես»,— պատասխանեցի ես։ Եվ նա կառուցեց իր համար սգո տուն և նրա կենտրոնում գմբեթով դամբարան սարքեց, իսկ հետո ստրուկին այնտեղ փոխազրեց ու սկսեց նրան այնտեղ այցելել, իսկ նա ոչ մի օգուտ չէր տալիս նրան ու միայն գարեջուր էր խմում։ Այն օրից ի վեր, երբ ես վիրավորել էի նրան, նա չէր խոսում, բայց դեռ կենդանի էր, քանի որ նրա կյանքի ժամանակը դեռ չէր լրացել։ Եվ կինս ամեն օր առավոտյան ու երեկոյան այցելում էր նրան ու գմբեթի տակ էր մտնում, լաց լինում ու ողբում և գինի ու թուրմեր խմեցնում նրան, առավոտ-երեկո կերակրով սնում։ Եվ այդպես շարունակեց մինչև մյուս տարին, իսկ ես համբերատար էի և ուշադրութուն չէի դարձնում գրան։ Բայց մի օր ես հանկարծ մտա նրա մոտ ու տեսա, որ նա լալիս է, ասելով. «Ինչո՞ւ ես դու իմ հայացքից թաքնվում, ով իմ սրտի սիրտփանք։ Խոսի՛ր ինձ հետ, հոգի՛ս, սիրելի՛ս, մի բան ասա՛ ինձ»։ Եվ ապա այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Թե մոռանաք ինձ՝ սիրուս մեջ էլ համբերանք չեմ հիշի,
Միտքս ու հոգիս չեն ճանաչում սերն ու կիրքը ուրիշի,
Ձեզ հետ տարեք իմ աճյունը և իմ հոգին, ուր գնաք,
Նեզ մարմինս, ուր որ իջնեք, այնտեղ հանձնեք հողին տաք։
Եվ երբ հետո անունս տաք, ձեզ պատասխան կլինի
Ձեր ձայնն առած ոսկորներին հառաչանքը ողբալի»։

Եվ հետո, լաց լինելով, շարունակեց.

«Իմ երջանկության օրն այն կլինի, երբ ինձ մերձենաս,
Իսկ կորստյանս օրն էլ այն, երբ որ ինձնից հեռանաս.
Եվ թեկուզ մահվան տաղնապն էլ ասեղ հոգիս համակի,
Գարձլալ ինձ համար միշտ քաղցր է հանգչել սիրածիս գրկին»։

Եվ դարձյալ.

«Թե ես կատարյալ երջանկության մեջ ապրել կտրեմամ,
Եվ Խոսրովի գահն ու աշխարհը ողջ ձեռքիս ունենամ,—
Ես այդ ընդունիմ մոծակի թևի արժեք էլ չեմ տա,
Եթե աչքերս չկարողանան նայել քեզ վստահ»։

Եվ երբ դադարեց խոսելուց ու լաց լինելուց, ես ասացի նրան. «Ո՞վ հորեղբորս աղջիկ, բավական է, որքան սգացիր։ Ի՞նչ օգուտ ողբայուց։ Չէ՞ որ դա ասվարդյուն է»։— «Մի՛ արգելիր ինձ, ինչ-որ անում եմ։ Եթե դու արգելք հանդիսանաս, ես ինքնասպան կլինեմ»,— ասաց նա, և ես լռեցի ու թողեցի նրան այդ վիճակում։ Եվ նա մի տարի ևս չէր շագար և մեկ գիշեր

անցկացրեց սգի, արտասուքի ու ողբի մեջ, իսկ երրորդ տարին մի անգամ ես մտա նրա մոտ, ինձ հետ պատահած ինչ-որ քանի պատճառով բարկացած (իսկ այդ տանջանքն այնքա՛ն երկար էր տևում), և հորեղբորս աղջկան գտա դամբարանի մոտ, գմբեթի տակ: Եվ նա ասում էր. «Ո՛վ իմ տեր, ինչո՞ւ պատասխան չես տալիս ինձ»: Իսկ հետո նա արտասանեց.

«Ով գերեզման, մի՞թե նրա գեղեցկությունը չքացավ քո գրկում,
Մի՞թե մտրեց պայծառ լույսդ, ո՞վ պայծառ տեսք սիրելվույս:
Ո՞վ գերեզման, ոչ երկնքի կտմարն ես չի՞նչ, ս՛չ էլ երկրի մակերես,
Ինչպե՞ս, ասա, պարփակեցիր քո մեջ լուսին ու արև»:

Եվ լսելով նրա խոսքերն ու ոտանավորը, ես ավելի զայրացա, քան առաջ էի, և բացականչեցի. «Ա՛հ, մինչև ե՞րբ պիտի տևի այս սուգը,— և արտասանեցի.—

Ո՞վ գերեզման, կորա՞վ քո մեջ սևությունը իր դեմքի,
Մի՞թե մտրեց լույսդ պայծառ՝ սևին տվող դեմքը իր:
Ո՞վ գերեզման, չէ՞ որ լիճ չես, ոչ էլ կաթսա՝ կրակին.—
Ինչպե՞ս իրտր գու ձուլեցիր մուրն ու տիղմը քո գրկին»:

Եվ երբ հորեղբորս աղջիկը լսեց այս խոսքերը, ընդոստ ոտքի ելավ ու ասաց. «Վա՛յ քեզ, շուն: Դու ես ինձ այս օրը գցել, ու վիրավորել սրտիս սիրածին ու ցավ պատճառել ինձ ու նրա երիտասարդությունը: Ահա երեք տարի է արդեն, որ նա ոչ մեռած է, ոչ կենդանի»:— «Ո՞վ վատագույնդ փուչ ստրուկների վաճառված տարփուհիներից, ով ամենաանարգ պոռնիկ, այո՛, ես եմ արել այդ»,— պատասխանեցի ես և, սուրը ձեռքս առնելով, մերկացրի այն ու կնոջս ուղղեցի, որպեսզի սպանեմ նրան: Բայց նա, լսելով իմ խոսքերը և տեսնելով, որ ուզում եմ սպանել իրեն, ծիծաղեց ու գոչեց. «Հեռացի՛ր, շո՛ւն: Զի կարող պատահել, որ անցածը հետ գա, կամ մեռածները կենդանանան: Ալլահը հիմա իմ ձեռքն է տվել նրան, ով ինձ այս շարիքն է գործել և ում պատճառով իմ սրտում անմարելի կրակ էր վառվել ու անմեղմելի բոց»:

Եվ նա ոտքի ելավ և, արտասանելով ինձ անհասկանալի բառեր, ասաց. «Իմ կախարդությունը կեսդ քա՛ր գարձիր, իսկ կեսդ՝ մարդ թող մնա՛»: Եվ ես անմիջապես դարձա այն, ինչ տեսնում ես, և չեմ կարող՝ ո՛չ վեր կենալ, ո՛չ նստել, ու ո՛չ մեռած եմ, ս՛չ էլ կենդանի: Եվ երբ ես՝ այսպիսին դարձա՛, նա կախարդեց քաղաքն ու նրա բոլոր շուկաներն ու պարտեզները: Իսկ մեր քաղաքի քնակիչները շորս ցեզի

լին բաժանվում՝ մահճեղականներ, քրիստոնյաներ, հրեաներ ու մոզեր, և նա ձուկ գարձրեց նրանց, սպիտակ ձկները մահճեղականներն են, կարմիրները՝ մոզերը, կապույտները՝ քրիստոնյաները, իսկ դեղինները՝ հրեաները: Իսկ շորս կղզիները նա լեռների վերածեց, սրոնք շրջապատում են լիճը: Եվ, բացի դրանից, նա ինձ ծեծում է ու տանջում ու ամեն օր խարազանի հարյուր հարված հասցնում, մինչև սր արյուն է հոսում ու թիկունքիս մաշկը պատառոտվում: Իսկ այդ բոլորից հետո նա իմ մարմնի վերևի կեսը հագցնում է մազե զգեստ, իսկ վրայից՝ այժ շրեղ հագուստը»: Եվ հետո երիտասարդը լաց եղավ ու ասաց.

«Քո գատաստանին ես միշտ հնազանդ, համբերատար եմ,
 Ով ահեղ աստված ու ճակատագիր.
 Ես կզիմանամ, տոկուն կլինեմ, եթե այդպես է
 Քո ցանկությունը և կամքդ, ո՞վ տեր:
 Նրանք և՛ դաժան, և՛ շար ախոյան, և՛ ամբարտավան
 Ծզան իմ հանդեպ ու քինախնդիր,
 Բայց գուցե դրան իբրև հատուցում՝ ես դեռ ստանամ
 Քո շնորհները վերին դրախտի:
 Իմ թույլ ուժերից շատ վեր են այն բյուր ու բազմատեսակ
 Տառապանքները, որ կրում եմ ես,
 Եվ այդ ընտրյալիդ, Արժանավորիդ հար ու շարունակ
 Ապագիներով՝ ազոթում եմ հեզ»:

Եվ թագավորը դարձավ երիտասարդին ու ասաց. «Օ՛, դու իմ հոգուս նոր հոգս ավելացրիր, իմ վիշտը մեղմացնելուց հետո: Բայց որտե՞ղ է նա, ով երիտասարդ, և որտե՞ղ է այն դամբարանը, որի մեջ վիրավոր ստրուկն է պառկած»:— «Ստրուկը պառկած է իր դամբարանում, գմբեթի տակ, իսկ նա՝ այն սենյակում, որը դասն դիմաց է,— պատասխանեց երիտասարդը:— Նա օրական մի անգամ գալիս է այստեղ, ևրբ արևը դուրս է գալիս: Եվ հենց սր գալիս է, մոտենում է ինձ, նստում է շորերս ու ծեծում խարազանի հարյուր հարվածով, և ես լալիս եմ ու գոռում, բայց ոչ մի շարժում չեմ կարողանում անել, որ նրան ինձնից հեռու մղեմ: Իսկ ինձ ձաղկելուց հետո իջնում է ստրուկի մոտ, դիմի ու կերակուր է տանում ու կերակրում նրան: Եվ վազը, առավոտյան, նա կգա»:

«Այլահսով եմ երգվում, ո՞վ երիտասարդ, — բացակաեղեց արքան, — ևս չեմ խուսափի քեզ համար՝ բարի գործ կատարելուց, որի համար ինձ կհիշեն և որը գրի կառնեն ու այն հայտնի կգան նա մինչև ժամանակների վերջը»:

Այնուհետև թագավորը նստեց, և նա ու երիտասարդը զրուցեցին, մինչև գիշերը վրա հասավ ու քնեցին: Իսկ լուսածեղին թագավորը վեր կացավ, հանեց զգեստները և, սուրը մերկացնելով, ուղևորվեց դեպի այն շենքը, որտեղ ստրուկն էր: Նա տեսավ մոմեր, կանթեղներ, խնկամաններ ու յուղի անոթներ և մոտեցավ ստրուկին ու, հասնելով նրան, մի անգամ հարվածեց սրով ու սպանեց և շալակելով, տարավ-զցեց պալատի ավազանը: Դրանից հետո նա վերադարձավ ու, ստրուկի ցընցոտիների մեջ փաթաթվելով, պառկեց դամբարանում, և նրա սուրը, ամբողջապես պատյանից հանած, իր մոտ էր:

Մի քանի րոպեից հայտնվեց անիծյալ կախարդուհին և, հենց որ եկավ, հանեց իր հորեղբորորդու զգեստները և, խարազանն առնելով, սկսեց ծեծել նրան: Եվ երիտասարդը գոռաց. «Ո՛ւՖ, ինձ արդեն բավական է, ինչ-որ արել ես ինձ, ո՛վ հորեղբոր աղջիկ: Խղճա՛ ինձ, ո՛վ հորեղբոր աղջիկ»: Բայց կինը գոչեց. «Իսկ դու խղճացի՞ր ինձ և խնայեցի՞ր ինձ համար իմ սիրածին»: Եվ նա ծեծեց նրան, մինչև որ հոգնեց, և արյունը հոսում էր երիտասարդի կողքերից, իսկ հետո նա երիտասարդին հագցրեց մազե շապիկը, դրա վրայից՝ հագուստը և այնուհետև իջավ ստրուկի մոտ, ձեռքին գինու գավաթն ու կերակրի ամանը: Նա մտավ գմբեթի տակ և սկսեց լաց լինել ու հառաչել ու ասել. «Ո՛վ իմ տեր, մի բան ասա՛ ինձ, ո՛վ տեր իմ, խոսի՛ր ինձ հետ,— ապա արտասանեց այսպիսի ոտանավոր.

Մինչև ե՞րբ, արդյոք, դու իմ նկատմամբ անգութ

եմ ինձնից հեռու պիտի լինես.

Մի՞թե չեմ թափել բավականաչափ դառնազի արցունք

եմ չեմ սզացել ու ողբացել ես:

Մինչև ե՞րբ, արդյոք, պիտի որ տեի դաժան միտումով

Քո բաժանումը՝ ինձ հույսից զրկող:

Թե կամենայիր քեզ նախանձողին մի բարի աչքով

Նայել, նա հիմա կլինեիր առողջ»:

Եվ նա դարձյալ լաց եղավ ու ասաց. «Իմ տե՛ր, խոսի՛ր ինձ հետ, մի բան ասա՛ ինձ»: Եվ թագավորը ձայնն իջեցրած և խոսքոտ ու կակազելով, խոսեց սևերի լեզվով և ասաց.— «Ա՛խ, ա՛խ: Զկա ավելի մեծ ուժ ու զորություն, քան ալլահինն է մեծ ու բարձրյալ»: Եվ երբ կինը լսեց նրա խոսքերը, ուրախությունից ճչաց և ուշքը կորցրեց, իսկ հետո ուշքի եկավ ու ասաց. «Ո՛վ իմ տեր, ճի՞շտ է այս»: Իսկ թագավորը ձայնը թուլացրեց ու պատասխանեց. «Ո՛վ անիծյալ, մի՞թե դու արժանի ես, որ որևէ մեկը քեզ մի բան ասի ու խոսի քեզ հետ»:— «Իսկ

ինչո՞ւ չէ»,— հարցրեց կինը: «Նրա համար, որ դու ամբողջ օրը տանջում ես քո ամուսնուն, իսկ նա, անիծելով ինձ ու քեզ, օգնության է կանչում ու մինչև առավոտ ինձ քնել չի թողնում,— ասաց թագավորը:— Նա անհանգստացրեց ու վնասեց ինձ, և եթե գա շիններ, ես, հավանաբար, առողջացած կլինեի: Ահա թե ինչն էր խանգարում, որ ես պատասխանեմ քեզ»:— «Քո թույլտվությամբ ես կազատեմ նրան իր վիճակից»,— ասաց կինը: Եվ թագավորը պատասխանեց. «Ազատի՛ր ու հանգիստ տո՛ւր մեզ»:

Եվ կինն ասաց. «Լսո՞ւմ եմ ու հնազանդվում»,— և, գմբեթի տակից դուրս գալով ու պալատ գնալով, վերցրեց գավաթը, ջուր լցրեց ու ինչ-որ բաներ ասաց դրա վրա, և գավաթի ջուրը պղպջակներով ծածկվեց ու խլթխլթաց ու եռաց, ինչպես որ կրակի վրա պղնձի մեջ է կուռում: Հետո կինը ջուրը ցնցղեց երիտասարդի վրա և ասաց. «Վախարդում եմ քեզ այն բանով, ինչ-որ արտասանեցի ու ասացի, եթե գուայգպիսին դարձար իմ կախարդանքով ու խորամանկությամբ, ապա փոխիր այդ կերպարանքը և ստացիր քո նախկին տեսքը»: Եվ հանկարծ երիտասարդը ցնցվեց ու ոտքի ելավ, և ուրախացավ, որ ազատվել է, ու բացականչեց. «Վկայում եմ, որ բացի ավաճից ուրիշ աստված չկա, և Մուհամմեդը նրա առաքյալն է, և թող ավաճը փառավորի նրան ու պահպանի»: Իսկ կինն ասաց. «Դուրս ե՛կ և այլևս մի՛ վերադարձիր այստեղ, այլապես կսպանեմ քեզ»,— և գոռաց նրա վրա, ու երիտասարդը դուրս եկավ: Իսկ կինը վերադարձավ գմբեթի մոտ, իջավ նրա ներսըն ու ասաց. «Ո՞վ իմ տեր, դո՛ւրս արի ինձ մոտ, որպեսզի ես տեսնեմ քո գեղեցիկ կերպարանքը»:

Եվ թագավորը թույլ ձայնով ասաց նրան. «Ի՞նչ արեցիր որ: Դու աղտոտեցիր ինձ ոստից, բայց չազատեցիր արմատից»:— «Ո՞վ իմ տեր, ո՞վ իմ սիրելի, ո՞րն է արմատը»,— հարցրեց կինը. «Վա՛յ քեզ, անիծյալ,— բացականչեց թագավորը:— Արմատը այս քաղաքի և շորս կրգպիսիների բնակիչներն են: Ամեն օր, երբ կեսգիշեր է լինում, ձկները բարձրացնում են գլուխները և օգնություն են կանչում ու անիծում ինձ ու քեզ: Ահա իմ առողջանալուն խանգարող պատճառը: Դե գնա՛, շուտ աղտոտի՛ր նրանց և արի, ձեռքս բռնիր ու բարձրացրու ինձ: Առողջությունս արգեն վերադառնում է»:

Եվ երբ կինը լսեց թագավորի խոսքերը (իսկ նա կարծում էր թե՛ դա ստորուկն է), ուրախացավ ու բացականչեց. «Ո՞վ իմ տեր, քո հրամանն իմ աչքերի ու գլխի վրա է: Հանուն ավաճի»: Եվ նա ուրախ-ուրախ

վեր կացավ, վազեց ու մոտեցավ լճին և մի քիչ ջուր վերցրեց այնտեղից...»¹

Եվ այստեղ բացվեց ատավոտը, և Շահրազագեն ընդհատեց արտոնված զրույցը:

Իսկ երբ եկավ իններորդ գիշերը¹, նա ասաց.

«Լսել եմ, ով բարեբաստիկ արքա, որ կախարդ կինը լճից մի քիչ ջուր վերցրեց ու դրա վրա անհասկանալի խոսքեր ասաց, և ձկները թռչկոտեցին ու բարձրացրին գլուխները և անմիջապես դուրս եկան, և կախարդանքներից ազատվեցին քաղաքի բնակիչները, և քաղաքը բնակիչներով լցվեց, ու վաճառականներն սկսեցին առնել ու ծախել, և ամեն մեկը ձեռք զարկեց իր արհեստին, և կղզիները վերստին դարձան այնպիսին, ինչպիսին եղել էին:


Եվ դրանից անմիջապես հետո կախարդ կինը վերադարձավ թագավորի մոտ ու ասաց. «Մ՛վ սիրելիս, տուր ինձ քո ազնիվ ձեռքը և վեր կաց»: Եվ թագավորը հազիվ լսելի ձայնով պատասխանեց. «Ավելի մոտեցիր ինձ»: Եվ երբ կինը մոտեցավ, թագավորը հանեց սուրը և խրեց նրա կուրծքը, և սուրը, փայլելով, դուրս եկավ մեջքից: Հետո թագավորը նորից հարվածեց ու մարմինը երկու կես արեց, ու դիակը երկու կիսով գետին նետեց ու դուրս եկավ ու տեսավ կախարդված երիտասարդին, որը կանգնել, սպասում էր իրեն, ու ողջունեց նրան փրկության առթիվ: Եվ երիտասարդը համբուրեց թագավորի ձեռքը և շնորհակալութուն հայտնեց, իսկ թագավորը հարցրեց. «Քո քաղաքում ես ապրելու, թե՞ ինձ հետ իմ քաղաքը կգաս»:— «Մ՛վ մեր ժամանակների թագավոր,— ասաց երիտասարդը,— իսկ դու գիտե՞ս, թե որքան է իմ ու քո քաղաքների հեռավորութունը»:— «Երկուսուկես օրվա ճանապարհ»,— պատասխանեց թագավորը: Եվ երիտասարդը բացականչեց. «Մ՛վ թագավոր, եթե քնած ես, արթնացիր: Քո և քո քաղաքի միջև արագազնաց ճանապարհորդի մեկ տարվա ճանապարհ կա, և դու երկուսուկես օրվա ընթացքում ես եկել միայն այն պատճառով, որ քաղաքը կախարդված էր: Իսկ ես, ո՛վ թագավոր, ոչ մի ակնթարթ քեզ մենակ չեմ թողնի»:

Եվ թագավորն ուրախացավ ու բացականչեց. «Փա՛ռք արլահին, որ ողորմածարար քեզ ինձ համար ուղարկեց, Դու իմ միակ որդին ես, քանի որ ես իմ ամբողջ կյանքում ոչ մի երեխա չեմ ունեցել»:

Ի՛նչ նրանք գրկախառնվեցին, խիստ ուրախացած, ու հետո դուրս

¹ Հետագայում նոր գիշերվա գալը թարգմանության մեջ չենք նշում:

եկան ու պալատ մտան: Եվ թագավորը, որ կախարդված էր, մեծամեծներին հրամայեց իր ճանապարհի պատրաստութուն տեսնել, պատրաստել պաշարներ և ամեն ինչ, որ հանգամանքները պահանջում էին: Եվ նա ինքն էլ սկսեց պատրաստվել ու պատրաստվեցին տասն օր, և երիտասարդը ճանապարհ ընկավ սուլթանի հետ, որի սիրտը կարոտ էր իր քաղաքին. ինչպե՛ս էր թողել այն: Եվ նրանք գնացին, իսկ նրանց հետ՝ հիսուն սարուկներ, ու մեծամեծ ընծաներ, և ճանապարհորդեցին անդադար, գիշեր ու ցերեկ, մի ամբողջ տարի, և ալլահը նախասահմանեց նրանց ապահովութուն, այնպես որ նրանք քաղաք հասան ու մարդ ուղարկեցին վեզիրին հայտնելու սուլթանի բարեհաջող ժամանման մասին: Եվ վեզիրն ու զորքը, որ մինչ այդ կորցրել էին սուլթանի վերադարձի հույսը, դուրս եկան, և զինվորները, թագավորին մոտենալով, համբուրեցին գետինը և շնորհավորեցին նրան բարեհաջող վերադարձի առթիվ: Եվ թագավորը մտավ պալատ ու նստեց գահին, իսկ հետո դարձավ վեզիրին ու պատմեց այն ամենը, ինչ որ պատահել էր երիտասարդին, և վեզիրը, լսելով, թե ինչ է պատահել նրան, շնորհավորեց նրան փրկության առթիվ: Եվ այդ ժամանակ բոլորը հանգրստացան: Եվ թագավորը շատերին պարգևներ շնորհեց և ասաց վեզիրին. «Կանչիր ինձ մոտ այն ձկնորսին, որ մեզ ձկներ էր բերում»: Եվ մարդ ուղարկեցին ձկնորսի հետևից, որը պատճառ էր դարձել քաղաքի բնակիչների փրկության, և նրան բերեցին, և թագավորը նրան պարգևներ շնորհեց ու հարցրեց, թե ի՞նչ վիճակում է ապրում նա, և թե՛ երեխաներ ունի՞, արդյոք: Եվ ձկնորսը պատմեց, որ ինքը երկու աղջիկ ու մի տղա ունի, և թագավորը հրամայեց բերել նրանց, և ինքն ամուսնացավ մի աղջկա հետ, իսկ երիտասարդը՝ մյուսի, տղային էլ գանձապետ դարձրեց: Հետո նա վեզիրին սուլթան նշանակեց և ուղարկեց երիտասարդի քաղաքը, այսինքն սև կղզիները, և նրա հետ ուղարկեց այն հիսուն սարուկներին, որոնք իր հետ էին եկել, և ընծաներ օվեց վեզիրին՝ բոլոր էմիրների համար: Եվ վեզիրը համբուրեց նրա ձեռքը և նույն ժամին ու բոպեին ճանապարհ ընկավ, իսկ թագավորն ու երիտասարդը մնացին: Ինչ վերաբերում է ձկնորսին, ապա նա իր ժամանակի ամենահարուստ մարդը դարձավ, իսկ նրա աղջիկները թագավորներին կին դարձան, մինչև մահն այցելեց նրանց»:





Երէկ խնջորի
պատմությունը



Պատմում են, թե Հաբուն ալ Ռաշիդը մի անգամ երեկոյան կան-
չից իր վեղիր Ջաֆարին ու նրան ասաց. «Ես ուզում եմ քաղաք դուրս
գալ և ժողովրդին հարց ու փորձ անել իշխող կառավարիչների վար-
մունքի մասին: Ումից բողոքեն, կարծակենք, իսկ ուժ որ գովեն,
կայարգեատրենք»:— «Լսո՛ւմ եմ ու հնազանդվում»,— պատասխանեց
Ջաֆարը: Եվ խալիֆը Ջաֆարի ու Մասրուրի հետ դուրս եկավ ու անցավ
ամբողջ քաղաքը, և ման եկավ փողոցներում ու շուկաներում: Նրանք
անցնում էին մի նրբանցքով և տեսան մի զառամյալ ծերունու, որը
զլխին դրել էր ուռկան ու զամբյուղ, իսկ ձեռքին բռնել էր մի փայտ:
Ով նա առանց շտապելու գնում էր ու այսպիսի ոտանավոր ասում.

«Ինձ ասում են. «Դու մարդկանց մեջ գիտելիքով քո հարուստ
Աշքի ընկած փայլում ես միշտ, ինչպե՞ս գիշեր լուսեկա»:
Իսկ ես՝ նրանց. «Հարկավոր չեն ո՛չ խոսքերն այդ, ո՛չ գովեստ,
Չէ՞ որ խելքը իշխանությամբ է հարդանքի ենթակա»:
Եվ թե գրավ դնել ուղեն օրվա հացիս փոխարեն
Ինձ՝ իմ ամբողջ գիտելիքով ու թանաքով ու թղթով,
Չէին կարող ընգունելի գարձնել գրավն այդ ունայն
Մինչև օրը դատաստանի, մինչև օրը հարության:
Խեղճ աղքատի, տնանկ մարդու օրը դառն ու ցավագին,
Տառապանքով է միշտ անցնում՝ դերի գարձած կարիքին:
Ողջ աժառը սնունդ շունի, կարոտ է նա շոր հացի,
Իսկ ձմեռը լոկ ցնցոտին պիտի նրան տաքացնի:
Հարձակվում են, հաշում վրան անաեր շներն փողոցի,
Ամեն անարդ ու անարժան՝ լուտանք նետում երեսին:
Իսկ երբ ցավից տառապելով՝ տրտնջում է նա մարդկանց,
Ոչ ոք նրան չի հանդուրժում.— անտանելի մարդ է նա:
Եվ թե այստեղ միշտ աչդպես է աղքատների կյանքը խեղճ,
Սպա աչն է ավելի լավ, որ նա լինի հողի մեջ»:

Լսելով այս ոտանավորը, խալիֆը Զաֆարին ասաց. «Նայի՛ր այս խեղճ մարդուն ու լսի՛ր նրա ոտանավորը: Դա ցույց է տալիս, որ նա կարիքի մեջ է»:

Եվ խալիֆը մոտեցավ նրան ու հարցրեց. «Ո՞վ ծերունի, որն է քո արհեստը»: Եվ ծերունին պատասխանեց. «Ո՞վ տեր իմ, ես ձկնորս եմ և ընտանիք ունեմ. ես դուրս եմ եկել տնից կեսօրին և մինչև այս ժամն ալլահը իմ ընտանիքին կերակրելու համար ինձ ոչինչ չբաշխեց: Եվ ես զզվանք զգացի ինքս ինձնից ու մահ ցանկացա»:— «Չե՞ս ուզում մեզ հետ նորից գետի մոտ վերադառնալ,— հարցրեց խալիֆը:— Կանգնի՛ր Տիգրիսի ափին և զցի՛ր ուռկանդ իմ բախտին, և ինչ որ հանես, ես քեզանից կգնեմ հարյուր դինարով»:

Եվ ձկնորսն ուրախացավ, լսելով այդ խոսքերը, և բացականչեց. «Հնազանդվո՞ւմ եմ: Ես ձեզ հետ կվերադառնամ»:

Եվ նա նրանց հետ վերադարձավ գետափ և ուռկանը զցեց ու սպասեց, իսկ հետո ձգեց թելերն ու դուրս հանեց ուռկանը, և ուռկանի մեջ գտավ մի ծանր, փակ սնդուկ: Եվ խալիֆը՝ տեսնելով սնդուկը, ձեռք տվեց ու գտավ, որ շատ ծանր է, և վճարեց ձկնորսին հարյուր դինարը, և նա գնաց, իսկ Մասրուրն ու վեզիրը վերցրին սնդուկը և տարան պալատ: Եվ նրանք վառեցին մոմերը (իսկ սնդուկը զրված էր խալիֆի առջև), և Զաֆարն ու Մասրուրը մոտեցան սնդուկին ու, ջարդելով, բացեցին, և դրա մեջ հայտնվեց արմավենու տերևներից մի զամբյուղ՝ բրդյա կարմիր թելերով հյուսված: Եվ նրանք կտրտեցին զամբյուղի թելերը և գտան դրա մեջ գորգի մի կտոր, իսկ երբ գորգը բարձրացրին, նրա տակ գտան մի իզար¹, իսկ իզարի մեջ՝ սպանված ու կտորկտոր արված մի շահել կին, արծաթե ձուլվածքի նման:

Եվ երբ խալիֆը տեսավ նրան, վշտացավ, և արցունքները հոսեցին նրա այտերով, և նա, Զաֆարին դառնալով, ասաց. «Ով դու շո՛ւն վեզիր, մարդկանց սպանում են իմ օրոք ու գետը նետում, և հարուստի օրը ես պետք է պատասխանատվություն կրեմ դրա համար: Ես անպատճառ պիտի պատժեմ նրան, ով սպանել է այդ կնոջը, և պիտի սպանեմ շարագույն մահով»:

Եվ շարունակեց. «Երզվում եմ ալ Աբբասի տոհմից սերած խալիֆների հետ իմ տոհմի կապով, որ եթե դու ինձ մոտ շբերես այս կնոջը սպանողին, որպեսզի ես նրան այս շա-

¹ Իզար — քաթանե կամ մետաքս հյուսվածք, որով արաբ կանայք փողոց դուրս գալիս փաթաթվում էին, շադրա:

րագործութեանն արժանի հատուցումը տամ, ես անպատճառ իմ պալատի դարպասից կկախե՛մ քեզ, քեզ և քո քառասուն ազգականներին»։

Եվ խալիֆը խիստ զայրացավ, իսկ Ջաֆարը դուրս եկավ ու քաղաք գնաց տխուր և ինքն իրեն ասելով. «Ի՞նչ իմանամ, թե ով է սպանել այդ կնոջը, որպեսզի սպանողին խալիֆի մոտ բերեմ։ Իսկ եթե ես ուրիշին բերեմ, դրա պատասխանատուն էլ ես կլինեմ։ Ի՞նչ անեմ, չգիտեմ»։

Եվ Ջաֆարը երեք օր իր տանը նստած մնաց, իսկ շորրորդ օրը խալիֆը պալատականներից մեկին ուղարկեց նրան իր մոտ կանչելու, և Ջաֆարը գնաց խալիֆի մոտ, և խալիֆը հարցրեց. «Ո՞ւր է կնոջն սպանողը»։— «Ով հավատացյալների տիրակալ, չէ՞ որ ես սպանվածների վերակացուն չեմ, որ իմանամ, թե ով է նրան սպանողը»,— ասաց Ջաֆարը։ Եվ խալիֆը զայրացավ ու հրամայեց կախել նրան իր պալատի առջև, իսկ մունետիկին հրամայեց, որ Բաղդադի փողոցներում բարձրաձայն ազդարարի. «Ով ուզում է տեսնել, թե ինչպես են կախելու Ջաֆար Բարմեքյանին՝ խալիֆի վեզիրին, և նրա ազգականներից քառասուն բարմեքյաններին՝ խալիֆի պալատի դարպասի առջև, թող դուրս գա ու նայի»։

Եվ բոլոր տներից մարդիկ դուրս եկան տեսնելու Ջաֆարի ու նրա ազգականների մահապատիժը, և բնակիչները շփտեին, թե ինչո՞ւ են նրանց կախում։ Եվ կախադաններ պատրաստեցին, և մահապարտներին դրանց տակ կանգնեցրին, որպեսզի կախեն, և սպասում էին խալիֆի թույլտվութեանը (իսկ նշանն էր թաշկինակ թափահարելը), և մարդիկ լաց էին լինում Ջաֆարի ու նրա ազգականների համար։

Եվ այդ ժամանակ հանկարծ մի երիտասարդ հայտնվեց, գեղեցիկ տեսքով ու մաքուր հագնված, լուսնանման դեմքով և հուրիի աչքերով. պայծառ էր նրա ճակատը, իսկ աղվամազով ծածկված վարդագույն այտին սիրունիկ խալ կար, համպարի կետի նման։ Եվ նա մարդկանց հրհրելով առաջ գնաց այնքան, մինչև որ կանգնեց Ջաֆարի առջև.

«Թող փրկված լինես դու այստեղ կանգնելուց, ո՞վ էմիրների տեր և աղքատների ապավեն,— բացականչեց երիտասարդը։— Ես այն մարդրն եմ, ով սպանել է այն կնոջը, որին գտել եք սնդուկի մեջ։ Կախի՛ր ինձ դրա համար ու հատուցի՛ր արժանին»։

Եվ Ջաֆարը, լսելով երիտասարդի խոսքերը, ուրախացավ իր ազատութեան համար, բայց վշտացավ երիտասարդի համար։ Եվ մինչ նրանք խոսում էին, մեկ էլ տեսան, որ մի զառամյալ ծերուկ, հրհրե-

լով մարդկանց ու ճանապարհ բացելով, գալիս է նա մոտեցավ Զաֆարին ու երիտասարդին և ողջունեց նրանց ու ասաց. «Ո՞վ վեզիք ու բարձրյա՞լ տեր, մի՛ հավատա այս երիտասարդի խոսքերին: Իսկապես, ուրիշ ոչ ոք չի սպանել այն կնոջը, բացի ինձանից: Հատուցի՛ր ինձ դրա համար ըստ արժանվույն, ապա թե ոչ ես պատասխան կպահանջեմ քեզանից մեծն արևոհի առաջ այգալես շանելուդ համար»:

Բայց երիտասարդն ասաց. «Ո՞վ վեզիք, սա խելքը թոցրած ու հալից ընկած ծերուկ է, նա չգիտե, թե ինչ է ստույգ: Ես եմ կնոջն սպանել: Հատուցի՛ր ինձ արժանի»:— «Ո՞վ տղաս,— ասաց ծերուկը,— դու երիտասարդ ես և ծարավի կյանքի բարիքներին, իսկ ես ծեր եմ ու հոգնեմ եմ կյանքից: Ես կփրկեմ քեզ իմ հոգով և կփրկեմ վեզիքին և իր աղգականներին: Ոչ ոք չի սպանել այդ կնոջը, բացի ինձանից: Աղաչում եմ քեզ հանուն արևոհի, շտապի՛ր կախել ինձ: Ինձ համար այդ կնոջից հետո կյանք չկա»:

Եվ վեզիքը, լսելով այդ, զարմացավ և, իր հեռ վերցնելով երիտասարդին ու ծերունուն, բարձրացավ խալիֆի մոտ և համբուրեց գետինը նրա առջև ու ասաց. «Ո՞վ հավատացյալների տիրակալ, մենք բերել ենք կնոջն սպանողին»:— «Որտե՞ղ է նա»,— հարցրեց խալիֆը: Եվ Զաֆարը պատասխանեց. «Այս երիտասարդն ասում է, թե հենց ինքն է սպանողը, իսկ այս ծերունին էլ հավատացնում է, թե երիտասարդը խաբում է, և ասում է, որ ինքն է սպանել: Ահա նրանք երկուսն էլ քո առջև են»:

Եվ խալիֆը նայեց երիտասարդին ու ծերունուն ու հարցրեց. «Ձեզնից ո՞վ է սպանել այն կնոջը»: «Ես»,— պատասխանեց երիտասարդը: Բայց ծերունին պատասխանեց. «Ոչ ոք նրան չի սպանել, բացի ինձանից»: Այնժամ խալիֆն ասաց Զաֆարին. «Երկուսին էլ տար ու կախիք»: Բայց Զաֆարն առարկեց. «Եթե նրանցից մեկն է սպանել, ապա մյուսին կախելը անարդար կլինի»:— «Երգվում եմ քեզ նրանով, ով երկինքն ու երկիրն է ստեղծել, ե՛ս եմ սպանել այն կնոջը»,— ասաց երիտասարդը և պատմեց սպանության հանգամանքները և նկարագրեց այն, ինչ-որ խալիֆը գտել էր զամբյուղի մեջ, և խալիֆին պարզ դարձավ, որ հենց երիտասարդն է սպանել կնոջը:

Եվ նա զարմացավ այդ երկուսի պատմության վրա ու ասաց. «Ի՞նչն է պատճառը, որ դու սպանել ես այն կնոջը, առանց դրա իրավունքն ունենալու, և ինչո՞ւ խոստովանեցիր, որ դու ես սպանել, թեև քեզ չէին ծեծել, և ինքզ ևկար այստեղ ու ասացիր. «Հատուցե՛ր ինձ նրա համար ըստ արժանվույն»:

«Իմացած եղիր, ով հավատացյալների տիրակալ,— առաց երիտա-
սարդը,— որ այն կինը իմ կինն էր ու հորեղբորս աղջիկը, իսկ այս
ծերունին նրա հայրն է ու իմ հորեղբայրը: Ծս ամուսնացա նրա հետ, երբ
նա դեռ անարատ էր, և ալլահը նրանից շնորհեց ինձ երեք արու զա-
վակ, և նա սիրում էր ինձ ու միշտ ինձ հետ էր, և ես էլ նրանից ոչ մի
վատ բան չէի տեսել ու նույնպես խոր սիրով էի սիրում: Եվ երբ այս
ամսվա սկիզբը եկավ, նա ծանր հիվանդացավ, և ես բժիշկներ կանչե-
ցի, և նրա առողջութունը մի փոքր վերադարձավ նրան: Եվ ես ուզեցի
նրան բաղնիք տանել, բայց նա ասաց. «Իմ սիրտը բաղնիքից առաջ
մի բան է ուզում, և ես անպայման ցանկանում եմ այդ»:— «Լսում եմ
ու հնազանդվում,— ասացի ես,— իսկ ի՞նչ բան է դա»:— «Սիրտս
խնձոր է ուզում,— ասաց նա,— ես հոտ կբաշեմ դրանից ու մի կտոր
կուտեմ»:

Եվ ես իսկույն քաղաք գնացի ու սկսեցի խնձոր որոնել, բայց
չգտա. եթե հատը մի դինար էլ արժենար, ես, հավանարար, կգնեի:
Դա ինձ համար ծանր էր, և ես տուն գնացի ու կնոջս ասացի. «Ո՞վ
հորեղբորս աղջիկ, ալլահով եմ երզվում, ես ոչինչ չգտա»: Եվ նրա
տրամադրությունն ընկավ, և առանց այդ էլ հիվանդ՝ այդ օրը երեկո-
յան հիվանդությունն ավելի սաստկացավ:

Եվ ես այդ գիշեր մտածմունքների մեջ անցկացրի, իսկ երբ լույսը
բացվեց, տնից դուրս եկա և սկսեցի մեկը մյուսի հետևից բոլոր այգի-
ները ման գալ, բայց խնձոր չգտա: Ես հանդիպեցի մի ծեր սլար-
տիգպանի ու հարցրի նրան խնձորի մասին, և նա ասաց ինձ. «Ո՞վ
աղաս, դու հիմա հազիվ թե գտնես, խնձոր չկա: Դա կարելի է գտնել
միայն հավատացյալների տիրակալի այգում, որ գտնվում է Բասրա-
յում¹, և այն էլ՝ այգեպանի մոտ, որը պահում է դրանք խալիֆի հա-
մար»:

Եվ ես տուն գնացի, և իմ սերն ու նվիրվածությունն ստիպեցին
ինձ ճանապարհ ընկնել, և ես ճանապարհորդեցի մինչև Բասրա ու հետ
դարձա տասնհինգ օրում, գնալով գիշեր ու ցերեկ, և բերեցի նրան
երեք խնձոր, որ գնել էի բասրեցի այգեպանից՝ երեք դինարով: Եվ ես
տուն մտա ու խնձորները կնոջս տվեցի, և նա ուրախացավ ու պահեց
դրանք իր մոտ, և նրա հիվանդությունն ու տենդը սաստկացան, և նա
անընդհատ հիվանդ էր, մինչև որ անցավ տասը օր, և դրանից հետո
ուռաղջացավ:

¹ Բասրա — առևտրական քաղաք ու նավահանգիստ Իրաքում. գտնվում է Բաղ-
դադի հարավ-արևելքում:

Եվ ես դուրս եկա տնից ու գնացի իմ խանութը և սկսեցի առու-տուր անել, և երբ այդպես նստած էի, կեսօրին իմ մոտով հանկարծ մի սևամորթ ստրուկ անցավ, իսկ ձեռքին՝ այն երեք խնձորներից մեկը, և նա դա խաղացնում էր իր ձեռքում:— «Ո՞վ բարի ստրուկ,— հարցրի ես նրան,— ասա, որտեղի՞ց ես ճարել այդ խնձորը, որպեսզի ես էլ կարողանամ գտնել դրանից»: Եվ ստրուկը ծիծաղեց ու ասաց. «Ծս սա վերցրել եմ իմ սիրուհու մոտից: Ծս այստեղ շէի, և երբ եկա, նրան հիվանդ գտա, և նրա մոտ երեք խնձոր կար, ու նա ասաց ինձ. «Իմ մարդը, այդ եղջերավորը, սրանց համար Բասրա է գնացել և երեք գինարով գնել»: Եվ ես նրանից վերցրի այդ խնձորը»:

Եվ երբ ես լսեցի ստրուկի խոսքերը, ո՞վ հավատացյալների տիրակալ, աշխարհը մթնեց աչքերիս առաջ: Եվ ես վեր կացա, խանութը փակեցի ու տուն գնացի, սաստիկ կատաղությունից խելքս կորցրած, և նայեցի խնձորներին և տեսա միայն մեկ զույգ ու հարցրի կնոջս. «Ո՞ւր է երրորդը»: Եվ նա պատասխանեց. «Չգիտեմ ու տեղյակ չեմ»: Եվ այդ ժամանակ ես համոզվեցի ստրուկի խոսքերի իսկությանը, և վերցրի դանակն ու հետևից մոտենալով կնոջս, ոչինչ շասելով նրան, նստեցի նրա կրծքին ու դանակով վիզը կտրեցի: Եվ ես նրա գլուխն անջատեցի մարմնից և շտապ-շտապ զամբյուղի մեջ դրեցի ու ծածկեցի իզարով, իսկ հետո կարեցի զամբյուղի բերանն ու, ծածկելով գորգի կտորով, սնդուկի մեջ դրեցի և, իմ ջորուն բարձելով, տարա և իմ ձեռքով նետեցի Տիգրիսի մեջ:

Աղաչում եմ քեզ հանուն ալլահի, ո՞վ հավատացյալների տիրակալ, շուտ կախել տուր ինձ, ես վախենում եմ, որ նա հարության օրը հաշիվ պահանջի ինձանից: Եվ երբ ես նրան Տիգրիսի մեջ նետեցի (իսկ այդ մասին ոչ ոք չիմացավ), ես տեսա, որ իմ մեծ տղան լաց է լինում (իսկ նա չգիտեր, թե ես ինչ եմ արել իր մորը):— «Ինչո՞ւ ես լաց լինում, տղաս», — հարցրի ես նրան, և նա պատասխանեց. «Ծս մորս մոտ եղած խնձորներից մեկը վերցրի և գնացի եղբայրներիս հետ փողոցում խաղալու, ու հանկարծ մի բարձրահասակ, սևամորթ ստրուկ խլեց այն ինձանից ու հարցրեց. «Ո՞րտեղից է սա քո ձեռքն ընկել»: «Մա իմ հայրն է Բասրայից բերել մորս համար,— ասացի ես,— նա հիվանդ է, և հայրըս նրա համար երեք խնձորը երեք գինարով է առել»: Եվ ստրուկը խնձորը վերցրեց առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու, իսկ ես այդ խոսքերը կրկնեցի երկրորդ ու երրորդ անգամ, բայց ստրուկը ինձ չնայեց էլ, այլ ծեծեց ինձ ու խնձորը տարավ, ու ես վախենում էի, որ մայրս ինձ կծեծի խնձորի համար, և վախից եղբայրներիս հետ քաղա-

րից դուրս եկա, ու գիշերը վրա հասավ, և այժմ ես վախենում եմ մո-
րիցս: Աղաչում եմ քեզ ի սեր ալլահի, հայրիկ, նրան ոչինչ չի՛ ասա,
նա ավելի կթուլանա, քան առաջ էր»:

Եվ, լսելով տղայիս խոսքերը, ես հասկացա, որ այդ ստրուկը կեղ-
ծիք է հորինել հորեղբորս աղջկա մասին, և համոզվեցի, որ նա անմեղ
տեղն է սպանվել: Եվ ես սկսեցի դառնագին լաց լինել, ու հանկարծ
եկավ այս ծերունին՝ իմ հորեղբայրն ու նրա հայրը, և ես պատմեցի
նրան այն ամենը, ինչ որ պատահել էր, և նա նստեց կողքիս ու լաց
եղավ: Եվ մենք լաց եղանք մինչև կեսգիշեր և հինգ օր ցավակցություն-
ներ էինք ընդունում, և մինչև այսօր էլ սգում ենք այն պատճառով, որ
ես նրան անմեղ տեղն եմ սպանել: Եվ այս բոլորը տեղի է ունեցել
ստրուկի պատճառով: Ահա թե ինչու է այն կինն սպանվել: Հանուն
բո նախնիների, շտապի՛ր կախել տալ ինձ, ինձ համար նրանից հետո
կյանք չկա: Ստացի՛ր ինձանից արժանի հատուցումը նրա համար»:

Եվ խալիֆը, լսելով երիտասարդի խոսքերը, վարմացավ ու բա-
ցականչեց. «Ալլահը վկա, ես ոչ ոքի չեմ կախի, բացի այն անիծյալ
ստրուկից, և ես անպայման գլուխ կբերեմ այս գործը, որը կապաքինի
առապյալին ու կբավարարի մեծն տիրոջը»:

Եվ խալիֆը երզվեց ոչ ոքի չկախել, բացի ստրուկից, քանի որ
երիտասարդը արժանացավ արդարացման, իսկ հետո դարձավ Ջաֆա-
րին ու ասաց. «Ինձ մոտ բեր այդ անիծյալ ստրուկին, որի երեսից այդ
լանը պատահել է, իսկ եթե չբերես, դո՛ւ կլինես նրա տեղը»:

Եվ Ջաֆարը քաղաք դուրս եկավ, լալով ու ինքն իրեն ասելով. «Ես
երկու անգամ մահվան առջև կանգնեցի, տատը ամեն անգամ զաթա
լի թխի: Այս գործում ոչ մի կերպ չի կարելի ճարպկությամբ գլուխ
ազատել, բայց նա, ով ինձ փրկեց առաջին անգամ, կփրկի նաև երկրորդ
անգամ: Ալլահը վկա, ես երեք օր տնից դուրս չեմ գա, իսկ ճշմարիտ
աստվածը կանի, ինչ որ կամենա»:

Եվ Ջաֆարը երեք օր իր տանն անցկացրեց, իսկ շորրորդ օրը
կանչեց դատավորներին ու վկաներին և, լալով, հրաժեշտ տվեց իր զա-
վակներին: Եվ հանկարծ նրա մոտ եկավ խալիֆի սուրհանդակն ու
ասաց. «Հավատացյալների տիրակալը խիստ զայրացած է ու ինձ
ուղարկել է քո հետևից: Նա երզվեց, որ այսօր, դեռ մութը չընկած, դու
կախված կլինես»:

Լսելով այդ խոսքերը, Ջաֆարը լաց եղավ, և նրա երեխաներն ու
ստրուկները, բոլոր նրանց հետ, ովքեր տանն էին, նույնպես լաց եղան,
իսկ վերջացնելով հրաժեշտ տալը, Ջաֆարը մոտեցավ իր կրտսեր աղջը-

կան, որպեսզի հրաժեշտ տա նրան, քանի որ նա բոլոր մյուս զավակներին ավելի էր սիրում հորը, և սեղմեց նրան իր կրծքին ու համբուրեց նրան ու լաց եղավ նրանից բաժանվելու համար:

Եվ հանկարծ Զաֆարն զգաց, որ նրա ծոցում ինչ-որ կլոր բան կա:

«Այդ ի՞նչ է քո ծոցում»,— հարցրեց աղջկան:— «Ո՞վ հայր,— պատասխանեց աղջիկը,— սա մի խնձոր է, որի վրա գրված է մեր տեր խաչիֆի անունը: Դա մեր ստրուկ Ռեյհանն է բեռել, և արդեն շորտ օր է, որ սա ինձ մոտ է, և ստրուկը սա ինձ է տվել՝ վերցնելով միայն երկու դինար»: Եվ լսելով այս խոսքերը ստրուկի և խնձորի մասին, Զաֆարն ուրախացավ ու, ձեռքը կոխելով աղջկա ծոցը, խնձորը հանեց ու ճանաչեց այն ու բացականչեց. «Ո՞վ աստված, ո՞վ մերձավոր օգնական»:

Եվ նա հրամայեց բերել ստրուկին, և ստրուկը ներկայացավ, և Զաֆարը նրան ասաց. «Վա՛յ քեզ, Ռեյհան, որտեղի՞ց է այս խնձորը քեզ մոտ ընկել»:— «Ալլահը վկա, ով իմ տեր,— պատասխանեց ստրուկը,— եթե սուտը փրկում է, ապա ճշմարտությունը փրկում է և դարձյալ փրկում է: Այս խնձորը ես չեմ գողացել ո՛չ քո զոյակից, ո՛չ նորին մեծության ապարանքից, ո՛չ էլ հավատացյալների տիրակալի պարտեզից: Հինգ օր առաջ ես քաղաքում անցնում էի ինչ-որ մի նրբանցքով ու տեսա խաղացող երեխաների, որոնցից մեկի ձեռքում այս խնձորն էր: Ես խլեցի այն ու ծեծեցի երեխային, իսկ նա լաց եղավ ու ասաց. «Ո՞վ երիտասարդ, սա իմ մոր խնձորն է: Նա հիվանդ է ու խնդրել էր իմ հորից այս խնձորը, և հայրս սրա համար Բասրա է գնացել ու բերել է երեք խնձոր՝ երեք դինարով, և ես մեկը նրանից գողացել եմ, որ խաղամ»: Ու նա լաց եղավ, բայց ես շնայեցի նրան ու, խնձորը վերցնելով, այստեղ եկա, և իմ փոքրիկ տիրուհին ինձանից գնեց երկու դինարով: Ահա իմ պատմությունը»:

Լսելով այս պատմությունը, Զաֆարը շփոթմունքի մեջ ընկավ, որ ամբողջ խառնաշփոթությունն ու կնոջ սպանությունը տեղի են ունեցել իր ստրուկի երեսից, և վշտացավ, որ ստրուկն իր հետ կապ ունի, բայց և ուրախ էր, որ ինքը փրկվեց, և արտասանեց այսպիսի ոտանավոր.

«Եթե ծառան վիշտ պատճառի, փորձանք բերի քո գլխին,

Ապա՝ նրան դոհաբերի՛ց դու քո հոցուն թանկագին»:

Չէ՞ որ կարող ես դու գտնել շաա ծառաներ վերստին,

Իսկ ավանդած հոգիդ երբեք հետ չես բերի դու կրկին»:

Եվ նա բռնեց ստրուկի ձեռքն ու խալիֆի մոտ տարավ ու նրան պատմեց ստրուկի պատմութունն սկզբից մինչև վերջ, և խալիֆը խիստ զարմացավ ու քահ-քահ ծիծաղեց:

Նա հրամայեց գրի առնել այս պատմութունը և ժողովրդի մեջ տարածել, և Զաֆարն ասաց նրան. «Մի՛ զարմանա, ով ուղղահազ վատների տիրակալ, այս պատմության վրա, դա եգիպտական վեզիր Նուր-էդ-դին Ալիի ու նրա եղբայր Շեմս-էդ-դին Մուհամմեդի պատմութունից զարմանալի չէ»:— «Հաղորդի՛ր այն,— բացականչեց խալիֆը:— Ի՞նչ պատմութուն է սրանից ավելի զարմանալի»:— «Ով ուղղահազ վատների տիրակալ,— ասաց Զաֆարը:— Ես դա կպատմեմ միայն պայմանով, որ դու ազատես իմ ստրուկին»:— «Եթե դա ավելի զարմանալի լինի, քան այն, ինչ-որ պատահել է մեզ, ես քեզ կբաշխեմ նրա արյունը, իսկ եթե զարմանալի չլինի, կսպանեմ քո ստրուկին»,— ասաց խալիֆը:

ՎԵՋԻՐ ՆՈՒՐ-Է՛Դ ԴԻՆԻ ՈՒ ՆՐԱ ԵՂԲՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացած եղիր, ով ուղղահազ վատների տիրակալ,— սկսեց Զաֆարը,— որ անցած ժամանակներում եգիպտական հողում կար արդար ու ավատարիմ մի սուլթան, որը սիրում էր աղքատներին և ժամանակն անց էր կացնում գիտունների հետ: Եվ նա մի վեզիր ուներ խելացի ու փերձառու, բանիմաց ու կառավարման գործին հմուտ: Նա զառամյալ ծերունի էր և ուներ երկու որդի, երկու լուսնի պես, որոնց նման գեղեցիկ ու հմայիչ ոչ ոք չկար, և ավագի անունն էր Շեմս-էդ-դին Մուհամմեդ, իսկ կրտսերինը՝ Նուր-էդ-դին Ալի: Եվ կրտսերն ավագից ավելի էր աչքի ընկնում գեղեցկությամբ ու հմայքով, այնպես որ նույնիսկ սրիշ երկրներում լսել էին նրա մասին ու գալիս էին այդ սուլթանի երկիրը՝ նրա գեղեցկությունը տեսնելու համար:

Եվ այնպես պատահեց, որ նրանց հայրը մեռավ, և սուլթանը շատ օրերեց նրա համար ու իր ուշադրությունը դարձրեց նրա որդիների վրա ու իրեն մերձավոր դարձրեց նրանց ու շնորհներ արեց ու ասաց նրանց. «Գուք ձեր հոր տեղն եք, թո՛ղ ձեր հոգին շտրտմի»: Եվ նրանք սրախացան ու համբուրեցին գետինը նրա անջև ու ընդունեցին ցավալիցություններ իրենց՝ հոր մահվան առթիվ, մինչև որ անցավ մեկ ամիս, իսկ հետո վեզիրի պաշտոնն ստանձնեցին, և իշխանությունն անցավ նրանց ձեռքը, ինչպես որ իրենց հոր ձեռքում էր, և երբ սուլ-

Թանը ցանկանում էր ճանապարհորդել, նրանցից մեկն ուղեկցում էր նրան:

Եվ գիշերներից մի գիշեր այնպես պատահեց (իսկ սուլթանի հետ պետք է գնար ավագը), որ նրանք զրուցում էին և, ահա, ավագն ասաց կրտսերին. «Մ'վ եղբայր, ես ուզում եմ, որ մենք երկուսս ամուսնանանք նույն գիշերը»:— «Արա՛, ինչ-որ ուզում ես, ո՛վ եղբայր, ես համաձայն եմ, ինչ-որ դու ասես»,— պատասխանեց կրտսերը, և նրանք համաձայնության եկան այդ բանում, իսկ հետո ավագն ասաց կրտսերին. «Եթե ավաճն այդպես սահմանի, մենք կառնենք երկու աղջիկ ու նրանց մոտ կմտնենք միևնույն գիշերը, և նրանք երեխա կրերեն նույն օրը, և եթե ավաճը կամենա, քո կինը տղա կրերի, իսկ իմը՝ աղջիկ, և մենք նրանց իրար հետ կամուսնացնենք, և նրանք մ'արդ ու կին կդառնան»: «Մ'վ իմ եղբայր,— հարցրեց այդ ժամանակ Նուր-էդ-գինը,— ի՞նչ կպահանջես դու իմ տղայից որպես քո աղջկա գլխագին»: Եվ Շեմս-էդ-գինը պատասխանեց. «Իմ աղջկա համար ես քո տղայից կվերցնեմ երեք հազար դինար, երեք այգի ու երեք գյուղ, և եթե երիտասարդն ամուսնական պայման կնքի առանց դրանց, լավ չի լինի»:— «Դա ի՞նչ գլխագինի պայման է իմ տղայի համար,— բացականչեց Նուր-էդ-գինը՝ լսելով այդ խոսքերը:— Զգիտե՛ս, ինչ է, որ մենք եղբայրներ ենք և երկուսս էլ, ավաճի շնորհով, վեզիրներ ենք ու նույն տեղն ենք գրավում: Դու պետք է քո աղջիկն իմ տղային առաջարկեիր առանց գլխագինի, իսկ եթե գլխագինն անհրաժեշտ է, որոշ բան նշանակիր՝ ի ցույց մարդկանց: Զէ՞ որ դու գիտես, որ արական սեռն ավելի արժանավոր է, իսկ իմ գավակն արական սեռին է պատկանում, և մեզ կհիշեն նրա անունով, հակառակ քո աղջկան»:— «Իսկ ի՞նչ վատ բան ունի նա»,— հարցրեց Շեմս-էդ-գինը: Եվ Նուր-էդ-գինն ասաց. «Էմիրների մեջ մեզ հանուն նրա չեն հիշի: Բայց դու ուզում ես ինձ հետ վարվել այնպես, ինչպես մեկը ուրիշի հետ է վարվել: Ասում են, որ ինչ-որ մեկը գնացել է իր ընկերոջ մոտ ու բան է խնդրել, իսկ նա ասել է. «Ավաճը վկա, մենք կբավարարենք քո խնդիրքը, բայց միայն վաղը»: Եվ այդ ժամանակ խնդրողն արտասանել է.

«Հաճախ խնդրածդ, ասում են, վաղը արի ու կանք,
Հասկացողը գիտի, սակայն, որ մերժված է խայտառակ»:

«Ես տեսնում եմ, որ դու ցնդում ես ու քո տղային երկինք ես բարձրացնում իմ աղջկա համեմատությամբ,— ասաց Շեմս-էդ-գինը:— Անկասկած, խելքդ պակաս է, և հարգանք չունես: Դու խոսում ես վեզիր-

բության բաժանման մասին, բայց ես թույլ տվեցի, որ դու ինձ հետ վեզիր լինես միայն քեզ խղճալուց, որպեսզի ինձ օգնես ու գործակից լինես ու որպեսզի չվշտացնեմ քեզ: Եվ քանի որ դու այդպիսի խոսքեր ես ասում, երդվում եմ ավահով, ես իմ աղջկան քո տղային չեմ տա, թեկուզ դու նրա քաշով մեկ ոսկի տաս»:

Եվ Նուր-էդ-դինը, լսելով եղբոր խոսքերը, բարկացավ ու բացականչեց. «Ես էլ իմ տղային չեմ ամուսնացնի քո աղջկա հետ»: Շեմս-էդ-դինն ասաց. «Ես չեմ համաձայնի, որ նա աղջկաս ամուսինը լինի: Եթե ես մեկնեմու շինեի, ինչպես որ հարկավոր է, քեզ դաս կտայի, բայց երբ ճանապարհորդությունից վերադառնամ, կտեսնես: Ես քեզ ցույց կտամ, թե ինչ է պահանջում իմ արժանապատվությունը»:

Լսելով եղբոր այդ խոսքերը, Նուր-էդ-դինը զայրույթով լցվեց, և աշխարհի երեսին ամեն ինչ կորավ նրա աչքում, բայց նա թաքցրեց, թե ինչ է կատարվում իր մեջ, և նրանցից յուրաքանչյուրն այդ գիշեր առանձին անցկացրեց: Իսկ երբ լույսը բացվեց, սուլթանը ճանապարհ ընկավ ու գնաց Գիզա¹, ուղևորվելով դեպի բուրգերը, և վեզիր Շեմս-էդ-դինն ուղեկցում էր նրան:

Ինչ վերաբերում է նրա եղբայր Նուր-էդ-դինին, ապա նա այդ գիշերն անցկացրեց ծայրահեղ բարկության մեջ, իսկ երբ լույսը բացվեց, նա ելավ, առավոտյան աղոթքը կատարեց, ապա գնաց իր գանձարանը և այնտեղից վերցրեց մի փոքրիկ պարկ ու լցրեց ոսկով: Եվ նա հիշեց իբեղբոր խոսքերն ու իր ստորացումը նրա առջև և այսպիսի տողեր արտասանեց.

«Պանդուխտ դարձիր,— ճանապարհին դու կորցրածիդ փոխարենը կգանես,
Միշտ աշխատիր, աշխատանքի մեջ ես կյանքի վայելքների վե՛հ ու վեա:
Հայրենիքում ես չգտա երջանկություն, ոչ էլ պատիվ ու հարգանք,
Միայն վիշտ եմ տեսել այնտեղ, բախտ որոնիր ուրիշ երկրի աստղի ասկ:
Հայանի բան է. ջուրը, կանգնած ու լճացած, փշանում է, աղտոավում.
Երբ հոսում է, քաղցր է նա շատ, իսկ թե կանգնի՝ հոտած, կեղտոտ, դառնախում:
Թե լուսինը երբեք մեզնից չթաքնվեր, լուսնախնդիր մարդիկ նրան
Չէին փնտրի կարոտանքով լի ալքերով ու կախարդված՝ ամեն վայրկյան:
Թե առյուծը որչում մեա ու դուրս շքա, շի էլ գտնի որս-եղնիկին,
Իսկ գրախտի ծառն էլ անգամ հայրենիքում դատարկ փայա է՝ ընկած գետին»:

Վերջացնելով այդ ոտանավորը՝ Նուր-էդ-դինը հրամայեց իր ծառաներից մեկին նուբիական ջորիներից մեկը թամբել (իսկ զա պի-

¹ Գիզա — միջնադարյան քաղաք Կահիրեից արևմուտք. այժմ Եգիպտոսի մայրաքաղաքի արվարձաններից մեկն է:

ոսկավոր ջորի էր, գմբեթի նման բարձր մեջքով, ոսկե օանձով և հընդ-
կական պողովատե ասպանդակներով ու արքայավայել տապալակով, և
նա նման էր քողը հանած հարսի) և հրամայեց գցել նրա վրա մետաքսե
քնփուշն ու աղոթքի գորգը, իսկ տոպրակը կախեց գորգի տակ: Եվ հե-
տո նա ծառաներին ու ստրուկներին ասաց. «Ոս ուզում եմ քաղաքից
դուրս գրոսնել ու գնալու եմ ալ-Քալյուբի¹ կողմերը. երեք գիշեր ես
տնից դուրս եմ անցկացնելու և ձեզանից ոչ ոք թող իմ հետևից չգա,
իմ սիրտը նեղացել է»: Եվ նա շտապ նստեց ջորին, իր հետ մի քիչ
ուտելիք վերցնելով, և Կահիրեից դուրս եկավ, ուղևորվելով դեպի անա-
պատ: Եվ դեռ կեսօր չէր եղել, որ նա արդեն Բելբեյս² քաղաքը հասավ:
Նա իջավ ջորուց ու հանգստացավ ու հանգիստ տվեց ջորուն և Բելբեյ-
սում մի քիչ ուտելիք գտավ ու կերավ, ապա Բելբեյսում ջորու համար էլ
կեր վերցնելով, ուղևորվեց դեպի անապատ:

Եվ երբ դիշերը վրա հասավ, նա մտավ մի քաղաք, որ կոչվում էր
աս-Սայիդիե, ու գիշերելու մնաց այնտեղ ու մի քիչ բան կերավ, իսկ
հետո տոպրակը գլխի տակ դրեց, գորգը փռեց ու պառկեց քնելու փոս-
տային կայանի շենքում, և նրան համակեց զայրույթը:

Եվ նա գիշերն այդտեղ անցկացրեց, իսկ երբ առավոտը բացվեց,
նստեց ջորին ու քշեց, մինչև հասավ Հալեպ և կանգ առավ մի իջևա-
նում: Այդտեղ նա անցկացրեց երեք օր, հանգստացավ ու հանգիստ
տվեց ջորուն ու ման եկավ քաղաքում, իսկ հետո որոշեց շարունակել
ճանապարհը և ջորուն նստեց ու դուրս եկավ, առանց իմանալու, թե
դեպի ուր ուղևորվի: Եվ նա գնաց այնքան, որ Բասրա քաղաքը հասավ,
ինքն էլ այդ բանը չիմանալով, և կանգ առավ քարվանսարայում: Եվ
նա ջորուց իջեցրեց տոպրակն ու փռեց գորգը և ջորին հանձնեց դռնա-
պանին, որպեսզի սա ջուր տա: Եվ դռնապանը ջորուն ջուր տալու
տարավ:

Եվ այնպես պատահեց, որ այդ պահին Բասրայի վեզիրը նստել էր
իր պալատի պատուհանի մոտ և տեսավ ջորին ու այն հարուստ թամ-
բասարքը, որ նրա վրա էր, և կարծեց, թե ջորին սուլթանի այն ջորի-
ների երամակից է, որոնց հեծնում են վեզիրները կամ թագավորները:
Եվ նա սկսեց այդ մասին մտածել և տարակուսանքի մեջ ընկավ ու իր
ծառաներից մեկին ասաց. «Այդ դռնապանին ինձ մոտ բեր»:

¹ Ալ-Քալյուբի (այժմի ճիշտ՝ ալ-Քալյուբ) — Կահիրեից դեպի հյուսիս, մոտ տասը
կիլոմետր հեռավորության վրա դտնվող մի քաղաք:

² Բելբեյս (Բիլբիս) և աս-Սայիդիե — Կահիրեից դեպի Սիրիա տանող ճանապար-
հին գանվող իջևանատեղեր:

Եվ ծառան գնաց ու դռնապանին վեզիրի մոտ բերեց, և դռնապանը առաջ ընկավ աւ համբուրեց գետինը, և վեզիրը (իսկ նա զառամյալ ծերունի էր) հարցրեց նրան. «Մ՛վ է այդ ջորու տերը և ի՞նչ նշաններ ունի»:— «Մ՛վ տեր իմ,— պատասխանեց դռնապանը,— այս ջորու տերը մի գեղեցկատես երիտառարդ է. նա մեծավոր է ու արժանավայել և պատկանում է վաճառականների ոներդին»: Դռնապանի այդ խոսքերը լսելով, վեզիրը շտապ ելավ տեղից և ուղևորվեց դեպի իջևանատուն՝ երիտասարդի մոտ: Եվ երբ Նուր-էդ-դինը տեսավ, որ վեզիրը գալիս է իր մոտ, հապճեպով վեր կացավ, դիմավորեց նրան ու ողջունեց: Եվ վեզիրը ողջունեց նրան ու ձիուց իջավ ու գրկեց Նուր-էդ-դինին ու նստեցրեց իր կողքին ու ասաց. «Մ՛վ զավակս, ո՞րտեղից ես եկել և ի՞նչ ես ուզում»:— «Մ՛վ տեր,— պատասխանեց Նուր-էդ-դինը,— ես Կահիրե քաղաքից եմ եկել: Ես այնտեղի վեզիրի տղան եմ, և իմ հայրը մեծ ալլահի շնորհների աշխարհը տեղափոխվեց»: Եվ Նուր-էդ-դինը վեզիրին պատմեց, ինչ-որ պատահել էր, սկզբից մինչև վերջ, և ավելացրեց. «Եվ որտեղ եմ ոչ մի պայմանով չվերադառնալ, մինչև չըրջեմ բոլոր քաղաքներն ու երկրները»:

«Մ՛վ զավակս»,— ասաց վեզիրը, լսելով նրա խոսքերը,— մի՛ լսիր հողուդ ձայնին. դու քեզ վտանգի կենթարկես: Երկրները լքված են, ու ես վախենում եմ չար բախտի հետևանքներից՝ քեզ համար»:

Հետո նա Նուր-էդ-դինի տոպրակը դրեց իր ջորու վրա ու վերցնելով քնիուշն ու գորգը՝ Նուր-էդ-դինին առավ իր հետ ու իր տունը տարավ: Նա տեղավորեց նրան մի ճոխապես կահավորված սենյակում ու պատիվ ու մեծարանքներ ցույց տվեց, և մեծ սեր տաժեց դեպի նա, և ասաց. «Մ՛վ զավակս, ես ծեր մարդ եմ և արական սեռի զավակներ չունեմ, բայց ալլահն ինձ մի աղջիկ է պարգևել, որը գեղեցկութամբ հավատար է քեզ: Ես շատ փեսացուների մերժել եմ նրա ձեռքը, բայց քո նկատմամբ տենցած սերս սիրտս է ընկել. չե՞ս համաձայնի արդյոք իմ աղջկան քո աղախինք դարձնել, որպեսզի նա քո հետևից ման գա, իսկ դու նրա ամուսինը լինես: Եթե դու համաձայն ես դրան, ես կգնամ Բասրայի սուլթանի մոտ ու կասեմ. «Ահավասիկ իմ եղբորորդին»,— և այնպես կանեմ, որ դու իմ տեղը վեզիր նշանակվես, իսկ ես տանը կնստեմ. ես ծեր մարդ եմ»:

Լսելով Բասրայի վեզիրի խոսքերը, Նուր-էդ-դինը գլուխը խոնարհեց ու ասաց. «Լսում եմ ու հնազանդվում»: Եվ վեզիրն ուրախացավ ու իբր ծառաներին հրամայեց ուտելիք մատուցել նրան և զարդարել մեծ ընդունարան-սենյակը, որտեղ սովորաբար էմիրների հարսանիքներն

էին արվում: Ապա նա հավաքեց իր բարեկամներին և հրավիրեց տե-
րութեան մեծամեծներին, բասրեցի վաճառականներին, և երբ նրանք
ներկայացան, ասաց. «Ես մի եղբայր ունեի եգիպտական հողում, և
ալլահը նրան պարգևել է երկու տղա, իսկ ինձ, ինչպես գիտեք, ալլահը
աղջիկ է պարգևել: Եվ իմ եղբայրը խնդրել է ինձ աղջկաս իր տղանե-
րից մեկին կնութեան տալ, ու ես համաձայնեցի դրան: Եվ երբ հասավ
աղջկաս մարդու տալու ժամանակը, նա ուղարկեց իր տղաներից մեկին,
ահավասիկ այս երիտասարդին, որ ներկա է այստեղ: Եվ նրա ժամա-
նելուն պես որոշեցի նրա և իմ աղջկա ամուսնական պայմանագիրը
կնքել, և նա իմ տունը կմտնի, քանի որ նա ավելի լավն է, քան որևէ
մի օտար մարդ: Իսկ դրանից հետո, եթե նա կամենա, ինձ մոտ կմնա,
իսկ եթե ցանկանա գնալ, ես նրան իմ աղջկա հետ իր հոր մոտ կու-
զարկեմ»:

Եվ բոլորն ասացին. «Դու շատ լավ ես վճռել»,— և նայեցին երի-
տասարդին, և նա շատ դուր եկավ իրենց, երբ նրան տեսան: Եվ վե-
զիրը վկաներ ու դատավորներ կանչեց, և կազմեցին ամուսնական
պայմանագիրը, և խունկ ծխեցին ու շարքաթ խմեցին ու վարդաջուր
ցողեցին ու գնացին, իսկ վեզիրը հրամայեց իր ծառաներին, որ Նուր-
էդ-դինին առնեն ու բաղնիք տանեն: Եվ նա Նուր-էդ-դինին հագուստ-
ներ տվեց իր սեփական հանդերձներից և ուղարկեց սրբիչ, գավաթներ,
ծխամորձ ու այն ամենը, ինչ-որ նրան հարկավոր էր: Եվ երբ Նուր-
էդ-դինը բաղնիքից դուրս եկավ ու հագավ զգեստները, նա լուսնա-
յին ամսի տասնչորսերորդ օրը բարձրացող լուսնի նման դարձավ: Եվ,
բաղնիքից դուրս գալով՝ Նուր-էդ-դինը նստեց ջորին ու առանց կանգ
առնելու գնաց մինչև վեզիրի պալատը, հետո իջավ ջորուց ու, մտնե-
լով վեզիրի մոտ, համբուրեց նրա ձեռքը, և վեզիրը ոտքի ելավ, ող-
ջունեց նրան ու ասաց. «Այսօր երեկոյան մտիր քո կնոջ մոտ, իսկ
վաղը միասին կգնանք սուլթանի մոտ, և ես քեզ համար մեծ բարիք
եմ սպասում ալլահից»: Եվ Նուր-էդ-դինը գնաց ու մտավ իր կնոջ՝
վեզիրի աղջկա մոտ:

Ահա թե ինչ պատահեց Նուր-էդ-դինին: Ինչ վերաբերում է նրա
եղբորը, ապա նա, ճանապարհորդելով սուլթանի հետ, որոշ ժամանակ
բացակայեց քաղաքից, իսկ վերադառնալով՝ եղբորը չգտավ: Եվ նա
եղբոր մասին հարց ու փորձ արեց ծառաներին, ու նրան ասացին. «Այն
օրը, որ դու սուլթանի հետ մեկնեցիր, նա նստեց իր ջորին, տոնական
թամբասարքով զարդարելով նրան, ու ասաց. «Ես գնում եմ ալ-Քալ-
յուրիի կողմերը և կբացակայեմ մեկ-երկու օր: Սիրտս նեղացած է,

թող ոչ ոք ինձ չհետևի»: Եվ նրա գնալու օրից մինչև այսօր մենք ոչինչ չենք լսել նրա մասին»:

Եվ Շեմս-էդ-դինը տխրեց եղբորից բաժանվելու համար և խիստ վշտացավ նրա անհայտացման պատճառով ու ինքն իրեն ասաց. «Այս բոլորը միայն այն պատճառով է, որ այն երեկո ես գոռացի նրա վրա: Նա որտե՛ն մոտ է ընդունել այդ և մեկնել է ճանապարհորդելու Անպայման նրա հետևից մարդ պիտի ուղարկել»:

Եվ նա գնաց ու այդ ամենի մասին տեղեկացրեց սուլթանին, և հրովարտականեր գրեց և սուրհանդակներ ուղարկեց իր երկրի բոլոր կուսակալներին մոտ, իսկ Նուր-էդ-դինն այն քսան օրերի ընթացքում, որ նրանք բացակայել էին քաղաքից, հեռու երկիր էր գնացել, ու նրան որոնեցին, բայց ոչ մի լուր չստացան ու հետ դարձան:

Եվ Շեմս-էդ-դինը եղբորը գտնելու հույսը կտրեց ու ասաց. «Ես մեր զավակների ամուսնության մասին խոսելիս շափն անց կացրի: Ա՛խ, եթե դա պատահած չլիներ: Այդ բոլորը պատահեց իմ անխելքության ու անշրջահայացության պատճառով»:

Եվ որոշ ժամանակից հետո նա ամուսնացավ Կահիրեի վաճառականներից մեկի աղջկա հետ ու կնքեց ամուսնական պայմանագիր ու մտավ իր կնոջ մոտ: Եվ այնպես պատահեց, որ Շեմս-էդ-դինի ու իր կնոջ հարսանիքի գիշերը հենց նույն գիշերն էր, երբ Նուր-էդ-դինը մտավ իր կնոջ՝ Բասրայի վեզիրի աղջկա մոտ, և դա տեղի ունեցավ մեծ ալլահի կամքով, որպեսզի կայանար նրա դատաստանն իր արարածների նկատմամբ:

Եվ այնպես եղավ, ինչպես եղբայրներն ասում էին. նրանց կանայք հղիացան նրանցից, և Շեմս-էդ-դինի՝ Կահիրեի վեզիրի, կինը բնրեց մի աղջիկ, որից լավը Կահիրեում տեսնված չէր եղել, իսկ Նուր-էդ-դինի կինը մի տղա ծնեց, որից ավելի գեղեցիկին իր ժամանակում չէին տեսել, ինչպես ասել է բանաստեղծը.

Օ՛, բարեկազմ իր հասակով, սև մազերով ու տեսքով
Բոլոր մարդկանց գերում է նա պիշեր, թե օր-ցերեկով:
Մի՛ կշամբիր իր այտի սև խալի համար դու նրան,
Պուտն է այնտեղ մի կեա դրել՝ իր սև գույնից մի նշան:

Իսկ մեկ ուրիշն ասել է.

Գեղեցկությունը թե կերպար առած
Համեմատվելու բերվեր նրա մոտ,
Շիրթության մեջ կխոնարհեր ցած
Աչքերը մոլոր, հայացքը՝ շիկնուտ:

Իսկ թե հարցնեին. «Տեսե՞լ ես, ասա,
Գու մեկին, արգյոք, կաարչալ այսքան»,
«Սրա նմանի՞ն, շեմ աեսել երբեք».—
Գեղեցկությունը կտար պատասխան:

Եվ Նուր-էդ-դինը նրան կոչեց Բեդր-էդ-դին Հասան, և նրա պապը շատ ուրախացավ ու մեծ խնջույք սարքեց աւ արքայորդիներին վայել սեղան բացեց: Իսկ հետո Բասրայի վեզիրը վերցրեց Նուր-էդ-դինին աւ տարավ սուլթանի մոտ, և Նուր-էդ-դինը, մոտենալով, համբուրեց գետինը սուլթանի առջև: Իսկ նա ճարտարախոս էք, քաջասիրտ, գեղեցիկ ու շնորհալի, և արտասանեց այսպիսի ոտանավոր.

«Թող երջանիկ լինես հավերժ ու բարեբախտ, ո՞վ մեր տեր,
Ու ողջ լինես, քանի դեռ կան խավարն ու լույսն անստվեր.
Երբ հիշում են քո մտքերը խորախորհուրդ, իմաստուն,
Ճակատագիրն է ծագի դարկում ու ժամանակը պարտոմ»:

Եվ սուլթանը ընդառաջ գնաց նրան ու շնորհակալություն հայտնեց Նուր-էդ-դինին՝ նրա ասածների համար, ու հարցրեց իր վեզիրին. «Ո՞վ է այս երիտասարդը»:

Եվ վեզիրն ամբողջ պատմությունն սկզբից մինչև վերջ պատմեց նրան ու ասաց. «Սա իմ եղբորորդին է»:— «Ինչպե՞ս է, որ նա քո եղբորորդին է, իսկ մենք ոչինչ չենք լսել նրա մասին»,— հարցրեց սուլթանը: Եվ վեզիրն ասաց. «Ով տեր սուլթան, ես մի եղբայր ունեի, որը վեզիր էր եգիպտական հողում, և նա մեռել է ու թողել երկու արու զավակ, որոնցից մեծը նրա տեղը վեզիր է դարձել, իսկ, ահա, սա, նրա կրտսեր տղան, ինձ մոտ է եկել: Իսկ ես առաջ երդվել էի, որ իմ ազգական միայն նրա հետ կամուսնացնեմ, և երբ նա եկավ, ամուսնացրի իմ աղջկա հետ: Նա երիտասարդ է, իսկ ես արդեն զառամյալ ծերունի եմ, և լսողությունս է վաչացել, և դատողությունս է թուլացել, և ես մեր տիրոջից՝ սուլթանից, կխնդրեի, որ սրան իմ տեղը նշանակի: Չէ՞ որ սա իմ ազգականն է ու աղջկաս ամուսինը, և նա արժանի է վեզիրի աստիճանին, քանի որ գատողության ճշառությունն ու շրջահայացությունն ունի»:

Եվ սուլթանը նայեց Նուր-էդ-դինին, որը դուր եկավ իր սրտին, և շնորհեց նրան այն, ինչ որ վեզիրն ուզում էր: Նա վեզիր դարձրեց ու հրամայեց հոյակապ զգեստներ տալ, իսկ բացի դրանից, սուլթանը հրամայեց իր անձնական շորթներին մեկը նրան առնել և պարգևներ ու ուճիկ նշանակեց նրան: Եվ Նուր-էդ-դինը համբուրեց սուլթանի ձեռքը և

աներոջ հետ գնաց իր բնակարանը, և երկուսն էլ խիստ ուրախացած
ասացին. «Սա երջանիկ բախտ է նորածին Հասանի համար»: Իսկ հետո,
հետևյալ օրը, Նուր-էդ-դինը գնաց թագավորի մոտ ու համբուրեց գե-
տինն ու արտասանեց.

«Ծրջանիկ եղի՛ր ու նոր ցնծությամբ ցնծա՛ ամեն օր,
Հաջողակ եղի՛ր, թշնամիդ դավեր է նյութում քո դեմ նորանոր,
Եվ թող քո կյանքի օրերը լինեն արևոտ, պայծառ,
Իսկ շար թշնամուդ օրերը միշտ սև, անշող ու խավար»:

Եվ սուլթանը նրան կարգադրեց նստել վեզիրի տեղը: Եվ Նուր-
էդ-դինը նստեց ու ձեռնամուխ եղավ իր ժառայության գոթժերին
և սկսեց քննել մարդկանց գործերն ու նրանց հայցերը, ինչպես սովո-
րաբար անում են վեզիրները, և սուլթանը նայում էր նրան ու զարմա-
նում նրա արարքներով, նրա խելքով, դատողությամբ ու տնօրինու-
թյամբ: Եվ սուլթանը սիրեց նրան ու իրեն մերձավոր դարձրեց: Իսկ երբ
հավաքվածները ցրվեցին, Նուր-էդ-դինը գնաց տուն և աներոջը պատ-
մեց այն ամենը, ինչ-որ եղել էր, և ծերունին ուրախացավ: Եվ Նուր-
էդ-դինը շարունակեց վեզիր մնալ և գիշեր-ցերեկ սուլթանի մոտից չէր
հեռանում, և սուլթանը բարձրացրեց նրա սոճիկն ու նպաստները, այն-
պես որ Նուր-էդ-դինի պայմաններն առավել բարելավվեցին: Եվ նա
ունեցավ նավեր, որոնք նրա անունով ճանապարհորդում էին ապ-
րանքներով բեռնավորված, ու նա ձեռք բերեց ստրուկներ ու ստրուկու-
հիներ, շատ կալվածքներ, ջրովի հողեր ու պարտեզներ:

Իսկ երբ նրա որդի Հասանը չորս տարեկան դարձավ, ծերունի վե-
զիրը՝ Նուր-էդ-դինի կնոջ հայրը, մահացավ, և Նուր-էդ-դինը ճոխ հու-
ղարկավորութուն սարքեց ու թաղեց նրան: Հետո Նուր-էդ-դինն զբաղ-
վեց իր տղայի դաստիարակությամբ: Եվ երբ նա ամրացավ ու լրաց-
րեց յոթ տարին, հայրը ուսուցիչ վարձեց ու նրան հանձնարարեց կար-
դալ սովորեցնել ու կրթել ու լավ դաստիարակել իր որդուն: Եվ ուսու-
ցիչը կարգալ սովորեցրեց նրան ու լուրացնել տվեց օգտակար գիտու-
թյունները, և Հասանը կրկնեց Ղուրանը մի քանի տարի շարունակ, և
ավելի ու ավելի գեղեցկացավ, այնպես, ինչպես ասված է.

Ահա լուսին, դեղեցկությամբ տես փայլում է երկնքում.
Կուժկոտրուկի վառ պուտերով արև-այտերն են շողում:
Գեղեցկությամբ իր անսնհման նա ափրում է թուրին,
Ասես բուրբը նրանից են գեղ ու փայլ ստանում:

Եվ ուսուցիչը դաստիարակեց նրան հոր պալատում, և Հասանը այն ժամանակից ի վեր, երբ մեծացել էր, հոր պալատից դուրս չէր եկել:

Եվ օրերից մի օր նրա հայրը՝ վեզիր Նուր-էդ-դինը, վերցրեց նրան ու հազցրեց ամենագեղեցիկ շորերն ու, իր ամենաընտիր շորիններից մեկին նստեցնելով, նրա հետ սուլթանի պալատ դնաց ու տարավ նրան սուլթանի մոտ: Եվ թագավորը նայեց Բեդր-էդ-դին Հասանին՝ վեզիր Նուր-էդ-դինի աղային, որը նրան շատ դուր եկավ, ու սիրեց նրան, իսկ տերության բնակիչները, երբ Հասանը հոր հետ թագավորի մոտ գնալիս առաջին անգամ անցնում էր նրանց մոտով, հիացած էին նրա գեղեցկությամբ ու նստել էին նրա ճանապարհին, սպասելով, որ երբ նա վերադառնա, նայեն նրա գեղեցկությանն ու հմայքին ու սլացիկ կազմվածքին, ինչպես ասված է.

Նայեց մի օր աստղաբաշխը լուռ գիշերով ու հանկարծ
Տեսավ զուգված մի գեղեցիկ՝ գեղեցկությամբ փառապանծ:
Երկվորյակներն, ասես, իրենց բյուր հմայքներն անսահման
Ռոտորեն բաշխել էին նրա մարմնին դյուրեական:
Սրեակն էր նրան տվել սևութունը մազերի
Եվ մշկեղեն կետի նման սև խալերը այտերի.
Վառ Հրատը պարզեց էր իր այտերին վարդի գույն,
Ազեղնավորը՝ թարթիչներ նետերի պես շեշաակի:
Փայլածուն էր օժտել նրան խորաթափանց, սուր մտքով,
Իսկ մեծ Արջը՝ շար աշքերից պահպանություն անխռով:
Եվ շվարեց աստղաբաշխը նրա անսքից անթերի:
Մնկի իջավ ու համբուրեց հողը նրա ոտքերը:

Եվ սուլթանը, տեսնելով Հասանին, շնորհ արեց նրան ու սիրեց, և ասաց նրա հորը. «Ո՛վ վեզիր, հարկավոր է և անհրաժեշտ, որ դու նրան միշտ քեզ հետ բերես»: Եվ վեզիրը պատասխանեց. «Էսո՛ւմ եմ ու հնազանդվում»:

Եվ Նուր-էդ-դինն իր որդու հետ տուն վերադարձավ, և այնուհետև ամեն օր նրա հետ սուլթանի մոտ էր գնում:

Իսկ երբ տղան տասնհինգ տարեկան դարձավ, նրա հայրը՝ վեզիր Նուր-էդ-դինը, հիվանդացավ և կանչեց իր որդուն ու նրան ասաց. «Ո՛վ տղաս, իմացի՛ր, որ այս աշխարհը ժամանակավոր կացարան է, իսկ հանդերձյալ կյանքը՝ հավիտենական: Ես ուզում եմ քեզ որոշ խրատներ տալ, հասկացիր ինչ որ ասելու եմ և բո խելքն ուղղի՛ր դրա»:

Եվ նա սկսեց սովորեցնել նրան մարդկանց հետ լավ վարվեցողութուն ու շրջահայացութուն, իսկ հետո Նուր-էդ-դինը հիշեց իր եղբորը, հարազատ վայրերն ու երկրները և լաց եղավ սիրելիներից բաժանված լինելու համար ու սրբեց արցունքները և արտառանեց այսպիսի տողեր.

«Բաժանման վշտից տրտունջ հայանելով՝ ձեզ ի՞նչ ասենք մենք.
Եվ երբ կարո՞ւք տիրի մեր հոգուն՝ ի՞նչ ճամփա գտնենք,
Եթե սուրհանգակ գա ու ձեզ պատմի մեր վիշտը անհուն,
Չի կարող զեղել ու ձեզ հաղորդել ցավը մեր հոգու:
Ա՛խ, պետք է դարձյալ համբերենք այսպես. բայց շէ՞ որ երկար
Չի կարող ապրել սիրածին կորցրած ոչ մի սիրահար:
Իսկ ապրելիս էլ՝ վշտին ու սգին միշտ զարձած գերի
Ողբում է անհույս, ու շի ցամաքում արցունքն աչքերի:
Ա՛խ, քե՛զ, որ հիմա ինձ համար հեռու, անհաս ես, օտար
Իսկ իմ հոգու մեջ ապրում ես, շնչում ինձ հետ անզազար,
Կտեսնե՞ն արդյոք աչքերս մի օր, և հիշո՞ւմ ես դու
Ինձ ու երգումս, որ անխախտ է այս կյանքի պես անդուլ:
Թե՞ հեռվում արդեն մոռացար նրան, որ սիրում է քեզ,
Ու շաա է լացել, հալումաշ եղել սիրուց հրակեզ:
Եվ, ա՛խ, թե սերը ինձ ու քեզ մի օր իրար մոտ բերի,
Վերջ չի լինելու իրար գեմ արվող կշտամբանքներին»:

Իսկ ոտանավոր ասելն ու լալը վերջացնելով, նա դարձավ իր որդուն ու ասաց. «Իմացիր, նախքան ես քեզնից կհեռանամ, որ դու հորեղբայր ունես, Կահիրեի վեզիրը, որին ես թողել եմ ու հեռացել, առանց նրա համաձայնության: Ես ուզում եմ, որ դու վերցնես թուղթն ու գրես, ինչ-որ ասելու եմ»:

Եվ Բեդր-էդ-դին Հասանը վերցրեց թղթի փաթեթն ու սկսեց գրել, ինչպես հայրն ասել էր, և Նուր-էդ-դինը թելադրեց նրան այն ամենը, ինչ-որ իրեն պատահել էր, սկզբից մինչև վերջ: Եվ նա գրել տվեց նրա համար իր ամուսնության ժամանակը և այն օրը, երբ ինքը մտել էր վեզիրի ազջկա մոտ, ինչպես և Բասրա ժամանելու և վեզիրին հանդիպելու օրը և այն, որ մահվան ժամանակ ինքը դեռ քառասուն տարեկան չկար: «Եվ ահա իմ նամակը նրան, և նրանից հետո ալլահն է իմ ժառանգը,— վերջացրեց նա, ապա փաթաթեց թուղթը, կնքեց այն ու ասաց.— Ո՛վ զավակդ իմ Հասա՛ն, պահի՛ր այս կտակը, որովհետև այս թղթում ցույց է տրված քո ծագումն ու տոհմն ու ցեղը, և եթե քեզ որևէ բան պատահի, գնա Եգիպտոս և այնտեղ հարցրու քո հորեղբոր մասին և իմացիր նրա մոտ գնալու ճանապարհն ու հայտնիր նրան, որ ես օտարության մեջ կարոտով մեռա»:

Եվ Բեդր-էդ-դին Հասանը վերցրեց թուղթը, փաթաթեց այն և կարեց թասակի մեջ՝ աստառի ու երեսի միջև, ու շալման վրայից փաթաթեց, լաց լինելով իր հոր համար, որից բաժանվում էր երիտասարդ հասակում: Նուր-էդ-դինը նրան ասաց. «Ես հինգ խրատ կաամ քեզ: Առաջինն այս է՝ ոչ ոքի հետ ծանոթություն մի՛ հաստատիր և կազատվես շարիքից, որովհետև փրկությունը մենության մեջ է: Ոչ ոքի մի՛ այցելիր ու ոչ ոքի հետ գործ մի՛ բռնիր. ես լսել եմ, թե ինչպես բանաստեղծն ասում էր.

էլ ոչ մեկից դու մի՛ սպասիր սեր ու կարոտ սրանվեր,
Եվ թե բախտը քեզ ծուռ նայի, էլ շես գտնի լավ ընկեր,
Մենության մեջ ապրիր հանդիստ, ոչ ոքի մի՛ հաժաա,
Սա քեզ անկեղծ խորհուրդ տվի, և քեզ համար բավ է գտ:

Երկրորդը, ո՛վ զավակս, ոչ ոքի մի նեղացրու, ապա թե ոչ բախտը քեզ կնեղացնի: Բախտը մի օր քեզ հետ, մի օր քո դեմ է, և երկրային կյանքը վերադարձի ենթակա փոխառություն է: Լսել եմ, թե ինչպես բանաստեղծն ասում էր.

Ինչ մի՛ շտապիր հասնել նրան, ինչ որ նյութն է տենչանքիդ,
Կթած եղիր մարդկանց հանդեպ, որ նրանք էլ գթան քեզ,
Ամեն մարդու աչի վրա բարձրյալի աջն է իշխում,
Չարագործից է ստանում շարագործը հատուցում:

Երրորդ խրատը. լուռություն պահպանի՛ր, և քո արատները թող քեզ մոռացնել տան ուրիշների արատները: Ասված է. ով լուռություն է պահպանում, փրկվում է, և ես լսել եմ, թե ինչպես բանաստեղծն ասում էր.

Լուռությունը մեզ դարդարում, համբուռությունը պահպանում է, փրկում մեզ,
Իսկ թե խոսել անհրաժեշտ է, երկարաբան ու շատախոս չլինես:
Քո լուռության համար եթե գտնես զզջում վերահաս,
Ապա ասած խոսքիդ համար բյուրապատիկ կզզաս:

Չորրորդը, ով զավակս, զգուշացնում եմ քեզ, գինի չխմե՛ս: Գինին բուրբ խոռվությունների սկիզբն է, գինին կործանում է մտքերը: Զգուշացի՛ր, զգուշացի՛ր, գինի մի՛ խմիր, որովհետև ես լսել եմ, թե ինչպես բանաստեղծն ասում էր.

Հրաժարվել եմ ես գինուց
Ու ձեռք քաշել ընկերներից միշտ հարբած,
Եվ օրինակ եմ ծառայում

Իմ անբարբոժ ևս ժարդկանց մտա գինատյաց
Գինին շեղում, մուրհեցնում,
Հանում է մեզ ուզիդ ճամփից գովական,
Եվ մեր առջև շարիքների դուռն է բացում,
Քերում պատիժ ու փորձանք:

Եվ հինգերորդ խրատը. ո՞վ դավակս, խնայիր փողը, և նա կխնայի քեզ, խնայի՛ր փողը, նա քեզ կպահպանի: Չափից շատ մի՛ ծախսիր, կարիքի մեջ կընկնես՝ թշվառագույն մարդկանց օգնությանը կդիմես: Խնայի՛ր դիրհեմները, փողը ապաքինող բալասան է, որովհետև ևս լսել եմ, թե ինչպես բանաստեղծն ասում էր.

Երբ դրամը քիչ է ինձ մտա, ոչ մի ընկեր ես չունեմ,
Երբ շատ ունեմ, ինձ ընկեր ու բարեկամ են բոլորն էլ:
Շոալլության համար շատ մարդ ինձ բարեկամ է դառնում,
Բայց քանի՞սը, երբ փող չունեմ, թողնում են ու հեռանում:

Եվ Նուր-էդ-գինը շէր դադարում իր որդի Բեդր-էդ-գին Հասսանին խրատելուց մինչև իր հոգին ավանդելը: Եվ սուգը թագավորեց նրա տանը և թագավորն ու էմիրները վշտացան նրա համար, և թաղեցին նրան:

Բեդր-էդ-գինն իր հոր մահվան սգի մեջ մնաց երկու ամիս, ձի չհեծավ, դիվան չգնաց ու չհանդիպեց սուլթանին:

Եվ սուլթանը զայրացավ նրա վրա և նրա փոխարեն պալատականներից մեկին նշանակեց ու նստեցրեց վեզիրի աթուռին ու հրամայեց կնքել Նուր-էդ-գինի տունը, նրա կալվածքներն ու գույքը: Եվ նոր վեզիրը ձեռնամուխ եղավ այդ բոլորը կնքելուն ու որոշեց բռնել նրա որդի Բեդր-էդ-գինին ու տանել սուլթանի մոտ, որպեսզի սուլթանն իր վճուխ համաձայն վարվի:

Սակայն զորքի մեջ կար հանգուցյալ վեզիրի ստրուկներից մեկը, որը, լսելով այդ ամենը, քշեց իր ձին ու հապճեպ գնաց Բեդր-էդ-գին Հասսանի մոտ, որն այդ ժամանակ նստած էր իր տան դռան առջև, գլուխը տխրագին հակած ու սիրտը կոտրված: Եվ ստրուկը ձիուց իջավ Բեդր-էդ-գինի առջև, համբուրեց նրա ձեռքն ու ասաց. «Ո՞վ տեր իմ և իմ տիրոջ որդի, շտապի՛ր, շտապի՛ր, քանի զեռ ճակատագիրը վրա չի հասել»: Եվ Բեդր-էդ-գինը տագնապի մեջ ընկավ ու հարցրեց. «Ի՞նչ է պատահել»: Եվ ստրուկն ասաց. «Սուլթանը զայրացել է քեզ վրա ու արամայել է բռնել քեզ, և իմ հետևից փորձանքն է գալիս քեզ մոտ: Փրկի՛ր հոգիդ» — «Ժամանակ կա՞, արդյոք, որ տուն մտնեմ ու հետս մի

քանի բան վերցնեմ, որպեսզի օտարութեան մեջ ապրել կարողանամ».—
հարցրեց Բեդր-էդ-գիներ:

Եվ ստրուկը պատասխանեց. «Ո՛վ տեր, անմիջապես վեր կա՛ց և
մի՛ մտածիր տան մասին,— և նա վեր կացավ ու արտասանեց.

Երբ պատուհասը վրա է հասնում,
Փրկիր դու հոգիդ ու կյանքդ անգին,
Եվ տունդ լքված թող դատարկ սգա
Ու ողբա տխուր իր կառուցողին:
Գու միշտ քեզ համար օտար մի երկրում
Կգանես հանգիստ մի նոր հանգրվան,
Իսկ ուրիշ հոգի չես գտնի երբեք,
Եթե ավանդես հոգիդ մի անգամ:
Զարմանալի է, թե ինչպես է մարդ
Խայտառակ դորձած՝ իր տանը մնում,
Մինչդեռ տրարչի հողերն ընդարձակ
Փռված են անեզր մեր այս աշխարհում:
Լուրջ գործերի մեջ պետք չէ ուղարկել
Գործիդ տնօրենն ոչ մի սուրհանդակ,
Իր համար միայն հենց իր հոգին է
Բարին ցանկանում ու տենչում անհագ:
Տես, ամբացել է ու հզոր դարձել
Հենց այն պատճառով՝ վիզը առլուծել:
Որ իր կարիքը լոկ ինքն է հողում,
Եվ ինքն իր ձեռքով բռնում իր որսին»:

Եվ Բեդր-էդ-գիներ, լսելով ստրուկի խոսքերը, գլուխը փեշով ծածկեց ու ճամփա ընկավ և, քաղաքից դուրս գալով, նա լսեց, թե ինչպես մարդիկ ասում են. «Սուլթանն իր նոր վեզիրին ուղարկել է մահացած վեզիրի տունը, որպեսզի կնքեն նրա ունեցվածքն ու տները և բռնեն նրա՝ որդի Բեդր-էդ-գիներին ու տանեն սուլթանի մոտ, որպեսզի սուլթանը նրան դիխատի»:

Եվ մարդիկ վշտացած էին նրա գեղեցկութեան ու հմայքի համար, իսկ Բեդր-էդ-գիներ, լսելով մարդկանց խոսքերը, իրեն բախտին հանձնած գնաց, առանց իմանալու, թե ուր է գնում, ու գնաց, մինչև բախտը նրան իր հոր գերեզմանի առջև կանգնեցրեց:

Եվ նա մտավ գերեզմանոց ու անցավ գերեզմանների միջով, ապա նստեց իր հոր գերեզմանի առջև ու գլխին քաշեց փարանջալի փեշերը: Իսկ դա նախշագործած էր ոսկեթել բանվածքով, ու վրան գրված էին հետևյալ տողերը.

Ո՞վ դու, որ տեսքդ փալլում է այդպէն
Աստղերի նման, վճիտ ցողի պես,
Թող որ հովիտայտն մեծ լինես կյանքում
Ու վերջ չլինի փառքիդ անպատում:

Եվ մինչ նա նստած էր հոր գերեզմանի մոտ, հանկարծ մի հրեա մոտեցավ նրան. նա արտաքուստ դրամափոխի էր նման, մի տոպրակ ունեւր՝ մեջը լիքը ոսկի, և մոտենալով Հասան բասրեցուն, հարցրեց. «Ո՞վ իմ տեր, ինչո՞ւ ես այդպէս վշտացել, ինչպէս ես տեսնում եմ»:— «Նոր ես քնած էի,— պատասխանեց Բեդր-էդ-գինը,— և տեսա իմ հորը, որը հանդիմանում էր ինձ այն բանի համար, որ ես իրեն չեմ այցելում: Եվ ես սոսկումով վեր թռա ու վախենում էի, թե օրը կանցնի ու չեմ կարող այցելել նրան, իսկ դա շատ ծանր կլիներ ինձ համար»:— «Ո՞վ տեր,— ասաց հրեան,— քո հայրը նավեր էր ուղարկել առևտրի համար և նրանցից մի քանիսը վերադարձել են, և ես ուզում եմ նրանցից առաջինը ժամանած նավի բեռը ղնել այս հազար դինար ոսկով»: Եվ հրեան հանեց ոսկով լիքը տոպրակը, հաշվեց հազար դինարը և տվեց վեզիրի որդի Հասանին ու ասաց. «Թուղթ գրի՛ր ինձ համար ու կնիքդ դի՛ր»:

Եվ Հասանը՝ վեզիրի որդին, թուղթը վերցրեց ու գրեց. «Այս տողերը գրողը՝ Հասանը, վեզիրի որդին, վաճառեց հրեա Իսահակին իր հոր նավերից այն նավի բեռը, որ առաջինն է գալու, հազար դինարով, և վճարը նախապես ստացավ»: Եվ հրեան վերցրեց թուղթը, իսկ Հասանն սկսեց լաց լինել, հիշելով, թե ինչպէս փառքի մեջ էր, ու արտասանեց.

«Այն պահից ի վեր, երբ դուք հեռացաք, իմ բարեկամներ,
էլ տունս տրոհն աուն չէ ինձ համար, ա՛խ, տունս՝ ավեր,
Ոչ էլ մտերիմ հարևաններս են հիմտ հարևան,
Որ իմ սն օրին ձեռք մեկնեն խեղճիս, հասնեն օգնության:
Արդ բարեկամ չեն այն մտրդիկ, որոնց տեսնում եք այստեղ,
Ոչ էլ երկնքի աստղերն են աստղեր՝ վշտիս մեջ զորեղ:
Դուք անհայտացաք, և աշխարհը ողջ դարձրեցիք գատարկ
Եվ մոռալ գարձրիք դաշտերը կանաչ, ձորերն անհատակ:
Օ, թող տղաավն այն, որ իր կռիւնով անջատում գուժեց,
Փետրաթափ լինի ու բույն չգտնի աշխտրհում այս մեծ:
Մեր անջաման մեջ հալումաշ եզած՝ կորցրել եմ ես ինձ,—
Օ, բաժանմուն մեջ որքան ծածկույթներ ընկան իմ ալքից:
Արդյոք էլ կգա՞ն օրերը անցած, երջտնիկ այնքան,
Եվ մենք կլինե՞նք մի տան՝ մեջ, մեկտեղ առաջվա նման»:

Եվ նա դառնորեն լացեց, ու դիշերք վրա հասավ, և Քեդր-էդ-դինը դուխը գրեց իր հոր գերեզմանին, ու բունն իջավ նրա վրա: Եվ նա բնեց, մինչև որ լուսինը ելավ, և նրա դուխը սահեց գերեզմանից, ու նա պառկեց մեջքի վրա, ու նրա գեմքը փալլում էր լուսնի շողերի տակ:

Իսկ գերեզմանում ապրում էին ուղղահավատ ջիններ, և մի ջին-նուհի դուրս եկավ ու նկատեց քնած Հասանին և, տեսնելով նրան, հիացավ նրա գեղեցկությամբ ու հմայքով ու բացականչեց.— «Փա՛ռք ալլահին, այս երիտասարդը գրախտի զավակներից է»:

Եվ նա օդ բարձրացավ, որպեսզի շրջան գործի, ինչպես սովորաբար, ու տեսավ թռչող իֆրիտին, որը ողջունեց իրեն, ու հարցրեց նրան. «Որտեղի՞ց ես թռչում»:— «Այնտեղից»,— պատասխանեց իֆրիտը: Եվ ջիննուհին ասաց.

«Ձե՞ս ուզում թռչել ինձ հետ ու տեսնել գերեզմանի մոտ քնած երիտասարդի գեղեցկությունը»: Եվ իֆրիտն ասաց. «Լավ»: Եվ նրանք թռան ու իջան այն գերեզմանի մոտ, և ջիննուհին հարցրեց. «Կյանքումդ սրանից գեղեցիկ որևէ մեկին տեսե՞լ ես»: Եվ իֆրիտը նայեց երիտասարդին ու բացականչեց. «Փա՛ռք նրան, որի նմանը չկա: Բայց եթե ուզում ես, քույրիկ, ես քեզ կպատմեմ, թե ինչ եմ տեսել»:— «Ի՞նչ»,— հարցրեց ջիննուհին: Եվ իֆրիտը պատասխանեց. «Ես սրա նման մի աղջիկ տեսա եգիպտական երկրում, նա վեզիր Շեմս-էդ-դինի աղջիկն է: Նա մոտ քսան տարեկան է ու գեղեցիկ է, հմայիչ, պայծառ և կատարյալ ու բարեկազմ: Եվ երբ նա հասավ այդ հասակին, նրա մասին Կահիրեի սուլթանը լսեց ու կանչեց վեզիրին՝ նրա հորը, և ասաց. «Իմացի՛ր, ո՞վ վեզիր, որ ես լսել եմ, որ դու աղջիկ ունես, և ուզում եմ նշանել նրան»:

Եվ վեզիրը պատասխանեց. «Ով տեր սուլթան, ընդունի՛ր իմ ներողութունը և խնայի՛ր իմ արցունքները: Քեզ հայտնի է, որ իմ եղբայր Նուր-էդ-դինը հեռացել է մեզանից, և մենք չգիտենք, թե որտեղ է նա, իսկ նա վեզիրության մեջ իմ ընկերն էր, և նրա հեռանալու պատճառը զայրույթն էր, որովհետև մենք նստել ու խոսում էինք ամուսնության ու երեխաների մասին, և նա դրա համար զայրացավ, իսկ ես այն օրը, երբ կինս աղջիկ ծնեց, երդվեցի, մոտ տասնութ տարի առաջ, որ աղջկանս ոչ ոքի, բացի իմ եղբորորդուց, կնության չեմ տա: Իսկ վերջերս ես լսել եմ, որ իմ եղբայրն ամուսնացել է Բասրայի վեզիրի աղջկա հետ և ունի մի տղա, և ես բացի նրանից ոչ ոքի չեմ տա աղջրկաս, որպես հարգանք իմ եղբոր նկատմամբ: Ես գրել եմ, թե երբ եմ ամուսնացել, երբ է իմ կինը հղիացել և երբ է աղջիկս ծնվել, և նա

նախասահմանված է իր հորեղբոր որդու համար: Իսկ մեր տեր սուլթանի համար աղջիկներ շատ կան»:

Վեզիրի խոսքերը լսելով, սուլթանը խիստ բարկացավ ու ասաց. «Ինձ նմանը նշանում է քեզ նմանի աղջկան, իսկ գու նրան ինձ չես տալիս և ողորմելի պատրվակներ ես բերում: Գլխովս եմ երդվում, ես նրան մարդու կտամ իմ ծառաներից ամենախղճուկին, հակառակ քո ցանկության»: Իսկ սուլթանը մի կուզիկ ձիապան ուներ՝ սապատն առջևից ու հետևից, և հրամայեց բերել նրան ու բռնի կերպով ամուսնական պայման գրել տվեց վեզիրի աղջկա հետ ու հրամայեց ձիապանին նույն դիշերն իսկ նրա մոտ մտնել, և պատվիրեց նրա համար թափոր կազմակերպել: Եվ ես նրան թողեցի սուլթանի ստրուկների մեջ, որոնք նրա շուրջը մոմեր էին վառում և ծաղրում էին նրան բազմիքի դռան մոտ: Իսկ վեզիրի աղջիկը, դայակների ու աղախինների մեջ նըստած, լաց է լինում. և նա ամենից ավելի է սրան նման: Իսկ նրա հորը բանտարկել են, որպեսզի չկարողանա մտնել աղջկա մոտ: Եվ ես, քույրիկ, այդ կուզիկից ավելի զզվելի մարդ չեմ տեսել: Իսկ աղջիկը այս երիտասարդից գեղեցիկ է»:

Եվ երբ իֆրիտը պատմեց ջիննուհուն, որ սուլթանը ամուսնական պայման է գրել տվել վեզիրի աղջկա ու սապատավոր ձիապանի միջև, և աղջիկը մեծագույն վշտի մեջ է, և որ գեղեցկությամբ նրա նմանը չկա, բացի այս երիտասարդից, ջիննուհին ասաց. «Դու ստում ես: Այո երիտասարդն իր ժամանակի բոլոր մարդկանցից գեղեցիկ է»: Բայց իֆրիտն առարկեց նրան ու բացականչեց. «Ալլահը վկա, քույրիկ, աղջիկը սրանից գեղեցիկ է, բայց ոչ ոք չի համապատասխանում նրան, բացի սրանից, որովհետև նրանք նման են իրար, ինչպես հարազատ քույր ու եղբայր: Վա՛յ խեղճ աղջկան այդ սապատավորի հետ»:— «Ով եղբայր,— ասաց ջիննուհին,— արի սրան վերցնենք ու տանենք մեզ հետ, թոցնենք այն աղջկա մոտ, որի մասին դու ասում ես, ու տեսնենք, թե նրանցից ո՞րն է գեղեցիկ»:— «Լսում եմ ու հնազանդվում: Դա ճիշտ խոսք է: Եվ քո արտահայտած մտքից ավելի լավը չկա: Ես կտանեմ սրան»,— ասաց իֆրիտը, վերցրեց Հասանին ու նրա հետ օգ բարձրացավ: Իսկ իֆրիտուհին թռչում էր նրա կողքից: Եվ նրանք ցած իջան Կահիրե քաղաքում և երիտասարդին նստարանի վրա դրեցին ու արթնացրին:

Եվ Հասանն արթնացավ քնից ու տեղավ, որ ինքը ո՛չ Բասրայում է, ո՛չ էլ հոր գերեզմանի առջև: Նա այց ու ձախ նայեց ու պարզվեց, որ ինքն իրոք մի ուրիշ քաղաքում է. և ոչ թե Բասրայում: Եվ նա սուղում

էր բղավել, բայց իֆրիտը բռունցքով փակեց նրա բերանը: Ապա իֆրիտը նրա համար շքեղ զգեստներ բերեց ու հագցրեց նրան և մոմ վառեց ու ասաց, «Իմացած եզի՛ր, որ ես եմ քեզ այստեղ բերել ու հանուն ալլահի ես քեզ համար մի բան կանեմ: Վերցրո՛ւ այս մոմը և գնա այն բազնիքի մոտ ու խառնվիր բազմությանն ու նրա հետ գնա, մինչև որ հասնես հարսի տուն, իսկ երբ հասնես, առաջ ընկիր ու առանց որևէ մեկից վախենալու մտի՛ր տուն: Երբ ներս մտնես, սապատավոր փեսացուի աջ կողմը կանգնիր, և երբ մոտենան քեզ աղախինները, երգիչներն ու դայակները, ձեռքդ գրպանդ տար, դու այն ոսկով լի կգտնես, լիքը բուռդ հանիր ու շաղ տուր բոլորի առջև: Եվ ամեն անգամ, երբ ձեռքդ գրպանդ տանես, գրպանդ ոսկով լիքը կլինի: Բուռերով տուր ամեն մեկին, ով քեզ մոտենա, և ոչնչից չվախենաս: Ապավի՛նի՛ր նրան, ով քեզ ստեղծել է, այս բոլորը ոչ թե քո կամքով է լինում, այլ ալլահի տնօրինությամբ»:

Եվ իֆրիտի խոսքերը լսելով Բեդր-էդ-դին Հասանը բացականչեց. «Տեսնենք, թե ինչ աղջիկ է դա, և ի՞նչն է այս սիրալիրության պատճառը»:

Եվ նա գնաց, մոմը վառեց ու մոտեցավ բազնիքին ու տեսավ, որ սապատավորը ձի է նստել, ու բազմության մեջ մտավ շքեղ զգեստները հագին, գեղեցիկ տեսքով (իսկ նա հագել էր ոսկեթել բանվածքով փարանջա, գրել էր թասակն ու փաթթոցը փաթաթել): Եվ նա թափորի հետ գնաց, և ամեն անգամ, երբ երգչուհիները կանգ էին առնում, ու մարդիկ նրանց դահիրաների մեջ փող էին նետում, Բեդր-էդ-դինը ձեռքը գրպանն էր տանում ու ոսկով լիքն էր գտնում, և վերցնում էր ու գցում երգչուհիների դահիրաների մեջ ու գրանք լցնում դինարներով: Եվ երգչուհիները շվարած էին մնացել, իսկ ժողովուրդը հիացել էր նրա գեղեցկությամբ ու հմայքով:

Եվ այդպես շարունակվեց, մինչև նրանք հասան վեզիրի տունը, և գոնապաններն սկսեցին վանել մարդկանց ու ներս շթողնել: Բայց երգչուհիներն ասացին. «Մենք ներս չենք մտնի, եթե այս երիտասարդին ներս շթողնեք, որովհետև նա մեզ առատորեն շնորհներ է արել: Մենք հարսի երեսը կբացենք միայն նրա ներկայությամբ»:

Եվ Հասանին տարան հարսանյաց դահլիճը և նստեցրին սապատավոր փեսացուի առջև, ու էմիրների, վեզիրների և պալատականների բոլոր կանայք երկու շարք կազմեցին՝ ամեն մեկի ձեռքին մի մեծ, վառվող մոմ, ու քողը վրաները զցած կանգնեցին հարսի առագաստի՝ աջ ու ձախ

կողմերը, մինչև այն սենյակի դուռը, որտեղից հարսը պիտի գուրս պար:

Եվ երբ կանայք տեսան Բեդր-էդ-գին Հասանին, նրա գեղեցկությունն ու հմայքը, և նորալուսնի պես պայծառ նրա դեմքը, բոլորը համակրանքով լցվեցին նրա նկատմամբ, իսկ երգչուհիները ներկա գտնվող կանանց ասուցին. «Գիտե՞ք, այս երիտասարդը մեզ միայն ոսկեդրամ էր տալիս: Նրան ծառայելու մեջ ոչնչով չթերանաք, և հնազանդվե՛ք նրան ամեն ինչում, որ նա կպահանջի»: Եվ կանայք մոմերը ձեռքներին հավաքվեցին Հասանի շուրջը, և նրանք նայում էին նրա գեղեցկությանն ու նախանձում նրա հմայքին: Եվ ամեն մեկի մեջ ցանկություն էր զարթնել նրա գրկում լինել մի դիշեր կամ մի տարի: Եվ երբ սլոպակս նրանք խելքները թռցրին, քողերը քաշեցին երեսներից և ասացին. «Երանի՛ նրան, ում պատկանում է այս երիտասարդը կամ ում որ նա հրամայում է»:

Եվ նրանք սկսեցին անիծել սապատավոր ձիապանին ու նրան, ով պատճառ էր դարձել նրա և այդ գեղեցկուհու ամուսնություն, և ամեն անգամ, փառաբանելով Բեդր-էդ-գին Հասանին, նրանք անիծում էին ոսպտակավորին: Իսկ հետո երգչուհիները դահիրաները խփեցին ու սրինգները փչեցին, և եկան աղախիններն ու նրանց մեջ՝ վեզիրի աղջիկը: Նրան օժել էին անուշահոտ օժանելիքներով, հազցրել էին ու մազերը հավաքել ու խունկ ծխել, զուգել էին նրան ճոխ զարդերով ու հազցրել հոսարովների արքայական զգեստներ: Եվ ի թիվս այլ հագուստների, նա հագել էր ոսկեթելով ասեղնագործած գազանների ու թռչունների պատկերներով զարդարված հագուստը՝ գլխից մինչև ոտքերը, իսկ վզին զցիլ էր հազարներ արժեցող մի մանյակ, որի ամեն մի քարը այնքան հարստություն արժեր, որքան շունեին թորքան ու կեսարը¹: Եվ հարող հեովից նման էր ամսվա տասնչորսերորդ դիշերվա լուսնի, իսկ մոտենալով, նա ստացավ հուրիի տեսք: Եվ թող փառավորյալ լինի նա, ով նրան այնպես պայծառ էր ստեղծել: Եվ կանայք շրջապատեցին նրան՝ աստղերի նման, իսկ նա իսկական լուսին էր, որ գուրս է գալիս ամպերի արանքից:

Իսկ Բեդր-էդ-գին Հասան րասրեցին նստել էր, և մարդիկ նայում էին նրան: Եվ հարսը հպարտորեն մոտեցավ ջորորալով, և ոսպատա-

¹Թորքա — ըստ տոասպելի՝ Հարավային Արարիայում բնակվող հին արաբական մի շարք ցեղի թագավորների տիրոջն էր:

Միջնադարյան արաբական գրականության մեջ կեսարներ էին կոչվում բյուզանդական կայսրերը:

Վոր ձիապանը վեր կացավ, որ համբուրի նրան, քայց հարսը շրջվեց ու հետ դարձավ, այնպես որ հայտնվեց Հասանի՝ իր հորեղբոր որդու, առջև, և բոլորը ծիծաղեցին: Եվ տեսնելով, որ նա դիմում է Հասան Բեգր-էդ-դինի կողմը, ամբոխն աղմկեց, և երգչուհիներն աղաղակեցին, իսկ Բեգր-էդ-դինը ձեռքը գրպանը տարավ ու, մի բուռ ոսկի հանելով, լցրեց երգչուհիների դահիրայի մեջ: Եվ նրանք ուրախացան ու ասացին. «Մենք կուզեինք, որ այս հարսը քոնը լիներ»: Եվ Հասանը ժրպտաց:

Եվ ահա, բոլորը շրջապատեցին նրան, իսկ կապիտանման սապատավոր ձիապանը մենակ մնաց, և ամեն անգամ, երբ նրա առջև մոմ էին վառում, հանդուժում էր, և նրա ձայնը բղավելուց կտրվել էր, ու նա նստել էր մթան մեջ, իր մասին մտածելով:

Իսկ Հասան Բեգր-էդ-դինի առջև հայտնվեցին մարդիկ՝ վառվող մոմերը ձեռքներին, և երբ Հասանը տեսավ, որ փեսան մթուժյան մեջ մենակ է մնացել ու մտածում է ինքն իր մտին, իսկ այս մարդիկ իր շուրջն են հավաքվել ու մոմ են վառում, շփոթվեց ու զարմացավ: Բայց տեսնելով իր հորեղբոր աղջկան՝ Բեգր-էդ-դին Հասանն ուրախացավ ու նայեց նրա գեմքին, որ փայլում էր լույսից ու շողում, հասկասլես այն պատճառով, որ նա վրայից հագել էր կարմիր կերպասե զգեստ: Եվ աղախինները բացեցին նրա վերին զգեստը, և Հասանը նկատեց նրա սեսքը, և աղջիկն սկսեց օրորալ ու շորորալ պարծանքից ու շամեցրեց տղամարդկանց ու կանանց, և նա այնպիսին էր, ինչպես ասել է արժանավոր բանաստեղծը.

Ահա արևը շողարձակ բլուրների եղեգների հեակից

Իր ծիրանի զգեստի մեջ մեզ երևաց ու շողերն իր տարածեց.

Իր բերանի նեկտարի հուր գինին խմել ինձ մատուցեց քնքազին,

Եվ իր այտի մի համբույրով մարեց հոգուս հուր կրակը շերմագին:

Եվ փոխեցին այդ զգեստը և հագցրին նրան կապույտ զգեստ, ու նա հայտնվեց, ինչպես լուսինը, որ ցոլում է, ամխաղույն ծամերով, նուրբ այտերով, ժպտուն բերանով ու բարձր կրծքով, նուրբ անդամներով ու թաթիկներով ու խումար աչքերով: Եվ բացեցին նրան երկրորդ զգեստի մեջ, և նա այնպիսին էր, ինչպես ասել են նրա մասին վսեմ խոհերով օժտվածները.

Կապույտ հագած մեզ մոտ նկավ զարդարուն,

Հաղուր կամարն է երկնքի ասես վրան վետվետոս,

Ես նայեցի, ամառային լուսին տեսա գիալիք,

Ձմեռվա պարզ գիշերների ջինջ երկնքում կապաածիր:

Հետո այդ զգեստն էլ փոխեցին ուրիշով ու ծածկեցին նրան իր տրծակած աւ ու երկար ծամերով, և դրանց սևութունն ու երկարութունը հիշեցնում էին խավար գիշերը, իսկ նա նվաճում էր սրտեր իր աչքերի կախարհող նետերով:

Եվ նրան բացեցին երրորդ զգեստի մեջ, և նա այնպիսին էր, ինչպես նրա մասին աւել է հորինողը.

Ահա նա, որ դեմքն իր ծածկած մազերի տակ սևաթույր,
Գայթակցութեան աղբյուր դարձավ. խոպոպները՝ մի-մի նետ:
Ես ասացի. «Քո գիշերով ցերեկվա լույսը մթնեցրիր»:— Ասաց. «Ոչ
ես գիշերվա խավարով եմ ծածկել երեսը լուսնի»:

Եվ նրան բացեցին չորրորդ զգեստի մեջ, և նա մոտեցավ, ինչպես ծագող արեգակ, շուրտալով պարծանքից ու շուրջբուրբը նայելով, ինչպես վիթ, ու նվաճեց սրտեր իր թերթերունքների նետերով, ինչպես նրա մասին աւել է նկարագրողը.

Ահա շքնաղ արեգակը. նա երևաց մեր աչքին
Ու փայլում է հպարտութեամբ իր շուրթի մեջ անմեկին,
Թե արևը տեսնի դեմքը և լոկ ժպիտ մի թեթև
Ամոթահար կթորնվի ամպերի տակ սևասև:

Եվ նա հայտնվեց հինգերորդ զգեստի մեջ, ինչպես քնքշագին աղջիկ, եղեգի ցողունի կամ ծարավ վիթի նման, և նրա խոպոպների կարիճները սողում էին նրա այտերին, և նա ցուցադրում էր իր հրաշալիքներն ու շարժում ազդրերը, ու նրա մազերի խոպոպները ծածկված լին, ինչպես աւել են նրա մասին նկարագրողները.

Նա հայտնվեց լիալուսնի նման, ասես, ջինջ երկնքում կապուտակ,
Նորը, քարեկտղ՝ մարմինն իր, ճկուն՝ իրանց բորակ,
Իր բերերով կախարհական գերում է նա բոլոր մարդկանց խելահեղ,
Պայծառաշող, վարդակարսի իր տյտներին, ասես, հակինթ կա բյուրեղ:
Սևահեր է, օձի նման մինչև ծունկն է իջնում ծամն իր վետվետուն,
Նայի՛ր, զգո՛ւյ՛ջ, ուրաժիք իր ծամերի սև օձերից գալարուն:
Իրանք նուրբ, բայց իր հոգին ամուր է շատ ու անխնա, աննկուն,
Թեև փափուկ է մարմինն իր, բայց ապառամ քար է դրել իր հոգում:
Արձակում է իր աչքերի նետերը սուր ու շեշտակի ամենքին,
Թեև հեռվից է տրծակում, բայց գիպչում է նետն անվրեպ նշանին:
Երբ գրկում ենք իրաք, ու ես ձեռքս դողող մոտեցնում եմ իր դոտուն,
Նանգաբում է կտրծքն իր բարձր, որ պիտի սեղմեմ նրան կրծքիս տրոփուն:

Օ՛, ի՛նչ հմայք, նա իր տեսքով գեղեցկութունն է մթաբնի բուրբի,
Օ՛, ի՛նչ մտրմին, դուլար ոսաին ճկունութունն իր մեծ պատիվ կրերի:

Եվ նրան բացեցին վեցերորդ՝ կանաչ զգեստի մեջ, և նա իր ուզիդ կեցվածքով՝ շիտակ ու թուխ, գերազանցեց նիզակին, իսկ գեղեցկությամբ՝ բոլոր երկրների գեղեցկուհիներին, և դեմքի պայծառությամբ նոեմացբեց ցուպցող լուսնին, իր գեղեցկությամբ հասնելով այն ծայրագույն աստիճանին, որ տենչանքի սահմանը կարող է լինել: Նա դեբեց քնքշությամբ ու ճկունությամբ և սրտեր խոցեց իր հրաշալի հատկութուններով, ինչպես նրա մասին ասել է նկարագրողներից մեկը.

Օ՛, ի՛նչ ազդիկ, ճարպկութունն է նրան եզել գաստիարակ,
Իսկ այտերին արեգակն է տվել շողերն իր հստակ:
Եկավ, կանաչ խալտթն է, ահա, ծածկում մտրմինը ճերմակ
Տերևի պես, որ կտրմիր նուր ծածկում է իր տակ:
Եվ հարց տվինք. «Ինչպե՞ս կոչենք մենք խալտթը այս կանաչ»:
Եվ նա որպես մեզ պատասխան ասաց խոսքն այս հիասքտեչ.
«Այս հագուստով մենք խոցել ենք բազում սրտեր սիրալուկ,
Եվ «սիրտ խոցող» ենք կոչել մենք խալտթն այս պերճաշուք»:

Եվ նրան բացեցին յոթերորդ զգեստի մեջ, զափրանի ու նարնջի գույների խառնուրդով, ինչպես նրա մասին ասել է բանաստեղծը.

Քայլում է նա շաղրույի մեջ ու պարծենում, որ դարդարված է շաղրան
Իլուր գույներով. սանդալազույն ու մշկերանգ, համպար, կանաչ ու զափրան:
Նուրբ է մարմինը բարեկազմ. ու թե «Ելի՛ր» ասի հոգին իր ջահել,
Զիտերն իր կասեն. «Նստի՛ր, բոլորովին հարկավոր չէ շտապել»:
Երբ մերձենալ ուզեմ, և իր հոգին ասի. «Եղի՛ր շտալ դու հիմա»,
Գոռողութունը իր ներսից կթելադրի. «Պետք չէ, հանգիստ դու մնա»:

Իսկ հարսը բացեց աչքերն ու ասաց. «Ո՛վ աստված, նրա՛ն իմ ամուսինը դարձրու և ազատի՛ր ինձ այս սապատավոր ձիապանից»:

Եվ նրան սկսեցին բացել յոթ զգեստների մեջ, մինչև վերջինը, Բեդր-էդ-դին Հասան բասրեցու առջև, իսկ սապատավոր ձիապանը նստել էր մենակ. իսկ երբ դա վերջացրին, մարդկանց թույլ տվեցին դնալ, և հեռացան բոլոր կանայք ու տղամարդիկ, որ հարսանիքում էին, և ոչ ոք չմնաց, բացի Բեդր-էդ-դին Հասանից ու սապատավոր ձիապանից: Եվ աղախինները հարսին տարան, որպեսզի հանեն զգեստներն ու վարդերը և պատրաստեն փեսայի համար: Եվ այդ ժամանակ սապատավոր ձիապանը մոտեցավ Բեդր-էդ-դին Հասանին ու ասաց նրան. «Ո՛վ տեր, այս երեկո դու զրադեցրիր մեզ ու շնորհներով ծածկեցիր. վեր չե՞ս կե-

նա հիմա, ու շե՞ս գնա, արդյոք»։— «Հանուն ավաճի»,— ասաց Հասանն ու դուրս եկավ բակ։ Բայց իֆրիտը հանդիպեց նրան ու ասաց. «Կա՛ց, Բեդր-էդ-դին, երբ սապատավորը դուրս գա հանդատության սենյակը¹, անմիջապես ներս մտի՛ր ու նստի՛ր առադաստի տակ, և հենց որ հարսը գա, նրան ասա. «Ծս քո ամուսինն ու թագավորն էմ, միայն նրա համար սարքեցի այս խորամանկությունը, որ վախենում էի քեզ աչքով տալուց. իսկ նա, որին դու տեսար, մեր ձիապաններից մեկն է»։ Ապա մոտեցի՛ր նրան, բաց դեմքդ ու ասա՛. «Մեր նկատմամբ խանդով են համակվել»։

Եվ մինչ Բեդր-էդ-դինը խոսում էր իֆրիտի հետ, ձիապանը հանկարծ դուրս եկավ ու գնաց հանդատության սենյակն ու նստեց տախտակների վրա, իսկ իֆրիտը շրի գավաթից դուրս եկավ նրա առջև մկան տեսքով ու ծվծվաց՝ «ձի՛կ»։ «Սա ի՞նչ բան է»,— հարցրեց սապատավորը։ Իսկ մուկն սկսեց մեծանալ և կատու դարձավ ու մլավեց՝ «մյաո՛ւ», «մյաո՛ւ», և էլի մեծացավ ու դարձավ շուն ու հաչեց՝ «հա՛ֆ-հա՛ֆ»։

Եվ, այդ տեսնելով, ձիապանը վախեցավ ու զոռաց. «Դո՛ւրս, անզգամ»։

Բայց շունը մեծացավ ու փքվեց ու դարձավ էշ և զոռաց ու պոռաց նրա դեմքին՝ «զը՛ռռ, զը՛ռռ»։

Եվ ձիապանը սարսափեց ու գոչեց. «Ինձ մոտ եկե՛ք, ո՞վ կա տանը»։ Բայց էշը սկսեց մեծանալ ու դարձավ ցուլի մեծության ու բռնեց ամբողջ շենքը և մարդկային ձայնով խոսեց ու ասաց. «Վա՛յ քեզ, ո՞վ գարշելիներից դարշելի»։

Եվ ձիապանը փորհարինք կպավ ու նա առանց հագուստն արձակելու նստեց տախտակներին, նրա ատամները կափկափում էին, իսկ իֆրիտն ասաց. «Երկիրը քեզ նեղվա՞ծք է, ինչ է, էլ ուրիշ ոչ ոքի չգտա՞ր ամուսնանալու համար, բացի իմ սիրածից»։

Եվ ձիապանը լուռ էր, իսկ իֆրիտը շարունակեց. «Պատասխանի՛ր, թե չէ գետնի տակ կանցկացնեմ»։— «Ալլահը վկա,— ասաց ձիապանը,— ես մեղք չունեմ։ Նրանք ինձ ստիպեցին, և ես չգիտեի, որ նա սիրած ցուլեր ունի, և ես զղջում եմ ավաճի ու քո առջև»։

Եվ իֆրիտն ասաց. «Երզվում եմ, որ եթե դու այստեղից դուրս գաս կամ ձայն հանես արևը ծագելուց շուտ, ես քեզ կսպանեմ։ Իսկ երբ արևը ծագի, քո ճանապարհով դնա ու երբեք այս տունը չվերադառնաս»։

Այնուհետև իֆրիտը բռնեց սապատավոր ձիապանին ու կոխեց անց-

¹ «Հանդատության սենյակ», «մեծության հանգիստ», «չրով տնակ» — արտաբնոց։

քի մեջ՝ գլուխը ցած ու ոտքերը տնկած, և ասաց նրան. «Այստեղ մնա՛, և ես քեզ պահակ կկանգնեմ մինչև արևի ծագելը»։

Ահա թե ինչ պատահեց սապատավորին։ Ինչ վերաբերում է Բեդր-էդդին Հասան բասրեցուն, ապա նա թողեց սապատավորին ու խֆրիտին վիճելիս, մտավ տուն։ ու նստեց առագաստի տակ։ Եվ հանկարծ հարսը եկավ ու նրա հետ մի պառավ, որը սենյակի դռան մոտ կանգ առավ ու ասաց. «Ո՛վ բարեկարգ միջան հայր, վեր կաց, առ ալլահի պրավականը»։

Հետո պառավը հետ դարձավ, իսկ հարսը մտավ վարագույրի հետևը և մոտեցավ բարձր առագաստին (իսկ նրա անունը Սիտտ-ալ-Հուան էր). և նրա սիրտը կոտրված էր, ու նա իր հոգում ասում էր «Ալլահը վկա է, չեմ թողնի, որ նա տիրապետի ինձ, եթե նույնիսկ ինձ սպանելու լինի»։ Եվ մտնելով առագաստ՝ նա տեսավ Բեդր-էդդինին ու ասաց նրան «Ո՛վ սիրելիս, դու դեռ նստած ես։ Ես ինքս ինձ ասում եմ, որ դու և սապատավոր ձիապանը միասին կտիրապետեք ինձ»։ — «Իսկ ի՞նչն է ձիապանին քեզ մոտ բերել, և նա ով է, որ իմ գործակիցը լինի՞՞ քանկատմամբ», — ասաց Բեդր-էդդին Հասանը։ Եվ աղջիկը հարցրեց. «Իսկ ո՞վ է իմ ամուսինը, դո՞ւ, թե նա»։

«Ով Սիտտ-ալ-Հուան, — ասաց Բեդր-էդդինը, — մենք այդ բոլորն արել ենք միայն ծաղրի համար, որ ծիծաղենք նրա վրա. երբ աղախիններն ու երզնուհիմները և քո ազգականները տեսան քո հազվադեպ գեղեցկությունը, քո հայրը տասը դինարով վարձեց ձիապանին, որպեսզի քեզնից հեռու վանի շար աչքը, և հիմա նա գնացել է»։

Եվ Բեդր-էդդինի այդ խոսքերը լսելով, Սիտտ-ալ-Հուանը ուրախացավ ու ժպտաց ու ծիծաղեց մեղմ ծիծաղով ու ասաց. «Ալլահը վկա, դու հանգցրիր իմ մեջ վառված կրակը։ Ալլահի սիրուն, առ ինձ քեզ մոտ ու սեղմիր գրկիդ»։

Եվ նա առանց հագուստի էր, ու խալաթը բարձրացրեց, մինչև վիզը, այնպես, որ բացվեց նրա առաջն ու հետևը։ Եվ երբ Բեդր-էդդինը տեսավ այդ, նրա մեջ բորբոքվեց կիրքը. և նա վեր կացավ, հանեց շորերը, ապա արձակեց ոսկու քսակը, որի մեջ գրել էր հրեայից ստացած հազար դինարը, փաթաթեց շավարի մեջ ու թաքցրեց ներքնակի տակ, իսկ շավարի հանեց ու դրեց նստարանին ու մնաց նուրբ շապիկով (իսկ շապիկը ոսկեթելով էր ասեղնագործած)։ Եվ այնժամ Սիտտ-ալ-Հուանը բարձրացավ նրա մոտ, նրան իր կողմը ձգեց, և Բեդր-էդդինը նույնպես նրան դեպի իրեն ձգեց ու գրկեց նրան ու ասաց, որ նա ոտքերով օդակի իրեն, ապա նա լիցքն արձակեց, և հրանոթը կրակեց ու քանդեց աշ-

տաբակը, և նա տեսավ, որ Սիտտ-ալ-Հուսնը շշադափված մարդաբաժնի է և դեռևս չհեծած դամբիկ:

Եվ նա խախտեց նրա կուսութիւնը ու հագեցավ նրա երիտասարդութեամբ ու լցրեց լիցքն ու արծակեց, իսկ վերջացնելով, շատ անգամ կրկնեց այդ բանը, և կինը հղիացավ նրանից:

Եվ հետո Բեդր-էդ-դինը ձեռքը նրա գլխի տակ դրեց, ու կինն էլ նույնն արեց, ու նրանք գրկախառնվեցին ու քնեցին այդպես գրկախառնված, ինչպես նրանց մային բանաստեղծն ասել է այսպիսի ոտանավորով.

Հաճախ այցելի՛ր քո սիրեկանին և նախանձորդը թող շարարանի,
Ձէ որ քո կիրքը չեն մեղմացնելու նախանձորդները հաղարաշքանի:
Ալլահն էլ արդեն շի ստեղծել կյանքում ավելի վերիչ ոչ մի տեսարան,
Քան անկողինը, որի մեջ սիրող զույգերը սիրով փարվել են իրար:
Գրկել են իրար, հոգով ու սրտով համաձայնութեան վարագույրի տակ,
Եվ իբրև բարձ են ծառայում նրանց ձեռքերը ջերմին ու կուրծքը ճերմակ,
Իսկ սրտերը երբ հավիտենական դաշինք են կապում սիրով անխախուս,
Մարդիկ էլ որքան շարք կամենան, սառած երկաթ են ծեծում անօգուտ:
Կյանքում թե քեզ հետ մի ազնիվ հոգի խոր սիրով կապվի ու մտերմանա,
Նրա հետ եղիր ու կյանքդ երջանիկ նրա հետ դարձրու վայելք անսահման,
Եվ թող իմանան սիրահարներին կշտամբողները վառ սիրո համար,
Իր սիրեցյալի ջերմ սիրուց բացի ուրիշ դեպ լուրի հոգին սիրահար:

Ահա թե ինչ եղավ Բեդր-էդ-դին Հասանի ու Սիտտ-ալ-Հուսնի՝ նրա հորեղբոր ազնկա միջև: Ինչ վերաբերում է իֆրիտին, ապա նա ասաց իֆրիտուհուն. «Բարձրացրու երիտասարդին ու տանենք նրան այնտեղ, որպեսզի առավոտը վրա շհասնի: Ժամանակն արդեն մոտ է»: Եվ իֆրիտուհին մոտեցավ ու բարձրացրեց Հասանին, երբ նա քնած էր, ու թռավ նրա հետ (իսկ Հասանը նույն վիճակում էր միշտ՝ շապիկով, առանց հագուստի): Եվ իֆրիտուհին թռավ ու իֆրիտն էլ նրա կողքից, մինչև առավոտը բացվեց նրանց ճանապարհորդութեան միջոցին ու մուեծինները՝ գոչեցին «Նկեսցեքը»:

Եվ այնժամ ալլահը թույլ տվեց հրեշտակներին իֆրիտի վրա նետել հրեղեն աստղեր, ու նա այրվեց, իսկ իֆրիտուհին փրկվեց: Եվ նա Բեդր-էդ-դինին րաց թողեց հենց այն վայրում, որտեղ աստղերն այրեցին իֆրիտին, և այլևս չթռավ նրա հետ, վախենալով նրա համար, այլ նախասահմանված կամքով նրանք հասան պիրիական Ռամասկոս, և

1 Մուեծին — մզկիթի արդարապես, որ համալսարաններին ստղծողի է կանչում:

իֆրիտուհին Հասանին քաղաքի դարպասներից մեկի մոտ դրեց ու թռավ-հեռացավ: Եվ երբ լույսը բացվեց և քաղաքի դարպասները բացվեցին, մարդիկ դուրս եկան ու տեսան երիտասարդին, շապիկով ու թասակով, հանված, առանց շորերի, և երկար անքնությունից հետո այդպես քուն մտած:

Եվ մարդիկ, տեսնելով նրան, ասացին. «Երջանիկ է այն կինը, ով այս գիշեր նրա կողքին է եղել: Եվ թող համբերել կարողանա, մինչև հագնվելը»: Իսկ մի ուրիշն ասաց. «Տոհմիկների անբախտ զավակներ: Այս երիտասարդը գինեանից հենց նոր է դուրս եկել դործի համար, բայց խմածությունը հաղթել է նրան, ու նա շեղվել է իր ճանապարհից և, հասնելով քաղաքի դարպասներին, փակված է գտել դրանք ու քնել է այստեղ»:

Եվ մարդիկ սկսեցին խոսել նրա մասին: Եվ հանկարծ քամին փչեց ու բարձրացրեց Բեդր-էդ-դինի շապիկը փորի վրայից, ու տակից երեվացին նրա փորը, պորտը, ոտքերն ու աղդերը՝ բյուրեղապակու նման, և մարդիկ ասացին. «Ալլահը վկա, լա՛վն է»:

Եվ Բեդր-էդ-դինն արթնացավ ու տեսավ, որ ինքը քաղաքի դարպասի մոտ է և որ իր շուրջը մարդիկ կան, ու զարմացավ և բացականչեց. «Որտե՞ղ եմ ես, բարի մարդիկ, և ինչո՞ւ եք հավաքվել այստեղ: Ի՞նչ է պատահել ինձ ու ձեզ»: Եվ նրան ասացին. «Մենք քեզ տեսանք առավոտյան կոշուների ժամին, դու պառկած քնել էիր, և մենք ոչինչ չգիտենք քո մասին, բացի սրանից»:

«Որտե՞ղ էիր քնել այս գիշեր», — հարցրին նրան հետո: Եվ Բեդր-էդ-դին Հասանը բացականչեց. «Ալլահը վկա, ով մարդիկ, ես այս գիշեր Կահիրեում եմ քնել»: Եվ այնժամ մեկն ասաց. «Դու հաշիշ ես ծխել», մյուսը բացականչեց. «Դու խելագար ես: Գիշերե՛լ ես Կահիրեում, իսկ առավոտյան քնած ես Դամասկոս քաղաքում»:

Եվ Բեդր-էդ-դինը պատասխանեց. «Ալլահը վկա, ո՛վ բարի մարդիկ, ես բոլորովին չեմ խաբում ձեզ: Երեկ երեկոյան ես Եգիպտոսում էի, իսկ երեկ ցերեկը Բասրայում եմ եղել»: — «Լա՛վ է», — ասաց մեկը: Իսկ մի ուրիշն ասաց. «Այս երիտասարդը դիվահար է»: Եվ ափ ափի խփեցին նրա համար ու ասացին իրար. «Ափսոս նրա ջահելությունը: Ալլահը վկա, նրա գժությունը կասկածի ենթակա չէ»: Հետո ասացին նրան. «Ուշքդ գլուխդ հավաքիր ու խելքի արի»: Եվ Բեդր-էդ-դինն ասաց. «Ես երեկոյան Եգիպտոսում փեսա էի»: — «Գուցե դու անրջել ես ու ինչ որ ասում ես, տեսել ես երազո՞ւմ», — հարցրին նրան: Եվ Հասանը կասկածեց ինքն իրեն ու բացականչեց. — «Ալլահը վկա, երազ չէ և անրջան-

քի մեջ չեմ տեսել այդ բոլորը: Ես դնացի և հարսի երեսը բացեցին իմ առջև, իսկ սապատավոր ձիապանը նստած էր հենց այնտեղ: Ո՛վ եղբայր իմ, դա երազ չէր, իսկ եթե դա երազ է եղել, ապա ո՞ւր է իմ ոսկու քսակը, ո՞ւր է իմ գլխանոցը, ո՞ւր են իմ հագուստները»:

Եվ հետո նա վեր կացավ ու մտավ քաղաք ու անցավ փողոցներով ու շուկաներով, և մարդիկ հավաքվեցին նրա շուրջն ու սկսեցին զնալ նրա հետևից, իսկ նա մտավ խոհարարի կրպակը:

Իսկ այդ խոհարարը ճարպիկ մարդ էր, այսինքն՝ գող էր, բայց ալլահը նրան զղջման էր բերել, ու նա ճաշարան էր բացել: Եվ Դամասկոսի բոլոր բնակիչները նրանից վախենում էին նրա խիստ կատաղության պատճառով:

Եվ երբ բոլորը տեսան, որ երիտասարդը ճաշարան մտավ, ժողովուրդը ցրվեց, վախենալով խոհարարից, իսկ երբ խոհարարը տեսավ Բեդր-էդ-դին Հասանին ու նայեց նրա գեղեցկությանն ու հմայքին, նրա սերն ընկավ իր սիրտը, և հարցրեց նրան. «Որտեղացի ես, կտրի՛ճ: Պատմիր ինձ քո պատմությունը, դու ինձ համար դարձար ավելի թանկ, քան իմ հոգին»:

Եվ Հասանը պատմեց նրան, ինչ-որ պատահել էր՝ սկզբից մինչև վերջ, և խոհարարն ասաց. «Ո՛վ տեր իմ Բեդր-էդ-դին, գիտցիր, որ դա շատ զարմանալի բան է ու արտասովոր պատմություն: Բայց թաքցրու բեզ հետ պատահածը, որդյակս, մինչև ալլահը բեզ մխիթարություն ուղարկի: Ապրի՛ր ինձ հետ այստեղ, ես երեխա չունեմ ու բեզ իմ որդին կդարձնեմ»:— «Կավ, հորեղբայր»,— ասաց Բեդր-էդ-դինը: Եվ այնժամ խոհարարը շուկա գնաց ու Բեդր-էդ-դինի համար շքեղ շորեր գնեց ու հագցրեց, իսկ հետո նրա հետ դադիի մոտ գնաց ու հայտարարեց, որ Բեդր-էդ-դինն իր որդին է: Եվ Բեդր-էդ-դին Հասանը Դամասկոս քաղաքում հայտնի դարձավ որպես խոհարարի որդի ու սկսեց նստել նրա հետ կրպակում ու փողն էր ստանում, և այդպիսով նրա դրությունը խոհարարի մոտ հաստատուն դարձավ:

Ահա թե ինչ պատահեց Բեդր-էդ-դին Հասանին ու կատարվեց նրա հետ: Իսկ ինչ վերաբերում է Սիտտ-ալ-Հուսնին՝ նրա հորեղբոր աղջկան, ապա, երբ լույսը բացվեց, նա արթնացավ ու իր կողքին չգտավ Բեդր-էդ-դին Հասանին: Սիտտ-ալ-Հուսնը կարծեց, թե նա դուրս է եկել կարիքի համար, և նստեց տեղում մի առժամանակ, նրան սպասելով: Եվ հանկարծ ներս մտավ նրա հայրը, մտահոգված այն բանի համար, ինչ-որ պատահել էր իրեն սուլթանի պատճառով՝ ինչպես նա բռնությամբ հարկադրել էր իր աղջկան կնություն տալ իր ծառային, մի ինչ-որ սա-

պատավոր ձիապանի: Եվ նա ինքն իրեն ասում էր. «Ես կսպանեմ աղջրկաս, եթե նա թույլ տված լինի, որ այդ անխիճյալը տիրապետի իրեն»:

Եվ, հասնելով նրա մահճակալին, նա կանգ առավ ու ասաց. «Սիրտալ-Հուսն»:

Եվ աղջիկը պատասխանեց. «Ես այստեղ եմ, քեզ ծառա, ով իմ տեր»,— և դուրս եկավ, օրորվելով խնդությունից, ու համբուրեց գետինը, ու նրա դեմքն ավելի պայծառացել ու գեղեցկացել էր, քանի որ նա գրկել էր այն վիթին: Եվ տեսնելով, որ նա այդ վիճակում է, հայրն ասաց. «Ո՛վ անխիճյալ, դու ուրախանո՞ւմ ես այդ ձիապանով»: Եվ աղջիկը ժպտաց, լսելով հոր խոսքերը, և պատասխանեց. «Ալլահի սիրուն, այն էլ բավական է, ինչ-որ երեկ պատահեց: Մարդիկ ծիծաղում էին ինձ վրա ու նախատում այդ ձիապանի համար, որն իմ մարդու մի եղունգը շարժե: Ալլահը վկա, իմ կյանքում այս գիշերվանից լավ գիշեր չեմ ունեցել: Մի՛ ծիծաղիր ինձ վրա ու մի հիշեցրու ինձ այդ սապատավորի մասին»:

Կսելով նրա խոսքերը, հայրը զայրույթով լցվեց, և նրա աչքերը կապտեցին, ու նա բացականչեց. «Վա՛յ քեզ, այդ ինչ խոսքեր ես ասում: Սապատավոր ձիապանը գիշերե՞լ է քեզ հետ»: Բայց Սիրտալ-Հուսնը ասաց. «Աղաչում եմ քեզ, հանուն ալլահի, մի՛ հիշեցրու ինձ նրա մասին, և թող ալլահը նզովի նրա հորը, և կառակ մի՛ արա: Ձիապանին միայն վարձել էին տասը դինարով, և նա ցտացավ իր վարձն ու գնաց, իսկ ես առագաստ մտա ու տեսա իմ ամուսնուն, որը նստել էր այնտեղ, իսկ մինչ այդ երգչուհիներն իմ երեսը բաց էին արել նրա համար, և նա բոլորին ոսկեղրամ բաշխեց, այնպես որ հարստացրեց այստեղ եղած աղքատներին: Եվ ես գիշերը քնեցի քնքշաբար՝ մարդու գրկում, նրա, ով սև աչքեր ու իրար կպած հոնքեր ունի»:

Եվ երբ նրա հայրը լսեց այս խոսքերը, աշխարհը մթնեց նրա աչքերի առջև, ու նա բացականչեց. «Ո՛վ պիղծ կին, այդ ինչ ես ասում, թոցրել ե՞ս խելքդ»: Եվ նա պատասխանեց. «Ո՛վ հայրիկ, դու իմ սիրտը խոցեցիր: Բավական է նեղացնես ինձ: Իմ մարդն է ինձնից անմեղութունս խել, և նա գնացել է հանգստության սենյակը, իսկ ես արդեն հղի եմ նրանից»:

Եվ այնժամ նրա հայրը վեր կացավ ու խիստ դարձացած գնաց արտաքնոց և տեսավ սապատավոր ձիապանին, որ գլխովայր խրվել էր անցքի մեջ, իսկ ոտքերը վեր էին ցցվել: Եվ վեզիրը, նրան տեսնելով, շվարեց ու բացականչեց. «Սա ոչ այլ ոք է, եթե ոչ սապատավորը: Հե՛յ, կուզի՛կ»,— ձայն ավեց նրան: Եվ ձիապանը պատասխանեց «Թագում»:

թագում», կարծելով, թե իր հետ իֆրիտն է խոսում, իսկ վեզիրը գոռաց նրա վրա ու ասաց. «Խոսի՛ր, թե չէ գլուխդ այս սրով կթոցնեմ»: Եվ այնժամ կուզիկն ասաց. «Ալլահը վկա, ով իֆրիտների շեյխ, այն պահից ի վեր, որ դու ինձ այստեղ կոխեցիր, գլուխս չեմ բարձրացրել: Ալլահի սիրուն, խղճա՛ ինձ»:— «Ի՞նչ ես խոսում,— ասաց վեզիրը, լսելով սապատավորի խոսքերը:— Ես հարսի հայրն եմ և ոչ թե իֆրիտ»:— «Բավական է,— պատասխանեց սապատավորը,— դու ուզում ես իմ հոգին առնել, բայց գնա քո ճանապարհով, բանի դեռ քեզ մոտ չի եկել նա, ով ինձ հետ այս գործը կատարել է: Դուք ինձ բերեցիք լոկ նրա համար, որ ամուսնացնեք ցուլերի սիրեկանի ու իֆրիտների սիրուհու հետ: Եվ թող ալլահը նզովի նրան, ով ինձ այդ աղջկա հետ ամուսնացրեց, և ով դրա պատճառը եղավ»: Իսկ վեզիրն ասաց. «Վե՛ր կաց, դ՞ուրս եկ այստեղից»: Բայց կուզիկը պատասխանեց. «Գժվե՛լ եմ, ինչ է, որ դուրս գամ քեզ հետ առանց իֆրիտի թույլտվության: Նա ինձ ասաց. «Երբ արևը ծագի, դուրս արի ու քո ճանապարհով գնա»: Ինչ է, արևը դ՞ուրս է եկել, թե չէ: Ես տեղիցս չեմ կարող դուրս գալ, մինչև արևը չծագի»:— «Ո՞վ է քեզ այստեղ բերել»,— հարցրեց այնժամ վեզիրը: Եվ ձիապանը պատասխանեց. «Ես երեկ այստեղ եկա կարիքի համար, և հանկարծ ջրից մի մուկ դուրս եկավ ու գոռաց վրաս և սկսեց մեծանալ, մինչև որ ցուլի մեծության հասավ, եվ նա ինձ այնպիսի խոսքեր ասաց, որոնք իմ ականջում մնացին, և ինձ թողեց ու գնաց, և թող ալլահն անիծի՛ հարսին ու նրանց, ովքեր ինձ ամուսնացրին նրա հետ»:

Եվ վեզիրը մոտեցավ ձիապանին ու նրան հանեց անցքից, և սա, վազելով, փախավ, չհավատալով, թե արևը ծագել է, և գնաց սուլթանի մոտ ու պատմեց, թե ինչ է տեղի ունեցել իր և իֆրիտի միջև:

Ինչ վերաբերում է վեզիրին՝ հարսի հորը, ապա նա տուն մտավ շփոթված, շիմանալով, թե ինչ մտածի իր աղջկա գործի մասին, ու ասաց նրան. «Աղջիկս, բացատրիր ինձ, թե ի՞նչ է պատահել քեզ»: Եվ նա ասաց. «Փեսացուն, որի առջև բացեցին երեկ իմ կրեսը, գիշերն ինձ հետ անցկացրեց ու խախտեց կուսությունս, և ես հղիացա նրանից: Եվ եթե դու ինձ շես հավատում, ապա, ահավասիկ, նստարանին նրա գլխի փաթթոցն է, այն պես, ինչպես նա ծալել էր, իսկ նրա հագուստը ներքնակի տակ է, և դրա մեջ մի բան է փաթաթած, որը ես չգիտեմ, թե ինչ է»:

Եվ այս խոսքերը՝ լսելով, նրա հայրը մտավ առագաստ ու տեսավ Բեդր-էզ-դին Հասանի՝ իր եղբոր տղայի, գլխի փաթթոցը և անմիջապես ձեռքն առավ, շուռումուռ տվեց ու ասաց. «Սա վեզիրների գլխի

փաթեթոց է և պատրաստված է Մոսուլում»։ Եվ նա տեսավ թասակի մեջ կարած հուռութը, վերցրեց ու քանդեց և, վերցնելով Հասանի շորերը, գտավ քսակը, որի մեջ հազար դինար կար։

Եվ բացելով քսակը, նա այնտեղ գտավ մի թուղթ ու կարդաց այն, և պարզվեց, որ դա հրեայի ստացականն էր, տրված Բեդր-էդ-դին Հասանի՝ Նուր-էդ-դին Ալի կահիրեցու որդու անունով, ու քսակի մեջ գտավ նաև հազար դինարը։

Եվ, կարդալով այդ գրութունը, Շեմս-էդ-դինը մի ճիշ արձակեց և ուշագնաց ընկավ, իսկ երբ ուշքը գլուխը եկավ, նա հասկացավ բանի էությունը, զարմացավ ու բացականչեց. «Չկա՞ ուրիշ աստված, բացի ավահից, որ ամեն բանի տիրակալն է»։

Ապա դարձավ աղջկան ու հարցրեց. «Ով աղջիկս, գիտե՞ս արդյոք, թե ով է քեզ զրկել կուսությունից»։ Եվ նա պատասխանեց. «Ոչ»։ Եվ այնժամ վեղիրն ասաց. «Դա իմ ազգականն է, քո հորեղբոր տղան, իսկ այս հազար դինարը՝ ինչպես է պատահել այս ամենը»։ Հետո նա բացեց կարված հուռութը և դրա մեջ գտավ մի թուղթ, որի վրա թվեր էին գրված իր եղբոր՝ Բեդր-էդ-դին Հասանի. հոր՝ Նուր-էդ-դին կահիրեցու ձեռքով։

Եվ, տեսնելով իր եղբոր ձեռագիրը, Շեմս-էդ-դինն արտասանեց այսպիսի տողեր.

*«Հալումաշ եղա անհուն կարոտից, սիրեցյալներիս հետքը տեսնելով,
ես հայրենիքում արցունք եմ թափում զետի պես վարար, անձրևի պես հորդ.
Աղերսում եմ ես ամենակալին, որ մեզ սահմանեց վերուստ բաժանում.
Թող մեզ՝ խեղճերիս, կրկին հանդիպման արժանի գործնի այս տխուր կյանքում»։*

Վերջացնելով ոտանավորը՝ նա կարդաց հուռութի մեջ եղած թուղթը և տեսավ այն օրվա ամսաթիվը, երբ Նուր-էդ-դինն ամուսնացել էր Բասրայի վեզիրի աղջկա հետ ու մտել նրա մոտ, և Բեդր-էդ-դին Հասանի ծննդյան ամսաթիվը, և Նուր-էդ-դինի տարիքը՝ նրա մահվան ժամանակ, և զարմացավ ու ցնցվեց բերկրանքից։ Եվ իր եղբոր հետ տեղի ունեցածը համեմատելով իր կյանքում տեղի ունեցածի հետ, նա տեսավ, որ մեկը համընկնում է մյուսին, և որ իր ամուսնության օրը զուգուդիպում է Նուր-էդ-դինի ամուսնության օրվան, և նրանց հարսանիքի գիշերն ու Բեդր-էդ-դինի ու իր աղջկա՝ Սիտտ-ալ-Հուսնի, ծննդյան օրերը նույնպես համընկնում են։

Եվ նա վերցրեց այդ թուղթն ու գնաց սուլթանի մոտ և պատմեց նրան, թե ինչ է պատահել, սկզբից մինչև վերջ։ Եվ թագավորը զարմացավ ու հրամայեց անմիջապես գրի առնել այդ պատմությունը։ Եվ վե-

զիրը նստեց ու իր եղբորորդուն սպասեց այդ ամբողջ օրը, բայց նա չեկավ, և սպասեց երկրորդ օրը և երրորդ օրը, մինչև յոթերորդ օրը, և նրանից ոչ մի լուր չստացավ: Եվ այնժամ վեզիրն ասաց. «Ես անպայման մի բան պիտի անեմ, որ ինձանից առաջ ոչ ոք չի արել»:

Եվ նա վերցրեց թանաքն ու գրիչը և թղթի վրա գծագրեց սենյակի ամբողջ դասավորությունը և նշեց, որ խորպանոցը գտնվում է այսինչ տեղում, իսկ այսինչ վարագույրը՝ այսինչ տեղում, և գրի առավ բոլորը, ինչ որ սենյակում կար, իսկ հետո փաթեթ արեց գրածը և հրամայեց հավաքել իրերը, իսկ շալման, թասակը, փողն ու քսակը կնքեց և որոշեց սպասել մինչև այն օրը, երբ կժամաներ իր եղբորորդին՝ Հասան բարեցին:

Իսկ ինչ վերաբերում է վեզիրի աղջկան, ապա նրա ամիսները լրացան ու նա լուսնի պես մի տղա բերեց, գեղեցկությամբ, հմայքով, կատարելությամբ ու փայլով հոր նման, և կտրեցին նրա պորտը և աչքերը ծարրեցին ու հանձնեցին դայակներին ու կոշեցին Աջիբ:

Եվ օրը նրա համար ամիս էր, իսկ ամիսը՝ տարի: Եվ երբ նրա գրված խով անցավ յոթ տարի, վեզիրը հանձնեց նրան մի ուսուցչի ու հանձնարարեց դաստիարակել, սովորեցնել գրել-կարդալ և լավ կրթություն տալ: Եվ Աջիբը դպրոցում մնաց շորս տարի և սկսեց կովել դպրոցականների հետ ու հայհոյել նրանց ու ասել. «Ո՞վ է ձեզանից ինձ հավասար, ես Կահիրեի վեզիրի տղան եմ»: Եվ երեխաները հավաքվեցին ու գանգատվեցին ավագին այն ամենի համար, ինչ-որ կրել էին Աջիբից, և ավագը նրանց ասաց. «Վաղը, երբ նա գա, ես ձեզ կսովորեցնեմ, թե ինչ պիտի ասեք նրան, և նա այլևս ոտք չի դնի դպրոց»: Երբ վաղը նա գա, հավաքվեք նրա շուրջը և մեկդ մյուսին ասացեք. «Ալլահը վկա, միայն նա կխաղա մեզ հետ այս խաղը, ով ասի իր հոր ու մոր անունը, իսկ ով չի իմանում իր հոր ու մոր անունը, նա մեզքի ծնունդ է և չի խաղա մեզ հետ»:

Եվ երբ առավոտը բացվեց, ու նրանք դպրոց եկան, և հայտնվեց Աջիբը, երեխաները շրջապատեցին նրան ու ասացին. «Մենք մի խաղ պիտի խաղանք, բայց միայն նա կխաղա մեզ հետ, ով ասի իր հոր ու մոր անունը»: Եվ բոլորը պատասխանեցին. «Լավ»: Եվ մեկն ասաց. «Իմ անունը Մաջիդ է, մորս անունը՝ Ալավիա, իսկ հորս՝ անունը՝ Իզ էդդին»: Մյուսը նույնպես ասաց իր և իր հոր ու մոր անունը: Եվ երբ հերթը հասավ Աջիբին, նա ասաց. «Իմ անունը Աջիբ է, մորս անունը՝ Սիտուալ-Նուսն, իսկ հորս անունը՝ Ենս-էդդին, և նա Կահիրեի վեզիրն է»: Բայց նրա վրա գոռացին «Վեզիրը-բո հա՛յրը չէ» — «Վեզիրն ավագան

իմ հայրն է», — առարկեց Աջիբը: Եվ այդ ժամանակ երեխաներն սկսեցին ծիծաղել նրա վրա ու ծափ զարկել և ասացին. «Ոչ ոք չգիտի, թե ով է նրա հայրը: Վեր կաց, գնա մեր մոտից, մեզ հետ կխաղա միայն նա, ով գիտի, թե ինչ է իր հոր անունը»:

Եվ երեխաները իսկույն ցրվեցին ու սկսեցին ծիծաղել Աջիբի վրա, և նրա սիրտը նեղվեց, ու նա խեղդվում էր լացից: Եվ ավագը նրան ասաց. «Մենք գիտենք, որ վեզիրը քո պապն է, քո մայր Սիտտ-ալ-Հուսնի հայրը, բայց ոչ քո հայրը: Իսկ քո հորը դու չես ճանաչում, և ոչ էլ մենք չենք ճանաչում, քանի որ սուլթանը քո մորը կուզիկ ձրապանի հետ է ամուսնացրել և եկել են ջիններն ու քնել մորդ հետ, և դու չունես հայր, որին ճանաչեին մարդիկ: Չմտածես, ուրեմն, հավասարվել դպրոցի երեխաներին, մինչև չիմանաս, թե ո՞վ է քո հայրը, այլապես նրանց մեջ դու անառակության ծնունդ կհամարվես: Չե՞ս տեսնում, որ առևտրականի որդին հոր անունով է կոչվում: Իսկ դո՞ւ՝ Քո պապը Կահիրեում վեզիր է, իսկ քո հորը մենք չենք ճանաչում ու ասում ենք՝ դու հայր չունես: Խելքի արի»:

Եվ երեխաների մեջ ավագույնից լսելով այս խոսքերն ու իրեն խայտառակող զրույցը, Աջիբն իսկույն վեր կացավ ու գնաց մոր՝ Սիտտ-ալ-Հուսնի մոտ ու սկսեց գանգատվել նրան՝ լաց լինելով, բայց լացը նրան թույլ չէր տալիս խոսել: Եվ երբ մայրը լսեց նրա խոսքերն ու հառաչանքները, նրա սիրտը կրակ ընկավ, ու նա հարցրեց. «Ո՞վ տղաս, ինչո՞ւ ես լաց լինում: Պատմի՛ր ինձ, թե ի՞նչ է պատահել քեզ»:

Եվ Աջիբը պատմեց նրան, թե ինչ է լսել ինքը երեխաներից ու ավագից ու հարցրեց. «Ո՞վ է հայրս, մայրիկ»: — «Քո հայրը Կահիրեի վեզիրն է», — ասաց Սիտտ-ալ-Հուսնը, բայց Աջիբը բացականչեց. «Մի՛ խաբիր ինձ, վեզիրը քո՞ հայրն է, ո՞չ թե իմ: Ո՞վ է իմ հայրը: Եթե դու ինձ իսկությունը շասես, ես ինձ կսպանեմ այս դաշույնով»:

Եվ լսելով նրա հոր մասին, Սիտտ-ալ-Հուսնը լաց եղավ, հիշելով իր հորեղբոր որդուն ու մտածելով այն մասին, թե ինչպես իր երեսը բացեցին Բեդր-էդ-դին Հասան բասրեցու առջև և թե ինչ պատահեց իրենց: Եվ նա արտասանեց մի այսպիսի ոտանավոր.

«Անըր թողած իմ սրտում, սիրեցյալներս հեռացան,
Եվ հեռու է ինձանից նրանց երկիրը այնքան,
Գնացել են ու տարել համբերանքս իրենց հետ,
Եվ ա՛խ, ծանր է ինձ համար հիմա կյանքը շարաղես:
Հեռացել է նրանց հեա խնդությունս մշտակյան,
Արբաս տխուր է հիմա, քուն ու հանդիստ էլ չկան»:

Դառն արցունք եմ ես թափել մեր բաժանման րոպեին,
Ու հիմա էլ ես մենակ արտասովում եմ գառնազ, ու
Երբ կարոտից ես կրկին նրանց տեսնել եմ ուզում,
Եվ թախծանքիս մեջ անհուն սպասում եմ ես իզուր,
Վշտատուշոր իմ սրտում նրանց կերպարն է հառնում,
Ու ինձ պատում են դարձյալ վիշա ու տանջանքն անհատնում:
Ո՛վ դուք, որոնց հուշն է լուկ իմ հագուստը ոսկեթեկ,
Չէ՞ որ ձեր սերն է միայն ինձ հագուստի պես պատելի:
Սիրելիներ իմ հոգու ա՛խ, դեռ որքա՞ն ժամանակ
Ինձե՛րց հեռու՝ հեռավոր երկրներում պիտ մնաք»:

Եվ նա սկսեց լաց ու կոծ, և նրա որդին՝ նույնպես: Եվ հանկարծ նրանց մոտ մտավ վեզիրը և տեսնելով նրանց արտասուքը, նրա սիրտը ճմլվեց, ու նա հարցրեց. «Ինչո՞ւ եք լալիս»: Եվ Սիտա-ալ-Հուանը պատմեց նրան, ինչ որ եղել էր իր տղայի և Երեխաների միջև, դպրոցում: Եվ վեզիրը նույնպես լաց եղավ, հիշելով իր եղբորը և այն, ինչ եղել էր իրենց միջև և ինչ որ կատարվել էր աղջկա հետ, և չգիտեր, թե ինչ է թաքնված այդ գործի մեջ:

Եվ վեզիրն իսկույն գնաց ու բարձրացավ դիվան և, մտնելով թագավորի մոտ, պատմեց նրան պատահածի մասին ու նրանից թուլլավություն խնդրեց դեսլի արևելք մեկնելու և Բասրա քաղաքն ուղևորվելու, որպեսզի հարց ու փորձ անի իր եղբորորդու մասին, և խնդրեց թագավորին նաև, որ բռնոր երկրներին հրովարտակ գրի, որպեսզի ինքը կարողանա իր եղբորորդուն իր հետ վերցնել, որտեղ որ նրան գտնի:

Եվ նա լաց եղավ սուլթանի առջև, և սուլթանի սիրտը շարժվեց, ու նա հրովարտակ գրեց բոլոր երկրներին ու շրջաններին:

Եվ վեզիրն ուրախացավ ու սուլթանին բարի մաղթեց ու հրաժեշտ տվեց ու անմիջապես դուրս եկավ ու պատրաստվեց ճամփորդության, վերցնելով ինչ որ անհրաժեշտ էր և առնելով իր հետ նաև աղջկան ու թոռանը՝ Աջիբին: Եվ վեզիրը գնաց առաջին օրը, և երկրորդ օրը, և երրորդ օրը, մինչև հասավ Դամասկոս քաղաքը, և նա գտավ այնտեղ ծառերն ու առուները այնպես, ինչպես այդ մասին ասել է բանաստեղծը.

Երբ անցկացրինք Գամասկոսում օր ու գիշեր՝ վատ ու լավ,
Դախտը պայծառ մեր օրերը սև շղաթձնել խոստացավ,
Մենք քնեցինք, և անհոգ էր շամանդազը վաղորդյան,
Առավուտն էլ մեղ պարուբեց լույս ուտերով շողափայլ,
Արշալույսն էր փայլում պայծառ հատիկներով մարգարիտ,
Որ ոստերից քամին պոկում, շաղ էր տալիս օդի մեջ:
Կարդում էին հավթերն իրենց գիրքը՝ ոսկե լճերի,
Քամին գրում, ամպերը լուրթ կետեր գնում էջերին:

Եվ վեզիրը իջևանեց Քարերի հրապարակում ու վրաններ խփեց ու ասաց իր ծառաներին. «Մենք այստեղ երկու օր կհանգստանանք»: Եվ ծառաներն իրենց գործով քաղաք գնացին. մեկը՝ ծախելու, մեկը՝ առնելու, մեկը բաղնիք զնալու, մյուսը՝ այցելելու Օմեյյանների բրդիների մզկիթը, որի նմանը աշխարհում չկա:

Իսկ Աջիբը ներքինու հետ դուրս եկավ, և նրանք գնացին քաղաքում դբոսներու, և ներքինին Աջիբի հետեից էր գնում, ձեռքին մի այնպիսի գավազան, որով եթե ուղտին հարվածեին, ընկած տեղից վեր չէր կենա:

Եվ երբ Դամասկոսի բնակիչները տեսան Աջիբին ու նրա վայելուչ կազմվածքն ու փայլն ու կատարելությունը (իսկ նա բացառիկ գեղեցկույթյան տեր տղա էր՝ նորք ու գիրգ, հյուսիսային քամուց մեղմ, և ավելի անուշ, քան մաքուր ջուրը ծարավածի համար և ավելի քաղցր, քան առողջությունը հիվանդի համար). նրա հետեից գնաց ամբողջ ժողովուրդը և նրա հետեից վազում էին, առաջ էին ընկնում նրանից, նլստում էին ճանապարհին, որպեսզի, երբ նա անցնի, նայեն նրան: Եվ ստրուկը, նախասահմանություն կամքով, կանգ առավ նրա հօր՝ Բեդր-էդ-դին Հասանի, կրպակի մոտ (իսկ Հասանի դեմքին բուսել էր ազվամազ և այս տասներկու տարիների ընթացքում նրա միտքը կատարյալ էր դարձել, ու խոհարարը մեռել էր արդեն, և Բեդր-էդ-դին Հասանն ստացել էր նրա փողն ու կրպակը, քանի որ խոհարարը դատավորների ու վկաների առջև նրան իր որդին էր ճանաչել):

Եվ այն օրը, երբ նրա որդին ներքինու հետ կանգ առավ կրպակի առջև, Բեդր-էդ-դինը նայեց իր որդի Աջիբին ու տեսավ, որ նա խիստ գեղեցիկ է, նրա հոգին թրթռաց և արյունը եռաց հարազատ արյան կոշից ու սիրտը կապվեց նրան:

Իսկ նա եփում էր նուան քաղցրաշաղ հատիկներ, և ալլահի կողմից ներշնչված սերը լեռնացավ նրա մեջ, ու նա կանչեց իր որդի Աջիբին ու ասաց. «Մ՛վ տեր, ո՛վ դու, որ տիրեցիր հոգուս ու սրտիս և ալեկոծեցիր ողջ էությունս, շե՞ս մտնի ինձ մոտ, որպեսզի բուժես իմ սիրտը և ուտես իմ եփածից», — և նրա աչքերից, հակառակ իր կամքին, արցունքներ հոսեցին, ու նա մտածեց այն մասին, թե ի՞նչ է եղել ինքը և ի՞նչ է դարձել:

Եվ երբ Աջիբը լսեց իր հոր խոսքերը, նրա սիրտը հուզվեց, և նա նայեց ներքինուն ու ասաց. «Իմ սիրտը հուզվեց այս խոհարարի համար. նա կարծես բաժանված լինի իր որդուց: Մտնե՛նք նրա մոտ, որպեսզի ամոքենք նրա սիրտը և ուտենք նրա հրամցրածը: Կարող է պատահել, սր մեր այս արարքի համար ալլահը մեզ մեր հոր հետ միացնի»: Բայց

ներքինին, լսելով Աջիբի խոսքերը, բացականչեց. «Ա՛յ թե լավ բան է, ալլահը վկա: Վեզիրի տղան ճաշարանո՞ւմ պիտի ճաշի: Ես հեռու եմ բշուժ մարդկանց այս մահակով, որպեսզի նրանք քեզ չնայեն, և ես հանգիստ չեմ լինի քեզ համար, եթե դու երբևիցե մտնես այդ կրպակը»:

Եվ, լսելով այդ խոսքերը, Բեդր-էդ-դին Հասանը զարմացավ ու դարձավ դեպի ներքինին, և արցունքները հոսեցին նրա այտերով: Եվ այնժամ Աջիբն ասաց ներքինուն: «Սիրտս սիրեց նրան»: Բայց ներքինին պատասխանեց. «Թո՛ղ այդ խոսքերը և մի՛ մտիր»: Եվ այդտեղ Աջիբի հայրը դիմեց ներքինուն ու ասաց. «Ո՞վ ավագ, ինչո՞ւ չես ուզում ապաքինել սիրտս ու չես մտնում ինձ մոտ: Ո՞վ դու, որ սպիտակ միջուկով սև շագանակի ես նման, ո՞վ դու, որի մասին նկարագրողներից մեկըն ասել է...»

Եվ ներքինին ծիծաղեց ու ասաց. «Ի՞նչ ասացիր: Ալլահի սիրուն, ասա, բայց, կարճ կապիր»: Եվ Բեդր-էդ-դինն անմիջապես արտասանեց այսպիսի ոտանավոր.

«Թե նա այդպես ազնիվ ու կիրթ, նվիրված չլիներ,
Մեծերի տան չէր վայելի վստահություն աներեր,
Եվ, ո՞վ ծառա, կանտոնոցը չէին թողնի նրան ներս.
Հրեշտակն է նրան ծառա, գեղեցիկ է նա այնպես»:

Եվ ներքինին զարմացավ այս խոսքերից ու վերցնելով Աջիբին, մտավ ճաշարան, և Բեդր-էդ-դին Հասանը խոր ամանը լցրեց նուան հատերով (իսկ դրանք նուշի ու շաքարի հետ էին եփված), և երկուսով սկսեցին միասին ուտել: Եվ Բեդր-էդ-դին Հասանն ասաց. «Գուք ուրախացրիք մեզ, անուշ արեք ողջությամբ ու բավականությամբ»: Հետո Աջիբն ասաց իր հորը. «Նստի՛ր, կեր մեզ հետ, գուցե ալլահը մեզ միացնի մեր ուզածի հետ»: Եվ Բեդր-էդ-դին Հասանը հարցրեց. «Ո՞վ տղաս, չնայած քո մատաղ հասակին, դու արդեն գիտե՞ս, թե ինչ բան է սիրածից անջատված լինելու ցավը»:— «Այո՛, հորեղբայր,— պատասխանեց Աջիբը,— իմ սիրտն այրված է սիրածից բաժանվելուց. գա իմ հայրին է, և մենք պապիս հետ ճանապարհ ենք ընկել ու որոնում ենք նրան դոնազան երկրներում: Վա՛յ ինձ, ե՞րբ մենք կմիանանք»:

Եվ նա դառնագին լացեց, և իր հայրն էլ լացեց նրանից բաժանված լինելու պատճառով, և նրա համար, որ նա լալիս էր: Եվ նա հիշեց սիրելիներից բաժանվելն ու հորից ու մորից հեռու լինելը, և ներքինին նույնպես վշտացավ նրա համար:

Եվ նրանք կերան ու կշտացան, իսկ հետո դուրս եկան Բեդր-էդ-դին Հասանի կրպակից, և սա զգաց, որ իր հոգին անջատվեց-թռավ իր մարմնից ու գնաց նրանց հետ, և շկարողացավ մի ակնթարթ էլ համբերել առանց նրանց:

Եվ նա փակեց կրպակն ու գնաց նրանց հետևից, շիմանալով, որ դա իր տղան է, և արագացրեց քայլերը, որպեսզի հասնի նրանց, նախքան նրանք մեծ դարպասից դուրս կգային: Եվ ներքինին դարձավ նրա կողմն ու հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»: Եվ Բեդր-էդ-դին Հասանն ասաց նրան. «Երբ դուք իմ մոտից դուրս եկաք, ես զգացի, որ իմ հոգին ձեզ հետ հեռացավ: Իսկ ես քաղաքում, դարպասից այն կողմը, գործ ունեմ, և ես ցանկացա ուղեկցել ձեզ, որպեսզի այդ գործը վերջացնեմ ու վերադառնամ»:

Եվ այդտեղ ներքինին բարկացավ ու ասաց Աջիբին. «Հենց սրանից էլ ես վախենում էի: Մենք կերանք մի կտոր բան, որը չարաբաստիկ բան դուրս եկավ ու բարեգործութուն է համարվում մեզ համար, և խոհարարն այժմ մեր հետևից ամեն տեղ գալիս է»:

Եվ Աջիբը շրջվեց ու, տեսնելով խոհարարին, զայրացավ ու նրա դեմքը կարժեց, և նա ներքինուն ասաց. «Թող նա մուսուլմանների ճանապարհով գնա, իսկ երբ մենք հասնենք վրանների մոտ ու տեսնենք, որ նա մեզ հետևում է, կվռնդենք նրան»:

Եվ նա գլուխը խոնարհեց ու գնաց, ու ներքինին՝ նրա հետևից: Եվ Բեդր-էդ-դին Հասանն էլ նրանց հետևից գնաց մինչև Քարերի հրապարակը: Եվ նրանք մոտեցան վրաններին ու շրջվեցին և տեսան Հասանին, այնժամ Աջիբը զայրացավ ու վախեցավ, որ ներքինին ամեն ինչ կպատմի իր պապին:

Եվ նա զայրույթով համակվեց ու վշտացավ, որ իր մասին կասեն. «Նա գնացել է ճաշարան, և խոհարարը նրանց հետևից է ընկել», — և շուտ եկավ ու տեսավ, որ Հասանի աչքերն իր աչքերին են նայում, և կարծես թե հոգին լքեց նրա մարմինը:

Եվ Աջիբը կարծեց, թե նրա աչքերը թշնամու աչքեր են, կամ թե նա անառակության ծնունդ է, և, առավել ևս զայրանալով, մի քար վերցրեց ու խփեց իր հորը, և Բեդր-էդ-դին Հասանն անզգայացած ընկավ, և արյունը հոսեց նրա երեսով:

Եվ Աջիբը ներքինու հետ գնաց գեպի վրանները, իսկ Բեդր-էդ-դին Հասանը, ուշքի գալով, սրբեց արյունը և, պատռելով իր չալմայից մի կտոր, գլուխը կապեց և սկսեց նախատել իրեն ու ասաց. «Նա վիրավա-

րեցի տղային: Ես կրպակս փակեցի ու նրանց հետևից եկա, և նա կարծեց, թե ես թշնամի եմ»: Եվ նա իր մոր կարոտն զգաց, որը Բասրայում էր, և լաց եղավ նրա համար ու արտասանեց.

«Թե խնդրեիր արդարութուն, կանարգեր մեր բախտին,
Մի՛ կշամագիր, կշամբանքի երեք նա չէ արժանի,
Ա՛ն, ինչ որ տան, ու վշտերդ ձգի՛ր քամուն, որ տանի,
Թե՛ տառապանք, թե՛ խնդութուն շաա կտեսնես քո ճամփին:

Դրանից հետո Բեդր-էդ-դինը շարունակեց ուտելիք վաճառել, իսկ վեզիրը՝ նրա հորեղբայրը, Դամակոսում մնաց երեք օր, իսկ հետո դուրս եկավ և ուղևորվեց դեպի Հիմս ու հասավ այնտեղ, և ճանապարհին, ուր էլ որ կանգ էր առնում, որոնում էր: Եվ նա շարունակեց ճանապարհը, մինչև հասավ Դիարբեքիր, և՛ Մարդին, և՛ Մոսուլ, և ուղևորութունը շղաղարեցրեց, մինչև հասավ Բասրա: Եվ մտնելով այնտեղ և տեղավորվելով՝ նա գնաց սուլթանի մոտ ու հանդիպեց նրան, և սուլթանը հարգանք մատուցեց նրան ու հատկացրեց նրան պատվավոր բնակարան ու հարցրեց նրա գալստյան պատճառը:

Եվ վեզիրը պատմեց իր պատմությունը և ավելացրեց, որ վեզիր Նուր-էդ-դին Ալին իր եղբայրն է, և սուլթանը նրա եղբոր վրա հրավրեց ավաճի ողորմածությունն ու ասաց. «Ո՛վ տեր, նա իմ վեզիրն էր տասնհինգ տարի առաջ, և ես շատ էի սիրում նրան, և նա մեռավ ու թողնեց որդուն, բայց նա հոր մահվանից հետո այստեղ մնաց միայն մեկ ամիս, ու անհետացավ, և մենք այլևս նրանից լուր չենք ստացել: Բայց նրա մայրը մեզ մոտ է, քանի որ նա իմ նախկին վեզիրի աղջիկն է»:

Լսելով սուլթանից, որ իր եղբորորդու մայրը ողջ է, վեզիր Շեմս-էդ-դինը ուրախացավ ու ասաց. «Ո՛վ արքա, ես ուղում եմ տեսնել նրան»: Եվ թագավորն իսկույն թույլ տվեց նրան, և Շեմս-էդ-դինը գնաց նրա մոտ՝ իր եղբայր Նուր-էդ-դինի տունը: Եվ նա հայացքը մանածեց իր շուրջը և համբուրեց տան շեմքն ու մտածեց իր եղբայր Նուր-էդ-դին Այու մասին, որը մեռել էր օգար երկրում, և լացեց ու արտասանեց.

«Տունն եմ գնում, տունն եմ գնում Լեյլայի,
Համբուրում եմ մերթ աչս, մերթ այն պատը ես,
Բայց պատը չէ, որ սիրում է հոգին իմ,
Այլ այն հոգին, որ տարել է այդ տան մեջ»:

Եվ նա դռնով մտավ մեծ բակն ու տեսավ մի ուրիշ դուռ՝ քարե կամարով, որ կապված էր ամեն գույնի մարմարով, և անցավ տան միջով ու նայեց, հայացքը շորս կողմը դարձրեց ու տեսավ իր եզրայր Նուր-էդ-գինի անունը, որ գրված էր ոսկեղեն թանաքով:

Եվ, մոտենալով արձանագրությանը, նա համբուրեց այն ու լաց եղավ ու հիշեց եղբորից բաժանվելն ու արտասանեց այսպիսի բեյթեր.

«Արեգակին, հենց ծագում է, քո մասին եմ հարցնում,
Հարց եմ տալիս ես փայլտեղին, հենց որ ցոլում է երկնում,
Երբ քնում եմ, հուր կտրոտի ծածկոցն է ինձ պարուրում,
Բայց անմունչ ես կրում եմ անհուն վիշտը իմ սրտում:
Սիրելին՛ր, թե դեռ երկար պիտի հեռու մենք մնանք,
Ապա գիտցեք, բաժանումը սիրտս է մաշում, հոշոտում:
Իսկ թե դուք դաք, ու ձեր տեսքը անքուն աչքերս տեսնեն,
Ապա վիշտս կփարտավի ու ես կտրտա կառնեմ:
Մի՛ մտածեք, թե ուրիշով զբաղված եմ ես տխտեղ,
Հոգիս ուրիշ սիրո համար բոլորովին շունի տեղ»:

Եվ նա առաջ գնաց ու մոտեցավ իր եղբոր կնոջ՝ Բեդր-էդ-դին Հասան բասրեցու մոր, սենյակին: Իսկ նա որդու բացակայության ամբողջ ժամանակ անդադար հառաչել ու լաց էր եղել գիշեր ու ցերեկ, և երբ տարիները շարունակեցին իրենց ընթացքը նրա համար, նա սենյակի մեջ մարմարե դամբարան կառուցեց տղայի համար ու լաց էր լինում նրա վրա գիշեր ու ցերեկ և քնում էր միայն այդ դամբարանի մոտ:

Եվ երբ վեզիրը մոտեցավ նրա բնակարանին, լսեց նրա ձայնը և, կանգ առնելով դռան առջև, լսեց, թե ինչպես նա դամբարանի վրա ասում է.

«Ո՛վ գերեզման, մի՞թե նրա գեղեցկությունը քո գրկում կորցրիք,
Մի՞թե մտրեց քո մեջ լույսդ շքնադագեղ, պոյժտոտափայլ դեմքը իր,
Ո՛վ գերեզման, ոչ պարտեղ ես ծաղկափթիթ, ոչ էլ երկնի ջինջ կամար,
Ինչպե՞ս քո մեջ պարփակեցիր արևը վառ ու մատղաշ ոստը դալար»:

Եվ երբ նա այդպես էր ասում, հանկարծ ներս մտավ նրա մոտ վեզիր Շեմս-էդ-դինը և ողջունեց նրան ու հայտնեց, որ ինքը նրա ամուսնու եղբայրն է, իսկ հետո պատմեց, ինչ որ պատահել էր, ու պարզաբանեց նրան ամբողջ պատմությունը և տեղյակ դարձրեց, որ նրա որդի Բեդր-էդ-դին Հասանը մի ամբողջ գիշեր անց է կացրել իր աղջկա հետ տասը տարի առաջ, իսկ առավոտյան՝ անհետացել: «Իսկ իմ աղջիկը հղիացել է քո տղայից ու տղա է բերել, որը ինձ հետ է, և նա քո թոռն է և քո որդու զավակն իմ աղջկանից»:

Եվ լսելով այդ լուրն իր տղայի մասին ու իմանալով, որ նա ողջ է, և, տեսնելով իր տագրոջը, կինն ընկավ նրա ոտքերը և սկսեց համբուրել դբանք ու ասել.

«Ձեր գալստյան լրարերը թող ավահիցս պարզե առնի,
Իմ վշտի մեջ նա հաղորդեց ինձ մի լուր խիստ ուրախալի,
Քե գոհ լինեմ նա մի բանով, որ շարդված է ու փշրված,
Սիրտս նրան ես կտայի, սիրտս վշտից պատառոտված»:

Շատ վեզիրը մաքդ ուղարկեց Աջիրի հետևից, և երբ նա եկավ, տատիկը գրկեց նրան ու լացեց, և վեզիր Շեմս-էդ-դինը ասաց նրան. «Շիմա լաց լինելու ժամանակ չէ, հիմա ժամանակն է, որ դու պատրաստվես, որպեսզի մեզ հետ գաս եգիպտական հողը: Գուցե թե ավահը մեզ և քեզ միացնի քո որդու և իմ եղբորորդու հետ»:

Եվ նա պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում»,— և անմիջապես վեր կացավ ու հավաքեց իրերն ու գանձերն ու աղջիկներին և անմիջապես ճանապարհի պատրաստութուն տեսավ: Իսկ վեզիր Շեմս-էդ-դինը գնաց Բասրայի սուլթանի մոտ ու հրաժեշտ տվեց նրան, և սուլթանն ուղարկեց նրանց հետ նվերներ ու հազվագյուտ իրեր՝ Եգիպտոսի թագավորի համար:

Եվ Շեմս-էդ-դինն անմիջապես ճամփա ընկավ և, հասնելով Գամասկոս քաղաքի արվարձաններին, իջևանեց Քանունում¹ և վրաններ խփեց ու իր հետ գնացողներին ասաց. «Մենք այստեղ մի շաբաթ կմընանք, մինչև որ սուլթանի համար նվերներ ու հազվագյուտ իրեր առնենք»:

Եվ այնժամ Աջիրը դուրս եկավ ու ասաց ներքինուն. «Ով կյաիկ, ուզում եմ ման գալ: Արի շուկա գնանք, մտնենք Գամասկոս ու իմանանք, թե ինչ է պատահել այն խոհարարին, որի մոտ մենք կերանք, իսկ հետո գլուխը վիրավորեցինք: Նա մեզ լավութուն արեց, և մենք շարաբար վարվեցինք նրա հետ»:

Եվ ներքինին պատասխանեց. «Լսո՛ւմ եմ և հնազանդվում»: Եվ Աջիրը ներքինու հետ դուրս եկավ վրանից՝ արյան կանչով մղված դեպի հայրը, և նրանք անմիջապես քաղաք մտան ու առանց կանգ առնելու գնացին, մինչև որ հասան ճաշարանի մոտ: Եվ նրանք տեսան, որ խոհարարը կանգնած է կրպակում (իսկ ժամանակը մոտենում էր մայրամուտին), և այնպես պատահեց, որ նա եփում էր նռան հատիկներ:

¹ Քանուն — Գամասկոսից դեպի հյուսիս գտնվող իջևանատեղի, որտեղ կահոյ կին առնում ուղևորների քարավանները:

Եվ երբ նրանք մոտեցան, և Աշիբը նայեց նրան, իր մեջ ձգտում զգաց ղեպի նա, ու տեսավ էրա ճակատին իր խփած քարի հետքը և ասաց նրան. «Խաղաղություն քեզ: Իմացած եղի՛ր, որ իմ սիրաբ քեզ հետ է»։ Եվ Բեդր-էդ-դինի ներսում ամեն ինչ ակեկոծվեց, երբ նա տղային նայեց, և նրա սիրտը թրթռաց, ու նա գլուխը գետին հակեց և ուզեց, բայց չկարողացավ լեզուն պտտեցնել բերանում, իսկ հետո գլուխը բարձրացրեց ղեպի որդին, խոնարհ ու նվաստ, և արտասանեց այսպիսի բեյթեր.

«Ձգտում էի սիրտձնելիս, բայց երբ տեսա, խնդությունից
 ևս չքա թոցրած, կորցրի սրտիս ուժը և լույսը տշքերիս»
 Ես երկյուղած, պատկառանքով խոնարհեցի գլուխս ցած,
 Ա շահացի հուզմունքներս ծածկել, սակայն իզուր շանքեր...
 Ես իմ հոգում պահել էի կշատմբանքեր հազար-հազար,
 Բայց երբ նրանց հանդիպեցի, մեկն էլ տեսի չկարեցա»։

Հետո նա ասաց նրանց. «Ամոքեցե՛ք սիրտս ու կերե՛ք իմ եփածը: Այլահը վկա, հենց որ քեզ նայեցի, սիրտս թրթռաց ու ես, խելքս կորցրած, քո հետևից եկա»։ «Այլահը վկա, դու մեզ սիրում ես,— ասաց Աշիբը,— և մենք քեզ մոտ մի կտոր բան կերանք, իսկ դու դրա հետևանքները մեզ վրա թողի՛ր ու մեզ խայտառակել ուզեցիր: Բայց մենք մի բան կուտենք քեզ մոտ, սլայմանով միայն, որ դու երգվես դուրս չգալ մեր հետևից ու շհետեել մեզ: Այլապես մենք ալևս շինք վերադառնա քեզ մոտ: Իսկ մենք այստեղ մնալու ենք մի շաբաթ, մինչև որ իմ պապը թագավորի համար ընծաներ առնի»։

Եվ Բեդր-էդ-դինն ասաց. «Թող ձեր ուզածը լինի»։ Եվ Աշիբը ներքինու հետ կրույակ մտավ, և այնժամ Բեդր-էդ-դինը մատուցեց նրանց նոան հատերով լի թասը, և Աշիբն ասաց. «Կե՛ր մեզ հետ: Գուցե, ալ լահր թեթևացնի մեր դառնությունը»։ Եվ Բեդր-էդ-դինն ուրախացավ ու սկսեց նրանց հետ ուտել, ակնապիշ նայելով Աշիբի դեմքին, և նրա սիրտը ու զգացմունքները կապվեցին նրան, բայց Աշիբն ասաց. «Ես չասացի՞, միթե, որ դու սիրահարված ես ու ձանձրացնող: Բավական է իմ երեսին նալես»։ Եվ, լսելով իր տղայի ձայնը, Բեդր-էդ-դինն արտասանեց.

«Ես քեզ համար, իմ հոգու մեջ, ծածուկ գաղտնիքս եմ պահել,
 Իմ լուսթյամբ կնքված է այն, ու չի գտնի ոչ մի ելք,
 Ինձ չգ լուանին ամոթ բերող՝ գեղեցկությամբ տնասհման
 Ին հմայքով արշալույսի խանդի տղբյուր ու ցասման,
 Մեր մեջ անհուն ձգտում ու կիրք ու ցանկություն հարուցում
 Եվ խոսաանում է տեսական, երջանկավետ հանդիպում»։

Մի՞թե տասրեց պիտի հարգեմ, արտի մեանն՝մ ես ծարսով,
Դեմքդ՝ դրսխտ, և բերանիդ նեկաարն՝ ազրչուր ինձ համար»:

Եվ Բեդր-էդ-դինն սկսեց կերակրել մեկ Աջիբին, մեկ՝ ներքինուն, և նրանք կերան, մինչև որ կշտացան, իսկ հետո վեր կացան, և Հասան բասրեցին էլ վեր կացավ ու նրանց ձեռքերին ջուր լցրեց ու գոտկամիջից հանելով մետաքսե անձեռոցիկը, սրբեց նրանց ձեռքերն ու ցողեց վարդաջրով և ապա կրպակից դուրս եկավ ու, վերադառնալով, գավաթով խմելու ջուր բերեց՝ իրանված վարդաջրի ու մուշկի հետ, և, նրանց առջև դնելով, ասաց. «Ավարտե՛ք ձեր շնորհը»:

Եվ Աջիբը վերցրեց ու խմեց, ապա գավաթը մեկնեց ներքինուն, և նրանք խմեցին ,մինչև որ փորները լցվեց և երկուսն էլ կշտանալով կրշտացան, իրենց համար անսովոր շափով ուտել-խմելով: Եվ այնուհետև նրանք դուրս եկան և շտապ գնացին, մինչև հասան վրաններին, և Աջիբը գնաց իր տատիկի՝ իր հայր Բեդր-էդ-դին Հասանի մոր մոտ, և սա համբուրեց թոռնիկին ու մտածեց իր որդի Բեդր-էդ-դին Հասանի մասին և սկսեց լաց լինել, ապա ասաց.

«Հույս ունեի, որ մենք դարձյալ կհանդիպենք դեռ իրար:
Չէ՞ որ ապրել ձեռնից հետու, ձեզնից բաժան չեմ ուզում,
Երդվում եմ ես, դեպի ձեզ է ձգտում հոգիս տանջահար,
Տեր աստվածն է կարդում թարուն զազանիքները մեր հոգու»:

Եվ հետո նա հարցրեց Աջիբին. «Որտե՞ղ էիր, տղաս»: Եվ նա պատասխանեց. «Դամասկոս քաղաքում»:

Ապա նա մատուցեց թոռնիկին նուան հատիկներով (իսկ դրանք շատ էլ քաղցր չէին) թապը և ասաց ներքինուն. «Տիրոջդ հետ նստի՛ր»:

Եվ ներքինին ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, ուտելու ցանկություն չունենք»,— և նստեց: Իսկ ինչ վերաբերում է Աջիբին, ապա, երբ նստեց, նրա փորը լիքն էր նրանով, ինչ-որ կերել ու խմել էր: Եվ նա մի կտոր հաց վերցրեց ու թաթախեց նուան հատերի հյութի մեջ ու կերավ, և գտավ, որ բավականաչափ քաղցր չէ, քանի որ շատ կուշտ էր: «Թյու, ի՞նչ զզվելի ուտելիք է»,— բացականչեց նա: Եվ նրա տատն ասաց. «Ո՞վ տղաս, գու վատաբանում ես իմ ուտելիքը, իսկ ես ինքս եմ եփել այն, և ոչ ոք, բացի քո հայր Բեդր-էդ-դին Հասանից, չի կարող այնպես եփել դա, ինչպես ես»: «Ո՞վ տիրուհի,— ասաց Աջիբը,— քո եփածը զզվելի է: Մենք հենց նոր քաղաքում մի խոհարար տեսանք, որն այնպիսի նուան հատեր է եփում, ոչ դրանց հոտը սիրտ է քաշում, իսկ

նրա եփածը ուզում ես ամբողջովին ուտել, Իսկ քո եփածը նրա եփածի համեմատութեամբ ոչինչ բան է»:

Լսելով այդ խոսքերը, Աջիբի տատը խիստ զայրացավ ու նայեց ներքինուն ու ասաց. «Վա՛յ քեզ, դու փշացրել ես իմ թոռանը, որովհետև նրա հետ ճաշարան ես գնացել»:

Եվ ներքինին վախեցավ, սկսեց ժխտել ու ասաց. «Մենք ճաշարան չենք գնացել, այլ միայն մոտով անցել ենք»:— «Ալլահը վկա, մենք ներս ենք մտել ու կերել, և նրա եփածը քոնից լավն էր»,— ասաց Աջիբը:

Եվ այնժամ Աջիբի տատիկը գնաց և այդ մասին պատմեց իր ամուսնու եղբորը և նրա գայրույթը հարուցեց ներքինու վրա:

Եվ ներքինին ներկայացավ վեզիրին ու վեզիրն ասաց նրան. «Ինչո՞ւ ես դու իմ թոռան հետ ճաշարան գնացել»: Եվ ներքինին վախեցավ ու ասաց. «Չենք գնացել»: Բայց Աջիբը բացականչեց. «Մենք գնացել ու կուշտ կերել ենք նուան հատեր, և խոհարարը մեզ սառցով ու շաքարով մեղրաջուր է խմեցրել»: Եվ վեզիրն առավել ևս զայրացավ ներքինու վրա ու կրկին հարցրեց, բայց նա դարձյալ ժխտեց:

Եվ այնժամ վեզիրը բացականչեց. «Եթե քո խոսքերը ճշմարիտ են, ապա նստի՛ր, և մեր առջև կե՛ր»: Եվ ներքինին մոտեցավ և ուզեց ուտել, բայց չկարողացավ, և հացի կտորը գցեց ու ասաց. «Մ՛վ տեր, ես երեկվանից կուշտ եմ»:

Եվ վեզիրը հասկացավ, որ նա կերել է խոհարարի մոտ, և ստրուկներին հրամայեց գետին գցել նրան, և երբ նրան գետին գցեցին, սկսեց սաստիկ ծեծել:

Եվ ներքինին բղավեց ու ասաց. «Մ՛վ տեր, մի՛ ծեծիր ինձ, ես քեզ ճշմարտութունը կասեմ»: Եվ այնժամ դադարեցին նրան ծեծելուց, և վեզիրը գոչեց. «Ճշմարիտն ասա՛»: Եվ ներքինին ասաց. «Իմացած եղի՛ր, որ մենք ճաշարան մտանք այն ժամանակ, երբ խոհարարը նուան հատեր էր եփում, և նա դրանք դրեց մեր առջև ու, ալլահը վկա, ես կյանքումս այդպիսի բան չեմ կերել ու չեմ փորձել ավելի զզվելի բան, քան այն, ինչ որ մեր առջևն է»:

Եվ Բեդր-էդ-դին Հասանի մայրը բարկացավ ու ասաց. «Անպայման գնա այդ խոհարարի մոտ և նուան հատերով լցրած մի թաս բեր: Յույց տուր դա քո տիրոջը, և թող նա ասի, թե ո՛րն է լավ ու համեղ»:— «Լավ»,— ասաց ներքինին: Եվ կինը անմիջապես ներքինուն տվեց մի թաս ու կես դինար, և սա գնաց ու, մտնելով ճաշարան, խոհարարին ասաց. «Մեր տիրոջ տանը մենք վիճեցինք քո կերակրի մասին, որովհետև նրանք էլ էին նուան հատեր եփել: Տո՛ւր քո եփածից այս կես դինարի

արժեքի շափ և դո՛ւրջ եղիր, քո եփածի համար մենք կուշտ ծեծ ենք կերել»:

Եվ Բեդր-էդ-դին Հասանը ծիծաղեց ու ասաց. «Ալլահը վկա, այս կերակուրը ոչ ոք չի կարող պատրաստել, բացի ինձանից ու իմ մորից, իսկ նա հիմա հեռու երկրներում է»:

Եվ նա առավ թասն ու լցրեց կերակրով և վրան ածեց մուշկ ու վարդաջուր, և ներքինին վերցրեց թասն ու շտապ վերադարձավ նրանց մոտ:

Եվ Հասանի մայրը վերցրեց կերակուրն ու համտես արեց և, տեսնելով, թե դա ինչպես համեղ ու լավ է եփած, իմացավ, թե ո՛վ է եփել, և ճշաց ու հետո անզգայացած փովեց գետին:

Եվ վեզիրը շվարեց, ապա վարդաջուր ցողեց նրա երեսին, և մի առ ժամանակից հետո նա ուշքի եկավ ու ասաց. «Ծթե իմ տղան դեռ լույս աշխարհում է, ապա ոչ ոք այսպես չի կարող նուան հատեր եփել, բացի նրանից: Սա իմ տղան է՝ Բեդր-էդ-դին Հասանը, հաստատ ու անկասկած, քանի որ այս կերակուրը, բացի նրանից, միայն ես կարող եմ եփել, և ես եմ Բեդր-էդ-դինին սովորեցրել նուան հատեր եփելը»:

Եվ, լսելով նրա խոսքերը, վեզիրը խիստ ուրախացավ ու բացականչեց. «Օ՛, ինչպես եմ ես ձգտում իմ եղբոր տղային տեսնելու: Կտեսնե՞նք, արդյոք, որ ճակատագիրը մեզ միացնի նրա հետ: Նրան հանդիպելու համար մենք միայն մեծագոր ալլահին կաղերսենք»:

Եվ վեզիրը նույն վայրկյանին վեր կացավ և իր հետ եղած մարդկանց կանչեց ու ասաց. «Թող ձեզանից քսան հոգի գնան այդ ճաշարանը և քարուքանդ անեն այն, իսկ խոհարարին կապեն իր շալմայով ու բռնի բերեն ինձ մոտ, բայց նրան ոչ մի վնաս չպատճառեն»:

Եվ նրան ասացին. «Լավ», իսկ վեզիրն իսկույն գնաց «Ծրջանկության օթևան» և, տեսակցություն ունենալով Եգիպտոսի կուսակալի հետ, նրան ծանոթացրեց սուլթանի հրովարտականերին, որոնք իր մոտ էին, և կուսակալը դրանք իր գլխին դրեց, համբուրելով նախապես, իսկ հետո հարցրեց. «Իսկ ո՞ւր է քեզ վիրավորողը»:— «Իա մի խոհարար է»,— պատասխանեց վեզիրը: Եվ կուսակալն իր պալատականներին անմիջապես հրամայեց գնալ նրա ճաշարանը, և նրանք գնացին ու տեսան, որ ճաշարանն ավերված է և այնտեղ եղած ամեն ինչ ջարդուփշուր է արված, քանի որ, մինչդեռ վեզիրը պալատ էր գնացել, նրա մարդիկ իրագործել էին այն, ինչ նա հրամայել էր, և նստել էին, սպասելով պալատից վեզիրի վերադառնալուն, իսկ Բեդր-էդ-դինն ասում էր. «Տեսնես ի՞նչ են գտել նուան հատերի մեջ, որ ինձ այսպիսի բան պատահեց»:

Եվ երբ վեզիրը վերադարձավ Դամասկոսի կուսակալի մոտից (իսկ կուսակալը նրան թույլատրել էր վերցնել իրեն անպատվողին ու տանել իր հետ), մտավ վրանը և պահանջեց խոհարարին, և նրան բերեցին՝ շալմայով կապկպած: Եվ Բեդր-էդ-դին Հասանը նայեց իր հորեղբորն ու դառնորեն լաց եղավ և ասաց. «Ո՞վ տեր իմ, ինչո՞վ եմ ես հանցավոր ձեր առջև»:— «Այդ դո՞ւ ես նուան հատերը եփել»,— հարցրեց նրան վեզիրը: «Այո՛, — պատասխանեց Բեդր-էդ-դինը, — իսկ դուք դրանց մեջ մի այնպիսի բան եք գտել, որի համար պետք է իմ գլուխը թոցնել»:— «Դա լավագույն ու նվազագույն հատուցումն է քեզ»,— ասաց վեզիրը: Եվ Բեդր-էդ-դինն ասաց. «Ո՞վ տեր իմ, ինձ չե՞ս ասի, թե որն է իմ մեղքը»:— «Հա՛, հիմա կասեմ, — պատասխանեց վեզիրը, ապա կանչեց ծառային ու ասաց. — Բերեք ուղտերը»:

Եվ նրանք վերցրին Բեդր-էդ-դին Հասանին ու դրեցին մի սնդուկի մեջ ու փակեցին նրան, և գնացին ու գնացին, առանց կանգ առնելու, մինչև գիշերը վրա հասավ: Իսկ հետո նրանք կանգ առան հանգստանալու, հաց կերան, հանեցին Բեդր-էդ-դինին ու կերակրեցին, ապա կրկին սնդուկի մեջ դրեցին, և այդպես շարունակվեց, մինչև որ հասան Ղամրա՛:

Եվ այդտեղ Բեդր-էդ-դին Հասանին հանեցին սնդուկից, և վեզիրը նրան հարցրեց «Այդ դո՞ւ ես նուան հատերը եփել»:— «Այո՛, ո՞վ իմ տեր»,— պատասխանեց Բեդր-էդ-դինը: Եվ վեզիրն ասաց. «Շղթայեցե՛ք նրան»: Եվ նրան շղթայեցին ու կրկին սնդուկի մեջ դրեցին ու շարժվեցին, և երբ Կահիրե հասան, կանգ առան առ Ռեյդանիեում²: Եվ վեզիրը հրամայեց Բեդր-էդ-դին Հասանին սնդուկից հանել, կանչել տվեց ատաղձագործին ու ասաց. «Սրա համար փայտե խրտվիլակ սարքիր»: «Իսկ ի՞նչ պիտի անես այն»,— հարցրեց Բեդր-էդ-դին Հասանը: «Ես քեզ կախելու եմ ու մեխելու խրտվիլակին ու ման եմ ածելու ամբողջ քաղաքով մեկ»,— պատասխանեց վեզիրը: Եվ Բեդր-էդ-դինը բացականչեց. «Ինչի՞ համար ես դու այդպես վարվում ինձ հետ»:— «Նրա համար, որ դու խիստ վատ էիր պատրաստել նուան հատերով կերակուրը, — ասաց վեզիրը:— Ինչպե՞ս դու կարող էիր եփել դրանք այնպես, որ պղպեղը պակաս լինի»:— «Եվ դրա համար դու ինձ հետ այսպե՞ս ես վարվում, — բացականչեց Բեդր-էդ-դինը:— Բավական չե՞ր, որ ինձ բանտարկեցիք, և դեռ օրական էլ մի անգամ էիք կերակրում»:— «Պղպեղը

¹ Ղամրա — գյուղ, որ գտնվում է Դամասկոս—Կահիրե ճանապարհին:

² Առ — Ռեյդանիե — գյուղ, որ գտնվում է Կահիրեի հյուսիս-արևելքում:

պակաս էր, և քեզ համար ուրիշ պատիժ չկա, բացի մահվանից», —
ասաց վեզիրը: Եվ Բեդր-էդ-դինը ապշեց ու տիրեց ինքն իր համար:

«Ինչի՞ մասին ես մտածում», — հարցրեց վեզիրը: «Մտածում եմ
տկար ուղեղների մասին, ինչպիսին քոնն է, — պատասխանեց Բեդր-
էդ-դինը: — Եթե խելք ունենայիր, այս բոլորը չէիր անի»:

«Մենք պետք է քեզ տանջենք, որ դու այլևս նման բան չանես», —
ասաց վեզիրը: Եվ Բեդր-էդ-դին Հասանը հակաճառեց. «Իսկապես, քո
արածներից ամենաաննշանն էլ բավականին տանջել է ինձ»: Բայց վե-
զիրը բացականչեց. «Քեզ անպայման պետք է կախել»: Իսկ այդ միջոցին
ատաղձագործը պատրաստում էր խլիպիլակը, իսկ Հասանը նայում էր
նրան:

Եվ այդպես շարունակվեց, մինչև գիշերը վրա հասավ, և այնժամ
Բեդր-էդ-դինի հորեղբայրը վերցրեց նրան ու գցեց սնդուկի մեջ ու
ասաց. «Դա վաղը կանենք»:

Եվ նա այնքան սպասեց, մինչև որ համոզվեց, որ Բեդր-էդ-դինը
քնել է, և ձի հեծնելով, վերցրեց սնդուկը, դրեց իր առջև և մտավ քա-
ղաք ու գնաց, մինչև հասավ իր տուն: Եվ այնժամ նա իր աղջիկ Սիտտ-
ալ-Հուսնին ասաց. «Փառք ասլահին, որը քեզ միացրեց քո հորեղբոր
տղայի հետ, վե՛ր կաց, հավաքիր սենյակն այնպես, ինչպես հարսնա-
տեսի գիշերն էր»:

Եվ նա վեր կացավ ու վառեց մոմերը, իսկ վեզիրը հանեց գծա-
գրած թուղթը, որի վրա նա նշել էր սենյակի դասավորութունը, և նրանք
ամեն ինչ դրեցին իր տեղը, այնպես, որ ո՛վ տեսել էր, այժմ տեսնելուց
էլ չէր կասկածի, որ դա հենց նույն հարսնատեսի գիշերն է:

Դրանից հետո վեզիրը հրամայեց Բեդր-էդ-դին Հասանի թողած
գլխափաթեթոցը դնել նույն տեղում, որտեղ նա դրել էր իր ձեռքով, ինչ-
պես և նրա շալվարն ու քսակը, որ ներքնակի տակ էր դրել, իսկ հետո
կարգադրեց իր աղջկան հանվել, ինչպես հարսնատեսի գիշերն էր, և
ասաց: «Երբ քո հորեղբոր որդին գա, նրան ասա. «Դու ստիպեցիր ինձ
սպասել, մենության հանգստավայրը գնալով»: Եվ թող նա քեզ հետ գի-
շերի, ու զրուցիր նրա հետ մինչև առավոտ, իսկ առավոտյան մենք
նրան ցույց կտանք զրի առնված թվականները»:

Հետո վեզիրը սնդուկից հանեց Բեդր-էդ-դինին, նախապես արձա-
կելով նրա ոտքերի շղթաները և ազատելով նրան այն ամենից, ինչ-որ
նրա վրա կար, այնպես որ նա մնաց բարակ գիշերաշապիկով, առանց
շալվարի (իսկ նա քնած էր և ոչինչ չիմացավ):

Եվ նախախնամութեան թելադրանքով Բեդր-էդ-դինը շուռ եկավ ու զարթնեց և տեսավ, որ լուսավորված միջանցքում է, ու ինքն իրեն ասաց. «Խառը երազներ են սրանք»:

Եվ նա վեր կացավ ու մի փոքր առաջ գնաց՝ մինչև երկրորդ դուռը, և նայեց ու, հանկարծ պարզվեց, որ ինքը հենց նույն սենյակումն է, որտեղ իր առջև բացեցին հարսի երեսը, և տեսավ ամպհովանին ու նստարանը, իր գլխափաթեցն, ու իրերը:

Եվ, դրանք տեսնելով, Բեդր-էդ-դինն ապշած մնաց և սկսեց մեկ այս, մեկ այն ոտքի վրա կանգնել ու բացականչեց. «Քնած եմ, թե արթուն»:

Եվ նա սկսեց ճակատը շփել ու զարմացած ասաց. «Ալլահը վկա, սա հարսի սենյակն է, որտեղ նրա երեսը բացեցին ինձ համար: Որտե՞ղ եմ ես: Զէ՞ որ ես սնդուկի մեջ էի»:

Եվ մինչ նա խոսում էր ինքն իր հետ, Սիտտ-ալ-Հուսնը հանկարծ բարձրացրեց առագաստի փեշը և ասաց. «Ո՞վ իմ տեր, ներս չե՞ս գա: Դու շատ մնացիր մենութեան հանգստավայրում»: Եվ երբ Բեդր-էդ-դինը լսեց նրա խոսքերն ու տեսավ նրան, ծիծաղեց ու ասաց. «Իսկապես, շփոթ երազներ են սրանք»:

Հետո նա ներս մտավ ու սկսեց հառաչել, մտորելով այն մասին, ինչ որ պատահել էր, և, շիմանալով, թե ինչ մտածի իր գործի մասին, և ամբողջ պատահածը նրա գլխում խառնաշփոթ մի բան դարձավ, երբ նա տեսավ իր գլխափաթեցը և շալվարն ու քսակը, որի մեջ հազար դինարն էր:

«Ալլահն ավելի լավ գիտի, սրանք շփոթ երազներ են», — բացականչեց նա: Եվ այնժամ Սիտտ-ալ-Հուսնը ասաց նրան. «Դա ի՞նչ բան է, դու, ինչպես տեսնում եմ, շփոթված ու շվարած ես: Դիշերվա սկզբում գու աշդպես չէիր»: Եվ Բեդր-էդ-դինը ծիծաղեց ու ասաց. «Որքա՞ն ժամանակ է, որ ես քեզ հետ չեմ եղել»: Եվ նա բացականչեց. «Ալլահը քեզ փրկի: Ալլահի անունը քո շուրջը լինի: Դու հենց նոր գնացիր կարիքի համար ու վերադառնում ես: Խելքդ թոցրե՞լ ես, ինչ է»:

Եվ Բեդր-էդ-դինը՝ լսելով այդ, ծիծաղեց ու ասաց. «Դու իրավ ես: Բայց երբ ես դուրս եկա քո մոտից, ինքնամոռացման մեջ ընկա ջրով տնակում ու երազում տեսա, որ Դամասկոսում խոհարար եմ դարձել ու ապրել եմ այնտեղ տասը տարի, և կարծես ինձ մոտ եկավ մեծամեծներից մեկի տղան և նրա հետ՝ մի ներքինի...»

Եվ այստեղ Բեդր-էդ-դինը շոշափեց ճակատը ու, գտնելով հարվածի հետքը, բացականչեց. «Ալլահը վկա, ո՞վ տիրուհիս, դա կարծես ճշմա-

րիտ է, որովհետև նա խփեց իմ ճակատին ու վիրավորեց: Կարծես, թե դա արթուն ժամանակս է եղել»:

Հետո նա ասաց. «Երբ մենք գրկախառնվեցինք ու քնեցինք, երազ տեսա, իբր թե առանց գլխափաթթոցի ու շալվարի գնացել եմ Դամասկոս ու այնտեղ խոհարար դարձել...» Ու նա խոսքը կտրեց, մի առ ժամանակ շփոթված կանգ առավ ու ասաց. «Ես կարծես թե տեսա, որ եփել եմ նոան հատերով կերակուր, որի մեջ պղպեղը պակաս է... Ալլահը վկա, ես, անշուշտ, քնել եմ ջրով տնակում և այս բոլորը երազում եմ տեսել...» — «Ալլահի սիրուն. աղերսում եմ քեզ, ասա, երազում է՞լ ինչ հս տեսել, բացի դրանից», — հարցրեց Սիտտ-ալ-Հուսնը: Եվ Բեդր-էդ-դին Հասանը պատմեց նրան ու ավելացրեց. «Ալլահը վկա, եթե ես շարթնահայի, նրանք երևի ինձ խաշեին փայտե խրովիլակի վրա»: — «Ինչի՞ համար», — հարցրեց Սիտտ-ալ-Հուսնը: «Նոան հատերով ճաշի մեջ պղպեղը պակաս լինելու համար, — պատասխանեց Բեդր-էդ-դինը: — Նրանք, կարծես թե, քանդեցին իմ կրպակը, ջարդ ու փշուր արեցին իմ ամբողջ ամանեղենը և ինձ սնդուկի մեջ դրեցին, իսկ հետո ատաղձադործին բերեցին, որ ինձ համար կախաղան սարքի, քանի որ նրանք ուզում էին կախել ինձ: Փա՛ռք ալլահին, որ այդ բոլորը երազի մեջ է պատահել, և ոչ թե իրականում»:

Եվ Սիտտ-ալ-Հուսնը ծիծաղեց ու սեղմեց նրան իր կրծքին, և նա նույնպես Սիտտ-ալ-Հուսնին սեղմեց իր կրծքին, իսկ հետո, մտածելով, ասաց. «Ալլահը վկա, այնպես է երևում, որ այդ ամենը իրականում է եղել: Չեմ հասկանում, թե ինչ բան է սա»:

Եվ նա քնեց, շվարած մնալով իր գործի մասին, մերթ ասելով՝ «Ես երազի մեջ էի», մերթ ասելով՝ «Ես արթուն էի», և այդպես շարունակվեց մինչև առավոտ, երբ նրա մոտ մտավ իր հորեղբայրը՝ վեզիր Շեմս-լի-դինը և ողջունեց նրան:

Եվ Բեդր-էդ-դին Հասանը նայեց նրան ու բացականչեց. «Ալլահը վկա, դու շէի՞ր, որ հրամայեցիր կապկպել ինձ ու մեխել խրովիլակին ու քանդել իմ կրպակը միայն նրա համար, որ նոան հատերով ճաշի մեջ պղպեղը պակաս էր»: Եվ այնժամ վեզիրը նրան ասաց. «Իմացած եղի՛ր, սի՛վ տղաս, որ ճշմարտությունը պարզվեց, և հայտնի եղավ այն, ինչ որ ծածուկ էր: Դու իմ եղբոր տղան ես, և ես այդ բոլորն արեցի, որպեսզի չամոզվեմ: Ինչ որ դու նա ես, որը մտել էր իմ աղջկա մոտ այն գիշերը: Իսկ ես այդ բանում համոզվեցի միայն այն պատճառով, որ ճանաչեցիր սենյակը, ճանաչեցիր քո գլխափաթթոցն ու շալվարը և քո դրամն ու լուղթը, որ գրված է քո ձեռքով, այն, որ գրել է տվել քո հայրը՝ իմ

եղբայրը: Ես դրանից առաջ քեզ չէի տեսել ու չէի ճանաչում, իսկ քո մոտը ես ինձ հետ եմ բերել Բասրայից:

Եվ դրանից հետո նա նետվեց դեպի Բեդր-էդ-դինն ու սկսեց լաց լինել, իսկ Բեդր-էդ-դին Հասանը՝ լսելով իր հորեղբորից այգայիսի խոսքեր, ծայրահեղ զարմանքի մեջ ընկավ ու գրկեց իր հորեղբորը, ուրախությունից արտասովելով: Իսկ հետո վեզիրը նրան ասաց. «Ո՞վ տղաս, այս բոլորի պատճառն այն է, ինչ որ տեղի ունեցավ իմ ու քո հոր միջև»: Եվ նա պատմեց նրան, թե ինչ է տեղի ունեցել իր ու եղբոր միջև, և թե ինչո՞ւ նա գնացել էր Բասրա:

Հետո վեզիրը մարդ ուղարկեց Աջիբի հետևից: Եվ, տեսնելով նրան, նրա հայրը բացականչեց. «Ահա՛ նա, ով ինձ քարով խփեց»: Իսկ վեզիրն ասաց. «Սա քո տղան է»: Եվ այնժամ Բեդր-էդ-դինը նետվեց դեպի նա ու արտասանեց.

«Ձեզնից բաժանման պահին ես շատ եմ լացել դառնագին,
եվ առատ արցունք թափել, սգացել վշտով անմեկին:
Ու երգվել եմ ես, որ երբ հանդիպենք կրկին մենք իրար
լեզուս ձեզ շափ տրտունջի տխուր, վշտոտ ու մի բառ:
Բերկրանքը եկավ, բայց այնքան ուժգին, որ ցնծությունից
Արտասուքը հորդ հոսում է ահա, լացը՝ խեղդում ինձ»:

Եվ երբ նա վերջացրեց իր ոտանավորը, հանկարծ մոտեցավ իր մայրը և նետվեց նրա գիրկն ու ասաց.

«Հանդիպելիս տրանջացինք հիշելով խոսքն իմաստուն.
Տխուր խոսքեր երբեք շափ սուրհանդակի պերճ լեզուն»:

Իսկ հետո Հասանի մայրը պատմեց, թե ինչ է տեղի ունեցել նրա անհետանալուց հետո, և Հասանն էլ պատմեց, թե ինչ օրեր է տեսել, և նրանք շնորհակալ եղան մեծ ալլահին, որ իրենք նորից հանդիպեցին միմյանց:

Այնուհետև, իր ժամանումից երկու օր հետո, վեզիր Շեմս-էդ-դինը գնաց սուլթանի ոտքը և, մտնելով նրա մոտ, համբուրեց գետինը ու ողջունեց նրան, ինչպես ողջունում են թագավորներին: Եվ սուլթանն ուրախացավ ու ժպտաց նրան ու հրամայեց մոտենալ, իսկ հետո հարց ու փորձ արեց, թե ի՞նչ է տեսել ճանապարհորդության ընթացքում և ի՞նչ է պատահել նրա շրջագայության ժամանակ:

Եվ Շեմս-էդ-դինը պատմեց նրան ամբողջ պատմությունն սկզբից մինչև վերջ, և սուլթանն ասաց. «Փա՛ռք ալլահին, որ դու ցանկացածդ ստացար ու անփորձ վերադարձար ընտանիքիդ ու զավակներիդ գիրկը»:

Ես անպատճառ պետք է տեսնեմ քո եղբորորդի Հասան բասրեցուն, վաղը նրան դիման բեր»։— «Քո ստրուկը վաղը կներկայանա, եթե մեծ ալլահը կամենա»,— պատասխանեց Շեմս-էդ-դինը, ապա սուլթանին խաղաղություն մաղթեց ու դուրս եկավ։ Իսկ տուն վերադառնալով՝ նա իր եղբորորդուն պատմեց, որ սուլթանն ուզում է նրան տեսնել, և Հասան բասրեցին ասաց. «Ստրուկը հնազանդ է տիրակալի հրամանին»։

Մի խոսքով, իր հորեղբայր Շեմս-էդ-դինի հետ նա գնաց նորին մեծություն սուլթանի մետ և, ներկայանալով, ողջունեց նրան ամենակատարյալ ու լաւագույն ողջունով և արտասանեց.

«Ահա, գետինն է համբուրում նա՛, որին դուք բարձրացրիք,
նա, որ հասավ ձգտումներին՝ տեսած շարիք ու բարիք,
Դուք եք աղբյուրը մեծ փառքի, ու նրանք են հաջողակ,
Որոնք ձեզ են ապավինում, և բարձրանում են անկանգ»։

Եվ սուլթանը ժպտաց ու նշան արեց նրան, որ նստի, և նա նստեց իր հորեղբայր Շեմս-էդ-դինի կողքին, իսկ հետո թագավորը հարցրեց նրա անունը, և Հասանն ասաց. «Ես քո ստրուկներից անարժանագույնն եմ, որին Հասան բասրեցի են անվանում, և որը գիշեր ու ցերեկ աղոթում է քեզ համար»։

Եվ սուլթանին դուր եկան նրա խոսքերը, ու նա ցանկացավ փորձել նրան, որպեսզի հայտնի դառնան նրա գիտելիքներն ու կրթությունը, և հարցրեց. «Հիշո՞ւմ ես արդյոք խալի որևէ նկարագրություն»։— «Այո,— ասաց Հասանը և արտասանեց.—

Ամեն անգամ, եբբ իմ հոգում հիշում եմ եւ սիրնւզույս,
Արցունք թափում, լաց եմ լինում, ողբում տխուր ու անհույս.
Նա խալ ունի, որ իր գույնով ու հմայքով բացատրիկ
Աչքի սե բիր տես լինի կամ թե միջուկ կոկոսի»։

Եվ թագավորը հաժանություն հայտնեց այս դուրեցիթի առթիվ ու ասաց Հասանին. «Էլի՛ մատուցիր։ Ալլահին արժանի է քո հայրը, և թող լջարդվե՛ն քո ատամները»։ Եվ Հասանն արտասանեց.

«Երգվում եմ ես քո սե խալով, որ նման է մուշկի փոքրիկ հատիկի,
Մի՛ զարմացիր, զուգահեռն այս ճիշտ պատկերն է խալիկիդ,
Զարմանքն այն է, որ գեմբը քո այդքա՛ն, այդքա՛ն գեղեցիկ,
Զի մոռացել մուշկի հատիկն էլ լուրացնել այդ փոքրիկ»։

Եվ թագավորը ցնցվեց հիացմունքից ու ասաց նրան. «Դարձյալ հավելի՛ր ինձ համար, և թող ալլահը փառավորի՛ քո կյանքը»: Եվ Հասանն արտասանեց.

«Մ՛վ դու, որի այտը նրբին սև խալիկն է զարդարում,
Մուշկ է, ամենս, հակինթի մեջ սևին տալիս շողշողուն,
Գթա խեղճիս, մերձեցումդ ինձ շնորհիր հիմա գու,
Մերձեցումդ է հոգուս բաղձանքն ու սնունդը կենսատու»:

«Հիանալի՛ է, ո՛վ Հասան, դու լիովին աչքի ընկար,— բացականչեց թագավորը:— Բացատրի՛ր մեզ, քանի՞ իմաստ ունի ալ-խալ¹ բառն արաբերենում»:— «Թող հովանավորի ալլահը թագավորին, հիսունութ իմասա, բայց ասում են հիսուն»,— պատասխանեց Հասանը: Եվ թագավորն ասաց. «Դու իրավացի ես,— ապա հարցրեց,— գիտե՞ս, արդյոք, թե որոնք են գեղեցկության առանձին հատկանիշները»:— «Այո,— պատասխանեց Հասանը,— դեմքի բարետեսությունը, մաշկի հարթությունը, քթի գեղեցիկ ձևն ու գծերի գրավչությունը, իսկ գեղեցկության պսակը մազերն են: Եվ այս բոլորը ի մի բերել դեռևս Աշ-Շահաբ ալ-Հիջազին ունչեզ չափով բեյթերի մեջ, Ահավասիկ այդ բեյթերը.

Դեմքը սիրուն պիտի լինի, իսկ մաշկը հարթ ու փափուկ,
Խելոք եղի՛ր, գեղեցկությանը այս դժերն են հատուկ,
Շատ շատերն են գովաբանում ուղիղ քիթը գեղեցիկ,
Իսկ աչքերն էլ սիրունների ունեն քնքշանք մի անձիր,
Բերանին է հատուկ հմայք և ասել են դեռ վաղուց.
Տիրի՛ր նրան ու շես կորցնի հոգուդ անդորրը սիրուց:
Լեզուն միշտ սուր պիտի լինի, հասակը նուրբ ու ճկուն,
Դեմքի գծերը նուրբ լինեն և ներդաշնակ ու սիրուն:
Պերճ գագաթն էլ գեղեցկության համարում են մազերն իր,
Միտքդ պահիր տողերն իմ այս և շատախոս մի՛ եղիր»:

Եվ թագավորն ուրախացավ, լսելով Հասանի ասածները, ու շոյեց նրան և ասաց. «Ի՞նչ է նշանակում այն առածը, թե «Շուրեյխը² աղվեսից խորամանկ է»»: Եվ Հասանը պատասխանեց. «Իմացած եղի՛ր, ով արքա,— և թող հովանավորի քեզ ալլահը մեծասքանչ,— որ Շուրեյխը ժանտախտի օրերին քաշվեց Նեջեֆ³ և հենց որ նա աղոթելու էր շոքում, գալիս էր աղվեսը, ու նրա դիմաց կանգնելով, կապկում էր նրան, շեղելով աղոթքից: Եվ երբ սա երկար շարունակեց, նա մի անգամ հա-

1 Ալ-խալ — խալ, պուտ:

2 Շուրեյխ — խլամի առաջին շրջանի օրհնագետ:

3 Նեջեֆ — փոքրիկ քաղաք ժամանակակից Իրաքի սահմաններում:

նեց շապիկն ու կախեց գավազանի վրա՝ թեքերը ձգած, իսկ վերևից փաթաթեց իր շալման ու շապկին գոտի կապեց և գավազանը դրեց այն տեղում, որտեղ աղոթում էր: Եվ աղվեսը, ինչպես միշտ, եկավ ու կանգնեց առջևը, իսկ Շուրեյիսը մոտեցավ հետևից ու բռնեց նրան,— և ասվեց այն, ինչ որ ասված է»:

Եվ լսելով այն, ինչ որ Հասան բասրեցին ասաց, սուլթանը նրա հորեղբայր Շեմս-էդ-դինին ասաց. «Հիրավի, քո եղբորորդին կատարյալ է ասացողական գիտությունների մեջ, և ես շեմ կարծում, որ նրանմանը գտնվի Կահիրեում»: Եվ Հասան բասրեցին վեր կացավ ու համբուրեց գետինը սուլթանի առջև ու նստեց, ինչպես նստում է ծառան իր տիրոջ առջև:

Եվ սուլթանը, ստուգապես իմանալով, թե ինչպիսի գիտելիքներ է ձեռք բերել Հասան բասրեցին խոսքի արվեստի մեջ, անշափ ուրախացավ ու պարզեց նրան պատվավոր զգեստ և գործի նշանակեց, որը կարող էր օգնել նրա դրուժյան բարվոքմանը: Իսկ դրանից հետո Հասան բասրեցին վեր կացավ ու համբուրեց սուլթանի առջևի հողն ու ցանկանալով նրան հավիտենական մեծություն, իր հորեղբոր՝ վեզիր Շեմս-էդ-դինի, հետ գնալու թույլտվություն խնդրեց:

Եվ սուլթանը թույլ տվեց նրան, ու նա դուրս եկավ իր հորեղբոր հետ և տուն գնաց, ու նրանց ուտելիք մատուցեցին ու նրանք կերան, ինչ-որ պատրաստել էր նրանց համար ալլահը, իսկ հետո, ուտելը վերջացնելով, Հասան բասրեցին մտավ իր կնոջ՝ Սիտտ-ալ-Հուսնի, ննջարանն ու պատմեց նրան, թե ինչ տեղի ունեցավ սուլթանի մոտ, և Սիտտ-ալ-Հուսնը բացականչեց. «Նա քեզ անպայման իր սեղանակիցը կդարձնի և առատորեն պարգևներ ու նվերներ կշնորհի: Ալլահի ողորմածությամբ, ուր էլ որ լինում ես՝ ցամաքում, թե ծովում, դու փայլում ես րո կատարելության լույսով, ինչպես մեծագույն լուսատու»:— «Ես ուղում եմ նրա մասին գովասանական բասիդ՝ հորինել, որպեսզի իմ նկատմամբ սերը զորանա նրա սրտում»,— ասաց Հասանը: Եվ նրա կինը լացականչեց. «Դու լավ ես որոշել դա: Լավ մտածի՛ր ու աշխատի՛ր շատ ավ հորինել: Ես այդպես էլ կարծում եմ, որ նա քեզ կպատասխանի լորեկամությամբ»:

Եվ Հասան բասրեցին առանձնացավ ու հորինեց մի ոտանավոր, որ կուռ էր իր կառուցվածքով ու գեղեցիկ՝ իմաստով: Ահա այն.

1 Քասիդ — հանդիսավոր բնույթի երկար շափածո ստեղծագործություն, ներբող:

Ամենամեծ փառքին հասավ տիրակալն իմ իմաստուն,
Եվ փառավոր ինչքան փայլուն հեռանկար առջևում:
Յրգարութիւնն նա հաստատեց երկրներում իր բոլոր,
Վասնզ շէտ էլ թշնամուց գլխակորույթ ու մոլոր:
Նա բարեպաշտ ու արթնամիտ մի առյուծ է քաջարի.
Քազավոր է, թե հրեշտակ արարքներով իր բարի:
Նրա մտտից բոլոր մարդիկ հարստացած են գնում,
Անկարելի է թվարկել լավ գործերն իր անհատնում:
Պարգևելիս նա շաչլ է արշալույսի պես պայծառ,
Կո՛վում ահեղ ինչպե՞ս գիշեր ամպրոպահույզ ու խավար:
Առատորաշխ պարգևների իր օղակն է մեր ղզին.
Քազավորում է նա միայն շնորհներով մեծագին:
Քող ալլահը կյանքը նրա զարձնի երկնար, երջանիկ,
Ու շար բախտի աղետաբեր հարվածներից պահպանի:

Եվ, ավարտելով այս ոտանավորը, նա այն ուղարկեց նորին մեծութիւնն սուլթանին իր հորեղբոր՝ վեզիր Շեմս-էղ-գինի ստրուկներից մեկի ձեռքով, և թագավորը ծանոթացավ գրան, ու նրա սիրտն ուրախացավ դրանով, և նա կարդաց այդ ոտանավորը նրանց առջև, ովքեր իր մոտ էին, և նրանք անշափ գովեցին Հասանին: Իսկ հետո սուլթանը նրան կանչեց իր ընդունարանը և, երբ նա հայտնվեց, ասաց նրան. «Այսօրվանից դու իմ սեղանակիցն ես, և ես նշանակում եմ քեզ ամենամսյա ոսճիկ՝ հազար դիրհեմ, բացի նրանից, ինչ-որ առաջ նշանակել էի»:

Եվ Հասան բասրեցին վեր կացավ ու երիցս համբուրեց սուլթանի առջևի հողը և նրան մաղթեց հավիտենական փառք ու երկար կյանք: Եվ գրանից հետո Հասան բասրեցու աստիճանը բարձրացավ, ու նրա հռչակը տարածվեց շատ երկրներում, և նա ապրեց իր հորեղբոր ու ընտանիքի հետ հիանալի վիճակում ու երջանկագույն կյանքով, մինչև մահը վրա հասավ»:

Լսելով Զաֆարի բերանից այս պատմութիւնը՝ Հարուն ալ-Ռաշիդը զարմացավ ու ասաց. «Այդ իրողութիւնը ոսկե թանաքով պետք է գրի առնել»:

Ապա նա ազատ արձակեց ստրուկին ու հրամայեց երիտասարդի համար ամսական այնքան ոսճիկ սահմանել, որ նրա կյանքն ապահով լինի, և իր կողմից նրան մի հարձ ընծայեց, և երիտասարդը նրա սեղանակիցներից մեկը դարձավ:

Բայց դա բնավ էլ զարմանալի չէ դերձակի, կուզիկի, հրեայի, վերահակիչի ու քրիստոնյայի հեքիաթներից և այն բանից, որ պատահել է նրանց»:

«Իսկ դա ինչպե՞ս է եղել»,— հարցրեց արքան:





Իսկ երբ վրա հասավ հաջորդ դիշերը, Շահրազադեն ասաց. «Լսել եմ, ով բարեբախտ արքա, որ հին ժամանակներում և անցած դարերում ու հարյուրամյակներում շինական քաղաքներից մեկում մի դերձակ կար, առատաձեռն և քեֆերի ու զվարճությունների սիրահար: Երբեմն իր կնոջ հետ նա դուրս էր դալիս զբոսանքի: Եվ ահա մի անգամ, նրանք օրվա սկզբին դուրս եկան և, օրվա վերջին՝ իրիկնապահին, իրենց տունը վերադառնալիս, ճանապարհին տեսան մի կուզիկ մարդու, որի կերպարանքը կարող էր թախծոտի ծիծաղը շարժել ու վշտահարի հոգսը ցրել: Դերձակն ու իր կինը մոտեցան նրան նայելու և ապա հրավիրեցին իրենց հետ միասին տուն դնալ և այդ երեկո իրենց սեղանակիցը լինել: Եվ կուզիկը համաձայնեց ու նրանց տուն գնաց:

Եվ դերձակը շուկա գնաց (իսկ գիշերն արդեն մոտեցել էր) ու գնեց տապակած ձուկ, հաց, կիտրոն ու շոռ, որպեսզի ճաշակեն և, վերադառնալով, ձուկը դրեց կուզիկի առջև: Եվ նրանք սկսեցին ուտել, ու դերձակի կինը վերցրեց մի մեծ կտոր և դրեց կուզիկի բերանն ու ձեռքով փակեց նրա բերանն ու ասաց. «Ալլահը վկա, դու այս կտորը միանգամից, մի՛ շնչով պիտի ուտես, և ես քեզ ծամելու ժամանակ չեմ տա»: Ավ կուզիկը կուլ տվեց կտորը, իսկ կտորի մեջ ամուր փուշ կար, որը մնաց նրա կոկորդում, և քանի որ նրա կյանքի ժամանակը լրացել էր, նա տեղնուտեղը մեռավ: Եվ դերձակը բացականչեց. «Ոչ ոք ուժ ու զորություն չունի՛, բացի ալլահից: Խեղճ մարդ, նրա մահը հենց մեր ձեռքով վրա հասավ»: Իսկ նրա կինն ասաց. «Ի՞նչ է նշանակում այդ դանդաղկոտությունդ: Մի՞թե չես լսել ասացողի խոսքերը.

Ինչո՞ւ իզուր մխիթարեմ ինձ խոսքերով սուտ ու սին,
Զեմ հանդիպի բարեկամի, որ իմ վշտերը կիսի,

Ինչպե՞ս նստեմ ես շհանգած օջախի վրա հրատապ,
Աստված վկա, այդ կրակին նստելը մահ է հաստատո՞ւ:

«Իսկ ի՞նչ անեմ», — հարցրեց մարդը, և կինն ասաց. «Վեր կաց, ձեռքերիդ վրա առ նրան ու ծածկիր մետաքսե շորով, և ես առջևից կգնամ, իսկ դու՝ իմ հետևից, հենց հիմա. երեկոյան, և դու կասես. «Սա իմ երեխան է, իսկ նա՝ իմ կինը, մենք հեքիմի մոտ ենք դնում, որ երեխային նայի»: Այս խոսքերը լսելով, դերձակը տեղից ելավ և կուզիկին թևերի վրա առած գնաց, իսկ նրա կինն ասում էր. «Մանկիկս, ալլահը քեզ փրկի: Ի՞նչդ է ցավում և որտե՞ղդ է վնասել ծաղիկը»: Եվ ամեն մարդ, ով տեսնում էր նրանց, ասում էր. «Հիվանդ երեխա են տանում»: Եվ նրանք շարունակ դնում էին ու հարցնում, թե որտե՞ղ է հեքիմի տունը, և նրանց ցույց տվեցին հրեա բժշկի տունը: Եվ նրանք դարպասը ծեծեցին, և նրանց դեմ գուրս եկավ սեամորթ ստրկուհին, բացեց դարպասն ու նաչեց, և հանկարծ տեսավ, որ դարպասի մոտ մի մարդ է կանգնած՝ գրկին մի երեխա ու նրա հետ մի կին կա: Ի՞նչ է պատահել», — հարցրեց ստրկուհին: Եվ գերձակի կինը պատասխանեց. «Մենք քերել ենք մեր փոքրիկին և ուզում ենք, որ բժիշկը նրան նայի: Վերցրու այս քառորդ դինարը և տուր քո տիրոջը, թող նա ցած իջնի ու նայի երեխայի», նրա հիվանդութունը բռնել է»: Եվ ստրկուհին վերև գնաց, իսկ կինը շեմքից ներս մտավ ու մարգուն ասաց. «Կուզիկին այստեղ թող, և մենք մեր հոգին փրկենք»:

Եվ դերձակը ցած դրեց կուզիկին, պատին հենելով նրան, և իր կնոջ հետ դուրս եկավ, իսկ ստրկուհին մտավ հրեայի մոտ ու ասաց. «Դարպասի մոտ մի մարդ կա՝ հիվանդ երեխան գրկին, հետն էլ մի կին: Նրանք ինձ քառորդ դինար տվեցին քեզ համար, որպեսզի դու իջնես, նաչես նրան ու հարձար մի քանի նշանակեա»: Եվ հրեան, քառորդ դինարը տեսնելով, ուրախացավ ու շտապ վեր կացավ և մթան մեջ ցած իջավ, ու հագլով էր ստքը գետին դրել, որ ստքը գիպավ կուզիկին, որը մեռած էր: Եվ նա բացականչեց. «Մ՛վ մեծագորդ, ո՞վ Մովսես ու տասը պատվիրաններ, ով Ահարոն ու Հիսուս՝ Նունեի որդի, ես կարծես այդ հիվանդին դիպա, և նա ընկավ ա մեռավ: Ինչպե՞ս տնիցս դուրս տանեմ սպանվածին»: Եվ նա վերցրեց կուզիկին ու նրա հետ տուն մտավ և այդ մասին իր կնոջը հայտնեց, իսկ կինն ասաց. «էլ ի՞նչ ես նստել: Եթե դու այդպես տանը նստես, մինչև լույսը բացվի, կկործանվեն մեր հոգիները՝ և՛ իմը, և՛ քոնը: Բարձրանանք կտուրը և նրան մեր հարևան մահմեդականի տունը նետենք»: Իսկ հրեայի հարևանը սուլթանի խոհա-

նոցի վերահսկիչն ու պետն էր, և նա հաճախ ճարպ էր տաճարում տուն, որն ուտում էին կատուններն ու մկները, իսկ եթե լավ դմակ էր լինում, շներն էին կտուրից իջնում ու փախցնում այն, և նրանք շատ էին վնաս հասցնում վերահսկիչին, փշաքնեյով այն ամենք, փնչ նա բերում էր:

Եվ ահա, հրեան ու իր կինը բարձրացան կտուրը, իրենց հետ տանելով կուզիկին, ու նրան ցած գրեցին: Նրանք կուզիկին պատին դեմ տված կանգնեցրին ու բաց թողնելով, իրենք գնացին: Եվ դեռ հազիվ էին կուզիկին ցած դրել ու հեռացել, որ վերահսկիչը մոտեցավ իր տանն ու դուռը բացեց և ներս մտավ՝ վառած մոմը ձեռքին: Տուն մտնելով, նա տեսավ, որ ծխնելույզի մոտ, անկյունում, մի մարդ է կանգնած, և ասաց. «Վահ, ինչ լավ է, ավա՜հը վկա: Բանից դուրս է գալիս, որ իմ պաշարը գողացողը մարդ է»: Եվ դառնալով դեպի նա, քաղցրահանչեց. «Այդ դո՞ւ ես միսն ու ճարպը գողանում, իսկ ես կարծում էի, թե դա կատունների ու շների դործն է: Ես փողոցի բոլոր կատուններին ու շներին կոտորեցի և նրանց համար հոգուս վրա մեզք վերցրի, իսկ դու, բանից դուրս է գալիս, կտրից ես իջնում»: Ու, վերցնելով մեծ մուրճը, տարավ-բերեց և, կուզիկին մոտենալով, հարվածեց նրա կրծքին ու տեսավ, որ նա մեռել է: Եվ վերահսկիչը տխրեց ու քաղցրահանչեց. «Չկա՛ ավելի մեծ գորություն և ուժ, քան ավահինն է մեծ ու բարձրացալ»: Նա վախեցավ իր համար ու ասաց. «Այլահը թող նզովի ճարպն ու դմակները: Եվ ինչպե՞ս այս մարդուն իմ ձեռքով մահ հասավ»: Իսկ հետո նա նայեց մեռելին ու տեսավ, որ նա կուզիկ է. «Իբր թե քիչ է, որ կուզիկ ես, դեռ գող էլ ես դարձել և միս ու ճարպ ես թռցնում,— բացահանչեց վերահսկիչը:— Ո՞վ հովանավոր, ծածկիր ինձ քո բարի ծածկոցով»: Եվ նա կուզիկին շալակեց ու լուսադեմին գուրս եկավ տնից, կուզիկը շալակին, ու տարավ շուկայի մոտ և ցած նետեց նրան ու գնաց:

Եվ հանկարծ հայտնվեց մի քրիստոնյա, որը առլթանի միջնորդն էր: Նա հարբած էր և դուրս էր եկել բաղնիք գնալու, սբա՛վհետև հարբածությունը թելադրում էր նրան, որ առավոտյան ժամերգության պահը մոտ է: Եվ նա օրորվելով գնում էր, մինչև որ մոտեցավ կուզիկին: Նա կանգնեց կուզիկի դիմաց, որ միպի, ու հանկարծ հայացք նետեց ու տեսավ, որ մեկը կանգնած է: Իսկ այդ քրիստոնյայից այդ գիշերվա սկզբին Կողացել էին գլխի փաթթոցը, և, տեսնելով կանգնած կուզիկին, կարծեց, թե նա ուզում է գողանալ իր փաթթոցը, և բռունցքը սեղմեց ու հարվածեց նրա վզակոթին: Եվ կուզիկը գետին փռվեց, և քրիստոնյան կանչեց շուկայի պահակին ու խիստ հարբածությունից ընկավ կուզիկի վրա և սկսեց բռնաբահարել ու խեղդել: Եվ պահակը եկավ ու տե-

ոավ, որ քրիստոնյան շոքել է մահմեդականի կրծքին ու ծեծում է նրան, և հարցրեց. «Ի՞նչ է արել նա»:— «Նա ուզում էր իմ փաթթոցը գողանալ»,— պատասխանեց քրիստոնյան: «Վե՛ր կաց, բա՛ց թող նրան»,— ասաց պահապանը: Եվ քրիստոնյան ոտքի ելավ, իսկ պահակը մոտեցավ կուզիկին ու տեսավ, որ նա մեռած է, և բացականչեց. «Ալլահը վկա, լա՛վ է: Քրիստոնյան սպանում է մահմեդականին»: Ապա պահակը բռնեց քրիստոնյային և, ձեռքերը կապոտելով, վալիի¹ տուն տարավ, իսկ քրիստոնյան ինքն իրեն ասում էր. «Մ՛վ փրկիչ, ո՛վ կույս, ինչպես ես նրան սպանեցի, ի՞նչ էլ շուտ մեռավ նա մի հարվածից»: Եվ նրա հաբածուխյունն անցավ, ու նա մտատանջության մեջ ընկավ:

Եվ միջնորդ քրիստոնյան ու կուզիկը գիշերը մինչև առավոտ միասին անցկացրին վալիի տանը, իսկ առավոտյան վալին եկավ ու հրամայեց կախել մարդասպանին ու դահճին կարդաղրեց հայտարարել այդ մասին: Եվ քրիստոնյայի համար կախաղան պատրաստեցին ու նրան կանգնեցրին կախաղանի տակ, և դահճը մոտեցավ ու պարանը քրիստոնյայի վիզը գցեց և ուզում էր կախել նրան, երբ հանկարծ վերահսկիչը ամբոխի միջով անցնելիս տեսավ քրիստոնյային, որին կախել էին ուզում, ու հրհրեց մարդկանց ու բղավեց դահճին. «Պե՛տք չէ, ե՛ս եմ կուզիկին սպանել»:

«Իսկ ինչո՞ւ ես դու նրան սպանել»,— հարցրեց վալին: Եվ սա պատասխանեց. «Ծրեկ երեկոյան ես տուն վերադարձա ու տեսա, որ նա ծխնելույզով ցած է իջել ու գողանում է իմ մթերքները, և այդժամ ես մուրճով խփեցի նրա կրծքին, ու նա մեռավ, իսկ ես նրան տարա շուկա ու դրեցի այսինչ տեղը՝ ինչ-որ նրբանցքի անկյունում...»— Հետո վերահսկիչը բացականչեց. «Բավական չէ, որ ես սպանեցի մահմեդականին, հիմա էլ քրիստոնյայի՞ն սպանեմ: Բացի ինձանից ոչ ոքի մի՛ կախիր»: Եվ վալին, լսելով վերահսկիչի այս խոսքերը, ազատ արձակեց քրիստոնյա միջնորդին ու դահճին ասաց. «Սրան կախի՛ր, իր խոստովանության համաձայն»:

Եվ դահճը հանեց պարանը քրիստոնյայի վզից ու գցեց վերահսկիչի վիզը, տարավ նրան կախաղանի տակ և ուզում էր կախել, բայց հանկարծ հրեա բժիշկը ամբոխի միջով առաջ անցավ ու բղավեց մարդկանց ու դահճին. «Պետք չէ՛: Այդ ե՛ս եմ երեկ երեկոյան սպանել նրան: Ես տանն էի, և հանկարծ դարպասը ծեծեցին մի մարդ ու կին, որոնց հետ էր այս կուզիկը՝ հիվանդ վիճակում: Նրանք իմ ստրկուհուն քառորդ

1 Քաղաքային ոստիկանության պետ:

գինար էին տվել, և նա այդ մասին հայտնեց ինձ ու տվեց դրամը, իսկ մարդն ու կինը կուզիկին բերել էին իմ տուն, աստիճանների վրա դրել ու գնացել: Եվ ես ցած իջա, որ տեսնեմ, ու մթան մեջ ոտքս դիպավ նրան, և նա աստիճանների գլխից ցած ընկավ ու անմիջապես մեռավ: Եվ ես ու կինս վերցրինք նրան ու բարձրացանք կտուրը (իսկ այս վերահսկիչի տունը իմ տան կողքին է) և մեռածին վերահսկիչի տան ծրխնելույզի միջով ցած դցեցինք: Եվ երբ վերահսկիչը եկավ, կուզիկին իր տանը տեսավ ու ենթադրեց, թե նա գող է ու մուրճով խփեց նրան, ու կուզիկը դետին ընկավ, և վերահսկիչը կարծեց, թե ի՛նքը սպանեց նրան: Մի՞թե քիչ է, որ ես ակամա սպանել եմ մահամեղականին, որ հիմա էլ գիտակցաբար ինձ վրա վերցնեմ պատասխանատվությունը մի ուրիշ մահամեղականի կյանքի համար»:

Հրեայի խոսքերը լսելով, վալին դահիճին ասաց. «Բաց թող վերահսկիչին ու կախիր հրեային»: Եվ դահիճը վերցրեց հրեային ու պարանը նրա վիզը գցեց, բայց հանկարծ դերձակն առաջ անցավ ամբոխի միջով ու բղավեց. «Պետք չէ՛, նրան ես եմ սպանել: Ես ցերեկը զբոսնում էի և իրիկնապահին տուն էի դառնում ու տեսա այդ հարբած կուզիկին, որ ձեռքին դահիրա ունեք ու երգում էր: Ես հրավիրեցի նրան և տարա իմ տունը, և ձուկ առա, ու մենք սկսեցինք ուտել: Եվ կինս վերցրեց մի կտոր ձուկ, դրեց կուզիկի բերանը, ու խրեց կոկորդի մեջ, բայց փուշը դեմ առավ նրա կոկորդին, ու նա իսկույն մեռավ: Եվ ես ու կինս վերցրինք նրան ու տարանք հրեայի տուն, և աղջիկը ցած իջավ ու բացեց դարպասը մեր առջև, և ես նրան ասացի. «Քո տիրոջն ասա, որ դարպասի մոտ մի մարդ ու կին կան՝ հետները մի հիվանդ, գնա՛ ու նայի՛ր նրան»: Եվ ես նրան քառորդ դինար տվեցի, ու նա գնաց իր տիրոջ մոտ, իսկ ես կուզիկին բարձրացրի աստիճանների գլուխը, նրան այնտեղ կանգնեցրի ու կնոջս հետ հեռացա: Իսկ հրեան ցած է իջել և դիպել կուզիկին ու կարծել է, թե ինքն է նրան սպանել»: Եվ դերձակը հարցրեց հրեային. «Ծի՞շտ է»: Եվ նա պատասխանեց. «Այո»: Եվ այնժամ դերձակը դարձավ վալիին ու ասաց. «Բա՛ց թող հրեային ու ի՛նձ կախիր»: Եվ վալին, լսելով նրա խոսքերը, զարմացավ այս կուզիկին պատահածի վրա ու բացականչեց. «Հիրավի, այդպիսի գործը դրի են առնում գրքերում,— ապա դահիճն ասաց.— Ազատ արձակի՛ր հրեային ու կախիր դերձակին՝ ըստ իր խոստովանության»: Եվ դահիճը տարավ նրան կախադանի մոտ ու ասաց. «Հոգնեցինք. բերում ենք մեկին, բերում ենք մյուսին, իսկ ոչ ոքի չենք կախում»,— և պարանը գցեց դերձակի վիզը:

Ահա թե ինչ պատահեց նրանց: Ինչ վերաբերում է կուզիկին, ապա

նա, ասում են, սուլթանի ծաղրածուն էր, և սուլթանը շէր կարողանում բաժանվել նրանից: Եվ երբ կուզիկը հարբեց ու կորավ այդ դիշեր և հաջորդ օրը մինչև կեսօր, սուլթանը ներկաներից մեկին հարցրեց նրա մասին, և նրան ասացին. «Ով տիրակալ, նրան վալիի մոտ են տարել մեռած, և վալին հրամայել է կախել նրան սպանողին, և երբ դահիճն ուզում էր կախել նրան, հայտնվել է երկրորդ սպանողը, և երրորդը, և բոլորն էլ ասել են. «Միայն ես եմ սպանել նրան», և ամեն մեկը վալիին պատմել է սպանության պատճառը»: Եվ սուլթանը, լսելով այս խոսքերը, ձայն տվեց դռնապանին ու նրան ասաց. «Գնա վալիի մոտ և նրանց բոլորին ինձ մոտ բեր»:

Եվ դռնապանը գնաց ու տեսավ, որ դահիճը պատրաստվում է դերձակին կախել, և բղավեց նրան. «Պետք չէ՛», նա վալիին հայտնեց, ինչ որ ասել էր սուլթանը, և իր հետ տարավ նրան, նաև կուզիկին, որին ձեռքերի վրա տարան, և դերձակին ու հրեային և քրիստոնյային ու վերահսկիչին, և բոլորին թագավորի մոտ բերեցին: Եվ վալին, ներկայանալով սուլթանին, համբուրեց գետինն ու պատմեց. թե ինչ է պատահել նրանցից յուրաքանչյուրին, իսկ կրկնելն օգուտ չունի: Եվ երբ թագավորը լսեց պատմությունը, զարմացավ, ու նրան տիրեց հիացմունքը, և նա հրամայեց զրի առնել դա ոսկեղեն թանաքով, ու հարցրեց ներկաներին. «Լսե՞լ եք արդյոք ավելի դարձանալի բան, քան այս կուզիկի պատմությունն է»: Եվ այնժամ առաջ եկավ քրիստոնյան ու ասաց. «Ո՛վ արքա, ժամանակ տո՛ւր, եթե հրամայես, ես քեզ կպատմեմ մի բան, որ ինձ է պատահել, և դա առավել զարմանալի ու տարօրինակ է, քան կուզիկի պատմությունը»:— «Պատմի՛ր, ինչ որ ուզում ես»,— ասաց թագավորը:

ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ո՛վ ժամանակի արքա,— սկսեց քրիստոնյան,— երբ ես այս երկիրը մտա, եկել էի ապրանքներով, և նախասահմանությունն ինձ քեզ մոտ բերեց, բայց իմ ծննդավայրն է Կահիրեն: Ես այնտեղի ղպտիներից եմ ու դաստիարակություն եմ ստացել այնտեղ, և իմ հայրը միջնորդ էր, ու երբ տղամարդու հասակին հասա, հայրս վախճանվեց, և ես նրան փոխարինեցի որպես միջնորդ: Եվ, ահա, օրերից մի օր ես նստած էի ու ի՛նչ տեսնեմ, էջին հեծած գնում է շքեղ զգեստներ հագած մի երիտասարդ, որից սիրունը չի լինի: Եվ տեսնելով ինձ, նա ինձ խաղաղություն մաղթեց, իսկ ես ոտքի կանգնեցի՝ ի հարգանս նրա: Եվ նա հանեց թաշ-

կինակը, որի մեջ մի քիչ քնջութ կար, ու հարցրեց. «Ի՞նչ արժե սրա մի արգեբը»¹:— «Հարյուր դիրհեմ»,— պատասխանեցի ես: Եվ երիտասարդն ասաց. «Բեռնակիրներ ու կշռորդներ վերցրու ու եկ Հաղթանակի դարպասի մոտ՝ ալ-Ջավալի իջևանատուն, և ինձ այնտեղ կգտնեն»: Եվ նա թողեց ու դնաց, ինձ տալով թաշկինակը, որի մեջ նմուշն էր և ես եղա բոլոր գնորդների մոտ, և ամեն մի արդեբն ինձ հարյուր քսան դիրհեմ բերեց: Եվ ես վերցրի չորս բեռնակիր ու գնացի երիտասարդի մոտ, որին գտա ինձ սպասելիս: Եվ, տեսնելով ինձ, նա վեր կացավ ու բացեց մառանը և այնտեղից հանեց քնջութը, և երբ մենք շափեցինք այն, դուրս եկավ հիսուն արգեբ՝ հինգ հազար դիրհեմի արժողությամբ: Եվ երիտասարդն ասաց. «Միջնորդության համար ամեն մի արդեբից տասը դիրհեմը քեզ, ստացի՛ր փողը և չորս հազար հինգ հարյուր դիրհեմը պահիր ինձ համար, երբ ես վերջացնեմ իմ պաշարների վաճառքը, կգամ ու փողը կստանամ քեզնից»: Եվ ես պատասխանեցի. «Լավ»,— և համբուրեցի նրա ձեռքն ու հեռացա նրա մոտից, և այդ օրը ես վաստակեցի հազար դիրհեմ: Իսկ երիտասարդը մի ամիս բացակայեց և հետո եկավ ու հարցրեց ինձ: «Ո՞ր է փողը»: Իսկ ես ոտքի ելա ու ողջունեցի նրան ու հարցրի. «Չե՞ս ուզում մեզ մոտ մի բան ուտել»: Բայց նա հրաժարվեց ու ասաց. «Պատրաստի՛ր փողը, ես կգամ ու կվերցնեմ այն»,— ու գնաց: Իսկ ես պատրաստեցի փողը և նստեցի, նրան սպասելով: Եվ նա մի ամբողջ ամիս շերևաց, ու ես մտածեցի. «Այդ երիտասարդը բարության կատարելությունն է», Իսկ մի ամսից նա ջորի նստած եկավ, շքեղ զգեստներ հագած ու նման էր գիշերը ցուացող լիալուսնի, և կարծես բաղնիքից էր դուրս եկել, իսկ նրա դեմքը լուսնի նման էր՝ վարդագույն այտերով, պայծառ ճակատով ու խալով, որն ասես համալարի կետ լիներ, ճիշտ այնպես, ինչպես ասված է.

Միացել են արև, թափն ու կազմել են մի բույլ, տե՛ս,
 Պերճ, շողափայլ դուրս են եկել շքնաղությունք իբենց վես,
 Չգտողները գերի դարձան նրանց դյուրիշ հմայքին,
 Ո՞վ բարերար, ե՞րբ կկանչի մեզ ձայնն իրենց խնդազին:
 Գեղեցկության պերճ, անբասիր հմայքով են պարուրված,
 Ներհուն միտքն ու համեսությունն են վարդարանքը նրանց:
 Փառք ալլահին, հրաշքների արարիչին մեծագործ,
 Որ ինչ ուզի, միշտ կկերտի իր վարժ ձեռքով ստեղծագործ:

Եվ, նրան տեսնելով, ես ոտքի ելա նրա առջև ու համբուրեցի նրա ձեռքը և օրհնություն մաղթեցի նրան ու հարցրի. «Ով տեր, չե՞ս վերց-

¹ Արբեղ — տարողության չափ, որ հավասար է մոտ երկու հեկտոլիտրի:

նի քո փողը»: Եվ երիտասարդը պատասխանեց. «Իսկ ինչո՞ւ շտապեմ, ես գործերս կվերջացնեմ ու հետո դա ձեզանից կվերցնեմ», — և գնաց: Իսկ ես բացականչեցի. «Ալլահը վկա, երբ նա մյուս անգամ դա, ես անպայման կհյուրասիրեմ նրան, քանի որ ես նրա փողով առևտուր եմ արել ու դրա օգնութեամբ մեծ շահ ստացել»:

Իսկ երբ տարվա վերջը հասավ, նա եկավ, ավելի շքեղ զգեստներ հագած, քան առաջ: Ու ես սկսեցի աղերսել նրան, որ տուն մտնի ու վայելի իմ հյուրասիրությունը: Եվ երիտասարդն ասաց. «Այն պայմանով միայն, որ ինձ վրա ծախսածդ քեզ մոտ եղած իմ փողի հաշվին լինի»: Ու ես ասացի. «Լավ», — ու նստեցրի նրան և գնացի ու պատրաստեցի հարկ եղած ուտելիքները և խմելիքներն ու մյուս բաները և այդ բոլորը նրա մոտ բերեցի ու ասացի. «Հանուն ալլահի»: Եվ երիտասարդը մոտեցավ սեղանին ու, իր ձախ ձեռքը մեկնելով, սկսեց ինձ հետ ուտել, և ես զարմացա դրա վրա: Իսկ երբ դա վերջացրինք, ես լվացի նրա ձեռքերն ու սրբիչ տվեցի՝ սրբվելու համար, և նրա առջև քաղցրավենիք դնելուց հետո մենք նստեցինք դրույցի: Եվ այնժամ ես ասացի. «Ո՞վ տեր իմ, թեթևացրու իմ հոգսը, ինչո՞ւ էիր ձախ ձեռքով ուտում: Գուցե, քո ձեռքի որևէ տեղը ցավո՞ւմ է»: Եվ, իմ խոսքերը լսելով, երիտասարդն արտասանեց.

«Ո՞վ բարեկամ, մի՛ հարցնիր ինձ իմ հուզմունքից անասման
Եվ սիրտ մաշող հուր կրակից՝ ձախորդության մի նշան.
Բարի կամքով չեմ ես փոխել Սելմայի հետ Լեյլայիս,
Գիտցի՛ր, հաճախ մեր արարքը լոկ կարիքից է գալիս»:

Եվ նա հանեց ձեռքը թևքից ու հանկարծ, ի՞նչ տեսնեմ, դաստակէ՛լ առանց թաթի. ձեռքը կտրած է: Եվ ես զարմացա դրա վրա, իսկ երիտասարդն ինձ ասաց. «Մի՛ զարմացիր և մտքումդ մի՛ ասա, թե ես քեղ հետ ուտելիս ձախ ձեռքով կերա պարծենկոտությունից. իմ աջ ձեռքը կտրելու համար օտարոտի սլատճառ է եղել»: — «Իսկ ի՞նչն է պատճառը», — հարցրի ես: Եվ երիտասարդը պատասխանեց. «Իմացած եղի՛ր, որ ես Բաղդադում եմ ծնվել, և իմ հայրը նշանավոր մարդ էր այնտեղ: Եվ երբ տղամարդու հասակին հասա, ես օտարականներից, ճանտ պարհորդներից ու վաճառականներից պատմություններ լսեցի եղիպտական երկրների մասին, և դրանց հիշողությունը մնաց սրտումս: Եվ երբ հայրս մեռավ, ես վերցրի Բաղդադի ու Մոսուլի շատ սուլթաններ և, ամեն ինչ հավաքելով, Բաղդադից դուրս եկա: Եվ ալլահն ինձ լաբեհա-

ըողությունն էր նախասահմանել, և ես հասա ձեր այս քաղաքը:— Եվ հետո նա լաց եղավ ու արտատանեց.—

Հաճախ փոսից կույրը փրկվում,
Ողջը թաղվում է փոսում,
Խենթը՝ լոռում, իսկ խելացին
Փորձանք բերում իր գլխին:
Հավաաացյալը վատ ապրում,
Անհավատն է վայելում,
Ի՞նչ ճար գտնի առաքինին,—
Այդպես է կամքը վերին»:

Իսկ վերջացնելով այս ոտանավորը, նա ասաց. «Եվ ես ժամանեցի Կահիրե ու կտորեղենս Մասրուրի իջևանատնում տեղավորեցի և, արձակելով հակերը, հանեցի ու ծառային փող տվեցի, որ զնա ուտելիք բերի, իսկ ես մի փոքր քնեցի: Վեր կենալով, ես ման եկա Բեյն ալ Քասրեյն փողոցում ու վերադարձա և գիշերը հանգիստ քնեցի: Իսկ առավոտյան վեր կացա ու բացեցի գործվածքեղենի հակը և ինքս ինձ ասացի. «Գնամ շուկայում մի քիչ ման գամ ու տեսնեմ, թե ինչ կա, ինչ չկա»: Եվ ես վերցրի մի քանի գործվածք ու տվեցի իմ ծառաներից մեկին՝ տանելու, և գնացի Զիրջիսի շուկան, և միջնորդները դիմավորեցին ինձ (իսկ նրանք գիտեին իմ գալստյան մասին) ու վերցրին ինձանից գործվածքներն ու սկսեցին բղավել և առաջարկել դրանք: Բայց այդ գործվածքները նույնիսկ իրենց գինը չհանեցին, ու ես տխրեցի դրանից: Եվ միջնորդների ավագն ինձ ասաց. «Ո՞վ տեր, ես մի բան գիտեմ, որ բեզ շահ կբերի: Այնպես արա, ինչպես վաճառականներն են անում, և թո ապրանքը մի քանի ամիս ժամկետով պարտքով տուր՝ գրագրի, վկայի ու դրամափոխի ներկայությամբ: Դու ամեն հինգշաբթի ու երկուշաբթի փող կստանաս ու դիրհեմներ կվաստակես. մեկ դիրհեմի դիմաց՝ երկու և, բացի դրանից, Կահիրեն ու Նեղոսն էլ կտեսնես»:

Եվ ես ասացի. «Դա ճիշտ միտք է»,— և միջնորդներին հետս վերցնելով, գնացի իջևանատուն, իսկ նրանք գործվածքները վերցրին ու շուկա հանեցին, և ես վաճառեցի դրանք ու գինը դրանց վրա գրեցի և թուղթը տվեցի պրամափոխին, նրանից ստորագրություն վերցնելով, ու վերադարձա իջևանատուն: Եվ ես շատ օրեր անցկացրի, ամեն օր, մեկ ամսվա ընթացքում, նախաճաշելով դառան մսով և գինով ու քաղցրավենիքով: Եվ հասավ այն ամիսը, երբ ես պետք է փողս ստանայի, և ամեն հինգշաբթի ու երկուշաբթի գնում էի շուկա, նստում վաճառականների կրպակների մոտ, իսկ դրամափոխն ու գրագիրը գնում, փողը

բերում էին կեսօրից հետո, իսկ ես հաշվում էի, կներում քսակները, վերցնում փողը ու վերադառնում իջևան: Եվ ահա, օրերից մի օր (իսկ դա երկուշաբթի էր), ես բաղնիք գնացի և, վերադառնալով իջևան, գնացի իմ սենյակն ու նախաճաշեցի և մի գավաթ գինի խմեցի ու քնեցի, իսկ զարթնելով, հավի միս կերա և, օծանելիք ցանկելով վրաս, գնացի խանութը մի վաճառականի, որին Բեդր-էդ-դին էլ Բուստանի էին կոչում: Եվ նա, ինձ տեսնելով, ասաց. «Բարով եկար»,— և միառժամանակ խոսեց ինձ հետ, մինչև որ շուկան բացվեց:

Եվ հանկարծ մոտեցավ մի կին ճկուն կազմվածքով ու հպարտ քայլվածքով, հոյակապ գլխաշորով, շուրջն անուշահոտություններ սրտն էլով: Եվ նա հետ քաշեց քողը, ու ես տեսա նրա սև աչքերը, իսկ կինը ողջունեց Բեդր-էդ-դինին, և սա պատասխանեց ողջունին ու կանգնեց, ևրա հետ զրուցելով: Եվ երբ ես լսեցի նրա խոսելը՝ նրա սերը տիրեց իմ սրտին: Իսկ նա ասաց Բեդր-էդ-դինին. «Ոսկեթել զարդանկարով ծաղկավոր կտոր ունե՞ս»: Եվ վաճառականը հանեց մի կտոր այն կտորեղենից, որ ինձանից էր առել, և զնի վրա համաձայնության եկան հազար երկու հարյուր դիրհեմով: «Ես այս կտորը վերցնեմ ու գնամ, իսկ փողը կուղարկեմ»,— ասաց կինը վաճառականին: Բայց նա առարկեց.— «Ձի՛լինի, տիրուհի, ահա կտորեղենի տիրը, և ես նրա հանդեպ ժամկետով պարտավորություն ունեմ»:— «Ամո՞թ քեզ,— բացականչեց կինը,— ես սովոր եմ քո մոտից վերցնել ամեն տեսակ կտոր մեծ գումարով և քեզ ավելի մեծ շահ եմ բերում, քան դու ուզում ես, և փողը ուղարկում եմ քեզ»: Իսկ վաճառականը պատասխանեց. «Այո, բայց ես հարկադրված եմ այսօր եթե վճարել»:

Եվ այնժամ կինը վերցրեց կտորն ու շարտեց Բեդր-էդ-դինի երեսին ու բացականչեց. «Ձեր ցեղը ոչ ոքի գնահատել չգիտի»,— և վեր կացավ: Նրա դուրս գալուն պես ես զգացի, որ հոգիս նրա հետ թռավ: Եվ ես վեր կացա, կանգնեցրի նրան ու ասացի. «Ո՞վ տիրուհի, շնորհ արա՛, դեպի ինձ դարձրու քո ազնիվ քայլերը»: Եվ նա վերադարձավ ու ժպտաց ու ասաց. «Օ՛, քեզ համար եմ վերադառնում»,— և նստեց դիմացը, խանութի մոտ: Ու ես հարցրի Բեդր-էդ-դինին. «Քանիսո՞վ ես առել այդ կտորը»:— «Հաղար հարյուր դիրհեմով»,— պատասխանեց նա: Եվ ես ասացի. «Դու հարյուր դիրհեմ էլ շահ կունենաս, թուղթ տուր, ես այդ գնին համապատասխան ստորագրություն կտամ»: Եվ ես վերցրի կտորն ու իմ ձեռքով ստացական գրեցի Բեդր-էդ-դինի համար և, կտորը կնոջը հանձնելով, ասացի. «Վերցրու ու գնա, և եթե ուզում ես, փողը հաջորդ շուկայի օրը բեր, իսկ եթե կցանկանաս, դա իմ նվերն է հյու-

րիս»։— «Թող ավաճը բարիքով հատուցի քեզ և թող իմ ունեցած փողը տա քեզ ու քեզ իմ մարդը դարձնի»,— ասաց կինը (Իսկ ավաճը լսեց նրա աղոթքը)։ Իսկ ես բացականչեցի. «Յ, խանում, քոնը համարիր այդ կտորը, և դու դրանից էլի կունենաս, բայց թույլ տուր ինձ քո երեսին նայել»։ Եվ երբ ես իմ մեջ հազարավոր հառաչանքներ առաջացնող հայացքով նայեցի նրա դեմքին, նրա սերն իմ սիրտը մտավ, և ես դադարեցի իմ խելքի տերը լինելուց։ Իսկ հետո նա ցած թողեց բողբ և վերցրեց կտորն ու ասաց. «Ո՛վ տեր, մի՛ ստիպիր ինձ կարոտել»,— ու գնաց։ Իսկ ես նստեցի շուկայում մինչև հետկեսօրյա պահը, և իմ խելքը թունկը, ու սերը՝ տիրապետել ինձ։ Եվ ինձ համակած սիրո զարուխյունից մղված ես վեր կացա ու վաճառականից հարցրի այդ կնոջ մասին, և նա ասաց, «Նա փող ունի։ Նա մի էմիրի աղջիկն է, և նրա հայրը մեռել է ու մեծ հարստութուն թողել նրան»։

Եվ ես հրաժեշտ տվեցի նրան ու դուրս եկա ու գնացի իջևան, և ինձ ընթրիք մատուցեցին, բայց ես հիշեցի այն կնոջն ու ոչինչ չկերա ու պանկեցի քնել։ Բայց քոնը մոտ շեկավ ինձ, և ես մինչև առավոտ շքեցի և ելա ու շագա ոչ այն հագուստը, որ առաջ էի հագնում, և խմեցի մի գավաթ գինի ու մի թեթև նախաճաշ արեցի ու գնացի այն վաճառականի խանութը։ Ես ողջունեցի նրան ու նստեցի նրա մոտ, և երիտասարդ կինը, սովորականի նման, եկավ, առավել պերճորեն հագնված, քան առաջ, և նրա հետ մի ստրկուհի կար։ Եվ նա ողջունեց ինձ, բայց ո՛չ Բեդր-էդ-դինին, ու ասաց պերճախոս լեզվով, որից նուրբ ու բազցր լեզու ես չեմ լսել. «Մեկին ուզարկի՛ր ինձ հետ, որ վերցնի հազար երկու հարյուր դիրհեմը՝ կտորի արժեքը»։— «Իսկ ի՞նչ հարկ կա շտապելու»,— ասացի նրան, ու նա բացականչեց. «Թող չզրկվենք մենք քեզանից»,— և փողն ինձ հանձնեց։ Եվ ես նստել ու խոսում էի նրա հետ։ Եվ ես նշան արեցի նրան ու նա հասկացավ, որ ես ուզում եմ տիրապետել իրեն, և շտապ վեր կացավ, վախվորած, իսկ իմ սիրտը կապվել էր արդեն նրա հետ։ Եվ ես նրա հետևից դուրս եկա շուկայից, ու հանկարծ ինձ մի աղջիկ մոտեցավ ու ասաց. «Ո՛վ տեր, խոսիր իմ տիրուհու հետ»։ Եվ ես ապշեցի ու ասացի. «Ինձ ոչ ոք այստեղ չի ճանաչում»։ Բայց աղջիկը բացականչեց. «Ո՛վ տեր, ի՞նչ շուտ մոռացար նրան։ Իմ տիրուհին նա է, որ այսօր այսինչ վաճառականի խանութումն էր»։ Եվ ես աղջկա հետ գնացի դրամափոխների շուկա, և, տեսնելով ինձ, նրա տիրուհին իր մոտ կանչեց ու ասաց. «Ո՛վ սիրելիս, դու իմ հոգու խորքը թափանցեցիր, և քո սերը տիրել է իմ սրտին, և այն վայրկյանից, ինչ ես քեզ տեսա, ինձ համար քաղցր չէր ո՛չ քոնը, ո՛չ խմելիքը,

ո՛չ ուտելիքը»։— «Իմ սրտում շատ ավելին է, և դրությունն է, որ ազատում է տրտնջալու կարիքից»,— պատասխանեցի ես։ Եվ նա հարցրեց. «Ո՞վ սիրելիս, ի՞նձ մոտ, թե քեզ մոտ»։— «Ես այստեղ օտարական մարդ եմ,— պատասխանեցի ես,— և ապաստանելու ոչ մի տեղ չունեմ, բացի իջևանից։ Եթե շնորհ կանես, թող քեզ մոտ լինի»։ Եվ նա ասաց. «Կավ, բայց այսօր ուրբաթի նախօրյակն է, և ոչինչ դուրս չի դա, գուցե, միայն վաղը՝ աղոթքից հետո։ Աղոթի՛ր, էջ նստիր ու հարցրու էլ-նարանիա թաղամասը, իսկ երբ հասնես, հարցրու, թե որտեղ է Արու-Շամ մականվանյալ Բարաբաթ պետի տունը, ես այնտեղ եմ ապրում։ Եվ շուշանաս, ես քեզ սպասում եմ»։

Եվ ես անշափ ուրախացա, ու հետո մենք բաժանվեցինք։ Եվ ես գնացի այն իջևանը, որտեղ մնում էի, և գիշերն անցկացրի անքուն ու չէի հավատում, որ արշալույսը բացվել է։ Եվ ես վեր կացա ու փոխեցի շորերս և օծվեցի յուղերով ու անուշահոտություններով և, թաշկինակիս մեջ հիսուն դինար դնելով, Մասրուրի իջևանից մինչև Զուվեյլեի դարպասը գնացի, իսկ այնտեղ էջ նստեցի և նրա տիրոջը ասացի. «էլ-նարանիա տա՛ր ինձ»։ Եվ նա անմիջապես ինձ հասցրեց այնտեղ ու շուտով կանգ առավ էլ-Մունքարի կողմած թաղամասի դարպասի մոտ, և ես ասացի նրան. «Մտի՛ր թաղը և հարցրու պետի տունը»։ Եվ իշապանը գնաց ու մի կարճ ժամանակ բացակայեց և, վերադառնալով, ասաց. «Արի՛»։ Եվ ես ասացի. «Իմ առջևից գնա դեպի տունը։ Վաղ առավոտյան կգաս այստեղ ու ինձ կտանես»,— պատվիրեցի ես իշապանին։ «Հանուն այլահի»,— պատասխանեց նա, և ես վճարեցի նրան բառորդ դինար։

Եվ իմ առջև դուրս եկան երկու ջահել աղջիկներ, բարձր կրծքերով ու լուանի նման, և ասացին ինձ. «Մտի՛ր, մեր տիրուհին սպասում է քեզ։ Նա գիշերը, քեզնով ուրախանալով, չի քնել»։ Եվ ես մտա վերնասենյակ, որը յոթ դուռ ուներ ու որի շորս կողմից պատուհաններ էին բացվում դեպի պարտեզը, ուր ամեն կարգի մրգեր կային ու հորդաջուր առուններ ու երգեցիկ թռչուններ, և սենյակը սպիտակեցված էր սուլթանական կրով, որի մեջ մարդ իր արտացոլումն էր տեսնում, իսկ առաստաղը ծածկված էր ոսկենախշ արձանագրություններով, որ գրված էին լաջվարդով և հիանալի խոսքեր էին պարունակում ու փայլում էին նայողի աչքերի առջև։ Իսկ սենյակի հատակը սալարկված էր գույնզգույն մարմարով, կենտրոնում մի ջրավազան կար, որի եզրերին թառել էին ոսկեծուլլ թռչունները, որոնց կաուցներից մարգարտի ու հակինթի նման վճիտ ջուր էր ցայտում։ Եվ ամբողջ տանը փռել էին բազմագույն մե-

տաքսահյուս գորգեր, ու դրված էին նստաբաններ: Եվ, ներս մտնելով, ես նստեցի ու գեռ ուշքի շէի եկել, երբ մոտեցավ այն կինը՝ մարգարիտով ու ակնեղենով զարդարված պսակը գլխին, ու նրա դեմքը և թևերն ամբողջովին ծածկված էին նախշերով ու գրվածքներով: Եվ, տեսնելով ինձ, նա ժպտաց իմ երեսին ու գրկեց ինձ ու սեղմեց իր կրծքին և, բերանն իմ բերանին հպելով, սկսեց ծծել իմ լեզուն, ու ես էլ նույնն արեցի: Եվ նա ասաց. «Մի՞թե սա ճշմարի՛տ է: Դու ինձ մո՞տ ես եկել»: Եվ ես պատասխանեցի նրան. «Ես քո սարուկն եմ»: Իսկ նա բացականչեց. «Ողջույն, բարով ես եկել, ալլահը վկա, այն օրից ի վեր, որ ես քեզ տեսա, ինձ համար քունը քաղցր չէր և ուտելիքն անդուրեկան էր»:— «Ինձ համար նույնպես»,— պատասխանեցի ես: Եվ մենք նստեցինք ու սկսեցինք զրուցել, և ես գլուխս գետին էի խոնարհել ամաչելուց: Եվ շուտով սիոռոցի վրա ինձ ճոխ ուտելիքներ մատուցեցին՝ քուցախով միս, մեղրի մեջ տապակած դդում և խճողակով հավ, և ես կերա նրա հետ, ու մենք կշտացանք, և ինձ մատուցեցին կոնք ու սափոր, ու ես լվացի ձեռքերս: Իսկ հետո մենք օծվեցինք մշկախառն վարդաջրով ու, նստելով, զրուցեցինք, և նա արտասանեց այսպիսի բեյթեր.

«Թե ձեր գալստյան լուրն իմանայինք, ձեր ճանապարհին
Մեր սրտի գորգը և աչքի սևը մենք կփռեինք,
Մենք կփռեինք՝ հանդիպման պահին, նուրբ այտերը մեր,
Որ ճանապարհը մեր թարթիչների վրայով անցներ»:

Եվ նա տրտնջաց այն բանից, ինչ որ կրել էր, և ես նույնպես սրբատունջ հայտնեցի իմ կրածի համար, և նրա սերը տիրեց ինձ, և ամբողջ փողն ինձ համար ոչինչ բան դարձավ: Եվ մենք խաղում էինք, քաշքշում իրար ու համբուրվում, մինչև որ գիշերը եկավ, և այն ժամանակ աղջիկները մեզ ուտելիք ու գինի մատուցեցին, և հանկարծ տեսնեմ, որ դա մի իսկական խնջույք է: Եվ մենք խմեցինք մինչև կեսգիշեր, իսկ հետո պառկեցինք ու քնեցինք, և ես քնեցի նրա հետ մինչև առավոտ, և կյանքումս այդ գիշերվա նման գիշեր չէի տեսել: Իսկ երբ առավոտը բացվեց, ես վեր կացա և նրա անկողնու տակ դրեցի այն թաշկինակը, որի մեջ փողս էի պահել, և հրաժեշտ տվեցի նրան ու դուրս եկա, իսկ նա լաց եղավ ու ասաց. «Ո՛վ տեր իմ, ե՞րբ ես նորից կտեսնեմ այս գեղեցիկ դեմքը»: Եվ ես նրան ասացի. «Ես քեզ մոտ կլինեմ երեկոյան»: Դուրս դալով, ես գտա այն իշապանին, որը երեկ ինձ բերել էր և այժմ սպասում էր ինձ դարպասի մոտ, ու նստեցի էջն ու գնացի Մասրուրի իջևանը, և իջա ու իշապանին կես դինար տվեցի ու ասացի. «Մայրամուտին

նորից արի»։ — «Լավ», — պատասխանեց նա։ Եվ ես նախաճաշեցի ու գնացի գանձելու գործվածքեղենիս փողը, իսկ հետո վերադարձա ու նրա համար գառան տապակած պատրաստեցի ու քաղցրավենիք, ապա կանչեցի բեռնակրին, այդ բոլորը գրեցի զամբյուղի մեջ, վճարեցի նրան, ու վերադարձա իմ գործին ու զբաղվեցի մինչև մայրամուտը։

Իսկ մայրամուտին իշապանը եկավ ինձ մոտ, և ես վերցրի հիսուն դինար, թաշկինակի մեջ գրեցի ու գնացի նրա մոտ։ Եվ տեսա, որ այնտեղ լվացել են մարմարն ու մաքրել պղինձը և պատրաստել մոմակալներն ու վառել մոմերը, ուտելիքները դասավորել են ու գինին քամել։ Եվ ինձ տեսնելով, իմ սիրուհին թևերը վզովս գցեց ու բացականչեց. «Դու ինձ ստիպեցիր կարոտել»։ Իսկ հետո ուտելիք մատուցեցին, ու մենք կերանք, մինչև որ կշտացանք, և աղջիկները հավաքեցին սեղանն ու գինի դրեցին։ Եվ մենք անդադար խմեցինք մինչև կեսգիշեր, իսկ հետո անցանք ննջարան ու քնեցինք մինչև առավոտ։ Եվ ես վեր կացա ու ավեցի նրան, սովորականի նման, հիսուն դինար, ու դուրս եկա նրա մոտից։ Եվ ես տեսա իշապանին ու գնացի իջևան և մի քիչ քնեցի, ապա վեր կացա ու ընթրիք պատրաստեցի և ընկույզ ու նուշ պատրաստեցի բրնձի փլավի համար ու տապակած նվիկ, և վերցրի թարմ ու չոր մրրգեր ու ծաղիկներ և ուղարկեցի նրան։ Եվ, տուն գնալով, վերցրի հիսուն դինար, թաշկինակիս մեջ գրեցի ու դուրս եկա և, սովորականի նման, իշապանի հետ գնացի նրա տուն։ Եվ ես ներս մտա, ու մենք կերանք ու խմեցինք և քնեցինք մինչև առավոտ, իսկ հետո վեր կացա ու թաշկինակս ձգեցի նրա մոտ և, ինչպես միշտ, գնացի իջևան։ Եվ այդպես շարունակվեց որոշ ժամանակ։ Եվ ահա, մի անգամ էլ գիշերն անցկացրի ու զարթնեցի, շունենալով ոչ մի դիրհեմ ու ոչ մի դինար։ Եվ ես ինքս ինձ ասացի. «Այս բոլորը սատանայի գործն է», և արտասանեցի այսպիսի բեյթեր.

Երբ հարուստն է աղքատանում, լույսն է մարում աշխարհում,
Ինչպես շողերն են արևի մայրամուտին դալկանում,
Թե ներկա չէ, մարդիկ նրա անունն անգամ չեն հիշում,
Իսկ թե ներկա լինի, ասեա բաժին շունի աշխարհում։
Շուկայի մեջ, գաղտագողի անց է կենում լուռ ու մունջ,
Մենուֆյան մեջ արցունք թափում, արտասվում է անմոռունչ,
Աստված վկա, թե մարդ կյանքում ընչազուրկ է ու աղքատ,
Խորթ է, օտար, նույնիսկ մարդկանց բարեկամ ու հարուցատ։

Եվ իջևանից դուրս եկա ու անցա Բեյն էլ-Քասրեյն փողոցով ու հասա Զուվեյլեի դարպասի մոտ ու տեսա, որ մարդկանց ամբոխը խոնր-

վել է ու դարպասը լցվել է մարդկանցով: Եվ նախասահմանութեան թե-
լադրանքով ես մի զինվոր տեսա ու ակամայից սեղմվեցի նրան ու ձեռքս
մտավ նրա գրպանը, ես շարժեցի ձեռքս ու շոշափեցի մի քսակ նրա
այն գրպանում, որի մեջ իմ ձեռքը մտել էր: Եվ ես զգացի, որ ձեռքս
դիպչում է քսակին, ու այն հանեցի զինվորի գրպանից: Եվ զինվորն
զգաց, որ իր գրպանը թեթևացավ, ու ձեռքը տարավ այնտեղ, բայց ոչինչ
չգտավ: Եվ նա շուռ եկավ դեպի ինձ և, բարձրացնելով ձեռքի մա-
հակը, գլխիս խփեց, ու ես գետին գլորվեցի: Եվ մարդիկ շրջապատեցին
մեզ ու բռնեցին զինվորի ձեռքը սանձից ու ասացին. «Տեղդ նեղ լինելու
պատճառով դու այս երիտասարդին այդպես ուժգին խփեցիր»: Բայց
զինվորը գոռաց նրանց վրա ու ասաց. «Նա անիծյալ գո՞ղ է»: Եվ այս-
տեղ ես ուշքի եկա ու լսեցի, որ մարդիկ ասում են. «Նա գեղեցիկ երի-
տասարդ է, սա ոչինչ չի գողացել»: Մի քանիսը հավատում էին, մյուս-
ները չէին հավատում, և խոսքուզրույցը բազմապատկվում էր:

Եվ մարդիկ քաշում էին ինձ և ուզում էին ազատել զինվորի ձեռ-
քից: Եվ նախասահմանութեան կամքով հանկարծ դարպասից ներս մտան
վալին, պետն ու պահակները, և նրանք տեսան, որ ժողովուրդը խռնվել
է իմ ու զինվորի շուրջը: Եվ վալին հարցրեց. «Ի՞նչ է պատահել»: Եվ
զինվորն ասաց. «Ալլահը վկա, տեր, սա գող է: Իմ գրպանում կապույտ
քսակ ունեի, որի մեջ քսան դինար կար, և սա վերցրեց այն, երբ ես
բազմութեան մեջ էի»:— «Իսկ քեզ հետ որե՞տ մեկը կա՞ր».— հարցրեց
վալին զինվորին: Եվ զինվորը պատասխանեց. «Ոչ»: Եվ այնժամ վա-
լին ձայն տվեց պետին, ու նա բռնեց ինձ, և ալլահի քողը հանել էին
իմ վրայից: Եվ վալին ասաց պետին. «Մերկացրե՛ք դրան»:

Եվ երբ ինձ մերկացրին, քսակն իմ շորերի մեջ գտան: Իսկ երբ
քսակը գտան, վալին վերցրեց այն և բացեց ու հաշվեց փողը և տեսավ,
որ դրա մեջ քսան դինար կա, ինչպես ասել էր զինվորը:

Եվ վալին զայրացավ ու ձայն տվեց պահակներին և ինձ նրա մոտ
տարան, ու նա հարցրեց. «Ո՞վ երիտասարդ, ճիշտն ասա, դո՞ւ ես գո-
ղացել այս քսակը»: Եվ ես գլուխս խոնարհեցի ու ինքս ինձ ասացի.
«Եթե ասեմ՝ չեմ գողացել, քսակն իմ գրպանից հանեցին, իսկ եթե
ասեմ՝ գողացել եմ, տանջանք պիտի կրեմ»: Եվ ես գլուխս բարձրացրի
ու ասացի. «Այո՛, ես եմ վերցրել այն»: Եվ, ինձանից այս խոսքերը լսե-
լով, վալին զարմացավ ու վկաներ կանչեց, և նրանք ներկայացան ու
հաստատեցին իմ խոսքերը, և այո բոլորը տեղի ունեցավ Զուվեյլեի
դարպասի մոտ: Եվ վալին հրաման տվեց դահձին ու նա կտրեց իմ աջ
ձեռքը: Եվ զինվորի սիրտը փափկացավ, ու նա ինձ պաշտպանեց, և

վալին թողեց ինձ ու գնաց: Իսկ մարգրիկ մնացին ինձ մոտ ու ինձ մի գավաթ գինի տվեցին, իսկ զինվորը քսակն ինձ տվեց ու ասաց. «Դու գեղեցիկ երիտասարդ ես, քեզնից չպետք է դող դուրս գա»: Ապա ես արտասանեցի.

«Ալլահը վկա, ես դող չեմ եղել, եղբայր հարազատ,
Սովոր չէ երբեք ձեռքս գողության, ընկեր իմ անգին,
Բախտի շար ձեռքի հարվածն է միայն նեանել ինձ անհայտ
Ճամփաների մեջ ու գերի դարձրել հոգս ու կարիքին:
Դու չես ինձ հաղթել, տերն է արձակել նետն իր շեշաակի
Եվ արքայական պսակը գլխիս տապալել գետին»:

Եվ զինվորը թողեց ինձ ու գնաց՝ քսակն ինձ տալով, և ես նույնպես գնացի ու ձեռքս փաթաթեցի շորով ու ծոցս դրեցի: Եվ իմ վիճակը վատացավ, և գեմքիս գույնը դեղնեց ինձ պատահածի պատճառով: Եվ ես անառողջ վիճակում գնացի այն կնոջ տունը ու անկողին նետվեցի: Եվ կինը տեսավ, որ դեմքիս գույնը փոխված է, ու հարցրեց. «Ի՞նչդ է ցավում, և ինչո՞ւ անտրամադիր ես, ինչպես տեսնում եմ»:— «Գլուխս է ցավում ու վատ եմ զգում»,— պատասխանեցի ես: Եվ այնժամ նա բարկացավ ու անհանգստացավ ինձ համար ու բացականչեց. «Մի՛ վառիր սիրտս, տեր իմ: Նստի՛ր, բարձրացրու գլուխդ ու պատմի՛ր ինձ, թե այսօր ի՞նչ է պատահել քեզ: Քո դեմքին ես շատ բան եմ կարդում»:— «Ազատի՛ր ինձ խոսելուց»,— ասացի ես: Եվ նա լաց եղավ ու ասաց. «Դու կարծես այլևս չես ուզում ինձ: Ես տեսնում եմ, որ դու սովորականի նման չես»: Եվ ես լռում էի, իսկ նա սկսեց խոսել ինձ հետ, բայց ես չէի պատասխանում:

Իսկ երբ գիշերը մոտեցավ, նա ինձ ուտելիք մատուցեց, բայց ես հրաժարվեցի ուտելուց, վախենալով, թե կտեսնի, որ ձախ ձեռքով եմ ուտում, և ասացի. «Ես հիմա ուտել չեմ ուզում»:— «Պատմի՛ր ինձ, թե ինչ է պատահել քեզ այսօր և ինչո՞ւ ես դու մտահոգ, և ինչո՞ւ հոգիդ ու սիրտդ փշրված են»,— ասաց նա: Եվ ես պատասխանեցի. «Հիմա ես քեզ կպատմեմ առանց շտապելու»: Եվ նա ինձ գինի մատուցեց ու առաց. «Ահավասիկ, սա կցրի քո հոգսը: Անպայման խմի՛ր ու պատմի՛ր ինձ, թե ի՞նչ է պատահել»:— «Ես անպայման պետք է պատմե՞մ քեզ»,— հարցրի ես: Եվ նա պատասխանեց. «Այո՛»: Եվ այնժամ ես ասացի. «Եթե դա անպատճառ պետք է լինի, խմեցրու ինձ քո ձեռքով»: Եվ նա լցրեց գավաթը, ու ես խմեցի, և նա կրկին լցրեց այն ու մեկնեց ինձ, ու ես

վերցրի նրանից իմ ձախ ձեռքով, և արցունքները վազեցին իմ աչքերից: Եվ ես արտասանեցի.

«Երբ ալլահը կամենում է փորձանքների մեջ գցել
ևսկոք մարդուն սրամիա, խորագետ ու փորձառու
նրա հոգին կուրացնում, տկանչներն է դարձնում խուլ,
Աչքի լույսը մթնեցնում, գլխից էլ խելքը առնում:
Իսկ երբ փորձանք ու պատիժ կատարվում են լիովին,
Հեռ է աալիս բոլորն այգ, որ գաս առնի մարդ կրկին»:

Եվ, վերջացնելով ոտանավորը, ես վերցրի գավաթը ձախ ձեռքով ու լաց եղա, իսկ նա մի սուր ճիչ արձակեց և հարցրեց. «Ինչո՞ւ ես լաց լինում: Դու վառեցիր սիրտս: Ինչո՞ւ գավաթը ձախ ձեռքով վերցրիր»: «Ձեռքիս չիբան է դուրս եկել»,— պատասխանեցի ես: Եվ նա ասաց. «Հանի՛ր ձեռքդ, ես կծակեմ չիբանը»: Բայց ես ասացի. «Հիմա դրա բացելու ժամանակը չէ: Մի՛ ձանձրացրու ինձ: Ես հիմա ձեռքս չեմ հանի»:

Հետո ես մի գավաթ էլ խմեցի, և նա այնքան ժամանակ խմեցրեց, մինչև գինին ինձ հաղթեց ու ես տեղումս քնեցի, և այդ ժամանակ նա տեսավ իմ ձեռքն առանց թաթի և, խուզարկելով ինձ, գտավ ոսկով քսակը: Եվ նրան այնպիսի տխրություն տիրեց, ինչպիսին դեռ ոչ ոքի չի տիրել, և իմ պատճառով նա մինչև առավոտ տառապեց: Իսկ քնից զարթնելով, ես տեսա, որ նա ինձ համար խաշու է եփել ու մատուցում է ինձ, ու ես տեսա, որ դա շորս հավից է պատրաստած, և նա ինձ մի գավաթ գինի տվեց խմելու: Եվ ես կերա ու խմեցի, և քսակը, սովորականի նման, դրեցի իր տեղն ու դուրս գալ էի ուզում, բայց նա հարցրեց. «Ո՞ւր ես գնում»:— «Մի տեղ, ուր հարկավոր է, որ գնամ»,— պատասխանեցի ես: Բայց նա ասաց. «Մի՛ գնա, նստի՛ր»:

Եվ երբ նստեցի, նա բացականչեց. «Ուրեմն քո սերն այն աստիճանին է հասել, որ դու ծախսել ես քո ամբողջ փողն ու զրկվե՞լ ես թաթից: Երդվում եմ քո առջև, և վկա է դրան ալլահը, որ ես քեզնից չեմ բաժանվի: Դու շուտով կհամոզվես իմ խոսքերի ճշմարտությանը»: Եվ նա մարդ ուղարկեց վկաների հետևից, և երբ նրանք ներկայացան, նա ասաց. «Գրեք իմ ամուսնական պայմանն այս երիտասարդի հետ և վկա եղեք, որ ես ստացել եմ օժիտը»: Եվ նրանք վկա եղան իմ ամուսնական պայմանին՝ նրա հետ, ու դրանից հետո նա ասաց.— «Վկա եղեք, որ իմ ամբողջ փողը, որ այս սնդուկի մեջ է գտնվում, և իմ ունեցած շունեցած բոլոր ստրուկներն ու ստրկուհիները պատկանում են այս երիտասարդին»:

Եվ նրանք հաստատեցին դա, ու ես ընգունեցի ընծայագիրը, և նրանք գնացին՝ նախապես ստանալով իրենց վարձը: Իսկ դրանից հետո նա բռնեց իմ թևը ու, տանելով պահարանի մոտ, բացեց մի մեծ սնդուկ և ասաց ինձ. «Տե՛ս, թե ինչ կա սնդուկի մեջ»: Եվ ես նայեցի ու ի՛նչ տեսա. սնդուկը լիքն էր թաշկինակներով: Իսկ նա ասաց. «Սա քո փողն է, որ ես քեզանից ստացել եմ: Ամեն անգամ, երբ դու ինձ տալիս էիր հիսուն դրնարով թաշկինակ, ես ծալում էի այն ու այս սնդուկի մեջ գցում: Վերցրո՛ւ քո փողերը, դրանք վերադարձան քեզ մոտ, և դու այսօր հարուստ ես: Բախտը քեզ հարվածեց իմ պատճառով. դու կորցրիր քո աջ ձեռքը, և ես շեմ կարող փոխհատուցել այդ: Եթե նույնիսկ ես իմ հոգին զոհաբերեի, դա քիչ կլիներ: Եվ դու իմ նկատմամբ առավելութուն ունես:— Եվ նա ասաց ինձ.— Ստացի՛ր քո փողը»: Եվ ես նրա սնդուկը տարա իմի մոտ ու նրա փողը գրի իմ փողի մոտ, որ ես տվել էի իրեն, ու իմ սիրտը ցնծաց, ու հոգսս փարատվեց: Եվ ես համբուրեցի իմ կնոջն ու շնորհակալութուն հայտնեցի նրան, իսկ նա ասաց. «Դու քո ձեռքը զոհեցիր իմ սիրուն: Ինչպե՞ս կարող եմ ես փոխհատուցել դա: Ալլահը վկա, եթե սիրուց իմ հոգին էլ քեզ տայի, դա, հավանաբար, քիչ կլիներ, և ես ի վիճակի շեմ հարկ եղածին պես հատուցել քեզ»:

Դրանից հետո նա հատուկ գույքագրով ինձ վրա գրեց այն բոլոր հագուստները, ակնեղենն ու իրերը, որ ունեւր, և անցկացրեց այդ գիշերը իմ հոգսով մտահոգված: Եվ ես պատմեցի նրան այն ամենը, ինչ որ պատահել էր ինձ, և գիշերն անցկացրի նրա հետ: Եվ երբ դեռ մի ամիս էլ չէր անցել, նրա թուլութունն աճեց ու հիվանդութունը սաստկացավ, և ապրելով միայն հիսուն օր, նա հայտնվեց այն աշխարհի բնակիչների մոտ: Եվ ես ծեսով թաղեցի նրան հողում և Ղուրանը կարդալ տվեցի նրա վրա, և նրա համար, որպես ողորմութուն, շատ փող բաշխեցի: Իսկ դուրս գալով նրա դամբարանից, ես տեսա, որ մեծամեծ հարստութուններ, կալվածքներ ու ազարակներ են պատկանում նրան: Եվ նրա շտեմարանների թվում էր նաև քնշութի շտեմարանը, այն քնշութի, որի մի մասը քեզ վաճառեցի, և այսքան ժամանակվա ընթացքում ես նրա համար քեզ չէի այցելում, որ վաճառում էի մնացած պաշարները և այն ամենը, ինչ որ ամբարներում էր, և ես մինչև այժմ էլ չեմ ստացել ամբողջ փողը: Մի առարկիր, ուրեմն, այն բանի գեմ, ինչ որ ես քեզ ասեմ, քանի որ ես քո կերակուրը կերա, ես նվիրում եմ քեզ քնշութի այն փողը, որ քեզ մոտ է գտնվում: Ահա իմ աջ ձեռքը կտրելու և ձախ ձեռքով ուտելուս պատճառը»:

«Դու սիրալիր ես ու բարեգործ»,— ասացի ես նրան, Եվ նա պատասխանեց. «Ձե՞ս ուզի ինձ հետ իմ երկիրը մեկնել: Ես Կահիրեի ու Ալեքսանդրիայի ապրանքներ եմ գնել, և գուցե, դու համաձայնես ինձ ուղեկցե՞լ»:— «Լավ»,— ասացի ես ու ժամկետ նշանակեցի ամսվա սկիզբը, իսկ հետո ծախսեցի այն ամենը, ինչ ունեի, և գնեցի ուրիշ ապրանքներ ու երիտասարդի հետ ուղևորվեցի այս հողը, այսինքն ձեր երկիրը: Եվ երիտասարդը վաճառեց իր ապրանքները և ձեր երկրում ուրիշ ապրանքներ գնեց ու եգիպտական հողերը մեկնեց, իսկ ինձ բախտ վիճակվեց այս գիշեր այստեղ մնալ, և ինձ օտարության մեջ պատահեց այն, ինչ որ պատահել է: Սա ավելի զարմանալի չէ՞, արդյոք, ով մեր ժամանակի արքա, քան այն, ինչ որ պատահել է կուզիկին»:

«Ձեզ բուրբիդ անհրաժեշտ է կախել»,— ասաց թագավորը:

Եվ այնժամ վերահսկիչը մոտեցավ Չինաստանի թագավորին ու ասաց. «Եթե դու ինձ հավատաս, ես քեզ կուզիկին գտնելուցս առաջ ինձ հետ պատահած մի պատմություն կպատմեմ, և եթե այն ավելի զարմանալի լինի, քան նրա պատմությունը, մեզ կբաշխե՞ս մեր հողին»:— «Լավ»,— ասաց թագավորը: Եվ վերահսկիչն ասաց.

ՎԵՐԱՀՍԿԻՉԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացած եղիր, որ անցյալ գիշեր ես մի հավաքույթում էի, որտեղ Ղուրանի քնթերցում էին կազմակերպել ու հավաքել էին օրենսգետներին: Եվ երբ քնթերցողները կարդացին-վերջացրին, սեղան բացեցին, և ի թիվս այն ամենի, ինչ որ մատուցեցին, կար նաև շաքարած նուշ՝ քացախի մեջ: Եվ մենք մոտեցանք ու սկսեցինք ուտել նուշը, բայց մեզնից մեկը հեռու կանգնեց ու շկերավ դրանից, և թեև մենք խնդրում էինք նրան, նա երգվում էր, որ նուշ չի ուտի: Այնուամենայնիվ, մենք ստիպեցինք նրան, ու նա բացականչեց. «Մի ստիպիր ինձ, էլ բավական է, ինչ որ ինձ պատահել է նուշ ուտելու պատճառով,— և ապա արտասանեց.

Թմրուկն ուսիդ դիր ու ճամփա ընկիր.

Թե շպարվել ես ուզում, ա՛ռ քսի՛ր ծարիր»:

Իսկ երբ վերջացրեց, մենք հարցրինք նրան. «Ի սեր ալլահի, աղերսում ենք քեզ, ինչո՞ւ ես նուշ ուտելուց հրաժարվում»: Եվ նա պատասխանեց. «Եթե ես անպայման պիտի ուտեմ, ապա կուտեմ միայն այն

բանից հետո, երբ ձեռքերս քառասուն անգամ լվացած կլինեմ օձառով, քառասուն անգամ սողայով և քառասուն անգամ էլ մոխրաջրով, իսկ ընդամենը՝ հարյուր քսան անգամ»։ Եվ այնժամ խնջույքի տերը հրամայեց ծառաներին ջուր բերել և այն ամենը, ինչ որ պահանջում էր երիտասարդը, և նա ձեռքերը լվաց այնպես, ինչպես ես արդեն ասացի, իսկ դրանից հետո եկավ ու նստեց ու ձեռքը մեկնեց, կարծես վախեցած, և զղվանքով նուշը վերցրեց ու սկսեց իրեն հարկադրելով ուտել։ Եվ դրանից մենք ծայրահեղ զարմանքի մեջ ընկանք։ Եվ երիտասարդի ձեռքը դադում էր, և նա ցույց տվեց իր ձեռքի բուժ մատը, և հանկարծ մենք տեսանք, որ մատը կտրած է, և երիտասարդն ուտում է շորս մատով։ Եվ մենք հարցրինք նրան. «Ալլահի սիրուն, աղաչում ենք քեզ, ասա, ի՞նչ է պատահել քո բուժ մատին։ Նա հենց այդպե՞ս է ստեղծվել ալլահի կողմից, թե՞ դժբախտություն է պատահել»։ Եվ երիտասարդը պատասխանեց. «Ով եղբայրներ, այսպես է ոչ միայն ա՛յս բուժ մատս, ալլե՛ մյուսը, ոտքերինս նույնպես։ Այ, տեսեք»։ Եվ նա հանեց մյուս ձեռքն ու ցույց տվեց բուժ մատը, և մենք տեսանք, որ նա էլ այնպես է, ինչպես աշինը, և ոտքերն էլ նույնպես առանց բժամատերի էին։ Եվ տեսնելով, որ այդպես է, մենք առավել ևս զարմացանք ու ասուցինք նրան. «Մենք չենք համբերում իմանալու քո պատմությունը, և այն, թե ինչո՞ւ են քո բուժ մատները կտրվել, և ինչո՞ւ դու հարյուր քսան անգամ լվացիր ձեռքերդ»։

«Իմացեք,— ասաց այնժամ երիտասարդը,— որ իմ հայրը խալիֆ Հարուն ալ-Ռաշիդի օրոք Բաղդադի հարուստ վաճառականներից մեկն էր։ Նա մոլի կերպով սիրում էր գինի խմել, ջնարի ու երաժշտական այլ գործիքների նվազը լսել, և մահվանից հետո ոչինչ չթողեց։ Եվ երբ նա մեռավ, ես Ղուրան ընթերցել տվեցի ու սուգ պահեցի նրա համար գիշերներ ու ցերեկներ, իսկ հետո բացեցի նրա խանութը և տեսա, որ նրանից հետո շատ քիչ բան է մնացել, և զեռ նրա պարտքերն էլ երևան բերեցի։ Ես հորդորեցի պարտատերերին համբերել ու մեղմացրի նրանց սիրտը, և սկսեցի առևտուր անել ուրբաթից ուրբաթ և վճարել պարտատերերին։ Եվ այդպես շարունակվեց միառժամանակ, մինչև որ ես լիովին վճարեցի պարտքերը և մեծացրի իմ դրամագույուխը՝ գիշեր ու ցերեկ աշխատելով։ Եվ ահա, մի անգամ, օրերից մի օր, նստած եմ ու հանկարծ անսպասելիորեն տեսնեմ մի երիտասարդ աղջիկ, որից գեղեցիկին իմ աչքերը շէին տեսել, ու նա զուգլած էր զարդերով ու թանկարժեք իրերով, և գնում էր ջորու վրա նստած, և նրա առջևից ստրուկ էր գնում, հետևից էլ։ Եվ նա ջորին կանգնեցրեց շուկայի մուտքի առջև

և ինքը ներս մտաւ, ու ներքինին հետևեց նրան ու ասաց. «Ով տիրուհի, ներս մտիր և թող ոչ ոք չիմանա, որ դու այստեղ ես, թե չէ մեր դեմ կրորբոքես բարկութեան կրակը»: Եվ մինչդեռ նա նայում էր վաճառականների խանութները, ներքինին ծածկել էր նրան և նա ոչ ոքի չգտավ, որն իր խանութն արդեն բացած լիներ, բացի ինձանից, և մոտեցավ, ու ներքինին էլ նրա հետևից, և նստեց իմ խանութի մոտ ու ողջունեց ինձ, և ես նրա խոսքերից ավելի գեղեցիկ ու զրույցից ավելի նուրբ ոչինչ չէի լսել: Իսկ հետո նա բացեց իր երեսը, և ես տեսա, որ նա լուսնի է նման, և ես նրան նայեցի մի այնպիսի հայացքով, որն ինձնից հաղար հառաչանք կորզեց, և նրա սերն իմ սիրտն ընկավ: Եվ ես սկսեցի դարձյալ ու դարձյալ նայել նրա դեմքին ու արտասանեցի.

«Մետաքս հագած գեղեցկուհուն դու ասա,
Մահը միայն վերջ կտա իմ տանջանքին,
Մերձեցի՛ր ինձ, գուցե մնամ կենդանի,
Ձեռքս եմ մեկնել քո կենսաբեր շնորհին»:

Եվ, լսելով այս բեյթերը, նա պատասխանեց բանաստեղծի խոսքերով.

«Թե մոռանաք ինձ, սիրուս մեջ էլ համբերանք չեմ հիշի,
Միտքս ու հոգիս շեն ճանաչում սերն ու կիրքը ուրիշի:
Թե հայացքս ուրիշներին գամվի թեկուղ մի վայրկյան,
Թող շտեսնեմ ուրախությունն ու խինդը մեր հանդիպման:
Երգվում եմ ես, շեմ մոռանա քո հուր սերը հավիտյան,
Տխուր սիրտս քո այցին է ակնկալում ամեն ժամ:
Սիրո բաժակը յեփ-լեցուն դատարկեցի ես խալա
Օ՛, թե սերը ձեզ հարբեցնէր ու դառնալիք սիրահար:
Ձեզ հետ տարեք իմ աճյունը և իմ հոգին, ուր գնաք,
Հեզ մարմինս, ուր որ իջնեք, այնտեղ հանձնեք հողին տաք:
Եվ երբ հետո անունս տաք, ձեզ պատասխան կլինի
Ձեր ձախն առած սկզբներիս հառաչանքը ողբագին:
Եվ թե հարցնեք, ի՞նչ է կամ ուզում ես ասածուց ողորմած
«Լոկ թողություն — ես կասեի, — մեծ ալլահից ու ձեզնից»:

Իսկ ոտանավորը վերջացնելով, նա հարցրեց. «Ո՞վ երիտասարդ, նախշուն կտոր ունե՞ս»: Եվ ես պատասխանեցի. «Տիրուհի, քո սարուկն աղբատ է, բայց սպասիր, մինչև վաճառականները բացեն խանութները, և ես քեզ համար կրեմ սրտիդ ուզածը»:

Եվ հետո ես սկսեցի խոսել նրա հետ և ընկղմվեցի սիրահարություն ծովն ու թափառեցի նրա սիրո ճամփեքին, մինչև որ վաճառականները բացեցին խանութները, և այնժամ ես դուրս եկա ու վերցրի նրա համար

այն ամենը, ինչ որ նա պահանջում էր, իսկ այդ բոլորի գինը կազմում էր հինգ հազար դիրհեմ: Եվ նա դործվածքները ներքինուն տվեց, ու ներքինին դրանք վերցրեց, և նրանք դուրս եկան շուկայից ու կնոջ մոտ բերեցին ջորին: Եվ նա գնաց, առանց ինձ ասելու, թե որտեղից է ինքը, իսկ ես ամաչեցի նրա հետ այդ մասին խոսել: Եվ վաճառականները պարտավորեցրին ինձ վճարել կտորեղենի գինը, և ես հինգ հազար դիրհեմի պարտքն ինձ վրա վերցրի:

Եվ ես տուն գնացի՝ հարբած այն կնոջ սիրով, և ինձ ընթրիք մատուցեցին, ու ես մի կտոր հաց կերա ու հիշեցի նրա գեղեցկությունը և հմայքը և ուզեցի քնել, բայց քունը մոտ չեկավ ինձ: Եվ այդ վիճակում ես անցկացրի մի ամբողջ շաբաթ, ու վաճառականներն ինձնից պահանջեցին փողը, բայց ես հորդորեցի նրանց ևս մի շաբաթ սպասել: Իսկ մի շաբաթից հետո նա հանկարծ եկավ, դարձյալ ջորի հեծած, և նրա հետ էին ներքինին ու երկու ստրուկ: Եվ նա ողջունեց ինձ ու ասաց. «Ո՞վ իմ տեր, մենք ուշացրինք կտորեղենի փողը: Դրամափոխին կանչի՛ր ու ստացի՛ր փողը»: Եվ դրամափոխը եկավ, ու ներքինին փողը հանեց, ու ես շվերցրի, այլ զրուցեցի կնոջ հետ, մինչև շուկան բացվեց: Եվ այդ ժամանակ նա ասաց. «Ինձ համար այսինչ ու այսինչ բաները գնիր»: Եվ ես վաճառականներից վերցրի նրա համար այն ամենը, ինչ նա կամենում էր, և նա վերցրեց դրանք ու գնաց, առանց փողի մասին ինձ որևէ բան ասելու: Եվ երբ նա գնաց, ես զղջացի դրա համար, որովհետև ես վաճառականներից վերցրել էի նրա ուզածը՝ հազար դիրհարի արժողությամբ:

Եվ այն բանից հետո, երբ նա արդեն չբացել էր իմ տեսողությունից, ես ինքս ինձ ասացի. «Ի՞նչ բան է այս սերը: Նա ինձ հինգ հազար դիրհեմ վճարեց ու հազար դիրհարի ապրանք վերցրեց»: Եվ ես տեսա, որ ինձ մոտ բավական շափով փող չկա վաճառականներին վճարելու համար, և ասացի. «Վաճառականները հո միայն ինձ են ճանաչում, Այդ կինն ուղղակի խաբեբա է. նա մտլորության մեջ գցեց ինձ իր հմայքով ու գեղեցկությամբ, և, տեսնելով, որ ես դեռ ջահել եմ, ծիծաղեց ինձ վրա, իսկ ես չհարցրի էլ, թե որտեղ է ապրում»: Եվ ես ամբողջ ժամանակ անհանգստանում էի, իսկ նրա բացակայությունը մի ամբողջ ամսից ավելի տևեց, և վաճառականները պահանջում էին ինձնից ու նեղում ինձ, և ես իմ հողերը վաճառքի հանձնեցի ու ներբուստ որոշեցի քամուն տալ ունեցվածքս:

Եվ մի անգամ ես նստել ու մտորում էի և դեռ չէի սթափվել, երբ տեսա, որ նա շուկայի դարպասի առջև իջնում է ջորուց ու գալիս է ինձ

մոտ: Եվ նրան տեսնելուն պես իմ հոգսերը ցրվեցին, և ես մոռացա, թե ինչ է պատահել ինձ, իսկ նա սկսեց զրուցել, հիանալի խոսակցություն վ: բելով, և ասաց. «Կանչիր դրամափոխին ու փողը կշռիր»,— և ինձ վճարեց իր վերցրածի գինը՝ մի քան էլ ավելի: Իսկ հետո նա ինձ հետ դարձյալ խոսեց, ու ես խեղդվում էի երջանկությունից ու ցնծությունից:

Եվ նա հարցրեց ինձ. «Կին ունե՞ս»: Եվ ես պատասխանեցի. «Ո՛չ, ես ո՛չ մի կին չեմ տեսել»,— ու լաց եղա: «Ինչո՞ւ ես լաց լինում»,— հարցրեց նա: Եվ ես պատասխանեցի. «Հո՛գ չէ»: Իսկ հետո ես վերցրի մի քանի դինար ու տվեցի ներքինուն և խնդրեցի, որ նա այդ գործի միջնորդը լինի: Իսկ նա ծիծաղեց ու ասաց. «Նա քեզ ավելի է սիրում, քան դու իրեն: Այն կտորները, որ նա քեզնից վերցրել է, նրան հարկավոր չեն, և նա այդ արել է միայն քեզ սիրելու պատճառով: Խոսի՛ր նրա հետ, ինչի մասին ուզում ես, նա քեզ չի հանդիմանի քո ասածների համար»: Իսկ կինը տեսավ, որ ես փող ավելցի ներքինուն:

Եվ ես վերագարձա ու նստեցի և ասացի նրան. «Սիրալի՛ր եղիր քո ստրուկի հանդեպ ու զիջի՛ր նրան այն բանում, ինչ որ նա քեզանից խնդրի»,— և ես ասացի նրան այն ամենը, ինչ կուտակվել էր իմ հողում: Եվ նա համաձայնությամբ պատասխանեց իմ խոսքերին ու ներքինուն ասաց. «Դու նրան կհասցնես իմ նամակը,— իսկ ինձ դառնալով, ասաց.— այնպես արա՛, ինչպես ներքինին կասի»: Հետո նա վեր կացավ ու գնաց, իսկ ես վաճառականներին վճարեցի փողը, և նրանք շահ ստացան, իսկ ինձ բաժին մնաց այն քանը գիտակցելու ցավը, որ նրա մասին տեղեկություններս ընդհատվեցին: Եվ ես ամբողջ գիշերը շքնեցի: Բայց ընդամենը մի քանի օր էր անցել, և ներքինին ինձ մոտ եկավ, ու ես հարգանք մատուցեցի նրան ու հարցրի կնոջ մասին, և նա պատասխանեց. «Նա հիվանդ է»:— «Բացատրի՛ր ինձ նրա հանգամանքները»,— խնդրեցի ես ներքինուն: Եվ նա ասաց. «Այդ աղջկան դաստիարակել է Սիտտ Զուբեյդան՝ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆի կինը: Աղջիկը նրա ստորկուհիներից է: Նա իր տիրուհուց խնդրել է ներս ու դուրս անելու իրավունք և հասել է այն բանին, որ տիրուհու կառավարչուհին է դարձել: Իսկ հետո նա Սիտտին պատմել է իր մասին ու խնդրել, որ իրեն կնություն տա քեզ, բայց Սիտտը ասել է. «Ես այդ բանը չեմ անի, մինչև երիտասարդին շտեմենեմ: Եթե նա քեզ նման է, ես քեզ կամուսնացնեմ նրա հետ»: Իսկ մենք հիմա ուզում ենք քեզ պալատ տանել, և եթե դու պալատ ընկնես, ապա բախտ կունենաս նրա հետ ամուսնանալու: Իսկ եթե քո գործը բացվի, գլուխդ կկտրեն: Ի՞նչ կասես սրան»:— «Քեզ հետ

կգամ,— պատասխանեցի ես,— և կկրեմ այն ամենը, ինչ որ ինձ պատմեցիր»:

Եվ այնժամ ներքինին ինձ ասաց. «Երբ մութն ընկնի, գնա՛ մզկիթ, ազոթի՛ր ու այնտեղ գիշերի՛ր: Դա այն մզկիթն է, որ Տիգրիս գետի ափին կառուցել է Սիտա Զուբեյդան».— «Սիրով և հաճույքով»,— պատասխանեցի ես: Եվ երբ վրա հասավ երեկոն, ես գնացի մզկիթ, ազոթեցի ու գիշերն այնտեղ անցկացրի, իսկ լուսաբացին հանկարծ նավակով հայտնվեցին երկու ներքինի՝ և նրանց հետ դատարկ սնդուկներ կային: Նրանք սնդուկները մզկիթ բերեցին, և նրանցից մեկը հեռացավ, իսկ մեկը՝ մնաց: Եվ ես գնեցի նրան ու հանկարծ տեսնեմ, որ հենց մեր միջնորդն է: Եվ միառժամանակ անց մեզ մոտեցավ այն աղջիկը՝ իմ ընկերուհին: Եվ երբ նա հայտնվեց, ես վեր կացա ու գրկեցի նրան, իսկ նա համբուրեց ինձ ու լաց եղավ, ու մենք մի քիչ զրուցեցինք: Իսկ հետո նա վերցրեց ինձ ու դրեց սնդուկի մեջ ու փակեց այն, ապա մոտեցավ ներքինուն, որի մոտ շատ իրեր կային, և սկսեց վերցնել դրանք ու դարսել մյուս սնդուկների մեջ և մեկը մյուսի հետևից փակել սնդուկները, մինչև բոլորը տեղավորեց: Եվ սնդուկները դրեցին նավակի մեջ ու գնացին, ուղղություն վերցնելով դեպի Սիտա Զուբեյդայի պալատը: Եվ ես մտածմունքի մեջ ընկա ու ինքս ինձ ասացի. «Իմ կրքի պատճառով ես կործանվեցի: Ցանկացածիս կհասնե՞մ, թե ոչ»:

Եվ ես սկսեցի լաց լինել սնդուկի մեջ և ալլահին խնդրել, որ նա փորձանքից ազատի ինձ, իսկ նրանք շարունակում էին գնալ, մինչև որ, սնդուկներով հանդերձ, հասան խալիֆի պալատը, և իմ սնդուկն էլ, մյուսների թվում, ներս տարան: Եվ իմ ընկերուհին անցավ մի քանի ծառաների ու ներքինիների մոտով, որոնք կարգված էին հարեմը հսկելու, և հասավ մի ծեր ներքինու մոտ, և սա արթնացավ քնից ու գոռաց աղջկա վրա ու հարցրեց. «Ի՞նչ կա այս սնդուկների մեջ»:— «Դրանք Սիտա Զուբեյդայի իրերով լիքն են»,— պատասխանեց աղջիկը: Եվ ներքինին ասաց. «Մեկը մյուսի հետևից բաց, որ ես տեսնեմ, թե ինչ կա գրանց մեջ»: Բայց աղջիկն առարկեց. «Ինչո՞ւ բաց անեմ»: Եվ այնժամ ներքինին գոռաց. «Մի՛ ուշացրու, այդ սնդուկները պիտի բացես»,— և վեր կացավ ու միանգամից ուղեց բաց անել հենց այն սնդուկը, որի մեջ ես էի: Եվ ինձ տարան ներքինու մոտ, և այնժամ իմ խելքը թռավ, և ես ահից ջուր բաց թողեցի և ջուրը թափվեց սնդուկից: Եվ աղջիկն ասաց ներքինուն. «Ո՞վ պետ, դու կործանեցիր ն՛ ինձ, և՛ քեզ, և՛ փշացրիր այն իրերը, որոնք տասը հազար դինար արժեն:

Այս սնդուկում բազմագույն շորեր են ու Զեմզեմի¹ ջրի շորս մեն², և ահա ջուրը հոսեց սնդուկի միջի շորերի վրա, ու հիմա նրանց գույնը կթափվի»։— «Սնդուկներդ վերցրու ու գնա»,— ասաց ներքինին, ու ծառաները բարձրացրին իմ սնդուկն ու շտապեցին դուրս գալ, իսկ մյուս սնդուկներն էլ բերեցին իմի հետևից։ Եվ երբ նրանք գնում էին, իմ տկանջին հանկարծ հասավ մի ձայն. «Վա՛յ, վա՛յ, խալիֆը, խալիֆը»։ Եվ այդ լսելով, ես կենդանի տեղս մեռա և արտասանեցի այնպիսի խոսքեր, որոնք ասողը չի շփոթվի. «Չկա ավելի մեծ ուժ ու զորություն, քան ավահինն է մեծ ու բարձրյալ։ Ահա մի փորձանք, որ ինքս իմ գլխին բերեցի»։ Եվ ես լսեցի, թե ինչպես խալիֆը հարցրեց ստրկուհուն՝ իմ բարեկամուհուն. «Վա՛յ քեզ, ի՞նչ կա այդ սնդուկների մեջ»։ Եվ նա պատասխանեց. «Այս սնդուկների մեջ Սիտտ Զուբեյդայի շորերն են»։ Ես կխալիֆն ասաց. «Բա՛ց արա դրանք իմ առջև»։ Եվ այդ լսելով, ես վերջնականապես մեռա ու մտածեցի, «Ալլահը վկա, այս օրը իմ երկրային կյանքի վերջին օրն է։ Եթե ես ողջ մնամ, ապա կամուսնանամ նրա հետ ու էլ ո՛չ մի խոսք, իսկ եթե իմ գործը բացվի, իմ գլուխը կթոցնեն։ Թ՛հ»։ Եվ ես սկսեցի ասել. «Վկա եմ, որ ուրիշ աստված չկա, բացի ալլահից, և Մուհամմեդն ավահի առաքյալն է»։

Եվ ես լսեցի,— շարունակեց երիտասարդը,— որ աղջիկն ասաց. «Այս սնդուկների մեջ ինձ վստահված իրեր են ու զգեստներ՝ Սիտտ Զուբեյդայի համար, և նա ուզում է, որ ոչ ոք դրանք չտեսնի»։ Բայց խալիֆը բացականչեց. «Ես անպայման պիտի բացեմ ու տեսնեմ, թե ինչ կա դրանց մեջ»։ Եվ հետո նա կանչեց ներքինիներին ու ասաց նրանց «Սնդուկն ինձ մոտ բերեք»։ Եվ ետ համոզվեցի, որ, անկասկած, կորած եմ, և աշխարհը մթնեց ինձ համար։ Եվ ներքինիներն սկսեցին սնդուկները մեկը մյուսի հետևից խալիֆի մոտ տանել, և խալիֆը դրանց մեջ տեսավ անուշահոտ օծանելիքներ ու դործվածքներ ու շքեղ հագուստներ։ Եվ բոլոր սնդուկները բացեցին, ու խալիֆը տեսավ դրանց մեջ եղած շորերն ու մյուս բաները, մինչև որ մնաց միայն այն սնդուկը, որի մեջ ես էի։ Եվ նրանք արդեն ձեռքերը մեկնել էին, որ դա էլ բացին, բայց աղջիկը շտապ մոտեցավ խալիֆին ու ասաց. «Այս սնդուկը, որ քո առջև է, մենք կբացենք միայն Սիտտ Զուբեյդայի մոտ։ Սա այն սնդուկն է, որի մեջ նրա գազտնիքն է պահված»։ Եվ այդ խոսքերը լսե-

¹ Զեմզեմ — ջրհոր Մեքքայում, որի ջուրը մահմեդականները առողջարար են համարում։

² Մեն — տարողության շափ, որ հավասար է մոտ մեկ լիարի։

լավ, խալիֆը հրամայեց ներս տանել սնդուկները, և ներքինիները մոտեցան ու տարան այն սնդուկը, որտեղ ես էի, և գրեցին սենյակի մեջտեղը՝ մյուս սնդուկների միջև (իսկ իմ թուքը շորացել էր): Եվ իմ բարեկամուհին սնդուկից ինձ գուրս հանեց ու ասաց. «էլ փորձանք ու երկյուղ չկա քեզ համար, ուզվիր կուրծքդ ու սիրտդ հանգստացրու ու նստիր, մինչև Սիտտ Զուբեյդան գա. գուցե ես քեզ բաժին ընկնեմ»:

Եվ ես մի քիչ նստեցի և, հանկարծ ի՛նչ տեսնեմ. մոտենում են տասը ստրկուհիներ, լուռնի նման աղջիկներ, և կանգնում են երկու շարքով, նրանց հետևից էլի քսան ստրկուհիներ են գալիս, բարձր կրծքերով, ու նրանց մեջ՝ Սիտտ Զուբեյդան, և նա հազիվ է քայլում՝ այնքան շորեր ու զարդարանքներ կան վրան: Եվ երբ նա եկավ, ստրուկները հետհետ գնացին նրա շուրջը, իսկ ես մոտեցա նրան ու համբուրեցի գետինը նրա առջև: Եվ նա նշան արեց ինձ նստելու: Եվ ես նստեցի նրա առջև, իսկ նա սկսեց հարց ու փորձ անել ինձ ու տեղեկացավ իմ ծագման մասին, և ես պատասխանեցի նրա հարցերին: Եվ այնժամ նա ուրախացավ ու րացականչեց. «Մեր դաստիարակությունը շխաբեց մեզ, աղջի՛կո»:

«Իմացի՛ր,— հետո ասաց նա ինձ,— որ այս աղջիկը մեզ համար հարազատ դստեր տեղ է, և նա ալլահի գրավականն է՝ քեզ վստահված»:
Եվ ես համբուրեցի գետինը նրա առջև, և Սիտտ Զուբեյդան համաձայնեց իմ ամուսնությանը այն աղջկա հետ: Եվ նա ինձ հրամայեց իրենց մոտ մնալ տասը օր, և ես նրանց մոտ անցկացրի այդ ժամանակը, առանց աղջկան տեսնելու, և միայն աղախի՛ններից մեկն էր ինձ ճաշ ու ընթրիք բերում: Իսկ այդ ժամկետից հետո Սիտտ Զուբեյդան խորհրդակցեց խալիֆի հետ իմ ու իր ստրկուհու ամուսնության մասին, և խալիֆը թուլլատրեց ու հրամայեց տասը հազար դինար տալ աղջկան: Եվ Ահիտտ Զուբեյդան մարդ ուղարկեց վկաների ու դատավորի հետևից, և կնքեցին իմ ամուսնության դաշինքը աղջկա հետ, իսկ դրանից հետո քաղցրավենիք ու ճոխ ուտելիքներ պատրաստեցին ու դրանք տաբան բոլոր սենյակները: Այդպես անցավ ևս տասը օր, իսկ տասն օրից հետո աղջիկը քաղնիք գնաց, և ապա ուտելիղենով սեղան մատուցեցին, և ուտելիղենի մեջ, ի թիվս այլոց, կային շաքարած նուշ՝ քացախով, և նուշի վրա մուշկախառն վարդաշուր էր լցրած, և կարմրացրած հավի կուրծք և մարգուխելքը տանող այլ բաներ: Եվ, ալլահը վկա, ես առանց երկար-բարակ մտածելու սկսեցի նուշ ուտել և կուշտ կերա ու ձևոքերս սրբեցի, բայց մոռացա ձեռքերս լվանալ, և նստեցի այնքան ժամանակ, մինչև մութն

ընկավ: Եվ վառեցին մոմերը, ու եկան երգչուհիները գահիրաներով, և անընդհատ բացում էին հարօրի երեսն ու օոկի էին նվիրում, մինչև որ նա ամբողջ պալատով մեկ ման եկավ, իսկ դրանից հետո նրան բերեցին ու թեթևացրին իր վրա եղած հագուստներից, և ես նրա հետ մենակ մնացի անկողնում ու գրկեցի նրան, ու շէի հավատում, որ տիրապետում եմ նրան: Բայց նա իմ ձեռքից նուշի քաղցրավենիքի հոտն առավ և, հոտոտելով ձեռքս, բարձր ճիշ արձակեց, և ստրկուհիները բոլոր կողմերից վազեցին նրա մոտ, իսկ ես վախեցա ու շգիտեի, թե ինչ է պատահել: Եվ ստրկուհիները հարցրին նրան. «Ի՞նչ է պատահել քեզ, քույրի՛կ»: Եվ նա պատասխանեց. «Տարե՛ք այս խելագարին իմ մտից: Իսկ ես կարծում էի, թե նա խելոք է»:— «Իսկ ինչո՞վ է արտահայտվել իմ անխելքությունը»,— հարցրի ես: Եվ նա պատասխանեց. «Հիմար, ինչո՞ւ ես նուշ կերել ու ձեռքերդ շես լվացել: Ալլահը վկա, ես կհատուցեմ քեզ քո արարքի համար: Մի՞թե քեզ նմանը կարող է տիրապետել ինձ նմանին»: Եվ նա վերցրեց կողքին ընկած հյուսածո խարազանն ու նրանով սկսեց հարվածել մեջքիս ու նստուկիս, մինչև որ ես բազմաթիվ հարվածների բազմությունից ուշքս կորցրի: Իսկ նա ստրկուհիներին ասաց. «Վերցրեք նրան ու տարեք քաղաքի կառավարչի մոտ, թող կտրեն նրա այն ձեռքը, որը շի լվացել նուշ ուտելուց հետո»: Եվ այդ խոսքերը լսելով, ես բացականչեցի. «Զկա՛ ավելի մեծ ուժ ու զորություն, քան ալլահինն է: Իմ ձեռքը պիտի կտրեն նրա համար, որ նուշ եմ կերել ու շեմ լվացել ձեռքս»: Եվ ստրկուհիները մոտեցան նրան ու ասացին. «Օհ, քույրի՛կ, այս անգամ մի պատժիր նրան իր արարքի համար»: Բայց նա բացականչեց. «Ալլահը վկա, ես անպայման պիտի նրա մարմնի մի տեղը կտրեմ»:

Եվ նա դուրս եկավ ու անհետացավ տասը օր, այնպես, որ ես շտեսա նրան, իսկ տաս օրից հետո եկավ ու ինձ ասաց. «Ո՛վ սևերես, ես քեզ կսովորեցնեմ, թե ինչ է նշանակում նուշ ուտել ու ձեռքերը չլվանալ»:

Եվ նա կանչեց ստրկուհիներին, ու նրանք կապեցին իմ ձեռքերը, իսկ իմ բարեկամուհին վերցրեց Եուր ածելին ու կտրեց իմ բուժ մատները, ինչպես տեոնում եք, տյա՛րք, և ես գիտակցությունս կորցրի, Այնուհետև նա վերքերի վրա փոշի ցանեց, ու արյունը դադարեց, ու ես սասցի. «Այլևս նուշ չեմ ուտի, մինչև ձեռքերս քառասուն անգամ օճառով, քառասուն անգամ սողայով ու քառասուն անգամ մսխրաչրով չլվանամ»: Եվ նա ինձանից խոստում առավ, որ ես նուշ չեմ ուտի, մինչև ձեռքերս չլվանամ այնպես, ինչպես ասացի: Եվ երբ գուք բերեցիք այս նուշը, իմ դեմքի գույնը փոխվեց, ու ինքս ինձ մտածեցի. «Այս նուշի,

պատճառով իմ բուժ մատները կտրեցին: Բայց քանի որ դուք ինձ ստիպեցիք, ես էլ ասացի. «Ես անպայման պետք է կատարեմ այն, ինչ որ երդվել եմ»:

«Իսկ ի՞նչ պատահեց քեզ դրանից հետո», — հարցրին ներկաները: Եվ երիտասարդը պատասխանեց. «Երբ ես երդվեցի նրան, նրա սիրտը հանգստացավ, ու ես քնեցի նրա հետ: Եվ մենք ապրեցինք որոշ ժամանակ, իսկ հետո նա ինձ ասաց. «Լավ չէ, որ մենք խալիֆի պալատում ենք ապրում, որտեղ ոչ ոք մուտք չի գործել, բացի բեզանից, ասենք, դու էլ այստեղ մտել ես միայն Սիտտ Զուբեյդայի ջանքերով»: Եվ նա ինձ տվեց հիսուն հազար դինար ու ասաց. «Վերցրո՛ւ այս փողը, գնա ու մի մեծ տուն գնիր»: Եվ ես դուրս եկա ու մի մեծ տուն գնեցի, գեղեցիկ ու ընդարձակ, և նա այնտեղ փոխադրեց իր ունեցած բոլոր արժեքավոր իրերն ու իր հավաքած հարստությունը, գործվածքներն ու հազվագյուտ իրերը: Ահա իմ բուժ մատները կտրելու պատճառը»:

Եվ մենք կերանք ու դուրս եկանք, իսկ դրանից հետո Կուզիկի հետ պատահեց այն, ինչ որ պատահել է, և ահա իմ պատմությունը և ուրիշ ոչինչ»:

«Պա կուզիկի պատմությունից զարմանալի չէ, ընդհանրապես, կուզիկի պատմությունն է դրանից զարմանալի, և ձեզ բոլորիդ անհրաժեշտ է կախել», — ասաց թագավորը: Եվ այնժամ առաջ եկավ հրեան, համբուրեց գետինը թագավորի առջև ու ասաց. «Ո՛վ ժամանակի արքա, ես քեզ կուզիկի պատմությունից ավելի զարմանալի պատմություն կպատմեմ»: — «Ասա՛, ինչ որ ունես», — ասաց Չինաստանի թագավորը: Եվ հրեան սկսեց.

ՀՐԵԱ ԲԺՇԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ահա այն ամենազարմանալի բանը, որ ինձ պատահել է երիտասարդ ժամանակ: Ես սիրիական Դամասկոսում էի և սովորում էի այնտեղ, և, ահա մի անգամ նստած եմ, ու հանկարծ Դամասկոսի տիրակալի պալատից ինձ մոտ է գալիս մի ստրուկ ու սուում. «Խոսի՛ր իմ տիրոջ հետ»: Եվ ես դուրս եկա ու նրա հետ գնացի տիրակալի բնակարանը և, ներս մտնելով, կամարի տակ՝ բարձրության վրա ոսկե շերտագծերով զարդարված գիհափայտի մի մահճակալ տեսա, որի վրա պառկել էր մի հիվանդ մարդ՝ մի երիտասարդ, անպատմելի գեղեցկությամբ՝ իր երիտասարդ հասակում: Ու ես նստեցի նրա սնարին ու աղոթեցի նրա

տոռոջութեան համար: Եվ երիտասարդն աչքերով ինձ նշան արեց, իսկ ես
ուսացի նրան. «Ո՛վ տեր, տո՛ւր ինձ ձեռքդ, և թող ալլահը քեզ պահպա-
նի»: Եվ նա իր ձախ ձեռքը հանեց, ու ես զարմացա դրանից ու մտա-
ծեցի. «Ո՛վ ալլահի հրաշք: Այս գեղեցիկ երիտասարդը մեծավորի տնից
է, և նա բավականաչափ կիրթ չէ: Ա՛յ, թե զարմանալի է»: Եվ ես շոշա-
փեցի նրա զարկերակն ու դեղատոմս գրեցի նրա համար, և տասը օր
չարունակ գնում էի նրա մոտ: Եվ նա առողջացավ, բաղնիք գնաց ու
յոզացավ և տիրակալը հիանալի պարգևներ շնորհեց ինձ ու վերակացու
նշանակեց իր հիվանդանոցում, որը Դամասկոսում է գտնվում: Եվ ես
երիտասարդի հետ բաղնիք գնացի ու կարգադրեցի ազատել ամբողջ
բաղնիքը, և ծառաները նրա հետ ներս մտան ու հանեցին նրա շորերը:
Եվ երբ երիտասարդը մերկացավ, ես տեսա, որ նրա աջ ձեռքը կտրը-
ված է ոչ վաղուց, իր հիվանդութեան պատճառն էլ դա է: Եվ այդ տես-
նելով, ես զարմացա ու տխրեցի նրա համար: Իսկ նայելով նրա մարմ-
նին՝ ես նրա վրա մտրակի հարվածների հետքեր տեսա, և երիտասարդը
դրա պատճառով քսուքներ էր գործածում: Եվ դա հուզեց ինձ, և հուզ-
մունքն արտահայտվեց իմ դեմքին. և երիտասարդը նայեց իմ երեսին ու
հասկացավ, թե ինչն ինչոց է, և ասաց. «Ո՛վ մեր ժամանակի լավագույն
բժիշկ, մի՛ զարմանա սրա վրա: Ես քեզ կպատմեմ իմ պատմությունը,
ևրբ բաղնիքից դուրս գանք»:

Եվ երբ մենք բաղնիքից դուրս եկանք ու տուն վերադարձանք և կե-
րանք ու հանգստացանք, երիտասարդն ասաց. «Չե՞ս ուզում պատշգամ-
բում թարմանալ»: Եվ ես պատասխանեցի. «Լավ»:

Եվ այնժամ նա ստրուկներին պատվիրեց անկողինները վերև տանել
և նրանց հրամայեց մի գառ խորովել ու մրգեր բերել մեզ համար: Եվ
մենք ուտում էինք, և երիտասարդը ձախ ձեռքով էր ուտում: «Պատ-
մի՛ր ինձ քո պատմությունը»,— ասացի ես նրան:

«Ո՛վ մեր ժամանակի բժիշկ,— խոսեց երիտասարդը,— լսի՛ր, թե
ինչ է պատահել ինձ: Իմացած եղի՛ր, որ ես Մոսուլում եմ ծնվել, և իմ
հոր հայրը մեռավ ու թողեց տասը տղա, և իմ հայրը, ո՛վ բժիշկ, նրան-
ցից մեկն էր և ավագը: Եվ նրանք բոլորը մեծացան ու ամուսնացան,
և իմ հորը ես բաժին ընկա, իսկ նրա մյուս եղբայրները որդի չունեցան:
Եվ ես մեծացա ու ապրեցի իմ հորեղբայրների հետ, և նրանք անչափ
ուրախանում էին ինձանով: Եվ երբ ես մեծացա ու հասա տղամարդու
հասակին, մի անգամ եղա Մոսուլի մայր մզկիթում (իսկ օրը ուրբաթ
էր, և հայրս մեզ հետ էր), և մենք կատարեցինք ուրբաթ օրվա աղոթ-
քը: Եվ ամբողջ ժողովուրդը դուրս եկավ, իսկ իմ հայրն ու հորեղ-

բայրները նստած մնացին և գրուցում էին գանազան երկրների տարօրինակությունների ու քաղաքների հրաշալիքների մասին: Եվ նրանք հիշեցին նաև Կահիրեն, և իմ հորեղբայրներն ասացին. «Ճանապարհորդներն ասում են, որ երկրի վրա ավելի գեղեցիկ քաղաք չկա, քան Կահիրեն՝ իր նեղոսով»: Եվ երբ ես լսեցի այդ խոսքերը, իմ մեջ ցանկություն առաջացավ Կահիրե գնալ: «Ով Կահիրեն չի տեսել, աշխարհ չի տեսել,— ասաց հայրս:— Նբա հողը ոսկի է, և նեղոսը՝ հրաշք, նրա կանայք հուրիներ են, և տները՝ պալատներ, իսկ օդն այնտեղ մեղմ է, և նրա բուրումնավետութունը գերազանցում է ու ամաշեցնում հալվեին: Եվ ինչպե՞ս Կահիրեն այդպիսին չլինի, երբ նա ամբողջ աշխարհն է, և ալլահին արժանի է նա, ով ասել է.

Քողե՞լ եմ ես իմ Կահիրեն և իր հմայքը բարեբախտ օրերի,
Ուրիշ էլ ի՞նչ երկիր պիտի ինձ բերկրալից ու երջանիկ կյանք բերի:
Պիտի գնա՞մ ու հեռանա՞մ, պիտի թողնե՞մ ես երկիրն այս առհավետ,
Որ բուրում է ինչպես սիրած գեղեցկուհու խոպոպները բուրավետ:
Ինչպե՞ս թողնեմ. չէ՞ որ պարտեզն է դրախտի հրաշագեղ ծաղկավառ,
Տե՛ս փոված են տմենուրեք բյուր խսիրներ, բարձեր դրված անհամար:
Ահա քաղաք, որն իր շուքով մարդու ուշք ու միտքն է դյուրթում, կախարդում,
Ուր ամեն մարդ՝ անարգ, թե լավ, իր ցանկացածն է միշտ գտնում, վայելում:
Եվ անձնվեր եղբայրներն են միմյանց գտել միակերպ վարք ու բարքով
Հավաքույթի վայրը նրանց արմավների պուրակ է մի հողեթով:
Ո՞վ կահիրցի իմ եղբայրնե՛ր, երբ ալլահը մեզ բաժանվել սահմանի,
Քող փոխադարձ տված երդումը անխախտ ու հաստատուն միշտ լինի,
Քամուն անգամ Կահիրեի անունը պերճ մի հիշեցրեք դուք, զգո՛ւյշ,
Կռահանգի Կահիրեի պարտեզների բույրը վսեմ ու անուշ:

Իսկ եթե դուք նրա պարտեզները տեսնեիք երեկոյան, երբ ստվերն իջնում է դրանց վրա,— շարունակեց հայրս,— իսկապես հրաշք տեսած կլինեիք և կխոնարհվեիք նրա առջև հիացմունքից»:

Եվ նրանք սկսեցին նկարագրել Կահիրեն և նրա նեղոսը,— շարունակեց երիտասարդը,— և երբ նրանք վերջացրին, ու ես լսեցի Կահիրեի այդ արժանիքների մասին, իմ սիրտն այնտեղ մնաց: Եվ, վերջացնելով զրույցը, բոլորը վեր կացան ու գնացին իրենց տները, և ես պսուկեցի քնելու այդ երեկո, րայց քունը մոտ չէր գալիս ինձ՝ Կահիրեով տարված լինելուս պատճառով, և ուտելն ու խմելը անախոթ զարձան ինձ համար: Եվ երբ օրեր էին անցել, իմ հորեղբայրները այատրաստվեցին Եգիպտոս գնալու, իսկ ես լաց եղա հորս առջև, մինչև որ նա ինձ համար ապրանքներ պատրաստեց, ու ես մեկնեցի հորեղբայրներիս հետ,

և հայրս նրանց առաց. «Չթողնե՛ք, որ նա Կահիրե մտնի. թող նա իր ապրանքը Դամասկոսում վաճառի»:

Հետո ես հրաժեշտ ավեցի հորս, և մենք ճամփա ընկանք ու դուրս եկանք Մոսուլից ու գնացինք, գնացինք, մինչև Հալեպ հասանք և, այնտեղ մի քանի օր մնալով, դուրս եկանք ու Դամասկոս հասանք և տեսանք, որ գա ջրանցքներով, ծառազարդ, մրգառատ ու թռչուններով լի մի քաղաք է, նման դրախտի պարտեզին, որտեղ ամեն տեսակ մրգեր կան: Եվ մենք կանգ առանք մի իջևանում, և իմ հորեղբայրներն սկսեցին օտնել ու ծախել և վաճառեցին նաև իմ ապրանքները, և ամեն մի դիրհեմն ինձ հինգ գիրհեմ բերեց, ու ես ուրախացա շահով: Եվ իմ հորեղբայրները թողեցին ինձ, իսկ իրենք մեկնեցին Եգիպտոս, և ես Դամասկոսում մնացի նրանց մեկնելուց հետո ու ապրում էի գեղակառույց մի տան մեջ, որն անկարող է նկարագրել լեզուն, և տան վարձն էր ամսական երկու դինար: Եվ ես անց էի կացնում ժամանակս կերուխումով, մինչև որ ծախսեցի մոտս եղած փողը: Եվ ահա օրերից մի օր ես նստած եմ գարպասի մոտ, ու հանկարծ մոտենում է շքեղ զգեստներ հագած մի երիտասարդ կին, որից գեղեցիկն աչքս շէր տեսել: Եվ ես աչքով արեցի նրան, ու նա անմիջապես հայտնվեց դաբապասի հետևում: Եվ երբ նա ներս մտավ, ես էլ ներս մտա նրա հետ և իմ ու նրա հետևից դուռը փակեցի, և նա երեսից հետ տարավ քողն ու վերցրեց իզարը, և ես տեսա, որ նա հազվագյուտ գեղեցկություն ունի, և նրա սերը տիրեց իմ սրտին: Եվ ես վեր կացա ու բերեցի փոքրիկ սեղանը՝ ամենահամեղ կերակուրներով ու մրգերով ու այն ամենով, ինչ որ հարկավոր էր սեղան նստելու համար: Եվ երբ ես այդ ամենը բերեցի, մենք կերանք ու խաղացինք, իսկ ճաշից հետո խմեցինք ու հարբեցինք, և հետո ես քնեցի նրա հետ այդ քաղցրագույն գիշերը մինչև առավոտ: Եվ ես նրան տվեցի տասը դինար, բայց նա մոռալվեց ու հոնքերը կիտեց և զայրացավ ու բացականչեց. «Թյո՛ւ, ամոթ ձեզ, մոսուլցիներ: Կարծես թե ես քո փողին եմ կարոտ»: Եվ նա շապկի տակից հանեց տասնհինգ դինար ու երդվեց ինձ ու գսչեց. «Ալլահը վկա, եթե դու սա շվերցնես, քեզ մոտ չեմ վերադառնա»: Եվ ես ընդունեցի նրանից փողը, իսկ նա առաց. «Ո՛վ սիրելիս, սպասի՛ր ինձ երեք օր անց. արևամուտի ու երեկոյան աղոթքի միջոցին ես քեզ մոտ կլինեմ: Այս դինարներով դրա նման հյուրասիրություն պատրաստիր»: Եվ նա հրաժեշտ տվեց ինձ, և իմ խելքը թռավ-գնաց նրա հետ, իսկ երբ երեք օրերն անցան, նա եկավ՝ հագին դիպակ, ակնեղեններ ու ավելի հոյակապ զգեստներ, քան առաջին հանդիպման ժամանակ: Իսկ ես մեզ համար նախօրոք սեղան էի պատրաս-

տել մինչև նրա գալը, և մենք կերանք ու խմեցինք ու քնեցինք, ինչպես նախորդ անգամ, և նա տասնհինգ դինար տվեց ինձ ու պայմանավորվեց ինձ հետ, որ երեք օրից հետո ինձ մոտ կգա:

Ես նրա համար սեղան պատրաստեցի, ու մի քանի օրից հետո նա հայտնվեց առավել հոյակապ զգեստներով, քան առաջին ու երկրորդ անգամ, ու հարցրեց. «Մ՛վ իմ տեր, ես գեղեցիկ չե՞մ արդյոք»:— «Այո, ալլահը վկա»,— պատասխանեցի ես: Եվ նա ասաց. «Չե՞ս թույլ տա, արդյոք, որ ես ինձ հետ բերեմ ինձանից ավելի գեղեցիկ ու երիտասարդ մի աղջիկ, որպեսզի նա մեզ հետ խաղա ու ծիծաղի, ու նրա սիրտն ուրախանա: Նա վաղուց արդեն տխրում է և խնդրեց, որ ինձ հետ դուրս գա ու գիշերն ինձ հետ անցկացնի»: Եվ, նրա խոսքերը լսելով, ես ասացի. «Այո՛, ալլահը վկա»: Եվ հետո մենք խմեցինք ու քնեցինք մինչև առավոտ, և նա հանեց տասնհինգ դինար ու ասաց. «Մեր սեղանին մի բան ավելացրու այն աղջկա համար, որ հետո պիտի գա»,— և հետո նա գնաց:

Իսկ երբ շորրորդ օրը եկավ, ես սովորականի նման սեղան պատրաստեցի նրա համար, և մայրամուտից հետո հանկարծ նա հայտնվեց, և նրա հետ՝ մի կին, իզարի մեջ փաթաթված: Նրանք մտան ու նստեցին, և նրան տեսնելով, ես արտասանեցի.

«Ինչ երջանիկ, հրաշալի ժամանակ է դարը մեր,
Զբացել են շարախոսն ու զբալարտիչը ահավոր
Համակել են մեզ արբեցում, բերկրանք ու խինդ, հույս ու սեր,
Թեկուզ մեկն էլ բտվ է արդեն, որ մարդ լինի բախտավոր:
Պերձ լուսինն է շողում բարակ քողի տակից ամպեղեն,
Ոստն է դաշար ճկվում, ահա, հագուստի մեջ քնքշորեն.
Թարթիչների հուր վարդերն են բացել թերթերն իրենց վառ,
Մինչդեռ աչքի նորգիզներն են, ասես՝ հոգնած, տանջահար:
Անամպ է կյանքն, ինչպես անամպ ու անբիծ է սերը իմ,
Եվ իմ դրկում է անսահման իմ սիրելին մտերիմ»:

Եվ ես ուրախացա ու մոմերը վառեցի ու դիմավորեցի նրանց ուրախ ու երջանիկ, իսկ նրանք հանեցին իրենց շորերը, նոր աղջիկը բացեց իր դեմքը, ու ես տեսա, որ նա նման է լիալուսնի, ու նրանից գեղեցիկին ես չէի տեսել: Եվ, վեր կենալով, ես նրան նուտելիք ու խմելիք մատուցեցի, և մենք կերանք ու խմեցինք, և ես սկսեցի հյուրասիրել նոր աղջկան ու լցնել նրա գավաթն ու խմել նրա հետ: Իսկ առաջին աղջիկը ծածուկ խանդում էր ու բացականչեց. «Ալլահը վկա, այս աղջիկն, արդյոք, ինձանից գեղեցիկ չէ՞»:— «Այո՛, ալլահը վկա»,— պատասխանեցի

ես: Եվ նա ասաց. «Ես ուզում եմ, որ դու նրա հետ քնես»:— «Քո հրամանն՝ իմ գլխին ու աչքերին»,— պատասխանեցի ես: Եվ նա վերկացավ ու անկողին գցեց մեզ համար, և ես մտա ազգկա մոտ ու քնեցի մինչև առավոտ: Եվ ես շարժվեցի ու գգացի, որ ամբողջապես թաց եմ ու մտածեցի, որ քրտնել եմ ու նստեցի և սկսեցի արթնացնել աղջկան ու ցնցեցի նրա ուսերը, և նրա գլուխը բարձից ցած գլորվեց: Եվ իմ խելքը թռավ, ու ես բացականչեցի. «Մ՛վ բարի հովանավոր, ծածկի՛ր ինձ»: Եվ տեսնելով, որ նա մորթված է, ես նստեցի (իսկ աշխարհը սևացավ աչքերիս առջև) ու սկսեցի փնտրել իմ նախկին բարեկամուհուն, բայց չգտա նրան ու հասկացա, որ նա է մորթել աղջկան՝ ինձ խանդելու պատճառով:

«Չկա՛ ավելի մեծ ուժ ու զորություն, քան ավանհինն է մեծ ու բարձրլալ: Ի՞նչ անեմ»,— բացականչեցի ես, և մի փոքր մտածելով, վեր կացա, հանեցի հագուստս, և, սենյակի մեջտեղում մի փոս փորելով, վերցրի աղջկան իր զարգերով հանդերձ ու դրեցի փոսի մեջ ու փոսը նորից ծածկեցի հողով ու մարմարե սալերով: Հետո լվացվեցի, հագա մաքուր զգեստ և, վերցնելով ունեցածս փողը, դուրս եկա տնից ու փակեցի այն ու գնացի տանտիրոջ մոտ և, ինձ սիրտ տալով, մեկ տարվա վարձը տվեցի նրան ու ասացի. «Ես դնում եմ Կահիրե՛ իմ հորեղբայրների մոտ»:

Եվ ես գնացի Կահիրե ու հանդիպեցի իմ հորեղբայրներին, և նրանք ուրախացան ինձանով, ու պարզվեց, որ նրանք արդեն իրենց բոլոր ապրանքները ծախել են: «Ինչո՞ւ ես եկել»,— հարցրին նրանք ինձ: Ես պատասխանեցի. «Ես կարոտել էի ձեզ»,— և նրանց շասացի, որ մոտս քիչ փող կա: Եվ ես նրանց հետ մի տարի մնացի՝ հիանալով Կահիրեով ու նրա նեղոսով, ու ձեռքս ինձ մոտ մնացած փողի վրա դնելով, սկսեցի ծախսել՝ ուտել ու խմել, մինչև մոտեցավ հորեղբայրներիս մեկնելու ժամանակը: Եվ այդ ժամանակ ես փախա ու թաքնվեցի նրանցից, և նրանք որոնեցին ինձ, բայց իմ մասին ոչ մի լուր չառան ու ասացին. «Նա, երևի, Դամասկոս է վերադարձել»,— ու գնացին: Իսկ ես դուրս եկա իմ թաքստոցից ու երեք տարի ապրեցի Կահիրեում, մինչև որ փողիցս այլևս ոչինչ չմնաց ինձ մոտ: Իսկ ես ամեն տարի տանտիրոջս փող էի ուղարկում այն տան համար, և երեք տարի անց իմ սիրտը նեղացավ (իսկ ինձ մոտ մնացել էր միայն մեկ տարվա վարձ), և այդ ժամանակ ես գնացի ու ժամանեցի Դամասկոս ու իջա այն տունը:

Եվ տանտերն ուրախացավ ինձ տեսնելով, և ես բոլոր սենյակները փակ գտա, ինչպես և եղել էր, ու բացեցի դրանք ու դուրս բերեցի նրանց միջի իրերը, և այն անկողնու տակ, որի վրա այն գիշերը ես քնել էի,

մորթված աղջկա հետ, գտա ոսկե մանյակ՝ թանկագին քարերով զարդարված: Ես վերցրի այն ու վրայից մաքրեցի սպանված աղջկա արյունը ու նայեցի դրան ու մի քիչ լաց եղա, իսկ դրանից հետո երկու օր ապրեցի այդտեղ, իսկ երրորդ օրը բաղնիք գնացի ու շորերս փոխեցի: Եվ ինձ մոտ բոլորովին փող չկար: Եվ մի անգամ սատանան իմ ականջին փսփսաց՝ ի կատարումն նախասահմանության, և, վերցնելով մանյակը, ես գնացի շուկա և միջնորդին տվեցի այն: Եվ նա վեր կացավ ու ինձ նստեցրեց իմ տանտիրոջ կողքին և, սպասելով մինչև շուկայի աշխուժանալը, վերցրեց մանյակն ու թաքուն առաջարկեց գնորդներին՝ առանց իմ գիտութան: Եվ հանկարծ պարզվեց, որ մանյակը թանկագին է և արժե երկու հազար դինար: Եվ այնժամ միջնորդը եկավ ու ասաց. «Այս մանյակը պղնձից է կեղծած, ֆրանկների սարքածն է, և սրա գինը հասավ հազար դիրհեմի»: Իսկ ես պատասխանեցի նրան. «Այո՛, մենք դա ձուլել ենք մի կնոջ համար, որ ծիծաղենք նրա վրա: Իմ կինը օրպես ժառանգություն է ստացել այդ, և մենք ուզում ենք ծախել: Ինձ՝ ստացի՛ր հազար դիրհեմը»:

Եվ միջնորդը, լսելով այդ, հասկացավ, որ մանյակի հետ կասկածելի պատմություն է կապված, և գնաց շուկայի ավագի մոտ ու նրան տվեց այն, իսկ ավագը գնաց վալիի մոտ ու ասաց. «Այս մանյակը դողացել են ինձնից և մենք գտել ենք գողին, որ վաճառականի որդու զգեստ է հագել»:

Եվ ես դեռ ուշքի չէի եկել, երբ պահակները շրջապատեցին ինձ ու բռնեցին և տարան վալիի մոտ: Եվ վալին հարցրեց ինձ այդ մանյակի մասին և ես նրան նույնն ասացի, ինչ որ ասել էի միջնորդին, և վալին ծիծաղեց ու բացականչեց. «Այդ բոլորի մեջ ո՛չ մի բառ ճիշտ չէ»:

Եվ ես դեռ ուշքի չէի եկել, երբ ինձ արդեն մերկացրին ու սկսեցին մտրակով հարվածել կողերիս, և հարվածները դադում էին ինձ, ու ես ասացի. «Ես գողացել եմ այն»,— մտածելով ինքս ինձ. «Ավելի լավ կանես, եթե ասես, որ գողացել ես: Ես չեմ ասի, թե մանյակը կրող կնոջը սպանել են ինձ մոտ. նրա համար ինձ կսպանեն»:

Եվ գրեցին, որ ես գողացել եմ մանյակը և կտրեցին ձեռքս ու կտրվածքը յուղի մեջ դաղեցին, և ես ուշագնաց եղա, բայց ինձ գինի խմեցրին, և ես ուշքի եկա ու, վերցնելով ձեռքս, տուն գնացի: Եվ տանտերն ասաց ինձ. «Քանի որ քեզ այդպիսի բան է պատահել, հեռացի՛ր իմ տնից և ուրիշ տեղ գտի՛ր քեզ համար, որովհետև դու գողութան մեջ ես մեղադրվել»: Իսկ ես պատասխանեցի նրան: «Ո՛վ իմ տեր, մի երկուերեք օր համբերի՛ր, մինչև ես ինձ համար տուն գտնեմ»:— «Լավ»,—

ասաց նա ու դուրս եկավ և թաղեց ինձ, իսկ ես նստած մնացի ու լաց եղա և ասացի. «Ինչպե՞ս կտրված ձեռքով վերադառնամ ծնողներիս մոտ: Նրանք չգիտեն, որ ես անմեղ եմ: Գուցե, ալլահը որևէ բարիք գործի», — և ես դառնորեն լաց եղա:

Եվ երբ տանտերը հեռացավ իմ մոտից, մեծ ախքալիցուն պատեց ինձ, ու ես երկու օր հիվանդացա, իսկ հրբորդ օրը հազիվ էի դարթնել, երբ տանտերս հայտնվեց ու նրա հետ՝ մի քանի պահակներ ու շուկայի ավագը, և նա հաստատեց, որ ես գողացել եմ մանյակը: Եվ ես դուրս եկա նրանց մոտ ու հարցրի նրանց. «Ի՞նչ է պատահել»: Իսկ նրանք, ժամանակ շտալով ինձ, կապեցին ինձ ու վիզս շղթա գցեցին ու ասացին. «Այն մանյակը, որ քեզ մոտ էր, տարել են Գամասկոսի տիրակալի, վեզիրի ու դատավորի մոտ, և նրանք ասել են, որ այդ մանյակը տիրակալի մոտից անհետացել է երեք տարի առաջ՝ նրա աղջկա հետ»:

Եվ երբ ես նրանցից այս խոսքերը լսեցի, լեղիս ջուր կտրեց, ու ես բացականչեցի. «Կասկած չկա, որ հոգիդ կործանվեց: Ալլահը վկա, ես տիրակալին անպայման կպատմեմ իմ պատմությունը, և եթե նա ցանկանա, ինձ կսպանի, իսկ եթե շցանկանա, կների»:

Եվ երբ մենք գնացինք տիրակալի մոտ, նա ինձ հրամայեց ոտքի կանգնել իր առջև և, տեսնելով ինձ, աչքի պոչով նայեց ինձ ու ներկաներին ասաց. «Ինչո՞ւ եք կտրել նրա ձեռքը: Սա դժբախտ մարդ է, և ոչ մի մեղք չունի: Դուք նրան անպատիվ եք արել, ձեռքը կարելով»: Եվ երբ ես լսեցի այս խոսքերը, սրտապնդվեցի ու հոգիս խաղաղվեց, ու ես բացականչեցի. «Ալլահը վկա, ով տեր իմ, ես ամենևին էլ գող չեմ: Ինձ մեղադրեցին այդ մեծ մեղադրանքով ու մտրակներով ծեծեցին շուկայի մեջտեղը և ինձ հարկադրեցին խոստովանել, ու ես ամբաստանեցի ինձ և խոստովանեցի, որ գողություն եմ կատարել, թեև հանցավոր չեմ»: Եվ տիրակալն ասաց. «Դու մեղավոր չես, — ապա նա կալանավորեց ավագին ու նրան ասաց. — Տուր սրան իր ձեռքի արժեքը, այլապես ես քեզ կկախեմ ու կվերցնեմ քո ամբողջ փողը»: Եվ նա կանչեց պահակներին, ու նրանք վերցրին ավագին, ու քարշ տալով, տարան նրան, իսկ ես մնացի տիրակալի մոտ: Հետո տիրակալի թուղտվությունը իմ վզից շղթան հանեցին ու ձեռքերս արձակեցին, և տիրակալը նայեց ինձ ու ասաց. «Ի՞՞վ, զավակս, ճշտախոս եղի՞ր ինձ հետ ու պատմի՞ր, թե ինչպես է այդ մանյակը քո ձեռքն ընկել, — և նա արտասանեց.

Ճշմարտասեր եղի՞ր դու, թեկուզ հետո քեզ այրի
Ճշմարտությունք ահեղ դժոխային տանջանքի
Սպառնանքի հրեզնն քոցերով իր ահալիք»

«Ո՞վ տեր իմ, ես ճշմարտութիւնը կասեմ քեզ»,— պատասխանեցի ես ու նրան պատմեցի, թե ինչ էր եղել իմ ու առաջին աղջկա միջև, թե ինչպես նա ինձ մոտ էր բերել երկրորդին ու մորթել նրան՝ խանդից, և պատմեցի այդ պատմութիւնն ամբողջապես: Եվ, այդ լսելով, տիրակալը գլուխն օրորեց ու աջ ձեռքը ձախին խփեց ու, թաշկինակը դեմքին մոտեցնելով, լաց եղավ ու արտասանեց.

«Տեսնում եմ, կյանքի ցավերն ու դառնութիւններն են գլխիս կուտակվում.

Իսկ ով որ դրանց գերի է դառնում, միշտ ցավագար է տյս խոսով կյանքում:

Սիրահարների ամեն հանդիպում, ինչքան էլ որ այն երջանիկ լինի, բաժանում ունի, Իսկ ինչ որ տխուր մի բաժանումի նախերգանքն է լոկ, մեծ արժեք չունի»:

Եվ դրանից հետո նա մոտեցավ ինձ ու ասաց. «Գիտցի՛ր, ով գավակս, որ մեծ աղջիկը իմ դուստրն է, ու ես մեծ հոգացողութեամբ պահում էի նրան, իսկ երբ շափահաս դարձավ, Կահիրե ուղարկեցի նրան, և նա ամուսնացավ իր հորեղբոր տղայի հետ: Բայց տղան մեռավ, և աղջիկս եկավ ինձ մոտ: Եվ նա Կահիրեի բնակիչներից զգվելի բաներ էր սովորել և քեզ մոտ եկավ շորս անգամ, իսկ հետո նա քեզ մոտ բերեց իր փոքր քրոջը, իսկ նրանք երկուսն էլ մի մորից էին ծնվել ու սիրում էին իրար: Եվ երբ մեծին պատահել էր այն, ինչ որ պատահել էր, նա իր գաղտնիքը հայտնել էր քրոջը, և սա խնդրել էր գնալ նրա հետ: Իսկ դրանից հետո մեծը վերադարձավ մենակ, ու ես հարցրի փոքրի մասին ու տեսա, որ մեծը լաց է լինում նրա համար, և նա ծածուկ ասաց մորը (իսկ ես այնտեղ էի), թե ինչ է պատահել, և ինչպես է ինքն սպանել իր քրոջը: Եվ նա անդադար լաց էր լինում ու ասում. «Ալլահը վկա, ես չեմ դադարի նրա համար լաց լինելուց, մինչև շմեռնեմ»: Եվ այդպես էլ եղավ: Տեսնո՞ւմ ես, գավակս, թե ինչ տեղի ունեցավ: Ես չեմ ուզում, որ դու հակառակես այն բանին, ինչ որ ասելու եմ. ես քեզ կամուսնացնեմ իմ կրտսեր աղջկա հետ, նա այն երկուսի հարազատ քույրը չէ ու անմեղ է: Եվ ես քեզանից օժիտ չեմ ուզի ու իմ կողմից ձեզ ոռճիկ կնշանակեմ, և դու ինձ մոտ որդու վիճակում կլինես»:

«Լավ,— ասացի ես,— ով կարող էր մտածել»: Եվ տիրակալն իսկույն մարդ ուղարկեց դատավորի ու վկաների հետևից ու իմ ամուսնական դաշինքը գրել տվեց, և ես մտա նրա աղջկա մոտ, իսկ տիրակալը շուկայի ավագից ինձ համար շատ փող վերցրեց, ու ես նրա մոտ ամենաբարձր դիրքը գրավեցի: Իսկ այս տաբի մեռավ իմ հայրը, և տիրակալը սուրհանդակ ուղարկեց, և նա ինձ բերեց այն փողը, որ հայրս

թողել էր, և այժմ ես հիանալի կյանքով եմ ապրում: Ահա իմ աջ ձեռ-
կը կտրելու պատճառը»:

Եվ ես զարմացա այդ պատմության վրա ու երեք օր ապրեցի երի-
տասարդի մոտ, և նա ինձ շատ փող տվեց, և ես թողեցի նրան ու եկա
ձեր այս քաղաքը, և ես լավ էի ապրում այստեղ, և ինձ ու կուզիկին պա-
տահեց այն, ինչ որ պատահեց»:

«Դա ավելի զարմանալի չէ, քան կուզիկի պատմությունը,— ասաց
Չինաստանի թագավորը,— և ես անպայման պետք է ձեզ բոլորիդ կա-
խեմ, բայց դեռ մնում է դերձակը՝ բոլորի մեղքերի պատճառը: Հե՛յ,
դերձակ,— ասաց նա,— եթե դու պատմես մի ավելի զարմանալի պատ-
մություն, քան կուզիկինն է, ես ձեր մեղքերը ձեզ կբաշխեմ»:

Եվ այնժամ դերձակն առաջ եկավ ու ասաց.

ԴԵՐՉԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացած եղիր, ո՛վ մեր ժամանակի արքա, ահա այն ամենազար-
մանալին, որ ինձ պատահեց ու տեղի ունեցավ երեկ: Սասառավորին
հանդիպելուց առաջ, օրվա սկզբին ես խնջույքի էի իմ ընկերներից մեկի
տանը, որի մոտ այս քաղաքի բնակիչներից մոտ քսան հոգի էին հա-
վաքվել, և նրանց մեջ կային արհեստավորներ, դերձակներ, ատաղձա-
գործներ, ջուլհակներ և ուրիշներ: Եվ երբ արևը մայր մտավ, մեզ ուտե-
լիք մատուցեցին, որ ուտենք. և հանկարծ տանտերը մեզ մոտ եկավ, և
նրա հետ՝ մի երիտասարդ օտարական, բաղդադցի մի գեղեցիկ տղա,
ամենալավ զգեստներ հագած ու սիրունիկ, միայն թե կաղ էր: Եվ
նա ներս եկավ մեզ մոտ ու ողջունեց մեզ, իսկ մենք ոտքի ելանք նրա
առջև, ու նա մոտեցավ, որ նստի, բայց մեր մեջ տեսավ մի մարդու՝ սափ-
րիչին, և հրաժարվեց նստելուց և ուզում էր հեռանալ մեզանից: Բայց մենք
բռնեցինք այդ երիտասարդին, և տանտերը կպավ նրա օձիքից ու աղեր-
սեց նրան և հարցրեց. «Ինչո՞ւ ներս մտար և այժմ ուզում ես գնալ»: Եվ
երիտասարդը պատասխանեց. «Ալլահի սիրուն, ո՛վ տեր իմ, ինձ
արգելք մի՛ լինի: Իմ գնալու պատճառն այդ շարաբաստիկ սափրիչն է, որ
այդտեղ նստած է»: Եվ այդ խոսքերը լսելով՝ տանտերը սաստիկ զար-
մացավ ու ասաց. «Ինչպե՞ս թե. այս երիտասարդը Բաղդադից է, և նրա
սիրտը կտրվել է այս սափրիչի պատճառով»: Իսկ մենք նայեցինք երի-
տասարդին ու նրան ասացինք. «Պատմի՛ր մեզ, թե ինչն է այս սափ-
րիչի նկատմամբ ունեցած զայրույթիդ պատճառը»:

«Ո՛վ ժողովականներ,— ասաց այնժամ երիտասարդը,— մեր Բաղ-
դադ քաղաքում իմ ու այս սափրիչի միջև այսպիսի մի բան է պատա-

հել. այդ նրա պատճառով է, որ կոտորել եմ ոտքս ու կաղ դարձել, և ես երդվել եմ, որ երբեք այլևս նրա հետ չպետք է դռնվեմ միևնույն տեղում կամ ապրեմ նույն քաղաքում, որտեղ նա է բնակվում, և ես Բաղդադից դուրս եմ եկել ու թողել այդ քաղաքն ու հաստատվել այս քաղաքում և այս գիշերն էլ այլ կերպ չեմ լուսացնի, քան ճանապարհորդութեամբ»:

«Ի սեր ալլահի աղերսում ենք քեզ,— ասացինք մենք նրան,— պատմիր մեզ քո պատմութունը»:

Եվ երիտասարդն սկսեց (իսկ սափրիչի դեմքը դեղնեց). «Ո՛վ մարդիկ, իմացած եղեք, որ իմ հայրը Բաղդադի մեծ վաճառականներից մեկն էր, և մեծ ալլահը նրան, բացի ինձանից, էլ որդիներ չէր պարգևել: Եվ երբ ես մեծացա ու հասա տղամարդու հասակին, հայրս ներկայացավ մեծ ալլահի ողորմածութեանը և թողեց ինձ փող ու ծառաներ ու սպասավորներ, և ես սկսեցի լավ հագնել ու լավ ուտել: Բայց ալլահն ինձ ատելութուն ներշնչեց կանանց նկատմամբ: Եվ օրերից մի օր ես անցնում էի Բաղդադի նրբանցքներով, ու ճանապարհին կանանց մի բազմութուն հանդիպեց ինձ, և ես փախա սւ թաքնվեցի մի փակուղում ու նրստեցի դրա ծայրին դրված նստարանին: Եվ ես մի բոպե էլ չէի նստել, հանկարծ բացվեց այն տան պատուհանը, որի մոտ նստել էի, ու պատուհանի մեջ երևաց մի աղջիկ, լիալուսնի նման, որի նման գեղեցիկին ես չէի տեսել, և նա պատուհանին դրած ծաղիկներն էր ջրում: Եվ աղջիկը դարձավ մեկ աջ ու մեկ ձախ և փակեց պատուհանն ու գնաց, և ատելութունը փոխվեց սիրո. ու ես ամբողջ ժամանակ մինչև մայրամուտ նստած մնացի, վերանալով աշխարհից: Եվ հանկարծ տեսա, որ ջորի հեծած գալիս է մեր քաղաքի դադին, ու նրա առջևից գնում էին ստրուկները, իսկ հետևից՝ ծառաները: Եվ նա ջորուց իջավ ու մտավ այն տունը, որի պատուհանից երևաց աղջիկը, և ես հասկացա, որ դադին նրա հայրն է: Ապա ես ախրամած վերադարձա իմ տունն ու հոգսով ծանբաբեռնված, անկողին ընկա: Եվ ինձ մոտ մտան իմ ստրուկուհիներն ու նստեցին իմ շուրջը, առանց իմանալու, թե ինչ է պատահել ինձ, իսկ ես ոչ մի խոսքով չդիմեցի նրանց, ու նրանք լաց եղան ու վշտացան ինձ համար:

Եվ ինձ մոտ մտավ մի պառավ ու տեսավ ինձ, ու իմ վիճակը երանից ծածուկ շմնաց: Նա նստեց իմ սնարի մոտ ու քնքշագին խոսեց ինձ հետ ու ասաց. «Ո՛վ զավակս, ասա ինձ, թե ի՞նչ է պատահել քեզ, և ես ամեն ինչ կանեմ, որ քեզ միացնեմ քո սիրեցյալի հետ»: Եվ երբ ես պատմեցի իմ պատմութունը, նա ասաց. «Ո՛վ զավակս, դա Բաղդադի

դադրի աղջիկն է ու նա տանը փակված է մնում, այնտեղը, որտեղ դու նրան տեսել ես, նրա սենյակն է, իսկ ցածում նրա հոր մեծ բնակարանն է: Եվ աղջիկը մենակ է մնում: Ես հաճախ եմ նրանց մոտ գնում, և դու նրա հետ միացում կգտնես միայն իմ միջոցով, հավաքի՛ր, ուրեմն, քեզ»:

Եվ, լսելով նրա խոսքերը, ես հոգով ամրացա, ու իմ հարազատներն ուրախացան այդ օրը և առավոտյան ես արդեն առողջ էի: Եվ պառավը գնաց ու վերադարձավ այլալված դեմքով և ասաց. «Ով զավակս, մի՛ հարցրու, թե ինչեր լսեցի նրանից: Երբ ես ասացի այդ մասին, նա ինձ պատասխանեց. «Եթե դու, շարաքաստիկ պառավ, վերջ չտաս այդ խոսքերին, ես, իսկապես, քեզ հետ այնպես կվարվեմ, ինչպես վայել է քեզ»: Բայց ես անպայման կվերադառնամ նրա մոտ մի ուրիշ անգամ»: Եվ երբ ես լսեցի այդ, իմ հիվանդութունը դարձյալ ծանրացավ:

Իսկ մի քանի օրից պառավը եկավ ու ասաց. «Ո՛վ զավակս, քեզնից ընծա եմ ուզում»: Եվ երբ ես նրանից լսեցի այդ, սիրտս տեղն ընկավ, ու ես բացականչեցի. «Դու ամեն բարիք կունենաս»: Իսկ նա ասաց. «Երեկ ես գնացի աղջկա մոտ, և տեսնելով, որ սիրտս կոտրված է ու աչքերս լաց են լինում, նա ինձ ասաց. «Մորաքո՛ւյր, ինչո՞ւ է քո սիրտը, ինչպես տեսնում եմ; նեղված այդպես»: Եվ երբ նա այդ ասաց ինձ, ես լաց եղա ու ասացի. «Ո՛վ տիրուհի, ես քեզ մոտ եմ եկել մի երիտասարդի կողմից, որը քեզ սիրում է, և քո պատճառով հասել է մահվան դուռը»: Եվ նա հարցրեց (իսկ նրա սիրտը փափկել էր). «Որտեղացի՞ է այդ երիտասարդը, որի մասին հիշեցիր»: Եվ ես պատասխանեցի. «Դա իմ տղան է, իմ սրտի պտուղը. նա մի քանի օր առաջ քեզ տեսել է պատուհանում, երբ դու ծաղիկներ ես ջրելիս եղել, և նայելով քո դեմքին, խենթացել է քո սիրուց: Եվ երբ ես նրան ասացի, թե առաջին անգամ ինչ է տեղի ունեցել իմ ու քո միջև, նրա հիվանդութունը սաստկացավ, և նա չի թողնում բարձր: Նա հալումաշ է լինում և կմեռնի, անկասկած»: Եվ նա բացականչեց (իսկ նրա դեմքը դեղնել էր). «Եվ այդ բոլորը ի՞նչ պատճառով»: Եվ ես պատասխանեցի. «Այո՛, ալլահը վկա էլ ի՞նչ ես ուզում»:— «Գնա՛, իմ կողմից ողջույն տուր նրան ու ասա, որ իմ մեջ շատ ավելին է կատարվում, քան այն, ինչ որ իր մեջ է,— ասաց նա:— Հենց որ ուրբաթը գա, թող նա աղոթքից առաջ իմ տանը մոտենա, և երբ նա գա, ես ցած կիջնեմ, կբացեմ նրա առջև դարպասն ու նրան ինձ մոտ կբերեմ, և մենք մի քիչ իրար հետ կլինենք, և նա կվերադառնա՝ նախքան իմ հայրն աղոթքից գա»:

Եվ երբ ես լսեցի պառավի խոսքերը, դադարեցին այն տանջանք-

ները, որ ես կրում էի, և սիրտս հանգստացավ: Ես նրան տվեցի այն զգեստները, որ հագել էի, և նա գնաց, ասելով. «Հանգստացրո՛ւ սիրտըդ»: Իսկ ես ասացի. «Իմ մեջ ոչ մի տառապանք չմնաց»: Եվ իմ հարազատներն ու ընկերներն ուրախացան, որ առողջացել եմ:

Եվ այդպես շարունակվեց մինչև ուրբաթ օրը: Եվ, ահա, պառավը մտավ ինձ մոտ ու որպիսությունս հարցրեց, և ես նրան հայտնեցի, որ քաջառողջ եմ, իսկ հետո ես հագա իմ զգեստներն ու օծվեցի և սպասեցի, մինչև մարդիկ աղոթքի գնան, որպեսզի աղջկա մոտ մեկնեն: Եվ պառավն ինձ ասաց. «Դու դեռ ժամանակ ունես և եթե բաղնիք գնայիր ու մազերդ սափրեիր, մանավանդ սաստիկ հիվանդությունից հետո, լավ բան արած կլինեիր»: Եվ ես նրան պատասխանեցի. «Դա ճիշտ է, բայց ես գլուխս կսափրեմ, իսկ հետո բաղնիք կգնամ»:

Եվ հետո ես ծառային ուղարկեցի սափրիչի հետևից, որպեսզի գլուխըս սափրեմ, և ասացի. «Շուկա գնա ու մի սափրիչ կանչիր, որ խելոք լինի ու ոչ շատախոս, որպեսզի իր շաղակրատանքներով գլուխս չտանի»: Եվ ծառան գնաց ու բերեց այս շարաղետ ծերուկին: Եվ, ներս մըտնելով, նա ողջունեց ինձ, ու ես պատասխանեցի նրա ողջունին, և նա ասաց ինձ. «Ինչպես տեսնում եմ, դու նիհարել ես մարմնով»: Իսկ ես պատասխանեցի. «Ես հիվանդ էի»: Եվ այնժամ նա բացականչեց. «Թող ալլահը քեզանից հեռացնի հոգսը, վիշտը, փորձանքն ու տխրությունը»:

«Թող ալլահն ընդունի՛ր քո աղոթքը»,— ասացի ես: Եվ սափրիչը բացականչեց. «Ուրախացի՛ր, տեր իմ, առողջությունը վերադարձել է քեզ: Դու մազե՞րդ ես ուզում կարճացնել, թե արյուն բաց թողնել: Մեզ է հասել Իբն Աբբասի, թող ալլահը գոհանա նրանով, խոսքերից, որ մարգարեն ասել է. «Ով մազերը խուզում է ուրբաթ օրը, նրանից հեռու կմնա յոթանասուն հիվանդություն»»: Եվ նույնի խոսքերից ավանդել են, որ ասել է. «Ով ուրբաթ օրը տգրուկ դնի վրան, նա տեսողության կորուստի ու բազմաթիվ հիվանդությունների վտանգից զերծ է»:

«Թող այդ գրույցներդ, իսկույն ևեթ վեր կաց, գլուխս սափրիր. ես տկար մարդ եմ»,— ասացի ես: Եվ սափրիչը վեր կացավ ու, ձեռքը զբրպանը տանելով, հանեց անձեռոցիկը և բացեց այն, ու հանկարծ դրա մեջ հայտնվեց անկյունաչափը¹ յոթ արծաթազօծ սկավառակ: Եվ սափրիչը վերցրեց այն ու, կանգնելով տան կենտրոնում, գլուխը բարձրացրեց դեպի արեգակի ճառագայթներն ու միառժամանակ նայեց, ապա ասաց. «Իմացի՛ր, որ այսօրվա, այսինքն ուրբաթ օրվա, մարգա-

¹ Անկյունաչափ — գործիք, որով մինչև XVIII դարը որոշում էին երկնային լուսատուների գասավորությունը:

րեի (լավագուշն աղոթքներն ու ողջութունը նրա վրա) այն աշխարհը փոխադրվելուց հետո վեց հարյուր վաթսուներեքերորդ և Ալեքսանդրի ժամանակվանից յոթ հազար երեք հարյուր քսաներորդ տարվա սաֆար ամսի տասի ուրրաթ օրվա սկզբից անցել է ութ աստիճան ու վեց րոպե, իսկ այսօր բարձրանում է, ըստ թվարկության գիտության կանոնների, Մարսը, և այնպես է պատահել, որ նրան գիմակայում է Մերկուրին, իսկ դա ցույց է տալիս, որ հիմա մազերը սափրելը լավ է, և ինձ համար նշանակ է այն բանի, որ դու ցանկանում ես հանդիպել մի մարդու, և դա բարեհաջող կլինի, բայց հետո կլինեն խոսակցություններ ու այնպիսի բաներ, որոնց մասին ես քեզ չեմ ասի:

«Ալլահը վկա,— գոչեցի ես,— դու ձանձրացրիր ինձ և վատ գուշակություն արեցիր, իսկ ես քեզ միայն նրա համար եմ կանչել, որ գլուխս սափրես: Շարժվի՛ր, սափրի՛ր գլուխս և խոսք ու զրույց մի՛ արա ինձ հետ»:— «Ալլահը վկա,— պատասխանեց սափրիչը,— եթե դու իմանալիր, թե ինչ է պատահելու քեզ, այսօր ոչինչ չէիր անի: Խորհուրդ եմ տալիս քեզ այնպես անել, ինչպես ես քեզ կասեմ, որովհետև ես ասում եմ աստղերի դիրքը հաշվարկելու հիման վրա»:

Եվ ես ասացի. «Ալլահը վկա, ես աստղաբաշխության մեջ հմուտ սափրիչ չեմ տեսել, բացի քեզանից, բայց ես տեղյակ եմ ու գիտեմ, որ դու շատ դատարկ բաներ ես ասում: Ես քեզ միայն նրա համար եմ կանչել, որ գլուխս սափրես, իսկ դու ինձ մոտ ես եկել այդ զգվելի խոսքերով»:— «Ուզո՞ւմ ես, որ է՛լ ավելին քեզ ասեմ,— հարցրեց սափրիչը:— Ալլահը քեզ մոտ է ուղարկել սափրիչ-աստղագուշակին, որը հմուտ է սպիտակ մոգության, քերականության, շարահյուսության, ճարտասանության, պերճախոսության, տրամաբանության, աստղաբաշխության, երկրաչափության, իրավագիտության, դուրանի ավանդությունների ու մեկնությունների մեջ, և ես գրքեր եմ կարդացել ու սերտել դրանք, և գործեր եմ ձեռնարկել, ու հասել դրանց կատարմանը, սովորել ու յուրացրել եմ գիտությունները և ուսումնասիրել ու տիրապետել եմ արհեստների և զբաղվել եմ ամեն բանով ու ձեռք զարկել դրանց: Քո հայրը սիրում էր ինձ իմ թեթև շատախոսության համար, և այդ պատճառով էլ քեզ ծառայելն իմ պարտքն է. բայց ես շատախոս չեմ, և ոչ էլ այնպիսին. ինչպես դու ես ասում, և այդ պատճառով էլ լուսկյաց, շափավոր եմ կոչվում: Դու պետք է փառք տայիր ալլահին, և ոչ թե կշտամբեիր ինձ. ես քս անկեղծ խորհրդատուն եմ, բարյացակամ քո նկատմամբ, և ես կուզեի, որ քեզ մոտ ծառայության մեջ լինեի մի ամբողջ տարի, և որ դու արժանին հատուցեիր ինձ, և ես քեզանից դրա համար վարձ չեմ ուզում»:

Եվ, լսելով այդ նրանից, ես բացականչեցի. «Դու այսօր կսպանե՞ս ինձ, անկասկած»: Եվ սափրիչը պատասխանեց. «Ո՞վ տեր իմ, ես նա եմ, որին մարդիկ կռակյաց են անվանում թեթև շատախոսության պատճառով, ի տարբերություն իմ վեց եղբայրների, որովհետև իմ մեծ եղբոր անունը էլ-Բաբուբ է, երկրորդինը՝ էլ-Հաղդար, երրորդինը՝ Ֆաբիբ, չորրորդի անունն է էլ-Քուզ-էլ-Ասվանի, հինգերորդինը՝ էլ-Ֆաշշար, և վեցերորդինը՝ Շաբուշիբ, իսկ յոթերորդին կոչում են էս-Սամիթ¹, և դա ես եմ»:

Եվ երբ սափրիչը երկարացրեց խոսքը, — ասաց երիտասարդը, — ես զգացի, որ լեղիս տրաքվում է, և ծառային ասացի. «Քառորդ դինար տուր նրան, և թող նա իմ մոտից գնա, ավաճի սիրուն: Չեմ ուզում գլուխս սափրել»: Բայց սափրիչը լսելով, թե ինչ եմ ասում ծառային, բացականչեց. «Դա ի՞նչ խոսք է, ով տեր իմ: Ալլահը վկա, ես քեզնից փող չեմ վերցնի, մինչև քեզ շճառայեմ և պարտավոր եմ քեզ ծառայել: Ես պարտավոր եմ ծառայել քեզ ու կատարել այն, ինչ քեզ հարկավոր է, և մտքովս էլ չի անցնում քեզանից փող վերցնել: Եթե դու իմ գինը չգիտես, ապա ես քո գինը գիտեմ, և քո հայրը, թող մեծ ավաճը նրան ողորմի, մեզ շնորհներ է արել, որովհետև նա մեծահոգի էր: Ալլահը վկա, քո հայրը մի օր, այսօրվա նման մի փառավոր օր, իմ հետևից մարդ ուղարկեց, և ես մտա նրա մոտ (իսկ նրա մոտ ընկերների հավաքույթ էր), և նա ինձ ասաց. «Արյունս բաց թող»: Եվ ես վերցրի անկյունաշափր և շափեցի նրա բարձրությունն ու գտա, որ աստղերի դասավորությունը նրա համար նպաստավոր չէ, և որ այդ հանգամանքներում նրանից արյուն բաց թողնելը ծանր հետևանք կունենա, ու նրան տեղեկացրի այդ մասին և նա հետևեց իմ խոսքերին ու սպասեց, իսկ ես ի փառս նրա արտասանեցի.

«Տիրոջս մոտ եկա, ահա. արյունն առնեմ անմաքուր,
 Բայց տեսնում եմ ժամանակը շար է հիմա ու ախուր:
 Ես նստեցի ու պատմեցի նրան բազում պատմություն,
 Եվ դարձրի հաղորդակից նրան խելքիս իմաստուն:
 Նրա սրտին ես դուր եկա, ու նա ասաց հիացքով.
 «Սահմանն անցել ես գիտության, իմաստության դո՛ւ աղբյուր»».

¹ Սափրիչի եղբայրների անունները նշանակում են՝ էլ-Բաբուբ—շաղակրատ, էլ-Հաղդար— ճշան, Ֆաբիբ— շատախոս, էլ-Քուզ-էլ-Ասվանի—Ասուանի կուժ (այսինքն կժի բերանի նման բերանը միշտ բաց), էլ-Ֆաշշար— վայրահաշ, Շաբաշիբ— դատարկարան, էս-Սամիթ— լռակյաց:

Եվ ասացի. «Եթե, ով անը, շնորհներով անհատնում
Չտայիր ինձ դու գիտութուն, չէի լինի իմաստուն:
Առատածեռն ես, ողորմած, անըր ամեն բարիքի,
Ո՛վ դու շրճոր իմաստության, համեատության ու խելքի»:

Եվ քո հայրը հիացավ ու կանչեց ծառային և ասաց. «Հարյուր երեք
դինար ու զգեստ տուր նրան», — և այդ բոլորը տվեց ինձ: Իսկ երբ եկավ
գովելի ժամը, ես նրանից արյուն բաց թողեցի: Ավ նա շառարկեց ու
շնորհակալ եղավ ինձանից, և հավաքվածները, որոնք ներկա էին, շնոր-
հակալություն հայտնեցին ինձ: Եվ արյունը բաց թողնելուց հետո ես
չկարողացա լռել ու հարցրի նրան. «Ալլահի շիրուն, տեր իմ, ինչի՞ց
բխեցին քո խոսքերը. «Տուր նրան հարյուր երեք դինար»»: Եվ նա պատաս-
խանեց. «Մեկ դինարն աստղագուշակության, մեկ դինարը զրույցի և մեկ
դինարն արյուն բաց թողնելու համար, իսկ հարյուր դինարն ու զգեստը՝
ինձ գովելուդ համար»:

«Թող ալլահը սղորմի իմ հորը, որ քեզ նմանին ճանաչել է», — գո-
չեցի ես: Իսկ այս սափրիչը ծիծաղեց և ասաց. «Չկա ուրիշ աստված,
բացի ալլահից, և Մուհամմեդն ալլահի մարգարեն է: Փա՛ռք նրան, որ
փոխում է, իսկ ինքը չի փոխվում: Ես քեզ խելոք էի համարում, բայց դու
հիվանդության պատճառով ավելորդ բաներ ես ասում: Եվ ալլահն ասել
է իր մեծ գրքում. «Չայրույթը գսպողներն ու մարդկանց ներողները», —
և դու, համենայն դեպս, ներված ես: Ես չգիտեմ քո շտապողականու-
թյան պատճառը, և դու գիտես, որ քո հայրն ու պապը ոչինչ չէին անում
առանց իմ խորհրդի: Չէ՞ որ ասված է՝ խորհրդատուն արժանի է վստա-
հության, և չի խաբվում նա, ով խորհուրդ է հարցնում: Իսկ մի առած
ասում է՝. ով մեծ շունի, ինքը մեծ չէ, բանաստեղծն էլ ասել է.

«Երբ պարաստվես որե՛ գործ անելու,
Իմաստունից խորհուրդ հարցրու և ասածը կատարիր»:

Դու ոչ ոքի չես գտնի, որ ավելի բանիմաց լինի, քան ես, և ես ուրի
վրա կանգնած քեզ եմ ծառայում, և դու ինձ չես ձանձրացրել, ինչպե՞ս է,
որ ես քեզ ձանձրացրի: Բայց ես համբերատար կլինեմ քեզ հետ հանուն
այն շնորհների, որ քո հայրն է արել ինձ»:

«Ալլահը վկա, ով ավանակի պոչ, դու երկարացրիր քո բարբառան-
քը և շարունակեցիր ինձ ձանձրացնել քո խոսքերով: Ես ուզում եմ, որ
դու գլուխս սափրես ու հեռանաս ինձանից», — գոչեցի ես: Եվ այնժամ
սափրիչը թրջեց գլուխս ու ասաց. «Ես հասկանում եմ, որ իմ պատճա-

ոով քեզ ձանձրուցթն է տիրել, բայց քեզ շեմ մեղադրում, քանի որ քո միտքը տկար է, և դու երեխա ես, ու գեռ երեկ ես քեզ ուսերիս էի նըստեցնում ու դպրոց տանում»: — «Ով եզբայր իմ, ի սեր ալլահի, աղաչում եմ քեզ համբերիր ու լռիր, մինչև գործս վերջանա, ու քո ճանապարհը գնա», — գոչեցի ես ու պատռեցի վրայիս շորերը: Եվ տեսնելով, որ ես այդպես արեցի, սափրիչը վերցրեց ածելին ու սկսեց սրել այն և սրեց այնքան ժամանակ, որ քիչ մնաց խելքս թուշեր գլխիցս, ապա մոտեցավ ու սափրեց գլխիս մի մասը, որից հետո ձեռքը բարձրացրեց ու ասաց. «Ո՛վ տեր, շտապողականությունը սատանայի բան է, իսկ դանդաղկոտությունը՝ զթասրտության»: Եվ նա արտասանեց.

«Էլ ոչ մեկից մի սպասիր սեր ու կարոտ սրտանվեր,
Եվ թե բախտը քեզ ծուռ նայի, էլ շես գտնի լավ ընկեր.
Մենություն մեջ ապրիր հանգիստ, ոչ ոքի մի հավասա,
Ես քեզ անկեզծ խորհուրդ տվի, և քեզ համար բավ է դա»:

«Ով տեր իմ, — ասաց նա հետո, — ես շեմ կարծում, որ դու գիտեո իմ բարձր աստիճանը: Իմ ձեռքը կրնկնի թագավորների, էմիրների, վեզիրների, իմաստունների ու արժանավորների գլխին, որովհետև բանաստեղծն իմ մասին ասել է.

«Ակնեղենների շղթա է մի պերճ՝ արհեսաը կյանքում.
Իսկ սափրիչը այս՝ մարգարտե ակը այդ վսեմ շարքում,
Իմաստունների նախանձն է շարժում նա իր սուր խելքով
Եվ արքաների գլուխն է պահում զույգ ձեռքերով իր»:

Եվ ես բացականչեցի. «Մի կո՛ղմ թող քեզ շվերաբերողը. դու սիրտըս նեղացրիր ու հոգիս վրդովեցիր»: Իսկ սափրիչը հարցրեց. «Ինձ թվում է, թե դու շտապո՞ւմ ես»: — Այո՛, այո՛, այո՛», — գոռացի ես: Եվ այնժամ նա ասաց. «Ժամանակդ երկարացրու. շտապողականությունը սատանայի բան է, և դա զղջում ու հիասթափություն է ծնում: Ինչ-որ մեկը, ողջույնն ու աղոթքը նրա վրա, ասել է՝ գործերից լավագույնն այն է, որի մեջ դանդաղկոտություն է ցուցաբերված: Իսկ ինձ, ալլահը վկա, քո գործը կասկած է ներշնչում: Ես կուզեի, որ դու ինձ հայտնես, թե ինչ մտադրություն ունես: Ես վախենում եմ, որ ուրիշ բան պատահի: Չէ՞ որ մինչև աղոթքի կոչումը երեք ժամ է մնացել: Ես շեմ ուզում կասկածանքի մեջ մնալ այդ բանի մասին, — ավելացրեց նա, — այլ ուզում եմ ճիշտ ժամանակն իմանալ, որովհետև երբ խոսքերն ասվում են շգիտես, թե ում և ինչ առիթով, խայտառակություն է, հատկապես ինձ նմանի համար, քանի որ մարդկանց մեջ հռչակվել է ու տարածվել իմ

արժանիքների համրավը, և ինձ վայել չէ բախտապաժենն խոսել, ինչպես սովորաբար աստղագուշակներն են խոսում»:

Եվ նա ցած դրեց ածելին և, վերցնելով անկյունաշափը, գնաց, արևի տակ կանգնեց ու երկար ժամանակ մնաց, իսկ հետո վերադարձավ և ասաց ինձ. «Մինչև աղոթքի կոչունքը երեք ժամ է մնացել. ո՛չ ավել, ո՛չ պակաս»:

«Ալլահի սիրուն, լոհ՛ր,— բացականչեցի ես,— դու իմ լյարդն ու թոքը խոցեցիր»: Եվ սափրիչը վերցրեց ածելին ու սկսեց սրել, ինչպես առաջին անգամ, և սափրեց զլիսիս մի մասն ու ասաց. «Ես մտահոգված եմ քո շտապողականությամբ, և եթե դու հայտնեիր ինձ դրա պատճառը, դա քեզ համար ավելի լավ կլիներ: Դու հո գիտե՞ս, որ քո հայրն ու պապը ոչինչ չէին անում առանց ինձ հետ խորհրդակցելու»: Եվ ես հասկացա, որ նրանից փրկություն չունեմ ու ինքս ինձ ասացի. «Աղոթքի ժամանակը եկավ, իսկ ես ուզում եմ աղջկա մոտ գնալ ավելի վաղ, քան ժողովուրդը աղոթքից կվերադառնա: Եթե մի բոպե էլ ուշանամ, չգիտեմ, թե ինչպես կմտնեմ նրա մոտ»:

«Կարճ կապի՛ր ու թո՛ղ այդ զրույցն ու շաղակրատանքը,— ասացի ես,— ես ուզում եմ խնջույքի գնալ իմ ընկերներից մեկի մոտ»: Եվ սափրիչը, լսելով խնջույքի մասին հիշատակությունը, բացականչեց. «Այս օրն ինձ համար օրհնյալ օր է: Երեկ ես հրավիրեցի մի քանի բարեկամների և մոռացա հոգ տանել նրանց մասին և ուտելու բան պատրաստել, իսկ հիմա մտածեցի այդ մասին: Օ՛, ես ամոթով կմնամ նրանց առջև»:— «Մի՛ մտածիր այդ մասին, քանի որ իմացար, որ ես այսօր խընջույքի եմ գնալու,— ասացի ես:— Այն ամենը, ինչ իմ տանը կա ուտելու և խմելու, քոնը կլինի, եթե վերջացնես իմ գործը և շտապես գլուխս խուզել»:

«Թող ալլահը բարիքով հատուցի՛ քեզ: Թվի՛ր, թե ինչ կա քո տանը իմ հյուրերի համար, որ ես իմանամ»,— ասաց սափրիչը: Եվ ես պատասխանեցի. «Իմ տանը հինգ տեսակ կերակուր կա, հինգ կարմրացրած հավ ու խորոված գառ»:— «Բե՛ր այստեղ, որ ես տեսնեմ»,— ասաց սափրիչը: Եվ ես կարգադրեցի, որ այդ բոլորը բերեն: Եվ ուտելիքը տեսնելով, նա ինձ ասաց. «Խմիչքներն են մնում»:— «Ունեմ»,— պատասխանեցի ես: Եվ սափրիչը բացականչեց. «Բե՛ր»: Ու ես բերել տվեցի խմիչքները, և նա ասաց. «Դու արժանի ես ալլահին, ի՛նչ բարի է քո հոգին: Բայց ղեռ մնում են ծխելիքն ու անուշահոտությունները»: Եվ ես նրան մի փաթեթ տվի, որի մեջ նեղդ, հալվե ու մուշկ կար հիսուն դինարի արժեքով:

Իսկ ժամանակ քիչ էր մնացել, և սիրտս նեղվում էր, ու ես ասացի նրան. «Վերցրու սա և ամբողջ գլուխս սափրիր, և աղաչում եմ քեզ ի սեր Մուհամմեդի կյանքի, թող ալլահը փառավորի նրան ու բարձրացնի»: Բայց սափրիչը պատասխանեց. «Ալլահը վկա, ես դա չեմ վերցնի, մինչև շտեմենամ, թե մեջը ինչ կա»: Եվ ես ծառային կարգադրեցի բացել փաթեթը, ու սափրիչը ձեռքից բաց թողեց անկյունաշափր և, գետնին նայելով, սկսեց դիտել անուշահոտություններն ու ծխելիքներն ու հալվեն, որ փաթեթի մեջ էին, մինչև որ իմ սիրտը նեղվեց: Իսկ հետո նա մոտեցավ, վերցրեց ածելին ու, գլխիս մի փոքր մասը սափրելով, արտասանեց.

Նրդին իր հոր բարքն է, իրավ, միշտ յուրացնում,
Ձե՞ որ, իրոք, արմատից է ծառ աճում»:

«Ալլահը վկա, ո՞վ տղաս,— ասաց նա,— չգիտեմ՝ քե՞զ շնորհակալություն հայտնեմ, թե քո հորը, քանի որ իմ այսօրվա ամբողջ խնջույքը քո սիրալիրության ու բարեգործության մի մասն է: Բայց ինձ մոտ ոչ ոք չկա, որ դրան արժանի լինի, ինձ մոտ լինում են բաղնետեր Զինգութի, հացահատիկ վաճառող Սալիի, լորավաճառ Սալիթի, ուղտապան Սուայդի, բեռնակիր Սուվեյդի, բաղնեպան Աբու Մուբարիշի, պահակ Քասիմի ու ձիապան Քարիմի, կանաչեղեն վաճառող Իբրիշի, աղբակիր Խումեյդի նման պատվավոր պարոններ, և նրանց մեջ ոչ մի ձանձրացնող, անզուսպ, շատախոս ու գլուխ տանող չկա, և նրանցից ամեն մեկն իր պարն ունի, որ պարում է, և ոտանավորը, որ արտասանում է, բայց նրանց ամենալավ հատկությունն այն է, որ նրանք, ինչպես քո ծառան և ստրուկը, չգիտեն շատախոսությունն ու շաղակբատանքը: Բաղնիքի տերը դահիրայի նվագի տակ երգում է ինչ-որ կախարդական մի բան և պարում է ու ծոր տալիս. «Ծս կզնամ, ո՞վ մայրիկ, կլցնեմ իմ կուժը»: Հացահատիկ վաճառողն ավելի լավ ունակություն է ցուցաբերում, քան մի ուրիշը, և պարում է, ու երգում. «Ո՞վ լացող կին, իմ տիրուհի՛, դու ոչ մի բան բաց չթողիր», և բոլորի հոգին հանում է, այնքան նրա վրա ծիծաղում են: Իսկ աղբակիրն այնպես է երգում, որ լռեցնում է թռչուններին ու, երգելով, ասում է. «Կինս նորություն ունի, ասես մեծ սնդուկի մեջ», և նա գեղեցիկ է ու զվարճասեր, և նրա գեղեցկության մասին ես ասել եմ.

Աղբահանին կյանքս կտամ նրա անհուն սիրո համար,
Գիմափիժը՝ նուրբ ու քնքուշ, իրանն, ասես. մի սառ դալար:
Բախտը նրան ինձ մոտ բերեց ու ասացի. «Ով հոգեհառ,—

(Կիրթն էր իմ մեջ մերթ մոլեգնում, մեկ էլ հանկարծ մարում իսպառ),
«Հուր ես վառել իմ հոգու մեջ», — ու պառառոխանն եղավ այսպէս.
«Աղբահանը հնոցապան եթէ գտնա, հրաշք չէ մեծ»:

Եվ նրանցից յուրաքանչյուրը ուրախ ու ծիծաղաշարժ բաներով կատարելապես զվարճացնում է մարդկանց: Բայց պատմածն այն չէ, ինչ որ տեսածը, — ավելացրեց նա, — և եթէ դու գերադասես մեզ մոտ գալ, գա շատ սիրալիր կլինի և՛ քեզ, և՛ մեզ համար: Հրաժարվիր քո ընկերների մոտ գնալու մտքից, որոնց մոտ մտադիր ես գնալ: Քեզ վրա դեռ հիվանդության հետքերը մնում են, և կարող է պատահել, որ դու շատախոս մարդկանց մոտ գնաս, որոնք խոսում են այն ամենի մասին, ինչ որ իրենց չի վերաբերում, կամ նրանց մեջ կգտնվի մի շաղակրատ, և քո գլուխը կցավեցնի: Չէ՞ որ հիվանդությունից հետո դու դեռ տկար ես»:

«Դա մի ուրիշ օր կլինի, — ասացի ես ու սրտիս զայրույթից ծիծաղեցի: — Գործս արա, և ես կգնամ, ամենաբարձրյալ արհեստի պահպանությամբ, իսկ դու գնա քո ընկերների մոտ, նրանք քեզ են սպասում»:

«Մ՛վ տեր, — ասաց սափրիչը, — ես միայն ուզում եմ քեզ ծանոթացնել այդ հիանալի, տոհմիկ ծագումով մարդկանց հետ, որոնց թվում ոչ մի շատախոս ու շաղակրատ չկա: Այն ժամանակից ի վեր, որ ես չափահաս եմ դարձել, ամենեւին չեմ կարող ընկերություն անել այնպիսի մարդկանց հետ, ովքեր հարցնում են այն մասին, ինչ իրենց չի վերաբերում, և բարեկամություն եմ անում միայն նրանց հետ, ովքեր ինձ նման սակավախոս են: Եթէ դու նրանց հետ ընկերանայիր ու գեթ մի անգամ տեսնեիր նրանց, կհրաժարվեիր քո բոլոր ընկերներից»: — «Քող արհեստը նրանց շնորհիվ կատարյալ դարձնի քո ուրախությունը: Ես անպայման նրանց մոտ կգամ մի օր», — ասացի ես: Եվ սափրիչը բացականչեց. «Ես կուզեի, որ դա հենց այսօր լիներ: Եթէ դու որոշել ես ինձ հետ գնալ իմ ընկերների մոտ, թույլ տուր, որ քո ընծայածները տանեմ նրանց մոտ, իսկ եթէ դու այսօր անպայման պետք է գնաս քո բարեկամների մոտ, ապա ես կտանեմ այդ առատ ընծաները, որոնցով դու ինձ պատվեցիր, ու կթողնեմ իմ ընկերների մոտ, թո՛ղ ուտեն ու խմեն ու շապասեն ինձ, իսկ հետո ես կվերադառնամ ու միասին կգնանք քո բարեկամների մոտ: Իմ ու բարեկամներիս միջև նեղանալու բան չկա, որ ինձ խանգարեր նրանց թողնել, ես շուտ կվերադառնամ և քեզ հետ կգամ, ուր էլ գնալու լինես»: — «Չկա՛ ավելի մեծ ուժ ու զորություն, քան արհեստն է մեծ ու բարձրյալ, — բացականչեցի ես: — Գնա՛ քո ընկերների մոտ և ուրախացի՛ր նրանց հետ ու թո՛ղ, որ ես գնամ իմ բարեկամների մոտ ու նրանց հետ լինեմ այսօր: Նրանք ինձ սպասում են»: — «Ես չեմ

թողնի, որ դու մենակ գնաս», — պատասխանեց սափրիչը: Եվ ես ասացի. «Այնտեղ, ուր ես գնում եմ, ոչ ոք չի կարող գնալ, բացի ինձանից»: Բայց սափրիչը բացականչեց. «Ես կարծում եմ, որ պայմանավորվել ես մի կնոջ հետ, այլապես դու ինձ քեզ հետ կտանեիր: Ես դրա համար ավելի իրավունք ունեմ, քան բոլոր մարդիկ, և ես քեզ կօգնեմ ամեն գործում, ինչում որ ուզես: Ես վախենում եմ, որ դու օտար կնոջ մոտ գնաս ու հոգիդ կորցնես: Այս քաղաքում՝ Բաղդադում, ոչ ոք այդպիսի բաներ չի կարող անել, հատկապես այնպիսի մի օր, ինչպիսին է այսօրը, և մեր Բաղդադի վալին խիստ է, պատկառելի»:

«Վա՛յ քեզ, դարշելի՛ ծերուկ, կորի՛ր: Ի՞նչ խոսքեր ես դու ինձ ասում», — գռչեցի ես: Եվ սափրիչն ասաց. «Ո՛վ հիմար, դու մտածում ես. «Ինչպե՞ս չի ամաչում սա», և թաքցնում ես ինձանից, բայց ես այդ հասկացա ու համոզվեցի այդ բանում, և ուզում եմ միայն ինքս օգնել քեզ այսօր»:

Եվ ես վախեցա, որ իմ հարազատներն ու հարևանները կլսեն սափրիչի խոսքերը, և երկար ժամանակ լռեցի: Իսկ աղոթքի ժամն արդեն վրա հասավ, ու եկավ քարոզի ժամանակը, և սափրիչը վերջացրեց իմ գլուխը սափրելը, և ես նրան ասացի. «Գնա՛ քո ընկերների մոտ այս ուտելիքներով ու խմիչքներով, ես կսպասեմ, մինչև դու վերադառնաս ու ինձ հետ գաս»:

Եվ ես շագագրեցի այդ անիծյալին թլսորելուց ու խաբելուց, հուսալով, որ նա, գուցե, հեռանա իմ մոտից, բայց նա ասաց. «Դու ինձ կխաբես ու մենակ կգնաս ու փորձանքի մեջ կընկնես, որից փրկություն չես գտնի: Ի սեր ալլահի, աղաչում եմ քեզ, մի՛ գնա, մինչև ես չվերադառնամ, և ես քեզ հետ կգամ ու կիմանամ, թե ինչպես է վերջանում քո գործը»: — «Է՛վ, մի ստիպիր ինձ սպասել», — ասացի ես: Եվ այս անիծյալը վերցրեց ուտելեղենը, խմիչքներն ու մյուս բաները, ողտվել էի նրան, ու դուրս եկավ իմ մոտից, և գրանք բեռնակրին հանձնեց, որ իր տուն տանի, իսկ ինքը թաքնվեց մի նրբանցքում: Իսկ ես անմիջապես վեր կացա (իսկ մուեծիներն արդեն երգում էին մարգարեի ողջույնը) ու հազա զգեստներս ու մենակ դուրս եկա և գնացի այն նրբանցքն ու կանգ առա այն տան մոտ, որտեղ տեսել էի աղջկան, և պարզվեց, որ պառավն այնտեղ կանգնել ու ինձ է սպասում: Եվ ես նրա հետ բարձրացա այն սենյակը, որտեղ աղջիկն էր մնում, ու ներս մտա և հանկարծ տեսա, որ տանտերն աղոթքից վերադարձավ տուն ոչ ներս մտավ ու դարպասը փակեց: Եվ ես պատուհանից ցած նայեցի ու նկատեցի, որ այս սափրիչը, ալլահի անհժքը նրա վրա, նստած է դալձ»:

պասի մոտ: «Որտեղի՞ց այդ սատանան իմացավ իմ մասին»,— մտա-
ծեցի ես: Եվ հենց այդ րոպեին, այն պատճառով, որ ալլահն ուզեց իմ
վրայից վերցնել իր պաշտպանության ծածկոցը, այնպես պատահեց,
որ տանտիրոջ ստրկուհիներից մեկը ինչ-որ բան չէր արել, ու տերն
սկսեց ծեծել ստրկուհուն, և ստրկուհին ճչաց, և տանտիրոջ ստրուկը
դուրս եկավ, որ ստրկուհուն ազատի, բայց տերը նրան էլ ծեծեց, ու
սա նույնպես դռաց: Եվ անիծյալ սափրիչը կարծեց, թե տանտերն ինձ
է ծեծում, ու պատառոտեց վրայի շորերն ու հող ցանեց գլխին ու սկսեց
ռնալ ու օգնություն կանչել: Իսկ մարդիկ կանգնել էին նրա շուրջը, ու
նա ասում էր. «Ղադիի տանը իմ տիրոջն սպանեցին»:

Հետո նա գոռում-գոչումով գնաց իմ տուն, իսկ մարդիկ գնացին
նրա հետևից և իմ հարազատներին ու ծառաներին լուր տարան: Եվ ես
դեռ ուշքի չէի եկել, երբ նրանք եկան՝ պատառոտված շորերով, հերար-
ձակ ու բղավելով. «Հեյ վա՛խ, մեր տեր»: Իսկ այս սափրիչը պատա-
ռոտած շորերով նրանց առջև էր ընկել ու բղավում էր, իսկ ժողովուրդը
հետևում էր նրան: Եվ իմ բոլոր հարազատները բղավում էին, իսկ նա
էլ բղավում էր առջևից գնացողների մեջ ընկած, ու նրանք ողբում էին.
«Ավա՛ղ, սպանված է, հեյ վա՛խ, սպանված է»,— և գնում էին դեպի
այն տունը, որտեղ ես էի գտնվում:

Եվ տանտերը լսեց աղմուկն ու ճիշերը իր դարպասի մոտ և իր ծա-
ռաներից մեկին ասաց. «Մի տես, թե ի՞նչ է պատահել»: Եվ ծառան
դուրս եկավ ու վերադարձավ իր տիրոջ մոտ և ասաց. «Տե՛ր իմ, դար-
պասի մոտ տասը հազարից ավելի մարդ է հավաքվել, տղամարդ ու կին,
և նրանք բղավում են. «Հեյ վա՛խ սպանված է», և մեր տունն են ցույց
տալիս»: Եվ երբ ղադին լսեց այդ, գործը նրան լուրջ երևաց, ու նա
զայրացավ և, վեր կենալով, դուրս եկավ ու բացեց դարպասը: Եվ նա
մեծ բազմություն տեսավ ու շշմած հարցրեց. «Ո՞վ մարդիկ, ի՞նչ է
պատահել»: Եվ իմ ծառաները գոռացին նրա վրա. «Ո՞վ անիծյալ, ո՞վ
շուն, ո՞վ խոզ, դու սպանել ես մեր տիրոջը»: Եվ ղադին հարցրեց. «Ո՞վ
մարդիկ, իսկ ի՞նչ է արել ձեր տերը, որ ես նրան սպանեի: Ահա՛ իմ
տունը ձեր առջև է»: Եվ սափրիչն ասաց նրան. «Դու հենց նոր մտրակով
ծեծում էիր նրան, և ես լսում էի նրա լացը»:— «Բայց նա ի՞նչ է արել,
որ ես նրան սպանեի, և ո՞վ է նրան իմ տուն բերել, և ո՞րտեղ, և որտե-
ղի՞ց»,— հարցրեց ղադին: Եվ սափրիչը բացականչեց. «Զգվելի ծերուկ
մի՛ եղիր: Ես գիտեմ ամբողջ պատմությունը և բոլոր հանգամանքները:
Քո աղջիկը սիրում է նրան, ու նա էլ սիրում է քո աղջկան, և երբ դու
իմացար, որ նա քո տունն է մտել, ծառաներիդ հրամայեցիր, և նրանք

ծեծեցին նրան: Ալլահը վկա, կամ մեզ ու քեզ խալիֆը պիտի դառի, կամ մեր տիրոջը մեզ մոտ բեր, որ նրա հարազատները նրան տանեն, նախքան ես ներս կմտնեմ ու նրան դուրս կբերեմ քո տնից, և դու կխայտառակվես»:

Եվ դադին պատասխանեց (իսկ նա խոսում էր զսպված, և նրան ամոթն էր պատել մարդկանց առաջ). «Եթե դու ճիշտ ես ասում, ինքդ մտիր ու դուրս բեր նրան»:

Եվ սափրիչը մի թռիչքով տուն մտավ, և տեսնելով, որ նա ներս մտավ, ես սկսեցի դուրս գալու և փախչելու ճանապարհ փնտրել, բայց չկարողացա գտնել ավելի շուտ, քան այն, որ իմ գտնված սենյակում մի սնգուկ տեսա: Եվ ես մտա սնգուկի մեջ ու փակեցի այն և շունչս պահեցի: Իսկ սափրիչը մտավ սենյակ և ներս մտնելուն պես սկսեց ինձ փնտրել ու միտք արեց, թե որտեղ կարող եմ լինել, և, աջ ու ձախ դառնալով, մոտեցավ սնգուկին, որի մեջ պահվել էի, բարձրացրեց ու գլխին գրեց այն, և ես արիութունս կորցրի: Սափրիչը շտապ-շտապ էր գնում, և հասկանալով, որ նա ինձ չի թողնելու, ես սնգուկը բացեցի ու գետին նետվեցի ու ոտքս կոտրեցի: Եվ դարպասը բացվեց, ու ես դբա առջև մեծ բազմութուն տեսա:

Իսկ իմ թևքի մեջ ես շատ ոսկեդրամներ ունեի, որ նախատեսել էի հենց այդպիսի օրվա ու այդպիսի գործի համար, և ես սկսեցի այդ ոսկին շաղ տալ մարդկանց, որպեսզի նրանց ուշադրությունը դրա վրա գրավեմ: Եվ մարդիկ սկսեցին ոսկին հավաքել ու դրանով զբաղվեցին, իսկ ես Բաղդադի նրբանցքներով աջ ու ձախ էի վազում, և այս անիծյալ սափրիչն էլ իմ հետևից էր վազում և ուր մտնում էի, հետևիցս ներս էր մըտնում ու ասում. «Նրանք ուզում էին վշտացնել ինձ, իմ տիրոջը շարիք գործելով: Փա՛ռք ալլահին, որն օգնեց ինձ ու ազատեց իմ տիրոջը նրանց ձեռքից: Քո անշրջահայացութունը միշտ մտատանջել է ինձ, և դու քո գլխին այդպիսի բան բերեցիր, եթե ալլահն ինձ քեզ մոտ չուղարկեր, դու չէիր ազատվի այն փորձանքից, որի մեջ ընկել էիր, և քեզ այնպիսի փորձանքի մեջ կգցեին, որից երբեք չէիր փրկվի: Որքան ես ուզում, որ ես ապրեմ քեզ համար ու ազատեմ քեզ: Ալլահը վկա, դու ինձ կործանեցիր քո անխոհեմությամբ, իսկ գեռ ուզում էիր մենակ գնալ: Բայց մենք բեզնից քո հիմարության համար հատուցում չենք պահանջի, որովհետև դու խելքից պակաս ես ու շտապող»:

«Բավական չէ այն, ինչ պատահել է, գեռ հետևիցս էլ վազում ես ու շուկաներում այդպիսի խոսքեր ասո՞ւմ», — բացականչեցի ես ու հոգիս քիչ էր մնում ինձ լքեր այս սափրիչի վրա խիստ զայրանալուցս:

Եվ ես մտա շուկայի կենտրոնում գտնվող իջևանատունն ու պաշտպանութուն խնդրեցի դրա տիրոջից, և նա թույլ շտվեց, որ սափրիչն ինձ մոտ գա: Ես նստեցի սենյակներից մեկում և ինքս ինձ ասացի. «Ես այլևս չեմ կարող բաժանվել այս անիծյալ սափրիչից, և նա ինձ հետ կլինի գիշեր ու ցերեկ, իսկ ես է՛լ սիրտ չունեմ նրա երեսը տեսնելու»:

Եվ ես անմիջապես մարդ ուղարկեցի վկաների հետևից ու կտակս գրեցի իմ հարազատների համար ու փողերս բաժանեցի ու կտակարար նշանակեցի ու նրան հրամայեցի ծախել տունս ու հողերս և կարգադրութուն արեցի մեծ ու փոքր հարազատներիս մասին և ճանապարհ ընկա ու այն ժամանակից ի վեր թափառում եմ, որպեսզի ազատվեմ այս կավատից: Ես եկա այստեղ և բնակութուն հաստատեցի ձեր քաղաքում ու որոշ ժամանակ ապրեցի այստեղ, և դուք հրավիրեցիք ինձ, և, ահա, ես ձեզ մոտ եմ եկել ու այս կավատին տեսնում եմ պատվավոր տեղում: Էլ ինչպե՞ս ինձ համար հաճելի կլինի ձեզ հետ մնալը, երբ նա ինձ հետ այդպես է վարվել, ու ոտքս նրա պատճառով է կոտրվել»:

Եվ դրանից հետո երիտասարդը հրաժարվեց ուտելուց, Եվ, լսելով նրա պատմութունը, մենք սափրիչին հարցրինք. «Ճի՞շտ է արդյոք, ինչ որ այս երիտասարդը քո մասին ասում է»: Եվ նա պատասխանեց. «Ալլահը վկա, ես նրա հետ այդպես վարվեցի իմ գիտելիքների, խելքի ու քաջության շնորհիվ, և եթե ես չլինեի, նա, անշուշտ, կորած էր: Նրա փրկության պատճառը միայն ե՛ս եմ, և գեռ լավ է, որ նրա ոտքն է միայն տուժել, իսկ հոգին չի տուժել: Եթե ես շատախոս լինեի, նրան բարիք չէի գործի, բայց, ահավասիկ, ես ձեզ կպատմեմ ինձ պատահած մի դեպք, և դուք կհավատաք, որ ես քիչ եմ խոսում և իմ մեջ, ի տարբերութուն իմ վեց եզբայրների, շատախոսության նշույլ իսկ չկա»:

ՍԱՓՐԻՉԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ՄԱՍԻՆ

«Ես Բաղդադում էի Մուսթանսիր բիլլահի՝ էլ-Մուսթադի բիլլահի՝ որչու օրոք, և նա՝ խալիֆը, այն ժամանակ Բաղդադում էր գտնվում: Իսկ նա սիրում էր աղքատներին ու կարիքավորներին և նստում էր գիտունների ու արդարների հետ:

Եվ մի անգամ այնպես պատահեց, որ նա զայրացավ տասը հանցագործների վրա ու Բաղդադի կառավարչին հրամայեց, որ սա տոնի

1 Խալիֆ էլ-Մուսթանսիր բիլլահը (թագավորել է 1226—1242 թթ.) ոչ թե որդին, այլ ծոռն է խալիֆ էլ-Մուսթադիի, որը թագավորել է 1170—1180 թթ.:

օրը նրա մոտ տանի դրանց (իսկ դրանք գողեր էին, որ մարդկանց կաղուպտում էին ճանապարհներին): Եվ քաղաքի կառավարիչը դուրս եկավ ու բռնեց նրանց ու նրանց հետ նավակ նստեց. և ես տեսա նրանց ու մտածեցի. «Մարդիկ հավաքվել են ոչ այլ բանի, եթե ոչ քեֆի համար, և նրանք, կարծում եմ, այսօր նավակի մեջ կանցկացնեն ուտելով ու խմելով: Ոչ ոք չի բաժանի նրանց սեղանը, եթե ոչ ես»: Եվ ես վեր կացա, ո՛վ մարդիկ, մեծ խիզախությունք ու շափավորությունք իմ խելքի, և մտնելով նավակը, միացա նրանց, և նրանք նավակով անցան ու դուրս եկան մյուս ափը: Եվ հայտնվեցին կառավարչի պահնորդներն ու զինվորները՝ շղթաներով, ու այդ շղթաները գցեցին գողերի վիզը, և իմ վիզն էլ շղթա գցեցին, և մի՞թե դա իմ խիզախությունից ու սակավախոսությունից շպատահեց, ո՛վ մարդիկ, որի պատճառով ես լռեցի ու խոսել չուզեցի: Եվ մեզ շղթաներով տարան ու ներկայացրին էլ-Մուսթանսիր բիլահին՝ հավատացյալների տիրակալին, և նա հրամայեց տասը հոգու գլուխը թոցնել: Եվ դահիճը մոտեցավ մեզ, սկզբից բոլորիս նստեցնելով իր առջև փոված արյան գորգի վրա, և մերկացրեց սուրն ու սկսեց թոցնել գլուխները մեկը մյուսի հետևից. մինչև որ տասի գլուխը կտրեց, իսկ ես մնացի: Եվ խալիֆը նայեց ու դահիճին հարցրեց. «Ինչո՞ւ դու ինը հոգու գլուխը թոցրիր»: Եվ դահիճը բացականչեց. «Ալլահը փրկի. դու հրամայես տասը հոգու գլխատել, ու ես իննի՞ գլուխը թոցնեմ»: Բայց խալիֆն ասաց. «Ինձ թվում է, թե դու միայն իննի գլուխն ես թոցրել, իսկ սա, որ քո առջևն է, տասներորդն է»: — «Քո ողորմածությունք եմ երդվում, — պատասխանեց դահիճը, — տասը հոգի է գլխատվել»:

Եվ նրանց համրեցին, — ասաց սափրիչը, — ու հանկարծ պարզվեց, որ տասն են: Եվ խալիֆը նայեց ինձ ու հարցրեց. «Ի՞նչը քեզ ստիպեց այսպիսի պահին լռել: Ինչպե՞ս ես դու գատապարտվածների մեջ հայտնրվել, և ի՞նչն է դրա պատճառը: Դու մեծ ծերունի ես, բայց խելքդ փոքր է»: Եվ, լսելով հավատացյալների տիրակալի խոսքերը, ես ասացի նրան. «Իմացի՛ր, ով հավատացյալների վեհապետ, որ ես ծերուկ լռակյաց եմ, և իմաստությունս մեծ է, իսկ ինչ վերաբերում է խելքիս մեծությանը, իմ լավ խոհեմությանն ու սակավախոսությանը, ապա դրանք սահման չունեն. իսկ արհեստով ես սափրիչ եմ: Եվ երեկվա օրը, վաղ առավոտյան, ես տեսա այդ տասին, որոնք դիմում էին դեպի նավակը, խառնվեցի նրանց ու նավակը մտա նրանց հետ, մտածելով, թե նրանք քեֆ են սարքել: Եվ մի րոպե էլ շանցավ, որ հայտնվեցին պահակներն ու նրանց վզները շղթա գցեցին ու իմ վիզն էլ շղթա գցեցին, և մեծ

խիզախութիւնից ես լոնցի ու շխոսեցի, իսկ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ խիզախութիւն: Եվ մեզ բերեցին ու կանգնեցրին քո առջև, և դու հրամայեցիր տասի գլուխը թոցնել. և ես մնացի դահճի առջև, բայց իմ մասին ձեզ տեղյակ չդարձրի. և սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մեծ խիզախութիւն, որի պատճառով ես ուզում էի նրանց հետ բաժանել մահը: Բայց իմ ամբողջ կյանքում այսպես է եղել. ես մարդկանց լավութիւն եմ անում, իսկ նրանք ամենասոսկալի հատուցումով են հատուցում ինձ»:

Եվ երբ խալիֆը լսեց իմ խոսքերը և հասկացավ, որ ես շատ քաջ եմ ու սակավախոս, և ոչ թե շատախոս, ինչպես հաստատում է այդ երիտասարդը, որին ես փրկել եմ սարսափներից, նա այնպես ծիծաղեց, որ մեջքի վրա ընկավ, ու հետո ասաց ինձ. «Ո՛վ լուակյաց, իսկ քո վեց եղբայրները քեզ նման խելոք, գիտուն և սակավախո՞ս են»:— «Թող նրանք շապրեն ու գոչութիւն չունենան, եթե ինձ նման լինեն,— պատասխանեցի ես:— Դու վիրավորեցիր ինձ, ո՛վ հավատացյալների տիրակալ, և պետք չէ, որ իմ եղբայրներին համեմատես ինձ հետ, որովհետև իրենց շատախոսութեան ու նվազ խիզախութեան համար նրանցից ամեն մեկը հաշմանդամ է դարձել՝ մեկը միակնանի է, մյուսը՝ կույր, երրորդը՝ անդամալույծ, չորրորդի ականջներն ու ոտնոցերն են կտրած, հինգերորդի շրթունքներն են կտրած, իսկ վեցերորդը կուզիկ է: Մի՛ կարծիր, հավատացյալների վեհապետ, որ ես շատախոս եմ: Անհրաժեշտ է, որ ամեն ինչ պատմեմ քեզ, և իմ մեջ առավել, քան նրանց բոլորի մեջ, խիզախութիւն կա: Եվ նրանցից յուրաքանչյուրի հետ մի դեպք է պատահել, որի պատճառով նրանք խեղանդամ են դարձել, և ես այդ բոլորը քեզ կպատմեմ»:

ՍԱՓՐԻՉԻ ԱՌԱՋԻՆ ԵՂԹՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացիր, ով հավատացյալների տիրակալ, որ նրանցից առաջինը (իսկ դա կուզիկն է) արհեստով դերձակ էր Բաղդադում, և նա կար էր անում մի խանութում, որ մի հարուստ մարդուց էր վարձել: Իսկ այդ մարդն ապրում էր խանութի վերևում, և նրա տան տակ ջրաղաց կար: Եվ մի անգամ իմ կուզիկ եղբայրը նստած էր խանութում ու կար էր անում, և բարձրացրեց գլուխն ու տան պատուհանում մի կին տեսավ, նման ծագող լուսնի, որը նայում էր մարդկանց: Եվ երբ իմ եղբայրը նրան տեսավ, կնոջ սերը նրա սիրտն ընկավ, և այդ ամբողջ օրը նա նայում էր այդ կնոջն ու դադարեց կարելուց մինչև երեկոյան պահը: Իսկ երբ հետևյալ օրը բացվեց, նա բացեց իր խանութը առավոտյան

պահին ու նստեց կարելու և ասեղը մտցնելիս նա ամեն անգամ նայում էր պատուհանին: Եվ նա կրկին տեսավ այն կնոջը, և նրա սերն ու ձգտումը դեպի այն կինը մեծացան: Իսկ երբ երրորդ օրը եկավ, նա նստեց իր տեղն ու նայեց նրան և կինը տեսավ նրան ու հասկացավ, որ նա իր սիրտ գերին է դարձել: Կինը ժպտաց նրան, եղբայրս էլ ժպտաց, իսկ հետո կինը թաքնվեց նրանից և ուղարկեց նրա մոտ իր ստրկուհուն ու սրահատ՝ կարմիր մետաքսե կտոր: Եվ ստրկուհին նրա մոտ եկավ ու ասաց. «Իմ տիրուհին հրամայում է ողջունյն հաղորդել քեզ ու ասում է. «Միրալիր ձեռքով ինձ համար խալաթ ձևի աչս կտորից»: Եվ նա պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում»: Հետո նրա խալաթը ձևեց ու նույն օրը ավարտեց կարելը, իսկ երբ մյուս օրը բացվեց, ստրկուհին առավոտ կանուխ նրա մոտ եկավ ու ասաց. «Իմ տիրուհին ողջունում է քեզ ու հարցնում, թե ինչպե՞ս անցկացրիր գիշերը: Նա քուն չի տեսել, այնքան իր սիրտը բեզանով է զբաղված»: Ապա նա դերձակի առջև դրեց դեղին առլասի մի կտոր ու ասաց. «Իմ տիրուհին քեզ ասում է, որ այս կտորից երկու գույգ վարտիք ձևես ու այսօր կարես»: Եվ իմ եղբայրը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում: Շատ ողջուններ հաղորդիր նրան ու ասա. «Քո սեքուկը հնազանդ է քո հրամանին. հրամայի՛ր, ինչ ուզում ես»:

Եվ նա սկսեց ձևել ու խնամքով կարեց վարտիքները, իսկ մի առ ժամանակից հետո կինը երևաց նրան պատուհանից և ողջունեց նրան նշաններով, մերթ աչքերը փակելով, մերթ նրա դեմքին ժպտալով, և դերձակը մտածեց, որ կհասնի իր ցանկացածին: Իսկ հետո կինը թաքնվեց նրանից, ստրկուհին եկավ նրա մոտ, և դերձակը նրան հանձնեց երկու գույգ վարտիքները, և նա վերցրեց դրանք ու գնաց: Եվ երբ գիշերը եկավ, եղբայրս անկողին նետվեց և ամբողջ գիշեր անցկացրեց շուռ ու մուռ գալով: Իսկ առավոտյան վեր կացավ ու նստեց իր տեղը, և ստրկուհին եկավ նրա մոտ ու ասաց. «Իմ տերը քեզ կանչում է»: Եվ, լսելով այդ, դերձակը մեծ վախ զգաց, իսկ ստրկուհին, նկատելով, որ նա վախեցել է, ասաց. «Քեզ փորձանք չի պատահի, այլ՝ միայն բարիք: Իմ տիրուհին այնպես է արել, որ դու ծանոթանաս իմ տիրոջ հետ»: Եվ այդ մարդը շատ ուրախացավ ու ստրկուհու հետ գնաց և, ներս մտնելով նրա տիրոջ՝ տիկնոջ մարդու մոտ, նրա առջև գետինը համբուրեց, և նա պատասխանեց եղբորս ողջունին ու նրան տվեց շատ կտոր ու ասաց. «Մրանցից ինձ համար խալաթներ ձևիր ու կարիր»: Եվ եղբայրս պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում», — և ձևել սկսեց ու, ամբողջ օրը բերանը մի բան շղնելով, մինչև երեկո ձևեց քսան խալաթները: Եվ

պատվիրատուն հարցրեց. «Ի՞նչ է դրա վարձը»: Եվ նա պատասխանեց. «Քսան դիրհեմ»: Եվ այնժամ կնոջ մարդը ձայն տվեց ստրկուհուն. «Վճարի՛ր քսան գիրհեմ»: Եվ իմ եղբայրը ոչինչ չասաց: Իսկ կինը նրան նշան արեց, որի իմաստն էր՝ նրանից ոչինչ մի՛ վերցրու: Եվ եղբայրս բացականչեց. «Ալլահը վկա, ես քեզանից ոչինչ չեմ վերցնի»,— ու, վերցնելով կտորները, դուրս եկավ: Իսկ իմ եղբայրը խիստ կարիքի մեջ էր և նրա համար ամեն մի ֆելսը՝ նշանակութուն ուներ, և նա երեք օր անցկացրեց ուտելով ու խմելով շատ սակավ, այնպես նա ջանում էր այդ խալաթները կարել: Եվ ստրկուհին եկավ ու հարցրեց. «Ի՞նչ ես արել»: Եվ նա պատասխանեց. «Պատրաստ է»,— և վերցրեց հագուստներն ու սուրավ նրանց մոտ ու հանձնեց կնոջ մարդուն և անմիջապես դուրս եկավ: Իսկ կինը իր մարդուն տեղեկացրել էր իմ եղբոր վիճակի մասին (իսկ եղբայրս այդ չգիտեր), և նա մարդու հետ պայմանավորվել էր օգտագործել եղբորս ձրիապես կարելու շորերը և ծիծաղել նրա վրա: Եվ հազիվ էր առավոտը բացվել, նա գնաց իր խանութը, և ստրկուհին եկավ նրա հետևից ու ասաց. «Խոսի՛ր իմ տիրոջ հետ»: Եվ նա ստրկուհու հետ գնաց, ու երբ ներկայացավ կնոջ մարդուն, վերջինս ասաց. «Ծու ուզում եմ, որ ինձ համար հինգ փարանջա ձևես»: Եվ եղբայրս ձևեց ու, հետը վերցնելով, դուրս եկավ: Ապա նա կարեց այդ փարանջաններն ու տաբավ կնոջ մարդու մոտ, և վերջինս հավանեց նրա կարածն ու հրամայեց նրան տալ դիրհեմներով քսակը, և եղբայրս արդեն մեկնում էր ձեռքը, բայց կինն իր մարդու թիկունքից նշանով հասկացրեց՝ մի՛ վերցրու: Իմ եղբայրն ասաց այդ մարդուն. «Մի՛ շտապիր, տեր, ժամանակ շատ կա»,— և դուրս եկավ նրա մոտից, ու հշից ավելի ստորացած էր, որովհետև նրա դեմ միացել էին հինգ բան՝ սերը, սնանկությունը, քաղցը, մերկությունն ու հոգնածությունը, իսկ նա միայն համբերում էր: Եվ երբ իմ եղբայրն արդեն կատարել էր նրանց գործը, նրանք խորամանկության դիմեցին ու ամուսնացրին նրան իրենց ստրկուհու հետ, իսկ այն գիշերը, երբ նա ուզեց մտնել նրա մոտ, առացին. «Մի՛նչև վաղը ջրազացում քնիր, լավ կլինի»:

Իմ եղբայրն էլ մտածեց, որ գա իրոք այդպես է, և գիշերը միայնակ անցկացրեց ջրազացում, իսկ կնոջ մարդը սովորեցրեց ջրազացականին, որ նա եղբորս ստիպի աղսցբարո պատեցնել ջրազացում:

Եվ կեսգիշերին ջրազացականը մտավ եղբորս մոտ և ասաց. «Այս եզր պարապ է մնացել և գիշերը աղացբարը չի պտտում, իսկ մենք

1 Ֆելս — պղնձե մանր դրամ:

շատ ցորեն ունենք աղալու»: Եվ նա մտավ ջրաղաց և, դոխը ցորեն լըցնելով, պարանը ձեռքին մոտեցավ եղբորս ու կապեց նրա վզից ու կանչեց. «Շո՛ւտ, ջաղացքարը պատի՛ր, դու միայն ուտել, կեղտոտել ու ջուր թափել գիտես»,— և խարազանն առավ ու սկսեց ծեծել եղբորս, իսկ սա լալիս էր ու գոչում, բայց իրեն ոչ ոք օգնութձյան չհասավ, ու համարյա մինչև առավոտ ցորեն աղաց:

Եվ այն ժամանակ տանտերը եկավ ու, եղբորս տեսնելով ձողին կապված, դուրս եկավ, իսկ ստրկուհին վաղ առավոտյան եկավ նրա մոտ ու ասաց. «Ինձ համար ծանր է այն, ինչ որ քեզ պատահել է: Ծս ու իմ տիրուհին հոգ ենք տանում քո մասին»: Բայց եղբայրս սաստիկ ծեծի ու հոգնածութձյան պատճառով արդեն լեզու չունեի, որ պատասխանի:

Դրանից հետո եղբայրս գնաց իր բնակարանը. և հսնկարծ նրա մոտ է գալիս այն գրագիրը, որը նրա ամուսնական պայմանն էր գրել, և ողջունում է նրան ու ասում. «Թող ալլահը երկարացնի քո կյանքը: Այդպես է լինում մարդու տեսքը երեկոյից մինչև առավոտ տևող հաճույքներից, քնքշութձյունից ու գզվանքներից հետո»:— «Թող շողջունի ալլահը խաբերային,— բացականչեց եղբայրս:— Օ՛, հազարապատիկ եղջերավոր, ալլահը վկա, ես գնացի միայն նրա համար, որ եղան փոխարեն մինչև առավոտ աղացքարը պատեմ»:

«Պատմի՛ր ինձ քո գլխին եկածը»,— ասաց գրագիրը, և իմ եղբայրը պատմեց, թե ինչ է պատահել իրեն, ու գրագիրն ասաց.— «Քո աստղը չի համընկնում նրա աստղին, բայց եթե ուզում ես, ես քեզ համար կփոխեմ այս պայմանը»:

«Տեսնենք, էլ ինչ նոր խորամանկութձյուն ես մտքիդ դրել»,— պատասխանեց եղբայրս և, թողնելով գրագրին, գնաց իր արհեստանոցը, սպասելով, որ, գուցե, որևէ մեկը գործ բերի, և ինքը կարողանա իր համար սնունդ հայթայթել: Բայց հանկարծ նրա մոտ եկավ ստրկուհին ու ասաց.— «Խոսի՛ր իմ տիրուհու հետ»:— «Հեռացի՛ր, ով արտոնվածի աղջիկ, ես գործ չունեմ քո տիրուհու հետ»,— ասաց իմ եղբայրը: Եվ ստրկուհին գնաց ու հայտնեց այդ իր տիրուհուն: Եվ դեռ իմ եղբայրը ուշքի չէր եկել, որ նա արդեն նայում էր պատուհանից և լաց լինելով՝ րացականչում. «Մ՛վ սիրելիս, ինչո՞ւ մենք այլևս գործ չունենք իրար հետ»:

Բայց եղբայրս չպատասխանեց նրան, և նա սկսեց երդվել, որ այն ամենը, ինչ օրատահել է ջրաղացում, իր կամքով չի եղել, և որ ինքն այդ բանում մեղավոր չէ: Եվ երբ եղբայրս նայեց նրա գեղեցկութձյանն ու հմայքին ու լսեց նրա քաղցր խոսքերը, ինչ որ իր մեջ կար, չբացավ,

և նա ընդունեց կնոջ ներողութունն ու ուրախացավ, որ տեսնում է նրան: Եվ եղբայրս ողջունեց ու խոսեց նրա հետ ու որոշ ժամանակ նրստեց կարելու, իսկ հետո նրա մոտ եկավ ստրկուհին ու ասաց. «Իմ տիրուհին ողջունում է քեզ ու ասում, որ իր մարդն ասել է, թե ինքն այսօր գիշերելու է իր ընկերների մոտ, և երբ նա այնտեղ գնա, դու մեզ մոտ կլինես ու իմ տիրուհու հետ քաղցր քնով կանցկացնես գիշերը մինչև առավոտ»:

Իսկ կնոջ մարդն ասել էր. «Ի՞նչ անենք, որ նրան քեզնից հեռացնենք»: Եվ կինը պատասխանել էր. «Թող որ ես մի ուրիշ խորամանկութուն մտածեմ ու խայտառակեմ նրան այս քաղաքում»: (Իսկ իմ եղբայրը կանանց խարդավանքներից ոչինչ չգիտեր):

Եվ երբ երեկոն իջավ, ստրկուհին նրա մոտ եկավ ու, վերցնելով եղբորս, վերադարձավ, և այն կինը, տեսնելով եղբորս, բացականչեց. «Ալլահը վկա, տե՛ր իմ, ես շատ եմ կարոտել քեզ»:— «Ալլահի սիրուն, ամենից առաջ՝ իսկույն համբուրիր ինձ»,— ասաց իմ եղբայրը: Եվ հազիվ էր նա այս խոսքերն ասել, երբ հարևան սենյակից հայտնվեց կնոջ ամուսինն ու բղավեց եղբորս վրա. «Ալլահը վկա, ես քեզանից կբաժանվեմ միայն պահակապետի մոտ»: Եվ եղբայրս սկսեց աղաչել նրան, իսկ նա ոչինչ չլսեց ու նրան վալիի մոտ տարավ, և վալին հրամայեց խարազանով ծեծել նրան և ուղտին նստեցրած քաղաքով ման ածել: Եվ մարդիկ գոռում էին նրա մասին. «Ահա՛ հատուցումը նրան, ով ուրիշի հարեմ է մտնում»:

Եվ նրան քաղաքից դուրս արեցին, և նա դուրս եկավ ու չգիտեր, թե ուր գնա և ես վախեցա ու հասա նրան ու պարտավորվեցի պահել նրան, ու հետ բերեցի ու թույլ տվեցի ապրել ինձ մոտ մինչև այժմ:

Եվ խալիֆը ծիծաղեց իմ պատմածի վրա ու ասաց. «Հիանալի է, ո՛վ լուսկյաց, ո՛վ սակավախոս»,— և հրամայեց, որ պարգև տան ինձ և ես գնամ: Բայց ես բացականչեցի. «Ծն ոչինչ չեմ ընդունի քեզնից, մինչև չպատմեմ, թե ինչ է պատահել իմ մյուս եղբայրներին, բայց մի՛ կարծիր, թե ես շատախոսութուն եմ անում»:

ՍԱՓՐԻՉԻ ԵՐԿՐՈՐԳ ԵՂՔՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացի՛ր, ով հավատացյալների վեհապետ, որ իմ երկրորդ եղբորը կոչում էին Բաբբաբա, և դա անդամալույծն էր: Օրերից մի օր նա իր գործի հետևից էր գնում, և հանկարծ պատահեց նրան մի պառավ կին ու

ասաց. «Ո՛վ մարդ, կա՛նգ առ մի քիչ, ծս քեզ մի գործ կառաջարկեմ, և եթե այն քեզ գուր դա, արա ինձ համար ու ալլահից խորհուրդ հարցրու»: Եվ իմ եղբայրը կանգ առավ, ու պառավն ասաց. «Ծս քեզ մի բան կասեմ ու ցույց կտամ գա կատարելու ճամփան, բայց քո խոսքերը թող երկար չլինեն»։— «Ասելիքդ ասա»,— պատասխանեց եղբայրս: Եվ պառավը հարցրեց. «Ի՞նչ կասես գեղեցիկ տան ու բուրումնավետ պարտեզի մասին, որի մեջ հոսում է առվակը, և մրգերի, գինու և գեղեցիկ դեմքի մասին, որը գուր կգրկես երեկոյից մինչև առավոտ: Եթե դու այնպես անես, ինչպես ասեմ, բարիք կտեսնես»:

Եվ իմ եղբայրը, լսելով նրա խոսքերը, հարցրեց. «Ո՛վ տիրուհի, իսկ ինչո՞ւ այդ գործի համար դու հատկապես ինձ դիմեցիր: Իմ ի՞նչն է քեզ դուր եկել»: Եվ նա եղբորս պատասխանեց. «Ծս քեզ ասացի՛ շատախոս մի՛ եղիր: Լոիր ու գնանք միասին»: Եվ ապա պառավը շուռ եկավ, իսկ եղբայրս հետևեց նրան, ցանկանալով այն, ինչ պառավը նկարագրել էր: Եվ նրանք մտան մի մեծ տուն, ուր շատ ծառաներ կային, և պառավը նրա հետ վերև բարձրացավ, ու իմ եղբայրը մի գեղեցիկ պալատ տեսավ:

Եվ երբ տան բնակիչները նրան տեսան, հարցրին. «Քեզ ո՞վ այստեղ բերեց»: Իսկ պառավն ասաց. «Թողեք նրան, լոնք աս մի վրդովեք նրա սիրտը, նա բանվոր է, և մեզ հարկավոր է»: Այա պառավը նրա հետ գնաց մի զարդարուն սենյակ, որից լավը եղբորս աչքերը չէին տեսել, և երբ նրանք մտան այդ սենյակը, կանայք ոտքի ելան ու ողջունեցին իմ եղբորն ու իրենց կողքին նստեցրին, իսկ մի քանի րոպեից հետո նա մեծ աղմուկ լսեց, ու հանկարծ մտեցան ստրկուհիները, և նրանց մեջ՝ լրման գիշերվա լուսնի նման մի աղջիկ: Եվ իմ եղբայրը հայացքը հատեց նրան ու ոտքի ելավ և խոնարհվեց աղջկա առջև, իսկ աղջիկը ողջունեց նրան ու հրամայեց նստել: Եվ եղբայրս նստեց, իսկ աղջիկը դարձավ նրան ու հարցրեց. «Թող փառավորի քեզ ալլահը, բարի՞ ես դու»:— «Ո՛վ տիրուհի, իմ մեջ է ողջ բարիքը»,— պատասխանեց եղբայրս: Եվ աղջիկը հրամայեց ուտելիք մատուցել, ու նրան մատուցեցին հիանալի օւտելիքներ, ու նա սկսեց ուտել: Եվ, ուտելով, աղջիկը չէր կարողանում հանգստանալ ծիծաղելուց, իսկ երբ եղբայրս նրան էր նայում, նա դառնում էր դեպի իր ստրկուհիները, կարծես թե եղբորս վրա ծիծաղելու համար: Եվ նա սեր էր արտահայտում իմ եղբոր նկատմամբ ու կատակում էր նրա հետ, իսկ եղբայրս, ավանակի պես, ոչինչ չէր հասկանում և իրեն տիրած սաստիկ կրքի պատճառով կարծում էր, թե աղջիկը սիրում է իրեն ու թույլ կտա հասնել իր ցանկացածին:

Եւ երբ ուտելն ավարտեցին, գինի մատուցեցին, իսկ հետո հայտնը-վեցին տասը ստրկուհիներ՝ լուսնի նման, ձեռքներին բազմադի ջնարներ, ու սկսեցին զանազան դուրեկան ձայներով երգել: Եւ զմայլանքը տիրեց եղբորս և, աղջկա ձեռքից առնելով գավաթը, խմեց ու նրա առջև ոտքի ելավ. իսկ հետո աղջիկը խմեց գավաթը, և եղբայրս նրան ասաց. «Անուշի լինի», և խոնարհվեց նրա առջև: Ապա աղջիկը գավաթը տվեց նրան՝ խմելու, և երբ նա խմեց, աղջիկը խփեց նրա ծոծրակին: Եւ, տեսնելով այդ, եղբայրս շտապով դուրս եկավ, իսկ պառավն աչքով արեց նրան՝ վերադարձի՛ր: Եւ նա վերադարձավ: Եւ այնժամ աղջիկը կարգադրեց նրան նստել, ու նա նստեց ու մնաց, ոչ մի բան չասելով, և աղջիկը կրկին սկսեց հարվածել նրա ծոծրակին ու հրամայեց իր ստըրկուհիներին՝ ծեծել նրան, իսկ ինքն ասում էր պառավին. «Ես սքանից լավ բան չեմ տեսել»: Եւ պառավը բացականչեց. «Այո՛, քո արևը, տիրուհի՛դ իմ»:

Եւ ստրկուհիները ծեծեցին նրան, մինչև որ նա գիտակցությունը կորցրեց, իսկ հետո եղբայրս վեր կացավ ու դուրս եկավ կարիքի համար, և պառավը նրա հետևից հասավ ու ասաց. «Մի քիչ համբերի՛ր, գուկհասնես նրան, ինչ որ ուզում ես»:— «Մինչև ե՞րբ համբերեմ, ես արդեն շշմեցի վզակոթիս հասցված հարվածներից»,— ասաց եղբայրս: Եւ պառավը պատասխանեց. «Երբ նա հարբի, ուզածիդ կհասնես»: Եւ իմ եղբայրը վերադարձավ իր տեղն ու նստեց: Եւ բոլոր ստրկուհիները, մինչև վերջինը, վեր կացան, ու կինը հրամայեց նրանց ծխահարել եղբորս ու դեմքին վարդաջուր ցողել, և նրանք այդպես արեցին: Իսկ հետո նա ասաց. «Քող փառավորի քեզ ալլահը: Դու իմ տունը մտար ու կատարեցիր իմ պայմանը, իսկ ով ինձ հակառակել է, ես նրան դուրս եմ արել: Բայց նա, սվ համբերատար էր, հասել է իր ցանկացածին»:— «Մ՛վ տիրուհի,— պատասխանեց նրան եղբայրս,— ես քո ստրուկն եմ ու քո ձեռքում եմ»: Եւ նա ասաց. «Գիտցիր, որ ալլահն ինձ սեր է ներշնչել դեպի ուրախությունը, և նա, ով հնազանդվում է ինձ, ստանում է, ինչ ուզում է»: Եւ նա ստրկուհիներին հրամայեց բարձրաձայն երգել, այնպես, որ սենյակում եղածները բոլորը ցնծությամբ համակվեն, իսկ հետո աղջիկներից մեկին ասաց. «Վերցրո՛ւ քո տիրոջը, արա՛, ինչ հարկավոր է, և անմիջապես ինձ մոտ բեր»:

Եւ ստրկուհին վերցրեց եղբորս (իսկ սա չգիտեր, թե նա ինչ է անելու իրեն), և պառավը հասավ նրան ու ասաց. «Համբերիր, համբերիր, քիչ է մնացել»: Եւ եղբորս գեմքը պայծառացավ, ու նա մոտեցավ աղջկան (իսկ պառավը շարունակ ասում էր. «Համբերի՛ր, գու արգեն

հասել ես ուզածիդ») ու հարցրեց պառավին. «Ասա ինձ, ի՞նչ է ուզում անել այս ստրկուհին»: Եվ պառավն ասաց. «Այստեղ բարիքից բացի ուրիշ ոչինչ չկա: Ես՝ քեզ գրավական: Նա ուզում է ներկել քո ունքերն ու փետել բեղերդ»:— «Ունքերիս ներկը լվանալով կանցնի,— ասաց եղբայրս,— բայց բեղերս փետելը ցավ կպատճառի»:— «Զգուշացիր նրան հակառակելուց,— պատասխանեց պառավը,— նրա սիրտը կպել է քեզ»: Եվ եղբայրս հանդուրժեց, որ ներկեն ունքերն ու փետեն բեղերը, և այնժամ ստրկուհին գնաց իր տիրուհու մոտ ու հայտնեց այդ մասին, և տիրուհին ասաց. «Մի բան էլ է մնում, սափրիչ նրա մորուքը, որ նրա երեսը անմազ լինի»:

Եվ ստրկուհին եղբորս մոտ եկավ ու ասաց այն, ինչ հրամայել էր իր տիրուհին, և իմ հիմար եղբայրը հարցրեց. «Իսկ ես մարդկանց առաջ ինչպե՞ս երևամ իմ խայտառակությամբ»: Եվ պառավը պատասխանեց. «Նա ուզում է այդպես վարվել քեզ հետ միայն այն բանի համար, որ դու առանց մազի լինես, առանց մորուքի, և երեսիդ վրա ոչ մի ծակող բան չմնա: Նրա սրտում մեծ սեր է քո նկատմամբ, համբերի՛ր. դու կհասնես ցանկացածիդ»:

Եվ եղբայրս համբերեց ու ենթարկվեց ստրկուհուն ու սափրեց իր մորուքը, և աղջիկը դուրս բերեց նրան, ու հանկարծ պարզվեց, որ եղբորս ունքերը ներկած են, բեղերը՝ փետած, մորուքը՝ սափրած ու դեմքը՝ կարմիր: Եվ աղջիկը սարսափեց նրանից ու հետո այնպես ծիծաղեց, որ մեջքի վրա ընկավ ու բացականչեց. «Ով իմ տեր, դու ինձ նվաճեցիր քո այդ գեղեցիկ դիմագծերով»: Եվ սկսեց նրան իր արևով աղաչել, որ նա վեր կենա ու պարի, և եղբայրս վեր կացավ ու սկսեց պարել, և աղջիկը սենյակում բարձ շթողեց, որ չխփի նրան, և բոլոր ստրկուհիները նույնպես նրան խփում էին պտուղներով՝ թուրնիջներով, և քաղցր նարինջներով ու կիտրոններով, մինչև որ եղբայրս ծոծրակին ստացած հարվածներից, ծեծից ու նետված պտուղներից անզգայացած գետին ընկավ:

Եվ պառավը նրան ասաց. «Հիմա դու հասար քո ուզածին: Իմացիր, որ դու էլ ծեծ չես ուտի, միայն մի բան է մնացել, այդ էլ հետևյալն է. նա սովորություն ունի, որ երբ հարբած է լինում, ոչ մի տղամարդու թույլ չի տալիս իրեն տիրապետել, եթե նախօրոք տղամարդը շորերն ու վարտիքը չհանի և մերկ ու տկլոր չմնա: Իսկ հիմա նա քեզ կհրամայի շորերդ հանել ու վազել և ինքն էլ քո առջևից կվազի, իբր թե փախչում է քեզանից, իսկ դու ամեն տեղ նրան հետևիր, մինչև որ քո առնին կանգնի, և այն ժամանակ նա քեզ թույլ կտա իրեն տիրելու»:

«Հանի՛ր հագուստդ»,— ասաց նա հետո. և եղբայրս հանեց իր բո-
լոր շորերը (իսկ աշխարհը շքացել էր նրա համար) ու մերկ մնաց, և
այնժամ աղջիկն ասաց. «Հիմա վե՛ր կաց ու վազի՛ր, և ես էլ կվազեմ,—
և նա նույնպես հանվեց ու բացականչեց.— Եթե դու որևէ բան ուզում
ես, հետևիր ինձ»:

Եվ աղջիկը վազեց նրա առջևից, ու եղբայրս հետևեց նրան, ու աղ-
ջիկը մի սենյակից մյուսն էր մտնում, ու եղբայրս՝ նրա հետևից, և կիր-
քը տիրեց նրան, ու նրա առնին այնպես էր պահում իրեն, ասես կա-
տաղած լիներ: Եվ աղջիկը վազեց նրա առջևից ու մտավ մի մուֆ սեն-
յակ, ու եղբայրս էլ՝ նրա հետևից ու նա ոտքը դրեց մի փափուկ տեղ և
հատակը փլվեց նրա տակ, ու եղբայրս դեռ ուշքի չէր եկել, որ հայտնը-
վեց փողոցի մեջտեղում, կաշեգործների շուկայում, որտեղ կաշի էին
առնում ու ծախում: Եվ տեսնելով եղբորս այդ տեսքով՝ մերկ, կանգնած
առնիով, սափրած մորուքով, առանց բեղերի և ներկած ունքերով ու
կարմիր երեսով, վաճառականները գոռացին նրա վրա և ծափ զարկե-
ցին ու սկսեցին նրան կաշվով ծեծել, այնպես որ նա ուշքը կորցրեց: Եվ
նրան էշի վրա գցեցին ու տարան վալիի մոտ, և վալին հարցրեց նրանց.
«Ո՞վ է դա»: Եվ նրանք ասացին. «Նա վեզիրի տնից մեզ մոտ ընկավ
այդ տեսքով»: Եվ այնժամ վալին հրամայեց խարազանով հարյուր հար-
ված տալ նրա վզակոթին, ու վոնդեց Բաղդադից: Եվ ես դուրս եկա ու
հասա նրան ու թաքուն բաղաբ բերեցի, իսկ հետո սահմանեցի նրան
այն, ինչ հարկավոր է ապրուստի համար: Եվ եթե իմ մեծահոգությունը
չլիներ, ես չէի հանդուրժի նրա նմանին»:

ՍԱՓՐԻՉԻ ԵՐՐՈՐԻ ԵՂԲՈՐ ՊԱՏԱՐԻԹՅՈՒՆԸ

«Ինչ վերաբերում է իմ երրորդ եղբորը, ապա նրա անունը Ֆաբիթ
է, և նա կույր է: Բախտն ու նախասահմանությունը մի անգամ նրան
բերեցին մի մեծ տան մոտ ու նա ծեծեց դարպասը, հուսալով, որ տան-
տերը կխոսի իր հետ ու ինքը մի բան կխնդրի նրանից: Եվ տանտերը
հարցրեց. «Ո՞վ է դարպասի մոտ»,— բայց ոչ ոք նրան չպատասխանեց,
և եղբայրս լսեց, թե նա ինչպես բարձրաձայն հարցրեց կրկին. «Ո՞վ է»: Բայց
եղբայրս չպատասխանեց ու լսեց, որ նա եկավ ու մոտեցավ դար-
պասին ու բացեց այն և հարցրեց եղբորս. «Ի՞նչ ես ուզում»:— «Որևէ
բան, հանուն մեծ ալլահի»,— ասաց եղբայրս: Եվ տանտերը հարցրեց.
«Կո՞ւյր ես»:— «Այո», պատասխանեց եղբայրս: Եվ այնժամ տանտերը

նրան ասաց. «Չեոքդ ինձ տուր»,— և եղբայրս ձեռքը տվեց նրան, կարծելով, թե տանտերը որևէ բան պիտի տա իրեն, իսկ նա բռնեց եղբորս ձեռքն ու նրան վերև տարավ սանդուղքով, մինչև հասցրեց ամենավերին աստիճանին, իսկ իմ եղբայրը կարծում էր, թե նա իբրև որևէ բանով կկերակրի ու որևէ բան կտա:

Եվ, հասնելով սանդուղքի վերջին աստիճանին, տանտերը եղբորս հարցրեց. «Ի՞նչ ես ուզում, կույր»: Եվ եղբայրս պատասխանեց. «Որևէ բան եմ ուզում հանուն մեծ ալլահի»:— «Ալլահը քեզ ուղարկի»,— ասաց տանտերը, իսկ եղբայրս բացականչեց. «Ա՛յ մարդ, ինչո՞ւ դու այդ բանը ինձ ներքևում շասացիր»: Իսկ տանտերը պատասխանեց. «Ո՞վ անպիտան, իսկ դու ինչո՞ւ միանգամից ինձ պատասխան չտվեցիր»:— «Իսկ հիմա ի՞նչ ես ուզում ինձ անել»,— հարցրեց եղբայրս նրան. «Ես ոչինչ չունեմ, որ քեզ տամ», պատասխանեց նա: Եվ եղբայրս ասաց. «Ինձ հետ աստիճաններով ցած իջիր»: «Ճանապարհը քո առջևն է»,— ասաց տանտերը: Եվ իմ եղբայրը գնաց ու այնքան իջավ, մինչև իբրև դարպասի միջև քան աստիճան մնաց, բայց այդտեղ նրա ոտքը սայթաքեց, ու նա ընկավ դարպասի առաջ ու գլուխը պատռեց, Եվ նա դուրս եկավ, շիմանալով, թե ուր գնա, ու նրան հասան իր ընկերներին մի քանիսր. նույնպես կույրեր, ու հարցրին. «Ի՞նչ բաժին ես ստացել այժօր»: Եվ նա պատմեց նրանց, թե ինչ է պատահել իրեն, իսկ հետո ասաց. «Ի՞նչ եղբայրներ, ես ուզում եմ մի քիչ վերցնել այն փողից, որ մնացել է ինձ մոտ, ու ծախսել ինձ վրա»:

Իսկ տանտերը հետևում էր նրանց ու լսեց նրա խոսքերը, բայց իմ եղբայրն ու իր ընկերները ոչինչ չգիտեին այդ մասին: Եվ եղբայրս իր տուն գնաց ու ներս մտավ, ու այն մարդն էլ նրա հետևից մտավ (իսկ իմ եղբայրն այդ չգիտեր), և եղբայրս նստեց՝ սպասելով իր ընկերներին: Եվ երբ նրանք ներս մտան, ասաց նրանց: «Դուրս փակե՛ք ու խուզարկե՛ք տունը, որ որևէ օտար մարդ չհետևի մեզ»: Եվ, լսելով եղբորս խոսքերը, այն մարդը վեր կացավ ու բռնեց առաստաղից կախված պարանից և վեր բարձրացավ, իսկ նրանք ամբողջ տունը ման եկան ու ոչ ոքի չգտան: Իսկ հետո նրանք վերադարձան ու եղբորս կողքին նստեցին և, հանելով իրենց մոտ եղած փողը, հաշվեցին ու հանկարծ պարզվեց, որ տասներկու հազար դիրհեմ փող կա:

Եվ նրանք փողը պահեցին սենյակի անկյունում, ու յուրաքանչյուրն իր համար վերցրեց, ինչքան հարկավոր էր, իսկ փողի մնացորդը թափեցին գետին ու հետո իրենց առջևը գրին ուտելիքն ու սկսեցին ուտել:

Եվ եզրացրա իր կողքին չսեց անծանոթ ծամելու ձայն և իր ընկեր-
ներին ասաց. «Մեզ մոտ օտար մարդ կա», — և ձեռքը մեկնեց, ու ձեռ-
քով բռնեց այն մարդու՝ տանախորշ ձեռքը: Եվ կույրերը թափվեցին
նրա վրա ու ծեծեցին, իսկ երբ հագնեցին ծեծելուց, սկսեցին բզավել.
«Ո՛վ մուսուլմաններ, մեզ մոտ գող է մտել և ուզում է մեր փողը վերց-
նել»:

Եվ նրանց շուրջը շատ ժողովուրդ հավաքվեց, և այն մարդը մոտե-
ցավ ու կպավ նրանց ու սկսեց մեղադրել նրանց հենց այն բանում,
ինչում որ նրանք էին իրեն մեղադրում, և աչքերը կկոցեց այնպես, որ
կարծես թե կույր դարձավ, ու ոչ ոք չկասկածեց դրան: Եվ նա սկսեց
բզավել. «Ո՛վ մուսուլմաններ, օգնություն եմ կանչում ալլահին ու սուլ-
թանին և գիժում եմ ալլահի ու վալիի խորհրդին»: Եվ նա դեռ շէր վեր-
ջացրել խօսքը, որ նրանց բոլորին շքապատեցին ու նրանց հետ՝ իմ եղ-
բորը, և բռնեցին դեսլի վալիի տուն:

Եվ վալին հրամայեց իր մոտ բերել նրանց ու հարցրեց. «Ի՞նչ է
պատահել»: Եվ այն մարդն ասաց. «Նայի՛ր, բայց քեզ համար ոչ մի
բան պարզ չի գտանա տառանց շարշարանքի: Սկսի՛ր առաջինն ինձանից
ու շարշարի՛ք ինձ, իսկ հետո՝ ա՛յ սրան, իմ առաջնորդին», — և նա ձեռ-
քով իմ եղբորը ցույց տվեց: Եվ այն մարդուն պառկեցրին ու ճիպոսի
չորս հարյուր հարված տվեցին նստուկին, և հարվածները ցավ պատ-
ճառեցին նրան, ու նա բացեց մի աչքը, իսկ երբ ավելացրին հարված-
ները, բացեց նաև երկրորդ աչքը:

Եվ վալին հարցրեց նրան. «Ի՜նչ է, ո՛վ անիծյալ»: Եվ նա
պատասխանեց. «Տուր ինձ գիժություն մատանին: Մենք չորսով կույր ենք
ձևանում ու խաբում մարդկանց, և տներն ենք մտնում ու նայում կա-
նանց ու նրանց ձգտում ենք կործանել: Մենք մեծ հարստություն ենք
հավաքել՝ տառներկու հազար գիրհեմ, և ես իմ ընկերներին տաացի. «Իմ
բաժինն ինձ տվեք՝ երեք հազար գիրհեմ», իսկ նրանք ծեծեցին ինձ ու
վերցրին իմ փողը: Եվ ես ալլահից ու քեզանից պաշտպանություն եմ
հայցում: Ես ամենից ավելի իմ բաժնի իրավունքն ունեմ, և ուզում եմ,
որ դու իմանաս իմ խօսքերի խելավայանը: Նրանցից յուրաքանչյուրին
ծեծի՛ր ավելի խիտա, քան ինձ, և նրանք աչքերը կբացեն»:

Եվ այնժամ վալին հրամայեց տանջել նրանց ու ամենից ատուշ իմ
եղբորից սկսեց, և նրան սանդուղքից կտայեցին, ու վալին ասաց նրան.
«Ո՛վ անզգամներ, դուք ժխտում եք ալլահի շնորհը և հաստատում, թե
դուք կույր եք»: — «Ալլահ, ալլահ, — բացահանչեց եղբայրս. — ալլահը
վկա, մեր մեջ տեսնող չկա»: Եվ նրան ծեծեցին այնքան, մինչև որ ուշա-

գնաց եղավ, ու վալին ասաց.— «Թողե՛ք նրան, թող ուշքի գա՛, և ծեծե՛ք նորից, երկրորդ անգամ»: Իսկ հետո նա հրամայեց եզրորս ընկերներից յուրաքանչյուրին ձիպոտի ավելի քան երեք հաբյուր հարված տալ, և այն տեսնողը նրանց ասաց.— «Բացե՛ք աչքներդ, թե չէ ձեզ էլի կծեծեն»: Իսկ հետո այդ մարդը վալին ասաց. «Մեկին ինձ հետ ուղարկի՛ր, որ փողը քեզ մոտ բերի. այս մարդիկ աչքները չեն բացի, նրանք մարդկանց առջև խայտառակվելուց վախենում են»: Եվ վալին մարդ ուղարկեց, ու բերեցին փողը, և այդ մարդուն տվեց նրա բաժինը՝ երեք հազար դիրհեմ, ինչպես նա պնդում էր, ու մնացյալը վերցրեց ու քաղաքից վանդեց երեք կույրերին:

Եվ ես դուրս եկա, ով հավատացյալների տիրակալ, ու հասա եզրորս ու հարցրի նրա դրուժյան մասին, և նա պատմեց այն ամենը, ինչ որ ես քեզ ասացի, ու ես ծածուկ նրան քաղաք մտցրի և գաղտնի սկսեցի նրան ուտելիք ու խմելիք տալ ու պահել:

Եվ խալիֆը ծիծաղեց, լսելով իմ պատմածը, ու ասաց. «Պարզև տվեք նրան ու թող գնա»: Բայց ես բացականչեցի. «Ալլահը վկա, ես ոչինչ չեմ վերցնի, մինչև հավատացյալների տիրակալին չպատմեմ, թե ի՛նչ է պատահել իմ եղբայրներին, Չէ՞ որ ես քիչ եմ խոսում»:

ՍԱՓՐԻՉԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՂՐՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ինչ վերաբերում է իմ շորրորդ եղբորը, ո՛վ հավատացյալների տիրակալ,— շարունակեցի ես,— ապա նա մտադործ էր Բաղդադում (իսկ նա միակնանի էր) և միս էր վաճառում ու ոչխար էր պահում, և նրա մոտ միս առնելու էին գալիս մեծամեծներն ու հարուստ մարդիկ: Եվ դրանով նա մեծ հարստութուն էր դիզել ու բեռնակիր անասուններ ձեռք բերել ու տուն. և այդպես անցկացրեց երկար ժամանակ: Եվ մի անգամ, օրերից մի օր, նա իր խանութի առջև կանգնած էր, ու հանկարծ նրա կողքին կանգ առավ մեծ մորուքով մի ծերունի ու մի քանի դիրհեմ տվեց նրան և ասաց. «Սրա արժեքով միս տուր»,— և, փողը վճարելով՝ հեռացավ (իսկ եղբայրս նրան միս տվեց): Եվ եղբայրս նայեց ծերունու տված արծաթին ու տեսավ, որ նրա դիրհեմները սպիտակ են ու փայլուն և առանձին, մի կողմ դրեց դրանք:

Եվ ծերունին հինգ ամիս շարունակ նրա մոտ էր գալիս, ու եղբայրս նրա տված փողերն առանձին պցում էր սնդուկի մեջ, բայց հետո նա կամեցավ դրանք հանել ու ոչխար գնել, և բացեց սնդուկը, բայց տեսավ, որ դրա մեջ եղածը կտրտած սպիտակ թուղթ է դարձել:

Եվ եղբայրս սկսեց երեսին խփել ու բղավել. և ժողովուրդը հավաքվեց նրա շուրջը, ու նա պատմեց իր պատմութիւնը, և բոլորը զարմացած մնացին: Իսկ հետո եղբայրս, սովորականի նման, ոչխար մորթեց ու կախեց խանութում ու խոսեց ինքն իրեն. «Ո՛վ ալլահ, թե որ այդ անզգամ ծերուկը գա՛ր»: Եվ գեռ մի բոպե էլ չէր անցել, որ ծերունին մտեցավ իր արծաթե գրամներով, և այնժամ եղբայրս վեր կացավ ու բռնեց նրա օձիքից և սկսեց գոռալ. «Ո՛վ մուսուլմաններ, ինձ մոտ եկեք: Լսեք իմ ու այս անհավատի պատմութիւնը»:

Եվ, նրա խոսքերը լսելով, ծերունին հարցրեց. «Ո՞րն է քեզ համար ավելի լավ. ինձնից ձեռք քաշե՞լդ, թե մարդկանց առջև խայտառակ լինելդ»:— «Իսկ ինչո՞վ կխայտառակես ինձ»,— հարցրեց եղբայրս: «Նրանով, որ մարդու միսը ոչխարի մսի տեղ ես ծախում»,— պատասխանեց ծերունին: «Ստո՛ւմ ես, անիծյալ»,— բացականչեց եղբայրս, և ծերունին ասաց. «Անիծյալը նա է, որի խանութում մարդ է կախված»:— «Եթե այնպես է, ինչպես դու ես ասում. իմ փողն ու արշուկը՝ քեզ հալալ»,— պատասխանեց եղբայրս: Եվ այնժամ ծերունին ասաց. «Ո՛վ մարդիկ, եթե իմ խոսքերի ու իմ արդարացիութեան հաստատումն եք ուզում, խանութ մտեք»: Եվ մարդիկ իմ եղբոր խանութը խուժեցին ու տեսան, որ այն ոչխարը կախված մարդ է դարձել, և, այդ տեսնելով, նրանք բռնեցին եղբորս օձիքից ու գոռացին. «Ո՛վ անհավատ, ո՞վ անարգ»: Եվ նրա համար ամենաթանկագին մարդն էլ ծեծում էր նրան ու երեսին խփում ու ասում. «Դու մեզ Աղամի որդիների մսով ես կերակրում», իսկ ծերունին նրա աչքին խփեց ու աչքը հանեց:

Եվ մարդիկ այն մորթվածին պահակապետի մոտ տարան, ու ծերունին ասաց. «Ո՛վ էմիր, այս մարդը մորթում է մարդկանց, ծախում նրանց միսը ոչխարի մսի տեղ, և մենք նրան քեզ մոտ ենք բերել: Վերկաց, ուրեմն, և իրագործիր արդարադատութիւնն ալլահի մեծ ու փառավոր»: Եվ իմ եղբայրը պաշտպանվում էր, բայց պետը շսեց նրան ու հրամայեց ձիպոտի հինգ հարյուր հարված տալ, ու նրանից խլեցին ամբողջ փողը, իսկ եթե փողը չլիներ, նրան, հալանաբար, կսպանեին:

Եվ եղբայրս վեր կացավ ու գնաց առանց մտածելու, թե ուր, և հասավ մի մեծ քաղաք. այդտեղ նա մտածեց. «Լավ կլինի, որ մաշակար դառնամ»,— ու խանութ բացեց ու նստեց՝ աշխատելով, որ ապուստ հայթայթի: Եվ մի օր էլ նա գործով դուրս եկավ ու ձիերի դոփշուն լսեց և մարդկանց հարցրեց այդ մասին, ու նրան ասացին. «Թագավորը որսի ու ձկնորսութեան է գնում»: Եվ եղբայրս սկսեց նայել թագավորի գեղեցկութեանը, իսկ թագավորի հայացքը հանդիպեց եղբորս

հայացքին, և թագավորը գլուխը հակեց ու ասաց. «Այսօրվա շարիքից ալլահին եմ առջուկիսում», — և ձիու սանձը քաշեց ու շուռ եկավ, և բուլոր ծառաներն էլ շուռ եկան: Իսկ հետո թագավորը հրամայեց ծառաներին, ու նրանք եղբորս հետևից հասան ու սաստիկ ծեծեցին, այնպես որ նա հազիվ փրկվեց մեռնելուց: Եվ եղբայրս չգիտեր, թե ինչն է դրա պատճառը, ու վերադարձավ իր տուն անմեղսագետ վիճակում: Եվ այնուհետև նա գնաց թագավորի ծառաներից մեկի մոտ ու նրան պատմեց իրեն պատահածը, և ծառան այնպես ծիծաղեց, որ գետին ընկավ ու ասաց. «Ո՛վ եղբայր, իմացած եղիր, որ թագավորը չի կարողանում նայել միականանի մարդու, մանավանդ, եթե նրա աջ աչքն է կույր, այդպիսի մարդուն նա մինչև չսպանի, բաց չի թողնի»:

Այդ խոսքերը լսելով, իմ եղբայրը վճռեց փախչել այդ քաղաքից և վեր կացավ ու դուրս եկավ այնտեղից և գնաց մի ուրիշ վայր, որտեղ ոչ ոք չէր ճանաչում նրան ու երկար ժամանակ այնտեղ անցկացրեց: Ու դրանից հետո եղբայրս սկսեց խորհել իր գործի մասին: Եվ մի անգամ նա դուրս եկավ զրոսնելու և իր թիկունքում ձիերի դոփյուն լսեց ու ասաց. «Ալլահի հրամանը եկավ»: Եվ նա սկսեց թաքնվելու տեղ որոնել, բայց չգտավ, ու նայեց, և հանկարծ տեսավ մի փակ դուռ: Ու նա հրեց այն, և դուռն ընկավ, և եղբայրս ներս մտավ ու տեսավ մի երկար միջանցք ու այնտեղ մտավ: Եվ դեռ ուշքը գլուխը չէր հավաքել, որ երկու հոգի բռնեցին նրան ու ասացին. «Փառք ալլահին, որ քեզ մեր ձևոքը հանձնեց: Ո՛վ ալլահի թշնամի, ահա երեք գիշեր է արդեն, որ մեզ քնել չես թողնում, ու մենք հանգիստ չունենք, և դու ստիպեցիր մեզ մահվան դառնությունը ճաշակել»: — «Ո՛վ մարդիկ, ի՞նչ է պատահել ձեզ», — հարցրեց եղբայրս: Եվ նրանք ասացին. «Դու խաբում ես մեզ և ուզում ես խայտառակել մեզ: Դու խորամանկություն ես բանեցնում և ուզում ես մեր տիրոջն սպանել: Քեզ ու բո սատարների համար նրա սնանկացումը քիչ էր: Բայց հանի՛ր այն դանակը, որով դու ամեն գիշեր սպառնում ես մեզ»: Եվ նրանք խուզարկեցին եղբորս ու գտան գուռկին խրած մի դանակ, և եղբայրս նրանց ասաց. «Ո՛վ մարդիկ, ալլահից վախեցեք: Գիտցե՛ք, որ զարմանալի է իմ պատմությունը»: — «Իսկ ո՞րն է բո պատմությունը», — հարցրին նրանք: Եվ նա պատմեց իր պատմությունը, ցանկանալով, որ իրեն բաց թողնեն: Ու նրանք չսեցին եղբորս և ուշադրություն չդարձրին նրա խոսքերին ու պատառոտեցին նրա շորերը և նրա մարմնի վրա գտան մտրակի հարվածների հետքերը և ասացին. «Ո՛վ անխճյալ, ահա հարվածների հետքերը»: Եվ հետո եղբորս տարան վալիի մոտ, ու եղբայրս ինքն իրեն ասաց. «Ես իմ մեղքերի

պատճառով բռնվեցի, և ոչ ոք ինձ չի փրկի, բացի մեծ արարչից: Եվ վալին եղբորս հարցրեց. «Ք՞վ դժբախտ, ի՞նչը դրոշմ քեզ այդ բանն անելու: Դու մտել ես այն տունը սպանություն կատարելու համար»: Եվ իմ եղբայրը բացականշեց. «Ի սեր արարչի, խնդրում եմ քեզ, ո՞վ էմիր, լսի՛ր իմ խոսքերը և մի՛ շտապի՛ր ինձ պատժել»: Բայց վալին ասաց. «Այդ էք պակաս՝ լսելիք գողին, որի մեջքին հարվածների հետքեր կան: Քեզ հետ այդպես են վարվել ոչ այլ բանի, եթե ոչ՝ մեծ հանցանքի համար», — ավելացրեց վալին ու հրամայեց հարյուր հարված տալ եղբորս: Եվ իմ եղբորը ծեծեցին հարյուր հարվածով ու նստեցրին ուղտի վրա ու բղավեցին. «Ահավասիկ հատուցումը, և նվազագույն հատուցումը նրան, ով ուրիշի տուն է խցկվում»:

Եվ վալին հրամայեց վռնդել նրան քաղաքից, ու եղբայրս դնաց, շիմանալով, թե՛ ուր, և, լսելով այդ, ես գնացի նրա մոտ ու հարցուփորձ արեցի, ու նա պատմեց ինձ իր պատմությունը և այն, ինչ որ իրեն պատահել էր, և ես ամբողջ ժամանակ նրա հետ քաղաքի շուրջը պտրտում էի, քանի դեռ նրա մասին գոռալով հայտարարում էին, իսկ երբ նրան բաց թողեցին, ես նրա մոտ գնացի ու թաքուն վերցրի նրան ու բաղաք բերեցի և սկսեցի նրան ուտելիք ու խմելիք տալ:

ՍԱՓՐԻՉԻ ՀԻՆՊԵՐՈՐԴ ԵՂԲՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ինչ վերաբերում է իմ հինգերորդ եղբորը, ապա նրա անանջներն էին կտրած, սվ հաժատացյալների տիրակալ, և նա աղքատ մարդ էր ու երեկոները մուրալով փող էր հավաքում, իսկ ցերեկը ծախսում: Իսկ մեր հայրը հալից ընկած մարդ էր, խոր ծերության հասած, և նա մեռավ ու թողեց մեզ յոթ հարյուր դիրհեմ, ու մեզանից յուրաքանչյուրը վերցրեց իր հարյուր դիրհեմը: Եվ իմ հինգերորդ եղբայրը, վերցնելով իր բաժինը, գլուխը կորցրեց ու շփտեց, թե ինչ անի: Եվ երբ նա այդպես մտածում էր, հանկարծ նրա խելքին փչեց այդ փողով ամեն կարգի ապակե անսթներ առնել ու, վաճառելով, շահ ստանալ: Եվ նա հարյուր դիրհեմի ապակեզեն գնեց, մեծ սկուտեղի վրա դրեց ու մի տեղ նստեց՝ ծախելու: Իսկ նրա կողքին մի պատ կար, ու նա մեջքով հենվեց այդ պատին ու նստեց, իր մասին մտածելով:

Եվ նա մտածում էր այսպես. «Իմ հիմնական փողն այս ապակեզենի մեջ է — հարյուր դիրհեմ, իսկ ես քրանք կծախեմ երկու հարյուր դիրհեմով և հետո կգնեմ երկու հարյուր դիրհեմի ապակեզեն ու կվա-

ճառեմ չորս հարյուր դիրհեմով, և շեմ դագարի առնել-վաճառելուց, մինչև որ ինձ մոտ շատ փող շհավաքվի: Եվ գրանով ես կգտնեմ ամեն տեսակ ապրանքներ, թանկագին իրեր ու անուշահոտություններ և մեծ շահ կըստանամ, իսկ դրանից հետո կգնեմ մի գեղեցիկ տուն ու սարուկներ ու ձիեր և ոսկեղեն թամբեր ու կսկսեմ ուտել-խմել և քաղաքում շեմ թողնի թեկուզ մեկ երգչի, կամ երգչուհու, որ ինձ մոտ բերած չլինեմ: Եվ եթե մեծ ալլահը կամենա, ես հարյուր հազար դիրհեմ դրամագլուխ կհավաքեմ...»: Եվ այս բոլորը նա մտմտում էր իր գլխում, իսկ ապակեզենով մատուցարանը դրված էր իր առջև, ու եղբայրս մտածում էր շարունակ. «Իսկ երբ հարյուր հազար դիրհեմ ունենամ, ես միջնորդ կանայք կողարկեմ՝ թագավորների ու վեզիրների աղջիկների հետ ինձ նշանելու համար, ու կնշանվեմ վեզիրի աղջկա հետ,— լսել եմ, որ նա գեղեցկությամբ կատարյալ է և հմայքով՝ բացառիկ,— և նրան, որպես գլխագին, հազար դինար կտամ, և եթե նրա հայրը համաձայնի, այդպես էլ կլինի, իսկ եթե շհամաձայնի, ես բռնի կվերցնեմ նրան՝ հակառակ նրա հոր կամքին: Եվ երբ նա իմ տանը լինի, ես տասը փոքրիկ ներքինի կգնեմ, և ինձ համար արքաների ու սուլթանների հագուստներ կառնեմ, ու ոսկեղեն թամբ պատրաստել կտամ՝ թանկագին քարերով զարդարված, իսկ հետո ձի հեծած գուրս կգամ, և ինձ հետ կլինեն սարուկներ, որոնք իմ առջևից ու ինձ շրջապատած կզնան, ու ես կանցնեմ քաղաքով, և մարդիկ կողջունեն ու կփառաբանեն ինձ: Իսկ հետո ես վեզիրի՝ աղջկա հոր մոտ կգնամ (իսկ սարուկները կլինեն իմ առջևում և հետևում ու աջ ու ձախ կողմերում), և երբ վեզիրն ինձ տեսնի, ընդառաջ կգա ինձ ու կնրստեցնի իր տեղը, իսկ ինքն ինձնից ցած կնստի, քանի որ նա իմ աներըն է: Իսկ ինձ հետ կլինեն երկու ներքինի՝ երկու քսակով, ամեն մեկի մեջ հազարական դինար, և ես հազար դինար նրան կտամ, որպես նրա աղջկա գլխագին, և մյուս հազարը նրան կնվիրեմ, որպեսզի նա իմանա իմ ազնվաբարոյությունն ու առատածեռնությունը և իմ հոգու մեծությունն ու բոլոր երկրային բաների ոչնչությունն իմ աչքում: Եվ եթե նա տասը խոսքով ինձ դիմի, ես նրան կպատասխանեմ երկու խոսքով ու կվերադառնամ տուն: Իսկ երբ իմ կնոջ հարազատներից մեկը ինձ մոտ գա, ես նրան փող կտամ ու հագուստ կընծայեմ, իսկ եթե նա ինձ մոտ գա նվերով, ես այն իրեն կվերադարձնեմ ու շեմ ընդունի, որպեսզի իմանան, որ ես հպարտ եմ հոգով ու իմ հոգին միայն իրեն վայել տեղը կպահեմ: Իսկ հետո ես կհրամայեմ, որ ինձ կարգի բերեն, և երբ այգ անեն, ես կհրամայեմ հարսին բերել և, ինչպես հարկն է, իմ տունը կհարդարեմ, իսկ երբ բացելու ժամանակը գա, ես կհագնեմ իմ ամե-

նաճոխ զգեստը և կնստեմ՝ դիպակե հագուստով թիկն տված բարձե-
 րին, աջ ու ձախ շղառնալով, ի նշան իմ մեծ խելքի ու իմ բանականու-
 թյան գերազանցության: Եվ իմ կիներ կկանգնի իմ առջև, լուսնի նման,
 իր զգեստների ու զարդարանքների մեջ, և ես շեմ նայի նրան՝ հպար-
 տությունից ու գոռոզությունից, մինչև որ բոլոր ներկա գտնվողները
 շասեն. «Ո՛վ տեր իմ, քո կիներն ու աղախինը կանգնած է քո առջև, բա-
 րեհաճի՛ր նայել նրան, նրա համար ծանր է այդպես կանգնել»: Եվ նրանք
 շատ անգամ իմ առջև գետինը կհամբուրեն, և այնժամ ես գլուխս կբարձ-
 րացնեմ ու մի հայացքով նրան կնայեմ, իսկ հետո գլուխս կխոնարհեմ:
 Եվ նրան քնելու սենյակը կտանեն, իսկ ես կփոխեմ հագուստս ու կհագ-
 նեմ ավելի լավ մի բան, քան այն, որ մինչև այդ հագիս էր: Եվ երբ
 հարսին ինձ մոտ բերեն, ես նրան շեմ նայի, մինչև ինձ շատ շխնդրեն,
 իսկ հետո ես կնայեմ նրան ու գլուխս գետին կխոնարհեմ, և ես ամբողջ
 ժամանակն այդպես կանեմ, մինչև որ նրան բացելն ավարտվի: Իսկ
 հետո ես ծառաններից մեկին կհրամայեմ բերել հինգ հարյուր դինարով
 լի քսակը, և երբ հարսն այնտեղ լինի, ես դա աղախիններին կտամ ու
 կհրամայեմ հարսի մոտ մտցնել ինձ: Եվ երբ ինձ այնտեղ մտցնեն, ես
 շեմ նայի նրան ու շեմ խոսի նրա հետ՝ արհամարհանքից, որպեսզի
 ասեն, որ ես հպարտ եմ հոգով: Եվ նրա մայրն ինձ մոտ կգա ու կհամ-
 բուրի իմ գլուխն ու ձեռքը և կասի. «Ո՛վ տեր, նայի՛ր քո աղախինն, նա
 քո մերձավորությունն է ցանկանում, բուժի՛ր նրա սիրտը»: Իսկ ես նրան
 պատասխան շեմ տա. երբ նա այդ տեսնի, վեր կկենա ու մի քանի
 անգամ ոտքերս կհամբուրի ու կասի. «Ո՛վ իմ տեր, իմ աղջիկը գեղեցիկ
 օրիորդ է, որ դեռ տղամարդ չի տեսել, և եթե քո մեջ այդպիսի գապվա-
 ծություն տեսնի, սիրտը կկոտրվի: Թեքվի՛ր նրա կողմն ու խոսի՛ր նրա
 հետ»: Եվ նա ոտքի կելնի ու գինով գավաթը կբերի ինձ, և նրա աղջիկը
 կվերցնի գավաթն, ու, երբ ինձ մոտենա, կթողնեմ, որ նա իմ առջև
 կանգնած մնա, իսկ ես կկոթնեմ մութաքային, շնայելով նրան՝ իմ հո-
 դու մեծության պատճառով, մինչև նա շասի ինձ, որ ես բարձրաստիճան
 սուլթան եմ, և շխնդրի ինձ. «Ո՛վ տեր իմ, ի սեր ալլահի, աղաշում եմ
 քեզ, մի՛ մերժիր գավաթն ընդունել քո աղախնի ձեռքից, որովհետև ես
 քո ստրուկն եմ»: Բայց ես ոչինչ շեմ պատասխանի. և նա կկառչի ին-
 ձանից ու կասի. «Սա անպայման պիտի խմես». — ու բերանիս կմոտեց-
 նի գավաթը, և ես ձեռքս թափ կտամ նրա դեմքին ու ոտքով կհրեմ ու
 այսպես կանեմ», — ու նա ոտքը բարձրացրեց, և սկուտեղը ապակեղե-
 նով վայր ընկավ (իսկ այն բարձր տեղ էր դրված) ու գետին գլորվեց և
 դրա վրա եղած ամբողջ ապակեղենը շարդուփշուր եղավ:

Եվ եղբայրս ճշաց ու ասաց. «Այս բոլորն իմ հոգու մեծությունից եղավ»: Եվ այնժամ, ո՛վ հավատացյալների վեհապետ, նա սկսեց իր երեսին խփել ու շորերը պատառատեց ու սկսեց լաց լինել ու իրեն ձաղկել: Եվ մարգիկ նայում էին նրան՝ ուրբաթօրյա աղոթքի գնալիս, և ոմանք նայում էին ու խլճում նրան, իսկ մյուսները շէին էլ մտածում նրա մասին: Եվ իմ եղբայրը մնաց այդ վիճակում. փողն էլ գնաց, շահն էլ: Եվ նա որոշ ժամանակ նստած լաց եղավ ու, հանկարծ, ի՛նչ տեսնի. ոսկեղեն թամբով ջորուն հեծած մի գեղեցիկ կին է անցնում, ու նրա հետ՝ մի քանի ծառաներ, ու նրանից մուշկ է բուրում, իսկ նա ուրբաթօրյա աղոթքի է գնում: Եվ երբ նա տեսավ ապակեղենն ու իմ եղբոր վիճակն ու նրա լացը, տխրեց և նրա սրտում գուժը շարժվեց, ու նա հարցրեց եղբորս վիճակը, և նրան ասացին. «Նա ապակեղենով մի մատուցարան տներ, որով մի կերպ ապրում էր, և անոթները ջարդվեցին, ու նա այն վիճակին հասավ, որ տեսնում ես»: Եվ այնժամ նա կանչեց իր ծառաներից մեկին ու ասաց. «Մտոգ եզածն այդ խեղճին տուր»: Եվ ծառան եղբորս տվեց մի քսակ, որի մեջ նա գտավ հինգ հարյուր դինար, և երբ դրանք իր ձեռքն ընկան, նա ուրախությունից քիչ էր մնում հոգին ավանդի:

Եվ եղբայրս սկսեց օրհնել այն կնոջն ու վերադարձավ իր տունը և նստեց ու մտածեց. և հանկարծ դուռը ծեծեցին: Եվ նա վեր կացավ ու բացեց դուռն ու տեսավ, որ մի անծանոթ պառավ է: Եվ նա ասաց. «Ո՛վ տղա, իմացի՛ր, որ աղոթքի ժամն արդեն մոտ է, իսկ ես չեմ լվացվել և ես կուզեի, որ դու ինձ քո տունը թողնեիր՝ լվացվելու համար»:— «Էսում եմ ու հնազանդվում». — ասաց եղբայրս ու ներս մտավ ու նրան էլ առաց, որ ներս մտնի, և երբ նա ներս մտավ, եղբայրս նրան տվեց կուժը՝ լվացվելու համար:

Եվ եղբայրս նստել էր, ու նրա սիրտը թրթռում էր դինարների խթնությունից. հետո նա դրանք քսակի մեջ կապեց, և երբ վերջացրեց, պառավն ավարտեց լվացումը և, մոտենալով այն տեղին, ուր նստած էր եղբայրս, երկու ռակատից՝ բազկացած աղոթք կատարեց, ապա բարի աղոթքով աղոթեց եղբորս համար: Եվ եղբայրս շնորհակալութուն հալտնեց նրան դրա համար, ու, ձեռքը դինարներին տանելով, երկու դինար տվեց նրան ու ինքն իրեն առաց. «Մտ իմ կողմից՝ ողորմություն»: Եվ երբ պառավը դինարները տեսավ, բացակահեղեց. «Թող ալլա՛հ փա-

1 Թակաա — աղոթելու գործողության մի մասը, որ կազմված է մարմնի՝ սահմանված կարգի մի շարք շարժումներից:

ոտքանվի՛ր: Ինչո՞ւ դու որպէս մուրացկանի ես նայում երան, ով սիրում է քեզ: Վերցրու փողոյ, այն ինձ հարկավոր չէ, և կրկին սրաիզ վրա դիր. իսկ եթէ դու ուզում ես հանդիպել նրան, ով տվել է քեզ, ևս ձեզ իբար մոտ կբերեմ, նա իմ ընկերուհին է»: — «Ո՞վ մայրիկ, — հարցրեց եղբայրս, — ի՞նչ խորամանկությամբ կարող եմ ես նրա մոտ ընկնել»: Եվ պառաւին ասաց. «Ո՞վ տղաս, նա հակում ունի հարուստ մարդկանց նկատմամբ. վերցրու քեզ հետ ամբողջ փողոյ ու հետևիր ինձ, և ես քեզ նրա մոտ կտանեմ, ում որ ուզում ես: Իսկ երբ դու հանդիպես նրան, գործադրի՛ր ամեն կարգի գգվանք, որ պիտեա, ու հանելի խոսքեր, և դու նրա հմայքներից ու փողից կստանաս ուզածիդ չափ»:

Եվ եղբայրս վերցրեց իր ամբողջ ոսկին ու վեր կացավ և գնաց նրա հետ (և նա ինքն էլ չէր հավատում դրան), իսկ պառաւը գնաց ու գնաց, իսկ իմ եղբայրն էլ՝ նրա հետևից, մինչև հասան մի մեծ դարպասի: Եվ պառաւը բախեց, ու դուրս եկավ հուշն սարկուհին ու բացեց դարպասը, և այնժամ պառաւը ներս մտավ ու եղբորս հրամայեց իր հետ ներս գնալ, ու եղբայրս մտավ մի մեծ տուն ու մի մեծ սենյակ, որի հատակին փռված էին զարմանահրաշ գորգեր ու այնտեղ կախված էին վարագույրներ: Եվ եղբայրս նստեց ու ոսկին իր առջև դրեց, իսկ իր զլխափաթթոցը ծնկներին դրեց, և հագիվ էր նա ուշքը գլուխը հավաքել, երբ հայտնվեց մի աղջիկ, որից գեղեցիկին չէին տեսել տեսնողները, և նա հագել էր ճոխ զգեստներ: Ու եղբայրս բարբի ելավ, և երբ աղջիկը նրան տեսավ, ծիծաղեց նրա երեսին ու նրան նստելու նշան արեց: Իսկ հետո նա կարգադրեց դուռը փակել ու, մոտենալով եղբորս, բռնեց նրա ձեռքը, և նրանք երկուսով գնացին ու հասան մի առանձնացած սենյակ ու ներս մտան, և պարզվեց, որ այն զարդարված է կերպասով ու դիպակով:

Եվ եղբայրս նստեց, ու աղջիկն էլ նրա կողքին նստեց և մի քիչ խաղաց նրա հետ, իսկ հետո վեր կացավ ու ասաց. «Տեղիցդ շարժվես, մինչև ես գամ», — ու եղբորս մոտից անհայտացավ միառժամանակ: Եվ երբ նա այդպես նստած էր, հանկարծ նրա մոտ մտավ վիթխարի հասակով մի սևամորթ ստրուկ, ու նրա ձեռքին մերկ սուր կարս «վա՛յր քեզ, — բացականչեց նա, — ո՞վ է քեզ այստեղ բերել, և ի՞նչ ես անում դու այստեղ»: Եվ երբ եղբայրս նրան տեսավ, ի վիճակի չեղավ որևէ պատասխան տալ, ու նրա լեզուն պապանձվեց. այնպես որ ոչ մի խոսք չկարողացավ արտասանել: Եվ ստրուկը բռնեց նրան ու շորերը հանեց և այնքան ժամանակ սրի տափակ երեսով խփեց, մինչև որ նա անզգայացած դետին ընկավ, և դաժան ստրուկը կարծեց, թե սպանել է նրան:

Եվ իմ եղբայրը լսեց, թե ինչպես նա ասում է. «Մ'ը է աղ անող աղջիկը»: Եվ նրան մոտեցավ մի աղջիկ՝ ձեռքին մի մեծ սկուտեղ, որի մեջ շատ աղ կար, և ստրուկն սկսեց շարունակ աղ ցանել եղբորս վերքերի վրա, բայց նա չշարժվեց, վախենալով, որ, եթե ստրուկն իմանա, որ ինքը կենդանի է, կսպանի իրեն, և իր հոգին կկորչի:

Հետո ստրուկուհին դուրս գնաց, — շարունակեց պատմողը, — և ստրուկը բղավեց. «Մ'ը է մառանապետուհին»: Եվ պառավը մոտեցավ եղբորս ու ոտքից բռնած քարշ տվեց նրան մառան ու նետեց այնտեղ՝ բազմաթիվ մեռելների վրա: Եվ եղբայրս այդտեղ անցկացրեց երկու ամբողջ օր, և ալլահը աղը նրա կենդանության պատճառ դարձրեց, քանի որ աղը կասեցրեց արյունը, և եղբայրս իր մեջ ուժ գտավ շարժվելու, ու վեր կացավ մառանի մեջ ու բաց արեց իր գլխավերևի սալը (իսկ նա վախենում էր) և դուրս եկավ:

Եվ ալլահը նրան պաշտպանություն շնորհեց, ու նա խավարի մեջ մտավ ու մնաց այդ մութ միջանցքում մինչև առավոտ, իսկ երբ առավոտը վրա հասավ, այն անիծյալ պառավը դուրս եկավ նոր որս փնտրելու, և եղբայրս էլ դուրս եկավ նրա հետևից, իսկ նա շիմացավ այդ: Եվ նա գնաց իր տուն ու սկսեց բուժվել, մինչև լրիվ առողջացավ, ու հետևեց պառավին ամբողջ ժամանակ՝ տեսնելով, թե նա ինչպես է որսում մարդկանց մեկը մյուսի հետևից ու տանում այն տունը, բայց ոչինչ չէր ասում:

Իսկ հետո, երբ եղբորս ուժերն ու հոգին վերականգնվեցին, նա մի փալաս վերցրեց, քսակ կարեց, ասլակու կտորներով լցրեց ու գոտուն կապեց: Եվ նա շորերը փոխեց, սրպեսզի ոչ ոք չճանաչի, ու հագնվեց և, սուրը վերցնելով, թաքցրեց շորի տակ, ու երբ պառավին տեսավ, պարսիկների լեզվով նրան ասաց. «Մ'վ պառավ, ես օտարական եմ և այսօր եմ եկել այս քաղաքը ու ոչ ոքի չեմ ճանաչում: Արդյոք, քեզ մոտ կշեռք չի՞ լինի, որ նժարի մեջ հինգ հարյուր դինար տեղավորվի: Ես դրանից քեզ բաժին կհանեմ»: Եվ պառավը պատասխանեց. «Իմ որդին դրամափոխ է և ամեն տեսակ կշեռք ունի: Գնանք ինձ հետ, քանի դեռ նա դուրս չի եկել իր տեղից, և նա քո ոսկին կկշռի»: «Իմ առջևից գնա», — ասաց եղբայրս: Եվ նա գնաց, ու եղբայրս՝ նրա հետևից, և, մոտենալով դարպասին, պառավը բախեց, ու դուրս եկավ նույն այն աղջիկը ու բացեց դարպասը: Եվ պառավը ծիծաղեց նրա երեսին ու ասաց. «Ես այսօր ձեզ համար յուզդոտ պատառ եմ բերել»: Եվ աղջիկը բռնեց եղբորս ձեռքից

ու տարավ այն սենյակը, որտեղ մտել էր առաջին անգամ: Եվ նա որոշ ժամանակ նստեց եղբորս կողքին ու վեր կացավ և ասաց. «Մինչև ես քեզ մոտ չգամ, դուրս չգաս»,— և ինքը դուրս եկավ: Եվ եղբայրս հագիվ ուշքի էր եկել, երբ անիծյալ ստրուկը եկավ ու ձեռքին՝ այն մերկացրած սուրը: Եվ նա եղբորս ասաց. «Վե՛ր կաց, անպիտա՛ն»: Եվ եղբայրս վեր կացավ, ու ստրուկը գնաց առջևից, իսկ եղբայրս՝ նրա հետևից: Եվ եղբայրս ձեռքը տարավ հագուստի տակ պահած սբին ու հանեց և հարվածեց ստրուկին ու նրա գլուխը թոցրեց ուսերից, նրա ոտքից բռնած քարը տալով տարավ նկուղ ու բղավեց. «Ո՛ւր է աղ անող կինը»: Եվ այն ժամ եկավ աղջիկը՝ ձեռքին սկուտեղ, որի մեջ աղ կար, և տեսնելով եղբորս ու նրա ձեռքի սուրը, սկսեց փախչել, բայց եղբայրս նրա հետևից ընկավ և հարվածեց նրան ու գլուխը կտրեց: Իսկ հետո՝ նա գոչեց. «Ո՛ւր է պառավը»: Եվ պառավը եկավ, ու եղբայրս հարցրեց նրան. «Ճանաչո՞ւմ ես ինձ, գարշելի՛ պառավ»: Իսկ նա պատասխանեց. «Ո՛չ, տեր»: Եվ եղբայրս ասաց. «Ես այն փողատերն եմ, որի մոտ դու եկար ու լվացվեցիր ու աղոթեցիր ու որին այստեղ կանչեցիր»:— «Ալլահից երկյուղ ունեցիր ու դեռ մտածիր իմ գործի մասին»,— ասաց պառավը: Բայց եղբայրս չնայեց էլ նրան և այնպես հարվածեց, որ շորս կտոր արեց, իսկ հետո դուրս եկավ աղջկան գտնելու: Եվ երբ աղջիկը նրան տեսավ, խելքը թոցրեց ու բացակասնչեց. «Գթա՛»: Եվ եղբայրս գթաց նրան: «Ի՞նչն է քեզ այդ սևամորթի մոտ բերել»,— հարցրեց նա աղջկան: Եվ նա պատասխանեց. «Ես մի վաճառականի ստրուկուհի էի, իսկ այս պառավը եկավ ինձ մոտ, ու ես նրա հետ մտերմացա: Եվ օրերից մի օր նա ինձ ասաց. «Մեզ մոտ մի այնպիսի հարսանիք է, որի նմանը ոչ ոք չի տեսել, և ես ուզում եմ, որ դու տեսնես այն»: Եվ ես նրան պատասխանեցի. «Լսում եմ ու հնազանդվում»: Հետո ես հագա իմ ամենալավ զգեստն ու զարդերս և հետս վերցրի մի քսակ, որի մեջ հարյուր դինար կար, ու գնացի նրա հետ, և նա ինձ այս տունը բերեց: Եվ, ներս մտնելով, ես դեռ ուշքի չէի եկել, երբ այդ սևամորթը վերցրեց ինձ, և արդեն երեք տարի է, որ այս դրության մեջ եմ այդ անիծյալ պառավի նենգության պատճառով»:— «Իսկ նա այս տունը որևէ բան ունի՞»,— հարցրեց եղբայրս, և նա պատասխանեց. «Նա շատ բան ունի, և եթե դու կարողանաս տանել, տա՛ր, ալլահից խորհուրդ հարցնելով»:

Եվ եղբայրս վեր կացավ ու նրա հետ գնաց, ու աղջիկը բացեց մի սնդուկ, որի մեջ քսակներ կային, ու եղբայրս մտածմունքի մեջ ընկավ.

իսկ աղջիկը նրան ասաց. «Հիմա գնա և ինձ աշատեղ թող ու որևէ մեկին բեր, որ փողը տանես»: Եվ եղբայրս դուրս եկավ ու տուար մարդ վարձեց և եկավ դարպասի մոտ, բայց դա բաց գտավ ու շտեմավ ո՛չ աղջկան, ո՛չ քսակները, բացի մի քանիսից, և հյուսվածքեղենից: Նա հասկացավ, որ աղջիկը խաբել է իրեն, և, վերցրեց մնացած փողն ու բացելով պահարանները, վերցրեց դրանց մեջ եղածներն ու ոչինչ չթողեց տանն ու գիշերն ուրախ անցկացրեց:

Իսկ երբ առավոտը բացվեց, նա դարպասի մոտ տեսավ քսան դինվոր, որոնք բռնեցին իրեն ու ասացին. «Վալին քեզ է պահանջում»: Եվ նրանք վերցրին նրան, ու եղբայրս սկսեց խնդրել նրանց, որ իրեն թույլ տան տուն մտնել, բայց նրան թույլ չտվեցին, որ վերադառնա իր տուն, և եղբայրս նրանց շատ փող խոստացավ, բայց նրանք մերժեցին: Եվ նրանք ամուր կապեցին նրան պարանով ու տարան, ու ճանապարհին նրանց հանդիպեց եղբորս բարեկամներից մեկը, ու եղբայրս կախ ընկավ նրա փեշերից ու խնդրեց իրեն պաշտպան կանգնել, որպեսզի օգնի իրեն նրանց ձեռքից ազատվելու: Եվ այդ մարդը կանգ առավ ու հարցրեց նրանց, թե ինչ է պատահել: Եվ նրանք ասացին. «Վալին մեզ հրամայել է սրան իր մոտ տանել, և մենք էլ, ահա, սրա հետ գնում ենք»: Եվ եղբորս բարեկամը նրանց խնդրեց ազատել եղբորս, պայմանով, որ հինգ հարյուր դինար վճարի նրանց, ու ասաց. «Երբ վալիի մոտ վերադառնաք, ասացեք, որ սրան շեք գտել»: Բայց նրանք մերժեցին, ու եղբորս վալիի մոտ տարան, և երբ վալին եղբորս տեսավ, հարցրեց. «Որտեղի՞ց են այս հյուսվածքեղենն ու փողն ընկել բո ձեռքը»:— Գթություն եմ հայցում»,— ասաց եղբայրս: Եվ վալին գթության թաշկինակ տվեց նրան, և այնժամ եղբայրս նրան պատմեց այն ամենը, ինչ պատահել ու տեղի էր ունեցել նրա ու պառավի միջև՝ սկզբից մինչև վերջ, ու աղջկա փախուստի մասին, և վալին ասաց. «Իսկ ինչ որ ես վերցրել եմ, դրանից վերցրու ինչքան ուզում ես, և թող ինձ մի բան՝ ապրելու համար»: Եվ վալին վերցրեց ամբողջ փողն ու գործվածքեղենը և վախեցավ, որ լուրը սուլթանին կհասնի, ու եղբորս ասաց. «Հեռացի՛ր այս քաղաքից, թե չէ կկախեմ քեզ»: Եվ եղբայրս պատասխանեց. «Լսո՛ւմ եմ ու հնազանդվում». — ու հեռացավ, գեաց ինչ-որ քաղաք, և նրա վրա թափվեցին գողերն ու մերկացրին նրան և ծեծեցին ու ականջը կտրեցին: Եվ ես լուր ստացա նրա մասին և գնացի նրա մոտ և նրա համար հագուստ վերցրի, ու թաքուն քաղաք մտցրի նրան և սկսեցի ուտելիք ու խմելիք տալ»:

ՍԱՓՐԻՉԻ ՎԵՑԵՐՈՐԿ ԵՂՐՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ինչ վերաբերում է իմ վեցերորդ եղբորը, ո՞վ հավատացյալների վեհապետ, ապա նրա էլ շրթունքներն են կտրած: Նա աղքատացել էր, և մի անգամ դուրս եկավ մի բան գտնելու, որ մարմնի կենդանութունը պահպանի: Եվ ահա, երբ նա ինչ-որ ճանապարհով գնում էր, հանկարծ տեսավ մի գեղեցիկ տուն՝ լայն ու բարձր կամարով, իսկ դարպասի մոտ՝ ծառաներ ու հրամայող ու արգելող մարդիկ: Եվ նա այնտեղ կանգնածներից մեկին հարցրեց, ու սա ասաց. «Սա Բարմեքսանների՝ ընտանիքներից մեկի տունն է»: Եվ այնժամ եղբայրս մոտեցավ դռնապաններին ու նրանցից մի բան խնդրեց, ու նրանք ասացին. «Ներս մտիր, սիրածդ բանը կգտնես մեր տիրոջ մոտ»: Եվ եղբայրս կամարի տակով ներս մտավ ու անցավ ու հասավ տան մոտ, որ գեղեցիկ էր՝ գեղեցկության ու պերճանքի սահմանի շափով, ու դրա կենտրոնում կար մի պարտեզ, որի նժանը նա շէր տեսել, իսկ հատակը սալարկած էր մարմարով, ու ներսում վարագույրներ էին կախված:

Եվ եղբայրս շշմած մնաց, շիմանալով, թե դեպի ուր ուղղի քայլերը, ու գնաց դեպի ննջարանի բարձրադիր մասը ու տեսավ գեղեցկատես, մորուքավոր մի մարդու: Եվ նա, տեսնելով եղբորս, վեր կացավ ու ողջունեց նրան ու հարցրեց նրա վիճակի մասին, ու եղբայրս նրան հայտնեց, որ ինքը կարիքի մեջ է:

Եվ, եղբորս խոսքերը լսելով, այդ մարդը սաստիկ տխրեց ու ձեռքը իր հագուստին գցելով՝ պատռեց այն ու բացականչեց. «Ես այս քաղաքում եմ ապրում, իսկ դու քաղցած ես: Ես դրան չեմ դիմանա»: Եվ նա եղբորս ամեն բարիք խոստացավ ու ասաց. «Գու անպայման ինձ հետ աղ ու հաց պիտի ուտես»: Եվ եղբայրս պատասխանեց. «Ո՞վ տեր իմ, ևս համբերութուն չունեմ ու խիստ քաղցած եմ»: Եվ տանտերը կանչեց. «Հե՛յ, տղա՛, կոնքն ու կուլան բեր,— ապա ասաց.— մոտեցի՛ր ու ձեռքերդ լվա՛»: Եվ եղբայրս վեր կացավ, որ ձեռքերը լվանա, բայց ո՛չ կոնք տեսավ, ո՛չ էլ կուլա: Իսկ տանտերը սկսեց այնպիսի շարժումներ անել, կարծես թե լվացվելիս լիներ, ու հետո բղավեց. «Սեզանը բերեք»: Բայց եղբայրս ոչինչ չտեսավ: Եվ այն մարդը նրան ասաց. «Համեցիր, կեր այս կերակուրը, մի ամաշիր,— և սկսեց այնպիսի շարժումներ անել, որ

1. Բարմեքսաններ— սթեբորդ գարում ապրած խալիֆ Խալիդ իրն Բարմեքի հեռորդները: Այդ տան շատ անգամներ բարձր պաշտոններ էին զբաղում արաբական խալիֆների պալատում:

կարծես ուտելիս լիներ, ու եղբորս ասաց.— Զարմանալի է, ինչ քիչ ես ուտում: Մի՛ զսպիր քեզ ուտելուց, ես գիտեմ, թե որքան քաղցած ես: Եվ եղբայրս սկսեց այնպես ձևացնել, թե ուտում է, իսկ տանտերն ասում էր. «Կեր ու տես, թե ի՞նչ լավ ու ի՞նչ սպիտակ է այս հացը»: Բայց իմ եղբայրը ոչինչ չէր տեսնում ու ինքն իրեն մտածում էր. «Այս մարդը սիրում է ծաղրել մարդկանց»: «Ո՛վ տեր իմ,— ասաց նրան եղբայրս,— ես կյանքումս սրանից ավելի սպիտակ ու համեղ հաց չեմ տեսել»: Եվ նա պատասխանեց. «Դա մի ստրկուհի է թխել, որին վեց հարյուր դինարով եմ դնել»: Հետո տանտերը կանչեց. «է՛յ, տղա՛, մտով կարկանդակ բեր, առաջին կերակուրը, և վրան յուղ ավելացրու,— և եղբորս հարցրեց.— Ո՛վ հյուր, ի սեր ալլահի աղաչում եմ, ասա՛ սրանից լավ կարկանդակ տեսե՞լ ես: Հանուն իմ կյանքի, կե՛ր, մի՛ քաշվիր:— Հետո բղավեց.— է՛յ, տղա՛, քացախով միս տուր մեզ ու գեր կաքավներ:— Եվ իմ եղբորն ասաց.— Կե՛ր, հյուր, դու քաղցած ես ու սրա կարիքն ունես»: Եվ եղբայրս սկսեց շարժել ծնոտներն ու ծամել, իսկ այն մարդը կերակուր կերակուրի հետևից էր պահանջում, բայց ոչինչ չէին բերում, և նա միայն եղբորս ուտել էր հրամայում:

Հետո նա բղավեց. «է՛յ, տղա՛, պիստակի հետ եփած ճտեր տո՛ւր մեզ,— և եղբորս ասաց.— Կյանքովս եմ աղաչում, ո՛վ իմ հյուր, այս ճտերին պիստակով են կերակրել. կե՛ր, ուրեմն, դա, որի նմանը դու երբեք չես կերել, ու մի՛ ամաչիր»:— «Ո՛վ տեր իմ, դա լա՛վն է»,— պատասխանեց եղբայրս: Եվ տանտերն սկսեց ձեռքը եղբորս բերանը տանել, ասես կերակրում էր նրան, ու թվարկում էր կերակուրները, դրանք գովաբանելով եղբորս մոտ, որը քաղցած էր, ու նրա քաղցն ավելի սաստկացավ, այնպես որ նա ուզում էր թեկուզև գարու հաց: «Ավելի լավ համեմունքներ տեսե՞լ ես, քան այն, որ այս ուտելիքների մեջ է»,— հարցրեց նա այնուհետև: Եվ եղբայրս պատասխանեց. «Ոչ, տեր»: Եվ նա ասաց. «Լավ կեր ու մի՛ ամաչիր»:— «Իմ կերածն արդեն բավական է»,— պատասխանեց եղբայրս: Եվ տանտերը բղավեց. «Հավաքեք սա և քաղցրավենիք բերեք,— ու իմ եղբորն ասաց.— Սրանցից կեր, սա հիանալի ուտելիք է, և այս բլիթները կեր: Կյանքովս եմ աղաչում, վերցրու այս բլիթը, քանի դեռ հյուրը նրանից չի քամվել»:— «Թող չզրկվեմ քեզնից, ո՛վ իմ տեր»,— բացականչեց եղբայրս ու սկսեց հարցուփորձ անել նրան, թե շա՛տ մուշկ է լցված բլիթի մեջ: Եվ տանտերը պատասխանեց. «Իմ տանը սովորաբար ամեն մի բլիթի մեջ մի մսխալ մուշկ են դնում ու կես մսխալ համպար»: Եվ այդ ամբողջ ժամանակ իմ եղ-

րայրը գլուխը շարժում էր ու բերանով ու ծնոտներով ծամում: «Այս նուշը կեր, մի՛ ամաչիր», — ասաց տանտերը, և եղբայրս պատասխանեց. «Ո՛վ տեր իմ, արդեն րավական է, ես էլ չեմ կարող որևէ բան ուտել»: Իսկ տանտերը պատասխանեց. «Ո՛վ հյուր, գուցե ուզում ես որևէ բան ուտել ու անուշ անել, ի սեր ալլահի, ի սեր ալլահի, աղաչում եմ քեզ, քաղցած մի՛ մնա»: — «Ո՛վ տեր, — ասաց եղբայրս, — ինչպե՞ս կարող է սոված լինել նա, ով այդ բոլոր ուտելիքները կերել է»: Եվ հետո իմ եղբայրը մտածեց ու ինքն իրեն ասաց. «Ես անպայման նրան մի այնպիսի բան կանեմ, որից հետո նա կզղչա այդ արարքի համար»: Իսկ այն մարդը բացականչեց. «Գինի՛ տվեք մեզ»: Եվ ծառաներն սկսեցին օդում շարժել ձեռքները, կարծես թե գինի են մատուցում: Եվ տանտերը գավաթը եղբորս տվեց ու ասաց. «Վերցրու այս գավաթը, և եթե գինին քեզ դուր գա, ինձ ասա»: — «Ո՛վ տեր, — պատասխանեց եղբայրս, — դրա հոտը լավն է, բայց ես սովոր եմ հին՝ քսան տարվա գինի խմել»: — «Այս դուռը բախիր և դու կարող ես դրանից մի քիչ խմել», — ասաց տանտերը: Եվ եղբայրս բացականչեց. «Ո՛վ տեր, բո ողորմածութ՜յամբ». — ու ձեռքով մի շարժում արեց, իբր թե խմում է, իսկ տանտերն ասաց. «Առողջութ՜յուն և անուշներ»: Հետո նա այնպես ձևացրեց, իբր թե, խմեց ու եղբորս տվեց երկրորդ գավաթը, ու սա խմեց ու այնպես ձևացրեց, թե հարբել է, ապա եղբայրս հանկարծակի նրան բռնեց ու ձեռքն այնպես բարձրացրեց, որ կոնատակի սպիտակութ՜յունը երևաց, ու մի այնպիսի ապտակ հասցրեց, որ սնով մեկ արձագանքեց: Եվ նա էլի՛ մի ապտակ տվեց, երկրորդ անգամ, ու այն մարդը բացականչեց. — «Սա ի՞նչ բան է, անզգա՛մ»: Եվ եղբայրս պատասխանեց. «Ո՛վ տեր իմ, դու ողորմած էիր քո սարուկի նկատմամբ ու մտցրիր նրան քո տունը և սնունդ տվեցիր ուտելու և հին գինի խմեցրիր, ու նա հարբեց ու սկսեց անկարգութ՜յուն անել, բայց դու այնքան վեհ էս, որ կտանես նրա հիմարութ՜յունն ու կներես նրա մեղքը»:

Եվ, լսելով նրա խոսքերը, տանտերը ծիծաղեց ու ասաց. «Ես արդեն շատ ժամանակ է, որ ծանակում եմ մարդկանցով ու ձեռ եմ առնում բարեկամներին, բայց ոչ մեկին չեմ տեսել, որ այդպիսի տոկունութ՜յուն ու խելամտութ՜յուն ունենա՝ ինձ հետ այդպես վարվելու: Իսկ հիմա ես քեզ ներեցի, իմ սեղանակիցը եղի՛ր ճշմարտապես ու երբեք մի՛ բաժանվիր ինձանից»: Եվ նա հրամայեց դուրս բերել բազմատեսակ կերակուրներ, որոնց մասին առաջ հիշատակել էր, ու եղբայրս և նա կերան, մինչև կշտացան, ապա անցան խմիչքեղենի սենյակը: Եվ հանկարծ այնտեղ հայտնվեցին ստրկուհիներ՝ լուսինների նման, ու սկսեցին երգել

բոլոր ձայներով ու ամեն տեսակ գործիքների նվագակցով, իսկ հետո երկուսով սկսեցին խմել ու հարբեցին: Եվ այն մարդը, այնպես բարեկամացավ եղբորս հետ, որ իսկական եղբայր դարձավ ու մեծ սիրով սիրեց և ընծամեր տվեց նրան: Իսկ երբ առավոտը բացվեց, նրանք նորից կերուխումն սկսեցին, և այդպես շարունակվեց քանի տարի: Իսկ հետո այն մարդը մեռավ, ու սուլթանը դրավեց նրա ունեցվածքը և այն, ինչ եղբորս մոտ էր, ու սուլթանը խլեց նրա փողը, միմշև որ նրան ազքատ, ամեն ինչից զուրկ դարձրեց:

Եվ եղբայրս դուրս եկավ, փախչելով, առանց գիտենալու, թե՞ ուր: Եվ երբ նա ճանապարհին էր, նրա վրա հարձակվեցին քոչվորներն ու գերի վերցրին: Նրանք իրենց իջևանատեղին տարան նրան, և նա, ով բռնել էր եղբորս, սկսեց տանջել նրան ու ասել. «Փողով դնի՛ր ինձանից քո հոգին, թե չէ ես քեզ կսպանեմ»: Իսկ իմ եղբայրը լաց եղավ ու ասաց. «Ալլահը վկա, ես ոչինչ չունեմ: Ես քո գերին եմ, աբա, ինչ ուզում ես»:

Եվ քոչվորը հանեց դանակն ու կտրեց եղբորս շրթունքները և ավելի ու ավելի համառորեն պահանջներ ներկայացրեց նրան: Իսկ քոչվորը մի գեղեցիկ կին ուներ, և երբ մարդը դուրս եկավ, կինը իրեն եղբորս առաջարկեց ու ջանաց գայթակղել նրան, իսկ եղբայրս հրաժարվեց: Բայց երբ օրերից մի օր եկավ, որ այն կինը կրկին սկսեց գայթակղել եղբորս, սա սկսեց խաղալ նրա հետ ու նստեցրեց իր ծնկներին: Եվ այդ ժամանակ հանկարծ նրա մարդը ներս մտավ ու, տեսնելով եղբորս, դուռնեց. «Վալ քեզ, անիծյա՛լ, հիմա դու իմ կնո՞ջն ես ուզում փշացնել»: Եվ նա հանեց դանակն ու կտրեց նրա առնին և, եղբորս ուղտի վրա դնելով, լեռան լանջին գցեց ու թողեց:

Եվ նրա մոտով ճանապարհորդներ էին անցնում, և նրանք ճանաչեցին եղբորս և հաց ու ջուր տվեցին նրան ու հայտնեցին ինձ, թե նրան ինչ է պատահել: Եվ ես գնացի նրա մոտ ու հետս քաղաք բերեցի ու բավական շափով ապրուստի միջոցներ նշանակեցի: Եվ ահա ես եկա քեզ մոտ, ով հավատացյալների տիրակալ, ու վախեցա այստեղից դուրս գալ՝ նախքան այս ամենը քեզ պատմելը. դա սխալ բան կլինի: Զէ՛ որ վեց եղբայր ունեմ, որոնց մասին հոգ եմ տանում:

Եվ երբ հավատացյալները տիրակալը լսեց իմ պատմությունը և այն, ինչ ես պատմեցի եղբայրներին մասին, ծիծաղեց ու ասաց. «Դու ճշմարիտ ես, ով Լուսիյաց, գու շատախոս չես, ու քո մեջ շաղակրատություն չկա, բայց հիմա հեռացիր այս քաղաքից ու մի ուրիշ քաղաքում ապրիր»: Եվ նա պահակներով ինձ քաղաքից վճնդեց:

Ս:լ ես քաղաքներ մտա ու նահանգներ շրջեցի, մինչև լսեցի նրա մահվան մասին և այն մասին, որ ուրիշն է խալիֆ դարձել, և այնժամ այս քաղաքը եկա: Եվ պարզվեց, որ եղբայրներս արդեն մեռել են: Եվ ես գնացի այս երիտասարդի մոտ ու նրան ամենալավ ծառայությունը մատուցեցի և եթե ես չլինեի, նրան, անշուշտ, կսպանեին, բայց ձա մեղադրեց ինձ այն բանում, որ իմ մեջ չկա: Եվ այն, ով հավաքվածներ, ինչ որ նա հաղորդեց իմ շատախոսուիթյան մասին, սուտ է: Այդ երիտասարդի պատճառով ես շատ երկրներ եմ ման եկել, մինչև որ այս հողն եմ հասել ու ձեզ մոտ նրան գտել, և մի՞թե սա իմ վեհանձնությունից չէ, ով բարի մարդիկ»:

Եվ երբ մենք լսեցինք սափրիչի պատմությունն ու նրա բազում խոսքերն ու այն, որ նա վիրավորել է այդ երիտասարդին, մենք վերցրինք սափրիչին ու բռնեցինք նրան և բանտարկեցինք ու հանգիստ նստեցինք և կերանք-խմեցինք, ու խնջույքը շարունակվեց մինչև հետճաշյա աղոթքի կոչումը: Եվ հետո ես դուրս եկա ու տուն գնացի, և կինս թթվեց ու ասաց. «Դու ուրախանում ու զվարճանում ես, իսկ ես տխրում եմ: Եթե դու ինձ դուրս չբերես ու օրվա մնացորդն ինձ հետ ման չգաս, ես կկրորեմ մեր մերձավորության թելը և մեր բաժանման պատճառը դու կլինես»:

Եվ ես դուրս եկա նրա հետ, ու մենք զրոսնեցինք մինչև երեկո, ապա վերադարձանք ու հանդիպեցինք կուզիկին, որը ծայրաստիճան խմած էր ու ասում էր այսպիսի բեյթեր.

Գինու նման թափանցիկ է ու հստակ է ապակին,
 Եվ շատ հաճախ նմանությունն այդ պատճառ է վարանքի,
 Մերթ գավաթն է գինուն ձուլված՝ լոկ գինի ես դու տեսնում,
 Մեկ էլ գինին գավաթի մեջ ապակի է քեզ թվում:

Եվ ես հրավիրեցի նրան մեր տուն ու դուրս եկա տապալած ձուկ առնելու, ու մենք նստեցինք տեսելու, իսկ հետո իմ կինը մի կտոր հաց տվեց նրան ու ձուկ և գրանք նրա քերանը խոթեց ու փակեց քերանք, և կուզիկը մեռավ: Եվ ես նրան տալիս ու կարողացա այս հրեա բժշկի տունը նետել, իսկ բժիշկը ճարպիկ գտնվեց ու նրան վերահսկիչի տունը գցեց, իսկ վերահսկիչը հնարամիտ եղավ ու պցեց քրիստոնյա մեջնորդի ճանապարհին: Ահավասիկ իմ պատմությունը և այն, ինչ որ երեկ ես ապրել եմ. մի՞թե սա կուզիկի պատմությունից զարմանալի չէ»:

Եվ, այս պատմութիւնը լսելով, Չինաստանի թագավորը ցնծութիւնից գլուխը թափահարեց ու զարմանք արտահայտեց և ասաց. «Նրիտասարդի ու շատախոս սափրիչի պատմութիւնը իսկապէս ավելի լավն է ու գեղեցիկ, քան ստախոս կուզիկինը»:

Հետո թագավորն իր պալատականներից մեկին հրամայեց. «Դերձակի հետ զնա ու բանտից այստեղ բեր սափրիչին: Ես կլսեմ նրա խոսքերը, և նա ձեզ բոլորիդ ազատելու պատճառը կդառնա: Իսկ այս կուզիկին մենք կթաղենք, չէ՞ որ նա երեկ է մեռել, և նրա համար դամբարան կկառուցենք»:

Եվ մի րոպե էլ շանցավ, որ պալատականն ու դերձակը զնացին րանտ և այնտեղից սափրիչին դուրս բերեցին ու եկան նրա հետ ու կանգնեցին թագավորի առջև: Եվ, տեսնելով սափրիչին, թագավորը տնտղեց նրան ու, հանկարծ պարզվեց, որ դա հալից ընկած ծերուկ է, իննսունից անց, սև դեմքով, սպիտակ մորուքով և ունքերով: Եվ թագավորը նրա տեսքին նայելով ծիծաղեց ու ասաց. «Մ'վ Լուսկյաց, ես ուզում եմ, որ դու քո պատմութիւններից մեկը պատմես»: Եվ սափրիչն ասաց. «Մ'վ ժամանակի թագավոր, իսկ ո՞րն է այս քրիստոնյայի, ու հրեայի, ու մահմեդականի, ու հանդուցյալ կուզիկի պատմութիւնը, որ ձեր մեջ է, և ո՞րն է այս հավաքույթի պատճառը»:— «Իսկ ինչո՞ւ ես դու այդ հարցնում»,— ասաց Չինաստանի թագավորը: Եվ սափրիչը պատասխանեց. «Ես նրանց մասին հարցնում եմ, որպեսզի թագավորն իմանա, որ ես շատախոս չեմ ու մեղապարտ չեմ շատախոսութեան մեջ, որում նրանք ինձ մեղադրում են: Ես նա եմ, որի անունը Լուսկյաց է, և իմ մեջ իմ անվան մասը կա, ինչպէս բանաստեղծն է ասել:

*Շատ հաճախ չէ, որ կարող ես տեսնել անուն կրողին
Այնպէս, որ քեզ էութիւնն իր հայտնի դառնա լիովին»:*

«Պատմե՛ք սափրիչին այս կուզիկի պատմութիւնը և այն, ինչ որ նրան պատահել է երեկոյան, և ինչ պատմել են հրեան, քրիստոնյան, վերահսկիչն ու դերձակը»,— ասաց թագավորը: Եվ այդպէս արեցին (իսկ կրկնելն օգուտ չունի), և դրանից հետո սափրիչը գլուխը տարուբերեց ու բացականչեց. «Ալլա՛հը վկա, դա, իսկապէս, զարմանալի հրաշք է: Բաց արեք այդ կուզիկին»:

Եվ կուզիկին բացեցին նրա առջև, ու նա նստեց կուզիկի կողքին և, նրա գլուխը ծնկներին դնելով, նրա դեմքին նայեց ու սկսեց այնպէս

ծիծաղել, որ մեջքի վրա ընկավ, ապա բացականչեց. «Ամեն մահ զարմանալի է, բայց այս կուզիկի մահվան մասին պետք է գրել ոսկեղեն թանաքով»: Եվ բոլոր հավաքվածները շվարել էին սափրիչի խոսքերից, ու թագավորը զարմացավ նրա ասածի վրա ու հարցրեց. «Ի՞նչ է պատահել քեզ, ո՞վ կռակյաց, պատմիր մեզ»: Եվ սափրիչը պատասխանեց. «Ո՞վ ժամանակի արքա, քո շնորհով եմ երգվում, ստախոս կուզիկի մեջ շունչ կա»: Եվ սափրիչը ծոցից մի տուփ հանեց ու, բացելով այն, միջից յուղով լի մի անոթ հանեց ու յուղը քսեց կուզիկի վզին և մկաններին, ապա հանեց երկու մետաղյա կեռիկ ու, խրելով նրա կոկորդը, հանեց ձկան կտորը՝ փշի հետ միասին, և երբ հանեց, պարզվեց, որ այն արյունոտվել է: Իսկ կուզիկը մի անգամ փռշտաց ու ոտքի ցատկեց և երեսը շոյեց ու բացականչեց. «Վկա՛ եմ, որ ուրիշ աստված չկա, բացի, ալլահից, և Մուհամմեդը ալլահի առաքյալն է»: Եվ թագավորն ու ներկաները զարմացան այն բանից, ինչ որ հականե տեսան:

Եվ Չինաստանի թագավորն այնպես ծիծաղեց, որ ուշագնաց եղավ, ու ներկաները՝ նույնպես: Եվ սուլթանն ասաց. «Ալլահը վկա, սա զարմանալի պատմություն է, և ես իմ կյանքում սրանից տարօրինակը չեմ լսել: Ո՞վ մուսուլմաններ, ո՞վ զինվորներ, — հարցրեց հետո սուլթանը, — ձեր կյանքում տեսե՞լ եք արդյոք, որ մեկը մեռնի ու հետո հարություն առնի: Եթե ալլահն այս սափրիչին նրա մոտ շուղարկեր (իսկ սա նրա կենդանության պատճառն է), կուզիկը, հավանաբար, մեռած կլիներ»:

Եվ բոլորն ասացին. «Ալլահը վկա, սա զարմանալի բան է»: Իսկ հետո Չինաստանի թագավորը հրամայեց ոսկեղեն թանաքով գրի առնել այդ պատմությունը, և գրի առան այն, ու գրեցին թագավորի գանձարանում: Իսկ դրանից հետո թագավորը հրեային, քրիստոնյային ու վերահսկիչին թանկագին հագուստներ պարգևեց ու նրանց հրամայեց գնալ, ու նրանք գնացին: Այնուհետև թագավորը դարձավ դերձակին ու թանկարժեք հագուստ ընծայեց ու իր դերձակը դարձրեց, ուճիկ սահմանեց նրա համար ու նրան հաշտեցրեց կուզիկի հետ, ու պարգևեց կուզիկին թանկագին ու գեղեցիկ հագուստ և ոտձիկ նշանակեց նրան, իր սեղանակիցը դարձնելով, իսկ սափրիչին շնորհ արեց ու թագավորության գլխավոր սափրիչ նշանակեց ու իր կերուխումի մասնակիցը դարձրեց: Եվ նրանք ապրեցին քաղցրագույն ու ամենահաճելի կյանքով, մինչև որ նրանց մոտ եկավ վայելքներ խափանողն ու հավաքույթներ ցրողը:





Այս էդ դին

Արու-շ-Յանայօր

դայն յայտնար



Հին ժամանակներում ու անցած դարերում ու տարիներին Կահիրեում մի վաճառական կար, որի անունն էր Շեմս էդ-դին: Եվ նա լավագույն վաճառականներից ու ամենաճշտախոս մարդկանցից մեկն էր, և ուներ ծառաներ ու սպասավորներ և ստրուկներ ու ստրկուհիներ ու շատ փող, և Կահիրեի վաճառականների ավագն էր:

Եվ նա մի կին ուներ ու սիրում էր նրան, ու կինն էլ իրեն էր սիրում, միայն թե նա քառասուն տարի ապրեց իր կնոջ հետ ու ո՛չ աղջիկ, ո՛չ էլ տղա ունեցավ: Եվ ահա օրերից մի օր նա նստած էր իբր խանութում ու տեսավ, որ վաճառականներից ամեն մեկը մի տղա ունի կամ երկու տղա, կամ ավելին, ու նրանք նստել էին խանութներում, ինչպես իրենց հայրերը: Իսկ այդ օրը ուրբաթ էր, և այդ վաճառականը բաղնիք էր գնացել ու լողացել, ինչպես լողանում են ուրբաթ օրերը, իսկ, դուրս գալով, նա վերցրեց վարսավիրի հայելին ու դրա մեջ իր դեմքին նայեց ու բացականչեց. «Վկա եմ, որ ուրիշ աստված չկա, բացի ավլահից, և որ Մուհամմեդը նրա առաքյալն է», — իսկ հետո նայեց իր մորուքին ու տեսավ, որ դրա մեջ սպիտակը ծածկել է սևին, և նա հիշեց, որ արեհե-րությունը մահվան սուրհանդակն է:

Իսկ կինը գիտեր նրա վերսդառնալու ժամանակն ու լվացվել էր ու նրա համար իրեն կարգի բերել, և երբ վաճառականը նրա մոտ մտավ, կինն ասաց նրան. «Բարի երեկո», Բայց նա պատասխանեց. «Ես բարիք չեմ տեսել», իսկ կինը ստրկուհուն ասաց. «Մատուցի՛ր ընթրիքի սեղանը»: Եվ ստրկուհին ուտելիք բերեց, ու վաճառականի կինն ասաց. «Ընթրիր, տեր իմ»: Իսկ վաճառականը պատասխանեց. «Ես ոչինչ չեմ ուտի», — և ոտքով հրեց սեղանն ու երեսը դարձրեց կնոջից:

«Ինչի՞ համար, և ի՞նչն է քեզ վշտացրել»,— հարցրեց կինը նրան։ Եվ նա պատասխանեց. «Դու ես իմ տխրութեան պատճառը»։— «Ինչո՞ւ»,— հարցրեց կինը։ «Նրա համար,— պատասխանեց վաճառականը,— որ, երբ այսօր խանութն բացեցի, ամեն մի վաճառականի կողքին մի տղա կամ երկուսը, կամ ավելին տեսա, ու նրանք նստել էին խանութներում, ինչպես իրենց հայրերը, և ես ինձ ու ինձ ասացի. «Իսկպես, նա, ով տարել է քո հորը, քեզ չի թողնի»։ Իսկ այն գիշերը, երբ ես քո ծոցը մտա, դու ինձանից երզում ստար, որ ես ոչ ոքի կին չեմ առնի, բացի քեզանից, և ինձ մոտ հարձ չեմ վերցնի ո՛չ հարեշուհու, ո՛չ րյուզանդուհու, ո՛չ էլ որևէ ուրիշ ստրկուհու, և ո՛չ մի գիշեր քեզանից հեռու չեմ անցկացնի, բայց ցավն այն է, որ դու անպատուղ ես ու քեզ հետ ապրելը նույնն է, թե բարի հետ ապրել»։— «Թո՞ղ ալլահի անունը ինձ վրա լինի,— բացականչեց վաճառականի կինը։— Հիրավի, չի՞նե լը քեզանից է, և ոչ թե ինձանից, որովհետև քո սերմը նոսր է»։— «Իսկ ի՞նչ է լինում նրան, ում սերմը նոսր է»,— հարցրեց վաճառականը։ Եվ նրա կինն ասաց. «Նա կանանց չի հղիացնում ու երեխա չի ունենում»։— «Իսկ ո՞րն է այն միջոցը, որը թանձրացնում է սերմը։ Ես կգտնեմ այն, միգուցե, իմ սերմը թանձրանա»։— «Դեղավաճառների մոտ փնտրիր»։

Եվ վաճառականը գիշերը քնեց ու առավոտյան զղջաց, որ կնոջը հանդիմանել է, իսկ կինն էլ զղջաց, որ մարդուն է հանդիմանել։ Եվ վաճառականը գնաց շուկա ու գտավ մի դեղավաճառի և նրան ասաց. «Խաղաղություն քեզ»։ Եվ դեղավաճառը պատասխանեց նրա ողջույնին, ու վաճառականը նրան հարցրեց. «Քեզ մոտ կա՞ որևէ բան, որ իմ սերմը թանձրացնի»։— «Ունեի, բայց սպառվեց, հարևանիս հարցրու»։— պատասխանեց դեղավաճառը։ Եվ վաճառականը ման էր դալիս ու հարցնում, մինչև որ բուլթրին հարցուփորձ արեց (իսկ նրանք ծիծաղում էին նրա վրա), իսկ հետո վերադարձավ իր խանութն ու տխուր-տրտում նստեց։

Իսկ շուկայում հաշիշամուլ մի մարդ կար՝ միջնորդների պետը, որ ափիոն էր ընդունում ու բարձ՝ և գործածում էր կանաչ հաշիշ, ու այդ պետին շեյխ Մուհամմեդ Սիմսիմ էին կոչում, և նա աղքատութեան մեջ էր ապրում։ Եվ ամեն օր նա սովորաբար գալիս էր այդ վաճառականի մոտ և ահա, սովորականի նման, նա եկավ ու ասաց. «Խաղաղություն քեզ»։ Եվ վաճառականը նրա ողջույնին բարկութեամբ պատասխանեց. «Ով տեր, ինչո՞ւ ես բարկացած»։ Եվ վաճառականը պատմեց այն ամե-

1 Բարշ — թմրագեղի տեսակ։

նի մասին, ինչ որ եղել էր իր և կնոջ միջև, ու ասաց. «Քառասուն տարի է ամուսնացած եմ, և կինս ինձանից ո՛չ տղա է բերել, ո՛չ էլ աղջիկ, և ինձ ասացին. «Նա շի հղիանում այն պատճառով, որ քո սերմը նոսր է»։ Եվ ես սկսեցի փնտրել որևէ բան, որով իմ սերմը թանձրացնել կարողանամ, բայց չգտա»։— «Մ՛ի տեր,— ասաց Մուհամմեդը,— ես ունեմ այն բանը, ինչով կարելի է թանձրացնել սերմը։ Ի՞նչ կտաս նրան, ով քո կնոջը հղիացնի քեզանից այն քառասուն տարիներից հետո, որ անցել են»։— «Եթե դու այդ անես, ես քեզ շնորհներ կանեմ ու բարիքներ»,— պատասխանեց վաճառականը։ Եվ Մուհամմեդն ասաց. «Մի դինար տուր ինձ»։— «Վերցրո՛ւ այս երկու դինարը»,— բացականչեց վաճառականը։ Եվ Մուհամմեդը վերցրեց դինարներն ու ասաց. «Տուր ինձ այդ ճենապակե ամանը»։ Եվ վաճառականն ամանը նրան տվեց, ու Մուհամմեդը գնաց դեղարույսերի առևտրականի մոտ և նրանից վերցրեց երկու ունցիա բյուզանդական մութարքար ու մի քիչ շինական քութեբա և դարչին ու մեխակ և հիլու կոճապղպեղ և սպիտակ պղպեղ ու յեռնային մողես, և ծեծեց այդ բոլորն ու ընտիր բուսական յուղով եփեց, Եվ նա վերցրեց նաև երեք ունցիա խունկի հատիկներ ու մի բաժակի շափ սևասոնիճ ու թրջեց և այդ բոլորից խմոր պատրաստեց բյուզանդական ճանճամեղրով ու ամանի մեջ լցնելով, վերադարձավ վաճառատեղանի մոտ ու տվեց նրան։

«Ահա թե ինչով կարելի է սերմը թանձրացնել,— ասաց նա վաճառականին։ Դու պետք է շատ կծու համեմունքներով պատրաստած ոչխարի ու աղավնու միս ուտելուց հետո թիակի ծայրով ուտես այս խմորը, հետո ընթրես ու վրայից մաքուր շաքարի շարբաթ խմես»։

Եվ վաճառականը կարգադրեց այդ բոլորը բերել և ոչխարի մսի ու աղավնու հետ դրանք կնոջն ուղարկեց ու պատվիրեց նրան ասել. «Լավ պատրաստիր սրանք, ու վերցրու սերմ թանձրացնող նյութն ու քեզ մոտ պահիր, մինչև որ այն ինձ հարկավոր լինի ու ես պահանջեմ քեզնից»։

Եվ վաճառականի կինն այնպես արեց, ինչպես նա պատվիրել էր, և ուտելիքը նրա առջև դրեց, ու վաճառականը կերավ և պահանջեց այն ամանն ու կերավ դրա մեջ եղածից և դա դուր եկավ իրեն, ու նա մնացորդն էլ կերավ, ապա կենակցեց կնոջ հետ, և կինը հղիացավ այդ գիշեր։

Եվ կինն անցկացրեց առաջին ամիսը, և երկրորդը, և երրորդը, և արյունահոսությունը դադարել էր ու էլ արյուն չէր գալիս, և վաճառականի կինն իմացավ, որ հղիացել է, և նրա օրերը մինչև վերջ ան-

ցան, ու նրան երկունքի ցավերը բռնեցին, ու նա ճիշեր արձակեց, և տատմերը շատ շարշարվեց ծնունդի ժամանակ:

Եվ տատմերը պահպանեց նորածինն հանուն Մուհամմեդի ու Ալիի, և ասաց. «Ալլահը մեծ է», — ու նրա ականջին ազան¹ երգեց, ապա փաթաթեց մանկանը և մորը հանձնեց, ու մայրը կուրծք տվեց և սկսեց սնել նրան, ու մանուկը ծծեց ու կշտացավ ու քնեց: Եվ տատմերը երեք օր մնաց նրանց մոտ, մինչև մամունիա² ու հալվա պատրաստեցին, ու յոթերորդ օրը բաժանեցին: Այնուհետև աղ ցանեցին, ու վաճառականը եկավ ու շնորհավորեց կնոջը՝ բարեհաջող ծնունդի առթիվ և հարցրեց. «Ո՞ր է ալլահի գրավականը»: Եվ կինը նրան հանձնեց հաղվագյուտ գեղեցկությամբ նորածինն՝ մշտնջենական նախախնամության արարածին: Եվ նա յոթ օրական էր, բայց ով տեսնում էր, կարծում էր, թե արդեն մեկ տարեկան է:

Եվ վաճառականը նայեց մանկան դեմքին ու փայլուն լուսին տեսավ (իսկ նրա երկու այտին էլ խալ կար) և կնոջը հարցրեց. «Անունը ի՞նչ ես դրել»: Իսկ նա պատասխանեց. «Եթե աղջիկ լիներ, ես անուն կդնեի, բայց տղա է, և ոչ ոք անուն չի դնի, բացի քեզանից»: Եվ մարդիկ այն ժամանակ իրենց որդիներին անուններ էին դնում ըստ նախանշանակի:

Եվ, ահա, մինչ նրանք խորհրդակցում էին անվան մասին, ինչ-որ մեկն իր ընկերոջն ասաց. «Ո՞վ տեր իմ, Ալա էդ-գին», և վաճառականը կնոջն ասաց. «Ալա էդ-գին Աբու-շ-Շամաթ³ կոչենք նրան»: Եվ նա ստնտուներ ու դայակներ վարձեց մանկան համար, և մանուկը երկու տարի կաթ կերավ, իսկ հետո ծծից կտրեցին նրան, ու նա սկսեց աճել և ամրանալ ու քայլել: Իսկ երբ նա յոթ տարեկան դարձավ, նրան նկուղը տարան՝ շար աչքից վախենալով: Եվ վաճառականն ասաց. «Ես նկուղից չպետք է դուրս գա, մինչև մորուքը չբուսնի»: Եվ նա տղայի համար ստրկուհի և ստրուկ նշանակեց, և ստրկուհին նրա սնդանն էր պատրաստում, իսկ ստրուկը կերակուրն էր տանում:

Իսկ հետո վաճառականը կատարեց մանկան թլպատումը ու մեծ խնջույք սարքեց և դրանից հետո ուսուցիչ հրավիրեց, որպեսզի ուսուցանի նրան, և սա երեսույթն գրել, Ղուրան կարդալ և գիտություններ սովորեցրեց, մինչև որ նա հմուտ ու գիտուն դարձավ:

Եվ այնպես պատահեց, որ մի օր ստրուկն Ալա էդ-գինին ուտելիք բերեց սփռոցով ու նկուղի դուռը բաց թողեց, և այնժամ Ալա էդ-գինը

1 Ազան — աղոթի կաշանք մուսուլմանների մոտ:

2 Մամունիա — բաղբի խմորից պատրաստած կարկանդակ:

3 Աբու-շ-Շամաթ — բառացի՝ խալ ունեցող:

նկուղից դուրս եկավ ու մոր մոտ գնաց (իսկ նրա մոտ նշանավոր կանանց հավաքույթ էր): Եվ երբ կանայք խոսում էին նրա մոր հետ, հանկարծ նրանց մոտ մտավ այդ երեխան, որն իր ծայրահեղ գեղեցկության պատճառով հարբած մամլուքի¹ էր նման: Եվ, նրան տեսնելով, կանայք ծածկեցին իրենց երեսներն ու նրա մորն ասացին. «Ալլահը ընդ հատուցի, ո՞վ դու այսինչ... ինչպե՞ս ես դու այդ օտար մամլուքին մեզ մոտ բերում: Մի՞թե չգիտես, որ ամոթը հավատի արտահայտությունն է»:— «Ալլահից երկյուղ ունեցե՛ք,— բացականչեց տղայի մայրը:— Սա իմ երեխան է ու իմ հոգու պտուղը: Սա վաճառականների ավագ Շեմս էդ-դինի տղան է՝ ստնտուի սանը, մանյակով զարդարված ու շոր փափուկ հացով սնված»:— «Մեր կյանքում մենք քեզ մոտ երեխա չենք տեսել»,— ասացին կանայք: Եվ Ալա էդ-դինի մայրը պատասխանեց. «Սրա հայրը վախենում էր շար աչքից ու կարգադրել է դաստիարակել սրան նկուղում՝ գետնահարկում: Գուցե ներքինին նկուղի դուռը բաց է թողել, և սա դուրս է եկել այնտեղից, մենք չէինք ուզում, որ սա նկուղից դուրս գա մինչև մորուքը բուսնելը»:

Եվ կանայք շնորհավորեցին Ալա էդ-դինի մորը, իսկ տղան կանանց մոտից դուրս եկավ, գնաց բակ ու տան շրջակայքը, ապա բարձրացավ տաղավար ու նստեց այնտեղ:

Եվ երբ նա նստած էր, հանկարծ եկան ստրուկները, նրա հոր ջորին բերելով, և Ալա էդ-դինը նրանց հարցրեց. «Որտե՞ղ էր այդ ջորին»: Եվ ստրուկները ասացին. «Մենք նրանով ապրանք էինք տարել քո հոր խանութը (իսկ հայրդ ջորի նստած գնաց) ու հետ բերեցինք»:— «Ի՞նչ արհեստ է բանեցնում հայրս»,— հարցրեց Ալա էդ-դինը:— «Քո հայրը եգիպտական երկրի վաճառականների ավագն է և նստակյաց արաբների սուլթանը»,— ասացին նրան:

Եվ Ալա էդ-դինը գնաց մոր մոտ ու նրան հարցրեց. «Ո՞վ մայրիկ, ի՞նչ արհեստի տեր է հայրս»:— «Ով տղաս,— պատասխանեց մայրը,— քո հայրը վաճառական է և եգիպտական երկրի վաճառականների ավագըն է ու նստակյաց արաբների սուլթանը, և նրա ստրուկներն առևտրի ժամանակ նրա հետ խորհրդակցում են միայն այն ապրանքների վերաբերյալ, որոնք առնվազն հազար դինար արժեն, իսկ ինը հարյուր կամ պակաս արժեք ունեցող ապրանքները վաճառում են իրենք, առանց նրա հետ խորհուրդ անելու: Եվ օտար երկրներից մի ապրանք չի գալիս, քիչ լինի, թե շատ, որ քո հոր ձեռքը չըսկնի, և նա տնօրինում է

¹ Մամլուք— ստրուկ:

դրանք այնպես, ինչպես ուզում է, և օտար երկրներ տարվող ապրանք չի բարձրում, առանց քո հոր ձեռքն ընկնելու: Եվ մեծ ալլահը տվել է քո հորը, ո՛վ տղաս, մեծամեծ գումարներ, որ հաշվել չի լինի»:— «Ո՛վ մայրիկ,— ասաց Ալա էդ-դինը,— փառք ալլահին, որ ես նստակյաց արաբների սուլթանի տղան եմ, և որ հայրս վաճառականների ավազն է: Բայց ինչո՞ւ, ո՛վ մայրիկ, դաք ինձ նկուղում եք նստեցնում ու այնտեղ փակված եք պահում»:— «Ո՛վ տղաս, մենք քեզ նկուղում ենք պահում միայն մարդկանց շար աչքից վախենալով. չէ՞ որ աչքով տալը ճիշտ բան է, և գերեզմանների բնակիչների մեծ մասը շար աչքից է մեռել»,— պատասխանեց նրան մայրը:

Եվ Ալա էդ-դինն ասաց. «Ո՛վ մայրիկ, իսկ ո՞ւր կարելի է փախել բախտից: Զգուշութունը նախասահմանությանը չի խանգարում, և նրանից, ինչ որ գրված է, թաքստոց չես գտնի: Նա, ով տարել է իմ պապին, ինձ ու իմ հորն էլ չի թողնելու, եթե հայրս այսօր ապրում է, ապա վաղը չի ապրի: Եվ երբ իմ հայրը մեռնի, և ես գամ ու ասեմ. «Ես Ալա էդ-դինն եմ՝ վաճառական Շեմս էդ-դինի որդին»,— մարդկանցից ոչ մեկը ինձ չի հավատա, և ծերերը կասեն. «Մեր կյանքում Շեմս էդ-դինի ո՛չ տղային ենք տեսել, ո՛չ էլ աղջկան»: Եվ գանձատնից կգան ու հորս փողը կվերցնեն: Թող ալլահը ողորմի նրան, ով ասել է. «Մարդը կմեռնի, ու նրա փողերը կգնան, և մարդկանցից ամենազգվելին կախրանա նրա կանանց»: Իսկ դու, ո՛վ մայրիկ, խոսիր հորս հետ, որպեսզի նա ինձ իր հետ շուկա տանի ու ինձ համար խանութ բացի: Ես խանութում կնստեմ, և նա ինձ կսովորեցնի առնել ու ծախել, վերցնել ու տալ»: Եվ Ալա էդ-դինի մայրն ասաց. «Ո՛վ տղաս, երբ հայրդ գա, ես նրան այդ կպատմեմ»:

Եվ երբ վաճառականը տուն վերադարձավ, տեսավ, որ իր տղան՝ Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթը նստել է մոր կողքին, ու հարցրեց կնոջը. «Ինչո՞ւ ես նրան նկուղից հանել»: Եվ կինն ասաց նրան. «Ո՛վ իմ հորեղբորորդի, ես շեմ նրան դուրս բերել, այլ ծառաները մոռացել են նկուղը փակել ու գուռը բաց են թողել: Եվ ես նստած էի (իսկ ինձ մոտ էին հավաքվել նշանավոր կանայք), ու հանկարծ նա ներս մտավ»: Եվ նա ամուսնուն պատմեց, թե ինչ է ասել նրա տղան: Եվ Շեմս էդ-դինը նրան ասաց. «Ո՛վ տղաս, վաղը, եթե մեծ ալլահը կամենա, ես քեզ շուկա կտանեմ: Միայն թե, տղաս, շուկաներում ու խանութներում նստելու համար վայելչութուն ու կատարելություն է հարկավոր բոլոր հանգամանքներում»:

Եվ Ալա էդ-դինն ամբողջ գիշերն անցկացրեց իբ հար խոսքերից

ուրախացած, իսկ երբ առավոտը բացվեց, Շեմս էդ-գինն իր տղային բաղնիք տարա՞վ ու մեծամեծ գումարների արժեցող զգեստներ հագցրեց, և նախաճաշելուց ու թեյ խմելուց հետո նստեց իր ջորին և որդուն էլ նստեցրեց իր հետևը ու մեկնեց շուկա:

Եվ շուկայի մարդիկ տեսան, որ գալիս է վաճառականների ավագը, իսկ նրա հետևը նստած էր արական ունի մի երեխա, որը նման էր տասնչորսերորդ գիշերվա լուսնի, և մեկն իր ընկերոջն ասաց. «Նայիր այդ տղային, որը վաճառականների ավագի հետ է: Մենք ավագի մասին լավ էինք մտածում, իսկ նա, ասես, պրաս լինի, ինքն ալիհեր է, իսկ սիրտը՝ կանաչ»:

Եվ շեյխ Մուհամմեդ Սիմսիմը՝ վերը հիշատակված պետը, վաճառականներին ասաց. «Ո՞վ վաճառականներ, մենք այլևս համաձայն չենք, որ նա մեր ավագը լինի: Երբե՛ք»:

Իսկ, սովորաբար, երբ վաճառականների ավագը տնից գալիս ու նստում էր խանութում, գալիս էր շուկայի պետն ու վաճառականների համար ֆաթիհան¹ կարգում, ու նրանք վեր էին կենում ու գնում վաճառականների ավագի մոտ և ֆաթիհան կարգում ու բարի լույս մաղթում, իսկ հետո նրանցից ամեն մեկն իր խանութն էր գնում: Բայց այդ օրը, երբ վաճառականների ավագը նստեց, ինչպես միշտ, իր խանութում, վաճառականները սովորականի նման նրա մոտ չգնացին:

«Ինչո՞ւ վաճառականները սովորականի նման չեն հավաքվում», — ձայն տվեց նա պետին: Եվ պետը պատասխանեց. «Ես չեմ սիրում խոսվությունների մասին մատնել, բայց վաճառականները որոշել են հեռացնել քեզ ավագի պաշտոնից ու քեզ համար ֆաթիհան չկարդալ»: — «Իսկ ի՞նչն է դրա պատճառը», — հարցրեց Շեմս էդ-գինը: Եվ պետն ասաց. «Ի՞նչ տղա է, որ նստել է կողքիդ, չէ՞ որ դու ծեր ես ու վաճառականների գլխավորը: Ո՞վ է այդ երեխան՝ քո ստրո՞ւկն է, թե կնոջրդ ազգականը: Ինձ թվում է, թե դու նրան սիրում ես ու հակում ունես այդ տղայի նկատմամբ»:

Եվ Շեմս էդ-գինը գոռաց նրա վրա ու ասաց. «Լռի՛ր, թող ալլահն այլանդակի՛ քեզ ու քո հատկությունները: Սա իմ տղան է»: — «Մեր կյանքում չենք տեսել, որ դու տղա ունես», — բացականչեց Մուհամմեդ Սիմսիմը: Եվ վաճառականն ասաց. «Երբ դու ինձ համար սերմը թանձրացնող դեղը բերեցիր, կինս հղիացավ ու այս տղային բերեց, բայց

¹ Ֆաթիհա (բացող) — Ղուրանի առաջին գլխի վերնագիրը, մահմեդականներն ամեն գործ սկսելուց առաջ կարդում են այդ գլուխը:

չար աչքից վախենալով, ես նրան դաստիարակում էի դետնահարկի եկուղում և ուզում էի, որ նա նկուղից դուրս չգա, մինչև որ կարողանա իր ձեռքով բռնել սեփական մորուքը: Բայց նրա մայրը շհամաձայնեց, ուսա էլ պահանջեց, որ ես իր համար խանութ բացեմ ու ապրանքներ դնեմ և առնել ու ծախել սովորեցնեմ»:

Եվ պետք զնաց վաճառականների մոտ ու նրանց այդ գործի իսկությունը հայտնեց, և նրանք բոլորը վեր կացան ու պետի հետ գնացին վաճառականների ավագի մոտ և, նրա առջև կանգնելով, Ֆաթիհան կարդացին ու շնորհավորեցին որդի ունենալու համար:

«Թող մեր տերը պահպանի՛ արմատն ու ոստը,— ասացին նրանք,— բայց երբ մեզանում աղքատը տղա կամ աղջիկ է ունենում, նա իր բարեկամների համար մի սկուտեղ փլավ է եփում ու հրավիրում է ազգականներին ու ծանոթներին, իսկ դու այդ շես արել»:— «Դա իմ պարտքն է, և մեր հանդիպումը պարտեզում կլինի»,— պատասխանեց վաճառականը:

Եվ երբ առավոտը բացվեց, նա ծառային ուղարկեց այն տաղավարն ու տունը, որ պարտեզում էին, ու հրամայեց գորգեր փոել ու ճաշի պատրաստություն տեսնել և ուղարկեց ոչխարներ, յուղ և այլ բաներ, սր անհրաժեշտ էին ըստ հանգամանքի, ու երկու սեղան զցել տվեց. մի սեղանը՝ տանը և մյուսը՝ տաղավարում:

Եվ պատրաստվեց վաճառական Շեմս էդ-դինը, և պատրաստվեց նրա որդի Ալա էդ-դինը, և հայրը նրան ասաց. «Մ՛վ որգիս, երբ ալեհեր մարդ մտնի, ես կընդունեմ նրան ու կնստեցնեմ տանը գտնվող սեղանի մոտ, իսկ դու, զավակս, երբ կտեսնես, որ անմորուս տղա է մտնում, վերցրու ու տար տաղավար ու սեղան նստեցրու»:— «Ինչո՞ւ, ո՞վ հայրիկ,— հարցրեց Ալա էդ-դինը:— Ինչո՞ւ դու երկու սեղան ես զցում, մեկը՝ մեծերի, մեկը՝ փոքրերի համար»:— «Մ՛վ զավակս, անմորուսը կամաշի տղամարդկանց մոտ ուտել»,— պատասխանեց Շեմս էդ-դինը, և տղան հավանություն տվեց դրան:

Եվ երբ վաճառականներն սկսեցին գալ, Շեմս էդ-դինը դիմավորում էր տղամարդկանց ու նրանց հրավիրում տուն, իսկ նրա որդի Ալա էդ-դինը դիմավորում էր տղաներին ու նրանց նստեցնում էր տաղավարում: Իսկ հետո մատուցեցին ուտելիքները և հյուրերն սկսեցին ուտել ու խմել, ուրախանալ և զվարճանալ, ու խմիչքներ խմեցին ու խունկ վառեցին, և ծերունիները նստեցին ու սկսեցին խոսել գիտությունների ու ավանդությունների մասին:

Եվ նրանց մեջ մի վաճառական կար, Մահմուդ էլ-Բալխի անունով,

արտաքուստ մահմեդական, ներքուստ՝ մոզ, որ զզվելի բաների էր ձրգտում ու տղաներ էր սիրում: Նա Ալա էդ-դինին նայեց մի այնպիսի հայացքով, որ բյուրավոր հառաչանքների տեղիք տվեց, և սատանան նրա աչքում տղային մարգարիտներով զարդարեց, ու վաճառականին կիրքը տիրեց, հուզումն ու ձգտումը, ու սերը նրա սիրտն ընկավ (իսկ այդ վաճառականը, որին Մահմուդ էլ-Բալխի էին կոչում, Ալա էդ-դինի հորից կտորեղեն ու զանազան ապրանքներ էր վերցնում):

Եվ Մահմուդ էլ-Բալխին վեր կացավ ման գալու ու գնաց տղաների մոտ, և նրանք ընդառաջ ելան նրան: Իսկ Ալա էդ-դինին խիստ նեղութուն էր տալիս ջուր թափելու կարիքը, և նա շհամբերեց ու վեր կացավ ու գնաց պետքը կատարելու, և այնժամ վաճառական Մահմուդը դարձավ տղաներին ու ասաց. «Եթե դուք Ալա էդ-դինին համոզեք, որ ինձ հետ ճանապարհորդելու մեկնի, ես ամեն մեկիդ մեծ գումար արժեցող մեկական հագուստ կտամ», — ապա նա հեռացավ նրանց մտից ու գնաց տուն՝ տղամարդկանց մոտ: Եվ մինչ տղաները նստած էին, հանկարծ ներս մտավ Ալա էդ-դինը: Եվ նրանք վեր կացան ու դիմաւորեցին նրան ու նստեցրին իրենց մեջ, բարձր տեղում, և տղաներից մեկն իր ընկերոջն ասաց. «Ո՞վ Սիդի Հասան, պատմի՛ր ինձ, թե որտեղի՞ց հավաքվեց քեզ մոտ քո փողը, որով առևտուր ես անում»:

Եվ Հասանը պատասխանեց. «Երբ ես մեծացա ու շափահաս դարձա ու հասա տղամարդու հասակին, հորս ասացի. «Ո՞վ հայրիկ, ապրանք պատրաստիր ինձ համար», ու նա ինձ պատասխանեց. «Ո՞վ զավակս, ես ոչինչ չունեմ, բայց գնա վաճառականներից մեկից փող վերցրու և առևտուր սկսիր դրանով, ու սովորիր առնել ու ծախել, վերցնել ու տալ»:

Եվ ես գնացի վաճառականներից մեկի մոտ ու նրանից հազար դինար պարտք վերցրի և դրանով կտորեղեն գնեցի ու Դամասկոս մեկնեցի: Եվ կրկնակին շահեցի ու Դամասկոսում ապրանքներ գնեցի ու Հալեպ գնացի ու վաճառեցի դրանք, ու փողս կրկնակի շափով հետ բերեցի, իսկ հետո ես Հալեպում ապրանքներ գնեցի ու Բաղդադ գնացի ու վաճառեցի դրանք ու կրկնակին վաստակեցի, և այդպես առա ու ծախեցի այնքան ժամանակ, մինչև որ մոտ տասը հազար դինարի շափ հավաքվեց մոտս»:

Եվ տղաներից յուրաքանչյուրն իր ընկերոջը նույնն էր ասում, մինչև որ հերթը հասավ Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթին ու հարկ եղավ, որ նա խոսի: Եվ նրան ասացին. «Իսկ գո՞ւ, ով Սիդի Ալա էդ-դին»: — «Ինձ նկուղում են դաստիարակել, գետնահարկում, և ես այնտեղից այո ուրբաթ եմ գուրս եկել միայն, ու խանութ եմ գնում և տուն վերադառ-

նում»։— «Դու սովորել ես տանը նստել ու չգիտես ճանապարհորդութիւն քաղցրութիւնը, և ճանապարհորդութիւնը տղամարդկանց գործ է»,— ասացին նրան։ Եվ նա պատասխանեց. «Ես ճանապարհորդել չեմ ուզում և արժեք չեմ տալիս հաճույքներին»։

Եվ ինչ-որ մեկը իր ընկերոջն ասաց. «Նա ձկան նման է, հենց որ ջրից դուրս գա, կսատկի»։— «Ո՞վ Ալա էդ-դին,— ասացին նրան,— վաճառականների զավակների պարծանքը հենց այն է, որ ճանապարհորդում են շահի համար»։ Եվ Ալա էդ-դինին զայրույթը տիրեց, ու նա դուրս եկավ տղաների մոտից արտասովալից աչքերով ու վշտագին հոգով և իր շորին հեծնելով, տուն գնաց։

Եվ մայրը տեսավ, որ նա խիստ զայրացած է, արցունքոտ աչքերով, ու հարցրեց. «Ինչո՞ւ ես լալիս, ո՞վ զավակս»։ Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Բոլոր վաճառականների տղաներն ինձ ամոթանք էին տալիս ու ասում. «Վաճառականների տղաների պարծանքը շահի համար ճանապարհորդելն է»։— «Ո՞վ զավակս,— հարցրեց նրան մայրը,— մի՞թե գու ուզում ես ճանապարհորդել»։ Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Այո՞»։ Եվ այնժամ մայրը ասաց. «Իսկ ո՞ր քաղաքը պիտի մեկնես»։— «Բաղդադ քաղաքը,— պատասխանեց Ալա էդ-դինը,— այնտեղ մարդ իր ունեցածի կրկնակին է վաստակում»։

Եվ Ալա էդ-դինի մայրն ասաց. «Ո՞վ զավակս, քո հայրը շատ փող ունի, իսկ թե նա իր փողով քեզ համար ապրանք չպատրաստի, ապա ես իմ փողով քեզ համար ապրանք կառնեմ»։— «Լավագույն բարիքը անմիջապես կատարվող բարիքն է, և եթե դու շնորհ պիտի անես, ապա հենց հիմա դրա ժամանակն է»,— ասաց Ալա էդ-դինը։ Եվ նրա մայրը կանչեց ստրուկներին և ուղարկեց նրանց մոտ, ովքեր կտորեղենն էին կապում, և նրանք Ալա էդ-դինի համար տասը հակ կտորեղեն կապեցին։

Ահա թե ինչ արեց նրա մայրը, իսկ ինչ վերաբերում է նրա հորը, ապա նա աչք ածեց ու պարտեզում չգտավ իր որդի Ալա էդ-դինին ու հարցրեց նրա մասին, և նրան ասացին, որ Ալա էդ-դինը շորի է հեծել ու տուն գնացել։

Եվ այնժամ վաճառականը շորի հեծավ ու նրա հետևից գնաց, իսկ իր տունը մտնելով, տեսավ կապած հակերը և հարցրեց դրանց մասին։ Եվ կինը պատմեց նրան, թե ինչ է տեղի ունեցել վաճառականների տղաների ու իրենց որդի Ալա էդ-դինի միջև։ «Ո՞վ տղաս,— ասաց վաճառականը,— թող խաբի ալլահը օտարութիւն մեջ գտնվողին. չէ՞ որ ալլահի առաքյալը ասել է,— թող ալլահը նրան օրհնի ու ողջ պահի,— «Մարգու երջանկութիւնն այն է, որ իր երկրում բախտ ունենա», իսկ հենքն

ասել են. «Հրաժարվի՛ր ճանապարհորդութունից, եթե գա նույնիսկ մեկ մղոն լինի»: Դու հաստատ ես որոշել ճանապարհորդել և հետ շե՛ս կանգնի այդ մտքից»,— հարցրեց հետո նա իր տղային: Եվ տղան պատասխանեց նրան. «Ես անպայման Բաղդադ պիտի գնամ ապրանքներով, այլապես կհանեմ զգեստներս ու կհագնեմ դերվիշի հագուստ ու աշխարհով մեկ շրջելու կգնամ»:— «Ես կարիքի մեջ չեմ և չե՛մ հանդուրժի զրկանքներ, ընգհակառակը, ես շատ փող ունեմ,— ասաց նրա հայրը և նրան ցույց տվեց իր մոտ եղած ունեցվածքն ու ապրանքները և կտորեղենը:— Ես բոլոր քաղաքների համար համապատասխան կտորեղեն ունեմ ու այլ ապրանքներ,— ասաց նա այնուհետև և, ի միջի այլոց, նրան ցույց տվեց քառասուն կապված հակ, ու ամեն մի հակի վրա գրված էր. «Մրա գինը հազար դինար է»:— «Ո՛վ զավակս,— ասաց նա,— վերցրու այս քառասուն հակը և այն տասը, որ մորդ մոտ են, ու մեկնիր մեծ ալլահի պահպանությամբ, միայն թե, զավակս, ես քո ճանապարհին եղած մի թավուտից վախենում եմ քեզ համար, դա Առյուծների թավուտ է կոչվում, ինչպես նաև մի հովտից, որ Շների հովիտ է կոչվում. այնտեղ հոգիներ են կործանվում առանց զիջողության»:— «Իսկ ինչո՞ւ, ո՞վ հայրիկ»,— հարցրեց Ալա էդ-դինը, և հայրը պատասխանեց. «Ճանապարհը կտրող մի բեդվինի պատճառով, որին Աշլան են անվանում»:— «Իմ բախտն ալլահից է. և եթե նա ինձ համար բաժին ունի, ես շարիքի չեմ հանդիպի»,— պատասխանեց Ալա էդ-դինը:

Իսկ հետո Ալա էդ-դինն ու հայրը ջորի հեծան ու գնացին բեռնակիր անասունների շուկա, և հանկարծ ուղտապաններից մեկն իջավ իր ջորուց ու համբուրեց վաճառականների ավագի ձեռքը, ասելով. «Ալլահը վկա, վաղուց է, ո՞վ տեր, որ դու մեզ չես վարձել առևտրական գործերի համար»:— «Ամեն ժամանակ իր իշխանութունն ու իր մարդիկ ունի,— պատասխանեց Շեմս էդ-դինը,— և թող ալլահը ողորմի նրան, ով ասել է.

Այս ծերունին ման է գալիս երկրե երկիր անդադար,
 Մեկնիրին է հասնում, ահա, ճերմակ մորուքն իր երկար,
 Հարցրի նրան, «Ինչո՞ւ ճկել ես քո մեջքը գիմացկուն»,—
 Պատասխանեց գիմելով ինձ խոսքերով այս իմաստուն.
 «Երիտասարդ- շահել կյանքս կորցրել եմ ես հողում,
 և կուսցած՝ հիմա գոնեի ու հետ առնել եմ ուզում»:

Պապ վերջացնելով այդ բեյթերը, նա ասաց. «Ո՛վ պետ, ուրիշ մարդ չի ուզում այդ ճանապարհորդութունը, եթե ոչ իմ տղան»: Եվ ուղտապանը պատասխանեց. «Թող ալլահը պահպանի նրան քեզ համար»:

Իսկ հետո վաճառականների ավագը դաշն կնքեց իր որդու և ուղտապանի միջև ու ուղտապանին իր որդու հոր տեղ նշանակեց և հանձնարարեց հող տանել նրա մասին ու ասաց. «Վերցրու այս հարյուր գինարը քո ծառայութիւնների համար»:

Եվ վաճառականների ավագը վաթսուն շորի գնեց, և մոմ ու ծածկոց՝ Աբդ էլ-Քադիր Գիլանցու՝ համար, և Ալա էդ-դինին ասաց. «Ո՛վ տղաս, այս մարդն իմ բացակայութեան ժամանակ քո հայրը կլինի իմ փոխարեն և ամեն բանում, ինչ որ կասի, հնազանդվի՛ր նրան»:

Եվ այդ երեկո Ղուրանի ընթերցում կատարեցին ու տոն՝ ի պատիվ Աբդ էլ-Քադիր Գիլանցու, իսկ երբ առավոտը բացվեց, վաճառականների ավագն իր որդուն տասը հազար դինար տվեց ու ասաց. «Երբ դու Բաղդադ մտնես ու տեսնես, որ կտորեղենի գործը լավ է գնում, վաճառիր դրանք, իսկ եթե տեսնես, որ առևտուրը լավ չէ, այս փողերը ծախսիր»:

Եվ ապա բեռնեցին շորիները ու հրաժեշտ տվեցին իրար, և վաճառականի որդին ճամփա ընկավ ու գուրս եկավ քաղաքից:

Իսկ Մահմուդ էլ-Բալխին նույնպես պատրաստվում էր Բաղդադի կողմը գնալ, և նա դուրս բերեց իր հակերը, վրաններ խփեց քաղաքից գուրս ու ինքն իրեն ասաց. «Այս տղայից դու հաճույք կստանաս միայն մենութեան մեջ, քանի որ այնտեղ ո՛չ մատնիչները, ո՛չ էլ լրտեսները չեն խանգարի քեզ»:

Իսկ տղայի հայրը Մահմուդ էլ-Բալխիից հազար դինար ստանալիք ունենալով՝ մի գործարքի մնացորդը, և Շեմս-էդ-դինը գնաց նրա մոտ ու հրաժեշտ տվեց և ասաց նրան. «Այդ հազար դինարն իմ որդի Ալա էդ-դինին տուր»: Եվ նա հանձնարարեց Մահմուդին հոգալ իր որդու մասին ու ասաց. «Նա քեզ որդու տեղ թող լինի»:

Եվ Ալա էդ-դինը հանդիպեց Մահմուդ էլ-Բալխիին, և Մահմուդ էլ-Բալխին վեր կացավ ու Ալա էդ-դինի խոհարարին հրամայեց ոչինչ չպատրաստել ու սկսեց Ալա էդ-դինին ու նրա մարդկանց ուտելիքներ ու խմիչքներ առաջարկել, իսկ հետո նրանք ճանապարհ ընկան:

Իսկ վաճառական Մահմուդ էլ-Բալխին ուներ շորա տուն, մեկը՝ Կահիրեում, մեկը՝ Դամասկոսում, մեկը՝ Հալեպում և մեկը՝ Բաղդա-

1 Աբդ էլ-Քադիր Գիլանցի — միջնադարյան քարոզիչ ու միստիկ: Մածկոցը նրա դերեգմանի վրա փակու համար էր:

դում: Եվ ճանապարհորդները գնացին-գնացին դաշտերով ու անապատ-ներով, մինչև մոտեցան Դամասկոսին:

Եվ երբ Մահմուդ էլ-Բալխին իր ստրուկին ուղարկեց Ալա էդ-դինի մոտ, ու նա տեսավ, որ երիտասարդը նստել ու կարդում է, մոտեցավ ու համբուրեց նրա ձեռքը: «Ի՞նչ ես խնդրում»,— հարցրեց Ալա էդ դինը: Եվ ստրուկը պատասխանեց. «Իմ տերը քեզ ողջունում է ու կանչում է իր տուն՝ խնջույքի»:— «Ծս խորհուրդ կանեմ իմ հոր՝ ուղտապան Քեմալ էդ-դինի հետ»,— ասաց Ալա էդ-դինը: Եվ երբ նա խորհրդակցում էր նրա հետ, թե պե՞տք է գնա արդյոք, ուղտապանն ասաց. «Մի գնա»:

Իսկ հետո նրանք հեռացան Դամասկոսից ու մտան Հալեպ, և Մահմուդ էլ-Բալխին խնջույք սարքեց ու մարդ ուղարկեց Ալա էդ-դինին կանչելու, բայց երիտասարդը խորհուրդ արեց պետի հետ, և նա դարձյալ արգելեց:

Եվ նրանք դուրս եկան Հալեպից ու այնքան գնացին, որ մինչև Բաղդադ մեկ օրվա ճանապարհ մնաց, և Մահմուդ էլ-Բալխին խնջույք սարքեց ու մարդ ուղարկեց Ալա էդ-դինին հրավիրելու:

Եվ երիտասարդը խորհուրդ արեց պետի հետ, և նա կրկին արգելեց նրան, բայց Ալա էդ-դինը բացականչեց. «Ծս անպայման պիտի գնամ»:

Եվ նա վեր կացավ ու, սուրը հագուստի տակից կապելով, գնաց Մահմուդ էլ-Բալխի մոտ, և սա ընդառաջ ելավ ու ողջունեց նրան:

Եվ նա հրամայեց փառահեղ սփռոց մատուցել՝ ուտելիքներով, ու նրանք կերան ու խմեցին ու ձեռքները լվացին: Եվ Մահմուդ էլ-Բալխին թեքվեց Ալա էդ-դինի կողմը՝ նրանից համբույր առնելու, բայց Ալա էդ-դինը ձեռքը դեմ արեց համբույրին ու հարցրեց. «Ի՞նչ ես ուզում անել»:— «Ծս քեզ կանչել եմ,— պատասխանեց Մահմուդը,— և ուզում եմ հանձնել վայելել քեզ հետ այստեղ, և մենք կմեկնենք ասացողի խոսքերը»:

Ճնարավոր բան է արդյոք, որ մեզ մոտ գաս

Ժամանակով այնքան շնչին, կարճաակ,

Որ լոկ մի այծ կթելուն իսկ, կամ դեթ մի ձու

Խաշելու էլ բավական չէ արդարև:

Կերա՞ր, արդյոք, մեզ հետ այնքան, որքան մեզ մոտ

Հաց կզանես ամբարներում լեփ-լիցուն,

Առա՞ր քեզ հետ դու այնքան փող, որքան տանել

Կարող ես դու և որքան սիրտդ է ուզում:

Դու կարող ես տանել քեզ հետ, ինչ որ ուզես,

Չէ՞ որ դժգար չի էլ լինի քեզ համար,
Քեկուզ մի ափ, թեկուզ մի բուռ, կամ թե որքան
Ձույզ ձեռքերով դու վերցնելու ուժ գտար»:

Եվ ապա Մահմուդ էլ-Բալխին ուզեց բռնութիւն գործադրել Ալա էդ-դինի վրա, և Ալա էդ-դինը վեր կացավ ու սուրը մերկացրեց և գոչեց. «Ամո՛թ քո ճերմակ մազերին: Դու ալլահից շեռ վախենում, թեև ահեղ է նրա սլատիժը: Եվ թող ալլահը ողորմի նրան, ով ասել է.

Ճերմակ մազերդ զերժ պահիր գարշ բաներից՝ դրանք եղծող,
Չէ՞ որ ճերմակը շատ շուտ է վրան առնում ցեխ ու հող»:

Իսկ այդ բեյթն արտասանելուց հետո Ալա էդ-դինն ասաց Մահմուդ էլ-Բալխին. «Հիրավի, այս ապրանքը ալլահին է հանձնարարված, ու չի վաճառվում, և եթե ես այս ապրանքը ուրիշին ոսկով վաճառելու լինեի, քեզ արժաթով կտայի: Բայց, ալլահը վկա, ով գարշելի, ես երբեք այլևս քեզ չեմ ընկերանա»: Ապա Ալա էդ-դինը վերադարձավ Քեմալ էդ-դին պետի մոտ ու նրան ասաց. «Իսկապես, այդ մարդը փշացած է, և ես երբեք այլևս նրա հետ ընկերութիւն չեմ անի ու նրա հետ մի ճանապարհով չեմ գնա»:— «Ով տղաս,— պատասխանեց Քեմալ էդ-դինը,— ես քեզ շասացի՞ մի՞ գնա նրա մոտ: Բայց և այնպես, ով տղատ, եթե մենք նրանից բաժանվենք, մեզ կորուստ է սպառնում, թող ուրեմըն, որ մի քարավանում լինենք»:— «Ինձ համար անկարելի է նրա հետ ճանապարհին ուղեկից լինել»,— ասաց Ալա էդ-դինը, ապա բռնեց իր հակերն ու ճանապարհը շարունակեց նրանց հետ, ովքեր իր հետ էին:

Եվ նրանք գնացին-գնացին, մինչև իջան մի հովիտ, և Ալա էդ-դինն ուզեց կանգ առնել այդտեղ, բայց ուղտապանն ասաց. «Այստեղ կանգ չառնեք, շարունակեք գնալ ու արագացրեք ընթացքը: Գուցե, մենք Բաղդադ հասնենք նախքան դարպասները փակելը: Բաղդադի դարպասները միշտ փակում ու բացում են արևի հետ, վախենալով, որ քաղաքին ռաֆիդյանները¹ տիրեն և աստվածաբանական գրքերը Տիգրիսի մեջ թափեն»:— «Ապի՛ր,— պատասխանեց Ալա էդ-դինը,— ես ապրանք եմ վերցրել ու դեպի այս քաղաքն ուղևորվել ոչ թե առևտուր անելու, այլ օտար երկրներ տեսնելու համար»:— «Ով տղաս, մենք վախենում ենք քոչվորներից քեզ ու քո փողերի համար»,— ասաց ուղտապանը, և Ալա

1 Ռաֆիդյաններ — շիիթ ընդհանուր անունը կրող և իսլամի մյուս ուղղութիւնը՝ սուննիզմին, թշնամի հոսանքի մահմեդական ազանդներից մեկը:

էդ-դինը բացականչեց. «Ո՛վ մարդ, դու ծառա՞ ես, թե՞ քեզ պետք է ծառայեն, Ես Բաղդադ կմտնեմ ոչ ավելի շուտ, քան առավոտյան, որպեսզի Բաղդադի երիտասարդները տեսնեն իմ ապրանքներն ու ճանաչեն ինձ»:— «Արա, ինչպես ուզում ես, ես քեզ զգուշացրի, և դու ինքդ գիտես, թե որն է քո փրկութունը»,— ասաց պետը: Եվ Ալա էդ-դինը կարգադրեց հակերն իջեցնել ջորիներից, ու հակերն իջեցրին ու վրաններ խփեցին ու բոլորն իրենց տեղում մնացին մինչև կեսգիշեր:

Եվ Ալա էդ-դինը դուրս եկավ պետի համար ու տեսավ, որ հեռվում ինչ-որ բան է փայլում ու հարցրեց ուղտապանին. «Ո՛վ պետ, այն ի՞նչ է, որ փայլում է»:

Եվ պետն ուղիղ նստեց ու նայեց ու, հարկ եղածին պես դիտելով, տեսավ, որ նիզակների ժանիկները և գնբերի մետաղն ու բեղվիկների սրերն են շողշողում, և հանկարծ պարզվեց, որ արարներ¹ են ու նրանց պետին շեյխ Աջլան Աբու Նայիբ են կոչում: Եվ երբ արարները մոտեցան նրանց ու տեսան նրանց հակերը, իրար ասացին. «Ահա որսի գիշեր»:

Եվ լսելով, թե նրանք ինչ ասացին, ուղտապանը՝ Քեմալ էդ-դին պետը, գոչեց. «Հեռացի՛ր, ով արարներից ոչնչագույնդ»: Բայց Աբու Նայիրը նիզակով հարվածեց նրա կրծքին, ու նիզակը, փայլելով, դուրս եկավ նրա մեջքից:

Եվ Քեմալ էդ-դինը սպանված փովեց վրանի մուտքի առջև: Եվ այնժամ ջրկիրը գոռաց. «Հեռացի՛ր, ով ստորագույնդ արարներից»,— բայց նրա թևին սրով հարվածեցին, և սուրը, փայլելով, անցավ նրա ջրի միջով, ու ջրկիրը մեռած գետին ընկավ: Եվ մինչ տեղի էր ունենում այս բոլորը, Ալա էդ-դինը կանգնել ու նայում էր:

Իսկ հետո արարները շուռ եկան ու հարձակվեցին քարավանի վրա ու կոտրեցին մարդկանց, Ալա էդ-դինի խմբից ոչ ոքի չխնայելով, և հակերը ջորիների մեջքին բարձեցին ու հեռացան:

Եվ Ալա էդ-դինն ինքն իրեն ասաց. «Քեզ միայն քո ջորին ու ահա այս հագուստը կսպանի»,— և սկսեց հանել զգեստներն ու ջորու վրա գցել դրանք, մինչև որ շապիկն ու վարտիքը մնացին հագին և ուրիշ ոչինչ:

Եվ նա դարձավ դեպի վրանի մուտքը և իր առջև արյան լիճ տեսավ, ուր հոսում էր սպանվածների արյունը, և սկսեց թավալվել դրա մեջ

¹ Այստեղ և հետագայում «արարներ» ասելով պետք է նկատի ունենալ բոլոր բեղվիկների:

շապիկ-վարտիքով, այնպես որ դարձավ արյան մեջ կորած իսկական սպանված:

Ահա թե ինչ եղավ Ալա էդ-գինին: Ինչ վերաբերում է արարների շեյխ Աշլանին, ապա նա իր մարդկանց հարցրեց. «Ո՞վ արարներ, այս քարավանը Կահիրեի՞ց է գալիս, թե՞ Բաղդադից է դուրս գնում»:

Եվ նրան պատասխանեցին. «Կահիրեից Բաղդադ է գնում»:— «Վերադարձեք սպանվածների մոտ, կարծում եմ, որ քարավանի տերը մեռած չէ»,— ասաց նա: Եվ արարները վերադարձան սպանվածների մոտ ու նորից սկսեցին սպանվածներին հարվածել սրերով և նիզակներով ու հասան Ալա էդ-գինին, որը սպանվածների մեջ գետին էր փռվել: Եվ հասնելով նրան, արարներն ասացին. «Գու մեռած ես ձևանում, բայց մենք քեզ վերջնականապես կսպանենք»,— ու մի բեղվին բարձրացրեց նիզակը և ուղում էր Ալա էդ-գինի կուրծքը խրել: Եվ այնժամ Ալա էդ-գինն ինքն իրեն բացականչեց. «Օրհնի՛ր, ո՞վ Արգ էլ-Քազիր, ո՞վ Գիլանցի»,— և տեսավ մի ձեռք, որ նիզակը նրա կրծքից ուղտապան Քեմալ էդ-գինի կրծքին շեղեց, և բեղվինը նրան հարվածեց նիզակով և շփալավ:

Եվ հետո նրանք հակերը ջորիներին բարձեցին ու հեռացան, և Ալա էդ-գինը նայեց ու տեսավ, որ թուշունները թռան իրենց որսով: Եվ նա ուղիղ նստեց ու վեր կացավ ու փախավ: Եվ հանկարծ բեզվին Արու նայիրն իր ընկերներին ասաց. «Ո՞վ արարներ, հեռվում ինչ-որ բան եմ տեսնում»: Եվ բեղվիններից մեկը բարձրացավ ու տեսավ Ալա էդ-գինին, որ փախչում էր: «Փախուստը քեզ չի՛ օգնի, քանի դեռ մենք քո հետևն ենք»,— բացականչեց Աշլանը և, դարշապարով իր նժույգին խթանելով, շտապ Ալա էդ-գինի հետևից ընկավ:

Եվ Ալա էդ-գինն իր առջև մի լճակ տեսավ ու նրա կողքին՝ ջրամբար, և բարձրացավ ջրամբարի վանդակաձողերի վրա ու ձգվեց և քնած ձևացավ, ինքն իրեն ասելով. «Ով բարի պահապան, գցիր ինձ վրա քո ծածկույթը, որ մի կողմ չի քաշվում»:

Եվ բեղվինը կանգ առավ ջրամբարի մոտ ու, ասպանդակների վրա կանգնելով, ձեռքը մեկնեց, որ Ալա էդ-գինին բռնի: Եվ Ալա էդ-գինը բացականչեց. «Օրհնի՛ր, ո՞վ իմ նաֆիսա՛ տիրուհի, ահավասի՛կ օգնության պահը»: Եվ հանկարծ բեղվինի ձեռքը կարիճը խայթեց, ու նա ճշաց և բացականչեց. «Ո՞՛ֆ, մոտեցե՛ք ինձ, արարներ, ես խոցված եմ»:

Եվ բեղվինն իջավ ձիուց, ու նրա ընկերները եկան նրա մոտ և կրկին ձիու վրա նստեցրին նրան ու հարցրին. «Քեզ ի՞նչ պատահեց», Եվ

1 Նաֆիսա — մահմեդական սրբուհի:

նա պատասխանեց. «Ինձ կարիճի ձագը խայթեց»։ Եվ արարները քա-
րավանը տարան ու հեռացան։

Ահա թե ինչ եղավ նրանց։ Ինչ վերաբերում է Ալա էդ-դինին, ապա
նա շարունակեց վանդակաձողերի վրա պառկած մնալ, իսկ ինչ վե-
րաբերում է Մահմուդ էլ-Բալխի վաճառականին, ապա նա կարգադրեց
բարձել հակերն ու ճամփա ընկավ ու այնքան գնաց, մինչև որ հասավ
Առյուծների թավուտ։ Եվ նա Ալա էդ-դինի բոլոր ծառաներին սպանված
գտավ և ուրախացավ դրանից ու, ջորուց իջնելով, հասավ ջրամբարի ու
լճի մոտ։ Իսկ Մահմուդ էլ-Բալխի ջորին խմել ուզեց ու կռացավ, որ
լճից ջուր խմի, և Ալա էդ-դինի պատկերը տեսավ ու խրանեց, Եվ Մահ-
մուդ էլ-Բալխին գլուխը բարձրացրեց ու սեսավ, որ Ալա էդ-դինը պառ-
կած է մերկ՝ միայն շապիկով ու վարտիքով։— «Ո՞վ է քեզ հետ այդպես
վարվել ու վատթարագույն վիճակում թողել»,—հարցրեց Մահմուդը։
Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Քոչվորները»։— «Ով տղաս,— ասաց
Մահմուդը,— դու ջորիներով ու ապրանքներով փրկվել ես։ Մխիթարվիր
նրա խոսքերով, ով ասել է.

Երբ վտանգից ազատվում են մարդու գլուխն ու հոգին,
Ունեցվածքի կորուստը լսի կորուստ է մի եղանակի։

Բայց իջիր, տղաս, շարիքից մի՛ վախեցիր»։

Եվ Ալա էդ-դինն իջավ ջրամբարի վանդակաձողերից ու Մահմուդը
նրան ջորու վրա նստեցրեց, ու նրանք գնացին, մինչև հասան Բաղդադ
քաղաքը՝ Մահմուդը կարգադրեց բաղնիք տանել Ալա էդ-դինին, ու նրան
ասաց. «Փողերն ու հակերը քո փրկագինը թող լինեն, տղաս, եթե դու
ինձ լսես, ես քո փողի ու հակերի կրկնակին կվերագարձնեմ քեզ»։

Իսկ երբ Ալա էդ-դինը բաղնիքից դուրս եկավ, Մահմուդը նրան
ուսկեզարդ սենյակը տարավ, որտեղ շորս կամարասրահ կար, ու կար-
գադրեց սփռոց բացել ամեն տեսակ ուտելիքներով։ Եվ նրանք սկսեցին
ուտել ու խմել, և Մահմուդը թեքվեց Ալա էդ-դինի կողմը, որ նրանից
համբույր առնի, բայց Ալա էդ-դինը ձեռքը դեմ արեց համբույրին ու գո-
չեց. «Դու մինչև հիմա քո մոլորությանն ես հետևում իմ նկատմամբ։
Մի՞թե ես շասացի քեզ, որ եթե ես այս ապրանքը ուրիշին ոսկով ծա-
խելու լինեի, ապա, հավանաբար, քեզ արծաթով կծախեի»։— «Ես քեզ
և՛ ապրանք, և՛ ջորի, և՛ զգեստ եմ տալիս միայն այդ բանի համար, —

պատասխանեց Մահմուդը:— Քո նկատմամբ ունեցածս կրթից ես վշտահար եմ, և ալլահից պարգև նրան, ով ասել է.

Աբու բիլալ դաստիարակը ծերունիներից մեկի
Պատմածներով մեզ հաղորդեց այս խոսքերը Շարիբի.
«Սիրահարները շին կարող լոկ լիզելով հագնել,
Թե սիրածին չկարենան տիրանալ ու մերձենալ»:

«Դա անկարելի բան է,— ասաց Ալա էդ-դինը,— վերցրու քո հագուստն ու ջորին ու բաց արա դուռն իմ առջև, որպեսզի ես կարողանամ դուրս գալ»:

Եվ Մահմուդը բաց արեց նրա առջև դուռը, ու Ալա էդ-դինը դուրս եկավ, և շնորք հաշեցին նրա հետևից: Ու նա գնաց ու քայլեց մթան մեջ, ու հանկարծ նկատեց մզկիթի դարպասը, և մտավ գեպի մզկիթ տանող անցքն ու թաքնվեց այնտեղ, և հանկարծ՝ ի՛նչ տեսնի. լույս է մտանում իրեն: Եվ նա ուշադիր նայեց ու տեսավ երկու լապտեր՝ ստրուկների ձեռքին, որոնք առաջնորդում են երկու վաճառականի, որոնցից մեկը գեղեցիկ դեմքով ծերունի էր, իսկ մյուսը՝ երիտասարդ: Եվ Ալա էդ-դինը լսեց, թե ինչպես երիտասարդը ծերունուն ասում է. «Ալլահի սիրուն, ո՞վ հորեղբայր, վերագարծրո՛ւ ինձ հորեղբորս աղջկան»:¹ Իսկ ծերունին նրան պատասխանեց. «Միթե ես քեզ շատ անգամ հետ չեմ պահել, իսկ դու ապահարզան տվեցիր քո սրբազան գրքին»:² Եվ ծերունին աջ նայեց ու տեսավ լուսնի հատվածին նման մի երիտասարդի ու նրան ասաց. «Խաղաղությո՛ւնը քեզ»:³ Եվ Ալա էդ-դինը պատասխանեց նրա ողջույնին, իսկ ծերունին հարցրեց. «Ով տղա, ո՞վ ես դու»:⁴— «Ես Ալա էդ-դինն եմ, Կահիրեի վաճառականների ավագ Շեմս էդ-դինի տղան,— պատասխանեց երիտասարդը:— Ես հորիցս սուրանքներ ուզեցի, ու նա ինձ համար հիսուն հակ ապրանք ու կտորեղեն պատրաստեց ու տասը հազար դինար տվեց ինձ, և ճանապարհ ընկա ու եկա, մինչև հասա Առյուծների թափուտը: Եվ ինձ վրա հարձակվեցին քոչվորներն ու խլեցին փողս ու հակերս. և ես այս քաղաքը մտա, չիմանալով, թե որտեղ անցկացնեմ գիշերը, ու այս տեղը տեսա և այստեղ պահվեցի»:⁵— «Ո՞վ տղաս,— ասաց ծերունին,— ի՞նչ կասես, եթե ես քեզ հազար դինար տամ ու հազար դինարի շք ու հազար դինար արժեցող ջորի»:⁶— «Ի՞նչի համար դու այդ բոլորն ինձ պիտի տաս, ով հորեղբայր»,— հարցրեց Ալա էդ-դինը: Եվ ծերունին պատասխանեց. «Այս

¹ Այսինքն՝ «Դու նույնքան հաճախ ես խոսում ապահարզանի մասին, որքան սրբազան գրքն (Չուրան) ես կարդում»:

տղան, որ ինձ հետ է, եղբորս տղան է, ու սրա հայրը, բացի սրանից, ոչ ոք չունի, իսկ ես աղջիկ ունեմ, որից բացի, ես ոչ ոք չունեի, և նրա անունը Զուրեյրա-ջնարահար է, և նա գեղեցիկ է ու հրապուրիչ: Ես նրան ամուսնացրի այս երիտասարդի հետ, և սա նրան սիրում է, իսկ նա ատում է որան, և մի անգամ սա իր խոստումը չպահեց՝ երիցս երդվելով եռակի ապահարգանով: Եվ հենց որ սրա կինը հաճատաց այդ բանին, թողեց սրան ու հեռացավ: Եվ սա բոլոր մարդկանց ինձ մօտ ուղարկեց, որպեսզի ես կնոջն իրեն վերադարձնեմ, և ես ասացի. «Դա կհաջողվի միայն տեղակալի՝ միջոցով»: Եվ մենք պայմանավորվել ենք, որ տեղակալ դարձնենք միայն որևէ օտարականի, որպեսզի ոչ ոք այդ գործի առթիվ իմ փեսային չհանդիմանի, և քանի որ դու օտարական ես, արի՛ մեզ հետ: Մենք պայմանագիր կկնքենք քո և իմ աղջկա միջև, և դու այս գիշեր կանցկացնես նրա հետ, իսկ առավոտյան կբաժանվես նրանից, ու ես քեզ կտամ՝ ինչ որ ասացի»:

Եվ Ալա էդ-գինն ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, գիշերը հարսի հետ, տան մեջ ու անկողնում անցկացնելն ավելի լավ է ինձ համար, քան նրբանցքներում ու անցումներում գիշերելը», և նրանց հետ ղնաց դադի մոտ: Եվ երբ դադին նայեց Ալա էդ-գինին, նրա սերն իր սիրտն ընկավ ու նա հարցրեց աղջկա հորը. «Ի՞նչ եք ուզում»:— «Մենք ուզում ենք նրան այս երիտասարդի տեղակալը դարձնել իմ աղջկա համար,— պատասխանեց աղջկա հայրը,— մենք տասը հազար դինար օժիտի պարտավորագիր կվերցնենք սրանից, և եթե սա գիշերի նրա հետ, իսկ առավոտյան բաժանվի, մենք սրան հազար դինար արժեցող հագուստ կտանք, իսկ եթե չբաժանվի, տասը հազար դինար կվճարի»:

Եվ նրանք պայմանը գրեցին այդ ձևով, և աղջկա հայրը ստացական վերցրեց դրա համար, ապա նա Ալա էդ-գինին իր հետ տարավ ու նրան խոստացած զգեստը հագրեց, և նրանք գնացին ու հասան աղջկա տունը: Եվ հայրը թողեց Ալա էդ-գինին գարպասի առջև՝ սպասելու, և, մըտնելով իր աղջկա մոտ, ասաց նրան.— «Վերցրու քո օժիտի պարտավորագիրը, ես պայման եմ գրել Ալա էդ-գին Աբու-շ-Շամաթ անունով մի գեղեցիկ երիտասարդի հետ. լավագույն հոգատարութունը ցույց առու

1 Մահմեդական օրենքի համաձայն, այն տղամարդը, որ երեք անգամ արասանում է ապահարգանի օրինականացված բանաձևը, վերստին կարող է ամուսնանալ իր արձակած կնոջ հետ այն գեպքում միայն, եթե կինն ուրիշի հետ ամուսնանա ու նորից բաժանվի, թեկուզև հետևյալ օրը: Այդպիսի ժամանակավոր ամուսինը կոչվում է «անղակալ»: և կարող է չհամաձայնել ամուսնալուծութանը:

նրան»։ Եվ վաճառականը նրան հանձնեց ստացականն ու իր տուն գնաց։

Ինչ վերաբերում է աղջկա հորեղբորորդուն, ապա նա մի կառավարչուհի ունեւր, որը հաճախ Զուբեյգա-ջնարահարի՝ իր հորեղբոր աղջկա, մոտ էր գնում, և երիտասարդը նրան շնորհներ էր անում։ «Ո՞վ մայրիկ, — ասաց նրան երիտասարդը, — երբ Զուբեյգան՝ իմ հորեղբոր աղջիկը, այդ գեղեցիկ երիտասարդին տեսնի, հետո այլևս ինձ չի ընդունի։ Խնդրում եմ քեզ, խորամանկություն բանեցրու և աղջկան նրանից հետ պահիր»։ — «Քո երիտասարդությամբ եմ երգվում, որ նրան թույլ չեմ տա մերձենալ աղջկան, — պատասխանեց կառավարչուհին», — իսկ հետո գնաց Ալա էդ-գինի մոտ ու նրան ասաց. — «Ով տղաս, ես քեզ մի խորհուրդ կտամ հանուն մեծ ալլահի, ընդունիր խորհուրդս։ Ես վախենում եմ, որ այդ աղջկա երեսից փորձանք գա քո գլխին։ Թող նա մենակ քնի, մի՛ դիպչիր նրան ու նրան մոտ մի գնա»։ — «Իսկ ինչո՞ւ», — հարցրեց Ալա էդ-գինը։ Եվ կառավարչուհին ասաց. — «Նրա ամբողջ մարմինը բոք է բռնել, և ես վախենում եմ, որ նա վարակի քո գեղեցիկ երիտասարդությունը»։ — «Ես նրա կարիքը չունեմ», — ասաց Ալա էդ-գինը։ Իսկ կառավարչուհին գնաց աղջկա մոտ և նրան նույն բանն ասաց, ինչ-որ Ալա էդ-գինին էր ասել։ Եվ աղջիկն ասաց. «Ես նրա կարիքը չունեմ, Ես նրան կթողնեմ, որ մենակ քնի, իսկ առավոտյան իր ճամփով կգնա»։

Հետո նա կանչեց սարկուհուն ու նրան ասաց. «Վերցրու ուտելեղենով սեղանն ու մատուցիր նրան, թող ընթրի»։ Եվ սարկուհին սեղանը տարավ Ալա էդ-գինի մոտ ու դրեց նրա առջև, ու Ալա էդ-գինը կերավ, մինչև որ կշտացավ, իսկ հետո նստեց ու գեղեցիկ հանգերգով սկսեց կարգալ Յան-Սին՝ սուրահը։ Եվ աղջիկը ականջ դրեց ու գտավ, որ նրա երգը Դավթի սաղմոսի նման է, ու ինքն իրեն ասաց. «Ալլահը վշտացրել է այդ պառավին, որն ասաց, թե երիտասարդը բորով հիվանդ է։ Այդ վիճակում գտնվողի ձայնն այդպիսին չի լինի։ Այդ խոսքերը նրա մասին սուտ են»։

Եվ հետո նա ձեռքն առավ հնդկական երկրում պատրաստված ջնարը և, լարելով, դրա նվագի տակ սկսեց երգել մի այնպիսի գեղեցիկ

1 Յան-Սին — Գուրանի 36-րդ սուրահի վերնագիրը։

ձայնով, որից հավքերն են կանգ առնում երկնի խորքերում, և այսպիսի բեյթեր ասաց.

«Սիրում եմ ես վիթին՝ աչքերով սև ու մութ.
Որ երբ հալտնվում է, ուսին է նտխանձում,
Ա՛խ, մերժում է նա ինձ, երջանիկ ուրիշն է նրա հեա,
Նա շնորհն է տիրոջ,— ուղածին է տրվում»:

Իսկ Ալա էդ-դինը, լսելով, որ նա այդպիսի խոսքեր է ասում, ինքը երգեց, սուրահը վերջացնելուց հետո, և այսպիսի բեյթ արտասանեց.

«Ողջո՛ւյն նրան ,որի հասակը ձուլվել է իր հագուստին այն շքեղ,
Եվ այտերի ծաղկանոցում վարդն է բացվել՝ կոկոն վարդը փառահեղ»:

Եվ աղջիկը վեր կացավ (իսկ երիտասարդի սերը նրա մեջ ուժեղացավ) ու բարձրացրեց վարագույրը, և, նրան տեսնելով, Ալա էդ-դինը այսպիսի բեյթեր արտասանեց.

«Եեմքը՝ լուսին, և հասակը ուռնու ոստ է ճկուն,
Աչքերն, ասես, վիթի աչքեր, և մարմնի բույրը՝ համպար.
Եվ թվում է, վիշտն է սիրտս ամբողջապես համակում,
Որ բաժանման ժամին ձուլվի նրա հոգուն սիրատարի»:

Եվ հետո աղջիկն անցավ, ազդրերը շարժելով ու ճկելով կոնքերը,— ստեղծագործությունը նրա, որի շնորհները ծածուկ են,— և նրանք երկուսով իրար նայեցին այնպիսի հայացքով, որ բյուրավոր հառաչանք է կորզում, և երբ աղջկա հայացքների նետը նրա սրտի մեջ մխվեց, նա այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Երկնում լուսինը տեսա և հիշեցի գիշերն այն,
Երբ իրար հետ միասին, մտաի էինք մենք իրար:
Մենք երկուսով միասին տեսանք լուսինը պայծառ,
Սակայն նա՛ իմ, իսկ ես՝ իր աշիկներով սիրավառ»:

Իսկ երբ աղջիկը մոտեցավ նրան, ու նրանց միջև միայն երկու քայլ տարածություն մնաց, նա այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Իր մազերից երեք խոցող նետ արձակեց գիշերով
Ու մեզ մեկեն ցուցադրեց շորս գիշերներ սեամած.
Իսկ երբ դեմքով գարձավ, նայեց պայծառ լուսնին երկնքում,
Միանգամից ինձ ցույց տվեց երկու լուսին գեղափայլ»:

Եվ աղջիկը մոտեցավ Ալա էդ-գինին, ու սա ասաց. «Հեռու մնա ին-
ձանից, որ ինձ չվարակես»: Եվ այնժամ աղջիկը բացեց իր ձեռքի դաս-
տակը, և նրա դաստակը երկուսի էր բաժանված ու ձերմակին էր տալիս,
ինչպես սպիտակ արծաթ: «Հեռացի՛ր ինձանից, որ ինձ չվարակես, գու-
բորով հիվանդ ես»,— ասաց աղջիկը: Եվ Ալա էդ-գինը նրան հարցրեց.
«Քեզ ո՞վ է ասել, որ ես բորով հիվանդ եմ»:— «Պառավն ինձ պատ-
մեց»,— պատասխանեց աղջիկը: Եվ Ալա էդ-գինը բացականչեց. «Ինձ էլ
նույնպես պառավն է պատմել, թե դու բորոտությամբ ես տառապում»:

Եվ նրանք մերկացրին իրենց ձեռքերը, ու աղջիկը տեսավ, որ նրա
մարմինը մաքուր է արծաթից, և սեղմեց նրան իր կրծքին, ու նա նույն-
պես սեղմեց աղջկան իր կրծքին, և նրանք գրկախառնվեցին: Իսկ հետո
աղջիկը տարավ Ալա էդ-գինին և մեջքի վրա պառկեց ու շապիկը բացեց,
և շարժվեց Ալա էդ-գինի այն բանը, որ հայրն էր թողել նրան, ու նա
բացականչեց. «Օգնի՛ր ինձ, ո՞վ շեյխ Զաքարիա, ո՞վ մկանների հայր»:

Եվ նա ձեռքերը գրեց աղջկա կոնքերին ու հաճույքի մկանունքը
պատառման դարպասը մտցրեց ու հասավ վարագույրի դարպասին (իսկ նա
մուտք գործեց հաղթանակի դարպասով), իսկ հետո նա հաջորդ օրվա ու
շաբաթվա համար շուկա գնաց, ու երբսրդ օրվա, ու շորերոդ օրվա, ու
հինգերորդ օրվա, ու տեսավ, որ գորգը ճիշտ ու ճիշտ համապատաս-
խան է սրահին և տուփը կափարիչ էր փնտրում, մինչև որ գտավ այն:

Իսկ երբ առավոտը բացվեց, Ալա էդ-գինն իր կնոջն ասաց. «Ո՞վ
չավարտված ուրախություն: Ազոավն առավ այն ու թռավ»:— «Ի՞նչ են
նշանակում այդ խոսքերը»,— հարցրեց աղջիկը: Եվ Ալա էդ-գինն ասաց.
«Տիրուհի, քեզ մոտ նստելու համար ինձ միայն այս մի ժամն է մնա-
ցել»:— «Ո՞վ է ասում»,— հարցրեց աղջիկը, և Ալա էդ-գինը պատաս-
խանեց. «Քո հայրն ինձանից տասը հազար դինարի օժիտի ստացա-
կան է վերցրել, և եթե ես այսօր չվերադարձնեմ այն, ինձ ղադիի տանը
կրանտարկեն, իսկ հիմա իմ ձեռքը կարճ է, այդ տասը հազար դինարի
նույնիսկ կես արծաթի համար»:— «Ո՞վ տեր իմ, ամուսնու իրավունքը
քո՞ ձեռքին է, թե նրանց»,— հարցրեց Զուբեյդան: «Իմ ձեռքին է, բայց
ես ոչինչ չունեմ»,— պատասխանեց Ալա էդ-գինը: Եվ Զուբեյդան ասաց.
«Դա հեշտ բան է, և դու ոչնչից մի վախեցիր, իսկ այժմ վերցրու այս
հարյուր դինարը, և եթե ես էլի ունենայի, իսկապես, քեզ կտայի այն,
ինչ որ ուզում ես, բայց հայրս իր եղբորորդու սիրուց իմ ամբողջ փողը
նրա տուն է փոխադրել, նա նույնիսկ իմ բուլոր զարդերն է վերցրել: Իսկ
երբ վաղը նա իշխանության սուրհանդակին ուղարկի, և ղադին ու հայ-

րըս քեզ ասեն. «Բաժանվի՛ր»,— դու նրանց հարցրու. «Ո՞ր գավանանքն է թույլ տալիս, որ ես երեկոյան ամուսնանամ ու առավոտյան բաժանվեմ»: Իսկ հետո դու կհամբուրես զաղիի ձեռքը ու նվեր կտաս նրան, և ամեն մի վկայի ձեռքը նույնպես կհամբուրես ու տասական դինար կտաս, և նրանք բոլորը կսկսեն քո օգտին խոսել: Եվ երբ քեզ հարցնեն. «Ինչո՞ւ չես բաժանվում ու վերցնում հազար դինարը և ջորին ու հագուստը, ինչպես պահանջվում է ըստ քեզ հետ մեր կապած պայմանի»,— դու նրանց ասա. «Ինձ համար նրա ամեն մի մազը հազար դինար արժե, և ես երբեք նրանից չեմ բաժանվի ու ո՛չ հագուստը կվերցնեմ, ո՛չ էլ ուրիշ բան»: Իսկ եթե զաղին քեզ ասի. «Օժիտը տո՛ւր», պատասխանիր. «Ես հիմա նեղութեան մեջ եմ», և այնժամ զաղին ու վկաները կխղճան քեզ ու ժամկետ կտան»:

Եվ մինչ նրանք խոսում էին, հանկարծ զաղիի սուրհանդակը դուռը բախեց, և Ալա էդ-դինը դուրս եկավ նրա մոտ, ու սուրհանդակն ասաց. «Խոսիր էֆենդիի՛ հետ, քո աները քեզ է պահանջում»:

Եվ Ալա էդ-դինը հինգ դինար տվեց նրան ու ասաց. «Ո՞վ բանբեր, ո՞ր օրենքն է թույլ տալիս, որ ես երեկոյան ամուսնանամ և առավոտյան բաժանվեմ»:— «Մեր օրենքով դա ոչ մի կերպ չի թույլատրվում,— պատասխանեց բանբերը,— և եթե դու օրենքը չգիտես, ապա ես քո հավատարմատարը կլինեմ»: Եվ նրանք դատարան գնացին, ու զագին Ալա էդ-դինին հարցրեց. «Ինչո՞ւ դու չես բաժանվում ու չես վերցնում այն, ինչ որ սահմանված է ըստ պայմանի»: Եվ Ալա էդ-դինը մոտեցավ զագիին ու նրա ձեռքը համբուրեց և, ձեռքը գնելով հիսուն դինար, ասաց.— «Ո՞վ մեր իշխան, ով զագի՛, ո՞ր գավանանքն է թույլատրում, որ ես երեկոյան ամուսնանամ և առավոտյան բաժանվեմ՝ հակառակ իմ կամբին»:— «Մուսուլմանների օրենքներից և ոչ մի օրենքով չի թույլատրվում հարկադրական ապահարզան»,— պատասխանեց զագին: Եվ կնոջ հայրն ասաց. «Եթե դու չես բաժանվում, օժիտը տուր՝ հիսուն հազար դինար»:— «Ինձ երեք օր ժամկետ տվեք»,— ասաց Ալա էդ-դինը: Եվ զագին բացականչեց. «Երեք օրվա ժամկետը բավական չէ: Նա քեզ տասնօրյա ժամկետ կտա»:

Եվ նրանք համաձայնութեան եկան ու պարտավորեցրին Ալա էդ-դինին տասը օրից հետո կամ օժիտը տալ, կամ կնոջից բաժանվել:

Եվ նա դուրս եկավ նրանց մոտից այդ պայմանով ոչ միս առավ և բրինձ ու հալած յուղ և ամեն բան, ինչ որ պահանջվում էր ուտելու հա-

1 էֆենդի — պարոն, այստեղ՝ գլխավոր դատավորի տիտղոս:

մար, ու տուն գնաց, և, կնոջ մոտ մտնելով, նրան պատմեց այն ամենը, ինչ տեղի էր ունեցել: «Երեկոյից մինչև ցերեկ հրաշքներ են կատարվում,— ասաց նրան կինը,— և ալլահից է շնորհքը նրա, ով ասել է.

Հանդարտ եղիր, երբ դայույթը քեզ համակի,
Համբերատար՝ երբ շարիքը առջևդ գա հանկարծակի,
Հղի են շատ երկունքներով գիշերները մեր օրերում,—
Զէ՛ որ նրանք զարմանալի հրաշքներ են աշխարհ բերում»:

Իսկ հետո նա վեր կացավ և ուտելիք պատրաստեց ու սփռոցը բերեց, և նրանք սկսեցին ուտել ու խմել և հրճվել ու զվարճանալ: Այա Ալա էդ-դինը խնդրեց նրան՝ որևէ բան նվագել, և կինը ջնարն առավ ու մի այնպիսի մեղեդի նվագեց, որից ապառաժ քարը կցնծար, ու լարերը հնչեցին տնով մեկ՝ «Օ՛ սիրելիս», ու նա երգում էր ու գեղգեղում:

Եվ նրանք այդպես հրճվում էին ու զվարճանում ու կատակներ անում և ուրախանում, ու հանկարծ գուռը բախեցին:

Եվ կինն Ալա էդ-դինին ասաց. «Վեր կաց, տես, ո՞վ է դարպասի մոտ»: Եվ նա գնաց ու դարպասը բացեց և տեսավ, որ այնտեղ շորս դերվիշ են կանգնած: «Ի՞նչ եք ուզում»,— հարցրեց նրանց: Եվ դերվիշներն ասացին. «Ո՞վ տեր, մենք օտար երկրներից եկած դերվիշներ ենք, և մեր հոգու սնունդը երաժշտութունն է ու քնքուշ ոտանավորները: Մենք ուզում ենք այս գիշեր քեզ մոտ հանգստանալ մինչև առավոտ, իսկ հետո մեր ճանապարհը կգնանք, իսկ դու մեծ ալլահից պարգև կըստանաս: Մենք սիրում ենք երաժշտութունը և մեր մեջ չկա մեկը, որ քասիդներ, ոտանավորներ ու բեյթեր շիմանա անգիր»:— «Նա կխորհրդակցեմ»,— ասաց Ալա էդ-դինն ու ներս գնաց ու կնոջը տեղեկացրեց, և կինն ասաց. «Բաց դարպասը նրանց առջև»: Եվ Ալա էդ-դինը բացեց դարպասը դերվիշների առջև ու ներս տարավ նրանց և նստեցրեց ու ասաց. «Բարով եկաք»,— ապա ուտելիք բերեց, բայց նրանք չկերան ու ասացին. «Ով տեր, մեր սնունդը մեր սրտում ալլահին հիշելն է և մեր ականջով Լրզլուհիներին լսելը, և ալլահից է շնորհքը նրա, ով ասել է.

Մենք միայն քեզ հանդիպել ենք կամենում,
Իսկ ոտելը՝ հատկութունն է կենդանու:

Մենք դրսից քաղցր երաժշտութուն լսեցինք, իսկ երբ ներս մտանք, երաժշտութունը դադարեց: Օ՛, եթե տեսնեինք, թե ով էր նվագում. սպիտակամո՞րթ, սևամորթ ստրկուհի՞, թե՞ ազնվազարմ աղջիկ»:— «Իմ կինն է,— ասաց Ալա էդ-դինը և նրանց պատմեց այն ամենը, ինչ

պատահել էր, ու ասաց.— Իմ աներն ինձ վրա տասը հազար դինար օժիտի պարտք է դրել, ու տվել են ինձ տասնօրյա ժամկետ»։— «Մի՛ վըշտացիր,— ասաց դերվիշներից մեկը,— և մտքումդ միայն բարին հիշիր։ Ես դերվիշների մենաստանի շելխն եմ, և ինձ ենթակա են քառասուն դերվիշներ, որոնց վրա ես իշխում եմ։ Ես նրանցից քեզ համար կհավաքեմ տասը հազար դինար, և դու լրիվ կվճարես օժիտը, որ պետք է քո աներն ստանա քեզանից։ Բայց հրամայիր կնոջդ, որ մեզ համար նվազի, որպեսզի մենք զվարճանանք ու զվարթ զգանք մեզ. երաժշտությունը որոշ մարդկանց համար սնունդ է, որոշ մարդկանց համար՝ դեղ, իսկ ուրիշների համար՝ հովհար»։

Եվ այդ շորս դերվիշներն էին խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը, վեզիր Ջաֆար ալ-Բարմեքը, Աբու Նովասը (էլ-Հասան իբն-Խանին)¹ և Մասրուրը՝ վրեժի դահիճը, և նրանք այդ տան մոտով անցնում էին, որովհետև խալիֆի սիրտը նեղացած էր, ու նա իր վեզիրին ասաց. «Ո՛վ վեզիր, մենք ուզում ենք դուրս գալ ու քաղաքում ման գալ, որովհետև սիրտս նեղացած է»։ Եվ նրանք դերվիշի շորեր հագան ու քաղաք դուրս եկան և այդ տան մոտով անցնում էին ու, լսելով երաժշտության ձայնը, ցանկացան իմանալ այդ բանի իսկությունը։

Եվ Ալա էդ-դինի հյուրերն այդ գիշեր ուրախության ու համերաշխության մեջ անցկացրին՝ զրուցելով իրար հետ, մինչև որ առավոտը բացվեց, և այնժամ խալիֆը հարյուր դինար զրեց աղոթքի գորգի տակ, ու նրանք հրաժեշտ տվեցին Ալա էդ-դինին ու իրենց ճամփով գնացին։

Եվ կինը գորգը բարձրացրեց ու զրա տակ տեսավ հարյուր դինարը և իր ամուսնուն ասաց. «Վերցրո՛ւ այս հարյուր դինարը, որ ես գորգի տակ գտա. դերվիշներն են դրել իրենց գնալուց առաջ, և մենք չենք իմացել»։

Իսկ Ալա էդ-դինը փողը վերցրեց ու գնաց շուկա և դրանով միս գնեց ու բրինձ և հալած յուղ ու այն ամենը, ինչ հարկավոր էր։

Իսկ հետևյալ օրը նա մոմերը վառեց ու իր կնոջն ասաց. «Դերվիշները շքերեցին այն տասը հազար դինարը, որ ինձ խոստացան։ Նրանք պարզապես մուրացկաններ էին»։

Եվ մինչ նրանք խոսում էին, հանկարծ դերվիշները դարպասը բախեցին։ Եվ Ալա էդ-դինի կինն ասաց. «Դուրս արի, գարպասը բաց»։ Եվ Ալա էդ-դինը դարպասը բացեց, և երբ նրանք ներս մտան, հարցրեց.

¹ Աբու Նովաս — նշանավոր արաբ բանաստեղծ, մեռել է IX դարի սկզբին։

«Դուք բերե՞լ եք այն հազար դինարը, որ ինձ խոստացաք»։— «Օ՛, նրանցից ոչինչ ստանալ չհաջողվեց,— պատասխանեցին դերվիշները,— բայց մի վախեցիր, եթե մեծ ալլահը կամենա, մենք վաղը քեզ համար քիմիական բաղադրություն¹ կպատրաստենք։ Հրամայիր կնոջդ, որ մեզ հնարավորություն տա երաժշտություն լսելու, որից մեր սրտերը զվարթանան, քանի որ մենք սիրում ենք երաժշտությունը»։

Եվ Զուբեյդան ջնարով նրանց համար մի եղանակ նվագեց, սրի տակ ապառաժն էլ կպարեր, և նրանք ժամանակը հաճույքով անցկացրին ուրախության ու զվարճության մեջ, զանազան պատմություններ պատմելով իրար։ Եվ երբ առավոտը բացվեց ու լույսը փայլեց և շողաց, խալիֆը գորգի տակ դրեց հարյուր դինար, իսկ հետո նրանք հրաժեշտ ավեցին Ալա էդ-դինին, և իրենց ճամփով գնացին։

Եվ նրանք այդ ձևով ինը երեկո շարունակեցին նրա մոտ գալ, և ամեն երեկո խալիֆը գորգի տակ էր գնում հարյուր դինար։ Իսկ երբ տառներորդ երեկոն իջավ, նրանք չեկան, և նրանց շգալու պատճառն այն էր, որ խալիֆը մի մեծահարուստ վաճառականի կանչեց ու ասաց. «Պատրաստիր ինձ համար հիսուն հակ կտորեղեն, որ Կահիրեից են բերում, և յուրաքանչյուրի արժեքը թող լինի հազար դինար։ Հակերից ամեն մեկի վրա գրիր դրա արժեքը և մի հաբեշ ստրուկ ուղարկիր ինձ մոտ»։

Եվ վաճառականը ձեռք բերեց այն ամենը, ինչ խալիֆն էր հրամայել, և ապա խալիֆը ստրուկին հանձնեց ոսկեղեն կոնք ու սափոր և ճանապարհի պաշար ու հիսուն հակ կտորեղենն ու Կահիրեի վաճառականների ավագ Շեմս էդ-դինի՝ Ալա էդ-դինի հոր, անունից նամակ գրեց և ասաց. «Վերցրու այս հակերն ու նրանց հետ եղած-չեղածը, գնա այսինչ թաղը, որտեղ վաճառականների ավագի տունն է գտնվում, ու հարցրո՛ւ, թե սրտեղ է Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթ աղան. մարդիկ քեզ ցույց կտան և՛ նրա թաղը, և՛ նրա տունը»։

Եվ ստրուկը վերցրեց հակերն ու դրանց հետ եղած-չեղածը, ինչպես հրամայել էր խալիֆը, և գնաց։

¹ Քիմիական բաղադրություն — նույնն է, ինչ որ եվրոպական արժիմեկոսների մոտ՝ փիլիսոփայական քարը։

Ահա թե ինչ եղավ նրան: Ինչ վերաբերում է կնոջ հորեղբորորդուն, ապա նա գնաց աղջկա հոր մոտ ու նրան ասաց. «Գնանք, Ալա էգ-դինի մոտ, որ իմ հորեղբոր աղջկանից բաժանենք նրան»: Եվ նրանք դուրս եկան ու միասին գնացին Ալա էգ-դինի մոտ:

Իսկ նրա տան մոտ հասնելով, նրանք հիսուն ջորի տեսան ու դրանց վրա հիսուն հակ կտորեղեն, և ջորու վրա նստած ստրուկին տեսան ու հարցրին նրան. «Ո՞ւմ են այս հակերը»:— «Իմ տեր Ալա էգ-գին Աբու-ը-Շամաթինը,— պատասխանեց ստրուկը.— նրա հայրն ապրանք էր հավաքել նրա համար ու նրան ուղարկել Բաղդադ քաղաքը, և նրա վրա հարձակվել են արաբներն ու խլել նրա փողն ու հակերը, և այդ լուրը հասավ իր հորը, և նա ինձ ուղարկեց նոր հակերով՝ թալանվածների փոխարեն, և ինձ հետ մի ջորի ուղարկեց, որին հիսուն հազար դինար է բարձած, ու մեծ գումարներ արժեցող հագուստի կապոց և ոսմուլյրե մուշտակ ու ոսկե կոնք և սափոր»:— «Նա իմ փեսան է, և ես քեզ նրա տունը կտանեմ»,— ասաց աղջկա հայրը:

Իսկ Ալա էգ-դինը նստած էր իր տանը խիստ մտատանջության մեջ, ու հանկարծ դարպասը բախեցին: «Օ՛, Զուբեյդա,— ասաց Ալա էգ-դինը,— ալլահն ավելի լավ գիտի Անշուշտ, հայրդ ղադիի կամ վալիի կողմից մարդ է ուղարկել իմ հետևից»:— «Դուրս արի ու տես, թե բանն ինչ է»,— ասաց Զուբեյդան: Եվ Ալա էգ-դինն իջավ ու բացեց դարպասն ու տեսավ իր աներոջը՝ վաճառականների ավագին՝ Զուբեյդայի հորը, և շագանակագույն դեմքով, դուրեկան տեսքով՝ հարեջ ստրուկին ջորու վրա նստած:

Եվ ստրուկը ցած իջավ ու համբուրեց նրա ձեռքը, ու Ալա էգ-դինը նրան հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»: Եվ ստրուկն ասաց. «Ես Ալա էգ-դին Աբու-ը-Շամաթ աղայի՝ եգիպտական երկրի վաճառականների ավագ Շեմս-էգ-դինի որդու, ստրուկն եմ, և նրա հայրն ինձ ուղարկել է այս հանձնարարությամբ»,— ու նրան հանձնեց նամակը: Եվ Ալա էգ-դինը վերցրեց այն ու բացեց և տեսավ, որ նամակում գրված է.

Ով իմ նամակ, սիրած ժարդկանց տեսնելիս,
նրանց ասքերն ու գետինը համբուրի՛ր,
ժամանակ առ՛ուր, աճապարող մի՛ լինիր,
նրանց ձեռքին է հանգիստս ու հոգիս:

Շեմս-էդ-դինից իր որդուն՝ Արու-շ-Շամաթին, կատարյալ ողջույնից ու բարեից և հարգանքից հետո: Իմացի՛ր, ո՛վ զավակս, որ ինձ հասավ քո մարդկանց կտորելու և քո ունեցվածքն ու բեռները կողոպտելու լուրը, և ես դրանց փոխարեն քեզ ուղարկեցի այս հիսուն հակեգիպտական կտորեղենն ու հագուստը, և սամույրե մուշտակն ու ոսկե կանքն ու սափորը: Դժբախտությունից մի՛ վախեցիր: Փողը թող քո փրկագինը լինի, ո՛վ զավակս, և թող երբեք քեզ վիշտը չտիրի: Քո մայրն ու հարազատները լավ են, նրանք ողջ և առողջ են ու ողջունում են քեզ բազում ողջույններով: Եվ ականջիս հասել է, ո՛վ զավակս, որ քեզ Զուբեյդա-ջնարահարի համար տեղակալ են դարձրել և դրա համար քեզ վրա հիսուն հազար դինար օժիտի պարտք են դրել: Այդ փողը քեզ եմ ուղարկում հակերի ու քո ստրուկ Սելիմի հետ»:

Նամակի ընթերցումը վերջացնելով, Ալա էդ-դինն ընդունեց հակերը և, դառնալով աներոջը, ասաց. «Ո՛վ իմ աներ. վերցրու հիսուն հազար դինարը՝ քո աղջիկ Զուբեյդայի օժիտը, և վերցրու նաև հակերն ու տնօրինիր, ինչպես կուզես, շահը քեզ լինի, իսկ հիմնականը կվերադարձնես ինձ»:— «Ձէ, ալլահը վկա, ես ոչինչ չեմ վերցնի, իսկ ինչ վերաբերում է քո կնոջ օժիտին, ապա դրա վերաբերյալ դու և կինդ համաձայնության եկեք»,— պատասխանեց վաճառականը: Եվ Ալա էդ-դինը ոտքի ելավ ու աներոջ հետ տուն մտավ, բեռները ներս տանելուց հետո:

Եվ Զուբեյդան հարցրեց իր հորը. «Ով հայրիկ, ո՞ւմն են այդ հակերը»: Եվ հայրը նրան պատասխանեց. «Այդ հակերը Ալա էդ-դինինն են, քո ամուսնունը, դրանք նրա հայրն է ուղարկել այն հակերի փոխարեն, որ արաբները խլել են, և նա ուղարկել է հիսուն հազար դինար, և մի կապոց հագուստ ու սամույրե մուշտակ և ջորի ու ոսկե կոնք ու սափոր, իսկ ինչ վերաբերում է օժիտին, ապա դա դու պետք է որոշես»:

Եվ Ալա էդ-դինը վեր կացավ ու բացելով սնդուկը, Զուբեյդային տվեց նրա օժիտը, և այնժամ երիտասարդը՝ աղջկա հորեղբորորդին, ասաց. «Ով հորեղբայր, թող Ալա էդ-դինը բաժանվի իմ կնոջից»: Բայց աղջկա հայրը պատասխանեց. «Դա հնարավոր չէ այլևս, քանի որ ամուսնու իրավունքը նրա ձեռքին է»:

Եվ երիտասարդը վշտահար ու մտահոգ գնաց և իր տանը պառկեց հիվանդ, և դրանով նրա ճակատագիրը կատարվեց, ու նա մեռավ:

Ինչ վերաբերում է Ալա էդ-դինին, ապա, հակերն ընդունելով, նա գնաց շուկա և գնեց այն ամենը, ինչ հարկավոր էր՝ ուտելիք, խմելիք ու հալած յուղ, և խնջույք սարքեց, ինչպես ամեն երեկո, ու Զուբեյդային

ասաց. «Այդ խաբերա դերվիշներին տես, նրանք մեզ խոստացան ու խոստումը դրժեցին»։— «Դու վաճառականների ավագի տղա ես, և ձեռքդ կարճ էր կես արծաթի համար, հապա աղքատ դերվիշներն ի՞նչ անեն»,— ասաց Զուբեյդան։ Եվ Ալա էդ-դինը բացականչեց. «Մեծ ալլահը մեզ փրկեց նրանց կարիքից, բայց ես այլևս դարպասը չեմ բացի նրանց առջև, երբ նրանք մեզ մոտ գան»։— «Ինչո՞ւ,— ասաց Զուբեյդան,— չէ՞ որ բարիքը մեզ մոտ նրանց գալուց հետո է եղել, և ամեն գիշեր նրանք գորգի տակ հարյուր դինար էին դնում մեզ համար։ Մենք անպայման կրացեմք դարպասը նրանց առջև, երբ նրանք գան»։

Եվ երբ ցերեկվա լույսը հանգավ ու գիշերն իջավ, մոմերը վառեցին, և Ալա էդ-դինն ասաց. «Ով Զուբեյդա, սկսիր, նվագիր մեզ համար»։ Եվ հանկարծ դարպասը ծեծեցին։ «Վեր կաց, տես թե ո՞վ է դարպասի մոտ»,— ասաց Զուբեյդան, Եվ Ալա էդ դինը դուրս եկավ ու բացեց դարպասը և տեսավ դերվիշներին։ «Օ՛, բարով եք եկել, խաբերանե՛ր, մտեք»,— բացականչեց նա և դերվիշները ներս մտան նրա հետ, և նա նստեցրեց նրանց ու սեղան բացեց, և նրանք սկսեցին ուտել ու խմել, ուրախանալ և զվարճանալ։

Իսկ դրանից հետո նրանք ասացին նրան. «Ո՞վ մեր տեր, մեր սըրտերը քեզնով են զբաղված, ի՞նչ է եղել քո և աներոջդ միջև»։— «Ալլահը մեզ մեր ցանկացածից առավել փոխհատուցեց»,— պատասխանեց Ալա էդ-դինը, և դերվիշներն ասացին. «Ալլահը վկա, մենք վախենում էինք քեզ համար, և մեզ միայն այն էր կասեցնում, որ մեր ձեռքին փող չկար»։— «Ինձ օգնություն է հասել իմ տիրոջից, և հայրս ինձ ուղարկել է հիսուն հազար դինար ու հիսուն հակ կտորեղեն, որոնցից ամեն մեկը հազար դինար արժե, և հազուաում ու սամույրե մուշտակ և ջորի ու ստրուկ և ոսկե կոնք ու սափսր, և իմ ու աներոջս միջև համերաշխություն է հաստատվել, և իմ կիսն ըստ իրավունքի, ինձ է պատկանում, և փառք ալլահին այս բոլորի համար»,— պատասխանեց Ալա էդ-դինը։

Իսկ հետո խալիֆը ոտքի ելավ ու կարիքի համար դուրս դնաց, և վեզիր Զաֆարը թեքվեց Ալա էդ-դինի կողմն ու նրան ասաց. «Պատշաճություն պահպանիր, դու հավատացյալների տիրակալի ներկայությունն ես վայելում»։— «Ի՞նչ անպատշաճ բան եմ արել հավատացյալների տիրակալի ներկայությամբ, և ձեզանից ո՞վ է հավատացյալների հրամանատարը»,— հարցրեց Ալա էդ-դինը։ Եվ Զաֆարն ասաց. «Նա, ով խոսում էր քեզ հետ և դուրս եկավ կարիքի համար, հավատացյալների հրամանատարն է, խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը, իսկ ես վեզիր Զաֆարն

եմ, իսկ սա Մատուրն է, վրեժի դահիճը, իսկ սա՝ Աբու Նովաս ալ-Հասան իրն Խանին: Խելքով մտածիր ու տես, քանի՞ օրվա ճանապարհ է Կահիրեից մինչև Բաղդադ»:— «Քառասունհինգ օրվա»,— պատասխանեց Ալա էդ-գինը: Եվ Ջաֆարն ասաց. «Քո հակերը քեզանից խլել են միայն տասը օր առաջ, ուրեմն, ինչպե՞ս այդ լուրը հասավ քո հորը, և նա քեզ համար հակեր պատրաստեց, որոնք քառասունհինգ օրվա ճանապարհը տասը օրում կտրեցին»:— «Ով տեր իմ, իսկ որտեղի՞ց դրանք ինձ մոտ եկան»,— հարցրեց Ալա էդ-գինը: «Խալիֆից՝ հավատացյալների տիրակալից, քո նկատմամբ ունեցած ծայրահեղ սիրո շնորհիվ»,— պատասխանեց Ջաֆարը:

Եվ մինչդեռ նրանք խոսում էին, հանկարծ խալիֆը նրանց մոտ մտավ: Եվ Ալա էդ-գինը վեր կացավ ու համբուրեց գետինը նրա առջև ու ասաց. «Քող ալլահը պահպանի՞ քեզ, ո՞վ հավատացյալների տիրակալ, ու թող հավիտենական կյանք պարգևի քեզ ու թող մարդկանց շղթի քո շնորհներից ու լավությունից»: «Ով Ալա էդ-գին,— ասաց խալիֆը,— թող Զուբեյդան մեզ համար նվագի հանուն քո բարեկեցության, քաղցրության»: Եվ Զուբեյդան ջնարով նրանց համար նվագեց գոյություն ունեցող եղանակներից ամենահրաշալին, մինչև որ ցնծացին քարե սլատերն, ու լարերը սենյակով մեկ հնչեցին. «Ով սիրելիս»:

Եվ նրանք գիշերը մինչև առավոտ անցկացրին ամենաուրախ վիճակում, իսկ երբ առավոտը բացվեց, խալիֆն Ալա էդ-գինին տասց. «Վազը դիվան արի»: Եվ Ալա էդ-գինը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում, ով հավատացյալների տիրակալ, եթե մեծ ալլահը կամենա և դու բաջաուղջ լինես»: Ապա Ալա էդ-գինը վերցրեց տասը սկուտեղ և դրանց մեջ դնելով հոյակապ նվերներ, հետևյալ օրը գնաց դիվան: Եվ երբ խալիֆը դիվանում գահին նստած էր, հանկարծ դիվանի դռնով ներս մտավ Ալա էդ-գինը, այսպիսի ոտանավոր ասելով.

«Քող ամեն օր հաջողութունն ու փառքը քեզ ողջունեն,
Թեև դրանք նախանձորգին շատ անախորժ կլինեն.
Եվ թող լինեն քո օրերը ճերմակ, պայծառ, լուստփայլ,
Իսկ թշնամուղ, շարահամիդ օրերը՝ սև ու մուսլ»:

«Բարի եկար, ով Ալա էդ-գին»,— ասաց խալիֆը: Եվ Ալա էդ-գինը պատասխանեց. «Ով հավատացյալների տիրակալ, մարգարեն, թող ալլահը նրան օրհնի ու փառավորի, նվերներ ընդունում էր, և այս տասը սկուտեղները՝ դրանց մեջ եղածով, ինձնից քեզ նվեր են»: Եվ խալիֆն ընդունեց դա նրանից ու հրամայեց պատվո զգեստ տալ նրան և վա-

ճառակահանների ավագ դարձրեց ու գիվանում նստեցրեց, և մինչդեռ նա այնտեղ նստած էր, հանկարծ ներս մտավ իր աները՝ Զուբեյդայի հայրը:

Եվ տեսնելով, որ Ալա էդ-դինը իր տեղն է նստել ու հագել է պատվո զգեստ, նա ասաց հավատացյալների տիրակալին. «Ո՞վ ժամանակի արքա, ինչո՞ւ այս երիտասարդն իմ տեղն է նստել»:— «Ծս նրան վաճառակահանների ավագ եմ նշանակել,— ասաց խալիֆը,— պաշտոնները շնորհվում են ժամկետով և ոչ հավիտենապես, և դու հեռացված ես»:— «Մեզնից ու մեզ է գալիս բարիքը,— բացականչեց Զուբեյդայի հայրը:— Հիանալի է քո արածը, ո՞վ հավատացյալների վեհապետ, և թող ալլահը մեզանից ամենալավերին նշանակի մեր գործերի կառավարիչ: Որքա՞ն փոքրեր մեծ են դարձել»: Ապա խալիֆը հրովարտակ գրեց ու Ալա էդ-դինին հանձնեց, և սա հրապարակեց դիվանում. «Վաճառակահանների ուրիշ ավագ չկա, բացի Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթից: Իր խոսքը պետք է լսել ու հարգանքը պահել, ու նրան վայել է պատիվ ու հարգանք ու բարձր տեղ»:

Իսկ երբ դիվանը ցրվեց, վալին ու մունետիկը Ալա էդ-դինի առջևից գնացին, ու մունետիկը բղավեց. «Բացի տեր Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթից, վաճառակահանների ուրիշ ավագ չկա՞»: Եվ նրանք նրա հետ պտտվում էին Բաղդադի հրապարակներում, և մունետիկը բղավում էր ու ասում. «Զկա՞ վաճառակահանների ուրիշ ավագ, բացի Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթից»:

Իսկ երբ առավոտը բացվեց, Ալա էդ-դինը սարուկի համար խանութ բացեց ու նրան այնտեղ նստեցրեց, առնելու ու ծախելու, իսկ ինչ վերաբերում է իրեն՝ Ալա էդ-դինին, ապա նա ամեն օր ձի էր հեծնում ու պաշտոնի գնում խալիֆի դիվանը:

Եվ մի անգամ այնպես պատահեց, որ նա, ինչպես միշտ, նստել էր իր տեղում, և նստած էր, հանկարծ ինչ-որ մեկը խալիֆին ասաց. «Ով հավատացյալների տիրակալ, թող քո գլուխը ողջ մնա քո այսինչ սեղանակցից հետո, նա ներկայացավ մեծ ալլահի ողորմածությանը, իսկ քո կյանքը թող հավիտենական լինի»,— «Ո՞ւր է Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթը»,— հարցրեց խալիֆը: Եվ Ալա էդ-դինը կանգնեց նրա առջև, ու խալիֆը, տեսնելով Ալա էդ-դինին, հիանալի հագուստ պարգևեց նրան, զարձրեց իր սեղանակիցը ու պատվիրեց նրան ոռճիկ տալ՝ ամեն ամիս հազար դինար, և Ալա էդ-դինն ապրեց խալիֆի մոտ, բաժանելով նրա սեղանը:

Եվ այնպես պատահեց, որ օրերից մի օր նա նստած էր, ինչպես միշտ, իր տեղում, խալիֆին ծառայելով, և հանկարծ ներս մտավ էմիր-

րը՝ սուրը ձեռքին ու վահանով, և ասաց. «Ով հավատացյալների տիրա-
կալ, թող քո գլուխը ողջ լինի վաթսուների գլխավորից՝ հետո,— նա մեռել
է այսօր»: Եվ խալիֆը հրամայեց Ալա էդ-դինին պատվո զգեստ տալ ու
նրան վաթսուների գլխավոր նշանակեց մեռածի փոխարեն:

Իսկ վաթսուների հանգուցյալ գլխավորը ո՛չ կին ուներ, ո՛չ տղա, ո՛չ
աղջիկ, և Ալա էդ-դինը գնաց ու ձեռքը դրեց նրա ունեցվածքի վրա: Եվ
խալիֆն Ալա էդ-դինին ասաց. «Թաղի՛ր նրան հողում և վերցրու այն
ամենը, ինչ նա թողել է՝ փող, սարուկներ, ստրկուհիներ ու ծառաներ»:

Իսկ հետո խալիֆը թաշկինակը թափ տվեց, ու դիվանը ցրվեց, և
Ալա էդ-դինը դուրս եկավ, ու նրա աջ ասպանդակի մոտով գնում էր
Ահմեդ էդ-Դանաֆ պետը՝ խալիֆի աջակողմյան պետը՝ իր քառասուն
արբանյակներով, իսկ Ալա էդ-դինի ձախ կողմում էր Հասան Շումա-
նը՝ խալիֆի ձախակողմյան պետը՝ իր քառասուն արբանյակներով:

Եվ Ալա էդ-դինը դարձավ Հասան Շումանի ու նրա մարդկանց կողմն
ու ասաց. «Միջնորդ եղեք իմ ու Ահմեդ էդ-Դանաֆ պետի միջև, գուցե
նա ինձ որդեգրի ալլահի պատվիրանով»: Եվ պետն ընդունեց այդ ու
ասաց. «Ես ու իմ քառասուն կամակատարները ամեն օր քո առջև ըն-
կած դիվան կգնանք»:

Եվ Ալա էդ-դինը մի քանի օր մնաց խալիֆի մոտ՝ ծառայության
մեջ, և օրերից մի օր այնպես պատահեց, որ Ալա էդ-դինը դիվանից
դուրս եկավ ու իր տուն գնաց ազատ արձակելով Ահմեդ էդ-Դանաֆին
ու նրանց, ովքեր նրա հետ էին, որպեսզի գնային իրենց գործին: Ու նա
նստեց իր կնոջ՝ Զուբեյդա-ջնարահարի հետ ու մոմերը վառեց, ու դրանից
հետո կինը վեր կացավ ու դուրս եկավ կարիքի համար, իսկ Ալա էդ-
դինը նստած մնաց տեղում: Եվ հանկարծ նա սաստիկ ճիչ լսեց, ու
հասլշտապ ոտքի ելավ, որ տեսնի, թե ով ճչաց, ու տեսավ, որ իր կինը՝
Զուբեյդա-ջնարահարուհին էր ճչացողը, և նա ընկած էր գետին: Եվ Ալա
էդ-դինը ձեռքը նրա կրծքին գրեց, ու պարզվեց, որ նա մեռած է:

Իսկ նրա հոր տունը գտնվում էր Ալա էդ-դինի տան դիմաց, և հայ-
րը լսեց նրա ճիչն ու հարցրեց. «Ի՞նչ է պատահել, տեր իմ Ալա էդ-
դին»:— «Թող քո գլուխը ողջ լինի, ո՛վ հայրիկ, քո աղջիկ Զուբեյդայից
հետո,— պատասխանեց Ալա էդ-դինը,— բայց մեռածի հարգանքը, ո՛վ
հայրիկ, նրան թաղելն է»:

1 վաթսուների գլխավոր — գորսպետ, որ ուներ վաթսուն հեծյալներից բաղկացած ջբախուսը:

Եվ երբ առավոտը բացվեց, Զուբեյդային հողում թաղեցին, և Ալա էդ-դինն սկսեց մխիթարել նրա հորը, իսկ հայրն էլ մխիթարում էր Ալա էդ-դինին:

Ահա թե ինչ պատահեց Զուբեյդա-ջնարահարունին: Ինչ վերաբերում է Ալա էդ-դինին, ապա նա սգո զգեստ հագավ ու բացակայեց դիվանից, և նրա աչքերը լաց էին լինում, իսկ սիրտը՝ սգում:

Եվ խալիֆը հարցրեց. «Ո՞վ վեզիր, ի՞նչ պատճառով է Ալա էդ-դինը դիվանից բացակայում»: Եվ վեզիրը պատասխանեց. «Ով հավատացյալների տիրակալ, նա սգում է իր կնոջ՝ Զուբեյդայի մահը և զբաղված է ցավակցութուններ ընդունելով»:— «Հարկ է, որ մենք ցավակցութուն հայտնենք նրան»,— ասաց խալիֆը վեզիրին: Եվ վեզիրը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում»: Եվ խալիֆը վեզիրի ու մի քանի ծառաների հետ զուրս եկավ, ու նրանք ձիեր հեծան ու գնացին Ալա էդ-դինի տուն:

Եվ Ալա էդ-դինը նստած էր ու, հանկարծ ի՞նչ տեսնի. խալիֆն ու վեզիրը և նրանք, ովքեր իրենց հետ էին, մոտենում են նրան: Եվ նա ընդառաջ ելավ նրանց ու համբուրեց գետինը խալիֆի առջև, և խալիֆը նրան ասաց. «Թող ալլահը քեզ բարին հատուցի»: Իսկ Ալա էդ-դինը պատասխանեց. «Թող ալլահը քո կյանքը մեզ համար երկարացնի, ո՞վ հավատացյալների տիրակալ»:— «Ով Ալա էդ-դին, — հարցրեց խալիֆը, — ինչո՞ւ ես դիվանից հեռացել»:— «Իմ կնոջ՝ Զուբեյդայի վշտից, ով հավատացյալների տիրակալ»,— պատասխանեց Ալա էդ-դինը: Եվ խալիֆն ասաց. «Դուրս վանիր հոգսը քո հոգուց: Քո կինը մեռել է մեծ ալլահի ողորմածությամբ, և վիշտը քեզ ոչնչով չի օգնի»:— «Ով հավատացյալների վեհապետ, ես նրա վշտից այն ժամանակ կազատվեմ միայն, երբ մեռնեմ ու ինձ նրա կողքին թաղեն»,— ասաց Ալա էդ-դինը: Եվ խալիֆն այսպես խոսեց. «Հիրավի, ալլահինն է եղածի փոխելը, և մահվանից չեն փրկի ո՛չ խորամանկութունը, ո՛չ փողը: Ալլահից է նրա շնորհքը, ով ասել է.

Բախտը թեկուզ շատ էլ ժպտա կնոջ ծնած ամեն մարդու,
Երբևիցե մեջքը ծռած նրան մահի՞ն պիտի տանեն,
Դե, էլ ինչպե՞ս ուրախանաս ու ցնծության բերես հոգուդ,
Եթե այտերդ, վաղ թե ուշ, հող ու մոխրով պիտի ծածկվեն»:

Եվ խալիֆը Ալա էդ-դինին մխիթարելով, հրամայեց նրան չբացակայել դիվանից և ուղևորվեց դեպի իր պալատը, իսկ Ալա էդ-դինը գիշե-

րը քնեց, և երբ առավոտը բացվեց, ձի նստեց ու գնաց դիվան: Եվ նա խալիֆի մոտ մտավ ու համբուրեց գետինը նրա առջև, և խալիֆը, հանուն Ալա էդ-դինի, շարժվեց գահի վրա ու նրան ասաց. «Բարի գալուստ,— և ողջունեց նրան ու նստեցրեց իր տեղը և առաց.— Ո՞վ Ալա էդ-դին, այսօր երեկոյան դու իմ հյուրն ես»:

Եվ հետո Ալա էդ-դինի հետ նա իր հարկաբաժինը գնաց և, Քութ էլ Քուլուբ անունով մի ստրկուհու կանչելով, ասաց նրան. «Ալա էդ-դինը Զուբեյդա անունով մի կին ուներ, որը նրան զվարճացնում էր տխրության ու հոգսի պահին: Մեծ ալլահի ողորմածությամբ նա մեռել է, և ես ուզում եմ, որ դու ջնարով նրա համար նվագես եղածների մեջ ամենալավ եղանակը, և նա սփոփվի վշտի ու հոգսերի մեջ»:

Եվ ստրկուհին սկսեց ու նվագեց հրաշալի մի եղանակ, և խալիֆն ասաց. «Ինչ կատես, ո՞վ Ալա էդ-դին, այս ստրկուհու ձայնի մասին»:
«Զուբեյդայի ձայնն ավելի լավն էր, քան սրանը, բայց ու ջնար նվագելու մեջ վարպետ է, այնպես որ սրա նվագից ապառաժ քարերն են հրճվում»,— պատասխանեց Ալա էդ-դինը: Եվ խալիֆը հարցրեց. «Նա քեզ դո՞ւր է գալիս»:
«Դուր է գալիս, ո՞վ հավատացյալների տիրակալ»,— պատասխանեց Ալա էդ-դինը: Եվ խալիֆը բացականչեց. «Իմ գլխի արևով եմ երգվում ու պապերիս գերեզմանով, նա թող ինձանից քեզ պարզե լինի, նա՛ էլ, նրա ստրկուհիներն էլ»:

Եվ Ալա էդ-դինը կարծեց, թե խալիֆը կատակ է անում իր հետ, իսկ խալիֆն առավոտյան մտավ իր ստրկուհի Քութ էլ-Քուլուբի մոտ ու նրան ասաց. «Ես քեզ Ալա էդ-դինին եմ նվիրել»: Եվ կինն ուրախացավ դրա համար, քանի որ տեսել էր Ալա էդ-դինին ու սիրել նրան:

Հետո խալիֆն իր հարկաբաժնից գնաց դիվանը և, բնականորեն կանչելով, ասաց. «Քութ էլ-Քուլուբի իրերը Ալա էդ-դինի տուն տարեք և նրան իր ստրկուհիների հետ ղեսպակ նստեցրեք»: Եվ նրանք կնոջը՝ նրա ստրկուհիներով ու իրեղեններով հանդերձ տարան Ալա էդ-դինի տուն՝ նրա պալատը, իսկ խալիֆը մինչև օրվա վերջը նստեց դատարանի սենյակում, իսկ հետո դիվանը ցրվեց, ու նա իր ննջարանը գնաց:

Ահա թե ինչ եղավ խալիֆին, իսկ ինչ վերաբերում է Քութ էլ-Քուլուբին, ապա Ալա էդ-դինի պալատը մտնելով իր ստրկուհիների հետ (իսկ դրանք քառասուն հոգի էին, շհաշված ներքինիները), նա երկու ներքինիների ասաց. «Չեղանից մեկը թող նստի դարպասի աջ կողմի նստարանին, իսկ մյուսը՝ ձախ կողմի նստարանին, և երբ Ալա էդ-դինը գա, համբուրեք նրա ձեռքն ու նրան ասեք. «Մեր տիրուհի Քութ էլ-Քու-

լուրը քեզ պալատ գալ է խնդրում: խալիֆը նրան քեզ է նվիրել իր ստորկուհիների հետ»:

Եվ ներքինիները պատասխանեցին. «Լսո՛ւմ ենք ու հնազանդվում»,— և այնպես արեցին, ինչպես իրենց հրամայել էր նա: Եվ երբ Ալա էգդինը եկավ, տեսավ խալիֆի երկու ներքինիներին, որոնք նստել էին դարպասի մոտ:

Եվ նա արտասովոր համարեց այդ ու ինքն իրեն ասաց. «Գուցե սա իմ տունը չէ՞, ապա թե ոչ՝ ի՞նչ բան է սա»: Եվ ներքինիները, նրան տեսնելով, վեր կացան ու համբուրեցին նրա ձեռքն ու ասացին. «Մենք խալիֆի մարզիկ ենք, Քուլթ էլ-Քուլուբի ստրուկները: Նա ողջունում է քեզ ու ասում, որ խալիֆը իրեն նվիրել է քեզ իր ստրկուհիներով հանդերձ: Նա քեզ խնդրում է իր մոտ գնալ»:— «Նրան ասեք. «Բարի է քո գալուստը, միայն թե, քանի դեռ դու իր տանն ես, նա չի մտնի այն պալատը, որտեղ դու ես գտնվում, որովհետև տիրոջը պատկանողը ծառային վայել չէ»,— պատասխանեց Ալա էգդինը,— և հարցրեք նրան. «Որքան էին քո օրական ծախսերը խալիֆի մոտ»:

Եվ ներքինիները գնացին նրա մոտ ու այդ մասին հարցրին նրան, ու նա ասաց. «Ամեն օր՝ հարյուր գինար»: Եվ Ալա էգդինն ինքն իրեն մտածեց. «Պետք չէր, որ խալիֆը Քուլթ էլ-Քուլուբին նվիրեր ինձ, ու ես նրա վրա այդքան փող ծախսեի, բայց, միևնույն է, այստեղ շատ պրծնի»: Եվ Քուլթ էլ-Քուլուբը մի քանի օր նրա մոտ անցկացրեց, ու նա ամեն օր հարյուր գինար էր տալիս ստրկուհուն: Եվ մի օր էլ Ալա էգդինը շներկայացավ դիվան, ու խալիֆն ասաց. «Ո՞վ վեզիր Զաֆար, ես Քուլթ էլ-Քուլուբին պարգևեցի Ալա-էգդինին միայն նրա համար, որ Քուլթ էլ-Քուլուբը սփոփի նրան կնոջ կորուստից հետո, էլ ինչո՞ւ է նա մեզանից հեռացել»:— «Ո՞վ հավատացյալների տիրակալ,— պատասխանեց վեզիրը,— ճիշտ է ասել հորինողը. «Գուցե, նրա բացակայությունն արգարացում ունի»: Այցելենք նրան»:

Իսկ դրանից մի քանի օր առաջ Ալա էգդինը վեզիրին ասել էր. «Ես խալիֆի մոտ սրտնջացի, որ կնոջս՝ Զուբեյդա-ջնարահարուհու, մահվան պատճառով վշտացած եմ, և նա Քուլթ էլ-Քուլուբին ինձ պարգևեց»: «Եթե խալիֆը քեզ շտիրեր, նրան քեզ չէր նվիրի.— ասել էր վեզիրը,— իսկ գու արդեն մտե՞լ ես նրա մոտ, ո՞վ Ալա էգդին»:— «Ո՞չ, ավահը վկա, ես դեռ շեմ մտել նրա մոտ»,— պատասխանել էր Ալա էգդինը: Եվ վեզիրը հարցրել էր. «Ինչո՞ւ»: Իսկ Ալա էգդինն ասել էր. «Այն, ինչ վայել է տիրոջը, վայել չէ ծառային»:

Հետո խալիֆն ու Ջաֆարը զգեստափոխվեցին և այցի գնացին Ալա էդ-դինին, և գնացին ու հասան նրա տունը:

Եվ Ալա էդ-դինը ճանաչեց նրան ու, ոտքի ելնելով, համբուրեց խալիֆի ձեռքը, իսկ խալիֆը, նրան տեսնելով, վշտի նշաններ նկատեց նրա մեջ ու ասաց.— «Ո՛վ Ալա էդ-դին, ի՞նչն է քեզ տիրած տխրության պատճառը: Մի՞թե դու դեռ չես մտել Քութ էլ-Քուլուբի մոտ»:— «Ո՛վ հավատացյալների վեհապետ,— պատասխանեց Ալա էդ-դինը,— ինչը վայել է տիրոջը, վայել չէ ծառային, և ես մինչև այժմ չեմ մտել նրա մոտ ու չեմ ջոկում նրա լայնքը երկայնքից: Ազատի՛ր ինձ նրանից»:— «Ես ուզում եմ տեսնել նրան ու հարցնել իր վիճակի մասին»,— ասաց խալիֆը: Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում, ո՞վ հավատացյալների տիրակալ»: Եվ խալիֆը գնաց Քութ էլ-Քուլուբի մոտ, և նրան տեսնելով, կինը վեր կացա՛վ ու գետինը համբուրեց նրա առջև: «Ալա էդ-դինը մտե՛լ է քեզ մոտ»,— հարցրեց նրան խալիֆը: Եվ նա պատասխանեց. «Ոչ, ո՞վ հավատացյալների տիրակալ: Ես մարդ ուղարկեցի խնդրելու, որ նա մտնի ինձ մոտ, բայց նա չհա՛մաձայնեց»:

Եվ խալիֆը նրան հրամայեց վերադառնալ իր պալատը և Ալա էդ-դինին ասաց. «Մեղանից մի հեռացիր»:

Եվ հետո խալիֆը գնաց իր պալատը, իսկ Ալա էդ-դինը քնեց այդ գիշեր, իսկ առավոտյան ձի նստեց ու գնաց դիվան և գրավեց վաթսուսի գլխավորի տեղը:

Իսկ խալիֆը գանձապահին կարգադրեց վճարել վեզիր Ջաֆարին տասը հազար դինար, և գանձապահը նրան վճարեց այդ գումարը, և խալիֆը Ջաֆարին ասաց. «Հանձնարարում եմ քեզ ստրկուհիների շուկա գնալ ու Ալա էդ-դինի համար այս տասը հազար դինարով մի ստրկուհի գնել»: Եվ Ջաֆարն անսաց խալիֆի հրամանին ու դուրս եկավ և, իր հետ Ալա էդ-դինին վերցնելով, գնաց ստրկուհիների շուկա:

Եվ այնպես պատահեց, որ այդ օրը Բաղդադի վալին, որին խալիֆն էր նշանակել (իսկ նրան էմիր Խալիդ էին կոչում), շուկա գնաց, որ իր որդու համար ստրկուհի գնի, և դրա պատճառն ահա թե ինչ էր: Վալին Խաթուն անունով մի կին ուներ և նրանից այլանդակ դեմքով մի տղա էր ունեցել, որին Խարազլամ Բազազա էին կոչում: Եվ նա քսան տարեկան էր դարձել ու դեռ չէր կարողանում ձի հեծնել, իսկ նրա հայրը խիզախ, անընկճելի իշխանավոր էր, ու ձի էր հեծնում և գիշերվա մարտի պահին ծովն էր սուզվում:

Եվ մի անգամ գիշերը Խաբազլամ Բազազան քնել էր ու երազախար եղավ ու մորը պատմեց այդ: Եվ մայրն ուրախացավ ու հայտնեց նրա հորը և ասաց. «Ծս ուզում եմ, որ նրան ամուսնացնենք, նա ամուսնության համար պիտանի է դարձել»:— «Նա այլանդակ տեսք ունի, վրայից հոտ է փչում, կեղտոտ է ու վայրենի, և ոչ մի կին նրան չի ընդունի»,— պատասխանեց Խաբազլամի հայրը, իսկ նրա մայրն ասաց. «Մենք ստրկուհի կգտնենք նրա համար»:

Եվ մեծն ալլահի նախասահմանությամբ այն օրը, երբ վեզիրն ու Ալա էդ-գինը շուկա գնացին, այնտեղ գնաց նաև վալին՝ էմիր Խալիդը, իր որդի Խաբազլամ Բազազայի հետ, և երբ նրանք շուկայում էին, հանկարծ մի միջնորդի ուղեկցությամբ մի ստրկուհի հայտնվեց՝ գեղեցիկ, հրապուրիչ, սլացիկ ու համաշափ կազմվածքով, և վեզիրն ասաց. «Ով միջնորդ, հազար դինար առաջարկիր նրա համար»:

Եվ միջնորդը ստրկուհու հետ անցավ վալիի մոտով ու Խաբազլամ Բազազը նրան նայեց բյուրավոր հառաչանքներ կորզող հայացքով, ու ստրկուհու սերը տիրեց նրան: «Ով հայրիկ,— ասաց նա,— այս ստրկուհուն դնիր ինձ համար»: Եվ միջնորդն սկսեց առաջարկված գինը բարձրաձայն հայտարարել, իսկ վալին հարցրեց. «Ի՞նչ է աղջկա անունը»: Եվ աղջիկը պատասխանեց. «Իմ անունը Յասմին է»:— «Ո՞վ տղաս,— ասաց հայրը,— եթե նա քեզ դուր է գալիս, ավելացրո՛ւ գինը»:— «Ո՞վ միջնորդ, ի՞նչ է քո առաջարկված գինը»,— հարցրեց տղան: «Հազար դինար»,— պատասխանեց միջնորդը: «Տալիս եմ հազար դինար և մեկ դինար»,— ասաց երիտասարդը, իսկ երբ հերթը Ալա էդ-գինին հասավ, նա աղջկա համար առաջարկեց երկու հազար դինար, և ամեն անգամ, երբ երիտասարդը՝ վալիի տղան, գինը մեկ դինարով ավելացնում էր, Ալա էդ-գինն ավելացնում էր հազար դինար:

Եվ վալիի տղան զայրացավ ու հարցրեց. «Ո՞վ միջնորդ, ո՞վ է իմ դեմ ավելացնում այդ աղջկա գինը»: Եվ միջնորդը պատասխանեց. «Վեզիր Զաֆարն ուզում է նրան առնել Ալա էդ-գին Աբու-ը-Շամաթի համար»:

Եվ Ալա էդ-գինը ստրկուհու համար առաջարկեց տասը հազար դինար, և տերը նրան զիջեց աղջկան ու ստացավ աղջկա գինը, իսկ Ալա էդ-գինը վերցրեց ստրկուհուն ու նրան ասաց. «Հանուն մեծ ալլահի դեմքի ես քեզ ազատում եմ»,— ապա գրել տվեց իր ամուսնական պայմանը նրա հետ ու տուն գնաց:

Եվ միջնորդը, միջնորդության վարձն ստացած, վերադարձավ, և վալիի տղան կանչեց նրան ու հարցրեց. «Ո՞ւր է ստրկուհին»:— «Նրան

Ալա էդ-դինը գնեց տասը հազար գինարով, ազատագրեց նրան ու նրա հետ իր ամուսնութեան պայմանը գրել տվեց», — պատասխանեց միջնորդը: Եվ տղան վշտացավ, նրա վիշտը մեծացավ, ու նա տուն վերադարձավ աղջկա սիրուց հիվանդացած, ու անկողին ընկավ և հրաժարվեց սննդից, ու նրա ուրիշ ու կիրքը սաստկացան:

Եվ թեանելով, որ նա հիվանդացել է, մայրը հարցրեց- «Ալա հը քեդ պահպանի, ո՞վ տղաս, ի՞նչն է հիվանդութեանդ պատճառը»: — «Յասմինին գնիր ինձ համար, մայրի՛կ», — պատասխանեց տղան: Եվ նրա մայրն ասաց. «Երբ ծաղկավաճառ մարդ անցնի, ես քեզ համար մի կողով հասմիկ¹ կառնեմ»: «Իմ ասածն այն հասմիկը չէ, որից հոտ են քաշում, այլ Յասմին անունով ստրկուհին, որին հայրս ինձ համար շղենց», — բացականչեց տղան: Եվ նրա մայրը ամուսնուն հարցրեց. «Ինչո՞ւ այն ստրկուհուն դու սրա համար շես գնել»: — «Ինչ որ վայել է տիրոջը, վայել չի ծառային: Եվ ես իրավունք չունեմ նրան վերցնելու: Նրան գնել է Ալա էդ-դինը՝ վախճունի գլխավորը», — պատասխանեց վալին:

Եվ աղայի հիվանդությունը սաստկացավ, այնպես որ նա քնելուց զաղարեց ու հրաժարվեց սննդից: Ու նրա մայրը վշտի գլխաշոր կապեց:

Եվ երբ նա իր տանը նստած տանջվում էր որդու համար, հանկարծ նրա մոտ մտավ մի պառավ, որին «Գող Ահմեդ Քամաքիմի մայր» էին կոչում: Եվ այդ գողը ծակում էր միջնահարկի պատն ու վերին պատերը, բարձրանում էր և աչքից ծարիր գողանում, և այդ գարշելի հատկությունները նա հենց սկզբից ի վեր ուներ, իսկ հետո նրան պահակապետ դարձրին, և նա բան գողացավ ու բռնվեց, և վալին հարձակվեց ու բռնեց նրան ու խալիֆի մոտ տարավ:

Եվ խալիֆը հրամայեց արյան բացատում սպանել նրան, իսկ Ահմեդը դիմեց վեզիրի պաշտպանութեանը (իսկ վեզիրի միջնորդությունը խալիֆը չէր մերժում), և վեզիրը բարեխոսեց նրա համար: Եվ խալիֆը հարցրեց. «Ինչպե՞ս ես պաշտպան կանգնում այն շարիքին, որը վնասում է մարդկանց»: — «Ո՞վ հավատացյալների տիրակալ, — ասաց վեզիրը, — բանտարկիր նրան: Նա, որ բանտ է կառուցել, իմաստուն է եղել, որովհետև բանտը ողջերի գերեզմանն է և թշնամիների ուրախությունը»:

¹ Արաբերեն յասմին նշանակում է հասմիկ:

Եվ խաչի՞քը հրամայեց Ահմեդին շղթայադրու ածել ու շղթաների վրա գրել. «Հապիտյան, ցմահ, և նա շղթայադրած կլինի միայն լվացողի նստարանի՛ վրա»: Եվ Ահմեդին բանտ դրեցին շղթայված:

Իսկ նրա մայրը մուօք ունիք վալիի՛ էմիրը Խալիդի տունը և գնաց բանտ՝ իր սրդու մոտ, ու նրան ասաց. «Ես քեզ չէի՞ ասում՝ հեռ կանգնիր արդելվածից»: Եվ նա պատասխանեց մորը. «Ինչ արեցի և նախասահմանել ինձ համար, բայց երբ դու, մայրիկ, վալիի կնոջ մոտ դնաս, թող նա վալիի մոտ բարեխոսի ինձ համար»:

Եվ երբ պառազը վալիի կնոջ մոտ մտավ, տեսավ, որ նա վշտի գլխաշոր է կապել, ու հարցրեց. «Ի՞նչն է ևս ախուր ու տրտում»:— «Իմ որդի Խաբազլամ Ֆազագայի կորստյան համար»,— պատասխանեց վալիի կինը: «Ալլահը քո որդուն պահպանի: Իսկ ի՞նչ է պատահել նրան»,— հարցրեց պառազը, և վալիի կինը նրան ամբողջ պատմությունը պատմեց, և պառազը հարցրեց. «Ի՞նչ կասես, եթե մեկն այնպիսի խաղ խաղա, որ քո տղայի փրկությունը լինի»:— «Իսկ ի՞նչ կանես»,— հարցրեց վալիի կինը: Եվ պառազն ասաց. «Ես գող Ահմեդ Քամաքիմ անունով մի տղա ունեմ, և նա շղթայադրու նստած է բանտում, և նրա շղթաների վրա գրված է. «Հապիտյան, ցմահ»: Վեր կաց ու քո ամենալավ զգեստները հագիր և ամենալավ զարդերով զարդարվիր ու մարդուդ ուրախ և սիրալիք դիմադորիք, իսկ երբ քեզանից ուղի այն, ինչ որ տղամարդն է կնոջից ուզում, մերժիր նրան ու մի թողնի այդ անել և ասա. «Ով արևի զարմանք, երբ տղամարդը կնոջ կարիքը ունի, կպչում է նրանից, մինչև որ կարիքը բավարարում է նրանով, իսկ երբ կնոջն է որևէ բան հարկավոր ամուսնուց, առ չի կատարում այդ»: Եվ ամուսինդ քեզ կհարցնի. «Իսկ ի՞նչ է հարկավոր քեզ»: Եվ դու ասա. «Նախ երգվիր ինձ»: Եվ երբ նա երգում աս քեզ իբր գլխի արևով ու արևի առնով, ասա նրան. «Երգվիր ինձանից քո բաժանվելով»,— և մի համածայնիր, մինչև նա քեզանից բաժանվելով չերգվի, իսկ երբ երգվի, ասա. «Քս բանտում բանտարկված է Ահմեդ Քամաքիմ անունով մի պեռ, և նա մի խեղճ մայր ունի, ու մայրն իմ ոտքերն ընկավ և ինձ քեզ մոտ ուղարկեց ու ասաց. «Թող վալին բարեխոսի նրա համար խաչի՞քի առջև, որ պեսզի խաչի՞քը նրան ների, ու նա շնորհի արժանանա»:

Եվ Խաբազլամի մայրը նրան պատասխանեց. «Լա՛նում եմ ու հեռազանդվում»: Եվ երբ վալին իր կնոջ մոտ մտավ, կինն այդ բոլորն ասաց, ու նա բաժանումով երգվեց, և այնժամ կինը թույլ տվեց նրան, ու նա

1 Այսինքն այն նստարանի, որի վրա լվանում են մահապարտի մարմինը

գիշերը կնոջ մոտ անցկացրեց, իսկ երբ առավոտը բացվեց, վալին լվացվեց ու, առավոտյան աղոթքն անելով, բանտ գնաց ու ասաց. «Ո՛վ Ահմեդ Քամաքիմ, ո՛վ գող, զղջո՞ւմ ես, արդյոք, արածիդ համար»։— «Ես ալլահի առջև եմ զղջացել ու ձեռք քաշել և սրտով ու լեզվով ներսւմ եմ խնդրում ալլահից»,— պատասխանեց Ահմեդը։ Եվ վալին նրան դուրս բերեց բանտից ու իր հետ դիվան տարավ՝ շղթաների մեջ։

Եվ նա մոտեցավ խալիֆին ու համբուրեց գետինը նրա առջև, և խալիֆը հարցրեց. «Ո՛վ էմիր, խալիդ, ի՞նչ ես խնդրում»։ Եվ վալին խալիֆի առջև կանգնեցրեց շղթայակապ Ահմեդ Քամաքիմին, ու խալիֆը հարցրեց. «Ո՛վ Քամաքիմ, դու մինչև հիմա ո՞ղջ ես»։— «Ո՛վ հավատացյալների վեհապետ,— պատասխանեց Ահմեդը,— դժբախտի կյանքը դանգաղ ընթացք է ունենում»։ Եվ խալիֆն ասաց. «Ո՛վ էմիր խալիդ, ինչո՞ւ ես դու նրան այստեղ բերել»։— «Նա խեղճ, միայնակ մայր ունի, որն ուրիշ ոչ ոք չունի, բացի սրանից,— պատասխանեց էմիրը,— և նա քո ստրուկի ոտքերն ընկավ, որպեսզի նա միջնորդի քո առջև, ո՛վ հավատացյալների տիրակալ, և դու շղթաներից ազատես նրա որդուն։ Նա զղջում է արածի համար, և դու նրան պահակապետ կդարձնես, ինչպես առաջ»։— «Դու զղջացե՞լ ես արածիդ համար»,— հարցրեց խալիֆը Ահմեդ Քամաքիմին։ Եվ նա պատասխանեց. «Ես ալլահի առջև եմ զղջացել, ո՛վ հավատացյալների տիրակալ»։ Եվ այնժամ խալիֆը հրամայեց դարբնին կանչել և Ահմեդի շղթաներն արձակել լվացողի նստարանի վրա։

Նա Ահմեդին պահակապետ դարձրեց ու կարգադրեց, որ լավ պահի իրեն ու շիտակ վարվի, և Ահմեդը համբուրեց խալիֆի ձեռքն ու պահակապետի զգեստով դուրս եկավ, և նրա մասին բարձրաձայն հայտարարեցին, որ նա պետ է։ Եվ միառժամանակ նա իր պաշտոնում մնաց, իսկ հետո նրա մայրը գնաց վալիի կնոջ մոտ, ու նա ասաց պառավին. «Փառք ալլահին, որ քո որդուն ողջ ու առողջ ազատեց բանտից։ Ինչո՞ւ նրան չես ասում, որ մի հնար գտնի և ստրկուհի Յասմինին իմ որդի խաբազլամ Բազազայի մոտ բերի»։— «Ես նրան կասեմ»,— պատասխանեց պառավն ու, դուրս գալով նրա տնից, իր որդու մոտ գնաց։ Եվ նա տեսավ, որ որդին հարբած է, ասաց. «Ով զավակս, բանտից ազատվելուդ միակ պատճառը վալիի կինն է, և նա քեզանից պահանջում է, որ դու իր համար մի բան անես ու սպանես Ալա էդ-գին Աբու-շ-Շամաթին ու ստրկուհի Յասմինին իր որդի խաբազլամ Բազազայի մոտ տանես»։— «Դա ամենահեշտ բանն է,— պատասխանեց Ահմեդը,— ես այս գիշեր անպայման մի բան կանեմ»։

Իսկ այդ գիշերը ամսվա առաջին գիշերն էր, և խալիֆը սովորութիւն ուներ այդ գիշերն անցկացնել Զուբեյդա¹ խանումի մոտ՝ որն է ստրկուհու կամ ստրուկի, կամ նման մեկի ազատագրման առթիվ, ինչպէս նաև խալիֆը սովորութիւն ուներ հանել արքայական զգեստը և համրիչն ու դաշույնը, իշխանութեան մատանին թողնել ընդունարանում, գահի վրա:

Իսկ խալիֆը երեք թանկագին քարերով մի ոսկեծուլ կանթեղ ուներ, և այդ կանթեղը շատ թանկ էր խալիֆի համար, Եվ խալիֆը ներքինիներ կարգեց զգեստն ու կանթեղը և մյուս իրերը պահպանելու համար, և ինքը մտավ Զուբեյդա խանումի մոտ:

Իսկ գող Ահմեդ Քամաքիմը սպասեց, մինչև կեսգիշեր եղավ ու Կանոպուս աստղը շողշողաց, և արարածները քնեցին, ու արարիչը վարագույրը նրանց վրա ձգեց, իսկ հետո Ահմեդ Քամաքիմը մերկացրեց սուրն ու աչ ձեռքն առավ, իսկ ձախ ձեռքն առավ կեռը և, մոտենալով խալիֆի ընդունարանին, վերցրեց պարանի սանդուղքը, կեռը նետեց ընդունարանի պատին, սանդուղքով տանիք բարձրացավ ու սենյակի վերևի վերամբարձ տախտակը վերցրեց ու իջավ ընդունարան:

Եվ նա ներքինիներին քնած գտավ ու, դեղով շշմեցնելով նրանց, վերցրեց խալիֆի զգեստը, համրիչը, դաշույնը, թաշկինակը, մատանին և կանթեղը, որի վրա ակերն էին, ու եկած տեղով դուրս եկավ և ուղեվորվեց դեպի Ալա էդ-դին Աբու-ը-Շամաթի տունը: Իսկ Ալա էդ-դինը այդ գիշեր զբաղված էր այն աղջկա հարսանիքով, ու մտավ նրա մոտ, և կինը նրա մոտից գնաց հղիացած:

Իսկ գող Ահմեդ Քամաքիմը մտավ Ալա էդ-դինի սենյակը և, տեղահան անելով սենյակի ներքին մասի մարմարե սալը, փոս փորեց դրա տակ ու իրերի մի մասն այդտեղ դրեց, իսկ մյուս մասը պահեց իր մոտ: Այդ նա մարմարե սալը դրեց իր տեղը, ինչպէս որ եղել էր, և ներս մտած տեղից դուրս եկավ, ինքն իրեն ասելով. «Ես կնստեմ ու կխմեմ և կանթեղն իմ առջև կդնեմ ու դավաթը կըմպեմ դրա լույսի տակ»:

Եվ հետո նա գնաց տուն, իսկ երբ առավոտը բացվեց, խալիֆն ընդունարան մտավ ու տեսավ, որ ներքինիները թմրած են, ու արթնացրեց նրանց, և ձեռքը մեկնեց, բայց ո՛չ հագուստը գտավ, ո՛չ մատանին, ո՛չ համրիչը, ո՛չ դաշույնը, ո՛չ թաշկինակն ու ո՛չ էլ կանթեղը:

¹ Զուբեյդա — Հարուն ալ-Ռաշիդի կանանցից մեկը:

Եվ դրանից խալիֆը սաստիկ զայրացավ ու կատաղության զգեստը հագավ (իսկ զա կարմիր զգեստ էր) ու նստեց գեփանում, և վեզիրը մոտեցավ ու համբուրեց գետինը նրա առջև ու ասաց. «Թող ալլահը հավատացյալների տիրակալին շարիքից փրկի»: Եվ խալիֆը բացականչեց. «Ով վեզիր, շարիքը մեծ է»:— «Ի՞նչ է պատահել»,— հարցրեց վեզիրը, և խալիֆը նրան պատմեց այն ամենը, ինչ պատահել էր: Եվ հանկարծ վալին ձի հեծած եկավ ու նրա ասպանդակի կողքից քայլում էր գող Ահմեդ Քամաքիմը:

Եվ վալին խալիֆին գտավ սաստիկ զայրույթի մեջ, իսկ խալիֆը, տեսնելով վալին, հարցրեց. «Ով էմիր Խալիդ, ինչպե՞ս են գործերը Բաղդադում»: «Ամեն ինչ բարեհաջող է ու ապահով»,— պատասխանեց վալին: «Մտում ես»,— ասաց խալիֆը: Եվ վալին հարցրեց. «Ի՞նչո՞ւ, ով հավատացյալների տիրակալ»: Եվ խալիֆը նրան պատմեց, թե ինչ է պատահել, ու ասաց. «Դու պարտավոր ես այդ բոլորն ինձ բերել»:— «Քվ հավատացյալների տիրակալ, — ասաց վալին, — քացախի որդերը քացախից են առաջանում ու դրա մեջ մնում, և օտարը ոչ մի կերպ չի կարող այստեղ մուտք գործել»:— «Եթե դու այդ իրերն ինձ շահանձես, ես քեզ կսպանեմ»,— ասաց խալիֆը: Եվ վալին ասաց. «Նախքան ինձ սպանելը գող Ահմեդ Քամաքիմին սպանի՛ր, որովհետև քացի պահակապետից, ոչ ոք չի ճանաչում գողերին ու խաբեբաներին»:

Եվ Ահմեդ Քամաքիմը վեր կացավ ու ասաց խալիֆին. «Պաշտպանի՛ր ինձ վալիի առջև, և ես պատասխանատու եմ գողի համար, ու հետքը կփնտրեմ, մինչև իմանամ, թե ով է: Միայն թե երկու դատավոր տուր ինձ ու երկու վկա, նա, ով այդ բանն արել է, չի վախենում, ո՛չ քեզանից, ո՛չ վալիից, ո՛չ էլ ուրիշ որևէ մեկից»:— «Քեզ կտրվի այն, ինչ որ ուզում ես, — ասաց խալիֆը, — միայն թե առաջին խուզարկությունն իմ պալատում կկատարվի, իսկ հետո՝ վեզիրի պալատում ու վաթսունի գլխավոր պալատում»: «Դու ճիշտ ես, ո՛վ հավատացյալների տիրակալ, կարող է պատահել, որ այդ արարքն անողը զստիարակված լինի հավատացյալների տիրակալի պալատում կամ նրա մերձավորներից մեկի պալատում», — ասաց Ահմեդ Քամաքիմը: Եվ խալիֆը բացականչեց. «Ի՞մ գլխի արևով եմ երգվում, նա, ում մոտ հայտնաբերվեն այդ իրերը, մահապատժի կենթարկվի, եթե նաչնիսկ իմ տղան լինի»:

Եվ ապա Ահմեդ Քամաքիմը վերցրեց, ինչ պահանջեղ էր, ու հրովարտակ ստացավ տները մտնելու ու խուզարկելու մասին: Եվ նա գնաց՝ ձեռքին մի գավազան, որի մեկ երրորդը բրոնզից էր, մեկ երրորդը՝ պղնձից ու մեկ երրորդն էլ՝ երկաթից, ու խուզարկեց խալիֆի պալատն

ու վեզիր Զաֆարի պալատը և ման եկավ պալատահանների ու դռնապանների տները, մինչև որ Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթի տան կողքով անցավ:

Եվ տան առջև աղմուկ լսելով, Ալա էդ-դինը վեր կացավ ու իր կնոջ՝ Յասմինի, մոտից դուրս եկավ և, դարպասը բացելով, տեսավ մեծապես շփոթված վալիին: «Ի՞նչ է պատահել, ո՞վ էմիր Խալիդ», — հարցրեց նա: Վալին սրտմեց նրան ամեն բան, և Ալա էդ-դինն ասաց. «Մտե՛ք տուն և խուզարկեք»: Բայց վալին բացականչեց. «Ների՛ր, տեր: Գու հավատարիմ ես, և երբեք հավատարիմը խաբերա չի դառնա»: — «Անհրաժեշտ է խուզարկել իմ տունը», — ասաց Ալա էդ-դինը: Եվ վալին դատավորների ու վկաների հետ ներս մտավ, և այնժամ Ահմեդ Քամարիմը գնաց դեպի սենյակի ներքնի մասն ու, մոտենալով մարմարյա սալին, որի տակ ինքն էր իրերը թաղել, դիտմամբ գավազանը խփեց սալին: Եվ սալը կոտրվեց, ու հանկարծ տեսան, որ դրա տակ ինչ-որ բան է փայլում, և պահակապետը բացականչեց. «Հանուն ալլահի, թող ալլահի կամքը լինի: Որպես մեր գալստյան օրհնութուն՝ գանձ է գտնվել: Ահա կիջնեմ այս գանձարանը ու կտեսնեմ, թե ի՞նչ կա այնտեղ»:

Եվ դատավորն ու վկաները նայեցին այդ տեղին ու գաան բոլոր իրերը և թուղթ գրեցին, որի մեջ հաստատվում էր, որ բոլոր իրերը գտել են Ալա էդ-դինի տանը ու այդ թղթի վրա իրենց կնիքը դրեցին:

Եվ հրամայեցին բռնել Ալա էդ-դինին ու հանեցին նրա գլխի փաթ-թոցը և նրա ամբողջ գույքն ու ունեցվածքը ցուցակագրեցին, և Ահմեդ Քամարիմը բռնեց սարկուհի Յասմինին (իսկ սա հղթացել էր Ալա էդ-դինից) ու իր մորը հանձնեց և ասաց. «Խաթունին՝ վալիի կնոջը, հանձնիր նրան»:

Եվ պառավը վերցրեց Յասմինին ու վալիի կնոջ մոտ տարավ: Եվ երբ Խաբազլամ Բազազան նրան տեսավ, առողջութունը վերագաթնավ նրան, և նա նույն ժամին ու բոպեին վեր կացավ ու խիստ ուրախացավ:

Եվ նա մոտեցավ աղջկան, բայց աղջիկը գոտու տակից դաշււյնը հանեց ու ասաց. «Շեռացի՛ր ինձանից, թե չէ ես քեզ է՛լ կսպանեմ, ի՛նձ էլ»:

Եվ տղայի մայրը՝ Խաթունը, բացականչեց. «Ո՞վ պոռնիկ, թույլ տուր, որ տղաս քեզ հետ ցանկացածին հասնի»: Իսկ Յասմինն ասաց. «Ո՞վ շուն, ո՞ր դավանանքն է թույլ տալիս կնոջը երկու տղամարդու հետ ամուսնանալ, և շնեքին ո՞վ թույլ կտա առյուծների բնակավայրը մտնել»:

Եվ երիտասարդի կիրքն ավելի բորբոքվեց, և սիրուց ու հուզմունքից նա այնպես թուլացավ, որ սննդից հրաժարվեց ու գլուխը բարձին

գրեց, և այնժամ վալիի կինը Յասմինին ասաց. «Ո՞վ պոռնիկ, ինչպե՞ս ես համարձակվում ստիպել ինձ, որ ես վշտանամ տղայիս համար: Քեզ անպայման պետք է շարշարել, իսկ ինչ վերաբերում է Ալա էդ-դինին, ապա նրան անպայման կկախեն»:— «Ես կմեռնեմ, բայց կսիրեմ նրան»,— բացականչեց ստրկուհին: Եվ այնժամ վալիի կինը պոկեց նրա վրայի թանկարժեք դարձերն ու հանեց մետաքսե գգեստները և հագցրեց պարուսինե վարտիք ու մազե խալաթ և խոհանոց տարավ, աղջիկ-աղախիսներից մեկը դարձնելով նրան:

«Որպես պատիժ, դու փայտ կշարդես, կանաչի կմաքրես ու կրակ կղնես պղինձների տակ»,— ասաց նա: Եվ Յասմինը պատասխանեց. «Ես ամեն շարշարանքի ու գործի համաձայն եմ, բայց համաձայն չեմ քո տղային տեսնել»: Եվ Ալլահը մեղմացրեց ստրկուհիների սիրտը նրա նկատմամբ, և նրանք սկսեցին նրա փոխարեն խոհանոցի գործերն անել:

Ահա թե ինչ պատահեց Յասմինին: Ինչ վերաբերում է Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթին, ապա նրան խալիֆի իրերի հետ վերցրին ու տարան, մինչև որ նրա հետ դիվան հասան:

Եվ խալիֆը նստել էր գահին ու հանկարծ տեսավ, որ նրանք բերում են Ալա էդ-դինին ու նրա հետ՝ այն իրերը: «Ո՞րտեղ գտաք դրանք»,— հարցրեց խալիֆը: Եվ նրան պատասխանեցին. «Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթի տանը»:

Եվ խալիֆը զայրույթով համակվեց ու վերցրեց իրերը, բայց դրանց մեջ կանթեղը չգտավ: Ու նա հարցրեց. «Ո՞վ Ալա էդ-դին, ո՞ւր է կանթեղը»: Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Ես չեմ գողացել ու չգիտեմ ու չեմ տեսել ու տեղեկություն չունեմ դրանից»: Եվ խալիֆը բացականչեց. «Ինչպե՞ս, խաբեբա՛, ես քեզ իմ մերձավորն եմ դարձնում, իսկ դու ինձ քեզնից հեռացնում ես, և ես քեզ վստահում եմ, իսկ դու ինձ խաբո՞ւմ ես»: Եվ ապա հրամայեց կախել նրան:

Եվ վալին դուրս եկավ, իսկ մունետիկը հայտարարեց Ալա էդ-դինի մասին. «Ահա հատուցումը և նվազագույն հատուցումը նրան, ով խաբում է ուղիղ ընթացող խալիֆներին»: Եվ մարդիկ կախաղանի շուրջը հավաքվեցին:

Ահա թե ինչ պատահեց Ալա էդ-դինին: Ինչ վերաբերում է Ահմեդ ադ-Դանաֆին՝ Ալա էդ-դինի ավագին, ապա նա իր արբանյակների հետ նստած էր պարտեզում, և մինչ նրանք նստած ուրախանում ու զվարճանում էին, հանկարծ ներս մտավ մի մարդ՝ մի ջրկիր այն ջրկիրներից, որ նստում են դիվանում, և համբուրեց Ահմեդ ադ-Դանաֆի ձեռքն ու սփսփեց. «Ո՞վ պետ Ահմեդ ադ-Դանաֆ, դու նստել և ուրախանում ես, իսկ

չարիքը քո քթի տակ է, և սահայն դու չգիտես, թե ինչ է պատահել»։— «Ի՞նչ է պատահել»,— հարցրեց Ահմեդ ադ-Դանաֆը։ Եվ ջրկիրն ասաց. «Ալա էդ-դինին, որ քո որդին է, ըստ ուխտի, կախելու տարան»։— «Ի՞նչ հնարամտություն ունես, ո՞վ Հասան Շուման»,— հարցրեց Ահմեդ ադ-Դանաֆը, և Հասանն ասաց. «Ալա էդ-դինն այդ գործում հանցավոր չէ, և դա որևէ թշնամու արարքն է»։— «Ի՞նչ պիտի անել քո կարծիքով»,— հարցրեց Ահմեդ ադ-Դանաֆը. «Նրա փրկությունը մեզ վրա է, եթե տերը կամենա»,— պատասխանեց Հասանը։ Ապա Հասան Շումանը գնաց զնդան և բանտապահին ասաց. «Հանձնի՛ր մեզ մեկին, որը մահվան է արժանի»։ Եվ բանտապետը նրան հանձնեց մի մարդու, որ բոլոր արարածներից առավել նման էր Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթին, և Հասանը ծածկեց նրա գլուխը, և Ահմեդ ադ-Դանաֆը նրան իր ու կահիրեցի Ալի-Ջեյբակի արանքը գցած՝ տարավ։

Իսկ Ալա էդ-դինին տարան, որ կախեն, և այդտեղ Ահմեդ ադ-Դանաֆը մոտեցավ դահձին ու նրա ոտը տրորեց, և դահիճը նրան ասաց. «Տեղ տո՛ւր, որ կարողանամ գործս կատարել»։ Իսկ Ահմեդ ադ-Դանաֆն ասաց. «Ո՞վ անիծյալ, վերցրո՛ւ այս մարդուն և կախիր Ալա էդ-դինի փոխարեն. նա անարդար կերպով է անպատվված, և մենք զառնուկով Իսմայիլին կփրկագնենք»¹։

Եվ դահիճը վերցրեց այն մարդուն ու Ալա էդ-դինի փոխարեն կախեց, իսկ հետո Ահմեդ ադ-Դանաֆն ու կահիրեցի Ալի Ջեյբակը վերցրին Ալա էդ-դինին ու տարան Ահմեդ ադ-Դանաֆի տուն։

Եվ երբ նրանք ներս մտան, Ալա էդ-դինն ասաց. «Թող ալլահը բարիքով հատուցի քեզ, ո՞վ ավագ»։ Եվ Ահմեդը նրան հարցրեց. «Ո՞վ Ալա էդ-դին, այդ ի՞նչ ես արել։ Թող ալլահը ողորմի նրան, ով ասել է. «Մի՛խաբիր նրան, ով քեզ վստահել է, եթե նույնիսկ դու խաբեբա ես»։ Խալիֆն իր մոտ քեզ իշխանություն տվեց ու հավատարիմ կոչեց ու հուսալի, ինչո՞ւ, ուրեմն, դու այդպես վարվեցիր ու վերցրիր նրա իրերը»։— «Ալլահի մեծագույն անունով եմ երդվում, ո՞վ ավագ,— բացականչեց Ալա էդ-դինը,— դա իմ արարքը չէ, և ես դրանում հանցավոր չեմ ու չգիտեմ, թե ո՞վ է դա արել»։— «Այդ գործը ոչ այլ ոք է կատարել, եթե ոչ բացահայտ թշնամի,— ասաց Ահմեդ ադ-Դանաֆը,— և ով դա արել

¹ Այստեղ ակնարկվում է Աբրահամի կողմից իր որդի Իսահակին զոհաբերելու աստվածաշնչյան առասպելը։ Այդ պատմությունը Ղուրանում էլ է տեղ գտել, բայց, մահմեդական մեկնաբանության համաձայն, որպես զոհ էր բերվել ոչ թե Իսահակը, այլ Աբրահամի մյուս որդին՝ Իսմայիլը, որին հայրը «փրկագնեց» զառ զոհաբերելով։

է, նա կհատուցի դրա համար: Բայց քեզ, Ալա էդ-դին, այլևս չի կարելի Բաղդադում մնալ, թագավորների հետ չեն թշնամանում, ո՛վ տղաս, և ում որ թագավորները փնտրում են, օ, շատ ծանր են նրա համար պարտքերը»:— «Ո՛ւր գնամ, ո՛վ ավագ»— հարցրեց Ալա էդ-դինը: Եվ Ահմեդ ադ-Ռանաֆն ասաց. «Ես քեզ ալ-Իսքանդարի¹ կտանեմ, դա օրհնյալ քաղաք է, և նրա մատուցները կանաչ են ու կյանքն այնտեղ՝ դուրեկան»: Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում, ո՛վ ավագ»:

Եվ այնժամ Ահմեդ ադ-Ռանաֆը Հասան Շումանին ասաց. «Զգաստ եղիր, և երբ խալիֆն իմ մասին հարցնի, նրան ասա. նա գնացել է երկրները շրջելու»:

Այնուհետև Ահմեդը վերցրեց Ալա էդ-դինին ու Բաղդադից դուրս եկավ, ու նրանք գնացին, մինչև որ հասան խաղողի այգիների ու պարտեզների մոտ: Եվ նրանք խալիֆի կապալառուներից երկու հրեայի տեսան, որոնք ջորիներ հեծած գնում էին, և Ահմեդ ադ-Ռանաֆը հրեաներին ասաց. «Պահպանության վարձ տվեք»:— «Ինչի՞ համար քեզ վարձ վճարենք»,— հարցրին հրեաները: Եվ Ահմեդն ասաց. «Ես այս հովտի պահապանն եմ»: Եվ հրեաներից յուրաքանչյուրը նրան հարյուր դինար վճարեց, իսկ դրանից հետո Ահմեդ ադ-Ռանաֆը սպանեց նրանց և, ջորիները վերցնելով, մեկին ինքը հեծավ, և Ալա էդ-դինն էլ նստեց մյուս ջորուն:

Եվ նրանք գնացին Այաս քաղաքը և ջորիներին իջևան տարան ու գիշերն այնտեղ քնեցին, իսկ երբ առավոտը բացվեց, Ալա էդ-դինը ծախեց իր ջորին և Ահմեդ ադ-Ռանաֆի ջորին դոնապանին հանձնեց՝ պահելու, և նրանք Այաոի նավահանգստում նավ նստեցին ու հասան ալ-Իսքանդարի:

Եվ Ահմեդ ադ-Ռանաֆն ու Ալա էդ-դինը նավից դուրս եկան ու գնացին շուկա և հանկարծ լսեցին, որ միջնորդը ինը հարյուր հիսուն դինարով առաջարկում է մի խանութ՝ մեկ ներքին սենյակով:

«Հազար եմ տալիս»,— ասաց այնժամ Ալա էդ-դինը, և վաճառողը գիջեց նրան (իսկ խանութը գանձատանն էր պատկանում): Եվ Ալա էդ-դինն ստացավ բանալիներն ու բացեց խանութն ու սենյակը, և պարզվեց, որ դրա հատակին գորգեր են փռած ու բարձեր են դրված, ու նա

1 Ալ-Իսքանդարիե— Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի արաբական անունը:

այնտեղ մի ամբար տեսավ, որտեղ առագաստներ, կայմեր, ճոպաններ, կեղևով ու խեցիներով լի սնդուկներ ու տոպրակներ, ասպանդակներ, կացիներ, մահակներ, գանակներ, մկրատներ ու այլ իրեր կային, որովհետև խանութի տերը հնավաճառ էր եղել:

Եվ Ալա էդ-դին Աբու-ը-Շամաթը խանութում նստեց, և Ահմեդ ադ-Դանաֆը նրան ասաց. «Ո՞վ տղաս, խանութն ու սենյակը և դրա մեջ եղածը քոնն են: Նստիր այստեղ ու վաճառիր, ու մի վարանիր, որովհետև մեծ ալլահն օրհնել է առևտուրը»:

Եվ Ահմեդ ադ-Դանաֆը երեք օր մնաց Ալա էդ-դինի մոտ, իսկ շորրորդ օրը հրաժեշտ տվեց նրան ու ասաց. «Ապրիր այստեղ, մինչև ես գնամ ու վերադառնամ խալիֆի գթության լուրով, ու տեսնեմ, թե ով է քո գլխին այդ խաղը խաղացել»:

Ապա Ահմեդ ադ-Դանաֆը ճանապարհ ընկավ ու, Այաս հասնելով, իջևանից վերցրեց իր շորին ու Բաղդադ գնաց: Եվ նա այնտեղ հանդիպեց Հասան Շումանին ու նրա արբանյակներին, և ասաց. «Ո՞վ Հասան, խալիֆը հարցրե՞լ է իմ մասին»: Եվ Հասանը պատասխանեց. «Ո՞չ, նրա մտքովն էլ չի անցել քեզ հիշել»:

Եվ Ահմեդ ադ-Դանաֆը մնաց խալիֆին ծառայելու ու սկսեց նորությունների հետամուտ լինել: Եվ նա տեսավ, որ օրերից մի օր խալիֆը դիմեց վեզիր Զաֆարին ու նրան ասաց. «Տե՛ս, վեզիր, թե ինչպես վարվեց ինձ հետ Ալա էդ-դինը»: Եվ վեզիրը նրան պատասխանեց. «Ո՞վ հավատացյալների տիրակալ, դու նրան կախաղանով հատուցեցիր դրա համար, և նրա հատուցումն այն է, ինչ ստացավ»:

— «Ով վեզիր, ես ուզում եմ դուրս գալ, նրան կախված վիճակում տեսնել», — ասաց խալիֆը: Եվ վեզիրն ասաց. «Արա, ինչ ուզում ես, ով հավատացյալների տիրակալ»:

Եվ այնժամ խալիֆն ու վեզիր Զաֆարը գնացին կախաղանի կողմը:

Եվ խալիֆը գլուխը բարձրացրեց ու տեսավ, որ կախվածը հավատարիմ, վստահելի Ալա էդ-դին Աբու-ը-Շամաթը չէ:

«Ո՞վ վեզիր, սա Ալա էդ-դինը չէ», — ասաց նա: Եվ վեզիրը հարցրեց. «Ինչպե՞ս ճանաչեցիր, որ դա նա չէ»: Իսկ խալիֆը պատասխանեց. «Ալա էդ-դինը կարճ էր, իսկ սա երկար է»: — «Կախվածը երկարում է», — պատասխանեց վեզիրը: Եվ խալիֆն ասաց. «Ալա էդ-դինը սպիտակ էր, իսկ սա սև դեմք ունի»: — «Մի՞թե դու չգիտես, ո՞վ հավատացյալների տիրակալ, որ մահվանը սև գույնն է հատուկ», — ասաց վեզիրը: Եվ խալիֆը հրամայեց կախաղանից իջեցնել կախվածին, և երբ նրան իջեցրին, պարզվեց, որ նրա երկու գարշապարին գրված էին

երկու ծերունիների անունները¹: «Ով վեզիր,— ասաց խալիֆը,— Ալա էդ-դինը սուննի էր, իսկ սա ռաֆիդյան է»: Եվ վեզիրը բացականչեց. «Փառք ալլահին՝ խորհուրդների զիտակին: Մենք շահիտենք՝ Ալա էդ-դինն է սա, թե մի ուրիշը»: Եվ խալիֆը հրամայեց թաղել կախվածին, ու նրան թաղեցին, և Ալա էդ-դինը մոռացվեց ու մտքից հանվեց, Եվ ահա այն, ինչ որ նրա հետ եղավ:

Ինչ վերաբերում է Խաբազլամ Բազազային՝ վալիի տղային, ապա նրա սերն ու կիրքը սաստկացան ու նա մեռավ, ու փոս փորեցին ու նրան թաղեցին հողում: Իսկ ինչ վերաբերում է ստրկուհի Յասմինին, ապա նրա հղիութունն ավարտին հասավ, ու նա երկունքի ցավերով բռնվեց և ծնեց արական սեռի մի երեխա՝ լուսնի նման:

«Ի՞նչ անուն պիտի դնես նրան»,— հարցրին ստրկուհիները: Եվ նա պատասխանեց. «Նրա հայրը ողջ լինեք, անուն կդնեք նրան, իսկ ես Ասլան կանվանեմ»:

Եվ այնուհետև երկու տարի շարունակ նա կրծքով կերակրեց նրան, ու ծծից կտրեց, ու երեխան սկսեց շորեքթաթ անել ու ոտքի ելնել: Եվ այնպես պատահեց, որ օրերից մի օր նրա մայրը խոհանոցում գործով էր զբաղված, և երեխան գնաց ու դեպի մի սենյակ տանող սանդուղք տեսավ և բարձրացավ սանդուղքով:

Իսկ էմիր խալիդը նստած էր այնտեղ ու երեխային վերցրեց և ծընկներին դրեց ու փառաբանեց տիրոջը, որ նա ստեղծեց ու կերտեց մանկանը նրա կերպարանքով, ու նայեց երեխայի դեմքին ու տեսավ, որ նա բոլոր արարածներից առավել նման է Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթին:

Իսկ հետո տղայի մայրը՝ Յասմինը, սկսեց փնտրել տղային ու բարձրացավ սենյակ և տեսավ, որ էմիր խալիդը նստած է այնտեղ, իսկ երեխան խաղում է նրա ծնկներին (իսկ ալլահը երեխայի նկատմամբ սեր գցեց էմիրի սիրտը): Եվ երեխան տեսավ իր մորն ու նետվեց դեպի նա, բայց էմիր խալիդը նրան պահեց ծնկներին ու Յասմինին ասաց. «Մոտ արի, աղջիկս»: Եվ երբ նա մոտեցավ, նրան հարցրեց. «Ո՞ւմ տղան է այս երեխան»: Եվ Յասմինը պատասխանեց. «Սա իմ տղան է, իմ սրբտի պտուղը»:— «Իսկ ո՞վ է նրա հայրը»,— հարցրեց վալին: «Նրա հայրը Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթն է, բայց այժմ նա քո տղան է դարձել»,—

¹ Այսինքն՝ Աբու-Բեքր և Օմար խալիֆներին: Շիաները, որոնց հետևորդն է եղել կախվածը, այդ երկուսին, ինչպես և երրորդ խալիֆ Օսմանին բռնատիրոջ էին համարում և այդ պատճառով էլ հաճախ նրանց անունները գրում էին մաշիկների ներբաններին, որ ոտքերով տրորեն նրանց: Սունիները, ընդհակառակը, առաջին երեք խալիֆներին օրինական տիրակալներ են համարում:

պատասխանեց Յասմինը, «Ալա էդ-դինը խարեբա էր»,— ասաց վալին։
Եվ Յասմինը բացականչեց. «Թող ալլահը նրան խարեությունից հեռու
պահի։ Անհնարին է ու չի կարող պատահել, որ հավատարիմը խաբեբա
դառնա»։— «Երբ այս երեխան շափահաս դառնա ու մեծանա և քեզ
հարցնի. «Ո՞վ է իմ հայրը», նրան կասես. «Դու էմիր Խալիդի, վալիի՝
պահակապետի, տղան ես»,— ասաց էմիրը։ Եվ Յասմինը պատասխանեց.
«Լսում եմ ու հնազանդվում»։

Իսկ հետո էմիր Խալիդը՝ վալին, կատարեց երեխայի թլպատումը
և սկսեց դաստիարակել նրան, ու լավ դաստիարակեց նրան։ Եվ նրա
համար գեղազրույթյան ուսուցիչ վարձեց, և սա սովորեցրեց տղային
գեղազրույթուն ու կարդալ, ու տղան կարդաց Ղուրանն առաջին ու երկ-
րորդ անգամ ու ծայրից ծայր կարդաց այն, և նա էմիր Խալիդին «հայ-
րիկ» էր կոչում։

Եվ վալին սկսեց մրցումներ կազմակերպել ու հեծյալներին հավա-
քում էր և ձիարշավ կազմակերպում, որպեսզի մանկանը սովորեցնի
կովի միջոցները, և ցույց էր տալիս, թե նիզակով ու սրով որ տեղերին
պետք է հարվածել, մինչև որ Ասլանը հիմնավորապես տիրապետեց
ձիավարության արվեստին ու խիզախություն սովորեց և դարձավ տաս-
նըշորս տարեկան ու հասավ էմիրի մակարդակին։

Եվ այնպես պատահեց, որ Ասլանն օրերից մի օր հանդիպեց գող
Ահմեդ Քամաքիմին, ու նրանք բարեկամներ դարձան, ու տղան զինե-
տուն տարավ նրան։ Եվ հանկարծ գող Ահմեդ Քամաքիմը հանեց թան-
կազին ակներով կանթեղը, որ խալիֆի իրերի միջից վերցրել էր, և իր
առջև դնելով, սկսեց գավաթով խմել դրա լույսի ներքո ու հարբեց, «Ո՞վ
պետ, այդ կանթեղն ինձ տուր»,— ասաց նրան Ասլանը։ «Ես չեմ կարող
սա քեզ տալ»,— պատասխանեց Ահմեդը։ Եվ Ասլանը հարցրեց. «Ինչո՞ւ»։
Եվ Ահմեդն ասաց. «Սրա համար հոգիներ են կորել»։— «Ո՞ւմ հոգին է
դրա համար կորել»,— հարցրեց Ասլանը։ Եվ Ահմեդն ասաց. «Այստեղ
մեկը կար, որ ուրիշ երկրից էր եկել ու վաթսունի գլխավոր դարձել ու
նրա անունը Ալա էդ-դին Արու-շ-Շամաթ էր և նա այս կանթեղի պատ-
ճառով մեռավ»։— «Իսկ ո՞րն է նրա պատմությունը, և ի՞նչ պատճա-
ռով նա մեռավ»,— հարցրեց Ասլանը։ Եվ Ահմեդն ասաց. «Դու Խաբազ-
լամ Բազազա անունով եղբայր ունեիր, և նա տասնվեց տարեկան էր դար-
ձել ու պիտանի էր ամուսնության համար ու հորից պահանջեց, որ
իր համար ստրկուհի առնի...»։

Եվ Ահմեդը պատմեց ամբողջ պատմությունը սկզբից մինչև վերջ
ու հայտնեց Խաբազլամ Բազազայի հիվանդության մասին, և այն մաս

սին, ինչ որ հանիրավի պատահել էր Ալա էդ-դինին: Եվ Ասլանն ինքն իրեն ասաց. «Գուցե, այդ աղջիկը՝ Յասմինը, իմ մայրն է, իսկ հայրս սչ այլ ոք է, եթե ոչ Ալա էդ-դին Արու-շ-Շամաթը»:

Եվ տղան՝ Ասլանը, Ահմեդի մոտից տխուր-տրտում գնաց ու հանդիպեց Ահմեդ ադ-Դանաֆ պետին, և, նրան տեսնելով, Ահմեդ ադ-Դանաֆը բացականչեց. «Փա՛ռք նրան, որ իր նմանը չունի»:— «Ո՛վ ավագ, ինչի՞ վրա ես զարմանում»,— հարցրեց նրան Հասան Շումանը, և Ահմեդ ադ-Դանաֆը նրան պատասխանեց. «Այս տղայի՝ Ասլանի, արտաքինի վրա: Ես բոլոր արարածներից առավել նման է Ալա էդ-դին Արու-շ-Շամաթին»:

Եվ Ահմեդ ադ-Դանաֆը կանչեց. «Հե՛յ, Ասլան»: Եվ երբ Ասլանը ձայն տվեց, նրան հարցրեց. «Ինչպե՞ս է մորդ անունը»:— «Նրան ստորկուհի Յասմին են կոչում»,— պատասխանեց տղան: Եվ Ահմեդ ադ-Դանաֆը բացականչեց. «Ո՛վ Աորան, հանգստացրու հոգիդ ու աչքերդ հովացրու: Ուրիշ ոչ ոք քո հայրը չէ, բացի Ալա էդ-դին Արու-շ-Շամաթից: Իայց գնա մորդ մոտ ու հարցրու քո հոր մասին»:— «Լսում եմ ու հնազանդվում»,— պատասխանեց Ասլանն ու գնաց իր մոր մոտ և նրան հարցրեց, ու մայրը պատասխանեց. «Քո հայրը էմիր Խալիդն է»: Իսկ պատանին բացականչեց. «Ալա էդ-դին Արու-շ-Շամաթից բացի, ուրիշ ոչ ոք իմ հայրը չէ՛»:

Եվ Ասլանի մայրը լաց եղավ ու ասաց. «Ո՛վ է քեզ այդ բանը պատմել, տղաս»: Եվ Ասլանը պատասխանեց. «Ինձ Ահմեդ ադ-Դանաֆ պետն է պատմել այդ»: Եվ այնժամ Յասմինը հայտնեց նրան այն ամենը, ինչ պատահել էր, ու ասաց. «Ո՛վ աղաս, իսկո՞թյունը հայտնի դարձավ ու կեղծիքը չքվեց: Իմացած եղիր, որ քո հայրը Ալա էդ-դին Արու-շ-Շամաթն է, միայն թե քեզ դատտխարակել է միայն էմիր Խալիդը, և նա քեզ իր որդին է դարձրել: Ո՛վ տղաս, եթե դու հանդիպես Ահմեդ ադ-Դանաֆ պետին, նրան ասա. «Ո՛վ ավագ, հանուն ալլահի խնդրում եմ քեզ, իմ փոխարեն լուծիր իմ հայր Ալա էդ-դին Արու-շ-Շամաթի վրեժը»: Եվ Ասլանը գուրս եկավ իր մոր անշահից ու գնաց ու, մտնելով Ահմեդ ադ-Դանաֆ պետի մոտ, համբուրեց նրա ձեռքը:

«Ի՞նչ կա, ո՛վ Ասլան»,— հարցրեց Ահմեդ ադ-Դանաֆը: Եվ Ասլանըն ասաց. «Ես իմացա ու համոզվեցի, որ իմ հայրը Ալա էդ-դին Արու-շ-Շամաթն է, և ուզում եմ, որ իմ փոխարեն դու վրեժ լուծես նրան սպանողից»:— «Ո՛վ է սպանել քո հորը»,— հարցրեց Ահմեդ ադ-Դանաֆը: «Գող Ահմեդ Քամաթիմը»,— պատասխանեց Ասլանը: «Իսկ ո՛վ է այդ ասել քեզ»,— հարցրեց Ահմեդը: Եվ Ասլանն ասաց. «Ես նրա մոտ

տեսա թանկագին քարերով այն կանթեղը, որը կորել է ի թիվս խալիֆի մյուս իրերի, ու նրան ասացի. «Այդ կանթեղն իմն տուր», բայց նա չհամաձայնեց ու ասաց. «Այս կանթեղի պատճառով հոգիներ են կորել»,— և պատմեց, որ ինքն է ցած իջել և գողացել իրենն ու իմ հոր տանը պահել»:

«Երբ տեսնես, որ էմիրը խալիզը՝ վալին, ռազմի զգեստներ է հագնում,— ասաց Ահմեդ ադ-Դանաֆը,— նրան ասա. «Ինձ էլ հագցրու»: Եվ եթե դու նրա հետ դուրս գաս ու հավատացյալների տիրակալին կովելու որևէ արտասովոր միջոց ցուցադրես, ու խալիֆը քեզ ասի. «Ինձանից որևէ բան ուզի՞ր, ո՞վ Ասլան»,— դու նրան ասա. «Ես ուզում եմ, որ դու իմ փոխարեն իմ հոր վրեժը լուծես նրան սպանողից»: Եվ խալիֆը քեզ կասի. «Քո հայրը ողջ է՝ էմիրը խալիզը»,— իսկ դու ասա. «Իմ հայրը Ալա էդ-դին Աբու-ը-Շամաթն է, իսկ էմիրը խալիզին ես պարտական եմ միայն դաստիարակությամբ»: Պատմի՛ր նրան այն ամենը, ինչ տեղի է ունեցել քո և գող Ահմեդ Քամաքիմի միջև ու ասա. «Մ՛վ հավատացյալների վեհապետ, հրամայիր խուզարկել նրան, և ես նրա ծոցից կանթեղը կհանեմ»:

Եվ Ասլանը Ահմեդ ադ-Դանաֆին ասաց. «Լսո՛ւմ եմ ու հնազանդվում»,— և ապա գնաց ու տեսավ, որ էմիրը խալիզը պատրաստվում է դիվան գնալու:

«Ես ուզում եմ, որ ինձ ռազմի զգեստ հագցնես, այնպիսին, ինչպիսին քոնն է, ու քեզ հետ ինձ տանես դիվան»,— ասաց նա: Եվ էմիրը հագցրեց նրան ու իր հետ դիվան տարավ:

Եվ խալիֆը զորքերի հետ քաղաքից դուրս ելավ ու վրաններ խփեց, և զորականները շարքեր կազմեցին, ու հեծյալները դուրս եկան գնդով ու թոխմախով, և երբ հեծյալներից որևէ մեկը թոխմախով խփում էր դնդին, մի ուրիշ հեծյալ նրան էր վերադարձնում այն:

Իսկ զորքի մեջ մի լրտես կար, որին զրդել էին սպանել խալիֆին, և նա վերցրեց գունդն ու թոխմախով հարվածեց դրան՝ ուղղելով խալիֆի դեմքին: Եվ հանկարծ Ասլանը խալիֆի փոխարեն ընդունեց գունդն ու դրանով հարվածեց նրան, ով նետել էր, և գունդը դիպավ նրա թիկունքին, ու նա գետին գլորվեց: Եվ խալիֆը բացականչեց. «Թող ալլահը քեզ օրհնի, ո՞վ Ասլան»:

Իսկ հետո նրանք ձիերից իջան ու օթոցների վրա նստեցին, և խալիֆը հրամայեց իր մոտ բերել նրան, ով հարվածել էր գնդին, և երբ այդ մարդն իրեն ներկայացավ, նրան հարցրեց. «Մ՛վ է քեզ զրդել այդ բանն անել: Դու թշնամի՞ ես, թի սիրող»:— «Ես թշնամի եմ և մտադիք

էի քեզ սպանել», — պատասխանեց լրտեսը: Եվ խալիֆն ասաց. «Ի՞նչն է դրա պատճառը: Մի՞թե դու մահմեդական չես»: — «Ոչ, ես ռաֆիդչան եմ», — պատասխանեց լրտեսը: Եվ խալիֆը հրամայեց սպանել նրան ու Ասլանին ասաց. «Ինձանից մի բան ուզիր»: Իոկ Ասլանն ասաց. «Ես կամենում եմ, որ դու իմ փոխարեն վրեժ լուծես հորս սպանողից»: — «Քո հայրը ողջ է ու ոտքի վրա», — ասաց խալիֆը: Եվ Ասլանը հարցրեց. «Ո՞վ է իմ հայրը»: — «էմիր Խալիդը՝ վալին», — պատասխանեց խալիֆը: Եվ Ասլանը բացականչեց. «Ո՞վ հավատացյալների տիրակալ, նա իմ հայրն է միայն դաստիարակության գծով, և ոչ ոք, բացի Ալա էդ-դին Արու-շ-Շամաթից, իմ ծնողը չէ»: — «Քո հայրը խաբեբա էր», — ասաց խալիֆը: «Ով հավատացյալների տիրակալ, չի կարող պատահել, որ հավատարիմը խաբեբա դառնա: Եվ ինչո՞վ է նա քեզ խարել»: — «Ես գողացել է իմ հագուստն ու դրա հետ եղած իրերը», — ասաց խալիֆը: Եվ Ասլանն ասաց. «Ո՞վ տեր, երբ դու զրկվեցիր քո հագուստից, և այն վերադարձվեց քեզ, տե՞նա՞ր, արդո՞ք, որ կանթեղն էլ վերադարձվել է քեզ»: — «Մենք այն չենք գտել», — պատասխանեց խալիֆը: Եվ Ասլանն ասաց. «Ես կանթեղը գող Ահմեդ Քամաքիմի մոտ տեսա ու խնդրեցի, որ ինձ տա, բայց նա շտվեց ու ասաց. «Սրա համար հոգիներ են կորել»: Եվ նա հայտնեց ինձ Խաբազլամ Բազազալի՝ էմիր Խալիդի որդու հիվանդության մասին ու ստրկուհի Յասմինի նկատմամբ ունեցած նրա սիրո մասին, և այն մասին, թե ինչպես է ինքը շղթաներից ազատվել, ու ինձ պատմեց, որ հենց ինքն է հագուստն ու կանթեղը գողացել: Եվ դու, ով հավատացյալների տիրակալ, իմ փոխարեն վրեժ լուծիր հորս սպանողից»: — «Բռնեք Ահմեդ Քամաքիմին», — ասաց խալիֆը: Եվ երբ նրան բռնեցին, խալիֆը հարցրեց. «Որտե՞ղ է Ահմեդ ադ-Դանաֆ պետը»: Եվ նա ներկայացավ, ու խալիֆը նրան ասաց. «Խուզարկի՛ր Քամաքիմին»: Եվ Ահմեդ ադ-Դանաֆը ձեռքը տարավ նրա ծոցն ու այնտեղից հանեց կանթեղը՝ ակնեղեններով:

Եվ խալիֆը բացականչեց., «Մոտ արի, խաբեբա՛, ինչպե՞ս է այս կանթեղը քո ձեռքն ընկել»: — «Ես առել եմ այն, ո՞վ հավատացյալների տիրակալ», — պատասխանեց Ահմեդ Քամաքիմը: Եվ խալիֆը հարցրեց. «Որտե՞ղ ես գնել, և ո՞վ կարող էր ունենալ դրա նմանը, որ քեզ ծախեր»:

Եվ Ահմեդ Քամաքիմին ծեծեցին, ու նա խոստովանեց, որ ինքն է գողացել հագուստն ու կանթեղը, և խալիֆը բացականչեց. «Ինչո՞ւ այդ բանն արեցիր, խաբեբա՛, ու կործանեցիք Ալա էդ-դին Արու-շ-Շամաթին, որ հավատարիմ էր, վստահելի»:

Հետո խալիֆը հրամայեց բռնել Ահմեդ Քամաքիմին ու վալիին, ու սա ասաց. «Մ'վ հավատացյալների տիրակալ, ես անարգված եմ: Դու ինձ հրամայեցիր նրան կախել, իսկ ես այս գործարքի մասին տեղեկություն չունեի: Պառավր՝ Ահմեդ Քամաքիմի մայրը, և իմ կինն են այդ բանն արել, և ես ոչինչ չեմ իմացել: Ես քո պաշտպանության ներքո եմ, ո՛վ Ասլան»:

Եվ Ասլանը պաշտպան կանգնեց նրան խալիֆի առջև, և ապա հավատացյալների տիրակալը հարցրեց. «Ի՞նչ է արել ալլահն այս աղաչի մորը»: Եվ վալին պատասխանեց. «Նա ինձ մոտ է»:— «Ես քեզ հրամայում եմ,— ասաց խալիֆը,— որ դու կնոջդ կարգադրես սրա մորը հագցնել նախկին զգեստներն ու դարձերը և նրան վերադարձնել տիրուհու վիճակը: Պոկել տուր Ալա էդ-դինի տան կնիքները և որդուն հանձնիր իր հոր փողն ու ունեցվածքը»: Եվ վալին պատասխանեց. «Լսո՛ւմ եմ ու հնազանդվում»,— և դուրս եկավ ու կարգադրեց իր կնոջը, և նա Յասմինին նախկին զգեստը հագցրեց, ու վալին պոկել տվեց Ալա էդ-դինի տան կնիքը և բանալիները հանձնեց Ասլանին:

Եվ հետո խալիֆն ասաց. «Ինձանից մի բան ուզիր, ո՛վ Ասլան»: Եվ Ասլանը պատասխանեց. «Ես ուզում եմ, որ դու ինձ հորս հետ միացնես»:

Եվ խալիֆը լացեց ու ասաց. «Ամենից հավանականն այն է, որ հայրդ հենց նա է, որին կախել են, ու նա մեռել է: Բայց իմ պապերի կյանքով եմ երդվում, որ ո՛վ ինձ ուրախացնի այն լուրով, որ քո հայրը դեռևս կյանքի շղթաների մեջ է, նրան կպարգևեմ այն ամենը, ինչ որ ուզենա»:

Եվ Ահմեդ ադ-Դանաֆը առաջ եկավ ու համբուրեց գետինը խալիֆի առջև ու ասաց. «Ապահովություն տուր ինձ, ո՛վ հավատացյալների տիրակալ»:— «Դու ապահովության մեջ ես»,— ասաց խալիֆը: Եվ Ահմեդ ադ-Դանաֆն ասաց. «Ես քեզ կուրախացնեմ այն լուրով, որ Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթը ողջ և առողջ է ու կյանքի շղթաների մեջ է մնում»:— «Այդ ի՞նչ ես ասում դու»,— բացականչեց խալիֆը:— «Քո գլխի արևով եմ երդվում,— պատասխանեց Ահմեդ ադ-Դանաֆը,— իմ խոսքերը ճշմարիտ են: Ես նրան փրկագնեցի մի ուրիշ մարդով, որ մահվան արժանի էր, և տարա Իսքանդարիե ու հնավաճառի խանութ րացեցի նրա համար»:— «Հանձնարարում եմ քեզ բերել նրան»,— ասաց խալիֆը: Եվ Ահմեդը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում»: Եվ խալիֆը հրամայեց նրան տալ տասը հազար դինար, և Ահմեդ ադ-Դանաֆը մեկնեց, ուզևորվելով դեպի ալ-Իսքանդարիե:

Ահա թե ինչ եղավ Ասլանին, ինչ վերաբերում է նրա հորը՝ Ալա էդ-գին Աբու-շ-Շամաթին, ապա նա վաճառեց այն անձներ, ինչ որ կար իր խանութում, ու այնտեղ մի քիչ ընդ մնաց միայն և, ի միջից ալոց, մի տոպրակ: Եվ Ալա էդ-գինը բացեց տոպրակը, և դրա միջից բոսան շափ մի քար ընկավ՝ ոսկե շղթայով, ու հնդակող էր, և կողերի վրա գրված էին անուններ ու պատկերված էին հուռութենք, որ նման էին՝ սողացող մրջյունների:

Եվ Ալա էդ-գինը շփեց այդ հինգ կողերը, բայց ոչ ոք նրան չպատասխանեց, և նա ինքն իրեն ասաց. «Երևի այս քարը հասարակ եղբունս է», — ու նա քարը խանութում կախեց:

Եվ հանկարծ ճանապարհով մի կոնսուլ՝ էր անցնում ու նա գլուխը բարձրացրեց, և տեսավ, որ այդ քարն է կախված:

Եվ նա նստեց Ալա էդ-գինի խանութի մոտ. ու նրան հարցրեց. «Ո՞վ տեր, այս քարը վաճառվո՞ւմ է»: — «Ինչ որ ինձ մոտ կա, վաճառվում է», — պատասխանեց Ալա էդ-գինը: Եվ կոնսուլը հարցրեց. «Քի՞տուն հազար դինարով կվաճառե՞ս, արդյոք»: — «Ալլահը կօգնի», — պատասխանեց Ալա էդ-գինը, և կոնսուլը հարցրեց. «Ի՞նչ քարը հարյուր հազար դինարով կվաճառե՞ս»: «Ես հարյուր հազար դինարով այն քեզ կվաճառեմ, վճարիր փողը», — ասաց Ալա էդ-գինը: Եվ կոնսուլն ասաց. «Ես չեմ կարող փողն ինձ հետ բերել, քանի դեռ ալ-Բաքանդարիեում գողեր ու ոստիկաններ կան: Ի՞նչ ինձ հետ նավ կդաս, և ես փողը քեզ կտամ, ինչպես և մի հակ անգորական բուրդ, մի հակ կեթչաս, մի հակ թավիշ ու մի հակ էլ մահուդ»:

Եվ Ալա էդ-գինը վեր կացավ ու խանութը փակեց, նախապես քարը կոնսուլին տալով, և բանալին իր հարևանին հանձնեց ու ասաց. «Այս բանալին քեզ մոտ պահիր, իսկ ես այս կոնսուլի հետ գնամ նավ ու իմ քարի փողը բերեմ: Իսկ եթե ուշանամ, ու քեզ մոտ գա Ահմեդ ադ-Դանաֆ պետը, որը բնակեցրել է ինձ այստեղ, բանալին նրան տուր ու պամիր այս մասին»: Եվ հետո Ալա էդ-գինը կոնսուլի հետ գնաց նավ և, կոնսուլը, նրան նավ տանելով, նստարան դրեց ու Ալա էդ-գինին դրա վրա նստեցրեց ու ասաց. «Փողը բերե՞ք», — և վճարեց նրան ու տվեց այն հինգ հակերը, որ խոստացել էր նրան. «Ո՞վ տեր, — ասաց նա Ալա էդ-գինին, — խնդրում եմ քեզ, մխիթարիր ինձ, մի քան ուտելով կամ մի

1 Միջնադարյան Մերձավոր արևելքում կոնսուլ էին կոչում ոչ միայն եվրոպական պետությունների ներկայացուցիչներին, այլև առհասարակ բոլոր հարուստ եվրոպացիներին:

կում ջուր խմելով»։ Թակ Ալա էդ-դինն ասաց. «Եթե քեզ մոտ ջուր կա, տուր՝ խմեմ»։ Եվ կոնսուլը հրամայեց ջուր բերել, ու հանկարծ նրա մեջ թմրադեղ հայտնվեց, և Ալա էդ-դինը, խմելով այն, մեջքի վրա ընկավ։

Եվ այնժամ փերցրին կամրջակն ու իջեցրին կարթաձողերն ու պարզեցին առագաստները, և քամին հաջողակ էր մինչև նրանք հասան ծովի մեջտեղը։ Եվ նափապետը հրամայեց նավամբարից դուրս բերել Ալա էդ-դինին, և նրան դուրս բերեցին ու թմրադեղի դեմ մի միջոց տվեցին հոտտուելու, և Ալա էդ-դինը բացեց աչքերն ու հարցրեց. «Որտե՞ղ եմ ես»։— «Թու ինձ հետ ես, կապված ու իմ հսկողության տակ, և եթե դու այն ժամանակ մեկ անգամ էլ ասեիր «ալլահն օգնի», ես, հավանաբար, կափեւացնեի դինը»,— ասաց նափապետը։

Եվ Ալա էդ-դինը նրան հարցրեց. «Ի՞նչ է քո արհեստը»։ Եվ նափապետը պատասխանեց. «Ես նափապետ եմ և ուզում եմ քեզ իմ սրտի սիրածի մոտ առնել»։

Եվ մինչդեռ նրանք խոսում էին, հանկարծ մի նավ հայտնվեց, որի վրա քառասուն մուսուլման վաճառականներ կային, և նափապետն իր նավը նրանց կողմն ուղղեց և կառանեց նրանց նավն ու դրա վրա բարձրացավ իր մարդկանց հետ, ու կողոպտեցին նրանց նավն ու զավթեցին այն ու դրանով ուղեւորվեցին դեպի Ճենովա քաղաքը։

Եվ նափապետը, որի հետ էր Ալա էդ-դինը, ուղևորվեց դեպի մի պալատ, որ ծովին էր նայում, և հանկարծ այնտեղից քողով ծածկված մի աղջիկ դուրս եկավ ու նրան հարցրեց. «Բերե՞լ ես քարն ու դրա տիրոջը»։— «Բերել չեմ»— պատասխանեց նափապետը։ Եվ աղջիկն ասաց. «Քարն ի՞նչ ատար»։ Եվ նափապետը քարը նրան տվեց, իսկ հետո նախահանգիստ պնաց, և քաղաքի թագավորն իմացավ այդ նափապետի ժամանելու մասին։

Եվ նա քնդատաջ դուրս եկավ նրան ու հարցրեց. «Ինչպես էր քո ճանապարհորդությունը»։— «Շատ լավ էր,— պատասխանեց նափապետը,— և իմ ձեռքն ընկավ մի նավ, որի վրա քառասունմեկ մուսուլման վաճառական կար»։— «Դուրս բեր նրանց»,— ասաց թագավորը։ Եվ նափապետը դուրս բերեց շղթայակապ վաճառականներին, և նրանց մեջ էր նաև Ալա էդ-դինը։ Եվ թագավորն ու նափապետը ձի հեծան ու վաճառականներին իրենց առջևը պցած տարան, իսկ մտնելով դիվան, նստեցին, և վաճառականներից առաջինին նրանց մոտ տարան, և թագավորը հարցրեց. «Որտե՞ղացի՞ ես, ո՞վ մուսուլման»։— «Ալ-Իսքանդարի էից»,— պատասխանեց վաճառականը։ Եվ թագավորն ասաց. «Հե՛յ, դահի՛ճ,

սպանի՛ր նրան»։ Եվ դահիճը սրով հարվածեց նրան ու գլուխը կտրեց, և երկրորդին ու երրորդին նույնպես, և բոլոր քառասուն վաճառականներին։

Իսկ Ալա էդ-դինը վերջինն էր նրանցից, և նա վշտացավ նրանց համար ու ինքն իրեն ասաց. «Թող ալլահը քեզ թողություն տա, Ալա էդ-դին, կյանքդ վերջացավ»։— «Իսկ դո՞ւ որ երկրից ես»,— հարցրեց նրան թագավորը, և Ալա էդ-դինը պատասխանեց. «Ալ-Իսքանգարիեից»։ Եվ այնժամ թագավորն ասաց. «Հե՛յ, դահի՛ճ, սրա գլուխը կտրիր»։ Եվ դահիճը բարձրացրեց ձեռքը և ուզում էր կտրել Ալա էդ-դինի գլուխը, երբ հանկարծ վեհապանժ տեսքով մի պառավ կին թագավորի առջև դուրս եկավ, ու թագավորը հարգանքով վեր կացավ, և կինն ասաց. «Ո՞վ թագավոր, մի՞թե ես քեզ շեմ ասել, որ երբ նավապետը գերիներ բերի, հիշես մենաստանի մասին ու մեկ կամ երկու գերի նվիրես նրան՝ եկեղեցում ծառայելու համար»։— «Ո՞վ մայրիկ,— պատասխանեց թագավորը,— եթե մի րոպե շուտ գայի՛ր։ Բայց վերցրու այս գերուն, որ մնացել է»։

Եվ պառավը դարձավ Ալա էդ-դինին ու ասաց. «Կծառայե՞ս եկեղեցում, թե՞ թույլ տամ թագավորին, որ սպանի քեզ»։— «Ես կծառայեմ եկեղեցում»,— պատասխանեց Ալա էդ-դինը, և պառավը նրան վերցրեց ու, նրա հետ դիվանից դուրս գալով, գնաց եկեղեցի։

«Ի՞նչ գործ պիտի անեմ»,— հարցրեց Ալա էդ-դինը։ Եվ պառավը պատասխանեց. «Առավոտյան վեր կկենաս ու հինգ ջորի կվերցնես և կգնաս անտառ ու շոր փայտ կկտրես և կջարդես ու կբերես մենաստանի խոհանոց, իսկ դրանից հետո կհավաքես գորգերը և կլվանաս սալերն ու մարմարե հատակը և գորգերը կրկին կփռես այնպես, ինչպես եղել են։ Դու կես արդեբ ցորեն կվերցնես ու կմաղես և կհունցես ու պաքսիմատ կպատրաստես մենաստանի համար, ու կվերցնես մի շափ ոսպ և կմաքրես ու աղորիքով կաղաս, իսկ հետո շորս ջրամբարներ կլցնես ու տակառներից ջուրը կթափես և կլցնես երեք հարյուր վաթսուներեց աման ու դրանց մեջ պաքսիմատ կթրջես ու պաքսիմատի վրա ոսպ կլցնես և ամեն մի մենակյացի կամ հայրապետի մի գավաթ դրանից կտանես...»։— «Վերադարձրո՞ւ ինձ թագավորի մոտ, և թող նա ինձ սպանի, գա ինձ համար ավելի հեշտ է, քան այդպիսի աշխատանք կատարելը»,— բացականչեց Ալա էդ-դինը։ Եվ պառավն ասաց. «Եթե դու աշխատես ու կատարես քեզ հանձնարարված գործը, կազատվես մահից, իսկ եթե չկատարես, ես թագավորի ձեռքը կտամ քեզ, որ սպանի»։ Եվ Ալա էդ-դինը նստեց-մնաց՝ հոգսով ծանրաբեռնված։

Իսկ եկեղեցում տասը հաշմանդամ կույրեր կային, և նրանցից մեկը Ալա էդ-դինին ասաց. «Միզամանը բեր»: Եվ Ալա էդ-դինը նրա համար միզաման բերեց, և կույրը կեղտոտեց դրա մեջ ու ասաց. «Կեղտս թափի՛ր»: Եվ Ալա էդ-դինը թափեց այն, ու ծերուկն ասաց. «Թող փրկիչը քեզ օրհնի, ո՛վ եկեղեցու ծառա»:

Եվ հանկարծ պառավը եկավ ու հարցրեց. «Ինչո՞ւ չես կատարել եկեղեցու դործը»: Եվ Ալա էդ-դինն ասաց. «Քանի՞ ձեռք ունեմ, որ այդքան գործ անեմ»:— «Ո՛վ խելառ,— ասաց պառավը,— ես քեզ միայն նրա համար եմ բերել, որ աշխատես»:— «Ո՛վ որդիս,— հետո ասաց նա,— վերցրու այս ձողը (իսկ ձողը պղնձից էր, ու դրա ծայրին խաշկար) և դուրս արի հրապարակ, և երբ քաղաքի վալիին տեսնես, ասա. «Ես քեզ եկեղեցուն ծառայելու եմ կոչում հանուն մեր տեր փրկչի»,— և նա չի առարկի: Եվ թող վերցնի ցորենն ու մաքրի և քամի ու հունցի և պաքսիմատ սարքի, և ով քեզ առարկի, նրան ծեծիր ու ոչ ոքից մի՛ վախենա»: Եվ Ալա-էդ-դինը պատասխանեց. «Լսո՛ւմ եմ ու հնազանգվում»,— և այնպես արեց, ինչպես պառավն էր ասել, և այդպես նա տասնյոթ տարի և՛ մեծերին, և՛ փոքրերին ձրի աշխատել հարկադրեց:

Եվ մի անգամ նա եկեղեցում նստած էր, ու հանկարծ այն պառավը նրա մոտ եկավ և ասաց. «Դո՛ւրս գնա եկեղեցուց»:— «Ուր գնա՞մ»,— հարցրեց Ալա էդ-դինը: Եվ պառավն ասաց. «Այս գիշեր պանդոկում կամ բո բարեկամներից մեկի մոտ գիշերիր»: Եվ Ալա էդ-դինը նրան հարցրեց. «Ինչո՞ւ ես ինձ վռնդում եկեղեցուց»: Եվ պառավը պատասխանեց. «Հուսն Մարիամը, Հովհան արքայի՝ այս քաղաքի թագավորի, աղջիկը ցանկանում է այցելել եկեղեցի, և վայել չէ, որ նրա ճանապարհին որևէ մեկը նստած լինի»:

Եվ Ալա էդ-դինը անսաց պառավին ու վեր կացավ և այնպես ցույց տվեց, թե իբր, եկեղեցուց դուրս է գալիս, իսկ ինքն իրեն ասաց. «Օ՛, և՛ թե տեսնեի՝ թագավորի աղջիկը մեր կանանց նմա՞ն է, թե նրանցից լավն է: Ես դուրս չեմ գնա, մինչև նրան չտեսնեմ»: Եվ նա թաքնվեց մի սենյակում, որ դեպի եկեղեցին նայող պատուհան ուներ, և մինչև նա պատուհանից նայում էր, հանկարծ թագավորի աղջիկը եկավ, ու Ալա էդ-դինը բյուր հառաչանքներ կորզող մի հայացքով նայեց նրան, որովհետև տեսավ, որ նա ամպի տակից դուրս եկող լուսնի նման է: Եվ արքայադստեր հետ մի կին կար: Եվ արքայագուստրն այդ կնոջն ասաց. «Ինչ մեզ ուրախացրիր, ո՛վ Զուբեյդա»:

Եվ Ալա էդ-դինը ուշադրությամբ նայեց կնոջն ու տեսավ, որ դա իր կինը՝ Զուբեյդա-ջնարահարուհին է, որ մեռել էր: Իսկ հետո թագավորի

աղջիկը Զուբեյդային ասաց. «Ձնար նվագիր մեզ համար»: Եվ Զուբեյդան պատասխանեց. «Ես քեզ համար չեմ նվագի, մինչև դու իմ ցանկությունը չկատարես ու շանես այն, ինչ խոստացել ես»:— «Իսկ ես ի՞նչ եմ խոստացել քեզ».— հարցրեց արքայադուստրը:— Եվ Զուբեյդան պատասխանեց. «Դու խոստացել ես միացնել ինձ իմ ամուսնու՝ հավատարիմ, վստահելի Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթի, հետ»:— «Ո՞վ Զուբեյդա,— ասաց արքայադուստրը,— հանգստացրու հոգիդ և զվարթացրու աչքերդ ու նվագիր մեզ համար՝ հանուն քո ամուսին Ալա էդ-դինի հետ միանալու քաղցրության»: Եվ Զուբեյդան հարցրեց. «Իսկ որտե՞ղ է նա»: Եվ արքայադուստրն ասաց. «Նա այս սենյակումն է և լսում է մեր խոսքերը»:

Եվ Զուբեյդան ջնարով մի եղանակ նվագեց, որի տակ ալաուածն էլ կպարեր, և երբ Ալա էդ-դինն այդ լսեց, վիշտը բորբոքվեց նրա մեջ. ու նա դուրս եկավ սենյակից, նետվեց կանանց մոտ ու իր կնոջը՝ Զուբեյդա-ջնարահարուհուն գիրկն առավ:

Եվ Զուբեյդան ճանաչեց նրան, ու նրանք գրկախառնվեցին և ուշա-կորույս գետին ընկան, ու արքայադուստր Հուսն Մարիամը մոտեցավ նրանց և վարդաշուր ցողեց նրանց վրա և ուշքի բերեց ու բացականչեց. «Ալլահը ձեզ միացրեց»:— «Քո սիրո շնորհիվ, տիրուհի՛,— պատասխանեց Ալա էդ-դինը, ապա դիմեց իր կնոջը՝ Զուբեյդա-ջնարահարուհուն, ու ասաց. «Չէ՞ որ դու մեռար, ով Զուբեյդա, ու մենք քեզ գերեզմանում թաղեցինք: Ինչպե՞ս ես վերակենդանացել ու այստեղ եկել»:— «Ով տեր,— պատասխանեց Զուբեյդան,— ես չեմ մեռել, ինձ ջինների շար ոգին առևանգեց ու ինձ հետ թռավ-եկավ այստեղ, իսկ նա, որին դուք թաղել եք, ջիննուհին էր, որ իմ կերպարանքն էր ստացել ու մեռած ձևացել, և այն բանից հետո, երբ դուք նրան թաղեցիք, նա գերեզմանի հողի միջով անցավ ու դուրս եկավ և թռավ՝ իր տիրուհուն՝ թագավորի աղջիկ Հուսն Մարիամին, ծառայելու: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես թմրեցի և, աչքերս բացելով, ինձ գտա թագավորի աղջկա՝ Հուսն Մարիամի, մոտ (իսկ նա ահա այս կինն է), ու նրան հարցրի. «Ինչո՞ւ ես ինձ այստեղ բերել»: Եվ նա ասաց. «Ինձ խոստացել են, որ ես քո ամուսին Ալա էդ-դին Աբու-շ-Շամաթի հետ կամուսնանամ: Կընդունե՞ս, արդյոք, ո՞վ Զուբեյդա, որ ես նրա մյուս կինը լինեմ, և որպեսզի ինձ էլ գիշեր հասնի, քեզ էլ գիշեր հասնի»: Եվ ես պատասխանեցի. «Լսում եմ ու հնազանդվում, տիրուհիս, բայց ո՞ր է ամուսինս»: Իսկ նա ասաց. «Նրա ճակատին գրված է այն, ինչ ալլահն է նախասահմանել, և երբ նա կկատարի այն, ինչ իր ճակատին գրված է, անպայման այստեղ

կգա, իսկ մենք կզվարճանանք երգելով ու նվագելով, մինչև որ ալլահը մեզ նրա հետ միացնի»։ Եվ ես նրա հետ անցկացրի այս ամբողջ ժամանակը, մինչև որ ալլահն ինձ քեզ հետ միացրեց այս եկեղեցում»։

Եվ դրանից հետո Հուան Մարիամը դարձավ Ալա էդ-դինին ու ասաց. «Ով իմ տեր Ալա էդ-դին, կընդունե՞ս, արդյոք, որ ես քո կինը լինեմ, իսկ դու՝ իմ ամուսինը»։ «Ով տիրուհի, ես մահմեդական եմ, իսկ դու՝ բրիստոնյա, ինչպե՞ս քեզ հետ ամուսնանամ»,— պատասխանեց Ալա էդ-դինը։ Եվ Հուան Մարիամը բացականչեց. «Անկարելի է, որ ես անհավատ լինեմ։ Ո՛չ, ես մահմեդական եմ ու տասնվեց տարի է արդեն, որ հաստատ կանգնած եմ իսլամի հավատին, և ես հաղորդակից չեմ իսլամին հակառակ ոչ մի ուրիշ հավատի»։— «Ո՛վ տիրուհի,— ասաց Ալա էդ-դինը,— ես ուզում եմ մեկնել իմ երկիրը»։— «Ո՛վ Ալա էդ-դին,— ասաց արքայադուստրը,— ես տեսել եմ, որ քո ճակատին գրված են այնպիսի գործեր, որ դու պիտի կատարես և դու կհասնես քո նպատակին։ Թող ալլահը սղջունի քեզ, ով Ալա էդ-դին, դու Ասլան անունով մի տղա ես ունեցել, որն այժմ խալիֆի մոտ քո տեղն է նստում, ու նա տասնութ տարեկան է դարձել։ Իմացի՛ր, որ ճշմարտութունն ի հայտ է եկել ու կեղծիքը բացվել է, և մեր տերը քողազերծել է նրան, ով գողացել էր խալիֆի իրերը,— դա գող ու խաբեբա Ահմեդ Քամաքիմն է, և նա այժմ բանտ է նետված ու շղթայված։ Իմացի՛ր, որ ես եմ այն քարն ուղարկել քեզ ու այն խառնուրդում տոպրակի մեջ դրել՝ քեզ համար, ես եմ ուղարկել այն նավապետին, որ բերել է քարը և քեզ։ Գիտցի՛ր, որ այդ նավապետը սիրում է ինձ և կապված է ինձ հետ ու ինձնից մերձեցում պահանջեց, բայց ես չհամաձայնեցի թույլ տալ նրան, որ ինձ տիրապետի, ու ասացի. «Ես քո տիրապետությանը կտրվեմ միայն այն ժամանակ, երբ դու ինձ համար բերես այն քարն ու դրա տիրոջը»։ Եվ ես նրան հարյուր տոպրակ փող տվեցի ու նրան վաճառականի կերպարանքով ուղարկեցի, թեև նա նավապետ է, իսկ երբ քեզ սպանելու բերեցին՝ այն քառասուն գեթեներին սպանելուց հետո, որոնց հետ էիր և դու, ես ուղարկեցի այն պառավին»։— «Թող ալլահը մեր փոխաբեն հատուցի քեզ ամեն քարիթով, և հիանալի է այն ամենը, ինչ դու արել ես»,— բացականչեց Ալա էդ-դինը։

Եվ դրանից հետո Հուան Մարիամը կրկին ընդունեց իսլամը Ալա էդ-դինի օգնությամբ, և, համոզվելով, որ նրա խոսքերը ճշմարիտ են, Ալա էդ-դինը նբան ասաց. «Պատմիր ինձ, թե ո՞րն է այն քարի հատկությունը, և որտեղից է այն»։ Իսկ Հուան Մարիամն ասաց. «Այդ քարը

Թալիսմանով պահպանվող գանձերից է, և նա հինգ հատկութիւն ունի: որոնք ժամանակին մեզ օգտակար կլինեն կարիքի դեպքում: Իմ տիրուհին ու տատիկը՝ հորս մայրը, կախարդ էր, որը առեզձվածներ էր լուծում ու հափշտակում էր գանձարաններում պահված բաները, և այս քարը նրա ձեռքն էր ընկել մի գանձարանից: Եվ երբ ես մեծացա ու դարձա տասնչորս տարեկան, կարդացի ավետարանն ու այլ գրքեր և տեսա Մուհամմեդի անունը, թող ալլահը նրան օրհնի ու փառավորի, շորս գրքի մեջ՝ հնգամատյանում, ավետարանում, սաղմոսներում ու էլ-Ֆուրքանում¹, և հավատացի Մուհամմեդին ու մահմեդական դարձա, ու բանականութեամբ համոզվեցի, որ, իսկապես, շպետք է պաշտեմ ոչ ոքի, բացի մեծ ալլահից, և որ մարդկանց տիրոջը պետք չէ ո՛չ մի այլ կրօն, բացի իսլամից: Իսկ իմ տատիկը, երբ հիվանդացավ, նվիրեց ինձ այդ քարն ու հայտնեց, թե որոնք են այն հինգ հատկութիւնները, որ դա ունի: Եվ նախքան իմ տիրուհու ու տատիկի մեռնելը հայրս նրան ասաց. «Տախտակի վրա ավազով գուշակիր ու տես, թե ի՞նչ է լինելու իմ գործի վախճանը և ի՞նչ է պատահելու ինձ»: Եվ տատս նրան ասաց. «Հեռավորը² կմեռնի ալ-Իսքանդարիեից եկած գերու ձեռքով սպանվելով»: Եվ հայրս երդվեց, որ կսպանի այնտեղից եկած բոլոր գերիներին ու այդ մասին տեղյակ դարձրեց նավապետին և նրան ասաց. «Անպայման դուրս եկ մուսուլմանական նավերի դեմ ու հարձակվիր նրանց վրա ու բոլորին, ում տեսնես այդ նավերի վրա ալ-Իսքանդարիեից, կոտորիր կամ ինձ մոտ բեր»: Եվ նավապետը հետևեց թագավորի հրամանին ու իր գլխի մազերի համրանքով մարդ սպանեց:

Եվ իմ տատիկը մեռավ, ու ես մեծացա և իմ բախտը գուշակեցի ավազով ու մի բան մտածեցի ինքս ինձ և ասացի. «Տեսնես ո՞վ է ինձ հետ ամուսնանալու»: Եվ դուրս եկավ, որ ոչ ոք ինձ հետ չի ամուսնանալու, բացի Ալա էդ-դինն Աբու-շ-Շամաթ անունով մի հավատարիմ, վոտահելի մարդուց: Եվ ես զարմացա դրա վրա ու սպասեցի, մինչև որ ժամանակը եկավ, ու ես հանդիպեցի քեզ»:

Ապա Ալա էդ-դինն ամուսնացավ արքայադստեր հետ ու նրան ասաց. «Ես ուզում եմ իմ երկիրը գնալ»:— Եվ նա պատասխանեց. «Եթե այդպես է, վեր կաց, ինձ հետ արի»,— և նա տարավ Ալա էդ-դինին ու նրան թաքցրեց պալատի սենյակներից մեկում: Իսկ հետո իր հոր մոտ

1 էլ-Ֆուրքան — Ղուրանի անվանումներից մեկը:

2 «Հեռավոր» հորջորջումն այստեղ գործածված է նրա համար, որպեսզի թագավորի անունը չտրվի և ուղղակի չասվի, թե նա կսպանվի:

գնաց, ու հայրն ասաց. «Ո՛վ աղջիկս, այսօր ես շատ տխուր եմ: Նստիր, իրար հետ խմենք»:

Եվ նա նստեց, իսկ թագավորը հրամայեց գինի բերել, և արքայադուստրն սկսեց գինի լցնել ու խմեցրեց նրան, մինչև նա աշխարհից վերացավ, իսկ հետո աղջիկը նրա գավաթի մեջ թմրագեղ լցրեց, ու թագավորը գավաթը խմեց ու ցած գլորվեց:

Եվ այնժամ արքայադուստրը գնաց Ալա էդ-դինի մոտ, դուրս բերեց նրան այն սենյակից ու ասաց. «Վեր կաց, գնանք, քո թշնամին մեզքի վրա փռվել է, վարվիր նրա հետ ինչպես կուզես, ևս նրան խմեցրել ու թմրեցրել եմ»:

Եվ Ալա էդ-դինը ներս մտավ ու տեսավ, որ թագավորը թմրել է, պիրկ ոլորեց նրա ձեռքերն ու շղթայով կապկպեց, ապա թմրության դեմ մի դեղ տվեց նրան, և թագավորն ուշքի եկավ ու տեսավ, որ Ալա էդ-դինն ու իր աղջիկը նստած են իր կրծքին: «Ո՛վ աղջիկս, ինչո՞ւ ես ինձ հետ այդպես վարվում», — ասաց թագավորն իր աղջկան: Եվ նա պատասխանեց. «Ծթե ես քո աղջիկն եմ, ապա ընդունիր իսլամը: Ես մահմեդական եմ դարձել, և ինձ հայտնի են դարձել ճշմարտությունը, որին ես հետևում եմ, և կեղծիքը, որից ես խուսափում եմ: Ես իմ դեմքը մեծ ալլահին՝ աշխարհների տիրոջն եմ դարձրել և հաղորդակից չեմ իսլամի դավանանքին հակառակ որևէ դավանանքի ո՛չ այս, ո՛չ էլ հանդերձյալ կյանքում: Եվ եթե դու ընդունես իսլամը՝ ի հաճույս և հուրախություն, իսկ եթե ոչ՝ սպանվելն ավելի վայել է քեզ, քան ապրելը»:

Եվ Ալա էդ-դինը նույնպես սկսեց համոզել թագավորին, բայց նա հրաժարվեց ու անհնազանդ եղավ, և այնժամ Ալա էդ-դինը դաշույնը հանեց ու կտրեց թագավորի կոկորդը՝ մի երակից մինչև մյուսը: Եվ նա մի թուղթ գրեց՝ շարադրելով այն ամենը, ինչ եղել էր, ու թագավորի ձեռքին դրեց այն, ապա վերցրեց այն, ինչ որ դյուրավ տանելի էր ու թանկ. գնահատելի, և նրանք դուրս եկան ամրոցից ու գնացին եկեղեցի:

Եվ արքայադուստրը վերցրեց քարն ու ձեռքը դրեց այն կողին, որի վրա մահիճ էր քանդակված, և շփեց այն, ու հանկարծ մահիճ դուրս եկավ նրա առջև:

Եվ արքայադուստրն Ալա էդ-դինի ու նրա կնոջ՝ Զուբեյդա-չնարահարուհու, հետ նստեց այդ մահիճի մեջ ու բացականչեց. «Ի սեր բոլոր այն անունների, հուռութիների ու կախարդական-նշանների, որ գրված են այս քարի վրա, բարձրացի՛ր մեզ հետ, ո՛վ մահիճ»:

Եվ մահի՞՞նք նրանց հետ բարձրացավ ու սլացավ մինչև մի հովիտ, որտեղ բուսականութիւնն չկար: Եվ այնժամ արքայադուստրը դեպի երկինք գարձրեց քարի շորս կողերը և դեպի ներքև դարձրեց այն կողը, որի վրա գրված էր «մահի՞՞ն», և մահի՞՞նը նրանց հետ ցած իջավ երկիր:

Եվ արքայադուստրը շրջեց քարն ու դարձրեց այն կողը, որի վրա նկարված էր վրանի պատկեր, ու հարվածեց դրան ու ասաց. «Թող այս հովտում մի վրան կանգնի»,— և վրանը հայտնվեց նրանց առջև, ու նրանք նստեցին վրանում:

Իսկ այդ հովիտը անապատ էր, առանց բուսականութեան ու ջրի: Եվ արքայադուստրը քարի շորս կողերը դեպի երկինք դարձրեց ու բացականչեց. «Հանուն ալլահի, թող այստեղ ծառեր կանաչեն ու դրանց կողքին ծափ ծափալվի»: Եվ ծառերն իսկույն կանաչեցին, ու դրանց կողքին ծփաց աղմկոտ ծափը՝ փրփրահունչ ալիքներով: Եվ ճանապարհորդները լողացան ծափում ու աղոթեցին և ջուր խմեցին, իսկ հետո արքայադուստրը դեպի երկինք դարձրեց քարի երեք կողերը, բացի նրանից, որի վրա ուտելիղեններով սփռոցի պատկերն էր, ու ասաց. «Հանուն ալլահի անվան, թող սփռոցը բացվի»: Եվ հանկարծ հայտնվեց սրփռոցը, որի վրա ճոխ ուտելիքներ կային, և ճանապարհորդներն ողբեցին ուտել ու խմել և հաճույք օտացան ու ցնծացին:

Ահա թե ինչ արեցին նրանք: Ինչ վերաբերում է թագավորի տղային, ապա նա գնաց հորն արթնացնելու ու տեսավ, որ նա սպանված է: Նա գտավ այն թուղթը, որ Ալա էդ-դինն էր գրել ու կարգաց այն ու հասկացավ, թե ինչ էր տեղի ունեցել: Իսկ հետո նա սկսեց որոնել իր քրոջն ու չգտավ նրան: Եվ նա գնաց եկեղեցի՝ պառավի մոտ, ու գտավ նրան և քրոջ մասին հարցրեց, ու պառավն ասաց. «Երեկվանից ես նրան չեմ տեսել»:

Եվ այնժամ արքայազնը վերադարձավ գործի մոտ ու գոչեց. «Ձի հեծեք, Ե՛վ ձիավարե՛ք»,— ու զինվորներին պատմեց, թե ինչ է պատահել, ու նրանք ձիեր հեծան ու գնացին, մինչև որ մոտեցան այն վրանին: Եվ Հասն Մարիամը վեր կացավ ու տեսավ, որ փոշին երկրի ասփերը ծածկել է, ու այն բանից հետո, երբ փոշին բարձրացավ, տարածվեց ու ցրվեց, հանկարծ արքայադուստր եղբայրը հայտնվեց իր զինվորներով, ու նրանք գոռում-գոչում էին. «Մար ես դու գնում, երբ մենք ձեր հետևն ենք»:

Եվ կինը հարցրեց Ալա էդ-դինին. «Միլա՞փ ամուր են քո ոտքերը կովի մեջ»: Եվ Ալա էդ-դինը պտտասխանեց. «Ինչպես թեփի մեջ խրված

ցցիկը: Ես չեմ կարողանում կռվել ու պատերազմել և չեմ տիրապետում սրին ու նիզակին»:

Եվ այնժամ Հուսն Մաթիամը հանեց քարն ու շփեց այն կողը, որի վրա պատկերված էին հեծյալն ու ձին, և հանկարծ անապատի մեջ հայտնվեց մի հեծյալ, և նա այնքան կռվեց զորքականների հետ ու կոտորեց սրով, մինչև որ ջարդեց ու փախուստի մասնեց նրանց:

Եվ դրանից հետո այն կինն Ալա էդ-դինին ասաց. «Կահիրե՞ ես գնալու, թե՞ Ալ-Իսքանդարիե»: Ալա էդ-գինը պատասխանեց. «Ալ-Իսքանդարիե»: Եվ այնժամ նրանք նստեցին մահճի մեջ, և կինը հմայակուն խոսքեր արտասանեց, և մահիճը նրանց թոցրեց ու մի ակնթարթում Ալ-Իսքանդարիեում ցած իջավ:

Եվ Ալա էդ-դինը կանանց մի քարայր տարավ ու զգեստներ բերեց և հազցրեց նրանց ու գնաց այն սենյակով խանութը, Ապա նա դուրս եկավ, որ նրանց ուտելիք բերի ու, հանկարծ, ի՛նչ տեսնի. Ահմեդ ադ-Պանաֆ պետն է Բաղդադից գալիս:

Եվ Ալա էդ-դինը նրան տեսավ ճանապարհին ու զրկախառնությամբ դիմավորեց նրան ու ասաց. «Բարի գալուստ»: Իսկ հետո Ահմեդ ադ-Պանաֆ պետն ուրախացրեց նրան՝ նրա որդի Ասլանի մասին բերած բարով, ու պատմեց, որ նա քսան տարեկան է դարձել:

Եվ Ալա էդ-դինը հայտնեց նրան այն ամենը, ինչ պատահել էր իրեն՝ սկզբից մինչև վերջ, ու նրան տարավ սենյակով խանութը: Եվ Ահմեդ ադ-Պանաֆը ծայրաստիճան զարմացավ այդ ամենի վրա:

Եվ նրանք այդ գիշեր մինչև առավոտ քնեցին, իսկ առավոտյան Ալա էդ-դինը վաճառեց խանութն ու դրա արժեքը միացրեց նրան, ինչ որ ամենը: Իսկ հետո Ահմեդ ադ-Պանաֆը Ալա էդ-դինին պատմեց, որ խալիֆը նրան է պահանջում, և Ալա էդ-դինն ասաց. «Ես Կահիրե եմ գնում, որ խաղաղություն մաղթեմ հորս ու մորս և հարապատներիս»: Եվ նրանք բարբր մահճի մեջ նստեցին և ուղևորվեցին դեպի երջանկաշատ Կահիրե:

Նրանք գնացին Գեղին փողոցով, որովհետև նրանց տունն այդ թաղում էր գտնվում, և ծեծեցին իրենց տան դարպասը:

Եվ Ալա էդ-դինի մայրը հարցրեց. «Ո՞վ է դարսւլասի մոտ՝ սիրելիների կորուստից հետո»: Եվ Ալա էդ-դինը պատասխանեց. «Ես եմ, Ալա էդ-գինը»: Եվ նրա հարազատները դուրս եկան ու նրան իրենց գրկին սեղմեցին, իսկ հետո նա ներս տարավ իր կնոջն ու այն ամենը, ինչ իր հետ կար, ապա ինքն էլ ներս մտավ Ահմեդ ադ-Պանաֆի հետ:

Եվ նրանք երեք օր հանգստացան, ապա Ալա էդ-դինը կամեցավ Բաղդադ մեկնել, ու նրա հայրն ասաց. «Ինձ մոտ մնա, զավա՛կս»: Բայց

Ալա էդ-դինն ասաց. «Ես չեմ կարող իմ որդի Ասլանից բաժան լինել»:

Եվ նա իր հետ վերցրեց հորն ու մորը, և նրանք Բաղդադ ուղևորվեցին: Եվ Ահմեդ ադ-Դանաֆը մտավ խալիֆի մոտ և ուրախացրեց նրան Ալա էդ-դինի գալստյան լուրով ու պատմեց նրա պատմությունը, և խալիֆը դուրս եկավ նրան դիմավորելու և իր հետ վերցրեց նրա որդի Ասլանին:

Եվ նրանք դիմավորեցին Ալա էդ-դինին գրկախառնությամբ, և խալիֆը հրամայեց բերել գող Ահմեդ Քամաքիմին, ու նրան բերեցին, և երբ նա կանգնեց խալիֆի առջև, խալիֆն ասաց. «Ո՞վ Ալա էդ-դին, ահա՛քո թշնամին»: Եվ Ալա էդ-դինը սուրբ հանեց ու, հարվածելով Ահմեդ Քամաքիմին, նրա գլուխը կտրեց:

Եվ խալիֆը հոյակապ հարսանիք արեց Ալա էդ-դինի համար, այն բանից հետո, երբ եկան դատավորներն ու վկաները և գրվեց նրա ամուսնական դաշինքը Հուսն Մարիամի հետ: Եվ Ալա էդ-դինը մտավ նրա մոտ ու տեսավ, որ նա դեռ շշաղափված մարգարիտ է:

Իսկ հետո խալիֆը նրա որդի Ասլանին վաճառունի գլխավոր դարձրեց ու նրանց բոլորին փառահեղ զգեստներ պարգևեց, և նրանք ամենաեղանակ ու ամենահաճելի կյանքով ապրեցին, մինչև որ նրանց մոտ եկավ հաճույքներ խափանողն ու հավաքույթներ ցրողը:



Սիրահարի
ու արեւելայի
Հեթադոս



Մի անգամ Թաշ-ալ Մուլուք Թագավորն իր շքախմբով որսի ու ձրկ-
նորսութեան դուրս եկավ: Եվ նրանք գնացին անապատի միջով ու շորս
որ անդադար առաջ շարժվեցին, մինչև որ կանաչով ծածկված մի երկիր
տեսան: Եվ այդտեղ նրանք վիտացող գազաններ տեսան, հասուն պտուղ-
ներով ծառեր ու հորդաջուր առվակներ: Եվ Թաշ-ալ Մուլուքն իր մերձա-
փորներին ասաց. «Ցանցերն այստեղ գցեք ու լայն շրջանակով ձգեք, իսկ
ճանդիպումը տեղի կունենա շրջանակի սկզբում՝ այսինչ տեղում»: Եվ
ճեռեցին նրա հրամանին ու, ցանցերը դնելով, ձգեցին ընդարձակ
շրջանակով, և շրջանակի մեջ հավաքվեցին բազմաթիվ ու բազմազան
զառաններ ու վիթեր, և գազանները մոնչում էին, գոռում ու փախչում
ձիերի առջևից: Եվ այնժամ շներին ու հովազներին ու բազեններին նրանց
վրա բաց թողին, և սկսեցին նետահարել գազաններին, մահացու տեղե-
րին խփելով: Եվ հալածելու վայրի վերջին դեռ չէին հասել, որ շատ
զառաններ էին որսացել, իսկ մնացյալները փախել էին: Եվ դրանից
հետո Թաշ-ալ Մուլուքն շտապեց ջրի մոտ ու հրամայեց որսը բերել
ու բաժանեց այն, և, իր հայր Մուլեյման շահի համար լավագույն գա-
զաններն ընտրելով, նրան ուղարկեց, իսկ մի մասն էլ իր մեծամեծներին
բաժանեց:

Եվ նա գիշերն այդտեղ անցկացրեց: Իսկ երբ առավոտը բացվեց,
նրանց մոտեցավ մի մեծ քարավան, որի հետ ստրուկներ և ծառաներ ու
վաճառականներ կային, և այդ քարավանը կանգ առավ ջրի ափին՝ կա-
նաչի մեջ: Եվ, ճանապարհորդներին տեսնելով, Թաշ-ալ-Մուլուքն իր մեր-
ձավորներից մեկին ասաց. «Տեղեկություն բեր ինձ այդ մարդկանց մա-
սին ու հարցրու, թե ինչու են այստեղ կանգ առել»: Եվ հեծյալը գնաց
նրանց մոտ ու ասաց. «Պատմե՛ք, թե ովքեր եք դուք և շտապե՛ք

պատասխան տալ»: Եվ նրանք պատասխանեցին. «Մենք վաճառականներ ենք և այստեղ կանգ ենք առել հանգստի համար, որովհետև մեր հանգրվանը հեռու է, և մենք այստեղ իջանք, ապավինելով Մուլեյման թագավորին ու նրա որդուն: Մենք գիտենք, որ ով նրա մոտ է իջևնում, անվտանգության մեջ է ու կարող է ոչնչից շվախենալ, և մեզ հետ թանկարժեք կտորներ կան, որ մենք նրա որդի Թաջ-ալ Մուլուքի համար ենք բերել»:

Եվ սուրհանգակը վերադարձավ արքայազնի մոտ ու հայտնեց նրան գործի էությունը և հաղորդեց նրան վաճառականներից լսածը: Եվ արքայազնը նրան ասաց. «Եթե նրանք ունեն բաներ, որ ինձ համար են բերել, ապա ես քաղաք չեմ մտնի և այստեղից չեմ շարժվի, մինչև դրանք շտեմենեմ»: Եվ նա ձի հեծավ ու գնաց, ու նրա սարուկներն էլ նրա հետևից գնացին: Եվ երբ նա մոտեցավ քարավանին, վաճառականները ոտքի ելան նրա առջև ու հաղթանակ մաղթեցին նրան ու հաջողություն և հավիտյան փառք ու գերազանցություն: Իսկ նրա համար արդեն կարմիր կերպասե վրան էին խփել՝ մարգարիտներով ու թանկագին քարերով զարդարված, և արքայական աթոռ էին դետեղել կենտրոնում, զբմբուխառով զարդարված մետաքսե գորգի վրա: Եվ Թաջ-ալ Մուլուքը նրստեց, իսկ սարուկները կանգնեցին նրա առջև:

Եվ նա մարդ ուղարկեց վաճառականների հետևից ու հրամայեց, որ նրանք բերեն այն ամենը, ինչ ունեն, և նրանք եկան՝ իրենց ապրանքներով, և Թաջ-ալ Մուլուքը նայեց, ինչ որ նրանք բերել էին և, ընտրելով այն ամենը, ինչ որ իրեն դուր էր գալիս, նրանց լիուլի վճարեց: Իսկ հետո նա հեծավ ձին և ուզեց գնալ, բայց նրա հայացքը քարավանի վրա ընկավ, ու նա մի երիտասարդի տեսավ, որ հիանալի էր իր երիտասարդությունը, մաքուր զգեստներով ու պերճ դիմագծերով: Նա պայծառ ճակատ ունեւր ու լուսնի նման դեմք, միայն թե այդ երիտասարդի գեղեցկությունը նսեմացած էր, և նրա դեմքը դալուկով էր պատված սիրեցյալից բաժանվելու պատճառով, ու բազմացել էին նրա հառաչանքներն ու հեծեծանքները, և նրա աչքերից արցունքն էր հոսում, ու նա այսպիսի ոտանավոր էր ասում.

«Բաժանվեցինք, ինձ տիրեցին երկյուղ, թախիժ ու տանջանք,

Եվ հոսում է առվակի պես արտասուքն իմ աչքերից.

Ես իմ սրտից ձեռք բաշեցի, երբ իրարից հեռացանք,

Ու մենակ եմ ես մնացել, զրկված հույսից ու սրտից:

Օ՛, կանգ առե՛ք, իմ ընկերներ՛ք, հրաժեշտ տամ ես նրան,

Որի լեզուն հիվանդներին բուժիչ դեզ է, բալասան»:

Եվ երբ երիտասարդը վերջացրեց ուտանավորը, դարձյալ մի քիչ տրտաւից և ուշագնաց եղաւ: Եվ Թաշ-ալ Մուլուքը նայեց նրան, զարմանալով դրա վրա: Իսկ ուշքի գալով, երիտասարդը մի աներկյուղ հայացք ձգեց ու արտասանեց այսպիսի ոտանավոր.

«Իր աչքերից Լրկյուղ կրե՛ք, կախարդական ուժ ունեն.
Ուժ որ նրանց նեան է խոցել, էլ փրկութեան հուշ չունեն:
Իսկապես որ, թեև մութ է հայացքը սե աչքերի,
Բայց շողշողուն սրի սուր սայրն էլ է հատում ալքը սե:
Մի՛ մոլորվեք նրանց խոսքի քնքշութեամբ ու քաղցրութեամբ.
Չէ՛ որ նրանց մտքի կայծը բորբոքում է մեզ հրով.
Ո՛վ նուրբ կազմվածք. թե մետաքսն էլ դիպի նրա մարմնին,
Կասես՝ արյամբ ներկվեց իսկույն մետաքսի լոկ հպումից:
Ոտքից մինչև պարանոցն իր մանյակներն են շողշողուն,
Մուշկի հոտն էլ նրա մարմնի անուշ բույրին չի հասնում»:

Եվ հետո նա հեծկտաց ու ուշակորույս եղաւ, և Թաշ-ալ Մուլուքը, տեսնելով, որ նա այդպիսի հուսահատութեան մեջ է, շվարեց ու մտաւեցաւ նրան, իսկ երիտասարդը, ուշքի գալով ու տեսնելով, որ իր առջև կանգնած է թագաժառանգը, ոտքի ելաւ ու համբուրեց գետինը նրա առջև:

«Ինչո՞ւ դու մեզ ցույց չտվեցիր քո ապրանքը»,— հարցրեց նրան Թաշ-ալ Մուլուքը: Եվ երիտասարդը պատասխանեց. «Ո՛վ տիրակալ, իմ ապրանքների մեջ քո երջանիկ մեծութեանը վայել բան չկա»: Բայց թագաժառանգը բացականչեց. «Անպայման ցո՛ւյց տուր, թե ինչ ապրանքներ ունես, և պատմիր, թե ինչ է պատահել քեզ: Ես տեսնում եմ, որ քո աչքերը լալիս են, ու սիրտդ տխուր է, և եթե դու անարգված ես, մենք կվերացնենք այդ անարգարութեանը, իսկ եթե դու պարտքերի տակ ես ընկել, մենք կվճարենք դրանք: Իսկապես, իմ սիրտը վառվեց քեզ համար, երբ ես քեզ տեսա»:

Ապա Թաշ-ալ Մուլուքը հրամայեց երկու նստարան դնել, և նրա համար ոսկով ու մետաքսով պատված մի փղոսկրյա նստարան դրեցին և մետաքսե գորգ փռեցին: Եվ Թաշ-ալ Մուլուքը նստեց նստարանին, իսկ երիտասարդին հրամայեց նստել գորգի վրա ու նրան ասաց. «Ցույց տուր ինձ քո ապրանքները»:— «Ո՛վ տիրակալ,— պատասխանեց երիտասարդը,— ինձ մի՛ հիշեցրու այդ, իմ ապրանքները սազական շեն քեզ»: Բայց Թաշ-ալ Մուլուքը բացականչեց. «Իա անխուսափելի՛ է»: Ով նա իր ծառաներից մեկին հրամայեց ապրանքները բերել, և բերե-

ցին, հակառակ երիտասարդի կամքին, և դրանք տեսնելուց երիտասարդի աչքերից արցունքը հոսեց, ու նա լաց եղավ, հառաչեց ու տրտընչաց և, խոր հառաչանքներ արձակելով, այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Երդվում եմ խաղով աչքերիդ ու նրանց ծարիրով եմ երդվում,
Երդվում եմ մարմնովդ սլացիկ, որ այդքան քեքուշ է ու ճկուն,
Բերանիդ գինով եմ երդվում ու նրա մեղրի քաղցրությամբ,
Ու քո մեղմ բարքով եմ երդվում, որ նուրբ է ու անուշ է այդքան,
Քե միայն ստվերդ էլ հայանվի իմ աչքին, ո՞վ երազ իմ անգին,
Ինձ համար քաղցր է առավել, քան ահից փրկվելը՝ վախկոտին»:

Ապա երիտասարդը բացեց ապրանքները և սկսեց կտորը կտորի հետևից ու մասը մասի հետևից ցուցադրել Քաջ-ալ Մուլուքին, և ուրիշ ապրանքների թվում նա հանեց մետաքսե ոսկեկար մի հագուստ, որ երկու հազար դինար արժեր: Եվ երբ նա շրջեց այդ հագուստը, դրանից մի կտոր ընկավ, և երիտասարդը շտապով վերցրեց այն ու ազդրի տակ դրեց: Եվ նա մոռացավ բոլոր իմանալի բաներն ու արտասանեց այսպիսի ոտանավոր.

«Ե՛րբ, ե՛րբ կտաս դու ամոքում հոգուս տանջահար,
Իրավ, աստղերը քո սիրուց մոտ են ինձ համար.
Անչատում և կիրք ու թախիծ, սեր ու տառապանք.
Անվերջ, անհույս սպասումից կործանված մի կյանք:
Քո սիրո մեջ կյանք չեմ գտնում, բաժանման մեջ՝ մահ,
Հեռվում հեռու չեմ քեզանից, քեզ մոտ՝ դու օտար:
Արդարություն ու գթություն՝ խորթ են քո հոգուն,
Քեզնից փախել ես չեմ կարող, դու էլ չե՛ս օգնում:
Նեկ են բոլոր ուղիները սիրուս համար, նե՛ղ,
Ու չգիտեմ, թե ո՞ւր գնամ ու կորչեմ որտե՞ղ»:

Եվ Քաջ-ալ Մուլուքը խիստ զարմացավ երիտասարդի արտասանած այդ ոտանավորից ու չգիտեր այդ բոլորի պատճառը: Իսկ երբ երիտասարդը վերցրեց լաթն ու ազդրի տակ դրեց, Քաջ-ալ Մուլուքը նրան հարցրեց. «Ի՞նչ լաթ է դա»:— «Ո՞վ տիրակալ,— ասաց երիտասարդը,— ես հրաժարվում էի իմ ապրանքները քեզ ցույց տալ հենց միայն այդ լաթի պատճառով: Ես չեմ կարող թույլ տալ, որ տեսնես այն»: Բայց Քաջ-ալ Մուլուքը բացական չեց. «Ես անպայման պիտի տեսնեմ այն»,—

և ոկսեց համատարեն պահանջել ու դայրամաւր: Եվ երիտասարդը հաս-
նեց կտորն ազդրի տակից ու լաց եղավ և հառաչեց ու սկսեց արտնչալ և,
բազում հառաչանքներ արձակելով, այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Մի՛ նախաիր, նախատինքից տառապում է նա,—
Ես նրան ճիշտ խոսք ասացի, նա լսել չուզեց.
Մեծ ալլահին հովտում, ահա, լուսինս եմ հանձնում,
Նուրբ իրանի կամարն է լոկ ծագումը լուսնիս:
Հրածեշտ տվեցի նրան, սակայն շատ լավ կլիներ,
Թե իմ կյանքին հրածեշտ տայի, իսկ նրան՝ երբեք:
Շատ անդամ է անջատման որն այգն ինձ պաշտպանել,
Եվ արցունք ենք թափել առատ թե ես, և թե նա:
Ալլահը մեծ վկա է ինձ, որ չեմ կեղծում ես,
Անջատումից պատուվել է բողն արդարացման:
Մահճում մարմինս է հանգստից զուրկ, ինչպես և նա
Անջատումի պահից ի վեր էլ հանգիստ չունի:
Ի շար դործեց ճակատագիրն ձեռքով շարաղետ,
Երջանկութունս խլեց ինձնից, ու բախան էլ՝ նրա:
Հոգսեր տեղաց բախան ու լցրեց դավաթը հոգսի,
Ես խմեցի, նրան էլ էր նույնը վիճակվել»:

Իսկ երբ նա վերջացրեց իր ոտանավորը, Թաջ-ալ Մուլուքը նրան
ասաց. «Ես տեսնում եմ քո ծանր վիճակը: Պատմիր, թե ինչու ես լաց
լինում այդ լաթը տեսնելուց»: Եվ, լսելով լաթի մասին, երիտասարդը
հառաչեց ու ասաց. «Ո՛վ տիրակալ, զարմանալի է իմ պատմութունը,
և ինձ մի հրաշք բան է պատահել այս լաթի ու դրա տիրոջ և այս նկար-
ներն ու պատկերները հյուսողի հետ»: Եվ նա բացեց այն լաթը, և հան-
կարծ դրա վրա երևաց մետաքսահյուս ու ոսկեզարդ մի վիթ, իսկ նրա
զմաց՝ մի ուրիշ վիթի պատկեր, որ արծաթից էր հյուսված, իսկ նրա
պարանոցին ձույլ ոսկու մի շղթա կար ու երեք երկարավուն փորած
տպադիտն:

Եվ նայելով այդ պատկերներին ու տեսնելով, թե որքան լավ են
հյուսված դրանք, Թաջ-ալ Մուլուքը բացականչեց. «Թող ալլահը փա-
ռաբանվի, որ մարդուն սովորեցրել է այն, ինչ նա շփտեր»,— և նրա
սրտում այդ երիտասարդի պատմութունը լսելու ցանկութունն առա-
ջացավ: «Պատմիր, թե ի՞նչ է պատահել քո և այդ վիթի տիրուհու մի-
ջև»,— խնդրեց թագավորը նրան, և երիտասարդն սկսեց.

«Իմացած եղի՛ր, ո՛վ տիրակալ, որ հայրս վաճառական էր և բա-
ցի ինձանից ուրիշ եքեխա շուներ: Իսկ ես մի հոբեղրոր ազգիկ ունեի,

որի հետ միասին էի դառտիարակվել հորս տանը, որովհետև նրա հայրը մեռել էր: Եվ մահվանից առաջ նրա հայրը հորս հետ պայմանավորվել էր ամուսնացնել նրան ինձ հետ: Եվ երբ ես հասա տղամարդու շահահասության, իսկ նա՝ կնոջ շահահասության, նրան ինձանից շրթանեցին, և ինձ էլ նրանից շրթանեցին: Իսկ հետո հայրս խոսեց մորս հետ ու ասաց. «Այս տարի մենք կգրենք Ազիզի ու Ազիզեի պայմանը»: Եվ նա պայմանավորվեց մորս հետ այդ գործի մասին ու սկսեց պաշար նախապատրաստել հարսանեկան հանդեսի համար: Եվ այդ բոլորով հանդերձ ես ու հորեղբորս աղջիկը մի անկողնում էինք քնում ու շփտեինք իրերի վիճակը, իսկ նա ավելի խոհեմ էր, բանիմաց ու գիտակ, քան ես:

Եվ այնժամ հայրս ժողովեց հանդեսի համար անհրաժեշտ ամեն բան, և մնացել էր միայն, որ ամուսնական պայմանը գրեին, ու ես մտնեի իմ հորեղբոր աղջկա մոտ: Հայրս կամեցավ ամուսնական պայմանը գրել ուրբաթ օրվա աղոթքից հետո ու գնաց իր վաճառական ընկերների և մյուսների մոտ ու տեղեկացրեց նրանց այդ մասին, իսկ մայրս գնաց ու հրավիրեց իր ընկերուհի կանանց ու կանչեց ազգականներին: Եվ երբ ուրբաթ օրը եկավ, մաքրեցին այն սենյակը, որտեղ պետք է նստեինք ու լվացին դրա մարմարե հատակը, և մեր տանը գորգեր փոխեցին ու ամեն ինչ, որ հարկավոր էր, դրեցին այնտեղ, նախապես պատերը ծածկելով ոսկեկար պաստառներով: Եվ մարդիկ պայմանավորվեցին մեր տուն գալ ուրբաթ օրվա աղոթքից հետո, և հայրս գնաց ու պատրաստեց հալվա ու քաղցրավենիքներ, ու միայն պայման գրելը մնաց:

Իսկ մայրս ինձ բաղնիք ուղարկեց ու իմ հետևից ճամփեց ամենաշքեղ հագուստներից մեկը: Եվ, բաղնիքից դուրս գալով, ես հագա այդ շքեղ զգեստը, իսկ դրա վրա օձանելիք էր ցանված, և երբ ես հագա զգեստը, դրանից անուշահոտություն էր բուրում ու փողոցով մեկ տարածվում: Ես ուզում էի մզկիթ գնալ, բայց հիշեցի իմ մի ընկերոջն ու հետ դարձա նրան փնտրելու, որպեսզի պայմանը գրելու ժամանակ գա, և ինքս ինձ առում էի. «Դրանով զբաղվեմ, մինչև աղոթքի ժամանակը գա»:

Եվ ես մի նրբանցք մտա, որտեղ երբեք չէի եղել, իսկ ես քրտնել էի բաղնիքից հետո՝ նոր զգեստիս մեջ, և քրտինքը հոսում էր, ու ինձանից անուշահոտություն էր բուրում: Ես նստեցի նրբանցքի ծայրին հան-

դրատանալու ու տակս փռեցի եզրագարդ թաշկինակս, որ մոտս էր, և շատ շոգեցի, ու ճակատս քրտնեց ու քրտինքը երեսովս ցած վազեց, բայց ես չէի կարողանում երեսս սրբել թաշկինակով, քանի որ թաշկինակը տակս էի փռել:

Ես ուզում էի փարաշայխս փեշը բռնել ու դրանով երեսս սրբել, բայց հանկարծ, չգիտեմ որտեղից, մի սպիտակ թաշկինակ ընկավ ինձ վրա: Իսկ այդ թաշկինակը քամուց թեթև էր, և դրա տեսքն ավելի հանելի էր, քան ապաքինումը՝ հիվանդի համար, ու ես ձեռքով բռնեցի այն ու գլուխս բարձրացրի, որ տեսնեմ, թե որտեղից ընկավ այդ թաշկինակը: Եվ իմ աչքերը հանդիպեցին այս վիթի տիրուհու աչքերին, ու հանկարծ, տեսնեմ՝ նա պղնձե ճաղերով պատուհանից դուրս ձգվեց, և իմ աչքերը նրանից գեղեցիկին չէին տեսել, և ընդհանրապես իմ լեզուն անզոր է նրան նկարագրել: Եվ տեսնելով, որ ես նայում եմ իրեն, նա մատը բերանին տարավ, իսկ հետո իր միջին մատը վերցրեց ու սեղմորեն միացրեց ցուցամատին և երկու մատները սեղմեց իր մարմնին՝ երկու ստինքների արանքում, ապա գլուխը հետ քաշեց պատուհանից, փակեց պատուհանի փեղկն ու գնաց: Եվ իմ սրտում բորբոքվեց կրակն ու մեծ բոց վառվեց, և նրան նայելն իրենից հետո բյուր հառաչանքներ կորզեց, ու շփոթվածությանս մեջ շտեղծեցի, թե նա ինչ ասաց, ու չհասկացա, թե ինչ նշաններ էին, որ արեց:

Եվ ես երկրորդ անգամ պատուհանին նայեցի, բայց տեսա, որ այն փակված է, ու սպասեցի մինչև արևի մայրամուտը, բայց ոչ ձայն լսեցի, և ոչ էլ մարդ տեսա: Հուսահատված այն մտքից, որ նրան էլ չեմ տեսնի, ես տեղիցս վեր կացա ու վերցրի թաշկինակը, և երբ բացեցի, դրանից մուշկի հոտ էր բուրում, ու այդ բուրմունքից ինձ մեծ ցնծություն տիրեց, այնպես որ կարծես ես ինձ դրախտում էի զգում: Իսկ հետո թաշկինակը փռեցի իմ առջև, ու դրա միջից բարակ թղթի մի թերթիկ ընկավ, և երբ թերթիկը բացեցի, պարզվեց, որ ներծծված է անուշահոտ բուրմունքով ու դրա վրա գրված էր այսպիսի ոտանավոր.

«Նրան նամակ ուղարկեցի, կրճքիս բունն տրտունջով,
Ձեռագիրս էր շատ նրբին, իսկ ձեռագիր՝ այնքա՛ն շատ:
Նա հարցրեց. «Սիրելիս, ի՞նչ պատահեց ձեռագրիդ,
Այնքան նուրբ է ու բարակ, որ երևում է հագիվ»:
Ես ասացի. «Տե՛ս, ես էլ նուրբ ու նիհար եմ գարձել,
Ա՛յ, այգպիսի ձեռագրով սիրահարներն են գրում»:

Կարդալով այդ ոտանավորը, ես հայացքս հառեցի թաշկինակի գեղեցկութեանը և դրա եզրերից մեկին հյուսվածագիր այս բեյթերը տեսա.

Աղվամազը հմուտ ձեռքով, քան գրողներն անհամար,
Նրա այտին երկու նուրբ տող, երկու ռեհան է գրել,
«Շփոթվում է լուսինն անգամ, երբ քո դեմքն է երևում,
Ամաչում են ոստերն ամեն, երբ դու իրանդ ես ճկում»:

Իսկ մյուս եզրին գարդանկարված էին հետևյալ բեյթերը.

Աղվամազը սև համպարով մարգարիտի վրա շինջ
Երկու քնքուշ տող է գրել, խնձորի վրա՝ հանց ազաթ,
«Սպանիլ են իր ռիբերը, թեկուզ նայի քնքշաղին,
Մեզ հարբեցնում է ոչ գինին, այլ իր այտերը նրբին»:

Եվ երբ ես տեսա, թե ինչպիսի ոտանավորներ կան թաշկինակի վրա, իմ սրտում բռնկվեց հրեղեն բոցն ու մեծացան իմ կիրքն ու մտատանջությունը: Եվ ես վերցրի թաշկինակն ու թերթիկը և տուն տարա, հնար չգտնելով նրան միանալու համար, ու սիրո մեջ շէի կարողանում մամամասնությունների մասին խոսել:

Ես տուն հասա միայն այն ժամանակ, երբ գիշերվա մի պահն անցել էր, և տեսա, որ հորեղբորս աղջիկը նստել ու լաց է լինում: Եվ ինձ տեսնելով, նա սրբեց արցունքներն ու մոռեցավ ինձ և շորերս հանեց ու հարցրեց, թե ինչ՞ է ես շէի եկել: Եվ նա ինձ պատմեց. «Բոլոր մարդիկ (էմիրներ, մեծամեծներ, վաճառականներ և ուրիշներ) հավաքվել էին մեր տուն, և ներկայացան դատավորներն ու վկաները, և կերան ուտելիքն ու մի քիչ նստեցին, քո գալուն սպասելով, որպեսզի ամուսնական պայմանը գրեն, իսկ երբ հույսները կտրեցին քո գալուց, ցրվեցին ու իրենց ճամփով գնացին: Քո հայրը, — ասաց նա, — դրանից խիստ զայրացավ ու երզվեց, որ պայմանը կգրի միայն եկող ասրի, քանի որ այս հանդեսի վրա նա շատ փող է ծախսել: Իսկ ի՞նչ է պատահել քեզ այսօր, որ մինչև հիմա չես եկել, և տեղի է ունեցել այն, ինչ եղավ քո բացակայության պատճառով», — հարցրեց նա հետո: Եվ ես պատասխանեցի. «Ո՛վ իմ հորեղբոր աղջիկ, մի՛ հարցրու, թե ինչ է պատահել ինձ», — ու նրան պատմեցի թաշկինակի մասին ու ամեն ինչ հայտնեցի սկզբից մինչև վերջ: Եվ նա վերցրեց թաշկինակն ու թերթիկը և կարդաց դրանց վրա գրվածն, ու արցունքները հոսեցին նրա այտերով, և նա այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Եթե մեկն ասի. «Կիրքն ազա է սկզբում»
Ասա. «Սո՛ւս է, հարկադրանք է ամեն կիրք»:

Եվ չի բերում հարկադրանքը ամոթանք»:
 Եվ ճիշտ է այդ, նախնիներն են վկայում,
 Ի՞նչ չի սարքված, եթե դորժերը քննես:
 Ուզես, կասես փորձությունն էլ քաղցր է,
 կամ մարմնիդ ցավը ներքին, սաստիկ ծեծ,
 կամ վրեժը, երջանկություն, թե փափագ:
 Տեսնե՞ս, ի՞նչն է հոգիդ սպանում կամ լցնում,
 Եվարել եմ մտքերի մեջ հակադիր:
 Բայց և այնպես սիրո ժամը տոն է մեզ,
 Երբ շուրթերը միշտ ժպտում են սիրակեզ:
 Սերն է վանում ապականիչ ամեն բան,
 Ստոր մարդկանց սրտերը սեր չի մտնում»:

Հետո նա հարցրեց. «Իսկ ի՞նչ ասաց նա քեզ և ինչ նշաններ արեց»:
 Եվ ես պատասխանեցի. «Նա ոչ մի բան չարտասանեց, այլ միայն մատը
 դրեց բերանին ու հետո նրան կցեց միջամատը և երկու մատները սեղ-
 մեց կրծքին ու գետինը ցույց տվեց, իսկ հետո գլուխը պատուհանից հեռ-
 րաշեց ու պատուհանը ծածկեց: Եվ դրանից հետո ես նրան շտեսա, բայց
 նա իր հետ իմ սիրտը տարավ, ու ես նստած մնացի, մինչև արևը մայր
 մտավ, սպասելով, որ նա երկրորդ անգամ պատուհանից դուրս նայի,
 բայց նա շարեց այդ բանը, և, հուսահատվելով, ես այնտեղից հեռացա
 ու տուն եկա: Ահա իմ պատմությունը, և ես խնդրում եմ քեզանից, որ
 դու օգնես ինձ իմ փորձության մեջ»:

Եվ Ազիզեն գլուխը բարձրացրեց ու ասաց. «Ո՞վ իմ հորեղբոր տղա,
 եթե դու իմ աչքն ուզեիր, ես, իսկապես, քեզ համար կհանեի այն: Ես
 անպայման կօգնեմ քեզ կարիքիդ մեջ, և նրան էլ կօգնեմ իր կարիքի
 մեջ. նա սիրահարվել է քեզ, ինչպես որ դու նրան ես սիրահարվել»:
 «Իսկ ինչպե՞ս պետք է մեկնել նրա նշանները»,— հարցրի ես: Եվ Ազի-
 զեն պատասխանեց. «Այն, որ նա մատը բերանին է դրել, ցույց է
 տալիս, որ դու նրա համար այնպիսի տեղում ես, ինչպես հոգին՝ մարմ-
 նի մեջ, և որ նա իմաստության ատամներով քո մերձեցմանն է կառչել:
 Քաշկինակը սիրողների ողջույնն է սիրեցյալներին, թերթիկը նշանա-
 կում է, որ նրա հոգին կապված է քեզ, իսկ երկու մատները մարմնին
 հպելը՝ ստինքների արանքում, նշան է, որով նա ասում է քեզ՝ երկու
 օրից հետո արի այստեղ, որ քո երևալով իմ հոգսը վերանա: Եվ իմա-
 ցի՛ր, ո՞վ իմ հորեղբորորդի, որ նա սիրում ու վստահում է քեզ՝ ահա
 թե ինչպիսին է նրա նշանների իմ մեկնությունը, իսկ եթե կարողանա-
 յի ներս ու դուրս անել, ես, հավանաբար, մոտ ժամանակում քեզ կմեր-
 ձեցնեի նրան ու ձեզ իմ քղանցքով կքողարկեի»:

Եվ Ազիզեից լսելով այդ,— ասաց երիտասարդը,— ես շնորհակա-
լություն հայտնեցի նրան իր խոսքերի համար և ինքս ինձ ասացի. «Եր-
կու օր կհամբերեմ»: Եվ ես երկու օր տանը նստեցի, ներս ու դուրս շա-
նելով, ու ո՛չ կերա, ո՛չ խմեցի, և գլուխս դնում էի հորեղբորս աղջկա
ծնկներին, իսկ նա ինձ մխիթարում էր ու ասում. «Ամրապնդի՛ր քո
վճռականությունն ու խիզախությունը, հանգստացրու հոգիդ ու աչքերդ
թարմացրու: Ամրապնդի՛ր քո հաստատակամությունը, շորերդ հագիր
ու նրա մոտ գնա, ինչպես նշանակված է»:

Հետո նա վեր կացավ, զգեստափոխվել տվեց ինձ ու խունկ ծխեց,
ապա ուժ ներշնչեց ինձ ու սիրտս զվարթացրեց, և ես դուրս եկա ու
գնացի, մինչև որ մտա այն նրբանցքը: Մի քիչ նստեցի կրպակում, ու
հանկարծ պատուհանը բացվեց, ու ես իմ աչքով տեսա այն կնոջը: Եվ
այդտեղ ես ուշաթափվեցի, իսկ ուշքի գալով, ամրացրի կամքս ու սրտով
զվարթացա և երկրորդ անգամ նայեցի նրան, բայց աշխարհից վերա-
ցա: Իսկ երբ խելքս գլուխս եկավ, տեսա, որ այն կինը ձեռքին մի
հայելի է բռնել ու կարմիր թաշկինակ: Եվ, ինձ տեսնելով, թևերը քշշ-
տեց ու մատներով կրծքին խփեց, իսկ հետո ձեռքը բարձրացրեց և հա-
յելին պատուհանից դուրս հանեց, որից հետո վերցրեց կարմիր թաշ-
կինակն ու գնաց, իսկ վերադառնալով, երեք անգամ թաշկինակը պա-
տուհանից կախեց դեպի նրբանցքը, իջեցնելով ու բարձրացնելով այն,
և ապա ծալեց թաշկինակը ու ձեռքով փաթաթեց և գլուխը խոնարհեց:
Իսկ հետո նա գլուխը հետ քաշեց պատուհանից ու պատուհանը փակեց
և գնաց, ոչ մի բառ չասելով ինձ, Ընդհակառակը, նա ինձ մոլորված
թողեց, ու ես չգիտեի, թե ինչ նշաններ արեց նա:

Եվ ես նստած մնացի, մինչև երեկո, իսկ հետո տուն գնացի կես-
գիշերին մոտ ու տեսա, որ հորեղբորս աղջիկն այտը ձեռքին է հենել,
և նրա աչքերը արցունք են թափում, ու նա այսպիսի ոտանավոր է
ասում.

«Թ՛նչ եմ արել ես, որ նախատում են ինձ ու կշտամբում,
Ինչպե՛ս սփոփվեմ, ճկուն ոստի պես բտրեկազմ ես դու:
Օ՛, տեսիլք էիր, հոգիս գողացար ու թաքնվեցիր,
Ուզրի՛ սիրո մեջ գեղեցկությունը փրկություն չունի:
Ինչպես թրքունու աչքերը, քո սև աչքերն են հատում
Սիրտը սիրողի՛ սուրսայր սրերից ավելի հտտու:

1 Ուզրի — Բենի-Ուզրա ցեղը, որի մարզիկ, ինչպես ավանդությունն է ասում, աչ-
քի էին քնկնում սիրո բացառիկ մաքրությամբ ու հավատարմությամբ: Այդ ցեղի անու-
նից է ծագել «Ազրա» անձնանունը, որ անմահացրել են Հայնեն ու Ռոբրինշտեյներ:

Գու հարկադրում ես, որ ես միշտ կրեմ բեռը քո սիրո,
Բայց այնքան թույլ եմ, որ խալաթ կրել արդեն չեմ կարող:
Արյուն եմ լացել, երբ նախատողը կշամբել է ինձ.—
«Տե՛ս, սուրն է նայում քեզ քո սիրածի աչքերի միջից»:
Ա՛խ, թե քեզ նման լինեի սրտով, բայց մարմինս էր լուկ
նման հասակիդ, բայց այն էլ ճկվեց վշտի բռնան տակ:
Ո՛վ էմիր, աչքդ վերահսկիչ է դաժան ու դժնի,
Ունքդ՝ դոնապան, որ արդարություն ճանաչած շունի:
Սո՛ւտ է, թե շովսեփն իր գեղեցկությամբ առավ ամեն ինչ,
Որքա՛ն հովսեփներ քո գեղեցկության մեջ են թաքնված:
Քեզնից հեռանալ ձգտում եմ՝ ահից լրտես-աչքերի,
Բայց ստիպելու որքա՛ն ուժ գտնեմ մարմնիս մեջ տկար»:

Եվ երբ լսեցի նրա ոտանավորը, հոգսերս ավելացան ու մեծացավ
դառնությունս, և ես սենյակի անկյունում ընկա, իսկ Ազիզին վեր կա-
ցավ ու իմ տեղը տարավ ինձ, իսկ հետո շորերս հանեց և թեղանիքով
երեսս սրբեց ու հարցրեց, թե ինչ է պատահել ինձ:

Եվ ես պատմեցի նրան այն ամենը, ինչ տեսել էի այն կնոջից, և
նա ասաց. «Ո՛վ իմ հորեղբորորդի, ձեռքի ամուլ ու հինգ մատներով
արած նշանի բացատրությունն այսպիսին է. արի՛ հինգ օրից հետո, իսկ
նրա նշանը հայելիով ու կարմիր թաշկինակն իջեցնելով ու բարձրաց-
նելով, և այն, որ նա գլուխը դուրս է հանել պատուհանից, նշանակում
է. նստի՛ր ներկարարի խանութի մոտ, մինչև որ քեզ մոտ գա իմ
յրաբերը»:

Եվ երբ ես այդ խոսքերը լսեցի, սրտիս մեջ կրակը բորբոքվեց, ու
ես բացականչեցի. «Ալլահը վկա, ո՛վ իմ հորեղբոր աղջիկ, դու ճշմարիտ
ես մեկնաբանում: Նրբանցքում ես մի հրեա ներկարար տեսա»:

Եվ ես լաց եղա, իսկ հորեղբորս աղջիկն ասաց. «Ամրապնդի՛ր քո
վճռականությունը և ամուր եղիր սրտով. մի ուրիշը մի քանի տարի է,
որ սիրով համակված է ու գիմանում է կրքի հրին, իսկ դու միայն հինգ
օրվա սիրահարված ես, էլ ինչո՞ւ ես այդպես ողբում»:

Եվ նա սկսեց խոսքով մխիթարել ինձ և ուտելիք բերեց ինձ հա-
մար, ու ես մի կտոր վերցրի և ուզում էի ուտել, բայց չկարողացա:
Եվ ես հրաժարվեցի ուտելուց ու խմելուց և զրկվեցի քնի քաղցրությու-
նից, ու իմ դեմքը դեղնեց, և իմ գեղեցկությունը փոխվեց, քանի որ ես
առաջ շէի սիրահարվել, և միայն առաջին անգամ էի սիրո ջերմությունը
ճաշակում: Եվ ես թուլացա, և հորեղբորս աղջիկն էլ թուլացավ իմ
պատճառով, և նա ամեն գիշեր պատմում էր ինձ սիրահարների ու սի-
րեցյալների վիճակի մասին, որպեսզի մխիթարի ինձ, մինչև որ ես քնում

էի, իսկ արթնանալով, ես տեսնում էի, որ նա իմ պատճառով չի քնել, և արցունքը հոսում է նրա այտերով:

Եվ ես այդպես ապրեցի, մինչև այդ հինգ օրն անցավ, ու այնժամ հորեղբորս աղջիկը ջուր տաքացրեց ինձ համար և լողացրեց ինձ ու շորերս հազցրեց և ասաց. «Գնա նրա մոտ: Թող ալլահը քո պահանջը կատարի և թող հասցնի քեզ այն բանին, ինչ-որ սիրածից ուզում ես»:

Եվ ես դուրս եկա ու գնացի, մինչև որ հասա այն նրբանցքը, իսկ օրը շաբաթ էր, ու տեսա, որ ներկարարի խանութը փակ է: Ես դրա կողքին նստեցի, մինչև որ հետճաշյա աղոթքի կոչունքը եղավ, և արևը դեղնեց, և երեկոյան աղոթքի կոչեցին, ու գիշերը եկավ, իսկ ես ոչ այն կնոջ հետքը տեսա, ու ոչ ձայն լսեցի, ու ոչ մի լուր: Եվ ես վախեցա, որ մենակ եմ նստել ու վեր կացա և գնացի հարրածի նման, մինչև որ տուն հասա, իսկ ներս մտնելով, տեսա, որ հորեղբորս աղջիկը՝ Ազիզեն, կանգնած է մի ձեռքը պատին խփված ձողին զցած, իսկ մյուս ձեռքը կրծքին է դրել, ու հառաչանքներ է արձակում և այսպիսի ոտանավոր ասում.

«Մնողներից իր լքված բեղվինուհու
սերն է հուժկու, զորավոր.

Տանջվում է նա հուր կաբոտով Արաբիայի
մրտենու և ուռնու:

Թե համփորդի հանդիպի, նա իր սիրո
անշնչելի կրակով

Հսկտ խարույկ կվառի, իսկ արցունքով
բազում տիկեր կլցնի:

Բայց և այնպես իմ սիրուց զորեղ չէ սերը
րեղվինի, միայն թե

Իմ սիրածը հանցավոր է համարում ինձ
սիրուս համար անսահման»:

Իսկ վերջացնելով ոտանավորը, նա շրջվեց ու տեսավ ինձ և, թևքերով արցունքը սրբելով, իմ երեսին ժպտաց ու ասաց. «Ո՞վ իմ հորեղբորորդի, թող ալլահը քո օգտին դարձնի այն, ինչ քեզ պարգևել է: Ինչո՞ւ գիշերը քո սիրածի մոտ շանցկացրիր ու շքավարարեցիր քո ցանկությունը նրա հետ»: Իսկ ես, լսելով այդ խոսքերը, ոտքով աքացի տվեցի նրա կրծքին, և նա պատին դիպավ, ու ճակատը կպավ դրանդիին, որի մեջ մի ցից կար, ու դա նրա ճակատը խրվեց: Եվ նրան նայելով, ես տեսա, որ նրա ճակատը պատովել է, ու ճակատից արյուն է հոսում, բայց Ազիզեն լռեց և ոչ մի խոսք չասաց, իսկույն վեր կացավ ու, մի լաթ կտրելով, վերքի վրա գրեց և շորով կապեց ու գորգի վրա թափված

արյունը մաքրեց, կարծես ոչինչ չէր պատահել, ապա մտեցավ ինձ ու դեմքիս ժպտաց և քնքուշ ձայնով ասաց. «Ալլահը վկա, ո՛վ իմ հորեղբորորդի, ես այդ շասացի քեզ ու նրա վրա ծիծաղելու մտքով: Ես տանջվում էի գլխացավից և մտքումս դրել էի արյուն բաց թողել, իսկ հիմացավը մեղմացավ: Պատմիր ինձ, թե ինչ է պատահել քեզ այսօր»:

Եվ ես պատմեցի այն ամենը, ինչ որ այդ կնոջ պատճառով կրել էի, և պատմելուց լաց եղա, իսկ Ազիզեն ասաց. «Ո՛վ իմ հորեղբորորդի, ուրախացի՛ր որ քո հույսերն իրականանում են: Իսկապես, դա համաձայնության նշան է, և այդ նշանն այն է, որ նա քո աչքին չի երևացել, որովհետև ուզում է քեզ փորձել՝ հաստատամի՞տ ես, թե ոչ և իսկապե՞ս սիրում ես իրեն, թե ոչ: Իսկ վաղը գնա՛ նախկին սեղն ու տե՛ս, թե նա քեզ ինչ ցույց կտա. դու մոտ ես հաճույքներին, ու քո տխրության վերջն է նկե՛լ»:

Եվ նա սկսեց մխիթարել ինձ վշտիս մեջ, իսկ ես ավելի վշտացա ու տխրեցի: Իսկ հետո նա ինձ համար ուտելիք բերեց, բայց ես ոտքով սկուտեղը հրեցի, այնպես որ ուտելիքները դեսուդեն թափվեցին, ու րացականչեցի. «Բոլոր սիրահարվածները դիվահարներ են, ու նրանք ուտելիքի հակում չունեն ու շեն հաճոյանում քնով»: Բայց իմ հորեղբոր աղջիկը՝ Ազիզեն, ասաց. «Ալլահը վկա, ո՛վ իմ հորեղբորորդի, դա սիրո նշան է»,— ու նրա արցունքները հոսեցին: Նա հավաքեց սկուտեղի կտորներն ու ճաշի թափուկները և սկսեց զբաղեցնել ինձ պատմություններով, իսկ ես աղոթում էի տիրոջը, որ շուտ լուսանա, իսկ երբ առավոտը բացվեց ու լույսը ցոլաց և շողշողաց, ես գնացի այն կնոջ տան կողմն ու աճապարանքով մտա նրբանցք ու նստեցի խանութում: Եվ հանկարծ պատուհանը բացվեց, ու նա ծիծաղելով գլուխը դուրս հանեց պատուհանից, ապա անհետացավ ու վերադարձավ, և նրա մոտ մի հայելի կար, մի քսակ ու հողե անոթ՝ կանաչ բույսերով լի, իսկ ձեռքին՝ կանթեղ: Եվ առաջին հերթին նա ձեռքն առավ հայելին ու, քսակի մեջ դնելով, կապեց և սենյակի մեջ նետեց, ապա մազերն արձակեց երեսին ու մի պահ կանթեղը դրեց բույսերի ծայրին, իսկ դրանից հետո վերցրեց ու գնաց, պատուհանը փակելով: Եվ իմ սիրտը կտոր-կտոր էր լինում դրանից ու նրա ծածուկ նշաններից և անհայտ առեղծվածներից, իսկ նա ոչ մի խոսք չասաց ինձ, ու դրանից իմ կիրքը սաստկացավ և սերն ու խելագարությունը մեծացան:

Եվ ես հետ գարձա լացող աչքերով ու տխուր սրտով և իմ տունը մտա ու տեսա, որ հորեղբորս աղջիկը նստել է, դեմքով դեպի պատը:

Եվ նրա սիրտը վառվում էր հոգսերից ու վշտից և խանդից, բայց սերը նրան արգելում էր որևէ բան ասել ինձ իր սիրո մասին, որովհետև նա տեսնում էր, որ ես սիրահարվել եմ ու խելագարվել: Եվ ես նայեցի նրան ու գլխի վրա երկու կապ տեսա, մեկը ճակատին՝ հարվածի պատճառով, իսկ մյուսը՝ աչքին, որովհետև շատ լաց լինելուց աչքերն սկսել էին ցավել: Եվ նա վատթարագույն վիճակում էր ու, լաց լինելով, այսպիսի ոտանավոր էր ասում.

«Ալա՛հը վկա, չեմ կարող տիրել նրան, որ տերը
Լեյլիին տվեց, և ոչ էլ նրան, ում ինձ պարգևեց.
Նրան հանձնել է ուրիշին և ինձ զրկել իր սիրուց,—
Ինչո՞ւ ուրիշին ինձ չի սահմանել, Լեյլու այս անգուսպ կրթի փոխարեն»:

Եվ, վերջացնելով ոտանավորը, նա, շարունակ լաց լինելով նայեց ու տեսավ ինձ, և այնժամ սրբեց արցունքներն ու վեր կացավ, եկավ դեպի ինձ, բայց չկարողացավ խոսել, այնպես ուժգին էր նրա հուզմունքը:

Եվ նա միառժամանակ լռեց, ապա ասաց. «Ո՞վ իմ հորեղբորորդի, պատմիր, թե այս անգամ ինչ վիճակվեց քեզ»: Եվ ես նրան պատմեցի այն ամենը, ինչ տեղի էր ունեցել, և այնժամ նա բացականչեց. «Համբերիր, եկել է նրա հետ մերձենալուդ ժամանակը, և դու հասել ես քո հույսերի իրականացմանը: Նրանով, որ նա քեզ ցույց է տվել հայելին ու քսակի մեջ դրել, նա քեզ ասում է՝ երբ արևը կսուզվի խավարի մեջ, իսկ մազերը երեսին արձակելով, նա ասել է՝ երբ գիշերը գա ու սև խավարն իջնի ու ցերեկվա լույսը սքողի, արի՛, իսկ նրա նշանը՝ ծաղիկներով ու ծաղկամանով, նշանակում է՝ երբ գաս, մտի՛ր նրբանցքի հետևի պարտեզը, իսկ կանթեղի նշանը նշանակում է՝ երբ պարտեզ մտնես, այնտեղ սպասիր և որտեղ գտնես վառվող կանթեղ, այնտեղ էլ գնա և նստիր գրա մոտ ու սպասիր ինձ, իրոք, քո սերն ինձ սպանում է»:

Եվ, լսելով հորեղբորս աղջկա խոսքերը, ես ծայրահեղ կրթից բացականչեցի ու ասացի. «Դեռ որքա՞ն պիտի դու խոստանաս, ու ես գնամ նրա մոտ, առանց նպատակիս հասնելու: Ես քո մեկնության մեջ ճիշտ իմաստ չեմ տեսնում»:

Եվ հորեղբորս աղջիկը ծիծաղեց ու ասաց. «Քո մեջ միայն այնքան համբերություն պետք է լինի, որ այսօրվա մնացորդը համբերես, մինչև օրը դեպի մայրամուտ թեքվի ու գիշերը գա իր խավարով, և այն ժամանակ դու կհաճոյանաս մենությամբ ու հույսերիդ իրականացմամբ,

և սա ճշմարտութեան խոսքն է առանց կեղծիքի»: Եվ նա այսպիսի բեյթեր արտասանեց.

«Հլուսի՛ր ծալքերը օրերի ու թող հարթվեն նորից նոր,
Ուրբ մի՛ դիր ու մի՛ մտիր հողմերի տան շեմքից ներս:
Որքան բան կա, որոնց հասնել դյուրին բան չէ մեզ համար,
Բայց դրանցից հետո կդա ակնթարթը երջանիկ»:

Եվ հետո նա մոտեցավ ինձ ու քնքուշ խոսքերով սկսեց մխիթարել, բայց չհամարձակվեց որևէ ուտելիք բերել, վախենալով, որ ես կբարկանամ իր վրա, և նա հույս չունեի, որ ես կհակվեմ իր կողմը: Նա միայն ուզեց մոտենալ ու շորերս հանել, իսկ հետո ասաց ինձ . «Մ՛վ իմ հորեղբորորդի, նստիր, ես մի բան կպատմեմ, որը քեզ մինչև օրվա վերջը կզբաղեցնի, և եթե մեծ ալլահը կամենա, գիշերը դեռ չեկած դու ք: սիրեցյալի մոտ կլինես»:

Բայց ես նրան չնայեցի էլ ու սպասում էի գիշերվա գալուն ու ասում. «Մ՛վ տեր, արագացրո՛ւ գիշերվա գալուստը»: Իսկ երբ գիշերը եկավ, հորեղբորս աղջիկը դառնորեն լացեց ու մաքուր մուշկի մի հատիկ տվեց ինձ և ասաց. «Մ՛վ իմ հորեղբորորդի, այս հատիկը բերանդ գիր¹, և երբ դու հանդիպես քո սիրածին ու նրա հետ բավարարես քո կարիքը, և նա քեզ թույլ տա անել այն, ինչ որ ուզում ես, նրա համար այս ոտանավորն ասա.

«Մ՛վ սիրահարներ՛ր, հանուն ալլահի, ասացեք, արդյոք
Զահեյն ի՞նչ անի, թե սիրտը սաստիկ սիրով բորբոքվի»:

Իսկ հետո նա համբուրեց ինձ ու ստիպեց երդվել, որ ես ոտանավորի այս տուներ կարտասանեմ այն ժամանակ միայն, երբ այն կնոջ մոտից դուրս գամ, և ես պատասխանեցի. «Լսում եմ ու հնազանդվում»: Եվ ես իրիկնապահին դուրս եկա, գնացի ու գնացի մինչև որ հասա պարտեզ: Եվ ես դարպասը բաց գտա ու ներս մտա և հեռվում լույս տեսա ու դիմեցի այն կողմը, և հասնելով այնտեղ, տեսա մի մեծ, կամարակապ տուն, որի վրա փղսակրե ու սևափայտե գմբեթ կար, և կանթեղը կախված էր գմբեթի կենտրոնից: Իսկ տանը փռված էին ոսկեհյուս ու արծաթահյուս մետաքսե գորգեր և այդտեղ կանթեղի տակ գտնվող ոսկե աշտանակի մեջ մոմ էր վառվում, իսկ տան կենտրոնում զանազան

¹ Ազիզը մուշկի հատիկը բերանում պետք է պահեր, որպեսզի չմոռանար այդ ոտանավորն արտասանել:

պատկերներով զարդարված շատրվան կար, իսկ շատրվանի կողքին՝ մետաքսե անձեռոցիկով ծածկված սփռոց, որի մոտ դրված էր գինով լիքը հախճապակյա մեծ սափոր և ըյուրեղապակյա ոսկեզարդ գավաթ: Իսկ այդ բոլորի կողքին դրված էր շորով ծածկած արծաթե մի մեծ սկուտեղ: Եվ ես րացեցի այն ու դրա մեջ ամեն տեսակ մրգեր տեսա՝ թուզ, նուռ, խաղող, նարինջ, կիտրոն ու փորթուզալ, և նրանց մեջերքը զանազան ծաղիկներ էին դրված՝ վարդ, հասմիկ, մրտի, մասրավարդ ու նարգիզ և ամեն կարգի անուշահոտ բույսեր:

Եվ իմ դեմքը փոխվեց այդ տան տեսքից ու ես ուրախությամբ լըցվեցի, և իմ հոգսերն ու տխրությունը ցրվեցին, միայն թե ես այնտեղ չգտա մեծ ալլահի ոչ մի արարած ու ո՛չ ստրուկ տեսա, ո՛չ ստրկուհի, ո՛չ էլ որևէ մեկին, որ հոգ տաներ այդ բոլորի մասին կամ պահպաներ դրանք, Եվ ես նստեցի այդ խաղաղ սենյակում, իմ սիրեցյալի գալուն սպասելով, մինչև որ անցավ գիշերվա առաջին ժամը, և երկրորդ ժամը, և երրորդը, իսկ նա դեռ չկար: Եվ իմ մեջ սաստկացավ քաղցի տանջանքը, քանի որ վերջին ժամանակները ես սաստիկ սիրո պատճառով ոչինչ չէի կերել, և երբ ես տեսա այդ տեղն ու ինձ պարզ դարձավ, որ հորեղբորս աղջիկը ճիշտ է հասկացել իմ սիրեցյալի նշանները, հոգով հանգստացա ու քաղցի տանջանքն զգալի դարձավ ինձ: Եվ սփռոցի վրա եղած ուտելիքների բուրմունքն իմ մեջ ցանկություն հարուցեց, երբ ես այդ տեղը եկա, և իմ հոգին հանգստացավ սիրածիս հետ առանձնանալու մտքից, և ես ուտել ուզեցի: Ես մոտեցա սփռոցին ու ծածկոցը հետ տարա ու դրա կենտրոնում ձենապակյա մի սկուտեղ տեսա, և դրա մեջ շորս կարմրացրած հավ՝ անուշեղենով շաղած, իսկ սկուտեղի կողքին դրված էին շորս աման՝ մեկը հալվայով, մեկը՝ նուսն հատիկներով, երրորդը՝ փախլավայով, չորրորդը՝ բլիթով, և այդ ամանների մեջ կար և՛ քաղցր, և՛ թթու: Եվ ես բլիթը կերա ու կերա հավի մի կտոր և, վերցնելով փախլավան, մի քիչ կերա, իսկ հետո հալվային դարձա ու մեկ, կամ երկու, կամ երեք, կամ շորս գդալ կերա, և մի քիչ հավի միս կերա ու մի կտոր հաց: Եվ այնժամ փորս լցվեց ու մկանունքս թուլացավ, և ես շափազանց թուլացա, ու քունս տարավ և գլուխս բարձին դրեցի, նախապես ձեռքերս լվանալով, և քունը հաղթեց ինձ, ու ես չգիտեմ, թե այնուհետև ինչ պատահեց ինձ: Եվ ես այն ժամանակ միայն զարթնեցի, երբ ինձ արևի տապը կիզեց, քանի որ արդեն մի քանի օր ես քուն չէի ճաշակել, և, զարթնելով, փորիս վրա աղ ու ածուխ գտա: Ես ոտքի ելա ու շորերս թափ տվեցի և աչ ու ձախ դարձա, բայց ոչ ոքի չտեսա,

ու պարզվեց, որ ես մարմարե սալերի վրա եմ քնել, առանց անկողնու, և իմ միտքը շփոթվեց, ու մեծ վշտով վշտացա, և արցունքները վազեցին իմ ալիքերով, և ես տխրեցի ինքս ինձ համար: Ու, վեր կենալով, ես տուն գնացի և երբ տուն մտա, տեսա, որ հորեղբորս աղջիկը ձեռքով կուրծքը ծեծում ու լաց է լինում, առատ արցունք թափելով և մրցելով ամպերի հետ, որոնք անձրև են տեղում, և նա այսպիսի ոտանավոր էր ասում.

«Հայրենի վայրից քամին է փչում գով ու հեշտաշունչ,
Եվ իր մեղմ շնչով ալիքավորում սերս հողուս մեջ:
Ո՛վ արևելյան ջերմարեք քամի, շուտ մեզ մոտ արի,—
Ամեն սիրահար իր բաժինն ունի ու վիճակը իր
Ա՛խ, քամի, թե քեզ կարողանայի առնել գիրկը իմ,
Կգրկեի քեզ, ինչպես սիրողն է դրկում սիրածին:
Բայց թե չպիտի տեսնեմ եղբորս դեմքը, ո՛վ ալլահ,
Կլանքի բերկրանքի էլ հետ առ ինձանից, և բավական է:
Երևե՛կ, իմանում, որ նրա սրտի սառույցն է հալվել,
Ինչպես իմ սիրտն է հալվում բոցավառ սիրո հրդեհից»:

Իսկ ինձ տեսնելով, նա շտապ վեր կացավ ու արտասուքը սրբեց և քնքուշ խոսքերով դիմեց ինձ ու ասաց. «Ո՛վ իմ հորեղբորորդի, դու սիրով տարված ես, և ալլահը ողորմած է քո նկատմամբ, սեր ներշնչելով նրան, ում որ դու ես սիրում, իսկ ես արցունք եմ թափում ու վշտի մեջ եմ քեզնից բաժան լինելուս համար: Ո՛վ կնախատի ինձ, ո՛վ կարդարացնի: Բայց թող ալլահն իմ պատճառով քեզ չպատժի»:

Հետո նա ժպտաց ինձ և, շորերս հանելով, հարդարեց զրանք ու ասաց. «Ալլահը վկա, սա նրա բույրը չէ, ով հաճույք է վայելել սիրուհու հետ: Պատմի՛ր ինձ, թե ինչ է պատահել քեզ, ո՛վ իմ հորեղբորորդի»:

Եվ ես պատմեցի այն ամենը, ինչ պատահել էր ինձ, և նա երկրորդ անգամ ժպտաց զայրագին ժպիտով ու բացականչեց. «Իսկապես, սիրույն ցավով լի է: Թող շապրի՛ նա, ով քեզ ցավ է պատճառում: Այդ կիներ խիստ գոռոզանում է քո դեմ, և ալլահը վկա, ով իմ հորեղբորորդի, ես վախենում եմ քեզ համար այդ կնոջ շարիքից: Իմացի՛ր, ո՛վ իմ հորեղբորորդի, աղի մեկնությունն այս է. դու քնի մեջ սուզվեցիր ու նման ես հողու համար զգվելի, գարշելի կերակրի, և հարկ է աղ ցանել քեզ վրա, որ քեզ հետ շուղարկեն: Դու քեզ ազնվաբար սիրահար ես համարում, իսկ քունը սիրահարներին արգելված է, և սիրուց քո ակնկալությունները կեղծ են: Բայց նրա սերն էլ քո նկատմամբ կեղծ է, որովհետև տեսնելով, որ դու քնած ես, քեզ չի արթնացրել, եթե նրա սերը անկեղծ լիներ, նա, հավանաբար, քեզ կարթնացներ: Իսկ ինչ վերաբե-

րում է ածուխին, ապա այդ նշանի բացատրութիւնն այսպիսին է՝ դու ջահել երեխա ես և միայն ուտելու, խմելու ու քնելու հոգս ունես: Ահա նրա նշանների մեկնութիւնը, և թող մեծ ալլահը քեզ նրանից ազատի»:

Լսելով այդ խոսքերը, ես ձեռքս կրծքիս խփեցի ու բացականչեցի. «Ալլահը վկա, դա ճշմարիտ է, որովհետև ես քնել էի, իսկ սիրահարները չեն քնում: Ես ինքս եմ ինձ անարգողը, և ամենից շատ ինձ վնասեցին ուտելիքն ու քունը, Ի՞նչ կլինի հիմա»:

Եվ ես դառնորեն լաց եղա ու հորեղբորս աղջկան ասացի. «Յուլց տուր, թե ինչ անեմ, ու խղճա ինձ, և ալլահը քեզ կխղճա, այլապես ես կմեռնեմ»: Իսկ իմ հորեղբոր աղջիկն ինձ սիրում էր մեծ սիրով ու պատասխանեց. «Գլխիս ու աչքիս վրա: Միայն թե, ո՛վ իմ հորեղբորորդի, ես շատ անգամ եմ ասել քեզ, որ, եթե ես կարողանայի ներս ու դուրս անել, անշուշտ, ամենամոտ ժամանակում կմիացնեի քեզ նրա հետ ու կսքողեի ձեզ իմ քղանցքով, և ես քեզ հետ այսպես եմ վարվում այն բանի համար միայն, որ դու գոհ լինես: Եթե կամենա մեծ ալլահը, ես չեմ խնայի ծայրահեղ ջանքերս, որ ձեզ միացնեմ. դե՛, լսի՛ր իմ խոսքերը ու ենթարկվիր իմ հրամանին: Գնա այն նույն տեղն ու նստիր այնտեղ, իսկ երբ իրիկնապահը լինի, նստիր այնտեղ, որտեղ նստել ես և զգուշացիր որևէ բան ուտելուց, քանի որ ուտելիքը քուն է բերում: Զգուշացիր քնելուց, նա քեզ մոտ գալու է միայն գիշերվա մեկ քառորդն անցնելուց հետո, և թող ալլահը քեզ նրա շարիքից փրկի»:

Լսելով այդ խոսքերը, ես ուրախացա և սկսեցի աղոթել ալլահին, որ գիշերը գա, իսկ երբ գիշերը եկավ, ես ուզեցի դուրս գնալ, և իմ հորեղբոր աղջիկն ինձ ասաց. «Եթե նրան հանդիպես, ասա այն ոտանավորը, երբ դուրս գալու լինես»,— և ես պատասխանեցի. «Գլխիս ու աչքիս վրա»,— և դուրս եկա ու գնացի պարտեզ և տեսա, որ տունը պատրաստված է այնպես, ինչպես առաջին անգամ էի տեսել, և այնտեղ կար այն ամենը, ինչ հարկավոր է ուտելու և խմելու համար, ինչպես և ծաղիկներ ու այլ բաներ: Ես բարձրացա այդ տունը և ուտելիքների հոտն առա, ու սիրտս ուզեց դրանք, և ես որոշ ժամանակ զսպեցի ցանկութիւնս, բայց մինչև վերջ չկարողացա զսպել ինձ: Ու ես վեր կացա և, սփռոցին մոտենալով, վերցրի ծածկոցն ու տեսա հավերով սկուտեղը, որի շուրջը դրված էր շորս աման՝ շորս տեսակ կերակուրներով: Եվ ես ամեն ուտելիքից մի կտոր կերա ու մի քիչ հալվա կերա և մի կտոր միս ու զաֆրանի հյութ խմեցի, որն ինձ դուր եկավ, ու ես շատ խմեցի դրանից, գդալով վերցնելով, մինչև որ հագեցա ու փորս լցրի: Իսկ դրանից հետո կոպերս ծանրացան, և, բարձր վերցնելով, գլխիս տակ դրեցի,

մտածելով. «Գուցե թեքվեմ դրա վրա ու շքեմ»,— բայց աչքերս փակվեցին, ու ես քնեցի և զարթնեցի ոչ շուտ, քան արևածագին: Եվ ես փորիս վրա գտա խաղալու զառ, թաբ խաղի փայտ, խուրմայի կորիզ ու քաղցր հաճարի հատիկ: Եվ սենյակի հատակին ոչինչ չէր փռված ու ոչինչ չէր գցված, կարծես թե այնտեղ ոչինչ չէր եղել:

Եվ ես վեր կացա ու թափ տվեցի այդ բոլորն իմ վրայից ու զայրացած դուրս եկա ու գնացի, մինչև որ տուն հասա: Եվ ես տեսա, որ հորեղբորս աղջիկը խոր հառաչանքներ է արձակում ու այսպիսի ոտանավոր ասում.

«Տկար եմ մարմնով ու սիրաս սիրուց վիրավոր, հիվանդ,
Արցունքն էլ աչքիս հեղեղ է դարձել հոսում է առատ:
Համառ է ես շատ. դատապարտում է անմեղիս իղուր,
Բայց գեղեցիկը, ինչ էլ որ անի, սիրուն է մնում,
Հորեղբորդի՛, կրթով ես լցրել դու իմ սիրտը հեղ,
Տե՛ս, հիվանդացան աչքերս էլ աղի արցունք թափելով»:

Եվ ես սկսեցի նախատել հորեղբորս աղջկան ու հայհոյել նրան, և նա լաց եղավ, ապա արցունքները սրբեց ու, մոտենալով, համբուրեց ինձ և կրծքին սեղմեց, իսկ ես հեռացա նրանից ու նախատեցի ինքս ինձ:

«Ո՛վ իմ հորեղբորդի,— ասաց նա ինձ,— դու, երևի, քնել ես այս գիշեր»: Եվ ես նրան պատասխանեցի. «Այո՛, իսկ զարթնելով, գտա խաղալու զառ, թաբ խաղի փայտ, խուրմայի կորիզ ու քաղցր հաճարի հատիկ, և ես չգիտեմ, թե ինչո՞ւ է նա այդպես արել»: Եվ ես լաց եղա ու, դառնալով Ազիզին, ասացի. «Բացատրիր ինձ, թե ի՞նչ է ուզում ասել նա այդ նշաններով, և ասա, թե ինչ անեմ: Օգնիր ինձ այն բանում, ինչ որ պատահել է»:— «Գլխիս ու աչքիս վրա,— ասաց նա:— Թաբի փայտով, որ քո փորին է դրել, նա ասում է, թե դու եկել ես, բայց սիրտդ քեզ հետ չէ, և նա, իբր թե, քեզ ասում է՝ սերը այդպիսին չէ, մի՛ դասիր քեզ սիրահարների շարքը: Իսկ խուրմայի կորիզով նա քեզ ասում է՝ եթե դու սիրահարված լինեիր, քո սիրտը, անշուշտ, սիրուց կվառվեր, և դու չէիր ճաշակի քնի քաղցրությունը, որովհետև սերը քաղցր է խուրմայի պես ու սրտում ածուխ է վառում: Հաճարի հատիկով նա քեզ ցույց է տալիս, որ սիրողը սիրտը տանջվել է, և քեզ ասում է՝ դիմացիր մեր անջատմանը, ինչպես դիմացել է Հորը»:

Եվ երբ ես այդ մեկնությունը լսեցի, իմ հոգում բռնկվեց կրակը, ու իմ սրտում սաստկացան վշտերը և ես բղավեցի. «Ալլահը նախաստամանել էր ինձ քնել, որովհետև ես երջանիկ չեմ: Ո՛վ իմ հորեղբոր աղջիկ.— ասացի ես հետո,— ի սեբ իմ կյանքի ազաչում եմ քեզ, մի հնար

մտածիր ինձ համար, որպեսզի ես կարողանամ հասնել նրան»։ Եվ Ազիզին լաց եղավ ու պատասխանեց. «Ո՛վ Ազիզ, իմ հորեղբորորդի, իմ սիրտը լիքն է մտատանջությամբ, ու ես խոսել չեմ կարողանում։ Բայց զնա այսօր երեկոյան այն նույն տեղը և զգուշացիր քնելուց, այն ժամանակ կհասնես ցանկացածիդ։ Ահա, ամենից լավ է այդպես վարվել, ու վերջ»։— «Եթե ավաճը կամենա, ես չեմ քնի և այնպես կանեմ, ինչպես դու ինձ հրամայում ես»,— ասացի ես։ Եվ հորեղբորս աղջիկը վեր կացավ, ուտելիք բերեց ինձ համար ու ասաց. «Հիմա կուշտ կեր, որ էլ ուտելու ցանկություն չունենաս»։ Եվ ես կուշտ կերա, իսկ երբ գիշերը եկավ, Ազիզին ինձ համար հոյակապ զգեստ բերեց, հագցրեց ինձ ու երդում առավ ինձնից, որ ես այն կնոջը կասեմ հիշյալ բեյթը, և զգուշացրեց ինձ քնից։ Իսկ հետո ես դուրս եկա հորեղբորս աղջկա մոտից ու զնացի այն պարտեզն ու մտա տունը։ Ես պարտեզին է նայում ու սկսեցի մատնեքով աչքերս բացել ու գլուխս ցնցել, իսկ երբ գիշերը եկավ, ես քաղց զգացի այն պատճառով, որ չէի քնել։ Եվ իմ քթին փշեց ուտելիքների բուրմունքը, ու քաղցս սաստկացավ, և ես մոտեցա սեղանին ու, ծածկոցը վերցնելով, ամեն ուտելիքից մի կտոր կերա։ Ես մի կտոր միս կերա ու, մոտենալով գինու անոթին, ինքս ինձ ասացի. «Մի գավաթ խմեմ», ու խմեցի, իսկ հետո խմեցի երկրորդն ու երրորդը, մինչև տասը, և քամին գլխիս խփեց, ու ես գետին ընկա մեռածի պես, և այդպես պառկեցի, մինչև օրը բացվեց։ Եվ ես զարթնեցի ու ինձ պարտեզից դուրս գտա, և փորիս վրա սուր դանակ կար ու երկաթե դիրհեմ։ Եվ ես վախեցա ու վերցրի դրանք և տուն տարա ու տեսա, որ հորեղբորս աղջիկն ասում է. «Իսկապես այս տանը ես խեղճ եմ ու սզավոր, ոչ մի օգնական չունեմ, բացի դահճից»։

Եվ, ներս մտնելով, ես գետին փովեցի և ձեռքիցս գցեցի դանակն ու գիրհեմը և ուշագնաց եղա, իսկ ուշքի գալով, Ազիզին տեղեկացրի, թե ինչ է պատահել ինձ ու նրան ասացի. «Ես չհասա ցանկացածիս»։ Եվ նա խիստ վշտացավ ինձ համար, տեսնելով, որ ես լաց եմ լինում ու տանջվում, ու ասաց. «Ես արդեն ուժասպառ եղա խորհուրդ տալով քեզ, որ չքնես, իսկ դու իմ խորհուրդը չես լսում։ Իմ խոսքերը ոչնչով քեզ չեն օգնի»։— «Ի սեր ավաճի, աղերսում եմ քեզ, բացատրի՛ր ինձ, թե ինչ են ցույց տալիս դանակն ու երկաթե դիրհեմը»,— ասացի ես նրան։ Եվ նա պատասխանեց. «Երկաթե գիրհեմով նա քեզ ցույց է տալիս իր սոջ աչքը և աղերսում է քեզ նրանով ու ասում. «Երգվում եմ աշխարհների տիրոջ անունով ու իմ աջ աչքով, եթե դու մյուս անգամ վերագառնաս ու քնես, ես այս դանակով կմորթեմ քեզ»։ Եվ ես վախենում

եմ, որ քեզ շարիք գա նրա խարդավանքից, ո՛վ իմ հորեղբորորդի, և իմ սիրտը լիքն է քո վշտով, բայց ես չեմ կարող խոսել: Եթե դու գիտես, որ, նրա մոտ վերադառնալով, չես քնի, վերադարձի՛ր նրա մոտ ու քնելուց զգուշացիր, և կստանաս այն, ինչ պետք է: Իսկ եթե գիտես, որ, նրա մոտ զնալով, քնելու ես, ինչպես միշտ, և սրանից հետո էլ պիտի գնաս նրա մոտ և, իսկապես, քնես, նա քեզ կմորթի»:

«Իսկ ի՞նչ անեմ, ո՛վ իմ հորեղբոր աղջիկ: Խնդրում եմ քեզ, հանուն ալլահի, օգնիր ինձ այս գիշեր», — բացականչեցի ես: Եվ նա ասաց. «Գլխիս ու աչքիս վրա: Բայց միայն, եթե լսես իմ խոսքն ու հնազանդվես հրամանիս, քո պահանջը կկատարվի»: — «Ես լսում եմ քո խոսքն ու հնազանդվում հրամանիդ», — բացականչեցի ես: Եվ նա ասաց. «Երբ գնալու ժամանակը դա, ես քեզ կասեմ»: Իսկ հետո նա ինձ իր գրկին սեղմեց ու ինձ անկողնու մեջ դնելով այնքան շիեց ոտքերս, մինչև նինջը հաղթահարեց ինձ, իսկ երբ ես քնի մեջ խորասուզվեցի, նա վերցրեց հովհարը, նստեց սնարիս մոտ ու հով արեց երեսիս մինչև օրվա վերջը: Իսկ իրիկնապահին նա ինձ արթնացրեց, և, զարթնելով, ես տեսա, որ նա հովհարը ձեռքին իմ սնարի մոտ է և այնպես է լաց լինում, որ արցունքները թրջել են նրա հագուստը, բայց, տեսնելով, որ ես արթնացել եմ, նա սրբեց արցունքներն ու ինչ-որ ուտելիք բերեց: Եվ երբ սկսեցի հրաժարվել ուտելուց, նա ասաց. «Մի՛թե ես չասացի քեզ. «Լսի՛ր ինձ ու կեր»: Եվ ես սկսեցի ուտել՝ շահառակելով նրան, և նա ուտելիքն իմ բերանն էր դնում, իսկ ես ծամում էի, մինչև որ փորս լցվեց, և հետո նա ինձ շաքարով պտղահյութի եփուկ խմեցրեց ու, ձեռքերս վանալով, սրբիչով շորացրեց ու վրաս վարդաջուր ցանեց: Եվ ես նստեցի նրա մոտ լիովին առողջ, իսկ երբ մութն ընկավ, նա զգեստ հագցրեց ինձ ու ասաց. «Ո՛վ իմ հորեղբորորդի, ամբողջ գիշերն արթուն մնա ու մի քնիր: Այսօր նա քեզ մոտ կգա միայն գիշերվա վերջում, և եթե ալլահը կամենա, դու այս գիշեր կհանդիպես նրան: Բայց շմոռանա՛ս իմ խնդրանքը»: Եվ նա լաց եղավ, և սիրտս ցավեց նրա համար, որ նա այդքան շատ է լաց լինում: «Ի՞նչ խնդրանք», — հարցրի ես: Եվ նա ասաց. «Երբ նրա մոտից դուրս գալու լինես, ասա՛ նրան այն բեյթը, որ ես առաջ ասել եմ քեզ»: Եվ ես նրա մոտից դուրս եկա ուրախ ու գնացի պարտեզ, և կուշտ փորով մտա այն տունն ու նստեցի և արթուն մնացի գիշերվա առաջին քառորդը: Իսկ հետո գիշերն ինձ երկար թվաց, ինչպես տարին, ու ես նստած էի արթուն վիճակում, մինչև որ գիշերվա երեք քառորդն անցավ, ու աքաղաղները կանչեցին, ու ես խիստ քաղց զգացի երկար ժամանակ արթուն մնալու պատճառով: Եվ

ես մոտեցա սեղանին ու կերա, մինչև որ կշտացա, և իմ գլուխը ծանրացավ, ու քունս տարավ, բայց հանկարծ նկատեցի մի լույս, որ հեռվից մոտենում էր: Այնժամ ես վեր կացա, ձեռքերս ու բերանս լվացի ու հոգիս արթնացրի, և մի փոքր ժամանակից հետո հանկարծ այն կինը եկավ տասը ստրկուհիների հետ, ու նա նրանց մեջ ասես լուսին լինեիր աստղերի մեջ: Նա հագել էր ձուլյ սսկով զարդակարված մետաքս գգեստ, և ինքն այնպիսին էր, ինչպես բանաստեղծն է ասել.

«Կանաչ հագած, պարծենում է սիրածների մոտ,
Կոճակները բաց է արել, խոպոպներն՝ արձակ,
«Անունդ ի՞նչ է», — հարց տվեցի, ու պատասխանեց.
«Սիրողների սիրտը վառող, հրդեհողն եմ ես»:
Տրտնջացի, որ կրել եմ սիրո մեջ տանջանք,
«Չգիտե՞ս, որ քարի մոտ ես լաց լինեմ», — ասաց:
«է՛հ, քար կղի՛ր, չէ՞ որ ինքը ալլահն», — ասացի, —
Քարերին էլ հարկադրեց, որ պաղ ջուր թխեն»:

Եվ, ինձ տեսնելով, նա ծիծաղեց ու բացականչեց. «Ինչպե՞ս է, որ չես քնել ու քունը քեզ չի հաղթել: Քանի որ ամբողջ գիշերը դու արթուն ես մնացել, ես գիտեմ, որ դու սիրահարված ես, որովհետև սիրո նշանն է՝ գիշերը կրթերի հետ կովելով, չքնել»:

Հետո նա դարձավ ստրկուհիներին ու աչքով արեց նրանց, և նրանք հեռացան, իսկ ինքը մոտեցավ ինձ ու կրծքին սեղմեց ու համբուրեց, իսկ ես էլ իրեն համբուրեցի, և դա սրտի ուրախության ու աչքերի հովացման գիշեր էր, ինչպես բանաստեղծն է ասել.

«Չեն տեսել աչքերս ավելի քաղցր ու հաճելի գիշեր,
Երբ իմ գուժաթը գիշերը ամբողջ անցկացրեց գատարկ,
Աչքերս ու քունը բաժան մնացին մինչև առավոտ,
Ոտքի մանյակը, սակայն, գինդի հետ միացրի երկար»:

Եվ մենք միասին պառկեցինք ու քնեցինք մինչև առավոտ, և այդ ժամանակ ես ուզեցի գնալ, բայց նա հանկարծ բռնեց ինձ ու ասաց. «Կա՛ց, ես քեզ մի բան կասեմ ու խրատ կտամ քեզ»: Եվ ես կանգ առա, իսկ նա բացեց թաշկինակն ու միջից այս լաթը հանեց ու փռեց իմ առջև, և ես տեսա ահա այս վիթի պատկերը ու խիստ զարմացա գրա վրա, ու վերցրի լաթը: Եվ մենք պայմանավորվեցինք, որ ես ամեն գիշեր նրա մոտ՝ այդ պարտեզը, կգամ, իսկ հետո դուրս եկա նրա մոտից ուրախ և ուրախությունից մոռացա արտասանել այն բեյթը, որ հորեղբորս աղջիկն էր հանձնարարել ինձ: Իսկ այն կինը, վիթի պատկերով

լաթն ինձ տալով ասաց. «Սա իմ քրոջ ձեռքի գործն է»։— «Իսկ ի՞նչ է քրոջդ անունը»,— հարցրի ես նրան, և նա պատասխանեց. «Նրա անունն է Նուր էլ-Նուդա, պահիր այս լաթը»։ Եվ հրաժեշտ տվեցի նրան ու հեռացա ուրախ և գնացի, իսկ հորեղբորս աղջկա մոտ մտնելով, տեսա, որ նա պառկած է, բայց, ինձ տեսնելով, նա վեր կացավ (իսկ նրա արցունքները թափվում էին) ու մոտեցավ ինձ և կուրծքս համբուրեց ու հարցրեց. «Դու այնպես արեցի՞ր, ինչպես ես հանձնարարել էի, և այն բեյթը ասացի՞ր»։— «Ես մոռացա այն և իմ մտքից հանողն այս վիթի պատկերն էր»,— պատասխանեցի ես ու լաթը Ազիզեի առջև գցեցի, իսկ նա վեր կացավ ու նստեց և, դիմանալու կարողութուն չունենալով ու արտասուք թափելով, այսպիսի երկու բեյթ ասաց.

«Ո՛վ դու, որ ձգտում ես բաժանման, հանդարտ կաց,
Մի՛ խաբվիք ջերմագին գգվանքով գրկաբաց.
Մի՛ շտապիր. խաբելը հատուկ է միշտ բախտին,
Եվ դիտցի՛ր, անշատումն է վերջը մեր սիրո»։

Իսկ վերջացնելով բեյթերն արտասանելը, ասաց. «Ո՛վ իմ հորեղբորորդի, ի՞նձ նվիրիր այս լաթը»։ Եվ ես նրան նվիրեցի այն, իսկ նա վերցրեց ու փռեց ու նայեց, թե ինչ կար դրա վրա։ Եվ, երբ եկավ իմ վնալու ժամանակը, հորեղբորս աղջիկն ասաց. «Դնա, հաջողութունը բեզ ուղեկից, իսկ երբ նրա մոտից դուրս գալու լինես, ասա այն բեյթը, որ ես առաջ ասել եմ քեզ, իսկ դու մոռացել ես»։— «Կրկնիր այն»,— ասացի նրան, ու նա կրկնեց, և դրանից հետո ես գնացի պարտեզ ու բարձրացա տունը, որտեղ սպասելիս գտա այն կնոջը։ Եվ, ինձ տեսնելով, նա վեր կացավ, համբուրեց ինձ ու իր ծնկներին նստեցրեց, ու մենք կերանք և խմեցինք ու բավարարեցինք մեր ցանկութունները, ինչպես նախորդ օրը, իսկ երբ առավոտը բացվեց, ես նրան ասացի այն բեյթը, այսինքն.

«Ո՛վ սիրահարներ, հանուն ավահի, ասացե՛ք, արդյոք,
Ջահելն ի՞նչ անի, թե սիրտը սաստիկ սիրով բորբոքվի»։

Եվ երբ նա լսեց այդ, նրա աչքերից արցունք հոսեց, ու նա ասաց.

«Թաքցնում է նա կիրքը իր և գաղանիքը խոր թաղում,
Եվ համբերում, վեշա է կրում միշտ հնազանգ ու առկուն»։

Իսկ ես մտքումս պահեցի այդ բեյթը, ուրախանալով, որ կատարել եմ հորեղբորս աղջկա խնդրանքը, և նրա մոտ գալով, նրան պառկած

դտա, իսկ մայրս նստել էր նրա սնարին ու լաց էր լինում նրա վիճակի համար: Եվ երբ ես մտա Ազիզեի մոտ, մայրս ինձ ասաց. «Զբվե՛ս գու, ո՛վ հորեղբորդդ: Ինչպե՞ս ես դու լքում քո հորեղբոր աղջկան, երբ նա լավ չէ, ու չես էլ հարցնում նրա հիվանդութձյան մասին»:

Իսկ հորեղբորս աղջիկը, տեսնելով ինձ, գլուխը բարձրացրեց ու նստեց և հարցրեց. «Ո՛վ Ազիզ, ասացի՞ր նրան այն բեյթը, որ ես քեզ ասել էի»:— «Այո՛,— պատասխանեցի նրան,— և, այն լսելով, նա լաց եղավ, ու ասաց ինձ մի ուրիշ բեյթ, որ ես մտքումս պահեցի»:— «Ասա՛ ինձ այն»,— խնդրեց Ազիզեն: Եվ երբ ես նրա համար ասացի այն բեյթը, նա դառնորեն լացեց ու այսպիսի բեյթեր արտասանեց.

«Իսկ ինչպե՞ս թաքցնել, երբ կիրքն է տանջում,
Եվ սիրտն օրեցօր տանջանքից մաշվում.
Զգտեց համբերել, տոկալ վշաերին,
Բայց բյուր ցավերին նա դարձավ գերի»:

Երբ դու, սովորականի նման, նրա մոտ մտնես, ասա՛ նրան այս երկու բեյթը, որ լսեցիր»,— ասաց հորեղբորս աղջիկը, իսկ ես պատասխանեցի. «Լսում եմ ու հնազանդվում»: Եվ հետո ես գնացի նրա մոտ՝ պարտեզ, ինչպես միշտ, և մեր մեջ եղավ այն, ինչ որ եղավ, և լեզուն անգոր է նկարագրել այդ: Իսկ դուրս գալու պատրաստվելով, ես նրան ասացի այն երկու բեյթը մինչև վերջ, և երբ նա լսեց դրանք, արցունքը հոսեց նրա աչքերից, ու նա արտասանեց բանաստեղծի խոսքերը.

«Իսկ թե գաղտնիքը ծածկելու իր մեջ նա ուժ չգտնի,
Իմ կարծիքով, այն ժամանակ մահն է նրան արժանի»:

Եվ ես միտքս պահեցի այդ բեյթը, իսկ իմ հորեղբոր աղջկա մոտ մտնելով, տեսա, որ նա անզգա պառկած է, իսկ մայրս էլ նստել էր նրա սնարին: Բայց իմ ձայնը լսելով, Ազիզեն բացեց աչքերն ու հարցրեց. «Ո՛վ Ազիզ, նրան ասացի՞ր այն բեյթերը»:— «Այո՛»,— պատասխանեցի ես,— և, դրանք լսելով, այսպիսի բեյթ ասաց. «Իսկ թե գաղտնիքը...» և այլն: Եվ երբ իմ հորեղբոր աղջիկը լսեց այն, կրկին անզգայութձյան մեջ ընկավ, իսկ ուշքի գալով, արտասանեց այսպիսի երկու բեյթ.

«Ես լսում եմ և անսում եմ, ու կմեռնեմ ողբալով.
Ողջուն տարեք, սակայն, նրան, ով ինձ դրկեց իմ բախախց:
Այն բախտավոր սիրահարին թող որ ժպտա բախտը միշտ,
Իսկ ինձ՝ խեղճիս, վիճակվել է անհույս սիրո սուգ ու վիշտ»:

Իսկ հետո, երբ երեկոն իջավ, ես սովորականի պես գնացի պարտեզ ու գտա այն կնոջն ինձ սպասելիս: Մենք նստեցինք և կերանք ու խմեցինք և մեր գործն արեցինք, ու քնեցինք մինչև առավոտ, իսկ պատահաբար սովորով դուրս գալ, ես նրա համար կրկնեցի այն, ինչ որ ասել էր հորեղբորս աղջիկը: Եվ այդ լսելով, նա սաստիկ ճիչ արձակեց ու տրխրեց և ասաց. «Ա՛խ, ալլահը վկա, նա, ով այդ բեյթերն ասել է, մեռավ,— և նա լաց եղավ ու հարցրեց.— Խե՛ղճ, ինչ ազգակցություն ունես այդ բեյթերն ասողի հետ»:— «Նա իմ հորեղբոր աղջիկն է»,— պատասխանեցի ես: Եվ կինը բացականչեց. «Դու ստո՛ւմ ես, ալլահը վկա: Եթե նա քո հորեղբոր աղջիկը լիներ, դու էլ նրա նկատմամբ այնպիսի սեր կտածեիր, ինչպիսին նա է տածում քո նկատմամբ: Դու ես նրան սպանել: Թող ալլահը քեզ սպանի՛ այնպես, ինչպես դու նրան սպանեցիր: Ալլահը վկա, եթե դու պատմած լինեիր ինձ, որ հորեղբոր աղջիկ ունես, ես չէի մերձենա քեզ հետ»:— «Օ՛, նա ինձ համար մեկնում էր այն նշանները, որ դու անում էիր, և նա ինձ սովորեցրեց, թե ինչպես մերձենամ քեզ ու ինչպես վարվեմ քեզ հետ: Եթե նա չլիներ, ես քեզ չէի հասնի»,— ասացի ես: «Մի՞թե նա գիտեր մեր մասին»,— հարցրեց այն կինը: Եվ ես ասացի. «Այո»: Եվ այնժամ նա բացականչեց. «Թող ալլահը քո երիտասարդությունը կործանի, ինչպես դու նրա երիտասարդությունը կործանեցիր: Գնա, տես նրան»,— ասաց նա հետո: Եվ ես դուրս եկա կոտորված սրտով ու գնացի, մինչև որ հասա մեր նրբանցքը: Եվ ես ողբի ձայն լսեցի ու հարցրի, թե ի՞նչ է պատահել, և ինձ ասացին. «Մենք գտան հետևում Ազիզեին մեռած տեսանք»:

Եվ ես տուն մտա, ու, ինձ տեսնելով, մայրս ասաց. «Նրա մեղքը քո խղճիդ ու վզիդ է ընկած: Թող ալլահը քեզ շղիշի նրա արյան համար: Չքվես դու, ա՛յ հորեղբորորդի»:

Իսկ հետո հայրս եկավ, ու մենք հագցրինք Ազիզեին և դուրս բերեցինք ու դազաղը գերեզմանոց տարանք, որտեղ և թաղեցինք: Եվ մենք նրա գերեզմանի վրա Ղուրան կարդալ տվեցինք ու երեք օր գերեզմանի մոտ անցկացրինք: Իսկ հետո մենք վերադարձանք ու տուն եկանք, ու ես տխրեցի նրա համար, և մայրս մոտեցավ ինձ ու ասաց. «Ըս ուզում եմ իմանալ, թե դու ի՞նչ ես արել նրան, որ նրա լեղին պատռվել է: Ո՛վ տղաս, ես անդադար նրան հարցնում էի, թե ինչի՞ց է հիվանդացել, բայց նա ոչինչ չհայտնեց ինձ ու ոչ մի բան չպատմեց: Ալլահով եմ աղերսում քեզ, պատմի՛ր ինձ, թե ի՞նչ ես արել նրան, ինչո՞ւ է նա մեռել»:— «Ըս ոչինչ չեմ արել»,— պատասխանեցի ես: Եվ մայրս բացականչեց. «Թող ալլահը նրա վրեժը լուծի քեզնից: Նա ինձ ոչինչ չէր

ասում, այլ ծածկում էր ամեն բան, մինչև որ մեռավ, քեզ ներելով, և երբ նա մեռնում էր, ես նրա մոտ էի, ու նա աչքերը բացեց և ասաց ինձ. «Ո՞վ իմ հորեղբոր կին, թող ալլահը քո որդուն անմեղ համարի իմ արյան համար ու հատուցում շառնի նրանից նրա համար, ինչ որ նա ինձ արել է: Ալլահը միայն այստեղի կյանքի անցողիկ բնակարանից հանդերձյալ կյանքի հավիտենական տուն փոխադրեց ինձ»: Եվ ես նրան ասացի. «Ո՞վ աղջիկս, թող ալլահը պահպանի քեզ ու քո երիտասարդութունը», — և սկսեցի հարցուփորձ անել նրան, թե ինչու է հիվանդացել, բայց նա ոչինչ չասաց, իսկ հետո ժպտաց և ասաց. «Ով իմ հորեղբոր կին, քո որդուն ասա, որ, երբ նա կամենա գնալ այնտեղ, ուր գնում է ամեն օր, դուրս գալիս այս երկու խոսքն ասի. «Հավատարմութունը գեղեցիկ է, դավաճանութունը՝ վատթար»: Սրա մեջ է նրա պաշտպանութունն իմ կողմից, որպեսզի ես նրան պաշտպան լինեմ և՛ կենդանության ժամանակ, և՛ մահից հետո»: Ապա նա քեզ համար ինձ մի բան տվեց ու ստիպեց երգվել, որ ես միայն այն ժամանակ քեզ կտամ, եթե տեսնեմ, որ դու նրա համար լալիս ու հառաչում ես, և այդ բանն ինձ մոտ է, և երբ քեզ տեսնեմ այնպիսի վիճակում, ինչպիսին նա է ասել, քեզ կտամ»:

Ու ես խնդրեցի. «Յո՛ւշ տուր ինձ», բայց մայրս չհամաձայնեց, իսկ հետո ես հաճույքների մտքով տարվեցի ու շհիշեցի հորեղբորս աղջրկա մահվան մասին, քանի որ թեթևամիտ էի և ուզում էի ամբողջ գիշերներ ու օրեր սիրածիս մոտ անցկացնել: Եվ հազիվ հավատացի, որ գիշերը եկել է և գնացի այն պարտեզն ու գտա այն կնոջը՝ երկար սպասելուց կրակ կտրած:

Եվ հազիվ էր ինձ տեսել, որ բռնեց ու վզովս ընկավ և հորեղբորս աղջկա մասին հարցրեց, իսկ ես պատասխանեցի. «Նա մեռավ, և մենք նրա հիշատակը հավերժացրինք ու Ղուրանի ընթերցում կատարեցինք, ու նրա մահվանից հետո արդեն շորս գիշեր է անցել, իսկ այսօր՝ հինգերորդն է»:

Եվ, այդ լսելով, նա ճշաց, լաց եղավ ու բացականչեց. «Ես քեզ չասացի՞, որ դու սպանել ես նրան: Եթե դու նրա մասին ինձ պատմած լինեիր մինչև նրա մեռնելը, ես, անշուշտ, նրան կփոխհատուցեի իր այն սիրալիրության համար, որ ինձ արել է: Նա ինձ ծառայութուն է մատուցել ու քեզ ինձ մոտ բերել, և եթե նա շիներ, մենք իրար չէինք հանդիպի: Ես վախենում եմ, որ քեզ դժբախտութուն պատահի նրա նկատմամբ գործած մեղքիդ համար»: — «Նա ինձ ազատել է իր մահվան հանցանքից», — ասացի ես ու նրան պատմեցի, ինչ որ մայրս հայտնել էր,

և այնժամ կինը բացականչեց. «Հանուն ավաճի, երբ մորդ մոտ գնաս իմացի՛ր, թե ինչ է իր մոտինը»։— «Իմ մայրը հայտնեց,— ասացի ես,— որ հորեղբորս աղջիկը մահվանից առաջ հանձնարարել է իրեն ու ասել. «Երբ տղադ ցանկանա գնալ այնտեղ, ուր սովորաբար գնում է, այս երկու խոսքերն ասա իրեն. «Հավատարմությունը գեղեցիկ է, դավաճանությունը՝ վատթար»։

Եվ կինը, լսելով այդ, բացականչեց. «Թող մեծ ավաճը նրան ողորմի։ Նա քեզ փրկել է ինձանից, իսկ ես մտածել էի քեզ վնաս պատճառել։ Բայց այժմ ես այլևս քեզ չեմ վնասի ու չեմ վշտացնի»։ Եվ ես զարմացա դրանից ու հարցրի. «Ի՞նչ է իր մտադիր անել ինձ առաջ, շնայած որ մեր մեջ սեր էր ծագել»։ Եվ նա պատասխանեց. «Դու սիրահարված ես ինձ, բայց դու ջահել ես ու սիրտդ մաքուր է այնպես, որ չգիտես մեր խարդավանքներն ու դավերը։ Եթե նա ողջ լիներ, հավանաբար, քեզ օգնական կլիներ այնպես, ինչպես որ քո փրկության պատճառն է ու փրկել է քեզ կործանումից։ Իսկ հիմա ես խրատ կտամ քեզ, մի՛ ասա, մի՛ խոսիր մեզ նմաններից ոչ մեկի հետ, ո՛չ ահելի, ո՛չ ջահելի հետ։ Զղուշացի՛ր ու դարձյալ զգուշացի՛ր։ Դու միամիտ ես ու չգիտես կանանց նենգություններն ու խարդավանքները։ Նա, ով քեզ համար մեկնել է նշանները, մեռել է, և ես վախենում եմ, որ դու փորձանքի մեջ ընկնես ու մեկին շահնդիպես, որը քեզ փրկի մեզանից քո հորեղբոր սղջկա մահվանից հետո։ Օ՛, երանի ես նրան ճանաչեի իր մահվանից առաջ, որպեսզի հատուցեի նրան այն լավության համար, որ նա ինձ արել է։ Ես կայցելեմ նրա գերեզմանին, թող ողորմի նրան ավաճը մեծ։ Նա թաքցրել է իր գաղտնիքը և չի ասել այն, ինչ իմացել էր, և եթե նա չլիներ, դու երբեք չէիր հասնի ինձ։ Ես քեզանից մի բան եմ ուզում»։— «Ի՞նչ»,— հարցրի ես։ Եվ նա ասաց. «Ահա թե ինչ. տա՛ր ինձ նրա գերեզմանի մոտ, որպեսզի ես կարողանամ այցելել նրա դամբարանին, որտեղ պառկած է նա, և ոտանավոր գրեմ դրա վրա»։— «Վաղը, եթե մեծ ավաճը ցանկանա»,— պատասխանեցի ես ու հետո պառկեցի նրա հետ այդ գիշեր, և նա ամեն ժամը մեկ ասում էր. «Օ՛, եթե դու քո հորեղբոր աղջկա մասին ինձ պատմած լինեիր իր մահվանից առաջ»։— «Իսկ ի՞նչ են նշանակում այն խոսքերը, որ նա ասել է. «Հավատարմությունը գեղեցիկ է, դավաճանությունը՝ վատթար»,— հարցրի ես, բայց նա ինձ չպատասխանեց։ Իսկ երբ առավոտը բացվեց, նա վեր կացավ ու, վերցնելով դինարներով լի քսակը, ինձ ասաց. «Վեր կաց ու ցույց տուր ինձ նրա գերեզմանը, որպեսզի ես կարողանամ այցելել և ոտանավոր գրել դրա վրա։ Ես գերեզմանի վրա գմբեթ կառուցել կտամ ու Ազիզի վրա

հիկոչեմ ալլահի ողորմածութիւնը, իսկ այս փողերը, որպես նրա հոգու ողորմութիւն, կբաժանեմ»։— «Լսում եմ ու հնազանդվում»,— պատասխանեցի նրան ու հետո նրա առջև ընկա, իսկ նա գալիս էր իմ հետեից ու ողորմութիւն էր տալիս, փողոցով քայլելով։ Եվ ողորմութիւն աւալով՝ նա ամեն անգամ ասում էր. «Յա ողորմութիւն է Ազիզի հոգու համար, որը թաքցրեց գաղտնիքը, մինչև որ խմեց կորստյան գավաթը, բայց և այնպես շբացեց իր սիրո գաղտնիքը»։ Եվ նա անդադար քսակի փողն էր բաժանում, ասելով. «Ազիզի հոգու համար», մինչև որ քսակի մեջ եղածը վերջացավ։ Եվ մենք հասանք գերեզմանին, ու, տեսնելով գերեզմանը, նա լաց եղավ և ընկավ դրա վրա, իսկ հետո հանեց պողպատյա գրիչն ու փոքր մուրճիկը և սկսեց դամբարանի վերևը դրված քարի վրա նուրբ գրեր գծել։ Եվ նա քարի վրա այսպիսի ոտանավոր գուրս բերեց.

Պարտեզի մեջ հին ու լքված մի գերեզման ևս տեսա,
Վրան գաա կուժկոտրուկի յոթ ծաղիկները բուսած։
«Ո՞ւմն է,— հարցրի,— գերեզմանը», և գետինը ինձ ասաց.
«Հարգանք տաժի՛ր, դամբանի մեջ հեզ սիրահար է պառկած»։
Ասի, «Ալլահը պահապան քեզ, ո՛վ սիրո անմեղ զոհ,
Թող դրախտի վերին հարկում նա քեզ տեղ տա ապահով»։
Ո՛վ դուք, անբախտ սիրահարներ... գերեզմանում էլ նրանց՝
Անարգ կյանքի հողն է կիտվել, մարդկանց մտքից միշտ հանված։
Կաբենայի, շուրջդ փարթամ ու ճոխ պարտեզ տնկեի,
Ու ծիւերը արտասուքիս հորդ ազրյուրով շրեի։

Եվ հետո նա հեռացավ լաց լինելով, ու ես նրա հետ գնացի պարտեզ, իսկ նա ասաց ինձ. «Հանուն ալլահի, իմ մոտից երբեք մի՛ հեռացիր»։ Եվ ես պատասխանեցի. «Լսում եմ ու հնազանդվում»։

Եվ հետո ես պարտաճանաչ կերպով սկսեցի այցելել նրան և ամեն անգամ, երբ ես նրա մոտ գիշերում էի, նա իմ նկատմամբ քարի էր ու պատիվ էր տալիս ինձ ու հարցնում էր այն խոսքերը, որ իմ հորեզբոր աղջիկը՝ Ազիզեն էր ասել մորս, իսկ ես կրկնում էի դրանք նրա համար։ Եվ ես շարունակեցի այդպես ապրել՝ ուտելով, խմելով, սեղմվելով, գրկելով ու նուրբ կտորներից կարած հագուստներ փոխելով, մինչև որ հաստացա ու գիրացա, և ոչ մի հոգս չունեի, ոչ էլ տխրութիւն, և մոռացա իմ հորեզբոր աղջկան։

Եվ այդպես շաբունակվեց մի ամբողջ տարի։ Իսկ նոր տարվա սկզբին ես բաղնիք գնացի ու ինձ կարգի բերեցի, և ճոխ զգեստներ հագա, իսկ բաղնիքից դուրս գալով, մի գավաթ գինի խմեցի ու սկսեցի հոտո-

տել ամեն տեսակ օժանելիքներով օժված իմ զգեստների անուշահոտությունը, և սիրտս թեթև էր, ու ես շգիտեի ժամանակի խաբուսիկությունն ու դեպքերի հակասությունը: Իսկ երբ ընթրիքի ժամանակը եկավ, ես ցանկություն զգացի այն կնոջ մոտ գնալու, բայց հարբած էի ու շգիտեի, թե ինչպես գնամ: Եվ ես նրա մոտ էի գնում, բայց հարբածությունն ինձ մի նրբանցք տարավ, որ Պետի նրբանցք էր կոչվում, և այդ նրբանցքով անցնելիս ես նայեցի ու հանկարծ ինչ տեսնեմ՝ մի պառավ կին է գալիս ու նրա մի ձեռքին վառված մոմ է, իսկ մյուսին՝ ծալած նամակ: Եվ ես մոռացա նրան ու հանկարծ տեսա, որ նա լաց է լինում ու այսպիսի բեյթեր ասում.

«Քեզ բարի գալուստ, ներձան լրաբեր, բարի իջևան,
Ռրբա՞ն անուշ է խոտքերդ լսել, որբա՞ն դուրեկան...
Դու, որ բերել ես խեղճ սիրահարի ողջույնը քնքուշ,
Թո՛ղ քեզ հավիտյան պահապան լինի այլահր վերուստ»:

Եվ, ինձ տեսնելով, նա հարցրեց. «Ո՞վ տղաս, կարդալ գիտե՞ս»:
Եվ ես էլ իմ շաղակրատությամբ պատասխանեցի. «Այո՛, պառավ հորբույր»:
Եվ այնժամ նա ասաց. «Վերցրու այս նամակն ու կարդա ինձ համար»,— և մի նամակ տվեց ինձ: Եվ ես վերցրի նամակն ու բացեցի այն ու կարդացի, և պարզվեց, որ այդ նամակը բացականերից սիրեցյալներին ողջույն է պարունակում:

Եվ, այդ լսելով, պառավն ուրախացավ ու հրձվեց և օրհնեց ինձ՝ ասելով. «Թող այլահր քո հոգսերը թեթևացնի, ինչպես դու թեթևացրիր իմ հոգսը»,— իսկ հետո նա վերցրեց նամակն ու մի երկու քայլ գնաց: Իսկ ես ուզում էի միզել ու պպգեցի, որ ջուր թափեմ, ու հետո վեր կացա, սրբվեցի, շորիս քղանցքներն իջեցրի և ուզում էի գնալ, երբ հանկարծ պառավը մոտեցավ ինձ և, ձեռքիս վրա կռանալով, համբուրեց ու ասաց. «Ո՞վ տեր, թող այլահր քաղցրացնի քո երիտասարդությունը, խնդրում եմ քեզ ինձ հետ մի քանի քայլ արի մինչև այն դարպասը, Ծս հաղորդեցի մերոնց քո ասածները, բայց նրանք ինձ չհավատացին. արի ինձ հետ մի երկու քայլ ու կարդա նրանց համար այս նամակը դռան առջևից և ընդունիր իմ արդար ազոթքը»:— «Իսկ ի՞նչ նամակ է դա»,— հարցրի ես. «Ով ազաս,— պատասխանեց պառավը,— դա իմ տղայից է, որն արդեն տասը տարի ինձ մոտ չէ: Նա ապրանքներով գնացել է ու երկար ժամանակ օտարության մեջ մնացել, այնպես որ մենք արդեն հույսուհեղձ կտրել էինք և կարծում էինք, թե նա մեռել է, իսկ միառժամանակից հետո նրանից այս նամակը եկավ: Իսկ նա բույր ունի, որ գիշեր

ու ցնրեկ լաց է լինում նրա համար, ու ես նրան ասացի. «Նա ողջ և առողջ է», բայց նա չհավատաց ինձ ու ասաց. «Անպայման մեկն ու մեկին բեր, որ այս նամակն ինձ մոտ կարդա, որպեսզի սիրտս հավատա ու միտքս հանդարտի»: Իսկ դու գիտես, ո՞վ տղաս, որ սիրողը կասկածելու հակում ունի, շնորհ արա ինձ, արի ինձ հետ ու կարդա այս նամակը, վարագույրի հետևը կանգնելով, իսկ ես ձայն կտամ նրա քրոջը, ու նա դռան հետևից կլսի: Դու կթեթևացնես մեր վիշտն ու կկատարես մեր խնդրանքը, չէ՞ որ ալլահի առաքյալն ասել է (թող փառավորի նրան ալլահն ու մեծարի): «Ով որ վշտահարի աշխարհիկ վշտերից մի վիշտ թեթևացնի, նրա հարյուրավոր վշտերը կթեթևացնի ալլահը»: Իսկ մի ուրիշ առած ասում է. «Ով իր եղբոր աշխարհիկ վշտերից մեկ վիշտ թեթևացնի, ալլահը հարուժյան օրվա վշտերի յոթանասուն երկու վշտերից նրան կթեթևացնի»: Ես քեզ մոտ եմ եկել, հուսախաբ մի արա ինձ»:

«Լսում եմ ու հնազանդվում, առաջ ընկիր»,— ասացի ես, և նա իմ առջևից գնաց, իսկ ես նրա հետևից գնացի մի փոքր տեղ ու մի գեղեցիկ, մեծ տան դարպասի մոտ հասա (իսկ դարպասի փեղկերի վրա կարմիր պղնձե շերտեր էին քաշված): Եվ ես կանգ առա դարպասի մոտ, իսկ պառավը մի օտար լեզվով ձայն տվեց, և ես դեռ խելքս գլուխս չէի հավաքել, երբ թեթևորեն ու աշխուժորեն մոտ վազեց մի կին, ու նրա շորերը մինչև ծնկները վեր էին քաշված, և ես տեսա միտքն ու հայացքը խռովող մի զույգ ոտք: Եվ այն կինն այնպիսին էր, ինչպես բանաստեղծն է ասել.

Բարձրացել է քղանցքները՝ սիրածը ոտքը տեսնի
Ու հասկանա, թե դրա մեջ ինչ հրաշքներ դեռ ունի:
Ձեռքին բաժակ՝ նա վազում է սիրահարին ընդառաջ.
Զէ՞ որ դավաթ ու մատովակ գայթակղում են այր մարդկանց:

Եվ նրա ոտքերը երկու մարմարե սյուների նման զարդարված էին թանկագին քարերով պատված ոսկե ապարանջաններով: Իսկ այդ կինը քշտեց թևքերը մինչև անութները և կոնները մերկացրեց, այնպես որ ես տեսա նրա սպիտակ դաստակները, իսկ նրա թևին խոշոր մարգարիտներով ու փականիկով մի զույգ ապարանջան կար ու պարանոցին՝ թանկագին քարերով մանյակ: Եվ նրա ականջներից կախված էր մի զույգ մարգարտե գինդ, իսկ գլխին փաթաթել էր զոլավոր դիպակե գլխաշորը՝ թանկագին քարերով երիզապատված: Եվ նա խալաթի ծայրերը գոտու մեջ էր դրել, կարծես, հենց նոր աշխատելիս լիներ: Եվ, նրան տեսնելով,

ես շՂմեցի, որովհետև նա շողշողուն արևի էր նման, իսկ նա նուրբ ու հստակ ձայնով, որից քաղցրը ես չէի լսել, ասաց. «Ո՞վ մայրիկ, դա՞ է նամակը կարդալու եկել»։— «Այո»,— պատասխանեց պառավը։ Եվ այնժամ աղջիկը ձեռքը, որով նամակը բռնել էր, ինձ մեկնեց, իսկ նրա ու դռան միջև մոտ կես ձողի¹ շափ տարածություն կար, և ես ձեռքս երկարեցի, կամենալով նամակն առնել նրանից, ու գլուխս ու թիկունքս դռնից ներս մտցրի, որ մոտենամ նրան ու նամակը կարդամ, և մինչ ուշքս չլուխս կժողովեի, պառավը գլխով մեջքիս հենվեց ու ներս հրեց ինձ (իսկ նամակն իմ ձեռքին էր), և, ինքս էլ չգիտեմ ինչպես ընկա շենքի ներսն ու հայտնվեցի միջանցքում։ Իսկ պառավը շանթահարող կայծակից արագ ներս մտավ ու անմիջապես դուռը փակեց։ Իսկ այն կինը, տեսնելով, որ ես շենքի ներսում եմ, մոտեցավ ու կրծքին սեղմեց ինձ և գետին գլորեց ու նստեց վրաս և ձեռքերով այնպես սեղմեց փոքս, որ ես նվաղեցի, ապա նա ձեռքերով պինդ բռնեց, ու ես չկարողացա ազատվել նրանից, որովհետև նա ուժգնորեն սեղմել էր ինձ։ Եվ հետո նա ինձ տարավ (իսկ պառավը առջևից գնում էր վառված մոմը ձեռքին), ու մենք յոթ միջանցք անցանք, և դրանից հետո նա ինձ հետ մտավ մի սենյակ՝ չորս կամարներով, որոնց տակ հեծյալները կարող էին գնդակ խաղալ։ Եվ այնժամ նա բաց թողեց ինձ ու ասաց. «Աչքերդ բաց»։ Ես բացեցի աչքերս, որ նրա ուժգին սեղմելուց ու ճնշելուց շաղվել էին, ու տեսա, որ սենյակն ամբողջապես կառուցված է հիանալի մարմարից, և մետաքս ու դիպակ է փռված դրա հատակով մեկ, իսկ բարձերն էլ նույնպիսին են։ Եվ այնտեղ դեղնապղնձե երկու նստարան կար ու ոսկեձույլ մահիճ ու նստարան, և դա բարեգործության տուն էր, որ քեզ ուման թագավորին էր վայել։

«Ո՞վ Ազիզ,— հարցրեց հետո ինձ,— ո՞րն է քեզ համար հաճելի՞ մա՞հը, թե կյանքը»։— «Կյանքը»,— պատասխանեցի ես։ Եվ նա ասաց. «Եթե կյանքն ավելի հաճելի է քեզ, ամուսնացիր ինձ հետ»։— «Ինձ համար զզվելի է ամուսնանալ այնպիսի մեկի հետ, ինչպիսին դու ես»,— բացականչեցի ես։ Բայց նա պատասխանեց. «Եթե դու ինձ հետ ամուսնանաս, կփրկվես Դալիլա-Խորամանկի աղջկանից»։— «Իսկ ո՞վ է Դալիլա-Խորամանկի աղջիկը»,— հարցրի ես։ Եվ նա, ծիծաղելով, բացականչեց. «Նա, որի հետ դու մտերմացել ես այսօր արդեն մեկ տարի ու չորս ամսից ի վեր, թող մեծ ալլահը նրան կործանի և նրան մի մարդ

¹ Ձող — երկարության չափ, որ հավասար է մոտ երեք ու կես մետրի։

ուղարկիր, որ ուժեղ է նրանից: Ալլահը վկա, նրանից խարդախ ոչ ոք չես գտնի: Քանի՛-քանի մարդ է սպանել նա քեզանից առաջ ու ի՛նչ-ինչ բաներ է արել: Ինչպե՞ս ես դու փրկվել նրանից, այսքան ժամանակ մտերմանալով նրա հետ, և ինչպե՞ս նա քեզ չի սպանել ու վիշտ չի պատճառել քեզ»:

Նրա խոսքերը լսելով, ես ծայրահեղորեն զարմացա ու բացականչեցի. «Ո՛վ իմ տիրուհի, ումի՞ց ես իմացել նրա մասին»:— «Ես նրան այնպես եմ ճանաչում, ինչպես ժամանակն է իր դժբախտություններն իմանում,— պատասխանեց նա,— բայց ես ուզում եմ, որ դու ինձ պատմես այն ամենը, ինչ քեզ ու նրան պատահել է, և ես իմանամ, թե ինչու ես դու նրանից փրկվել»:

Եվ ես նրան պատմեցի այն ամենը, ինչ ինձ պատահել էր այն կնոջ ու իմ հորեղբոր աղջիկ Ազիզեի հետ, և նա ալլահի ողորմածությունը կոչեց Ազիզեի վրա ու նրա աչքերից արտասուք հոսեց: Նա ձեռքը ձեռքին խփեց, ինձնից լսելով իմ հորեղբոր աղջիկ Ազիզեի մահվան մասին, ու բացականչեց. «Ալլահի ճանապարհին զոհվեց նրա երիտասարդությունը: Թող ալլահը բարին հատուցի քեզ նրա փոխարեն: Ալլահը վկա, ո՛վ Ազիզ, նա մեռել է, և հիրավի, նա Դալիլա-Խորամանկի աղջրկանից քո փրկվելու պատճառն է, և եթե նա չլիներ, դու, հավանաբար, կորած կլինեիր: Ես վախենում եմ քեզ համար նրա խարդավանքից, բայց իմ բերանը փակ է, ու ես չեմ կարող խոսել»:— «Այո, ալլահը վկա, այդ բոլորը եղել է»,— ասացի ես: Եվ նա գլուխն օրորեց ու բացականչեց. «Այժմ էլ չի գանվի այնպիսին, ինչպիսին Ազիզեն էր»:— «Իսկ մահվանից առաջ,— ասացի ես,— նա կտակել էր ինձ այն կնոջը երկու խոսք ասել, ոչ ավելին, այն է՝ «Հավատարմությունը գեղեցիկ է, դավաճանությունը՝ վատթար»:

Լսելով այդ, կինը գոչեց. «Ալլահը վկա, ո՛վ Ազիզ, հենց այդ երկու խոսքն էլ քեզ փրկել է նրանից ու նրա ձեռքով սպանվելուց: Հիմա իմ սիրտը հանգստացավ քեզ համար, նա արդեն քեզ չի սպանի: Ե՛վ կենդանի, և՛ մեռած վիճակում քո հորեղբոր աղջիկը քեզ ազատել է: Ալլահը վկա, ես ամեն օր ցանկացել եմ քեզ, բայց չեմ կարողացել քեզ ավելի շուտ տիրանալ, քան այժմ, երբ ես քո նկատմամբ խորամանկություն բանեցրի, ու խորամանկությունս հաջողվեց: Դու դեռ միամիտ ես և չգիտես կանանց խարդավանքներն ու պառավների խարդախությունները»:— «Ո՛չ, ալլահը վկա»,— բացականչեցի ես: Եվ նա ասաց. «Հանդրստացրու հոգիդ ու զվարթացրու աչքերդ: Մեռածը հանգիստ է, իսկ ապրողին շնորհ կարվի: Դու գեղեցիկ երիտասարդ ես, և ես ուզում եմ

ունենալ քեզ միայն ալլահի ու նրա առաքյալի (թող ալլահը նրան փառավորի ու մեծարի) կարգ ու կանոնով, ինչ որ ուզես՝ փող թե հագուստեղեն, անմիջապես կհայտնվի քեզ մոտ, և ես ոչնչով չեմ նեղացնի քեզ: Եվ հացն էլ իմ տանը միշտ թխված է ու ջուրը՝ կժում, և ես քեզնից միայն ուզում եմ, որ դու անես ինձ այն, ինչ որ արևոն է անում»:— «Իսկ ի՞նչ է անում արևորը»,— հարցրի ես: Եվ նա ծիծաղեց ու ավուով ծափ զարկեց և այնպես ուժգին ծիծաղեց, որ մեջքի վրա ընկավ, իսկ հետո շիտակ նստեց ու բացականչեց. «Ո՛վ իմ աչքի լույս, մի՞թե դու չգիտես արևորի արհեստը»:— «Ոչ, ալլահը վկա, ես չգիտեմ արևորի արհեստը»,— պատասխանեցի ես: Եվ նա ասաց. «Ահա արևորի արհեստը. կեր, խմիր, ու թափ տուր»:

Եվ ես շփոթվեցի նրա խոսքերից, հետո հարցրի. «Եվ դա՞ է արևորի արհեստը»: Իսկ նա ասաց. «Այո, և այժմ ես ուզում եմ, որ դու գոտիդ ձգես, վճռականութունդ ամրապնդես ու սիրես ամբողջ կարողութեամբ»: Եվ նա ծափ տվեց ու կանչեց. «Ո՛վ մայրիկ, բեր նրանց, ովքեր քեզ մոտ են գտնվում»: Եվ հանկարծ եկավ պառավը՝ շորս վկաների հետ, բերելով մետաքսաշորի մի կտոր:

Եվ նա շորս մոմ վառեց, իսկ վկաները ներս մտնելով, ողջունեցին ինձ ու նստեցին. և այնժամ կինը վեր կացավ ու թիկնոցի մեջ փաթաթվեց ու վկաներից մեկին շիազորեց ամուսնական պայման գրել: Եվ նրանք պրեցին, ու կինն ստորագրեց, որ ստացել է ամբողջ օժիտը, թե՛ նախնականը, թե՛ վերջնականը, և որ իր պատասխանատվության տակ է գտնվում իմ տասը հազար դիրհեմ փողը, իսկ հետո նա վկաներին վճարեց նրանց վարձը, ու նրանք գնացին այնտեղ, որտեղից եկել էին: Եվ այնժամ կինը դուրս եկավ ու, շորերը վրայից հանելով, ներս մտավ բարակ խալաթով՝ ոսկեթել եզրակարով, և բռնեց իմ ձեռքն ու ինձ հետ մահիճը բարձրացավ՝ ասելով. «Թույլատրվածի մեջ ամոթ չկա»:

Ապա մենք քնեցինք մինչև առավոտ, և ես ուզում էի դուրս գալ, բայց հանկարծ նա մոտեցավ ինձ ու, ծիծաղելով, ասաց. «Հա՛յ-հա՛յ, դու կարծում ես, թե բաղնիք են մտնում այնպես, ինչպես դո՞ւրս են գալիս»¹, Դու, երևի, ինձ էլ այնպիսին ես համարում, ինչպիսին է Դալիա-խորամանկի աղջիկը: Զգուշացիր այդպիսի մտքերից: Զէ՞ որ դու իմ ամուսինն ես ըստ գրվածքի ու սահմանված կարգի, իսկ չեթե հարբած ես, ապա սթափվիր ու խելքի արի: Այս տունը, որի մեջ գտնվում ես,

¹ Մահմեդական Աքնեքում բաղնիքում լողանալու համար վճարում են ոչ թե ներս մտնելու, այլ դուրս գալիս:

բացվում է տարեկան միայն մեկ անգամ: Վեր կաց ու նայիր մեծ դարպասին»:

Եվ ես մոտեցա դարպասին ու տեսա, որ այն փակ է ու մեխված, ու, վերադառնալով նրա մոտ, պատմեցի նրան, որ դարպասը մեխված է ու փակ, և նա ասաց. «Ո՞վ Ազիզ, մեզ մոտ այնքան ալյուր, ձավար, մրգեր, նուռ, շաքար, միս, ոչխար ու համ և այլ մթերքներ կան, որ շատ տարիներ բավական են, և հիմիկվանից դուռը կբացվի միայն մեկ տարուց հետո: Ես գիտեմ, որ դու քեզ այստեղից դուրս եկած կտեսնես ոչ շուտ, քան մի տարուց հետո»: «Ավելի մեծ ուժ ու զորություն ոչ ոք չունի, բացի ալլահից», — բացականչեցի ես: Եվ նա ասաց. «Իսկ ինչո՞վ է այստեղ վատ քեզ համար, եթե դու գիտես արևորի արհեստը, որի մասին ես քեզ ասացի»:

Եվ նա ծիծաղեց, ու ես նույնպես ծիծաղեցի և հնազանդվեցի նրան ու արեցի, ինչ որ նա ասաց: Եվ ապրում էի նրա մոտ ու կատարում արևորի արհեստը, ուտում էի, խմում ու սիրում, մինչև անցավ մեկ տարին՝ տասներկու ամիս: Իսկ երբ տարին լրացավ, նա երեխա բերեց ինձանից, ու նրա միջոցով տղա ունեցա»:

Իսկ հաջորդ տարվա սկզբին ես լսեցի, թե ինչպես բացում են դարպասը: Եվ հանկարծ մարդիկ հաց, ալյուր, շաքար ներս բերեցին: Եվ ես ուզեցի դուրս գալ, բայց նա ինձ ասաց. «Համբերիր մինչև իրիկնապահ, և ինչպես մտել ես, այնպես էլ դուրս արի»: Եվ ես սպասեցի մինչև իրիկնապահ, ու ցանկացա դուրս գալ, վախվորած ու սարսափած, և հանկարծ նա ասաց. «Ալլահը վկա, ես քեզ չեմ թողնի դուրս գալ, մինչև երդում չառնեմ քեզանից, որ դու այս գիշեր կվերադառնաս՝ դարպասը փակելուց առաջ»:

Ես դրան համաձայնեցի, և նա սրով, սրբազան ցուցակով ու ապահարզանով՝ երդում առավ ինձանից, որ ես իր մոտ կվերադառնամ, իսկ հետո դուրս եկա նրա մոտից ու գնացի այն պարտեզը: Եվ ես տեսա, որ դրա դարպասը բաց է, ինչպես միշտ, ու զայրացա և ինքս ինձ ասացի. «Ես մի ամբողջ տարի բացակայել եմ ու հանկարծ եկել և տեսնում եմ, որ այստեղ բաց է, ինչպես առաջ: Ես անպայման ներս պիտի մտնեմ ու տեսնեմ, նախքան մորս մոտ գնալը, չէ՞ որ հիմա իրիկնապահ է»:

Եվ ես պարտեզ մտա ու գնացի, մինչև հասա սենյակ ու տեսա, որ Դալիլա-Խորամանկի աղջիկը նստել է, գլուխը ծնկներին դրած ու

Վ Մահմեդականների մոտ ապահարզանով երդումն ամենազորեղ երդումներից մեկն է համարվում:

այսր ձեռքին հենած, ու նրա դեմքի գույնը փոխվել է ու աչքերը փոս են ընկել: Եվ տեսնելով ինձ, նա ասաց. «Փա՛ռք ավա՛հին փրկությանդ համար», — և ուզեց վեր կենալ, բայց բուռն ուրախությունից ընկավ: Եվ ես ամաչեցի նրանից ու գլուխս խոնարհեցի: Իսկ հետո ես մոտեցա նրան, համբուրեցի ու ասացի. «Դու ի՞նչ իմացար, որ ես այս երեկո քեզ մոտ պիտի գամ»: — «Ես այդ շգիտեի, — ասաց նա, — ավահը վկա, ահա մի տարի է արդեն, որ ես քնի համը շգիտեմ ու շեմ ճաշակում այն: Ամեն գիշեր ես արթուն սպասում եմ քեզ, և այդպես է այն օրվանից, երբ դու իմ մոտից գնացիր, ու ես նոր կտորից կարած հագուստ տվեցի քեզ, ու դու խոստացար, որ ըրաղնիք կգնաս ու կգաս: Ես նստեցի, քեզ սպասելով առաջին գիշերը, և երկրորդ գիշերը, և երրորդ գիշերը, իսկ դու եկար միայն այսքան երկար ժամանակից հետո: Ես անդադար սպասում եմ քո գալուն, այդպես է սիրահարվածների բանը: Ես ուզում եմ, որ պատմե՞ս ինձ, թե ինչու այս ամբողջ տարին բացակայել ես»:

Եվ ես պատմեցի նրան, և երբ նա իմացավ, որ ամուսնացել եմ, նրա երեսը դեղնեց, իսկ հետո ասացի. «Ես այս երեկո եկել եմ քեզ մոտ ու նախքան օրը բացվելը գնալու եմ»: Եվ նա բացականչեց. «Բավական չէ, որ խորամանկություն է բանեցրել ու քեզ հետ ամուսնացել և լր մոտ մի ամբողջ տարի բանտարկել, դեռ քեզանից ապահարզանով երգում էլ է առել, որ այս գիշեր, լույսը բացվելուց առաջ, կվերադառնաս իր սեռ, և նրա հոգին թույլ չի տալիս, որ դու ուրախանաս քո մոր կամ ինձ մոտ: Նրա համար հեշտ չէ, որ դու մի գիշեր անցկացնես մեզանից որ'էլ մեկի մոտ, իրենից հեռու, ապա ինչպե՞ս է նրա համար, որի մոտից դու մի ամբողջ տարով հեռացել ես, թեև ես քեզ ավելի շուտ եմ ճանաչել, քան նա, թող ավահը ողորմի քո հորեղբոր աղջիկ Ազիզին: Երան պատահել է այն, ինչ որ ոչ ոք չի պատահել, և նա կերել է այն, ինչ ոչ ոք չի կերել, ու նա մեռավ քեզնից անարգված: Մինչդեռ հենց նա է քեզ ինձնից պաշտպանել: Ես կարծում էի, թե դու ինձ սիրում ես, ու լույս թողի քեզ, թեև կարող էի թույլ չտալ, որ դուրս գաս ողջ-առողջ ու գիրացած, և ի վիճակի էի քեզ բանտարկել ու սպանել»:

Եվ նա դառնորեն լաց եղավ ու զայրացավ և ամբողջապես փշարողված նայեց ինձ զայրագին հայացքով, և երբ ես այդպես տեսա նրան, ծնկներս դողացին, ու սարսափեցի նրանից, և նա ասես ահեղ գույ էր դարձել, իսկ ես իսկը կրակի վրա դրած բակլա էի կտրել: Իսկ հետո նա ասաց. «Քո ամուսնանալուց ու երեխա ունենալուց հետո ես այլևս քեզանից օգուտ չունեմ, դու ինձ հետ մտերմության համար պիտանի չես, քանի որ ինձ միայն ամուրիից օգուտ կլինի, իսկ ամուսնա-

ցած տղամարդը մեզ ոչ մի օղուտ չի տալիս: Դու ինձ ծաղիկների՝ այդ դարշահոտ փնջով ծախեցիր: Ալլահը վկա, քո միջոցով ես կվշտացնեմ այդ պոռնիկին, և դու ո՛չ իմը կլինես, ո՛չ էլ նրանը»:

Ապա նա մի բարձր ճիչ արձակեց, և ես դեռ ուշքի չէի եկել, երբ տասը ստրկուհիներ եկան ու ինձ գետին գցեցին, և մինչ ես նրանց ձեռքերի մեջ էի, նա վեր կացավ, դանակը վերցրեց ու բացականչեց. «Սա քեզ կմորթեմ, ինչպես այծերին են մորթում, և գա ամենափոքր պատիժը կլինի քեզ համար այն բանի դիմաց, ինչ որ դու ինձ ու քո հորեղբոր աղջկան ես արել»:

Եվ տեսնելով, որ նրա ստրկուհիների ձեռքում եմ, ու այտերս փոշու մեջ են թաթախվել, և ստրկուհիները սրում են դանակը, ես համոզվեցի, որ մեռնելու եմ, ու գթության կոչեցի այդ կնոջը, բայց նա ավելի դաժան դարձավ ու հրամայեց ստրկուհիներին ոլորել ձեռքերս: Եվ նրանք ոլորեցին ձեռքերս ու մեջքիս վրա գցեցին ինձ և նստեցին փորիս ու գլուխս բռնեցին, և երկու ստրկուհիներ ծնկներիս նստեցին, իսկ երկու ուրիշը ձեռքերս բռնեցին, իսկ նա վեր կացավ երկու ստրկուհիների հետ ու նրանց հրամայեց ծեծել ինձ: Եվ նրանք ինձ այնքան ծեծեցին, որ ես ուշագնաց եղա, ու ձայնս նվաղեց, իսկ ուշքի գալով, ինքս ինձ ասացի. «Իսկապես, մորթվելով մեռնելն ավելի լավ է, քան այս ծեծը»: Եվ ես հիշեցի իմ հորեղբոր աղջկա խոսքը, երբ ասում էր. «Թող ալլահը քեզ նրա շարիքից ազատի»,— և ես սկսեցի ճշալ ու լաց լինել, մինչև որ ձայնս խզվեց ու իմ մեջ ո՛չ ձայն հանելու, ո՛չ էլ շնչելու կարողություն մնաց: Ապա նա սրեց դանակն ու ստրկուհիներին ասաց. «Մերկացրե՛ք դրան»: Եվ հանկարծ տերը ներշնչեց ինձ արտասանել այն խոսքերը, որ հորեղբորս աղջիկն էր ասել ու կտակել էր ինձ կրկնել. «Ո՛վ տիրուհի, մի՞թե չգիտես, որ հավատարմությունը գեղեցիկ է, իսկ դավաճանությունը՝ վատթար»: Եվ, այդ լսելով, նա բացականչեց ու ասաց. «Թող ալլահը ողորմի քեզ, ո՛վ Ազիզե: Թող ալլահը նրան դրախտով հատուցի նրա երիտասարդության փոխարեն: Ալլահը վկա, նա քեզ օգտակար եղավ և՛ կենդանության օրոք, և՛ մահվանից հետո ու քեզ փրկեց իմ ձեռքից այդ խոսքերի օգնությամբ: Բայց ես չեմ կարող այդպես բաց թողնել քեզ և անպայման քեզ վրա մի հետք պետք է թողնեմ, որպեսզի վիշտ պատճառեմ այն պոռնիկին ու լրբին, որը քեզ թաքցրել է ինձանից»: Եվ նա ձայն տվեց ստրկուհիներին ու հրամայեց պարանով կապել ոտքերս, իսկ հետո ասաց նրանց. «Նստեք նրա վրա»: Եվ նրանք այդպես արեցին: Եվ այնժամ նա գնաց ու վերադարձավ՝ ձեռքին պղնձե տապակ, որը դրեց կրակով լի մանղալի վրա ու մեջը յուղ

լցրեց ու դրա մեջ ծծումբ բովեց (իսկ ես անզգայացել էի), և հետո նա մոտեցավ ինձ, արձակեց վրայիս շորերը և թելով կապեց իմ ամոթի տեղը ու, բռնելով այն, երկու ստրկուհու ձեռքը տվեց ու ասաց. «Թելը քաշեք»: Եվ նրանք քաշեցին, իսկ ես գիտակցութունս կորցրի և սաստիկ ցավից գնացի այն մյուս՝ ոչ այստեղի, աշխարհը, իսկ նա եկավ մետաղյա ածելիով ու ամորձատեց ինձ, այնպես որ ես իսկը կին դարձաւ: Եվ հետո նա այրեց կտրվածքի տեղն ու մի փոշով շփեց (իսկ ես միշտ անզգայության մեջ էի), իսկ երբ ես ուշքի եկա, արյունն արդեն կանգ էր առել:

Եվ կինը ստրկուհիներին հրամայեց արձակել իմ կապերը և մի գավաթ դինի խմել տվեց ինձ, իսկ հետո ասաց. «Հիմա գնա նրա մոտ, ում հետ ամուսնացել ես, և ով ափսոսեց մի գիշեր ինձ տրամադրել: Թող ալլահը սղորմի քո հորեղբոր աղջկան, որը քո փրկության պատճառն էր ու չի բացել իր գաղտնիքը: Եթե դու նրա խոսքերը չարտասանեիր, ես, անշուշտ, քեզ կմորթեի: Հիմա ևեթ դուրս գնա, գնա ում մոտ որ ուզում ես: Ինձ քեղանից հարկավոր էր միայն այն, ինչը ես կտրեցի քեղանից, իսկ հիմա դու ինձ համար ոչ մի բան չունես: Ես քեզ չեմ ցանկանում, և դու ինձ պետք չես: Վեր կաց, հարդարիր մազերդ ու ալլահի ողորմությունը կոչիր քո հորեղբոր աղջկա վրա»:

Եվ նա ստքով հրեց ինձ, ու ես վեր կացա, բայց չէի կարողանում քայլել և կամաց-կամաց գնացի, մինչև որ տուն հասա ու, տեսնելով, որ դուռը բաց է, ընկա դռան մեջ ու աշխարհից վերացա: Եվ հանկարծ կինս դուրս եկավ ու բարձրացրեց ինձ և սենյակ տարավ ու տեսավ, որ ես կնոջ պես եմ դարձել, իսկ ես քնեցի ու քնի մեջ խորասուզվեցի և, զարթնելով, այգու գարպասի առջև ընկած գտա ինձ: Ես վեր կացա ախ ու վախ անելով, ու գնացի, մինչև որ իմ տուն հասա ու, ներս մտնելով, մորս գտա ինձ համար լաց լինելիս, ու նա ասում էր. «Կիմանա՞մ, արդյոք, զավա՛կս, թե ո՛ր երկրում ես»: Եվ ես մոտեցա ու նետվեցի նրա գիրկը, իսկ նա նայեց ինձ ու, ճանաչելով, տեսավ, որ ես վատառողջ եմ ու դեմքս դեղնել և սևացել է: Իսկ ես հորեղբորս աղջկան հիշեցի ու այն լավությունը, որ նա արել էր ինձ, և համոզվեցի, որ նա ինձ սիրել է, ու լաց եղա, և մայրս նույնպես լաց եղավ: «Ո՞վ զավակս, հայրդ մեռել է».— ասաց մայրս, և այնժամ ես ավելի սաստիկ զայրացա ու այնպես լացեցի, որ ուշագնաց եղա, իսկ ուշքի գալով, նայեցի այն տեղին, որտեղ հորեղբորս աղջիկն էր նստում, և նորից լաց եղա ու սաստիկ լացից քիչ մնաց ուշագնաց լինելի:

Եվ ես շարունակեցի այդպես լաց լինել ու հառաչել մինչև կես դի-

շեր, ու մայրս ասաց. «Հայրդ արդեն տասը օր է, որ մեռել է»: Իսկ ես նրան պատասխանեցի. «Այլևս, բացի հորեղբորս աղջկանից, ոչ ոքի մասին չեմ մտածի: Ծս արժանի էի այն ամենին, ինչ ինձ պատահեց, քանի որ արհամարհեցի նրան, թեև նա ինձ սիրում էր»:— «Իսկ ի՞նչ է պատահել քեզ»,— հարցրեց մայրս, և ես պատմեցի, թե ինչ է պատահել ինձ, ու նա մի քիչ լաց եղավ, իսկ հետո ուտելու բան բերեց, և ես մի քիչ կերա ու խմեցի և կրկնեցի նրան իմ պատմութունը, պատմելով այն ամենը, ինչ պատահել էր: Ծվ նա բացականչեց. «Փա՛ռք ալլահին, որ քեզ միայն այդ է պատահել, ու նա քեզ չի մորթել»:

Հետո մայրս սկսեց բուժել ինձ ու դեղեր խմեցնել, մինչև որ ես ապաքինվեցի ու լիսվին առողջացա, և այնժամ նա ինձ ասաց.— «Ո՛վ զավակս, հիմա ես կտամ քեզ այն, ինչ քո հորեղբոր աղջիկն իմ պահպանությանն է հանձնել: Այդ բանը քեզ է պատկանում, և Ազիզեն երդում է առել ինձնից, որ քեզ ցույց շտամ, մինչև շտեսնեմ, որ դու հիշում ես հորեղբորդ աղջկան ու լաց լինում, և որ խզված են քո կուպերն ուրիշի հետ: Իսկ այժմ ես գիտեմ, որ այդ պայմանները կատարվել են»:

Ծվ նա վեր կացավ ու, սնդուկը բացելով, այնտեղից հանեց այս նկարված վիթի պատկերով լաթը (իսկ դա այն լաթն էր, որ ես էի առաջ նվիրել Ազիզին), և, վերցնելով այն, ես տեսա, որ դրա վրա այսպիսի ոտանավոր է գրված.

Ո՛վ գեղադեմ, ո՛վ ստիպեց, որ խեղճերիս դու լքես.
 Ու քո սիրուց ուժասպառված, անհույս, անսեր մեռնեմ ես:
 Եթե երբեք դու չես հիշում մեզ լքելուդ պահից իսկ,
 Ապա մենք քեզ, տերը գիտե, չենք հանել մեր մտքերից:
 Գաժանորեն տանջում ես ինձ, բայց դա քաղցր է ինձ համար,
 Կարժանացնե՞ս արգյոք մի օր ինձ քո անքրին հոգեհառ:
 Քանի դեռ ես չէի սիրել, չգիտեի՝ կիրքը խույ
 Մաշում է մեզ ու տանջանքը հոգին հանում սիրողի:
 Բայց երբ սերը տիրեց սրտիս ու ցանցի մեջ առավ իր,
 Գերի դարձա կրքին, հենց որ դու իմ դեմքին նայեցիր:
 Չարախոսները մեղմացան անսնելով սերն իմ անհուն,
 Իսկ դու, ո՛վ սեզ, հենց որ սիրով տանջվողներին չես խզում:
 Աստված վկա, չի ամոքվի սիրտս հիվանդ, սիրակեզ,
 Բայց թե նույնիսկ սիրուց մեռնեմ, չեմ մոռանա դարձյալ քեզ:

Կարդալով այդ տողերը, ես դառնազին լացեցի ու այտերիս խփեցի, իսկ երբ թուղթը բացեցի, դրա միջից մի ուրիշ գրութուն ընկավ, ու բացելով այն, ես հանկարծ տեսա, որ գրված է. «Իմացիր, ո՛վ իմ հորեղ-


բորորդի, ես քեզ ազատել եմ իմ արյան պատասխանատուությունից և հույս ունեմ, որ ալլահը կօգնի քեզ՝ միանալու նրա հետ, որին դու սիրում ես: Քայց եթե քեզ որևէ բան պատահի Գալիլա-Նորամանկի աղջկա պատճառով, այլևս չգնաս նրա մոտ ու ոչ էլ մի ուրիշ կնոջ մոտ, այլ համբերությամբ կրիր քո շարիքը: Եթե քո կյանքի ժամկետը երկար չլինի, դու հավանաբար վաղուց մեռած կլինես, բայց փառք ալլահին, որք իմ օրը քո օրից վաղ է սահմանել: Իմ ողջունը քեզ: Պահիր այս լաթը, որի վրա վիթի պատկերն է, մի՛ գցիր այն ու մի՛ բաժանվիր գրանից. այս պատկերը զբաղեցնում էր ինձ այն ժամանակ, երբ դու ինձ մոտ չէիր լինում: Ի սեր ալլահի, աղերսում եմ քեզ, եթե դու տիրապետես նրան, ով նկարել է վիթը, հեռու մնա նրանից, մի՛ թող, որ նա մերձենա քեզ ու մի՛ ամուսնացիր նրա հետ: Իսկ եթե նրան չհասնես ու չկարողանաս տիրապետել ու նրա մերձեցմանը շարժանանաս, այլևս ոչ մի կնոջ չմտենաս: Իմացի՛ր, այս վիթի տիրուհին տարեկան մի վիթ է նկարում և ուղարկում հեռավոր երկրներ, որպեսզի նրա ու իր հիանալի գործի համբավը տարածվի, իր գործի, որ անկարող են կատարել երկրի բնակիչները: Իսկ քո սիրեցյալի՝ Գալիլա-Նորամանկի աղջկա, ձեռքն է ընկել այս վիթը, և նա սկսել է մարդկանց շնորհակալ դրանով ու ցույց տալ նրանց, ասելով. «Ես մի քույր ունեմ, որ հյուսում է այս»: Իսկ նա խաբերա է, քանի որ այդպես է ասում, ալլահը նրա քույր պատռի:

Ահա քեզ իմ կտակը, և ես քեզ այդ թողնում եմ միայն նրա համար, որ գիտեմ՝ աշխարհը նեղ կլինի քեզ համար իմ մահվանից հետո և, գուցե, դու այդ պատճառով օտարություն դիմես ու երկրեերկիր գնաս և լսես նրա մասին, ով հյուսել է այդ պատկերը, ու այն ժամանակ քո հոգին կցանկանա ճանաչել նրան, և դու կհիշես ինձ, բայց դրանից քեզ ոչ մի օգուտ չի լինի, ու դու իմ արժեքը կիմանաս միայն իմ ստեղծանից հետո: Եվ իմացի՛ր, որ այս վիթի տերը Քաֆուրե կղզիների թագավորի աղջիկն ու ազնվականների տիրուհին է»:

Կարգայով այդ թուղթը և իմանալով դրա բովանդակությունը, ես լաց եղա, և մայրս էլ լաց եղավ, իմ արցունքները տեսնելով, ու ես մի գլուխ նայում էի թղթին ու լաց լինում, մինչև որ գիշերը եկավ: Եվ այդպես մի ամբողջ տարի ես անցկացրի, իսկ մի տարուց հետո մեր քաղաքի վաճառականները պատրաստվեցին ճանապարհորդության (իսկ գրանք հենց այն մարդիկ են, որոնց քարավանի հետ ես գնում եմ), և մայրս ինձ խորհուրդ տվեց պատրաստվել ու նրանց հետ գնալ. գուցե, միտքս պրազվի նոր բաներով, ու տխրությունս ցրվի: «Ուղղիր քո կուրծքը և

թո՛ղ այդ տիրութիւնն ու հեռացի՛ր մի տարով, կամ երկու, կամ երեք, մինչև որ քարավանը վերադառնա, գուցե, սիրտդ ուրախանա ու միտքդ պայծառանա».— ասաց նա և այնքան հորգորեց ինձ քնքուշ խոսքերով, մինչև որ ես ապրանքներս ժողովեցի ու վաճառականների հետ ճանապարհ ընկա: Իսկ ամբողջ ճանապարհորդութեան միջոցին իմ արցունքները շեն շորացել, և ամեն մի հանգրվանում, ուր որ կանգ ենք առել, ես բացել եմ այս լաթն ու դիտել դրա վրայի վիթը, հիշելով հորեղբորս աղչկան, ու լացել նրա համար, ինչպես դեռ տեսնում ես: Նա ինձ մեծ սիրով է սիրել ու մեռել է իմ վշտից, քանի որ ես նրան միայն շարիք եմ պատճառել, իսկ նա ինձ միայն բարիք է արել: Եվ երբ վաճառականները վերադառնան, ես էլ նրանց հետ կվերադառնամ, ու կլրանա իմ հեռանալու մեկ տարին, որը մեծ տիրութեան մեջ եմ անցկացրել»:





Պատմում են, որ հին ժամանակներում մի մեծ, բարձրագահ թագավոր կար՛, և նա երեք աղջիկ ուներ, լիալուսնի ու ծաղկուն պարտեզի նման, ու մի տղա՝ իսկը լուսին: Եվ երբ օրերից մի օր թագավորը նրատաժ էր իր թագավորութւյան գահին, հանկարծ նրա մոտ մտան երեք իմաստուն, և նրանցից մեկի մոտ ոսկեղեն սիրամարգ կար, մյուսի մոտ՝ պղնձե խողովակ, իսկ երրորդի մոտ՝ փղոսկրե ու սևափայտե՛ ձի: «Ի՞նչ բաներ են դրանք և ի՞նչով են օգտակար»,— հարցրեց թագավորը:

Եվ սիրամարգի տերն ասաց. «Այս սիրամարգի օգտակարութւյունն այն է, որ ամեն անգամ, երբ լրանում է մեկ ժամ, գիշեր թե ցերեկ, նա թևերը թափահարում է ու ճշում»: Իսկ խողովակի տերն ասաց. «Եթե ոչս խողովակը քաղաքի դարպասների մոտ դրվի, պահակի տեղ կծառայի, և երբ այս քաղաքը գող մտնի, սա կճշա գողի վրա, ու նրան կճանաչեն ու ձեռքը կբռնեն»: Իսկ ձիու տերն ասաց. «Մ՛վ տիրակալ, այս ձիու օգուտն այն է, որ եթե մարդ սրան հեծնի, կհասնի իր ուզած երկիրը»:— «Ես ձեզ չեմ պարգևատրի, մինչև չփորձեմ դրանց օգտակարութւյունը»,— ասաց թագավորը և հետո փորձեց սիրամարգն ու համոզվեց, որ նա այնպիսին է, ինչպես ասել է տերը, և փորձեց խողովակն ու տեսավ, որ դա էլ այն է, ինչ որ տերն է ասել: Եվ այնժամ թագավորը երկու իմաստուններին ասաց. «Պահանջեք ինձանից որևէ բան»: Եվ նրանք պատասխանեցին. «Մենք ուզում ենք, որ մեզանից յուրաքանչյուրին կնութւյան տաս քո աղջիկներից մեկին»:

1 Սևափայտը կամ էրենօսը (ժառը և փայտը) արաբներին ծանոթ է հնագույն ժամանակներից: Իրանից պատրաստում էին զանազան զարդարանքներ, շախմատի քարեր. նրան վերագրվում էր նաև բուժիչ հատկութւյուն:

Իսկ հետո առաջ եկավ երրորդ իմաստունը՝ ձիու տերը, ու համբուրեց գետինը թագավորի առջև ու ասաց. «Ո՛վ ժամանակի արքա, ինձ էլ պարզեատրիք այնպես, ինչպես պարզեատրեցիր իմ ընկերներին»։— «Ես նախ պիտի փորձեմ այն, ինչ որ բերել ես»,— ասաց թագավորը։ Եվ այնժամ մտտեցավ թագավորի որդին ու ասաց. «Ո՛վ հայրիկ, ես կհեծնեմ այս ձին ու կփորձեմ նրան ու կպարզեմ նրա օգտակարությունը»։— «Ո՛վ ղավակս, փորձիր, ինչպես ուզում ես»,— պատասխանեց թագավորը։ Եվ արքայազնը բարձրացավ ու հեծավ ձին ու դանդաղորեն ոտքերը շարժեց, խթանելով ձիուն, բայց ձին տեղից չշարժվեց։ «Ո՛վ իմաստուն, ս՛ր է նրա վազքի արագությունը, որի մասին դու ասացիր»,— հարցրեց արքայազնը, և այնժամ իմաստունը մտտեցավ արքայազնին ու վերասլաց պտուտակը ցույց տվեց ու ասաց. «Դարձրու այս պտուտակը»։ Եվ արքայազնը դարձրեց պտուտակը, ու հանկարծ ձին շարժվեց, ու, արքայազնին առած, դեպի ամպերը սլացավ ու անդադար թռավ նրա հետ, մինչև տեսողությունից ծածկվեց։ Եվ այնժամ արքայազնը շփոթվեց ու զղջաց, որ նստել է այդ ձին, ու ասաց. «Իսկապես, իմաստունը խորամանկություն է բանեցրել, որ ինձ կործանի։ Չկա՛ ավելի մեծ զորություն և ուժ, քան ավաճինն է մեծ ու բարձրյալ»։

Եվ նա սկսեց զննել ձիուն ու, տնտղելով նրան, հանկարծ նրա աչքիակին տեսավ աքաղաղի գլխի նման մի բան ու նույնպիսի մի բան էլ՝ ձախ թիակին։ Եվ արքայազնը ինքն իրեն ասաց. «Ես ձիու վրա այս երկու բևեռիկներից բացի ուրիշ բան չեմ տեսնում», և սկսեց դարձնել այն բևեռիկը, որ աչքիակի վրա էր, բայց ձին ավելի արագ սլացավ ու ավելի վեր բարձրացավ, և արքայազնը բաց թողեց բևեռիկը։ Եվ նա նայեց ձախ թիակին ու տեսավ մյուս բևեռիկն ու դարձրեց այն, և երբ արքայազնը դարձրեց ձախակողմի բևեռիկը, ձիու շարժումը դանդաղեց ու վերելքից վայրէջքի փոխվեց, և ձին անընդհատ, քիչ առ քիչ երկիր իջավ արքայազնի հետ։

Եվ երբ արքայազնը տեսավ այդ ու իմացավ ձիու օգտակարությունը, նրա սիրտը ուրախությամբ ու ցնծությամբ համակվեց, և նա շնորհակալություն հայտնեց մեծ ավաճինն այն շնորհի համար, որ արեւ էր իրեն՝ փրկելով կորստից։ Եվ նա անընդհատ ցած էր իջնում ամբողջ օրը. բանի որ նրա վերելքի ժամանակ երկիրը շատ էր հեռացել նրանից, և նա շրջում էր ձիու դունչը, ինչպես ուզում էր, քանի դեռ ձին իջնում էր, և եթե ուզում էր, ձիու հետ իջնում էր, իսկ եթե ուզում էր, բարձրանում էր։

Եվ երբ արքայազնին հաջողվեց գլուխ բերել այն, ինչ որ ուզում էր ձիուց, նա ուղղեց նրան դեպի հողագունգ և սկսեց գիտել այնտեղի եր-

կրթներն ու քաղաքները, որոնք նրան ծանոթ չէին, քանի որ երբեք չէր տեսել: Եվ այն ամենի մեջ, ինչ որ նա տեսավ, հոյակապ կառուցումներով մի քաղաք կար ու նա գտնվում էր մի ծաղկուն, ծառաշատ ու ջրանցքներով ծածկված հողում, և արքայազնը ինքն իրեն մտածեց ու ասաց. «Մ, և թե իմանայի, թե ի՞նչ է այս քաղաքի անունը և ո՞ր երկրում է նա գտնվում»: Եվ հետո նա սկսեց պտույտներ գործել այդ քաղաքի վրա ու նայել նրան աչից ու ձախից: Իսկ օրը թեքվել էր, և արևը մայրամուտին էր մոտենում, և արքայազնը ինքն իրեն ասաց. «Ես գիշերելու համար այս քաղաքից լավ տեղ չեմ գտնի: Ես այնտեղ կգիշերեմ, իսկ սուսվառյան կուղևորվեմ դեպի իմ թագավորութունը և իմ հարազատներին ու հորս կտեղեկացնեմ, թե ինչ է պատահել ինձ, ու կպատմեմ նրան, թե ինչ են տեսել իմ աչքերը»:

Եվ նա սկսեց իր ու իր ձիու համար որոնել անվտանգ մի տեղ, ուր իրեն ոչ ոք չէր տեսնի, և հանկարծ քաղաքի կենտրոնում վեր խոյացած մի պալատ տեսավ, և այդ պալատը շրջապատված էր բարձր պարիսպներով մի հաստ պարսպով: Եվ արքայազնը ինքն իրեն ասաց. «Իսկապես որ սա հիանալի տեղ է»,— և սկսեց շարժել այն բևեռիկը, որն իջեցնում էր ձիուն, ու ցած սլացավ այնքան ժամանակ, մինչև որ իջավ օդից պալատի տանիքին: Եվ այնժամ նա ձիուց իջավ ու փառաբանեց մեծ ալլահին ու սկսեց ձիու շուրջը պտույտ դալ, գննելով նրան ու ասելով. «Ալլահը վկա, իսկապես, որ քեզ սարքողը հմուտ իմաստուն է: Եվ եթե ալլահը երկարացնի ինձ համար սահմանված ժամանակը և ինձ օդից տոռոջ վերադարձնի իմ երկիրն ու իմ հարազատների մոտ և ինձ Թիայնի ծնողներին հետ, ես այդ իմաստունին ամեն բարիք կգործեմ ու մեծամեծ շնորհներ կանեմ»: Եվ նա նստեց պալատի տանիքին, մինչև իմացավ, որ մարդիկ քնել են, և նրան տանջում էին քաղցն ու ծարավը, որովհետև այն պահից ի վեր, ինչ նա հորից բաժանվել էր, ոչինչ չէր եղել: Եվ այնժամ նա ինքն իրեն ասաց. «Այնպիսի մի պալատում, ինչպիսին սա է, չի կարող պաշար չլինել»,— և ձին մի տեղ թողեց ու զնաց որևէ ուտելիք փնտրելու: Եվ նա մի սանդուղք նկատեց ու դրանով ցած իջավ և տեսավ մարմարով սալարկած բակը, ու զարմացավ այդ տեղի ու այն բանի վրա, որ դա հոյակապ է կառուցված, միայն թե պալատում ոչ մի աղմուկ չլսեց ու կենդանի շունչ չտեսավ:

Եվ նա շվարած կանգ առավ ու սկսեց աջ ու ձախ նայել, չիմանալով՝ ուր գնալ, ապա ինքն իրեն ասաց. «Ինձ համար ավելի լավ բան չկա, բան վերադառնալ այնտեղ, ուր իմ ձին է, և այնտեղ էլ գիշերել, իսկ երբ տոավոտը բացվի, ձիս կհեծնեմ ու կգնամ»:

Եվ մինչ նա կանգնած, ինքն իրեն այդպիսի խոսքեր էր ասում, հանկարծ մի լույս տեսավ, որը մոտենում էր այն տեղին, որտեղ ինքն էր կանգնած: Եվ արքայազնը նայեց այդ լույսի կողմը և տեսավ, որ լույսը մոտենում է ստրկուհիների մի խմբի հետ, ու նրանց մեջ գալիս է ալիֆ¹ տառի նման սլացիկ կազմվածքով մի աղջիկ, որ պայծառ լուսին է հիշեցնում, ինչպես նրա մասին ասել է բանաստեղծը.

Կիշերային խավարի մեջ նա երևաց անկաշկանդ,
Մութ երկնքում հանդարտ սահող լուսնի նման շողարձակ:
Բարեկազմ է ու հմայիչ, գեղեցկության այդ փայլով,
Ու իր անսքի պայծառությամբ ոչ ոք չկա մարդկանց մեջ:
Երբ իր անսքին աչքս ընկավ, ես հմայված գոչեցի.
«Փա՛ռք արյունով մարդուն կերտող ամենաստեղծ արարչին»:
Մարդկանց աչքից պահել կուզեմ ու կխնդրեմ, որ ասի.
«Պահիր, այլահ, ինձ մարդկանցից ու ցերեկվա վառ լույսից»:

Եվ նա այդ քաղաքի թագավորի աղջիկն էր, և հայրը նրան սաստիկ սիրով էր սիրում և նրա սիրուց կառուցել էր այդ պալատը նրա համար, և ամեն անգամ, երբ արքայազուտեր սիրտը նեղվում էր, նա իր ստրկուհիների հետ այդտեղ էր գալիս ու մնում էր մի օր, կամ երկու օր, կամ ավելի, իսկ հետո վերադառնում էր հոր պալատը: Եվ այնպես պատահեց, որ նա այդ երեկոյան եկավ, որ ուրախանա ու զվարճանա, ու գալիս էր իր ստրկուհիներով շրջապատված, և նրա հետ էր ներքինին՝ սուրը գոտուց կախած: Եվ երբ նա մտավ այդ պալատը, գորգեր փռեցին ու վառեցին կրակարանները՝ խունկ ծխելով, և սկսեցին խաղալ ու զվարճանալ, և մինչ բոլորը խաղում էին ու զվարճանում, արքայազնը հանկարծ ներքինու վրա նետվեց և մի անգամ երեսին խփեց ու ցած գլորեց և վերցրեց նրա սուրն ու հարձակվեց արքայազուտեր հետ եղած ստրկուհիների վրա ու աչ ու ձախ փախցրեց նրանց:

Եվ երբ արքայազուտերը տեսավ նրա գեղեցկությունն ու հմայքը, ասաց. «Գուցե գու հենց նա ես, որը երեկ ինձ նշանելու էր եկել հորս մոտ, բայց նա մերժեց քեզ ու ասաց, որ դեմքով այլանդակ ես: Այլահը վկա, հայրս խաբել է այդպիսի խոսքեր ասելով, և գու գեղեցիկ ես և ուրիշ ոչինչ»:

Իսկ Հնդկաստանի թագավորի որդին նրան հարսնախոսելու էր եկել նրա հոր մոտ, բայց թագավորը մերժել էր, որովհետև նա դեմքով զարշելի էր, և արքայազուտերը մտածեց, որ սա նա է, որ հարսնախոսելու

¹ Ալիֆ — արաբական այբուբենի առաջին տառը, որն ուղգահայաց դիժ է:

է եկել: Եվ նա մոտեցավ երիտասարդին ու գրկեց նրան և համբուրեց. ու սլառկեց նրա հետ, և ստրկուհիները նրան ասացին. «Ո՛վ տիրուհի, սա նա չէ, որ հորդ մոտ էր եկել քեզ կնության ուզելու, քանի որ նա այլանդակ էր, իսկ սա՝ գեղեցիկ: Եվ նա, ով քեզ ուզում էր, իսկ հայրդ մերժեց նրան, արժանի չէ սրա ստրուկը լինելու, և այս երիտասարդը, ո՛վ տիրուհի, բարձր է աստիճանով»:

Հետո ստրկուհիները մոտեցան գետնին փոված ներքինուն ու նրան ուշքի բերեցին, և ներքինին վախեցած վեր ցատկեց ու սկսեց փնտրել իր սուրը, բայց իր ձեռքին չգտավ, և ստրկուհիները նրան ասացին. «Նա, ով քեզ գետին տապալեց ու սուրդ վերցրեց, նստել է արքայադստեր հետ»: Իսկ թագավորը այդ ներքինուն հանձնարարել էր պահպանել իր աղջկան, վախենալով նրա համար բախտի հակառակությունից ու պատահմունքի հարվածներից:

Եվ ներքինին ելավ ու մոտեցավ վարադույրին և բարձրացրեց այն ու տեսավ, որ արքայադուստրը նստել է արքայազնի հետ, ու նրանք դրուցում են, և, նրանց տեսնելով, ներքինին արքայազնին ասաց. «Ո՛վ տեր իմ, դու մա՞րդ ես, թե ջինն»:— «Վա՛յ քեզ, ո՛վ ստրուկներից աճե-նազազիրդ,— բացականչեց արքայազնը,— ինչպե՞ս ես համարձակվում եմ ստրուկների տոհմի թագավորների որդիներին պիղծ սատանա համարել»:

Եվ նա սուրը ձեռքն առավ ու ասաց. «Ես թագավորի փեսան եմ, նա ինձ ամուսնացրեց իր աղջկա հետ ու հրամայեց նրա մոտ մտնել»:

Եվ ներքինին, լսելով նրանից այդ խոսքերը, ասաց.— «Ո՛վ տեր, եթե դու մարդ արարած ես, ինչպես հաստատում ես, ապա նա արժանի է միայն րեզ, և դու նրա հետ ամուսնանալու առավել իրավունք ունես, քան մեկ ուրիշը»: Հետո ներքինին գնաց թագավորի մոտ, գոռալով (իսկ նա շո-րերը պատառոտել էր ու դլխին հող ցանել): Եվ երբ թագավորը նրա գոռոցը լսեց, հարցրեց նրան. «Ի՞նչ է պատահել քեզ: Դու խոտվեցիր իմ հոգին: Շուտ պատմիր ինձ ու կարճ խոսիր»:— «Ո՛վ արքա,— պատաս-խանեց ներքինին,— օգնիր աղջկադ. նրան տիրել է ջիններից մի շեյթան՝ մարդու կերպարանք ստացած, և նա արքայազնի տեսք ունի, ուրեմն, ելիր նրա դեմ»: Եվ երբ թագավորը ներքինուց այդ խոսքերը լսեց, մտադրվեց նրան սպանել ու բացականչեց.— «Ինչպե՞ս, դու լավ շես պահպանել իմ աղջկան, և նա այդ փորձանքի մե՞ջ ընկավ»: Իսկ հետո թագավորը գնաց այն պալատը, որտեղ իր աղջիկն էր, և, այնտեղ հաս-նելով, ստրկուհիներին կանգնած գտավ:

«Ի՞նչ է պատահել իմ աղջկան»,— հարցրեց նա նրանց, և նրանք պատասխանեցին. «Ո՛վ արքա, մենք նստած էինք նրա հետ ու շկա»:

րողացանք ուշքի գալ, երբ մեզ վրա հարձակվեց այդ երիտասարդը, որ լիալուսնի է նման (իսկ մենք երբեք ավելի գեղեցիկ դեմք չենք տեսել), և նա ձեռքին մերկացրած սուր ուներ: Եվ մենք նրան հարցրինք, թե ով է ինքը, և նա պնդեց, որ դու նրան ամուսնացրել ես քո աղջկա հետ: Եվ մենք ոչինչ չգիտենք, բացի սրանից, ու չենք իմանում՝ մա՞րդ է նա, թե ջինն, բայց նա ողջախոհ է և քաղաքավարի, ու վատ բան չի անում»:

Եվ երբ թագավորը լսեց նրանց խոսքերը, նրա զայրույթն անցավ, և նա սկսեց կամաց-կամաց վարազույրը բարձրացնել ու տեսավ, որ արքայազնը նստած է իր աղջկա հետ, և նրանք զրույց են անում, և արքայազնի կերպարանքն անշափ գեղեցիկ է ու դեմքը՝ պայծառաշող լուսնի է նման:

Եվ թագավորը խանդից շարունակեց իրեն զսպել ու վարազույրը բարձրացրեց և մերկացրած սուրը ձեռքին ներս մտավ ու նրանց վրա հարձակվեց դուրի նման, և նրան տեսնելով, արքայազնը հարցրեց արքայադստերը. «Մա քո հա՞յրն է»: Եվ նա պատասխանեց. «Այո»: Եվ այստեղ արքայազնը ոտքի ցատկեց ու, սուրը ձեռքն առնելով, ահեղ ձայնով գոռաց թագավորի վրա ու շշմեցրեց նրան և ուզեց սրով նրա վրա հարձակվել: Եվ թագավորը հասկացավ, որ արքայազնը իրենից արագաշարժ է, ու սուրը պատյան դրեց ու կանգնեց, մինչև որ արքայազնը հասավ իր մոտ, և այնժամ նա դիմավորեց նրան սիրալիլ ու հարցրեց. «Ո՞վ երիտասարդ, դու մա՞րդ ես, թե ջինն»:— «Եթե ես զանց առնեի իմ պարտականությունը քո նկատմամբ ու հարգանքը՝ քո աղջկա նկատմամբ, կթափեի քո արյունը, Ինչպե՞ս ես դու ինձ շեյթանների հավասարեցնում, երբ ես թագաժառանգն եմ Խոսրովների, որոնք, եթե կամենային խլել քո թագավորությունը, կցնցեին քո մեծությունն ու իշխանությունը և կզրկեին քեզ այն ամենից, ինչ որ հայրենիքում կա»,— բացականչեց արքայազնը: Եվ նրա խոսքերը լսելով՝ թագավորը հարգանք տածեց դեպի նա ու վախեցավ, որ նրանից իրեն չարիք կհասնի: «Եթե դու թագավորի որդի ես, ինչպես պնդում ես, ապա ինչպե՞ս ես մտել իմ պալատն առանց թույլտվության և խայտառակել իմ արժանապատվությունն ու թափանցել աղջկաս մոտ: Դու ասում ես, թե նրա ամուսինն ես ու պնդում ես, որ ես քեզ ամուսնացրել եմ նրա հետ, իսկ ես թագավորների ու արքայազուներին եմ սպանել, որոնք ուզեցել են ամուսնանալ նրա հետ: Ո՞վ քեզ կփրկի իմ զայրույթից: Չէ՞ որ, եթե ես ձայն տամ իմ ստրուկներին ու ծառաներին և հրամայեմ նրանց սպանել քեզ, նրանք, իսկույնեթ կսպանեն քեզ: Ո՞վ կազատի

քեզ իմ ձեռքից»։ Եվ արքայազներ, այս խոսքերը լսելով, թագավորին ասաց. «Իսկապես, ես զարմանում եմ քեզ վրա ու քո անշրջահայեցողության վրա։ Մի՞թե դու քո աղջկա համար ինձանից լավ ամուսին ես ուզում։ Եվ մի՞թե դու տեսել ես մեկին, որ հոգով ինձանից ամուր, շնորհներով ավելի հարուստ և իշխանությամբ, զորքով ու օգնականներով ավելի հզոր լինի»։— «Ո՛ր, ալլահը վկա,— պատասխանեց թագավորը,— բայց ես կուզեի, ո՛վ երիտասարդ, որ դու նրա հետ նշանվես վկաների ներկայությամբ, և ես ամուսնացնեի քեզ նրա հետ, իսկ եթե ես քեզ ամուսնացնեմ նրա հետ ծածուկ, դու ինձ ու նրան կխայտառակես»։— «Դու լավ ասացիր,— պատասխանեց արքայազներ,— միայն թե, ո՛վ տրբա, եթե հավաքվեն քո ստրուկները, ծառաներն ու զորքերը և ինձ սպանեն, ինչպես դու ես ասում, դու ինքդ կխայտառակվես, և մարդիկ կսկսեն և՛ հավատալ քեզ, և՛ շահավատալ։ Եվ, իմ կարծիքով, դու պետք է վարվես այնպես, ո՛վ արքա, ինչպես կասեմ քեզ»։— «Խոսքդ ասա»,— ասաց թագավորը։ Եվ արքայազներ նրան ասաց. «Ահա թե ինչ կասեմ քեզ. կամ մենք իրար հետ կկռվենք մեն մենակ, և ով իր հակառակորդին սպանի, մոտ կլինի իշխանությանն ու ավելի մեծ իրավունք կունենա դրա վրա, կամ դու այս գիշեր ինձ հանգիստ կթողնես, իսկ երբ առավոտը բացվի, իմ դեմ դուրս կբերես քո զորքերն ու ծառաներիդ ջոկատները։ Ասա ինձ, որքա՞ն է նրանց թիվը»։— «Նրանք թվով բառասուն հազար են, հեծյալներ, բացի ինձ պատկանող ստրուկներից ու նրանց մերձավորներից, իսկ սրանց թիվն էլ նույնքան է»,— պատասխանեց թագավորը։ Եվ արքայազներ ասաց. «Երբ արշալույսը բացվի, նրանց ինձ մոտ բեր ու ասա. «Այս մարդը նշանում է իմ աղջկան այն պայմանով, որ ձեր բոլորի հետ կռվի, և նա պնդում է, որ կհաղթի ձեզ ու կնվաճի, և որ դուք նրա հետ գլուխ դնել չեք կարող»։ Եվ հետո թույլ տուր, որ ես կրո՞վեմ նրանց հետ, և եթե նրանք ինձ սպանեն, սա լավագույն ձևով կծածկի քո գաղտնիքն ու կպահպանի քո պատիվը, իսկ եթե ես նրանց հաղթեմ ու նվաճեմ, ապա ինձ նմանին թագավորը վերադարձնել կցանկանա»։ Եվ թագավորը, լսելով արքայազնի խոսքերը, հավանություն օվեց նրա մտքին ո՛ր ընդունեց նրա խորհուրդը, թեև նա տարօրինակ էր գտնում նրա ասածները և նրան սարսափեցնում էր արքայազնի մտադրությունը՝ մարտի ելնել այն ամբողջ զորքի դեմ, որ ինքը թվեց։

Եվ հետո նրանք նստեցին զրուցելով, իսկ դրանից հետո թագավորը կանչեց ներքինուն և հրամայեց նրան, որ նույն րոպեին ու ժամին գնա վեղիրի մոտ՝ բոլոր զորքերը հավաքելու հրամանով, և որ նրանք զինվեն ու ձի-հեծնեն։

Եվ ներքինին գնաց վեզիրի մոտ ու հաղորդեց նրան այն, ինչ որ հրամայել էր թագավորը, և այնժամ վեզիրը կանչեց զորքի պետերին ու տերութեան մեծամեծներին և հրամայեց նրանց ձի հեծնել ու դուրս գալ զինք ու զրահ կապած. և ահա այն, ինչ որ նրանք արեցին: Ինչ վերաբերում է թագավորին, ապա նա անընդհատ զրուցում էր արքայազնի հետ, որովհետև արքայազնի խոսակցությունը, խելքն ու գաստիրարակվածությունը դուր էին գալիս նրան:

Եվ մինչ նրանք խոսակցում էին, հանկարծ վրա հասավ առավոտը, և թագավորը ելավ ու գնաց իր գահին նստեց և հրամայեց իր զինվորներին ձի հեծնել: Նա արքայազնին հատկացրեց լավագույն ձիերից մի ձի ու հրամայեց, որ թամբեն ու լավագույն հեծելասարքով կապենպատրաստեն, բայց արքայազնը նրան ասաց. «Մ՛վ արքա, ես ձի չեմ նստի, մինչև չնայեմ զորքերին ու շտեմներն նրանց»:— «Քող այնպես լինի, ինչպես դու ուզում ես»,— պատասխանեց նրան թագավորը, և ապա գնաց. իսկ արքայազնը նրա առջևից էր գնում, ու նրանք հասան հրապարակ, և արքայազնը տեսավ զորքերն ու նրանց բազմությունը:

Եվ թագավորը գոչեց. «Մ՛վ մարդիկ, ինձ մոտ է եկել մի երիտասարդ, որը կնություն է ուզում, նշանում է իմ աղջկան, և ես նրանից գեղեցիկ ու սրտով հզոր և զայրույթի մեջ ահեղ ոչ ոքի չեմ տեսել երբեք: Նա ասում է, որ կհաղթահարի ու կհաղթի ձեզ մենակ ու հայտարարում է, որ եթե դուք հարյուր հազարի էլ հասնեիք, նրա ասելով, էլի քիչ կլինեիք: Երբ դուք կովեք նրա հետ, նիզակների սլաքների վրա առեք նրան ու սրերի սայրին. իսկապես նա մեծ գործ է ձեռնարկել»: Եվ հետո թագավորն ասաց արքայազնին. «Մ՛վ տղաս, ահա նրանք, արա, ինչ կուզես»,— իսկ երիտասարդը պատասխանեց. — «Մ՛վ արքա, դու արդարացի չես իմ նկատմամբ: Ինչպե՞ս պիտի կովեմ ես նրանց դեմ, երբ ես հետիոտն եմ, իսկ նրանք՝ հեծյալ»:— «Ես հրամայեցի քեզ ձի հեծնել, իսկ դու հրամարվեցիր: Ահա քեզ ձիեր, ընտրիր նրանցից ո՞րը կուզես»,— ասաց թագավորը: «Քո ձիերից ոչ մեկն ինձ դուր չի գալիս, և ես միայն այն ձին կհեծնեմ, որով եկել եմ»,— պատասխանեց արքայազնը: «Իսկ որտե՞ղ է քո ձին»,— հարցրեց թագավորը: Եվ արքայազնը պատասխանեց. — «Նա քո պալատի վրա է»:— «Իմ պալատի ո՞ր տեղում է»,— հարցրեց թագավորը, և արքայազնը պատասխանեց. «Տանիքի վրա»: Եվ, այդ լսելով, թագավորը բացականչեց. «Ահա քո մտքի խանդարման առաջին արտահայտությունը: Վա՛յ քեզ. ինչպե՞ս կարող է ձին տանիքի վրա լինել: Բայց հիմա կպարզվի, թե ուր է ճշմարտությունն ու սուտը՝ ուր»:

Եվ թագավորը դարձավ իր մերձավորներից մեկին ու ասաց. «Գնա իմ պալատ և ինչ որ տանիքի վրա գտնես, բե՛ր»։ Եվ մարդիկ զարմանում էին երիտասարդի խոսքերի վրա ու մեկմեկու ասում. «Ինչպե՞ս այդ ձին պիտի սանդուղքով իջնի տանիքից։ Իսկապես, դա այնպիսի մի բան է, որի նմանը մենք չենք լսել»։

Իսկ նա, որին թագավորն ուղարկել էր պալատ, բարձրացավ տանիք ու տեսավ, որ ձին այնտեղ կանգնած է, և նա դրանից լավ ձի չէր տեսել։ Եվ այդ մարդը մոտեցավ ձիուն ու սկսեց տնտղել նրան, և պարզվեց, որ նա սևափայտից է ու փղոսկրից։ Իսկ թագավորի մերձավորներից մեկը նույնպես բարձրացել էր նրա հետ, և, տեսնելով այդպիսի մի ձի, նրանք սկսեցին ծիծաղել ու ասացին. «Եվ սրա նման ձի ո՞ւր չես տեսել պիտի տեղի ունենա այն, ինչ որ ասել է երիտասարդը։ Մենք կարծում ենք, որ նա, անկասկած, խելագար է, բայց նրա վիճակը մեզ պարզ կդառնա և կարող է պատահել, որ նրա գործը մեծ լինի»։

Եվ հետո նրանք ձին բարձրացրին ու ձեռքերի վրա տարան, մինչև որ հասցրին թագավորի մոտ ու դրեցին նրա առջև, և մարդիկ հավաքվեցին ձիու մոտ, նայելով նրան ու սքանչանալով նրա գեղեցիկ տեսքով և նրա թամբի ու սանձի պերճուխամբ։ Եվ թագավորին նույնպես դուր եկավ ձին ու նա ծայրահեղորեն զարմացավ նրա տեսքից և հետո հարցրեց արքայազնին. «Ո՞վ երիտասարդ, սա՞ է քո ձին»։— «Այո, ո՞վ արքա, սա է իմ ձին, և դու շուտով նրա մեջ զարմանալի բան կտեսնես»,— պատասխանեց երիտասարդը։ Եվ թագավորը նրան ասաց. «Վերցրու ձիդ ու հեծիր»։— «Ես նրան կհեծնեմ այն ժամանակ միայն, երբ զինվորները նրանից հեռանան»,— ասաց երիտասարդը, և թագավորը կարգադրեց ձիու շուրջը կանգնած ռազմիկներին հեռանալ նրանից մի նետընկեցի չափ, և այնժամ երիտասարդն ասաց. «Ո՞վ արքա, ահա, ես կհեծնեմ իմ ձին ու կհարձակվեմ քո զորքերի վրա ու աջ ու ձախ կցրեմ նրանց և կստիպեմ, որ նրանց սիրտը խոցվի»։— «Արա՛, ինչ ուզում ես, և մի խնայիր նրանց. նրանք քեզ չեն խնայի»,— ասաց թագավորը։ Եվ արքայազնը դիմեց դեպի իր ձին ու հեծավ նրան, և ռազմիկները շարվեցին նրա դիմաց և մեկմեկու ասացին. «Երբ երիտասարդը շարքերի մեջ հայտնվի, մենք նրան նիզակների սլաքների վրա ու սրերի սայրին կբարձրացնենք»։ Եվ նրանցից մեկը բացականչեց. «Այլահը վկա, սա շարիք է։ Ինչպե՞ս պիտի մենք սպանենք այդ գեղեցկադեմ ու գեղակազմ երիտասարդին»։ Իսկ մեկ ուրիշն ասաց. «Այլահը վկա, դուք նրան կմոտենաք միայն մեծ գլխացավանքից հետո։ Երիտասարդն այդպիսի բան է

արել միայն նրա համար, որ գիտի իր հոգու խիզախութիւնն ու իր գերազանցութիւնը»:

Եվ երբ արքայազնը հեծավ իր ձին, դարձրեց վերասլաց պտուտակը, և բոլորը հայացքներն ուղղեցին նրան, որպեսզի տեսնեն, թե ինչ է ուզում անել նա: Եվ ձին հուզվեց ու դոփեց ու սկսեց ամենազարմանահրաշ շարժումներ անել, որ ձիերն են անում, և նրաներսը օդով լցվեց, իսկ հետո ձին բարձրացավ ու օդով դեպի վեր թռավ: Եվ երբ թագաւորը տեսավ, որ երիտասարդը բարձրացել ու դեպի վեր է թռչում, գոչեց իր գորբին. «Վա՛յ ձեզ, բռնեցեք նրան, քանի դեռ ձեզնից չի հեռացել»: Իսկ նրա վեզիրներն ու կուսակալներն ասացին, «Ո՛վ արքա, միթե որեէ մեկը կհասնի՞ թռչող հավքին: Սա մեծ կախարդ է, ուրիշ ոչինչ, որից քեզ ալլահը փրկեց: Փառաբանի՛ր մեծ ալլահին դրա ձեռքից փրկվելուդ համար»:

Եվ թագաւորը վերադարձով պալատ, իր տեսածը տեսնելուց հետո, իսկ պալատ մտնելով, գնաց իր աղջկա մոտ ու նրան պատմեց, թե ինչ պատահեց իրեն ու արքայազնին հրապարակում, և տեսավ, որ աղջիկը շատ է տխրում նրա համար ու նրանից բաժանվելու պատճառով: Իսկ հետո նա հիվանդացավ ու անկողին ընկավ: Եվ երբ հայրը տեսավ, որ նա այդ վիճակում է, իր կրծքին սեղմեց նրան ու համբուրեց աչքերի արանքն ու ասաց. «Ո՛վ աղջիկս, փառաբանի՛ր մեծ ալլահին ու շնորհակալ եղիր նրանից, որ նա մեզ ազատեց այդ շարանենդ կախարդից», — և նա սկսեց կրկնել նրան այն, ինչ որ տեսել էր, ու պատմել, թե ինչպե՞ս արքայազնը օդ բարձրացավ: Բայց արքայադուստրը ուշադրութիւն չդարձրեց հոր խոսքերին, և սաստկացան նրա լացն ու հաճախանքները, և ապա նա ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, ես ուտելիք չեմ ուտի ու խմելիք չեմ խմի, մինչև ալլահն ինձ նրա հետ չմիացնի»: Եվ աղջկա հորը՝ թագաւորին, մեծ հոգս պատեց այդ պատճառով, և իր աղջկա վիճակը ծանր էր իր համար, և սկսեց տխրել նրա համար, բայց տմեն անգամ, երբ նա քնքշանքով դիմում էր աղջկան, ավելի սաստկանում էր աղջկա սերը արքայազնի նկատմամբ:

Ահա թե ինչ կատարվեց թագաւորի ու արքայադուստր հետ: Ինչ վերաբերում է արքայազնին, ապա նա բարձրացավ օդ և մեն-մենակ մնաց ու սկսեց հիշել աղջկա գեղեցկութիւնն ու հմայքը: Եվ նա թագաւորի մերձավորներից իմացել էր այդ քաղաքի անունն ու թագաւորի անունը և նրա աղջկա անունը և այդ քաղաքը Սանա քաղաքն էր:

Եվ հետո արքայազնը արագացրեց ընթացքն ու մոտեցավ իր հոր քաղաքին ու մի պտույտ կատարեց քաղաքի վրա և դիմեց դեպի իր հոր

ապարանքը: Եւ իջավ տանիքին ու ձին թողեց այնտեղ և, իջնելով իր ծնողի մոտ, մտավ նրա մոտ ու տեսավ, որ նա տխուր է ու վշտահար՝ տղայից բաժանվելու պատճառով, Եվ երբ հայրը տեսավ նրան, ոտքի ելավ ու գրկեց ու իր կրծքին սեղմեց և մեծ ուրախությամբ ուրախացավ, իսկ հետո արքայազնը, նստելով հոր մոտ, նրան հարցրեց ձին սարքող իմաստունի մասին ու ասաց. «Ով հայրիկ, ի՞նչ է արել նրան բախտը»: Եվ հայրը նրան պատասխանեց.— «Թող ալլահը շօրհնի իմաստունին ու այն բոսկեն, երբ ես նրան տեսա: Չէ՞ որ նա էր իմ ու բո բաժանման պատճառը, և նա զնդանում ազատ է, զավակս, այն օրվանից, երբ դու մեր մոտից անհայտացար»:

Եվ արքայազնը հրամայեց աղատ արձակել իմաստունին ու դուրս հանել նրան բանտից ու իր մոտ բերել, և երբ իմաստունը ներկայացավ նրան, արքայազնը պարգևատրեց նրան բարեհաճության զգեստով ու մեծ սիրալիրություն ցուցաբերեց նրա նկատմամբ, միայն թե թագավորը նրան շամուսնացրեց իր աղջկա հետ: Եվ իմաստունը զայրացավ մեծ զայրույթով ու ամսասաց իր արածի համար ու հասկացավ, որ արքայազնը իմացել է ձիու գաղտնիքը ու նրան վարելու եղանակը:

Իսկ հետո արքան իր որդուն ասաց.— «Իմ կարծիքով, ամենալավն այն է, որ դու շմոտենաս այդ ձիուն և այսօրվանից էլ երբեք չհեծնես նրան, քանի որ դու չգիտես նրա հատկությունն ու կարող ես խաբված լինել նրա նկատմամբ»: Իսկ արքայազնը պատմեց իր հորն այն, ինչ որ եղել էր իր ու այն քաղաքի տիրոջ՝ թագավորի, աղջկա միջև, և ինչ որ տեղի էր ունեցել իր ու նրա հոր միջև, և հայրն ասաց.— «Եթե թագավորն ուզենար սպանել քեզ, նա, անշուշտ, քեզ սպանած կլիներ, բայց բո կյանքի ժամկետին երկարացում է վիճակվել»:

Իսկ հետո արքայազնի մեջ բորբոքվեց Սանայի թագավորի աղջկա սերը, և նա մոտեցավ ձիուն ու հեծավ նրան ու դարձրեց վերասլաց պտուտակը, և ձին նրա հետ սլացավ օդով ու բարձրացավ մինչև երկրնրի ամպերը: Իսկ երբ առավոտը բացվեց, երիտասարդի հայրը որոնեց նրան ու չգտավ և վշտացած բարձրացավ տանիք ու չգտավ որդուն, սրն օդ էր բարձրացել ու գնալով ավելի վեր էր բարձրանում:

Եվ թագավորը վշտացավ որդուց բաժանվելու համար ու սկսեց ամեն կերպ զղջալ, որ ձին շէր վերցրել ու շէր թաքցրել նրա գաղտնիքը և ինքն իրեն մտածեց. «Ալլահը վկա, եթե իմ որդին ինձ մոտ վերադառնա, ես այդ ձին շամ պահի, որպեսզի իմ սիրտը հանգիստ լինի որդուս համար»: Եվ նա վերադարձավ լացի ու հառաչանքի գիրկը: Եվ ահա այն, ինչ եղավ նրան:

Ինչ վերաբերում է նրա որդուն, ապա նա օղով այնքան թռավ, մինչև հասավ Սանա քաղաքի վերեր: Նա իջավ այնտեղ, ուր եղել էր առաջին անգամ, ու թաքուն գնաց, մինչև որ հասավ արքայադստեր սենյակը, բայց ո՛չ աղջկան գտավ, ո՛չ նրա ստրկուհիներին, ո՛չ էլ այն ներքինուն, որը պահպանում էր նրան, և նրա համար ծանր էր այդ: Եվ հետո նա սկսեց ման գալ պալատում, արքայադստերը որոնելով, և նրան գտավ մի ուրիշ սենյակում՝ անկողնու մեջ, և նրան ստրկուհիներն ու դայակներն էին շրջապատել: Եվ արքայազնը մտավ նրանց մոտ ու ողջունեց նրանց, և նրա խոսքերը լսելով՝ արքայադուստրը վեր կացավ ու գրկեց նրան և սկսեց համբուրել աչքերի արտաքին ու կրծքին սեղմել: — «Մ՛վ տիրուհի, — ասաց արքայազնը նրան, — դու ստիպեցիր ինձ տխրել այս ամբողջ ժամանակ»: Իսկ արքայադուստրը բացականչեց. — «Իսկ ես ինձ տխրել ստիպել, և եթե քո բացակայությունը երկար տևեր, ես անկասկած, կմեռնեի»: — «Մ՛վ տիրուհի, — հարցրեց արքայազնը, — ինչպե՞ս ես նայում այն բանին, ինչ որ տեղի է ունեցել իմ ու բո՞ հոր միջև, և ինչ որ նա արել է ինձ: Եթե քո սերը շիներ, ո՛վ մարդկանց դայակդուրսուն, ես, անշուշտ, նրան կսպանեի ու նայողների համար խրատ կզարձնեի: Բայց, ինչպես քեզ եմ սիրում, այնպես էլ նրան եմ սիրում՝ քեզ համար»: — «Ինչպե՞ս դու կարողացար հեռանալ ինձանից, և մի՞թե առանց քեզ կյանքը հաճելի է ինձ», — ասաց աղջիկը: Եվ արքայազնը նրան հարցրեց. — «Կլսե՞ս ինձ և կանսա՞ս իմ խոսքերին»: — «Ասա, ինչ որ ուզում ես, ես կհամաձայնեմ այն ամենին, ինչի որ կոչես ինձ, և ոչ մի բանում քեզ չեմ հակառակի», — պատասխանեց արքայադուստրը: «Գնանք ինձ հետ իմ երկիրն ու թագավորությունը», — ասաց այնժամ արքայազնը, և, արքայադուստրը պատասխանեց. — «Միրով ու հաճույքով»:

Եվ արքայազնը, նրա խոսքերը լսելով, խիստ ուրախացավ ու, արքայադստեր ձեռքը բռնելով, ստիպեց խոստանալ այդ, մեծ ալլահի անունով երդվելով: Իսկ դրանից հետո նրա հետ վերև՝ պալատի տանիքը բարձրացավ և, իր ձիուն հեծնելով, աղջկան թարթին նստեցրեց, սեղմեց իրեն ու ամուր կապեց, ապա դարձրեց վերասլաց պտուտակը, որ ձիու թիակի վրա էր գտնվում, և ձին նրանց հետ օդ բարձրացավ: Եվ ստրկուհիները բղավեցին ու տեղեկացրին թագավորին՝ աղջկա հորը, ու նրա մորը, և նրանք շտապ բարձրացան պալատի տանիքը: Եվ թագավորը հայացքը երկինք ուղղեց ու տեսավ սևափայտե ձին, որ նրանց հետ սլանում էր օդով, ու տազնապահար եղավ, ու մեծացավ նրա տազնապար

Եվ նա գոչեց ու ասաց. «Ո՛վ արքայազն, խնդրում եմ քեզ, հանուն ավաճի, գթա ինձ ու գթա իմ կնոջը և մի բաժանիր մեզ մեր աղջկանից»։ Բայց արքայազնը չպատասխանեց նրան։ Իսկ հետո արքայազնը մտածեց, որ աղջիկը, գուցե, զղջում է մորից ու հորից բաժանվելու համար, ու նրան հարցրեց.— «Ո՛վ ժամանակի գայթակղութուն, շե՞ս ուզում, որ ես քեզ քո հորն ու մորը վերադարձնեմ»։ Բայց նա պատասխանեց. «Ո՛վ տեր, ավաճը վկա, շեմ ուզում այդ։ Ես միայն ուզում եմ քեզ հետ լինել, ուր էլ որ լինես, որովհետև քո սերն ինձ ամեն բան մոռացնել է սալիս, նույնիսկ՝ հորս ու մորս»։ Եվ արքայազնը, լսելով նրա խոսքերը, սաստիկ ուրախացավ։

Եվ նա ձին վարեց դանդաղ ընթացքով, որպեսզի շանհանգստացնի աղջկան, ու թռավ նրա հետ այնքան ժամանակ, մինչև որ մի կանաչ մարգագետին տեսավ, որտեղ հոսող ջրով առվակ կար։

Եվ արքայազնը իջավ այնտեղ, և նրանք կերան ու խմեցին, իսկ հետո արքայազնը հեծավ ձին ու աղջկան թարթին նստեցրեց, պարանով ամուր կապելով նրան, վախենալով նրա ընկնելուց, ու թռավ նրա հետ և այնքան ժամանակ սլացավ օդով, մինչև որ իր հոր քաղաքը հասավ, և այնժամ նրա ուրախութունը մեծացավ։ Իսկ հետո նա կամեցավ աղջրկան ցույց տալ իր իշխանության օրրանը և իր հոր թագավորութունն ու տեղյակ դարձնել նրան, որ իր հոր թագավորութունը ավելի մեծ է, քան նրա հոր թագավորութունը, և, իջնելով մի պարտեզի մեջ, որտեղ իր հայրը երբեմն զբոսնում էր, նա աղջկան տարավ իր համար պատրաստված տաղավարը և, սևափայտե ձին այդ տաղավարի դռան մոտ թողնելով, աղջկան ասաց, որ հսկի նրան. «Այստեղ նստիր, մինչև իմ սուրհանդակը քեզ մոտ գա, ես հորս մոտ եմ գնում, որպեսզի պալատը նախապատրաստեմ քեզ համար ու ցուցադրեմ քեզ իմ իշխանութունը»,— ասաց արքայազնը։ Եվ աղջիկն ուրախացավ, այդ խոսքերը լսելով նրանից, ու ասաց. «Արա՛, ինչ ուզում ես»։ Եվ նա գլխի ընկավ, որ քաղաք է մտնելու պերճաշուք կերպով ու պատվով, ինչպես վայել է իր նմանին։

Եվ արքայազնը նրան թողեց ու գնաց, մինչև որ քաղաք հասավ ու հոր մոտ մտավ, և, նրա հայրը, տեսնելով նրան, ուրախացավ ու ընդունաջ գնաց նրան և ասաց.— «Բարի գալուստ»։ Եվ արքայազնը ասաց իր հորը. «Իմացած լինես, որ ես բերել եմ այն արքայադստերը, որի մասին քեզ պատմել էի, և նրան քաղաքից դուրս գտնվող մի պարտեզում եմ թողել ու եկել եմ քեզ նրա մասին հայտնելու, որպեսզի դու հավաքես մերձավորներին ու ընդառաջ գնաս նրան և ցուցադրես նրան

քո իշխանութիւնն ու զորքերն ու թիկնապահներիդ»: Եվ թագավորը պատասխանեց. «Միրով ու հաճույքով», — իսկ հետո, նույն ժամին ուր պեհին, նա բնակիչներին հրամայեց զարդարել քաղաքը զեղեցիկ զարդարանքներով ու զգեստներով ու այն ամենով, ինչ-որ պահվում էր արքայական գանձարանում, և արքայադստեր համար կանաչ, կարմիր ու դեղին դիպակով զարդարված սենյակ պատրաստել տվեց ու այդ բնակարանում հնդիկ, հոռոմ և հաբեշ ստրկուհիներ նստեցրեց ու զարմանահրաշ գանձեր զետեղեց:

Իսկ հետո արքայազնը թողեց այդ բնակարանն ու նրանց, ովքեր այնտեղ էին, ու բոլորից շուտ պարտեզ գնաց ու մտաւ տաղավար, որտեղ թողել էր արքայադստերը, և սկսեց որոնել նրան, բայց չգտավ նրան ու չգտավ ձին, Եվ նա սկսեց իր երեսը ծեծել ու պատառոտեց իր հագուստը և սկսեց մտամոլոր շրջել այգում, բայց հետո սթափվեց ու ինքն իրեն ասաց. «Ինչպե՞ս նա իմացավ այն ձիու գաղտնիքը, երբ ես նրան շէի հայտնել ոչ մի բան: Գուցե, պարսիկ իմաստունը, որ սարքել է ձին, հարձակվել է նրա վրա ու վերցրել նրան ի հատուցում այն բանի, ինչ որ հայրս արել է նրան»:

Եվ արքայազնը կանչեց պարտեզի պահակներին ու նրանց հարցրեց, թե ով է անցել իրենց մոտով, ու ասաց. «Տեսե՞լ եք, արդյոք, որևէ մեկին, որը ձեր մոտով անցած ու այս պարտեզը մտած լինի»: Եվ պահակները պատասխանեցին. «Մենք ոչ ոքի չենք տեսել, որ այս պարտեզը մտնի, բացի պարսիկ իմաստունից, նա եկել էր օգտակար խոտեր հավաքելու»: Եվ արքայազնը, նրանց ասածը լսելով, համոզվեց, որ աղջկան հենց այդ իմաստունն է փախցրել: Իսկ նախասահմանված հրամանի համաձայն այնպես եղավ, որ երբ արքայազնը աղջկան պարտեզի տաղավարում թողեց ու գնաց իր հոր ապարանքը, որպեսզի նրան նախապատրաստի, պարսիկ իմաստունը սլարտեզ մտավ, կամենալով մի քիչ օգտակար խոտեր հավաքել, և մուշկի բուրմունք զգաց ու անուշահոտութիւններ, որոնցով տոգորված էր այդ վայրը, իսկ այդ անուշահոտութիւնները գալիս էին արքայազուստրից: Եվ իմաստունը գնաց այն ուղղութեամբ, որտեղից գալիս էր այդ բուրմունքը, մինչև որ այն տաղավարի մոտ հասավ ու տեսավ, որ իր ձեռքով պատրաստած ձին կանգնած է տաղավարի դռան մոտ: Երբ իմաստունը ձին տեսավ, նրա սիրտն ուրախութեամբ ու հրճվանքով լցվեց, որովհետև նա շատ էր ափսոսում, որ ձին իր ձեռքից գնացել է: Եվ նա մտաբացավ ձիուն ու ստուգեց նրա բոլոր մասերը, ու պարզվեց, որ դրանք անվնաս են: Եվ իմաստունն ուզում էր նստել ձին ու թռչել, բայց ինքն իրեն ասաց. «Անպայ-

ման պիտի տեսնեմ, թե ինչ է բերել արքայազնը ու ձիու հետ այստեղ թողել»: Եվ նա տաղավար մտավ ու տեսավ նստած արքայադստերը, և սա նման էր պարզ երկնքում փայլող արևի: Եվ նրան նկատելով, իմաստունը հասկացավ, որ նա բարձրաստիճան աղջիկ է, և որ արքայազնը նրան վերցրել ու բերել է ձիով և թողել այդ տաղավարում, իսկ ինքը քաղաք գնացել, որպեսզի մերձավորներին բերի ու նրան քաղաք տանի հարգանքով ու պատվով: Եվ այնժամ իմաստունը մտավ աղջկա մոտ ու համբուրեց գետինը նրա առջև, և աղջիկն աչքերը բարձրացրեց ու նայեց նրան և տեսավ, որ նա շատ այլանդակ է դեմքով ու նրա կերպարանքը գարշելի է: «Ո՞վ ես դու»,— հարցրեց նրան աղջիկը: Եվ իմաստունը պատասխանեց. «Ո՞վ տիրուհի, ես արքայազնի սուրհանդակն եմ: Նա ինձ քեզ մոտ ուղարկեց ու հրամայեց, որ քեզ մի ուրիշ՝ քաղաքին մոտ, այգի տանեմ»: Եվ աղջիկը, լսելով նրանից այդ խոսքերը, ասաց. «Իսկ ո՞ւր է արքայազնը»: Եվ իմաստունը պատասխանեց. «Նա քաղաքում է՝ իր հոր մոտ, ու հիմա քեզ մոտ կգա փառահեղ շքախմբով»:— «Ո՞վ այսինչ,— ասաց նրան աղջիկը,— միթե արքայազնը քեզնից բացի ուրիշ ոչ ոքի շքտա՞վ ինձ մոտ ուղարկելու համար»: Եվ իմաստունը ծիծաղեց նրա խոսքերի վրա ու ասաց. «Ո՞վ տիրուհի, թող իմ դեմքի այլանդակությունն ու իմ գարշելի տեսքը քեզ շնորհեցնեն: Եթե դու ինձանից ստանայիր այն, ինչ ստացել է արքայազնը, դու, անշուշտ, կգովեիր իմ գործը: Արքայազնը ինձ է ընտրել քեզ մոտ ուղարկելու համար իմ այլանդակ տեսքի ու սարսափազդու արտաքինի պատճառով, որովհետև նա խանդում է քեզ ու սիրում, ապա թե ոչ, նա այնքան գերիներ, ստրուկներ, ծառաներ, ներքինիներ ու սպասավորներ ունի, որ հաշվել անկարելի է»:

Եվ երբ աղջիկը լսեց իմաստունի խոսքերը, դրանք խելքի մոտ համարեց, ու նա հավատաց իմաստունին և վեր կացավ ու իր ձեռքը իմաստունի ձեռքին տվեց և ասաց. «Ո՞վ հայրիկ, ի՞նչ ես բերել քեզ հետ ինձ համար, որ ես նստել կարողանամ»: Եվ իմաստունը նրան պատասխանեց. «Ո՞վ տիրուհի, այն ձին, որով ժամանել ես Գու նրանով կդնաս»:— «Ես մենակ չեմ կարող գնալ նրանով»,— ասաց աղջիկը: Եվ երբ իմաստունը նրանից լսեց այդ, ժպտաց ու հասկացավ, որ նրան բռնել է: «Ես ինքս քեզ հետ կնստեմ»,— ասաց նա աղջկան, ու հետո նստեց և աղջրկան իր թարքին նստեցրեց ու սեղմեց իրեն ու պարանով կապեց, իսկ աղջիկը շփտեց, թե նա ինչ է ուզում անել իրեն:

Եվ հետո իմաստունը շարժեց վերասլաց պտուտակը, և ձիու ներսը օդով լցվեց, ու նա շարժվեց ու ցնցվեց և գեպի վեր բարձրացավ ու

այնքան ժամանակ թռավ, մինչև որ քաղաքը ծածկվեց աշփեց:

Եվ աղջիկն ասաց. «Է՛յ, դու, ո՞ւր է այն, ինչ որ ասում էիր արքայազնի մասին, երբ պնդում էիր, թե նա է քեզ ուղարկել ինձ մոտ»: Իսկ իմաստունը պատասխանեց.— «Թող ալլահը արքայազնին այլանդակի: Նա զգվելի է ու շար»:— «Վա՛յ քեզ,— բացականչեց արքայագուստրը,— ինչպե՞ս ես դու հակառակում քո տիրոջ հրամանին այն բանում, ինչ որ նա քեզ կարգադրել է»:— «Նա իմ տերը չէ,— պատասխանեց իմաստունը,— դու գիտե՞ս, թե ես ով եմ»:— «Ո՛չ, ես քո մասին գիտեմ միայն այն, ինչ որ դու քո մասին հայտնել ես»,— պատասխանեց արքայադուստրը: Եվ իմաստունը բացականչեց. «Իմ պատմությունը միայն խորամանկություն էր քո և արքայազնի նկատմամբ: Ես ամբողջ կյանքումս մորմոքվել եմ այս ձիու համար, որ քո տակ է, սա իմ ստեղծագործությունն է, բայց արքայազնը տիրացավ սրան, իսկ հիմա ես ձեռք բերեցի այն ու քեզ նույնպես ու վառեցի արքայազնի սիրտը, ինչպես նա է վառել իմ սիրտը, և այսուհետև նա երբեք իրավունք չի ունենա ձիու վրա: Բայց ամոքիր իմ սիրտն ու զովացրու աշփես, ես քեզ համար ավելի օգտակար եմ, քան նա»:

Եվ արքայագուստրը, լսելով նրա խոսքերը, սկսեց ծեծել իր երեսներն ու բղավեց. «Վա՛յ ինձ, իմ սիրածն ինձ չհասավ, և ես էլ իմ հոր ու մոր մոտ չմնացի»: Եվ նա դառնագին լաց եղավ իրեն պատահածի համար, իսկ իմաստունը անդադար սլանում էր նրա հետ դեպի հոռումների երկիրը այնքան ժամանակ, մինչև որ ցած իջավ առվակներով ու ծառերով հարուստ մի կանաչ մարգագետնում: Եվ այդ մարգագետինը մոտ էր քաղաքին, իսկ քաղաքում մի բարձրագահ թագավոր կար:

Եվ այնպես պատահեց, որ այդ քաղաքի թագավորն այդ օրը դուրս եկավ, որպեսզի որսի գնա ու զբոսնի, ու անցնում էր այն մարգագետնի մոտով, և տեսավ, որ իմաստունը կանգնել է այնտեղ, իսկ ձին ու աղջիկն էլ կանգնած են նրա կողքին: Եվ իմաստունը դեռ չէր սթափվել, երբ վրա պրծան թագավորի ստրուկներն ու բռնեցին նրան և աղջրկան ու ձիուն ու բոլորին թագավորի մոտ տարան, և երբ թագավորը տեսավ իմաստունի այլանդակ արտաքինը ու նրա գարշելի կերպարանքը, և տեսավ աղջկա գեղեցկութունն ու հմայքը, աղջկան ասաց. «Ո՞վ տիրուհի, ի՞նչ կապ կա այս ծերուկի ու քո միջև»: Եվ իմաստունը շտապեց պատասխանել ու ասաց.— «Սա իմ կինն է ու հորեղբորս աղջիկը»: Բայց աղջիկը, լսելով այդ խոսքերը, նրան խաբեբա անվանեց ու ասաց. «Ո՞վ արքա, ալլահը վկա, ես նրան շեմ ճանաչում, ու նա իմ ամուսինը չէ, այլ վերցրել է ինձ բռնի, խորամանկությամբ»: Եվ երբ թագավորը

լսեց այդ խոսքերը, հրամայեց ծեծել իմաստունին, և նրան այնպես ծեծեցին, որ մեռնելուց հազիվ պրծավ, իսկ հետո թագավորը հրամայեց քաղաք տանել նրան ու բանտ նետել, և այդպես էլ վարվեցին նրա հետ: Եվ ապա թագավորը նրանից խլեց աղջկան ու ձին, բայց նա չգիտեր, թե ինչ բան է այդ ձին և ինչպես է նա շարժվում:

Ահա թե ինչ եղավ իմաստունի և աղջկա հետ: Ինչ վերաբերում է թագավորի տղային, ապա նա ճանապարհորդության զգեստը հագավ ու վերցրեց այնքան փող, ինչքան իրեն հարկավոր էր, ու ճանապարհ թևակավ վատթարագույն վիճակում: Նա արագ գնում էր՝ հետքերը գրտնելով ու որոնելով աղջկան ու երկրից երկիր էր անցնում ու քաղաքից քաղաք ու հարցնում էր սևափայտե ձիու մասին: Ամեն ոք ապշած էր մնում նրա վրա ու զարմանալի համարում նրա խոսքերը:

Եվ այդ վիճակում արքայազնն անցկացրեց որոշ ժամանակ, բայց չնայած բազմաթիվ հարցումներին ու փնտրտութիւն, աղջկա ու ձիու հետքի վրա չընկավ: Իսկ հետո նա գնաց աղջկա հոր քաղաքն ու նրա մասին հարցրեց այնտեղ, բայց լուր չառավ նրա մասին ու աղջկա հորը վշտացած գտավ՝ նրա անհետանալու պատճառով: Եվ արքայազնը ձեռ դարձավ և ուղևորվեց հոռոմների երկիրն ու սկսեց այնտեղ որոնել աղջկան՝ ձիու հետ, ու հարցուփորձ անել նրա մասին:

Եվ այնպես պատահեց, որ նա կանգ առավ մի իջևանում ու տեսավ մի խումբ առևտրականների, որոնք նստել ու խոսում էին, և նրանց մատիկ նստեց ու լսեց, որ նրանցից մեկն ասում է. «Ո՞վ իմ բարեկամներ, ես հրաշքների հրաշքն եմ տեսել»:— «Իսկ ի՞նչ բան է դա»,— արցրին նրան, և նա ասաց. «Ես մի երկրում էի, այսինչ քաղաքում (և նա հիշատակեց այն քաղաքի անունը, որտեղ գտնվում էր աղջիկը) ու լսեցի, թե ինչպես նրա բնակիչները զարմանահրաշ բան էին պատմում և ահա թե ինչ. օրերից մի օր քաղաքի թագավորը դուրս է գալիս որսի ու ձկնորսության՝ մերձավորների ու մեծամեծների բազմության հետ, և երբ նրանք հասնում են հարթավայր ու անցնում մարգագետնի մոտով, այնտեղ կանգնած մի մարդ են տեսնում, որի կողքին մի կին էր նստած, ու նրանց հետ սևափայտե ձի կար: Ինչ վերաբերում է տղամարդուն, տղա նա այլանդակ էր տեսքով և սարսափազդու արտաքին ունեւր, իսկ տղջիկը գեղեցիկ էր ու հմայիչ, պայծառ ու կատարյալ, բարեկազմ ու ներդաշնակ: Իսկ սևափայտե ձին՝ մի հրա՛շք, և ձին տեսնողները դրանից ավելի լավ պատրաստված ու գեղեցիկ ձի չեն տեսել»:— «Եվ ի՞նչ արեց թագավորը նրանց»,— հարցրին ներկաները, և վաճառականն ասաց. «Տղամարդուն թագավորը բռնել է ու հարցրել աղջկա մասին, ու նա

սկսել է պնդել, թե դա իր կինն է ու հորեզբոր աղջիկը, բայց աղջիկը նրա խոսքերը սուտ է հայտարարել, և թագավորը աղջկան առել է նրանից ու հրամայել է ծեծել նրան ու բանտ նետել: Ինչ վերաբերում է սեափայտե ձիուն, ապա ես նրա մասին ոչինչ չգիտեմ»:

Եվ երբ արքայազներ լսեց վաճառականի խոսքերը, մոտեցավ նրան ու սկսեց զգուշորեն ու կամացուկ հարցուփորձ անել, և նա ասաց այն քաղաքի անունը ու նրա թագավորի անունը: Եվ, իմանալով քաղաքի անունն ու նրա թագավորի անունը, արքայազներ գիշերն անցկացրեց ուղախուժյան մեջ, իսկ երբ առավոտը բացվեց, նա դուրս եկավ ու ճանապարհ ընկավ և այնքան գնաց, մինչև որ այն քաղաքը հասավ: Բայց երբ ուղում էր այնտեղ մտնել, դարպասը հսկողները բռնեցին նրան և ցանկացան թագավորի մոտ տանել, որպեսզի նա հարցնի երիտասարդի հանգամանքների մասին, այդ քաղաքը նրա գալու պատճառն ու այն, թե ինչ արհեստ գիտի: Իսկ թագավորը սովորութուն ուներ օտարականներին հարցնել նրանց հանգամանքների ու արհեստի մասին:

Բայց արքայազնն այդ քաղաքը եկավ երեկոյան պահին, և դա այնպիսի ժամանակ էր, երբ թագավորի մոտ մտնել կամ նրա հետ խորհրդակցել չէր կարելի, և դարպասը հսկողները նրան վերցրին ու բանտ տարան, որ այնտեղ տեղավորեն: Եվ երբ բանտապահները տեսան արքայազնի գեղեցկությունն ու նրա հմայքը, նրանց համար հեշտ բան չթվաց նրան զնդան նետելը, և նստեցրին նրան իրենց մոտ, բանտից դուրս: Եվ երբ նրանց ուտելիք բերեցին, արքայազնը կուշտ կերավ նրանց հետ, իսկ ուտելը վերջացնելով, նրանք սկսեցին զրուցել, և բանտապահները դիմեցին արքայազնին ու հարցրին. — «Ո՞ր երկրից ես դու»: — «Ես Ֆարսի¹ երկրից եմ, Խոսրովների երկրից», — պատասխանեց արքայազնը: Եվ բանտապահները, լսելով նրա խոսքերը, ծիծաղեցին, և նրանցից մեկն ասաց. «Ո՞վ խոսրովական, ես մարդկանց խոսքեր եմ լսել ու նրանց պատմությունները և գիտել եմ նրանց գործերը, բայց ավելի խաբերա ոչ մի մարդ չեմ տեսել, քան այն խոսրովականը, որ մեր բանտում է»: — «Իսկ ես արտաքինով նրանից ավելի այլանդակ ու ավելի զգվելի կերպարանքով ոչ ոքի չեմ տեսել», — ասաց մի ուրիշը: «Նրա խաբեությունից ի՞նչ է հայտնի ձեզ», — հարցրեց արքայազնը: Եվ բանտապահներն ասացին. — «Նա ասում է, թե ինքն իմաստուն է: Թագավորը որսի գնալու ժամանակ նրան տեսել է ճանապարհին, և նրա հետ եղել է շտեմնված գեղեցկությամբ, հմայքով, փայլով ու կատարելությամբ

1 Ֆարսի երկիր — Իրան:

մի կին, բարեկազմ ու ներդաշնակ, և նրանց հետ եղել է նաև սևափայտե մի ձի, ու ես երբեք զրանից լավ ձի չեմ տեսել: Ինչ վերաբերում է աղջկան, ապա նա թագավորի մոտ է, և թագավորը սիրում է նրան, միայն թե այդ կինը գիվահար է, և եթե այն մարդն իմաստուն լիներ, ինչպես պնդում է, նրան, անշուշտ, կբուժեր: Թագավորը ջանասիրաբար բուժում է նրան ու նրա նպատակն է՝ բուժել նրան այն բանից, ինչ որ պատահել է: Ինչ վերաբերում է սևափայտե ձիուն, ապա նա թագավորի գանձարանում է: Իսկ այլանդակ տեսքով այն մարդը, որ աղջկա հետ է եղել, մեզ մոտ՝ բանտում է, և երբ գիշերն իջնում է, նա լալիս է ու հառաչում, իր մասին խոսելով, և մեզ քնել չի թողնում»: Եվ բանտի պաշտոնյաներն արքայազնին պատմեցին պարսիկ իմաստունի մասին, որն իրենց բանտումն էր, և այն, թե նա ինչպես է լալիս ու հառաչում: Եվ արքայազնի խելքը մտավ՝ մի ծրագիր մտածել, որով իր նպատակին հասնել կարողանար: Եվ երբ դռնապաններն ուզեցին քնել, նրանք արքայազնին բանտ տարան ու դուռը նրա հետևից փակեցին, և նա լսեց, որ իմաստունը լաց է լինում ու տրտնջում իր մասին ու պարսկերեն է ասում իր տրտունջները. «Ամո՞թ ինձ նրա համար, ինչ որ ես իմ ու արքայազնի գլխին բերեցի, և նրա համար, ինչ որ արեցի աղջկան, երբ նրան շթողեցի, բայց ցանկացածիս էլ չհասաւ: Եվ այս բոլորը՝ այն պատճառով, որ ես չար բան մտածեցի: Ես ինձ համար այն էի որոնում, որին արժանի չէի, և ինչ որ վայել չէ ինձ նմանին, իսկ ով փնտրում է այն, ինչ որ իրեն վայել չէ, նա այնպիսի տեղ է ընկնում, որտեղ ընկել եմ ես»:

Եվ երբ արքայազնը լսեց պարսիկի խոսքերը, նրա հետ պարսկերեն խոսեց ու ասաց. «Մինչև ե՞րբ է տևելու այդ լացն ու ոռնոցը: Հետաքրքիր է՝ քեզ ի՞նչ է պատահել, որ ուրիշին չի պատահել»: Եվ պարսիկը, լսելով արքայազնի խոսքերը, համակրանք զգաց նրա նկատմամբ ու սկսեց նրան զանգատվել իր դուռթյունից և այն նեղություններից, որ ինքը կրել է: Իսկ առավոտյան դռնապանները վերցրին արքայազնին ու իրենց թագավորի մոտ տարան ու հայտնեցին նրան, որ արքայազնը կրիկ քաղաք է եկել այնպիսի ժամանակ, երբ թագավորի մոտ մտնել չէր կարելի:

Եվ թագավորն սկսեց հարցուփորձ անել արքայազնին ու նրան ասաց. «Ո՞ր երկրից ես գու, ի՞նչ է քո անունը, ի՞նչ արհեստ ունես և ինչո՞ւ ես այս քաղաքը եկել»: Եվ արքայազնը պատասխանեց. «Ինչ վերաբերում է իմ անվանը, ապա այն պարսկերեն խարջե է, իսկ իմ եր-

կիրը Ֆարս երկիրն է, և ես գիտության մարդ եմ ու մասնավորապես գիտեմ բժշկության գիտությունը: Ես բուժում եմ հիվանդներին ու դիվահարներին և շրջում եմ զանազան երկրներ ու քաղաքներ, որ իմ գիտեցածից ավելի գիտելիքներ ձեռք բերեմ, ու երբ հիվանդ եմ տեսնում, բուժում եմ նրան: Ահա իմ արհեստը»: Եվ, արքայազնի խոսքերը լսելով, թագավորը խիստ ուրախացավ ու բացականչեց. «Ո՛վ արժանապատիվ իմաստուն, դու մեզ մոտ ես հայտնվել այն պահին, երբ մենք քո կարիքն ենք զգում»: Եվ նա պատմեց աղջկան պատահած դեպքն ու ասաց. — «Եթե դու բուժես նրան ու ազատես գիվահարությունից, ինձանից կստանաս այն ամենը, ինչ որ ուզես»: Եվ երբ արքայազնը լսեց թագավորի խոսքերը, ասաց. «Թող ալլահը փառավորի թագավորին: Նկարագրիր ինձ այն ամենը, ինչ նկատելի էս նրա մեջ որպես գիվահարության նշան ու պատմիր, թե քանի օր առաջ է նրան համակել այդ գիվահարությունը և ինչպես ես դու բռնել նրան այն ձիու և իմաստունի հետ»: Եվ թագավորը պատմեց նրան այդ գործի մասին սկզբից մինչև վերջ ու հետո ասաց. «Իմաստունը բանտում է»: Իսկ արքայազնը հարցրեց. «Ո՛վ բարեբաստիկ արքա, իսկ ի՞նչ ես արել այն ձիւն, որ աղջկան հետ էր»: — «Ո՛վ երիտասարդ, — պատասխանեց թագավորը, — նա մինչև հիմա պահված է իմ սենյակներից մեկում»: Եվ արքայազնը ինքն իրեն ասաց. «Ամենից լավը, իմ կարծիքով, այն է, որ նայեմ ձիւն ու ամենից առաջ զննեմ նրան: Եթե նա անվնաս է ու ոչինչ չի պատահել նրան, այնժամ ինչ որ ուզում եմ, զլուխ եկած է. իսկ եթե տեսնեմ, որ նրա շարժումները դադարել են, կմտածեմ մի խորամանկություն, որպեսզի ինձ ազատեմ»:

Եվ հետո նա դիմեց թագավորին ու ասաց. «Ո՛վ արքա, ես պետք է տեսնեմ հիշատակածդ ձիւն, գուցե, նրա մեջ գտնեմ որեէ բան, որն ինձ օգնի աղջկան բուժել»: — «Միրով ու հաճությամբ», — պատասխանեց թագավորը, և հետո նա վեր կացավ ու, արքայազնի ձեռքը բռնելով, նրան ձիու մոտ տարավ: Եվ արքայազնը սկսեց ձիու շուրջը պտույտ գալ ու ստուգել նրան, զննելով, թե ինչ վիճակում է, ու տեսավ, որ ձիւն անվնաս է, ու նրան ոչինչ չի պատահել: Եվ այնժամ արքայազնը խիստ ուրախացավ ու բացականչեց. «Թող ալլահը փառավորի թագավորին: Ես ուզում եմ աղջկա մոտ մտնել ու տեսնել, թե ի՞նչ է պատահել նրան, ու ես կաղերսեմ ալլահին և հույս ունեմ, որ բուժումն իմ ձեռքով կլինի՝ այս ձիու օգնությամբ, եթե մեծ ալլահը կամենա», — և ապա նա կարգադրեց, որ ձիւն լավ պահեն:

Եվ թագավորը նրա հետ մտավ այն սենյակը, որտեղ աղջիկն էր, և արքայազնը, մտնելով նրա մոտ, տեսավ, որ նա թփրտում է ու ընկնում, ինչպես սովորաբար, բայց նա դիվահար չէր և այդ նրա համար էր անուժ, որ ոչ ոք իրեն չմոտենա:

Եվ, աղջկան այդ վիճակում տեսնելով, արքայազնը նրան ասաց. «Քեզ փորձանք չի պատահի, ով մարդկանց գայթակղություն», — և այս սկսեց խոսել նրա հետ զգուշորեն ու քնքշաբար ու իրեն ճանաչել տվեց նրան: Եվ երբ արքայազնը նրան ճանաչեց, ուժգին ճշաց, և, այն-րան մեծ էր նրա ուրախությունը, որ դրանից նրան անզգայությունը տիրեց: Իսկ թագավորը կարծեց, թե դա նույա է այն բանի պատճառով, որ աղջիկն իրենից վախեցել է: Եվ արքայազնը բերանը մոտեցրեց նրա ականջին ու ասաց. «Ո՛վ մարդկանց գայթակղություն, խնայիր իմ արյունն ու քո արյունը թափվելուց և համբերատար ու դիմացկուն եղիր, իսկապես, ահավասիկ այն պահը, երբ հարկավոր են համբերություն ու հմտություն՝ խորամանկության հաշիվների մեջ, որպեսզի մենք աղտավենք այս կեղեքիչ թագավորից: Իսկ խորամանկությունն այն է, որ ես նրա մոտ կգնամ ու կասեմ. «Նրա հիվանդությունը ջինների ոգուց է, և ես քեզ երաշխավորում եմ նրա բուժման համար»: Եվ ես պայման կդնեմ նրա առջև, որպեսզի նա արձակի քո շղթաները, և այն ժամանակ այդ ոգին կթողնի քեզ: Եվ երբ թագավորը քեզ մոտ մանի, լավ խոսքեր ասա նրան, որպեսզի նա տեսնի, որ դու իմ օգնությամբ բուժվել ես, այնժամ կկատարվի այն, ինչ որ մենք ուզում ենք»: Եվ աղջիկն ասաց. «Լսում եմ ու հնազանդվում»: Եվ ապա արքայազնը դուրս եկավ նրա սենյակից ու գնաց թագավորի մոտ ուրախ ու զվարթ և ասաց. «Ո՛վ բարեբաստիկ արքա, վերջացան, ի երջանկություն քո, նրա հիվանդություններն ու նրա բուժումը, և ես նրան առողջացրի քեզ համար: Վերկապ ու մտիր նրա մոտ ու մեղմացրու քո խոսքերը և նրա հետ զգուշորեն խոսիր ու խոստացիր նրան այն, ինչը նրան կուրախացնի. այնժամ կկատարվի այն ամենը, ինչ որ դու նրանից ուզում ես»:

Եվ թագավորը մտավ աղջկա մոտ, և աղջիկը թագավորին տեսնելով, վեր կացավ ու համբուրեց գետինը նրա առջև և ասաց. «Բարի եկար»: Եվ թագավորը խիստ ուրախացավ դրանից, իսկ հետո հրամայեց ստրուկներին ու ներքինիներին հողատարությամբ ծառայել աղջկան ու բաղնիք տանել նրան և զարդարանքներ ու զգեստներ պատրաստել նրա համար: Եվ ստրկուհիները մտան արքայազնատեր մոտ ու ողջունեցին նրան, և նա պատասխանեց նրանց ողջունյին քնքշագին լեզվով ու ամեն-

նաանուշ խոսքերով, իսկ հետո նրան հագցրին արքայական զգեստներ ու վիզը գցեցին թանկագին քարերի մանյակը:

Եվ արքայադստերը բազմիք տարան ու ծառայեցին նրան և հետո դուրս բերեցին բազմիքից, ու նա լիալուսնի նման էր: Եվ, թագավորի մոտ գալով, արքայադուստրը ողջունեց նրան ու համբուրեց գետինը նրա առջև, և դրանից թագավորին մեծ ուրախություն համակեց, և նա արքայազնին ասաց. «Այս բոլորը քո օրհնության շնորհիվ է եղել, թող ալլահը երկարացնի մեզ համար քո շունչը»:— «Նա լիովին կառողջանա ու նրա գործը կավարտվի,— ասաց արքայազնը,— եթե դու քս բոլոր թիկնապահների ու զորքերի հետ դուրս գաս և գնաս այնտեղ, որտեղ գտել ես աղջկան, և թող քեզ հետ լինի սևափայտե այն ձին, որ իր հետ է եղել, Ես այնտեղ նրա ոգու հետ կխոսեմ, կբանտարկեմ նրան ու կբուստանեմ, և այդ ոգին երբեք այլևս չի վերադառնա նրա մոտ»: Եվ թագավորը նրան պատասխանեց. «Միրով ու հաճությամբ»: Եվ հետո սևափայտե ձին դուրս բերեցին ու տարան այն մարգագետինը, որտեղ գտել էին աղջկան, ձիուն ու պարսիկ իմաստունին:

Իսկ հետո թագավորն ու իր զինվորները ձի հեծան, և թագավորն իր հետ վերցրեց աղջկան, և մարդիկ շփտեին, թե նա ինչ է ուզում անել: Իսկ երբ բոլորը այն մարգագետինն հասան, արքայազնը, որ ներկայացել էր իբրև իմաստուն, հրամայեց ձիուն ու աղջկան թագավորից ու զինվորներից այնքան հեռու թողնել, որքան որ աչքը կտրում է, և թագավորին ասաց. «Քո թույլտվությամբ ես խունկ կվառեմ ու նզովք կկարդամ ու ոգուն այստեղ կբանտարկեմ, որպեսզի նա երբեք աղջկա մոտ չվերադառնա, իսկ հետո սևափայտե ձին կնստեմ ու աղջկան իմ թարթին կնստեցնեմ, և երբ ես այդպես անեմ, ձին կշարժվի ու կգնա, և ես կհասնեմ քեզ մոտ, և ամեն ինչ վերջացած կլինի: Եվ դրանից հետո վարվիր աղջկա հետ ինչպես ուղում ես»: Եվ երբ թագավորը նրա խոսքերը լսեց, խիստ ուրախացավ: Իսկ հետո արքայազնը հեծավ ձին ու աղջկան իր թարթին նստեցրեց (իսկ թագավորն ու բոլոր զինվորները նայում էին նրան) և նրան սեղմեց իրեն ու թոկով կապեց և դրանից հետո դարձրեց վերասլաց պտուտակը, ու ձին նրա հետ օդ բարձրացավ, և զինվորները նայում էին արքայազնին, մինչև որ նա նրանց աչքից կորավ:

Եվ թագավորը կես օր անցկացրեց նրա վերադառնալուն սպասելով, բայց արքայազնը չվերադարձավ, և թագավորը հույսը կորցրեց ու

մեծ զղջումով զղջալ սկսեց ու ցավեց աղջկանից բաժանվելու համար, իսկ հետո զորքի հետ վերադարձավ իր քաղաքը:

Ահա թե ինչ պատահեց նրան, իսկ ինչ վերաբերում է արքայազնին, ապա նա ուրախ ու գոհ ուղևորվեց դեպի իր հոր քաղաքը և այն-րան ժամանակ թռավ, մինչև որ իջավ նրա պալատում: Եվ նա աղջկան թողեց պալատի սենյակներից մեկում ու հանգստացավ, որ նա իր հետ է: իսկ հետո գնաց իր հոր ու մոր մոտ և ողջունեց նրանց ու հայտնեց աղջկա գալստյան մասին, և նրանք խիստ ուրախացան դրա համար: Եվ ահա այն ամենը, ինչ որ եղավ արքայազնին, ձիուն ու աղջկան:

Ինչ վերաբերում է հոռոմների թագավորին, ապա վերադառնալով իր քաղաքը, նա փակվեց իր ամրոցում, տխուր ու տրտում, և նրա մոտ մտան իր վեզիրներն ու սկսեցին մխիթարել նրան ու ասացին.— «Նա, ով աղջկան տարավ, կախարդ է, և փառք ալլահին, որ քեզ փրկեց նրա կախարդանքից ու խարդավանքից»: Եվ նրանք մեծակ շթուղեցին թագավորին, մինչև նա շմոռացավ գերուհուն: Ինչ վերաբերում է արքայազնին, ապա նա մեծամեծ հանդեսներ սարքեց քաղաքի բնակիչների համար, ու նրանք տոնախմբությամբ անցկացրին մի ամբողջ ամիս: Իսկ հետո արքայազնը մտավ աղջկա մոտ, ու նրանք միմյանցով ուրախացան մեծ ուրախությամբ: Եվ ահա թե ինչ եղավ նրանց: Իսկ նրա հայրը փշրեց սևափայտե ձին ու դադարեցրեց նրա շարժումները:

Իսկ հետո արքայազնը աղջկա հորը նամակ գրեց ու հիշատակեց դրա մեջ աղջկա հանգամանքների մասին ու պատմեց, որ ինքն ամուսնացել է նրա հետ, որ նա իր մոտ է գտնվում՝ ամենալավ վիճակում: Նա նամակը թագավորին ուղարկեց սուրհանդակի միջոցով ու նրա հետ ուղարկեց նվերներ ու թանկագին իրեր: Եվ երբ սուրհանդակը հասավ աղջկա հոր քաղաքը, այսինքն Ծմենի Սանա քաղաքը, նա նամակն ու նվերները հանձնեց այդ քաղաքի թագավորին: Իսկ թագավորը, կարգալավ նամակը, խիստ ուրախացավ ու նվերներն ընդունեց և հարգանք մատուցեց սուրհանդակին, իսկ հետո նա շքեղ ընծա պատրաստեց իր փեսայի՝ թագավորի որդու համար և նրան ուղարկեց նույն սուրհանդակի միջոցով: Եվ սուրհանդակը նվերներով վերադարձավ արքայազնի մոտ ու նրան հայտնեց, որ թագավորը՝ աղջկա հայրը, ուրախացավ, երբ նրան իր աղջկա մասին լուր հասավ, ու մեծ խնդությունը տիրեց նրան:

Եվ թագավորն սկսեց ամեն տարի նամակ գրել իր փեսային ու նվերներ ուղարկել նրան, ու նրանք շարունակեցին այդպես անել, մինչև որ թագավորը՝ երիտասարդի հայրը, վախճանվեց, ու երիտասարդն ստա-

ցավ իշխանութիւնը թագավորութեան մեջ հոր մահվանից հետո: Եվ նա արդար էր հպատակների նկատմամբ ու նրանց հետ այն ուղիով ընթացավ, որն արևելքի հաճելի է: Եվ նրան հպատակվեցին շատ երկրներ ու հնազանդվեցին բազմաթիվ ստրուկներ, ու նրանք ապրեցին ամենաքաղցր ու ամենաառողջ կյանքով, մինչև որ նրանց մոտ եկավ հաճույքներ խափանողն ու հավաքույթներ ցրողը, որը պալատներ է կործանում ու գերեզմանները բնակեցնում: Եվ փառավորյալ լինի կենդանին, շմեռնողը, որի ձեռքում է տեսանելի ու անտեսանելի թագավորութիւնը:



Սինոդիքան
Ծովագնացի
Հեթիպոք



Բնդրահավատների տեր և տնօրեն խալիֆ Հարուն ալ-Ռաշիդի օրոք Բաղդադ քաղաքում կար մի մարդ, որի անունը Սինդիբատ-բեռնակիր էր: Եվ դա աղքատ մարդ էր և վարձով բեռներ էր կրում գլխին դրած: Եվ այնպես պատահեց, որ մի օր էլ ծանր բեռ էր տանում նա, իսկ այդ օրը սաստիկ շագ էր: Եվ ուժասպառ եղավ Սինդիբատը ծանր բեռան տակ ու քրտնեց, և տոթն ուժեղացավ նրա շուրջը: Եվ անցնում էր Սինդիբատը մի վաճառականի տան դարպասի մոտով, որի առջև ավլած էր ու ջրջնած, և օդն այդտեղ զով էր, ու դարպասի կողքին մի լայն նստարան էր դրված: Եվ բեռնակիրն իր բեռը դրեց այդ նստարանին, որ հանգստանա ու մաքուր օդ շնչի, ու դարպասից նրա վրա մեղմ քամի փչեց ու արբեցնեղ մի բուրմունք, և բեռնակիրը հաճույքով վայելում էր այդ ամենը նստարանի ծաղրիչ և սառած, ու լսում էր շենքի ներսից հասնող վիճի հնչյուններ և հուզող ձայներ, ու պարզ միտք ունեցող զանազան բանաստեղծությունների արտասանություն: Եվ ունկնդրում էր Սինդիբատը հավքերի երգը, որ ձայնակցում էին միմյանց և զանազան ձայներով ու տարբեր լեզուներով փառք տալիս ամենազոր ալլահին, և այդ թռչունները տատրակներ էին, պարսկական սոխակներ, կենեկներ, սովորական սոխակներ, անտառային աղավնիներ ու երգեցիկ կարավներ:

Ու բեռնակիրը զարմացավ հոգու խորքում ու մեծ ցնծություն զգաց: Եվ մտածեցավ նա դարպասին ու շենքի ներսում տեսավ մեծ այգի, և նկատեց, որ այնտեղ կան ծառաներ, ստրուկներ, սպասավորներ և ամեն բան, որ կգտնես միայն թագավորների ու սուլթանների մոտ, և նրա դեմքին փչեց հազար ու մի տեսակ և հրաշալի ուտելիքների ու հիանա-

լի խմիչքների քաղցր բույրը: Եվ նա հայացքն ուղղեց դեպի երկինք ու բացականչեց. «Փա՛ռք քեզ ո՛վ տեր, ո՛վ արարիչ, ո՛վ բարեգութ, դու անհաշիվ բարիքներ ես պարգևում՝ ում կամենաս: Ո՛վ աստված, աղաչում եմ քեզ, թողություն տուր իմ բոլոր մեղքերին, և մեղա՛, հազա՛ր մեղա պակասություններին համար: Տե՛ր, ո՛վ կարող է հակառակել քո վճռի դեմ և հզորությանը քո, անքննելի ես դու և ազատ՝ գործերիդ մեջ, և իրավազոր ես դու ամեն բանում, փառք քեզ: Դու հարստացնում ես՝ սււմ կամենաս, և աղքատ ես դարձնում՝ ում որ ուզենաս. դու բարձրացնում ես՝ ում կամենաս, և ստորացնում՝ ում ցանկանաս: Քեզանից զատ չկա՛ աստված: Որքա՛ն բարձր է աստիճանը քո, և որքան մեծ է քո իշխանությունը, ու որքան հրաշալի է քո կառավարումը: Դու բարություն արեցիր քո ստրուկներից նրան, ում կամեցար, և այս տան տերն ապրում է լիակատար բարեկեցության մեջ, և նա բավականություն է ստանում քնքուշ հոտերով, անուշահամ ուտելիքներով ու ամեն տեսակի խմիչքներ ճաշակելով: Դու քո ստեղծած արարածներին տվեցիր այն, ինչ կամեցար և ինչ նախօրոք որոշեցիր նրանց համար. ոմանք բախտավոր են, ոմանք էլ, ինչպես ես, հոգնած են սաստիկ, ուժասպառ ու նվաստացած»:— Եվ Սինգիբազն արտասանեց.

«Օ՛, որքան դժբախտներ չգիտեն հանգիստ,
 Եվ չունեն դուրալի սովերը ծառի,
 Ստատկացավ հոգնությունն իմ այսօր ահա,
 Զախօրդ են գործերս, ու բեռս է ծանր:
 Իսկ մարդ կա՛ անհոգ է, հոգս ու ցավ չունի:
 Կյանքում բեռիս շափ չի կրել մի օր:
 Եվ կյանքի բարիքից օգտվում է նա միշտ,
 Փառքի մեջ, հրճվանքով ուտում է, խմում:
 Իւ մարդիկ բոլորն էլ մի կաթիլից են,
 Մեկին հավասար եմ, նման է նա ինձ,
 Բայց էլի մեր միջև տարբերություն կա.
 Տարբեր են, որքան քացախն ու գինին:
 Սակայն ես ասում եմ առանց տրտունջի՝
 «Իմաստուն դատավոր ես, և վճիռդ է ճիշտ»:

Իսկ երբ Սինգիբազ-բեռնակիրը վերջացրեց իր կառուցիկ ոտանավորը, ուղում էր շալակել իր բեռն ու գնալ, Եվ հանկարծ զարպասից նրա դեմ դուրս եկավ մի ծառա, որը շահել էր, գեղեցիկ, ու սլացիկ հասակ ունեւր, և նրա հագին շքեղ շորեր կային: Եվ նա բռնեց բեռնակրի թևն ու ասաց նրան. «Իմ տերը քեզ կանչում է, ներս արի, զրուցիր

նրա հետ»։ Ու բեռնակիրն ուզում էր հրաժարվել ծառայի հետ ներս մըտնելուց, բայց չկարողացավ անել այդ։ Եվ նա իր բեռը թողեց դռնապանի մոտ ու ծառայի հետ մտավ ներս և տեսավ հիասքանչ մի տուն, որի վրա սիրալիրության ու արժանավորության դրոշմը կար, իսկ ընդունարան-դահլիճի դռնից ներս նայելով, այնտեղ տեսավ ազնվատոհմ մարդկանց ու երևելի ազատների, Եվ կային դահլիճում ամեն տեսակ ծաղիկներ և անուշահոտ բույսեր, և՛ խորտիկներ, և՛ մրգեր, և՛ բազմաթիվ ու զանազան փառահեղ ուտելիքներ, և ընտիր խաղողներից քամված գինիներ։ Եվ այնտեղ կային գործիքներ երաժշտություն հնչեցնելու և ուրախանալու համար, և գեղատեսիլ ստրկուհիներ, նրանք բոլորն էլ կանգնած էին իրենց տեղերում, ըստ կարգի, իսկ դահլիճի կենտրոնում նստած էր տոհմիկ ու պատվարժան մի մարդ, որի այտերին արդեն դիպել էր ծերության ճերմակը. գեղեցիկ էր նա գեմքով ու կերպարանքով հիասքանչ, և վեհատես էր, արժանապատիվ, վսեմ ու հարգարժան։

Եվ ապրեց Սինդիբադ-բեռնակիրն ու ինքն իրեն բացականչեց. «Ալլահը վկա, այս շինությունը դրախտի հովիտներից մեկն է, սա սովթանի կամ արքայի պալատ է»։ Եվ ապա նա հանդես բերեց իր քաղաքավարությունն ու ներկաներին խաղաղություն մաղթեց, և նրանց ամենայն օրհնանք տվեց, և համբուրեց նրանց առջևի հողն ու կանգնեց, համեստորեն խոնարհելով գլուխը։ Եվ տանտերը թույլ տվեց նրան նստել իր մոտ, ու բեռնակիրը նստեց, իսկ տանտերն սկսեց նրան սրտապնդել, ասելով. «Բարո՞վ, հազար բարի եկար»։

Հետո նա պատվիրեց փառավոր ուտելիքներ տալ նրան, համազամ ու հրաշալի կերակուրներ, և Սինդիբադ-բեռնակիրը մոտեցավ ու, ալլահի տնունը տալով, սկսեց ճաշակել։ Եվ կերավ նա, մինչև որ կշտացավ ու լիացավ, իսկ հետո ասաց. «Ի՞նչ վիճակի մեջ էլ որ մարդ լինի, էլի փառք ալլահին», և լվաց ձեռքերն ու շնորհակալ եղավ ներկաներից. «Անուշ եղավ,— ասաց նրան տանտերը.— թող օրհնյալ լինի քո գալրստյան օրը։ Ի՞նչ է քո անունը և ի՞նչ արհեստով ես զբաղվում»։— «Ո՞վ տեր,— պատասխանեց Սինդիբադը,— իմ անունը Սինդիբադ-բեռնակիր է, ու ես ուրիշ մարդկանց բեռներ եմ կրում գլխիս դրած, ու դրանով փող վաստակում»։

Եվ տանտերը ժպտաց ու ասաց նրան. «Իմացիր, որ քո անունն էլ իմ անունից է, ո՞վ բեռնակիր, ես Սինդիբադ-ծովագնացն եմ։ Բայց ես ուզում եմ, ո՞վ բեռնակիր, որ դու ինձ հնարավորություն տաս լսելու այն բանաստեղծությունը, որ ասում էիր դարպասի մոտ կանգնած»։ Եվ բեռնակիրը շփոթվեց ու բացականչեց. «Ի սե՛ր ալլահի, մի՛ պահան-

ջիբ այդ բանն ինձանից ու մի՛ պատժիր ինձ: Աշխատանքն ու հոգնածութիւնը և շնչին վաստակը մարդուն անքաղաքավարութիւն և հիմարութիւն են սովորեցնում»:— «Մի՛ ամաչիր,— պատասխանեց նրան տանտերը,— դու իմ եղբայրը դարձար: Դե՛, արտասանիր, ուրեմն, ինձ համար բանաստեղծութիւնը, դա ինձ շատ դուր եկավ, ես լսեցի, երբ դու արտասանում էիր դարպասի մոտ կանգնած»:

Ու բեռնակիրը տանտիրոջ համար արտասանեց այն բանաստեղծութիւնը, և այն տողերը դուր եկան նրան, և նա հիանում էր դրանք լսելիս:

«Ո՛վ բեռնակիր,— ասաց նա,— իմացիր, որ իմ կյանքի պատմութիւնը զարմանալի է: Ես ամեն ինչ կպատմեմ քեզ, կպատմեմ, թե ինչեր են անցել զլիսո՛վս ու ինչեր են պատահել ինձ, նախքան այս երջանկութեան հասնելը և այստեղ նստելը, որտեղ դու ինձ տեսնում ես: Այս երջանկութեանը ես հասել ու այստեղ բազմել եմ անտանելի հոգնածութիւնից, մեծագուշն շարշարանքներից ու բազում սարսափներից հետո միայն: Որքա՛ն հոգնութիւն ու շարշարանք եմ կրել ես անցած օրերո՞ւմ... Ես յոթ ճանապարհորդութիւն եմ կատարել, և ամեն մի ճանապարհորդութիւնը զարմանալի մի պատմութիւն է, որ մարդու խելքն ու միտքը շփոթութեան կհասցնի: Այդ բոլորը պատահել է նախասահմանված բախտի թելադրանքով, իսկ այն, ինչ ճակատիդ գրված է, պիտի կատարվի, ոչ մի տեղ չես փախչի դրանից ու ոչ մի ուրիշ ապաստարան չես գտնի:

ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հավ լսեք, ո՛վ տյարք, ով ազնիվ մարդիկ, որ իմ հայրը վաճառական էր, և նա հայտնի վաճառական էր ու հայտնի մարդ, և մեծ եկամուտ ուներ և անսպառ հարստութիւն, ու մեռավ, երբ ես փոքրիկ տղա էի, թողնելով ինձ մեծ կարողութիւն, և՛ հողեր, և՛ գյուղեր:

Իսկ երբ ես հասակ առա, ձեռքս դրեցի այդ բոլորի վրա և սկսեցի հիասքանչ ուտելիքներ ճաշակել ու հիասքանչ խմիչքներ խմել: Ընկերութիւն էի անում ջահելների հետ և պճնվում էի, հագնելով շքեղ հագուստներ, ու ման էի գալիս մտերիմներիս ու ընկերներիս հետ, և կարծում էի, թե այդ բոլորը կշարունակվի մինչև վերջ և միշտ օգուտ կբերի ինձ: Ու այդ վիճակում ես անցկացրի որոշ ժամանակ, իսկ հետո անհոգութիւնիցս սթափվեցի և խելքի եկա ու տեսա, որ փողերս գնացել են, իսկ դրութիւնս փոխվել է, և չքվել է այն ամենը, ինչ ունեի: Եվ, ուշքի

գալով, ես վախեցա ու շփոթվեցի և սկսեցի միտք անել մի պատմության վրա, որ առաջ լսել էի հորիցս. ու այդ պատմությունը մեր տեր ու տիրակալ Դաուդի սրբի Աուլեյմանի մասին էր (հանգիստ նրանց ոսկորներին), որն ասում էր. «Կա նրեք բան՝ ուրիշ երեքից ավելի լավ. մահվան օրը ծննդյան օրից լավ է, կենդանի շունն ավելի լավ է, քան սատկած առյուծը, և հերեզմանն ավելի լավ է, քան աղքատությունը»:

Ու ես վեր կացա և հավաքեցի ունեցած-չունեցածս, հավաքեցի հագուստներս ու ծախեցի, իսկ հետո ծախեցի հողերս ու այն ամենը, ինչի տերը ձեռքերս էին, և այդ բոլորը երեք հազար գիրհեմ փող արեցի. Եվ գլխումս մի միտք ծագեց՝ ճանապարհվել ուրիշ երկրներ, և հիշեցի խոսքը բանաստեղծներից մեկի, որն ասել է.

Շատ հնարավորին բարձունքին հասնել կլինի.
Բարձունք փնտրողը գիշերները ողջ քուն չունի,
Մովը կսուզվի, ով որ մարգարիտ է փնտրում,
Կրա համար նա կայք, իշխանություն է ստանում:
Բայց ով որ անխոնջ բարձունք է փնտրում միշտ ու միշտ,
Կյանքն է կորչանում նա ձգտումներով իր անմիտ:

Եվ այդժամ վճռեցի ես ու գնեցի ապրանքներ և շատ ուրիշ բաներ և ամենայն պատկանելիքներ ու որոշ առարկաներ, որ հարկավոր էին ճամփորդության համար, և հողիս հոժար եղավ, որ ես ճանապարհորդեմ ծովով: Ու ես նավ նստեցի և, վաճառականների մի բազմության հետ նավելով, գնացի հասա Բասրա քաղաքը: Ու մենք նավով գնացինք գիշեր ու ցերեկ, և անցանք կղզիների մոտով, մի ծովից ելանք մտանք մյուս ծովը, անցանք ցամաքից ցամաք, ու ամեն տեղ, ուր գնում էինք, առնում ու ծախում էինք և ապրանքներ փոխանակում: Ու մենք նորից շարունակում էինք մեր ճանապարհը ծովով: Ու մի օր էլ հասանք մի կղզու, որն ասես դրախտի մի պարտեզ լիներ. ու նավի տերը մտտեցավ կղզուն և խարիսխ պեց, ու իջեցրեց կամրջակը, և բոլորը, ովքեր նավի մեջ էին, իջան կղզի: Եվ նրանք բովեր շինեցին իրենց համար ու դրանց մեջ կրակ արեցին ու սկսեցին դբաղվել զանազան գործերով, և նրանցից մի քանիսը կերակուր էին սլատրաստում, մյուսները լվացք էին անում, իսկ մնացածները ման էին գալիս, ու ես նրանց մեջ էի, ովքեր զբոսնում էին կղզում:

Եվ ճամփորդները հավաքվեցին շուրջ սկսեցին ուտել, խմել, ուրախանալ և խաղեր խաղալ: Ու այսպես մենք ժամանակ էինք անցկացնում, երբ հանկարծ նավատերը բարձրացավ տախտակամած ու ամբողջ ձայ-

նով բղավեց. «Ո՛վ խաղաղ ճամփորդներ, փութացեք նավ բարձրանալ ու շտապեք վեր ելնել: Թողեք ձեր ունեցվածքն ու փախեք, փրկիք ձեր հոգին: Փախեք այդտեղից, քանի որչեք ու շեք կործանվել: Այն կղզին, որի վրա դուք գտնվում եք, կղզի չէ, դա մի մեծ ձուկ է, որ սուզվել է ծովը, ու ավազը եկել է կիտվել է նրա վրա, և նա դարձել է կղզու նման, և ծառերն աճում են այդտեղ վաղ ժամանակներից: Իսկ երբ դուք նրա վրա կրակ արեցիք, ձուկը տաքություն զգաց ու շարժվեց, և նա ձեզ հետ միասին հիմա ծովի հատակը կիջնի, և դուք բոլորդ կխեղդվեք: Դե, ուրեմն, քանի դեռ չեք կործանվել, փնտրեցեք ձեր հոգու փրկությունը, և թողեք ձեր իրերն ու հեռացեք»:

Եվ ճամփորդները լսեցին նավապետի ասածն ու իրար անցան և փութացին նավ բարձրանալ, ու թողեցին իրենց իրերը, և՛ կաթսաները, և՛ կրակարանները: Ու նրանցից մի քանիսը հասան նավ, իսկ մի քանիսը չհասան, և կղզին շարժվեց ու իջավ ծովի հատակը այն ամենի հետ միասին, ինչ կար վրան, և շառաշող ծովը փակվեց նրա վրա հենց այնտեղ, ուր մինչ այդ ծփում էին ալիքները: Իսկ ես նրանց մեջ էի, ովքեր մնացին կղզու վրա, ու ես ծովը սուզվեցի բոլոր նրանց հետ, ովքեր իջան ծովի հատակը, բայց մեծագուր ալլահը պահպանեց ինձ ու փրկեց խեղդվելուց, և մի մեծ փայտե տաշտ ուղարկեց, այն տաշտերից, որոնց մեջ ճամփորդները լվացք էին անում: Ու ես կառչեցի տաշտից ու նստեցի դրա մեջ, որովհետև կյանքը քաղցր բան է, և ոտքերով առաջ էի մղվում, ինչպես թիերով: Եվ ալիքները խաղացնում էին ինձ աջ ու ձախ գցելով: Իսկ նավապետը առագաստները պարզեց ու նրանց հետ, ովքեր նավ էին բարձրացել, գնաց առաջ, ուշադրություն չդարձնելով խեղդվողների վրա, ու ես նայում էի այդ նավին այնքան ժամանակ, մինչև որ նա աչքերիցս անհետացավ, ու այդ ժամանակ ես համոզվեցի, որ կործանվելու եմ:

Ու վրա հասավ գիշերը, և ես այդ վիճակում էի: Ու այդպես անցկացրի մի ցերեկ ու մի գիշեր: Եվ քամին ու ալիքներն ինձ օգնեցին, և տաշտը մոտեցավ մի բարձր կղզու, որտեղ ծովի վրա կախված ծառեր կային: Ու ես բռնեցի բարձր ծառի մի ճյուղը և կախվեցի դրանից, հագիվ փրկվելով կորստից, ու այդ ճյուղից բռնելով, մազլցեցի ու կրղզի ելալ:

Ու տեսա, որ ուռել են ոտքերս ու ձկների կծոտելուց հետո սրունքներիս վրա հետքեր են մնացել, բայց ես ցավ չէի զգում, այնքան որ մեծ էր վիշտս և հոգնածությունս անշափ: Ու ես մեռելի պես ընկած էի կղզու վրա և ուշքս գնացել էր, և ընկել էի անզգայության մեջ, ու

այդ վիճակում մնացի մինչև մյուս օրը: Արևը բարձրացավ իմ գլխավերևը, ու ես արթնացա և տեսա, որ ռաբբերս սաստիկ ուռել են, բայց շուրջած գլխովս շատ բան էր անցել, առաջ գնացի՝ մեկ սողալով, մեկ ծակաշոք քարը գալով, իսկ կղզու վրա շատ պտուղներ կային և քաղցրատամ առուներ, ու ես ուտում էի այդ պտուղները և խմում ջուրը:

Ու ես այդ դրության մեջ անցկացրի մի քանի օր ու գիշեր և իմ խոլին կենդանությունն առավ, և շունչս տեղն եկավ ու իմ շարժումները աստատուն դարձան: Եվ սկսեցի մտածել ու անցուդարձ անել կղզու սփռված, նայելով այն բոլոր բարիքներին, որ ծառերի վրա ստեղծել է սեծազոր ալլահը: Ու այդ ծառերից մի ճյուղ կտրեցի և ինձ համար դուր շինեցի, որին հենվում էի: Ու այդպես ապրեցի երկար ժամանակ:

Մի օր էլ գնում էի ծովափով, ու մեկ էլ հեռվից ինչ-որ արարած երևաց: Ես կարծեցի, թե վայրի գազան է կամ ծովային կենդանիներից մեկը, և գնացի նրա կողմը, աչքս նրանից շփտելով: Ու հանկարծ պարզվեց, որ դա մի վիթխարի նժույգ է և կապված է կղզու եզերքին՝ ծովափի մոտ:

Եվ ես մոտեցա նրան, և նժույգը խրխնջաց ահագնածայն, ու ես վախեցա, և ուզում էի հետ դառնալ, բայց գևսնի տակից հանկարծ դուրս եկավ մի մարդ ու գոռաց ինձ վրա ու եկավ իմ հետևից և հարցրեց. «Ո՞վ ես դու, որտեղի՞ց ես եկել և ինչո՞ւ ես ընկել այստեղ»: «Ո՞վ տեր, — պատասխանեցի նրան, — իմացիր, որ ես օտարական եմ, և գնում էի նավով ու այդ նավի վրա բազմաթիվ ուղևորներ կային. և շատերի հետ ընկա ջուրն ու սկսեցի սուզվել, բայց ալլահն ինձ մի փայտե տաշտ ուղարկեց, և ես նստեցի դրա մեջ, ու այդ տաշտը լողում էր, ինձ էլ հեռը տանելով, մինչև որ ալիքներն ինձ դուրս գցեցին այս կղզին»:

Ու, լսելով խոսքերս, այդ մարդը բռնեց իմ ձեռքը և ասաց. «Եկ ի՞նչ հետ»: Ու ես գնացի նրա հետ: Եվ ես ու նա իջանք դեսնի տակի մոտանը, ու նա տարավ ինձ մի ստորգետնյա մեծ սենյակ, ու հետո նրստեցրեց սենյակի մեջտեղը և ուտելիքներ բերեց ինձ համար: Իսկ ես բաղցած էի և սկսեցի ուտել ու այնքան կերա, մինչև որ կշտացա ու լիացա, և իմ հոգին հանգստացավ:

Եվ ապա այդ մարդն սկսեց հարցուփորձ անել իմ կյանքի հանդամանքների մասին ու հարցրեց, թե ինչ է պատահել ինձ, և ես նրան պատմեցի ինձ հետ պատահած ամեն ինչ՝ սկզբից մինչև վերջ, ու նա վարձացավ իմ պատմության վրա:

Ռուր Կենքացնելով պատմութիւնս, բացականչեցի. «Ի սե՛ր արևա՛հի, ներող եղիք, տեք: Աս քեզ պատմեցի իսկական վիճակիս ու այն մասին, թե ինչ է պատահել ինձ և ուզում եմ, որ դու էլ պատմես ինձ, թե ով ես գու և ինչու եմ նստած այս սենյակում, որ գետնի տակ է: Ինչո՞ւ ես այն ձին կապել կողու եպրին»:— «Իմացիր, — պատասխանեց մարդը, — որ մենք շատ ենք և ցքված ենք այս կողու շորս կողմը: Մենք ալ-Միհրջան՝ թագավորի ձկապաններն ենք, ու մեր խնամքի տակ են նրա բոլոր ձիերը: Ամեն ամիս, նորալուսնի ժամանակ, մենք զտարյուն զամբիկներ ենք բերում այստեղ, սրոնք դեռ տուաբի շեն եկել, ու կապում ենք կողում, ինքներս էլ պահ ենք մտնում այս ստորգետնյա սենյակում, որ մեզ մարդ չտեսնի: Ու այդ զամբիկների հոտի վրա գալիս են ծովային ձիերը² և ցամաք են ելնում ու դեսուդեն նայում, բայց ոչ ոքի չէ՛ն տեսնում: Ու այդ ժամանակ նրանք թռնում են զամբիկների վրա, իրենց պահանջը բավարարում ու իջնում նրանց վրայից և ուզում են նրանց օանել իրենց հետ, բայց զամբիկները շեն կարողանում գնալ նծույգների հետ, որովհետև կապված են:

Եվ նծույգները խրխնջում են ու գլուխներով խփում նրանց և քոցի տալիս ու վրնջում են: Ու մենք լսում ենք նրանց խրխնջոցը և իմանում, որ նրանք իջել են զամբիկների վրայից: Եվ մենք դուրս ենք գալիս թաքստոցից ու զոռզոռում նրանց վրա, ու նրանք վախենում են մեզանից ու գնում մտնում են ծովը, իսկ զամբիկները հղիանում են նրանցից ու հովատակ կամ մատակ են ծնում, որոնցից ամեն մեկը մի ամբողջ պարկ փող արժե, և նրանց նմանք աշխարհի երեսին շես գրտնի: Հիմա նծույգների դուրս գալու ժամանակն է, ու թե մեծագոր արևա՛հի կամե՛նա, քեզ հետս կտանեմ ալ-Միհրջան թագավորի մոտ և ցույց կտամ մեր երկիրը: Էս է իմացիր, որ եթե մեզ չհանդիպեիր այս կողում, ուրիշ ոչ ոքի չէիր տեսնի և ձանձրույթից ու կարոտից կմեռնեիր, և ոչ ոք քո տեղը չէր իմանա: Բայց ես այնպես կանեմ, որ դու պահպանես գոթութունդ ու վերադառնաս քո երկիրը»:

Ու ես ձիապանին մաղթեցի ամենայն բարիք ու շնորհակալ եղա, որ ինձ հետ տիրալիր էր ու այդպես լավություն արեց: Ու մենք այդպես խոսում էինք, երբ հանկարծ մի հովատակ դուրս եկավ ծովից ու վրնջ-

1 Ալ-Միհրջան — աղավաղված «մահարաջա» բառն է, հնդկերեն՝ թագավոր: Մահարաջայի կողմերը արար աշխարհագետները կրեմն անվանում են ձավան ու Մալայան արշիպեղապի կղզիները:

2 Ծովային ձիեր — հավանաբար, գետածիերն են:

բայ բարձրագոյ, ու հետո թռավ զամբիկի վրա, իսկ նրա հետ իր գործը վերջացնելով, իջավ նրա վրայից և ուզում էր հետը տաճնել նրան, բայց շկարողացավ, և զամբիկն սկսեց քացի տալ ու բարձրաձայն խորխորնչալ: Եվ ձիապանը ձեռքն առավ մի սուր ու կաշվե մի վահան և սենյակի դռնից դուրս գնաց, կանչելով իր ընկերներին ու ասելով. «Սկեք գնանք նժույգի մոտ...», և սրով մի քանի անգամ զարկեց վառանին:

Եվ գոռոռալով եկավ նիզակներով զինված մարդկանց մի բազմություն, և նժույգը վախեցավ նրանցից ու գնաց իր ճամփով և իսկական գոհելի պես սուզվեց ծովն ու անհետացավ ջրի տակ: Ու երբ ձիապանն այս բանը տեսավ, մի քիչ նստեց հանգստանալու: Ու մեկ էլ եկան նրա բովերները, որոնցից ամեն մեկը մի զամբիկ էր բերում: Եվ նրանք ինձ անտան ձիապանի մոտ ու սկսեցին հարցուփորձ անել դործիս մասին ու ես նրանց էլ նույն բանը պատմեցի, ինչ-որ պատմել էի ձիապանին, ու այդ մարդիկ նստեցին ինձ շատ մոտ և դասավորեցին ուտելիքն ու սկրտեղին վայելել, և ինձ էլ հրավիրեցին ուտելու, ու ես կերա նրանց հետ, սուր նրանք վեր կացան և, ինձ էլ հետները վերցնելով, ձի նստեցին ու ինձ էլ նստեցրին մի ձիու մեջքին:

Ու մենք ճամփա ընկանք ու գնացինք, մինչև որ հասանք ալ-Միրրյան թագավորի քաղաքը: Եվ ձիապանները ներս մտան պալատ ու Մաղավորին պատմեցին իմ պատմութունը, և թագավորը պահանջեց, որ ես գնամ իր մոտ, Եվ ինձ տարան պալատ ու կանգնեցրին թագավորի առջև: Եվ ես խաղաղութուն մաղթեցի նրան, ու նա էլ նույնը կատեցավ ինձ և ասաց. «Բարով, հազար բարի եկար»,— և ողջունեց ինձ շարզանքով: Թագավորը հարցրեց, թե ինչ է եղել ինձ, ու ես սկզբից մինչև վերջ պատմեցի նրան, ինչ որ եկել էր գլխիս, և ինչ որ տեսել էի: Ես նա զարմացավ այն ամենի վրա, ինչ պատահել էր ինձ և ասաց. «Չավա՛կս, ալլա՛հը վկա, դու ավելի շատ քան ես ձեռք բերել, քան փրկությունն է, ու եթե քեզ երկար կյանք վիճակված չլիներ, այդ ձախորդութուններից չէիր ազատվի: Բայց փա՛ռք ալլահին, որ քեզ փրկել է»:

Ով ապա նա շնորհ արեց ու հարգանք մատուցեց ինձ և մատեցրեց իրեն ու սկսեց խրախուսել խոսքերով ու սիրալիր վերաբերմունքով: Ես ինձ ծովային նավահանգստի պես դարձրեց ու առավիրեց գրի առնել ամբիս մոտեցող բոլոր նավերի գալն ու գնալը: Եվ ես միշտ թագավորի մոտ էի ու կատարում էի նրա գործերը, իսկ նա ամեն փերպ սիրալիր վերաբերմունք էր ցույց տալիս իմ նկատմամբ ու ամեն դեպքում

լավութիւնն էր անում ինձ: Նա հրաշալի ու փառահեղ շորեր հագցրեց ինձ, ու ես դարձա նրա օգնականը միջնորդութեան ու հպատակների հանգամանքների քննութեան գծով:

Երկար ժամանակ ես մնացի նրա մոտ, բայց ամեն անգամ, երբ անցնում էի ծովափով, թափառաշրջիկ վաճառականներին ու ծովայիններին հարցնում էի, թե որ կողմերում է Բաղդադ քաղաքը, հույս ունենալով, որ գուցե, մեկնումեկն ասի ինձ նրա տեղը, ու ես այդ մարդու հետ գնամ Բաղդադ, վերագտնամ իմ երկիրը: Բայց ոչ ոք չգիտեր Բաղդադի տեղն ու չէր իմանում, թե ով է գնում այնտեղ, ու ես շփոթութեան մեջ ընկա ու նեղվում էի, երկար ժամանակ օտար երկրում մնալու պատճառով:

Ու միտածամանակ ես այդպես անցկացրի: Մի օր էլ մտա ալ-Միհրրջան թագավորի դիվանը ու հնդիկների մի բազմութիւն տեսա այնտեղ: Եվ խաղաղութիւն մաղթեցի ես նրանց ու նրանք փոխադարձաբար նույնը կամեցան ինձ և ասացին. «Բարով ես եկել», ու սկսեցին հարցուփորձ անել իմ երկրից, ես էլ հարցուփորձ արեցի նրանց երկրից, և նրանք ասացին, որ իրենց մեջ կան շաքիրիթներ¹ (իսկ դրանք ամենապատվավոր մարդիկ են), և նրանք ոչ ոքի չեն նեղացնում ու ոչ ոքի վրա չեն բռնանում, և իրենց մեջ կան մարդիկ, որոնց բրահմաններ են կոչում, ու այդ մարդիկ երբեք գինի չեն խմում, բայց ապրում են անվրդով և հաճույքների մեջ, զվարճանալով ու երաժշտութիւն լսելով, և նրանք ուղտեր, նժույգներ, անասուններ ունեն: Ու նրանք պատմեցին, որ հնդիկ ժողովուրդը բաժանվում է յոթանասուններկու կարգի, և ես խիստ ապշեցի այդ բանի վրա:

Ու ես ալ-Միհրրջանի թագավորութեան կղզիների մեջ տեսա մի կղզի, որը կոչվում էր Քասիլ, ու այնտեղից ամբողջ գիշեր թմբուկի ու դափի ձայն էր գալիս: Եվ կղզիները լավ ճանաչող մարդիկ ու ճանապարհորդներն ինձ պատմեցին, որ այդ կղզու բնակիչները ծանրաբարո և ուղղամիտ մարդիկ են: Ու այդ ծովում ես տեսա երկու հարյուր կանգուն երկարութիւն ունեցող մի ձուկ, և տեսա մի ձուկ էլ, որի մոտ թր բվեճի երեսի նման էր: Ու այդ ճանապարհորդութեան ժամանակ ես հրաշալիքներ ու զարմանալի բաներ տեսա. բայց այդ ամենի մասին որ պատմեմ, պատմութիւնս շատ կերկարի:

Ու ես ման էի գալիս ու դիտում այդ կղզիները և այն ամենը, ինչ

¹ Շաքիրիթները (ազավազված «քշաթրիներ») — հնդկական մի կաստայի անունն է (նազմիկների կաստա):

կար դրանց վրա: Մի անգամ էլ կանգ առա ծովափին, ինչպես միշտ՝ ցուպր ձեռքիս, և հանկարծ ափին մոտեցավ մի մեծ նավ, որտեղ շատ վաճառականներ կային: Ու երբ նավը մտավ քաղաքի նավահանգիստ ու ստեղծեց նավամատուցին, նավապետն առագաստները հավաքեց և կանդ առավ ափի մոտ ու կամրջակներն իջեցրեց, և նավաստիներն սկսեցին ցամաք տեղափոխել այն բոլորը, ինչ կար նավի մեջ, և ապրանքները դուրս բերելիս հապաղեցին, իսկ ես կանգնել ու գրի էի առնում այդ բոլորը:

«Որեւէ բան մնա՞ց քո նավում»,— հարցրի ես նավապետին, և նա պատասխանեց. «Այո, մնաց, տեր իմ, նավիս ամբարներում ապրանքներ կան, բայց այդ ապրանքների տերը խեղդվեց ծովում՝ կղզիներից մեկի մոտ, երբ մենք գնում էինք ծովով, և նրա ապրանքները մնացին մեզ մոտ: Ուզում ենք ապրանքների գինն իմանալ ու ծախել, որ դրանց վարձը հասցնենք խաղաղության օթևան Բաղդադ՝ այդ մարդու հարազատներին»:— «Այդ ապրանքների տիրուջ անունն ի՞նչ է»,— հարցրի նավապետին, և նա ասաց. «Նրա անունը Սինդիբադ-ծովագնաց է, ու նա խեղդվեց ծովում»: Ու լսելով նավապետի խոսքերը, ինչպես հարկն է՝ ուշի-ուշով նայեցի նրան և ճանաչեցի ու ճշայի ինչքան ուժ ունեի և ստացի. «Մ՛վ նավապետ, իմացիր, որ քո այդ ստած ապրանքների տերը ես եմ: Ես Սինդիբադ-ծովագնացն եմ, այն բոլոր վաճառականների հետ սիրասին իջա կղզի, ու երբ ձուկը շարժվեց, որի վրա մենք գտնվում էինք, դու բարձրաձայն կանչեցիր մեզ, ու նավ բարձրացան նրանք, ովքեր կարողացան, իսկ մնացածները սուզվեցին: Ես ջուրն ընկածների մեջ էի, բայց մեծազոր ալլահը կյանքս պահպանեց ու խեղդվելուց փրկեց, սպարկելով մի մեծ տաշտ, այն տաշտերից, որոնց մեջ ճամփորդները լվայք էին անում: Ես նստեցի այդ տաշտի մեջ ու սկսեցի ոտքերով թիավարել, ու քամին և ալիքներն օգնում էին ինձ, մինչև որ հասա այս կղզին, ու ես ջրից դուրս եկա կղզի, և մեծազոր ալլահն օգնության հասով ինձ, և ես հանդիպեցի ալ-Միհրջան թագավորի ձիապաններին, և նրանք ինձ առան իրենց հետ ու բերեցին այս քաղաքը: Նրանք տարան ինձ ալ-Միհրջանի պալատ, ու ես նրան պատմեցի գլխովս անցածը, և թագավորը լավություն արեց ու ինձ այս քաղաքի նավահանգստի գրապիրտ դարձրեց, ու ես նրա մոտ ծառայելուց սկսեցի օգուտ քաղել, նա էլ ինձ հետ շատ բարի էր: Իսկ այդ ապրանքները, որ դու պահել ես նավում, իմ ապրանքներն են ու իմ գույքը»: Ու նավապետը բացականչեց. «Չկա ավելի մեծ գորություն և ուժ, քան բարձրյալ և ամենակարող ալլահինն է: Մարդկանց մեջ ո՛չ խիղճ է մնացել, ո՛չ ազնվություն»:— «Ով նա-

վապետ, — հարցրի նրան, — ինչո՞ւ ես այդպես խոսում: Դու հո լսեցի՞ր, թե ոնց պատմեցի գլխովս անցած բաները»: — «Նքա համար, որ դու ականջովդ լսեցիր, — պատասխանեց նավապետը, — թե ես ինչ ասացի, իսկ ես ասացի, որ ինձ մոտ կան ապրանքներ, որոնց տերը խեղդվել է, և դու առանց իրապետեք ունենալու ուզում ես վերցնել դրանք, լսկ դա արգելված է: Ահնք մեր աշքով տեսանք, երբ նա խեղդվում էր, ու նրա հետ շատ ճամփորդներ կային, որոնցից ոչ մեկը չփրկվեց: Ուրեմն, ինչպես ես պնդում, թե այս ապրանքների տերը դու ես»: — «Ով նավապետ, լսիր իմ պատմությունը մինչև վերջ ու լավ հասկացիր խոսքս, այն ժամանակ առածիս ճշմարտութունը պարզ կլինի քեզ համար, որովհետև, իսկապես, խաբելը երեսպաշտներին է հատուկ» — ասացի ես, և հետո նավապետին պատմեցի այն ամենը, ինչ գլխովս անցել էր այն օրվանից, երբ ես իր հետ դուրս եկա Բաղդադից, մինչև այն օրը, երբ հասանք այն կղզին, որի մոտ ջրասույզ եղանք, ու ես պատմեցի մի քանի զեպք, որ պատահել էր ինձ էլ, նրան էլ: Նավապետն ու վաճառականներն այդ որ լսեցին, հավատացին, որ ճիշտ եմ ասում, ու ճանաչեցին ինձ և շնորհավորեցին փրկվելուս առթիվ, և բոլորն ասացին. «Ալլահը վկա, մենք չէինք հավատում, թե դու խեղդվելուց փրկվել ես, բայց հիմա տեսանք ու հավատացինք, որ ալլահը քեզ նոր կյանք է պարգևել...»:

Եվ ապա նրանք իմ ապրանքներն ինձ ավեցին, և ես տեսա, որ անունս գրված է դրանց վրա ու եղածից ոչ մի բան չի պակասել: Ու ես բաց արեցի ապրանքներիս հակերն ու այնտեղից հանեցի շատ գեղեցիկ ու թանկագին բաներ, և նավաստիներն այդ ամենն իմ հետևից իջեցրին կղզի, ու մենք դրանք տարանք թագավորին նվեր: Ես թագավորին բացատրեցի, որ դա այն նավն է, որով ես ճանապարհորդում էի, և պատմեցի, թե ոնց եկան ու ինձ հասան իմ ապրանքները լրիվ ու անվնաս, և որ այդ նվերը դրանց միջից է վերցրած: Ու թագավորը ծայրաստիճան զարմացավ ասածիս վրա: Եվ նրա համար պարզ դարձավ, որ այն, ինչ ասում էի, ճիշտ է:

Ու թագավորն ինձ սիրեց ուժգին սիրով ու մեծ հարգանք մատուցեց և իմ նվերի փոխարեն շատ բաներ նվիրեց ինձ: Հետո ես ծախեցի իմ հակերն ու այն ապրանքները, որ ինձ մոտ կային, ու մեծ օգուտ ստացա դրանից: Ես այդ քաղաքում շատ ապրանք, իրեր ու պաշար գնեցի, ու երբ նավի մեջ եղած վաճառականները ցանկացան ճամփա ընկնել, ու գնալ, ես ունեցած-չունեցածս բարձեցի նավ ու, մտնելով թագավորի ապարանքը, շնորհակալութուն հայտնեցի նրան սիրալիրության ու լավության համար և խնդրեցի, որ թույլ տա մեկնել իմ երկիրը՝ հարա-

դասաներիս մոտ: Ու թագավորը հրաժեշտ տվեց ինձ և մեկնելու պահին սյդ քաղաքի ունեցվածից շատ ու շատ բարիք նվիրեց ինձ, և ես մնաս բարով արեցի ու մտա նավ, ու մենք ճամփա ընկանք մեծազոր ալլահի ողորմածությամբ:

Ու երջանկությունը մեզ ծառա էր դարձել, և օգնում էր մեզ ճակատակիրը, ու մենք գնում էինք գիշեր ու զօր, մինչև որ բարեհաջող հասանք Բասրա քաղաքը: Եվ մենք ափ իջանք ու մտանք քաղաք, և մի կտրձ ժամանակ մնացինք այնտեղ: Եվ ուրախանում էի ես փրկվելուս ու իմ երկիրը վերադառնալուս համար:

Դրանից հետո ճանապարհվեցի Բաղդադ քաղաքը՝ խաղաղության սփեանը (իսկ ինձ հետ շատ հակեր, իրեր ու ապրանքներ կային, որ մեծ գին ունեին): Ու ես եկա հասա իմ թաղը, և մտա տունս: Եվ եկան հավաքվեցին բոլոր հարազատներս, և՛ ընկերներս, և՛ բարեկամներս: Ու հետո ես ինձ համար ծառաներ առա, սպասավորներ ու գերիներ, ստրուկուհիներ ու ստրուկներ, ու տեսա, որ դրանք բազմաթիվ են, և գնեցի աներ, հողեր ու կալվածքներ ավելի շատ, քան առաջ ունեի, և սկսեցի տառջվանից ավելի մեծ շանսիրությամբ մտերմություն անել բարեկամներիս հետ և բարեկամություն՝ ընկերներիս հետ ու մոռացա այն բոլորը, ինչ կրել էի՝ և՛ հողնածությունս, և՛ օտարության մեջ մնալս, և՛ շարշարանքներս, և՛ ճանապարհի սարսափները:

Ու ես զվարճանում էի հաճույքների և ուրախությունների մեջ, և նրաշայի ուտելիքներ էի վայելում և թանկագույն խմիչքներ ու շարունակում էի ապրել այդպես: Ահա այն ամենը, ինչ պատահեց ինձ առաջին անապարհորդության ժամանակ: Իսկ թե կամենա մեծազոր ալլահը, վստղը ես ձեզ կպատմեմ յոթ ճանապարհորդություններիցս երկրորդի պատմությունը»:

Հետո Սինգիբադ-ծովագնացը Սինգիբադ-ցամաքայինին թույլ տվեց բնթրել իր տանը և հրամայեց տալ նրան հարյուր մսխալ սակի ու ասաց նրան. «Դու այսօր մեզ ուրախացրիր»: Եվ քեռնակիրը շնորհակալ եղավ ու վերցրեց այն, ինչ տանտերը նվիրեց իրեն, և գնաց իր ճամփով, մտածելով ու ծայրաստիճան զարմանալով, թե ինչեր տեսա շեն պատահում մարդկանց:

Այդ գիշեր նա քնեց իր տանը, իսկ երբ առավոտը բացվեց, գնաց Սինգիբադ-ծովագնացի տուն ու մտավ երա կացարանը: Եվ տանտերն ասաց. «Բարով եկար», և հարգանք մատուցեց նրան ու նստեցրեց իր կողքին: Իսկ երբ նրա մյուս բարեկամները եկան, նա ուտելիքներ ու

խմիչքներ զրեց նրանց առջև ու խնդրեց, որ ճաշակեն, Եվ ժամանակը նրանց համար անամպ էր, և նրանց համակել է ցնծութիւնը:

Եվ Սինդիրագ-ծովագնացն սկսեց խոսել ու ասաց.

ՆՐԿՐՈՐԿ ԸԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացեր, ո՛վ եղբայրներ, որ ես ապրում էի ամենաքաղցր կյանքով ու ճաշակում անամպ մի ուրախութիւն, ինչպես որ պատմեցի երեկ, մինչև որ մի անգամ էլ խելքիս փշեց գնալ օտար երկրներ, և ես ցանկացա առևտուր անել, և տեսնել ցամաքներ ու կղզիներ, և ապրուստի միջոցներ վաստակել:

Եվ վճռեցի այդ գործը կատարել, և շատ փող ծախսեցի, ու այդ փողով առա ապրանքներ և ճանապարհորդութիւն համար անհրաժեշտ իրեր ու պարագաներ, և կապկպեցի դրանք, ու տեսա հրաշալի մի նավ, որը գեղեցիկ կտորից կարված առագաստներ ուներ, ու այդ նավի վրա շատ մարդիկ կային ու անթերի սարքեր: Եվ բազմաթիվ վաճառականների հետ միասին ես էլ նավ բարձեցի իմ հակերը. և մենք հենց նույն օրը ճամփա ընկանք, ու մեր ճանապարհորդութիւնը լավ էր ընթանում, և մենք ծովից ծով էինք անցնում ու կղզուց կղզի: Եվ ամեն տեղ, ուր մենք կանգ էինք առնում, հանդիպում էինք վաճառականների, թագավորութիւն մեծամեծ մարդկանց, առևտրականների ու գնորդների, և ծախում էինք ու ասնում և ապրանքներ փոխանակում:

Ու մենք այդպէս արեցինք, մինչև որ բախտը մեզ տարավ մի հիասքանչ կղզի, որտեղ շատ ծառեր, հասուն մրգեր, անուշահոտ ծաղիկներ, երգեցիկ թռչուններ և զուլալ գետակներ կային. բայց ո՛չ տուն կար այնտեղ, ո՛չ էլ մարդ, որ կրակ աներ ու կրակը թեժացներ: Ու նավապետն իր նավը մոտեցրեց կղզուն և կանգ առավ: և վաճառականներն ու ճամփորդներն ափ իջան ու սկսեցին նայել այնտեղի ծառերին և թռչուններին, փառք տալով ալլահին՝ միակ տիրոջն ու ենթարկողին, ապշելով ամենակարող տիրակալի հզորութիւն վրա: Ու բոլորի հետ միասին ես էլ դուրս եկա կղզի և նստեցի զուլալ առվակի ափին՝ ծառերի ստվերում:

Իսկ ինձ մոտ մի քիչ բան կար ուտելու, և ես նստեցի այդտեղ ու սկսեցի ճաշակել այն, ինչ մեծագոր ալլահը պարգևել էր ինձ: Եվ գեփյուռը դուրալի էր, ու ժամանակն անցնում էր անամպ: Եվ ինձ հաղթեց նիրհը, ու ես հանգստացա այդտեղ և խոր քուն մտա, հաճույք զգալով թեթև քամուց և անուշ հոտերից, իսկ հետո վեր կացա, բայց կղզում ոչ մարդ տեսա, ոչ էլ ջին. նավը գնացել էր, ճամփորդներն էլ հեռը, ու

նրանցից ոչ մեկը ինձ չէր հիշել՝ ո՛չ վաճառականը, ո՛չ նավաստին, ու թողել էին նրանք ինձ կղզում մեն մենակ:

Եվ ես սկսեցի աջ ու ձախ նայել, բայց կղզում ոչ մի մարդ չտեսա, ինձունից բացի, և ինձ համակեց մի տխրություն, որից ավելին չի լինում, ու քիչ մնաց լեղիս ճաքեր շատ մտածելուց, վշտից ու իմ վիճակիս ծանրությունից:

Իսկ ինձ մոտ աշխարհի բարիքներից ոչինչ չէր մնացել՝ ո՛չ ուտելիք, ո՛չ խմելիք, ու մնացի մենակ և շգիտեի, թե ինչ անեմ: Ու ես հուսակաուոր եղա և ինքս ինձ ասացի. «Ամեն անգամ չէ, որ կուժն անվնաս է մնում, ու եթե առաջին անգամ ողջ մնացի ես ու հանդիպեցի մարդկանց, որոնք ինձ կղզուց իրենց հետ տարան մի բնակավայր, այս անգամ չի կարող պատահել, որ ես գտնեմ մեկն ու մեկին, որն ինձ բնակչություն ունեցող մի երկիր հասցնի»:

Եվ ապա սկսեցի լալ ու ողբալ, խղճալով ինքս ինձ ու տխրությունը համակեց ինձ, և ես սկսեցի ինքս ինձ կշտամբել արածիս համար, երբ նստել ու հանգստանում էի իմ տանը, իմ երկրում, գոհ ու երջանիկ, ունենալով հիանալի ուտելիքներ, հիանալի խմիչքներ ու հիանալի շորեր, և կարիք չունեի ո՛չ փողի, ո՛չ ապրանքի:

Եվ սկսեցի զղջալ, որ դուրս եկա Բաղդադ քաղաքից ու մեկնեցի ճանապարհորդելու ծովով. այն բանից հետո երբ այդքան դժվարություններ էի քաշել առաջին ճանապարհորդության ժամանակ ու քիչ էր մնացել կործանվելի, ու բացականչեցի. «Արդարև, մենք ալլահին ենք պատկանում ու նրա մոտ ենք վերադառնում»: Եվ կարծես դարձա դիվահար: Ու ես տաքի ելա և սկսեցի ման գալ կղզում, շրջել աջ ու ձախ, ու էլ չէի կարողանում հանգիստ նստել մի տեղ, և ապա մագլցեցի մի բարձր ծառ ու սկսեցի այնտեղից նայել չորսդին, բայց ոչինչ չտեսա, երկնքից, ջրից, ծառերից, թռչուններից, կղզիներից ու ավազուտներից բացի:

Եվ նայեցի ուշադիր, և հանկարծ իմ առջև՝ կղզու վրա, փայլեց ինչոր սպիտակ ու մեծ բան: Երբ այդ տեսա, ծառից իջա և գնացի դեպի այդ առարկան, ու այնքան գնացի, մինչև որ հասա դրա մոտ, և պարզվեց, որ դա մի մեծ սպիտակ գմբեթ է, որը հասել է ամպերին և հսկայական շրջագիծ ունի: Ու մոտեցա այդ գմբեթին և պտտվեցի շուրջը, բայց դրա վրա ոչ մի դուռ չտեսա, և ուժ ու ճարակություն էլ չունեի, որ բարձրանամ վրան, որովհետև շատ ողորկ էր ու սայթաքուն:

Ու ես կանգնած տեղս նշան արեցի և պտտվեցի գմբեթի շորս բոլորը, շափելով դրա շրջագիծը, ու դուրս եկավ, որ դա լրիվ հիսուն քայլ է: Եվ սկսեցի մտածել, թե ինչպես մտնեմ այդ գմբեթի մեջ (Իսկ մայ-

րամուտն ու օրվա վերջը մոտենում էին), ու մեկ էլ արևն անհետացավ ու օդը մթնեց ու շուրջ բոլորը խավարեց: Ու ես կարծեցի, թե ամպը ծածկեց արևը, (իսկ դա ամուսնն էր): Եվ ես զարմացա ու գլուխս բարձրացրի և նայեցի վեր, իմանալու, թե այդ ինչ բան է, նայեցի ու լայն թևերով ու հսկայական մարմնով մի մեծ թռչուն տեսա, որը թռչում էր օդում, ու այդ նա էր, որ փակեց արևի աչքն ու ծածկեց նրա դեմքը:

Ու ես ավելի շատ զարմացա, իսկ հետո հիշեցի մի պատմություն, որ մի ժամանակ ինձ պատմել էին թափառական ու ճանապարհորդ մարդիկ, թե կան կղզիներ, ուր բնակվում է ոուխ՝ անունով վիթխարի մի թռչուն, ու այդ թռչունն իր ձագերին փղերով է կերակրում:

Ու ես համոզվեցի, — ասաց Սինդիբադը, — որ իմ տեսած գմբեթը ոուխի ձու է, և սկսեցի զարմանալ, թե ինչեր ասես որ չի ստեղծել մեծագոր ալլահը...

Եվ այդ ժամանակ հանկարծ թռչունը իջավ գմբեթին ու թևերով գրկեց այն, և ոտքերը մեկնեց գետնի վրա՝ գմբեթի հետևում ու այդպես էլ քնեց (թող փառավորվի՜ նա, ով չի բնում), ու այդ որ տեսա, վեր կացա տեղիցս ու շալմասս գլխիցս հանեցի և արձակեցի ու սկսեցի ոլորել, մինչև որ պարանի պես մի բան դարձավ, իսկ հետո այդ պարանը կապեցի մեջքիս ու փաթաթեցի գոտկիս շուրջը, և ինքս ինձ կապեցի թռչնի ոտքերին ու պնդացրի հանգույցը, ինձուի՜նձ ասելով. «Միգուցե, այս թռչունն ինձ տանի երկրներ, որտեղ քաղաքներ ու բնակչություն կա, այդ ավելի լավ կլինի, քան թե նստեմ այստեղ՝ այս կղզում»:

Ու այդ գիշերն անքուն անցկացրի, վախենալով, թե կքնեմ ու թռչունն այնքան անսպասելի կթռչի ու ինձ էլ հետը կտանի, որ չեմ իմանա: Իսկ երբ արևը ծագեց և օրը բացվեց, թռչունը ձվից վեր ելավ ու մի խլացուցիչ ճիչ արձակեց և, ինձ հետ միասին ճախրելով, օդ բարձրացավ, թռչելով վեր ու վեր, մինչև որ թվաց, թե երկնքի ամպերին հասավ: Իսկ հետո թռչունն սկսեց իջնել ու իջավ ինչ-որ երկրում ու թանեց մի բարձրագիր տեղ, և հենց որ ես հասա երկիր, կապս արագ քանդեցի նրա ոտքերից, որովհետև թռչունից վախենում էի. բայց թռչունն իմ տեղն էլ չգիտեր ու իմ ներկայությունն էլ չէր զգում:

Ու ես շալմայիս ծայրը քանդեցի ու թռչունից անջատվեցի և դողալով հեռացա, իսկ թռչունը մագիլներով գետնից ինչ-որ բան ճանկեց ու թռավ դեպի երկնի ամպերը: Ու ես նայեցի և տեսա, որ նրա մագիլների

1 Ռուխ — հեթաթային գիշատիչ թռչուն:

մեջ ահագին մարմնով երկար մի օձ է, որին թռչունը ճանկեց ու օգ բարձրացավ, և շատ զարմացա դրա վրա:

Եվ ես սկսեցի ման գալ այդտեղ ու տեսա, որ գտնվում եմ մի բարձրութեան վրա, որի տակ մեծ, լայնարձակ ու խորը մի հովիտ է տարածված, իսկ դրա եզրին վեր է խոյանում մի հսկայական սար, և ոչ ոք դրա գագաթը չի կարող տեսնել, այնքան որ բարձր է դա, ու ոչ ոք ուժ չի ունենա բարձրանալու դրա կատարը:

Ու ես սկսեցի կշտամբել ինձ, թե ինչու այդպիսի բան արեցի, Եվ բացականչեցի. «Ա՛խ, ինչքան լավ կլիներ, եթե մնայի այն կղզում... Կղզին ավելի լավ էր, քան այս ամայի վայրը, քանի որ կղզու պտուղներից ուտելու մի բան կգտնեի, և ջուր կխմեի գետերից, իսկ այստեղ ո՛չ ծառ կա, ո՛չ պտուղ, ո՛չ գետ: Զկա ավելի մեծ զբոսալուծանք և ուժ, քան բարձրյալ և ամենակարող ալլահինն է... Ամեն անգամ, երբ ազատվում եմ մի աղետից, ընկնում եմ մի ուրիշ դժբախտութեան մեջ, որն ավելի մեծ ու ծանր է լինում»:

Եվ ինքս ինձ սիրտ տալով, ոտքի ելա ու սկսեցի ման գալ հովտում և տեսա, որ հովտի հողը ալմաստ քարից է, որով շաղափում են մետաղներն ու թանկագին քարերը և գայլիկոնում հախճապակին և եղնգաքարը: Դա շոր ու պինդ մի քար է, որին ո՛չ երկաթը բան կանի, ո՛չ կայծքարը, և ոչ ոք, արճճի քարից բացի, դրանից մի փոքրիկ կտոր կարել կամ որևէ բանով կոտրել չի կարող: Ու այդ ամբողջ հովտը լիքն էր օձերով ու իժերով, որոնցից ամեն մեկը արմավենու շափ էր, ու այնքան մեծ էին նրանք, որ եթե նրանց մոտ փիղ գար, երևի նրան կուլ տային: Ու այդ օձերը գիշերն են դուրս գալիս բներից ու պահ են մտնում ցերեկը, որովհետև վախենում են, թե ոուխը կամ արծիվը կփախցնի իրենց ու հետո պատառ-պատառ կանի, և ես չէի իմանում, թե ինչն է դրա պատճառը:

Ու ես մնացի այդ հովտում, զղջալով արածիս համար, և ինքս ինձ ասում էի. «Ալլահը վկա, ես արագացրի իմ կործանումը»: Եվ օրը թեքվեց դեպի մայրամուտ, ու ես սկսեցի ման գալ հովտում և ինձ համար մի տեղ փնտրել, ուր կարողանայի գիշերել, ու վախենում էի ես այդ օձերից, և ուտել ու խմելս մոռացած, տարվել էի իմ վիճակի մասին մտածելով: Եվ ինձանից ոչ հեռու մի քարայր նկատեցի և մոտեցա ու տեսա, որ քարայրի մուտքը նեղ է, և մտա այդտեղ ու նշմարեցի, որ մուտքի մոտ մի մեծ քար կա: Ես այդ քարը հրեցի ու դրանով քարայրի մուտքը փակեցի, իսկ ինքս մնացի քարայրի մեջ ու մտքումս ասացի. «Ես անվտանգութեան մեջ եմ, քանի որ մտել եմ այստեղ, իսկ

երբ օրը բացվի, դուրս կգամ ու կտեսնեմ, թե ալլահի զորութունն ինչ դուռ բաց կանի»:

Ու ես քարայրում շուրջս նայեցի ու մեջտեղում մի ահագին օձ տեսա, որ պառկել էր ձվերի վրա, ու մարմնիս վրայի բոլոր մազերը բիզ-բիզ կանգնեցին: Եվ ես գլուխս բարձր պահած իմ դատը հանձնեցի ճակատագրին ու նախախնամությանը:

Ամբողջ գիշերն անքուն անցկացրի: Ու երբ արևը ծագեց և շողաց, մուտքը փակող քարը մի կողմ հրեցի ու քարայրից դուրս եկա, և հարբածի նման էի ես, ու գլուխս պտտվում էր երկար անքնությունից, քաղցից ու վախից: Եվ այդ վիճակում սկսեցի ման գալ հովտում, և հանկարծ իմ առջև մի մեծ կտոր միս ընկավ: Բայց ես մարդ չտեսա և շատ ու շատ զարմացա ու հիշեցի մի պատմություն, որ վաղ ժամանակներում լսել էի վաճառականներից, ճանապարհորդներից և ուխտավորներից: Նրանք ասում էին, թե ալմաստ քարի լեռներում ահավոր սարսափներ կան ու ոչ ոք չի կարող մոտենալ այդ քարին, բայց վաճառականները, որ ալմաստի առևտուր են անում, խորամանկության են դիմում, որպեսզի հասնեն դրան. նրանք վերցնում են ոչխարը, մորթում ու քերթում են, միսը մաս-մաս անում ու լեռան կատարից նետում հովիտ, և դեռևս խոնավ միսն ընկնում է այնտեղ, և՛ քարերը կպչում են մսին: Ու վաճառականները միսը մինչև կեսօր թողնում են այնտեղ, և թռչունները՝ արծիվներն ու բազենները, իջնում են մսի վրա, և ճանկերով բռնում ու բարձրացնում սարի գագաթը: Ու այնժամ մոտենում են վաճառականներն ու գոռգոռում թռչունների վրա, և թռչունները միսը թողնում են ու թռչում գնում, իսկ վաճառականները գալիս են ու մսին կպած քարերը պոկում, միսը նրանք թողնում են թռչուններին ու գազաններին, իսկ քարերը տանում են իրենց երկիրը: Եվ ոչ ոք ալմաստե լեռներին մոտենալու ուրիշ հնար չի կարող մտածել, բացի այս խորամանկությունից:

Ու նայելով այդ մսի կտորին,— շարունակեց Սինդիբադը,— ես հիշեցի այդ պատմությունն ու մոտեցա մսին և շատ քարեր հավաքեցի, հավաքեցի ու լցրեցի ծոցս ու դրեցի շորերիս արանքը: Ու այդպես ջուրում էի քարերն ու լցնում ծոցս, գոտուս տակ, շալմայիս ու շորերիս մեջ:

Ու հանկարծ տեսա մսի մի ուրիշ մեծ կտոր: Այդ որ տեսա, մոտեցա, ու շալմաս արձակեցի ու դրանով ինձ կապեցի մսին, մեջքիս վրա պառկեցի ու միսը դրեցի կրծքիս և պինդ բռնեցի, այնպես, որ միսը գեանից բարձր եղավ: Ու մեկ էլ մի արծիվ իջավ մսի կտորի վրա ու մագիլներով ճանկեց ու, միսն առած, օդ բարձրացավ, ու ես էլ պինդ

կախվեցի մսից: Եվ արծիվն այնքան թռավ, մինչև որ հասավ սարի գագաթին ու իջավ գետին: Ու հենց որ թռչունն ուզեց մսի մի պատառ պոկել, հետևից սարսափելի, բարձրագոչ մի աղաղակ լսվեց, և սարի վրա ինչ-որ ընկած սկսեցին զարկել ծառին: Եվ արծիվը վախից ցնցվեց ու թռավ օդ, ու ես կապերս քանդեցի, մսից պոկվեցի (իսկ իմ հագուստը արյունով էր ներկվել) և կանգնեցի դրա մոտ: Ու մեկ էլ արժվի վրա աղաղակող վաճառականը մոտեցավ մսին ու տեսավ, որ դրա կողքին մարդ է կանգնած, բայց նա ինձ հետ չխոսեց, և վախեցավ ու սարսափեց:

Ու մոտենալով մսին, նա շուռումուռ տվեց, բայց ոչինչ չգտավ դրա վրա: Երբ ոչինչ չգտավ, խլացնող ձայնով ճչաց ու բացականչեց. «Չկա՞ ամկի մեծ գորություն և ուժ, քան ալլահինն է: Ալլահի մոտ ենք պաշտպանություն փնտրում սատանայից, որ քարկոծ է եղել»:

Եվ նա ողբում էր ու ձեռքը ձեռքին խփելով ասում. «Վա՛յ ինձ, այս ինչ բան է, ինչ նշան է»: Եվ ես մոտեցա նրան, և նա հարցրեց. «Ո՞վ ես դու և ինչո՞ւ ես եկել այստեղ»:— «Մի՛ վախենա ու մի՛ սարսափիր,— պատասխանեցի,— ես լավ մարդկանցից եմ ու վաճառական էի, և ինձ մի սարսափելի բան պատահեց, և զարմանալի է այն պատմությունը, թե ինչպես եմ ընկել այս հովիտն ու հայտնվել այս սարի վրա: Ուրեմն, մի՛ վախենա, ես քեզ համար այնպիսի բան կանեմ, որ կուրախանաս, Ես շատ ալմաստ ունեմ, ու այնքան կտամ քեզ, որ կլիանաս, ու իմ մոտ եղած ամեն մի կտորն ավելի լավն է, քան այն, ինչ կարող էր քեզ բաժին ընկնել: Ուրեմն, մի՛ տրտմիր ու մի՛ վախենա»:

Ու երբ մարդը լսեց իմ խոսքը, շնորհակալություն հայտնեց ու ամենայն օրհնանք տվեց ինձ և սկսեց խոսել ինձ հետ և մնացած վաճառականներն էլ լսեցին, թե ոնց եմ խոսում իրենց ընկերոջ հետ, ու մոտեցան ինձ (իսկ ամեն մի վաճառական իր մի կտոր միսն էր գցե, հովիտ): Եվ մոտենալով մեզ, նրանք ողջունեցին ինձ ու շնորհավորեցին փրկվելուս առթիվ և տարան իրենց հետ: Ու ես նրանց պատմեցի այն ամենը, ինչ եկել էր գլուխս, ու թե ինչեր եմ քաշել ճանապարհորդության ժամանակ, և հայտնեցի, թե ինչու եմ ընկել այդ հովիտը: Եվ ապա մոտս եղած քարերի մեծ մասը տվեցի այն մսի տիրոջը, որին էսպիլ էի ինձ, և նա շատ ուրախացավ ու օրհնեց ինձ և շնորհակալություն հայտնեց դրա համար: «Ալլահը՛ վկա,— ասացին վաճառականներն ինձ,— այս մարդը նորից կյանք տվեց քեզ: Մինչև հիմա այստեղ հասածներից ոչ մեկը չի փրկվել, Փառք ալլահին քո փրկության համար»: Ու նրանք գիշերն անցկացրին անվտանգ ու սքանչելի մի վայրում, և

նրանց հետ էլ ես, անշափ ուրախանալով, որ ողջ եմ մնացել և ազատվել եմ օձերի հովտից ու հասել րնակելի երկիր: Իսկ երբ օրը բացվեց, մենք վեր կացանք ու գնացինք առաջ այդ բարձր սարով և հովտում բազմաթիվ օձեր տեսանք: Ու մենք այնքան գնացինք, մինչև որ հասանք մի այգու, որը մի սիրուն կղզու վրա էր, ու այդ այգում կային քաֆուրի ծառեր, որոնցից ամեն մեկի տակ մի հարյուր մարդ կարող էր հովանի գտնել: Իսկ թե մեկն ու մեկն ուզենա քաֆուր հանել, ծառի կատարին երկար գործիքով անցք կանի ու այդ անցքից հոսածը կհավաքի: Եվ թափվում է քաֆուրի ջուրն ու թանձրանում, ինչպես սոսինձ, հենց դա էլ քաֆուր ծառի հյութն է: Ու դրանից հետո ծառը շորանում է ու դառնում վառելիափայտ: Իսկ այդ կղզում կենդանիների մի տեսակ կա, որ կոչվում է ալ-քարքադան¹, ու այդ անասուններն այնտեղ արածում են, ոնց որ կովերն ու գոմեշները մեր երկրում, բայց այդ կենդանիների մարմինն ավելի խոշոր է, քան ուղտինը, և նրանք խոտ են ուտում: Ալ-քարքազանը խոշոր գազան է, և նրա գլխի մեջտեղը մի հաստ եղջյուր կա, որի երկարությունը տասը կանգուն է և որի վրա մարդու պատկեր կա: Ու այդ կղզում կան էլի կենդանիներ, որ կովերի տեսակից են: Իսկ սարերում ու դաշտերում թափառող ծովայինները, ճանապարհորդները և ուխտավորները պատմում էին, որ ալ-քարքադան կոչված գազանն իր եղջյուրի վրա մի մեծ փիղ կարող է պահել ու այդպես արածել կղզում. փղի ճարպը, որ արևի տաքությունից հալվում ծորում է ալ-քարքադանի գլխին, լցվում է նրա աչքերը, և ալ-քարքադանը կուրանում է: Եվ նա պառկում է ամիսն, ու թոշում գալիս է ոուխ թոշունը և, մագիլների մեջ առած, տանում է նրան: Ու այդպես թոշում է իր ձագերի մոտ ու նրանց կերակրում այդ գազանի մսով ու փղի մսով, որ ալ-քարքադանի եղջյուրի վրա է լինում: Ու այդ կղզում տեսա գոմեշի պես շատ կենդանիներ, որոնց նմանը մեզ մոտ չկա: Ու այդ հովտում շատ ալմաստ քարեր կան, որ ես դրել եմ ծոցս ու հետս բերել:

Եվ վաճառականները մնացած քարերի փոխարեն ապրանքներ և ուրիշ բաներ տվեցին ու այդ ապրանքը հետները տարան, որ հետո ինձ տան, և տվեցին ինձ դիրհեմներ ու դինարներ, ու ես ման էի գալիս այդ մարդկանց հետ ու տեսնում օտար երկրներ և այն ամենը, ինչ մեծագոր ալլահն է ստեղծել, Ու այսպես անցնում էի ես հովտից հովիտ ու քաղաքից քաղաք, և մենք ծախում ու առնում էինք, մինչև որ հասանք

¹ Ալ-քարքադան — սնկեղջյուր:

Բասրա քաղաքը: Ու մենք մնացինք այնտեղ մի քանի օր, իսկ հետո ևս եկա Բաղդադ քաղաքը»:

Ու երբ Սինդիբադ-ծովագնացն օտարութիւնից վերադարձավ ու ոտք դրեց Բաղդադ՝ խաղաղութեան օթեանը, գնաց իր թաղն ու մտավ իր տունը, հետք բերելով շատ արժանատի քարեր, և կային նրա մոտ փող ու ապրանքներ ու արժեքավոր ուրիշ առարկաներ: Եվ նա հանդիպեց իր հարազատներին ու մտերիմներին և սկսեց ողորմութիւն բաժանել և պարգևներ ու ընծաներ տալ, և նվերներ տվեց իր բոլոր հարազատներին ու բարեկամներին, և սկսեց լավ ուտել ու լավ խմել, և գեղեցիկ շորեր հագնել ու մտերմութիւն անել և գործ բռնել մարդկանց հետ: Եվ մոռացավ այն ամենը, ինչ կրել էր: Եվ ապրում էր նա հաճելի կյանքով, շունենալով ո՛չ հագս, ո՛չ վիշտ, և ժամանակն անցկացնում էր խաղերով ու զվարճութեամբ, և ով նրա վերադարձի լուրը լսեց, եկավ նրա մոտ և հարցուփորձ արեց ճանապարհորդութիւնից և օտար երկրների դրութիւնից: Ու պատմելիս Սինդիբադը պատմում և հաղորդում էր նրանց, թե ինչ փորձութիւններ ու շարշարանքներ է կրել ինքը, և նրան լսողը ապշում էր, թե ինչքա՛ն շատ տանջանքներ է տեսել նա, և շնորհավորում էր փրկվելու առթիվ:

Ահա և վերջն այն ամենի, ինչ պատահեց Սինդիբադին ու ինչ եկավ նրա զուխը երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ: «Իսկ վաղը,— ասաց նա հավաքվածներին,— եթե մեծագոր ալլահը կամենա, ևս ձեզ կպատմեմ երրորդ ճանապարհորդութեան մասին, ու թե ինչեր տեսա ես այդ ժամանակ»:

Եվ երբ Սինդիբադ-ծովագնացն իր պատմութիւնն արեց պրծավ Սինդիբադ-ցամաքայինին, բոլորը զարմացան դրա վրա և ընթրեցին նրա տանը, և նա կարգադրեց հարյուր մսխալ ոսկի տալ Սինդիբադին: Եվ Սինդիբադն առավ ոսկիներն ու գնաց իր ճամփով, ապշելով այն ամենի վրա, ինչ որ քաշել էր Սինդիբադ-ծովագնացը:

Եվ Սինդիբադ-բեռնակիրն իր տանը գովաբանեց Սինդիբադ-ծովագնացին ու աղոթեց նրա համար: Իսկ երբ առափնուր բացվեց, և արևը փայլեց ու շողաց, Սինդիբադ-բեռնակիրը վեր կացավ և, առափնուրան նամազն անելուց հետո, գնաց Սինդիբադ-ծովագնացի տունը, ինչպես որ սա իրեն հրամայել էր:

Սինդիբադ-ցամաքայինը մտավ նրա տուն ու բարի լույս մաղթեց նրան, և Սինդիբադ-ծովագնացն ասաց նրան. «Բարով եկար», և նրա հետ նստեց ու սպասեց, մինչև որ մյուս բարեկամներն ու ընկերներն էլ

եկան՝ մի ամբողջ բազմություն: Ու երբ նրանք կերան, խմեցին, հաճույք ստացան, խաղեր խաղացին և ուրախացան, Սինդիրադ-ծովագնացըն սկսեց խոսել և ասաց.

ԵՐՐՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացեք, ո՛վ եղբայրներ, ու լսեցեք իմ երրորդ ճանապարհորդության պատմությունը, սա ավելի զարմանալի է, քան այն, ինչ դուք լսել եք երեկ ու մյուս օրը, իսկ ավա՛հն ամենից լավ գիտի թաքուն բաներ և ամենից իմաստուն է:

Արդեն վաղուց վերադարձել էի երկրորդ ճանապարհորդությունից և ապրում էի մեծ բավականության և ուրախության մեջ, հրճվելով, որ այդքան բարեկեցիկ կյանք եմ վարում: Ինչպես երեկ պատմեցի, ես մեծ կարողություն էի դիզել, և ավա՛հը հատուցել էր այն ամենի փոխարեն, ինչ կորցրել էի, ու ես միառժամանակ մնացի Բաղդադում, ապրելով շտեմնաված երջանկության, ուրախության, լիության ու զվարճության մեջ, և ցանկացա աշխարհ ման գալ ու ճանապարհորդել, և հողիս կարոտեց առևտուր անելուն, եկամուտ ձեռք բերելուն և շահույթ ստանալուն, չէ՞ որ մարդու հոգին հաճախ մղում է նաև շար բաներ կատարելու...

Ու ես գնալու վճիռ կայացրի, և առա շատ ապրանքներ, որ հարմար էին ծովով տանելու համար, և կապկպեցի դրանք, որ հետս տանեմ, ու վերցնելով այդ ամենը, դուրս ելա Բաղդադ քաղաքից ու գնացի դեպի Բասրա քաղաքը: Եվ գնացի դետափ ու տեսա մի մեծ նավ, որտեղ շատ վաճառականներ ու ճամփորդներ կային, ու բոլորն էլ բարի և հրաշալի մարդիկ էին, բոլորն էլ հավատացյալ, խղճով ու առաքինի: Եվ նրանց հետ միասին ես նավ նստեցի, ու մենք ամենակարող ավա՛հի օրհնությամբ և նրա օգնությամբ ու աջակցությամբ ճանապարհ ընկանք, բարօրության և ապահովության հույսով բերախանալով: Ու մենք անցնում էինք ծովից ծով և կղզուց մյուս կղզի ու քաղաքից մյուս քաղաք, և որտեղ լինում էինք, ման էինք գալիս այնտեղ ու ժամանակ անցկացնում և ծախում ու առնում էինք, և ծայրահեղ ուրախություն և խնդություն էինք զգում: Եվ օրերից մի օր, երբ մենք նավում էինք մուկենոդ ու շառաչող ծովի միջով, ուր ավիթներն իրար էին զարնվում, տախտակամածի եզրին կանգնած ու ծովին նայող նավապետը հանկարծ սկսեց ծեծել իր երեսն ու նավի առագաստները հավաքեց, խարխալ գցեց, մորուքը փետեց ու շորերը պատառոտեց և ամբողջ ձայնով գոռաց: «Ով

նաովապետ, ի՞նչ պատահեց», — հարցրինք մենք նրան, և նա ասաց. «Ով խաղաղ ճամփորդներ, իմացեք, որ քամին հաղթեց մեզ ու ծովի հենց մեջտեղը ճամփից շեղեց մեր նավը, ու մեր շար բախտից, ճակատագիրը մեզ նետել է բրդոտների լեռան կողմը: Իսկ դրանք կապիկների պես մտրդիկ են, ու այստեղ հասած մարդկանցից ոչ ոք չի ազատվել նրանց ձեռքից: Եվ սիրտս վկայում է, որ մենք բոլորս կործանվելու ենք»:

Եվ նավապետն իր խոսքը դեռ չէր վերջացրել, երբ կապիկները եկան ու բոլոր կողմերից շրջապատեցին նավը, և մորեխի պես բազմաթիվ էին նրանք, և լցվեցին նավը ու բռնեցին ցամաքը: Ու մենք վախեցում էինք, որ եթե նրանցից մեկնումեկին սպանենք կամ խփենք, կամ վնասենք, նրանք իրենց ծայրահեղ շարությամբ կսպանեն մեզ (չէ՞ որ շարությունը քաջությունից ուժեղ է), և սարսափում էինք մենք, որ նրանք կհաղտպտեն մեր ունեցվածքն ու ապրանքները կտանեն: Իսկ այդ բրդոտներն ամենագարշելի գազաններ են, և նրանց մազերը սև թաղիքի նման են, և նրանց տեսքը կսարսափեցնի ամեն մեկին, ու ոչ ոք չի հասկանում նրանց լեզուն և ոչինչ չգիտի նրանց մասին: Նրանք մարդկանցից խրտնում են և դեղին աչքեր ունեն ու սև դեմքեր, նրանք կարճահասակ են և նրանցից ամեն մեկի բարձրությունը շորս թիզ է:

Եվ կապիկները բարձրացան ճոպանների վրա ու ատամներով կցտրտեցին դրանք, և նավի բոլոր կողմերի պարաններն էլ կտրատեցին, ու նավը թեքվեց մի կողմի վրա ու մոտեցավ նրանց սարին: Ու երբ նավին արդեն ափի մոտ էր, կապիկները ճանկեցին բոլոր վաճառականներին ու ճամփորդներին և իջան կղզի ու նավն էլ զսվեցին ու տարան այն ամենը, ինչ որ կար նրա մեջ: Ու նավի հետ կապիկները գնացին իրենց ճամփով, թողնելով մեզ կղզում, ու նավն անհետացավ մեր աչքից և մենք չիմացանք, թե ուր տարան մեր նավը:

Ու մենք մնացինք այդ կղզում և սնվում էինք պտուղներով, բանջարեղենով ու հասապտուղներով և ջուր էինք խմում կղզում հոսող գետերից: Եվ հանկարծ մեր դեմ երևաց մի տուն, որ կառուցված էր կրդյուր մեջտեղը, Ու մենք երեսներս դարձրինք դրա կողմն ու գնացինք դեպի այդ տունը: Ու պարզվեց, որ դա ամուր սյուններով ու բարձր պարսպով մի պալատ է, դրա երկու փեղկանի դարպասը բաց էր, ու փեղկերը շինված էին սև փայտից, Ու մենք այդ պալատի դարպասից ներս մտանք և տեսանք լայն ու մեծ բակի նման ընդարձակ մի տարածություն, ու բակի շուրջբոլորը բազմաթիվ բարձր դռներ կային, իսկ մեջտեղը մեծ ու բարձր մի նստարան էր դրված, որի մոտ ճաշ պատրաստելու տաններ կային, որոնք կախված էին կրակարանների վրա, իսկ դրանց շուրջը

շատ ու շատ սակորներ էին թափված: Բայց մենք այդտեղ ոչ մի մարդ չտեսանք ու դարմանքից ապուշ կտրեցինք: Ու մենք մի քիչ նստեցինք պալատի բակում, իսկ հետո մեր քունը տարավ ու լուսաբացից մինչև մայրամուտ քնեցինք: Ու հանկարծ մեր տակի հողը ցնցվեց, ու մենք օդի մեջ որոտ լսեցինք, և պալատից դուրս ելավ ու դեպի մեզ եկավ մի վիթխաքի արարած, որ մարդու նման էր, և որը սև գույն ուներ ու բարձր հասակ, և հսկայական արմավենու էր նմանվում: Նրա աչքերը երկու վառվող խանձողի պես էին, և նա ժանիքներ ուներ, որ վարազի ժանիքների նման էին, ու մեծ բերան, որ ասես ջրհորի բերան լինեք, և շրթոններ ուներ նա, որ ուղտի սրունքների պես էին ու կախված էին նրա կրծքին, և երկու ականջ ուներ, որ հսկայական քարերի նման էին ու կախվել էին ուսերին, իսկ ձեռքերի ճանկերը ճիշտ ու ճիշտ առյուծի ճանկերի նման էին:

Եվ այդպիսի կերպարանքով մի արարած տեսնելով, մենք կարկաճեցինք, ու մեր վախը սաստկացավ, և մեր ահը մեծացավ, և ուժգին վախից, վշտից ու սաբասափից մենք իսկական մեռելներ դարձանք:

Ու գետնին ւայք դնելուց հետո այդ մարդը մի քիչ նստեց նստարանին, ապա վեր կացավ ու մոտեցավ մեզ, — ասաց Մինդիբազը: — Հետո այդ ածղահան բռնեց ձեռքս, շոկելով ինձ իմ ընկեր վաճառականների միջից, և մի ձեռքով գետնից վեր բարձրացրեց ու սկսեց շոշափել և շուռումուռ տալ, ու ես նրա ձեռքին՝ ոնց որ մի փոքրիկ պատան:

Ու այդ մարդն այնպես էր շոշափում ինձ, ինչպես մսագործը տրևադում է մորթելու ոչխարը, Ու նա տեսավ, որ ես մեծ վշտից թուլացել եմ և հոգնածությունից ու երկար ճամփա գնալուց նիհարել և վրաս միս չկա, ձեռքից բաց թողեց ինձ ու իմ ընկերներից մի ուրիշին վերցրեց: Եվ սկսեց նրան շուռումուռ տալ, ինչպես ինձ, և տնտղել, ինչպես ինձ էր անտղում, ու նրան էլ ձեռքից բաց թողեց: Ու այդ հսկան շէր դադարում մեզ շոշափել ու անտղել, և մեկը մյուսի հետևից շուռումուռ տալ, մինչև որ հերթը հասավ նավապետին, որի նավով մենք ճամփա էինք գնում:

Իսկ այդ նավապետը գեր, հաստափոր, թիկունքը լայն մի մարդ էր, որ մեծ ուժ ու հզորություն ուներ, ու նավապետը դուր եկավ մարդակերին, և մարդակերը բռնեց նրան, ինչպես մսագործն է ճանկում զոհին, ու գցեց գետին, և ոտքը դրեց նրա վզին ու կտրեց վիզը: Ու հետո նա բերեց երկար մի շամփուր ու այնպես կոխեց նավապետի քամակը, որ շամփուրի ծայրը դուրս եկավ նրա գագաթից: Ու մարդակերը թեժ կրակ վառեց ու շամփուրը, որը խրված էր նավապետի մեջ, կախեց կրակի վրա ու զոհին այնքան պատեց վառվող ածուխների վրա, մինչև որ նրա

միսը լավ խորովվեց: Ու հրեշը խորովածը կրակի վրայից վերցրեց ու
դրեց իր առջև ու անդամները բաժան-բաժան արեց, ինչպես մարդը հա-
վի ճուտն է պատառ-պատառ անում: Եվ սկսեց ճանկերով քրքրել նրա
միսը և ուտել: Ու այդպես շարունակեց նա այնքան ժամանակ, մինչև
որ ամբողջ միսը կերավ ու ոսկորները կրծեց և ոչ մի թել միս չթողեց: Ու
այդ մարդը ոսկորների մնացորդները շարտեց վառվող ածուխների մեջ,
և հետո մի քիչ նստեց ու փուլեց նստարանին և քնեց ու սկսեց այնպես-
խումփացնել, ինչպես խոյը կամ մորթված անասունն է խոխոացնում:
Ու քնեց նա մինչև առավոտ, իսկ հետո վեր կացավ ու գնաց իր ճամփով:

Եվ երբ մենք համոզվեցինք, որ նա հեռացել է, սկսեցինք իրար
նետ խոսել ու ինքներս մեզ ողբալ, և ասացինք. «Օ՛, երանի թե խեղդ-
վեինք ծովում կամ մեզ լափեին կապիկները... Այդպես մեռնելն ավելի
լավ կլիներ, քան թե կրակի վրա խորովվելը: Ալլա՛հը վկա, այսպիսի
մահը շատ վատ մահ է, բայց ալլահն ինչ կամենա, այն էլ կատարվում
է: Չկա՛ ավելի մեծ գորություն և ուժ, քան բարձրյալ ու ամենակարող
ալլահինն է: Մենք կմեռնենք կարոտի մեջ, ու ոչ ոք մեք մասին ոչինչ
չի իմանա, ու չկա այլևս մեզ համար փրկություն այստեղից»:

Ու հետո մենք վեր կացանք և դուրս եկանք կղզի, որ թաքնվելու մի
տեղ կամ փախչելու մի հնար գտնենք, ու մեռնելը մեզ հեշտ թվաց,
միայն թե մեր միսը կրակի վրա չխորովեն:

Բայց հարմար տեղ չգտանք, ու թաքնվեինք, և իրիկունը վրա
հասավ, ու մենք սաստիկ վախից վերադարձանք պալատ:

Ու մենք այդպես նստած մնացինք մի քիչ, և հանկարծ մեր տակի
հողը դողդողաց, ու սև մարդը եկավ և, մոտենալով մեզ, սկսեց մեկը
մյուսի հետևից շուռումուռ տալ մեզ, ինչպես առաջին անգամ: Եվ տրնտ-
յում էր նա մեզ, մինչև որ մեզանից մեկը դուր եկավ նրան: Եվ ընտրե-
լուց հետո նա բռնեց զոհին և նույն բանն արեց, ինչ որ առաջին օրը
նստապետին արեց. սև աժդահան նրան խորովեց ու կերավ, և քնեց
նստարանին, ու քնեց ամբողջ գիշերը, խումփացնելով մորթվող անա-
սունի պես:

Իսկ երբ օրը բացվեց, նա վեր կացավ ու սավորականի նման գնաց
իր ճամփով, մեզ թողնելով պալատում: Ու մենք հավաքվեցինք և սկսե-
ցինք խոսել ու ասացինք իրար. «Ալլա՛հը վկա, եթե մենք մեզ գցենք ծո-
վըն ու ջրահեղձ լինելով մեռնենք, ավելի լավ կլինի, քան թե խորովվե-
լով մեռնենք, որովհետև այգպիսի մահը դարչելի է»: «Լսեք, թե ինչ եմ
ասում,— խոսեց մեզանից մեկը,— մենք պիտի խորամանկություն
անենք, սպանենք այդ մարդուն ու ամեն հոգսից ազաավենք և մոռնու-

մաններին ազատենք դրա թշնամութիւնից ու կեղեքումից»։— «Ականջ արեք, ո՛վ իմ եղբայրներ,— ասացի ես,— եթե նրան հարկավոր է անպատճառ սպանել, եկեք այս գերանները տեղափոխենք ծովափ ու փայտերի մի մասն էլ քարշ տանք այնտեղ և մեզ համար նավ շինենք մեծ առագաստանավի նման, իսկ դրանից հետո մենք կջանանք խորամանկությամբ նրան սպանել, նավ կնստենք ու ծովով կգնանք, ուր որ կամենա ալլահը, կամ կնստենք այստեղ, մինչև որ մեր մոտով մի նավ անցնի, ու այնժամ մենք կնստենք այդ նավը: Իսկ եթե չկարողանանք այդ մարդուն սպանել, այստեղից կհեռանանք ու նավելով կգնանք հեռու, թեկուզ խեղդվենք էլ, կազատվենք կրակի վրա խորովվելուց ու այդպիսի մահով մեռնելուց: Թե փրկվեցինք՝ լավ, իսկ թե խեղդվեցինք, կմեռնենք նահատակների պես»: «Ալլահը վկա, ճիշտ ես ասում»,— խոսեցին բոլորը: Ու մենք պայման կապեցինք, որ այգ գործը կատարենք, ու սկսեցինք աշխատանքը:

Գերանները պալատից դուրս տարանք ու նավ շինեցինք, ու նավը կապեցինք ափի մոտ, իսկ հետո նրա մեջ ուտելիքի պաշար դրեցինք մի քիչ ու վերադարձանք պալատ, և երբ իրիկունը վրա հասավ, գետինը դողդողաց, ու ներս մտավ սև մարդակերը, ոնց որ կծոտող շունը ներս մտնի: Ու նա սկսեց մեզ մեկամեկ շուռումուռ տալ ու տնտղել, և վերցնելով մեզանից մեկին, նույն բանն արեց, ինչ որ նախորդներին, ու կերավ նրան, և քնեց նստարանին, և նրա խումփոցը ամպի որոտի նման էր: Ու վեր կացանք մենք և երկաթե երկու շամփուր վերցրինք այն շամփուրներից, որ ընկած էին հենց այնտեղ: Եվ շամփուրները դրեցինք թեժ կրակին այնքան ժամանակ, մինչև որ կարմրեցին ու վառվող ածուխի պես շիկացան, ու դրանք պինդ սեղմեցինք ձեռքներիս մեջ և մոտեցանք այդ մարդուն, որ քնած էր ու խումփացնում էր: Եվ շամփուրները դեմ տալով նրա աչքերին, բոլորս միասին ինչքան ուժ ունեինք ու միւսնգամից հուսյ տվեցինք ու խրեցինք նրա աչքերի մեջ, երբ նա քնած էր, Եվ նրա աչքերը փոս ընկան, ու նա մորթվող անասունի պես բղավեց, այնպես բղավեց, որ սրտներս դող ընկավ, իսկ հետո նա թափով վեր կացավ նստարանից և սկսեց փնտրել մեզ, իսկ մենք փախանք դեսուդեն, բայց նա այդ բանը չէր տեսնում, քանի որ աչքերը կուրացել էին: Եվ մենք նրանից սաստիկ վախեցանք ու այդ բոպերն համոզվեցինք, որ կկործանվենք, և փրկվելու հույսը կորցրեցինք, իսկ այդ մարդը խարխափելով քալեց դարպասի կողմն ու գոռգռալով դուրս գնաց, ու մենք մեծ սարսափի մեջ էինք, և մեր տակ գետինը ցնցվում ու դողում էր նրա բարձրագույն ղղավոցից:

Ու նա դուրս եկավ պալատից (իսկ մենք գնում էինք նրա հետևից) ու մեզ փնտրելով, գնաց իր ճամփով, իսկ հետո վերադարձավ, և նրա հետ մի կին կար, իրենից ավելի վիթխարի և ավելի վայրենի տեսքով, ու երբ մենք տեսանք նրան ու կնոջը, որ նրա հետ էր, և ավելի սարսափելի էր, քան ինքը, անշափ վախեցանք:

Ու տեսնելով մեզ, նրանք շտապեցին մեր կողմը, իսկ մենք վեր կացանք, մեր շինած նավի կապը քանդեցինք ու, նստելով նրա մեջ, իրեցինք դեպի ծով: Իսկ երկու աժդահաներից ամեն մեկը քարափի մի սկզբակալ բեկոր ուներ ձեռքին, ու նրանք քարերը շարտեցին մեզ վրա այնքան ժամանակ, մինչև որ մեզանից շատերը, քարկոծ լինելով, մեռան, ու նավի մեջ մենակ երեք հոգի մնացինք՝ ես ու ես երկու հոգի:

Ու մեր նավը մոտեցավ մի ափի, և մենք դուրս եկանք ցամաք ու գնացինք մինչև օրվա վերջը, — պատմում էր Սինդիբատը, — և վրա հասավ գիշերը, ու մենք մնացինք նույն վիճակում: Եվ մի քիչ քնեցինք ու բնից արթնացանք, և հանկարծ վիթխարի շափերի մի թևավոր վիշապ մեր ճամփան իր մարմնով կտրեց, ու, գալով մեզանից մեկի կողմը, վերցրեց, կուլ տվեց նրան մինչև ուսերը, իսկ հետո կուլ տվեց նրա մնացած մասը, ու մենք լսեցինք, թե մարդու ոսկորները ոնց էին շարդոտվում վիշապի փորում, և վիշապը գնաց իր ճամփով: Մենք սարսափալուր եղանք դրանից և սկսեցինք սղբալ մեր ընկերոջ մահը, սաստիկ վախ զգալով ինքներս մեզ համար, և ասացինք. «Ալլահը վկա, սպառնալու բան է. մի մահը մյուսից զզվելի է: Ուրախանում էինք, որ սևամորթից փրկվեցինք, բայց մեր ուրախությունը վաղաժամ էր: Չկա ավելի մեծ զորություն և ուժ, քան ալլահինն է: Ամենակարող ալլահ, մենք սղաավեցինք սևամորթից ու ծովում խեղդվելուց, բայց ինչպես ազատվենք շարագույժ աղետից»: Ու հետո մենք ոտքի ելանք և սկսեցինք ման գալ կղզում, սնվելով պտուղներով ու խմելով անվակների ջուրը: Ու սնացինք այնտեղ մինչև իրիկուն: Ու մենք տեսանք մեծ ու բարձր մի ծառ և բարձրացանք այդ ծառն ու քնեցինք դրա կատարին, և ես բարձրացա ու նստեցի ամենավերևի ճյուղին: Իսկ երբ վրա հասավ մութ գիշերը, վիշապն եկավ ու շորս կողմ աչք ածելուց հետո, ուղղվեց հենց այն ծառի կողմը, որի վրա մենք նստած էինք, և եկավ ու հասավ ընկերոջս և նրան կուլ տվեց մինչև ուսերը, և փաթաթվեց ծառին. ու ես լսում էի, թե ինչպես էին խշրտում կուլ գնացած ոսկորները վիշապի փորում, իսկ հետո վիշապը կուլ տվեց նրան մինչև վերջ, ու այդ բուրբուրը ես տեսա իմ աչքերով:

Ռրանից հետո վիշապն իջավ ծառից ու գնաց իր ճամփով, իսկ ես գիջե՛րվա մնացորդն անցկացրի ծառի վրա: Ու երբ օրը բացվեց և լույս եղավ, իջա ծառից, սաստիկ վախից ու սարսափից դիակի նման դարձած, և ուզում էի նեւովել ծովն ու ազատվել երկրային կյանքից, բայց կյանքս ինձ աննշան շթվաց, քանի որ կյանքը թանկ է մեզ համար: Ու ես ոտքերիս լայնակի կապեցի փայտի մի կտոր, ու մի կտոր էլ կապեցի ձախ կողքից, մի ուրիշն էլ՝ աջ կողքիս ու մեկն էլ փորիս, ու մյուսն էլ, որ ավելի լայն էր ու երկար, լայնակի կապեցի գլխիս, ինչպես որ ոտքերիս էի կապել, ու մնացի փայտի այդ կտորների արանքում, որոնք ամեն կողմից շրջապատում էին ինձ: Ու ես պինգ կապկպվեցի ու ընկա գետին՝ փայտի այդ բոլոր կտորների հետ միասին, և պառկած մնացի դրանց մեջ, իսկ դրանք իսկական սենյակների պես պատել էին ինձ: Ու երբ վրա հասավ գիշերը, վիշապը սովորականի պես եկավ և նայեց ինձ ու քաչեց իմ կողմը, բայց չկարողացավ կուլ տալ, քանի որ այդ դրուժյան մեջ էի՝ բոլոր կողմերից փայտի կտորներով շրջապատված:

Ու վիշապը պտույտ եկավ շուրջս, բայց չկարողացավ թաթերը հասցնել ինձ, իսկ ես տեսնում էի այդ և սաստիկ ահ ու սարսափից մեռածի պես էի, ու վիշապը մեկ հեռանում էր ինձանից, մեկ հետ գալիս, ու այդպես արեց նա անդադար, բայց ամեն անգամ, երբ ուզում էր ճանկել ու կուլ տալ ինձ, խանգարում էին փայտի կտորները, որ շորս կողմից կապված էին մարմնիս: Ու այդ բանը նա արեց մայրամուտից սկսած, մինչև որ արևը ծագեց նորից, ու լույսը բացվեց, և արևը շողաց, ու այնժամ վիշապը գնաց իր ճամփով՝ խիստ զայրացած ու ջղայնացած, իսկ ես ձեռքս պարզեցի ու փայտի կտորներն արձակեցի ինձանից, ու կարծես թե մեռելիների մեջ եղած լինեի այն ամենից հետո, ինչ բերել էր վիշապը իմ գլուխը:

Ու ես ոտքի ելա և սկսեցի ման գալ կղզում, և հասնելով կղզու ծայրին, աչքս զցեցի ծովի կողմն ու հեռվում՝ ալիքների մեջ տեսա մի նավ: Ու վերցրի ծառի մի մեծ ճյուղ և սկսեցի գոռալ ու թափահարել, որ նավի վրայի մարդիկ տեսնեն, ու նրանք նկատեցին ինձ և ասացին. «Մենք անպատճառ պետք է տեսնենք, թե ինչ բան է դա, գուցե, մա՞րդ է»: Ու նրանք մոտեցան ափին և, լսելով իմ կանչը, մոտ եկան ու վերցրին ինձ և տարան նավ: Նրանք սկսեցին հարցուփորձ անել, թե ինչ է պատահել ինձ, ու ես սկզբից մի՛նչև վերջ ամեն ինչ պատմեցի նրանց, պատմեցի այն բոլորը, ինչ եկել էր գլուխս, ու թե ինչ աղետների մեջ էի ընկել ես: Եվ վաճառականները շատ զարմացան պատմածիս վրա, քան

նետո բերեցին իրենց հագուստներից և հագցրին ինձ ու ծածկեցին ամս-
 թրս և ուտելու բան դրեցին առջևս, ու ես կերա այնքան, մինչև որ կըշ-
 տացա: Եվ ինձ սառը, քաղցրահամ ջուր տվեցին նրանք, և իմ սիրտը
 կյանք առավ ու հոգիս հանգստացավ, և մի մեծ անդորրություն համա-
 կեց ինձ, և ալլահը հարություն տվեց ինձ մեռնելուց հետո: Ու ես փառք
 տվեցի մեծազոր ալլահին՝ նրա շնորհ գթասրտության համար, և գոհու-
 թյուն հայտնեցի նրան, ու իմ վճռականությունն ամրապնդվեց. շէ՞
 որ համոզված էի, թե կկործանվեմ, ու մինչև անգամ ինձ թվաց, թե այն
 ամենը, ինչ կատարվում է ինձ հետ, երազ է:

Եվ մենք շարունակեցինք գնալ մեր ճանապարհով, ու մեծազոր ալ-
 լահի կամբով քամին հաջողակ էր և օգնում էր մեզ: Գնացինք, այնքան
 գնացինք, մինչև մոտեցանք աս-Սալահիտա կոչված կղզուն: Ու նավա-
 պետը կանգնեցրեց նավը կղզու մոտ, և բոլոր վաճառականներն ու
 ճամփորդներն ափ իջան և ապրանքներն էլ տարան, որ ծախեն և ուրիշ
 բաներ առնեն: Ու նավի տերը գիմեց ինձ,— շարունակեց Սինդիբատ-
 վագնացը, և ասաց. «Հավ լսիր իմ խոսքը: Դու օտարական ես ու չքա-
 վոր, և դու մեզ պատմեցիր, որ շատ սարսափներ ես տեսել: Ես ուզում
 եմ քեզ օգտակար լինել և օգնել, որ կարողանաս հասնել քո երկիրը, և
 դու գրա փոխարեն կաղոթես ինձ համար»:— «Հավ,— պատասխանեցի
 ես,— իմ աղոթքները քեզ համար կլինեն»:— «Իմացիր,— ասաց նավա-
 պետը,— որ մեզ հետ մի ճանապարհորդ կար, որին մենք կորցրինք, ու
 չլիտենք՝ կենդանի՞ է նա, թե մեռած, ու ոչ մի լուր չունենք նրանից:
 Խոսում եմ նրա հակերջ քեզ տալ, որ դու այս կղզում գրանք ծախես և
 փողը մոտդ պահես, իսկ մենք քո աշխատանքի ու ծառայության դիմաց
 մի բան կտանք: Իսկ գրանցից ինչ որ մնաց, կվերցնենք ու, երբ հասնենք
 Բադդադ քաղաքը, կհարցնենք, թե որտեղ են այդ մարդու հարազատ-
 ները, և մնացած ապրանքներն ու ծախվածի փողը կտանք նրանց: Չե՞ս
 ցանկանա արդյոք ընդունել այդ ապրանքներն ու գնալ կղզի, որ ծա-
 խես գրանք, ինչպես վաճառականներն են ծախում»:— «Լսո՛ւմ եմ ու հնա-
 գանդվում, տեր, ինչքա՛ն ողորմած ու բարեգործ ես դու»,— պատաս-
 խանեցի ես ու նավապետին մաղթեցի ամենայն բարիք և շնորհակալ
 եղա նրանից: Նավապետն այդ որ լսեց, բռնակիրներին ու նավաստիներին
 սրտավիրնց ապրանքներն իջեցնել կղզի ու հանձնել ինձ: Եվ նավի գրա-
 դիրը հարցրեց նրան. «Ո՞վ նավապետ, ի՞նչ հակեր են գրանք, որ տա-
 նում են նավաստիներն ու բռնակիրները և վաճառականներից որի՞
 անունով գրեմ գրանք»:— «Այդ ապրանքների վրա գրիր Սինդիբատ-
 վագնացի անունը, որը մեզ հետ էր ու խեղդվեց մի կղզու մոտ, ու

մենք նրանից ոչ մի լուր չառանք,— ասաց նավապետը:— Ուզում ենք, որ այս օտարականը ծախի դրանք ու մեզ բերի դրանց փողը, փողի մի մասը մենք կտանք սրան, քանի որ ծախելու ժամանակ աշխատանք է թափել, իսկ մնացածը մեզ հետ կտանենք Բաղդադ քաղաքը, եթե դրանց տիրոջը գտնենք, կտանք նրան, եթե չգտնենք, կտանք Բաղդադում ապրող նրա հարազատներին»:— «Քո խոսքը հիանալի է և քո կարծիքը՝ հրաշալի»,— պատասխանեց գրագիրը:

Ու երբ ես լսեցի նավապետի խոսքերը, որն ասում էր, թե հակերն իմ անունով են, ինքս ինձ բացականչեցի. «Ալլահը վկա, Սինդիբադ-ծովագնացը ես եմ: Ես էի կղզու մոտ խեղդվում այն բուլոր մարդկանց հետ միասին, ովքեր խեղդվեցին»:

Ապա ես հավաքեցի իմ ամբողջ տոկունությունն ու համբերությունը, ու երբ վաճառականները նավից իջան և հավաքվեցին մի տեղ և սկսեցին զրուցել ու պատմել առուծախի մասին, մոտեցա նավի տիրոջն ու ասացի նրան. «Ո՞վ տեր իմ, գիտե՞ս արդյոք, թե ով էր այն հակերի տերը, որ հանձնեցիր ինձ, որպեսզի նրա փոխարեն ծախեմ դրանք»:— «Ես չգիտեմ, թե ինչ հարստության տեր էր նա, բայց գիտեմ, որ նա վաճառական էր՝ Բաղդադ քաղաքից, և նրա անունը Սինդիբադ-ծովագնաց էր,— պատասխանեց նավապետը:— Մենք մոտեցանք մի կղզու և կանգ առանք, ու նավի ուղևորներից շատերը խեղդվեցին, և նա նույնպես մյուսների հետ խեղդվեց, և մենք մինչև հիմա լուր չունենք նրանից»:

Ու հենց որ ես նավապետի խոսքը լսեցի, բարձր մի ճիչ արձակեցի և ասացի. «Ով ազնիվ նավապետ, իմացիր, որ Սինդիբադ-ծովագնացը ես եմ: Ես չեմ խեղդվիլ, բայց երբ դու կանգ առար կղզու մոտ և վաճառականներն ու ճամփորդները ափ իջան, մյուս մարդկանց հետ ես էլ դուրս եկա նավից, և ինձ մոտ մի քիչ ուտելիք կար, որ կերա ծովափին: Ու հետո հանգստանում էի այնտեղ նստած, բունը հաղթեց ինձ, ու ես քնեցի և խորասուզվեցի նինջի մեջ. իսկ երբ արթնացա, ոչ նավ տեսա, ոչ էլ կողքիս մարդ կար: Այս գույքն ու ապրանքներն իմ ապրանքներն են, բոլոր վաճառականները, որոնք ալմաստ քարի առևտուր են անում տեսել են ինձ, երբ ես ալմաստի լեռան վրա էի, և նրանք կարող են վկայություն տալ, որ ես եմ Սինդիբադ-ծովագնացը, որովհետև նրանց պատմել եմ գլխիս եկածը և ասել, թե ինչ է պատահել ինձ, երբ ձեռք հետ նավով ճանապարհորդում էի, և ասել եմ նրանց, որ դուք մոռացաք ու թողեցիք ինձ կղզու վրա քնած, իսկ արթնանալով, ես ոչ ոքի չգտա այնտեղ, ու ինչ-որ եղել է, այս է»:

Լսելով իմ ասածը, վաճառականներն ու ճամփորդները հավաքվեցին շուրջս, և նրանցից ոմանք ինձ հավատացին, իսկ մյուսները ստախոս համարեցին: Ու հանկարծ վաճառականներից մեկը, լսելով, որ ես խոսում եմ ալմաստի հովտի մասին, տեղից վեր կացավ ու, մոտենալով ինձ, վաճառականներին ասաց. «Ո՞վ մարդիկ, մինչև վերջ լսեք իմ խոսքը: Ես ձեզ պատմել եմ այն ամենազարմանալի բանի մասին, որ տեսա իմ ճանապարհորդությունների ժամանակ, և ասացի, որ երբ մենք մտի կտորները գցեցինք ալմաստի հովտը, ես էլ ըստ սովորության գցեցի իմ կտորը, իմ կտորի հետ միասին թռավ եկավ մի մարդ, որը մտի կտորից էր կախվել: Եվ դուք ինձ շահավատացիք, ընդհակառակը, ստախոս հայտարարեցիք»:— «Այո,— պատասխանեցին նրան,— դու այդ պատմել ես ու մենք քեզ չեք հավատացել»:— «Ա՛յ, այն մարդը, որ կպել էր մտի իմ կտորին,— ասաց վաճառականը:— Նա այնպիսի ալմաստ քարեր տվեց ինձ, որ շատ թանկ արժեն, ու դրանց նմանը աշխարհի երեսին չես գտնի, ու այս մարդն ինձ տվեց ավելի շատ քարեր, քան առաջ գալիս էր նետածս մտի կտորին կպած: Ես այս մարդուն տարա ինձ հետ, ու մենք հասանք Բասրա քաղաքը, ու դրանից հետո սա հրաժեշտ տվեց մեզ ու ճամփա ընկավ իր երկիրը, իսկ մենք վերադարձանք մեր երկրները: Սա հենց այն մարդն է, և մեզ տեղեկացրել է, որ անունը Սինդիբադ-ժովազնաց է: Ու պատմել է, թե ինչպես է նավը հեռացել կղզուց, երբ ինքը հստած է եղել այնտեղ: Իմացեք, որ այս մարդը նկել է այստեղ՝ մեզ մոտ, միայն նրա համար, որպեսզի հաստատի իմ խոսքերը, որ ես ձեզ ասացի: Այս բոլոր ապրանքները նրա ունեցվածքն են, այս ապրանքների մասին նա պատմեց, երբ հանդիպեց մեզ, ու նրա խոսքի իսկությունը պարզ դարձավ մեզ համար»:

Ու երբ նավաստիքը վաճառականի խոսքը լսեց, տեղից վեր կացավ ու, մոտենալով ինձ, միառժամանակ ուշի ուշով նայեց, իսկ հետո հարցրեց. «Ի՞նչ նշաններ ունեն ապրանքներդ»:— «Իմացիր,— պատասխանեցի ես,— որ իմ ապրանքների նշաններն այսպես են ու այսպես»: Եվ ես նավաստիքին պատմեցի մի գործի մասին, որ ես ու ինքն էինք արել, երբ Բասրայում նստել էի իր նավը, և նա համոզվեց, որ ես Սինդիբադ-ժովազնացն եմ, և գրկեց ինձ ու խաղաղություն մաղթեց, և շնորհավորեց փրկվելուս առթիվ: «Տե՛ր իմ, ալլահը վկա, քո պատմությունը զարմանալի է ու գործդ ապշելու բան,— բացականչեց նա,— բայց, փա՛ռք ալլահին, որ միացրեց մեզ ու քեզ, ու վերադարձրեց քեզ ապրանքներդ և ունեցվածքդ:

Եվ այդ ժամանակ,— շարունակեց Մինդիբադ-ծովագնացը,— ես հրմտորեն տնօրինեցի իմ ապրանքները, ճանապարհորդութեանս ժամանակ ապրանքներս մեծ շահ բերեցին ինձ, ու ես մեծապես ուրախացաւ և ինքս ինձ շնորհավորեցի փրկվելուս և այն առթիվ, որ հարստութեանս վերադարձավ ինձ,

Ու մենք ծախում և առնում էինք զանազան կղզիներում, մինչև որ հասանք Մինդի երկրները, այնտեղ էլ առանք ու ծախեցինք: Եվ ես այնտեղի ծովում շատ հրաշքներ տեսա, այնքան հրաշքներ, որ հաշիվ ու համրանք չունեն, Ու այդ ծովում տեսածներիս մեջ մի ձուկ կար, որը կովի տեսք ուներ, ու մի արարած էլ կար, որ ավանակի պես էր, ու տեսա ես թռչուններ, որ դուրս են գալիս ծովային խեցիների միջից և ձու են դնում ու ջրի նրեսին ձագ հանում, այդ թռչունները երբեք ծովից ցամաք գուրս չեն գալիս:

Իսկ գրանից հետո մենք շարունակեցինք մեր ճամփան մեծազոր ալլահի բարեհաճութեամբ, և քամին ու ճանապարհորդութեանս հաջող էին, մինչև որ հասանք Բասրա քաղաքը: Այնտեղ ես քիչ մնացի՝ մի քանի օր, ու դրանից հետո եկա Բաղդադ քաղաքը և գնացի իմ թաղը ու մտնելով տուն, ողջունեցի հարազատներիս, բարեկամներիս ու մտերիներիս: Ու ես ուրախանում էի, որ փրկվեցի ու վերադարձաւ հարազատներիս մոտ՝ իմ երկիրը, իմ հողն ու քաղաքը, և ողորմութեան էի բաժանում, ու նվերներ էի տալիս և հագցնում էի այրիներին ու որդերին, և հավաքում էի իմ տուն բարեկամներիս ու սիրելիներիս, ու այդպէս անց էի կացնում ժամանակս ուտելով, խմելով ու խաղերով ու զվարճութեաններով: Կավ ուտում աւ խմում էի, և բարեկամութեան էի անում ու գործ բռնում մարդկանց հետ, և մոռացաւ այն բոլորը, ինչ ինձ պատահել էր, և աղետներն ու սարսափները, որ կրել էի: Ու այդ ճանապարհորդութեան ժամանակ այնքան փող էի կուտակել, որ հաշիվ ու համրանք չկա: Եվ սա է ամենազարմանալին, որ տեսա ես այդ թափառումների ժամանակ: Իսկ վաղը, եթե մեծազոր ալլահը կամենա, դու կգաս իմ տուն, և ես քեզ կպատմեմ շորորդ ճանապարհորդութեան մասին, այն ավելի զարմանալի է, քան բոլորը, ինչ որ պատմել եմ»:

Հետո Մինդիբադ-ծովագնացը սովորականի պէս պատվիրեց Մինդիբադ-ցամաքայինին հարչուր մսխալ ոսկի տալ ու հրամայեց սեղաններ գցել: Եվ սեղաններ գցեցին, ու բոլոր հավաքվածները ընթրեցին, զարմանք կտրելով Մինդիբադի պատմածից և այն բոլորից, ինչ որ եկել էր նրա գլուխը: Իսկ ընթրիքից հետո բոլորը գնացին իրենց ճանապարհով, և Մինդիբադ-բեռնակիրը վերցրեց այն ոսկին, որ Մինդիբադ-ծո-

վազնացր հրամայեց տալ իրեն, և գնաց իր ճամփով, ապշելով Սինդի-բադ-ծովագնացի պատմածի վրա: Նա գիշերն անցկացրեց իր տանը, իսկ երբ առավոտը քացվեց և արևը փայլեց ու շողաց, Սինդիբադ-բեռնակիրը վեր կացավ և, առավոտյան աղոթքն անելուց հետո, գնաց Սինդիբադ-ծովագնացի տուն: Նա մտավ Սինդիբադ-ծովագնացի մոտ, և Սինդիբադ-ծովագնացը ողջունեց նրան ու դիմավորեց ուրախությամբ ու զվարթացած, և նստեցրեց իր կողքին, իսկ երբ Սինդիբադի մյուս ընկերներն էլ եկան, սպասավորներն ուտելիք հրամայրին, և բոլորը կերան ու խմեցին և ուրախացան, ու այնժամ Սինդիբադն սկսեց իր պատմութունը:

ՋՈՐՐՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացեք, ո՞վ իմ եղբայրներ, որ Բաղդադ քաղաքը վերադառնալուց հետո, հանդիպեցի բարեկամներիս, հարազատներիս ու սիրելիներիս, և ապրում էի մեծագույն հաճույքների, ուրախության ու հանգստության մեջ, որ կարող է գոյության ունենալ աշխարհում: Ես մտապա այն ամենը, ինչ պատահել էր ինձ մեծ օգուտ ձեռք բերելու պատճառով, ու սիրելի բարեկամներիս հետ թաղվեցի խաղերի, զվարճությունների ու զրույցների մեջ, ու այսպես ապրում էի ամենաքաղցր կյանքով: Եվ իմ անհանգիստ խառնվածքը թելադրեց ինձ, որ ես գնամ օտար երկրներ ճանապարհորդելու, և ցանկություն առաջացավ իմ մեջ բարեկամություն անել զանազան մարդկանց հետ, և առուժախ անել ու փող վաստակել: Այն էս վճռեցի կատարել այդ քանը և առա ծովով տանելու հարմար հիանալի ապրանքներ, և սովորականից ավելի շատ հակեր կապելով, դուրս եկա Բաղդադ քաղաքից և մեկնեցի Բասրա քաղաքը:

Ես իմ հակերը դասավորեցի նավի վրա ու, Բասրայում մի քանի մեծամեծ մարդկանց միանալով, ճամփա ընկա: Այն նավը, մեծագոր ալլահի օրհնանքով, մեզ աարավ շառաշող ծովի վրայով, ուր իրար էին զարնվում ալիքները, և ճանապարհորդությունը լավ էր մեզ համար: Այսպես գնում էինք մենք զօր ու գիշեր, կղզուց կղզի, ծովից ծով անցնելով: Բայց օրերից մի օր տարբեր կողմերից փշող քամիները հարձակվեցին մեզ վրա, ու նավապետը խարխալ գցեց ու նավը կանգնեցրեց ծովի մեջտեղը, վախենալով, որ նավը հորձանքի մեջ կխորտակվի:

Այն երբ մենք ընկանք այդ դրություն մեջ և մեր ազերսանքն էինք ուղղում ամենակարող ալլահին ու պաղատում նրան, հանկարծ մեզ վրա հար-

ձակվեց խենթ և ուժեղ մի քամի, որը պատառոտեց առագաստներն ու ծվեն-ծվեն արեց: Ու մարգիկ իրենց բոլոր հակերի, ունեցած ապրանքների և ունեցվածքի հետ միասին ծովի տակն անցան: Եվ մյուս խեղդվողների հետ ես էլ սկսեցի գնալ ջրի տակ, ու կես օր լողացի ծովում և արդեն հույսս կտրել էի, բայց մեծազոր ալլահը նավի մի կտոր ուղարկեց ինձ, և ես ու մի քանի ուրիշ վաճառականներ նստեցինք գրա վրա ու, մեկս մյուսին կպշելով, տախտակի վրա նստած ու ռաքերով հրվելով, նավեցինք. և ալիքներն ու քամին օգնում էին մեզ:

Ու այսպես մենք անցկացրինք մի ցերեկ ու մի գիշեր. իսկ երբ վրա հասավ մյուս օրը, արևածագին քամի բարձրացավ, ու ծովը փոթորկվեց, և ալեկոծումն ու քամին ուժեղացան, և ալիքները մեզ դուրս նետեցին ինչ-որ կզղի: Ու մենք երկար անքնությունից, հոգնածությունից, ցրտից, քաղցից, վախից ու ծարավից նման էինք մեռելի:

Ու մենք սկսեցինք ման գալ կղզում և տեսանք բազմաթիվ բույսեր ու դրանցից կերանք մի քիչ, որպեսզի մեր հոգիները պահենք մեր մարմինների մեջ ու կշտանանք: Ու գիշերն անցկացրինք կղզու մի եզրին, իսկ երբ առավոտը բացվեց, և լույսը փայլեց ու շողաց, վեր կացանք ու սկսեցինք դեսուդեն ման գալ, և հեռվում երևաց ինչ-որ մի շինություն:

Եվ քայլեցինք մենք հեռվում տեսած շինության կողմն ու գնացինք, գնացինք, մինչև որ կանգ առանք դարպասի առջև, ու մեր կանգնած ժամանակ հանկարծ դարպասից մեր դեմ ելավ մերկ մարդկանց մի ամբոխ: Ու նրանք մեզ հետ շխոսեցին, բռնեցին մեզ ու տարան իրենց թագավորի մոտ: Եվ նա հրամայեց մեզ նստել, ու մենք նստեցինք, և մեզ համար այնպիսի մի ուտելիք բերեցին, որն անծանոթ էր մեզ ու մեր կյանքում գրա նմանը չէինք տեսել: Ու իմ սրտին դուր շեկավ այդ կերակուրը, և ես քիչ կերա դրանից, իսկ ընկերներս շատ կերան, և այն որ ես քիչ կերա այդ կերակուրից, մեծազոր ալլահի ողորմածությունն էր, որը մինչև օրս ինձ կենդանի է պահել:

Ու երբ ընկերներս սկսեցին ուտել այդ կերակուրը, նրանց խելքը թախտվեց, և նրանք շարունակեցին ուտել դիվահարների պես, ու նրանց արտաքին տեսքը փոխվեց: Իսկ դրանից հետո նրանց համար բերեցին կոկոսի յուղ և խմեցրին նրանց ու քսեցին մարմիններին, ու երբ իմ ընկերներն այդ յուղը խմեցին, նրանց աչքերը երեսների վրա շուռ եկան, ու նրանք այդ ուտելիքը կերան սովորականից ավելի թափով: Ու ես չէի իմանում, թե ինչ հնար մտածեմ, որ փրկեմ նրանց, և սկսեցի վշտանալ ընկերներիս համար ու անասելի ծանր ու մեծ հոգսը տիրեց ինձ, որովհետև շատ էի վախենում, որ այդ տկլորները փորձանք կբերեն գլխիս:

Ու ես մի լավ նայեցի նրանց, և պարզվեց, որ դրանք մոգեր են, իսկ նրանց թագավորը՝ գուլ է, և բոլոր մարդկանց, ովքեր գալիս են նրանց քաղաքը, ում որ նրանք տեսնում և հանդիպում են հովտում կամ ճանապարհին, բերում են իրենց թագավորի մոտ, կերակրում այդ ուտելիքով ու մարմիններին քսում այդ յուզը, և դրանից մարդկանց փորը լայնանում է ու նրանք կարողանում են շատ ուտել: Եվ նրանք խելքները թոցնում են, և նրանց գիտակցությունը մթազնում է, ու նրանք տկարամիտների պես են դառնում, իսկ մոգերը նրանց ստիպում են ավելի շատ ուտել իրենց կերակրից և խմել յուզից, որպեսզի գիրանան ու հաստանան: Ու հետո մոգերը մորթում են նրանց ու նրանց մսով կերակրում թագավորին, իսկ ինչ վերաբերում է թագավորի մերձավորներին, ապա մարդու միսը նրանք ուտում են առանց տապակելու կամ եփելու:

Ու տեսնելով այդ, ես մեծ ցավ զգացի ինձ ու ընկերներիս համար, իսկ նրանք այնպես էին շշմել, որ չէին հասկանում, թե մոգերն ինչ են անում իրենց:

Ու այսպես, ընկերներիս հանձնեցին մի մարդու, և նա ամեն օր նրանց տանում էր դաշտ՝ արածացնելու, ինչպես անասուններին են արածացնում: Իսկ թե ինձանից հարցնեք, սաստիկ վախից ու սովածությունից թուլացա և մարմնով հիվանդոտ դարձա, ու մսերս ոսկորներիս վրա չորացան: Ու տեսնելով, որ ես այդ վիճակում եմ, մոգերն ինձ հանգիստ թուղեցին ու մոռացան, և ոչ ոք նրանցից չհիշեց ինձ, ու ես նրանց միտքն էլ չէի ընկնում:

Մի օր էլ մտքիս դրեցի խորամանկություն բանեցնել և դուրս եկա այդտեղից ու, առաջվա բնակավայրից հեռանալով, գնացի ուր ուզում էի: Եվ տեսա մի հովիվ, սրը նստել էր ծովի մեջտեղը եղած ինչ-որ բարձր բանի վրա, ու մի լավ նայեցի նրան, և հանկարծ տեսա, որ դա այն մարդն է, որին հանձնեցին ընկերներիս, որպեսզի նրանց տանի արածացնի, և նա ընկերներիս նման ուրիշ շատերին էր այդպես արածացնում:

Ու տեսնելով ինձ, այդ մարդը հասկացավ, որ խելքս տեղն է, ու իմ գլխին այն շարիքը չի եկել, ինչ որ ընկերներիս գլխին եկավ, և նա հետոյից նշան արեց ինձ ու ասաց. «Հետ դարձիր ու գնա այն ճամփով, սրը քեզանից աչ կլինի: Եվ դու կհասնես սուլթանի ճամփին»: Եվ ես դարձա հետ, ինչպես որ այդ մարդն էր ասել, ու, ինձանից աչ մի ճանապարհ տեսնելով, գնացի այդ ճանապարհով: Ու գնում էի անդադար, և վախից մեկ վազում էի, մեկ քայլում առանց շտապելու: Եվ մի քիչ հանդրատացա ու շարունակեցի գնալ այնպես, ինչպես գնում էի, մինչև որ

հեռացա այդ մարդու աչքից, որն ինձ ճանապարհ ցույց տվեց: Ու ես նրան չէի տեսնում, և ինքն էլ ինձ չէր տեսնում, և արևը մայր մտավ, ու մութն ընկավ:

Ու նստեցի ես հանգստանալու և ուզում էի քնել, բայց ուժգին սարսափից, քաղցից ու հոգնածությունից գիշերն աչքիս քուն չեկավ, իսկ երբ կես գիշեր եղավ, վեր կացա և սկսեցի ման գալ կղզում, ու այնքան գնացի, մինչև օրը բացվեց:

Եվ առավոտը բացվեց, և լույսը փայլեց ու շողաց, և ծագեց արևը բլուրների ու հովիտների վրա. իսկ ես հոգնել էի, և քաղց ու ծարավ զգացի: Եվ սկսեցի կանաչ խոտ և ուրիշ բույսեր ուտել, ու կերա, մինչև կշտացա ու հոգիս պահեցի մարմնիս մեջ, իսկ դրանից հետո վեր կացա և ման եկա կղզում, ու այդպես գնացի մի ցերեկ ու մի գիշեր, և ամեն անգամ, երբ քաղց էի զգում, բույսեր էի ուտում:

Ու թափառեցի յոթ օր և յոթ գիշեր, իսկ ութերորդ օրվա լուսարացին նայեցի ու հեռվում մի բան տեսա: Եվ ես քայլեցի դեպի տեսածս բանը, և գնացի այնքան, մինչև որ մայրամուտից հետո հասա դրան: Եվ հեռու կանգնած մի լավ նայեցի այն բանին, ինչ տեսել էի (իսկ սիրտըս ահ էր ընկել այն դեպքերից հետո, ինչ պատահել էր ինձ առաջին ու երկրորդ անգամ), Ու մեկ էլ տեսա, որ դրանք մի խումբ մարդիկ են, որ տաքդեղի սերմ են հավաքում: Ու ես մոտեցա: Եվ տեսնելով ինձ, նրանք շտապեցին ինձ մոտ ու ամեն կողմից շրջապատեցին ու հարցրին. «Ո՞վ ես դու և որտեղի՞ց ես եկել»:— «Ո՞վ մարդիկ, իմացեք, որ ես մի աղքատ եմ»,— պատասխանեցի ես: Եվ պատմեցի նրանց այն բոլոր սարսափների ու աղետների մասին, որ իմ գլխին եկան ու պատահեցին, ու այն ամենի մասին, ինչ կրել էի: Եվ նրանք ասացին. «Այլա՞հը վկա, ապշելու բան է: Բայց ինչպես ազատվեցիր սև մարդկանց ձեռքից ու ինչպես կարողացար նրանց մոտով անցնել գալ այստեղ: Նրանք շատ են, ու մարդ են ուտում, և ոչ մեկը չի կարող փրկվել ու անվնաս անցնել նրանց կողքից»: Եվ ես նրանց պատմեցի, թե ինչ կատարվեց իմ ու սևերի միջև, ու թե նրանք ինչպես տարան ընկերներիս ու այն ուտելիքը տվեցին, իսկ ես շկերա: Եվ այդ մարդիկ շնորհավորեցին ինձ, որ փրկվել եմ, ու շատ զարմացան իմ գլխով անցած դեպքերի վրա:

Ու այդ մարդիկ ինձ նստեցրին իրենց կողքին, իսկ գործն ավարտելուց հետո մի քիչ լավ ուտելիք բերեցին, ու ես կերա (իսկ ես քաղցած էի), և միառժամանակ հանգստացա նրանց մոտ, իսկ դրանից հետո նրանք ինձ տարան ու նստեցրին նավակ և տեղափոխեցին իրենց կղզիները՝ իրենց տները:

Եվ նրանք ինձ ներկայացրին իրենց թագավորին, ու ես խաղաղություն մաղթեցի նրան, և նա ասաց. «Բարով, հազար բարի եկար», ու հարգանք մատուցեց ինձ և հարցրեց, թե ինչ է պատահել ինձ: Եվ ես պատմեցի գլխիս եկածն ու այն ամենը, ինչ պատահել ու տեղի էր ունեցել այն օրվանից սկսած, երբ դուրս եկա Բաղդադ քաղաքից, մինչև այն ժամը, երբ մտա այդ թագավորի պալատը: Ու թագավորը շափազանց զարմացավ պատմածիս ու այն բոլորի վրա, ինչ պատահել էր ինձ, ինչպես և զարմացան դահլիճում ներկա գտնվող մարդիկ: Իսկ հետո թագավորը պատվիրեց նստել իր կողքին, և ես նստեցի, ու նա հրամայեց ուտելիք բերել, և բերեցին, ու ես կերա, ինչքան հարկավոր էր, և լվացի ձեռքերս ու շնորհակալ եղա մեծագոր արևհից՝ ողորմածության համար ու փառք տվեցի նրան ու գովք ուղղեցի: Իսկ հետո դուրս եկա թագավորի պալատից ու սկսեցի ման գալ քաղաքում: Ու ես տեսա, որ այդ քաղաքը բարեկարգ է և շատ բնակիչներ ու հարստություններ ունի, և քիչ չեն ուտելիքներն այնտեղ, և՛ շուկաներն ու ապրանքները, և՛ ծախողները, և՛ առնողները: Եվ ուրախացա ես, որ հասել եմ այդ քաղաքը, և իմ հոգին հանգստացավ: Եվ ընտելացա ես այդ մարդկանց ու սկսեցի վայելել նրանց ու նրանց թագավորի ավելի մեծ հարգանքն ու պատիվը, քան նրա թագավորության բնակիչներն ու նրա քաղաքի մեծամեծները:

Ու տեսա, որ բոլոր մարդիկ՝ թե՛ մեծ, թե՛ փոքր, առանց թամբի են զտարյուն ձի նստում, և զարմացա ու թագավորին հարցրի. «Ո՞վ իմ տեր ու տիրակալ, ինչո՞ւ թամբած ձի չես նստում: Թամբը ձիավորին հանդիստ է տալիս և ուժն է ամրապնդում»:— «Իսկ ի՞նչ բան է թամբը»,— հարցրեց թագավորը:— Դա մի այնպիսի բան է, որ մեր կյանքում տեսած չկանք ու երբեք գրա վրա չենք նստել ու ման եկել:— «Թույլ չե՞ս տա, արդյոք, որ ես քեզ համար մի թամբ շինեմ, Դու նժույզդ կթամբես ու թամբին նստած կքչես և կտեսնես, թե ինչքա՞ն հաճելի բան է գա»,— ասացի ես: Եվ թագավորն ինձ պատասխանեց. «Շինի՛ր»: Այդ ժամ ասացի. «Կարգադրիր, որ մի քիչ փայտ բերեն»: Եվ թագավորը հրամայեց, որ բերեն, ինչ կպահանջեմ, ու ես կանչեցի մի ճարտար ատաղձագործի, և սկսեցի նրան սովորեցնել, թե թամբն ինչպես են պատրաստում ու ինչպես են շինում:

Եվ վերցրի բուրգն ու զգեցի և դրանից թաղիք պատրաստեցի, իսկ հետո բերեցի կաշի, թամբի վրա քաշեցի ու փայլ տվեցի դրան, և դրանից հետո թամբին փոկեր հարմարեցրի ու փորքաշներ կապեցի:

Իսկ հետո կանչեցի դարբնին ու նկարագրեցի, թե ինչ տեսք ունի ասպանդակը, և դարբինը կոեց մեծ ասպանդակներ, ու ես դրանք լավ կոկեցի ու փայլեցրի և անագով կլաշեկեցի ու դրանցից մետաքսի ծոպեր կախեցի: Ու դրանից հետո վեր կացա, թագավորի ամենալավ ձիերից մի նժույզ բերեցի ու, թամբը կապելով նրա մեջքին, ասպանդակները կախ գցեցի, և նժույզի բերանը սանձ դրեցի, և այգպես տարա թագավորի մոտ: Ու թամբը դուր եկավ թագավորին և նրա սրտովը եղավ, և նա շնորհակալություն հայտնեց ինձ ու նստեց թամբին, ու այդ բանը նրա սիրտը լցրեց մեծ ուրախությամբ, և նա ինձ շատ փող տվեց աշխատանքիս համար: Ու երբ թագավորի վեզիրը տեսավ, որ թամբը ես եմ շինել, մեկն էլ ինքը պահանջեց ինձանից: Եվ ես նրա համար էլ պատրաստեցի այգպիսի թամբ, և կառավարման բոլոր մեծամեծներն ու պաշտոնատերերն սկսեցին թամբեր պահանջել ինձանից, ու ես շինում էի:

Ես ատաղձագործին սովորեցրի թամբեր ու ասպանդակներ շինել և դրանք ծախում էի երևելի ու մեծամեծ մարդկանց, ու այսպես շատ փող կուտակեցի, և ես այդ մարդկանց մեջ մեծ տեղ գրավեցի, և նրանք ինձ սիրեցին ուժգին սիրով, և թագավորի ու նրա մերձավորների, քաղաքի մեծամեծների և թագավորության անվանի մարդկանց կողքին ես բարձր դիրք ստացա:

Եվ օրերից մի օր ես նստած էի թագավորի մոտ, մեծագույն հրրճվանքի ու վեհության մեջ, և այդ ժամանակ հանկարծ թագավորն ինձ ասաց. «Ով այսինչ, իմացիր, որ դու մեզ մոտ դարձել ես պատվի ու հարգանքի արժանի մի մարդ, ու մեր շարքն ես դասվել, ու մենք շենք կարող քեզանից բաժանվել և անկարող ենք դիմանալ, եթե հեռանաս մեր քաղաքից: Ես քեզանից մի բան եմ ուզում, որ դու ինձ լսես ու շմերժես իմ խոսքը»։— «Իսկ ի՞նչ ես ուզում ինձանից, ով արքա,— հարցրի ես:— Ես քո խոսքը շեմ մերժի, քանի որ դու ինձ լավություն և շնորհ արեցիր ու սիրալիր վերաբերմունք ցույց տվեցիր և, փառք ալլահին, ես քո ծառաներից մեկը դարձա»։— «Ես ուզում եմ քեզ մի հիասքանչ, սիրուն ու աննման կին տալ, որը հարստության ու գեղեցկության տեր է,— ասաց թագավորը:— Դու մշտական բնակություն կհաստատես մեզ մոտ, ու ես քեզ մի լավ կացարան կտամ ինձ մոտ, իմ պալատում: Դե, ուրեմն, մի հակառակիր ինձ ու մի մերժիր իմ խոսքը»։

Թագավորի խոսքերը լսելով, ամաչեցի, ու ձայնս կտրեցի, ու մեծ շփոթմունքից պատասխան չտվեցի նրան, ու թագավորն ինձ հարցրեց. «Ինչո՞ւ չես պատասխանում ասածիս, ո՞վ զավակս»։— «Ով տեր, ով

ժամանակի արքա, — պատասխանեցի, — հրամայելը քեզ է պատկանում»:

Եվ թագավորը հենց նույն ժամին ու բոպեին մարդ ուղարկեց, որ կանչեն դատավորին ու վկաներին, և ինձ անմիջապես ամուսնացրեց մի կնոջ հետ, որը բարձր էր աստիճանով ու ազնիվ ցեղով, շատ փող ու հարստություն ուներ, ծագումով մեծ մարդ էր, հազվագյուտ գեղեցիկ ու հիասքանչ, հողերի, ունեցվածքների ու կալվածքների տեր:

Իսկ հետո, — ասաց Սինդիբադը, — թագավորն ինձ տվեց առանձին մեծ ու գեղեցիկ մի տուն և նվիրեց ինձ ծառաներ ու սպասավորներ և սահմանեց բոճիկ ու վճարումներ: Եվ սկսեցի ես ապրել մեծ հանգստության, զվարճությունների և ուրախությունների մեջ ու մոռացա այն ծանր օրերը, դժվարություններն ու աղետները, որ ինձ բաժին էին ընկել: «Երբ գնամ իմ երկիրը, կնոջս հետս կտանեմ, — մտածեցի ես: — Ինչ որ մարդու ճակատին զրված է, անպայման կկատարվի, և ոչ ոք չգիտի, թե ինչ կպատահի իրեն»:

Եվ ես սիրեցի կնոջս, ու նա էլ ինձ սիրեց մեծ սիրով, ու մեր միջև համաձայնություն հաստատվեց, մենք ամենաքաղցր կյանք էինք ապրում և ամենահաճելի գոյություն պահպանում: Ու այդպես մենք ապրեցինք որոշ ժամանակ, եվ մեծազոր ալլահը հարևանիս զրկեց կնոջից, իսկ հարևանս իմ մտերիմն էր, ու ես գնացի նրա տուն, որպեսզի մխիթարեմ նրան իր կորստի պահին ու տեսա, որ նա ամենավառ վիճակում է, հոգսերով ծանրաբեռնված և սրտով ու մտքով հոգնած: Եվ սկսեցի ես ցավակցել նրան ու մխիթարել և ասել. «Մի վշտանա, որ կորցրիր կնոջդ: Ամենակարող ալլահը նրա փոխարեն, գուցե քեզ ավելի լավ կին տա, քան նա էր, և քո կյանքը երկար կլինի, թե որ մեծազոր ալլահը կամենա»: Եվ իմ հարևանը լաց եղավ ողբաձայն ու ասաց ինձ. «Իմ բարեկամ, ո՞նց կտա ինձ ալլահն ավելի լավ կին, քան նա էր, ինչպես ամուսնանամ ուրիշ կնոջ հետ, երբ կյանքիս մի օր է մնացել»: «Եղբայր իմ, — պատասխանեցի նրան, — ուշքի եկ ու ինքդ մի գուժիր քո մահը, չէ՞ որ դու լավ ես, առողջ և բարվոք է կյանքդ»: «Բարեկամս, — բացականչեց հարևանս, — արևովդ եմ երգվում, որ այսօր դու կկորցնես ինձ և էլ չես տեսնի»: — «Ինչպե՞ս թե», — հարցրի ես: Եվ հարևանս պատասխանեց. «Այսօր կթաղեն կնոջս, ինձ էլ նրա հետ կթաղեն նույն գերեզմանում: Մեր երկրում այդպիսի սովորություն կա, և թե մեռնում է կինը, մարդուն էլ ողջ-ողջ թաղում են նրա հետ, իսկ թե մարդն է մեռնում, կնոջն են հետը ողջ-ողջ թաղում, որ նրանցից ոչ մեկը չճաշակի կյանքի բարիքները իր կողակցից հետո»: — «Ալլահը վկա, զզվելի սովորություն է դա, և ոչ ոք դրան չի դիմանա», — բացականչեցի ես:

Ու երբ մենք այդպես զրուցում էինք, հանկարծ եկաւ քաղաքի բնակիչների մի մեծ ընկերութիւն, և նրանք սկսեցին մխիթարել բարեկամիս՝ կնոջ և իր սեփական կյանքը կորցնելու առթիւ, ու սկսեցին ննջեցյալին հագցնել, հետեւելով իրենց առօրութեանը: Նրանք բերեցին արկղի պես դազաղ ու, կնոջը դրա մեջ դնելով, տարան (իսկ ամուսինը նրանց հետ էր) և դուրս եկան քաղաքից, ու գնացին հասան ծովափ, սարի մոտ գտնվող մի տեղ, Ու նրանք մոտեցան մի մեծ քարի և բարձրացրին քարը, և դրա տակ երևաց ջրհորի բերանի պես մի շրջանակ, ու նրանք հանգուցյալ կնոջը դրեցին այդ անցքի մեջ: Եվ պարզվեց, որ դա մի մեծ հոր է սարի տակ: Իսկ հետո նրանք բերեցին կնոջ մարդուն և նրա կրծքի տակ արմավենու կեղևից հյուսած պարան փաթաթելով, իջեցրին նրան այդ հորը, ու նրա հետևից իջեցրին նաև խմելու ջրով լիքը մի մեծ կուժ սև յոթ հատ ցորենի բլիթ: Ու երբ մարդուն իջեցրին, նա պարանը քանդեց մեջքից, ու պարանը վեր քաշեցին և հորի բերանը փակեցին հենց այն մեծ քարով, ոնց որ առաջ էր փակված, ու բոլորը գնացին իրենց տները, բարեկամիս թողնելով հորի մեջ՝ իր կնոջ կողքին:

Եվ ես ինքս ինձ ասացի. «Այլահը վկա, սա ավելի ծանր մահ է, քան նրա կնոջ մահն էր»: Իսկ հետո գնացի նրանց թագավորի մոտ ու ասացի. «Ո՞վ տեր, այդ ինչպե՞ս եք ձեր երկրում կենդանի մարդուն թաղում մեռածի հետ»: Եվ թագավորը պատասխանեց. «Իմացիք, երբ մեռնում է տղամարդը, մենք նրա հետ թաղում ենք նրա կնոջը, իսկ երբ մեռնում է կինը, մենք նրա հետ ողջ-ողջ թաղում ենք նրա ամուսնուն, որ նրանք իրարից բաժան չլինեն, ո՛չ կյանքում, ո՛չ մահից հետո, ու այս սովորութիւնը մեր պապերից է գալիս»:

«Ո՞վ ժամանակի արքա, իսկ եթե ինձ նման մի օտարականի կինն է մեռնում, դուք նույն ձևով եք վարվո՞ւմ նրա հետ, ինչպես վարվեցիք այն մարդու հետ» հարցրի ես:— «Այո,— պատասխանեց թագավորը,— մենք նրան թաղում ենք կնոջ հետ ու անում ենք, ինչ որ դու տեսար»:

Ու երբ ես նրանից լսեցի այդ խոսքերը, ուժեղ վշտից լեղաճաք եղա սև մեծ դառնութիւն զգացի, և իմ միտքը խափարեց, ու ես սկսեցի վախենալ, որ կինս ինձանից շուտ կմեռնի և ինձ ողջ-ողջ կթաղեն նրա հետ: Բայց հետո ինքս ինձ սկսեցի մխիթարել ու ասացի. «Գուցե, ես նրանից շուտ մեռնեմ, չէ՞ որ մարդ չի կարող զանազանել, թե ով է առաջ քնկնողն ու ով է հետևից հասնողը»:

Եվ սկսեցի ուշք ու միտքս առաջ զանազան գործերի: Բայց դրանից հետո շատ քիչ ժամանակ անցաւ, ու կինս հիվանդացաւ և մի քանի

որ ապրելուց հետո մեռավ: Եվ բնակիչների մեծ մասը եկավ ինձ մխիթարելու և սփոփելու կնոջս հարազատներին՝ նրան կորցնելու առթիվ: Եվ թագավորն էլ հետևելով սովորութեանը, եկավ ինձ մխիթարելու: Եվ հետո նրանք մեռել լողացնող բերեցին ու կնոջս լողացրին, և հազարին նրա ունեցած ամենալավ բաները՝ շորերը, զարդերը, մանյակները, թանկագին քարեր ու ոսկեղենն ու արծաթեղենը: Հազցնելուց հետո կնոջս դրեցին արկղի մեջ ու տարան, և զնացին դեպի այն սարը, և հորի բերանից քարը վերցրին ու ննչեցյալին զցեցին հորի մեջ: Իսկ հետո իմ բոլոր բարեկամները, կնոջս բոլոր ազգականները մոտեցան ինձ և սկսեցին հրածեշտ տալ, իսկ ես նրանց մեջ կանգնած բղավում էի. «Ես օտարական եմ ու ձեր սովորություններին դիմանալու ուժ չունեմ»: Բայց նրանք ականջ չէին դնում իմ բղավոցին և ուշադրություն չէին դարձնում իմ ասածին:

Եվ նրանք ինձ բռնեցին ու բռնութեամբ կապկպեցին ոտ ու ձեռք և վրաս կապեցին յոթ ցորնաբլիթ ու մի կուժ խմելու ջուր, ոնց որ ընդունված էր ըստ սովորության, և ինձ իջեցրին այդ հորը: Ու մեկ էլ դուրս եկավ, որ դա հսկայական մի քարայր է սարի տակ: «Պարանը արձակիր», — ասացին նրանք վերևից, բայց ես չհամաձայնեցի արձակել, ու նրանք պարանը զցեցին ցած, իսկ հետո հորի բերանը ծածկեցին այն մեծ քարով, որ այնտեղ էր, ու զնացին իրենց ճամփով:

Իսկ ինչ վերաբերում է ինձ, — շարունակեց Սինդիբատը, — ապա ես քարայրում շատ մեռելներ տեսա, որ անտանելի ու զզվելի հոտ էին արձակում, և սկսեցի գլխիս վայ տալ արածիս համար, և բացականչեցի. «Ալլահը վկա, տեղն է ինձ և ես արժանի եմ այն բոլորին, ինչ պատահում է և ինչ բաժին է ընկնում ինձ»: Եվ վախենալով, որ ուտելիքս ու ջուրը կվերջանա, ես դադարեցի գիշերը ցերեկից զանազանել, և սկսեցի քիչ բան ուտել. ուտում էի միայն այն ժամանակ, երբ քաղցը քիչ էր մնում ինձ կտրտեր, ու խմում էի այն դեպքում, երբ ծաբավն անտանելի էր դառնում: «Չկա՞ ավելի մեծ զորություն և ուժ, քան բարձրյալ ու ամենակարող ալլահինն է, — բացականչեցի ես: — Ի՞նչը ստիպեց ինձ ամուսնանալ այս քաղաքում ու դժբախտանալ: Հենց որ ասում եմ՝ ազատվեցի փորձանքից, իսկույն ընկնում եմ ավելի մեծ փորձանքի մեջ: Ալլահը վկա, այսպիսի մահը վատ մահ է: Օ՛, երանի թե ծովում խեղդվեի կամ մեռնեի սարերում, դա ավելի լավ կլիներ, քան այս նողկալի մահը»:

Ու ես մնացի այդ վիճակում, գլխիս վայ տալով, ու քնում էի մեռելների ոսկորների վրա, օգնություն հայցելով մեծազոր ալլահից ու մահ

խնդրելով ինձ համար, բայց մահ էլ չէի գտնում, այնպես ծանր էր կյանքը ինձ համար:

Եվ ես ապրեցի այդպես, մինչև որ քաղցը փոթոթեց սիրտս ու ծարավը կրակ դառավ ու խփեց ինձ, և այն ժամանակ մի քիչ նստեցի, ու շոշափելով գտա հացը, մի քիչ կերա ու վրայից մի քանի կում ջուր խմեցի: Եվ դրանից հետո ոտքի ելա և սկսեցի գնալ-գալ քարայրում ու տեսա, որ քարայրն ընդարձակ է, շատ դատարկ տարածություններ ունի, և գետնին շատ մեռելներ ու ոսկորներ կան, որ փտում են հին ժամանակներից սկսած: Եվ քարայրի մի ծայրին, թարմ մեռելներից հեռու, ես մի փոքրիկ տեղ սարքեցի ինձ համար ու սկսեցի այնտեղ քնել, և իմ սնունդը պակասեց ու շատ քիչ մնաց, իսկ ես օրը մեկ անգամ կամ ավելի սակավ էի ուտում, և օրական մի անգամ էլ խմում, վախենալով, թե ունեցածս ջուրն ու սնունդն ավելի շուտ կվերջանան, քան ես կմեռնեմ:

Ու այսպես շարունակում էի ապրել: Եվ ահա օրերից մի օր, երբ ես տխուր նստած մտածում էի, թե ինչ պիտի անեմ, երբ սնունդս ու ջուրս վերջանան, հանկարծ հորի բերանի քարը տեղից շարժեցին ու բացվածքից լույս ընկավ քարայրի մեջ: «Մարդ տեսնի, թե ինչ են անելու» — բացականչեցի ես. ու հանկարծ տեսա, որ հորի պոնկին մարդիկ են կանգնած, և նրանք քարայր են իջեցնում մի մեռած տղամարդու և մի կենդանի կնոջ, որը լաց է լինում ու ինքն իր մահը ողբում, և նրա հետ շատ ուտելիք ու ջուր են իջեցնում: Ու ես սկսեցի նայել այդ կնոջը, իսկ նա ինձ շէր տեսնում, և մարդիկ քարով ծածկեցին հորի բերանն ու գնացին իրենց ճամփով:

Ու ես վեր կացա և, վերցնելով մեռած մի տղամարդու սրունքի ոսկորը, մոտեցա այդ կնոջը ու խփեցի նրա գագաթին, ու կրնն ուշաթափ ընկավ գետին, ու ես մեկ էլ խփեցի նրան, ու երրորդ անգամ, և նա մեռավ: Ու վերցրի ես նրա հացն ու այն ամենը, ինչ ուներ, ու տեսա, որ նրա վրա շատ զարդեր, շորեր ու թանկագին քարերից և մետաղներից մանյակներ կան: Իսկ կնոջ ունեցած ուտելիքը և ջուրը վերցնելուց հետո նստեցի քարայրի ծայրին ինձ համար պատրաստած քնելատեղում ու սկսեցի քիչ-քիչ ճաշակել ուտելիքը, որպեսզի կշտանամ և շուտ շրուպառեմ սնունդս և սովից ու ծարավից շմեռնեմ:

Ու միառժամանակ ես մնացի այդ քարայրում: Եվ ամեն անգամ, երբ որևէ մեկին թաղում էին, ես սպանում էի նրա հետ ողջ-ողջ թաղվածին և վերցնում էի նրա ուտելիքն ու խմելիքը և կերակրվում դրանցով:

Եվ ահա մի օր էլ ես քնած էի: Եվ արթնացա քնից ու լսեցի, որ քարայրի անկյունում մեկը շարժվում է. «Ի՞նչ կարող է լինել», — հարցրի ինքս ինձ, ու վեր կացա ես և, վերցնելով մեռած տղամարդու սրունքի ոսկորը, գնացի աղմուկի ուղղությամբ, և անկյունում խշխշացնողն իմ հոտն առավ, ու տեղից պոկվեց և փախավ, ու պարզվեց, որ դա մի վայրի գազան էր: Եվ գնացի ես նրա հետևից մինչև քարայրի մեջտեղը, և իմ դիմաց լույս երևաց, որ ներս էր ընկնում մի նեղ ճեղքից, ինչպես աստղ, ու այդ լույսը մեկ երևում էր, մեկ անհետանում:

Ու երբ լույսը նկատեցի, գնացի այն կողմը և մոտենալով, ճեղքից լույս տեսա, որ գնալով լայնանում էր: Ու այդ ժամանակ համոզվեցի, որ դա մի բացվածք է քարայրի պատի մեջ, որ գնում հասնում է լույս աշխարհ, և ինձուինձ ասացի. «Սա մի պատճառ ունի: Կամ սա մի ուրիշ անցք է այն անցքի նման, որով իջեցրին ինձ, կամ ճեղքվածք է»: Եվ միառժամանակ մտմտացի ու գնացի լույսի ուղղությամբ: Եվ հանկարծ պարզվեց, որ դա լեռնաշղթայի կողքին մի ճեղք է, որ բացել են վայրի գազանները: Եվ նրանք այդ ճեղքից մտնում են քարայր և ուտում մեռելներին, մինչև որ կշտանում են, իսկ հետո նույն տեղից դուրս են գալիս:

Ու երբ ես այդ բանը տեսա, ազատ շունչ քաշեցի, հոգիս հանգստացավ և սիրտս տեղն ընկավ. և հավատացի, որ մահվանից հետո կենդանի կմնամ, և ինձ զգում էի, ոնց որ երազում: Եվ շարշարվեցի ես այնքան, մինչև որ այդ ճեղքից դուրս եկա: Ու տեսա, որ աղի ծովի ափին եմ, բարձր սարի կատարին, որը բաժանում էր ծովը կղզուց ու քաղաքից, ու ոչ ոք այդ սարին հասնել չէր կարող:

Ու փառք սվեցի ամենակարող ալլահին ու գոհություն հայտնեցի նրան և մեծապես ուրախացա ու սիրտն իմ զվարթացավ, իսկ հետո ճեղքով վերադարձա քարայր ու կուտակածս ամբողջ ուտելիքն ու ջուրը տեղափոխեցի դուրս: Հետո վերցրի մեռելների շորերն ու դրանցից մի քանիսը հաղա եղածի վրա, ու վերցրի մեռելների վրայի հարստություններից շատ ու շատ զանազան մանյակներ, թանկագին քարեր, մարգարիտների շարաններ ու արծաթից ու ոսկուց պատրաստված պաճուճանքներ, որոնք զարդարված էին բազմապիսի մետաղներով ու հազվագյուտ բաներով: Ես հագուստիս մեջ փաթաթեցի մեռելների շորերն ու դուրս բերեցի լեռան կատարը, և կանգնեցի ծովափին: Ու այսպես ամեն օր մտնում էի քարայր ու տնադում այնտեղ եղածը, և ում որ թաղում էին, նրանցից խլում էի ուտելիքն ու ջուրը և սպանում իրեն, տղամարդ լինե՞ր թե կին՝ միևնույն է, իսկ հետո ճեղքով դուրս էի գալիս ու

նստում ծովափին, սպասելով, որ ամենակարող ալլահը ինձ կօգնի ու կուղարկի մի նավ, որը կանցնի իմ կողքով: Եվ քարայրից դուրս բերեցի տեսածս բոլոր զարդերը, և փաթաթեցի մեռելների շորերի մեջ: Ու միառժամանակ անցկացրի այդպես:

Ու մի օր էլ, երբ նստած էի ծովափին ու մտածում էի անելիքիս մասին,— ասաց Սինդիբատը,— տեսե՛մ կատաղի ու մոնչացող ծովի մեջ: Եղով, ուր այլերներն իրար են զարնվում, լողում է մի նավ: Ու վերցրի ես մեռածների հագուստներից մի սպիտակ շոբ ու, կապելով փայտի ծայրին, վազեցի ծովի ափ ու սկսեցի դրանով նշան անել ճամփորդներին, մինչև որ նրանք հայացքները դարձրին իմ կողմն ու տեսան ինձ, որ կանգնած էի սարի կատարին: Եվ նրանք նավով եկան իմ կողմըն ու ձայնս լսեցին ու նավակ ուղարկեցին դեպի ափ, որի մեջ նավով ճանապարհորդող մարդկանց մի բազմություն կար: Ու մոտենալով ինձ, նրանք հարցրին. «Ո՞վ ես դու, և ինչո՞ւ ես այստեղ նստել: Ո՞նց ես հասել այս սարին, երբ մենք կյանքներումս չենք տեսել, որ մեկնումեկը մոտ գա այս տեղին»:— «Ես վաճառական եմ,— սլատասխանեցի նրանց:— Այն նավը, որով տեղ էի գնում, խորտակվեց, բայց մի տախտակի վրա նստած դուրս եկա ջրի երես ու շարունակեցի առաջ գնալ, և ինձ մոտ էին իմ իրերը, և ալլահն օգնության հասավ ու հեշտացրեց իմ գործը, ու ես շատ սանջվելուց հետո, ունեցվածքիս հետ ափ դուրս եկա և դա եղավ շնորհիվ իմ ջանքերի ու ճարպկության»: Ու ճամփորդներն ինձ նստեցրին նավակ ու դրա մեջ դրեցին այն բոլորը, ինչ վերցրել էի քարայրից ու փաթաթել շորերիս ու սավաճների մեջ, և ինձ հետ միասին հետ դարձան այդ մարդիկ ու ինձ նախ բարձրացրին և բոլոր իրերիս հետ տարան նավապետի մոտ: «Ո՞վ արդ ինչպես ես հասել այստեղ, երբ այս սարը շատ բարձր սար է ու դրանից այն կողմ մի մեծ քաղաք կա,— հարցրեց նավապետը,— իսկ ես ամբողջ կյանքիս ընթացքում նավարկել եմ այս ծովում և միշտ անցել այս սարի կողքով, բայց գազաններից ու թռչուններից բացի մարդ չեմ տեսել դրա վրա»:— «Վաճառական եմ,— պատասխանեցի ես,— ու մեծ նավի վրա էի, որը շարդուփշուր եղավ, ու իմ ամբողջ ունեցած-չունեցածը այս կտորներն ու շորերը, սկսեցին իջնել ջրի տակ, բայց ապրանքս դրեցի նավի փալտեզեն մասերից ձեռքս ընկած մի մեծ տախտակի վրա, և բախտս ու ճակատագիրս օգնության հասան ինձ, ու ես բարձրագա այս սարը և սկսեցի սպասել մինչև որ մեկնումեկն անցնի այստեղով ու ինձ տանի իր հետ»:

Ու չպատմեցի այդ մարդկանց, թե ինչեր են անցել գլխովս այդ քաղաքում ու քարայրում, վախենալով, որ նավի ուղևորների մեջ քաղաքից մարդ կլինի: Հետո նավի տիրոջն առաջարկեցի իմ ունեցվածքից վերցնել շատ բան ու ավելացրի. «Ո՛վ տեր, այս սարից փրկվելուս պատճառը դու ես, ուրեմն վերցրու ինձանից այս նվերը լավության համար, որ դու ինձ արեցիր»: Բայց նավապետը ոչ մի բան չվերցրեց ինձանից ու ասաց. «Մենք ոչ մեկից ոչ մի բան չենք վերցնում: Երբ ծովի ափին կամ կղզու վրա մի մարդ ենք տեսնում, որի նավը խորտակվել է, վերցնում ենք մեզ մոտ և ուտելիք ու շուր ենք տալիս, ու թե տկուր է. հազցրնում ենք. իսկ երբ հասնում ենք մի ապահով նավահանգիստ, մեր ունեցածից մի բան էլ մենք ենք նվիրում նրան ու լավություն և բարերարություն ենք անում, հանուն մեծագոր ալլահի սուրբ պատկերի»:

Այնժամ ես նրան երկար կյանք մաղթեցի, ու մենք այդպես շարժվեցինք կղզուց կղզի և ծովից ծով, ու ես հուսով էի, որ կփրկվեմ, և ուրախանում էի հաջողությանս համար, բայց ամեն անգամ, երբ հիշում էի, թե ինչ օրեր անցկացրի կնոջս հետ քարայրում, խելքս գլխիցս թռչում էր: Ու այսպես, ալլահի զորությամբ, մենք բարեհաջող հասանք Բասրա քաղաքը: Եվ քաղաք դուրս եկա ես ու մնացի այնտեղ մի քանի օր, իսկ դրանից հետո եկա հասա Բաղդադ քաղաքը, ու գնացի իմ թաղն ու մտա տունս և հանդիպեցի հարազատներիս ու բարեկամներիս ու հարցուփորձ արի, թե ոնց են, ոնց չեն: Եվ նրանք ուրախացան, որ աղաթվել եմ ամեն շարիքից, ու շնորհավորեցին ինձ: Եվ ես դարսեցի ունեցած-չունեցածս պահեստարաններում, ու սկսեցի ողորմություն տալ և նվիրել ու հազցնել որբերին և այրիներին: Ու այդպես ապրում էի ուրախ և զվարթ: Եվ կրկին սկսեցի ընկերություն ու բարեկամություն անել և մտերիմ մարդկանց հետ շփվել, և շարունակեցի ապրել զվարճալիքների ու ցնծության մեջ:

Այս է ամենազարմանալին, որ պատահեց ինձ շորրորդ ճանապարհորդության ժամանակ: Բայց դու ընթրիր իմ տանը, եղբայրս ու սովորականի պես վերցրու հասանելիքդ, իսկ վաղը կգաս ինձ մոտ, ու ես կպատմեմ քեզ, թե ինչեր եղան ու ինչ պատահեց ինձ հինգերորդ ճանապարհորդության ժամանակ, դա ավելի զարմանալի ու տարօրինակ պատմություն է, քան նախորդները»:

Եվ ապա Սինդիբադը հրամայեց հարյուր մսխալ ոսկի տալ բեռնակրին ու պատվիրեց սեղան գցել: Եվ բոլորն ընթրեցին ու գնացին իրենց ճամփով, շատ ու շատ զարմանալով իրենց լսած պատմության վրա, չէ՞ որ նրա պատմությունները մեկը մյուսից սարսափելի էին:

Իսկ Սինդիբատ-բեռնակիրը գնաց իր կացարանն ու գիշերն անց-կացրեց անշափ ուրախ ու զվարթ, իսկ երբ առավոտը բացվեց, և լույսը փայլեց ու շողաց, Սինդիբատ-ցամաքայինը վեր կացավ և, առավոտյան աղոթքն անելուց հետո, դուրս եկավ ու գնաց Սինդիբատ-ծովագնացի տուն: Սինդիբատ-բեռնակիրը տանտիրոջը բարի լույս մաղթեց, ու Սին-դիբատ-ծովագնացը պատասխանեց. «Բարով եկար»,— ու պատվիրեց հյուրին նստել իր կողքին: Ու երբ նրա մյուս ընկերները եկան, բոլորն էլ կերան-խմեցին ու հաճույք ստացան, և ուրախացան, ու նրանց միջև ծայր առավ զրույցը: Եվ Սինդիբատ-ծովագնացն ասաց.

ՀԻՆԳԻՐՈՐԳ ԸԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ո՛վ իմ եղբայրներ, իմացեք, որ շորրորդ ճանապարհորդությունից վերադառնալուց հետո ես ամբողջովին թաղվեցի կերուխումի, ուրախու-թյան ու զվարճալիքների մեջ ու մոռացա այն բոլոր փորձություններն ու շարժարանքները, որ կրել էի, այն ամենը, ինչ պատահել էր ինձ, այն-քան որ շատ էի հրճվում փող կուտակելու, շահ ստանալու և եկամու-տիս ավելանալու համար: Եվ հոգիս դրդեց ինձ ճանապարհորդել և օտար երկրներ ու կղզիներ տեսնել, Եվ ես վճռեցի անել այդ բանը, ու ծովով տանելու համար ապրանքներ առնելով ու հակեր կապելով, դուրս եկա Բաղդադ քաղաքից ու ճամփա ընկա դեպի Բասրա քաղաքը: Եվ սկսեցի գնալ ու գալ ծովափին, և տեսա մեծ, բարձր ու հիանալի մի նավ, ու հավանեցի, և գնեցի ես այդ նավը (իսկ դրա սարք ու կարգը նոր էր), և վարձեցի մի նավապետ ու նավաստիներ, և սարուկներին ու ծառա-ներին թաղեցի նրանց մոտ, որ հսկեն նրանց: Նավ բարձեցի հակերս, և ինձ մոտ եկան մի քանի վաճառական ու նրանք էլ իրենց հակերը նավ բարձեցին ու վարձ ավեցին ինձ, ու մենք անշափ ղվարթ ու գոհ ճամփա ընկանք, ուրախանալով հաջողության ու հեշտ եկամուտ ձեռք բերելու հույսով:

Եվ գնում էինք մենք մի կղզուց մյուսն ու մի ծովից մյուս ծովը, դիտելով կղզիներ ու երկրներ, և ցամաք էինք իջնում, և ծախում ու առ-նում էինք: Ու այսպես շարունակեցինք գնալ ու գնալ, մինչև որ մի օր հասանք մի մեծ կղզու, որ գուրկ էր կենդանի արարածներից և որտեղ ոչ մի մարդ չկար, և ավերված էր այդ կղզին ու ամայի: Եվ կղզում մի հսկայական ու սպիտակ գմբեթ կար, և մենք ելանք կղզի՝ գմբեթին նա-յելու, ու հանկարծ տեսանք, որ դա ուրիշ թռչունի մի մեծ ձու է: Ու

երբ վաճառականները մոտեցան դրան ու նայեցին (իսկ նրանք չգիտեին, որ դա ոուխի ձու է), սկսեցին քարկոծել, և ձուն կոտրվեց ու դրանից շատ ջուր հոսեց: Ու ձվի միջից երևաց ոուխի ձագը, և նրան քաշեցին հանեցին ձվի միջից ու մորթեցին, և շատ միս ստացվեց նրանից: Իսկ ես նավի մեջ էի, ու նրանք ինձ շասացին, թե ինչ են արել:

Եվ ուղեկիցներիցս մեկն ինձ ասաց. «Ո՛վ տեր, մի վեր կաց ու տես այն ձուն, որ դու գմբեթի տեղ դրեցիր»: Ու վեր կացա ես, որ նայեմ, և տեսա, որ վաճառականները քարկոծում են ձուն: «Այդպիսի բան մի՛ արեք,— գոռացի ես,— ոուխ թռչունը կգա և շարգուփշուր կանի մեր նավն ու կկործանի մեզ»: Բայց նրանք շանսացին խոսքերիս: Ու հենց որ նրանք վերջացրին իրենց շար գործը, արևը հանկարծ թաքնվեց. օրը մթնեց, ու մեր գլխավերևում հայտնվեց մի ամպ, որ ծածկեց երկինքը, անգամ օդը մթնեցրեց, ու մենք բարձրացրինք գլուխներս, որ տեսնենք, թե ինչ բան էր, որ տարածվեց մեր ու արևի արանքում: Եվ տեսանք, որ ոուխի թևերն էին արևի լույսը ծածկել մեզանից ու երկինքը մթնեցրել: Իսկ երբ ոուխը թռավ եկավ ու տեսավ, որ իր ձուն կոտրված է, սաստիկ կոնչաց մեզ վրա, և նրա ընկերուհին էլ թռավ եկավ: Ու երկուսն էլ սկսեցին պատվել նավի վերևում ու ամպի գոռոցից էլ բարձր ձայնով ճչալ: Եվ ես բարձր ձայնով դիմեցի նավապետին ու նավաստիներին, և ասացի. «Արձակեցեք նավի ճապանները ցցերից ու փրկության մի ճար գտեք, քանի շենք կործանվել»: Ու նավապետն ինչ-որ բան արեց շտապ, ու երբ վաճառականները նավ բարձրացան, արձակեց ճապանները, ու մենք նավեցինք կղզու երկայնքով:

Ու տեսնելով, որ մեր նավը ծովով առաջ է գնում, ոուխը միառժամանակ անհետացավ, ու մենք շարունակեցինք մեր ճանապարհը և հետզհետե արագացնում էինք նավի ընթացքը, ցանկանալով ազատվել թռչունների ճանկերից ու հեռանալ նրանց հողից, բայց թռչունները հանկարծ հետ դարձան և սկսեցին հետևել մեզ ու մոտեցան մեր նավին, և ամեն մեկի ճանկերի մեջ սարից պոկած մի խոշոր քար կար: Եվ ոուխը ճանկերում բռնած քարը նետեց մեր կողմը, բայց նավապետը նավը մի կողմ բշեց, ու քարն ընկավ ոչ թե նավի վրա, այլ շրմփաց ծովը: Նավը սկսեց ուժգին վեր ու վար անել (այնքան որ քարը թափով էր ընկել ծովը), ու մենք տեսանք ծովի հատակը, որովհետև հարվածի ուժն ահավոր էր:

Իսկ հետո ոուխի ընկերուհին իր հետ բերած քարը շարտեց մեզ վրա (իսկ դա առաջինից փոքր էր), և նախախնամության կամքով քարն ընկավ նավախելի վրա և շարգուփշուր արեց, ու ղեկը քսան կտոր եղավ,

և կտորները թռան այս ու այն կողմ: Եվ ինչ կար-չկար նավի վրա, ջրի տակն անցավ, իսկ ես սկսեցի վրկվելու միջոց փնտրել, որ կյանքս պահպանեմ, և մեծազոր ալլահը նավի տախտակներից մեկն ուղարկեց ինձ, ու ես կառչեցի այդ տախտակից ու նստեցի դրա վրա և սկսեցի ոտքերով թիավարել, և քամին ու ալիքները օգնում էին ինձ առաջ շարժվել: Իսկ նավը խորտակվեց մի կղզու մոտ՝ ծովի մեջտեղը: Եվ ամենակարող ալլահի կամքով ճակատագիրն ինձ քշեց այդ կղզու կողմը: Եվ ափ ելա ես վերջին շունչս բերանումս ու ոնց եր մեռել, այնքան որ հոգնած էի, ուժասպառ, սոված ու ծարավ:

Ու ես միառժամանակ պառկած մնացի ծովափին, մինչև որ հագիս հանգստացավ ու սիրտս տեղն ընկավ: Հետո գնացի ման գալու կղզում ու տեսա, որ դա դրախտային այգու նման է. ծառերն այնտեղ կանաչ էին, գետակներում վարարում էր ջուրը, և հավքերը դալլալում էին ու փառք տալիս նրան, ում որ պատկանում է վեհությունն ու հավիտենականությունը:

Ու այդ կղզում շատ ու շատ ծառեր կային և պտուղներ ու դանազան ծաղիկներ, և կերա ես այդ պտուղներն այնքան, մինչև որ կշտալա, և խմեցի գետակների ջրից, մինչև որ հագեցա: Եվ այն ժամանակ մեծազոր ալլահի գովքն արեցի ես ու փառք տվեցի նրան այդ բոլոր բարիքների համար:

Ու այդպես նստեցի ես կղզում,— շարունակեց Մինդիբադը— մինչև որ իջավ երեկուն և վրա հասավ գիշերը, ու այն ժամանակ վեր կացա հոգնածությունից ու սարսափից ամբողջովին ջարդված մարմնով, ինչպես մեռել, և շսեցի կղզու վրա ոչ մի ձայն ու շտեսա ոչ մի մարդ: Եվ պառկած մնացի կղզում մինչև առավոտ, իսկ հետո վեր կացա ու սկսեցի շրջել ծառերի միջև:

Եվ հոսող առվի ափին տեսա ես ռոռգման մի ջրհոր, իսկ դրա մոտ նստած էր մի գեղեցիկ ծերունի, ու ծերունին հագել էր ծառերի տերևներից կարված թիկնոց: Եվ ես ինձ ու ինձ ասացի. «Գուցե, այս ծերուկը ծովի՞ց է ափ դուրս եկել, և նա այն խեղդվողներից է, որոնք խորտակված նավի վրա էին», և մոտեցա ծերունուն ու ողջունեցի նրան, իսկ նա իմ ողջունին նշանացի պատասխանեց ու ոչ մի բառ չասաց: «Ո՞վ ծերունի, ինչո՞ւ ես նստել այստեղ»,— հարցրի ես նրան: Եվ ծերունին վշտալի թափահարեց գլուխն ու ձեռքով նշան արեց, ցանկանալով ասել. «Շալակիր ինձ ու տեղափոխիր ջրհորի մյուս կողմը»: Ու ինքս ինձ ասացի. «Լավություն անեմ այս մարդուն ու տեղափոխեմ, որտեղ ինքն է ուզում, գուցե, դրա համար մի պարզև ստանամ»:

Ու ես մտանցա ծերունուն և դրեցի նրան ուսերիս ու տարա այնտեղ, ուր նա ցույց էր տվել, իսկ հետո ասացի նրան. «Առանց շտապելու կամաց իջիր ցած», բայց նա շիջավ իմ ուսերից ու ոտքերը գցեց վզովքս: Ու նայեցի ես նրա ոտքերին և տեսա, որ դրանք սև էին ու կոշտ, ոնց որ գոմեշի կաշին:

Ու ես վախեցա և ուզում էի ուսերիցս ցած գցել ծերուկին, բայց նա ոտքերով կպավ վզիս ու սկսեց ինձ խեղդել, այնպես որ աշխարհը սևացավ աչքիս առաջ և ես դիտակցությունս կորցրի ու նվաղած ընկա գետին, ոնց որ մեռած: Եվ ծերուկը ոտքերը բարձրացրեց ու սկսեց խփել մեջքիս, և ուսերիս, ու ես դրանից սաստիկ ցավ զգացի և ոտքի ելա, իսկ ծերուկը պինդ նստած էր ուսերիս, և ես հոգնեցի նրա ծանրությունից:

Եվ նա ձեռքով նշան արեց, թե՛ գնա ամենալավ պտուղներն ունեցող ծառերի մոտ: Եվ եթե չէի ըսում նրան, նա խարաղանի հարվածներից ավելի ուժեղ հարվածներ էր հասցնում ոտքերով, ու ձեռքով անընդհատ նշաններ էր անում, ցույց տալով, թե ուր է ուզում գնալ ինքը, իսկ ես, նրան ուսերիս առած, դեսուդեն էի գնում: Հենց որ դանդաղում էի կամ կանգ էի անում, ծեծում էր ինձ, և կարծես թե ես նրա գերին էի:

Ու մենք մտանք կղզու մեջտեղի պուրակը, և ծերուկը միզում ու աղաոտում էր հենց ուսերիս վրա, ու ցած չէր իջնում ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը, իսկ երբ ուզում էր քնել, ոտքերը փաթաթում էր վզիս ու մի քիչ մրափում էր, և հետո արթնանում էր ու ինձ ծեծում: Ու ես լեղապատառ վեր էի թռչում, և նրա հրամանները չսել չէի կարող, այնքան որ աչքս վախեցել էր ու շատ էի տանջվել նրա ձևոքին, և ինքս ինձ նախատում էի, որ շալակս առա նրան ու տարա, և զղջացի, որ արեցի այդ բանը:

Եվ ապրում էի այսպես, սարսափելի հոգնած ու շարդված, և ինքս ինձ ասում էի. «Ես սրան լավություն արեցի և փոխարենը շարություն ստացա: Այլահը վկա, կյանքումս էլ ոչ ոքի լավություն չեմ անելու»,— և մեծազոր ալլահից ամեն ժամ ու ամեն րոպե մահ էի աղերսում, այնքան որ զզվել էի կյանքից ու մեծ էր հոգնածությունս: Ու այսպես անցկացրի միառժամանակ: Բայց ահա մի անգամ էլ ծերուկի հետ գնացինք կղզու մի կողմը, և ես այնտեղ բազմաթիվ գզումներ տեսա, որոնց մեջ շորացածները շատ կային: Ու վերցրի ես մի մեծ շոր դրում, վերևից անցք բաց արեցի ու մեջը մաքրեցի թափեցի, իսկ հետո փուշ դրումն առած գնացի խաղողի վազի մոտ ու խաղող լթբի դրա մեջ ու անցքը խցանեցի: Եվ գզումը դրեցի արևի տակ ու այգպես թողեցի մի բանի

օր, մինչև որ խաղողը մաքուր գինի դարձավ: Եվ ամեն օր ես խմում էի այդ գինուց, որ ուժերս պահպանեմ ու վերջ տամ հոգնածութեանս, որի պատճառն այդ գարշելի շեյթանն էր, և ամեն անգամ, երբ գինուց քեֆս լավանում էր, սովելի համարձակ էի դառնում: Ու երբ մի անգամ ծերուկը տեսավ, որ խմում եմ, ձեռքով նշանացի հարցրեց. «Այդ ի՞նչ է»: Ես պատասխանեցի. «Սա անմահական բան է, սիրտը պնդացնում է ու միտքը սուր դարձնում»: Ու ես ծերուկին ուսերիս առած սկսեցի վազվզել ու պար գալ ծառերի մեջ, և երբ հարբեցի, զվարթությունը տիրեց իմ հոգուն, և ես սկսեցի ծափ տալ, երգել և ուրախանալ: Ծերուկն ինձ այդ վիճակում երբ տեսավ, նշան արեց, որ դղումն իրեն տամ, որ ինքն էլ կարողանա խմել, ես էլ վախեցա ու դղումն իրեն տվեցի, և նա խմեց մնացած գինին ու դղումը շարտեց գետին:

Եվ ուրախ տրամադրությունը համակեց նրան, ու նա սկսեց ուսերիս վրա դես-դեն ընկնել, իսկ հետո քեֆը լավացավ և խիստ հարբեց, և նրա բոլոր անդամներն ու հոդերը թուլացան, այնպես որ սկսեց ճոճվել ուսերիս վրա: Ու երբ ես հասկացա, որ նա հարբել է ու աշխարհից վերացել, ձեռքս տարա, նրա ոտքերն իրարից հեռադրի ու վիզս կապանքեց ազատեցի, իսկ հետո կուցա, նստեցի ու ծերուկին ցած գցեցի, Ու չէի հավատում,— պատմում էր Սինդիբադը,— որ ազատվեցի ու փրկվեցի ծանր դրությունից, որի մեջ ընկել էի:

Ես վախեցա, որ ծերուկը գինովությունից ուշքի կգա ու ինձ նեղութուն կտա, և ծառերի արանքում ընկած մի մեծ քար վերցրի ու մոտեցա ծերուկին, և երբ նա քնած էր, խփեցի գլխին, և միան ու արյունը խառնվեցին իրար, ու նա սատկեց (թող ալլահի անեծքը միայն լինի նրա բաժինը): Իսկ դրանից հետո ես սկսեցի ման գալ կղզում, և իմ միտքը հանգստացավ, ու ես հասա ծովափի այն տեղին, ուր սուաջ էի: Ու որոշ ժամանակ ապրեցի այդ կղզում, սնվելով ծառերի պտուղներով ու ծառավա կոտրելով առունների ջրով, և նայելով, թե կղզու մոտով չի՞ անցնում արդյոք, որևէ նավ: Ու մի օր էլ նստած մտածում էի, թե ինչեր եկան գլուխս և ինչեր պատահեցին ինձ, ու ինքս ինձ տեսնում էի. «Տեսնես ալլահն ինձ կպահպանի՞», ու ես ողջ և առողջ կվերադառնամ իմ երկիրը ու կհանդիպե՞մ հարազատներիս ու բարեկամներիս»: Եվ հանկարծ շառաչող ծովի մեջտեղը, ուր ալիքներն իրար էին զարնվում, երևաց մի նավ, և այդ նավն այնքան մոտեցավ, մինչև որ հասավ կղզուն ու կանգ առավ ափի մոտ:

Եվ ճամփորդներն իջան նավից ու եկան կղզի, ու ես մոտ գնացի նրանց: Նրանք էլ տեսան ինձ ու բոլորը շուտով մոտեցան և հավաք-

վեցին շուրջս ու սկսեցին հարցուփորձ անել, թե ի՞նչ է եղել և ինչո՞ւ եւ ընկել ես այդ կղզին: Եվ պատմեցի ես նրանց, ինչ որ եկել էր գլուխս ու այն ամենը, ինչ պատահել էր: Ու նրանք խիստ զարմացան պատմածիս վրա և ասացին. «Այն մարդը, որ նստած է եղել ուսերիդ, ծովի շեյխ է կոչվում, ու նրա ոտքերի տակ ընկածներից ոչ մեկը չի փրկվել, բացի քեզանից: Թող փառավորվի ավաճը, որ փրկել է քեզ»:

Եվ ապա նրանք ինձ համար մի քիչ ուտելիք բերեցին, ու ես կերա այնքան, մինչև որ կշտացա: Ու շորեր սվեցին ինձ, և ես հագա ու ամոթս ծածկեցի դրանցով, իսկ հետո նրանք իրենց հետ ինձ տարան նավ: Եվ նավեցինք մենք զօր ու գիշեր: Եվ ճակատագիրը մեզ տարավ բարձր շինություններով մի քաղաք, որի բոլոր տները ծովին էին նայում, իսկ այդ քաղաքը կապիկների քաղաք էր կոչվում: Եվ երբ գիշերը վրա էր հասնում, քաղաքում ապրող մարդիկ դուրս էին գալիս դեպի ծովը բացվող դարպասներից, նստում էին նավակներն ու նավերը և գիշերում էին ծովում, վախենալով, որ կապիկները գիշերը լեռներից կիշնեն իրենց մոտ:

Եվ ես դուրս եկա նայելու քաղաքին, ու նավը գնաց, իսկ ես շիմացա, և սկսեցի զղջալ, որ մտա այդ քաղաքը, և հիշեցի ընկերներիս ու այն ամենը, ինչ կապիկների պատճառով պատահել էր ինձ առաջին ու երկրորդ անգամ:

Եվ տխուր-տրտում նստել էի ու լաց էի լինում, ու մտեցավ ինձ այդ երկրի բնակիչներից մեկը և ասաց. «Ո՞վ տեր, դու կարծես թե օտար ես այս հողում, հը»:— «Այո,— պատասխանեցի նրան,— օտարական եմ ու չքավոր: Ես այն նավի վրա էի, որ կանգ առավ այս ափի մոտ, և ցած իջա նավից, որ քաղաքը տեսնեմ, ու վերադառնալով, նավը շտեսա»:— «Վեր կաց,— ասաց այդ մարդը,— գնանք մեզ հետ և նավակ նստիր: Գիշերը եթե մնաս քաղաքում, կապիկները գլուխդ կուտեն»,— «Լսում եմ ու հնազանդվում»,— ասացի ես ու հենց նույն ժամին և նույն վայրկյանին վեր կացա ու մարդկանց հետ միասին նավակ նստեցի, և նրանք, հետ մղվելով ափից, մի մղոն հեռացան: Եվ այսպես նրանք անցկացրին գիշերը, ու ես էլ նրանց հետ: Իսկ երբ առավոտը բացվեց, նրանք վերադարձան քաղաք ու դուրս եկան նավակից, և ամեն մեկը գնաց իր գործին. այդպես էր նրանց անփոփոխ սովորությունը: Ով որ գիշերը մնում էր քաղաքում, կապիկները գալիս ու նրան մեռցնում էին, իսկ ցերեկը այդ կապիկները հեռանում էին քաղաքից: Եվ նրանք սնվում էին այգիների պտուղներով ու մինչև երեկո ընում սարե-

բում, իսկ հետո վերադառնում էին քաղաք, ու այդ քաղաքը գտնվում էր սեամորթների ամենահեռավոր երկրներից մեկում:

Ահա ամենազարմանալի բաներից մեկը, որ այդ քաղաքում պատահեց ինձ: Գիշերը նավակում հետս անցկացրած մարդկանցից մեկն ասաց. «Ով տեր, այս հողերում դու օտար ես, սրևէ արհեստ գիտե՞ս, որ կարողանաս զբաղվել»:— «Ոչ, եղբայր իմ, ալլահը վկա, ոչ մի արհեստ չգիտեմ ու ոչ մի բան անել չեմ կարող,— պատասխանեցի ես:— Միայն վաճառական եմ, փող ու հարստություն ունեմ, և խոշոր գումարներով ու ապրանքներով բարձած թաղավորավայել մի նավ ունեի, ու այդ նավը ծովում ջարդուփշուր եղավ, և նրա մեջ եղած ամեն բան ջրի տակ անցավ, ես էլ միայն ալլահի կամքով փրկվեցի խեղդվելուց: Ալլահն ինձ մի կտոր տախտակ ուղարկեց, ես էլ նստեցի դրա վրա, ու տախտակը եղավ պատճառը, որ խեղդվելուց պրծա»: Ու այդ մարդը վեր կացավ և բամբակե կտորից կարված մի պարկ բերեց ու ասաց. «Վերցրու այս պարկն ու բերնեբերան լցրու գետաքարերով, քաղաքի բնակիչների բաղմոխյան հետ դուրս եկ, իսկ ես կժանոթացնեմ քեզ նրանց հետ և կհանձնարարեմ հոգ տանել քո մասին: Արա, ինչ նրանք են անում, և, գուցե, մի բան վաստակես, որը քեզ կօգնի, այստեղից գնալ ու քո երկիրը վերադառնալ»:

Ու հետո այդ մարդը իր հետ տարավ ինձ քաղաքից դուրս, ու ես հավաքեցի մանր ու լերկ քարեր և լցրի պարկս, ու մեկ էլ տեսա, որ մի բաղմոխյուն է դուրս գալիս քաղաքից: Ու այդ մարդն ինձ ծանոթացրեց նրանց հետ և հանձնեց նրանց խնամքին ու ասաց. «Այս մարդն օտարական է, տարեք ձեր հետ ու հավաքել սովորեցրեք, գուցե, մի բան վաստակի, որ սոված չմնա, իսկ դուք պարզև ու հատուցում կստանաք»:— Եվ մարդիկ ասացին. «Լսում ենք ու հնազանդվում»,— ու ողջունեցին ինձ և տարան իրենց հետ: Եվ նրանցից ամեն մեկն իմ պարկի նման քարերով լիքը մի պարկ ուներ: Ու գնացինք մենք, գնացինք մինչև որ հասաք մի լայն հովիտ, որտեղ բազմաթիվ բարձր ծառեր կային, և այդ ծառերին ոչ ոք բարձրանալ չէր կարող: Ու այդ հովտում շատ կապիկներ կային, և մեզ տեսնելով, կապիկները փախան ու մագլցեցին ծառերի վրա: Եվ մարդիկ սկսեցին պարկերում եղած քարերը նետել կապիկների վրա, իսկ կապիկները պոկում էին ծառերի պտուղներն ու շարտում մարդկանց վրա:

Ես նայեցի կապիկների շարտած պտուղներին, ու մեկ էլ տեսա, որ դրանք հնդկական ընկույզներ են: Եվ, տեսնելով մարդկանց արածը, ես էլ մի մեծ ծառ ընտրեցի, որի վրա շատ կապիկներ կային: Եվ, մոտե-

նալով ծառին, սկսեցի քարերը նետել նրանց վրա, իսկ կապիկներն սկսեցին պոկել ընկույզներն ու շարտել ինձ վրա: Ու ես հավաքում էի ընկույզները, ինչպես որ մյուս մարդիկ էին անում: Պարկի միջի բուլբ քարերը դեռ չէին վերջացել, որ ես արդեն շատ ընկույզ էի հավաքել: Իսկ երբ մարգիկ վերջացրին իրենց գործը, ինչ կար-չկար հավաքեցին, և ամեն մեկը տարավ այնքան, ինչքան կարող էր, իսկ օրվա մնացած մասը մինչև իրիկուն մենք ճամփա էինք գնում, ու վերադարձանք քաղաք, և ես գնացի իմ բարեկամ մարդու մոտ, որն ինձ ծանոթացրեց քաղաքի բնակիչների հետ, ու ավեցի նրան, ինչ որ հավաքել էի և շնորհակալություն հայտնեցի լավության համար: «Վերցրու քեզ ու ծախիր և օգտվիր սրա արժեքից», — ասաց նա: Եվ նա տվեց իր տան մի սենյակի բանալին ու ասաց. «Այնտեղ կդարսես մոտդ մնացած ընկույզները, և ամեն օր դուրս եկ մարդկանց հետ, ինչպես այսօր, ու հավաքած ընկույզներից շոկիր վատերն ու ծախիր և օգտվիր փողից, իսկ մնացածները պահիր պենյակում, գուցե, այնքան հավաքես, որ բավական փող վաստակես ու կարողանաս գնալ քո երկիրը»: «Ամենակարող ալլահը մեժ հարստություն պարգևի քեզ», — ասացի նրան:

Եվ ես սկսեցի անել այն, ինչ որ այդ մարդն էր ասել: Ամեն օր քարեր էի լցնում պարկն ու մարդկանց հետ դուրս էի գնում քաղաքից և անում այն, ինչ նրանք էին անում, ու մարդիկ սկսեցին հոգ տանել իմ մասին և ցույց տալ այն ծառերը, որոնց վրա շատ պտուղ կար:

Ու այսպես անցկացրի միառժամանակ, ու իմ պահեստում շատ ու լավ հնդկական ընկույզ հավաքվեց, և ես դրանցից ծախեցի մեժ քանակությամբ ու դրանց համար շատ փող ստացա, և սկսեցի առնել, ինչ աչքս տեսնում էր ու սրտիս դուր էր գալիս: Եվ օրս պայծառ էր անցնում, և քաղաքի ամեն անկյունում հաջողություն ունեի, և շարունակում էի ապրել այդպես:

Մի անգամ էլ կանգնած էի ծովափին, ու մեկ էլ տեսնեմ՝ քաղաքին մոտեցավ մի նավ ու կանգ առավ ափի մոտ: Եվ նավի վրա վաճառականներ կային իրենց ապրանքներով: Եվ նրանք սկսեցին ծախել իրենց ունեցածն ու հնդկական ընկույզներ և այլ բաներ առնել: Եվ ես գնացի իմ բարեկամի մոտ ու հաղորդեցի նրան, որ մի նավ է եկել, ու ասացի, թե ուզում եմ գնալ իմ երկիրը: «Այդ բանը վճռողը դու ես», — ասաց նա: Եվ ես շնորհակալ եղա նրանից իր լավության համար ու հրաժեշտ տվեցի նրան, իսկ հետո գնացի նավի կողմը և, հանդիպելով նավապետին, վարձեցի նրա նավը, բարձեցի ինձ մոտ մնացած ընկույզներն ու շատ ուրիշ բաներ, և նավը հենց այդ օրը ճամփա ընկավ: Եվ գնում էինք

մենք կղզուց կղզի ու ծովից ծով, և ամեն կղզում, որի մոտ կանգ էինք առնում, ես ծախում և ուրիշ ապրանքների հետ փոխանակում էի ընկույզներս, և ալլահն ինձ տվեց ավելի շատ, քան այն, ինչ ունեի առաջ ու կորցրի:

Եվ մի օր էլ անցնում էինք մի կղզու մոտով, որտեղ դարչին ու պղպեղ կային, մարդիկ մեզ պատմեցին, թե պղպեղի ամեն մի փնջի վրա տեսել են մի մեծ տերև, որը ստվեր է անում այդ փնջին ու պաշտպանում դրան, երբ հորդ անձրև է գալիս, իսկ երբ անձրևը դադարում է, տերևը կուչ է գալիս ու կախվում փնջի մի կողմում: Ու ես այդ կղզուց շատ պղպեղ ու դարչին վերցրի՝ ընկույզների հետ փոխանակելով:

Ու մի օր անցնում էինք ալ-Ասիրաթ կղզու մոտով, (իսկ դա այն կղզին է, որի հողում աճում է կամարյան հավեն), ու դրանից հետո էլ մի ուրիշ կղզու մոտով, որի մի ծայրից մյուսը հինգ օր պիտի գնաս, և այնտեղ աճում է շինական հավեն, որը կամարյանից ավելի լավն է: Այս կղզու բնակիչներն իրենց նիստուկացով և հավատով ավելի վատն են, քան այն կղզուներ, որտեղ աճում է կամարյան հավեն. նրանք սիրում են անառակություն անել ու գինի են խմում և չգիտեն, թե ինչ բան է աղոթքի կոչունքն ու աղոթք չեն անում:

Իսկ դրանից հետո մենք մոտեցանք մարգարտի որսատեղերին, ու ես սուզակներին հնդկական մի քանի ընկույզ տվեցի և ասացի. «Սուզվեք իմ երջանկության ու բախտի համար»: Եվ նրանք սուզվեցին ու հանեցին շատ ու շատ խոշոր և թանկագին մարգարիտներ ու ասացին ինձ: «Ով մեր տեր, ալլահը վկա, դու բախտավոր մարդ ես»:

Եվ ինչ-որ նրանք հանել էին, տարա դրեցի նավիս մեջ: Ու մենք նավեցինք ամենակարող ալլահի օգնությամբ, նավեցինք այնքան, մինչև որ հասանք Բասրա: Եվ ես մտա քաղաք ու միառժամանակ մնացի այնտեղ, իսկ հետո ճանապարհվեցի դեպի Բաղդադ քաղաքը: Եվ հասա Բաղդադ ու մտա իմ թաղն ու եկա իմ տունը, և ողջունեցի հարազատներիս ու բարեկամներիս, և նրանք էլ շնորհավորեցին ինձ փրկվելուս առթիվ: Ու ես ամբարներում տեղավորեցի մոտս եղած բոլոր ապրանքներն ու մյուս բաները, և հագցրի որբերին ու այրիներին, ու ողորմություն բաժանեցի բոլորին և նվերներ տվեցի հարազատներիս, բարեկամներիս ու սիրելիներիս: Եվ ալլահն ինձ շորս անգամ ավելի շատ բան տվեց, քան կորցրել էի:

Ու ես մոռացա այն ամենը, ինչ պատահել էր ինձ, և մեծ օգուտի ու շահի համար կրածս շարշարանքներն ու հոգնածությունս ու նորից սկսեցի անել, ինչ որ առաջ էի անում, գործ բռնելով ու բարեկամանա-

յով մարդկանց հետ: Այս է ամենազարմանալին, որ պատահեց ինձ հինգերորդ ճանապարհորդութեան ժամանակ, իսկ հիմա հաց անուշ արեք»:

Իսկ երբ ընթրեցին-վերջացրին, Սինդիբատ-ծովագնացը հրամայեց հարյուր մսխալ ոսկի տալ Սինդիբատ-բեռնակրին: Եվ սա վերցրեց ոսկին ու գնաց, ապշելով, թե ինչ տեսակ բաներ են լինում աշխարհում: Եվ Սինդիբատ-բեռնակիրը գիշերն անցկացրեց իր տանը, իսկ երբ առավոտը բացվեց, վեր կացավ, առավոտյան աղոթքն արեց ու դուրս եկավ և գնաց Սինդիբատ-ծովագնացի տուն: Ներս մտնելով, նա տանտիրոջը բարի յույս մաղթեց, և Սինդիբատ-ծովագնացը նրան պատվիրեց նստել, ու բեռնակիրը նստեց նրա կողքին ու անդադար զրուցեց հետը, մինչև որ տանտիրոջ մյուս ընկերներն էլ եկան: Եվ նրանք զրուցեցին և սեղաններ գցեցին ու սկսեցին ուտել, խմել ու հաճույք ստանալ և զվարճանալ, ու Սինդիբատ-ծովագնացն սկսեց նրանց պատմել վեցերորդ ճանապարհորդութեան մասին:

ՎՅՑԵՐՈՐԴ ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացեք, ո՛վ եղբայրներ, սիրելիներ ու բարեկամներ,— ասաց նա,— որ հինգերորդ ճանապարհորդությունից վերադարձա թե չէ, ուրախութեան, անհոգ քեֆերի, զվարճալիքների ու հաճույքների մեջ մոռացա բոլոր փորձությունները, որ կրել էի ես, և ապրում էի մեծ երջանկության և ուրախության մեջ:

Ու ես շարունակում էի այդպես ապրել: Եվ ահա օրերից մի օր նրստած էի շատ գոհ, ուրախ ու զվարթ, ու մեկ էլ տեսա, որ իմ կողքով անցան մի խումբ վաճառականներ, որոնց վրա ճանապարհորդութեան հետքեր էին երևում: Եվ այդժամ ես հիշեցի ճանապարհորդությունից վերադառնալուս օրը և իմ ուրախությունը հարազատներիս, բարեկամներիս ու սիրելի մարդկանց հանդիպելիս, և իմ ուրախությունը երկիր մտնելիս, ու սիրտս ուզեց ճանապարհորդել և առևտուր անել:

Ու որոշեցի գնալ ճանապարհորդելու, և ծովով տանելու հարմար չրաշալի ու փառահեղ ապրանքներ առա, և հակերս բարձելով, դուրս եկա Բաղդադից ու գնացի Բասրա քաղաքը: Ու այնտեղ մի մեծ նավ տեսա ես, որի վրա վաճառականներ ու մեծամեծ մարդիկ կային՝ հրաշալի ապրանքները հետները: Եվ հակերս բարձրացրի նավ ու դարսեցի նրանց ապրանքների կողքին: Ու մենք բարեհաջող դուրս եկանք Բասրա քաղաքից: Եվ ճանապարհորդում էինք մենք ու գնում տեղից տեղ և քաղաքից քաղաք,— պատմում էր Սինդիբատը,— և ծախում ու առնում էինք:

և տեսնում օտար երկրներ, և ճանապարհին երջանկութիւնը բարի ուղեկցի նման նպաստում էր մեզ, ու մենք ապրուստի միջոցներ էինք հայթայթում մեզ համար:

Եվ գնում էինք այդպես ու մի օր հանկարծ նավապետը սկսեց գոռալ ու կոծել, դեն նետեց շալման և սկսեց ծեծել իր երեսը, ու մորուքը փետեց, ու մեծ վշտից և դառնութիւնից ընկավ նավի ամբարը: Ու բոլոր վաճառականները և ճամփորդները հավաքվեցին նրա շուրջն ու հարցրին նրան. «Ի՞նչ է եղել, ո՞վ նավապետ»: Եվ նա պատասխանեց նրանց. «Իմացեք, ո՞վ մարդիկ, որ մեր նավը շեղվել է ճամփից, ու մենք դուրս ենք եկել այն ծովից, որով գնում էինք ու մտել ենք այն ծովը, որտեղի ճամփաները շենք իմանում, և եթե ալլահը մեզ այս ծովից դուրս գալու մի միջոց չհասցնի, բոլորս կորած ենք: Դե, ուրեմն աղոթեք ամենակարող ալլահին, որպէսզի նա մեզ այս դրութիւնից ազատի»: Հետո նավապետը ոտքի ելավ ու բարձրացավ կայմի վրա և ուզեց առագաստները պարզել: Ու քամին սաստկացավ, և նավախելը շուտ սովեց առաջ, ու ղեկը ջարդվեց, երբ մի բարձր սարի մոտ էինք:

Եվ նավապետն իջավ կայմից ու բացականչեց. «Չկա ավելի մեծ գորութիւն և ուժ, քան բարձրյալ և ամենակարող ալլահինն է, և ոչ ոք չի կարող խուսափել նախասահմանվածից, Ալլահը վկա, մենք մեծ դրժբախտութիւն մենչ ենք ընկել, և մեզ համար փրկութիւն ու ազատութիւն չի մնացել»:

Եվ բոլոր ճամփորդներն սկսեցին իրենց բախտը ողորալ ու հրաժեշատալ իրար, քանի որ նրանց կյանքի վերջն էր եկել, և նրանք ապրելու ոչ մի հուշս չունեին: Ու նավը թեքվեց այդ լեռան կողմը, զարնվեց նրան և ջարդուփշուր եղավ, և նրա տախտակները դես ու դեն թռան, ու նրա վրա եղած բոլոր ապրանքները ջրի տակ անցան, իսկ վաճառականներն ընկան ծովը, և նրանցից մի քանիսը խեղդվեցին, իսկ մյուսները մի կերպ ափ դուրս եկան: Ու ես այն մարդկանց մեջ էի, ովքեր սար բարձրացան: Եվ ես տեսա, որ այդ սարը մի մեծ կղզու վրա է, որի մոտերքը շատ ջարդված նավեր կային, և կղզում՝ ծովափին, ամեն տեսակի հարստութիւններ կային, որ ծովը ափ էր նետել ջարդված նավերից, իսկ նրանց ուղևորները խեղդվել էին: Ու այդտեղ շատ կայք ու գույք կար, որ ծովն ափ էր նետել: Եվ դրանք շշմեցնում էին և մարդու խելքամաղ անում:

Եվ ես ափից հեռացա ու սկսեցի ման գալ կղզում, և դրա խորքում տեսա քաղցրահամ մի առու, որը սկիզբ էր առնում լեռան մոտակա լանջի տակից ու կորչում դրտ մյուս կողմում: Ու բոլոր ճամփորդները բարձ-

րացան այդ սարը և ցրվեցին կղզում: Եվ նրանք ապշեցին ու խելքամս դ
նդան, ու գլուխները բռնեցին, երբ կղզում, ծովափին, անհաշիվ գան-
ձեր տեսան:

Ու այդ առվի մեջ ես տեսա անհաշիվ թանկագին քարեր, ոսկի և
արծաթ, հակինթ ու արքայական մարգարիտներ, ու դրանք սովորական,
բարերի պես ընկած էին առվի հունի մեջ, որ հոսում էր փոքրիկ ան-
տառի միջով, և առվի ամբողջ հատակը շողշողում էր անհաշիվ սպիտոց
ու արծաթից և ուրիշ թանկարժեք առարկաներից:

Ու կղզում մենք շատ ու շատ շինական ու կամարյան լավագույն
հավիե տեսանք: Եվ կղզու ընդերքից բխում էր անուշահոտ համպարի
հատուկ տեսակի հորդահոս մի աղբյուր, որն արևի ուժգին տաքությունից
հալած մոմի պես հոսում էր առվի ափերով ու ողողում ծովափը:

Եվ ծովից դուրս էին գալիս գազաններն ու կուլ էին տալիս այդ
հեղուկը և նորից իջնում ծովի տակ, և համպարը տաքանում էր նրանց
փորում, իսկ հետո այդ կենդանիները համպարը իրենց բերաններից
հետ էին տալիս ծովի մեջ, և դա սառչում էր ջրի երեսին, և դրա գույնն
ու տեսքը փոխվում էին:

Ու ալիքները համպարը ափ էին նետում, և դրա արժեքն իմացող
ճանապարհորդներն ու վաճառականները հավաքում էին դա ու ծախում:
Իսկ ինչ կուլ շտված մաքուր համպարին է վերաբերում, ապա դա հո-
սում էր առվի ափերով ու սառչում հատակին, իսկ երբ արևը ծագում
էր, համպարն սկսում էր հալվել ու հոսել և ամբողջ հովտում թողնում
էր մուշկի հոտի պես մի բուրմունք: Իսկ երբ արևը երկնակամարից հե-
ռանում էր, համպարը սառչում էր: Ու այդ վայրին, ուր գտնվում էր հում
համպարը, ոչ ոք մոտենալ չէր կարող, ոչ ոք չէր կարող հասնել, քանի
որ լեռները շրջապատում էին կղզին, և ոչ ոք ի վիճակի չէր բարձրանալ
այդ լեռները:

Ու մենք ման էինք գալիս կղզում և աչքներս շորս արած նայում այն
հարստություններին, որ այնտեղ ստեղծել էր մեծագոր ալլահը, և չգիտե-
լինք, թե ինչ մտածենք մեր բախտի ու մեր տեսածի մասին, և սաստիկ
վախ էինք զգում մենք:

Ծովափին մենք մի քիչ ուտելիք հավաքեցինք ու կուտակեցինք, և
սկսեցինք ամեն օր ուտել մեկ կամ երկու անգամ, վախենալով, որ մեր
սնունդը կվերջանա ու մենք սաստիկ սովից ու սարսափից կմեռնենք
կարոտի և օտարության մեջ: Իսկ մեզանից ով մեռնում էր, լողացնում
էինք ու փաթաթում այն շորերի կամ կտորի մեջ, որ կղզու ափ էր նե-
տում ծովը: Եվ այդպես մեզանից բազմաթիվ մարդիկ մեռան, ու մենակ

մի բուռ մարդ մնաց կենդանի: Մովի ջուր խմելուց մենք փորացավ ընկանք ու շատ թուլացանք: Այդպես մի քիչ էլ ապրեցինք: Ու այդ ժամանակ բոլոր ընկերներս ու բարեկամներս մեկը մյուսի հետևից մեռան: Եվ ով մեռնում էր, թաղում էինք: Վերջապես, կղզում ես մենակ մնացի: Եվ այն առատ ուտելիքից ինձ մոտ քիչ մնաց, և ես սկսեցի իմ բախտը ողբալ ու բացականչեցի. «Օ՛, երանի՛ թե ընկերներիցս շուտ ես մեռնեի ու նրանք ինձ լողացնեին ու թաղեին... Չկա՛ ավելի մեծ հզորություն և ուժ, քան բարձրյալ ու ամենակարող ալլահինն է»:

Ու այսպես անցկացրի ևս մի կարճ ժամանակ, — շարունակեց Սինդիրազը, — իսկ հետո վեր կացա ու ծովափին ինձ համար մի խոր փոս փորեցի և ինձուհինձ մտածեցի. «Երբ թուլանամ ու զգամ, որ մահս եկել է, կսպռկեմ այս գերեզմանում ու կմեռնեմ, և քամին ավազ կբերի ու կամաց-կամաց կծածկի ինձ, ու ես թաղված կլինեմ գերեզմանում»: Եվ սկսեցի ինքս ինձ հանդիմանել կարճ խելքիս ու այն բանի համար, որ դուրս եմ եկել իմ երկրից ու իմ քաղաքից և հասել օտար երկրներ այն ամենից հետո, ինչ կրել էի առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ ու հինգերորդ անգամ, և չէր եղել մի ճանապարհորդություն, որի ժամանակ և վելի ծանր ու ուժավոր սարսափներ տեսած չլինեի, քան առաջ:

Եվ չէի հավատում ևս, որ կփրկվեմ ու ողջ կմնամ, և զղջում էի, որ ծովով ճանապարհորդելուց հետո նորից նույն բանն էի անում. ախր ես փողի կարիք չունեի և դրանից շատ կար իմ գանձարանում, և այն, ինչ ունեի, կիսով շափ էլ չէի կարողանա ծախսել ու վերջացնել մնացած ամբողջ կյանքիս ընթացքում, ինչքան որ ունեի, հերիք էր ինձ ու դեռ մի բան էլ կմնար:

Եվ ևս ինձուհինձ մտածեցի ու ասացի. «Ալլահ՛նր վկա, այս գետը սկիզբ ու վերջ սլիտի ունենա, և գետափին անպատճառ մի տեղ կլինի, որի միջով կարելի է գնալ ու դուրս գալ մարդաբնակ մի տեղ: Ծիշտ վճիռ կլինի, եթե ինձ համար այնպիսի մի փոքրիկ նավակ չլինեմ, որ կարողանամ նստել դրա մեջ, և կգնամ ես ու այդ նավակը կիջեցնեմ գետն ու նավարկելով առաջ կգնամ, Եվ եթե աղատվելու ճամփա գտնեմ, այն ժամանակ ազատ կլինեմ ու մեծազոր ալլահի կամքով կփրկվեմ, իսկ եթե ազատվելու ճամփա չգտնեմ, ավելի լավ կլինի գետում խեղդվեմ, քան թե այստեղ մեռնեմ»:

Եվ սկսեցի մորմոքվել ու մտածել իմ մասին, իսկ հետո ոտքի ելա ու գնացի փնտրելու և հավաքելու գերաններ ու շինական և կամարյան հավվեի ոստեր, Եվ հավաքեցի դրանք ու ծովափին խորտակված նավերից մնացած պարաններով կապկպեցի իրար: Հետո բերեցի նավերից

մնացած նույն շափի տախտակներ և շարեցի գերանների վրա ու շինեցի
յետի կամ դրանից պակաս լայնության մի նավակ, և պինդ ու լավ
կապկպեցի դրանք:

Ու վերցրի ինձ հետ ազնիվ մետաղներ, թանկագին քարեր, գանձեր
ու քարերի պես այս ու այն կողմ ընկած խոշոր մարգարիտներ ու կղզում
եկած ուրիշ շատ բաներ, ու վերցրի նաև հում համպար, որ մաքուր էր
ու յավը, այգ բոլորը գարսեցի նավակի մեջ ու հենց այնտեղ էլ դրեցի
ամեն բան, ինչ որ հավաքել էի կղզում, ու մեկ էլ վերցրի մնացած ամ-
բողջ ուտելիքը, իսկ հետո նավակն իջեցրի գետը ու երկու կողերին
թիակների նման երկու փայտ դրեցի ու այնպես արեցի, ինչպես ասել
է բանաստեղծներից մեկը.

Լքիր դու այն տեղը, ուր նեղութուն կա.
Եվ տունը, որտեղ երջանկութուն չկա,
Ձէ՞ որ ուրիշ մի հող կգտնես միշտ էլ,
Բայց ուրիշ մի հողի չես գտնի երբեք:
Պատահածն օրվա թող շղառնացնի քեզ,
Ամեն դժբախտության վերջ կգա մի օր.
Ով որ մեռնելու է հենց վայրում այսինչ,
էլ ուրիշ մի հողում մեռնել չի կարող:
Կրաբեր մի հղիր կարևոր գործով.
Հողին ինքն է միջոց իրեն խորհրդատու:

Ու նավակ նստած գնացի գետով, մտածելով թե ուր կհասցնի ինձ
սկսածս գործը, և առանց կանգ առնելու գնացի մինչև լեռան տակի
անցքը, ուր մտնում էր ջուրը: Եվ նավակս մտցրի անցքի մեջ ու մեկ էլ
տեսա, որ լեռան տակ եմ՝ ականակիր խավարի մեջ: Ու տանում էր ինձ
նավակը հոսանքն ի վար, նեղ կիրճի միջով, որտեղ նավակի կողերն
սկսեցին քսվել գետի ափերին, իսկ գլուխս գարնվում էր կիրճի կամար-
ներին, ու այլևս չէի կարող վերադառնալ: Եվ ես սկսեցի վայ տալ գլխիս,
թե ինչո՞ւ այսպիսի բան արեցի, ու մտածեցի. «Եթե այս տեղը նավակի
համար շափից դուրս նեղ դառնա, նավակս հազիվ թե դուրս գա սրա մի-
ջից, իսկ հետ գնալ հնարավոր չէ, ու կասկած չկա, որ ես կկործանվեմ
այստեղ՝ կարտը սրտումս»:

Ու ես պառկեցի նավակի մեջ երեսնիվար, այնքան որ տեղս նեղ էր:
Ու շարունակեցի առաջ շարժվել, լեռան տակ ինձ պարուրած խավարի
պատճառով շտարբերելով՝ գիշեր է, թե ցերեկ, ու մեկ էլ նրա համար,
որ սարսափում էի և կործանվելուց վախենում: Եվ ես շարունակ առաջ
էի գնում գետով, որը մեկ լայնանում էր, մեկ նեղանում, ու խավարն

ինձ շատ ուժասպառ արեց, և սաստիկ դառնությունից քունս տարաւ:

Եվ նավակի մեջ երեսնիւնգ ւրառկած ես քնեցի: Ու նավակն ինձ տանում էր ու տանում: Ես էլ քնած էի ու չգիտեի՝ երկար ժամանակ էր անցել, թե կարճ: Իսկ հետո արթնացա ու շուրջս լույս նկատեցի: Այն-ժամ աչքերս բացեցի ու մի լայնաբերան դաշտ տեսա: Եվ իմ նավակը կապված էր կղզու եզրին, և հնդիկների ու հաբեշների մի բազմություն էր կանգնած շուրջս: Եվ տեսնելով, որ ես վեր կացա, նրանք մոտեցան ու սկսեցին իրենց լեզվով խոսել ինձ հետ. բայց ես չէի հասկանում, թե ինչ էին ասում նրանք, ու կարծում էի, որ այդ բոլորը հրազ է ու ամեն ինչ կատարվում է քնիւ մեջ, այնքան որ մեծ էին իմ թախիծն ու դառնությունը:

Ու երբ այդ մարդիկ խոսեցին ինձ հետ ու տեսան, որ չեմ հասկանում իրենց լեզուն և ոչինչ չեմ պատասխանում, ինձ մոտեցավ մի մարդ ու արարիւրեն ասաց. «Խաղաղությունն քեզ, ո՞վ մեր եղբայր, ո՞վ ես դու, որտեղի՞ց ես եկել ու ի՞նչն է ստիպել քեզ հասնել այստեղ: Որտե՞ղ ես մտել այս շուրք. և ի՞նչ երկիր է ասիլ. հետնում: Մենք գիտենք, որ սարի մյուս կողմից ոչ ոք չի կարող անցնել դալ մեզ մոտ: — «Իսկ ո՞վ եք դուք և ինչ հող է սա», — հարցրի ես: Ու այդ մարդն ինձ ասաց. «Ո՞վ եղբայր իմ, մենք այս ցածրերի ու անտառների տերերն ենք ու եկել էինք ջրելու ցանքերն ու ծառերը, և տեսանք, որ դու քնած ես նավակում, և բռնեցինք նավակն ու կապեցինք մեր ափին, սպասելով, որ դու հանգիստ գաբնեա: Պատմիր տեսնենք՝ թե ի՞նչն է այստեղ գալուդ պատճառը»:

«Ի սեր ալլահի աղաչում եմ քեզ, ո՞վ տեր, — ասացի նրան, — ուտելու մի բան քեզ, իսկ հետո ինչ ուզում ես հարցրու»: Եվ նա շտապ ուտելիք բերեց ինձ համար, ու ես այնքան կերա, մինչև որ կշտացա, հանգստացա ու վախս անցաւ, և շատ կուշտ դարձա ու հողիս անդն ընկա:

Ու ես ասացի. «Փսոք ալլահին, ինչ վիճակում էի լինենք»: Եվ ուրախացա, որ գետից դուրս եմ եկել ու հասել այդ մարդկանց մոտ, և սկզբից մինչև վերջ նրանց սբաամեցի այն ամենը, ինչ պատահել էր ինձ, և այն, թե ինչ փորձություն էի կրել այդ հեղ գետում: Ու հետո այդ մարդիկ խոսեցին իրար հետ ու ասացին. «Մրան անպատճառ մեզ հետ կտանենք ու ցույց կտանք մեր թագաւորին. թող սա պատմի ամեն բան, ինչ պատահել է իրեն»:

Եվ նրանք ինձ վերցրին իրենց հետ ու ասրան, ինձ հետ էլ իմ նավակը, և բոլոր փողերը, գանձերը, թանկագին քարերը, ազնիվ մետաղ-

ներն ու զարդերը, որ նավակի մեջ էին, — ասաց Սինդիբատը, — և տարան իրենց թագավորի մոտ ու պատմեցին նրան, թե ինչեր են պատահել ինձ: Եվ թագավորն ինձ ողջունեց ու ասաց. «Բարո՛վ, հազար բարի եկար»: Եվ նա հարցրեց, թե ինչ դիրքի տեղ մարդ եմ ու ինչ դեպքեր են եղել իմ կյանքում: Եւ ևս պատմեցի նրան ինձ պատահած բոլոր դեպքերի ու այն մասին, թե ինչեր եմ կրել ես, պատմեցի սկզբից մինչև վերջ, ու թագավորն ապշած մնաց պատմածիս վրա և շնորհավորեց սրբաբերուստ առթիվ: Եվ հետո ես գնացի ու նավակիցս հանեցի շատուշատ ոսկի և արծաթ, թանկագին քարեր, հալվե ու հում համպար, ու այդ բոլորը նվիրեցի թագավորին: Եվ նա ընդունեց այդ նվերն ինձանից ու շատ մեծ հարգանք ու պատիվ տվեց ինձ: Նա ինձ տեղավորեց իր պալատում, և ես բարեկամութուն հաստատեցի ամենուրեք մարդկանց հետ, ու նրանք մեծարեցին ինձ բարձր պատվով, ու ես ոչ մի ժամ չէի հեռանում թագավորի պալատից: Եվ ով գալիս էր այդ կղզին, հարցուփորձ էր անում իմ երկրի գործերի վերաբերյալ: Ու ես պատմում էի այդ բոլորի մասին, ու ինքս էլ հարցուփորձ էի անում նրանց երկրի գործերից, ու նրանք էլ պատմում էին: Ու մի օր էլ թագավորը հարցրեց իմ երկրի դրուժյունից ու թե ինչպես է կառավարում խալիֆը այն երկիրը, որտեղ Բաղդադ քաղաքն է: Ու ես պատմեցի խալիֆի արդարության և օրենքների մասին, և թագավորը վարձացավ նրա գործերի վրա և ասաց. «Ալլա՛հը վկա, խալիֆը խելացի գործեր է անում և նրա վարքուբարքը հաճո է ալլահին: Դու ինձ սեր ներշնչեցիր նրա նկատմամբ, ու ես ցանկանում եմ նրա համար մի նվեր պատրաստել և քեզ հետ ուղարկել նրան»: — Լսում եմ ու հնազանդվում, ո՞վ մեր տեր ու տնօրեն: Կտանեմ տվածդ նվերն ու կասեմ, որ դու անկեղծ սիրում ես նրան», — պատասխանեցի ես: Ու հաստատվեցի ես թագավորի պալատում, և միտածամանակ ապրեցի շափազանց մեծ հարգանքի ու պատվի մեջ, և հրաշալի կյանք ունեցա այնտեղ: Մի անգամ էլ նստած էի թագավորի պալատում և լսեցի, որ մարդիկ քաղաքի նավահանգստում պատրաստում և բեռնավորում են մի նավ ու գրանով ուզում են ուղևորվել Բասրա քաղաքը:

«Ինձ համար ոչ մի բան այնքան հարմար չէ, ինչքան այս մարդկանց հետ ճամփա գնալը», — ասացի ինքս ինձ ու հապճեպ, հենց նույն ժամին ու բոսլեին համբուրեցի թագավորի ձեռքն ու տեղեկացրի նրան, որ ցանկանում եմ այն նավով գնալ, որ մարդիկ պատրաստել են, քանի որ կարոտել եմ հարազատներիս ու իմ երկիրը:

«Արա ինչ ուզուի ես,— ասաց թագավորը,— իսկ եթե ուզում ես մնալ մեզ մոտ, թող այդպես լինի, դու մեզ ուրախություն բերեցիր»։— «Տեր իմ,— պատասխանեցի ես,— ալլահը վկա, դու լիացրիր ինձ քո բարեբարությամբ ու լավությամբ, բայց ես կարոտել եմ հարազատներին, ընտանիքին ու իմ երկիրը»։ Ու լսելով իմ խոսքերը, թագավորը կանչեց նավը ճանապարհորդության պատրաստող վաճառականներին ու նրանց հաճնարարեց հոգալ իմ մասին։ Նա ինձ շատ նվերներ ավեց ու իմ փոխարեն էլ վճարեց նավի վարձը, և ինձ հետ մի մեծ նվեր ուղարկեց Բաղդադ բաղաբում նստող խալիֆ Հարուն ալ-Ռաշիդին։ Եվ ապա ես հրաժեշտ սվեցի թագավորին ու բոլոր այն բարեկամներին, ում սունդը գնում գալիս էի, և վաճառականների հետ նավ նստեցի, և մենք մեկնեցինք։

Եվ ճանապարհին քամին լավ էր, ու մենք տպավինում էինք ալլահին (փառք ու մեծարանք նրան) և նավում էինք ծովից ծով, կղզուց կղզի, մինչև որ մեծազոր ալլահի կամքով բարեհաջող հասանք Բասրա քաղաքը։ Եվ իջա ես նավից ու Բասրայի հողում մնացի մի քանի ցերեկ ու գիշեր, մինչև որ ունեցած-չունեցածս հավաքեցի, հակեր արեցի, իսկ հետո հակերս բարձեցի ու ճանապարհվեցի Բաղդադ քաղաքը՝ խաղաղության օթևանը։

Եվ գնացի ու մտա խալիֆ Հարուն ալ-Ռաշիդի մոտ ու մատուցեցի նրան այն թագավորի նվերը և պատմեցի ամբողջ գլխիս եկածը, իսկ հետո բոլոր գանձերը և իրերը դարսեցի ամբարներում ու գնացի իմ թաղը։ Եվ ինձ մոտ եկան իմ հարազատներն ու բարեկամները, ու բոլոր հարազատներինս նվերներ բաշխեցի ու սկսեցի ողորմություն տալ մարդկանց ու ընծաներ բաժանել։

Իսկ որոշ ժամանակ անց խալիֆը մարդ ուղարկեց իմ հետևից ու կանչեց պապատ, և սկսեց հարցուփորձ անել, թե ինչն է այդ նվերն ուղարկելու պատճառը և որտեղից եմ բերել։ Ու ես ասացի. «Ով ուղղահավատների տեր ու տիրակալ, ալլահը վկա ես չգիտեմ ո՛չ քաղաքի անունը, որտեղից ուղարկվել է նվերը, ո՛չ էլ դեպի այդ քաղաքը տանող ճամփան, բայց երբ մեր նավը խորտակվեց, որով ես ճանապարհորդում էի, ես դուրս ելա կղզի ու մի նավակ շինեցի ինձ համար, և գրանցեց նստած իջա կղզու մեջտեղով հոսող գետի հոսանքն ի վար»։

Եվ ես խալիֆին պատմեցի, թե ինչեր են պատահել ինձ այդ ճանապարհորդության ժամանակ ու ինչպես եմ դուրս պրծել գետից ու րկակել քաղաք, և հաղորդեցի նրան, թե ինչեր եզան այնտեղ ու ինչու հետո ես նվեր ուղարկեցի։ Եվ խալիֆն անշափ զարմացավ այդ ամենի վրա

ու պատմիչներին հրամայեց գրի առնել պատմածս ու պետական գանձարան դնել, որպեսզի ամեն մարդ, ով լսի այդ պատմությունը, դաս առնի դրանից:

Իսկ հետո խալիֆն ինձ մեծ հարգանք մատուցեց, և մնացի ես ապրելու Բաղդադ քաղաքում, ինչպես առաջ, և մոռացա այն բոլորը, ինչ պատահել էր ինձ, և այն շարժարանքները, որ կրել էի:

Եվ ապրում էի ես ամենահաճելի կյանքով, ուրախության ու զվարճալիքների մեջ: Սա է այն բոլորը, ինչ եկավ գլխիս վեցերորդ ճանապարհորդության ժամանակ, ո՛վ եղբայրներ: Եթե մեծագոր ալլահը կամենա, վաղը ես ձեզ կպատմեմ յոթերորդ ճանապարհորդության մասին, բոլոր նախորդներից այն ավելի զարմանալի է ու տարօրինակ»:

Եվ ապա Սինդիբազը պատվիրեց սեղաններ զցել: Եվ բոլորն ընթրեցին նրա մոտ, ու նա հրամայեց հարյուր մսխալ ոսկի տալ Սինդիբազ-բեռնակրին, և սա վերցրեց ոսկին ու գնաց իր ճամփով, և բոլոր հավաքվածները նույնպես գնացին, ծայրաստիճան զարմանալով իրենց լսածի վրա: Իսկ Սինդիբազ-բեռնակիրը գիշերն անցկացրեց իր կացարանում ու հետո առավոտվա աղոթքն արեց ու գնաց Սինդիբազ-ծովագնացի տուն, և մյուս հյուրերն էլ եկան, իսկ երբ բոլորը հավաքվեցին, Սինդիբազ-ծովագնացն սկսեց յոթերորդ ճանապարհորդության պատմությունն ու ասաց:

ՅՈՒՅՐՈՐԴ ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Իմացեք, ո՛վ մարգիկ, որ վեցերորդ ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, ես նորից սկսեցի ապրել, ինչպես առաջ էի ապրում՝ խնդության, զվարճության, ուրախ խաղերի ու հաճույքների մեջ: Ու այսպես անցկացրի միառժամանակ, շարունակելով անդադար ուրախանալ ու զվարճանալ գիշեր ու ցերեկ. ախր ինձ մեծ եկամուտ ու հսկայական օգուտ էր բաժին ընկել:

Եվ սիրտս ուզեց օտար երկրներ տեսնել ու ծովով ճամփորդել և բարեկամություն անել վաճառականների հետ ու պատմություններ լսել: Եվ ես վճռեցի անել այդ բանն ու ծովով տանելու հարմար փառահեղ ապրանքներս հակեր արեցի և Բաղդադ քաղաքից Բասրա քաղաքը տարա: Ու այնտեղ տեսա մեկնման պատրաստ մի նավ, որի վրա հարուստ վաճառականների մի ամբոխ կար: Եվ ես նավ նստեցի ու մտերմացա նրանց հետ, ու մենք ճամփա ընկանք ողջ և առողջ ու գոհ, ճանապար-

կավ, և վճռականութիւնս ամրացավ, և կուրծքս ազատվեց կապանք-
ներից:

Եվ ապա ման եկա կղզում, ու դրա հակառակ ծայրին քաղցրահամ
մի լայն վտակ տեսա, բայց վտակի հոսանքը շատ ուժեղ էր: Ու ես հի-
շեցի նավակը, որով դրանից առաջ մի գետով նավել էի, և ինձուինձ
ասացի. «Անսպասան մի այդպիսի նավակ կշինեմ ինձ համար, գուցե,
փրկվեմ այս բանից: Եթե փրկվեմ, նպատակիս հասած կլինեմ ու մեծա-
զոր ալլահի առաջ մեղա կգամ, ու այլևս չեմ ճանապարհորդի, իսկ եթե
կործանվեմ, հոգնած ու շարշարված սիրտս հանգիստ կտանի»: Եվ ապա
վեր կացա ու սկսեցի թանկարժեք սանդալ ծառի ճյուղեր հավաքել, ու
այդ ծառի նմանը դժվար թե գտնվի (իսկ ես շփտեի, թե դա ինչ ծառ
է): Ու երբ ճյուղերը հավաքեցի՝ պրծա, կղզում աճած ոստեր ու երկար
խոտեր պոկեցի, ճարեցի ու, դրանք պարանի նման հյուսելով, ճյուղերն
իրար կապեցի ու նավակ շինեցի և ինձ ու ինձ ասացի. «Եթե ազատվեմ,
ալլահի կամքն է»:

Եվ նստեցի ես նավակն ու գնացի վտակով և հասա կղզու մյուս
ծայրը, իսկ հետո հեռացա ափից ու, թողնելով կղզին, նավեցի առա-
ջին օրը, և երկրորդ օրը և երրորդ օրը: Եվ շարունակ պառկած էի ես ու
ոչինչ չէի ուտում, իսկ երբ ծարավում էի, վտակից էի ջուր խմում. սաս-
տիկ ուժասպառ լինելուց, քաղցից ու վախից հիմարացած ճուտի նման-
վեցի ես: Ու նավակն ինձ հետ միասին մոտեցավ մի բարձր սարի, որի
տակ էր մտնում գետը: Եվ տեսնելով դա, վախեցա, թե նույն բանը կլի-
նի, ինչ որ անցյալ անգամ այն գետում եղավ, և ուզում էի կանգնեց-
նել նավակն ու դուրս գալ լեռան լանջը, բայց ջուրն ինձ հաղթեց ու
նավակը քշեց տարավ, և նավակը մտավ սարի տակ: Ու այդ բանը
տեսնելով, ես համոզվեցի, որ կործանվելու եմ, և բացականշեցի. «Չկա՛
ավելի մեծ զորութիւն և ուժ, քան բարձրյալ և ամենակարող ալլահինն
է»: Իսկ նավակն անցավ մի փոքր տարածութիւն և դուրս եկավ ընդար-
ձակ մի վայր: Մեկ էլ տեսա, որ իմ առջև մի մեծ գետ է, և նրա ջուրը
աղմկում է թնդյունով, ինչպէս որտեղ, և սուրում է քամու պես: Ու ես
պինդ բռնեցի նավակից, վախենալով, որ դուրս կընկնեմ, և ալիքները
տանում-բերում էին ինձ գետի մեջտեղը, աջ ու ձախ շարտելով: Եվ իջ-
նում էր նավակը գետի հոսանքն ի վար, և չէի կարողանում ես կանգ-
նեցնել ու անկարող էի այն ուղղել ցամաքի կողմը: Վերջապես, նա-
վակն ինձ հետ միասին կանգ առավ մի քաղաքի մոտ, որը հսկայական
էր, հիանալի շենքեր ուներ և որտեղ շատ ժողովուրդ կար: Ու երբ մար-
դիկ տեսան, թե ինչպես եմ ես նավակ նստած գետի մեջտեղով հոսանքն

ի վար իջնում, դեպի նավակս մի ցանց նետեցին ու պարաններ, և նավակին ափ հանեցին, և սաստիկ քաղցից, անքնությունից ու վախից մեկի դարձած էս ընկա նրանց առջև:

Եվ հավաքվածներից մեկը՝ մի զառամյալ ծերունի, ընդառաջ եկավ ու ասաց ինձ «Բարո՛վ, եկար»: Եվ նա բազմաթիվ հրաշալի շորեր գցեց ինձ վրա, որոնցով էս ծածկեցի ամոթս, իսկ հետո այդ մարդը վերցրեց ինձ ու տարավ բաղնիք: Նա այնտեղ բերեց մարդուն կայտառացնող եմիչքներ և անուշահոտ օծանելիքներ: Իսկ երբ բաղնիքից դուրս եկանք, սա ինձ տարավ իր տուն ու ներկայացրեց ընտանիքին, ու այդ տան լնակիչներն ինձ տեսնելով, ուրախացան: Ու այդ մարդն ինձ մի սլառավոր տեղ նստեցրեց ու անմահական ուտելիքներ տվեց, և էս այնքան կերա, մինչև որ լիովին կշտացա և փառք տվեցի մեծազոր ալլահին, որ ինձ փրկեց:

Իսկ դրանից հետո տանտիրոջ ծառաներն ինձ համար տաք ջուր բերեցին, ու էս ձեռքերս լվացի, և ստրկուհիները մետաքսե սրբիչներ բերեցին, ու էս շորացրի ձեռքերս ու սրբեցի բերանս, և ապա ծերունին իսկույն ոտքի ելավ ու իր տան մեջ մի առանձին խաղաղ սենյակ հատկացրեց ինձ, և ծառաներին ու ստրկուհիներին պատվիրեց սպասավորել ինձ և կատարել իմ բոլոր ցանկություններն ու կամքը, և ծառաներն սկսեցին նոգ տանել իմ մասին:

Եվ այսպես երեք օր ապրեցի այդ մարդու մոտ՝ հյուրասիրության օթեանում, և լավ կերա ու լավ խմեցի, և շնչում էի էս հրաշալի բուրմունքներ, և հոգիս տեղն ընկավ, ու վախս անցավ, և սիրտս խաղաղվեց, և էս հոգեպես հանգստացա: Իսկ երբ վրա հասավ շորերդ օրը, չեյխը եկավ ինձ մոտ ու ասաց. «Որդի՛ս, շատ ուրախացրիր դու մեզ: Փա՛ռք ալլահին, որ քեզ փրկեց կորստից: Ուզո՞ւմ ես ինձ հետ գնանք գետափ ու մտնենք շուկա: Ինչ կծախես քո ապրանքներն ու փող կվաստակես, և, գուցե, ինչ-որ բաներ առնես ու դրանցով սկսես առևտուր անել»:

Ես մի փոքր լռեցի և ինձուինձ մտածեցի. «Ապրանքն ինձ որտեղի՞ց, ի՞նչ ուզեց ասել այս մարդը»: Իսկ շեյխը շարունակեց. «Ո՛վ որդի, մի՛ ախրիր ու մտածիր դրա մասին: Կգնանք շուկա ու, եթե տեսնենք, որ մեկն ու մեկը քո ապրանքներին ուզածդ գինը տվեց, էս դրանք կվերցնենք քեզ համար, իսկ թե ապրանքները եկամուտ չեն բերի, որով դու գոհ լինես, էս դրանք կդարսեմ իմ պահեստներում, թող մնան, մինչև որ առուծախի օրերը գան»: Եվ էս ծանր ու թեթև արեցի իմ գործի հանգամանքներն ու ասացի ինքս ինձ. «Լսիր սրան, որ տեսնես, թե դա ինչ

ապրանք է», և ապա ասացի. «Լսում եմ ու հնազանդվում, ո՞վ իմ շեշի հորեղբայր: Ինչ որ դու անում ես, օրհնված գործ է, և անհնար է մի քանում հակառակել քեզ»:

Եվ դրանից հետո ես ու նա գնացինք շուկա, ու ես տեսա, որ նա քանդեց նավակս, որով ես եկել էի (իսկ նավակը սանդալ ծառի փայտից էր), և մտրդ ուղարկեց ապրանքն առնող կանչելու: Ու եկան վաճառականներն ու սկսեցին սակարկել, և նավակի գինը բարձրացնում էին, մինչև որ հասցրին հազար դինարի, իսկ հետո վաճառականները դադարեցին գինը բարձրացնել, ու շեշխը դարձավ ինձ և ասաց. «Լսիր ինձ, ով որդի, սա է ապրանքիդ գինը այսպիսի օրերին: Կծախե՞ս ապրանքդ այդ գնով, թե՞ կսպասես, ես դա կդնեմ իմ պահեստներից մեկը, մինչև որ դրա գինն ավելացնելու ժամանակը գա ու մենք կծախենք»:
«Տեր իմ, կամքը քոնն է, ինչ ուզում ես արա», — պատասխանեցի ես, և ծերուկն ասաց. «Որդիս, շե՞ս ծախի այս փայտը հարյուր ոսկե դինարով ավելի, քան տալիս են վաճառականները»: — «Հա՛, — պատասխանեցի ես, — այդքանով կտամ քեզ», և ապրանքիս փողն ստացա: Եվ այդ ժամանակ ծերուկն իր ծառաներին հրամայեց փայտը տեղափոխել իր պահեստը, և ես ու ինքը վերադարձանք նրա տունը: Եվ նստեցինք մենք, ու ծերուկը վճարեց ապրանքիս վարձը և պատվիրեց քսակներ բերել, ու ոսկիները լցրեց զրանց մեջ և դրեց գանձարանն ու երկաթե կողպեքով փակեց և բանալին տվեց ինձ:

Իսկ մի քանի գիշեր ու ցերեկ անցնելուց հետո ծերուկն ինձ ասաց. «Ո՞վ որդիս, ես քեզ մի բան եմ ուզում առաջարկել և ուզում եմ, որ լսես իմ խորհուրդը»: — «Իսկ ի՞նչ գործի մասին է խոսքը», — հարցրի նրան: Եվ շեշխը պատասխանեց. «Իմացիր, որ ես ծերացել եմ և արու զավակ չունեմ. բայց մի ջահել աղջիկ ունեմ՝ ոնց որ պատկեր, ինքն էլ մեծ կարողության ու գեղեցկության տեր է, ու ես ուզում եմ նրան տալ քեզ կնության, որ դու նրա հետ մնաս մեր երկրում. իսկ հետագայում ինչ ունեմ-չունեմ կտամ քեզ, և կտամ այն ամենը, ինչի տերը ձեռքերս են: Չէ՞ որ ես ծերացել եմ, և դու կգրավես իմ տեղը»: Ու ես ձայն չհանեցի և ոչինչ շատացի, իսկ ծերուկն այսպես խոսեց. «Լսիր իմ խորհուրդը, զավակս, լսիր ինչ որ քեզ ասում եմ, ախր ես քո լավն եմ ուզում: Եթե ինձ լսես, ես քեզ կամուսնացնեմ աղջկաս հետ, և դու կդառնաս իմ տղացուն, ու ինչ որ կա իմ ձեռքին, և ինչ որ ինձ է պատկանում, բոնը կլինի, իսկ թե ցանկանաս առևտուր անել ու գնալ քո երկիրը, ոչ ոք քեզ արգելք չի լինի, և ահա քո փողը քո ձեռքի տակ է: Արա, ինչ կուզենաս ու կընտրես»: — «Ալլահը վկա, ո՞վ շեշխ հորեղբայր, դու իմ

հայրացուն դարձար: Եվ ես այնքան սարսափներ եմ տեսել, որ ո՛չ խելք է մնացել գլխումս, ո՛չ կարծիք, — պատասխանեցի ես: — Կամքը քոնն է, ինչպես ուզում ես, այնպես էլ արա»: Ու այդ որ ասացի, շեյխը ծառաներին հրամայեց կանչել դատավորին ու վկաներին, և նրանց կանչեցին-բերեցին, ու ծերունին ինձ ամուսնացրեց իր աղջկա հետ, և մի փառահեղ խնջույք սարքեց ու մեծ հանդես: Եվ ապա նա ինձ տարավ իր աղջկա մոտ, և տեսա ես, որ աղջիկը շտեսնված գեղեցիկ է ու հմայիչ, սլացիկ կազմվածքով, ու նրա վրա բազմաթիվ զարդ ու զարդարանք, շորեր, թանկագին մետաղներ, գլխաշորեր ու քողեր, մանյակներ ու թանկագին քարեր կան, որոնց արժեքը բյուր հազար ոսկի է, և ոչ մի մարդ նրանց գինը տալ չի կարող: Ու երբ մտա աղջկա մոտ, նա իմ սրտին դուր եկավ, ու մեր մեջ սեր առաջացավ: Եվ ապրեցի ես միաժամանակ մեծագույն ուրախության ու զվարճալիքների մեջ:

Ու մի օր էլ աղջկա հայրը ներկայացավ մեծագոր ալլահի ողորմածությանը, և մենք հագցրինք ու թաղեցինք նրան: Ու ես ստացա այն ամենը, ինչ նա ուներ, և նրա բոլոր ծառաները դարձան իմ ծառաները, և մինչև այդ էլ որ ծառայում էին ինձ, դարձան իմ հպատակները, Եվ վաճառականներն ինձ նշանակեցին ծերունու տեղը, իսկ նա նրանց տվազն էր, և նրանցից ոչ մեկը առանց նրա գիտության ու թույլտվության ոչ մի բան ձեռք չէր բերում, քանի որ ծերունին նրանց շեյխն էր: Ու ես մնացի նրա տեղը: Եվ երբ սկսեցի շփվել քաղաքի բնակիչների հետ, տեսա, որ նրանց կերպարանքն ամեն ամիս փոխվում է, ու նրանք թե են առնում, որոնցով թռչում հասնում են երկնքի ամպերին, ու այդ քաղաքում մենակ մնում էին կանայք ու երեխաները: Եվ ես ինքս ինձ ասացի. «Երբ նոր ամսի սկիզբը գա, նրանցից մեկնումեկին կխնդրեմ, և, գուցե, նրանք ինձ էլ տանեն այնտեղ, ուր իրենք են գնում»:

Եվ երբ նոր ամսի սկիզբը եկավ, քաղաքի բնակիչների գույնը փոխվեց, ու նրանց կերպարանքն ուրիշ դարձավ: Եվ ես մոտեցա նրանցից մեկին ու ասացի. «Աղաչո՛ւմ եմ քեզ ի սեր ալլահի, տար ինձ քեզ հետ, ու ես կտեսնեմ, թե ինչ կա այնտեղ և ձեզ հետ միասին հետ կգամ»: — «Դա անհնարին է», — պատասխանեց նա: Բայց ես շղաղարեցի համոզել նրան, և այնքան համոզեցի, մինչև որ նա այդ լավությունն արեց ինձ: Ու հետո հանդիպեցի այդ մարդուն և կախ ընկա նրանից, և նա ինձ հետ միասին թռավ օդով, իսկ ես այդ մասին ոչ մի տեղեկություն չէի տվել սպասավորներին, ծառաներին կամ բարեկամներին:

Եվ ինձ ուսերին առած, այդ մարդը թռավ, թռավ, մինչև որ ինձ հետ հասավ օդի բարձր շերտերին, ու ես երկնքի գմբեթի տակ լսեցի

հրեշտակների փառաբանութիւնը, և զարմացա այդ բանի վրա ու գոչեցի. «Փա՛ռք ալլահին, գովք ու փա՛ռք նրան հավերժ»:

Եվ դեռ շէի ավարտել փառաբանող խոսքս, երբ երկնքից մի կրակ իջավ ու քիչ էր մնում վառեր այդ մարդկանց: Եվ նրանք բոլորն իջան ցած ու ինձ զցեցին մի բարձր սարի վրա, այնքան, որ վրդովված էին իմ արածից: Եվ թողեցին ինձ այնտեղ ու թռան-գնացին: Ու ես մենակ մնացի սարի գագաթին, և սկսեցի վայ տալ գլխիս, թե ինչու այդպիսի բան արեցի, ու բացականչեցի. «Չկա՛ ավելի մեծ զորութիւն և ուժ, քան բարձրյալ և ամենակարող ալլահինն է: Ազատվելով մի փորձանքից, ամեն անգամ ես ընկնում եմ մի ուրիշ, է՛լ ավելի մեծ փորձանքի մեջ»:

Եվ մնացի ես սարի վրա, շիմանալով, թե ուր գնամ: Ու մեկ էլ իմ կողքով անցան լուսնի նման երկու պատանի, և նրանցից ամեն մեկի ձեռքին մի ոսկե ձեռնափայտ կար, որին հենվում էին նրանք: Եվ մոտեցա ես նրանց ու ողջունեցի, և նրանք պատասխանեցին իմ ողջունին, ու այդժամ ասացի. «Ի սեր ալլահի, ասացեք՝ ո՞վ եք դուք և ի՞նչ գործի տեր եք»: Եվ նրանք պատասխանեցին ինձ. «Մենք մեծազոր ալլահի ստրուկներից ենք», և նրանք ինձ տվեցին իրենց մտա եղած կարմիր ոսկուց շինված մի ձեռնափայտ, ու թողնելով ինձ, գնացին իրենց ճամփով: Եվ կանգնած մնացի ես սարի գագաթին, ցուպին հենված, ու մըտքիս մեջ քննում էի այդ պատանիների արարքը:

Մեկ էլ հանկարծ սարի տակից դուրս սողաց մի օձ, որի երախում մինչև պորտը կուլ գնացած մի մարդ կար, ու այդ մարդն աղաղակում էր. «Ով ինձ փրկի, նրան ալլա՛հը կազատի ամեն փորձանքից»:

Ու ես մոտեցա օձին ու իմ ոսկե ցուպով խփեցի գլխին, և նա երախից դուրս զցեց այդ մարդուն: Եվ մարդը մոտեցավ ինձ, — պատմում էր Սինդիբազը, — ու ասաց. «Քանի որ իմ փրկութիւնը օձից քո ձեռքով եղավ, ես էլ չեմ բաժանվի քեզանից, և դու կլինես իմ ընկերը այս սարի վրա»: «Աչքիս վրա», — պատասխանեցի ես նրան, ու մենք առաջ գնացինք լեռան լանջով: Եվ հանկարծ մեզ մոտեցան ինչ-որ մարդիկ, և ես նայեցի նրանց ու տեսա այն մարդուն, որն ինձ օդ բարձրացրեց ուսերին դրած ու թռչում էր ինձ հետ մեկտեղ:

Եվ մոտեցա ես նրան ու սկսեցի արդարանալ նրա առաջ ու համոզել նրան, և ասացի. «Ո՞վ բարեկամ, բարեկամները բարեկամների հետ այդպես չեն վարվում»: Ու այդ մարդը պատասխանեց. «Այդ դու էիր, որ ուսերիս նստած, ալլահին փառաբանելով, կործանեցիր մեզ»: — «Ինձ մի՛ մեղադրիր, — ասացի ես, — այդ բանն ինձ հայտնի չէր, բայց սրանից հետո երբեք բերանս բաց չեմ անի ու չեմ խոսի»:

Ու այդ մարդը համաձայնեց իր հետ վերցնել ինձ, բայց մի պայման դրեց, որ ես նրա մեջքին նստած ժամանակ ալլահի անունը չեմ տա ու չեմ փառաբանի նրան: Եվ նա շալակեց ինձ ու ինձ հետ միասին թռավ, ինչպես առաջին անգամ արեց, ու ինձ հասցրեց իմ տունը: Եվ իմ կինն ընդառաջ ելավ ու ողջունեց ինձ, և շնորհավորեց ազատվելուս առթիվ ու ասաց. «Զգուշացիր, այլևս տեղ չգնաս այդ մարդկանց հետ ու բարեկամություն չանես, դրանք շեյթանների եղբայրներն են, և չգիտեն, թե ինչպես հիշեն մեծազոր ալլահին»:— «Հապա քո հայրն ինչու էր ապրում նրանց հետ»,— հարցրի ես, և կինս ասաց. «Հայրս դրանց թվին չէր պատկանում և այնպես չէր անում, ինչպես դրանք, և, իմ կարծիքով, քանի որ հայրս մեռավ, ինչ ունենք-չունենք ծախիր, այդ փողով ապրանք առ ու հետո ճամփա ընկիր քո երկիրը, հարազատներիդ մոտ, ես էլ կգամ քեզ հետ, հորս ու մորս մահից հետո էլ ինչ ունեմ այս քաղաքում մնալու»:

Ու ես սկսեցի շեյխի ունեցած ապրանքը ծախծխել, ծախեցի մեկը մյուսի հետևից, սպասելով մինչև որ մեկնումեկը մեկնի քաղաքից ու ես գնամ նրա հետ: Ու այդ ժամանակ մի քանի մարդ ուղեցին հեռանալ քաղաքից, բայց նավ չէին ճարում:

Եվ նրանք գերաններ գնեցին ու մի մեծ նավ շինեցին իրենց համար: Եվ ես այդ նավը նրանց հետ մեկտեղ վարձեցի ու փողը լրիվ տվեցի, իսկ հետո նավ նստեցրի կնոջս, և ինչ ունեինք-չունեինք դարսեցի նավի առբարներում, ու մենք թողեցինք մեր կայքն ու կալվածքը և քաղաքից հեռացանք:

Եվ գնացինք մենք ծովով, անցնելով մի կղզուց մյուս կղզին, մի ծովից մյուսը, և ամբողջ ճանապարհորդության ժամանակ շատ բարենպաստ քամի էր փչում: Ու նավեցինք մենք, մինչև որ հաջողությամբ հասանք Բասրա քաղաքը: Բայց ես չմնացի այնտեղ, մի ուրիշ նավ վարձեցի ու ինչ որ վերցրել էի հետս, տեղափոխեցի այնտեղ ու ճամփա ընկա Բաղդադ քաղաքը: Եվ ես տեղ հասա ու գնացի իմ թաղը, և մտա տունս, ու հանդիպեցի հարազատներիս, բարեկամներիս և իմ սիրելի մարդկանց: Ունեցածս բոլոր ապրանքները ես տեղավորեցի պահեստներում, ու իմ հարազատները հաշվեցին, թե ինչքան ժամանակ եմ բացակայել ճանապարհորդության ընթացքում, և դուրս եկավ, որ անցել է քսանյոթ տարի, այնպես որ նրանք էլ հույս չէին ունեցել, թե ես կվերադառնամ: Իսկ երբ վերադարձա ու պատմեցի իմ բոլոր գործերի ու ինձ պատահած դեպքերի մասին, ամենքն էլ շատ զարմացան ու շնորհավորեցին փրկվելուս առթիվ: Եվ հրդվեցի ես մեծազոր ալլահի պատկերի

ասաջ, որ յոթերորդ ճանապարհորդութիւնից հետո էլ չեմ ճանապարհորդի ո՛չ ցամաքով, ո՛չ էլ ծովով, յոթերորդ ճանապարհորդութիւնը վերջ դրեց ճանապարհորդութիւններիս, ու ստոեցրեց իմ այգ կիրթը: Եվ ես շնորհակալ եղա ալլահից (փա՛ռք ու մեծարանք նրան), և փառաբանեցի նբան ու գովաբանեցի, որ վերադարձրեց ինձ իմ հարազատների մոտ՝ իմ երկիրն ու հայրենիքիս գիրկը: Դե, իմացիք, ո՛վ Սինդիբազ, ո՛վ ցամաքային մարդ, թե ինչե՛ր եկան գլխիս ու ինչե՛ր բաժին ընկան ինձ և ի՛նչ գործեր եմ արել ես»:

Եվ Սինդիբազ-ցամաքայինը Սինդիբազ-ծովագնացին ասաց. «Ի սեր ալլահի աղաչում եմ քեզ, մի՛ մեղագրիր ինձ այն խոսքերի համար, որ ասացի քեզ»: Եվ ապրեցին նրանք մտերմութեան ու սիրո և մեծ ուրախութեան, գվարճութիւնների ու հաճույքների մեջ, մինչև որ նրանց մոտ եկավ հաճույքներ ավերողն ու միութիւնների բաժանողը, որն ավերում է պալատներն ու բնակեցնում շիրիմները, այսինքն մահը: Թող, ուրեմն, փառավորվի նա, ով չի մեռնում:



Պարտա
խոստանալի
ապարհոյի
կի Գեղարկ
Հեղարտե



Ո՛վ երջանիկ թագավոր, պատմում են նաև, որ Հարուն ալ-Ռաշիդի խալիֆայության օրոք կար մի մարդ, անունը Ահմեդ ադ-Դանաֆ, և մի ուրիշ մարդ էլ՝ անունը Հասան Շուման: Եվ նրանք դավեր ու խորամանկություններ սարքողներ էին ու ապշեցուցիչ գործեր էին կատարում, և դրա համար էլ խալիֆն Ահմեդ ադ-Դանաֆին պատվավոր զգեստ էր նվիրել ու նշանակել աջակողմյան պետ, և Հասան Շումանին պատվափոր զգեստ էր նվիրել ու նշանակել նրան ձախակողմյան պետ, և նրանցից յուրաքանչյուրին ոռճիկ էր սահմանել՝ ամեն ամիս հազար դինար: Եվ նրանցից ամեն մեկի ձեռքի տակ քառասուն մարդ կար: Եվ Ահմեդ ադ-Դանաֆին կարգադրված էր հսկել ցամաքը:

Եվ Ահմեդ ադ-Դանաֆն ու Հասան Շումանը և նրանց ենթակա մարդիկ մի անգամ ձի հեծան ու քաղաք դուրս եկան, և էմիր խալիֆային էլ էր նրանց հետ, և մունետիկը բարձրաձայն հայտարարում էր. «խալիֆի հրամանի համաձայն, չկա Բաղդադում ուրիշ աջակողմյան պետ, Ահմեդ ադ-Դանաֆ պետից բացի, և չկա Բաղդադում ուրիշ ձախակողմյան պետ, Հասան Շուման պետից բացի, և նրանց խոսքն ամեն ոք պետք է լսի ու կատարի, և նրանց հարգանք ու պատիվ տալը պարտադիր է»:

Իսկ քաղաքում կար Դալիլա-Խորամանկ անունով մի պառավ, և նա ուներ մի աղջիկ, որի անունը Զեյնաբ-խաբեբա էր: Եվ սրանք լսեցին մունետիկի կանչը, ու Զեյնաբն ասաց իր մորը՝ Դալիլային. «Տես, մերի՛կ, մի տե՛ս, էդ Ահմեդ ադ-Դանաֆին Կահիրեից վոնդեցին, փախավ եկավ էստեղ, ու Բաղդադում էնքան օջիններ սարքեց, որ մոտիկացավ խալիֆն ու աջակողմյան պետ դարձավ: Իսկ էն քոսոտ տղան՝ Հասան Շումանը, ձախակողմյան պետ դարձավ. և ամեն արավոտ ու իրիկուն նրա տանը սեղան են գցում, և նրանց երկուսին էլ ոռճիկ են նշա-

նակել՝ ամեն մեկին ամիսը հազար դինար, իսկ մենք էստեղ անգործ նստել ենք ու մեզ ո՛չ պատիվ տվող կա, ո՛չ հարգանք. մի մարդ էլ շունենք, որ մեզ համար խնդիրք անի մեծամեծներին»:

Իսկ Դալիլայի ամուսինն առաջ պետ էր եղել Բաղդադում, և խալիֆը նրան ոռճիկ էր նշանակել՝ ամեն ամիս հազար դինար. և այդ մարդը մեռավ ու երկու աղջիկ թողեց, մեկը մարդու գնացած, որ Ահմեդ ալ-Լաքիս անունով մի տղա ուներ, և մեկը շամուսնացած, անունը՝ Զեյնաբ-խաբեբա: Եվ Դալիլան կարողանում էր խորամանկություններ անել, խաբել և խարդախել, և մի հնարքով կարողանում էր ահագին օձին բնից հանել, և Իրիսը՝ նրանից խորամանկություն էր սովորում: Նրա հայրը խալիֆի մոտ աշտարակի ծառայող էր, և նրան ամսական հազար դինար ոռճիկ էր հասնում: Նա փոստային աղավախներ էր վարժեցնում, որոնք նամակներ և ուղերձներ են տանում ու բերում. և ամեն մի թռչունը, պետք եղած ժամանակ, խալիֆի համար ափելի թանկ էր, քան իր որդիներից մեկն ու մեկը:

Ու Զեյնաբն ասաց մորը. «Գնա խորամանկություն ու խարդախություն արա, միգուցե դրա շնորհիվ մեր անունն ու փառքը տարածվի Բաղդադում ու մեզ հորս ոռճիկը տան»:— «Կյանքովդ եմ երդվում, աղջի՛կս,— ասաց Դալիլան,— որ Բաղդադում ես էն տեսակ օյիներ սարքեմ, որ մտացնել տամ Ահմեդ ազ-Դանսիֆի ու Հասան Շումանի խաղերը»:

Ու վեր կացավ նա և գլխաշորը քաշեց երեսին, ֆաթիրների և սուֆինների² ղզեստ հագավ, և մինչև կրունկները հասնող շոր հագավ ու բրդե մի խալաթ և լայն գոտի կապեց մեջքին: Հետո մի կուժ վերցրեց, մինչև բուկը ջուր լցրեց և դրա բերանին երեք դինար դնելով, անցքը արմավենու կեղևի մի կտորով ծածկեց: Իսկ վզին մի կապ փայտի շափ տերողորմյա կապեց, և կարմիր ու դեղին լաթերը վրան մի փայտ առավ ձեռքն ու դուրս եկավ տնից, կանչելով. «Ալլա՛հ, ալլա՛հ», և նրա լեզուն փառաբանություն էր կարգում, իսկ սիրտն արշավում էր գարշելիության մրցարանում:

Եվ նա սկսեց դեսուդեն նայել, թե ինչ օյին խաղա քաղաքում, նա նրբանցքից նրբանցք գնաց, մինչև որ հասավ մի սալարկած, մաքուր ափլած ու ջրցողած նրբանցք:

1 Իլլա — դե, սատանա:

2 Սուֆիններ («սուֆ» — բուրդ) — մուսուլման միստիկներ, որոնք հագնում էին սպիտակ բրդյա ղզեստ:

Ու նա մարմարե շեմքով կամարակապ մի դարպաս տեսավ և այդ տեղ կանգնած մահրիբեցի դռնապանին, և այդ տունը խալիֆը շաուշների¹ պետի տունն էր, և տանտերը դաշտեր ու գյուղեր ուներ և մեծ ոռճիկ էր ստանում: Եվ նրա անունն էմիր Հասան Շարաթ-Քարիբ² էր, և այդպես էին կոչել նրան, որովհետև նրա հարվածը խոսքից առաջ էր լինում:

Եվ էմիրը ամուսնացած էր մի գեղեցիկ կնոջ հետ ու սիրում էր նրան, և այն գիշերը, երբ էմիրն առաջին անգամ մտավ կնոջ մոտ, կինը նրանից երզում առավ, որ մարզն իրենից բացի ոչ մեկի հետ չի ամուսնանա և ոչ մի օր տնից դուրս չի գիշերի: Եվ օրերից մի օր ամուսինը զնաց դիվան ու տեսավ, որ ամեն մի էմիր իր հետ մեկ կամ երկու որդի է բերել: Իսկ երբ մի անգամ բաղնիք գնաց ու հայելու մեջ նայեց, տեսավ, որ մորուքի սպիտակ մազերն ավելի շատացել են ու ծածկել սևերին, և նա ինքն իրեն ասաց. «Մի՞թե քո հորն այն աշխարհ տանողը մի որդի չի տալու քեզ»:

Եվ ապա նա զայրացած մտավ կնոջ սենյակը: Եվ կինն ասաց նրան. «Բարի իրիկուն»: Եվ էմիրը թղավեց. «Հեռո՛ւ կորիր ինձանից, Այն օրից ի վեր, ինչ քեզ տեսել եմ, մի բարի բանի չեմ հանդիպել»:— «Իսկ ինչո՞ւ»,— հարցրեց կինը: Եվ էմիրն ասաց. «Այն գիշերը, երբ մտա քո ծոցը, դու երզում առար ինձանից, որ քեզանից բացի ուրիշ ոչ ոքի հետ չամուսնանամ, իսկ այսօր ես տեսա, որ ամեն մի էմիր մի տղա ունի, էմիր էլ կա, որ երկուսին էր բերել հետը, ու ես հիշեցի, որ աշխարհի երեսին մեռնել կա, և որ ալլահն ինձ ո՛չ տղա է տվել, ո՛չ աղջիկ, իսկ ով տղա չունի, հիշատակ էլ չունի: Ա՛յ թե ինչն է իմ բարկության պատճառը: Գու անպտուղ ես ու ինձանից չես հղիանում»:— «Ալլա՛հը վկա,— բացականչեց կինը,— բուրդ ու դեղաբույս ծեծելով բուրբ հավանգները ջարդեցի, չի՛ լինի, ու մեղք չունեմ ես: Երեխա որ չի լինում, քեզանից է. դու տափակքիթ ջորի ես, ու քո սերմը ջրիկ է, չի հղիացնում ու երեխա չի տա քեզ»:— «Ճամփորդությունից որ վերադառնամ, ուրիշ կին կառնեմ»,— ասաց էմիրը, և նրա կինը պատասխանեց. «Իմ բախտն էլ ալլահի ձեռքում է»: Եվ էմիրը դուրս գնաց կնոջ սենյակից, ու երկուսն էլ զղջացին, որ անպատվեցին իրար:

Ու երբ էմիրի կինը, որը նման էր գանձարանից դուրս եկած հարսնացուի, այնքան որ արդուզարգ կար վրան, լուսամուտից դուրս նայեց,

¹ Չաուշ — պահազեն, թիկնապահ:

² Շարաթ-Քարիբ — թարգմանաբար էմիրի անունը նշանակում է ճամփի շարիք:

Դալիւան հանկարծ կանգ առավ ու տեսավ այդ կնոջը, և նկատեց նրա վրայի զարդերն ու թանկարժեք շորերը և ինքն իրեն ասաց. «Ա՛յ Դալիւա, չկա ավելի մեծ ճարպկութիւն, քան էս կնկան ամուսնու տնից փախցնելը և շորերն ու զարդերը վրայից հանելն ու տանելը, իրեն էլ տկլոր թողնելը»:

Եվ նա կանգնեց ու պալատի լուսամուտի տակ սկսեց ալլահի անունը տալ, ասելով. «Ալլահ, ալլահ»: Եվ էմիրի կինը տեսավ պառավին, որը սպիտակ շոր էր հագել ու նման էր լուսավոր մի գմբեթի և սուֆիի կերպարանք ունէր, ու նա ասում էր. «Ինձ մոտ եկեք, ո՛վ ալլահի բարեկամներ»: Եվ այդ փողոցում բնակվող կանայք գլուխները պատուհաններից դուրս հանեցին ու սկսեցին խոսել. «Այ քեզ ալլահի պաշտպանութիւնը վայելող մեկը: Այս պառավի դեմքից լույս է կաթում»: Ու հաթունը՝ էմիր Հասանի կինը, լաց եղավ և իր ստրկուհուն ասաց. «Քնացած, դոնապանի՛ շեյխ Աբու Ալիի ձեռքը համբուրիր ու սաս. «Ներս թող այդ պառավին, որ նրա միջոցով մենք մի բարեբախտութեան հասնենք»:

Եվ ստրկուհին ցած իջավ ու համբուրեց դոնապանի ձեռքն ու ասաց. «Տիրուհիս ասում է քեզ՝ թող ներս գա այս պառավը և թող գա տիրուհուս մոտ, որ նա սրա միջոցով մի բարեբախտութեան հասնի, միզուցե պառավի տված բարի օրհնանքը բոլորիս վրա էլ լինի»:

Եվ դոնապանը գնաց Դալիւայի մոտ և ուզում էր համբուրել նրա ձեռքը, բայց պառավը ձեռքը հետ քաշեց ու ասաց. «Հեռո՛ւ ինձանից, թե չէ սուրբ լվացումս կարասավորես: Դու էլ ես սուֆի և ձգտում ես դեպի ալլահը, ալլահի բարեկամները լավ են սեսնում քեզ: Ալլահս ազատել է քեզ այդ ծեսից, ով Աբու Ալի»:

Իսկ դոնապանը էմիրից երեք ամսվա ոտճիկ ունէր ստանալու, և նա ճնշվում էր ու չգիտեր, թե փողն ինչպես պոկի էմիրից: «Ո՛վ մայրիկ, ծարավս հագեցրու քո կժի ջրով, սրպեսզի քո սուրբ ձեռքով ինձ բարեբախտութիւն գա»,— ասաց նա Դալիւային: Ու պառավն ուսից իջեցրեց կուժը և օգում թափահարեց ու ձեռքով այնպես ցնցեց, որ արմավենու կեղեր կժի բերանից թռավ ու երեք դինարներն ընկան գետին, և դոնապանը տեսավ դրանք ու վերցրեց: «Այս էլ ալլահի տվածը,— բացականչեց նա:— Կա-չկա, այս պառավը գանձ ունեցող սրբերից է: Իմացել է իմ հալն ու հասկացել, որ ծախսելու փող չունեմ, կարիքի մեջ եմ, և օգից կարողացավ ինձ համար երեք դինար պոկել»: Եվ Աբու Ալին դինարներն առավ ձեռքն ու Դալիւային ասաց. «Կժիդ միջից երեք դինար ընկավ գետին, հորաքույր, վերցրու»: Եվ պառավը գոչեց. «Կորցրու աչքիցս, ես էն մարդկանցից եմ, սվքեր աշխարհիկ գործերով երբեք

չեն գրադվում: Վերցրու գրանք ու ծախսիր քեզ համար՝ էմիրից հասունելիք վարձի փոխարեն»:— «Ա՛յ, արևհի օգնություն որ ասում եմ, սա է, և դա նրա հայտնություններից մեկն է»,— բացականչեց դոնապանը: Եվ ստրկուհին համբուրեց պառավի ձեռքն ու առաջնորդեց վերև՝ իր տիրուհու մոտ:

Եվ Դալիլան մտավ ներս ու տեսավ, որ ստրկուհու տիրուհին մի գանձ է, որի վրայից թալիսմանները վերցրած են, իսկ խաթունը ողջունեց նրան ու ձեռքը համբուրեց: «Աղջի՛կս»,— ասաց պառավը,— ես քեզ մոտ եկել եմ միայն խորհուրդ տալու: Եվ խաթունը ուտելիք տվեց նրան, ու Դալիլան ասաց. «Աղջի՛կս, ես միայն գրախտի ուտելիքներ եմ ճաշակում, ու միշտ պաս եմ պահում, Պասը խախտում եմ տարեկան սոսկ հինգ օր: Բայց տեսնում եմ, աղջի՛կս, որ դու դառնացած ես, և ուզում եմ, որ ասես դառնության պատճառը»:— «Ո՛վ մայրիկ,— պատասխանեց խաթունը,— առաջին գիշերը, երբ իմ մարդը մոտս եկավ, ես նրանից խոսք առա, որ չի ամուսնանա ուրիշ կնոջ հետ, ու մի օր էլ նա տեսել էր էմիրների երեխաներին ու սիրտն ուզել էր, որ ինքն էլ դավակներ ունենա, ու նա եկավ և ինձ ասաց. «Դու անպտուղ ես»: Ես էլ ասացի. «Դու ջորի ես, իսկ ջորուց չեն հղիանում»: Եվ նա բարկացած ասաց. «Ճամփորդությունից երբ վերադառնամ, ուրիշ կին կառնեմ»,— ասաց ու տնից հեռացավ: Ես էլ վախենում եմ, մայրիկ, որ նա ինձանից բաժանվի և ուրիշ կին առնի: Իմ մարդը շատ գյուղեր ու հողեր ունի և ահագին ոռճիկ է ստանում, ու թե ուրիշ կնոջից երեխաներ ունենա, իմ փոխարեն նրա փողի ու գյուղերի տերը նրանք կդառնան»:

«Աղջիկս,— ասաց Դալիլան,— միթե դու իմ շեյխ Աբու-լ-Համալաթի՞ մասին ոչինչ չգիտես: Ով պարտքեր ունի և գնում է նրա մոտ, արևհի բախշում է պարտքը, իսկ եթե անպտուղ կինը նրան այցելության գնա, կհղիանա»:— «Ա՛յ, մայրիկ,— ասաց խաթունը,— այն օրից, երբ իմ մարդն առաջին անգամ մտել է ծոցս, ոչ մեկի տուն չեմ գնացել՝ ո՛չ մխիթարելու, ո՛չ էլ աչքարուսանքի»:— «Աղջիկս,— ասաց պառավը,— ես հետս կտանեմ քեզ ու կհասցնեմ Աբու-լ-Համալաթի տունը: Հոգսդ դիր նրա վրա, և ուխտ արա շեյխի մոտ, գուցե մարդդ ճամփորդությունից գա, մոտենա քեզ, և դու նրանից հղիանաս ու աղջիկ կամ տղա բերես: Ու ինչ զավակ էլ բերես՝ տղա թե աղջիկ, շեյխ Աբու-լ-Համալաթի դերվիշը թող դառնա»:

Աբու-լ-Համալաթ — «Բեռների հովանավոր», այսինքն հղի կանանց հովանավոր:

Եվ էմիրի կինը վեր կացավ ու վրան պցեց ունեցած բոլոր զարդերը և հագավ հագուստներից ամենաշքեղն ու ասաց ատրկուհին. «Տանը լավ կնայես»: Եվ ատրկուհին պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում, տիրուհի»:

Եվ ապա խաթունն իջավ ցած, և նրան դիմավորեց դոնապանը՝ շեյխ Աբու Ալին, ու հարցրեց. «Մ'ը ես գնում, տիրուհի»: Եվ խաթունը պատասխանեց նրան. «Ես գնում եմ շեյխ Աբու-լ-Համալաթի մոտ»:— «Ամբողջ տարի պարտադիր պաս պիտի պահեմ,— բացականչեց դոնապանը:— Իսկապես որ այդ պառավը սրբերից է, և նա սրբությամբ լի է: Նա գանձերի տեր է և սուրբ է, տիրուհի, քանի որ ինձ երեք զինար զուտ ոսկի տվեց, և առանց իմ հարցնելու ամեն ինչ գուշակեց, թե 'ես ով եմ ու իմացավ, որ կարիքի մեջ եմ»:

Ու պառավը գուրս եկավ տնից, և խաթունը՝ էմիր Հասան Շարաթարիքի կինն էլ նրա հետ միասին: Եվ Գալիլա-խորամանկն այդ կնոջն ասաց. «Ալլահը եթե կամենա, աղջիկս, երբ դու գնաս Աբու-Համալաթի տունը, սրտիդ վերքը կբուժվի, և մեծագոր ալլահի կամեցողությամբ կհղիանաս, ու այդ շեյխի օրհնությամբ քեզ կսիրի ամուսինդ՝ էմիր Հասանը, ու սրանից հետո քեզ չի ստիպի այնպիսի խոսքեր լսել, որոնք վիրավորում են քո սիրտը»:— «Ես կգնամ այդ շեյխի մոտ, մայրիկ»,— ասաց խաթունը. իսկ պառավը մտածում էր. «Որտեղ տկտրացնեմ պրան ու շորերը վերցնեմ, երբ մարդիկ անցուղարձ են անում»:

«Աղջիկս,— ասաց պառավը էմիրի կնոջը,— որ գալիս ես, հետևիցս արի, բայց շատ մի հեռանա, որ ինձ տեսնես. ախր, մերդ շատ բեռ ունի վրան, և ով բեռ ունի, ինձ վրա է դրում, ով քնժա ունի, ինձ է տալիս ու ձեռքս համբուրում»:

Եվ խաթունը քայլեց Գալիլայի հետևից՝ նրանից բավական հեռու, իսկ պառավը գնում էր առջևից, մինչև որ նրանք հասան վաճառականների շուկա, և զննում էին ապտրանջանները, և զննում էին դրամները:

Եվ Գալիլան աչցավ մի վաճառականի որդու խանութի մոտով, որի անունը Սիդի Հասան էր (իսկ նա շատ գեղեցիկ էր, ու երեսին բեզ ու մորուք դեռ չկար): Եվ այդ տղան տեսավ անցնող կնոջն ու աչքի տակով սկսեց նայել նրա հետևից, ու երբ պառավը նկատեց այդ, խաթունին աչքով արեց ու ասաց. «Մի քիչ նստիր խանութի մոտ, մինչև ես գամ»:

Եվ ջահել կինը կատարեց նրա հրամանն ու նստեց վաճառականի որդու խանութի առաջ, ու վաճառականի սրդին նայեց նրան, և հոգու խորքում հազար անգամ ախ քաշեց, իսկ պառավը մտեցավ նրան, ողջունեց ու հարցրեց. «Սիդի Հասան չէ՞ անունդ, վաճառական Մուխսինի

տղան շե՞ս»։ Աւ երիտասարդը պատասխանեց. «Այո... Ո՞վ հասցրեց քեզ իմ անունը»։ «Կա՛վ մարդիկ ցույց տվեցին քո տեղը, — պատասխանեց պառավը» — Իմացիր, որ էս աղջիկն իմ դուստրն է։ Սրա հայրը վաճառական էր, և նա մեռավ ու սրան մեծ կարողութիւն թողեց, սա էլ արգեն հասած աղջիկ է դարձել, իսկ խելքը գլխին մարդիկ ասացին. «Մարդու տուք աղջկադ, բայց տղայիդ շտաս»։ Աղջիկս էլ կլանքում ոտը տնից գուրս շի դրել մինչև այսօր։ Ե՛վ մի խորհուրդ հասավ ինձ ու սրտիս մի ձայն ասաց, որ աղջկաս քեզ տամ կնության, իսկ եթե դու չքավար ես, ես քեզ մի մեծ գումար կտամ և այս խանութի փոխարեն երկու խանութ բաց կանեմ քեզ համար»։

Ե՛վ վաճառականի որդին մտքի մեջ ասաց. «Ես ալլահից հարսնացու էի խնդրում», և նա ինձ երեք բան տվեց՝ լիքը քսակ, կին ու լավ շորեր»։

«Ո՞վ մայրիկ, — ասաց տղան, — շատ հրաշալի խորհուրդ ես տալիս։ Մայրս արդեն վաղուց է ասում. «Ուզում եմ քեզ ամուսնացնել», ես էլ համաձայնում եմ ու ասում. «Մինչև աղջկան աչքովս շտեսնեմ, չեմ ամուսնանա»։ — «Վեր կաց ու եկ իմ հետևից, ես նրան տկոր ցույց կտամ քեզ», — ասաց Դալիլան։ Աւ երիտասարդը, հազար դինար վերցնելով, պէաց պառավի հետ ու ինքն իրեն ասաց. «Միգուցե բան-ման առնելու կարիք լինի, և մենք դա կառնենք ու պայման կապելու փողն էլ կտանք»։

«Գնու նրա հետևից, բայց շմոտենաս, հա՛, էնքան որ աչքիդ առաջից չփակաչի», — ասաց պառավը Սիդի Հասանին, իսկ ինքն իրեն մտածեց. «Վաճառականի որդուն ո՞ւր պիտի տանես, որ դրան էլ տկորացնես», էն կնկան էլ»։ Աւ պառավն առաջ ընկավ (իսկ խաթունը հետևեց նրան, վաճառականի որդին էլ՝ խաթունին), և Դալիլան մոտեցավ ներկարարի կրպակին, որտեղ մի վարպետ կար, անունը՝ Հաջ Մուհամմեդ. և սա նվիկ ծախողի դանակի նման էր, որը տղամարդունն էլ կտրեց, կնոջն էլ, և սիբում էք թուզ և նուռ ուտել։

Ե՛վ այս մարդը ոտքի ապարանջանների զնգզնգոց լսեց ու վեր նայեց և մի երիտասարդ ու մի աղջիկ տեսավ ու հանկարծ պառավը նրատեց նրա կողքին, ողջունեց նրան և հարցրեց. «Դո՞ւ ես ներկարար Հաջ Մուհամմեդը»։ «Հա, ես եմ Հաջ Մուհամմեդը, ի՞նչ պահանջ ունես», — պատասխանեց ներկարարը։ Ե՛վ Դալիլան ասաց. «Քո տեղը լավ մարդիկ ցույց տվեցին ինձ։ Մի տես էն սիրուն աղջկան, իմ աղջիկն է, իսկ էն

Մուսուլմանները մի սովորութիւն ունեն. փեսացուն հարսնացուի դեմքը կարող էր տեսնել միայն հարսանիքի օրը։

անբեղ-անմորուք սիրուն շահելն իմ որդին է, ու ես նրանց մեծացրել եմ, մարդ դարձրել և ահագին փող եմ ծախսել նրանց վրա, Իմացիր, որ ես մի մեծ ու խախուտ տուն ունեմ: Գերաններ եմ դեմ տվել պատին, որ փուլ չգա, բայց շինողը մի օր ասաց. «Գնա ուրիշ տեղ ապրիր: Վայ թե տունը գլխիդ փուլ գա, եթե շնորոգես, երբ կնորոգես, հետ արի ու էլի մեջը ապրի»: Ու հիմա դուրս եմ եկել և մի տուն եմ փնտրում, ու բարի մարդիկ էլ ուղարկեցին քեզ մոտ. ես էլ աղջկաս ու տղայիս ուզում եմ քո տանը բնակեցնել»:— «Լոշի մեջ փաթաթած կարագն է եկել առաջդ, էլ ի՞նչ ես ուզում»,— ինքն իրեն մտածեց ներկարարն ու պառավին ասաց. «Ճիշտ է, ես տուն ունեմ, թե՛ հյուրանոց, թե՛ սենյակ, բայց առանց այդ սենյակներից որևէ մեկի յուր գնալ չեմ կարող, որովհետև հյուրեր են գալիս, ֆելլահներ են գալիս և ինդիգո ներկ են բերում»: «Ո՛վ որդի,— ասաց Դալիլան,— մեղ ամենաշատը, մեկ կամ երկու ամիս է պետք, մինչև որ նորոգենք մեր տունը: Մենք որիշ երկրից եկած մարդիկ ենք: Հյուրասենյակն ինձ ու քեզ համար մի ընդհանուր տեղ դարձրու: Ա՛յ որդի, կյանքդ վկա, ճիշտ եմ ասում, թե պահանջես որ քո հյուրերը մեր հյուրերն էլ լինեն, մեր գլխի վրա տեղ ունեն, մենք նրանց հետ համ կուտենք, համ էլ կքնենք»:

Ու ներկարարը Դալիլային տվեց իր տան բանալիները. մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր, ու մեկ էլ մի ծուռ բանալի, և ասաց. «Մեծը տան բանալին է, ծուռը՝ հյուրասենյակինը, ու փոքրը՝ սենյակինը»: Եվ Դալիլան բանալիները վերցրեց ու գնաց, խաթունն էլ գնաց նրա հետևից, իսկ խաթունի հետևից վաճառականի որդին էր գնում: Եվ Դալիլան գնաց մի նրբանցք ու մի դարպաս տեսավ և բացեց ու ներս մտավ, և այն կինն էլ ներս մտավ, և Դալիլան նրան ասաց. «Աղջիկս, սա շեյխ Աբու-լ-Համալաթի տունն է (և նա ցույց տվեց հյուրասենյակը): Բարձրացիր սենյակ ու իզարըդ արձակիր, իսկ ես հետո կգամ քեզ մոտ»:

Եվ խաթունը բարձրացավ, մտավ սենյակ ու նստեց: Այդ ժամանակ եկավ վաճառականի որդին, և պառավը նրան դիմավորեց ու ասաց. «Մի քիչ նստիր հյուրասենյակում, իսկ ես աղջկաս կբերեմ քեզ մոտ, որ տեսես»: Եվ պատանին մտավ հյուրասենյակ ու նստեց, իսկ պառավը գնաց էմիրի կնոջ մոտ, և սա ասաց պառավին. «Քանի դեռ մարդ չի եկել, ուզում եմ այցելել Աբու-լ-Համալաթին»:— «Աղջիկս, մենք վախենում ենք քեզ համար»,— ասաց պառավը: «Ինչո՞ւ եք վախենում»,— հարցրեց կինը: Եվ պառավն ասաց. «Որդիս էստեղ է, ցնդածի մեկն է, ձմեռ-ամառ չի ջոկում, ու միշտ տկլոր է: Նա շեյխի օգնականն է, ու եթե նրա մոտ քեզ պես աղջիկ է մտնում, որ շեյխին տեսնի, որդիս

ձեռքը գցում է նրա ականջողերին ու պատում է ականջը ու պատա-
նոտում է նրա մետաքսե շորերը: Լավ կլինի՝ թանկագին զարգերդ ու
շորերդ հանես տաս ինձ՝ պահեմ, մինչև որ դու շեյխի մոտ գնաս գաս,
գնացիր եկար, էլի կտամ քեզ»:

Եվ հաթունը շորերն ու զարդերը հանեց ու տվեց պառավին, իսկ
պառավն ասաց. «Շորերդ ու զարդերդ ես կգնեմ շեյխի հովանու տակ,
ու դա քեզ բախտավորութուն կբերի»:

Եվ պառավը հաթունին թողեց շապիկ-վարտիքով, և նրա շորերն
ու զարդերը վերցրեց ու գնաց, և այդ բոլոր բաները նա թաքցրեց սան-
դուղքի տակ, իսկ հետո մտավ վաճառականի որդու սենյակն ու տեսավ,
որ տղան ջահել կնոջն է սպասում. «Ինչո՞ւ աղջիկդ չի գալիս, որ տես-
նեմ»,— հարցրեց նա պառավին: Պառավն սկսեց կուրծքը ծեծել, «Ի՞նչ
պատահեց քեզ»,— հարցրեց երիտասարդը: Ու պառավը գոչեց. «Գետ-
նի տա՛կն անցնի շար հարևանը, սատկի՛ նախանձ դրկիցը... Հարևան-
ները տեսան, որ ես ու դու ներս մտանք ու քո մասին հարցրին, ես էլ
ասացի. «Աղջկաս մարդի եմ տվել, էս ջահելն աղջկաս փեսացուն է»: Ու
սա որ լսեցին, նախանձեցին իմ բախտին և աղջկաս ասացին. «Ինչ է,
մերդ քեզ պահելուց հոգնե՞լ է, որ էդ բորոտին է տալիս», Ու ես էլ
աղջկաս խոսք տվեցի, որ քեզ տկլոր կտանեմ մոտը, թող տկլոր տես-
նի»:— «Ալլա՛հն սուրտի ինձ նախանձներից»,— բացականչեց երիտա-
սարդն ու թևերը մերկացրեց, և Դալիլան տեսավ, որ տղայի թևերն այն-
քան սպիտակ են, ոնց որ իսկական արծաթ, և ասաց. «Մի՛ վախենա:
Դու էլ նրան տկլոր կտեսնես, ոնց որ նա՛ քեզ»:— «Դե թող գա ու ինձ
տեսնի»,— ասաց երիտասարդն ու հագից հանեց սամույրե մուշտակն
ու գոտին, և դանակը, և բոլոր շորերը, այնպես որ մնաց շապիկ-վար-
տիքով, իսկ հազար դինարը դրեց շորերի արանքը: Ու պառավն ասաց
նրան. «Դրանք տուր ինձ՝ պահեմ, հետո կտամ քեզ»:

Եվ երիտասարդի շորերն էլ վերցրեց Դալիլան ու դրեց էմիրի կնոջ
շորերի վրա, և այդ բոլորն առավ ու դռնից դուրս տարավ, դուռն էլ
կողպեց երկուսի վրա ու հանգիստ գնաց իր ճամփով: Եվ դուրս բերած
իրերը պառավը թողեց մի դեղավաճառի մոտ ու գնաց ներկարարի կըր-
պակը և տեսավ, որ սա նստել ու իրեն է սպասում: «Ուրեմն, ալլահը
կամեցավ, որ տունս դո՞ւր գա ձեզ»,— հարցրեց ներկարարը: Եվ Դալի-
լան պատասխանեց. «Քո տունը բարեբեր տուն է, ու հիմա ես գնում եմ
մշակների հետևից, որ մեր տան բաներն ի՞նչ գտնենք տանեն էնտեղ:
Երեխաներս հաց ու միս ուզեցին, էս մի դինարը վերցրու, նրանց հա-
մար հաց ու միս պատրաստիր ու գնա նրանց հետ ճաշիր»:— «Բա իմ

ներկատա՞նն ով մտիկ անի, ուրիշի ապրանք կա էստեղ», — հարցրեց ներկաբարը: «Քո աշակերտը», — պատասխանեց Դալիլան, Եվ ներկարարն ասաց. «Լավ, թող այդպես լինի», — ու մեծ ափսեան վերցնելով գնաց ճաշ պատրաստելու:

Ահա թե ինչ պատահեց ներկարարին, ու դեռ ինչքան բան կա պատմելու նրա մասին... Հիմա գանք՝ լուր տանք պառավից: Պառավը դեղավաճառի մոտից վերցրեց խաթունի ու վաճառականի որդու իրերը, մտավ ներկարարի կրպակն ու վարպետի աշակերտին ասաց. «Վազիր հասիր տիրոջդ, իսկ ես տեղիցս չեմ շարժվի, մինչև երկուսդ էլ չգաք»: — «Լսում եմ ու հնազանդվում», — պատասխանեց փոքրիկ ներկարարը: Իսկ Դալիլան ներկատանը ինչ կար-չկար հավաքեց, որ տանի:

Ու հանկարծ կրպակին մոտեցավ հաշիշ ծամոզ մի իշապան, որը մի շաբաթ էր, ինչ անգործ ման էր գալիս, ու պառավն ասաց նրան. «Իշատե՛ր, իշատե՛ր, մոտ արի», — ու երբ իշապանը մոտեցավ, պառավը հարցրեց. — «Իմ որդուն ճանաչո՞ւմ ես, ներկարարին, էլի»: — «Հա, ճանաչում եմ», — պատասխանեց իշապանը: Ու պառավն ասաց. «էդ խեղճ մարդը կոտր է ընկել, ու վրան էլ պարտքեր կան, ու ինչքան նրան բանտ են նստեցնում, ես եմ գնում ազատել տալիս: Հիմա մենք ուզում ենք, որ նրա ազքատութունը հաստատենք, ես էլ գնում եմ էս բանումանը տերերին տամ և ուզում եմ, որ էշդ տաս՝ շալակով շտանեմ: Էս բաները էշիդ բարձած տանեմ տամ տերերին, դու էլ էս մի դինարն առ իբրև իշիդ վարձը, իսկ իմ գնալուց հետո շերեփը վերցրու, պուտուկների մեջ ինչ-որ կա թափիր ու հետո պուտուկներն ու կժերը ջարդուփշուր արա, որ, հրբ դադիի քննիչը գա, ներկատանը բան չգտնի»: — «Տիրոջ լավության տակից դուրս կգամ և ալլահի սիրուն մի բան կանեմ նրա համար», — պատասխանեց իշապանը: Ու պառավն իրերը վերցրեց ու բարձեց էշին: Եվ նրան ծածկեց թաքցնողը: Ու պառավը գնաց տուն:

Ու երբ նա հասավ տուն, աղջիկը՝ Զեյնաբն ասաց. «Սիրտս քեզ հետ էր, մերքս: Ասա տեսնեմ, ինչ օյիներն խաղացիր»: Ու պառավը սրտասխանեց. «Չորս մարդու գլխին շորս խաղ խաղացի՛ վաճառականի որդու, շաուշի կնոջ, ներկարարի ու իշապանի, ու նրանց ամբողջ ունեցած-չունեցածը քեզ նվեր բերեցի իշապանի էշին բարձած»: «Ա՛խ, մայրիկ, — ասաց Զեյնաբը, — դու շաուշի պատճառով էլ չես կարող անցնել քաղաքով. ախր նրա կնոջ զարդերն ու շորերը առել բերել ես, ու մեկ էլ վաճառականի որդու պատճառով, որին տկլոր ես թողել, ու մեկ էլ ներկարարի պատճառով, որի խանութից շատ բան ես վերցրել, ու մեկ էլ իշապանի, որն այս էշի տերն է»: — «Ա՛խ, աղջի՛կս, — պատաս-

խանեց Դալիլան, — ինձ միայն իշապանն է անհանգստացնում, նա կճանաչի ինձ»:

Սրանք թող այստեղ մնան, դառնանք լուր տանք ներկարար վարպետից: Նա միս ու հաց գնեց, դրեց իր ծառայի գլխին և անցավ իր ներկատան մոտով ու տեսավ, որ իշապանը պուտուկներն է ջարդում, և ներկատանը ո՛չ գործվածք է մնացել, ո՛չ էլ ուրիշ գույք: Ու վարպետը տեսավ, որ ներկատունը քանդուքարափ է արված: «Ձեռ քաշի այդ բանից, իշատե՛ր», — ասաց ներկարարը: Եվ իշապանը վերջ տվեց ջարդելուն ու բացականչեց. «Փա՛ռք ալլահին, որ ամեն ինչ հաջող վերջացավ, տեր իմ: Սիրտս մղկտում է քեզ համար»: — «Ինչո՞ւ, ինձ ի՞նչ է եղել, որ», — հարցրեց ներկարարը: Եվ իշապանն ասաց. «Ախր դու աղքատացել ես ու քեզ աղքատանալու թուղթ են գրել»: — «Ո՞վ ասաց քեզ», — հարցրեց ներկարարը, և իշապանը պատասխանեց. «Մայրդ ասաց, ու հենց նա էլ պատվիրեց, որ ջարդեմ պուտուկները և դուրս թափեմ կճուճների միջինը. խեղճը վախենում էր, որ կարող է քննիչը գա ու ներկատանը մի բան գտնի»:

«Թող ալլա՛հը խաբի՛ հեռավորին՝, — գոչեց ներկարարը: — Իմ մայրը վաղուց է մեռել»: — Ու վարպետը սկսեց կուրծքը ծեծել ու գոռալ. — «Իմ ունեցած-չունեցածն էլ կորա՛վ, մարդկանց ապրանքն էլ...»: Եվ այդ բանը տեսնելով, իշապանը լաց եղավ ու գոչեց. «Վա՛յ, իմ էշն էլ գնաց-կորավ»: Եվ ապա նա ասաց ներկարարին. «Ներկարար, էշս մայրդ տարավ, գնա մորդ մոտ ու հետ բեր էշս»: Ու ներկարարը կպավ իշապանի օձիքից ու սկսեց բռունցքնեով ծեծել նրան ու ասել. «Գնա պառավին այստեղ բեր»: Իսկ իշապանն ասաց. «Գնա էշս բեր», Ու մի մարդ տեսավ և հարցրեց. «Այս ի՞նչ հարայ-հրոց է, ով վարպետ Մուհամմեդ»: Եվ իշապանը բղավեց. «Հիմա կպատմեմ ձեզ ամեն ինչ»:

Եվ նա պատմեց գլխին եկածն ու ավելացրեց. «Ես այնպես կարծեցի, թե վարպետն ինձանից շնորհակալ պիտի լինի, բայց էս մարդը ինձ որ տեսավ, սկսեց ծեծել կուրծքն ու ասել. «Իմ մայրը մեռել է»: Հիմա ես իմ էշն եմ ուզում սրանից, որովհետև նա է այս օյինը բերել գլխիս, որ էշս կորչի գնա»:

«Ով վարպետ Մուհամմեդ, — ասացին մարդիկ, — ուրեմն դու էդ պառավին ճանաչո՞ւմ ես, որ խանութդ ու դրա մեջ եղած-չեղածը վըս-

1 «Հեռավոր» բառն արաբներն հաճախ օգտագործում են որպես անձնական գերանուն: Պատմողը, երևի, երկյուղ է կրում, որ «գու» դերանունը լսելով, ունկնդիրներից մեկն ու մեկն իրեն կվերագրի պատմողի ասածը:

տահել ես նրան. «Ես նրան չեմ ճանաչում,— պատասխանեց ներկարարը,— ու նա միայն այսօր է իր որդու և աղջկա հետ բնակութուն հաստատել իմ տանը»։— «Խղճով որ խոսենք,— ասաց մեկը,— ներկարարը այս մարդու էջի համար պատասխան պիտի տա»։— «Ո՞նչ հիմք ունես այդպես ասելու»,— հարցրին նրան, և նա ասաց. «Այն հիմքն ունեմ, որ իշապանն ապահով էր, որ այդ պառավը սրա մայրն է ու էջը տվեց պառավին, երբ տեսավ, որ վարպետը իր ներկատունն ու միջի ապրանքը վատահել է նրան»։— «Ո՞վ վարպետ,— այդ ժամանակ ասաց մեկը,— եթե դու քո տանը տեղ ես տվել այդ պառավին, այս մարդու էջը պիտի բերես ու տաս տիրոջը»։

Եվ ապա նրանք ուղևորվեցին դեպի ներկարարի տունը, Եվ սրանց պատմությունը դեռ հետո կպատմենք։ Սրանք թող մնան այստեղ, մենք գանք լուր տանք վաճառականի որդուց։ Վաճառականի որդին էլ նստել սպասում էր պառավի գալուն, իսկ պառավը շէր գալիս, աղջկան էլ շէր բերում ցույց տալու. իսկ էմիրի կինն էլ սպասում էր, թե պառավը կբերի ալլահով տարված իր որդուն՝ շեյխ Աբու-լ-Համալաթի օգնականի թույլտվությունը, բայց պառավը չկար ու չկար։ Եվ հաթունը ելավ տեղից, որ գնա շեյխի մոտ։ Եվ հանկարծ վաճառականի որդին տեսավ, որ ջահել կինը ներս է մտնում, ասաց նրան. «Մոտ եկ։ Ո՞ւր գնաց մայրըդ, նա ինձ բերեց այստեղ, որ քեզ հետ նշանվեմ»։— «Իմ մայրը մեռել է,— պատասխանեց էմիրի կինը։— Իսկ դու այն պառավի որդի՞ն ես, ալլահի դուլն ու շեյխ Աբու-լ-Համալաթի օգնակա՞նք»։— «Նա իմ մայրը շէր,— ասաց վաճառականի որդին,— այդ պառավը խաբեբա է։ Ինձ խաբեց և շորերս վերցրեց ու հազար դինարն էլ հետը»։— «Նա ինձ էլ խաբեց ու բերեց այստեղ, որ ես գնամ Աբու-լ-Համալաթի մոտ, և տրվորացրեց ինձ»,— ասաց հաթունը։ Եվ վաճառականի որդին ասաց նրան. «Ես կիմանամ, թե որտեղ են շորերս ու հազար դինարը, ու միայն քեզանից կիմանամ»։ Իսկ էմիրի կինն ասաց. «Ես միայն քեզանից պետք է իմանամ, թե որտեղ են շորերս ու թանկագին զարդերս։ Գնա ու մորդ բեր այստեղ»։

Հանկարծ նրանց սենյակը մտավ ներկարարն ու տեսավ, որ վաճառականի որդին էլ է տկլոր, հաթունն էլ, ու ասաց. «Ասե՛ք, որտե՞ղ է ձեր մայրը»։ Եվ էմիրի կինը պատմեց այն ամենը, ինչ որ ինքը քաշել էր, վաճառականի որդին էլ պատմեց ամեն բան, ինչ որ պատահել էր իրեն, ու ներկարարը դռչեց. «Վա՛յ, իմ ունեցվածքն էլ կորա՛վ, մարդկանց ապրանքն է՛լ»։ Իսկ իշապանը բղավեց. «Վա՛յ, գնաց-կորավ էջս»։ «Այդ պառավը խաբեբա է,— ասաց ներկարարը։— Դե՛, դուրս եկեք իմ

տնից, որ դուռս փակեմ»։— «Քեզ համար խայտառակություն կլինի, որ հագած-կապած մտանք քո տունը, իսկ հիմա տկլոր դուրս գանք»,— ասաց վաճառականի որդին։ Եվ ներկարարը նրան էլ, էմիրի կնոջն էլ հագցրեց, ու խաթունին ուղարկեց իր տուն։ Եվ խոսքը սրա մասին դեռ հետո կլինի, երբ ամուսինն ուղևորությունից տուն գա։

Սա թող մնա այստեղ, գանք լուր տանք ներկարարից։ Ներկարարը փակեց իր կրպակն ու վաճառականի որդուն ասաց. «Արի գնանք պառավին գտնենք ու վալիի ձեռքը տանք»։ Եվ վաճառականի որդին գնաց նրա հետ, իշապանն էլ նրանց հետ գնաց։ Ու նրանք մտան վալիի տուն ու գանգատվեցին նրան, ու վալին հարցրեց. «Ի՞նչ է եղել, ո՞վ մարդիկ, ինչի՞ համար եք եկել»։ Եվ նրանք պատմեցին, թե ինչ է պատահել, ու վալին ասաց. «է՛, քաղաքում այնքա՛ն պառավ կա... Գնացեք, գնացեք փնտրեք նրան ու բռնեք, իսկ ես կստիպեմ, որ խոստովանի իր մեղքը»։ Ու նրանք սկսեցին ման գալ ու փնտրել Դալիլային։ Եվ սրանց պատմությունը դեռ հետո կանենք։

Սրանք թող մնան այստեղ, գանք լուր տանք Դալիլա-Նորամանկից։ Իսկ Դալիլա-Նորամանկն ասաց իր դուստր Զեյնաբին. «Աղջի՛կս, ուզու՞մ եմ մի օյին էլ սարքել»։— «Մայրիկ, ես վախենում եմ, բան չպատահի՞՞ քեզ»,— ասաց Զեյնաբը և պառավը խոսեց այսպես. «Ես բակլայի կճեպի նման եմ. ինձ ո՛չ ջուրն է քշում, ո՛չ կրակն է վառում»։ Ու պառավը վեր կացավ, մեծամեծ մարդկանց աղախնի շորեր հագավ ու գնաց, դեսուղեն նայելով, թե ինչ խարդախություն անի։ Նա անցավ մի նեղ փողոցով, որտեղ կտորեղեն էր փռած և որտեղ կանթեղներ էին կախված, ու այնտեղից երգչուհիների ձայն ու թմբուկների դմբոց լսեց, ու տեսավ մի ստրկուհու, որի ուսին նստել էր մի տղա, հագին արծաթի թելերով ասեղնագործած մի շապիկ։ Եվ այդ տղան գեղեցիկ հագուստ ուներ, իսկ գլխին դրել էր մարգարիտներով երիզված մի թասակ, և վզին թանկագին քարերով զարդարված ոսկե մանյակ կար, և ուսերին թավշյա թիկնոց էր գցած։

Իսկ այդ տունը Բաղդադի վաճառականների գլխավորին էր պատկանում, ու երեխան էլ նրա որդին էր, և նա մի կույս աղջիկ էլ ուներ, որին նշանել էին, և այդ օրը հարսանիք էին անում, Եվ այդ աղջկա մոր մոտ բազմաթիվ կանայք ու երգչուհիներ էին հավաքվել, և ամեն անգամ, երբ փոքրիկ տղայի մայրը ներս էր մտնում կամ դուրս գալիս, երեխան կաշու՞մ էր նրա փեշից։ Եվ մայրը կանչեց ստրկուհուն և ասաց. «Քո փոքրիկ տիրոջը տար՝ խաղ արա հետը, մինչև որ հրավերքը վերջանա ու մարդիկ ցրվեն տները»։

Իսկ պառավ Դալիլան ներս մտավ և ստրկուհու ուսին տեսավ մանչուկին ու հարցրեց. «Տիրուհիդ ի՞նչ քեֆ ունի էսօր»: Եվ ստրկուհին պատասխանեց. «Աղջկա հարսանիքն է անում, ու երգչուհիներ են հավաքվել նրա մոտ»: Եվ այդ ժամանակ պառավն ասաց մտքի մեջ. «Ա՛յ Դալիլա, սրանից ավելի լավ օյին չկա, արի մանչուկին ստրկուհու ձեռքից վերցրու և տար»: Եվ ապա գոչեց. «Ա՛յ քեզ անբախտություն, ա՛յ քեզ խայտառակություն», և ծոցից հանեց պղնձե մի թիթեղիկ, որ դինարի նման էր:

Իսկ ստրկուհին հիմար, հիմար էր, ու պառավն ասաց նրան. «Վերցրու էս դինարը, գնա տիրուհուդ մոտ ու ասա. «Ում-ալ-Խայրն ուրախ է քեզ համար, և քո լավությունները մեծ պարտք են դնում նրա վրա, ու հրավերքի օրը նա կգա իր աղջիկների հետ, և նրանք ազախիներին ընծաներ կտան»:— «Մայրիկ,— ասաց ստրկուհին,— բա ի՞նչ անեմ էս իմ փոքրիկ տիրոջը: Հենց որ մորը տեսնի, կկաշի ու պոկ շի գա»:— «Տուր ինձ մանչուկին, թող մնա ինձ մոտ, մինչև գնաս ու գաս»,— ասաց պառավը: Եվ ստրկուհին վերցրեց պղնձե թիթեղիկն ու մտավ տուն, իսկ պառավը գրկեց երեխային և, դուրս գալով նեղ փողոցը, հանեց նրա վրայի զարդերն ու շորերը և մտքի մեջ ասաց. «Ա՛յ Դալիլա, հունարը մենակ էն կլինի, որ ինչպես խաբեցիր ստրկուհուն ու երեխան ձեռքից առար, էնպես էլ մի ուրիշ խաղ խաղաս ու տղային գրավ դնես հազար դինար գին ունեցող մի բանի փոխարեն»:

Եվ նա գնաց ակնավաճառների շուկան ու տեսավ մի ոսկերիչ հրեայի, որի առջև թանկարժեք իրերով լիքը մի գամբյուղ էր դրված: Եվ Դալիլան ինքն իրեն ասաց. «Ճարպիկ խաղը մենակ էն կլինի, որ խորամանկություն անես, էս հրեայից հազար դինար գին ունեցող բաներ վերցնես ու դրանց գիմաց էս լակոտին գրավ թողնես»:

Եվ հրեան նայեց, տեսավ երեխային ու պառավին, և իմացավ, որ դա վաճառականների գլխավորի որդին է: Իսկ այդ հրեան շատ փող ուներ և նախանձում էր իր հարևանին, երբ սա մի բան էր ծախում, իսկ ինքը չէր ծախում:

«Ի՞նչ պահանջ ունես, տիրուհի»,— հարցրեց ոսկերիչը: Եվ Դալիլան ասաց. «Հրեա վարպետ Ազրան գո՞ւ ես»: (Նա առաջ էր հարցրել, թե այդ մարդու անունն ինչ է): «Այո՛»,— պատասխանեց հրեան, ու Դալիլան ասաց. «էս մանչուկի քրոջը՝ վաճառականների գլխավորի աղջկան, նշանել են, էսօր հարսանիք են անում, ու նրան զարդ ու զարդարանք է հարկավոր: Տուր, ուրեմն, երկու զույգ ոտքի ոսկե բլազուկ, երկու ոսկի ապարանջան, մարգարտե օղեք, գոտի, դաշույն ու մատանի»:

Եվ նա ոսկերչից հազար դինարի զարդեղեն վերցրեց ու ասաց. «Տանեմ սրանք՝ խորհուրդ հարցնեմ, ինչը որ դուր եկավ, թող վերցնեն, ես էլ փողը բերեմ քեզ տամ, իսկ դու էս տղային մի քիչ պահի մոտդ»։— «Թող քո ասածը լինի»,— պատասխանեց ոսկերչիչը։

Եվ Դալիլան թանկարժեք իրերն առավ ու տուն գնաց։ Եվ նրա աղջիկը հարցրեց. «Ի՞նչ օյիներ սարքեցիր», Ու պառավը պատասխանեց. «Ես մի օյին խաղացի, վաճառականների գլխավորի տղային վերցրի ու շորերը հանեցի, իսկ հետո գնացի ու նրան գրավ դրեցի մի հրեայի մոտ հազար դինար արժեք ունեցող զարդերի փոխարեն և դրանք առա ու եկա տուն»։— «Դու քաղաքում էլ ման գալ չես կարող»,— ասաց նրան աղջիկը։

Սրանց այստեղ թողնենք, գանք լուր տանք ստրկուհուց։ Ստրկուհին մտավ տիրուհու սենյակն ու ասաց. «Տիրուհի՛ս, Ում-ալ-հայրը խաղաղություն է մաղթում քեզ և ուրախ է քեզ համար, իսկ հրավերքի օրը կգա իր աղջիկների հետ, ու ընծաներ կբերեն նրանք»։— «Իսկ քո տե՞րն ուր է»,— հարցրեց տիրուհին, և ստրկուհին պատասխանեց. «Թողեցի խանումի մոտ. վախեցա, որ քեզ տեսնի ու պոկ չգա, և Ում-ալ-հայր խանումը երգչուհիներին նվերներ ուղարկեց»։ Եվ ազախնի տիրուհին երգչուհիների ղեկավարին ասաց. «Վերցրու քո ընծան»։ Եվ երգչուհին վերցրեց այն ու տեսավ, որ պղնձի կտոր է։

«Դե, ցած գնա, ա՛յ անառակ, ու տես, թե որտեղ է տերդ»,— ասաց տիրուհին ստրկուհուն, և աղջիկն իջավ ցած, ու ո՛չ երեխային գտավ, ո՛չ էլ պառավին։ Եվ նա ճչաց ու երեսնիվայր ընկավ գետին, և նրանց ուրախությունը վերածվեց տխրության։

Հանկարծ վաճառականների գլխավորը տուն եկավ։ Եվ նրա կինը պատմեց բոլոր եղելությունը, և գլխավորը դուրս ելավ փողոց՝ որդուն փնտրելու, և վաճառականներից ամեն մեկն սկսեց փնտրել մի ճանապարհի վրա։

Եվ վաճառականների գլխավորն այնքան փնտրեց, մինչև որ մերկ որդուն տեսավ հրեայի կրպակի մոտ։ Ու երբ տեսավ, հարցրեց ոսկերչին. «Սա իմ որդի՞ն է»։— «Այո»,— պատասխանեց հրեան։ Եվ հայրը վերցրեց երեխային, ու այնքան ուրախացավ, որ շհարցրեց, թե որտեղ են շորերը։

Ինչ վերաբերում է հրեային, ապա տեսնելով, որ վաճառականը վերցրեց իր որդուն, կախվեց նրա փեշից ու բացականչեց. «Ալլահն օգնական լինի խալիֆին, որ քո հախից գա»։— «Ի՞նչ պատահեց քեզ, ո՞վ հրեա»,— հարցրեց վաճառականը, և հրեան ասաց. «Պառավն ինձանից հազար դինարի թանկարժեք զարդեր վերցրեց քո աղջկա համար

ու գրավ թողեց այս երեխային: Ես այդ բոլորը նրան տվեցի միայն նրա համար, որ նա մանչուկին գրավ թողեց վերցրածի դիմաց: Ու ես բնավ չէի հավատա նրան, եթե չիմանայի, որ էս երեխան քո տղան է»:— «Իմ աղջկան զարդ ու զարդարանք պետք չէ: Երեխայի շորե՛րն ինձ տուր»,— ասաց վաճառականը: Եվ հրեան բղավեց. «Հասե՛ք, ով մոռսույմաններ»: Ու հանկարծ այդ բզավոցի վրա մոտեցան իշապանը, ներկարարն ու վաճառականի որդին, որ դեսուդեն ընկած ման էին գալիս պառավին:

Ու նրանք հարցուփորձ արին վաճառականին ու հրեային, թե ինչն է նրանց վեճի պատճառը, և վաճառականն ու հրեան պատմեցին այն ամենը, ինչ եղել էր, և, այս բանը լսելով, պառավին փնտրողներն ասացին. «Այդ պառավը խաբեբա է, նա ձեզանից առաջ մեզ է խաբել»:

Եվ նրանք պառավի արարքների մասին ամեն ինչ պատմեցին, ու վաճառականների գլխավորն ասաց. «Ես իմ որդուն գտա, թող շորերը նրա փրկագինը լինեն, իսկ թե պառավը ձեռքս ընկնի, շորերը նրանից կպահանջեմ»:

Եվ վաճառականների գլխավորը որդու հետ միասին գնաց նրա մոր մոտ, ու մայրն ուրախացավ, որ երեխան ողջ և առողջ է: Իսկ ինչ վերաբերում է հրեային, ապա նա հարցրեց այն երեքին. «Իսկ դուք ո՞ւր եք գնում»: Եվ նրանք պատասխանեցին. «Մենք պառավին ենք ուզում գրտնել»:— «Ես էլ կգամ ձեզ հետ,— ասաց հրեան ու հետո հարցրեց.— Ձեր մեջ կա՞ մեկը, որ տեսնի ու ճանաչի նրան»:— «Ես կճանաչեմ»,— քացականչեց իշապանը, ու հրեան ասաց. «Մենք եթե միասին գնանք, նրան գտնելն անհնար կլինի, ու նա մեզանից կփախչի: Մեզանից ամեն մեկը թող մի ճամփով գնա, իսկ մեր հանդիպումը թող լինի մահրիբեցի սափրիչ հաջի Մասուդի խանութի մոտ»:

Եվ նրանցից ամեն մեկը մի ճամփով գնաց, իսկ այդ ժամանակ Դալիլան դուրս էր եկել տնից, որ մի նոր խարդախություն անի:

Եվ նրան տեսավ իշապանն ու ճանաչելով՝ բռնեց օձիքից և բղավեց. Ամո՛թ քեզ, պառավ: Վաղո՞ւց է, որ դու էս տեսակ գործով ես զբաղվում»:— «Ի՞նչ պատահեց քեզ»,— հարցրեց պառավը, և իշապանն աղաղակեց. «Իմ էջը ո՞ւր է: Տո՛ւր ինձ իմ էջը»:— «Աշխարհով մի արտ էն բանը, ինչ որ ալլահն է թաքցրել, որդի՛ս,— ասաց պառավը:— Դու քո է՞ջն ես ուզում, թե մարդկանց իրերը»:— «Ես միայն իմ էջն եմ պահանջում»,— պատասխանեց իշապանը: Ու պառավն ասաց. «Ես տեսա, որ դու չքավոր մարդ ես ու էջդ մահրիբեցի սափրիչին պահ տվեցի: Դու մի քիչ հեռու կանգնի, իսկ ես կմոտենամ նրան ու խաթրով կասեմ, որ էջդ քեզ տա»: Ու պառավը մոտեցավ մահրիբեցուն և նրա

ձեռքը համբուրեց ու լաց եղավ: Եվ սափրիչը հարցրեց նրան. «Ի՞նչ է պատահել քեզ»: Եվ պառավն ասաց. «Ա՛խ, որդի՛, մի լավ նայիր էնտեղ կանգնած իմ տղային, խեղճը հիվանդ էր, ու մի օր էլ մրսեց ու օդն էր, ինչ էր՝ խելքը թոցրեց: Իսկ առաջ նա էշ առնելով էր գբաղվում, ու հիմա նստի, կասի՛ էշս, կանգնի, կասի՛ էշս, ման գա՛ կասի՛ էշս: Ու բժիշկներից մեկն ինձ ասաց, թե որդիս խելքը կորցրել է, ու դրան մե- նակ մի բժշկություն կա՛ պիտի երկու ատամը քաշես ու երկու անգամ քունքերը դաղես, Դե առ էս մի դինարը, կանչի որդուս ու առա. «Քո էշն ինձ մոտ է»:— «Մի տարի պաս պահելն ինձ համար սլարտադիր է,— բացականչեց սափրիչը:— Ես, իրավ, էշը նրա ձեռք կտամ»:

Իսկ սափրիչը երկու աշակերտ ուներ, և նրանցից մեկին ասաց. «Գնա երկու մեխ կարմրացրու», և հետո նա կանչեց իշապանին, իսկ պառավը գնաց իր ճամփով:

Ու երբ իշապանը մոտեցավ, սափրիչն ասաց. «Քո էշն ինձ մոտ է, ով դժբախտ: Մոտ արի, վերցրու: Կյանքս վկա, էշդ ուղղակի ձեռքդ տամ»: Եվ ապա նա իշապանին ներս կանչեց, և սա էլ գնաց նրա հետևից ու մտավ մի մութ սենյակ, ու մեկ էլ հանկարծ մահրիբեցին բռունցքով հարվածեց նրան, և իշապանն ընկավ ու նրան քաշ տվին ու ձեռու- ոտը կապկպեցին, և մահրիբեցին քաշեց նրա երկու ատամն ու քունքերը երկու անգամ դաղեց, իսկ հետո հանգիստ թողեց:

Եվ իշապանը վեր կացավ ու հարցրեց նրան. «Ով մահրիբեցի, ինչո՞ւ այսպես վարվեցիր ինձ հետ»: Եվ սափրիչը պատասխանեց. «Նրա հա- մար, որ մայրդ ինձ ասաց, թե դու հիվանդ ժամանակ մրսել ես ու խելքդ թոցրել, ու հիմա վեր ես կենում, ասում ես՝ էշս, նստում ես, ասում ես՝ էշս: Ը՛հր՛, էշդ քո ձեռքին է»:— «Ալլա՛հը քեզ կպատժի, որ դու ակռաներս քաշեցիր»,— գոչեց իշապանը, և մահրիբեցին ասաց. «Մայրդ ինձ էդպես ասաց», Եվ նա իշապանին պատմեց այն ամենը, ինչ պառավն ասել էր իրեն: «Թող ալլահը նրա կյանքը տանջանք դարձ- նի»,— գոչեց իշապանը: Ու հետո նա և մահրիբեցին, վիճելով, դուրս եկան փողոց, ու մահրիբեցին հենց այդպես էլ ամեն ինչ թողեց ու գնաց, իսկ երբ հետ եկավ, կրպակում ոչ մի բան չէր մնացել: Երբ նա իշա- պանի հետ հեռացել էր, պառավն ինչ կա չկա վերցրել էր ու գնացել աղջկա մոտ և պատմել նրան իր գլխին եկածն ու արարմունքները:

Իսկ ինչ վերաբերում է սափրիչին, ապա, տեսնելով, որ իր կրպակը դատարկ է, կպավ իշապանի օձիքից ու ասաց. «Ինձ մոտ բեր մորդ»: Իշապանը գոչեց. «Նա իմ մայրը չէր, խաբեբա էր, որ շատ մարդ է խաբել ու իմ էշն էլ տարել»:

Ու հանկարծ նրանց մոտեցան ներկաբարը, հրեան ու վաճառականի որդին, և նրանք տեսան, որ մահճրիբեցին կպել է իշապանին ու կալում է նրա հետ, իսկ իշապանի քունքերը դաղած են, հարցրին սրան. «Ի՞նչ է պատահել քեզ, ա՛յ իշապան»: Եվ իշապանը պատմեց, ինչ որ եղել էր, և մահճրիբեցին էլ իր պատմութունն արեց, ու այն երեքը գոչեցին. «Այդ պառավը խաբեբա է ու խաբել է մեզ»: Եվ ամեն ինչ պատմեցին իշապանին:

Եվ մահճրիբեցին կողակց իր կրպակն ու նրանց հետ գնաց վալիի տուն, և նրանք վալիին ասացին. «Մենակ քեզանից պիտի իմանանք մեր գործի հանգամանքները ու թե որտեղ է մեր ունեցվածքը»: «Այս քաղաքում այնքան պառավ կա,— ասաց վալին:— Կա՞՞ ձեր մեջ մեկը, որ նրան տեսնի ու ճանաչի»:— «Ես նրան կճանաչեմ,— ասաց իշապանը,— միայն թե քո մերձավորներից տասին մեզ հետ ուղարկիր»: Ու իշապանը փողոց ելավ վալիի մերձավորների հետ, իսկ մնացածները գնում էին նրանց հետևից: Եվ իշապանը բոլորի հետ սկսեց ման գալ քաղաքում, ու մեկ էլ հանկարծ նրանց մոտեցավ պառավ Դալիլան, և իշապանն ու վալիի մերձավորները բռնեցին նրան, և նրանք պառավին տարան վալիի մոտ ու կանգ առան նրա պալատի պատուհանների տակ, սպասելով, մինչև որ վալին դուրս գա:

Եվ ապա վալիի մերձավորները քնեցին, որովհետև վալիի տանը երկար ժամանակ չէին քնել, ու պառավն էլ քնած ձեացավ, և իշապանն ու ընկերներն էլ քնեցին: Եվ երբ Դալիլան տեսավ, որ բանն այդպես է, ծրվեց նրանց մոտից ու մտավ հարեմ և, հարեմի տիրուհու ձեռքը համբուրելով, հարցրեց նրան. «Ո՞ր է վալին»:— «Քնած է, ի՞նչ ես ուզում»,— հարցրեց հարեմի տիրուհին, և Դալիլան ասաց. «Ամուսինս ստրուկներ է ծախում, ու ինձ հինգ ստրուկ տվեց, որ ծախեմ, իսկ ինքը քաղաքից մեկնեց: Վալին էլ հանդիպեց ինձ ու սակարկեց, և ես համաձայնեցի հազար դինարով ծախել ստրուկներին ու մեկ էլ երկու հարյուր դինար ավելի ստանալ, ու դրանից հետո վալին ասաց. «է՞դ ստրուկներին տուն բեր»: Ես էլ բերել եմ»:

Իսկ վալին ուներ հազար դինար, և ասել էր կնոջը: «Էավ պահիր այդ փողը, դրանով ստրուկներ կառնենք»: Եվ պառավից լսելով ստրուկներ բերելու մասին, վալիի կինը հավատաց, որ իր ամուսինը հենց այդպես էլ արել է, և հարցրեց. «Որտե՞ղ են ստրուկները»: Ու պառավը պատասխանեց. «Ո՞վ տիրուհի, նրանք քեած են հենց այն պալատի պատուհանի տակ, որտեղ դու ես ապրում»: Եվ տիրուհին պատուհանից դուրս նայեց ու տեսավ մահճրիբեցուն, որը ստրուկի շոր էր հագել, ու վաճա-

ուականի որդուն, որը ստրուկի կերպարանք ուներ, ու ներկարարին, իշապանին ու հրեային, որոնք գլուխները սափրած ստրուկների տեսք ունեին, ու ասաց. «Այդ ստրուկներից ամեն մեկը հազար դինարից ավելի արժե»:

Եվ տիրուհին բաց արեց սնդուկն ու պառավին հազար դինար տվեց և ասաց. «Գնա, իսկ վալին, որ արթնանա, երկու հարյուր դինարդ էլ կվերցնենք նրանից»:— «Տիրուհի՛ս,— ասաց պառավը,— այդ երկու հարյուր դինարից հարյուրը պահիր քեզ համար, դիր այն սափորի տակ, որից խմիչք ես խմում ու մյուս հարյուրն էլ քեզ մոտ պահիր ինձ համար, մինչև որ գամ ու վերցնեմ: Տիրուհի՛, գաղտնի դռնով գուրս թող ինձ»,— ասաց հետո պառավը: Ու վալիի կինը պառավին գուրս տարավ գաղտնի դռնով: Եվ պառավին թաքցրեց թաքցնողը, և նա գնաց իր աղջկա մոտ:

«Մայրիկ, մի պատմի տեսնեմ, թե է՞լ ինչ խաղ սարքեցիր»,— հարցրեց Զեյնաբը, ու մայրը պատասխանեց. «Աղջիկս, ես մի օյին խաղացի, որ... էն հինգին ծախեցի վալիի կնոջն ու վերցրի այս հազար դինարը: Մախեցի իշապանին, հրեային, ներկարարին, սափրիչին ու վաճառականի տղային և նրանց ստրուկ դարձրի: Միայն թե, աղջիկս, ինձ համար ոչ ոք էնքան վնասակար չէ, ինչքան իշապանը. նա ինձ ճանաչելու է»: «Ո՛վ մայրիկ,— ասաց Զեյնաբը,— նստիր տանը: Ինչ որ արեցիր, հերիք է: Ամեն անգամ չէ, որ կուժն անվնաս կմնա»:

Սրանց այստեղ թողնենք, դառնանք լուր տանք վալիից: Երբ սաքնից վեր կացավ, կինն ասաց նրան. «Ես շատ ուրախացա, որ դու այն հինգ ստրուկներին առել ես պառավից: Խելոք բան ես արել»:— «Ի՞նչ ստրուկներ»,— հարցրեց վալին: Եվ նրա կինը բացականչեց. «Ինչո՞ւ ես թաքցնում ինձանից: Ալլահը որ կամենա, նրանք էլ քեզ նման բարձր պաշտոնների տեր կդառնան»:— «Գլուխս վկա, ես ստրուկներ չեմ առել: Այդ ո՞վ ասաց»,— գոչեց վալին: Եվ նրա կինն այսպես խոսեց. «Պատավ միջնորդը, որի հետ դու սակարկել ես ու դրանց առել, և խոստացել ես հազար դինար տալ, ու դեռ երկու հարյուր էլ՝ իրեն»,— «Իսկ դու փողը տվե՞լ ես նրան»,— հարցրեց վալին, և կինը պատասխանեց. — «Այո՛, ես աչքովս տեսա ստրուկներին. նրանցից ամեն մեկի հագին այնպիսի շոր կա, որ քո այդ հազար դինարն արժե: Ու ես գլխավորներ ուղարկեցի ու ասացի, որ ստրուկների հրգսն իրենց վրա վերցնեն»:

Եվ վալին իջավ ցած ու տեսավ հրեային, իշապանին, մահրիբեցուն, ներկարարին ու վաճառականի որդուն և հարցրեց. «Ո՞վ գլխավորներ, որտե՞ղ են այն հինգ ստրուկները, որ մենք հազար դինարով առանք պառավից»:— «Այստեղ ստրուկ չկա,— պատասխանեցին գլխա-

վորները, — մենք միայն այս հինգին ենք տեսել, որոնք պառավին գտան ու բռնեցին: Հետո այնպես եղավ, որ բոլորս քնեցինք, իսկ պառավը ծլկեց այստեղից ու մտավ հարեմ, և ապա ստրկուհին եկավ ու հարցրեց. «Պառավի բերած հինգ հոգին ձեզ հե՞տ են»: Մենք էլ ասացինք. «Այո»: Եվ վալին բացականչեց. «Ալլահը վկա, սրանից խոշոր խարդախություն չի եղել»: Իսկ այն հինգն ասացին. «Մենք մեր գլխին եկածի մասին միայն քեզանից ենք իմանում, միայն քեզանից»: — «Ձեզ հետ եկած պառավը ձեզ ծախել է հազար դինարով, ու ես առել եմ», — ասաց վալին: Եվ հինգն էլ գոչեցին. «Դա ալլահի կամքին հակառակ բան է: Մենք ծախու չենք, մենք ազատ մարդիկ ենք... Ու քեզ հետ կգնանք խալիֆի մոտ: «Ձեզանից բացի, իմ տան ճամփան ոչ ոք ցույց չի տվել այդ պառավին, — ասաց վալին: — Ու քանի որ այդպես է, ամեն մեկիդ երկու հարյուր դինարով կծախեմ նավատերերին»:

Մինչև այս բոլորը կատարվում էր, էմիր Հասան Շար աթ-Թարիքը հանկարծ վերադարձավ ուղևորությունից ու տեսավ, որ կնոջ շորերը հանել են ու նա մերկ է: Եվ կինը պատմեց ամուսնուն, թե ինչ է պատահել, ու էմիրը գոչեց. «Այս բոլորի համար ո՞վ պիտի պատասխան տա, վալիից բացի»: Եվ նա գնաց վալիի մոտ ու ասաց. «Ո՞նց ես թույլ տալիս, որ պառավները քաղաքում ման գան ու մարդկանց խաբեն և նրանց ունեցվածքը խլեն: Դրա համար դու պիտի պատասխան տաս, ու կնոջս շորերի ու զարդերի տեղը միայն քեզանից պիտի իմանամ ես»: Եվ ապա էմիրն այն հինգին հարցրեց. «Ձե՞զ ինչ է եղել»: Ու նրանք պատմեցին ամենը, ինչ պատահել էր, և էմիրը գոչեց. «Դուք անպատիվ արված մարդիկ եք»: Եվ նա դիմեց վալիին ու հարցրեց. «Ինչո՞ւ համար ես սրանց բռնել տվել»: Ու վալին պատասխանեց. «Այս հինգից բացի, տանս ճամփան պառավին ոչ ոք ցույց չի տվել, նա էլ իմ փողը՝ հազար դինարն առել է ու սրանց ծախել հարեմին»:

Եվ այն հինգն ասացին. «Ո՞վ էմիր Հասան, դու ես մեր հավատարիմ պաշտպանն այս գործում»: Իսկ հետո վալին էմիր Հասանին ասաց. «Կնոջդ շորերն ու զարդերը ես պիտի տամ, պարտքս լինի, ու պառավի համար էլ պատասխան կտամ. բայց ո՞վ կարող է ճանաչել նրան»: Ու բոլորը միաբերան ասացին. «Մենք կճանաչենք նրան: Դու մի տասը գլխավորի ուղարկիր մեզ հետ, ու մենք նրան կբռնենք»: Ու վալին տասը գլխավոր տվեց նրանց, և իշապանն ասաց նրանց. «Եկեք իմ հետևից, ես նրան կապույտ աչքերից՝ կճանաչեմ»:

1 Կապույտ աչքերն արաբները վատ վարքի նշան են համարել:

Եվ հանկարծ պառավ Դալիլան դուրս եկավ նեղ փողոցից, և նրան բռնեցին ու տարան վալիի մոտ, ու երբ վալին նրան տեսավ, հարցրեց. «Որտե՞ղ է մարդկանց ունեցվածքը»:— «Ո՛ր տեսել եմ, ո՛չ վերցրել եմ»,— պատասխանեց պառավը: Ու վալին բանտապետին ասաց. «Այս պառավին մինչև վաղը քեզ մոտ պահիր, ու դուռը փակիր վրան»: Բայց բանտապետը գոչեց. «Ես չեմ տանի սրան ու չեմ գցի բանտ, որովհետև վախենում եմ մի օյին խաղա, ու հետո ստիպված լինեմ պատասխան տալ»:

Ու վալին ձի հեծավ ու, պառավին և բոլոր այն մարդկանց վերցնելով հետը, գնաց Տիգրիսի ափ, կանչեց մի ջահակիր ու պատվիրեց պառավի մազերը կապել խաչից: Եվ ջահակիրը պառավին խաչ հանեց ու տասը մարդ նշանակեց, որ հսկեն նրան, իսկ վալին գնաց տուն: Ու վրա հասավ խավար գիշերը, և քունը հաղթեց պահակներին:

Եվ այնպես եղավ, որ մի բեդվին լսեց, թե ինչպես մեկն ասում էր ընկերոջը. «Փա՛ռք ավլահին հաջողակ կյանքի համար: Այս ո՞ւր էիր կորել»: Եվ ընկերը պատասխանեց. «Բաղդադ էի գնացել, ու ճաշին այնտեղ մեղրով կարկանդակ կերա»: Եվ բեդվինը բացականչեց. «Անպայման կգնամ Բաղդադ ու մեղրով կարկանդակ կուտեմ» (իսկ նա կյանքում ո՛չ մեղրով կարկանդակ էր տեսել, ո՛չ էլ Բաղդադ էր մտել): Եվ նա ձի նստեց ու գնաց, ինքն իրեն ասելով. «Կարկանդակ ուտելը շատ լավ բան է: Արաբների պատի՛վը վկա, սրանից հետո ես միայն մեղրով կարկանդակ եմ ուտելու»:

Եվ նա մոտեցավ Դալիլայի խաչին, ու պառավը լսեց, թե ինչպես էր նա ինքն իրեն խոսում ու ինչ էր ասում, իսկ բեդվինը դիմեց Դալիլային ու հարցրեց. «Այս ի՞նչ բան է»: Ու Դալիլան գոչեց. «Ո՛վ դու արաբների շեյխ, ես քո պաշտպանությանն եմ ապավինում»:— «Ավլահն արդեն պաշտպանել է քեզ,— պատասխանեց բեդվինը:— Ինչո՞ւ են քեզ խաչել»:— «Ես մի թշնամի ունեմ, էն ձեթ ծախողն է, որ կարկանդակներ է թխում,— պատասխանեց Դալիլան:— էսօր կանդ առա նրա խանութի մոտ, որ նրանից մի բան առնեմ, և թքեցի ու թուքս ընկավ կարկանդակների վրա, ու ձիթավաճառը գանգատվեց դատավորին, դատավորն էլ կարգադրեց խաչել ինձ ու ասաց. «Ես մի վճիռ կկայացնեմ, որ դուք տասը բաթլ մեղրով կարկանդակ բերեք ու ստիպեք, որ այս պառավը խաչված տեղն ուտի: Թե կերավ, կապերը քանդեք ու բաց թողեք՝ թող գնա, թե չկերավ, այսպես խաչված էլ թողեք»: Բայց սիրտս քաղցր չի ուզում, զզվում եմ»:— «Արաբների պատի՛վը վկա,— բացականչեց բեդվինը,— քոշատեղը թողել ու եկել եմ միայն նրա համար,

որ մեղրով կարկանդակ ուտեմ, ու ես կուտեմ քո փոխարեն»։ — «էդ կարկանդակները միայն նա կուտի, ով իմ տեղը կախվի», — ասաց Դալիլան։

Եվ Դալիլայի խորամանկությունը հաջողություն ունեցավ, ու բեղվինը արձակեց Դալիլայի կապերը, և պառավն այդ մարդուն կապեց իր տեղն այն բանից հետո, երբ հանեց նրա հագի շորերն ու ինքը հագավ նրա շալման էլ կապեց, իսկ հետո հեծավ բեղվինի ձին ու զնաց աղջրկա մոտ։ «էս ի՞նչ ես հագել», — հարցրեց Զեյնաբը, ու Դալիլան պատասխանեց. «Ինձ խաշել էին», — ասաց նա ու պատմեց, թե ինչպես է խաբել բեղվինին։

Ահա թե ինչ եկավ Դալիլայի գլուխը, Հիմա դառնանք լուր տանք պահակներից։ Երբ նրանցից մեկն արթնացավ, իր մարդկանց ձայն տվեց, ու նրանք տեսան, որ օրն արգեն բացվել է։ Եվ նրանցից մեկը գլուխը բարձրացրեց ու ասաց. «Հե՛յ Դալիլա»։ Ու բեղվինը պատասխանեց. «Ալլահը վկա, մենք բալիլա ուտող չենք։ Մեղրով կարկանդակները բերե՞լ եք»։ — «Այս մարդը բեղվին է», — ասացին մյուս պահակները, և առաջինն արթնացածը հարցրեց. «Ով բեղվին, ո՞ւր է Դալիլան, և ո՞վ է նրան արձակել»։ — «Ես եմ արձակել նրա կապերը, — պատասխանեց բեղվինը։ — Կարկանդակները նա զոռով ուտել չի կարող, քանի որ սիրտը չի տանում»։

Եվ պահակները գլխի ընկան, որ բեղվինը պառավի գործի հանգամանքներին ծանոթ չէ, ու որ Դալիլան նրա գլխին խաղ է խաղացել, և սկսեցին միմյանց հարցնել. «Փախչե՞նք այստեղից, թե՞ մնանք ու ալլահի սահմանած պատիժներս լրիվ ստանանք»։

Ու հանկարծ եկավ վալին և այն մարդկանց բաղմության հետ, որոնց Դալիլան խաբել էր։ Եվ վալին գլխավորներին ասաց. «Վեր կացեք, արձակեք Դալիլայի կապերը»։ Եվ բեղվինը գոչեց. «Մենք բալիլա չենք ուտի, չէ՛... Մեղրով կարկանդակ չե՞ք բերել»։ Ու վալին նայեց վեր ու պառավի փոխարեն խաշափայտի վրա տեսավ բեղվինին և գլխավորներին հարցրեց. «Այս ի՞նչ բան է»։ — «Խնայի՛ր մեզ, ո՞վ ան», — գոչեցին պահակները։ Ու վալին բղավեց. «Պատմեք, թե ի՞նչ է եղել»։ Եվ գլխավորներն ասացին. «Մենք, երբ քեզ հետ պահակություն էինք անում, չքնեցինք, ու հետո մեզումեզ ասացինք. «Դալիլան խաշված է...» ու քնով անցանք, իսկ երբ արթնացանք, տեսանք, որ այս բեղվինն է խաշի վրա։ Ու հիմա մենք կանգնած ենք քո առջև, քո ձեռքին ենք, ինչ ուզում ես արա»։

«Ո՞վ մարդիկ, այս պառավը խաբերա է, և ալլահն է խնայել ձեզ», — ասաց վալին։ Եվ բեղվինի կապանքները քանդեցին, իսկ ստ կազավ վա-

իին ու ասաց. «Ալլահն օգնական լինի խալիֆին, որ քո հախից գաւ Զրուս ու շորեքիս մասին միայն քեզանից կիմանամ»:

Ու վալին հարցումիորձ արեց բեդվինին, և բեդվինը նրան պատմեց իր գլխին եկածը, ու վալին զարմացավ և հարցրեց. «Ինչո՞ւ արձակեցիր պառավի կապերը»:— «Ես չէի իմանում, որ խաբեբա է»,— պատասխանեց բեդվինը: Ու հավաքված մարդիկ ասացին. «Ով վալի, միայն բեզանից մենք կիմանանք մեր գործերի մասին: Այդ պառավին քո ձեռքը տվեցինք, և դու խոստացար նրան պատժել. պատասխանատուն հիմա դու ես, մենք հենց քեզ հետ էլ կգանք խալիֆի դիվանը:

Իսկ Հասան Շար աթ-Քարիքը գնաց դիվան ու մեկ էլ տեսավ, որ գալիս են վալին, բեդվինն ու այն հինգը, և նրանք եկան ու ասացին. «Մեզ նեղացրել են»: «Ո՞վ է նեղացրել ձեզ»,— հարցրեց խալիֆը: Եվ նրանցից ամեն մեկն առաջ եկավ ու պատմեց, թե ինչ է պատահել իրեն, մինչև անգամ վալին, որն ասաց. «Ո՞վ ուղղահավատների տեր ու տնօրեն, այդ պառավն ինձ խաբեց ու հազար դինարով ինձ վրա ծախեց այս հինգ հոգուն, բայց սրանք ազատ մարդիկ են»:— «Ինչ կորուստ ունեցել եք, ես կտամ,— խոսեց խալիֆը ու դիմեց վալիին.— Ես քեզ պարտավորեցնում եմ բռնել պառավին»:

Եվ վալին օձիքը բռնեց¹ ու բացականչեց. «Այս բոլորից հետո ես այդ պարտականութունը հանձն չեմ առնի. երբ ես նրան այս խաչից կախեցի ու նա բեդվինի գլուխն այսպիսի օջին բերեց, էլ ի՞նչ անեմ, այդ խաբեբան այնպես արեց, որ այս մարդը նրան ազատեց, իսկ ինքը սրան կապեց իր տեղն ու առավ տարավ սրա ձին էլ, շորերն էլ»:

«Ի՞նչ անենք, հապա ո՞ւմ պարտավորեցնեմ, քեզանից բացի»,— հարցրեց խալիֆը, ու վալին ասաց. «Պարտավորեցրու Ահմեդ ադ-Դանաֆին, նա ամեն ամիս հազար դինար է ստանում, ու Ահմեդ ադ-Դանաֆը քառասունմեկ մերձավոր մարդ ունի, և նրանցից ամեն մեկը ամիսը հարյուր դինար է ստանում»:— «Ո՞վ աջակողմյան պետ Ահմեդ»,— ասաց խալիֆը, և Ահմեդը պատասխանեց. «Ես քո ծառան եմ, ո՞վ ուղղահավատների տեր ու տնօրեն»: Եվ այն ժամանակ խալիֆն ասաց. «Ես քեզ պարտավորեցնում եմ պառավին ինձ մոտ բերել» և Ահմեդը բացականչեց. «Ես նրա համար պատասխանատու եմ, ով ուղղահավատների տիրակալ»: Եվ ապա խալիֆն իր մոտ պահեց այն հինգ հոգուն ու բեդվինին:

¹ Մի շարժում, որն արահայտում է այն միտքը, թե հրամանը կամ հանձնարարությունը անհնար է կատարել:

Ու խալիֆն Ահմեդ ադ-Ռանաֆին պարտավորեցրեց իր մոտ բերել պառավին, և Ահմեդը բացականչեց. «Ես նրա համար պատասխանատու եմ, ո՞վ ուղղահավատների տիրակալ»: Եվ հետո նա գնաց զորանոց՝ իր մերձավորների մոտ, ու նրանք սկսեցին իրար ասել. «Ինչպե՞ս բռնենք այդ պառավին, այնքան պառավ կա քաղաքում»:

Եվ նրանցից Ալի Քաթֆ ալ-Ջամալ անունով մեկը Ահմեդ ադ-Ռանաֆին ասաց. «Այդ ի՞նչ խորհուրդ ես անում Հասան Շումանի հետ: Ի՞նչ մի մեծ մարդ է Հասան Շումանը»: Եվ Հասանը բացականչեց. «Ո՞վ Ալի, ինչո՞ւ ես ինձ ստորացնում: Երդվո՞ւմ եմ մեծադոր ալլահի մեծագույն անունով, որ այս անգամ ես ձեզ ընկեր չեմ լինի»:

Եվ նա զայրացած դուրս գնաց, իսկ Ահմեդ ադ-Ռանաֆն ասաց. «Ո՞վ քաջեր, ամեն մի գլխավոր թող տասը մարդ վերցնի ու գնա որևէ թաղ՝ Դալիլային փնտրելու»:

Եվ Ալի Քաթֆ ալ-Ջամալը տասը մարդու գլուխ անցած գնաց փնտրելու, և ամեն մի գլխավոր նույն բանն արեց, և յուրաքանչյուր խումբ գնաց մի թաղ, իսկ մինչև ցրվելն ու ճամփա ընկնելը, նրանք ասացին իրար. «Մենք իրար կհանդիպենք այսինչ փողոցում, այսինչ նրբանցքում»:

Եվ քաղաքում լուր տարածվեց, թե Ահմեդ ադ-Ռանաֆը պարտավորվել է բռնել Դալիլային, ու Զեյնաբն ասաց իր մորը «Ո՞վ մերիկ, եթե դու հնարագետ ես, մի օյին բեր Ահմեդ ադ-Ռանաֆի ու նրա մարդկանց գլուխը»:— «Աղջի՛կս, ես ոչ մեկից չեմ վախենում, բացի Հասան Շումանից»,— ասաց Դալիլան, և աղջիկը բացականչեց. «Իմ ծամե՛րը վկա, ես էդ քառասունմեկի շորերը կհանեմ ու կբերեմ քեզ կտամ»:

Ու նա վեր կացավ, շորերը հագավ ու, քողը վրան գցելով, գնաց երկու դռնանի մի սենյակ ունեցող դեղավաճառի մոտ, բարևեց նրան, ավեց մի դինար ու ասաց. «Այս դինարը քեզ, մինչև օրվա վերջը սենյակդ տուր ինձ»: Եվ դեղավաճառը բանալիները տվեց նրան: Ու Զեյնաբը գնաց և իշապանի էշով գորգեր բերեց ու փոեց սենյակի հատակին, և ամեն մի սյունազարդ նախասրահում սփռոց գցեց և ուտելիք ու դինի դրեց, և բաց երեսով կանգնեց դռան մոտ:

Ու հանկարծ իր մարդկանց հետ նրան մոտեցավ Ալի Քաթֆ ալ-Ջամալը, և Զեյնաբը համբուրեց նրա ձեռքը, և Ալին տեսավ, որ դա գեղեցիկ կին է ու սիրտը կպավ նրան և նա հարցրեց Զեյնաբին. «Ի՞նչ ես ուզում»:— «Ահմեդ ադ-Ռանաֆ գլխավորը դո՞ւ ես»,— հարցրեց Զեյնաբը, և Ալին ասաց. «Ոչ, ես նրա մարդկանցից մեկն եմ, և իմ անունը Ալի Քաթֆ ալ-Ջամալ է»:— «Ո՞ւր եք գնում»,— հարցրեց Զեյնաբը, և

Ային պատասխանեց. «Մենք ման ենք դալիս քաղաքում և փնտրում ենք մի խաբեքա պառավի, որը վերցրել է ուրիշների իրերը, ու մենք ուզում ենք բռնել նրան: Իսկ դո՞ւ ով ես ու ի՞նչ գործ ունես այստեղ»:— «Իմ հայրը գինեվաճառ էր Մոսուլում,— պատասխանեց Զեյնաբը:— Նա մեռավ ու մեծ կարողություն թողեց ինձ, ես էլ վախեցա գատավորներից ու եկա այս քաղաքը, ու մարդկանց հարցրի, թե՞ ով կարող է ինձ պաշտպանել, և ինձ ասացին. «Ահմեդ ադ-Ռանաֆից բացի, քեզ ոչ մեկը չի կարող պաշտպանել»:— «Այսօր դու նրա պաշտպանություն տակ կմտնես»,— ասացին նրան Ալի Քաթֆ ալ-Ջամալի մարդիկ, ու Զեյնաբն ասաց նրանց. «Որ այդպես է, մի մերժեք, ներս եկեք ու բուժեք իմ սիրտը՝ մի պատառ բան կերեք ու մի կում ջուր խմեք»:

Ու երբ նրանք համաձայնեցին, Զեյնաբը ներս տարավ նրանց, և նրանք կերան ու խմեցին, և նա ուտելիքի մեջ բանջ դրեց ու թմրեցրեց նրանց և վրաներից ամեն ինչ հանեց: Եվ ինչ-որ նրանց արեց, նույնն էլ մյուսներին արեց:

Իսկ Ահմեդ ադ-Ռանաֆը շրջում էր ու փնտրում Դալիլային, բայց չգտավ նրան ու շտեսավ իր մերձավորներից և ոչ մեկին: Եվ նա մոտեցավ Զեյնաբին, ու այդ կինը համբուրեց նրա ձեռքը, և Ահմեդը տեսավ նրան ու սիրեց, և Զեյնաբը հարցրեց նրան. «Ահմեդ ադ-Ռանաֆը դո՞ւ ես»:— «Այո, ես եմ, իսկ դո՞ւ ով ես»,— հարցրեց Ահմեդը: Ու Զեյնաբը պատասխանեց. «Մոսուլից եկած օտարական եմ, ու իմ հայրը գինեվաճառ էր, ու մեռավ նա և ինձ շատ փող թողեց, ու ես, դատավորներից վախենալով, փողս առա ու եկա այստեղ: Եվ բաց արեցի այս գինու խանութը, ու վալին հարկ դրեց ինձ վրա, և ես ուզում եմ քո պաշտպանություն տակ լինել: Իսկ ինչ որ վալին է վերցնում, ավելի լավ է դու վերցնես»:— «Նրան ոչ մի բան մի՛ տուր, և բարով ես եկել»,— բացականչեց Ահմեդ ադ-Ռանաֆը: Ու Զեյնաբը նրան ասաց. «Դե՛, համեցիր դարման արա սրտիս, ու կերակուրներիս համը տես»: Եվ Ահմեդ ադ-Ռանաֆը ներս մտավ ու կերավ, գինի խմեց ու հարբած ընկավ մեջքի վրա, ու Զեյնաբը բանջով թմրեցրեց նրան ու շորերը հանեց: Եվ այդ բոլորը Զեյնաբը բարձեց բեդվինի ձիուն ու իշապանի էշին, և ձայն տվեց Ալի Քաթֆ ալ-Ջամալին ու գնաց:

Ու երբ Ալին ուշքի եկավ, տեսավ, որ ինքը մերկ է, ու տեսավ նույնպես, որ Ահմեդ ադ-Ռանաֆին ու նրա մարդկանց թմրեցրել են: Եվ այդ ժամանակ Ալին նրանց դեղ տվեց բանջի գեմ և ուշքի բերեց: Եվ ուշքի գալով, նրանք տեսան, որ իրենք մերկ են, և Ահմեդ ադ-Ռանաֆն ասաց. «Այս ի՞նչ բան է, ո՞վ իմ քաջեր: Մենք ընկել ենք դեսուդեն և պառա-

վին ենք փնտրում, որ բռնենք, իսկ այդ անառակ կինը մե՛զ բռնեց: Ա՛յ թե կուրախանա Հասան Շումանն ու կծիժաղի մեզ վրա... Բայց սպասենք, մինչև մութն ընկնի, ու հետո գնանք»:

Իսկ Հասան Շումանը զորանոցի վերակացուին հարցրեց. «Որտե՞ղ են մարդիկ»: Ու մինչ Հասանը նրան հարցուփորձ էր անում, հանկարծ մերկ կտրիճները մոտեցան, և այդ ժամանակ Հասան-Շումանն այսպիսի մի ոտանավոր արտասանեց.

«Բոլոր մարդիկ նույնն են, երբ դուրս են գնում,
Ու տարբեր են, երբ որ տուն են հետ դառնում:
Շատ կան մարդկանց մեջ և տգետ, և խելքով,
Ինչպես աստղերն են և պայծառ, և աղոտ»:

Ու, տեսնելով մոտեցողներին, նա հարցրեց նրանց. «Այդ ո՞վ է ձեր գլխին այս օյինը խաղացել ու տկլորացրել»: Եվ նրանք պատասխանեցին. «Մենք հանձն առանք բռնել մի պառավի և փնտրում էինք նրան, իսկ մեզ տկլորացրեց մի սիրուն կին, ոչ թե ինչ-որ պառավ»:— «Շատ լավ էլ արել է»,— ասաց Հասանը: Եվ Հասանին հարցրին. «Մի՞թե դու նրան ճանաչում ես, ո՞վ Հասանն»:— «Նրան էլ եմ ճանաչում, պառավին էլ»,— պատասխանեց Հասանը: Ու նրան հարցրին. «Իսկ խալիֆի մոտ ի՞նչ կասես»:— «Ո՞վ Դանաֆ,— ասաց Շումանը,— խալիֆի առջև դու օձիքդ բռնիր, այն ժամանակ խալիֆը կհարցնի. «Ո՞վ հանձն կառնի բռնել պառավին»: Ու եթե հարցնի քեզ, «Ինչո՞ւ դու նրան չբռնեցիր», ասա. «Չեմ ճանաչում նրան, Հասան Շումանին պարտավորեցրու բռնել նրան»: Ու եթե խալիֆն ինձ պարտավորեցնի, ես պառավին կբռնեմ»:

Եվ նրանք գիշերը քնեցին, իսկ առավոտյան վեր կացան ու գնացին խալիֆի դիվանը և գետինը համբուրեցին նրա առջև, ու խալիֆը հարցրեց. «Ո՞վ աջակողմյան պետ Ահմեդ ո՞ւր է պառավը»: Եվ Ահմեդ ադ-Դանաֆը օձիք թափ տվեց: «Ինչո՞ւ»,— հարցրեց խալիֆը, և Ահմեդը պատասխանեց. «Ես նրան չեմ ճանաչում, բայց Շումանին պարտավորեցրու բռնել նրան, Շումանը ճանաչում է թե՛ նրան, թե՛ նրա աղջկան, ու ասում է, որ պառավն այդ օյինները սարքել է ոչ թե ազահուլթյունից, այլ որպեսզի իր ու աղջկա ճարտարությունը ցույց տա, և որպեսզի դու նրան իր մարդու ոռճիկը տաս, իսկ աղջկան այնքան ոռճիկ, ինչքան հայրն էր ստանում»:

Եվ Շումանը խնդրեց, որ Դալիլային շսպանեն, երբ ինքը նրան բերի գիվան: Ու խալիֆը բացականչեց. «Երդվո՞ւմ եմ պապերիս կյանքով,

որ եթե պառավը վերադարձնի մարդկանց իրերը, նրա կյանքը կխնայեմ, ու նա Շումանի հովանավորության տակ կլինի»։— «Ո՛վ ուղղահավատների տեր ու տնօրեն, տուր ինձ, ուրեմն, նրա կյանքը բաշխելու նշանը՝ թաշկինակը»,— ասաց Շումանը, ու խալիֆն ասաց. «Նա քո հովանավորության տակ է»,— ու տվեց նրան պառավի կյանքը խնայելու նշանը՝ թաշկինակը։

Եվ Շումանը դուրս եկավ դիվանից ու գնաց Դալիլայի տան կողմը, ու երբ մոտեցավ նրա տանը, ձայն տվեց նրան։ Եվ Շումանին պատասխանեց պառավի աղջիկը՝ Զեյնաբը, և այն ժամանակ Շումանը հարցրեց. «Որտե՞ղ է մայրդ»։— «Վերևում»,— պատասխանեց Զեյնաբը։ Եվ Շումանն ասաց. «Ասա նրան, որ մարդկանց իրերը բերի ու գա գնանք խալիֆի մոտ։ Ես իր կյանքը բաշխելու թաշկինակն եմ բերել, ու եթե հոժար կամքով չգա, մեղքն իր վիզը»։

Եվ Դալիլան իջավ ցած, թաշկինակը կապեց վիզն ու մարդկանց իրերը բարձելով իշապանի էշին ու բեդվինի ձիուն, տվեց Շումանին։ Եվ Շումանն ասաց նրան. «Մնաց իմ ավագի ու նրա մարդկանց շորերը»։ «Երդվում եմ մեծագործի անունով, նրանց ե՛ս շեմ տկորացրել»,— պատասխանեց Դալիլան, ու Շումանն ասաց. «Ճիշտ ես ասում, դա քո աղջկա՝ Զեյնաբի, օյինն է և դա այն ծառայությունն է, որ նա արել է բեդ»։

Եվ նա հեռացավ այդտեղից, ու պառավն էլ նրա հետ, և նրանք գնացին հասան խալիֆի դիվանը։ Ու Հասանն առաջ եկավ և խալիֆին ցույց տվեց բերած իրերն ու Դալիլային տարավ մոտեցրեց խալիֆին։ Ու երբ խալիֆը պառավին տեսավ, հրամայեց նրան դցել արյան գորգի վրա։ «Ո՛վ Շուման, ես քո պաշտպանության տակ եմ»,— գոչեց Դալիլան։ Եվ Շումանը ոտքի ելավ ու համբուրեց խալիֆի ձեռքը և ասաց. «Ներիր, դու սրա կյանքն իրեն ես բաշխել»։— «Այս պառավը քո մեծահոգության պաշտպանության տակ է»,— ասաց խալիֆը։— Մոտ արի, պառավ, անունդ ի՞նչ է»։— «Իմ անունը Դալիլա է»,— պատասխանեց պառավը։ Ու խալիֆն ասաց. «Իսկապես որ դու խորամանկներից խորամանկ ես, ու խարդախ»։ Ու պառավին անվանեցին Դալիլա-Խորամանկը «Ինչո՞ւ ես դու այս օյինները խաղացել ու հալումաշ արել մեր սրտերը»,— հարցրեց հետո խալիֆը։ Եվ պառավը պատասխանեց. «Ես այդ օյինները ազահությունից շեմ սարքել, որ ուրիշների ապրանքին ահրանամ. լսել էի, թե ինչ տեսակ խորամանկություններ է բանեցնում Ահմեդ ադ-Դանաֆը Բաղդադում, ու թե ինչ օյիններ է օտարում Հառան

Շումանը, ես էլ ինձուինձ ասացի մի օր. «Նրանք անում են, ես էլ անեմ»: Բայց ես մաքրկանց ունեցվածքն արգեն իրենց եմ վերադարձրել»:

Եվ այդ ժամանակ իշապանը վեր կացավ ու ասաց. «Ալլահի օրենքն է իմ ու այդ պառավի միջև: Բավական չէր, որ էշս վերցրեց, մահրիրեցի սափրիչին էլ լարեց իմ դեմ, որը երկու ակոսս քաշեց, երկու անգամ քունքերս դաղեց»:

Եվ խալիֆը հրամայեց հարյուր դինար իշապանին տալ, հարյուր էլ ներկարարին ու ասաց. «Գնա, նորից բաց արա քո ներկատունը»: Ու նրանք խալիֆին ամենայն բարիք կամեցան ու գնացին, իսկ բեդվինը վերցրեց իր շորերն ու ձին և ասաց. «Այս բանից հետո ինձ համար Բաղդադ մտնել ու մեղրով կարկանդակ ուտել չկա»:

Եվ ամեն ոք վերցրեց իրեն պատկանածը, ու բոլորը ցրվեցին, և այդ ժամանակ խալիֆն այսպես խոսեց. «Դալիլա՛, սրտիդ ուզածն ասա՛ տամ»: Ու Դալիլան ասաց. «Հայրս քեզ մոտ գրագիր էր, ես էլ փոստային աղավիններ էի վարժեցնում, իսկ ամուսինս մի գլխավոր էր Բաղդադում: Ու հիմա ես ուզում եմ, որ մարդուս ոռճիկն ինձ տաս, աղջիկս էլ ուզում է, որ հոր ոռճիկի շափ փող ստանա»: Եվ խալիֆը տվեց նրանց, ինչ որ ուզում էին, իսկ Դալիլան ասաց. «Ուզում եմ, որ դու ինձ խանի դոնապան նշանակես»:

Իսկ խալիֆը մի խան էր կառուցել՝ երեք շինությամբ, որ այնտեղ վաճառականներ ապրեն: Եվ նա քառասուն ստրուկ և քառասուն շուն էր ուղարկել խան: Շները խալիֆը բերել էր Սուլեյմանիեի կառավարչի մոտից, երբ սրան հեռացրել էր պաշտոնից, և շների համար վզնոցներ էր սարքել տվել: Իսկ խանի մեջ մի ստրուկ խոհարար կար, որ ստրուկների համար կերակուր էր պատրաստում ու շներին էլ միա էր տալիս: «Ով Դալիլա, — ասաց խալիֆը, — ես քեզ նշանակում եմ խանի վերակացու, ու եթե այնտեղից մի բան կորչի, քեզանից կպահանջեն»: — «Լավ, — ասաց Դալիլան, — միայն թե աղջկաս այն սենյակը տուր, որը խանի դարպասի վերևն է: Այնտեղ մի ընդարձակ հարթակ կա, իսկ աղունիկներ կարելի է լավ վարժեցնել միայն ընդարձակ տեղում»:

Ու խալիֆը հրամայեց անել այդպես: Եվ պառավի աղջիկն ինչ ուներ-չունեք տեղափոխեց խանի դարպասի վերևը գտնվող կացարանը, իսկ Դալիլան վարժեցնելու համար վերցրեց քառասուն թուշուն, որ նամակներ էին տանում ու բերում: Ինչ վերաբերում է Զեյնաբին, ապանա իր կացարանում կախեց այն քառասուն հագուստն ու Ահմեդ ադ-Դանաֆի շորերը:

Իսկ Դալիլային խալիֆը քառասուն ստրուկների գլխավոր դարձրեց

ու նրանց հրամայեց, որ լսեն նրան: Եվ Գալիլայն խանի դարպասից դուրս մի տեղ շինեց իր համար, որ ապրի այնտեղ, ու սկսեց ամեն օր գնալ դիվան՝ գուցե թե խալիֆը որևէ երկիր նամակ ուղարկելու կարիք ունենա, և մինչև օրվա վերջը դիվանից չէր հեռանում: Եվ այն քառասուն սարսկը բտրի կանգնած հսկում էին խանը, իսկ երբ գիշերը վրա էր հասնում, Գալիլան շներին բաց էր թողնում, որ պահպանեն խանը:

Ահա թե Գալիլա-Խորամանկին ինչևր պատահեցին Բաղդադում:

Ինչ վերաբերում է կահիրեցի Ալի աղ-Ջեյրանկին, նա ա դա մի ճարպիկ մարդ էր, որն ապրում էր Կահիրեում, երբ դիվանի պետը կգալտացի Սալախ անունով մեկն էր, որը քառասուն մերձավոր ուներ: Ու կգալտացի Սալախի մերձավորները ճարպիկ Ալիին բռնելու համար լուկարդներ էին լարում և կարծում էին, թե նա ծուղակը կընկնի, և այդպես փնտրում էին նրան, ու ամեն անգամ պարզվում էր, որ նա փախել է, ինչպես կփախչի սնդիկը, ու դրա համար էլ «Կահիրեի սնդիկ» անունն էին տվել նրան:

Եվ ահա օրերից մի օր, ճարպիկ Ալին իր մերձավորների հետ նրստած էր գորանոցում, և նրա կուրծքը ճնշվում էր ու սիրտը ճմլվում: Ու երբ գորանոցի պետը տեսավ, որ Ալին նստել է մոռյլ դեմքով, ասաց. «Խնչ է եղել քեզ, ո՞վ ավագ: Թե սիրտդ նեղվում է, գնա մի քիչ ման արի Կահիրեում. շուկաներում որ շրջես, հոգսերդ կփարատվեն»: Եվ Ալին վեր կացավ ու դուրս եկավ Կահիրեում մի քիչ շրջելու, բայց նրա թախիծն ու հոգսն ավելի մեծացան:

Եվ գինետան մոտով անցնելիս, նա ասաց ինքն իրեն. «Մտնեմ ու մի լավ խմեմ»: Եվ ներս մտավ նա ու տեսավ, որ այնտեղ յոթ շարք մարդ է նստած: «Ո՞վ գինեվաճառ,— ասաց Ալին,— ես մեն-մենակ պիտի նստեմ»: Եվ գինեվաճառը նրան մի սենյակում մենակ նստեցրեց ու գինի տվեց, և Ալին խմեց այնքան, մինչև որ աշխարհից վերացավ:

Իսկ հետո նա դուրս եկավ գինետանից ու սկսեց Կահիրեում ման գալ, և քաղաքի փողոցներում ու հրապարակներում այնքան ման եկավ, մինչև որ հասավ Կարմիր փողոց, և ամեն տեղ ճամփան նրա առաջ բացվում էր, որովհետև մարդիկ վախենում էին նրանից ու հեռու փախչում: Ու մեկ էլ Ալին հետ նայեց ու տեսավ մի ջրկիր, որը սափորով ջուր էր տալիս մարդկանց ու գոչում. «Ո՞վ ալլահին ապավինող... Չկա՞ ավելի անուշ խմիչք, քան քիչմիչի ջուրն է, չկա՞ ավելի հաճելի մոտիկություն, քան սիրեցյալի մոտիկությունն է, և ոչ ոք ավելի պատվավոր տեղ չի նստում, բացի խելացի մարդուց»:— «Մոտ եկ, ջուր տուր ինձ»,— ասաց Ալին: Եվ ջրկիրը նայեց նրան և սափորը մեկնեց, որ Ալին խմի, և Ալին նայեց

սափորի մեջ ու ցնցեց, և ջուրը թափեց գետին: «Չե՞ս խմելու», — հարցրեց նրան ջրկիրը, և Ալին պատասխանեց. «Ջուր տուր ինձ»: Ու ջրկիրը նորից լցրեց սափորը և Ալին վերցրեց, ցնցեց սափորն ու խմիչքը թափեց գետին, և երրորդ անգամ էլ նույն բանն արեց: Ու ջրկիրն ասաց. «Թե շես խմելու, ես զնամ»: — «Ջուր տուր ինձ», — ասաց Ալին: Եվ ջրկիրը լցրեց սափորն ու տվեց Ալիին, և Ալին վերցրեց ու խմեց և հետո մի գինար տվեց ջրկիրին: Ու մեկ էլ ջրկիրը նայեց Ալիին և, նրան շնչին մարդ համարելով, ասաց. «Ալլա՛հը քեզ պարգև տա, ալլա՛հը քեզ հարուստություն տա, ո՛վ երիտասարդ: Փոքր մարդ կա, որ մյուսների համար մեծ մարդ է երևում»:

Եվ ճարպիկ Ալին մոտեցավ ջրկիրին ու բռնեց նրա շորից և մի թանկարժեք դաշույն հանեց, ինչպես այն մարդը, որի մասին այսպիսի մի երկու ոտանավոր է հորինված.

Գե՛, խփիր ամուր դաշույնով հիմա, էլ մի վախեցիր,
Սարսափելի է աշխարհում միայն զայրութիւն արարչի:
Խայտառակ բանից հեռու մնա ու երբեք մի լինի
Առանց հատկության, որը տրված է հենց ազնիվներին:

«Ո՛վ ծերուկ, — ասաց Ալին, — խելքը դլխին մի բան ասա ինձ: Ինչքան էլ բարձր լինի քո ակի գինը, հազիվ երկու դիրհեմի հասնի, իսկ այն երեք սափոր ջուրը, որ ես թափեցի գետին, մի թաթլ հազիվ լինի»: — «Այո», — պատասխանեց ջրկիրը: Եվ Ալին ասաց. «Իսկ ես քեզ մի ոսկի դինար տվի, էլ ինչո՞ւ ես ինձ ստորացնում: Ինձանից քաջ ու ազնիվ մարդ տեսե՞լ ես»: — «Քեզանից սովելի քաջ ու ազնիվ մարդ տեսել եմ. քանի դեռ կանայք երեխա են բերում, աշխարհի երեսին նրա պես քաջ ու ազնիվ մարդ չի լինի», — պատասխանեց ջրկիրը: «Այդ ո՞վ է, որ ինձանից քաջ ու ազնիվ է», — հարցրեց Ալին, ու ջրկիրն ասաց. «Իմացիր սր, գարմանալի բան պատահեց ինձ: Իմ հայրը Կահիրեում կումերով ջուր ծախողների մեծն էր, և նա մեռավ ու ինձ թողեց հինգ ուղա և մի ջորի ու մի խանութ և մի տուն, բայց չէ՞ որ ազքատը երբեք անկարիք չի լինում, իսկ երբ կարիք չի ունենում, մեռնում է: Ու ես ինքս ինձ ասացի. «Գնամ Հեջազ»: Եվ կազմեցի ուղտերի մի քարափան, և այնքան փող պարտք արեցի, մինչև որ հասցրի հիծդ հարյուր գինարի: Ու այդ բոլորը կորցրի, երբ փնում էի Մեքքա հաջի դառնալու¹: Ու ես ինձ ասացի. «Երբ Կա-

¹ Հաջի դառնալ — մուսուլմանների համար պարտադիր մի ուխտողնացություն է դեպի Մեքքա:

հիրե վերագառնեամ, մարդիկ ինձ բանա կնստեցնեն պարտքերիս համար», ու Սիրիա գնացող մի քարավանի հետ ճամփա ընկա ու գնացի հառա Հալեպ, իսկ Հալեպից ճանապարհվեցի Բաղդադ: Ու ես հարցրի, թե որտե՞ղ է Բաղդադի ջրկիրների մեծը, ու ինձ ցույց տվեցին նրա տեղը: Եվ ես մտա նրա տուն ու մի ֆաթիհա կարդացի, և նա հարցուփորձ արեց իմ դրությունից, ու ես պատմեցի նրան ամեն բան, ինչ պատահել էր ինձ:

Եվ նա մի փոքր խանութ տվեց ինձ ու մի տիկ և ուրիշ պարագաներ ու ես ավաճի դարպասով անցա ու սկսեցի շրջել քաղաքում:

Ու մի անգամ սափորը տվեցի մի մարդու, որ ջուր խմի, և նա ինձ ասաց. «Ես բան չեմ կերել, որ ջուր խմեմ, այսօր ինձ մի ժլատ մարդ կանչեց տուն և երկու սափոր ջուր դրեց իմ առջև, ես էլ ասացի. «Ո՞վ դու գարշելու տղա, դու ինձ բան տվե՞լ ես ուտելու, որ ջուր ես դնում առաջս»: Դե, հեռու գնա, ջրկիր, սպասիր, մինչև մի բան ուտեմ, ու հետո արի ջուր տուր ինձ»:

Եվ ես մոտեցա մի ուրիշին և նա ինձ ասաց. «Ալլահը քեզ հասնի»: Ու ես մինչև կեսօր այդ վիճակում էի, և ոչ մի մարդ ինձ բան չտվեց:

Եվ ես ինձուինձ ասացի. «Ա՛խ, երանի թե Բաղդադ ոտք չդնեի»: Ու մեկ էլ տեսա, մարդիկ գլխապատառ վազում են, ու ես էլ վազեցի նրանց հետևից և տեսա մի փառահեղ թափոր, ուր մարդիկ զույգ-զույգ էին գնում, ու նրանց բոլորի գլխներին թասակներ ու շալմաներ, հագնեցին՝ բուռնուսներ ու թաղիքե բաճկոնակներ կաշին, ու նրանք պողպատե զրահներով էին ծածկված:

Եվ ես մի մարդու հարցրի. «Այս ո՞ւմ շքախումբն է»: Ու այդ մարդն ասաց ինձ, «Սա Ահմեդ ադ-Դանաֆ գլխավորի շքախումբն է» — «Ի՞նչ պաշտոն ունի այդ մարդը», — հարցրի ես, և ինձ ասացին. «Դիվանի պետըն է ու Բաղդադում մեծավոր է և ամբողջ ցամաքի հսկիչը, պահապանը: Ամեն ամիս խալիֆից նա հազար դինար փող է ստանում, ու նրա ամեն մի մերձավորն էլ՝ հարյուր դինար: Հասան Շումանն էլ է հազար դինար ստանում ու հիմա սրանք դիվանից զորանոց են գնում»: Ու մեկ էլ Ահմեդ ադ-Դանաֆն ինձ տեսավ ու ասաց. «Մոտ եկ, ջուր տուր խմեմ»: Ես սափորը լցրի ու տվեցի նրան, և նա ոտափորը ցնցեց ու ջուրը թափեց գետին, երկրորդ ու երրորդ անգամ էլ այդպես արեց, իսկ չորրորդ անգամ մի կում խմեց, ոնց որ դու, և հարցրեց. «Որտեղացի՞ ես, ո՞վ ջրկիր»: Ու ես պատասխանեցի. «Կահիրեցի եմ»: — «Թող ալլահը բարին տա Կահիրեին ու նրա բնակիչներին, — ասաց Ահմեդ ադ-

Դանաֆը:— Իսկ ի՞նչն է քեզ բերել այս քաղաքը: Եվ ես պատմեցի նրան զլիս եկածն ու հասկացրի, որ պարտքերի տակ եմ ընկել ու փախչում եմ պարտքերիցս ու կարիքից: Եվ Ահմեդ ադ-Դանաֆը բացականչեց. «Բարո՛վ ես եկել մեր քաղաքը»: Ու հետո ինձ հինգ դինար տվեց ու իր զինվորներին ասաց. «Ալլա՛հի սիրուն, բարություն արեք այս մարդուն»: Ու նրանցից ամեն մեկը ինձ մի դինար տվեց, և Ահմեդ ադ-Դանաֆն ասաց ինձ. «Մ՛վ ծերունի, քանի դու Բաղդադում ես, ամեն ջուր տալիս մեզանից այնքան կստանաս, ինչքան հիմա ստացար»:

Եվ ես սկսեցի ամեն օր գնալ նրանց մոտ, ու բարիքն այդ մարդկանցից սկսեց աղբյուրի պես հոսել իմ դրպանը: Եվ մի քանի օր հետո հաշվեցի, ինչ որ նրանցից վաստակել էի, ու տեսա, որ հազար դինար փող է հավաքվել: Եվ ինքս ինձ ասացի. «Հիմա լավ կանես գնաս քո հայրենի երկիրը»: Ու ես գնացի զորանոց և Ահմեդի ձեռքերը համբուրեցի, ու նա ինձ հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»:— «Մտքիս դրել եմ գնալ իմ երկիրը,— ասացի ու արտասանեցի այս երկու բեյթը.

Եկվորի մնալն ուրիշի երկրում
Քամուց կառուցված պալատ է, կասեմ:
Ինչ նա շինել է, քամին կտանի,
Եվ արդ, հեա դառնալ եկվորը վճռեց:

Մի քարավան Կահիրե է գնում, ես էլ ուզում եմ վերադառնալ ընտանիքիս մոտ»,— ասացի ես Ահմեդին: Ու նա ինձ մի ջորի և հարյուր դինար տվեց ու ասաց. «Մենք քեզ մի հանձնարարություն ենք ուզում տալ, ո՛վ շեյխ: Կահիրեի բնակիչներին լա՛վ ես ճանաչում»: «Այո»,— պատասխանեցի ես, և նա ասաց. «Վերցրու այս նամակն ու հասցրու կահիրեցի Ալի Զեյբակին և ասա. «Քո մեծավորը խաղաղություն է ցանկանում քեզ, և հիմա նա ծառայում է խալիֆին»: Ու ես վերցրի նամակն ու ճամփա ընկա: Գնացի, գնացի, մինչև որ հասա Կահիրե: Ու հենց որ տեղ հասա, պարտատերերն ինձ տեսան, ու ես բոլոր պարտքերս տվեցի, իսկ հետո դարձա ջրկիր, և նամակը շտարա տիրոջը տալու, քանի որ կահիրեցի Ալի Զեյբակի զորանոցի տեղը չեմ իմանում»:

Եվ այն ժամանակ Ալին ասաց ջրկիրին. «Մ՛վ ծերունի, հանգստացրու հոգիդ և աչքերդ զովացրու: Կահիրեցի Ալի Զեյբակը ես եմ որ կամ, ես եմ Ահմեդ ադ-Դանաֆ պետի սուրբին կտրիճը: Տո՛ւր նամակը»:

Եվ ջրկիրը նամակը տվեց Ալի Զեյբակին, ու երբ Ալին բաց արեց նամակը, ու աչքի անցկացրեց, տեսավ, որ այնտեղ այսպիսի երկու բեյթ է գրված.

Քեզ եմ գրում ես, սիրունների զարդ,
Քոզ քամու թևով նամակս թռչի
Կարենայի թռչել, օդ կբարձրանայի,
Բայց ո՞նց թռչեմ ես թևերս կտրած:

Իսկ դրանից հետո՝ Ահմեդ ադ-Դանաֆից ողջուն նրա դավաճաններից ավագին՝ կահիրեցի Ալի Զեյբակին: Մենք տեղեկությունում ենք բեզ, որ ես հանգիստ չէի տալիս եգիպտացի Սալահ ադ-դինին ու նրա գլխին օջիններ էի սարքում, մինչև որ ողջ-ողջ թաղեցի և հիմա ինձ են ենթարկվում նրա բոլոր կտրիճները, որոնց մեջ է Ալի Քաթիֆ ալ-Ջամալը: Ես Բաղդադի մեծավոր եմ դարձել խալիֆի դիվանում, ու ինձ հանձնարարված է հսկել ու պահպանել երկրի ցամաքային մասը, ու լին լու հավատարիմ ես մեր կապած պայմանին, եկ ինձ մոտ: Միգուցե, Բաղդադում այնպիսի օջին խաղաս, որ խալիֆի մոտիկ մարդը դառնաս և դու էլ սկսես ծառայել նրա մոտ, և նա քեզ ոռճիկ կնշանակի ու աշխատավարձ կտա և քեզ համար զորանոց կշինի: Ահա թե նպատակս ինչ է: Եվ խաղաղություն ընդ բեզ»:

Ու երբ Ալին կարգաց վերջացրեց, համբուրեց նամակն ու դրեց գրված խին և բարի լուր բերելու համար ջրկիրին տասը դինար պարգևեց, իսկ հետո դնաց զորանոց ու մտավ իր կտրիճների մոտ և տեղեկություն տվեց գործի մասին, և ասաց. «Հանձնում եմ ձեզ միմյանց, իրար լավ կնայեք»: Եվ ապա նա հանեց իր վրայից, ինչ որ կար, հագավ թիկնոցըն ու դրեց թասակը, և վերցրեց պատյանը, որի մեջ քսանչորս կանգուն երկարություն ունեցող մի փայտե տեգ կար, ու դրա մասերը մեկը մյուսի մեջ էին մտնում: Եվ գլխավորն Ալիին ասաց. «Ո՞նց ես գնում, երբ գանձարանը դատարկ է»:— «Երբ Սիրիա հասնեմ, այնքան փող կուղարկեմ, որ բոլորիդ հերիք կանի»,— ասաց Ալին ու գնաց իր ճամփով:

Եվ նա գնաց հասավ ճամփա ընկած քարավանին և այնտեղ տեսավ վաճառականների գլխավորին ու նրա հետ էլ քառասուն վաճառականի, և վաճառականներն իրենց հակերը արդեն բարձել էին, իսկ գրված խավորի հակերը ընկած էին գետնին: Եվ Ալին տեսավ, որ քարավանի առաջնորդը սիրիացի մարդ է և ասում է ջորեպաններին. «Քոդ մեկն ու մեկն ինձ օգնի», բայց ջորեպանները միայն նախատում էին նրան ու հայհոյում:

Եվ Ալին ինքն իրեն ասաց. «Ինձ համար լավ կլինի, եթե ճամփա գնամ միայն այս առաջնորդի հետ»:

Իսկ Ալին մազ-մորուք շուներ և սիրուն էր: Եվ նա մոտեցավ առաջնորդին ու բարևեց, առաջնորդն էլ նրան ողջունեց ու հարցրեց. «Ի՞նչ եմ ուզում»: Եվ Ալին պատասխանեց. «Հորեղբա՛յր, տեսա, որ մենակ ես, իսկ բեռը քառասուն ջորու բեռ է: Ինչո՞ւ հետդ մարդ չես բերել, որ քեզ օգնեն»: — «Ո՛վ որդյակ,— պատասխանեց առաջնորդը,— երկու կրտսրի՞նք տղա վարձեցի և հագցրի նրանց, ու ամեն մեկի ծոցը երկու հարյուր դինար դրեցի, և նրանք ինձ օգնում էին, մինչև որ հասանք մենաստան, իսկ հետո փախան»: — «Իսկ ո՞ւր եք գնում», — հարցրեց Ալին: Եվ առաջնորդը պատասխանեց. «Հալեպ»: Ալին այդ որ լսեց, ասաց. «Իսկ քեզ կօգնե՞մ»:

Ու նրանք բարձեցին հակերն ու գնացին: Վաճառականների գլխավորն էլ նստեց ջորին ու դնաց, և քարավանի սիրիացի առաջնորդն ուրախացավ Ալիի դալու համար ու սիրեց նրան:

Եվ վրա հասավ գիշերն, ու մարդիկ դադար առան մի տեղ, կերան ու խմեցին, իսկ երբ քնելու ժամն եկավ, Ալին պառկեց գետնին և քնած ձեացավ: Եվ առաջնորդը պառկեց նրան մոտիկ: Ալին այդ որ տեսավ, տեղից ելավ ու գնաց և վաճառականի վրանի դռան մոտ նստեց: Եվ առաջնորդը շուռ եկավ ու ցանկացավ Ալիին գիրկն առնել, բայց տեղում չգտավ նրան, և ինքն իրեն խոսեց. «Գուցե մեկն ու մեկին խոստացել է, ու այդ մարդը պառկե՞լ է նրա հետ, բայց ես ավելի արժանավոր եմ և մյուս գիշեր ես նրան կառնեմ ծոցս»:

Ինչ վերաբերում է Ալիին, ապա նա վաճառականի վրանի մուտքի մոտ այնքան նստեց, մինչև որ լուսադեմ եղավ: Այդ ժամանակ նա դնաց ու պառկեց առաջնորդի կողքին, իսկ երբ սա արթնացավ, Ալիին տեսավ ու ինքն իրեն խոսեց. «Սրան որ հարցնեմ, թե՛ որտե՞ղ էիր, կթողնի ու կհեռանա»:

Եվ Ալին առաջնորդին խաբեց այնքան, մինչև որ քարավանը մոտեցավ մի անձավի, իսկ այդ քարանձավում մի որջ կար, որտեղ մի ամեհի առյուծ էր ապրում: Եվ ամեն անգամ, երբ այդտեղով քարավան էր անցնում, ճամփորդներն իրար մեջ վիճակ էին գցում, և ում որ վիճակ էր ընկնում, նրան էլ նետում էին առյուծի առջև:

Եվ այդ օրն էլ վիճակ գցեցին, ու վիճակն ընկավ վաճառականների գլխավորին: Եվ հանկարծ առյուծը նրանց ճամփան կտրեց ու մի լավ նայեց նրան, ով այդ քարավանից իրեն բաժին էր ընկնելու:

Եվ վաճառականների գլխավորը մեծագույն վշտի մեջ ընկավ ու

քարավանի առաջնորդին ասաց. «Ալլահը խափանի քո բախտն ու ճամփորդությունը: Բայց ես կտակ եմ անում, որ երբ մեռնեմ, հակերս տանես տաս երեխաներիս»:— «Այս ի՞նչ բան է»,— հարցրեց ճարպիկ Ալին: Ու նրան ամեն ինչ պատմեցին, և նա բացականչեց. «Մ՛նց շեք ամաչում, որ փախչում եք տափաստանի կատվից: Պարտավորվում եմ ձեր աչքի առաջ այդ գառանին սպանել»:

Եվ առաջնորդը գնաց վաճառականի մոտ ու պատմեց նրան այս բոլորը, և վաճառականն ասաց. «Եթե նա առյուծին սպանի, ես նրան հազար դինար կտամ»: Մյուս վաճառականներն էլ ասացին. «Մենք էլ փող կտանք նրան»:

Եվ այդ ժամանակ Ալին հանեց թիկնոցը, ու պարզվեց, որ դրա տակ պողպատե գնձ ու զրահ կա, և Ալին դուրս քաշեց պողպատե սուրն ու մեն-մենակ գնաց առյուծի դեմ ու գոռաց նրա վրա:

Եվ առյուծը հարձակվեց Ալիի վրա: Ու կահիրեցի Ալին սրով այնպես զարկեց գառանի աչքերի մեջտեղը, որ առյուծին երկու կես արեց, իսկ առաջնորդն ու վաճառականները նրան էին նայում: Եվ Ալին առաջնորդին ասաց. «Մի վախենա, ո՛վ հորեղբայր»: Եվ առաջնորդը բացականչեց. «Զավա՛կս, հիմա ես քո ծառան դարձա»: Իսկ վաճառականը վեր կացավ, գրկեց Ալիին և համբուրեց աչքերի արանքն ու հազար դինար տվեց նրան, և վաճառականներից ամեն մեկն Ալիին քսան դինար ավեց: Եվ Ալին այդ բոլոր փողերը պահ տվեց վաճառականին:

Եվ նրանք մինչև սուավոտ քնեցին, իսկ առավոտն ուղևորվեցին Բաղդադ, և մոտեցան նրանք Առյուծների որջին ու Շնեթի հովտին: Եվ հանկարծ պարզվեց, որ այդ հովտում մի բեղվին կա՝ անհնազանդ ու ճամփա կտրող, ու նրա հետ ցեղակիցների մի ջոկատ կա:

Եվ նա հարձակվեց ճամփորդների վրա, ու մարդիկ դեսուզեն փախան: Եվ վաճառականը դռչեց. «Կորա՛ն իմ փողերը»: Ու մեկ էլ մոտեցավ Ալին, որ զանգակներով զարդարված մի մորթի էր հագել: Եվ Ալին հանեց իր տեգն ու դրա մասերն իրար միացրեց, իսկ հետո բեղվինի ձիերից մեկը ծածուկ վերցրեց ու հեծավ ու բեղվինին ասաց. «Նիզակդ վերցրու և դուրս արի իմ դեմ»: Եվ Ալին թափ ավեց զանգակները: Եվ բեղվինի ձին դրանց ձայնից նետվեց մի կողմ, իսկ Ալին խփեց բեղվինի տեգին ու կոտրեց, և նրա վզին զարկելով, դուխը թոցրեց:

Ու բեղվինի մարդիկ այդ բանը տեսան և խմբվեցին ու վրա պրծան Ալիին: Եվ Ալին դռչեց. «Ալլահը մե՛ծ է», ու հարձակվեց նրանց վրա ու խփեց ջարդեց նրանց, և բեղվինի մարդիկ փախուստի դիմեցին:

Իսկ հետո Ալին բեղվինի գլուխը հանեց նիզակի ծայրին, և վաճառականները հարզանք ու պատիվ մատուցեցին նրան: Եվ քարավանը շարունակեց իր ճամփան, մինչև որ հասավ Բաղդադ: Եվ ճարպիկ Ալին իր փողն ուզեց վաճառականից, ու վաճառականը տվեց նրա փողը: Եվ Ալին այդ փողը հանձնեց քարավանի առաջնորդին ու ասաց. «Երբ գնաս Կահիրե, զորանոցիս տեղն իմացիր ու այս փողը տուր զորանոցի պետին»:

Եվ այդպես Ալին անցկացրեց գիշերը, իսկ առավոտյան դուրս եկավ քաղաք ու ման եկավ, հարցնելով, թե որտեղ է Ահմեդ ադ-Գանաֆի զորանոցը, բայց ոչ ոք զորանոցի տեղը ցույց չտվեց:

Եվ Ալին գնաց, գնաց, մինչև որ հասավ Սասանեցման հրապարակ և, տեսավ խաղացող երեխաներին, որոնց մեջ Ահմեդ ալ-Լաքիթ անունով մի տղա կար, և Ալին ինքն իրեն ասաց. «Միայն երեխաներից մի բան կիմանամ, թե չէ մեծերը չեն ասի»:

Եվ Ալին շուրջը նայեց ու տեսավ քաղցրեղեն ծախողին, և բաղջրավենիք առավ նրանից, իսկ հետո ձայն տվեց երեխաներին: Ու հանկարծ Ահմեդ ալ-Լաքիթը նրանից հեռու քշեց մյուսներին, իսկ ինքը մոտեցավ ու Ալիին հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»: Եվ Ալին պատասխանեց. «Ես մի երեխա ունեի, և նա մեռավ, ու երազումս տեսա, որ նա անուշ բան է ուզում, ու հիմա անուշ բան առա և ուզում եմ ամեն մեկիդ մի կտոր տալ»: Եվ նա մի կտոր տվեց Ահմեդ ալ-Լաքիթին: Ու տղան նայեց քաղցրավենիքին և տեսավ, որ դրան մի դինար է կպած, ու Ալիին ասաց. «Հեռացի՛ր, ես այդքան ղզվելի չեմ, իմ մասին ուրիշներին հարցրու»: Եվ Ալին նրան ասաց. «Ո՛վ զավակս, միայն ճարպիկն է վարձատրություն տալիս ու միայն ճարպիկն է վարձատրություն վերցնում: Ամբողջ քաղաքը ման եմ եկել ու փնտրել եմ Ահմեդ ալ-Գանաֆի զորանոցը, բայց դրա տեղը ցույց տվող չի եղել: Այս մի դինարը քո վարձն է, եթե դու Ահմեդ ադ-Գանաֆի զորանոցի տեղն ինձ ցույց տաս»:— «Ես կվազեմ քո առջևից,— ասաց Ահմեդը,— իսկ դու իմ հետևից, ու երբ մոտենամ զորանոցին, ոտքովս մի քար կձանկեմ ու կշարտեմ դարպասի կողմը, և դու կիմանաս, որ այ դա զորանոցինն է»:

Եվ տղան վազեց առաջ, Ալին էլ նրա հետևից, մինչև որ տղան ոտքով մի քար ձանկեց ու նետեց զորանոցի դարպասի կողմը, և Ալին իմացավ զորանոցի տեղն ու բռնեց տղային և ուզում էր դինարը խլել նրանից, բայց չկարողացավ: Ալին այս որ տեսավ, ասաց տղային. «Գնա, դու արժանի ես այդ պարգևին, որովհետև ճարպիկ ես, խելքդ

տեղն է ու քաջ ես: Եթե այլահը կամենա, խալիֆի գլխավոր եղա թե չէ, քեզ իմ կտրիճներից մեկը կդարձնեմ»:

Եվ տղան գնաց, իսկ եթե կահիրեցի Ալի Զեյթակից հարցնեք, ապա նա մոտեցավ զորանոցին ու դարպասը թակեց, և Ահմեդ ադ-Պանաֆն ասաց. «Մ'վ հսկիչ, դարպասը բաց արա, դա կահիրեցի Ալի Զեյթակի թակոցն է»: Եվ հսկիչը դարպասը բացեց, ու Ալին մտավ Ահմեդ ադ-Պանաֆի մոտ ու սա ողջունեց նրան և գրկաբաց ընդունեց, և Ահմեդին ենթակա բառասուն հոգին նույնպես բարևեցին Ալիին: Իսկ հետո Ահմեդ ադ-Պանաֆը Ալիին շքեղ շորեր հագցրեց ու ասաց. «Երբ խալիֆն ինձ իր դիվանում պետ դարձրեց, նա հագցրեց իմ կտրիճներին ու ես էլ այս շորերը պահեցի քեզ համար»: Եվ ապա նրանք Ալիին պատվավոր տեղ նրստեցրին և ուտելիք բերեցին ու կերան, և խմիչք բերեցին ու խմեցին: Եվ նրանք խմեցին մինչև առավոտ, ու հետո Ահմեդ ադ-Պանաֆը կահիրեցի Ալի Զեյթակին ասաց. «Բաղդադում ման գալուց զգուշացիր, հակառակը կասեմ՝ նստիր քեզ համար այս զորանոցում»:— «Ինչո՞ւ,— հարցրեց Ալին,— մի՞թե ես եկել եմ, որ մեկուսանամ: Եկել եմ միայն նրա համար, որ ման գամ»:— «Զավակս,— ասաց Ահմեդ ադ-Պանաֆը,— մի՛ կարծիր, թե Բաղդադը Կահիրեի պես է: Սա Բաղդադն է, խալիֆի ապրելատեղը, այստեղ ճարպիկ մարդիկ շատ կան, ու ճարպկությունն այստեղ աճում է ինչպես բանջարեղենը՝ բոսսուանում»:

Եվ Ալին երեք օր մնաց զորանոցում, ու հետո Ահմեդ ադ-Պանաֆը կահիրեցի Ալիին ասաց. «Ես ուզում եմ քեզ խալիֆին մոտիկ մարդ դարձնել, որպեսզի նա քեզ ոռճիկ նշանակի»:— «Երբ ժամանակը գա»— պատասխանեց Ալին, և Ահմեդը հանգիստ թողեց նրան:

Օրերից մի օր Ալին նստած էր զորանոցում, ու նրա սիրտը ճմլվեց, և կուրծքը նեղվեց, և նա ինքն իրեն ասաց. «Գնա ման արի Բաղդադում, որ սիրտդ բացվի»:

Եվ դուրս եկավ նա ու սկսեց ման գալ փողոցից փողոց, և շուկայի կենտրոնում մի խանութ տեսավ ու մտավ այնտեղ, ու ճաշեց, և դուրս եկավ, որ ձեռքերը լվա, ու մեկ էլ պողպատե սրերով զինված ու թաղիք բաճկոնակներ հագած քառասուն ստրուկ տեսավ, և այդ ձիավոր ստրուկները գնում էին զույգ-զույգ, ու բոլորից հետո՝ Գալիլա-Խորամանկը շորուն հեծած, և նրա դիխին ոսկեղօծ մի սաղավարտ կար՝ վրան պողպատե մի դունդ, և Գալիլան դրան հարմար մի օղազրահ ուներ և այլ բաներ:

Իսկ Գալիլան գալիս էր դիվանից ու դնում էր խան, և նկատելով կահիրեցի Ալի Զեյթակին, պառավը մի լավ նայեց նրան ու տեսավ, որ

Ալին բոյով ու լենքով Ահմեդ ադ-Գանաֆի նման է, և հադին թիկնոց ու բուռնուս կա, և պողպատե սաղավարտ ունի գլխին ու նման բաներ, և քաջությունն ուղղակի թափվում է վրայից ու փայլում է նա, և այդ բոլորը նրա օգտին է խոսում, և ոչ թե նրա դեմ:

Եվ Գալիլան գնաց խան ու տեսավ իր աղջկան՝ Զեյնաբին, և վերցրեց ավազով տախտակն ու, երբ շաղ տվեց ավազը, ու դուրս եկավ, որ այդ մարդու անունը կահիրեցի Ալի է ու նա ավելի հաջողակ մարդ է, քան թե Գալիլան և ավելի բախտավոր, քան նրա դուստրը՝ Զեյնաբը:

«Մայրիկ, դու երբ բախտ բացեցիր այդ տախտակի վրա, աչքիդ ի՞նչ երևաց»,— հարցրեց Զեյնաբը, և Գալիլան ասաց. «էսօր մի ջահել տղա տեսա, որ Ահմեդ ադ-Գանաֆի նման էր, ու վախենում եմ, թե նա լսի, որ դու տկտրացրել ես Ահմեդ ադ-Գանաֆին ու նրա կտրիճներին, և դա խան ու գլխներին մի օյին բերի, որպեսզի իր մեծավորին նրա շատասուն թիկնապահի վրեժը լուծի: Ու ես կարծում եմ, որ այդ ջահելն Ահմեդ ադ-Գանաֆի զորանոցում է ապրում»:— «էդ ի՞նչ բան է,— ասաց նրան դուստրը՝ Զեյնաբը:— Կարծում եմ, որ դու ամեն բան ծանրութեթե ես արել, հր՞»:

Եվ ապա նա հաղավ իր շորերից ամենաշքեղն ու դուրս ելավ քաղաք՝ մի քիչ ման դալու: Ու երբ մարդիկ նրան տեսան, սկսեցին սիրահարվել նրան, իսկ նա և՛ խոստումներ տվեց, և՛ լսեց նրանց, և ծանր վիճակի մեջ գցեց մարդկանց: Եվ այսպես նա ման էր դալիս շուկայից շուկա, մինչև սր տեսավ կահիրեցի Ալիին, որը մոտենում էր նրան: Եվ այդ ժամանակ Զեյնաբը ուսով հրեց նրան ու շրջվեց և բացականչեց. «Թող ալլահը խելոք մարդկանց կյանքը երկարացնի: Ինչքան սիրուն է քո պատկերը»:— «Ո՞ւմն ես դու»,— հարցրեց Ալին, և Զեյնաբը պատասխանեց. «Հենց քեզ նման. մի պճնասերինը»:— «Դու ամուսնացած ես, թե՞ ամուսնացած չես»,— հարցրեց Ալին: «Ամուսնացած եմ»,— պատասխանեց Զեյնաբը, և Ալին հարցրեց. «Ի՞նձ մոտ, թե քեզ մոտ»:— «Ես վաճառականի աղջիկ եմ,— ասաց Զեյնաբը,— ու իմ ամուսինն էլ է վաճառական, ու ես մինչև այսօր կյանքումս տնից դուրս չեմ եկել: Բանն այն է, որ ես մի կերակուր եմ պատրաստել ու վճռեցի ուտել, բայց ախորժակս փախավ ու չկերա: Իսկ երբ քեզ տեսա, սերդ ընկավ սիրտս ու ես սիրեցի քեզ: Հնարավո՞ր բան է, որ կամենաս դարման անել սրտիս ցավին ու մի պատառ բան ուտես իմ տանը»:— «Հյուրասիրողին պիտի ականջ դնել»,— ասաց Ալին: Ու Զեյնաբն առաջ գնաց, և Ալին հետևեց նրան փողոցից փողոց, իսկ հետո նրա հեռեից գնալով, Ալին ինքն իրեն ասաց. «Ի՞նչ ես անում: Դու օտարակտն ես, իսկ ավան-

դուժյուններէ մեջ առված է. «Ով օտարութեան մեջ անառակութիւն անի, ալլահը նրան մոլորյալ կդարձնի»: Բայց նրան քնքուշ ձևով հեռացրու լեզանից»:

«Առ այս դիմարը, և այդ բանը թող մի ուրիշ անգամ լինի», — ասաց Ալին: Ու Զեյնաբը գոչեց. «Մեծագոր ալլահը վկա, անհնար է, որ հիմա դու հետս չգաս տուն, ու ես քեզ լավութիւն շանեմ»:

Եվ Ալին հետեեց նրան, մինչև որ կինը հասավ բարձր կամարներով տան դարպասին, և դարպասի նիզը գցած էր: «Բաց արա սողնակը», — ասաց Զեյնաբը: Եվ Ալին հարցրեց. «Իսկ ո՞ւր է բանալին»: — «Կորել է», — պատասխանեց Զեյնաբը, և Ալին ասաց, — «Ով առանց բանալի բաց անի փակը, հանցագործ է, ու պետք է որ դատավորը նրան մի լավ դատ տա, ու շեմ իմանում, թե առանց բանալի ինչպես բաց անեմ սողնակը»:

Ու Զեյնաբը բարձրացրեց երեսի իզարը, և Ալին նայեց նրան և սրբոյի խորքում հազար անգամ ախ քաշեց ու հառաչեց, իսկ հետո Զեյնաբը իզարը գցեց սողնակի վրա և Մուսայի* մոր անունները տվեց, և առանց բանալի բացեց դուռն ու անցավ առաջ, և Ալին հետեեց նրան ու այդտեղ պողպատե սրեր ու զենքեր տեսավ:

Ու Զեյնաբն իզարը հանեց ու նստեց Ալիի կողքին, և Ալին ինքն իրեն ասաց. «Ինչ որ ալլահը տալիս է, լրիվ վերցրու»: Եվ ապա նա լեքվեց կնոջ կողմը, որ թշից համբույր քաղի, բայց Զեյնաբը ձեռքը դրեց թշին ու ասաց. «Չկա հաճույքի ավելի լավ ժամանակ, քան գիշերը»:

Եվ նա մի սիռոց գցեց, որի վրա ուտելիք ու գինի կար, ու երկուսըն էլ կերան ու խմեցին, իսկ հետո Զեյնաբը դուրս գնաց ու կծով ջուր լերեց ջրհորից, լցրեց Ալիի ձեռքին, և Ալին լվաց ձեռքերը: Ու հենց այդ ժամանակ Զեյնաբը հանկարծ ծեծեց կուրծքն ու գոչեց. «Ամուսինս հակինթե քարով մի մատանի ունեի, որ գրավ էր դրել հինգ հարյուր դինարով, և ես մատս դրի, ու մատանին մատիս մեծ էր, ու ես նեղացրի մոմով, և երբ գույլը ջրհորն իջեցրի, մատանին ընկավ ջուրը: Դու երեսդ շուռ տուր դռան կողմը, ես հանվեմ ու իջնեմ ջրհորը, որ մատանին հանեմ»: — «Ինձ համար մեծ ամոթ է, որ դու իջնես ջրհորը, երբ ես կամ, — ասաց Ալին: — Ինձանից բացի, ոչ ոք չպիտի իջնի ջրհորը»:

Եվ նա հանեց շորերն ու պարանը կապեց մեջքին, և Զեյնաբը նրան իջեցրեց ջրհորը: Իսկ ջրհորում ջուր շատ կար, և Զեյնաբն ասաց նրան.

* Արաբներն այդպես են կոչել աստվածաշնչյան Մովսեսին, որի մորը դասել են սրբորի շարքը:

«Պարանը հերիք չի անում, բայց դու քանդիր կապն ու իջիր»: Եվ Ալին պարանն արձակեց ու իջավ ջրի մեջ ու մի քանի սաժեն ընկղմվեց, բայց ջրհորի հատակին շհասավ: Ինչ վերաբերում է Զեյնաբին, ապա նա իզարը քաշեց երեսին, Ալիի շորերը վերցրեց ու գնաց մոր մոտ և ասաց նրան. «Կահիրեցի Ալիին տկուրացրի ու գցեցի տանտիրոջ՝ էմիր Հասանի, ջրհորը, ու չի կարող պատահել, որ նա այնտեղից ազատվի»:

Իսկ թե տանտեր էմիր Հասանից հարցնեք, ապա նա այդ ժամանակ տանը չէր, դիվան էր գնացել, ու երբ տուն եկավ, տեսավ, որ տան դուռը բաց է, և ձիապանին ասաց. «Սողնակն ինչո՞ւ չես գցել»:— «Տե՛ր իմ, ինքս իմ ձեռքով եմ փակել»,— պատասխանեց ձիապանը: էմիրն այս որ լսեց, բացականչեց. «Գլո՛ւխս վկա, տունս դող է մտել»:

Եվ էմիր Հասանը տուն մտավ ու քունջուպուճախը լավ նայեց և ոչ ոքի չտեսավ, ու այդժամ ձիապանին ասաց. «Զուր լցրու կուժը, լվացում պիտի անեմ»: Ու ձիապանը դույլը վերցրեց, կախեց ջրհորն ու պարանը ձգեց և զգաց, որ դույլը ծանր է, նայեց ու տեսավ, որ դույլի մեջ ինչ-որ բան է նստել: Եվ նա դույլը նորից գցեց ջրհորն ու գոչեց «Ո՛վ տեր, ջրհորից իֆրիտ դուրս եկավ»: Ու էմիր Հասանը նրան ասաց. «Գնա ու շորս ֆակիհ՝ բեր՝ նրա գլխին Ղուրան կարդան, որ կորչի գնա»:

Ու երբ ձիապանը ֆակիհներին բերեց տուն, էմիր Հասանն ասաց նրանց. «Զրհորի շորս բոլորը կանգնեք ու իֆրիտի գլխին Ղուրան կարդացեք»: Իսկ հետո ստրուկն ու ձիապանը եկան և դույլն իջեցրին ջրհորը: Եվ կահիրեցի Ալին կոռչեց դույլից ու պահ մտավ դրա մեջ և, սպասելով, մինչև որ վեր քաշեն դույլը, մոտեցնեն ֆակիհներին, նա դուրս թռավ ու նստեց ֆակիհների մեջտեղը: Եվ սրանք սկսեցին մեկը մյուսի այտերին խփել ու բղավել. «Իֆրի՛տը, իֆրի՛տը»: Բայց էմիր Հասանը տեսավ, որ դա երիտասարդ մարդ է, ու հարցրեց. «Դու գո՞ղ ես»:— «Ոչ»,— պատասխանեց Ալին, և էմիրը հարցրեց. «Ինչո՞ւ ես իջել ջրհորը»:— «Քնած տեղս տակս կեղտոտեցի,— պատասխանեց Ալին,— և դուրս եկա, որ Տիգրիս գետում լողանամ մաքրվեմ, ու սուզվեցի, և ջուրն ինձ գետնի տակը քաշեց այնպես, որ ջրհորից դուրս եկա»:— «Ճիշտն ասա»,— պնդեց էմիր Հասանը: Եվ Ալին ամեն ինչ պատմեց նրան, ինչ որ եղել էր: Այդ ժամանակ էմիրը նրան հին շոր հագցրեց ու տնից դուրս տարավ:

Եվ Ալին գնաց Ահմեդ ադ-Դանաֆի դորանոցն ու պատմեց գլխին

1 Ֆակիհ (բառացի՝ օրենսգետ)— մուսուլմանական եգիպտոսում ուսուցչին այդպես էին անվանում:

և կածք, և Ահմեդն ասաց. «Ես քեզ շասացի՞, թե Բաղդադում այնպիսի կանայք կան, որ տղամարդկանց գլխին խաղ են խաղում»:— «Հանուն ամենաբարձրյալի, պատմիր տեսնենք, թե այդ ո՞նց է, որ դու Կահիրեի կտրիճների գլխավորն ես ու մի կին քեզ տկտրացնում է»,— ասաց Ալի Քաթֆ ալ-Ջամալը: Եվ Ալին իրեն շատ վատ զգաց այդ խոսքերից և սկսեց զղջալ: Եվ Ահմեդ ադ-Դանաֆը նրան ուրիշ շոր հագցրեց, իսկ հետո Հասան Շումանը հարցրեց Ալին. «Իսկ դու ճանաչո՞ւմ ես այդ կնոջը»:— «Ոչ»,— պատասխանեց Ալին, և Հասանն ասաց. «Կա-չկա Զեյնաբն է, խալիֆի խանի դոնապան Դալիլա-խորամանկի աղջիկը: Մի՞թե դու նրա ցանցն ես ընկել, ով Ալի»:— «Այո»,— պատասխանեց Ալին, ու Հասանն ասաց. «Ով Ալի, այդ կինը հանել ու տարել է քո մեծավորի շորերն ու նրա բոլոր կտրիճների շորերը»:— «Դա ձեզ համար խայտառակություն է»,— ասաց Ալին, և Հասանը հարցրեց. «Իսկ դու ի՞նչ ես ուզում անել»,— «Ես ուզում եմ ամուսնանալ նրա հետ»,— ասաց Ալին: «Այդ լինելու բան չէ: Մխիթարվիր առանց նրա»,— բացականչեց Հասանը և Ալին հարցրեց. «Իսկ ի՞նչ խորամանկություն անեմ, որ նրա հետ ամուսնանամ»:— «Բարով ես եկել... Եթե դու իմ ձեռքից ջուր խմես ու իմ դրոշակով առաջ գնաս, այնպես կանեմ, որ նրանից ուզածդ ստանաս»,— ասաց Շումանը: «Կավ»,— պատասխանեց Ալին, ու Հասանն ասաց. «Ով Ալի, շորերդ հանիր»: Եվ Ալին շորերը հանեց: Եվ Հասանը վերցրեց մի կաթսա, ձյութի պես մի բան եռացրեց դրա մեջ ու քսեց Ալիի մարմնին ու երեսին, և սա սև ստրուկի նման դարձավ: Եվ նա ներկեց Ալիի թշերն ու շրթունքները, և կարմիր ծարրով նախշեց աչքերն ու ծառայի շոր հագցրեց նրան, իսկ հետո սուփրա գցեց խորովածով ու գինով և ասաց. «Խանի մեջ մի սև ստրուկ-խոհարար կա, դու հիմա նրա նման դարձար, ու այդ խոհարարին շուկայում միայն միս ու կանաչի է պետք լինում: Գնա նրա մոտ ու ստրուկների լեզվով զգուշությամբ խոսիր հետը և ողջունի ու ասա նրան. «Վաղուց է, որ քեզ հետ մի բաժակ բուզա՛ չեմ խմել»: Եվ նա քեզ կասի. «Ես զբաղված մարդ եմ, քառասուն ստրուկ իմ վզին են, նրանց ճաշի համար կերակուր եմ պատրաստում, ընթրիքի համար կերակուր եմ պատրաստում, ու կերակրում եմ շներին, և սուփրա եմ գցում Դալիլայի ու մի սուփրա էլ նրա աղջկա՛ Զեյնաբի, համար»: Իսկ դու նրան ասա. «Գնանք խորոված ուտենք ու մի քիչ էլ բուզա խմենք»: Եվ նրա հետ արի զորանոց ու խմեցրու նրան, իսկ հետո հարցրու, թե ինչ ճաշեր է պատ-

1 Բուզա — խմիչք:

րաստում, քանի տեսակ, և հարցրու, թե շներին ինչ լափ է տալիս, ու խոհանոցի բանալիի մասին հարցրու, և մառանի բանալիի մասին, և նա քեզ կպատմի, չէ՞ որ մարդ զգաստ ժամանակ ինչ-որ թաքուն է պահում, խմած ժամանակ ամեն բան էլ պատմում է: Ու հետո բանջով շամեցրու նրան, շորերը հագիր, դտնտկները գոտիկդ խրի, կանաչիի զամբյուղը վերցրու, գնա շուկա, միս ու կանաչի առ: Հետո գնա խոհանոց ու մտիր մառան և ապուր եփիր, իսկ հետո լցրու ամանները, այդ ուտելիքը վերցրու և գնա խան՝ Դալիլայի մոտ, և կերակուրի մեջ բանջ լցրու, որ շամեցնես և՛ շներին, և՛ ստրուկներին, և՛ Դալիլային, և՛ նրա աղջկան՝ Զեյնաբին, իսկ հետո մտիր տուն ու այնտեղից բոլոր շորերը դուրս բեր: Իսկ եթե ուզում ես Զեյնաբի հետ ամուսնանալ, քառասուն նամակատար թռչուն վերցրու քեզ հետ»:

Եվ Ալին գուրս եկավ զորանոցից, ու գնաց խան և տեսավ ստրուկ-խոհարարին, և ողջունեց նրան ու ասաց. «Վաղուց է, որ քեզ հետ մի բաժակ բուզա շեմ խմել»: Եվ խոհարարը պատասխանեց. «Են զբաղված մարդ եմ, ստրուկների ու շների համար ճաշ եմ եփում»: Եվ Ալին տարավ նրան ու խմեցրեց և ուտելիքների մասին հարցուփորձ արեց, թե քանի տեսակ է լինում կերակուրը, և խոհարարը պատասխանեց. «Ամեն օր ճաշին հինգ խորտիկ, ու ընթրիքին հինգ խորտիկ, իսկ երեկ նրանք վեցերորդ խորտիկն էլ պահանջեցին՝ մեզրով բքինձ, ու յոթերորդը՝ նուան հատերից եփած ապուր»:—«Իսկ այդ որ պատրաստում ես, ի՞նչ կերակուր է»,— հարցրեց Ալին, և խոհարարն ասաց. «Ես կերակուր եմ տանում Զեյնաբին, իսկ հետո կերակուր եմ տանում Դալիլային ու իրիկնահաց եմ տալիս ստրուկներին, իսկ հետո իրիկվա կեր եմ տալիս շներին, և սրանցից ամեն մեկին լիուլի միս եմ տանում, իսկ ամեն մի շուն մի բաթլից պակաս չի ուտում»:

Եվ ճակատագիրն Ալիի խելքն այնպես շուռ տվեց, որ նա մոռացավ հարցնել բանալիների մասին: Եվ Ալին հանեց ստրուկի շորերն ու ինքը հագավ և, զամբյուղը վերցնելով, գնաց շուկա և միս ու կանաչի առավ, ու հետո վերադարձավ և մտավ խանի դարպասով ներս ու տեսավ Դալիլային, որը նստել էր և աչքերը շորս արած նայում էր ներս մտնողին ու դուրս գնացողին: Եվ Ալին տեսավ, որ քառասուն ստրուկն էլ զինված են: Ու նա սրտապնդեց իրեն, և երբ Դալիլան նրան տեսավ, ճտնաչեց ու գոռաց. «Հետ գնա, ով գողերի գլխավոր: Թե՞ ուզում ես իմ գլխին խաղ խաղալ էս խանի մեջ»:

Ու նեզրի կերպարանք առած կահիրեցի Ալին դարձավ Դալիլային ու ասաց. «Ի՞նչ ես ասում, ով դոնապանուհի»: Եվ Դալիլան բացական-

չեց. «Ի՞նչ օջին ես բերել ստրուկ-խոհարարի գլխին և ի՞նչ ես արել նրան: Սպանե՞լ ես, թե բանջով շամեցրել»:— «Ի՞նչ ստրուկ-խոհարար: Մի՞թե ինձանից բացի, ուրիշ ստրուկ-խոհարար կա՞»,— հարցրեց Ալին: «Սուտ ես ասում, դու կահիրեցի Ալի Զեյթակն ես»,— գոչեց պառավը: Եվ Ալին ստրուկների լեզվով ասաց նրան. «Մ՛ի դոնապանուհի, կահիրեցիները սպիտա՞կ են, թե սև: Զէ, ես այստեղ այլևս ծառայողը չեմ»: «Ի՞նչ եղավ քեզ, ո՞վ մեր հորեղբոր տղա»,— հարցրին նրան ստրուկները: Եվ Դալիլան ասաց. «Սա ձեր հորեղբոր տղան չէ, սա կահիրեցի Ալի Զեյթակն է ու, ինչպես երևում է, շամեցրել է ձեր հորեղբոր աղջին ու սպանել»:— «Սա մեր հորեղբոր տղան է՝ Սադալլահը, մեր խոհարարը»,— ասացին ստրուկները: Եվ Դալիլան գոչեց. «Սա ձեր հորեղբոր տղան չէ, սա կահիրեցի Ալին է, ու մարմինը ներկել է»:— «Ալին ո՞վ է, ես Սադալլահն եմ»,— ասաց Ալին:— «Ես մի քսուք ունեմ, բերեմ՝ փորձեմ»,— բացականչեց Դալիլան, և գնաց բերեց ինչ-որ քսուք և քսեց Ալիի ձեռքին ու սկսեց տրորել, բայց սևությունը չանցավ: Եվ ստրուկներն ասացին. «Թույլ տուր՝ թող գնա մեզ համաք ճաշ եփի»:— «Եթե սա ձեր հորեղբոր տղան է, ուրեմն կիմանա, թե դուք երեկ երեկոյան ինչ կերակուր եք պահանջել ու ամեն օր քանի տեսակ ճաշ է պատրաստում»,— ասաց Դալիլան: Եվ Ալիին հարցրին կերակուրների տեսակների ու երեկ երեկոյան իրենց պահանջածի մասին, և Ալին ասաց. «Ոսպ, բրինձ, ապուր, խաշած միս ու վարդաշրից պատրաստած խմիչք, վեցերորդ խորտիկը՝ մեղրով բրինձ, ու յոթերորդ խորտիկը՝ նուան հատիկներ, ընթրիքին էլ նույն բանը»:— «Ճի՛շտ ասաց մարդը»,— բացականչեցին ստրուկները: Ու Դալիլան ասաց. «Դե լավ, ներս գնացեք սրահեա, ու եթե սա իմանա խոհանոցի և մառանի տեղը, ճիշտ որ ձեր հորեղբոր տղան է. իսկ եթե չիմանա, սպանեք»:

Իսկ խոհարարն այնպես էր սովորեցրել կատվին, որ ամեն անգամ, երբ նա մտանում էր, կատուն կանգնում էր խոհանոցի դռան մոտ, իսկ հետո, երբ խոհարարը ներս էր մտնում, ցատկում էր ուսին: Ու երբ Ալին ներս մտավ ու կատուն տեսավ նրան, թռավ ուսին, և Ալին ցած գցեց նրան: Եվ կատուն նրանից առաջ ընկավ ու վազեց խոհանոց: Եվ Ալին նկատեց, որ կատուն կանգ առավ խոհանոցի դռան առաջ: Եվ Ալին հանեց բանալիներն ու տեսավ, որ մի բանալու վրա փեռուրների մնացորդներ կան, և գլխի ընկավ, որ դա խոհանոցի բանալին է, և նա բացեց խոհանոցի դուռն ու կանաչին դրեց տեղն ու գուրտ եկավ: Եվ կատուն նրանից առաջ ընկավ ու վազեց մառանի դռան կողմը, և Ալին կռահեց, որ դա մառանն է, ու բանալիները հանեց: Նա տեսավ մի բա-

նալի, որի վրա յուզի հետքեր կային, ու հասկացավ, որ դա մառանի բանալին է, և բաց արեց դուռը:

«Ով Դալիլա,— ասացին ստրուկները,— եթե նա օտար մարդ լիներ, շէր իմանա, թե որտեղ է խոհանոցը, և որտեղ՝ մառանը, և բանալիները շէր ջոկի: Սա մեր հորեղբոր տղա Սադալլահն է»։— «Խոհանոցի ու մառանի տեղերն իմացավ կատվի շնորհիվ ու բանալիներն էլ միմյանցից տարբերեց դրանց տեսքով, բայց նա ինձ խաբել չի կարող»,— բացականչեց Դալիլան: Իսկ Ալին մտավ խոհանոց ու կերակուրները սուտրաստեց, և ուտելիք տարավ Զեյնաբին, ու նրա սենյակում տեսավ իր շորերը: Իսկ հետո Ալին ուտելիք տարավ Դալիլային և ձաշ տվեց ստրուկներին ու կերակրեց շներին, և ընթրիքի ժամին էլ նույն բանն արեց:

Իսկ դարպասը բացվում ու փակվում էր միայն արևով՝ առավոտյան ու երեկոյան: Եվ Ալին դուրս եկավ փողոց ու գոռաց. «Ով բնակիչներ, ստրուկները քնած չեն և պահպանում են խանը, ու մենք բաց ենք թուղել շներին, և ով ներս մտնի, մեղքն իր վիզը»:

Եվ Ալին մի քիչ ուշացրեց շների իրիկվա կերն ու դրա մեջ թույն դրեց, և հետո տվեց նրանց, և երբ շները կերան, սատկեցին:

Եվ Ալին բանջով թմրեցրեց բոլոր ստրուկներին և Դալիլային ու նրա աղջկան՝ Զեյնաբին, իսկ հետո վեր կացավ, վերցրեց շորերն ու նամակատար աղավաղներին, և խանի դուռը բացեց ու դուրս եկավ և գնաց զորանոց:

Եվ Հասան Շումանը տեսավ նրան ու հարցրեց. «Ի՞նչ արեցիր»: Եվ Ալին պատմեց այն ամենը, ինչ եղել էր, և Շումանը գոզեց նրան: Իսկ հետո Ալին շորերը հանեց, և Շումանը մի խոտ եփեց ու դրանով լվաց Ալիի մարմինն ու երեսը, և Ալին դարձավ սպիտակ, ինչպես որ առաջ էր:

Եվ Ալին գնաց ստրուկի մոտ ու նրա շորերը հագցրեց ու սթափեցրեց բանջի թմրությունից, և ստրուկը վեր կացավ ու գնաց կանաչի ծախողի մոտ և կանաչի վերցրեց ու վերադարձավ խան:

Ահա թե ինչեր անցան կահիրեցի Ալի Զեյբակի գլխով: Հիմի գանք լուր տանք Դալիլա-խորամանկից: Սրա մոտ, մյուս կենվորների հետ, ապրում էր մի վաճառական: Եվ երբ լույսը բացվեց, վաճառականն իր սենյակից դուրս եկավ ու տեսավ, որ խանի դարպասը բաց է, ստրուկները շմած են, իսկ շները՝ սատկած: Եվ նա մտավ Դալիլայի մոտ ու տեսավ, որ նա էլ է շմած, և նրա վզից մի թուղթ է կախված, իսկ գլխի մոտ վաճառականը բանջի հակաթույնով ներծծված մի սպունգ

գտաւ: Եվ այդժամ նա սպունգը կպցրեց Դաւիլայի քթին, ու պառաւն ուշքի եկաւ և, ուշքի գալով, հարցրեց. «Որտե՞ղ եմ ես»: Ու վաճառականն ասաց. «Ես դուրս եկա ու տեսա, որ խանի դարպասը բաց է, ու տեսա, որ քեզ շքեցրել են, և ստրուկներին նույնպէս, իսկ թե շների մասին հարցնես, ապա նրանց սատկած տեսա»:

Եվ Դաւիլան վերցրեց թուղթն ու տեսաւ, որ դրա վրա՝ գրված է. «Այս բանն արել է կահիրեցի Ալին, ուրիշ ոչ ոք»: Եվ պառավը ստրուկներին ու իր աղջկան՝ Զեյնաբին, տվեց հոտոտելու բանջի հակաթուշնը ու գոչեց. «Ես ձեզ չէի՞ ասում, որ դա կահիրեցի Ալին է»: Իսկ հետո ստրուկներին ասաց. «էս արարմունքը մեր մեջ մնա»: Եվ իր աղջկան ասաց. «Քանի անգամ եմ ասել քեզ, որ Ալին վրեժ կլուծի ու նա էս բանն արեց քո օյինների պատճառով, որ բերիր նրա գլուխը: Սրանից բացի, նա ուրիշ բան էլ կարող էր անել քեզ, բայց էսքանով բավականացաւ, որ խալիֆի աչքը վրան քաղցր լինի և խալիֆն ու մենք սիրով լինենք»:

Ու հետո Դաւիլան կտրիճի շորերը հանեց ու կնոջ շորեր հագաւ և, վզին մի գլխաշոր կապելով, ճանապարհվեց Ահմեդ ադ-Դանաֆի դորանոցը: Իսկ երբ Ալին հագուստներն ու նամակատար աղաձնիներն առած հասաւ դորանոց, Շումանը վեր կացաւ ու հսկիչին վճարեց քառասուն աղաձնիների գինը, սա էլ գնեց թռչուններն ու եփեց և բաժանեց մարդկանց:

Ու հանկարծ Դաւիլան դարպասը թակեց, և Ահմեդ ադ-Դանաֆն ասաց. «Դա Դաւիլայի թակոցն է, հսկի՛չ, գնա բաց արա»: Եվ հսկիչը դուռը բացեց, ու Դաւիլան ներս մտաւ, և Շումանը նրան հարցրեց. «Ո՞ր քամին քեզ բերեց մեր կողմը, ո՞վ շար պառաւ: Վայ թե միացել ես եղբորդ՝ ձկնավաճառ Զուբեյկի հե՞տ»:— «Ով գլխավոր,— ասաց պառավը,— իրավունքն իմ դեմ է, և ահա վիզս քո առջև է: Բայց ո՞րն է ձեր մեջ այն կտրիճը, որն այսպիսի օյին խաղաց գլխիս»:— «Դա իմ կրտրիճներից առաջինն է»,— ասաց Ահմեդ ադ-Դանաֆը, և Դաւիլան խոսեց այսպէս. «Դու ալլահի բարեխոսն ես, ասա նրան, որ նամակատար աղաձնիներն ինձ տա ու մնացած բաները, և դա թող քո լավությունը լինի, որ անում ես ինձ»: «Ալլահը պատժի քեզ գործած մեղքիդ համար, ով Ալի, ինչո՞ւ եփեցիր այն աղաձնիները»,— գոչեց Շումանը: Եվ Ալին պատասխանեց. «Զգիտեի, որ դրանք նամակատար աղաձնիներ են»:— «Ո՞վ հսկիչ,— ասաց Ահմեդը,— աղաձնիները բեր այստեղ»: Եվ հսկիչը եփած թռչունները դրեց սեղանին: Եվ Դաւիլան մի կտոր միս վերցրեց, ծամծմեց ու ասաց. «Սա նամակատար թռչունի միս չէ: Ես դրանց

մուշկի հատիկներով եմ կերակրում, ու դրանց միսը մուշկի պես է դառնում»։— «Եթե փոստատար աղավնիներ ես ուզում, կատարիր կահիրեցի Ալիի ցանկությունը»,— ասաց Շումանը։ «Իսկ ի՞նչ ցանկություն ունի նա»,— հարցրեց Դալիլան, և Շումանն ասաց. «Ալին ուզում է, որ դու իրեն ամուսնացնես աղջկադ՝ Զեյնաբի հետ»։— «Մենակ բարի խրատով կարող եմ աղջկաս վրա իշխանություն ունենալ»,— ասաց Դալիլան։ Եվ Հասանն ասաց կահիրեցի Ալիին. «Աղավնիները տուր նրան։ Եվ Ալին դրանք տվեց Դալիլային։

Ու Դալիլան վերցրեց թռչունները և ուրախացավ, և Շումանն առաջ նրան. «Դու պետք է մեզ անպայման գոհացուցիչ պատասխան տաս»։— «Եթե Ալին ուզում է ամուսնանալ աղջկաս հետ, զուր է խաղեր խաղում մեր գլխին, նրա արածը ճարպկություն չէ,— ասաց Դալիլան։— Ճարպկությունն այն կլինի, որ նա գնա ու Զեյնաբի ձեռքը խնդրի աղջկաս քեռուց՝ մեծավոր Զուրեյկից։ Զեյնաբիս խնամակալն է, ու նա միշտ կանչում է. «Հե՛յ, ո՞ւմ տամ այս մի բաթլ ձուկը երկու ջադիգով»։ Նա իր խանութում մի քսակ է կախել ու մի երկու հազարի գին ունեցող ոսկի է դրել մեջը»։

Ու երբ մարդիկ լսեցին Դալիլայի ասածը, վեր թռան իրենց տեղերից ու բացականչեցին. «Ո՞վ անառակ, այդ ի՞նչ բաներ ես ասում։ Դու պարզապես ուզում ես մեզ զրկել մեր եզբայր կահիրեցի Ալիից»։

Դալիլան հեռացավ նրանց մոտից ու գնաց խան և իր աղջկան՝ Զեյնաբին, ասաց. «Կահիրեցի Ալին քեզ ուզում է»։ Ու Զեյնաբն ուրախացավ, քանի որ սիրեց Ալիին այն բանի համար, որ նա զսպեց ինքն իրեն, և աղջիկը մորը հարցրեց, թե ինչ է եղել, ու մայրն ասաց նրան. «Ես մի պայման դրեցի նրա առաջ. ասացի, որ խնամախոս գնա քեռուդ մոտ ու քեզ ուզի, ու սրանով նրան կորստի մատնեցի»։

Սրանց այստեղ թողնենք, գանք լուր տանք կահիրեցի Ալիից։ Սա էլ գիմեց իր ընկերներին ու հարցրեց. «Այդ ի՞նչ Զուրեյկ է, ի՞նչ տեսակ մարդ է, ո՞վ է»։ Ու ընկերներն ասացին նրան. «Նա Իրաք երկրի կտրիճների գլխավորն է ու մի փուչ բանի համար կարող է սարը ծակել, աստղը ցած բերել ու աչքերից ծաբիթ թռցնել։ Այդ տեսակ գործերի մեջ նրան հավասար մարդ չկա։ Բայց նա զղջացել է ու խանութ բացել՝ ձուկ է ծախում, և ձուկ ծախելով երկու հազար դինար է հավաքել ու լցրել քսակն ու մետաքսե թելով կապել բերանը, թելից էլ փոքրիկ զանգակներ ու շխկշխկաներ է կախել, ու թելի ծայրը խանութի գռան հետևը փոքր

1 Զագիդ — մանրադրամ։

ցցից է կապել, այնպես որ քսակն ու ցիցը միացել են իրար: Ու ամեն անգամ, երբ Զուրեյկը խանութը բաց է անում, քսակը կախում է ու բղավում է. «Հեյ, Կահիրեի ճարպիկ մարդիկ, Իրաքի կտրիճներ ու սլարսկական երկրների վարպետներ, որտե՞ղ եք: Ձկնալուծառ Զուրեյկը քսակը կախել է իր խանութում, և ով խորամանկություն անի ու քսակը վերցնի, երկու հազար դինարն իրենը կլինի»: Ու ամեն օր գալիս են ազահ կտրիճներն ու ցանկանում քսակը վերցնել, բայց չեն կարողանում, որովհետև Զուրեյկը կրակ վառելիս ու բան տապակելիս ոտքերի տակ արճճե սալիկներ է դնում, ու թե մի ազահ մարդ է գալիս, որ Զուրեյկի ուշադրությունը շեղի ու քսակը վերցնի, նա արճճե սալիկը շարտում է այդ մարդու վրա ու խեղդում կամ սպանում է նրան: Ու եթե դու, ո՛վ Ալի, նրան դեմ դնաս, կընկնես այն մարդու օրը, որը թաղման ժամանակ երեսն է ծեծում, իսկ ինքը չգիտի, թե մեռնողն ով է: Նրա դեմ կովելու ուժ չունես դու, Ալի՛, և այդ մարդը սարսափելի է քեզ համար: Հարկավոր չէ ամուսնանալ Զեյնաբի հետ, ով մի բանից զերկվի, առանց դրա էլ կապրի»:

«Դա խայտառակություն է, ո՛վ մարդիկ,— ասաց Ալին,— ինչ ուզում է լինի, ես այդ քսակը պիտի վերցնեմ: Բայց կնոջ շոր տվեք ինձ»:

Եվ Ալիի համար կնոջ շոր բերեցին, և նա հագավ ու ձեռքերը հինա գրեց, և երեսի քողն իջեցրեց, իսկ հետո մի գառ մորթեց, արյունը հավաքեց, աղիքները հանեց, մաքրեց ու ծայրերը կապեց և արյունը լրցրեց դրանց մեջ ու կապեց կոնքերին, իսկ դրա վրա հագավ վարտիքն ու մաշիկները:

Եվ նա թռչնի քարձիկներից ստինքներ շինեց ու դրանց մեջ կաթ լցրեց և փորին մի քիչ կտոր փաթաթեց, իսկ փորի ու կտորի արանքը բամբակ դրեց ու վրան էլ ամբողջովին օսլայած մի անձեռոցիկ դրեց, և ով տեսնում էր նրան, ասում էր. «Ի՞նչ տուղ քամակով կին է»:

Ու մեկ էլ մոտեցավ մի իշապան, և Ալին նրան մի դինար տվեց, և իշապանը նրան նստեցրեց էշին, ու նրանք գնացին դեպի ձկնալուծառ Զուրեյկի խանութը: Եվ Ալին տեսավ, որ քսակը կախված է իր տեղն ու դրա միջից ոսկի է երևում:

Իսկ Զուրեյկը ձուկ էր տապակում, և Ալին ասաց. «Ո՛վ իշապան, այս ի՞նչ հոտ է»:— «Զուրեյկի ձկան հոտն է»,— պատասխանեց իշապանը, և Ալին ասաց. «Ես հղի կին եմ ու այդ հոտն իմ ախորժակը գրգռում է: Գնա նրա մոտ և մի կտոր ձուկ բեր ուտեմ»: Եվ իշապանն ասաց Զուրեյկին. «Դու քո ձկան հոտով արդեն սկսել ես հղի կանանց

ախորժակը գրգռել: Ինձ հետ է էմիր Հասան Շար-աթ-Քարիբի կինը ու նա այդ հոտն առավ, իսկ ինքը հղի է, մի կտոր ձուկ տուր տանեմ նրան... Պտուղը շարժվեց նրա փորի մեջ: Ով հովանավոր, փրկիր մեզ այս տեսակ օրից»:

Զուրեյկը վերցրեց մի կտոր ձուկ և ուզեց սապակել, բայց կրակը հանգավ, ու ձկնավաճառը ներս գնաց, որ կրակը վառի: Իսկ Ալին նըստած էր էշին, և նա հենվեց աղիքների վրա ու պատոեց, և արյունը հոսեց նրա ոտքերի արանքով, իսկ Ալին թղավեց. «Ա՛խ, կո՛ղբս, մե՛ջքս»:

Եվ իշապանը հետ նայեց ու տեսավ, որ արյուն է հոսում և հարցրեց. «Ո՞վ խանում, ի՞նչ եղավ քեզ»: Եվ կնոջ կերպարանք առած Ալին պատասխանեց. «Անցուցք արեցիր»: Եվ Զուրեյկը դուրս նայեց ու տեսավ արյունը և վախեցավ ու փախավ մտավ խանութ, և իշապանն ասաց նրան. «Ալլա՛հը կյանքդ խաղարեցնի, ա՛յ Զուրեյկ: Այս կինն անցուցք արեց, և դու պատասխան կտաս նրա ամուսնուն: Ինչո՞ւ քո ձկան հոտով գրգռեցիր նրան: Ես քեզ ասում եմ՝ նրան մի կտոր ձուկ տուր, իսկ դու շես ուզում տալ»:

Եվ ապա իշապանը էշը բռեց ու գնաց իր ճամփով, իսկ երբ Զուրեյկը փախավ մտավ խանութ, կահիրեցի Ալին ձեռքը մեկնեց քսակին, բայց հագիվ էր նա ձեռքը հասցրել, երբ քսակի միջի ոսկին զրնգաց, և զանգակներն էլ զնգզնգացին ու օղերն էլ ճնգճնգացին: Եվ Զուրեյկը գոռաց. «Խաբեությունդ բացվեց, ո՞վ սրիկա: Կնոջ կերպարանք ընդունած, օյիններ ե՞ս սարքում իմ գլխին... Դե ա՛ռ քեզ, սա է քո բաժինը»: Եվ ձկնավաճառն Ալիի կողմը շարտեց արճճե սալիկը: Բայց հարվածն իզուր անցավ, սալիկը դիպավ ուրիշին: Եվ մարդիկ հարձակվեցին Զուրեյկի վրա ու սկսեցին նրան նախատել. «Դու առևտրակա՞ն ես, թե կովարար: Թե առևտրական ես, ոսկու քսակն այդտեղից վերցրու և մարդկանց ազատի քո շարիքից»: «Ալլա՛հի սիրուն, ինչ որ ասեք՝ կանեմ»,— ասաց Զուրեյկը:

Իսկ եթե Ալիից հարցնեք, նա գնաց զորանոց, և Շումանը հարցրեց նրան. «Ի՞նչ արեցիր»: Եվ Ալին պատմեց գլխին եկածը՝ ինչ եղել էր, իսկ հետո կնոջ շորերը հանեց ու ասաց. «Ո՞վ Շուման, ձիապանի շորեր տուր ինձ»: Եվ Շումանը բերեց նրա ուզած հագուստը, և Ալին վերցրեց այն ու հագավ, իսկ հետո մի մեծ ափսե վերցրեց ու հինգ դիրհեմ և ուղևորվեց դեպի ձկնավաճառ Զուրեյկի խանութը: «Ի՞նչ պահանջ ունես, ով տեր»,— հարցրեց Զուրեյկը: Եվ Ալին ցույց տվեց ձեռքի դիրհեմները, և Զուրեյկն ուզեց վաճառականի վրայի ձուկը տալ նրան, բայց Ալին ասաց. «Ես միայն տաք ձուկ կվերցնեմ»:

Եվ Զուրեչկը ձուկը դրեց թավաչի վրա և ուզում էր սապակել, բայց կրակը հանգավ, և Զուրեչկը գնաց, որ կրակը վառի, և այդ ժամանակ կահիրեցի Ալին ձեռքը մեկնեց, որ վերցնի, ու ձեռքը քսվեց քսակի ծայրին, և զանգակները, օղերն ու բոժոժները գնդգնդացին, և Զուրեչկը գոռաց. «Օյիններդ շանցան, շնայած եկել ես ձիապանի կերպարանքով: Ես քեզ ճանաչեցի փողն ու ափսեն բռնելու ձեռք»:

Ու ձկնավաճառը արճճե սալիկը շարտեց նրա վրա, բայց կահիրեցի Ալին մի կողմ թեքվեց, ու սալիկն ընկավ հենց ձեթով լի թավաչի մեջ: Ու թավան կոտրվեց, միջի ձեթն էլ թափվեց այդ ժամանակ խանութի մոտով անցնող դադիի ուսին, ամեն ինչ լցվեց նրա ծոցն ու գնաց հասավ ամոթի տեղին: Ու դադին բղավեց. «Վա՛խ, իմ բանը... Այս ինչ վատ բան եղավ, ով թշվառական: Այս ո՛վ արեց»: Ու մարդիկ նրան ասացին. «Ո՛վ դու մեր ատր ու տիրական, այդ մի պատիկ տղա էր քար գցեց, ու քարն ընկավ թավաչի մեջ, գո՛հ եղիր, որ ալլահը քեզ փրկեց, թե չէ ավելի վատ բան կարող էր լինել»:

Եվ ապա մարդիկ նայեցին շորս կողմ ու տեսան, որ արճճե սալիկն է ընկել թավաչի մեջ, և ձկնավաճառ Զուրեչկն է, որ շարտել է դա, ու մարդիկ հարձակվեցին նրա վրա ու ասացին. «Ալլահին անհաճո բան ես անում ո՛վ Զուրեչկ: Վերցրու այդ քսակն այդտեղից: Քեզ համար էլ լավ կլինի»:— «Ալլահը եթե կամենա, կվերցնեմ»,— ասաց Զուրեչկը:

Ինչ վերաբերում է կահիրեցի Ալիին, ապա նա գնաց զորանոց ու մտավ կտրիճների մոտ և նրանք հարցրին. «Ո՞ր է քսակը»: Եվ Ալին պատմեց գլխին եկածը՝ ինչ եղել էր, ու մարդիկ ասացին. «Դու Զուրեչկի ճարակության մեծ մասն արգեն կոտրել ես»:

Եվ Ալին հագի շորերը հանեց ու վաճառականի շոր հագավ և զորանոցից դուրս եկավ ու տեսավ մի օձ բռնողի, որի ձեռքին օձերով լի մի պարկ կար ու մի տոպրակ, որի մեջ որսի պարագաներն էին:

«Ո՛վ օձ բռնող,— ասաց Ալին,— ուզում եմ, որ դու զվարճացնես իմ երեխաներին ու վարձդ ստանաս»: Իսկ հետո նա օձ բռնողին տարավ զորանոց ու կերակրեց և բանջով շամեցրեց, և հագավ նրա շորերն ու գնաց ձկնավաճառ Զուրեչկի մոտ:

Եվ Ալին մոտեցավ խանութին ու սկսեց շվի փշել, և Զուրեչկը ասաց նրան. «Ալլահը տա քեզ»: Եվ հանկարծ Ալին հանեց օձերն ու գցեց նրա առաջ: Իսկ Զուրեչկն օձերից վախենում էր, ու նա թողեց փախավ խանութի խորքը: Այդ ժամանակ Ալին օձերը վերցրեց ու դրեց պարկն ու ձեռքը մեկնեց քսակին, բայց երբ նա ձեռքը դիպրեց քսակի ծայրին, օղերը, զանգակներն ու բոժոժները գնդգնդացին, և Զուրեչկը բղավեց.

«Դու էլի՞ օջիհներ ես սարքում իմ գլխին, նույնիսկ օձ բռնող ես գարձել»։ Եվ նա արճճե սալիկը շարացեց Ալիի կողմը։ Իսկ այդ ժամանակ խանութի մոտով անցնում էր մի զորական, որի հետևից գնում էր նրա ձիապանը, և սալիկը կտավ ձիապանի գլխին ու գետին գլորեց նրան։ Ու զորականը հարցրեց. «Ո՞վ նրան գետին գլորեց»։ Ու մարգիկ ասացին. «Կտուրից քար ընկավ»։ Ու զորականը գնաց, իսկ մարգիկ դեսուգեն նայեցին ու տեսան արճճե սալիկը, և հարձակվեցին Զուրեյկի վրա, ասելով. «Վերցրու այդ տուպրակը»։ Եվ Զուրեյկն ասաց նրանց. «Ալլահը եթե կամենա, այս երեկո կվերցնեմ»։

Եվ Ալին այնքան ժամանակ օջիհ խաղաց նրա գլխին, մինչև որ յսթը լրացավ, բայց այդպես էլ տուպրակը չվերցրեց։ Եվ նա հետ տվեց օձ բռնողի հագուստն ու որսի պարագաները և նրան փող պարգևեց, իսկ հետո վերադարձավ Զուրեյկի խանութի մոտ ու լսեց, որ ձկնավաճառն ասում է. «Եթե քսակը գիշերը թողնեմ խանութում, այդ ճարպիկ մարդը պատը կծակի ու ոսկիս կվերցնի։ Ավելի լավ է քսակը հետս տանեմ տուն»։

Զուրեյկը վեր կացավ, քսակը վերցրեց դրեց ծոցը և խանութից դուրս եկավ ու գնաց, և Ալին հետևեց նրան, մինչև որ մոտեցավ ձկնավաճառի տանը։

Եվ Զուրեյկը տեսավ, որ հարևանը հարսանիք է անում, և ինքն իրեն ասաց. «Գնամ տուն, քսակը տամ կնոջս, շորերս փոխեմ, ու հետո գամ հարսանիք», և գնաց, իսկ Ալին հետևեց նրան։

Իսկ Զուրեյկն ամուսնացած էր վեզիր Զաֆարի ազատագրված ռևամորթ ստրկուհիներից մեկի հետ, և նա այդ ոտրկուհուց մի որդի ուներ, որի անունը Աբդալլահ էր դրել, և ձկնավաճառը կնոջը խոսք էր տվել, որ այդ տուպրակի փողով տվայի թլպատումը կանի ու նրան կամուսնացնի և եղած ոսկին որդու հարսանիքի վրա կծախսի։

Եվ Զուրեյկը մոայր գեմքով մտավ կնոջ մոտ, և կինը հարցրեց նրան. «Ի՞նչն է պատճառը, որ այդպես մռայլ ես»։ Եվ Զուրեյկը պատասխանեց. «Մեր տիրակալը ինձ մոտ մի ճարպիկ մարդ ուղարկեց, որ ինձ փորձի, այդ մարդը յոթ խաղ խաղաց գլխիս, որ ոսկով լի քսակը վերցնի, բայց չկարողացավ» — «Տուր քսակը ես այն կպահեմ երեխայի հարսանիքի համար», — ասաց Զուրեյկի կինը, և ձկնավաճառը քոակը տվեց նրան։ Իսկ եթե կահիրեցի Ալիից հարցնեք, ասա նա թաքնվեց մի տեղ և կարողացավ տեսնել ու լսել այդ բոլորը։

Եվ Զուրեյկը վեր կացավ ու հագի շորերը հանեց, ուրիշ շորեր հագավ ու կնոջն ասաց. «Ո՞վ Ում Աբդալլահ, լավ պահիր քսակը, իսկ ես

գնամ հարսանիք»։— «Մի քիչ քնիր, հետո գնա»,— ասաց կինը։ Եվ Զուրեյկը պառկեց քնելու։ Այդ ժամանակ Ալին թաքստոցից դուրս եկավ ու լաթերի վրա մոտեցավ քսակին ու վերցրեց և գնաց դեպի այն տունը, որտեղ հարսանիք կար, և կանգնեց այդտեղ ու սկսեց նայել։

Իսկ Զուրեյկը երազում տեսավ, թե ինչպես մի թռչուն քսակը ճանկեց ու տարավ, և նա քնից վեր թռավ վախեցած և Ում Արդալլահին ասաց. «Վեր կաց, տես, թե քսակն ուր է»։ Ու կինը տեղից ելավ, որ տեսնի, թե քսակն ուր է, և շտապ։ Եվ սկսեց ծեծել իր դեմքն ու բացացականչել. «Վա՛յ, սև է բախտդ, Ում Արդալլա՛հ։ Այն ճարպիկ մարդը քսակը տարել է»։

Եվ Զուրեյկը բղավեց. «Ալլա՛հը վկա, քսակը ճարպիկ Ալին է տարել, էլ ուրիշ ոչ ոք։ Ինչ էլ լինի, ես քսակս հետ կբերեմ»։— «Եթե դու քսակը հետ չբերես,— ասաց նրան կինը,— դաբողասը կփակեմ քո առջև ու քեզ փողոցում կթողնեմ, որ գիշերն այնտեղ քնես»։

Եվ Զուրեյկը գնաց ու մոտեցավ այն տանը, որտեղ հարսանիք կար, ու տեսավ, որ ճարպիկ Ալին կանգնել հարսանիք է նայում, և ինքն իրեն ասաց. «Ա՛յ թե սվ է վերցրել քսակը։ Բայց սա Ահմեդ աղ-Գանաֆի գորանոցում է ապրում, ո՞նց անեմ»։

Եվ Զուրեյկն Ալիից շուտ հասավ գորանոց ու բարձրացավ կտուրը և իջավ ցած ու տեսավ, որ մարդիկ քնած են։ Ու մեկ էլ հանկարծ Ալին եկավ ու դուռը թակեց, և Զուրեյկը հարցրեց. «Ո՞վ է դարպասի մոտ»։— «Կահիրեցի Ալին»,— պատասխանեց Ալին։ Եվ Զուրեյկը հարցրեց. «Քսակը բերե՞լ ես»։

Եվ Ալին կարծեց, թե դա Շումանն է, և ասաց. «Բերել եմ, բերել, դուռը բաց արա»։ Եվ Զուրեյկը պատասխանեց. «Ձեմ կարող բաց անել, մինչև քսակը շտեմնեմ, քանի որ մեծավորիդ հետ գրագ եմ եկել»։ «Ձեռքդ մեկնիր»,— ասաց Ալին, և Զուրեյկը դարպասի կողքի ճեղքից ձեռքը դուրս պարզեց, և Ալին քսակը տվեց նրան։ Եվ Զուրեյկը քսակը վերցրեց ու դուրս եկավ այնտեղից, որտեղով մտել էր, ու գնաց հարսանիք։

Հիմի գանք, լուր տանք Ալիից։ Ալին կանգնած մնաց դարպասի մոտ, բայց ոչ ոք դարպասը բաց չարեց։ Ալին այդ որ տեսավ, ահավոր մի հարված հասցրեց դարպասին, և մարդիկ արթնացան ու ասացին. «Ի՜նչ կահիրեցի Ալիի թակոցն է»։ Եվ հսկիչը դարպասը բաց արեց և հարցրեց. «Քսակը բերե՞լ ես»։ Եվ Ալին բացականչեց. «Հերիք է կատակես, ո՞վ Շուման։ Մի՞թե դարպասի կողքի ճեղքից քսակը քեզ շտվեցի։ Եվ դու ինձ ասացիր. «Արևս վկա, դարպասը բաց չեմ անի, մինչև

բաակն ինձ ցույց շտաս»։— «Ալլահը վկա, ես տոպրակ չեմ վերցրել, և գա Զուրեյկն է բեզանից վերցրել»,— ասաց նրան Շումանը։ Եվ Ալին գոչեց. «Ես անպատճառ կբերեմ տոպրակը»։ Եվ ապա կահիրեցի Ալին դուրս եկավ ու գնաց հարսանիք և լսեց, թե ինչպես խեղկատակն ասում է. «Ով Աբու Աբդալլահ, ընծա տուր։ Որդուդ գործի ելքը հաջող կլինի»։ Եվ այդ ժամանակ Ալին բացականչեց. «Հաջողության տերը ես եմ», ու գնաց Զուրեյկի տան կողմը և բարձրացավ կտուրն ու իջավ տան մեջ և տեսավ, որ ստրկուհին՝ Զուրեյկի կինը, բնած է։ Եվ նա կնոջը բանջով թմրեցրեց ու հագավ նրա շորերն ու, երեխային գիրկն առնելով, սկսեց ման գալ ու փնտրել, ու տեսավ թխվածքով լի մի դամբուղ, որ մնացել էր տոնի օրվանից՝ Զուրեյկի ժլատության պատճառով։

Իսկ Զուրեյկը մոտեցավ տանն ու դարպասը թակեց, և ճարպիկ Ալին ձայն տվեց, ձևացնելով, թե ինքը ստրկուհին է, ու հարցրեց. «Ո՞վ է դարպասը ծեծում»։— «Աբու Աբդալլահը»,— պատասխանեց Զուրեյկը։ Եվ Ալին ասաց. «Ես երգվել եմ, որ դարպասը բաց չանեմ, մինչև տոպրակը չբերես»։— «Բերել եմ»,— ասաց Զուրեյկը, և Ալին գոչեց. «Տուր ինձ, նախքան դարպասը կբացեմ»։— Զամբյուղն իջեցրու, տոպրակը մեջը դնեմ՝ վեր բաշի»,— ասաց Զուրեյկը։ Եվ Ալին զամբյուղն իջեցրեց, և Զուրեյկը տոպրակը դրեց զամբյուղի մեջ, իսկ հետո ճարպիկ Ալին վերցրեց գա և բանջով թմրեցրեց երեխային ու արթնացրեց ստրկուհուն։

Եվ Ալին դուրս եկավ հենց այն տեղով, որտեղով տուն էր մտել, ու գնաց գորանոց և, մտնելով կտրիճների սենյակը, ցույց տվեց տոպրակըն ու երեխային, որ բերել էր իր հետ, և մարդիկ գովեցին նրան, ու նա թխվածքը նրանց տվեց, և նրանք այդ թխվածքը կերան։

«Ո՞վ Շուման,— ասաց Ալին,— այս երեխան Զուրեյկի որդին է, պահիր բեզ մոտ»։ Եվ Շումանը երեխային վերցրեց ու թաքցրեց, իսկ հետո մի խոջ բերեց և մորթեց ու տվեց հսկիչին. իսկ սա ամբողջ խոյը հենց այդպես խորովեց ու փաթաթեց սավանի մեջ և նրան մեռելի տեսք տվեց։

Իսկ թե Զուրեյկից հարցնես, ապա նա երկար կանգնեց դարպասի մոտ, իսկ հետո ահավոր մի հարված իջեցրեց դարպասին, ու ստրկուհին հարցրեց նրան. «Տոպրակը բերեցի՞ր»։— «Բա դու զամբյուղը չիջեցրի՞ր ու ես էլ տոպրակը դրեցի դրա մեջ ու դու վերև բաշեցի՞ր»,— հարցրեց Զուրեյկը, և ստրկուհին պատասխանեց. «Ես ո՛չ զամբյուղ եմ իջեցրել, ո՛չ տոպրակն եմ տեսել, ո՛չ էլ վերցրել եմ»։— «Ալլահը վկա, ճարպիկ Ալին ինձանից առաջ է ընկել ու տոպրակը վերցրել»,— բացա-

Սիրը բաղնիք հրավիրեց թագավորին: Ու թագավորը տերնության մեծածածկների հետ ձի նստեց, և նրանք գնացին բաղնիք:

Եվ թագավորը շորերը հանեց ու ներս մտավ և Աբու Սիրն էլ մտավ ու սկսեց ճիլոպով թագավորի մարմինը տրորել, և նա թագավորի մարմնից գունդ-գունդ կեղտ էր հանում, ոնց որ կլոր պատույզներ, և ցույց տալիս նրան, ու թագավորն ուրախանում էր, և հենց որ Աբու Սիրի ձեռքը քսվում էր նրա մարմնին, ճոռոց էր լսվում, այնքան որ փափուկ ու մաքրված էր թագավորական մարմինը:

Իսկ թագավորին լողացնելուց հետո, Աբու Սիրը լողարանի ջրին վարդաջուր խառնեց, և թագավորը մտավ լողարան ու դուրս եկավ, ու նրա մարմինը քրտինքով պատվեց, և նա այնպես առույզացավ, որ իր ամբողջ կյանքում այդպիսի առույզություն չէր զգացել: Եվ ապա Աբու Սիրը նրան նստեցրեց կամարների տակ, և ստրուկներն սկսեցին շփել նրա մարմինը: Եվ խնկամաններից հալվեի բուրմունքն էր տարածվում ամենուրեք:

Ու թագավորն ասաց. «Բաղնիքը հենց սա՞ է, ո՞վ վարպետ»: Եվ Աբու Սիրը պատասխանեց. «Այո»: Եվ թագավորը բացականչեց. «Գլո՞ւխըս վկա, իմ քաղաքը այս բաղնիքով քաղաք դառավ»: «Ինչքա՞ն վարձ ես վերցնում մի մարդուց», — հարցրեց նա հետո, և Աբու Սիրն ասաց. «Ինչքան դու կհրամայես տալ, այնքան էլ կվերցնեմ»:

Եվ թագավորը հրամայեց նրան տալ հազար դինար ու ասաց. «Ով քեզ մոտ լողանա, նրանից հազար դինար վերցրու»: «Ներող եղիր, ով ժամանակի արքա, — ասաց Աբու Սիրը, — բոլոր մարդիկ միատեսակ չեն, ընդհակառակը, նրանց մեջ հարուստներ էլ կան, աղքատներ էլ, և եթե ամեն լողացողից հազար դինար վերցնեմ, բաղնիքը կդադարի գործելուց: Ախր, չքավորը հազար դինար չի կարող տալ»: — «Հապա ի՞նչ պիտի անես վարձի համար», — հարցրեց թագավորը, և Աբու Սիրն ասաց. «Վարձը կնշանակեմ ըստ մեծահոգության, և ամեն մի լողացող ինձ կտա այնքան, ինչքան կարող է, ինչքան սիրտն է ուզում: Ամեն մի մարդուց մենք կառնենք նրա կարողության համեմատ: Գործը որ այսպես բռնենք, ժողովուրդը կգա մեր բաղնիքը, և ով հարուստ է, ինձ իր դիրքի համեմատ փող կտա, իսկ ով չքավոր է, կտա այնքան, ինչքան սիրտն ուզի, ու եթե գործն այսպես գնա, բաղնիքը կգործի ու մեծ հաջողություն կունենա: Իսկ ինչ վերաբերում է հազար դինարին, դա թագավորական պարգև է ու ամեն մարդ այդքան չի կարող տալ»:

Եվ թագավորության մեծամեծ մարդիկ հաստատեցին վարպետի խոսքն ու ասացին. «Այ գա ճշմարիտ է, ով ժամանակի արքա: Մի՞թե

գու համարում ես, որ բոլոր մարդիկ քեզ նման են, ով գու փառապանծ արքա»:

Ու թագավորն ասաց. «Իսկապես որ ձեր ասածը ճիշտ է, բայց այս մարդն օտարական է ու չքավոր, ու մենք սրան պիտի անպայման մի բանով հարգանք մատուցենք: Չէ որ նա շինեց մեր քաղաքի բաղնիքը, որի նմանը մեր կյանքում չէինք տեսել: Ու մեր քաղաքը զարդարվեց ու հայտնի դարձավ միայն սրա գործով: Եթե մենք սրան հարգենք լողանալու վարձն ավելացնելով, դա մեծ բան չի լինի»:— «Եթե գու ուզում ես այս մարդուն հարգել, ապա քո փողով հարգիր,— ասացին մեծամեծները (իսկ թագավորի հարգանքը առ չքավորը բաղնիքի համար փոքրիկ վարձ է),— այգպես արա, որ հպատակներդ աղոթեն քեզ համար: Իսկ ինչ վերաբերում է հազար դինարին, ապա մենք, որ թագավորությանդ անվանի մարդիկ ենք, քեզ ասում ենք, որ մեր հոգին համաձայն չէ, որ այդքան փող տանք, հապա չքավորի հոգին դրան ո՞նց համաձայնի»:— «Ո՛վ գուք թագավորությանս մեծամեծներ,— ասաց թագավորը,— ձեզանից ամեն մեկն այս անգամ թող այս մարդուն հարյուր դինար փող տա, մի ծառա, մի աղախին ու մի ստրուկ»:— «Լավ, մենք այդ բոլորը կտանք այս մարդուն,— ասացին մեծամեծները,— միայն այսօրվանից բաղնիք մտնող ամեն ոք թող սրան տա այնքան, ինչքան սիրտը կուզենա»:— «Լավ եք ասում»,— ասաց թագավորը: Ու մեծամեծներից ամեն մեկը Աբու Սիրին տվեց հարյուր գինար փող, մի ծառա, մի աղախին ու մի ստրուկ, և այդ օրը թագավորի հետ լողացող մեծամեծների թիվը չորս հարյուր էր, իսկ նրանց տված դինարների քանակը քառասուն հազար դուրս եկավ, և ծառաներինը՝ չորս հարյուր և աղախիններինը՝ չորս հարյուր, և ստրուկներինը՝ չորս հարյուր (լիովի բավական էր այս պարգևը), իսկ թագավորն Աբու Սիրին տվեց տասը հազար դինար, տասը ծառա և տասը աղախին ու տասը ստրուկ:

Եվ Աբու Սիրն առաջ եկավ ու գետինը համբուրեց թագավորի ոտքերի առջև ու ասաց. «Ո՛վ եբջանիկ արքա, որ առողջ մտքի տեր ես, որտե՞ղ տեղավորեմ ես այսքան ծառաներին, աղախիններին ու ստրուկներին»: Ու թագավորն ասաց. «Ես իմ մեծամեծներին հրամայեցի պարգևներ տալ քեզ նրա համար, որ քեզ համար շատ փող հավաքենք: Ախր կարող է պատահել, որ դու հիշես քո երկիրն ու քո ընտանիքը և կարոտես նրանց ու ցանկանաս գնալ հայրենիք: Ու կտեսնես, որ մեր երկրից հիմնավոր գումար ես տանում, որը քեզ կօգնի ապրել քո երկրում»:— «Ո՛վ ժամանակի արքա, թող փառավորի քեզ ալլահը,— ասաց Աբու Սիրը,— այս բազմաթիվ ծառաները, աղախիններն ու ստրուկները

Թագավորին վայել բան են, ու թե դու պատվիրես, որ ինձ կանխիկ փող տան, ավելի լավ կլինի, քան այս գործը, որովհետև մարդիկ պիտի ուտեն ու խմեն և հագնեն, ու ինչքան էլ ես փող ստանամ, այս ստրուկներին պահելու համար չի հերիքի»:

Եվ թագավորը ծիծաղեց ու բացականչեց. «Ալլահը վկա, ճիշտ ես ասում, ճիշտ որ մի ամբողջ գործ հավաքվեց, և դու սրանց պահելու հնարավորություն չունես: Չե՞ս ծախի սրանց, ամեն մեկին հարյուր դինար կտամ»:— «Ես սրանց այդ գնով արդեն տվել եմ քեզ»,— ասաց Աբու Սիրը: Եվ թագավորը մարդ ուղարկեց գանձապահի հետևից, որ նա փող բերի, ու երբ գանձապահը փողը բերեց, թագավորը բոլոր ստրուկների արժեքը լրիվ և սուտանց մնացորդի վճարեց, իսկ դրանից հետո ստրուկներին սիրով վերադարձրեց տերերին ու ասաց. «Մ՛վ իր ծառային, ստրկուհուն և ստրուկին ճանաչի, թող տանի տուն: Սրանք ձեզ նվեր են իմ կողմից»:

Եվ մեծամեծները կատարեցին թագավորի հրամանը, ու ամեն մեկը վերցրեց այն, ինչ իրեն էր պատկանում, և Աբու Սիրն ասաց. «Թող ալլահը քեզ ազատի ամեն շարիքից, ո՛վ ժամանակի արքա, ինչպես որ դու ինձ ազատեցիր սրանցից, որոնց միայն ալլահը կարող է կըշտացնել»:

Ու թագավորը ծիծաղեց Աբու Սիրի ասածի վրա և խոստովանեց, որ նա ճիշտ է ասում, իսկ հետո իր մեծամեծներին առավ ու բաղնիքից գնաց պալատ:

Եվ Աբու Սիրը այդ գիշերն անցկացրեց ոսկին հաշվելով, պարկերը լցնելով ու կնքելով: Եվ նա քսան ստրուկ ուներ ու քսան գերի և շորս ստրկուհի՝ զանազան ծառայությունների համար: Իսկ երբ առավոտը վրա հասավ, Աբու Սիրը բաց արավ բաղնիքն ու մունեաթիկին ուղարկեց հայտարարելու. «Մ՛վ մտնի բաղնիք ու լողանա, թող այնքան վարձ տա, ինչքան սիրտը կուզի և ինչքան որ նրա մեծ հոգին կասի»:

Եվ Աբու Սիրը նստեց սնդուկի կողքին, ու հաճախորդները վրա թափվեցին, և ով մտնում էր բաղնիք, սնդուկի մեջ էր գցում այնքան դրամ, ինչքան նրա համար ղժվաբ չէր գցել, ու դեռ իրիկուն շեղած, սնդուկն ալլահի բարիքով լցվեց:

Իսկ հետո թագուհին ցանկացավ բաղնիք գնալ: Ու երբ այդ լուրը հասավ Աբու Սիրին, հանուն թագուհու նա օրը բաժանեց երկու մասի, և արևածագից մինչև կեսօր սահմանեց տղամարդկանց լողանալու մասնակ, իսկ կեսօրից մինչև մայրամուտ՝ կանանց ժամանակ: Իսկ երբ թագուհին բաղնիք եկավ, Աբու Սիրը սնդուկի մոտ մի ստրկուհի կարգեց:

Եվ Աբու Սիրը շորս ստրկուհու սովորեցրել էր բաղնիքի գործն այնպես, որ նրանք հմուտ բաղնեպաններ էին դարձել, ու երբ թագուհին բաղնիք մտավ, նրան այդ բանը շատ գուր եկավ և նրա կուրծքն ազատ շնչեց, և նա Աբու Սիրի սնդուկի մեջ հազար դինար դրեց: Եվ Աբու Սիրի փառքը տարածվեց քաղաքում: Եվ ամեն մեկին, ով բաղնիք էր մտնում, նա հարգանքով էր ընդունում, նրա համար միևնույն էր՝ հարուստ էր բաղնիք եկողը, թե չքավոր: Եվ բարիքն սկսեց լցվել նրա տունը բոլոր գոններից:

Եվ Աբու Սիրը ծանոթութուն հաստատեց թագավորի մերձավորների հետ, ու նա բարեկամներ ու ընկերներ ունեցավ, և թագավորը նրա մոտ էր գալիս շաբաթը մեկ անգամ ու հազար դինար տալիս, իսկ շաբաթվա մյուս օրերը մեծամեծների ու չքավորների համար էին, և Աբու Սիրն աշխատում էր հարգանքով վերաբերվել մարդկանց ու նրանց հետ վարվում էր շատ սիրալիր:

Եվ օրերից մի օր այնպես պատահեց, որ թագավորի նավապետը եկավ մտավ բաղնիք: Եվ Աբու Սիրը հանվեց ու ներս մտավ նրա հետ և սկսեց տրորել նրա մարմինը, և առանձնապես սիրալիր վարվեց նրա հետ: Ու երբ նավապետը բաղնիքից դուրս եկավ, Աբու Սիրը նրան պատվեց, հյուրասիրեց խմիչքով և սուրճով, իսկ երբ նավապետն ուզում էր նրան մի բան տալ, Աբու Սիրը երզվեց, որ նրանից ոչինչ չի վերցնի: Եվ նավապետը երախտապարտ զգաց իրեն, քանի որ տեսավ, թե ինչքան սիրալիր ու փաղաքուշ էր իր նկատմամբ բաղնիքի տերը, և նա ամաչեց ու շփտեց, թե ինչ նվիրի բաղնեպանին այդ պատվի համար:

Ահա թե ինչեր պատահեցին Աբու Սիրին: Հիմա գանք լուր տանք Աբու Քիրից: Նա լսեց, որ բոլոր մարդկանց խելքն ու միտքը բաղնիքն է ու հանդիպած մարզն ասում է. «Այդ բաղնիքը երկնային կյանքի բարիք է, խոսք չկա: Ալլահը թե կամենա, ով այսինչ, ես և դու վաղը կգնանք այդ հրաշալի բաղնիքը»:

Ու Աբու Քիրն ասաց ինքն իրեն. «Ոնց որ ուրիշ մարդիկ են գնում, այնպես էլ ես կգնամ, անպատճառ կգնամ ու կտեսնեմ, թե այդ ինչ բաղնիք է, որ մարդկանց խելքը տարել է»:

Եվ ապա նա հագավ իր ունեցած ամենաշքեղ հագուստը, հեծավ ջորին ու իր հետ վերցնելով, շորս ծառա ու շորս ստրուկ, դնաց բաղնիք, իսկ ծառաներն ու ստրուկները գնում էին նրա առջևից ու հետևից:

Ու երբ տեղ հասավ, ջորուց իջավ ու բաղնիքի դռան մոտ զգաց հավի բույրը և տեսավ, որ մարդիկ ներս են մտնում և դուրս գալիս, և մեծ ու մանուկ բոլոր նատարանները բռնել են: Եվ Աբու Քիրը մտավ

ներս, ու Աբու Սիրը տեսավ նրան և ուրախացած ոտքի կանգնեց։
Եվ ներկարարն ասաց. «Մի՞թե ազնիվ մարդն այդպես կվարվի»: Ես
ներկատուն եմ բաց արել ու քաղաքի վարպետն եմ դառել, ու թագա-
վորի հետ ծանոթութուն եմ հաստատել ու ապրում եմ մեծարանքի ու
երջանկության մեջ, իսկ դու չես գալիս ինձ մոտ, չես հարցնում իմ
մասին ու չես ասում. «Որտե՞ղ է ընկերս»: Ես ուժասպառ եղա քեզ փրկա-
րելով ու ծառաներ և ստրուկներ ուղարկելով խաները և ուրիշ տեղեր,
որ գտնեն քեզ, բայց նրանք քո տան ճամփան չեն իմանում, և ոչ մի
մաքդ նրանց չի պատմում քո մասին»:

Եվ Աբու Սիրն ասաց նրան. «Մի՞թե ես քեզ մոտ չեկա, բայց ախր
դու ինձ գող անվանեցիր, ծեծեցիր ու խայտառակ արեցիր մարդկանց
մեջ»:

Եվ Աբու Քիրը վշտացավ ու ասաց. «Ի՞նչ ես ասում: Մի՞թե՞ ես քեզ
ծեծեցի»:— «Այո՛, ծեծեցիր»,— ասաց Աբու Սիրը: Եվ Աբու Քիրը հազար
երդում կերավ, որ ինքը նրան չի ճանաչել, և ասաց. «Քեզ նման մեկը
ամեն օր գալիս էր և ուրիշների կտորները գողանում, ես էլ կարծեցի,
թե դու այն մարդն ես»:

Եվ Աբու Քիրն սկսեց ախուվախ անել, ձեռքը ձեռքին զարկել, ու
բացականչեց. «Չկա՛ ավելի մեծ զորութուն և ուժ, քան բարձրյալ և
ամենակարող ալլահինն է: Մենք քեզ վիրավորել ենք: Բայց ինչո՞ւ դու
ինձ ճանաչել չտվեցիր քեզ ու ինձ շասացիր. «Ես այսինչն եմ»: Դո՛ւ
պիտի ամաչես, որ քեզ ճանաչել չես տվել առավել ևս, որ գլուխս պտույտ
է գալիս բազում գործերից»:— «Թող ալլահը քեզ ների, ով իմ ընկեր,—
ասաց Աբու Սիրը:— Այդ էլ ճակատագրի բան էր, որ եղավ, և ալլահն
է, որ պիտի ուղղի դա: Ներս եկ, շորերդ հանիր լողացիր ու հաճույք
վայելիր»:— «Ի սեր ալլահի, ներող եղիր, ո՛վ եղբայր»,— ասաց Աբու
Քիրը: Եվ Աբու Սիրը խոսեց այսպես. «Թող ալլահը ների քեզ ու մեղ-
քիդ թողութուն տա: Նախախնամութունն էր որոշել այդ բանն ինձ
համար»:— «Իսկ որտեղի՞ց քեզ այս փառահեղ կյանքը»,— հարցրեց
Աբու Քիրը: Եվ Աբու Սիրը սլատասխանեց. «Քեզ օգնողն ինձ էլ օգնեց:
Գնացի թագավորի մոտ ու բացատրեցի, թե ինչ բան է բաղնիքը, և նա
պատվիրեց բաղնիք շինել ինձ համար»:— «Ինչպես դու թագավորի ծա-
նոթը, այնպես էլ՝ ես,— ասաց Աբու Քիրը,— և եթե ամենակարող ալ-
լահը կամենա այնպես կանեմ, որ թագավորը քեզ սիրի ու իմ խաթեր
համար ավելի մեծ հարգանք ցույց տա քեզ: Թագավորը չգիտի, որ դու
իմ ընկերն ես, ես նրան կտեղեկացնեմ, որ դու իմ ընկերն ես, ու քեզ
նրա խնամքին կհանձնեմ»:— «Հարկավոր չէ, որ ինձ համար երաշխա-

վորես,— պատասխանեց Աբու Սիրը:— Սրտեր փափկացնող ավաճ կա, և թագավորն ու նրա բոլոր մեծամեծները սիրել են ինձ և տվել այս բանն ու այն բանը:

Եվ նա Աբու Քիրին պատմեց իր գլխին եկածը և ապա ասաց. «Շուրերդ հանիր սնդուկի հեռուում ու մտիր բաղնիք, ես էլ կմտնեմ քեզ հետ, որ մարմինդ ճիւղալով տրորեմ»:

Եվ Աբու Քիրը հանեց հագի շորերն ու մտավ բաղնիք: Աբու Սիրն էլ մտավ նրա հետ և տրորեց նրա մարմինն ու օձառեց, և հազցրեց, ու այնքան ժամանակ զբաղվեց նրանով, մինչև որ Աբու Քիրը բաղնիքից դուրս եկավ: Ու երբ նա դուրս եկավ, Աբու Սիրը նրա համար ճաշ ու խմիչքներ բերեց: Եվ բոլոր մարդիկ զարմանում էին այն մեծ հարգանքի վրա, որ Աբու Սիրը մատուցում էր այդ մարդուն:

Ու դրանից հետո Աբու Քիրը նրան ուզեց մի բան տալ, բայց Աբու Սիրը երդվեց, որ ոչինչ չի վերցնի և ասաց. «Ամոթ է, չէ՞ որ դու իմ ընկերն ես, և իմ ու քո մեջ տարբերություն չկա»:

Եվ ապա Աբու Քիրը Աբու Սիրին ասաց. «Ով իմ ընկեր, ավաճը վկա, այս բաղնիքը հիանալի է, բայց քո աշխատանքը լրիվ չէ, դեռ շատ բան ունես անելու»:— «Սրա պակաս կողմը ո՞րն է»,— հարցրեց Աբու Սիրը, և Աբու Քիրը պատասխանեց. «Մի դեղ կա պակաս, այսինքն մկնդեղից ու կրից սարքած խմորը, որը շատ հեշտ հեռացնում է մազերը: Այդպիսի մի դեղ պատրաստիր, ու երբ թագավորը բաղնիք գա, տուր նրան այդ խմորն ու սովորեցրու, թե մազերը դրանով ինչպես մաքրի: Նա քեզ ավելի շատ կսիրի ու մեծ հարգանք ցույց կտա»:— «Ճիշտ ես ասում,— խոսեց Աբու Սիրը:— Ավաճը եթե կամենա, ես այդ բանը կանեմ»:

Եվ Աբու Քիրը դուրս եկավ բաղնիքից ու շորի նստելով, գնաց թագավորի պալատ, մտավ ներս ու ասաց նրան. «Ես քո անկեղծ խորհրդատուն եմ, ով ժամանակի արքա»:— «Իսկ ի՞նչ խորհուրդ ես ուզում տալ»,— հարցրեց թագավորը, և Աբու Քիրն ասաց. «Մի բան եմ լսել. ասում են, թե դու բաղնիք ես շինել»:— «Այո,— պատասխանեց թագավորը,— ինձ մոտ մի մարդ եկավ, մի օտարական, ու ես նրա համար մի բաղնիք բացեցի, ինչպես որ քեզ համար ներկատուն բաց արեցի: Բաղնիքը շատ լավ բան է ու զարդարել է իմ քաղաքը»:

Եվ թագավորը սկսեց պատմել Աբու Քիրին, թե ինչ բարեմասնություններ ունի բաղնիքը, և Աբու Քիրը նրան հարցրեց. «Իսկ դու բաղնիք գնացել ես»:— «Այո»,— պատասխանեց թագավորը: Եվ Աբու Քիրը բացականչեց. «Փա՛ռք ավաճին, որ քեզ փրկել է սրիկայի, մեր սուրբ

հավատի թշնամի բաղնիպանի ձեռքից»։— «Իսկ ի՞նչ է արել նա»,— հարցրեց թագավորը, և Աբու Քիրն ասաց. «Լավ իմացիր, ով ժամանակի արքա, որ այսուհետև թե բաղնիք գնաս, կորած ես»։— «Ինչո՞ւ»,— հարցրեց թագավորը։ «Բաղնիպանը քո թշնամին է ու հավատի թշնամին։ Այդ մարդը քեզ դրոշել է բաղնիք շինել միայն նրա համար, որ այնտեղ քեզ թույն տա։ Նա մի բան է պատրաստել քեզ համար, ու հենց որ դու բաղնիք մտնես, նա այդ բանը կբերի ու քեզ կասի. «Ա՛յ, մի լավ դեղ, ով սա քսի իր ներքևի մասին, մազերը շատ հեշտ կթափվեն»։ Իսկ դա բնավ էլ դեղ չէ, դա մեծ հիվանդություն է ու սպանիչ թույն։ Քրիստոնյաների սուլթանը խոստացել է գերութունից յազատել այդ սրիկայի կնոջն ու երեխաներին, եթե նա սպանի քեզ, իսկ բաղնիպանի կինն ու երեխաները քրիստոնյաների սուլթանի մոտ գերի են։ Ես ու այդ մարդը իրար հետ գերի ենք եղել իրենց երկրում, բայց ես ներկատուն բաց արեցի ու սկսեցի այդ երկրի մարդկանց կտորները զանազան գույներով ներկել, ու մարդիկ փափկացրին թագավորի սիրտն իմ վրա, ու թագավորն ինձ հարցրեց. «Ի՞նչ ցանկություն ունես, ի՞նչ ես պահանջում ինձնից»։ Ես էլ պահանջեցի, որ ինձ ազատ արձակի, և թագավորն ինձ ազատեց գերութունից, ու եկա այս քաղաքը։

Եվ ես տեսա այդ մարդուն բաղնիքում և հարցրի նրան. «Այդ ո՞նց եղավ, որ ազատվեցիր, և կինդ ու երեխաներդ էլ ազատվեցին»։ Եվ նա պատասխանեց. «Ես էլ, կինս էլ, երեխաներս էլ դեռ գերության մեջ ենք։ Քրիստոնյաների թագավորը դիվան ժողովեց, ես էլ էի ներկա այդ դիվանում բոլոր մյուսների հետ մեկտեղ, ովքեր որ այնտեղ էին, և ես կանգնած էի մյուս մարդկանց մեջ։ Ու ես լսեցի, թե ինչպես նրանք թագավորին պատմում էին զանազան պատմություններ ու հիշեցին այս քաղաքի թագավորին, և քրիստոնյաների թագավորը հառաչեց և ասաց. «Աշխարհի երեսին ոչ մեկը չի հաղթել ինձ, այսինչ քաղաքի թագավորից բացի։ Ով որ նրան սպանելու հնարը գտնի, ինչ ցանկանա՝ կտամ»։ Ու ես մոտեցա թագավորին և հարցրի նրան. «Որ ես նրան սպանելու հնարը գտնեմ, կազատե՞ս ինձ, իմ կնոջն ու իմ երեխաներին»։ Ու քրիստոնյաների թագավորն ասաց. «Այո, ես կազատեմ ձեզ ու ինչ որ ուզես, կտամ», և ես ու նա պայման կապեցինք ոնց որ պետք էր։

Նա ինձ մի նավ նստեցրեց և ուղարկեց այս քաղաքը, ու ես գնացի այստեղի թագավորի մոտ, ու թագավորն ինձ համար շինել տվեց այս բաղնիքը, ու հիմա մնում է, որ ես նրան սպանեմ։ Այն ժամանակ ես կգնամ քրիստոնյաների թագավորի մոտ, կփրկագնեմ կնոջս ու երեխաներիս և նրանից մի բան կխնդրեմ»։

Եվ ես հարցրի նրան. «Թագավորին սպանելու ի՞նչ հնար ես մտածել»: Եվ նա ասաց. «Այդ հնարը գտել եմ, դրանից հեշտ բան չկա: Թագավորը կգա ինձ մոտ՝ բաղնիք, իսկ ես նրա համար թունախառն մի դեղ կսարքեմ, ու երբ նա բաղնիք մտնի, կասեմ նրան. «Վերցրու այս գեղն ու քսիր ներքևիդ մասին, սրանից մազերը թափվում են»: Եվ նա կվերցնի դեղն ու կքսի մարմնի ներքևի մասերին, և թույնը կսկսի գործել նրա մեջ մի ցերեկ ու մի գիշեր, մինչև որ կտարածվի ամբողջ մարմնում ու կհասնի սրտին, ու այն ժամանակ նա կմեռնի, ու վե՛րջ»:

Ու երբ ես լսեցի այդ խոսքը, վախեցա քեզ համար, բանի որ քո լավությունն ինձ վրա մեծ պարտք է դրել, և ահա եկա ու պատմեցի քեզ ամեն ինչ»:

Ու երբ որ թագավորն Աբու Քիրի ասածը լսեց, սաստիկ զայրացավ ու ասաց. «Ո՛վ ներկարար, թող ոչ ոք չիմանա այդ գաղտնիքը»: Իսկ հետո թագավորը ցանկացավ բաղնիք գնալ, որպեսզի կասկածները փարատի վստահությամբ:

Ու երբ որ թագավորը մտավ բաղնիք, Աբու Սիրը սովորության համաձայն մերկացավ ու սկսեց զբաղվել նրանով և տրորեց նրա մարմինը, իսկ դրանից հետո ասաց. «Ով ժամանակի արքա, ես մի դեղ եմ պատրաստել, որ ներքևիդ մազերը հեռացնեմ»: Եվ թագավորն ասաց. «Բեր՝ տեսնեմ»: Եվ Աբու Սիրը դեղը բերեց, ու թագավորը զգաց, որ այդ դեղը զզվելի հոտ ունի և համոզվեց, որ դա թույն է:

Եվ նա զայրացավ ու մերձավորներին կանչեց, գոչելով. «Բռնե՛ք սրան»: Եվ մերձավորները Աբու Սիրին բռնեցին, իսկ թագավորը ջասմամբ լցված դուրս գնաց, և ոչ ոք չիմացավ, թե ինչու զայրացավ նա: Եվ թագավորի զայրույթն այնքան ուժեղ էր, որ նա ոչ ոքի ոչինչ չասաց, ու ոչ ոք չհամարձակվեց բան հարցնել նրան:

Եվ ապա թագավորը հագնվեց ու գնաց գիվան և իր մոտ կանչեց ձեռքերը կապկպած Աբու Սիրին, ու պահանջեց, որ նավապետն էլ ներկայանա, և սա ներկայացավ: Ու երբ նավապետը ներկայացավ, թագավորն ասաց նրան. «Այս սրիկային զցիր պարկի մեջ, մի երկու ղանթար՝ էլ շմարած կիր դիր հետն ու պարկի բերանը կապիր, իսկ հետո պարկը դիր նավակը ու մոտեցիր պալատին: Պալատիս որ մոտենաս,

1 Ղանթար— կշռի չափ, մոտավորապես քառասուն կիլոգրամ:

կտեսնես, որ ես նստած եմ լուսամուտի մոտ, ու կասես ինձ. «Գրե՞մ սրան»: Ու ես կասեմ. «Գրիր»: Ու երբ այդ բանը կասեմ, պարկը կզրչես ջուրը, որպեսզի կիրը մարի, ու այն ժամանակ Աբու Սիրը կմեննի խեղդվելով ու վառվելով»:

Ու նավապետն ասաց. «Ուշադրութ՞յն՝ և հնազանդութ՞յուն»: Իսկ հետո նա Աբու Սիրին թագավորի մոտից տարավ մի կղզի, որը թագավորական պալատի դիմաց էր գտնվում, և ասաց բաղնիպանին. «Ո՞վ դու այսինչ, ես մի անգամ եկա քո բաղնիքը, և դու ինձ հարգանք ու պատիվ տվեցիր ու ինչ որ պետք էր, արեցիր: Ես քո բաղնիքում մեծ հաճույք ստացա, և դու երգվեցիր, որ ինձանից վարձ չես վերցնի, ու ես քեզ սիրեցի մեծ սիրով: Պատմիր տեսնեմ, ի՞նչ է եղել քո և թագավորի միջև ու ինչ վատ բան ես արել դու նրան, որ նա բարկացավ քեզ վրա և ինձ հրամայեց, որ այդպիսի վատ մահով մեռնեմ քեզ»:— «Ալլա՛հը վկա,— ասաց Աբու Սիրը,— ես թագավորին ոչ մի բան չեմ արել, ու չգիտեմ, թե ի՞նչ մեղք եմ գործել, որ արժանացել եմ այդ պատժին»: Ու նավապետն ասաց. «Դու թագավորի մոտ մեծ դիրք ունես, որին քեզանից առաջ ոչ մեկը չէր հասել, իսկ ով որ երջանիկ է լինում, ուրիշի նախանձն է շարժում: Միգուցե, մեկն ու մեկը նախանձել է, որ դու այդպիսի երջանկության ես հասել ու քո մասին ինչ-որ բան է գցել թագավորի ականջը, ու թագավորն էլ բարկացել է քեզ վրա: Բայց դու բարի գործով ես եկել մեր քաղաքը, ես քեզ վատ բան չեմ անի: Քանի որ դու ինձ հարգել ես, շնայած մեր մեջ ծանոթություն չի եղել, ես քեզ կազատեմ, բայց երբ ազատեմ քեզ, դու ինձ հետ կմնաս այս կղզում, մինչև որ քաղաքից քո երկիրը գնացող մի նավ պատահի ու այդ նավով քեզ ուղարկեմ քո երկիրը»:

Եվ Աբու Սիրը համբուրեց նավապետի ձեռքն ու շնորհակալութ՞յուն հայտնեց նրան՝ լավութ՞յան համար: Ու հետո նավապետը կիր բերեց ու լցրեց պարկը, և այնտեղ դրեց մարդու շափ մի քար ու ասաց. «Ալլահին եմ ապավինում»:

Ու հետո նավապետը Աբու Սիրին մի ուռկան տվեց և ասաց նրան. «Այս ուռկանը գցիր ծովը, գուցե, մի քիչ ձուկ բռնես: Թագավորի խոհանոցին ամեն օր ձուկ տալն ինձ վրա է դրված, իսկ իմ ուշադրությունը ձկնորսությունից շեղեց քո գլխին եկած դժբախտությունը: Վախենում եմ, որ խոհարարի ծառաները գան ու ձուկ պահանջեն և ձուկ չլինի, և եթե դու մի քիչ բռնես, կգան կտանեն: Իսկ ես գնամ ու պալատի լուսամուտի տակ խորամանկ մի խաղ սարքեմ և ցույց տամ, թե իբր, քեզ ջուրն եմ գցում»:

Եվ Աբու Միրն ասաց. «Ես ձուկ կբռնեմ, իոկ դու գնա գործիդ, և թող ալլահը քեզ օգնական լինի»: Ու նավապետը լիքը պարկը դրեց նավակն ու գնաց, մինչև սր հասավ պալատ:

Ու նա տեսավ, որ թագավորը նստած է լուսամուտի մոտ, և ասաց նրան. «Ո՞վ ժամանակի արքա, գցե՞մ սրան», ու թագավորն ասաց. «Քցի՛ր», և ձեռքով նշան արեց: Հանկարծ ինչ-որ բան օդում փայլեց ու ընկավ ծովը:

Եվ պարզվեց, որ դա թագավորի մատանին էր, որ ծովն ընկավ: Իսկ այդ մատանին կախարդական էր, ու երբ թագավորը մեկն ու մեկի փրա զայրանում էր և ցանկանում էր սպանել, նա զօհին մատնացույց էր անում աչ ձեռքով, որի վրա էլ հենց այդ մատանին էր լինում. մատանուց մի կայծակ էր դուրս թռչում ու խոցում այն մարդուն, որին թագավորը ցույց էր տվել, և այդ մարդու գլուխն ուսերից ընկնում էր: Եվ զորքերը հպատակվում էին թագավորին, և նա հսկաներին իր կամքին էր ենթարկել միմիայն այդ մատանու շնորհիվ:

Ու երբ մատանին թագավորի մատից ընկավ, նա թաքցրեց այդ բանը և չէր կարող ասել. «Իմ մատանին ծովն ընկավ», — որովհետև վախենում էր, որ զորքերն ապստամբեն իր դեմ ու իրեն սպանեն, և նա ձայն չհանեց:

Ահա թե ինչ եղավ թագավորին: Սրան թողնենք այստեղ, գանջ լուր տանք Աբու Միրից: Աբու Միրն էլ նավապետի հեռանալուց հետո ուռկանը վերցրեց ու գցեց ծովը, և քաշեց նա ուռկանը, և ուռկանը դուրս եկավ ձկներով լցված: Ու հետո երկրորդ անգամ գցեց նա, և ուռկանը նորից դուրս եկավ ձկներով լցված: Եվ Աբու Միրն անընդհատ ջուրն էր պցում ուռկանը, և ուռկանը չրի երես էր նլնում ձկներով լեփ-լեցուն, և այդպես արեց այնքան ժամանակ, մինչև որ նրա առջև ձկան մի մեծ կույտ գոյացավ:

Այդ ժամանակ ձկնորսն ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, արդեն երկար ժամանակ է, ինչ ձուկ չեմ կերել»: Եվ Աբու Միրը ջոկեց մի մեծ ու յուզալի ձուկ և մտածեց. «Նավապետը երբ գա, կասեմ, սր տապակի այս ձուկը, ու կձաշեմ»:

Եվ Աբու Միրն սկսեց դանակով կտրատել ջոկած ձուկը, և դանակը դեմ առավ ձկան փորում եղած ինչ-որ բանի, և Աբու Միրը տեսավ, որ դա թագավորի մատանին է, որովհետև այդ ձուկը կուկ էր տվել մատանին ու հետո քախտը նրան քշել բերել էր կղզու խողմը, և ձուկն ընկել էր ուռկանը:

Եվ Աբու Միրը վերցրեց մատանին ու դրեց ճկույթը, առանց իմա-
նալու, թե դա ինչ հատկութուն ունի: Ու հանկարծ խոհարարի ծառա-
ներից երկու կտրիճ եկան, որպեսզի պահանջեն հասանելիք ձուկը, ու,
մոտենալով Աբու Միրին, ասացին. «Ո՞վ մարդ, ո՞ւր է դնացել նավա-
պետը»: Եվ Աբու Միրն ասաց. «Չգիտեմ», և աջ ձեռքով նշան արեց, ու
հանկարծ ծառաների գլուխները ուսերից ընկան ցած, որովհետև Աբու
Միրը մատնացույց արեց նրանց ու ասաց՝ չգիտեմ: Եվ Աբու Միրը գար-
մացավ այդ բանի վրա և ասաց. «Տես է՛... Այդ ո՞վ սպանեց սրանց»: Եվ
դա նրան շատ ծանր բան թվաց ու նա մտքի մեջ ընկավ:

Մեկ էլ հանկարծ նրան մոտեցավ նավապետն ու տեսավ ձկան մեծ
կույտն ու երկու սպանվածին, և Աբու Միրի մատին տեսավ մատանին:

«Ով եղբայր իմ,— ասաց նավապետը նրան,— մի շարժիր ձեռքդ,
որի վրա մատանին է: Եթե դու ձեռքդ շարժես, կսպանես ինձ»:

Եվ Աբու Միրը զարմացավ նրա խոսքի վրա, թե՛ «Մի շարժիր ձեռքդ,
որի վրա մատանին է: Եթե դու ձեռքդ շարժես, կսպանես ինձ»: Ու երբ
նավապետը հասավ նրա մոտ ու հարցրեց. «Ո՞վ է սպանել այս ծառա-
ներին»,— Աբու Միրն ասաց. «Ո՞վ եղբայր, ալլահը վկա, չգիտեմ»: «Ճիշտ
ասացիր,— պատասխանեց նավապետը,— բայց պատմիր տես-
նեմ, թե այդ մատանին ո՞նց է ընկել քեզ մոտ»:— «Այս մատանին տե-
սա այս ձկան փորում ու վերցրի»,— պատասխանեց Աբու Միրը, ու նա-
վապետն ասաց. «Ճիշտ ես տեսում: Ես իմ աչքով տեսա, թե ինչպես
այդ մատանին թագավորի պալատից, փայլելով, ընկավ ծովը, երբ
թագավորը մատնացույց արեց քեզ ու ասաց ինձ. «Գցիր դրան»: Երբ
նա ինձ նշան արեց, ես պարկը գցեցի ջուրը, իսկ մատանին թագավորի
մատից թռավ ու ընկավ ծովը, և այս ձուկը կույ տվեց մատանին, և ալ-
լահը սրան քշեց բերեց քեզ մոտ ու դու էլ բռնեցիր, այնպես որ այդ
մատանին քո բախտն է: Բայց դու գիտե՞ս այդ մատանու հատկու-
թյունները»:— «Չեմ իմանում, թե ինչ հատկութուն ունի սա»,— ասաց
Աբու Միրը: Եվ նավապետն այսպես խոսեց. «Լավ իմացիր, որ մեր
թագավորի զորքերը նրան ենթարկվում են միայն այդ մատանուց վա-
խենալով, որովհետև դա կախարդական է: Ու երբ թագավորը մեկնու-
մեկի վրա բարկանում և ուզում է սպանել, մատնացույց է անում
նրան, և մարդու գլուխն ուսերից պոկվում ու ցած է ընկնում: Այդ մա-
տանուց կայծակ է դուրս թռչում, ու նրա շողքերը հասնում են թագա-
վորին բարկացրած մարչյուն, և սա տեղնուտեղը մեռնում է»:

Ու երբ Աբու Միրն այս խոսքերը լսեց, շատ ուրախացավ ու նա-
վապետին ասաց. «Ինձ հետ տար քաղաք»: Ու նավապետն ասաց. «Ծս

քեզ հետ կտանեմ, քանի որ էլ վախ չունեմ, թե թագավորը վնաս կտա քեզ, որովհետև, եթե ձեռքդ մեկնես նրա կողմը ու մտքիդ դնես սպանել նրան, նրա գլուխը կընկնի քո սուաջ: Թե ուղենաս սպանել թագավորին ու նրա բոլոր ռազմիկներին, առանց դժվարության կարող ես այդ բանն անել»:

Եվ ապա նավապետը մակույկ նստեցրեց Աբու Սիրին ու նրա հետ գնաց քաղաք: Եվ քաղաք հասնելուն պես Աբու Սիրը բարձրացավ թագավորական պալատ ու մտով դիվան և տեսավ, որ թագավորը նստած է ու ռազմիկներն էլ կանգնած են նրա առջև, ու տեսավ, որ թագավորը մեծ վշտի մեջ է մատանու պատճառով, բայց ոչ մի մարդու չի կարող ասել, թե մատանին կորցրել է:

Ու երբ թագավորն Աբու Սիրին տեսավ, ասաց. «Մի՞թե մենք քեզ ծովը չգցեցինք: Ո՞նց արեցիր, որ չրից դուրս եկար»: Եվ Աբու Սիրն ասաց. «Ով ժամանակի արքա, երբ դու հրամայեցիր ծովը գցել ինձ, քո նավապետն ինձ առավ ու գնաց մի կղզի և հարցրեց, թե՞ ինչն է պատճառը, որ թագավորը քեզ վրա բարկացել է, նա հարցրեց. «Ի՞նչ վատություն ես արել թագավորին, որ հրամայել է մեռցնել քեզ»: Եվ ես պատասխանեցի. «Ալլահը վկա, ինձ անհայտ է պատճառը, ես թագավորին ոչ մի վատություն չեմ արել»: Ու նավապետն ասաց. «Դու թագավորի մոտ բարձր դիրք ունես, միգուցե, մեկն ու մեկը նախանձել է քեզ ու թագավորին վատ-վատ բաներ է հասցրել քո մասին, այնպես որ թագավորը քեզ վրա բարկացել է: Բայց ես եկել եմ քո բաղնիքը և դու ինձ հարգել ես ու պատիվ տվել, և բաղնիքում ցույց տված հարգանքիդ համար ես քեզ կազատեմ ու կուղարկեմ քո երկիրը»: Ու հետո նա իմ փոխարեն մի քար դրեց նավակի մեջ ու տարավ ծովը գցեց, բայց նրբ դու նրան ասացիր. «Գցիր» ու մատնացույց արեցիր ինձ, մատանին մատիցդ ընկավ ծովը, ու այդ մատանին ձուկը կուլ տվեց: Իսկ ես այդ ժամանակ կղզում էի և ձուկ էի բռնում, ու այդ ձուկը մյուս ձկների հետ ընկավ ուռկանս, և ես վերցրի նրան և ուզում էի տապակել: Ու երբ դանակով կտրեցի նրա փորը, տեսա, որ մատանի կա այնտեղ: Եվ ես վերցրի այդ մատանին ու դրեցի մատս:

Եվ խոհանոցից ինձ մոտ եկան երկու ծառա և ձուկ պահանջեցին, ու ես, առանց իմանալու մատանու հատկությունները, մատով ցույց տվեցի նրանց, ու նրանց գլուխներն ընկան ցած, իսկ հետո եկավ նավապետն ու ճանաչեց մատանին, որն իմ մատին էր, և ասաց, թե դա կախարդական է, ու ես այդ մատանին բերեցի, որ քեզ տամ, որովհետև դու լավություն արեցիր ու մեծ պատիվ տվեցիր ինձ: Այն բարիքը, որ

դու արեցիր ինձ համար, ես չեմ մոռացել: Ահա քո մատանին, վերցրու, ու եթե ես քեզ այնպիսի վատութիւն եմ արել, որ մահվան եմ արժանի, ասա ինձ, թե որն է իմ մեղքը, ու սպանիր ինձ, և դու ազատ կլինես արշալուստ համար պատասխանատուութիւնից»:

Եվ ապա նա մատանին մատից հանեց ու տվեց թագավորին: Ու երբ թագավորը տեսավ, թե ինչպիսի բարերարութիւն արեց Աբու Սիրը, մատանին վերցրեց ու գրեց մատը, և նրա հոգին տեղն ընկավ:

Ու թագավորը ոտքի ելավ և գրկեց Աբու Սիրին և ասաց. «Ո՞վ մարդ, դու պատկանում ես օրհնյալի ընտրյալ որդիների թվին: Մի՞ մեղադրիր ինձ, ու ներիր այն ամենի համար, ինչ որ ես քեզ արել եմ: Քեզանից բացի, մեկ ուրիշը եթե տեր դառնար այս մատանուն, էլ ինձ չէր տա»:— «Ո՞վ ժամանակի արքա,— ասաց Աբու Սիրը,— եթե ուզում ես, որ քեզ ներեմ, ասա ինձ, թե ի՞նչ մեղք էի գործել, որ դու այդպես բարկացար ինձ վրա. այնքան, որ հրամայեցիր սպանել ինձ»: Ու թագավորը բացականչեց. «Ալլահը վկա, ես հաստատ ապացուցեցի, որ գու անմեղ ես, և ոչ մի մեղք չունես, եթե այս լավութիւնն արեցիր, բայց այն ներկարարը այսպես ու այսպես բաներ ասաց քո մասին»:

Ու թագավորը պատմեց, թե ներկարարն ինչ էր ասել իրեն, և Աբու Սիրն այսպես խոսեց. «Ո՞վ ժամանակի արքա, ալլահը վկա, ես քրիստոնյաների ոչ մի թագավորի չեմ ճանաչում ու կյանքումս քրիստոնյաների երկիր չեմ գնացել, մտքովս էլ չի անցել սպանել քեզ, բայց այդ ներկարարը ընկերս ու հարևանս էր Իսքանդարի քաղաքում, ու այնտեղ կյանքը մեզ շատ նեղեց, և մենք սննդի պակասութեան պատճառով հեռացանք այնտեղից, ու մեկս մյուսին ֆաթիհան կարգացինք, որ աշխատողը շաշխատողին պիտի կերակրի, և իմ ու ներկարարի միջև այսպես ու այսպես բաներ եղան»:

Եվ Աբու Սիրը թագավորին պատմեց այն ամենը, ինչ եղել էր ներկարար Աբու Քիրի ու իր միջև՝ ինչպես է այդ ընկերը վերցրել իր փողերն ու խանի սենյակում հիվանդ թողնելով իրեն, հեռացել, ինչպես է խանի զոնապահը պահել-պահպանել իրեն և ահագին փող ծախսել, երբ ինքը հիվանդ էր, մինչև որ ալլահը լավացրեց իրեն, ու ինչպես դրանից հետո ինքը ոտքի կանգնել ու սովորականի պես գործիքներն առած սկսել շրջել քաղաքում, և ճանապարհին տեսել ներկատունը, որի մոտ խոնավել էր ամբոխը, ու մարդիկ հրմշտում էին իրար, և ներկատան դռնից ներս նայելով, տեսել Աբու Քիրին, որը բազմել էր նստարանին, և ներս էր մտել, որ ողջունի ընկերոջը, ու ինչպես է Աբու Քիրն իրեն վի-

բազմորեկ ու ձաղկեկ և ասել, որ նա ավագակ է ու տանջալից ծեծ է տվել իբեկ:

Եվ այդպես Աբու Սիրը սկզբից մինչև վերջ թագավորին պատմեց այն ամենը, ինչ եկել էր իր գլուխը, ու հետո ասաց. «Ո՛վ ժամանակի արքա, նա՛ ինձ ասաց. «Այսպիսի մի գեղ պատրաստիր ու տուր թագավորին: Բաղնիքն ամեն ինչով կատարյալ է, միայն այս դեղն է պակաս»: Եվ իմացիր, ո՛վ ժամանակի արքա, որ այդ դեղը վնասակար չէ: Մեր երկրում մենք այդ դեղը պատրաստում ենք, և դա բաղնիքում անպատճառ լինում է, բայց ես մոռացել էի: Եվ երբ ներկարաբը բաղնիք եկավ, ու ես հարգանք և պատիվ տվեցի նրան, նա հիշեցրեց այդ դեղի մասին ու ասաց. «Պատրաստիր այդ դեղը»: Ո՛վ ժամանակի արքա, մարդ ուղարկիր, թող խանի դոնապահին ու ներկատան բանվորներին կանչեն, և դու հարցրու նրանց բոլորին՝ ճի՞շտ է իմ պատմածը, թե չէ»:

Ու թագավորը մարդ ուղարկեց, որ խանի դոնապահին ու ներկատան բանվորներին կանչեն, ու երբ նրանք բոլորն էլ եկան, հարցուփորձ արեց նրանց, և նրանք ամեն ինչ պատմեցին: Եվ այդժամ թագավորը մարդ ուղարկեց, որ ներկարարին բերեն, և ասաց. «Նրան ինձ մոտ բերեք բոբիկ, գլխաբաց ու ձեռքերը կապկպած»:

Իսկ ներկարարն իր տանը նստած ուրախանում էր, որ Աբու Սիրին սպանել էր տվել: Ու դեռ ուշքի չէր եկել նա, երբ թագավորի մերձավորները վրա պրծան, ու հարվածները տեղացին նրա վզակոթին, իսկ հետո նրա թևերը ոլորեցին, ձեռքերը կապկպեցին ու տարան թագավորի մոտ: Եվ Աբու Քիրը տեսավ, որ Աբու Սիրը նստած է թագավորի կողքին, իսկ խանի դոնապահն ու ներկատան բանվորները կանգնած են նրա առջև: Եվ խանի դոնապահը հարցրեց նրան. «Սա քո ընկերը չէ՞, որի փողերը գողացար ու որին հիվանդ թողեցիր իմ խանի սենյակում և այսպես ու այսպես օյիններ բերեցիր գլուխը»: Իսկ ներկատան բանվորները հարցրին. «Սա այն մարդը չէ՞, որին դու պատվիրեցիր բռնել, ու մենք էլ ծեծեցինք»:

Ու թագավորի համար պարզ դարձավ Աբու Քիրի ստորոթյունը ու այն, որ նա տվելի մեծ պատժի է արժանի, քան Մունքարի ու Նաքիրի¹ տանջանքները, ու դրա համար էլ ասաց. «Տարեք սրան ու ման տվեք

¹ Մունքարի ու Նաքիրի տանջանքները— արաբական հավատալիքի համաձայն, Մունքար ու Նաքիր հրեշապանները իջնում են ոչ մուսուլմանի գերեզմանը նրա մահվան առաջին օրերն ու դաժան տանջանքների են ենթարկում նրան:

քաղաքում, իսկ հետո դրեք պարկի մեջ ու գցեք ծովը»։ «Ո՞վ ժամանակի արքա,— ասաց Աբու Սիրը,— այդ մարդուն զիջիր ինձ։ Ես ներել եմ նրան այն ամենը, ինչ նա արել է ինձ»։— «Քե դու քեզ համար սրան ներեցիր, ես ինձ համար չեմ կարող ներել»,— պատասխանեց թագավորը, և ապա նա գոռաց ու հետո ասաց. «Տարե՛ք սրան»։ Եվ Աբու Քիրին տարան ու ման տվեցին քաղաքում, իսկ հետո դրեցին պարկի մեջ, ու հետև էլ կիր դրեցին, ու պարկը գցեցին ծովը, և Աբու Քիրը մեռավ, խեղդվելով ու վառվելով։

«Ո՞վ Աբու Սիր,— ասաց թագավորը,— մի բան խնդրիր ինձանից և կատանաս»։ Եվ Աբու Սիրն ասաց. «Ես խնդրում եմ քեզանից, որ ուղարկես ինձ իմ երկիրը, այստեղ ապրելու ցանկություն այլևս չունեմ»։

Ու թագավորը առաջվա պարզեններից ու նվերներից բացի, Աբու Սիրին շատ փող տվեց, իսկ հետո նվիրեց մի նավ, որ բեռնված էր ամեն տեսակ բարիքով, իսկ նավաստիները ստրուկներ էին։ Ու թագավորը նրանց էլ նվիրեց Աբու Սիրին այն բանից հետո, երբ նրան առաջարկեց իր վեզիրը դառնալ, բայց Աբու Սիրը չհամաձայնեց։

Իսկ հետո Աբու Սիրը հրաժեշտ տվեց թագավորին ու գնաց։ Ու ինչ որ կար նավի վրա, նրա սեփականությունը դուրձավ, նույնիսկ նավաստիները նրա ստրուկները դարձան։ Եվ գնաց Աբու Սիրն անդադար, մինչև որ հասավ Իսքանդարիե։

Եվ նրանք խարիսխ գցեցին Իսքանդարիե քաղաքի մոտ ու ցամաք իջան։ Եվ Աբու Սիրի ստրուկներից մեկը ափի մոտ մի պարկ տեսավ ու Աբու Սիրին ասաց. «Տե՛ր իմ, ափի մոտ մի մեծ ու ծանր պարկ տեսա ու բերանն էլ կապած է, ու ես չգիտեմ, թե դրա մեջ ինչ կա»։ Եվ Աբու Սիրը մոտեցավ ու բաց արեց պարկը։ Եվ նա դրա մեջ տեսավ Աբու Քիրին, որին ծովը քշել էր Իսքանդարիեի կողմը։ Եվ Աբու Սիրը պարկից հանեց նրան ու թաղեց Իսքանդարիեի մոտերքում, և նրա գերեզմանի պահպանման համար վարձ նշանակեց, և դամբարան, Կոստն վրա այսպիսի բանաստեղծություն գրեց.

Քույր մարդկանց մեջ մարդ ճանաչվում է լոկ իր գործերով.
Ազատ հոգու տեր մարդը վսեմ է իր արարքներով
Ուրիշներին մի նախաաիր այդպես, և հազվադեպ, չէ,
Որ մարդ ինչ ասի, իրեն կդառնա ասածը նորից։
Վատ ու անպատիվ բաներ ասելուց խուսավիր խսպառ.
Երբ խոսք ես ասում կատակով թեկուզ կամ լուրջ, կարևոր.
Չէ՞ որ մենք տուն ենք տանում շանն ազնիվ ցեղից վերցրած,

Իսկ դաժան առյուծն շղթայակապ է, քանզի անմիտ է:
Ծովի երես է ալյաց հոսանքը հանում դիակներ,
Իսկ մարգարիտը ծովի ավազի խորքում է պահվում:
Չէ՞ որ ճնճգուկը ուժեղ բազեի հեա արդ շի մրցի
Հենց միայն խելքի իր պակասությամբ կամ հիմարությամբ:
Երկնքի, օդի էջերի վրա դրած է այսպես.
«Ով որ լավ գործ է կաատրել կյանքում, նույնը կստանա»:
Մի՛ փորձիր շաքար ստանալ կանաչ սոխից դու երբեք,
Չէ՞ որ աշխարհում ամեն բույս իր ուրույն համը ունի:

Եվ հետո Աբու Սիրն ապրեց միառժամանակ, և ալլահը նրան տա-
րավ իր մոտ: Ու նրան թաղեցին իր ընկերոջ՝ Աբու Քիրի, գերեզմանի
կողքին, ու դրա համար էլ տեղն անվանեցին Աբու Քիր և Աբու Սիր,
իսկ հիմա այդ տեղը հայտնի է որպես Աբու Քիր: Եվ սա է այն ամենը,
ինչ որ նրանց պատմությունից հասել է մեզ: Ուրեմն, փա՛ռք հավեր-
ժական գոյությունը, որի կամքով գիշերն ու ցերեկը փոխարինում են
իրար:



Ungulup
Uupnch
Stphuyob



Ո՛վ երջանիկ արքա, պատմում են նաև, որ պարսպապատ Մըսըր¹ քաղաքում կար մի մաշակար, որը հին մույկեր էր կարկատում: Նրա անունը Մարուֆ էր, և նա մի կին ուներ, անունը Ֆաթիմա, իսկ մականունը՝ վհուկ, և այդպես էին անվանել նրան, որովհետև պիղծ շարագործ էր նա, անամոթ ու խառնակիչ:

Եվ այդ կինը իշխում էր ամուսնու վրա, ու ամեն օր նախատում էր, և հազար անգամ անիծում, իսկ Մարուֆը սարսափում էր կնոջ կատաղությունից ու վախենում նրա վնասից, քանի որ ինքը խելացի մարդ էր և ամաշում էր իր պատվի համար: Բայց Մարուֆն աղքատ էր, ու երբ շատ փող էր վաստակում, կնոջ վրա էր ծախսում, իսկ երբ քիչ փող էր վաստակում, կինը հենց նույն գիշերը նրա մեջքից յոթ կաշի էր հանում և մարդուն զրկում էր առողջությունից, ու Մարուֆի գիշերը նույնքան սև էր դարձնում, ինչքան իր մեղքերի մի էջն էր: Եվ նման էր նա այն կնոջը, որի մասին բանաստեղծն ասել է.

Քանի՞ գիշեր եմ ես կնոջս մոտը քնել...

Վատթար վիճակում եմ միշտ անցկացրել դրանք:

Օ՛, երանի՛ նրա մոտը գնալիս հենց

Թույն տանեի, նրան թունավորեի ես:

Այն ամենի թվում, ինչ որ կնոջ պատճառով եկել էր այդ մարդու գլուխը, ահա մի այսպիսի բան է եղել: Մի անգամ կինն ասաց. «Ո՛վ Մարուֆ, ես ուզում եմ, որ դու այսօր իրիկուն ճանճի մեղրով պատարաստած կունաֆա բերես ինձ համար»: Ու Մարուֆն ասաց. «Ալլահն

1 Մըսըր— Միջնագարյան նգիպտոսի Կահիրե քաղաքի անուններից մեկը:

ինձ կօգնի վաստակելու այդ բլիթի գինը, և այսօր իրիկուն դրանից կբերեմ քեզ համար: Ալլա՛հը վկա, այսօր ես փող չունեմ, բայց տերը ողորմած է, նա կթեթևացնի մեր հոգսը»: Ու Ֆաթիման բղավեց. «Ես այդպիսի խոսքեր չգիտեմ՝ «կթեթևացնի» կամ «չի թեթևացնի», բայց առանց կունաֆայի աչքիս չերևաս, թե չէ ես քո գիշերն այնպես սև կանեմ, ոնց որ բախտդ էր, երբ ամուսնացար ինձ հետ ու ճանկս ընկար»:— «Մեծահոգի է ալլահը»,— ասաց Մարուֆը, իսկ հետո այդ մարդը տնից դուրս գնաց, և հոգսը թափվում էր նրա վրայից:

Եվ նա առավոտյան նամազն արեց ու կրպակը բացեց և ասաց. «Ո՛վ տեր աստված, աղաչո՛ւմ եմ, հասցրու այդ կունաֆայի գինը և այս գիշեր ազատիր ինձ այդ պիղծ կնոջ կատաղությունից»:

Եվ Մարուֆը մինչև կեսօր նստեց կրպակում, բայց մարդ չեկավ ու գործ չտվեց նրան, և կնոջ վախը սաստկացավ նրա մեջ:

Եվ վեր կացավ Մարուֆն ու կրպակը փակեց, շիմանալով, թե ինչպես կունաֆա ձեռք բերի, երբ հաց առնելու փող չուներ:

Եվ նա կունաֆա ծախողի խանութի մոտով անցնելիս շփոթված կանգ առավ, և նրա աչքերն արցունքով լցվեցին: Եվ կունաֆա ծախողը նկատեց նրան ու ասաց. «Ո՛վ ուստա Մարուֆ, ինչո՞ւ ես լալիս: Ասա տեսնեմ, թե ի՞նչն է խոցել քո սիրտը»:

Եվ Մարուֆը պատմեց իր կյանքի պատմությունն ու ասաց. «Կնոջս սիրտը քար է, և նա պահանջեց, որ այս իրիկուն կունաֆա տանեմ տուն, ու ես այնքան նստեցի կրպակում, մինչև որ կեսօր դարձավ, և ոչ ոք չեկավ ու գործ չբերեց, ու ես նույնիսկ հացի փող չվաստակեցի, և կնոջիցս վախենում եմ»:

Եվ կունաֆա ծախողը ծիծաղեց ու ասաց. «Քեզ փորձանք չի պատահի, մի՛ վախենա: Քանի՞ րաթլ կունաֆա ես ուզում»:

«Հինգ րաթլ»,— ասաց Մարուֆը: Եվ կունաֆա ծախողը կշռեց նրա համար հինգ րաթլ ու ասաց. «Արդար յուղ ունեմ, բայց ճանճի մեղր չունեմ, միայն եղեգնի մեղր կա: Մա ավելի լավն է, քան ճանճի մեղրը, և ի՛նչ մի մեծ դժբախտություն է, եթե կունաֆան եղեգնի մեղրով լինի»:

Ու Մարուֆն ամաչեց, քանի որ կունաֆա ծախողը պիտի շատ սպասեր փողին, և նա ասաց. «Լավ, եղեգնի մեղրով թող լինի»: Եվ կունաֆա ծախողը բլիթը յուղի մեջ տապակեց ու եղեգնամեղրի մեջ թաթախեց, և դա թագավորին արժանի մի նվեր դարձավ:

1 Կունաֆա — յուղով թխած բլիթ, որին մեղր է խառնած:

Իսկ հետո կունաֆա ծախողն ասաց. «Իսկ հաց ու պանիր պետք չի՞ քեզ»:— «Պետք է»,— ասաց Մարուֆը: Եվ կունաֆա ծախողը շորս կես արծաթի հաց տվեց նրան ու մի կես արծաթի էլ պանիր, իսկ կունաֆայի գինը տասը կեսարծաթ էր, և ասաց. «Ո՛վ Մարուֆ, իմացիր, որ քո պարտքը տասնհինգ կեսարծաթ եղավ: Գնա կնոջդ մոտ ու հաճույք ստացիր, իսկ այս մի կեսանոցը վերցրու բաղնիքի համար, ու ես քեզ ժամանակ եմ տալիս՝ մեկ, երկու կամ երեք օր, մինչև որ ալլահը քեզ մի բան տա: Եվ մի՛ նեղի կնոջդ, ես կսպասեմ, մինչև ծախսերից դուրս փո դմն ա քեզ մոտ, որպեսզի պարտքդ տաս»:

Եվ Մարուֆը վերցրեց կունաֆան, հացն ու պանիրը և կունաֆա ծախողին օրհնելով, գնաց: Եվ նա գնում էր բուժված սրտով ու ասում էր. «Փառք քեզ, աստված, ինչքան մեծահոգի ես դու»:

Ու հետո նա մտավ կնոջ մոտ, և սա հարցրեց. «Կունաֆա բերե՞լ ես»: Ու Մարուֆը պատասխանեց. «Բերել եմ», և կունաֆան դրեց կնոջ առջև: Ու Ֆաթիման աչք գցեց բլիթի վրա ու տեսնելով, որ դա եղեգնամեղրով է, ասաց. «Ես քեզ շասացի՞՞ ճանճի մեղրով պատրաստածը բեր: Դու իմ ասածի հակառակն ես անում և եղեգնի մեղրով պատրաստածն ես բերում»:

Եվ Մարուֆը ներողություն խնդրեց կնոջից ու ասաց. «Ես սա պարտքով եմ առել, փող ունեցա թե չէ, պիտի տամ»: Եվ կինը բղավեց. «Փուշ բաներ ես ասում: Ես միայն ճանճի մեղրով կունաֆա կուտեմ»:

Եվ նա բարկացավ կունաֆայի պատճառով, ու բլիթը շրմփացրեց Մարուֆի երեսին և ասաց. «Ո՛վ դու, կավատ, վեր կաց ու գնա ուրիշը բեր», իսկ հետո բռունցքով զարկեց մարդու ծնոտին ու ատամներից մեկը շարդեց, և արյունը հոսեց Մարուֆի կրծքի վրայով:

Եվ սաստիկ զայրույթից Մարուֆը մի թեթև հարված հասցրեց կնոջ գլխին և այդժամ Ֆաթիման բռնեց նրա մորուքն ու սկսեց բղավել. «Ո՛վ մուսուլմաններ, հասե՛ք»: Եվ հարևանները մտան ներս ու կնոջ ձեռքից ազատեցին Մարուֆի մորուքը, և հարձակվեցին Ֆաթիմայի վրա նախատինքներով, և սկսեցին նրան ամոթանք տալ ու տսել. «Մենք բուլոբս էլ հաճույքով եղեգնի մեղրով կունաֆա ենք ուտում: Այս խեղճ մարդուց ի՞նչ ես ուզում, ի՞նչ զազանություն է քո արածը: Ամո՛թ քեզ, հազա՛ր ամոթ»:

Եվ հարևաններն այնքան ժամանակ համողեցին Ֆաթիմային, մինչև որ նրան հաշտեցրին Մարուֆի հետ, բայց երբ մարդիկ գնացին, երգվեց, որ այդ կունաֆայից մի փշրանք էլ չի ուտի.

Իսկ Մարութին քաղցը վառում թողնում էր, և նա ինքն իրեն ասաց. «Նա երգվեց, որ կունաֆային ձեռք չի տա, որ այդպես է, ես կուտեմ»։ Եվ սկսեց ուտել։ Ու երբ Ֆաթիման տեսավ, որ նա կունաֆան ուտում է, ասաց. «Ա՛խ, ալլահը, որ կամենա, կերածդ թույն կդառնա ու մարմինդ կնեխի»։— «Ասածդ չի լինի,— պատասխանեց Մարութն ու շարունակեց ուտել և ծիծաղել, ասելով,— դու երգվեցիր, որ այս կունաֆան չես ուտելու, բայց ալլահը մեծ է ու մեծահոգի, ու եթե նա կամենա, ես վաղը երեկոյան քեզ համար ճանճի մեղրով պատրաստած կունաֆա կբերեմ և մենակ դու կուտես»։

Եվ Մարութն սկսեց կնոջն հանգստացնել, իսկ կինը մինչև առավոտ անիծում, հայհոյում ու նախատում էր նրան։ Երբ առավոտը բացվեց, նա թևերը քշտեց, որ Մարութին ծեծի, և Մարութն ասաց նրան. «Ժամանակ տուր, ու ես քեզ համար ուրիշ կունաֆա կբերեմ»։

Եվ Մարութը գնաց մզկիթ, աղոթք արեց ու հետո ուղևորվեց իր կրպակը և բաց արեց ու նստեց։ Եվ նստել էր շէր նստել, մեկ էլ ղազիի կողմից երկու մարդ եկան ու ասացին. «Վեր կաց, ղազին քեզ կանչում է, կինդ գանգատ է արել քեզանից, և նրա տեսքն այսպես է ու այնպես»։

Եվ Մարութը հասկացավ, որ դա իսկապես Ֆաթիման կլինի, և ասաց. «Մեծազո՞ր ալլահը թող փշացնի նրա կյանքը»։ Եվ ապա նա այդ մարդկանց հետ գնաց ու մտավ ղազիի մոտ և տեսավ, որ կինը ձեռքը փաթաթած նստած է, և նրա շաղրան արյունոտ է, և նա կանգնել ու լաց էր լինում և արցունքներն էր սրբում։

Եվ ղազին ասաց նրան. «Ո՞վ մարդ, մի՞թե դու մեծազոր ալլահից չես վախենում։ Ինչո՞ւ ես ծեծում այս կնոջը, ու թևն էլ կոտրել ես, և ատամը՝ փշրել, ու այդպիսի վատ բաներ ես անում»։

Եվ Մարութը բացականչեց. «Եթե ես նրան ծեծել եմ կամ ատամը ջարդել, դատիր ինձ, ինչպես կամենաս, բայց բանն այսպես ու այսպես է եղել, ու հարևաններն են ինձ հաշտեցրել նրա հետ»։

Եվ Մարութը սկզբից մինչև վերջ պատմեց ամբողջ պատմությունը, իսկ ղազին բարի մարդ էր, և նա դրպանից հանեց մի քառորդ ղինար ու Մարութին ասաց. «Ո՞վ մարդ, այս փողը վերցրու և կնոջդ համար ճանճի մեղրով կունաֆա պատրաստել տուր և հաշտվիր նրա հետ»։

Ու Մարութն ասաց. «Փողը նրան տուր»։ Եվ Ֆաթիման փողը վերցրեց, ու ղազին նրանց հաշտեցրեց և ասաց. «Ո՞վ կին, ամուսնուդ ասածը լսիր ու հպատակվիր նրան։ Իսկ դու սիրով վաբվիր նրա հետ, ո՞վ մարդ»։

Եվ Մարութն ու Ֆաթիման ղազիի շնորհիվ իրար հետ հաշտված

դուրս եկան, և կինը մի ճամփով դնաց, իսկ նրա ամուսինը մի ուրիշ ճամփով դնաց իր կրպակն ու նստեց այնտեղ:

Եվ հանկարծ ղազիի մարդիկ եկան նրա մոտ և ասացին. «Մեր վարձը տուր»: Եվ Մարուֆը բացականչեց. «Ղազին ինձանից ոչինչ չվերցրեց, հակառակը, ինքը մի քառորդ դինար տվեց»: Բայց մարդիկ ասացին: «Մեզ չի հետաքրքրում՝ ղազին քեզ փող է տվել, թե վերցրել է քեզանից, ու եթե դու մեր վարձը չտաս, գոռով կտանենք»: Եվ նրանք Մարուֆին քարշ տվին շուկայով մեկ: Ու մաշակարը ծախեց իր գործիքներն ու այդ մարդկանց կես դինար տվեց, և նրանք բաց թողեցին նրան, իսկ Մարուֆը ձեռքը դրեց երեսին և տխուր-տրտում նստեց, որովհետև գործիք չունեի, որ աշխատեր:

Նստել էր, չէր նստել, մեկ էլ մոտեցան այլանդակ տեսքով երկու մարդ ու ասացին նրան. «Վեր կաց, ո՛վ մարդ, ղազին քեզ կանչում է, կինդ նրան գանգատ է արել քեզանից»:— «Ղազին ինձ հաշտեցրել է կնոջս հետ»,— պատասխանեց Մարուֆը: Բայց մարդիկ նրան ասացին: «Մենք ուրիշ ղազիի կողմից ենք եկել. կինդ մեր ղազիին է գանգատ արել քեզանից»:

Եվ Մարուֆը ոտքի ելավ, ալլահից օգնություն խնդրելով, որ կարողանա կնոջ հախից գալ, և Ֆաթիմային տեսնելով, ասաց. «Մի՞թե մենք չհաշտվեցինք, ո՛վ ազնիվ մարդու աղջիկ»:

Ու Ֆաթիման գոչեց. «Իմ ու քո միջև հաշտություն չի լինի»: Եվ այդժամ Մարուֆն առաջ եկավ ու ղազիին պատմեց իր դիտելի եկածն ու ասաց. «Այսինչ ղազին հենց նոր հաշտեցրեց մեզ»: Ու ղազին բացականչեց. «Ո՞վ անառակ կին, որ հաշտվել եք, էլ ինչո՞ւ ես գալիս գանգատ անում»:— «Դրանից հետո այս մարդն էլի ծեծեց ինձ»,— ասաց Ֆաթիման: Եվ ղազին այսպես խոսեց. «Հաշտվեք, և դ՛ն այս կնոջն այլևս չծեծես, իսկ սա էլ քեզ չի հակառակի»:

Եվ Մարուֆն ու կինը հաշտվեցին, ու ղազին ասաց մաշակարին. «Տուր իմ մարդկանց վարձը»: Եվ Մարուֆն իրեն կանչողների վարձը տվեց ու դնաց իր կրպակը և բաց արեց ու նստեց այնտեղ, և նա ասես հարբած լինեի իրեն հասած վշտից:

Եվ երբ նա այդպես նստած էր, հանկարծ մոտեցավ մի մարդ ու ասաց նրան. «Ո՞վ Մարուֆ, գնա պահ մտիր, կինդ քեզանից գանգատ է արել բարձր դռանը, ու քեզ մոտ է գալիս Աբու Թաբակը»¹: Եվ Մարուֆը վեր կացավ ու, կրպակը փակելով, վազեց Հաղթանակի դարպա-

¹ Աբու Թաբակ (բառացի՝ ծեծի հայրը) — բանտապետը:

սի կողմը: Իսկ կաղապարի ու գործիքի փողից մաշակարի գրպանում մնացել էր արծաթե հինգ կեսանոց, և Տաթիմայից փախչելիս նա շորս կեսանոցի հաց առավ ու մի կեսանոցի էլ պանիր, և սա ձմռանն էր, կեսօրից անց:

Ու երբ Մարուֆը հասավ աղբանոց, այնպիսի մի անձրև տեղաց նրա վրա, որ կարծես տկերով ջուր էին թափում երկնքից, և նրա շորերը թրջվեցին: Նա մտավ ալ-Ադիլիա՝ ու տեսավ քանդված մի շինութուն, որը չբլված և անդուռ պահեստ էր: Եվ Մարուֆը մտավ այդտեղ, որ անձրևից պատսպարվի, ու նրա հագուստը տակետակ թրջվել էր:

Եվ արցունքները թափվեցին նրա աչքերից, ու նա ճնշված էր պատահածից, և այսպես խոսեց. «Ո՛ր փախչեմ այդ անառակից: Ո՛վ մեծազոր տեր, աղաչո՛ւմ եմ քեզ, մեկին ուղարկիր ինձ մոտ, որ ինձ հետու երկրներ տանի, որոնց ճամփան շիմանա այդ անառակ կիկը»:

Ու երբ մաշակարն այդպես նստած լաց էր լինում, հանկարծ պատր երկու կես եղավ ու ճեղքից դուրս եկավ բարձրահասակ մի արարած, որի տեսքից մարդու մարմնի մազերը բիզ-բիզ էին կանգնում, և այդ արարածն ասաց. «Ո՛վ մարդ, ինչո՞ւ այս իրիկուն անհանգստացրիր ինձ: Երկու հարյուր տարի է, ինչ ապրում եմ այստեղ, ու չեմ տեսել, որ մեկնումեկը մտներ այս շենքն ու աներ այն, ինչ դու ես անում: Ասա ինձ քո մտքիներ, և ես կկատարեմ քո ուզածը. մեղքս տվեց, երբ ասածը լսեցի»:
— «Ո՛վ ես դու և ի՞նչ ես դու», — հարցրեց Մարուֆը: Եվ այդ արարածը պատասխանեց. «Ես այստեղի բնակիչն եմ»:

Եվ այնժամ Մարուֆը պատմեց, թե ինչեր են եղել իր ու իր կնոջ միջև և ոգին հարցրեց. «Ուզո՞ւմ ես, քեզ այնպիսի մի երկիր տանեմ, որ կինդ քո ճամփան չգտնի»:
— «Այո» — պատասխանեց Մարուֆը: Եվ ոգին ասաց. «Նստիր մեջքիս»: Ու Մարուֆը նստեց նրա մեջքին, և ոգին տարավ նրան: Ու թռավ նա մայրամուտից մինչև արևածագ և իջավ մի բարձր սարի գագաթին ու ասաց. «Ո՛վ մարդ, սարից իջիր ցած, և դու կտեսնես քաղաքի ծայրամասը: Մտիր քաղաք, կինդ քո ճամփան չի իմանա, ու նրա համար անհնար կլինի հասնել քեզ»:

Եվ ոգին Մարուֆին թողեց այդտեղ ու չբլեց: Եվ Մարուֆն այդպես մոլորված ու շփոթված նստեց, մինչև որ արևը ծագեց: Եվ այդժամ մաշակարն ինքն իրեն ասաց. «Վեր կենամ ու իջնեմ քաղաք, այստեղ նստելու մեջ ոչ մի օգուտ չկա»:

1 Ալ-Ադիլիա — մզկիթ կահիրեում:

Եվ մաշակարն իշավ սարի ստորոտն ու մի քաղաք տեսավ, որի պարիսպը և պալատներն այնքան բարձր էին, որ երկինք էին հասնում, ու տեսավ գեղեցիկ զարդարանքներով շինություններ, և քաղաքը տեսնողի համար վայելք էր և ուրախություն:

Եվ Մարուֆը ներս մտավ քաղաքի դարպասով ու տեսավ, որ այդ քաղաքն ուրախացնում է մարդու վշտացած սիրտը: Ու երբ նա անցնում էր շուկայով, մարդիկ նայում էին նրան ու շորս կողմից դիտում: Ու նրանք բոլորը հավաքվեցին Մարուֆի շուրջը, զարմանալով նրա հագուստի վրա, որովհետև մաշակարի հագուստն իրենց շորերի նման չէր: Եվ քաղաքի բնակիչներից մեկը հարցրեց նրան. «Ո՞վ մարդ, օտարակա՞ն ես»: Եվ Մարուֆը պատասխանեց. «Այո»:— «Ո՞ր երկրից ես»,— հարցրեց այդ մարդը, և Մարուֆը պատասխանեց. «Երջանիկ Մըսըր քաղաքից եմ», և այդ մարդը հարցրեց. «Վաղո՞ւց է, որ հեռացել ես այդ քաղաքից»:— «Երեկ, կեսօրից հետո»,— պատասխանեց Մարուֆը: Եվ այդ մարդը ծիծաղեց ու ասաց. «Ո՞վ մարդիկ, մի եկեք սրան տեսեք ու լսեք, թե ինչ է ասում»:— «Ի՞նչ է ասում»,— հարցրին մարդիկ, և այդ մարդն ասաց. «Պնդում է, թե ինքը Մըսըրից է ու երեկ կեսօրից հետո է դուրս եկել այնտեղից»:

Եվ բոլորը ծիծաղեցին: Ու մարդիկ հավաքվեցին Մարուֆի շուրջը և ասացին. «Ո՞վ մարդ, դու դիվոտ ես, եթե այդպիսի բան ես ասում: Ինչպե՞ս ես պնդում, թե իբր, երեկ ճաշից հետո ես Մըսըրից հեռացել, և այսօր առավոտյան հայտնվել այնտեղ: Զե՞ որ մեր քաղաքից Մըսըր մի ամբողջ տարվա ճամփա է»:— «Զեզանից դիվոտը չկա,— ասաց Մարուֆը,— իսկ ինչ ինձ է վերաբերում, ապա իմ ասածը զուտ ճշմարտություն է: Ահա Մըսըրի հացը, դեռ տաք է»:

Եվ Մարուֆը հացը ցույց տվեց մարդկանց, և բոլորն սկսեցին շուռումուռ տալ այն հացը, ամեն կողմից նայել ու զարմանալ, քանի որ այդ հացն իրենց երկրի հացի նման չէր:

Եվ մարդկանց մի մեծ բազմություն խոնվեց Մարուֆի շուրջը, և նրանք սկսեցին իրար ասել. «Ահա Մըսըրի հացը, տեսեք»: Եվ Մարուֆը հայտնի դարձավ այդ քաղաքում, ու մարդկանցից ոմանք հավատում էին նրան, իսկ ոմանք չէին հավատում ու ծիծաղում էին նրա վրա:

Ու երբ մարդիկ այդպես հավաքված խոսում էին Մարուֆի մասին ու ծիծաղում, հանկարծ նրանց մոտեցավ ջորի հեծած մի վաճառական, որի հետևից գալիս էին երկու ստրուկ, ու վաճառականը ցրեց ամբոխն ու ասաց. «Ո՞վ մարդիկ, չեք ամաչո՞ւմ, որ հավաքվել եք այս ցտարականի շուրջն ու ձեռ եք առնում նրան ու ծիծաղում: Ի՞նչ գործ ունեք այս

մարդու հետ»։ Եվ վաճառականն այնքան նախատեց մարդկանց, մինչև որ Մարուֆի մոտից քշեց նրանց, և ոչ ոք նրան պատասխան տալ չկարողացավ։

Իսկ հետո վաճառականն ասաց. «Մոտ եկ, ո՛վ եղբայր։ Այս անամոթ մարդկանցից քեզ վնաս չի գա»։ Եվ նա Մարուֆին տարավ մի ընդարձակ ու զարդարված տուն, և նստեցրեց նրան թագավորին վայել մի բազմոցի վրա, իսկ հետո ստրուկներին հրաման տվեց, ու նրանք բաց արեցին սնդուկն ու այնտեղից հանեցին հազարատեր վաճառականի հագուստ, ու վաճառականն այդ շորը հագցրեց Մարուֆին։ Իսկ Մարուֆը բարետես մարդ էր, և այդ շորերն էլ երբ հագավ, նմանվեց վաճառականների գլխավորի։

Հետո այդ վաճառականը պահանջեց, որ սփռոց գցեն ու սեղան բաց անեն, և նրա առջև սփռոց գցեցին, որի վրա ամեն տեսակ փառահեղ ուտելիք կար։ Եվ վաճառականն ու Մարուֆը կերան ու խմեցին, իսկ հետո վաճառականը Մարուֆին հարցրեց. «Ով եղբայր իմ, անունդ ի՞նչ է»։ Եվ Մարուֆը պատասխանեց. «Անունս Մարուֆ է, իսկ արհեստով ես մաշակար եմ ու հին մուլկեր եմ կարկատում»։— «Ո՞ր երկրից ես»,— հարցրեց վաճառականը, ու Մարուֆը պատասխանեց. «Մըսրից եմ»։— «Ո՞ր թաղից ես»,— հարցրեց վաճառականը։ «Մի՞թե դու Մըսրի թաղերը դիտես»,— իր հերթին հարցրեց Մարուֆը, և վաճառականը պատասխանեց. «Ես այնտեղ եմ ծնվել»։ Եվ այն ժամանակ Մարուֆն ասաց. «Ես Կարմիր փողոցից եմ»։— «Իսկ Կարմիր փողոցից ո՞ւմ ես ճանաչում»,— հարցրեց վաճառականը, և Մարուֆն ասաց. «Այսինչին ու այնինչին»,— և նա շատ մարդկանց անուն տվեց։

Եվ վաճառականը որ այդ լսեց, հարցրեց. «Իսկ ներկ ծախող շեյխ Ամհեդին ճանաչո՞ւմ ես»։ Եվ Մարուֆը պատասխանեց. «Նա իմ հարևանն է, պատը պատիս կպած»։— «Ո՞նց է նա, ողջ-առո՞ղջ է»,— հարցրեց վաճառականը և Մարուֆը պատասխանեց. «Լավ» է։ Վաճառականն այդ որ իմացավ, նորից հարցրեց. «Իսկ քանի՞ երեխա ունի»։— «Երեք տղա ունի՝ Մուստաֆան, Մուհամմեդն ու Ալին»— պատասխանեց Մարուֆը, և վաճառականը հարցրեց. «Ալլահն ի՞նչ կյանք տվեց նրանց»։— «Մուստաֆան, — պատասխանեց Մարուֆը, — ողջ-առողջ է, և նա գիտնական է, ուսուցիչ, իսկ Մուհամմեդը, ներկ ծախող է, ու երբ ամուսնացավ ու կինը մի տղա բերեց և անունը դրեցին Հասան, Մուստաֆան իր համար խանութ բաց արեց հոր խանութի կողքին»։— «Ալլահը քեզ էլ բարի լուրով ուրախացնի»,— բացականչեց վաճառականը։ Եվ Մարուֆը շարունակեց. «Իսկ եթե Ալիից հարցնես, ապա նա

իմ ընկերն էր, երբ մենք դեռ երեխա էինք, ու ես միշտ նրա հետ էի խաղում: Մենք քրիստոնյաների երեխաների շորեր հագած ման էինք պալիս, ու այդպես մանում էինք եկեղեցի և քրիստոնյաների գրքերը գո- ղանում ու ծախում էինք, իսկ ստացած փողով ուտելիք առնում: Ու մի անգամ էլ այնպես պատահեց, որ քրիստոնյաները մեզ տեսան ու գիրքը ձեռքներին բռնեցին և եկան մեր ծնողների մոտ ու գանգատվեցին, և Ալիի հորն ասացին. «Եթե դու քո տղային հետ չպահես այն վնասից, որ նա մեզ հասցնում է, մենք թագավորին կգանգատվենք»: Եվ Ալիի հայրը նրանց հանգստացրեց ու որդուն մի լավ ծեծ տվեց, ու այդ պատճառով Ալին տնից փախավ: Ու այդ օրվանից նրա հայրը տղայի տեղը չգիտի: Քսան տարի է, ինչ Ալին չկա, ու ոչ մի մարդ լուր չունի նրանից»:

«Ես եմ Ալին, ներկ ծախող շեյխ Ահմեդի աղան, իսկ դու իմ ըն- կերն ես, ո՛վ Մարուֆ», — բացականչեց վաճառականը: Եվ նրանք ողջու- նեցին միմյանց, իսկ դրանից հետո վաճառականն ասաց. «Ո՛վ Մարուֆ, ոչամիք տեսնեմ, թե ինչո՞ւ ես հեռացել Մըսրրից ու վեր կացել եկել այս քաղաքը»: Եվ Մարուֆը պատմեց իր կնոջ՝ վհուկ Ֆաթիմայի, մա- սին, ու այն ամենը, ինչ այդ կինը բերել էր նրա գլուխը, և ասաց. «Երբ նրա վիրավորանքներն ինձ համար շատ ծանր դարձան, ես նրանից փախա Հաղթանակի դարպասի կողմը, ու ինձ վրա անձրև տեղաց, և ես մտա ալ-Ադիլիայի լքված պահեստն ու նստեցի այնտեղ և լաց եղա: Ու այդ ժամանակ իմ առջև դուրս եկավ այդտեղի բնակիչը, իսկ դա մի իֆրիտ էր ջիններից և ինձ հարցրեց, թե ինչ է պատահել, ու ես պատ- մեցի, թե ինչ վիճակում եմ: Ու երբ նա տեսավ իմ վիճակը, նստեցրեց մեջքին ու ամբողջ գիշերը թռավ ինձ մեջքին առած, թռավ երկնքի ու երկրի արանքով, իսկ հետո իջեցրեց մի սարի գագաթին ու պատմեց այս քաղաքի մասին: Ու ես սարից իջա և մտա այս քաղաքը, և իմ շորս բոլորը մարդիկ հավաքվեցին ու սկսեցին հարցուփորձ անել, ու ես էլ նրանց ասացի. «Ես երեկ եմ դուրս եկել Մըսրրից»: Եվ նրանք ինձ չհավատացին: Ու եկար դու և իմ մոտից քշեցիր մարդկանց ու ինձ բե- րեցիր այս տունը: Այս է Մըսրրից հեռանալուս պատճառը ու այստեղ դալուս պատմութունը: Իսկ դու, դո՞ւ ինչու ես եկել այս քաղաքը»:

Ու վաճառականը պատասխանեց նրան. «Յոթ տարեկան ժամանակ անխելք բան էի, ու այդ օրվանից գյուղից գյուղ և քաղաքից քաղաք տնցա, մինչև որ, եկա այս քաղաքը, ու սրա անունը Իհթիան ալ Խա- թան է: Ծս տեսա, որ այս քաղաքի բնակիչները ազնիվ ու մեծահոգի մարդիկ են ու խիղճ ունեն, և իմացա, որ սրանք չքավոր մարդուն վրս»:

տահում են ու պարտք են տալիս, և նա ինչ ասի, հավատում են: Ու այդ ժամանակ ասացի նրանց. «Ես վաճառական եմ և իմ բեռ ու բարխանից առաջ եմ ընկել, և ինձ մի տեղ է հարկավոր, որ ապրանքս տեղավորեմ»: Եվ նրանք ինձ հավատացին ու ասրանքիս համար մի տեղ ազատեցին: Եվ ես ասացի նրանց. «Ձեր մեջ մի մարդ կգտնվի՞, որ ինձ հաղար դինար տա, մինչև որ բեռս տեղ հասնի, այն ժամանակ ինչ որ վերցրել եմ, կվերադարձնեմ նրան. մինչև ապրանքիս տեղ հասնելն ինձ մի քանի բան է պետք»: Եվ նրանք ինձ սովեցին այնքան, ինչքան ուզում էի, և ես գնացի վաճառականների շուկա ու մի քանի ապրանք տեսա այնտեղ, և առա, իսկ մյուս օրը ծախեցի ու հիսուն դինար վաստակեցի և ուրիշ իրեր առա: Եվ սկսեցի բարեկամություն անել մարդկանց հետ և հարգանք ու պատիվ տալ նրանց, և նրանք ինձ սիրեցին: Եվ ես այդպես առնում ու ծախում էի, և իմ փողերը շատացան: Լավ իմացիր, ո՛վ եղբայր, թե ինչ է ասել այս առածը հորինողը. «Ամբողջ երկրային կյանքը պարծենկոտություն ու խորամանկություն է, ու այն երկրում, ուր քեզ չեն ճանաչում, ինչ ուզում ես արա»: Ամեն հարցնողին եթե ասես. «Արհեստով մաշակար եմ ու չքավոր, և փախել եմ կնոջըս ձեռքից, ու երեկ եմ Մըսըրից հեռացել», — քեզ չեն հավատա, և քանի այս քաղաքում ես, մարդկանց ծաղրի առարկան կլինես: Իսկ եթե ասես. «Իֆրիտն է ինձ այստեղ բերել», — բոլորը կփախչեն քեզանից ու ոչ ոք չի մոտենա քեզ, և մարդիկ կասեն. «Այս մարդը իֆրիտացավ ունի, և ով սրան մոտենա, փորձանքի մեջ կընկնի»: Եվ այսպիսի համբավը շատ վատ կլինի քեզ համար ու ինձ համար, քանի որ նրանք ինձ ճանաչում են ու գիտեն, որ մըսըրցի եմ»:

«Հապա ի՞նչ անեմ», — հարցրեց Մարուֆը: Եվ վաճառականն ասաց նրան. «Այլահը եթե կամենա, կսովորեցնեմ քեզ, թե ինչ անես: Վաղը ես քեզ հազար դինար կտամ ու մի ջորի, որ նստես գնաս, ու մի ստրուկ, որը քո առջևից կգնա ու քեզ կհասցնի վաճառականների շուկայի դարպասի մոտ: Այնտեղ որ հասնես, մտիր շուկա, իսկ ես նստած կլինեմ վաճառականների մեջ, ու երբ քեզ տեսնեմ, ոտքի կկանգնեմ ու կյարենեմ քեզ ու ձեռքդ կհամբուրեմ ու կբարձրացնեմ քո աստիճանը: Եվ ամեն անգամ, երբ հարցնեմ կտորեղենի որևէ տեսակի մասին ու ասեմ քեզ. «Հետդ բերե՞լ ես այդ տեսակից», — դու ասա. «Շատ»: Իսկ եթե քո մասին հարցնեն, ես կսկսեմ քեզ գովել ու բարձրացնել էրանդ աչքում, իսկ հետո կասեմ. «Մի ամբար ու մի խանութ վարձեք այս մարդու համար», և ցույց կտամ որ դու անասման հարստություն ունես ու առատաձեռն ես: Իսկ երբ քեզ աղքատ մոտենա, տուր նրան

ինչքան ձեռքդ ընկնի: Եվ մարդիկ կհավատան իմ խոսքերին ու կհամոզվեն, որ դու մեծ մարդ ես և առատաձեռն ես, ու կսիրեն քեզ: Իսկ հետո քեզ տուն կտանեմ, ու քո պատվին կհրավիրեմ բոլոր վաճառականներին, և քեզ կծանոթացնեմ նրանց հետ, որ բոլորը ճանաչեն քեզ ու դու ճանաչես նրանց՝ առուծախի համար, և կարողանաս առնել նրանցից ու տալ նրանց, և շանցած երկար ժամանակ, հարստության տեր կդառնաս:

Ու երբ առավոտը բացվեց, վաճառական Ալին Մարուֆին հազար դինար տվեց, շոր հագցրեց և նստեցրեց ջորի, ու մի ստրուկ տվեց և ասաց. «Թող ազատի՛ քեզ ալլահը դատաստանից այս ամենի համար, քանի որ դու իմ բարեկամն ես, ու ես պարտավոր եմ քեզ հարգանք ու պատիվ տալ: Մի՛ ծանրաբեռնիր քեզ հոգսերով ու մի մտածիր, թե ինչեր են եղել քո և քո կնոջ միջև, ու նրա մասին ոչ մեկին բան մի՛ ասա»:

Եվ Մարուֆը բացականչեց. «Թող ալլահը քեզ բարիքով հատուցի», իսկ հետո նա ջորի նստեց և ստրուկը գնաց նրա առջևից, մինչև որ հասցրեց վաճառականների շուկայի դարպասի մոտ: Եվ բոլոր վաճառականները նստած էին շուկայում, ու վաճառական Ալին էլ նստած էր նրանց մեջ:

Եվ տեսնելով Մարուֆին, Ալին վեր կացավ ու նետվեց դեպի նա և ասաց. «Օրհնյա՛լ լինի այս օրը, ո՛վ դու վաճառական Մարուֆ, ո՛վ բարիքի և բարօրության տեր»: Իսկ հետո Ալին բոլոր վաճառականների աչքի առաջ համբուրեց Մարուֆի ձեռքը և ասաց. «Ո՛վ եղբայրներ, վաճառական Մարուֆն այսօր մեզ ուրախացրեց իր այցելությամբ»:

Եվ բոլոր վաճառականները ողջունեցին մաշակարին, և Ալին նրանց նշանացի հասկացնում էր, որ Մարուֆին հարգանք ու պատիվ տան: Եվ Մարուֆը նրանց աչքում մեծ մարդ դարձավ, իսկ հետո Ալին նրան օգնեց ջորուց իջնել, ու վաճառականները նորից ողջունեցին Մարուֆին: Եվ Ալին մեկ սրա հետ էր առանձնանում, մեկ նրա հետ ու Մարուֆին գովում:

Եվ Ալին հարցնում էին. «Այդ մարդը վաճառակա՞ն է»: Եվ Ալին պատասխանում էր. «Այո՛, ավելի ճիշտ՝ ամենամեծ վաճառականն է, ու չի գտնվի մեկը, որ նրանից հարուստ լինի, քանի որ նրա հարստությունը և նրա հոր ու պապերի հարստությունը հայտնի է Մըսըրի վաճառականների շրջանում: Նա ընկերներ ունի Հնդկաստանում, Սինդում ու Եմենում, ու թե առատաձեռնությունը նայես, շատ բարձր աստիճանի վրա է կանգնած: Ուրեմն, լավ ճանաչեցիք նրան; նրա տեղն ու աս-

տիճանը, մեծարեցեք նրան ու ծառայություններ մատուցեք: Թող հայտնի լինի ձեզ, որ այս մարդը առևտուր անելու համար չէ, որ եկել է մեր քաղաքը, և ուրիշ նպատակ չունի, բացի օտար երկրներ տեսնելուց: Եկամուտի ու վաստակի համար օտարություն զնալու կարիք չունի նա, քանի որ այնքան փող ունի, որ կրակն էլ չի կարող լափել, ու ես նրա ծառաներից մեկն եմ»:

Եվ Ալին այնքան գովեց Մարուֆին, մինչև որ վաճառականները նրան իրենց գլխից վեր դասեցին և միմյանց սկսեցին պատմել նրա առավելությունների մասին: Իսկ հետո նրանք հավաքվեցին Մարուֆի շուրջն ու սկսեցին ընտիր ուտելիքներ ու խմիչքներ առաջարկել նրան, և նույնիսկ վաճառականների գլխավորը մոտեցավ նրան ու ողջունեց:

Եվ վաճառական Ալին ուրիշ վաճառականների ներկայությամբ Մարուֆին ասաց. «Մ՛վ իմ տեր, գուցե հետո այսինչ կտորից մի քիչ բերե՞լ ես»: Եվ Մարուֆը պատասխանեց. «Շա՛տ»: (Իսկ այդ օրերին Ալին նրան ամեն տեսակ թանկարժեք կտորներ էր ցույց տվել ու սովորեցրել էր թե՛ թանկարժեք և թե՛ էժան կտորների անունները):

Ու մի վաճառական Մարուֆին հարցրեց. «Մ՛վ տեր իմ, դեղին մահուդ բերե՞լ ես»: Եվ Մարուֆը պատասխանեց. «Շա՛տ»: Եվ վաճառականը հարցրեց. «Իսկ վիթի արյան պես կարմիր մահո՞ւդ»: Եվ Մարուֆը պատասխանեց. «Շա՛տ»: Եվ ամեն անգամ, երբ վաճառականը մի բան էր հարցնում, Մարուֆը պատասխանում էր. «Շա՛տ»:

Եվ այդ ժամանակ վաճառականն ասաց. «Մ՛վ վաճառական Ալի, եթե քո հայրենակիցն ուզենար հազար հակ թանկարժեք կտոր բերել, կբերե՞ր»: Եվ Ալին պատասխանեց. «Նա այդքան կարող էր բերել իբր շատ ու շատ ամբարներից միմիայն մեկից ու այնտեղից ո՛չ մի բան չէր պակասի»:

Ու երբ նրանք այսպես նստած էին, հանկարծ մի աղքատ սկսեց վաճառականների շուրջը պտտվել, ու մի քանիսը նրան արծաթ կեսանոց տվեցին, իսկ մյուսները՝ մի շագիդ, բայց շատերը նրան ոչինչ չտվեցին: Իսկ երբ աղքատը հասավ Մարուֆի մոտ, սա մի բուռ ոսկի հանեց ու տվեց նրան, և աղքատը Մարուֆին բարի կամեցավ ու հեռացավ: Եվ վաճառականները զարմացան ու ասացին. «Դա թագավորական պարզն էր, նա աղքատին ոսկի տվեց առանց հաշվելու, ու թե մեծ հարստության տեր չլիներ և ամեն ինչից շատ շունենար, աղքատին մի բուռ ոսկի չէր տա»:

Իսկ որոշ ժամանակ հետո Մարուֆին մոտեցավ մի խեղճ կին: Եվ մաշակարը մի բուռ ոսկի հանեց ու տվեց նրան, և կինը զնաց, օրհ-

նելով Մարուֆին, և այդ բանը պատմեց մյուս աղքատներին, ու նրանք մեկը մյուսի հետևից սկսեցին մոտենալ մաշակարին, և ամեն անգամ, երբ մեկն ու մեկը մոտենում էր, Մարուֆը վերցնում էր մի բուռ ոսկի ու տալիս խնդրողին, մինչև որ հազար դինարը մսխեց:

Իսկ դրանից հետո նա ձեռքը ձեռքին խփեց ու բացականչեց. «Հե-
րիք է, ինչքան ալլահի բարիքը բաժանեցինք, և փա՛ռք նրա գորու-
թյանը»: Եվ վաճառականների գլխավորը հարցրեց նրան. «Ի՞նչ եղավ
չէ՞ղ, ով վաճառական Մարուֆ»: Եվ Մարուֆն ասաց. «Երևում է, որ այս
բաշաքի բնակիչների մեծ մասն աղքատ է և մուրացկան: Եթե իմանա-
լի, որ այդպես է, թամբիս տոպրակում մի քիչ փող կլցնեի ու հիմա
չքավորներին կբաշխեի: Վախենում եմ, որ օտարության մեջ մնալս
երկարի, իսկ ես աղքատին մերժելու սովորություն չունեմ: Բայց ոսկի
չմնաց ինձ մոտ, ու եթե մի աղքատ էլ մոտենա, ես ի՞նչ ասեմ նրան»:—
«Ասա՛ ալլահը տա»,— խոսեց վաճառականների գլխավորը: Ու Մարու-
ֆը բացականչեց. «Այդպիսի սովորություն չունեմ, ու դրա համար էլ
հոգսերն ինձ հանգիստ չեն տալիս: Կուզենայի հազար դինար էլ ունե-
նալ, որ սղորմություն տայի, մինչև որ բեռ ու բարխանս տեղ հասներ»:

Եվ վաճառականների գլխավորն ասաց. «Հոգ չէ»,— ու ծառաներից
մեկին ուղարկեց տուն: Եվ սա հազար դինար բերեց, և գլխավորն այդ
փողը տվեց Մարուֆին: Ու Մարուֆը սղորմություն էր տալիս իր կող-
քով անցնող ամեն մի աղքատի, մինչև որ կեսօրյա աղոթքի կոչունքը
հնչեց: Ու մարդիկ մտան մզկիթ ու կեսօրյա աղոթքն արեցին, և այն,
ինչ մնացել էր հազար դինարից, Մարուֆը շաղ տվեց աղոթողների
գլխներին, ու մարդիկ այդ որ տեսան, ուշադրությամբ նայեցին ու սկը-
սեցին օրհնել նրան, իսկ վաճառականները զարմացել էին նրա անսահ-
ման առատաձեռնության ու շոայլության վրա:

Եվ հետո Մարուֆը գիմեց մի ուրիշ վաճառականի ու, վերցնելով
նրանից հազար դինար, դրանք էլ բաժանեց, իսկ վաճառական Ալին նա-
յում էր նրա արարքներին ու ոչինչ չէր կարողանում ասել:

Եվ Մարուֆն այդպես արեց, մինչև որ իրիկնագեմի աղոթքի կո-
չունքը հնչեց, և այդ ժամանակ նա մտավ մզկիթ ու աղոթք արեց, և
բաժանեց մնացած փողը: Եվ շուկայի դարպասը դեռ չէին փակել, որ նա
արդեն հինգ հազար դինար վերցրել էր ու բաժանել սրան-նրան, և ումից
որ մի բան էր վերցնում, ասում էր. «Երբ բեռ ու բարխանս գա, ոսկի
ուզես, ոսկի կտամ, կտորեզեն ուզես, կտորեզեն կտամ, ես այդ բարի-
քից շա՛տ ունեմ»:

Իսկ երեկոյան դեմ վաճառական Ալին իր մոտ հրավիրեց Մարուֆին, և նրա հետ մեկտեղ հրավիրեց նաև բոլոր վաճառականներին, ու նստեցրեց նա Մարուֆին պատվաժող տեղում, և սա խոսում էր միմիայն կտորեղենից կամ թանկագին քարերից: Ու ամեն անգամ, երբ մեկը մի բանի անուն էր տալիս, Մարուֆը պատասխանում էր. «Ես այդ ապրանքից շատ ունեմ»:

Իսկ մյուս օրը Մարուֆը գնաց շուկա ու սկսեց դիմել վաճառականներին և նրանցից փող վերցնել ու բաժանել աղքատներին: Եվ այսպես արեց նա քսան օր, մինչև որ մարդկանցից պարտք արեց վաթսուն հազար դինար, և նրա ո՛չ բեռը տեղ հասավ, ո՛չ էլ սև ժանտախտը նրա բկից բռնեց:

Եվ մարդիկ սկսեցին աղմուկ բարձրացնել ու իրենց փողերը պահանջել, և ասացին. «Վաճառական Մարուֆի ապրանքը տեղ չհասավ, մինչև ե՛րբ պիտի մարդկանցից փող վերցնի նա ու բաժանի մուրացկաններին»: Ու վաճառականներից մեկն ասաց. «Լավ կլինի խոսենք նրա հայրենակցի՝ վաճառական Ալիի հետ»:

Եվ նրանք գնացին Ալիի մոտ ու ասացին. «Ո՛վ վաճառական Ալի, վաճառական Մարուֆի ապրանքը չկա ու չկա»: Եվ Ալին ասաց. «Մի քիչ էլ սպասեք, այդ մարդու ապրանքը շուտով անպայման տեղ կհասնի»: Իսկ հետո նա Մարուֆի հետ մենակ մնաց ու ասաց. «Ո՛վ Մարուֆ, ի՞նչ գործեր ես բռնում: Ես քեզ ի՞նչ ասացի՝ հացը կարմրացրո՞ւ, թե վառիր: Վաճառականներն աղմուկ են բարձրացնում ու իրենց փողն են ուզում, և նրանք ինձ ասացին, թե դու նրանց վաթսուն հազար դինար ես պարտք: Այսքան փող ես նրանցից վերցրել ու բաժանել մուրացկաններին: Այդ մարդկանց պարտքերն ինչպե՞ս պիտի տաս, երբ ո՛չ ծախում ես, ո՛չ առնում»:— «Իսկ ի՞նչ է պատահել,— ասաց Մարուֆը,— և այդ ի՞նչ փող է որ՝ վաթսուն հազար դինար... Երբ բեռս տեղ հասնի, ես նրանց պարտքը կտամ ,ուզենան՝ կտորեղեն, ուզենա՞ն՝ ոսկի ու արծաթ»:— «Մեծազո՞ր ալլահ, դու արդար դատաստան անես,— բացականչեց վաճառական Ալին և ապա դիմեց Մարուֆին.— Դու ապրանք ունե՞ս»:— «Շա՛տ»,— պատասխանեց Մարուֆը: Եվ Ալին գոչեց. «Ալլահն ու նրա կամակատարները թող պատժեն քեզ գարշելի վարմունքիդ համար: Մի՛թե ես քեզ այդպես սովորեցրի, որ դու այդ խոսքերն ասես ինձ: Ես մարդկանց կպատմեմ, թե դու ով ես»:— «Երկար-բարակ մի՛ խոսիր, գնա ու պատմիր,— ասաց Մարուֆը:— Ինչ է, ես չքավո՞ր եմ: Իմ բեռ ու բարխանի մեջ ամեն ինչ էլ կա, ու երբ ապրանքս տեղ հասնի, նրանք

իրենց փողը կստանան, մի գինարի դիմաց՝ երկուսը կտամ, լավ իմանաս, որ ես այդ փողի կարիքը չունեմ»:

Ու վաճառական Ալին այս որ լսեց, բարկացավ և գոչեց. «Ո՛վ անդաստիարակ, ես քեզ ցույց կտամ, թե ոնց կարելի է առանց ամաչելու սուտ ասել»: Ու Մարուֆն ասաց. «Ի՞նչ կարող ես, արա, իսկ այդ մարդիկ կսպասեն, մինչև որ բեռ տեղ հասնի, ու նրանք իրենց ապրանքը կստանան, դեռ մի բան էլ ավելի»:

Եվ վաճառական Ալին թողեց նրան ու հեռացավ, հոգու խորքում ասելով. «Առաջ ես սրան գովում էի, ու եթե հիմա սկսեմ փնովել, ստախոս դուրս կգամ, ու ինձ շատ կսազեն հորինողի այս խոսքերը. ով գովում է, իսկ հետո վատաբանում, նա ստում է երկու անգամ»:

Եվ վաճառական Ալին զայրացավ ու չգիտեր, թե ինչ աներ: Իսկ հետո վաճառականները եկան նրա մոտ ու հարցրին. «Ո՛վ վաճառական Ալի, դու նրա հետ խոսեցի՞ր»: Եվ Ալին ասաց նրանց. «Ո՛վ մարդիկ, ես նրանից քաշվում եմ: Նա ինձ հազար դինար է պարտք, և ես չեմ կարողանում այդ մասին խոսել նրա հետ: Իսկ երբ դուք նրան պարտք էիք տալիս, ինձ հետ չէիք խորհրդակցում ու այդ մարդու մասին ես ձեզ ասելու բան չունեմ: Պահանջեք նրանից ձեր պարտքը, իսկ եթե չտա, գանգատ արեք քաղաքի թագավորին ու ասեք, որ նա խաբեբա է, խաբել է ձեզ, և թագավորն այնպես կանի, որ դուք կազատվեք նրանից»:

Եվ վաճառականները գնացին թագավորի մոտ ու պատմեցին, ինչ պատահել էր, և ասացին. «Ով ժամանակի արքա, մենք չգիտենք, թե ինչպես վարվենք այդ վաճառականի հետ, որի առատաձեռնությունը չափ ու սահման չունի: Նա այսպես ու այսպես բաներ է անում, և ինչ որ վերցնում է մեզանից, բոլորը բուռ-բուռ բաժանում է աղքատներին: Եթե փոքր կարողություն ունենար, նրա հոգին թույլ չէր տա, որ նա ոսկին վերցնեք և բուռ-բուռ տար չքավորներին, իսկ եթե նա հարուստ մարդկանցից լիներ, արածի ճշտությունը նրա բեռ ու բարխանի տեղ հասնելու պես կերևար: Բայց մենք նրա բեռ ու բարխանը մինչև հիմա էլ չտեսանք, թեև նա պնդում է, որ ապրանք շատ ունի, ու ինքն իր բեռից առաջ է ընկել, և ամեն անգամ, երբ որևէ կտորի անուն ենք տալիս, ասում է. «Դրանից ես շատ ունեմ»: Արդեն շատ ժամանակ է անցել, իսկ նրա բեռ ու բարխանից ոչ մի լուր չկա, և նա մեզ վաթսուս հազար գինար է պարտք, ու այդ բոլորը նա բաժանել է չքավորներին»:

Եվ նրանք սկսեցին գովել Մարուֆին ու փառաբանել նրա առատաձեռնությունը:

Իսկ այդ թագավորն ազա՛հ էր, ավելի ազա՛հ, քան ինքը՝ Աշաբը՛, ու երբ իմացավ Մարուֆի մեծահոգության ու առատաձեռնության մասին, ազահույթունը համակեց նրան, և նա ասաց. «Եթե վաճառականը շատ փող չունենար, այդքան առատաձեռն չէր լինի: Նրա ապրանքն անպատճառ կգա: Ու այս վաճառականները կհավաքվեն նրա մոտ, և նա շատ փող կբաժանի նրանց: Այդ փողերի վրա ես ավելի շատ իրավունք ունեմ, քան թե նրանք: Ու ես ուզում եմ Մարուֆի հետ բարեկամություն հաստատելու ու մտերմություն անել, քանի դեռ նրա ապրանքը տեղ չի հասել: Ու ինչ որ այդ վաճառականները պիտի վերցնեն նրանից, ես կվերցնեմ: Ես նրան իմ աղջկա հետ կամուսնացնեմ ու նրա փողն իմ կարողությանը կմիացնեմ»:

Ու թագավորի վեզիրն ասաց նրան. «Ո՛վ ժամանակի արքա, ես կարծում եմ, որ Մարուֆը խաբեբա է, իսկ խաբեբան ազահի տունը կբանդի»: Ու թագավորը խոսեց այսպես. «Ո՛վ վեզիր, ես նրան կփորձեմ ու կիմանամ՝ նա խաբեբա է, թե ճիշտ է նրա ասածը, և հարստության մե՞ջ է մեծացել ու գաստիարակվել, թե՞ ոչ»:— «Ինչպե՞ս կփորձես նրան»,— հարցրեց վեզիրը, ու թագավորն ասաց. «Ես մի թանկագին քար ունեմ: Մարդ կուղարկեմ ու այդ վաճառականին կկանչեմ ինձ մոտ, ու երբ նա նստի իմ կողքին, հարգանք ու պատիվ կտամ նրան, ու այդ քարը ցույց կտամ: Եվ եթե նա իմանա, թե դա ինչ քար է և ինչ գին ունի, կնշանակի հարստության ու բարիքի տեր է, իսկ թե չիմանա, նշանակում է խաբեբա է ու դուրսպրծուկ, և ես նրան կսպանեմ ամենավատ ձևով»:

Եվ ապա թագավորը մարդ ուղարկեց Մարուֆի հետևից ու իր մոտ բերել տվեց նրան: Եվ ներս մտնելով, Մարուֆը ողջունեց թագավորին, ու թագավորը պատասխանեց ողջունով, և հյուրին նստեցրեց իր կողքին ու հարցրեց. «Վաճառական Մարուֆը դո՞ւ ես»:— «Այո, ես եմ»,— պատասխանեց Մարուֆը: Եվ թագավորն ասաց. «Վաճառականները պնդում են, թե իբր, դու նրանց վաթսուն հազար դինար փող ես պարտք: Ծի՞շտ է նրանց ասածը»:— «Այո»,— պատասխանեց Մարուֆը, ու թագավորը հարցրեց. «Հապա ինչո՞ւ չես տալիս նրանց փողը»:— «Թող նրանք մի քիչ սպասեն, մինչև որ իմ բեռ ու բարխանը տեղ հասնի, ու ես նրանց մի դինարի փոխարեն երկուսը կտամ, և եթե ոսկի ուզեն նրանք, ոսկի կտամ, եթե արծաթ ուզեն, արծաթ կտամ, ու եթե ապ-

1 Աշաբ — Արաբական վիպական գրականության առասպելական կերպար, աչքի էր ընկնում իր անասելի ազահությանը:

բանք ուզեն, ապրանք էլ կտամ,— պատասխանեց Մարուֆը:— Ում հազար եմ պարտք, երկուսք կտամ, քանի որ պարտք տվող մարդը իմ պատիվն է պաշտպանել աղքատների առաջ, ես ամեն ինչ էլ շահ տունեմ»:

Իսկ հետո թագավորը նրան ասաց. «Մ՛վ վաճառական, վերցրու այս քարն ու տես, թե ինչ քար է ու ինչ է սրա գինը»: Եվ կաղինի մեծության քարը տվեց Մարուֆին (իսկ այդ քարը թագավորն առել էր հազար դինարով և մի ուրիշ այդպիսին շուներ, և նա բարձր էր գնահատում այդ քարը): Եվ Մարուֆը վերցրեց քարն ու սեղմեց բթամատով և ցուցամատով ու կոտրեց, քանի որ թանկագին քարը բարակ է լինում և ճնշման շի դիմանում:

«Ինչո՞ւ կոտրեցիր այդ թանկագին քարը»,— հարցրեց թագավորը: Եվ Մարուֆը ծիծաղեց ու ասաց. «Մ՛վ ժամանակի արքա, սա թանկագին քար չէ, սա մետաղի մի կտոր է, որ հազար դինար արժե: Ո՞նց ես ասում, թե սա թանկագին քար է: Թանկագին քարը յոթանասուն հազար դինար արժե, իսկ սա մետաղի կտոր է կոչվում: Այն թանկագին քարերը, որ ընկուզի մեծության չեն, ինձ համար արժեք չունեն, ու ես այդպիսի քարերի հետ գործ չունեմ: Ի՞նչ թագավոր ես, որ սրան թանկագին քար ես ասում, երբ սա մետաղի կտոր է, որի գինը հազար դինար է: Բայց ձեզ ներելի է, ախր դուք չբավոր մարդիկ եք ու գանձեր չունեք, որ բարձր գին ունենան»:

«Մ՛վ վաճառական,— հարցրեց նրան թագավորը,— իսկ դու այդ ասածդ թանկագին քարերից ունե՞ս»:— «Շահ՛տ»,— պատասխանեց Մարուֆը: Ու թագավորի ազահաւթյունը բորբոքվեց, և նա հարցրեց. «Իսկ դու ինձ իսկական թանկագին քարեք կտա՞ս»:— «Երբ բեռս տեղ հասնի,— պատասխանեց Մարուֆը,— ես քեզ շատ բան կտամ, ու ինչ որ սիրտդ ուզի, ինձ մոտ շաա կա, ու ամեն ինչ քեզ ձրի կտամ»: Ու թագավորն ուրախացավ և վաճառականներին ասաց. «Գնացեք ձեր ճամփով ու ոսլասեք, մինչև այս մարդու ապրանքը տեղ հասնի, այն ժամանակ էլ եկեք ու ձեր փողն ինձանից ստացեք»: Ու վաճառականները գնացին:

Ահա թե ինչ եղավ Մարուֆի ու վաճառականների միջև: Իսկ եթե թագավորից եք հարցնում, ասյա նա առեռնձնացավ վեզիրի հետ ու նրան ասաց. «Սիրի՛ր, փայփայիք վաճառական Մարուֆին, ու խոսք բաց արա հետք, և լավ-լավ բաներ ասա աղջկատ մասին, որ ամուսնանա նրա հետ, ու մենք ձեռք գցենք տյն բալոր բարիքները, ինչ նա ունի»:—

«Ո՛վ ժամանակի արքա, — պատասխանեց վեզիրը, — այդ մարդու արարմունքն ինձ դուր չի գալիս, ու ես կարծում եմ, որ նա սուտասան է ու խաբեբա: Այդ միտքդ թող, ու այդպիսի բաներ մի՛ ասա, որ աղջիկըդ դուր տեղը չկորչի»:

Իսկ այդ վեզիրն առաջ խնդրել էր թագավորին, որ սա իր աղջկան ամուսնացնի նրա հետ, ու թագավորն ուզում էր աղջկան ամուսնացնել վեզիրի հետ, բայց երբ թագավորի աղջիկն իմացել էր, չէր համաձայնել:

Ու թագավորն ասաց վեզիրին. «Ո՛վ խաբեբա, դու իմ լավը չես ուզում, որովհետև սրանից առաջ կնության ուզեցիր աղջկաս, ու նա չհամաձայնեց ամուսնանալ քեզ հետ, և հիմա նրա ամուսնության ճամփան փակում ես և ուզում ես, որ աղջիկս ցելի պես մնա և ինքզ առնես նրան կնության: Դե հիմա լավ լսիր, թե ինչ եմ ասում, դու ոչ մի կապ չունես այս գործերի հետ: Ինչպե՞ս նա կարող է խաբեբա ու ստախոս լինել, երբ այս թանկագին քարի գինն իմացավ, այն գինը, որ ես եմ տվել, ու կոտրեց այդ քարը նրա համար, որ իր սրտին դուր չեկավ: Մարուֆը թանկագին քարեր շատ ունի, ու երբ աղջկաս առնի ու առաջին գիշերը մտնի նրա սենյակը, կտեսնի, որ աղջիկս սիրուն է, և աղջիկըս նրա խելքը կթոցնի: Եվ Մարուֆը նրան կսիրի ու թանկագին բարեր և գանձեր կտա նրան: Իսկ դու ուզում ես իմ աղջկան ու ինձ զրկել այդ բարիքներից»:

Ու վեզիրը թագավորի զայրույթից վախենալով, ծպտուն չհանեց, և հոգու խորքում ասաց. «Արի դու շներին քրս արա ցուլերի վրա»: Իսկ հետո նա մոտեցավ վաճառական Մարուֆին և ասաց նրան. «Նորին մեծություն թագավորը սիրեց քեզ, ու նա մի աղջիկ ունի, և այդ աղջիկը սիրուն է ու աննման, և թագավորն ուզում է նրան քեզ կնության տալ, ի՞նչ կասես»: — «Վատ չէ, — պատասխանեց Մարուֆը, — բայց թող մի քիչ սպասի, մինչև ապրանքս տեղ հասնի, թագավորի աղջկա բաժինքը հարուստ պիտի լինի, ու նրանց աստիճանն այնպիսին է, որ բաժինքը պիտի վայել լինի նրանց գիրքին: Իսկ հիմա փող չունեմ, թագավորը թող սպասի, մինչև բեռս տեղ հասնի, ես շատ բարիք ունեմ: Ես անպատճառ հինգ հազար տոպրակ փող ողորմություն պիտի տամ հարսնացուիս պատվին, ու ինձ հազար տոպրակ փող է պետք, որ բաժանեմ մարացկաններին ու շքավորներին այն իրիկունը, երբ մտնելու լինեմ հարսնացուիս ծոցը, և հազար տոպրակ էլ, որ բաժանեմ հարսանիքի թափորի մեջ գնացողներին, և հազար տոպրակ էլ, որ կարողանամ զորականներին ու մյուս մարդկանց հյուրասիրել: Ինձ հարյուր թանկագին

քար է պետք, որ հարսանիքի մյուս առավոտը տամ թագավորի աղջրկան, ու հարյուր թանկագին քար, որ բաժանեմ ստրուկներին ու ներքինիներին, նրանցից ամեն մեկին մի քար կտամ, որ հարսնացուիս պատիվը բարձր պահեմ: Ես պետք է հազար տկլորի ու աղքատի հագցնեմ, ու շեմ կարող առանց ողորմություն տալու յուր գնալ, իսկ այս ամենը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ բեռ ու բարխանս տեղ հասնի. ախր ես շատ բան ունեմ: Ապրանքս որ գա, շեմ էլ մտածի այդ ծախսերի մասին»:

Ու վեզիրը գնաց և թագավորին պատմեց, թե ինչ ասաց Մարուֆը, ու թագավորն այսպես խոսեց. «Եթե նա այդպիսի բաներ է ուզում անել, էլ ինչպե՞ս ես ասում, թե խաբեբա է և սուտասան»:— «էլի եմ ասում»,— պատասխանեց վեզիրը: Եվ թագավորը նախատեց նրան ու լուտանք թափեց գլխին և ասաց. «Գլխո՛վս եմ եբդվում, որ եթե շղաղարես այդպես խոսել, ես քեզ կսպանեմ: Գնա Մարուֆի մոտ ու բեր նրան այստեղ, և ես նրա հետ լեզու կզտնեմ»:

Ու վեզիրը գնաց Մարուֆի մոտ և ասաց. «Գնա խոսիր թագավորի հետ»: Եվ Մարուֆը պատասխանեց. «Լսո՛ւմ եմ և հնազանդվում»: Եվ ապա նա գնաց թագավորի մոտ, ու թագավորը նրան ասաց. «Ապրանքիդ ուշանալով դու մի՛ արդարացիր: Իմ գանձարանը լիքն է, բանալիները վեբցրու և մոտդ պահիր ու ծախսիր, ինչքան ուզում ես, տուր, ինչքան ուզում ես, շքավորներին հագցրու և արա, ինչ ուզում ես, ու քեզ ոչ ոք բան չի ասի, ո՛չ աղջիկս, ո՛չ էլ նրա ստրկուհիները, իսկ երբ բեռ ու բարխանդ տեղ հասնի, ինչ պատիվ ուզում ես տուր կնոջդ: Մենք կսպասենք նրա բաժինքին, մինչև որ քո ապրանքը տեղ հասնի, և իմ ու քո միջև ոչ մի տարբերություն չկա»:

Եվ ապա նա շեյխ-ուլ-խալամին հրամայեց ամուսնության թուղթ գրել, և շեյխ-ուլ-խալամը թագավորի աղջկա և Մարուֆի ամուսնության թուղթը գրեց, ու թագավորն սկսեց հարսանիքի պատրաստություն տեսնել: Նա հրամայեց զարդարել քաղաքը, և մարդիկ թմբուկ զարկեցին ու ամեն տեսքի ու տեսակի ուտելիք շարեցին, և եկան կատակաբանները: Իսկ վաճառական Մարուֆը նստել էր ամուսնական դահլիճում դրոված աթոռակին: Եվ նրա մոտ էին գալիս կատակաբանները, ձեռնածուններն ու պարողները, և գալիս էին տարօրինակ շարժումների ու զարմանալի զվարճալիքների վարպետները, և Մարուֆը հրամայում էր գանձապետին ու ազում. «Ոսկի՛ ու արծա՛թ բեր»: Եվ գանձապետը բերում էր ոսկի ու արծաթ, և Մարուֆն անցնում էր հանդիսատեսների առջևով ու ամեն խաղացողին մի բուռ ոսկի ու արծաթ էր տալիս: Ու լավություն

էր անում նա աղքատներին ու մութացեալներին, և հագցնում էր տկլորներին, և այդ հարսանիքը շատ ազմկոտ էր:

Եվ գանձապետը չէր հասցնում գանձարանից ոսկի ու արծաթ բերել, իսկ վեզիրի սիրտը կատաղությունից քիչ էր մնում ճաքի, բայց նա ոչ մի բան ասել չէր կարողանում:

Իսկ վաճառական Ալին զարմանում էր, որ այդքան փող է մըխսվում, և Մարուֆին ասում էր. «Ալլահն ու նրա օգնականները թող վրեժ լուծեն քեզանից: Բավական չէր որ վաճառականների փողերը ջուրը լցրիր, հիմա էլ թագավորի փողերն ես քամուն տալիս»: Եվ վաճառական Մարուֆը նրան պատասխանեց. «Դա քեզ չի վերաբերում, երբ բեռ ու բարխանս տեղ հասնի բոլորի պարտքն էլ կտամ»:

Եվ նա շարունակեց շաղ տալ փողերն ու ինքն իրեն ասել. «Սև ժանտախտ¹... Ինչ լինում է՝ լինի, ինչ որ ճակատիս գրված է, այն էլ պիտի կատարվի, ճակատագրից չես կարող փախչել»:

Եվ հարսանիքը տեւեց քառասուն օր, իսկ քառասունմեկերորդ օրը կազմակերպեցին հարսի թափորը: Եվ հարսի առջևից գնում էին բոլոր էմիրներն ու զորականները, ու երբ հարսին բերեցին, Մարուֆն սկսեց ոսկի թափել մարդկանց զլխին: Ու թագավորի աղջկա պատվին շտեանը՝ ված ու շաված մի թափոր կազմակերպեցին: Եվ Մարուֆը շատ փող ծախսեց, և նրան տարան թագավորի աղջկա սենյակը, ու նա նստեց բարձր բազմոցին: Եվ վարագույրներն իջեցրին ու դռները փակեցին: Եվ բոլորը գուրս եկան ու նրան թողեցին իր հարսնացուի մոտ: Ու այդ ժամանակ Մարուֆն սկսեց ձեռքը ձեռքին խփել, և որոշ ժամանակ նստեց՝ տխուր-տրտում, ափը ափին զարկելով ու ասելով. «Չկա՞ ավելի մեծ զորություն և ուժ, քան բարձրյալ և ամենակարող ալլահինն է»:— «Ո՞վ իմ տեր, ալլահը քեզ առողջություն, տա, ի՞նչ հոգս ունես դու»— հարցրեց թագավորի աղջիկը: Եվ Մարուֆն ասաց. «Ինչպե՞ս հոգս շունենամ, երբ հայրդ փշաջրեց տրամադրությունս ու այնպիսի բան արեց, ոնց որ կանաչ արտը վառես»:— «Իսկ ի՞նչ արեց հայրս, ասա ինձ»— հարցրեց թագավորի աղջիկը, ու Մարուֆը պատասխանեց. «Նա ինձ քեզ մոտ բերեց ավելի շուտ, քան բեռ ու բարխանս կզար, իսկ ես ուզում էի ունենալ ամենաքիչը հարյուր թանկագին քար, որ քո ստրկուհիներին բաժանեի՝ ամեն մեկին մի քար, որ ուրախանային ու ասեին. «Իմ տերը այս քարը ինձ տվեց այն գիշերը, երբ մտավ տիրուհու մոտ» և այդ

¹ Սև ժանտախտ — այստեղ՝ ոչ շար հիշոց է:

արարքը քո աստիճանն ավելի կբարձրացնեն ու պատիվզ կավելացնեն: Ես թանկագին քարեր շարունակ պիտի բաժանեմ, քանի որ շատ ունեմ»:

«Մի մտածիր դրա մասին ու մի վշտանա,— ասաց թագավորի աղջիկը:— Իսկ թե ինձ հարցնես, ինձնից քեզ վնաս չի հասնի, քանի որ ես կսպասեմ, մինչև ապրանքդ դա տեղ հասնի, իսկ ինչ վերաբերում է ստրկուհիներին, կասեմ, որ նրանցից էլ քեզ վնաս չի հասնի: Վեր կաց, շորերդ հանիր ու քեզ հաճույք պատճառիր, իսկ երբ բեռ ու բարխանդ դա, մենք այդ քարերն էլ կստանանք, ուրիշ բաներն էլ»:

Եվ Մարուֆը վեր կացավ ու, շորերը հանելով, նստեց անկողնուն և սկսեց կնոջը գրգռել, և նրանք սկսեցին խաղալ ու լկատվել, և Մարուֆը ձեռքը դրեց կնոջ ոտքին, իսկ կինը նստեց մարդու ծնկներին ու շրթունքները դրեց նրա բերանը, և դա այն ժամն էր, երբ մարդ հորն ու մորն էլ է մոռանում:

Եվ Մարուֆը գրկեց կնոջն ու սեղմեց կրծքին, և սկսեց ճմուռել նրան իր գրկում ու պինդ հպվեց ու այնքան ժամանակ ծծեց նրա շրթունքները, մինչև որ դրանցից մեղր հոսեց: Մարուֆն իր ձեռքը դրեց կնոջ ձախ կոնատակին, և կնոջ անդամները, ինչպես և նրա անդամները մղվեցին շփման, և այնժամ նա հարվածեց նրա ստինքների մեջտեղը, ու կինը հայտնվեց նրա շեքի մեջ, և նա կնոջն օղակեց իր ոտքերով ու երկու ձեռն էլ փորձեց ու բղավեց. «Ո՞վ դու երկու ծածկոցների հայր»: Եվ Մարուֆը լցրեց թնդանոթն ու վառեց պատրույզը և, կողմնացույցով նշան բռնելով, կրակ տվեց ու թոցրեց աշտարակը բոլոր շորս սյունների վրայից, և դա մի հանելուկ է, որի մասին չեն հարցնում: Եվ աղջիկը ուժգին ճչաց, որն անխուսափելի է, ու վաճառական Մարուֆը ոչնչացրեց նրա կուսությունը, և դա մի գիշեր էր, որը կյանքի բոլոր գիշերների հաշվի մեջ չի մտնում, քանի որ իր մեջ ընդգրկում է հիանալի գեղեցկությունների մերձեցում, գրկախառնություններ ու խաղեր, և ծծումներ ու խոթումներ, մինչև լույս տևող սիրախաղեր:

Իսկ հետո Մարուֆը գնաց բաղնիք ու թագավորական շոր հագավ և, բաղնիքից դուրս գալով, գնաց թագավորի դիվանը, և ով կար այնտեղ, հանուն նրա կանգնեցին ոտքի և հարգանքով ու պատվով դիմավորեցին նրան, շնորհավորեցին ու օրհնանք տվեցին նրան:

Եվ Մարուֆը նստեց թագավորի կողքին ու հարցրեց. «Ո՞ւր է գանձապետը»: Եվ նրան ասացին. «Ահա նա, քո առջև կանգնած է»: Եվ Մարուֆն ասաց. «Պատվավոր շորեր բեր ու ինչքա՞ն վեզիբ ու էմիր, և պաշտոնների տեր մարդ կա՞ հագցրու»:

Եվ գանձապետը բերեց այն ամենը, ինչ նա պահանջեց: Եվ Մարուֆը նստել էր ու ով մոտենում էր նրան, շոր էր տալիս, և նվիրում էր նա ամեն մարդու, նրա դիրքի և աստիճանի համաձայն:

Եվ այսպես Մարուֆն անցկացրեց քսան օր, ու ոչ նրա բեռ ու բարխանը երևաց, ոչ էլ մի ուրիշ բան, և նրա պատճառով գանձապետը շատ մեծ նեղութուն զգաց:

Եվ Մարուֆի բացակայության ժամանակ գանձապետը գնաց թագավորի մոտ (իսկ թագավորն այդ ժամին նստած էր միայն վեզիրի հետ, ուրիշ ոչ ոք չկար) և համբուրեց գետինը թագավորի առջև ու ասաց. «Մ՛վ ժամանակի արքա, մի բան պիտի ասեմ քեզ, որովհետև, միզուցե, դու երեսովս տաս հետո, որ ժամանակին շեմ ասել: Իմացիր, ուրեմն, որ գանձարանը գատարկվել է, ու այնտեղ փող չի մնացել, մի քիչ բան կա, այն էլ ուր որ է կվերջանա, և մի տասը օր անց մենք կկողպենք դատարկ դանձարանը»:— «Մ՛վ վեզիր, ախր փեսայիս ապրանքը ճամփին մնաց ու ոչ մի լուր չկա դրանից»: Ու վեզիրը քրքշաց և ասաց. «Թող ալլահը գթառատ լինի քո նկատմամբ, ո՛վ ժամանակի արքա: Դու շատ պարզ մարդ ես, որպեսզի կարողանաս գլուխ հանել այդ խաբեբայի և ստախոսի գործերից: Երդվո՛ւմ եմ գլխովդ, որ նա ոչ բեռ ու բարխան ունի, ոչ էլ ժանտախտ, որը ազատեր մեզ այդ մարդուց: Ու նա քեզ այնքան խաբեց, մինչև որ փողերդ քամուն տվեց ու անփող ամուսնացավ աղջկադ հետ: Մինչև ե՞րբ պիտի անհոգ լինես դու այդ ստախոսի հետ»:— «Մ՛վ վեզիր,— ասաց թագավորը,— ինչպե՞ս անեմ, որ գործերի իսկական վիճակը պարզեմ»: Ու վեզիրն ասաց. «Մ՛վ ժամանակի արքա, կնոջից բացի, տղամարդու գաղտնիքը ոչ ոք չի իմանա: Մարդ ուղարկիր, թող աղջկադ կանչեն վարագույրի հետևից, ու ես նրանից իսկական վիճակը կիմանամ: Թող նա Մարուֆին հարցուփորձ անի ու մեզ տեղեկացնի, թե ինչն ինչոց է»:— «Դրանում վատ բան չկա,— ասաց թագավորը,— գլուխս վկա, թե հաստատվեց, որ Մարուֆը խաբեբա ու ստախոս է, նրան կսպանեմ ամենավատ ձևով»:

Եվ ապա վեզիրին վերցրեց ու գնաց ընդունարան, և մարդ ուղարկեց, որ աղջկան կանչեն, և աղջիկը եկավ վարագույրի հետևը, (իսկ դա նրա ամուսնու բացակայության ժամանակ էր), այնտեղ գալով, ասաց. «Հայր իմ, ի՞նչ ես ուզում»: «Խոսիր վեզիրի հետ»,— ասաց թագավորը: Ու արքայադուստրը հարցրեց. «Մ՛վ վեզիր, ի՞նչ ես ուզում ինձանից»: Ու վեզիրն այսպես խոսեց. «Մ՛վ տիրուհի, իմացիր, որ քո ամուսինը վատնեց հորդ փողերն ու քեզ հետ ամուսնացավ առանց բաժինք տալու: Նա ամեն օր մեզ խոստանում է ու իբր խոստումը չի կատարում, և

նրա բեռ ու բարխանից ոչ մի տեղեկութիւն չի հասել մեզ, իսկ այնպե՛ս ուզում ենք, որ մեզ պատմես նրա մասին»:

Եվ թագաւորի աղջիկն ասաց. «Նա ինձ հետ շատ է խոսում, ու հենց որ գալիս է մոտս, թանկագին քարեր, գանձ ու թանկարժեք կտորներ է խոստանում, բայց այդ բաներից ոչ մեկը չեմ տեսնում»:— «Ո՞վ տիրուհի,— հարցրեց վեզիրը,— գու կարո՞ղ ես այս գիշեր խոսք բաց մի՛ վախենա, գու դարձար իմ ամուսինը, ու ես անզգուշ չեմ լինի, որ դիւխդ փորձանք գա: Ինչ որ ճիշտն է, պատմի գործերիդ մասին, ու ես մի ծրագիր կմտածեմ, որը քեզ կփրկի»: Ու հետո, խոսակցութեան ժամանակ ու ասել նրան. «Պատմիր ինձ ճշմարտութիւնը ու ոչ մի բանից մանակ, մեկ հեռացիր նրանից, մեկ մոտեցիր, այնպես ցույց տուր, որ սիրում ես ու հարցուփորձ արա, իսկ դրանից հետո մեզ պատմիր ճշմարտութիւնը նրա գործերի մասին»:— «Հայր իմ,— պատասխանեց թագաւորի աղջիկը,— ես գիտեմ, թե ինչպես փորձեմ նրան»:

Եվ ապա նա հեռացավ, իսկ ընթրիքից հետո, սովորականի պես նրա սենյակը մտավ ամուսինը՝ Մարուֆը: Եվ կինը ոտքի ելավ ու մոտեցավ նրան և բռնեց նրա կոնատակերից ու սկսեց մեծ խաբեութիւններով գլուխը թուլոզել (իսկ կանանց խաբեութիւնները շատ են լինում, երբ նրանք ինչ-որ պահանջ ունեն տղամարդկանցից, և ուզում են բաւարարել այդ պահանջը): Եվ թագաւորի աղջիկն այնքան ժամանակ խաբեց նրան ու մեղրից անուշ խոսքերով սիրաշահեց, մինչև որ խելքը դիւխից տարավ:

Ու երբ կինը տեսավ, որ Մարուֆը լրիվ տարվեց իրենով, ասաց. «Ո՞վ դու զովութիւն իմ աչքերի, ո՞վ հոգուս պտուղ, թող ալլա՞հը շքատիպի ինձ տխրել առանց քեզ և թող ժամանակը մեզ իրարից չբաժանի: Քո սերը բուն է դրել սրտիս մեջ, և իմ կրթի հուրն այրել է իմ լյարգն ու թոքը, ու ես քեզ հետ ծայրահեղ բաներ թույլ չեմ տա: Ես ուզում եմ, որ դու պատմես կյանքիդ ճշմարիտ պատմութիւնը, քանի որ հնարամիտ ձեռով խաբելն անօգուտ է ու միշտ չէ, որ հաջողվում է: Մինչև և՛ որ պիտի դու խաբես հորս ու սուտ ասես: Վախենում եմ, որ գործդ նրա համար պարզ դառնա ավելի շուտ, քան թե մենք մի հնար կգրտենք, ու թագաւորը քեզ կբռնի: Դե՛, ուրեմն պատմիր, ինչ որ ճիշտն է, և գու կստանաս այն ամենը, ինչ քեզ ուրախացնում է: Ճշմարտութիւնը եթե պատմես ինձ, էլ վախենալու բան չես ունենա: Դեռ ինչքա՞ն ժամանակ պիտի պնդես, թե գու վաճառական ես ու փողի տեր և շատ ապրանք ունես: Արդեն շատ երկար ժամանակ է անցել, ինչ գու ասում ես. «Ի՞մ բեռը, իմ ապրանքը», ու ոչ մի լուր չկա քո բեռից, ու այդ պատ-

ճառով երեսփոյ հոգսի նշաներ են երևում: Եթե խոսքերիդ մեջ ճշմարտութիւն չկա, ասա ինձ, ու ես քեզ համար փրկութեան մի ծրագիր կմտածեմ, ու եթե ալլահը կամենա, դու կազատվես» — «Ո՛վ տիրուհիս, — պատասխանեց Մարուֆը, — ես քեզ ճիշտը կասեմ, և դու ինչ ուզում ես, այն էլ արա»: — «Խոտիք և ճիշտն ասա, — ասաց արքայադուստրը, — քանի որ ճշմարտութիւնը փրկութեան նավ է, և զգուշացիր սուտ խոսելուց, քանի որ սուտը մարգուն խայտառակ է անում: Ալլահից է այն մարգունորհքը, ով ասել է.

Ճշմարիտ եղիր, թեկուզ ճիշտ բանը,
Քեզ այրի շանթոյ հուր-կրակներով.
Ալլահի սերն առ: Եվ հիմար է նա՝
Ջայրացնողն առածո, որ դուր գա ստրուկին:

«Ո՛վ տիրուհի, — ասաց Մարուֆը, — իմացիր, որ ես վաճառական չեմ ու ո՛չ բռն ունեմ, ո՛չ սև ցավ: Ես իմ երկրում մաշակար էի, ու կին ունեմ, որի անունը վհուկ Տաթիմա է, և իմ ու նրա միջև այսպես ու այսպես բաներ են եղել»:

Եվ նա սկզբից մինչև վերջ պատմեց իր պատմութիւնը, ու թագավորի աղջիկը ծիծաղեց և ասաց. «Խօսելու և սուտ ասելու մեջ գու վարպետ ես»: — «Ո՛վ տիրուհի, — ասաց Մարուֆը, — թող ալլահը քեզ պահպանի, որ դու հնար ունենաս ծածկելու արատներն ու ցրելու դառնութիւնները»: Եվ արքայադուստրն ասաց. «Իմացիր, որ դու խարզախութիւն ես արել ու քո անասելի պարծենկոտութեամբ խաբել ես հորո այնպես, որ նա ազահութիւնից ինձ տվել է քեզ կնութեան, իսկ հետո դու վատնել ես նրա փողերն, ու վեզիրն այդ պատճառով կասկած ունի քեզ վրա: Քանի՜ անգամ է նա հորս հետ խոսել քո մասին ու ասել. «Դա խաբեքա է և սուտասան»: Բայց հայրս ականջ չի դրել նրա խոտքին, որովհետև մի ժամանակ վեզիրն էր կնութեան ուզում ինձ, իսկ ես համաձայն չեղա, որ նա իմ ամուսինը լինի, ես էլ նրա կինը: Բայց դրանից հետո ժամանակ անցավ, ու հայրս մի տեսակ նեղութիւն զգաց ու ասաց ինձ. «Հարցուփորձ արա Մարուֆին, տես ինչ մարդ է», ու ես ամեն բան իմացա ու քո փակ գործը բացվեց: Հայրս այդ պատճառով հաստատ վճռել է մի վնաս տալ քեզ, բայց դու զարձել ես իմ ամուսինը, ու ես անզգույշ բռն չեմ անի, որ վնաս տան քեզ: Եթե հորս պատմեմ այս բաները, կհաստատովի թե դու խաբեքա ես և սուտասան, ու խաբեութեամբ դրավել ես թագավորի աղջկա սիրտը և վատնել իր փողերը: Նա քո մեղքը չի ների և կասկած չկա, որ կուպանի քեզ, ու

մարդկանց մեջ խոսք ու զրույց կտարածվի, թե ես ամուսնացել եմ մի խաբեբայի ու սուտապանի հետ, և գա խայտառակութուն կլինի ինձ համար: Իսկ երբ հայրս քեզ սպանի, երեկ կկամենա ինձ ամուսնացնել մեկ ուրիշի հետ, իսկ ես դրան չեմ համաձայնի, թեկուզ մեռնեմ: Կա՞մ կլինի հիմա վեր կենաս և ստրուկի շորեր հագնես ու իմ փողերից հիսուն հազար գինար վերցնես ու ձի նստես ու գնաս մի երկիր, որտեղ հայրս իշխանութուն չունի, ու այնտեղ վաճառական դառնաս: Նամակ կգրես և սուրհանդակի միջոցով գաղտնի կուղարկես ինձ, որպեսզի իմանամ, թե ո՞ր երկրում ես, ու կարողանամ ձեռքս ընկածը ուղարկել քեզ, որ դրանով քո հարստությունը մեծանա: Եթե հայրս մեռնի, մարդ կուղարկեմ քո հետևից, և դու կգաս փառքով ու պատվով, իսկ եթե դու մեռնես կամ ես մեռնեմ ու մեծագոր ալլահի ողորմածությամբ այն աշխարհը գնամ, մենք հարություն կառնենք մեռած տեղից ու նորից կմիանանք, և սա է միակ ճիշտ վճիռը: Քանի դու ողջ և առողջ ես և ես ողջ ու առողջ եմ, ես քեզ չեմ զրկի նամակից ու փողից: Դե՛ վերկաց, քանի օրը չի բացվել, թե չէ դժվարության մեջ կրնկնես ու կործանումը քեզ վրա կտա ամեն կողմից»:

«Ո՞վ տիրուհի,— ասաց Մարուֆը,— ես քո հովանավորության տակ եմ և ուզում եմ, որ դու ինձ հրաժեշտ տաս մերձենալով»:— «Շատ լավ ես ասում»,— ասաց արքայադուստրը: Եվ Մարուֆը մերձեցավ նրա հետ, իսկ հետո լվացում կատարեց և, ստրուկի շորեր հագնելով, ձիապաններին հրաման տվեց թամբել արագավազ ձիերից մեկը: Եվ նժույզը թամբեցին, ու Մարուֆը հրաժեշտ տվեց թագավորի աղջկան ու գիշերվա վերջին քաղաքից դուրս եկավ և գնաց: Ու ամեն ոք, ով տեսնում էր նրան, կարծում էր, թե գա սուլթանի ստրուկներից մեկն է, և գնում է ինչ-որ գործ կատարելու:

Իսկ երբ առավոտը բացվեց, թագավորը վեզիրի հետ միասին զնաց այն սենյակը, որտեղ նստում են, և աղջկա հայրը մարդ ուղարկեց զրստեր հետևից, ու երբ նա եկավ վարագույրի հետևը, հայրը նրան հարցրեց. «Աղջիկս, ի՞նչ կասես»: Եվ թագավորի աղջիկը պատասխանեց. «Ես կասեմ՝ թող ալլահը քո վեզիրի երեսը սև անի, վեզիրդ ուզում էր, որ իմ երեսը սևացնի ամուսնուս մոտ»:— «Ո՞նց թե»,— հարցրեց թագավորը, և աղջիկն ասաց. «Իմ ամուսինը երեկ իբրկուն ինձ մոտ եկավ, ու մինչ նքան մի խոսք կասեի, հանկարծ ներս մտավ ներքինի Ֆարաշը՝ մի նամակ ձեռքին, ու ասաց. «Պալատի լուսամուտի տակ տասը ստրուկ են կանգնած, ու նրանք այս նամակն ինձ տվեցին ու ասացին. «Մեր փոխարեն համբուրիք վաճառական Սիդի Մարուֆի ձեռքերն ու

այս նամակը տուր նրան: Մենք նրա քարավանի հետ եկող ստրուկներից ենք ու մեզ մի լուր հասավ, թե մեր տերն ամուսնացել է թագավորի աղջկա հետ, ու մենք եկել ենք, որ նրան պատմենք, թե ճամփին մեկինչ պատահեց»:

Ու ես վերցրի նամակն ու կարդացի, և տեսա, որ գրա մեջ գրված էր. «Նորին մեծապատվություն մեր տեր ու տիրական վաճառական Մարուֆին՝ իր հինգ հարյուր ստրուկներից: Եվ ապա՝ ահա թե ինչի մասին ենք տեղեկացնում քեզ: Քո հեռանալուց հետո քոչվորները հարձակվեցին մեզ վրա ու կռիվ սկսեցին մեզ հետ, և նրանք մոտ երկու հազար ձիավոր էին, իսկ մենք՝ հինգ հարյուր ստրուկ: Ու մենք մեծ կռիվ ունեցանք քոչվորների հետ, և նրանք շթողեցին, որ մենք առաջ գնանք մեր ճամփով: Ու այդ օրվանից անցել է երեսուն օր, և մենք դեռ կռվում ենք նրանց հետ: Ահա մեր ուշանալու պատճառը: Քոչվորները մեզանից խլեցին երկու հարյուր հակ գործվածք քո բեռից ու սպանեցին հիսուն ստրուկ»:

Ու երբ այս լուրը հասավ Մարուֆին, նա գոչեց. «Թող այլահը նրանց մոլորության մեջ գցի... Ո՞նց են նրանք երկու հարյուր հակ ապրանքի համար քոչվորների հետ կռիվ մղում և ի՞նչ մեծ բան է երկու հարյուր հակ ապրանքը: Դրա համար արժե՞ր ուշանալ... Չէ՞ որ երկու հարյուր հակի գինը յոթ հազար դինար է: Բայց ես պետք է գնամ նրանց մոտ և շտապեցնեմ, իսկ քոչվորների վերցրածից բեռ ու բարխանս չի պակասի, ու այդ վերցրածի պատճառով էլ չի ազդի ինձ վրա: Կհամարեմ, թե այդքան ապրանքն իրենց եմ տվել որպես ողորմություն»:

Ու հետո նա իմ մոտից հեռացավ, ծիծաղելով, ու չվշտացավ, որ ունեցվածքը կորել է և ստրուկներն սպանվել են: Ու երբ նա դուրս գնաց, ես պալատի լուսամուտից ցած նայեցի ու տեսա, որ այն տասը ստրուկները, որ նրան նամակ էին բերել, լուսիներին նման են, ու նրանցից ամեն մեկը մի շոր է հագել, որը երկու հազար գինար արժե ու հայրս շունի մի ստրուկ, որ նրանից մեկնումեկին նման լինի:

Ու հետո ամուսինս գնաց նամակը բերած ստրուկների հետ, որ իբր բեռ ու բարխանը բերի տեղ հասցնի, ու փառք այլահին, որը շթողեց ինձ նրան ասել այն խոսքը, որ դու պատվիրեցիր ասել. նա կծիծաղեր ինձ վրա ու քեզ վրա և, գուցե, ինձ վրա նայեր նվաստացնող հայացքով և ատեր ինձ: Բայց ամբողջ խայտառակությունը հո քո վեզիրից է գալիս, որն ամուսնուս մասին անվայել խոսքեր էր ասում»:

«Ո՞վ աղջիկս, — ասաց թագավորը, — ամուսնուդ հարսառությունը առատ է, ու նա այդ մասին չի էլ մտածում, և այն օրվանից, ինչ ոտք

է դրել մեր քաղաքը, աղքատներին ողորմութիւն է տալիս: Ալլահը հիօն կամենա, նա շուտով տուն կգա իր բն ու բարխանի հետ, ու նրանից մեծամեծ բարեքներ կստանանք մենք»: Եվ թաղավորն սկսեց հանգըստացնել աղջկան ու նախատել վեշիրին: Եվ աղջկա խորամանկ քայլը հաշողվեց:

Ահա թե ինչ եղավ թաղավորին: Ինչ վերաբերում է վաճառական Մարուֆին, ապա նա հեծավ նժույզն ու գնաց ամայի անապատով, և նա տարակուսանքի մեջ էր ու չգիտեր, թե ո՛ր երկրի ճամփան բռնի:

Եվ նա սկսեց լաց լինել անշատման ցավից, ու հուզմունք ապրեց և մեծ ցավ զգաց ու այսպիսի ոտանավոր արտասանեց.

«Նարեց ժամանակն մեզ, ու մենք բաժանվեցինք,
Դաժանութիւնից հալումաշ եղավ, վառվում է հոգիս,
Աչքերս է մաշում արցունքը լքված սիրահարների:
Հիմա՝ անշատված... Իսկ ե՞րբ կլինի՞ հանդիպենք նորից:
Ո՛վ լուսին փայլուն, ես մի մարդ էի, որ քեզնով տարված
Թողեցի մի սիրտ քեզ կրքով սիրող, տանջված, ծվատված:
Երանի՛ թե ես մի ժամ էլ անգամ շտեննեի քեզ.
Միացման խինդից հետո տխրութիւն ճաշակեցի ես:
Սիրահարված էր եզել Մարուֆը Դունյային ինգմիշտ,
Սիրուց մեռնի էլ, նրա սերը մեծ հավերժ կմնա:
Ո՛վ փայլ շողշողուն արևի անմար, եղի՛ր օդնական,
Անսահման սիրուց այրված-խորովված այս սրտին բարի.
Արդյոք, կտեսնե՞նք, որ ժամանակը միացնի մեզ,
Եվ կստանա՞նք մենք, արդյոք, խնդութիւն հանդիպումից հուր:
Սիրուհուս պալատան, արդյոք, խինդի մեջ կմիացնի՞ մեզ,
Ավազների շիվն, արդյոք, կսեղմե՞մ իմ գրկում ամուր:
Ո՛վ լուսին պայծառ, լուսավոր դեմքդ թող որ մեզ լույս տա,
Ինչպես արևը, որ գեղեցկութամբ լույս է տալիս մեզ:
Պատրաստ եմ կրքին դիմանալ, նրա դառնութիւններին,
Երջանկութեան մեջ կրքի՛ հենց նրա դժբախտութիւնն է»:

Իսկ երբ Մարուֆը վերջացրեց բանաստեղծութիւնը, աղի արցունքով լաց եղավ, և այդ բոպեին բոլոր ճանապարհները փակ էին նրա առջև, և նա մահը գերազասում էր կյանքից:

Եվ նա գնաց ինչպես հարբածը, որի արբեցումն առաջացել էր նրա մեծ անվճռականութիւնից: Եվ անգազար գնաց մինչև կեսօր, ու, վերջապես, հասավ մի փոքրիկ գյուղակ, որից ոչ հեռու տեսավ մի մաճկալիչ որը մի զույգ եզ էր լծել արորին ու վար էր անում:

Սաստիկ քաղցը տանջում էր Մարուֆին, և նա մոտեցավ մաճկալին ու ասաց. «Խաղաղությունն ձեզ»: Ու մաճկալը նրա ողջույնին պատասխանեց ողջույնով և ասաց. «Բարո՞վ եկար, ո՞վ տեր: Դու սուլթանի ստրուկների՞ց ես»:— «Այո»,— պատասխանեց Մարուֆը: Ու մարգն ասաց. «Կանգ առ ինձ մոտ, մի բան կեր»: Եվ Մարուֆը հասկացավ, որ այդ մարդը առատաձեռն մարդկանցից է:

«Ո՞վ եղբայր,— ասաց Մարուֆը նրան,— դու մի բան շունես, սր ես ուտեմ ու կշտանամ, էլ ո՞նց ես մոտ կանչում»:— «Ո՞վ տեր,— պատասխանեց մաճկալը,— մի բան կգտնվի: Ձիուցդ իջիր այստեղ, գյուղն էլ մոտ է, կգնամ և քեզ համար ճաշ կբերեմ, ձիուդ համար էլ կեր կբերեմ»:— «Եթե գյուղը մոտ է,— ասաց Մարուֆը,— ես էլ նույնքան ժամանակում կհասնեմ այնտեղ, ինչքան որ դու, ու ինչ ուզում եմ, կառնեմ շուկայում և կուտեմ»: «Ո՞վ տեր իմ,— ասաց մաճկալը,— այդ գյուղը փոքր է, ու այնտեղ ո՛չ շուկա կա, ո՛չ առուժախ: Շատ եմ խընդրում, ալլա՛հի սիրուն, կանգ առ ինձ մոտ ու սիրտս բուժիր, իսկ ես գնամ գյուղ ու շուտ հետ գամ քեզ մոտ»:

Ու Մարուֆն իջավ նժույգից, իսկ մաճկալը նրան թողեց այդտեղ ու գնաց գյուղ, որ նրա համար ճաշ բերի:

Եվ Մարուֆը նստեց ու սկսեց սպասել նրա վերադարձին և հոգու խորքում այսպես խոսեց. «Ես այդ խեղճ մարդուն գործից կտրեցի, հիմա վեր կենամ ու նրա տեղը վաթ անեմ, մինչև որ ինքը գա, ու ինչ իմ պատճառով կորցրեց, դրանով տեղը հանեմ»:

Ու նա բռնեց մաճը, ու եզները քշեց, և մի քիչ վարեց: Եվ արորը դեմ առավ ինչ-որ բանի, ու անասունները կանգ առան, և Մարուֆը նորից քշեց, բայց եզները չկարողացան առաջ գնալ: Եվ Մարուֆը նայեց արորին ու տեսավ, որ դրա ծայրը մի ոսկե օղակի է դեմ առել: Եվ այդ ժամանակ Մարուֆը հողը թափ տվեց օղակի վրայից ու տեսավ, որ օղակը ջրաղացքարի մեծություն ունեցող մարմարե մի սալի մեջտեղն է գտնվում:

Եվ Մարուֆը շարշարվեց այնքան, մինչև որ կարողացավ սաչը տեղից շարժել, և սալի տակ երևաց մի գետնափոր այր՝ սանդուղքով: Եվ Մարուֆն իջավ այդ սանդուղքով ու բաղնիքի նման մի շինություն տեսավ, որը շորս սյունազարդ սրահ ուներ, և սրահներից մեկը գետնից մինչև առաստաղը լցված էր ոսկով, իսկ մյուս սրահը գետնից մինչև առաստաղը լցված էր զմրուխտով, մարգարիտով ու մարջանով, իսկ երրորդ սրահը լցված էր հակինթով, բազալխանյան սուտակով ու փիրուզով, իսկ չորրորդ սրահը լցված էր ալմաստով ու թանկարժեք մե-

տաղներով և ամեն տեսակ թանկագին քարերով: Եվ այդ շինութեան մեջտեղը դրված է թափանցիկ բյուրեղապակուց պատրաստված մի սընդուկ, որը լեփ-լեցուն էր աննման ու շատ թանկագին քարերով, որոնցից ամեն մեկը ընկույզի չափ էր, և այդ սնդուկի վրա կար կիտրոնի չափ մի փոքրիկ տուփ, և դա ոսկուց էր:

Եվ Մարուֆը, այդ բոլորը տեսնելով, շատ զարմացավ և սաստիկ ուրախացավ ու ասաց. «Տեսնեմ, թե այս տուփի մեջ ի՞նչ կա»: Եվ ապա նա բացեց տուփն ու դրա մեջ տեսավ ոսկի մատանի, որի վրա գրված էին անուններ ու թալիսմաններ, և որոնք մրջյունների հետքերի նման էին:

Եվ Մարուֆը շփեց այդ մատանին, ու հանկարծ ինչ-որ ձայն ասաց. «Ես այստեղ եմ, ես այստեղ եմ, տեր իմ: Պահանջիր, և կատանաս: Ուզում ես դժուր շինել, կամ քաղա՞ք ավերել, կամ թագավո՞ր սպանել, կամ ջրա՞նցք բաց անել, կամ այդպիսի մի բա՞ն անել: Ի՞նչ որ դու հիմա պահանջես, ամենակարող տիրոջ՝ գիշերվա ու ցերեկվա ստեղծողի, կամքով արդեն կատարված կլինի»:— «Ո՞վ իմ տիրոջ ստեղծած արարած, ո՞վ ես դու և ի՞նչ ես դու»,— հարցրեց Մարուֆը: Եվ խոսողը պատասխանեց. «Մատանու ծառան եմ ես ու կատարում եմ դրա տիրոջ կամքը: Ինչ ցանկութուն էլ որ ինձ հայտնի, կկատարեմ, և ինչ էլ որ հրամայի, շեմ առարկի: Ես ջինն թիկնապահների տիրակալն եմ, և իմ զորքի քանակն է յոթանասուներկու ցեղ, իսկ ամեն մի ցեղի ռազմիկների թիվը՝ յոթանասուներկու հազար է, և հազարից ամեն մեկը հազար մարիդի տեր է, իսկ ամեն մի մարիդը հազար օգնականի իշխան է, իսկ ամեն մի օգնական հազար շեյթանի իշխան է, իսկ ամեն մի շեյթան հազար ջիննի իշխան է, և դրանք բոլորն ինձ են հնազանդվում ու իմ խոսքը չլսել չեն կարող: Իսկ ես կախարդանքով կապված եմ այս մատանուն ու շեմ կարող չլսել այն մարդու խոսքը, ով մատանու տերն է, ու ահա դու այս մատանու տերը դարձար, ես էլ քո ծառան դարձա՛մ, պահանջիր, ինչ ուզում ես, ես հլու-հնազանդվում եմ քո հրամանին: Եթե երբևէ ես քեզ պետք դամ, լինի ցամաքում, թե ծովում, մատանին շփիր, և ինձ քո կողքին կտեսնես, բայց զուշացիր մատանին երկու անգամ իրար հետևից շփելուց. դրա վրա դրված անունների կրակով կայրես ինձ ու կզրկվես ինձանից, և դրանից հետո կզղջաս, որ կորցրիր ինձ: Ես քեզ տեղեկացրի, թե ինչ դրութեան մեջ եմ ես, ու վերջ...»:

Ու երբ մատանու ծառան Մարուֆին պատմեց իր դրութեան մասին, Մարուֆը հարցրեց. «Անունդ ի՞նչ է»: Եվ մարիդը պատասխանեց. «Իմ

անունը Աբու-ս-Սաադատ է»։ Եվ Մարուֆն ասաց. «Ո՞վ Աբու-ս-Սաադատ, այս ի՞նչ շինություն է, և ո՞վ է քեզ կախարդանքով այս տուփի ծառան դարձրել»։— «Ո՞վ տեր,— պատասխանեց մարիդը,— այս շենքը գանձարան է, որ կոչվում է Ադի որդի Շեդադի գանձարան։ Շեդադը կառուցել է բազմասյուն Իրեմը, որի նմանն աշխարհի երեսին դեռ չի ստեղծված։ Ես Շեդադի ծառան էի նրա կենդանության օրոք, սա նրա մատանին է։ Շեդադն այս մատանին դրեց իր գանձարանը, բայց հիմի սա քո բաժինն է»։— «Ինչ որ այս գանձարանում կա, կարո՞ղ ես երկրի երես հանել»,— հարցրեց Մարուֆը, ու մարիդը պատասխանեց. «Այո, դա ամենահեշտ գործն է»։ Մարուֆն այդ որ լսեց, ասաց. «Այստեղ ինչ որ կա, դուրս հանիր ու ոչ մի բան չթողնես»։

Եվ Աբու-ս-Սաադատը մատնացույց արեց գետինը, ու գետինը ձեղքվեց, և մարիդը իջավ ցած ու մի կարճ ժամանակ անհետացավ։ Ու հանկարծ գետնի տակից դուրս եկան գեղեցկադեմ ու բարեկազմ պատանիներ, որոնք ոսկի զամբյուղներ էին բերում, և այդ զամբյուղները լիքն էին ոսկով։ Նրանք դատարկեցին զամբյուղները ու գնացին, և բերեցին ուրիշ զամբյուղներ։ Ու նրանք անընդհատ ոսկի ու թանկարժեք բարեր էին կրում։ Եվ մի ժամ էլ շանցած ասացին. «Գանձարանում ոչինչ չմնաց»։

Եվ ապա Մարուֆի առջև հայտնվեց Աբու-ս-Սաադատն ու ասաց. «Տե՛ր իմ, ինչ որ գանձարանում կար, տեղափոխեցինք»։ Եվ Մարուֆը հարցրեց նրան. «Այս ի՞նչ գեղեցիկ երիտասարդներ են»։ Ու մարիդը պատասխանեց. «Սրանք իմ զավակներն են։ Այս գործի համար շարժեր, որ օգնականներիս հավաքեի, ու զավակներս արեցին, ինչ որ քեզ պետք էր, և իրենց պատվեցին քեզ ծառայելով։ Դե՛, պահանջիր, ուրիշ ինչ ես ուզում, սրանից բացի»։— «Կարո՞ղ եք ջորիներ ու սնդուկներ բերել ու այս հարստությունը լցնել սնդուկների մեջ ու բարձել ջորիներին»,— հարցրեց Մարուֆը։ Ու մարիդը պատասխանեց. «Դա ամենահեշտ գործն է»։ Եվ ապա նա զիլ ճշաց, և նրա զավակները ներկայացան իրեն, իսկ նրանց թիվը ութ անգամ հարյուր էր։

«Ձեր մի մասը թող ջորի դառնա, իսկ մի մասը՝ սիրուն ստրուկների կերպարանք ընդունի, որոնցից ամենաշնչինի նմանը չի գտնվի ուզածդ թագավորի մոտ, իսկ մյուս մասը թող ջորեպան դառնա, իսկ մի մասը ծառաների կերպարանք ընդունի»,— ասաց մարիդը նրանց։ Եվ նրա զավակներն արեցին այն, ինչ հրամայեց մարիդը։ Եվ նրանցից յոթ հարյուրը դարձան բեռնակիր ջորիներ, իսկ մնացած հարյուրը ծառաների տեսք ընդունեցին։ Իսկ հետո մարիդը ձայն տվեց իր օգնա-

կաններին, և նրանք իսկույն կանգնեցին նրա առջև: Եվ այդ ժամանակ մի մասին նա պատվիրեց թանկագին քարերով զարդարված ու ոսկեթամբ ձիեր դառնալ:

Ու երբ Մարուֆն այս բանը տեսավ, հարցրեց. «Սնգուկներն ուր են»: Եվ ծառաները սնդուկները բերեցին, ու Մարուֆն ասաց. «Ոսկու և թանկագին քարերի ամեն տեսակը առանձին դարսեք», և նրանք դասավորեցին ու բարձեցին երեք հարյուր ջորու վրա:

Երբ ծառաներն այդ գործը վերջացրին, Մարուֆը հարցրեց. «Ո՞վ Աբու-ս-Սաադատ, կարո՞ղ ես ինձ համար թանկարժեք կտորների հակեր բերել»:— «Ի՞նչ կտոր ես ուզում, եգիպտակա՞ն, թե՞ սիրիական, թե՞ պարսկական, թե՞ հնդկական, թե՞ բյուզանդական»,— հարցրեց մարիզը: Եվ Մարուֆն ասաց. «Ամեն երկրի կտորեղենից բեր հարյուր հակ հարյուր ջորի բարձած»:— «Տե՛ր իմ,— ասաց մարիզը,— ժամանակ տուր, որ օգնականներ նշանակեմ այդ գործի համար, նրանց ջոկատներից ամեն մեկին ես կհրամայեմ ճանապարհվել մեր երկիր ու բերել այդ երկրի կտորեղենից հարյուր հակ, ու իմ օգնականները ջորիներ կգառնան ու կգան, բերելով այդ հակերը»: «Ինչքա՞ն ժամանակ ես ուզում»,— հարցրեց Մարուֆը, և մարիզն ասաց. «Ինչքան ժամանակ որ գիշերը սև է: Լույսը չբացված, ինչ որ ուզում ես, քեզ մոտ կլինի»:— «Այդքան ժամանակ տալիս եմ»,— ասաց Մարուֆը: Եվ ապա նա հրամայեց վրան խփել, ու վրանը խփեցին, և նա նստեց վրանի տակ, ու նրա համար ուտելիք բերեցին, և Աբու-ս-Սաադատն ասաց նրան. «Տե՛ր իմ, նստիր վրանում, և իմ որդիները միշտ քո առջև կլինեն, որ պահպանեն քեզ: Ոչ մի բանից մի՛ վախենա, իսկ ես գնամ հավաքեմ օգնականներին և ուղարկեմ կատարելու քո պահանջը»:

Եվ Աբու-ս-Սաադատը գնաց իր ճամփով, իսկ Մարուֆը նստեց վրանում, և ամեն տեսակի կերակուրներ էին դրված նրա առջև, իսկ Աբու-ս-Սաադատի որդիները նրա աչքի առաջ էին ստրուկների, ծառաների և սպասավորների կերպարանքով:

Եվ երբ նա այսպես նստած էր, հանկարծ վրանին մոտեցավ այն մարդը՝ մաճկալը, ձեռքին մի մեծ աման ոսպ ու մի տոպրակ՝ մեջը լիքը գարի: Նա տեսավ խփված վրանն ու կանգնած ստրուկներին, որոնք ձեռքները խաչել էին կրծքներին, ու կարծեց, թե՛ ինքը սուլթանն է կել ու այդտեղ վրան է խփել:

Եվ մաճկալը շփոթված կանգ առավ ու ինքն իրեն ասաց. «Ա՛խ, ի՞նչ լավ կլիներ, եթե մի երկու ճուտ մորթիի և սուլթանի պատվին արգար յուզի մեջ կարմրացնեի»:

Եվ նա ուզում էր հետ գնալ, որ ճտեր մորթի ու դրանցով հյուրասիրի սուլթանին: Եվ Մարուֆը նրան տեսավ ու ձայն տվեց և ստրուկներին ասաց. «Ինձ մոտ բերեք դրան»: Եվ ստրուկները բռնեցին մաճկալին ու ոսպով լիքը ամանը ձեռքին տարան կանգնեցրին Մարուֆի առջև:

«Այս ի՞նչ է», — ասաց Մարուֆը: Ու մաճկալը պատասխանեց. «Սա քո ճաշն է, սա էլ՝ ձիուդ կերը: Մի՛ պատժիր ինձ, ես չէի կարծում, թե սուլթանը կգա այստեղ, եթե իմանայի, մի երկու ճուտ կմորթեի ու նրան ընտիր կերակուրով կպատվեի»:

Եվ Մարուֆն ասաց. «Սուլթանը չի եկել, բայց ես նրա փեսան եմ ու բարկացած եմ նրա վրա: Եվ նա իր ստրուկներին ուղարկեց ինձ մոտ, ու նրանք հաշտեցրին մեզ, և հիմա ես ուզում եմ վերադառնալ քաղաք: Բայց դու ինձ համար հյուրասիրութուն ես պատրաստել, շիմանալով, թե ես ով եմ ու ինչու եմ եկել այստեղ, և ես քո հյուրասիրութունն ընդունում եմ, թեև բերածդ ոսպ է: Քո բերած կերակուրից բացի, ուրիշ ոչ մի բան չեմ ուտի»:

Ու հետո Մարուֆը պատվիրեց, որ ամանը դնեն սփռոցի մեջտեղը, և սկսեց ուտել, մինչև որ կշտացավ, իսկ ինչ վերաբերում է մաճկալին, սպա նա մյուս փառահեղ ուտելիքներով լցրեց փորը: Ու հետո Մարուֆը ձեռքերը լվաց և թույլ տվեց, որ ստրուկներն էլ ճաշեն, և նրանք սկսեցին ուտել կերակուրների մնացորդներն ու կերան-կշտացան:

Ու երբ ամանը դատարկվեց, Մարուֆը ոսկով լցրեց այն ու մաճկալին ասաց. «Տար ձեր տուն ու արի ինձ մոտ՝ քաղաք, ես քեզ հարգանքով կընդունեմ»:

Եվ մաճկալը ոսկով լիքը ամանը վերցրեց ու եղներին քշեց և գնաց իրենց գյուղը, կարծելով ,թե Մարուֆը թագավորի փեսան է, իսկ Մարուֆն այդ երեկոն անցկացրեց քեֆի և ուրախության մեջ: Եվ նրա մոտ եկան գանձարանի աղջիկներից մի քանիսն ու սկսեցին նվազարաններ նվագել ու պարել նրա առջև: Եվ Մարուֆը մի գիշեր անցկացրեց, որը կյանքի գիշերների հաշվի մեջ չի մտնում:

Ու բացվեց առավոտը, և Մարուֆը դեռ ուշքի չէր եկել, երբ փոշին ամպի նման երկինք բարձրացավ ու տարածվեց ջորիների վրա, որոնք հակեր էին բերում, և այդ ջորիների թիվը չոթ հարյուր էր ու նրանց վրա կտորեղեն էր բարձած, և նրանց շուրջը ծառաներ կաշին՝ ուղտապաններ և ջահակիրներ, իսկ Աբու-ս-Սաադատը նստած էր մի ջորու վրա, և նա քարավանի առաջնորդի տեսք ուներ: Եվ նրանից առաջ տանում

էին չորս պատգարակ և այդ պատգարակների վրա թանկագին քարերով զարդարված կարմիր ոսկու շորս գունդ կար:

Եվ վրանի մոտ հասնելով, մարիդը շորու վրայից իջավ ու գետինը համբուրեց և ասաց. «Ո՛վ տեր, գործն արված է լրիվ ու մինչև վերջ, այս էլ այն դեսպակն է, որի մեջ գանձարանից վերցրած հագուստ կա, սրա նմանը թագավորի շորերի մեջ էլ չկա: Դե՛, հագիր, նստիր դեսպակ ու հրաման տուր մեզ, թե ինչ ես ուզում»:— «Ո՛վ Աբու-ս-Սաադատ,— ասաց Մարուֆը,— ես ուզում եմ նամակ գրել, այդ նամակը կվերցնես ու կգնաս Իհթիան-ալ-Խաթան քաղաքն ու կմտնես աներոջս՝ թագավորի պալատը, բայց միայն սուրհանդակի հաճելի կերպարանքով»:— «Լսում եմ ու հնազանդվում»,— ասաց մարիդը: Եվ Մարուֆը գրեց նամակ ու կնքեց, և Աբու-ս-Սաադատն այդ նամակը վերցրեց ու գնաց:

Նա մտավ թագավորի մոտ ու տեսավ, որ նա ասում է. «Ո՛վ վեզիր, սիրտս անհանգիստ է, ի՞նչ եղավ փեսաս, վախենում եմ, որ նրան քոչվորներն սպանած լինեն: Օ՛, եթե իմանայի ուր է գնացել, զորքով կգնայի նրա հետևից: Օ՛, եթե նա պատմած լիներ ինձ մինչև գնալը»:— «Թող ալլահը քեզ զթա քո պարզամտության համար,— պատասխանեց վեզիրը:— «Երգվում եմ քո գլխով, այդ մարդը հասկացավ, որ մենք կսակածներ ունենք նրա վրա ու վախեցավ խայտառակությունից և փախավ գնաց: Նա ոչ այլ ոք է, եթե ոչ խաբերա ու ստախոս»:

Եվ հանկարծ ներս մտավ սուրհանդակն ու համբուրեց գետինը թագավորի առջև և նրան հավիտենական երջանկություն, փառք ու երկար կյանք մաղթեց: Ու թագավորը հարցրեց նրան. «Ո՛վ ես դու և ի՞նչ ես ուզում»: Եվ սուրհանդակը պատասխանեց. «Ես սուրհանդակ եմ ու ինձ քեզ մոտ է ուղարկել քո փեսան: Նա մոտենում է քաղաքին բեռ ու բարխանով, ու ես քեզ նամակ եմ բերել նրանից: Ահա նամակը»:

Ու թագավորը նամակը վերցրեց և կարդաց ու այսպիսի բառեր գտավ այնտեղ՝ փառապանծ արքա մեր հորեղբորն ուղղված ջերմ ողջույններից հետո. «Ես գալիս եմ բեռ ու բարխանով: Դուրս եկ զորքով ու գիմավորիր ինձ»:

«Ալլահը սև անի երեսդ, ո՛վ վեզիր,— նամակը կարդալուց հետո բացականչեց թագավորը:— Քանի անգամ արատավորեցիր փեսայիս պատիվն ու նրան ներկայացրիր որպես խաբերա ու ստախոս, իսկ նա բեռ ու բարխանով գալիս է, և իսկական խաբերան դու ես, ուրիշ ոչ ոք»: Ու վեզիրն ամոթից ու շփոթմունքից խոնարհեց գլուխը և ասաց. «Ո՛վ ժամանակի արքա, ես այդպես էի ասում, որովհետև այդ մարդու բեռն ուշանում էր, ու վախենում էի, թե կկորչեն փողերը, որ նա ծախ-

սել է»:— «Ո՛վ խաբեբա,— ասաց թագավորը,— փողն ինչ բան է, երբ նրա բեռ ու բարխանն է գալիս: Այդ փողի դիմաց նա շատ բան կտա մեզ»:

Եվ ապա թագավորը կարգադրեց զարդարել քաղաքն ու մտավ դստեր մոտ և ասաց նրան. «Աչքդ լո՛ւյս, շուտով ամուսինդ կգա իր բեռ ու բարխանով: Նա այդ մասին ինձ նամակ է ուղարկել, ու ես զնում եմ նրան ընդառաջ»:

Եվ աղջիկը զարմացավ այդ բանի վրա ու ինքն իրեն ասաց. «Այ բեզ զարմանալի բան: Մի՞թե Մարուֆն ինձ ձեռ էր առնում, կամ ծիծաղում էր ինձ վրա, կամ ուզում էր փորձել, երբ ասում էր, թե չքավոր է: Բայց փա՛ռք ալլահին, որ իմ պատճառով նրա պատիվը մազաչափ շքեղացավ»:

Ահա թե ինչեր եկան Մարուֆի գլուխը: Ինչ վերարերում է վաճառական Ալիին, ապա տեսնելով քաղաքի զարդարումը, նա հարցրեց, թե ինչն է դրա պատճառը, ու նրան ասացին. «Վաճառական Մարուֆի՝ թագավորի փեսայի, ապրանքը եկել է»:— «Մե՛ծ է ալլահը,— բացականչեց Ալին:— Այս ի՞նչ փորձանք է: Նա կնոջից փախավ ու եկավ ինձ մոտ, և չքավոր էր: Որտեղի՞ց է, ուրեմն, եկել նրա բեռ ու բարխանը: Բայց, միգուցե, թագավորի աղջիկը, խայտառակությունից վախենալով, մի խորամանկ հնար է գտել, չէ որ թագավորներն անզոր չեն ոչ մի բանում: Թող մեծազոր ալլահը նրան պահպանի ու խայտառակ չանի»:

Իսկ մյուս վաճառականներն ուրախացան ու զվարթացան, որ իրենց փողը կստանան:

Եվ թագավորը զորք հավաքեց ու քաղաքից դուրս եկավ, իսկ Արուս-Սաադատը վերադարձավ Մարուֆի մոտ ու պատմեց, որ նրա ուղերձը հասցրել է թագավորին:

Եվ Մարուֆն ասաց. «Բարձե՛ք»: Եվ գանձարանից դուրս բերած զգեստը հագնելով, նա նստեց դեսպակ ու թագավորից հազար անգամ ավելի վեհաշուք ու պատվարժան դարձավ:

Եվ այսպես նա անցավ ճանապարհի կեսն ու մեկ էլ տեսավ, որ թագավորը զորքով ընդառաջ է գալիս, իսկ թագավորը, Մարուֆին մոտենալով, տեսավ, որ նա փառահեղ շոր է հագել ու նստած է դեսպակի մեջ: Եվ այդ ժամանակ նա նետվեց դեպի Մարուֆն ու ողջունեց և խաղաղություն մաղթեց նրան, և թագավորության բոլոր մեծամեծները նույնպես խաղաղություն մաղթեցին Մարուֆին: Ու պարզ դարձավ, որ Մարուֆը ճշտախոս է և սուտ ասած բանը նրա մեջ չկա:

Եվ Մարութն այնպիսի թափորով մտավ քաղաք, որ թե առյուծն իմանար, լեղին կճաքեր: Ու վաճառականները մոտ վազեցին և նրա առջևի հողը համրուրեցին, ու վաճառական Ալին ասաց նրան. «Ով խաբեքաների շեյխ, գու այս խաղը խաղացիր ու լավ ստացվեց, բայց դու արժանի ես դրան: Թող մեծ ալլա՛հն առատ անի իր բարիքները քեզ համար»:

Եվ Մարութը ծիծաղեց: Ու, մտնելով պալատ, նա նստեց գահին և ասաց. «Ոսկու հակերը տարեք հորեղբորս՝ թագավորի գանձարանն ու այստեղ բերեք կտորեղենի հակերը»: Ու ծառաները այդ բոլորը բերեցին, և հակ հակի հետևից սկսեցին բացել ու հանել այն, ինչ դրանց մեջ կար, մինչև որ բոլոր յոթ հարյուր հակն էլ բաց արեցին:

Եվ Մարութը ջոկեց դրանցից ամենալավն ու ասաց. «Սրանք տարեք թագավորի աղջկան տվեք, որ իր ստրկուհիներին բաժանի, ու վերջրեք թանկագին քարերով լիքը այս սնդուկն ու տարեք տվեք նրան, որ ստրկուհիներին ու ներքինիներին բաժանի»:

Եվ նա սկսեց կտորեղենը բաժանել վաճառականներին, ում պարտք էր, պարտքը հատուցեց, և ում հազար դինար էր պարտք, երկու հազարի կամ ավելի թանկ գնահատվող կտորեղեն տվեց, իսկ հետո սկսեց մուրացկաններին ու աղքատներին ողորմություն տալ: Եվ թագավորը նայում էր Մարութին ու չէր կարողանում հակառակել նրան:

Եվ Մարութն այնքան ժամանակ տվեց ու պարգևեց, մինչև որ բոլոր յոթ հարյուր հակն էլ բաժանեց, իսկ հետո դարձավ դեպի գորականներն ու սկսեց նրանց միջև բաժանել թանկագին մետաղները, զրմրուխտները, հակինթները, մարգարիտները, մարջանները և շատ ուրիշ բաներ, ու թանկագին քարերը նա տալիս էր միայն բոռով, առանց հաշվելու:

Եվ այդ ժամանակ թագավորն ասաց նրան. «Ձավա՛կս, հերիք է բաժանես, քո բեռ ու բարխանից քիչ բան մնաց»: Ու Մարութն ասաց. «Ես շատ ունեմ»: Եվ Մարութի ճշտախոս լինելը պարզ դարձավ ու ոչ ոք նրան ստախոսության մեջ մեղադրել չէր կարող: Եվ Մարութը չէր էլ մտածում, թե ինչքան է բաժանում, քանի որ մատանու ծառան բերում էր, ինչ որ նա պահանջում էր:

Իսկ հետո գանձապետը մոտեցավ թագավորին ու ասաց. «Ով ժամանակի արքա, գանձատունը լցվել է ու մնացած հակերին էլ տեղ չկա: Ոսկու և թանկագին մետաղի մնացածը որտե՞ղ դնենք»: Եվ թագավորը նրան ցույց տվեց մի ուրիշ տեղ:

Ու երբ Մարուֆի կինն այս ամենը տեսավ, նրա ուրախությունն ուժեղացավ, և նա զարմացավ ու ինքն իրեն ասաց. «Տեսնես որտեղի՞ց եկավ այսքան բարիքը»: Եվ վաճառականներն էլ էին ուրախանում Մարուֆի տվածի վրա ու երջանկություն էին մաղթում նրան:

Իսկ ինչ վերաբերում է վաճառական Ալիին, ապա նա զարմանում էր ու ինքն իրեն ասում. «Մի տես, է՛... Մարդ իմանա, թե ի՞նչ խաբեություն արեց ու սուտ խոսեց, որ այս գանձերն ստացավ: Սրանք եթե թագավորի աղջկանը լինեին, Մարուֆը աղքատներին չէր բաժանի: Բայց ինչքան լավ է ասել հորինողը.

Արքայից արքան երբ նվեր տա քեզ,
էլ մի հարցրո՛ւ որն է պատճառը.
Ալլահը կտա, եթե ուզենա,
Իսկ դու պահպանիր, ինչ որ պատշաճ է:

Ահա թե ինչեր անցան նրա գլխով: Իսկ եթե թագավորից հարցնեք, ապա նա շատ ու շատ զարմացավ Մարուֆի արածի վրա, և զարմացավ փեսայի առատաձեռնությունն ու մեծահոգությունն վրա, երբ նա փող էր ծախսում: Իսկ դրանից հետո Մարուֆը մտավ իր կնոջ սենյակը, ու կինը նրան դիմավորեց ժպիտով, ծիծաղով և ուրախությամբ, ու համբուրեց մարդու ձեռքը և ասաց. «Մի՞թե դու ծիծաղում էիր ինձ վրա կամ փորձում էիր ինձ, երբ ասում էիր. «Ես չքավոր եմ ու փախել եմ կնոջս ձեռքից»: Փա՛ռք ալլահին, որ թույլ չտվեցի քո պատվին դիպչել: Դու իմ սիրելին ես ու քեզանից թանկ ինձ համար ոչ ոք չկա, մեկ է՝ հարուստ լինես, թե աղքատ: Ես ուզում եմ, որ դու ինձ պատմես, թե ինչ նպատակի էիր ուզում հասնել դրանով»:— «Ես ուզում էի քեզ փորձել, որ տեսնեմ՝ անկե՞ղծ է քո սերը, թե փողի ու այս անցողիկ կյանքի բարիքները վայելելու ազահությունից է,— ասաց Մարուֆը,— ու ինձ համար պարզ դարձավ, որ քո սերն անկեղծ է: Եթե դու ճշմարիտ ես սիրուդ մեջ, գլխիս վրա տեղ ունես, ու հիմա ես քո արժեքն իմացա»:

Ու հետո նա առանձնացավ մի սենյակում ու շփեց մատանին, և Աբու-ս-Սաադատը կանգնեց նրա առջև ու ասաց. «Ես այստեղ եմ, պահանջիր, ինչ ուզում ես»: Եվ Մարուֆն ասաց. «Ես ուզում եմ, որ դու իմ կնոջ համար մի շոր բերես գանձարանի շորերից ու զարդեր՝ գանձարանի զարդերից, ու դրանց մեջ քառասուն աննման քարերից շարված մի մանյակ լինի»: Եվ Աբու-ս-Սաադատը պատառիսանեց. «Լսում եմ և հնազանդվում» ու բերեց այն, ինչ Մարուֆն էր հրամայել: Եվ Մարուֆը վերցրեց շորն ու զարդերը, սկզբից ազատ արձակելով մատանու

ծառային, և գնաց կնոջ մոտ ու այդ ամենը դրեց նրա առջև: «Վերցրու, հագիր, րարով վայելեո»,— ասաց Մարուֆը: Ու երբ թագավորի աղջիկը նայեց այդ իրերին, ուրախությունից նրա խելքը գլխից թռավ: Արգ ու զարդի մեջ նա տեսավ ոտքի մի զույգ ապարանջան, որ զարդարված էին թանկագին քարերով և որը պատրաստել էին մոգերը, և ձեռքի ապարանջան, և գինդեր, և գոտի, որը գին շունի, ու հագավ նա շորն ու զուգվեց ու զարդարվեց և ապա ասաց. «Տեր իմ, ես այս շորն ու զարդերը ուզում եմ պահել հանդիսավոր ու տոն օրերի համար»: Բայց Մարուֆն ասաց. «Ամեն օր էլ հագիր, ես դեռ շատ ուրիշ բաներ էլ ունեմ»:

Ու երբ թագավորի աղջիկն այդ ամենը հագավ ու ստրկուհիները նրան տեսան, շատ ուրախացան ու համբուրեցին Մարուֆի ձեռքերը: Եվ Մարուֆը նրանց այդտեղ թողեց ու առանձնանալով, շփեց մատանին, և մատանու ծառան իսկույն կանգնեց նրա առջև:

«Բեր ինձ համար հարյուր շոր՝ զարդերի հետ մեկտեղ»,— ասաց Մարուֆը, և ծառան պատասխանեց. «Լսում եմ և հնազանդվում»: Ու նա բերեց և Մարուֆին տվեց շորերը, ու ամեն մի շորի մեջ դրան հարմար զարդեր էին փաթաթված:

Եվ Մարուֆը ձայն տվեց ստրկուհիներին, ու երբ նրանք եկան, ամեն մեկին մի շոր տվեց, և նրանք հագան այդ շորերն ու գեղալյա հուրիպերի դարձան, իսկ թագավորի աղջիկը նրանց մեջ այնպես էր, ոնց որ լուսինն աստղերի մեջ: Եվ ստրկուհիներից մեկն այդ բոլորը պատմեց թագավորին, և թագավորը մտավ դստեր մոտ ու տեսավ, որ նա շքեղանում է բոլորին, ով նրան տեսնում է, և աղջկա ստրկուհիները նույնպես, ու թագավորն անչափ զարմացավ այդ բանի վրա:

Եվ ապա նա դուրս գնաց ու, վեզիրին կանչելով, ասաց նրան. «Ո՛վ վեզիր, այսպես ու այսպես բան է եղել, ի՞նչ կասես»:— «Ո՛վ ժամանակի արքա,— պատասխանեց վեզիրը,— վաճառականն այդպիսի բան չի անի, որովհետև վուշի կտորը վաճառականի մոտ տարիներով ընկած է լինում, և նա դա միայն օգուտով է ծախում: Վաճառականին որտեղի՞ց այնպիսի առատաձեռնություն, որով նա է օժտված, և վաճառականը որտեղից այդքան փող ունենա ու թանկագին բաներ այդպիսի հարստություն միայն թագավորները կունենան, այն էլ՝ քիչ: Վաճառականի մոտ ո՞նց կարող է ամբողջ հակերով կտորեղեն լինել: Դա անպայման մի պատճառ ունի: Բայց եթե գու ինձ լսես, ես այդ գործի իոկությունը կպարզեմ»:— «Կլսեմ քեզ, ո՛վ վեզիր»— ասաց նրան թագավորը, և վեզիրն այնպես խոսեց. «Հանգիպիր Մարուֆին, րարե-

կամ ձևացիր ու խոսիր հետը և ասա. «Ո՛վ փեսա, ես վեզիրի ու քեզ հետ ուզում եմ գնալ պարտեզ, մի քիչ զբոսնելու, և ուրիշ մարդ թող չգա հետներս»: Ու երբ պարտեզ իջնենք, գինու սեղան կզցենք, ու ես Մարուֆին զոռով կխմեցնեմ: Եվ երբ նա գինի խմի, խելքը կթոցնի ու գիտակցութունը կկորցնի, ու մենք հարցուփորձ կանենք, թե որն է գործի իսկութունը, և նա իր գաղտնիքները կպատմի մեզ: Գինին դավաճան է, և ալլահից է այն մարդու շնորհքը, ով ասել է.

Երբ մենք խմեցինք և հեղուկը վճիտ
Հասավ այն տեղերին, ուր գաղտնիք է պահված,
Գոչեցի ես. «Կա՛նգ առ», քանզի շատ վախեցա,
Որ գինու շողքերը կհաղթեն ինձ հիմա,
Ու քեֆ անողներին պահվածը կերևա:

Ու երբ նա ամեն ինչ պատմի այդ գործի մասին, մենք նրա հանգամանքները կիմանանք ու կանենք, ինչ ուզենանք ու ցանկանանք: Ես վախենում եմ, որ նրա արարքները քեզ համար վատ հետևանքներ ունենան. միգուցե, նրա սիրտն իշխանութուն ուզենա, ու նա իր առատաձեռնությամբ բոլոր գորականների աչքերը կապի, փողը շափսոսալով, ու քեզ գահընկեց անի ու թագավորութունգ խլի»:

Ու թագավորն ասաց նրան. «Ճիշտ ես ասում»: Եվ նրանք պայման կապելուց հետո գիշերը հանգիստ անցկացրին: Իսկ երբ առավոտը բացվեց, թագավորը գնաց դահլիճ ու նստեց գահին: Ու հանկարծ ծառաներն ու ձիապանները ներս մտան դառնացած:

Եվ թագավորը նրանց հարցրեց. «Ի՞նչն է ձեզ վշտացրել»: Ու ծառաները պատասխանեցին. «Ո՛վ ժամանակի արքա, իրիկունը ձիապանները մաքրեցին ու կեր տվեցին այն ձիերին ու ջորիներին, որ բեռ ու բարխանն էին բերել, իսկ առավոտյան տեսանք, որ ստրուկները ձիերն ու ջորիները գողացել են: Բոլոր մոուրները խուզարկեցինք, ու ո՛չ ձիերը գտանք, ո՛չ ջորիները: Եվ այդ ժամանակ գնացինք ստրուկների սենյակն ու այնտեղ էլ ոչ ոքի շտեսանք, ու չենք իմանում, թե ինչպես փախան այդ մարգիկ»:

Եվ թագավորը շատ զարմացավ այդ բանի վրա, քանի որ չէր կարծում, թե Աբու-ս-Սաադատի օգնականներն էին գարձել ձիեր, ջորիներ ու ստրուկներ, և չգիտեր, որ գրանք մատանու ծառայի օգնականներն էին:

«Ո՛վ անիծյալներ,— ասաց թագավորը ծառաներին,— հաղար կենդանի կար ու հինգ հարյուր ստրուկ և ուրիշ ծառաներ, ինչպե՞ս փախան, որ դուք շտեսաք»:— «Մենք չգիտենք, թե ինչպես է եղել, որ նրանք

փախել են» — պատասխանեցին ծառաները: Ու թագավորն ասաց. «Գնացե՛ք, իսկ երբ ձեր տերը հարեմից դուրս գա, պատմեք այդ գործի մասին»:

Եվ ծառաները դուրս գնացին ու մոլորված նստեցին, շիմանալով, թե ինչ անեն: Եվ երբ նրանք այդպես մոլորված նստած էին, հարեմից հանկարծ դուրս եկավ Մարուֆը: Նա տեսավ, որ ծառաները մտատանջության մեջ են, և հարցրեց նրանց. «Ի՞նչ է պատահել»: Եվ նրանք պատմեցին նրան, թե ինչ է եղել, ու Մարուֆը բացականչեց. «Ինչ մի մեծ արժեք ունեն դրանք, որ այդ պատճառով վշտացած եք: Գնացե՛ք ձեր գործին»:

Եվ նա նստել էր ու ծիծաղում էր, առանց բարկանալու և վշտանալու. կատարվածի համար: Եվ թագավորը նայեց վեզիրի երեսին ու ասաց նրան. «Ի՞նչ մարդ պիտի լինի, որի համար փողն արժեք չունենա»: Ու հետո նրանք միառժամանակ զրույց արեցին Մարուֆի հետ, և թագավորն ասաց նրան. «Ո՛վ փեսա, ուզում եմ վեզիրի ու քեզ հետ այգի գնալ, մի քիչ զվարճանալ: Ի՞նչ կասես սրան»: — «Վատ չի լինի», — ասաց Մարուֆը: Եվ ապա նրանք գնացին այգի, ուր ամեն պաղատու ծառից երկուսը կար: Եվ առուններն այնտեղ ջրառատ էին ու ծառերը բարձր, և երգում էին թռչունները:

Եվ նրանք մտան պարտեզում գտնվող ապարանքը, որը հալածում է թախիժը սրտից, ու նստելով այնտեղ, սկսեցին խոսել: Ու վեզիրը զարմանալի բաներ էր պատմում և ծիծաղելի սրամտություններ անում, ու զվարճալի խոսքեր հիշում: Եվ Մարուֆը նրա պատմածները լսեց այնքան ժամանակ, մինչև որ ճաշը մատուցեցին:

Եվ սփռոց դեցեցին, որի վրա շատ ուտելիքներ կային, և դրեցին գինով լիք սափորը, ու երբ բոլորը կերան ու ձեռքերը լվացին, վեզիրը թասը լցրեց ու տվեց թագավորին, և թագավորը խմեց, ու վեզիրը լցրեց երկրորդ թասը և Մարուֆին ասաց. «Ահա մի թաս խմիչքով լի, որին հարգելով, գիտունները գլուխ են խոնարհում»: — «Սա ի՞նչ է, ո՛վ վեզիր», — հարցրեց Մարուֆը: Ու վեզիրն ասաց. «Սա պառաված մի օրիորդ է և մի կույս, որը մարդու շի գնացել: Այս խմիչքն ուրախություն է բերում մարդու սրտին և սրա մասին բանաստեղծն ասել է.

Ուրացողների օտքերն այս բունը ճզմում են, գնում,
Եվ արարների գլուխներից հիմա վրեժ է առնում սա.
Որգին անհավատ, լուսնի պես սիրուն, մատուցում է մեզ,
Եվ նրա աչքերն են ամեն մեղքի հիմքը ամուր, տե՛ս:

Եվ ալլահից է այն մարդու շնորհքը, ով ասել է.

Տեսնում եմ գինին, գինով լի սափորն ահա բերողին.
Երբ մատուցում է արևանման քեֆ անողներին՝
Գինին պարում է, երկվորյակների լուսինն էլ ահա
Այտերին ասողեր է սփռում պայծառ լցնող պատտնու...
Գինին քնքուշ է և նուրբ է համը և հոտը այնքան,
Որ հոտում է նա, ասես մարմնով ոգին է հոտում:

Իսկ ինչքան՝ գեղեցիկ է բանաստեղծի ասածը.

Լիալուսինն ինձ գիշերը ամուր գրկած քնացավ,
Իսկ կամարից թասիս շողուն չքշավ արևն, իմացի՛ր.
Տեսնում էի, թե ինչպես է հուրը ծարում իմ թասից,
Խոնարհվելով հենց իմ առաջ, ինչպես մոզերն այն բոլոր
Գլուխները խոնարհեցին երբեք նրա առջև:

Ահա և մյուսի խոսքը.

Եվ նա շրշում էր հողերում նրանց,
Ինչպես քուժումը մարմնում հիվանդի:

Ահա և մի ուրիշի գրածը.

Չարմանում եմ ես այն մարդկտնց վրա՝
Գինի քամեցին ու իրենք մեռան,
Իսկ մեզ թռեցին շուրն անմահական:

Բայց դրանից ավելի լավ են Աբու Նովասի խոսքերը.

Թող ինձ կշտամբելք դու, դա է, որ գրգռում է,
Ինձ բուժիր հենց նրանով, հիվանդություն էր ինչ որ
Ո՛վ դեղին... Քո պալատում դառնութուններ տեղ չունեն,
Քո քարին էլ կպչես դու՝ կճաշակի խնդութուն:
Գիշեր էր մութ: Գավի մեջ խռացիր, վեր բարձրացար,
Ու սենյակում շողշողացող մարգարիտը շողքերիդ
Շրջեցիր մեջն այրերի, ու՛մ որ բախտն է հնազանդ,
Եվ միայն այն տվիր դու, ինչ նրանց է ցանկալի:
Կույսի ձեռքին թե լինես, հագած ինչպես պատանի,
Որդին Առվտի ու շնացողն մեկից կսիրեն նրան:
Ով գիտուն է ձեռնում, ասա. «Ինչ-որ բան գիտես,
Բայց դեռևս շատ բաներ քեզնից թաքուն է մնում»:

Բայց ամենից լավը Իբն-ալ-Մութազի¹ ասածն է.

Ալլահ, հազեցբու Ջեզիրեն,
Ուր որ ծառերի սափերն է խիտ,
Ու թող հորդառատ անձրե գա,
Դեյր-Աբդունն ամբողջ ողողի:
Որքան հաճախ են ձայն տվել
առավոտներն ինձ՝ խմելու,
Հենց լուսարացին, երբ հավքերն
օդ չեն բարձրացել, թռել գիւտ,
Երբ վանականները վանքում
Աղոթք են ասում լայագին,
Ցնցոտիները հագած սև
բարձրաձայն ողբում են ծեղկն:
Նրանց մեջ որքա՞ն շատ դեմքեր
կան գեղատեսիլ, և աչքեր
Շրջանակված խոնջությամբ
ու կոպերն տյո՞ ժամ խոնարհված...

Խավարի շապկով քողարկված, գալիս էին տունն իմ նրանք,
Եվ վախից տրագ քայլերով, և ահով հետ-հետ նայելով:
Այսու էի նրանց տակ դնում ճանապարհին ես ստորացած,
Ու իմ հետքերով քաշ տալիս հագուստիս լիեղը ամոթով:
Եվ լուսինն էր լույս տալիս վառ, ու քիչ էր մնում մեզ մտանի,
Եվ նման էր նա կեռիկի, որ եղունգից էր կտրված:
Ու ինչ եղել է՝ եղել է, բայց դրտ մասին չեմ ասի...
Դու բարին միայն մտածիր, իսկ թի ինչ եղավ, մի՛ հարցրու:

Ալլահից է այն մարդու շնորհքը, ով ասել է.

Ես ամենքից հարուստ դարձա,
Եվ խնդությունն եմ ես ուզում,
Հեղուկ ոսկի եմ ես գաել
Ու գավաթով եմ այն չափում:

Հապա ինչքա՞ն գեղեցիկ են բանաստեղծի այս տողերը.

Ալլա՞հը վկա, ուրիշ ալքիմիա չես գտնի,
Եվ ինչ լսել ենք գրա միջոցներից, սուտ է, սուտ:
Խառնիր զանթարին գառնության՝ գինի մի կիրտա,
Մի ակնթարթում կդառնա գա խինգ երչանիկ:

¹ Իբն-ալ-Մութազ — արար մեծ բունաստեղծ ու գրականության տեսաբան. ապրել է IX դարում:

Ահա և մեկ ուրիշի տողերը.

Նրբ ըստակները դատարկ են բերում, ծանր են դրոնք,
Իսկ երբ գինի են լցնում դրոնց մեջ, գինի մաքուր,
Քեթև են դրանք, թռչում են թեթև օդով ասես:
Այդպես էլ թեթև մարմինն է լինում գինու բույրից:

Ահա և մեկ ուրիշի խոսքը.

Ե՛վ գավաթը, և՛ գինին իրավունքներ ունեն մեծ,
Մեկը այն է, որ հիշեն իրավունքները իրենց.
Երբ մեռնեմ ես, թաղեք իմ ոսկորները վազի մոտ,
Արմատները նրա թող ոսկորներին միշտ հյութ տան:
Անապատում չթաղեք, վախենում եմ իսկապես,
Որ երբ մեռնեմ, էլ գինու անուշ համը չտեսնեմ:

Ու վեզիրն այնքան գայթակղեցրեց Մարուֆին խմել և դուրեկան բաներ ասաց գինու սքանչելիքների մասին, մեջ բերելով դրան նվիրված բանաստեղծություններ ու նրբահյուս պատմություններ, մինչև որ Մարուֆը համաձայնեց ըմպել խմիչքը, և նրան էլ ցանկանալու ուրիշ բան չմնաց:

Ու վեզիրը լցնում էր Մարուֆի թասը, իսկ սա խմում էր, հաճույք վայելում և ցնծում, մինչև որ նրա համար անհետացավ իսկությունը և նա սխալը ճշտից դադարեց տարբերել: Ու երբ վեզիրը գլխի ընկավ, որ Մարուֆի արբեցումը հասել է գագաթնակետին ու անցել է սահմանը, ասաց. «Ո՛վ վաճառական Մարուֆ, ալլահը վկա, դարմանում եմ: Որտեղի՞ց եկան քո այդ գանձերը, որոնց նմանը նույնիսկ խոսրովի տոհմի թագավորները չունեն: Մենք մեր կյանքում վաճառական չենք տեսել, որ այնքան փող ունենա, ինչքան դու ունես, և չի եղել մեկը, որ քեզանից ավելի առատաձեռն լինի: Քո վարմունքը թագավորների վարմունք է, ու դա վաճառականի գործ չէ: Ի սե՛ր ալլահի, պատմիր ինձ ամեն ինչ, որ ինձ հայտնի դառնան քո աստիճանն ու դիրքը»:

Ու նա շարունակեց թախանձել ու խաբել Մարուֆին, իսկ սա խելքը կորցրել էր ու, վերջապես, ասաց վեզիրին. «Ծս ոչ վաճառական եմ, ոչ էլ որևէ թագավոր», — և սկզբից մինչև վերջ պատմեց ամեն ինչ: Եվ այն ժամանակ վեզիրը բացականչեց. «Ի սե՛ր ալլահի աղաչում եմ քեզ, ո՛վ տեր իմ Մարուֆ, ցույց տուր այդ մատանին, որ տեսնենք, թե ինչպես է պատրաստված»: Եվ Մարուֆը մատանին մատից հանեց ու քանի որ հարբած էր, ասաց. «Վերցրու և տես»: Ու վեզիրը մատանին վերցրեց, շուռումուռ տվեց և հարցրեց. «Որ շփեմ, ծառան կհայտնվի՞»: — «Այո»:

պատասխանեց Մարուֆը, — շփիր մատանին, և դրա ծառան կներկայանա քեզ»:

Ու վեզիրը մատանին շփեց, և հանկարծ ինչ-որ մեկի ձայնն ասաց. «Ես քո առջև եմ, տե՛ր իմ, պահանջիր ու կատանաս: Ուզում ես քաղաք ավերե՞լ, թե՞ քաղաք շինել, թե՞ թագավորին սպանել: Ինչ որ պահանջես, անխոս կկատարեմ»:

Ու վեզիրը մատնացույց արեց Մարուֆին և ասաց ծառային. «Տար այս սրիկային ու գցիր անապատի ամենամարդաբնակ անկյունը, այնպես որ ոչ ուտելիք գտնի, ոչ խմելիք, ու սովից մեռնի, ու մեռնի կարոտի մեջ, որ ոչ ոք չիմանա, թե ինչ եղավ սա»: Եվ ծառան Մարուֆին բարձրացրեց ու երկրի ու երկնքի արանքով թռավ գնաց: Ու երբ Մարուֆը տեսավ, թե իրեն ինչ պատահեց, համոզվեց, որ կործանումն անխուսափելի է, և որ կացությունը ծանր է, և նա լաց եղավ ու ասաց «Ով Աբու-ս-Սաադատ, ո՞ւր ես թռչում և ուր ես տանում ինձ»: Եվ մատանու ծառան ասաց նրան. «Ես թռչում եմ անապատի կողմը, որ քեզ գցեմ այնտեղի ամենամայի տեղը, ով նվազ դաստիարակված: Ո՞վ է խելքը թոցրել, որ այդպիսի թալիսմանի տեր լինի ու տա մարդկանց, որ նրանք տեսնեն: Դու արժանի ես նրան, ինչ որ քեզ վիճակվեց, ու եթե ավահից ահ շունենայի, հազար սաժեն բարձրությունից ցած կգցեի քեզ, և դեռ գետնին չհասած քամիները քեզ պատառ-պատառ կանեին»:

Եվ Մարուֆը ձայնը կտրեց ու շխոսեց ոգու հետ, մինչև որ սա հասավ երկրի ամենամայի անկյունն ու նրան գցեց այդտեղ ու հետ գնաց, թողնելով Մարուֆին անմարդաբնակ վայրում:

Ահա թե ինչ եկավ Մարուֆի գլուխը: Սրան այստեղ թողնենք, գանք լուր տանք վեզիրից: Երբ նա դարձավ մատանու տերը, թագավորին ասաց. «Ի՞նչ կասես, ես քեզ ասում էի, որ Մարուֆը խաբերա ու ստախոս է, իսկ դու ինձ չէիր հավատում»: Եվ թագավորն այսպես խոսեց. «Դու ես ճշմարիտը, ով վեզիր, թող ավահը քեզ առողջություն տա: Մատանին ինձ տուր՝ տեսնեմ»:

Ու վեզիրը զայրույթով դարձավ նրա կողմը, թքեց երեսին ու ասաց. «Ո՞վ ցնգած, ինչպե՞ս մատանին տամ քեզ ու քո ծառան մնամ այն բանից հետո, երբ քո տերն եմ գարձել: Բայց ես քեզ այդպես չեմ թողնի»:

Եվ ապա վեզիրը շփեց մատանին, և ծառան հայտնվեց, ու վեզիրն ասաց նրան. «Այս անդաստիարակին տար ու գցիր այնտեղ, որտեղ սրա խարեբա-փեռային ես գցել»: Եվ ծառան թագավորին վերցրեց ու նրա հետ թռավ գնաց:

Եվ թագավորն ասաց թողուն. «Ո՞վ իմ աստծու ստեղծած, իմ մեղքն ի՞նչ է»: Եվ ոգին պատասխանեց նրան. «Չգիտեմ, բայց իմ տերը հրամայեց, ու ես չեմ կարող հակառակել այն մարդուն, ով այդ թալիսմանով մատանու տերն է»:

Ու թռավ նա այնքան ժառանակ, մինչև որ թագավորին էլ պցեց այնտեղ, որտեղ Մարուֆն էր, իսկ հետո հետ գնաց, թողնելով նրան անապատում: Ու թագավորը լսեց, որ Մարուֆը լաց է լինում և մոտեցավ նրան ու ամեն ինչ պատմեց, և երկուսն էլ նստեցին ու լաց եղան, զարմացան, թե այդ ի՞նչ էր պատահել իրենց: Եվ նրանք ո՛չ ուտելիք գտան այդտեղ, ո՛չ խմելիք:

Ահա թե ինչ եկավ այդ երկուսի գլուխը: Իսկ ինչ վերաբերում է վեզիրին, ապա թագավորին և Մարուֆին պալատից հեռացնելուց հետո, նա ոտքի ելավ, այգուց դուրս գնաց և, հավաքելով բոլոր զսբականներին, դիվան ժողովեց ու պատմեց, թե ինչ է արել ինքը Մարուֆին ու թագավորին: Եվ հաղորդեց մատանու պատմությունն ու ասաց. «Եթե դուք ինձ ձեր սուլթանը շղարձնեք, մատանու ծառային կհրամայեմ, որ բոլորիդ տանի ու գցի երկրի ամայի մի անկյունը, և դուք սովից ու ծարավից կմեռնեք»:

Ու բոլորն ասացին նրան. «Վատություն մի՛ արա մեզ: Մենք համաձայն ենք, որ դու մեր սուլթանը լինես, ու չենք հակառակի բո հրամաններին»: Եվ հետո զորականներն իրենց կամքին հակառակ համաձայնեցին, որ վեզիրն իրենց սուլթանը դառնա: Ու վեզիրը նրանց պատվավոր հազուստներ նվիրեց, և Աբու ս - Սաադատից անընդհատ պահանջում էր, ինչ-որ ցանկանում էր, և ծառան անհապաղ բերում էր նրա ուզածը:

Եվ ապա վեզիրը նստեց գահին, ու բոլոր զսբականները հնազանդվեցին նրան: Եվ նա մարդ ուղարկեց թագավորի աղջկա մոտ ու պատվիրեց ասել նրան. «Պատրաստվիր, այս գիշեր գալու եմ քեզ մոտ, քանի որ կարոտել եմ քեզ»:

Ու թագավորի աղջիկը լաց եղավ, որովհետև ծանր էր նրա համար հորից ու ամուսնուց զրկվելը, և նա մարդ ուղարկեց վեզիրի մոտ, որ ասեն նրան. «Ժամանակ տուր ինձ, մինչև տխրության և աղոթքի օրերն անցնեն, իսկ հետո գրել տուր իմ ու բո ամուսնության թուղթն ու հկ ինձ մոտ, ինչպես կարգն է»: Ու վեզիրը պատվիրեց ասել նրան. «Ես տխրություն, աղոթք, ժամանակ չգիտեմ ու գրելու կարիք էլ չունեմ: Թույլատրելին ու անթույլատրելին ես իրարից չեմ զանազանում, և ինչ էլ լինի, այս երեկո պիտի դամ քեզ մոտ, դա անխուսափելի է»:

Ու երբ թագավորի աղջիկն այդ իմացավ, մարդ ուղարկեց վեզիրի

մոտ ու պաավիրեց ասել նրան. «Բարով գաս, ու դրանում ոչ մի վատ բան չկա»: (Իսկ դա նրա խորամանկութունն էր):

Երբ վեզիրն այսպիսի պատասխան ստացավ, ուրախացավ և նրա կուրծքն ասեռ կապանքներից ազատվեց, ու նա խորը շունչ քաշեց, որովհետև համակված էր թագավորի աղջկա սիրով: Ու վեզիրը կարգադրեց բոլոր մարզկանց կերակուրներ տալ և ասաց. «Անուշ արեք, քանի որ սա հարսանեկան խնջույք է. այս երեկո ես ուզում եմ թագավորի աղջկա մոտ գնալ»:

Ու շեյխ-ու-իսլամն ասաց նրան. «Կարգը թույլ չի տալիս, որ դու գնաս նրա մոտ, մինչև որ տխրության և աղոթքի ժամանակը չվերջանա և չգրես քո և նրա ամուսնության թուղթը»: Ու վեզիրը գոռաց. «Ծա աղոթք-մաղոթք չեմ իմանում, ժամանակ-բան չգիտեմ, երկար-բարակ մի՛ խոսիր»:

Ու շեյխ-ու-իսլամը, վեզիրի կատաղությունից վախենալով, ձայնը կտրեց ու զորականներին ասաց. «Սա պիղծ մարդ է, և սրա համար ո՛չ հավատ գոյություն ունի, ո՛չ կրոն»: Իսկ երբ իրիկունը վրա հասավ, վեզիրը գնաց թագավորի աղջկա մոտ ու տեսավ, որ նա հագել է իր ունեցած հագուստներից ամենալավերն ու զուգվել է հրաշալի զարդերով: Երբ թագավորի աղջիկը վեզիրին տեսավ, ծիծաղելով դիմավորեց նրան ու ասաց. «Օրհնված գիշեր է այս գիշերը, ու եթե դու հորս ու ամուսնուս սպանեիր, իսկապես որ ավելի լավ կլիներ ինձ համար»:— «Ծա նրանց անպատճառ կսպանեմ»,— ասաց վեզիրը: Եվ թագավորի աղջիկը նրան նստեցրեց իր կողքին ու սկսեց կատակ անել հետը և ցույց տալ, որ սիրում է նրան, ու երբ աղջիկը վեզիրին գուրգուրեց ու ժպտաց նրա երեսին, վեզիրի խելքը գլխից թռավ: Իսկ թագավորի աղջիկը նրան գուրգուրելով խաբեց, որ տեր դառնա մատանուն ու վեզիրի ուրախությունը վշտի փոխի և նրա գլխին մի խաղ խաղա, և աղջիկն արեց այդ բանը, հետևելով այն բանաստեղծի խորհրդին, որն ասել է.

Խորամանկությամբ հասա այն բանին,
Ինչին իմ սրով գեռ չէի հասել:
Եվ իմ ուզածը խել եմ արդեն,
Որի պտուղներն այնքան քաղցր են:

Ու երբ վեզիրը տեսավ աղջկա փաղաքշտնքն ու ժպիտը, կիրքը բորբոքվեց նրա մեջ, և նա թագավորի աղջկանից պահանջեց, որ իր հետ մերձենա: Ու երբ վեզիրը մոտեցավ նրան, աղջիկը հետ-հետ գնաց ու լաց եղավ և ասաց. «Տե՛ր իմ, չե՞ս տեսնում այն մարդուն, որ մեզ

է նայում: Ի սե՛ր ալլահի, աղաչում եմ քեզ, թաքցրու ինձ նրա աչքերից: Ինչպե՞ս ես դու մոտենում ինձ, երբ այդ մարդը մեզ է նայում»:

Ու վեզիրը բարկացավ և հարցրեց. «Ի՞նչ մարդ, ո՞ւր է»: Ու թագավորի աղջիկն ասաց. «Այ տե՛ս, մատանու բնիկում է, գլուխը բարձրացնում է ու մեզ նայում»: Ու վեզիրը կարծեց, թե գա մատանու ծառան է նայում աղջկան, և ծիծաղեց ու ասաց. «Մի վախենա, գա մատանու ծառան է, ու նա իմ իշխանության տակ է»: «Ես իֆրիտներից վախենում եմ, մատանին հանիր ու ինձանից հեռու գցիր»,— ասաց թագավորի աղջիկը: Ու վեզիրը մատանին հանեց ու դրեց բարձին, և մոտեցավ թագավորի աղջկան: Սա այդ բանը որ տեսավ, աքացի տվեց վեզիրի կրծքին, ու վեզիրն ուշագնաց ընկավ մեջքի վրա, իսկ թագավորի աղջիկը ձայն տվեց իր մերձավորներին, ու նրանք հապշտապ եկան նրա մոտ: Եվ աղջիկն ասաց. «Բռնեք սրան»: Եվ քառասուն ստրկուհի բռնեցին վեզիրին, իսկ արքայազուստը մատանին իսկույն վերցրեց բարձի վրայից ու շփեց: Հանկարծ Աբու-ս-Սաադատը հայտնվեց նրան ու ասաց. «Ես այստեղ եմ քո առջև, ով տիրուհի»: Եվ արքայազուստը ասաց. «Վերցրու այս անօրենին ու ղնդան նետիր ու ծանրացրու շրջ-թաները»: Եվ Աբու-ս-Սաադատը վեզիրին տարավ ու գցեց ցասման ղնդան և հետ եկավ ու ասաց. «Ես ղնդան գցեցի վեզիրին»:— «Ո՞ւր ես տարել իմ հորն ու իմ ամուսնուն»,— հարցրեց նրան թագավորի աղջիկը: Եվ Աբու-ս-Սաադատն ասաց. «Տարել գցել եմ երկրի ամայի մի անկյունը»: Եվ աղջիկն այս որ իմացավ, ասաց «Հրամայում եմ, որ դու նրանց հենց այս բոպեին բերես ինձ մոտ»:

Եվ իֆրիտը պատասխանեց. «Կսո՛ւմ եմ ու հնազանդվում»: Եվ նա թռավ գնաց, և թռավ այնքան ժամանակ, մինչև որ հասավ երկրի ամայի մասը և իջավ թագավորի ու Մարուֆի մոտ և տեսավ, որ նրանք նստել ու լաց են լինում և իրար գանգատ անում շար բախտից: Եվ իֆրիտն ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, ձեր բախտը բացվեց, կյանքներդ հիմա կթեթևանա»: Եվ նա պատմեց, թե ինչ է արել վեզիրը, ու հետո ասաց. «Հնազանդվելով արքայազուստեր կամքին, վեզիրին ես ղնդան գցեցի, ու հետո թագավորի աղջիկը հրամայեց, որ ձեզ հետ տանեմ իր մոտ»:

Եվ թագավորն ու Մարուֆը լսեցին նրա պատմածը և շատ ուրախացան: Եվ իֆրիտը նրանց առավ իր մեջքին ու նրանց հետ միասին թռավ գնաց: Եվ մի ժամ էլ շանցած հասավ թագավորի աղջկա մոտ: Ու արքայազուստը, ոտքի կանգնեց և ողջունեց հորն ու ամուսնուն և, նստեցնելով իր կողքին, նրանց առջև կերակուրներ ու քաղցրավենիք

դրեց: Եվ նրանք ուտել-խմելուց հետո քնով անցկացրին գիշերվա մնացած մասը: Իսկ մյուս օրը թագավորի աղջիկը շքեղ մի շոր հագցրեց հորն ու շքեղ մի շոր էլ հագցրեց ամուսնուն և ասաց. «Հա՛յր իմ, դու քո գահին նստիր որպես թագավոր, ինչպես առաջ էր, ու իմ ամուսնուն դարձրու աջակողմյան վեզիր, և ինչ եղել է, պատմիր քո զորականներին: Վեզիրիդ էլ բանտից բերել տուր և սպանիր, իսկ հետո վառիր, նա պիղծ մարդ է, և ուզում էր մտնել ծոցս անառակ ձևով՝ առանց ամուսնանալու, և նա ցույց տվեց, որ ինքն անօրեն է ու մի հավատ չունի, որ դավանի: Եվ հոգ տար փեսայիդ մասին, որին դու աջակողմյան վեզիր դարձրիր»:

Եվ թագավորը պատասխանեց. «Լսում եմ ու հնազանդվում, աղջիկս: Բայց այդ մատանին կամ ինձ տուր, կամ ամուսնուդ»: «Այս մատանին ոչ քեզ է պետք, ոչ էլ նրան,— պատասխանեց արքայադուստրը:— Մատանին ինձ մոտ կմնա, միգուցե, ես ավելի լավ պահեմ, քան դուր: Ինչ որ ցանկանաք, ինձանից պահանջեք, իսկ ես մատանու ծառայից կսլահանջեմ: Քանի ես ողջ և առողջ եմ, վատ ըրան չի լինի, մի վախեցեք, իսկ իմ մահից հետո մատանին ինչ ուզում եք՝ արեք»:— «Ա՛յդ շատ ճիշտ է, աղջիկս»,— բացականչեց թագավորը, և ապա նա փեսային առավ ու բարձրացավ դիվան:

Իսկ զորականները գիշերն անցկացրին մեծագույն տրամուխյան մեջ, մտածելով թագավորի աղջկա և այն մասին, ինչ վեզիրն արեց, երբ առանց ամուսնանալու մտավ արքայադուստեր մոտ, որպեսզի շնություն անի, և թագավորին և նրա փեսային շարիք պատճառեց: Ու զորականները վախենում էին, թե իսլամի օրենքը կարատավորվի, որովհետև նրանց համար պարզ դարձավ, որ վեզիրը պիղծ մարդ է:

Եվ նրանք հավաքվեցին դիվանում ու սկսեցին շեյխ-ուլ-իսլամին նախատել, ասելով. «Ինչո՞ւ դու նրան հետ չպահեցիր շնության համար արքայադուստեր մոտ գնալուց»: Ու շեյխ-ուլ-իսլամը պատասխանեց. «Ո՛վ մարդիկ, այդ վեզիրը պիղծ մարդ է, և նա դարձավ մատանու տերը, ու մենք ոչինչ չենք կարող անել նրա դեմ: Թող մեծագոր արլա՛հը նրան պատժի իր արած գործերի համար, իսկ դուք լռեք, թե չէ նա ձեզ կրսպանի»:

Ու երբ զորականները դիվանում հավաքված այսպես խոսում էին, հանկարծ ներս մտավ թագավորն ու նրա հետ էլ իր փեսան՝ Մարուֆը:

Ու երբ զորականները նրան տեսան, շատ ուրախացան, որ նա եկել է, և նրա պատվին ոտքի կանգնեցին ու նրա առջևի հողը համբու-

րեցին: Իսկ հետո թագավորը նստեց դահլին և ամբողջ իրողությունը պատմեց նրանց, և գրանից զորականների սբտի դառնությունն անցավ:

Եվ թագավորը հրամայեց զարդարել քաղաքն ու պատվիրեց վեզիրին զնգանից բերել: Ու երբ վեզիրն անցնում էր զորականների մոտով, սրանք անիծում էին նրան, անպատվում և նախատում, մինչև որ նա հասավ թագավորի մոտ:

Ու երբ վեզիրը կանգնեց թագավորի առջև, թագավորը կարգադրեց սպանել նրան ամենասարսափելի ձևով, ու վեզիրին սպանեցին, իսկ հետո այրեցին: Եվ նա զնաց դժոխք ամենավատ դրությամբ, և աչքի ընկավ այն մարդը, ով նրա մասին ասաց.

Եվ թող ալլահը շիրիմը նրա հրեք շօրհնի,

Եվ թող նաքիրն ու Մուեբարը նրա դատաստանն անեն:

Եվ հետո թագավորը Մարուֆին իր աջակողմյան վեզիրը դարձրեց: Եվ նրանց համար հաճելի էր ժամանակը, և անբիծ էր նրանց ուրախությունը: Եվ այսպես նրանք ապրեցին հինգ տարի: Իսկ վեցերորդ տարին թագավորը մեռավ, ու արքայադուստրը հոր փոխարեն Մարուֆին սուլթան դարձրեց, և մատանին շտվեց նրան:

Իսկ այդ ժամանակ նա Մարուֆից հղիացավ ու մի տղա բերեց, մի աննման, մի հիանալի տղա, որը մարդկանց թովում էր իր գեղեցկությամբ ու կատարելությամբ, և նա մինչև հինգ տարեկան դառնալը դայակների գրկից գիրկ անցավ:

Եվ այդ ժամանակ նրա մայրը հիվանդացավ մահացու հիվանդությամբ, և Մարուֆին իր մոտ կանչեց ու ասաց նրան. «Ես հիվանդ եմ»: Եվ Մարուֆը բացականչեց. «Ալլահը քեզ պահպանի, ո՛վ սրտիս սիրած»: Բայց թագավորի աղջիկն այսպես խոսեց. «Դուցե ես մեռնեմ, ու կարիք չկա քեզ պատվիրել, որ որդուդ լավ նայես, բայց քեզ վրա պարտավորություն եմ դնում, որ լավ պահես մատանին, որովհետև շատ եմ վախենում, որ քեզ ու տղայիս մի բան պատահի»:— «Ալլահի՛ պահածին դժբախտություն չի պատահի»,— ասաց Մարուֆը: Եվ արքայադուստրը մատանին մատից հանեց ու տվեց Մարուֆին, իսկ մյուս օրը ներկայացավ մեծազոր ալլահի ողորմածությանը: Եվ Մարուֆը մնաց թագավոր ու սկսեց վճիռներ արձակել:

Ու այնպես պատահեց, որ Մարուֆը օրերից մի օր թաշկինակը թափ տվեց, և զորականները հեռացան նրա մոտից ու զնացին իրենց կացարանները, իսկ նա մտավ իր սենյակը և նստեց այնքան ժամանակ, մինչև որ ցերեկն անցավ ու մոտեցավ գիշերն իր խավարով: Եվ այդ

ժամանակ սովորականի պես նրա մտտ եկան բաժակակից մեծամեծ-
ները և ժամանակ անցկացրին մինչև կես գիշեր, կերան-խմեցին, զվար-
ճացան ու բավականութուն ստացան, իսկ հետո հեռանալու թույլ-
ալուքուն խնդրեցին, և Մարուֆը թույլ տվեց նրանց, ու նրանք ցրվե-
ցին իրենց տները: Եվ Մարուֆի սենյակը մտավ նրա մահճի սպասա-
վորուհի ստրկուհին, և նրա անկողինը բացեց ու, հանելով շորերը, գի-
շերվա շոր հագցրեց: Եվ Մարուֆը պառկեց, իսկ ստրկուհին շփեց նրա
ոտքերը, մինչև որ տիրոջ բունը տարավ, և ստրկուհին դուրս եկավ ու
գնաց պառկեց իր տեղն ու քնեց:

Այս էր ահա, որ կատարեց ստրկուհին: Իսկ եթե Մարուֆից հարց-
նեք, ապա նա քնեց: Եվ հետո ինչ-որ բան կատարվեց, ու նա հագլիվ
էր ուշքի եկել, երբ նրա կողքին՝ անկողնում, ինչ-որ բան հայտնվեց:
Եվ թագավորը վախեցած արթնացավ ու բացականչեց. «Ապավինում եմ
ալլահին, թող նա ինձ քարկոծ հղած սատանայից հեռու պահի»: Ու
բացելով աչքերը, նա իր կողքին այլանդակ տեսքով մի կին տեսավ:
«Ո՞վ ես դու»,— հարցրեց նա այդ կնոջը, և կինը պատասխանեց. «Մի
վախեցիր, ես բո կինն եմ՝ վհուկ Ֆաթիման»: Եվ Մարուֆն այդ որ
լսեց, նայեց նրան և հրեշային տեսքից ու երկար ժանիքներից ճանաչեց
իր կնոջը:

«Որտեղի՞ց մտար ներս և ո՞վ քեզ բերեց այս երկիրը»,— հարցրեց
Մարուֆը: Եվ Ֆաթիման նրան ասաց. «Իսկ դու հիմա որ երկրում ես»: Եվ
Մարուֆն ասաց. «Իհիսան-ալ-հաթան քաղաքում: Իսկ դու Մրսըրից
ե՞րբ ես դուրս եկել»:— «Հենց նոր»,— պատասխանեց Ֆաթիման. Եվ
Մարուֆը հարցրեց. «Ինչպե՞ս թե»: Ու Ֆաթիման ասաց. «Լավ իմացիր,
որ երբ ես կովեցի քեզ հետ ու սատանան դրդեց մի վնաս տալ քեզ,
զանգատ արեցի դատավորներին, ու նրանք փնտրեցին քեզ, բայց չգտան:
Եվ զաղիներն էլ հարցուփորձ արեցին բո մասին, բայց մի մարդ չեղավ,
որ քեզ տեսած լիներ: Ու երբ երկու օր անցավ, ես շատ զղջացի ու հաս-
կացա, որ մեղք եմ գործել, բայց իմ զղջալն անօգուտ էր: Ու մի քանի
օր նստեցի լաց եղա, որ քեզանից բաժանվել եմ, և ինչ ձեռքիս կար,
ծախսվեց գնաց, ու ես ստիպված սկսեցի ողորմություն խնդրել, որ ապ-
րեմ: Ու ես ողորմություն էի խնդրում, ումից պատահեր, բախտավոր
լինեք այդ մարդը, թե անբախտ, ու այն օրվանից, ինչ դու ինձանից բա-
ժանվել ես, մուրացկանի պես ողորմածություն եմ խնդրում, ստորանում
ու ամոթից մեռնում: Ու ամենավատ դրություն մեջ ընկա: Եվ ամեն գի-
շեր նստած լաց էի լինում ու ողբում քեզանից բաժանվելու և այն րո-

լորի համար, ինչ որ քո հեռանալուց հետո բաժին էր ընկել ինձ՝ խայտառակություն, ստորացում, գժբախտություն և վնաս»:

Եվ նա սկսեց Մարուֆին պատմել, թե ինչեր են եկել իր գլուխը, և ապշած նայում էր նրան, ու վերջապես, Ֆաթիման ասաց. «Իսկ երեկ ամբողջ օրը ման էի գալիս ու ողորմություն խնդրում, բայց ինձ ոչ որ ոչինչ շտվեց, ու երբ վրա հասավ գիշերը, առանց ընթրելու պառկեցի քնելու: Եվ ինձ վառում-փոթոթում էր սովածությունը: Եվ ծանր էր ինձ համար ու անսանելի, ինչ որ քաշել էի: Ու նստել լաց էի լինում, երբ հանկարծ մի մարդ հայտնվեց իմ առջև ու ասաց. «Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում»: Եվ ես ասացի. «Ես ամուսին ունեի, որն ինձ վրա ծախս էր անում և կատարում, ինչ ուզեի, ու նա չբվեց, ու ես չգիտեմ, թե ուր կորավ նա, և առանց նրա դժբախտության մեջ ընկա ես»: «Իսկ ամուսնուդ անունն ի՞նչ է»,— հարցրեց մարդը: Եվ ես ասացի. «Ամուսնուս անունը Մարուֆ է»: Եվ այդ ժամանակ մարդն ասաց. «Ես ճանաչում եմ նրան: Իմացիր, որ քո ամուսինը հիմա սուլթան է քաղաքներից մեկում, ու եթե ուզում ես, որ քեզ տանեմ նրա մոտ, կանեմ»:— «Ես քո հովանավորության տակ եմ ու խնդրում եմ, որ ինձ հասցնես մարդուս մոտ»,— ասացի ես: Ու այդ մարդը բարձրացրեց ինձ, ու մենք թռանք երկնքի ու երկրի արանքով, մինչև որ հասանք այս պալատը: Հենց որ տեղ հասանք, նա ասաց. «Ներս մտիր այս սենյակն ու կտեսնես ամուսնուդ, որը մահճում քնած է»: Ու ես մտա և այս սենյակում տեսա քեզ, իսկ ես չէի էլ մտածում, թե դու ինձ կթողնես ու կհեռանաս, քանի որ ես քո կինն եմ: Փա՛ռք ալլահին, որ ինձ ու քեզ միացրեց իրար հետ»:

«Մի՞թե ես եմ քեզ թողել: Թե՞ դու ինձ թողեցիր ու հեռացար, մի ղաղիից դնում էիր մյուսի մոտ գանգատվելու,— ասաց Մարուֆը:— Այդ ամենն ավարտեցիր, երբ գանգատ արեցիր բարձրագույնի պալատին ու բերդից բաց թողեցիր ինձ վրա Աբու-Քարաքին, ու ես կամքիս հակառակ փախա»:

Եվ Մարուֆն սկսեց նրան պատմել, թե ինչեր են պատահել իրեն, մինչև որ սուլթան է գարձել և ամուսնացել թագավորի աղջկա հետ: Եվ նա ասաց, որ թագավորի աղջիկը մեռավ ու ինքը նրանից մի տղա սնի, որը հիմա յոթ տարեկան է:

Ու Ֆաթիման ասաց. «Ինչ որ պատահել է, մեծազոր ալլահի նախասահմանածն է, ու հիմա ես զղջում եմ և քո պաշտպանության տակ եմ: Մի՛ հեռանա ինձանից և թող ապրեմ քո հացով, որ կտաս ինձ որպես ողորմություն»: Եվ Ֆաթիման այնքան ժամանակ ստորացավ

սուլթանի առջև, մինչև որ Մարուֆի սիրտը փափկեց, և այդ ժամանակ նա ասաց. «Զղշա կատարածդ շարիքի համար և ապրիբ ինձ մոտ, ու քեզ բաժին կրնկնի այն, ինչը կուրախացնի քեզ, իսկ եթե վատ բան անես, ես քեզ կսպանեմ ու ոչ ոքից չեմ վախնա: Ու մտքովդ շանցնի զնալ բարձրագույն պալատ ու գանգատվել ինձանից, որ բերդից ինձ վրա բաց թողնեն Արու-Քարաքին. ես սուլթան եմ դարձել ու մարդիկ վախենում են ինձանից, իսկ ես վախենում եմ միայն մեծազոր ալլահից: Ես մի մատանի ունեմ, և երբ այն շփում եմ, դրա ծառան ներկայանում է ինձ, և նրա անունը Արու-ս-Սաադատ է, ու ինչ որ ես պահանջում եմ, բերում է: Եթե ուզում ես զնալ քո քաղաքը, ես քեզ այնքան փող կտամ, որ մինչև մահ-գերեզման հերիք անի, ու քեզ իսկույն կուղարկեմ քո երկիրը, իսկ եթե ուզում ես ապրել ինձ մոտ, ես քեզ համար մի տուն կազատեմ ու ամենալավ մետաքսով պատել կտամ հատակն ու պատերը: Քեզ ծառայելու համար քսան ստրկուհի կնշանակեմ, և հրաշալի ուտելիքներ ու շքեղ շորեր կտամ, և դու թագուհի կդառնաս ու մինչև մահդ կամ մինչև իմ մահը մեծ երջանկության մեջ կապրես: Կավ չե՞մ ասում»:

Եվ Ֆաթիման ասաց. «Ես ուզում եմ մնալ քեզ մոտ»: Եվ ապա նա համբուրեց Մարուֆի ձեռքն ու զղջման խոսքեր ասաց արած վատության համար: Եվ Մարուֆը նրան առանձին տուն հատկացրեց, և պարզեց ստրկուհիներ ու ներքինիներ, և Ֆաթիման դարձավ թագուհի:

Եվ Մարուֆի որդին սկսեց այցելել նրան ու իր հորը, և տղան զզվելի էր Ֆաթիմայի համար, որովհետև իր որդին չէր: Ու երբ տղան տեսավ կատաղությամբ ու զզվանքով լի նրա հայացքը, խորթություն զգաց դեպի նա և ատեց նրան:

Իսկ Մարուֆը տարվեց սիրուն ստրկուհիների սիրով ու իր կնոջը՝ վհուկ Ֆաթիմային, բոլորովին չէր հիշում, քանի որ սա փարշելի արտաքինով ու քաշալ գլխով մի պառավ էր, բծավոր օձից ավելի զզվելի: Ու, բացի դրանից, Ֆաթիման նրան այնպիսի վիրավորանք էր հասցրել, որից ավելին աշխարհում չկա: Եվ լավ է ասել առակախոսը. «Վատ գործը կտրում է ցանկությունների արմատը և սրտի հոգում ատելություն է սերմանում»: Եվ ալլահից է շնորհքն այն մարդու, ով ասել է.

Եվ զգուշացիր սրտով սիրածիդ վիրավորելով կորցնելուց,

Փախած սրտերը վերադարձնելը շատ զժվար գործ է.

Զէ՛ որ իսկապես կփախչի, եթե երկու սրտերի մտերմությունը

Ապակու նման փշովի բնդ-իշտ, էլ չես կպցնի:

Իսկ չէ՞ որ Մարուֆը ապաստարան տվեց Ֆաթիմային ոչ թե նրա ինչ-որ գովելի հատկությունների համար: Մարուֆը նրա նկատմամբ մեծահոգություն արեց, ցանկանալով դուր գալ մեծագոր ալլահին...»:

Եվ Դունյազադեն ասաց իր քրոջը՝ Շահրազադեին. «Ինչ հրաշալի են այդ խոսքերը, որ ավելի ուժգին են համակում մարդու սիրտը, քան կախարդի հայացքը, և ինչքա՛ն լավ են այդ տարօրինակ պատմություններն ու զարմանալի պատմվածքները»:

Եվ Շահրազադեն բացականչեց. «Օ՛հ, այս պատմությունները չեն հասնի նրան, ինչ որ պիտի պատմեմ մյուս գիշեր, թե որ թագավորն ինձ գթա, ու ես ողջ մնամ»:

Ու երբ առավոտը բացվեց, և լույսը փայլեց ու շողաց, թագավորի կուրծքն ասես կապանքներից ազատվեց, և նա սկսեց սպասել պատմության ավարտին, և ինքն իրեն ասաց. «Ալլահը վկա, ես սրան չեմ սպանի, մինչև չլսեմ մնացած պատմությունը»: Եվ ապա նա գնաց դատի տեղը, ու եկավ վեզիրը, սովորականի պես, սավանը թևի տակ:

Եվ թագավորն ամբողջ օրն անցկացրեց դիվանում, իսկ հետո գնաց հարեմ ու մտավ իր կնոջ՝ վեզիրի աղջիկ Շահրազադեի, սենյակը:

Ու վրա հասավ գիշերը, որ առաջինն է հազարից հետո ու վերջինը՝ զբոսում:

...Թագավորը գնաց հարեմ ու մտավ իր կնոջ՝ վեզիրի աղջիկ Շահրազադեի սենյակը, և սրա քույրը՝ Դունյազադեն, ասաց քրոջը. «Ավարտիր Մարուֆի պատմությունը»:

Եվ Շահրազադեն պատասխանեց. «Սիրով ու հաճությամբ, եթե թագավորը թույլ տա պատմել»:

Ու թագավորն ասաց. «Թույլ եմ տալիս պատմել, քանի որ ձգտում եմ լսել պատմության վերջը»:

Եվ Շահրազադեն ասաց. «Ո՛վ արքա, պատմում են, որ Մարուֆ թագավորն իր կնոջ մասին հոգ էր տանում ոչ թե մի մարմին ու մի հոգի դառնալու համար, այլ կերակրում էր նրան, որ անմեղ ու մաքուր ներկայանա ալլահին: Ու երբ Ֆաթիման տեսավ, որ նա հեռու է պահում իրեն ու մերձենալ չի ուզում և զբաղված է ուրիշ կանանցով, ատեց նրան, և խանդը նրա հոգին տակն ու վրա արեց: Եվ իրլիսը Ֆաթիմայի ականջին փսփոսաց, որ սա մատանին վերցնի Մարուֆից, և սպանի նրան ու նրա տեղը ինքը նստի գահին ու դառնա թագուհի: Ու մի գիշեր նա դուրս եկավ իր պալատից և գնաց դեպի այն պալատը, որտեղ իր ամուսինն էր՝ Մարուֆ թագավորը: Եվ նախախնամության ու ճակատագրի բերումով պատահեց այնպես, որ Մարուֆն այդ ժամանակ պառկած

էր գեղեցիկ ու աննման, սլացիկ ու համաչափ կազմվածքով իր սիրուհիներից մեկի հետ: Իսկ քանի որ Մարուֆը շատ բարեպաշտ էր մատանին հանում էր մատից, երբ ուզում էր մի անկողնում միանալ մեկի հետ, մատանու վրա գրված ազնիվ անունների նկատմամբ ունեցած հարգանքից դրդված, և մատանին միայն այն ժամանակ էր դնում մատը, երբ մաքուր էր լինում: Եվ նա մի սովորութիւն ուներ. մերձենալուց հետո ստրկուհուն հրամայում էր հեռանալ իր մոտից, որովհետև վախենում էր, թե մատանին կգողանան: Իսկ երբ նա մտնում էր բաղնիք, իր պալատի դուռը փակում էր, իսկ բաղնիքից վերադառնալով, վերցնում էր մատանին և մատը դնում, և դրանից հետո ամեն ոք առանց արգելքի մտնում էր պալատ:

Ու Ֆաթիման այս ամենն իմացել էր ու գիշերը դուրս եկավ, որ մտնի այն ժամանակ Մարուֆի պալատը, երբ սա սուզված կլինի խոր քնի մեջ, ու մատանին գողանա այնպես, որ նա իրեն շտեմնի: Իսկ երբ Ֆաթիման իր պալատից դուրս եկավ, թագավորի որդին հենց այդ րուպեին առանց ճրագի մտալ հանգստութեան սենյակը, որպեսզի բնական պահանջը կատարի, և սա նստեց մթութեան մեջ ու դուռը բաց թողեց: Ու երբ թագավորի տղան այդպես նստած էր, հանկարծ տեսավ, որ Ֆաթիման արագ-արագ գնում է իր հոր պալատի կողմը, և ինքն իր մըտքում ասաց. «Տեսնես այդ կախարհը խավար գիշերով ինչո՞ւ է դուրս եկել իր պալատից: Տեսնում եմ, որ նա գնում է հորս պալատը: Այդ րանը անպայման մի պատճառ ունի»:

Ու նա հանգստութեան սենյակից դուրս եկավ ու գնաց Ֆաթիմայի հետևից, նրա հետքերով. այնպես որ պառավը նրան չէր տեսնում: Իսկ թագավորի տղան պողպատե կարճ մի թուր ուներ ու միշտ այդ թուրը մեջքին կապած էր գնում հոր դիվանը, քանի որ թուրը թանկ էր իր համար: Ու երբ նրա հայրը տեսնում էր այդ, ծիծաղում էր ու ասում. «Թող ալլահի կամքը լինի, որդյա՛կ իմ, բո թուրն իսկապես որ մեծ է, բայց դու թուրդ կապած կռիվ չես գնացել ու ոչ մեկի գլուխը դրանով չես կտրել»: Ու որդին ասում էր հորը. «Ես անպայման կկտրեմ այն գլուխը, որն արժանի կլինի դրան»: Եվ լսելով այդ բառերը, հայրը ծիծաղում էր:

Ու երբ տղան գնաց հոր կնոջ հետևից, թուրը պատյանից հանեց ու հետևեց պառավին, մինչև որ սա մտալ պալատ: Եվ այդ ժամանակ տղան կանգ առաւ պալատի դռան մոտ ու սկսեց նայել կնոջը: Ու տեսնելով, որ Ֆաթիման րան է փնտրում և ասում է. «Ո՞ւր է դրել մատանին», հասկացավ, որ պառավը մատանին է փնտրում: Եվ տղան սպա-

սեց, մինչև որ Տաթիման մատանին գտավ ու բացականչեց. «Ահա, գտա» ու մատանին բարձր պահած ուզում էր դուրս գնալ:

Եվ այդ ժամանակ տղան թաքնվեց դռան հետևը, իսկ Տաթիման, գոնից դուրս գալով, նայեց մատանուն, ձեռքի մեջ շուռումուռ ավեց և ուզում էր շփել, բայց տղան թուրը բարձրացրեց ու խփեց նրա վզին, և Տաթիման միայն մի անգամ ճչաց ու ընկավ մեռած:

Եվ Մարուֆն արթնացավ ու տեսավ, որ կինը ընկած է գետին և նրա արյունը հոսում է, իսկ որդին կանգնած է մերկացրած թուրը ձեռքին, և նա հարցրեց. «Սա ի՞նչ բան է, զավա՛կս»: Եվ տղան պատասխանեց. «Հա՛յր իմ, քա՛նի անգամ ես ինձ ասել. «Թուրդ մեծ է, բայց դու թուրրդ կապած կռիվ չես գնացել ու դրանով ոչ մեկի գլուխը չես կտրել»: Իսկ ես ասում էի քեզ. «Ես անպայման կկտրեմ այն գլուխը, որն արժանի կլինի դրան»: Եվ ահա, քեզ համար իմ թրով կտրեցի գլուխը, որը կտրվելու արժանի էր»:

Եվ տղան պատմեց Տաթիմային հետապնդելու պատմությունը, և Մարուֆն սկսեց փնտրել մատանին, բայց չգտավ: Ու թագավորը Տաթիմայի մարմնի վրա մատանին փնտրեց այնքան ժամանակ, մինչև տեսավ, որ կինը մատանին սեղմել էր բոխ մեջ: Եվ այդ ժամանակ նա Տաթիմայի ձեռքից վերցրեց մատանին ու տղային ասաց. «Դու, անկասկած ու հաստատապես, իմ որդին ես: Թող ալլահն այնպե՛ս աղատի քեզ դժբախտությունից այս կյանքում և ապագա կյանքում, ինչպես գու ինձ ազատեցիր այս զաղրելի կնոջից: Այս կինը շատ շարժարկեց, որ ինձ կործանի, բայց ինքը կործանման հասավ, և ալլահի պարգևն է այն մարդու շնորհքը, ով ասել է.

Երբ ալլահի օգնությունը մարդուն հասնի,
Ամեն գործում ցանկացածին նա կհասնի.
Թե ալլահի օգնությունը շունի տղան,
Վնասն առաջին հենց իր գործն է տալիս նրան:

Հետո Մարուֆ թագավորը կանչեց իր մերձավորներին, ու նրանք շտապ եկան նրա մոտ, և նա պատմեց նրանց իր կնոջ՝ վհուկ Տաթիմայի արածն ու հրամայեց տանել այդ կնոջ մարմինն ու մինչև առավոտ դնել մի տեղ: Ու նրանք արեցին այն, ինչ հրամայեց թագավորը:

Իսկ հետո Մարուֆը կնոջ գիակը հանձնեց մի քանի ծառաների, և նրանք Տաթիմային լողացրին ու փաթաթեցին սավանի մեջ, և գերեզման փորեցին ու թաղեցին նրան: Եվ այսպես, բախտը Տաթիմային

Մըսըրից ուղիղ տարավ գերեզման: Ալլահի պարգևն է այն մարդոց շնորհքը, ով ասել է.

Անցանք մենք ճամփան, կանխավ, որոշված,
Ամեն ոք կանցնի ճիշտ գծած ճամփան.
Թե մտրդ պիտ մեռնի որոշված վայրում,
Մեռնել չի կարող մի ուրիշ երկրում:

Իսկ որքան գեղեցիկ են բանաստեղծի այս խոսքերը.

Ես չգիտեմ, երբ պիտի գնամ հողի տակ,
Ցանկալով ինձ հասանելիք մի բարիք,
Բարի է այն, ինչին ձգտում եմ անհազ,
Թե սուրում է իմ հենց կողմը մի շարիք:

Եվ ապա Մարուֆ թագավորը մարդ ուղարկեց, որ գտնեն այն մարդուն՝ մաճկալին, որի հյուրն էր ինքը, ևրբ փախել էր քաղաքից, ու երբ մաճկալը ներկայացավ, թագավորը նրան իր աջակողմյան վեզիրն ու խորհրդականը դարձրեց: Ու թագավորն իմացավ, որ հողագործը մի աղջիկ ունի, որը գեղեցիկ է և աննման, ազնիվ հատկություններով, ծագումով հարգարժան ու ցեղով բարձրագույն: Եվ Մարուֆը ամուսնացավ նրա հետ, իսկ որոշ ժամանակ հետո նա ամուսնացրեց իր որդուն: Եվ նրանք հաճելի կյանքով ապրեցին միառժամանակ: Եվ նրանց ժամանակն անամպ էր ու զվարճություններով լի, մինչև որ նրանց մոտ եկավ հաճույքներ խափանողն ու հավաքույթներ ցրողը, որն ամայացնում է ընակեցված տներն ու որդիներին ու դուստրերին դարձնում է որբ: Ուրեմն, փառք նրան, ով անմահ է և ում ձեռքում է տեսանելի և անտեսանելի թագավորության բանալին»:

Իսկ Շահրազադեն այդ ժամանակվա ընթացքում թագավորից երեք արու զավակ ունեցավ: Եվ երբ նա այս պատմությունն ավարտեց, ոտքի կանգնեց ու, գետինը համբուրելով, ասաց. «Ով ժամանակի արքա, որ միակն ես դարում ու հարյուրամյակներում, ես քո ստրկուհին եմ, և ահա արգեն հազար գիշեր ու մի գիշեր է, ինչ քեզ հաղորդում եմ անցած-գնացած ժամանակների ու մարդկանց պատմությունները և հին մարդկանց պատվիրանները: Ունե՞մ ես իրավունք քո մեծությունից ցանկանալու այն, ինչ ուզում եմ»:

Ու թագավորն ասաց. «Ցանկացիր, կստանաս, ո՞վ Շահրազադե»:
Եվ այն ժամանակ Շահրազադեն կանչեց դայակներին ու ներքինիներին և ասաց նրանց. «Այստեղ բերեք իմ երեխաներին»:

Ու նրանք երեխաներին անհապաղ բերեցին մոք մոտ: Եվ նրանք երեք տղա էին, որոնցից մեկն արդեն քայլում էր, մյուսը շորեքթաթ էր անում, իսկ երրորդը ծիծ էր ուտում: Ու երբ երեխաներին բերեցին, Շահրազադեն նրանց առավ դրեց թագավորի առջև և գետինը համրուրելով, ասաց. «Ո՞վ ժամանակի արքա, սրանք քո որդիներն են, ու ես ցանկանում եմ, որ դու հանուն այս երեխաների ազատես ինձ մահացումից: Եթե ինձ սպանես, սրանք առանց մայր կմնան, ու չի գտնվի մի կին, որը սրանց լավ դաստիարակի»:

Եվ այստեղ թագավորը լաց եղավ ու երեխաներին սեղմեց կրծքին և ասաց. «Ո՞վ Շահրազադե, երդվում եմ ալլահի անունով, որ քեզ ներում եմ շնորհել ավելի շուտ, քան այս երեխաները ծնվել են, որովհետև տեսա, որ դու ողջախոհ ես, անբիծ, ազնիվ ու աստվածավախ: Թող ալլահի օրհնությունը լինի քեզ վրա, քո հոր, քո մոր, քո արմատի և քո ճյուղավորության վրա: Թող վկա՛ լինի ալլահը, որ ես քեզ ազատում եմ այն ամենից, ինչը վնաս կարող է բերել քեզ»:

Ու Շահրազադեն համբուրեց թագավորի ձեռքերն ու ոտքերը, և անսահման ուրախացավ ու բացականչեց. «Թող ալլահը կյանքդ երկար անի, և թող մեծացնի՛ նա քո արժանիքն ու վեհությունը»:

Ու թագավորական պալատում ծայր առավ մի մեծ ուրախություն և թռավ տարածվեց քաղաքում: Եվ դա մի գիշեր էր, որ կյանքի գիշերների մեջ չեն հաշվում, ու դրա երեսն ավելի լուսավոր էր, քան ցերեկվա գեմբը: Իսկ առավոտյան թագավորը շատ ուրախ էր ու բարությամբ առեցուն: Եվ նա մարդ ուղարկեց բոլոր զորականներին կանչելու, ու երբ նրանք ներկայացան, Շահրազադեի հորը՝ իր վեզիրին, պարգևատրեց թանկագին ու փառահեղ մի հագուստով և ասաց նրան. «Թող ալլահը քեզ պաշտպան լինի, որ դու ինձ ամուսնացրիր քո ազնիվ ազգկա հետ, և նա պատճառ գարձավ, որ ես զղջամ ուրիշների աղջիկների սպանությունը: Ես տեսա, որ աղջիկդ ազնիվ է, մաքուր, ողջախոհ ու անարատ, և ալլահն ինձ նրանից պարգևել է երեք որդի: Թող, ուրեմն, փառավորվի՛ ալլահը այս մեծ բարօրության համար»:

Եվ ապա նա կառավարման բոլոր վեզիրներին, էմիրներին ու մեծամեծներին պարգևատրեց պատվավոր հագուստներով ու հրաման արձակեց զարդարել քաղաքն ու երեսուն օր զարդարված թողնել, շատիպել բնակիչներին, որ նրանք փող ծախսեն, ընդհակառակը, բոլոր ծախսերը կատարվում էին թագավորի գանձարանի հաշվին:

Ու քաղաքը զարդարեցին սքանչելի զարդարանքներով, որոնց նմանն առաջ չէր եղել: Եվ զարկեցին թմբուկներ ու փչեցին սրինգներ, և նվա-

գեցին բոլոր նվագողները, և թագավորը նրանց նվերներ ու պարգևներ տվեց, և մուրացկաններին ու աղքատներին ողորմութիւն բաժանեց, և թագավորութեան բոլոր հպատակներին ու բնակիչներին ողողեց իր առատաձեռնութեամբ: Եվ այսպես երջանիկ ապրեց նա իր բոլոր պալատականների հետ միասին, ապրեց ուրախութեան ու վայելքի մեջ, ապրեց հրանելի օրեր, մինչև որ նրա մոտ եկավ հաճույքներ ավերողքն ու միութեաններ բաժանողը: Ուրեմն փա՛ռք նբան, ում չի ոչնչացնում ժամանակի անհաստատութեանը և չի վնասում ոչ մի փոփոխութեան, որին մի գործը չի շեղում մյուս գործից, և օրը միակն էր իր հատկութեանների կատարելութեամբ: Թող նորին վեհութեան իմամի վրա լինի մեր աղոթքն ու խաղաղութեան մաղթանքը, որ նրա ստեղծագործութեանների ընտրյալն է, մեր տեր Մուհամմեդի վրա, որը բոլոր մարդկանց տերն ու տիրակալն է, որի միջոցով մեր աղոթքն ենք հղում առ ալլահի մեր գործերի երջանիկ վախճանի համար:

ԻՔՐԻՄԱՅԻ ԵՎ ԽՈՒՉԵՑՄԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Լսել եմ, որ բարեբախտ արքա, որ ուղղահավատների տիրակալ Սուլեյման իբն Աբդ ալ Մալիքի* ժամանակ հուլեյման իբն Բիշր անունով մի մարդ կար Բանու Ասադ ցեղից: Նա աչքի էր ընկնում բացառիկ ազնվությամբ ու շատ ու շատ բարիքներ ուներ և գթասիրտ էր ու բարեհաճ իր բարեկամների նկատմամբ: Եվ ապրում էր այդ վիճակում, մինչև որ ժամանակը նրան ուժասպառ արեց, ու նա սկսեց զգալ իր այն բարեկամների կարիքը, որոնց շնորհներ էր անում և փողով օգնում: Ու նրանք առժամանակ օգնեցին նրան, իսկ հետո դա նրանց ձանձրացրեց: Եվ երբ հուլեյմայի համար պարզ դարձավ, որ նրանց վերաբերմունքն իր նկատմամբ փոխվել է, նա գնաց իր կնոջ մոտ (իսկ կինը նրա հորեղբոր աղջիկն էր) ու նրան ասաց. «Ով իմ հորեղբոր աղջիկ, իմ եղբայրների մեջ ես փոփոխութուն եմ տեսնում, և վճռել եմ տնից դուրս չգալ, մինչև որ մահը գա ինձ մոտ»: Ու նա փակվեց սենյակում և սնվեց այն բանով, ինչ կար իր մոտ, մինչև որ նրա պաշարները սպառվեցին: Ու այդ ժամանակ նա ընկավ զառանցանքի մեջ:

Իսկ Իքրիմա ալ Ֆայադ ալ Ռիբին՝ ալ Ջեզիրայի կառավարիչը, ճանաչում էր նրան: Եվ երբ մի անգամ նա նստած էր իր դահլիճ-ընդունարանում, հանկարծ հիշեց հուլեյմ իբն Բիշերին: Ու Իքրիմա ալ Ֆայադը հարցրեց. «Նա ի՞նչ վիճակում է»:— «Նա հասել է աննկարագրելի վիճակի,— պատասխանեցին նրան,— փակել է դարպասն ու տնից դուրս չի գալիս»: Եվ Իքրիմա ալ Ֆայադն ասաց. «Այդ բանը նրան պատահել է միայն նրա բացառիկ առատաձեռնության պատճառով: Եվ հուլեյմա իբն Բիշրը ինչպե՞ս օգնական ու սնունդ ստանող չի գտել»:— «Նա այդպիսի ոչ մեկին չի գտել»,— ասացին ներկաները: Եվ երբ գիշերը վրա հասավ, Իքրիման գնաց և շորս հազար դինար վերցրեց ու լցրեց մի տոպրակի մեջ, իսկ հետո հրամայեց թամբել իր ձին, և հարազատներից գաղտնի դուրս եկավ ու ճանապարհ ընկավ մի ծառայի հետ, որը փողն էր տանում: Եվ նա գնաց, գնաց, մինչև որ կանգ առավ հուլեյմայի տան դարպասի մոտ, իսկ հետո իր ծառայից վերցրեց փողը և, նրան հրամայելով հեռանալ, մոտեցավ դարպասին ու ինքը բախեց:

Եվ հուլեյման դուրս եկավ, ու Իքրիման տոպրակը տվեց նրան և ասաց. «Սրանով բարելավիր վիճակդ»: Եվ հուլեյման տոպրակը վերցրեց ու տեսավ, որ այն ծանր է, ու, ձեռքից բաց թողնելով, բռնեց

* Սուլեյման իբն Աբդ ալ Մալիք (715—717)— Խալիֆ Օմեյյանների դահատոհմից:

ձիու սանձը և հարցրեց Իբրիմային. «Ո՞վ ես դու, թող իմ հոգին փրկու-
կագին լինի քեզ համար»:— «Հե՛յ դու,— ասաց Իբրիման,— մի այս-
պիսի ժամանակ ես քեզ մոտ եմ եկել ոչ նրա համար, որ ուզում եմ,
որպեսզի ճանաչես ինձ»:— «Ես քեզ բաց չեմ թողնի, մինչև չիմանամ,
թե ով ես դու»: Եվ Իբրիման ասաց. «Ես Ջաբիր Ասարաթ ալ Քիրամն*
եմ»:— «Մի բան էլ ավելացրու»,— ասաց Խուզեյման, ու Իբրիման պա-
տասխանեց. «Ո՛չ»: Եվ գնաց:

Իսկ Խուզեյման մտաւ իր հորեղբոր աղջկա մոտ ու նրան ասաց.
«Ուրախացիր, ալլահը մեզ շուտափույթ օգնութիւն և բարիք է ուղար-
կել: Եթե սրանք դիրհեմներ են, ապա շատ են: Վեր կաց, կանթեղը վա-
ռիր»:— «Դեպի կանթեղ ճանապարհ չկա»,— ասաց նրա կինը: Եվ Խու-
զեյման գիշերն անցկացրեց տոպրակը ձեռքով շոյելով, ու նա դգում
էր դինարների ամբողջունը և չէր հավատում, որ դրանք դինարներ են:

Նրան թողնենք այստեղ, դառնանք լուր տանք Իբրիմայից: Նա վե-
րադարձաւ տուն ու տեսավ, որ կինը փնտրել է իրեն և հարցուփորձ
արել իր մասին: Ու երբ կնոջն ասել են, որ Իբրիման մեկնել է, սկսել
է կասկած տանել նրա նկատմամբ: «Ալ Ջեզիրայի կառավարիչը, երբ
գիշերվա մի մասն անցել է, մենակ, առանց ծառաների ու հարազատ-
ներից գաղտնի գնում է միայն ուրիշ կնոջ կամ հարճի մոտ»,— ասաց
նա Իբրիմային: Եվ սա պատասխանեց. «Ալլահը դիտի, որ ես նրանցից
ոչ մեկի մոտ չեմ գնացել»:— «Պատմիր ինձ, թե ինչու ես մեկնել»,—
ասաց Իբրիմայի կինը: Եվ Իբրիման այսպես խոսեց. «Ես այդպիսի ժա-
մանակ դնացի միայն նրա համար, որ ոչ ոք ինձ չճանաչի»:— «Դու ան-
պայման պիտի պատմես ինձ»,— գոչեց կինը, և Իբրիման հարցրեց.
«Դու գաղտնիքը կպահե՞ս, եթե ես պատմեմ քեզ»:— «Այո,— պատաս-
խանեց նրա կինը: Եվ Իբրիման նրան ճշտութեամբ պատմեց ամբողջ
եզելութիւնն ու այն, ինչ որ պատահել էր իրեն, և հարցրեց. «Արդյոք,
ուզո՞ւմ ես, որ էլի երգվեմ»:— «Ոչ, ոչ,— ասաց նրա կինը,— սիրտս խա-
ղաղվեց ու հավատաց քո ասածին»:

Իսկ ինչ վերաբերում է Խուզեյմային, ապա նա առավոտյան հաշտ-
վեց իր պարտատուների հետ ու բարեկամեց իր վիճակը, իսկ հետո սկը-
սեց պատրաստութիւն տեսնել, ցանկանալով մեկնել Սուլեյման իրն
Աբդ ալ Մալիքի մոտ (իսկ սա այդ օրերին գտնվում էր Պաղեստինում):
Եվ երբ Խուզեյման կանգ առավ խալիֆի պալատի դռան մոտ ու նրա

* Ջաբիր Ասարաթ ալ Քիրամ՝ մտացածին անուն, որ թարգմանաբար նշանակում է «աղնիվ մարգկանց սխալներն ուղղող»:

պալատապաններին ներս մտնելու թուլութունն խնդրեց, նրանցից մեկը մտալ Սուլեյմանի գոտ և ասաց, թե՛ հուղեյման որտեղ է գտնվում, իսկ հուղեյման հայտնի էր իր ազնվութեամբ, ու Սուլեյմանը գիտեր այդ Եվ նա հուղեյմային թույլ տվեց ներս մտնել, ու հուղեյման, ներս մտնելով, ողջունեց նրան, ինչպես խալիֆներին են ողջունում, և Սուլեյման իրն Աբդ ալ Մալիքը նրան ասաց. «Ով հուղեյման, ի՞նչն էր քեզ խանգարում մեզ մոտ գալ», — հարցրեց խալիֆը: «Տկարութունը, ով ուղղահավատների տիրակալ», — պատասխանեց հուղեյման: — «Իսկ ինչո՞վ ես դու հիմա ոտքի կանգնել», — հարցրեց Սուլեյմանը: Եվ հուղեյման պատասխանեց. «Իմացած լինես, ով ուղղահավատների տիրակալ, որ ես իմ տանն էի, երբ արդեն անցել էր գիշերվա մի մասը, և հանկարծ մի մարդ դարպասը բախեց, ու իմ և նրա միջև այսպիսի ու այսպիսի բան եղավ»: Եվ նա սկզբից մինչև վերջ խալիֆին պատմեց ամբողջ եղելութունը, ու Սուլեյմանը հարցրեց. «Իսկ դու այդ մարդուն ճանաչո՞ւմ ես»: — «Ես նրան չեմ ճանաչում, ով ուղղահավատների տիրակալ — պատասխանեց հուղեյման, — և դա այն պատճառով, որ նա զգեստափոխված էր, ու ես նրանից միայն այս խոսքերը լսեցի. «Ես Ջարիր Ասարաթ ալ Քիրամն եմ»: Եվ Սուլեյման իրն Աբդ ալ Մալիքը վառվեց ու փոթոթվեց այդ մարդուն ճանաչելու ցանկությունից և ասաց. «Եթե մենք նրան ճանաչեինք, վարձահատույց կլինեինք նրա ազնվութեան համար»:

Եվ ապա նա դրոշ կապեց հուղեյմա իրն Բիշրի մեջքին* ու նրան ալ Ջեզիրայի կուսակալ նշանակեց Իբրիմա ալ Ֆայադի փոխարեն: Եվ հուղեյման ճանապարհ ընկավ, ուղևորվելով դեպի ալ Ջեզիրա: Եվ երբ նա մոտեցավ ալ Ջեզիրային, Իբրիման դուրս եկավ նրան դիմավորելու ու ալ Ջեզիրայի բնակիչները ևս դուրս եկան նրան ընդառաջ, և կառավարիչները միմյանց ողջունեցին ու զնացին միասին, մինչև որ մտան քաղաք:

Եվ հուղեյմա իջևանեց Էմիրության տանը ու կարգադրեց Իբրիմայից ընդունել ապահովագրության դործը և նրանից հաշիվ պահանջեց: Եվ Իբրիմայի հետ հաշիվները փակեցին ու պարզվեց, որ նա մեծ գումար է պարտք, և հուղեյման պահանջեց, որ Իբրիման տա այդ գումարը: Ու Իբրիման ասաց. «Ես ոչ մի ճար չունեմ»: — «Փողը սալը ան-

* Դրոշ կապեց հուղեյմա իրն Բիշրի մեջքին՝ այսինքն նրան սաղմական (այլ ոչ թե միայն քաղաքացիական) իշխանություն ավեց նրա կառավարմանը հանձնված տիրույթներում:

խուսափելի բան է», — ասաց խուզեյման: Բայց Իբրիման պատասխանեց. «Ես փող չունեմ, արա, ինչ որ ուզում ես»: Եվ խուզեյման կարգադրեց բանտ դնել Իբրիմա ալ Ֆայադին ու նրա մոտ մարդ ուղարկեց, պահանջելով նրանից այն, ինչ որ նա պարտք էր: Եվ Իբրիման այդ մարդուն ուղարկեց խուզեյմային պատասխանելու. «Ես նրանցից չեմ, ովքեր փողը պահում են իրենց պատվի գնով, ինչ որ ուզում ես»:

Եվ խուզեյման հրամայեց նրա ստրերին երկաթե շղթաներ դնել ու նրան բանտ նստեցնել: Եվ Իբրիման մի ամիս կամ ավելի մնաց այնտեղ, այնպես որ դա հալումաշ արեց նրան, ու բանտարկությունը վնասեց նրան: Եվ նրա մասին տեղեկություն հասավ նրա հորեղբոր աղջկան, ու սա ծայրաստիճան վշտացավ և, կանչելով իր ազատ արձակված ստրկուհիներից մեկին, որը մեծ խելքի ու գիտելիքների տեր էր, նրան ասաց. «Հենց հիմա գնա էմիր խուզեյմա իբն Բիշրի տան դարպասի մոտ ու նրան ասա. «Ես մի խորհուրդ ունեմ»: Եվ եթե մեկնումեկը քեզ հարցնի, թե ինչ խորհուրդ է, ասա. «Ես միայն էմիրին կասեմ»: Ու երբ մտնես նրա մոտ, խնդրիր նրան, որ առանձնանալու Իսկ նրա հետ մենակ մնալով, ասա նրան. «Քա այգուխի բա կանե՞ն, որ դու ես արել: Զարբիր Ասարաթ ալ Քիրամի դու վարձահատույց ես եղել, նրան հատուցելով միայն դաժան բանտարկություններ ու շղթաներով տանջահարություններ»:

Եվ կինն արեց այն, ինչ հրամայված էր նրան, ու երբ խուզեյման լսեց նրա խոսքերը ամբողջ ձայնով բացականչեց. «Վա՛յ ինձ: Իսկպե՞ս նա է»: «Այո», — պատասխանեց կինը: Եվ խուզեյման կարգադրեց իսկույնեթ քերել իր ձին, ու երբ ձին թամբեցին, կանչեց քաղաքի բոլոր մեծամեծներին և, նրանց հաւաքելով իր մոտ, նրանց հետ դուրս եկավ ու գնաց և մոտեցավ բանտի դարպասին: Եվ դարպասը բացեցին, ու խուզեյման և նրանք, ովքեր նրա հետ էին, մտան բանտ ու տեսան, որ Իբրիման նստած է, և նրա տեսքը փոխված է, ու նա ծեծից և ցավից հալումաշ է եղել: Եվ երբ Իբրիման տեսավ խուզեյմանին, ամոթ զգաց ու գլուխը կախեց, իսկ խուզեյման մոտեցավ և գրկեց նրա գլուխը ու համբուրեց, և այդ ժամանակ Իբրիման գլուխը բարձրացրեց ու հարցրեց. «Ի՞նչը քեզ մղեց այդ բանին»: Եվ խուզեյման պատասխանեց. «Քո ազնիվ արարմունքն ու իմ վատ հատուցումը»: — «Թող ալլահը ների ինձ և քեզ», — ասաց Իբրիման: խուզեյման բանտապաններին հրամայեց Իբրիմայի շղթաներն արձակել ու իր ստրերը շղթայել: «Դու ի՞նչ ես ուզում անել», — հարցրեց Իբրիման, և խուզեյման ասաց. «Ուզում եմ, որ ինձ էլ բաժին հասնի այն, ինչ քեզ է բաժին հասել»: —

«Ի սեր ալահի աղաչում եմքեզ, այդպիսի բան մի՛ արա», — բացականչեց Իբրիման: Եվ ապա նրանք միասին դուրս եկան ու հասան Խուզեյմայի տան մոտ և, Իբրիման նրան հրաժեշտ տվեց և ուզում էր հեռանալ, սակայն Խուզեյման նրան հետ պահեց այդ մտքից: «Դու ի՞նչ ես ուզում», — հարցրեց Իբրիման: «Ուզում եմ փոխել քո տեսքը, ես քո կնոջից ավելի շատ եմ ամաչում, քան քեզանից», — ասաց Խուզեյման: Եվ նա կարգադրեց ազատել բաղնիքը, ու երբ բաղնիքն ազատեցին, Խուզեյման և Իբրիման միասին մտան այնտեղ, և ինքը՝ Խուզեյման, սկսեց սպասավորել Իբրիմային: Ու հետո նրանք դուրս եկան, և Խուզեյման փառահեղ հագուստ նվիրեց Իբրիմային ու նրան ձի նստեցրեց և կարգադրեց փողով լի մի տոպրակ բարձել ձիուն: Ու նա Իբրիմայի հետ զնաց նրա տուն և կամեցավ նրա կնոջից ներողութուն խնդրել, ու նրա կնոջից ներողութուն խնդրեց, իսկ հետո Իբրիմային խնդրեց իր հետ զնալ Սուլեյման իբն Աբդ ալ Մալիքի մոտ, որն այն օրերին դանվում էր առ Ռամլայում*:

Եվ Իբրիման համաձայնեց, ու նրանք միասին զնացին և հասան առ Ռամլա, ու պալատականը մտավ Սուլեյման իբն Աբդ ալ Մալիքի մոտ և նրան տեղեկացրեց Խուզեյմա իբն Բիշրի ժամանման մասին: Եվ այդ բանը վախեցրեց խալիֆին, ու նա գոչեց. «Մի՞թե ալ Զեզիրայի կառավարիչը կարող է մեզ մոտ գալ առանց մեր հրամանի: Այդպիսի բան միայն ու միայն բացառիկ դեպքում է լինում»: Եվ նա Խուզեյմային թույլ տվեց ներս մտնել, ու երբ նա մտավ, խալիֆը նրան ասաց, նախքան նրան ողջունելը. «Ի՞նչ է մնացել քո հետևում, ով Խուզեյմա»: — «Բարիք, ով ուղղահավատների տիրակալ», — պատասխանեց Խուզեյման: «Իսկ քեզ ի՞նչն է բերել այստեղ», — հարցրեց խալիֆը: Եվ Խուզեյման պատասխանեց. «Ծն բերել եմ Զաբիր Ասարաթ ալ Քիրամին և ուզում եմ քեզ ուրախացնել, նրան ներկայացնելով քեզ, քանզի ես տեսա, որ դու այրվում ես նրան ճանաչելու ցանկությունից ու ձգտում ես տեսնել նրան», — «Իսկ դա ո՞վ է», — հարցրեց խալիֆը, և Խուզեյման պատասխանեց. «Իբրիմա ալ Ֆայադը»: Ու Սուլեյմանը նրան թույլ տվեց մոտենալ և Իբրիման մոտեցավ ու ողջունեց նրան, ինչպես խալիֆին են ողջունում: Եվ Սուլեյմանը նրան ասաց. «Բարով եկար»: Ու նրան մոտեցրեց իր դահին և ասաց. «Ով Իբրիմա, Խուզեյմային արած քո լավութունը քեզ համար միայն դժբախտություն է եղել: Թղթի վրա դրիր քո բոլոր հոգսերի ու այն մասին, թե ինչի կարիք ունես», — հետո ասաց

* Առ Ռամլա՝ քաղաք Պաղեստինում:

Սուլեյմանը: Եվ երբ Իբրիման արեց այդ, խալիֆը կարգադրեց անմիջապես կատարել Իբրիմայի ցանկությունը և հրամայեց նրան տալ տասը հազար դինար, բացի այն կարիքները բավարարելուց, որոնց մասին Իբրիման դրել էր, ու քսան սնդուկ հագուստ՝ ի լրումն նրա դրածի: Իսկ հետո կարգադրեց նիզակ բերել, և Իբրիմայի մեջքին դրոշ կապելով, նրան նշանակեց ալ Զեզիրայի, Հայաստանի ու Ադրբեջանի կուսակալ:

«Խուզեյմայի գործը քո ձեռքն է ընկել,— ասաց խալիֆը Իբրիմային,— եթե ուզում ես թողնել նրան, թող իսկ եթե ուզում ես հեռացնել՝ հեռացրու»:— «Ոչ, ես նրան կվերադարձնեմ իր տեղը, ով ուղղահավատների տիրակալ,— ասաց Իբրիման: Եվ ապա Իբրիման ու խուզեյման միասին հեռացան խալիֆի մոտից, և նրանք Սուլեյման իրն Աբդ ալ Մալիքի կուսակալներն էին նրա խալիֆության ամբողջ ժամանակաշրջանում:

ՅՈՒՆՈՒՍԻ ԵՎ ԱՆՄԱՆՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում են նաև, որ Հիշամ իրն Աբդ ալ Մալիքի* խալիֆության ժամանակներում գրադիր Յունուս անունով մի մարդ կար, ու նա լավ հայտնի էր բոլորին: Եվ նա մեկնեց Սիրիա՝ ճամփորդության, ու նրա հետ ծայրաստիճան գեղեցիկ և աննման մի ստրկուհի կար, ու այդ ստրկուհու վրա կար այն ամենը, ինչի կարիքը որ նա ուներ, և նրա գինը կազմում էր հարյուր հազար դիրհեմ: Եվ երբ Յունուսը մոտեցավ Գամասկոսին, քարավանը հանգստանալու համար կանգ առավ՝ ջրով լի լճակի մոտ, Յունուսը ձիուց իջավ դրա մոտակայքում և, ուտելով իր մոտ եղած սնունդը, խուրջինից հանեց սկճորը, սրի մեջ արմավի գինի էր: Ու հանկարծ սիրունատես և արժանապատվությամբ լի մի պատանի մոտեցավ նրան, որը աշխետ ձի էր նստել, ու նրա հետ երկու ներքինի կաշին: Եվ նա ողջունեց Յունուսին ու նրան հարցրեց. «Արդյոք, հյուր կընդունե՞ս»: Եվ երբ Յունուսը պատասխանեց. «Այո»,— պատանին նրա մոտ իջավ ձիուց ու ասաց. «Մեզ հագեցրու քո խմիչքով»: Եվ Յունուսը խմիչք տվեց հյուրին, ու սա ասաց. «Եթե դու ցանկանայիր մի երգ երգել մեզ համար»: Եվ Յունուսը երգեց, արտասանելով այսպիսի մի բեյթ:

Համայն աշխարհում ոչ ոք նրա շափ գեղեցկութուններ, օ՛, չի հավարել,
Քաղցր է ինձ համար, նրան սիրելով, գիշերը նույնիսկ տը էլ չփակել:

* Ադրբեջան— Ատրպատական (հուն. Ատրոպատենի, պահլ. Աթուրպատական, պարսկ. Ադրբեջան, Ադրբադաբան, արաբ. Ադրաբիջան, Ազրիբեջան նաև Ազարբայջան):

* Հիշամ իրն Աբդ ալ Մալիք (724—743)— խալիֆ՝ օմեյյանների գահատոհմից:

Եվ հյուրն անշափ հիացավ, և Յունուսը մի քանի անգամ նրա համար գինի լցրեց, մինչև որ հյուրը հարբեց ու թուլացավ: Եվ այդժամ պատանին ասաց. «Ստրկուհուդ ասա, թող երգի»:

Եվ ստրկուհին երգեց, արտասանելով այսպիսի մի բնօրհան.

Ահա այն փերին, որ գեղեցկութեամբ շփոթեցնում է իրեն նայողին,
նա ոչ ուտենու ընծյուղ է ճկուն, ոչ արեգակ է և ոչ էլ լուսին:

Եվ հյուրն ընկավ խոր զմայլանքի մեջ, ու Յունուսը մի քանի անգամ նրա համար գինի լցրեց, և պատանին մնաց նրա մոտ, մինչև որ նրանք իրիկնային աղոթքն արեցին, իսկ հետո նա հարցրեց Յունուսին. «Ի՞նչն է քեզ բերել այս քաղաքը»:— «Այն, ինչով պարտքս կվճարեմ ու վիճակս կբարելավեմ»,— պատասխանեց Յունուսը: «Ծրեսուն հազար դիրհեմով կծախե՞ս այս ստրկուհուն, ես կառնեմ»,— հարցրեց հյուրը: Եվ Յունուսը պատասխանեց. «Ինչքան եմ զգում ալլահի ողորմածութեան կարիքն ու նրա կողմից ավելացում սպասում»:— «Քառասուն հազար քեզ կգոհացնի՞»,— հարցրեց հյուրը: «Պա կծածկի իմ պարտքը, բայց ես դատարկաձեռն կմնամ»,— պատասխանեց Յունուսը: Եվ հյուրն ասաց. «Ես նրան վերցնում եմ հիսուն հազար դիրհեմով, և, դրանից բացի, քեզ հագուստ ու ճանապարհածախս կտամ և ես, քանի դեռ դու կմնաս այստեղ, իմ հանդամանքները կկիսեմ քեզ հետ»:— «Ես աղջկան ծախեցի քեզ»,— ասաց Յունուսը: Ու նրա հյուրը հարցրեց. «Կհավատա՞ս ինձ, որ փողը վաղը կբերեմ, և այն ժամանակ նրան կտանեմ ինձ հետ, թե՞ նա քեզ մոտ մնա, մինչև վաղը ես այդ փողը բերեմ տամ քեզ»:

Եվ հարբածությունն ու ամոթը, ինչպես նաև պատանու հանդեպ վախը Յունուսին դրդեցին ասելու. «Այո, ես վստահում եմ քեզ, վերցրու նրան, և թող ալլահն օրհնի քեզ»: Ու պատանին իր ծառաներից մեկին ասաց. «Աղջկան նստեցրու քո ձիուն, նստիր նրա հետևը և գնա նրա հետ»:

Եվ ապա նա հեծավ իր ձին, Յունուսին հրաժեշտ տվեց ու գնաց, և այն բանից առժամանակ անց, երբ պատանին անհետացավ, Յունուսն ինքն իրեն միտք արեց ու հասկացավ, որ սխալվել է, ծախելով ստրկուհուն: «Այս ի՞նչ արեցի,— ասաց նա ինքն իրեն,— ինչու ստրկուհուս տվեցի մի մարդու, որը ծանոթ չէ ու ես չգիտեմ, թե ով է նա: Բայց ենթադրենք, թե ես ճանաչում եմ նրան, ինչպե՞ս, հապա, գտնեմ նրան»:

Եվ նա մտազբաղ նստեց, մինչև որ առավոտյան աղոթքն արեց, ու նրա ընկերները մտան Պամասկոս, իսկ նա տարակուսանքի մեջ նրա-

տած մնաց, շիմանալով, թե ուր գնա: Եվ նա այնքան նստեց, մինչև որ արևը դադեց նրան, և տեղում նստած մնալը նրա համար տհաճ բան դարձավ, ու նա վճռեց մտնել Գամասկոս, սակայն հետո ինքն իրեն ասաց. «Եթե քաղաք մտնեմ, ապա կարող է այնպես պատահել, որ փողը բերողը գա և ինձ շքտնի, ու կստացվի, որ երկրորդ փորձանքն եմ բերում գլխիս»:

Եվ նա նստեց պատի ստվերում, ու երբ օրը թեքվեց դեպի մայրամուտ, հանկարծ ձիով նրան մոտեցավ ներքիններից մեկը, որը պատանու հետ էր եղել: Եվ նրան տեսնելով, Յունուսը համակվեց մեծ ուրախությամբ՝ ու մտքում ասաց. «Ես չեմ հիշում, որ ավելի շատ ուրախացած լինեմ, քան հիմա եմ ուրախանում, տեսնելով այս ներքինուն»:

Եվ ներքինին մոտեցավ նրան ու ասաց. Ով տեր, մենք քեզ սպասեցինք սպասել»:¹ Իրեն համալած հուզմունքից Յունուսը նրան ոչինչ չառաց: «Դու ճանաչո՞ւմ ես այն մարդուն, որը վերցրեց ստրկուհուն»,— հետո հարցրեց ներքինին: «Ոչ»,— պատասխանեց Յունուսը, և ներքինին ասաց. «Նա ալ վալիդ իրն Սահլն* էր, թագածառանգը»:

«Եվ այստեղ ես լռեցի,— պատմել է Յունուսը,— ու ներքինին ինձ ասաց. «Վեր կաց, ձի նստիր»: Իսկ ներքինու հետ ձի կար, ու նա Յունուսին ձի նստեցրեց, և նրանք գնացին, մինչև որ հասան մի տան մոտ: Աւ նրանք մտան այնտեղ, և երբ այն ստրկուհին տեսավ Յունուսին, մտավագեց նրան ու ողջունեց, և Յունուսը հարցրեց. «Ինչպե՞ս են քո գործերը նրա հետ, սվ որ քեզ առել է»:²— «Նա ինձ տեղավորեց այս սենյակում ու հրամայեց տալ ինձ այն ամենը, ինչ հարկավոր է»,— ասաց աղջիկը: Յունուսը մի քիչ նստեց նրա հետ, և հանկարծ տանտիրոջ ներքինին եկավ նրանց մոտ ու Յունուսին ասաց. «Վեր կաց»: Եվ Յունուսը վեր կացավ, ու ներքինին նրան տարավ իր տիրոջ մոտ, և պարզվեց, որ նա երեկվա հյուրն է:

«Եվ ես տեսա, որ նա նստած է իր օթոցին,— պատմել է հետո Յունուսը,— ու նա ինձ հարցրեց. «Դու ո՞վ ես»:³— «Դրադիր Յունուսը»,— պատասխանեցի ես: «Բարե՞վ ես եկել,— գոչեց պատանին,— ալլահը վկա, ես շատ էի ուզում տեսնել քեզ: Ես քո մասին պատմությունները լսել եմ: Դե, այս դիշեր ո՞նց ես քնել»:⁴— «Լավ, թող մեծ ալլահը բարձրացնի քո աստիճանը»,— պատասխանեց Յունուսը, և ալ վալիդը ասաց. «Դուցե դու սպասուհի ես այն բանի համար, ինչ երեկ է եղել, ու

* Ալ վալիդ իրն Սահլ— խոսքը, երևի, ապագա խալիֆ ալ վալիդ II-ի մասին է, որը գահակալել է 743—744 թվականներին:

մտքումդ ասել ես. «Ծս իմ ստրկուհուն տվեցի անծանոթ մարդու, և չգիտեմ, թե ինչ է նրա անունն ու որ երկրից է նա»:— «Ով էմիր, ալլա՛հն է վկա, ես չեմ ասուսել, որ ստրկուհուն ծախել եմ քեզ,— բացականչեց Յունուսը:— Եթե ես նրան նույնիսկ նվիրած լինեի քեզ, նա ամենաշնչին բանը կլիներ այն ամենից, ինչ որ հարկ է նվիրել քեզ: Այդ աղջիկը սազական չէ քո աստիճանին»:

«Ալլահը վկա,— պատասխանեց ալ Վալիդը,— ես զղջում էի, որ աղջկան վերցրել եմ քեզանից, ու մտքումս ասում էի. «Նա օտարական է, որն ինձ չի ճանաչում, ես վրա տվեցի ու իմ շտապողականությամբ շփոթեցրի նրան, վերցնելով աղջկան»: Արդյոք, հիշո՞ւմ ես, թե մեր միջև ինչ պայմանավորվածություն եղավ»:

«Եվ ես ասացի. «Այո»,— պատմել է հետո Յունուսը,— և ալ Վալիդը հարցրեց ինձ. «Հիսուն հազար դինարով կծախե՞ս այդ աղջկան, ես կառնեմ»:— «Այո»,— պատասխանեց Յունուսը: Եվ ալ Վալիդը բղավեց. «Հե՛յ, ծառա, բեր փողը»: Ու երբ ծառան փողը դրեց նրա առջև, իբն Սահլն ասաց. «Հե՛յ, ծառա հազար հինգ հարյուր դինար էլ բեր»: Եվ ծառան փողը բերեց, ու ալ Վալիդն ասաց. «Ահավասիկ քո ստրկուհու գինը, իսկ այս հազար դինարը տալիս եմ մեր մասին քո լավ կարծիքի համար, և հինգ հարյուր դինարն էլ քեզ ճանապարհածախս ու հարազատներիդ նվերներ առնելու համար: Դու դո՞հ ես»:— «Գոհ եմ»,— պատասխանեցի ես: Եվ ես համբուրեցի նրա ձեռքերն ու ասացի. «Ալլահը վկա դու լիացրիր իմ աչքը, ձեռքն ու սիրտը»,— «Ալլահը վկա,— հետո ասաց ալ Վալիդը,— ես աղջկա հետ չեմ առանձնացել և չեմ կըշտացել նրա երգելուց: Նրան ինձ մոտ բերեք»:

Եվ ստրկուհին եկավ, ու ալ Վալիդը նրան հրամայեց նստել, և երբ աղջիկը նստեց, նրան ասաց. «Երգի՛ր»:

Եվ ստրկուհին այսպիսի երգ երգեց.

Ով դու, որ բոլոր սքանչելիքները սեփականել ես,
Ով դու քաղցրանուշ՝ գիմադեերով ու նայվածքով հեղ,

Գեղեցկությունը հատկությունն է լոկ արաբ այլերի,
Սակայն նրանց մեջ մեկը իսկ չկա, որ քեզ նմանվի:

Սիրահարվածիս նկամամբ եղիր պիտակս, բարի.
Եվ խոստացիր, որ գեթ ուրվականդ կգա ինձ այցի:

Թույլատրելի են ամոթ, ստորացում, թե քեզ հետ լինեմ,
Թե ինձ հետ լինես, թող որ գիշերը ես աչք չփակեմ:

Ուզում եմ, որ դու իմ կյանքում լինես հավիտյան ու հար,
Դու և՛ իմ հոգուց, և՛ բոլոր դանձերից թանկ ես ինձ համար:

Եվ ալ Վալիդն անշափ հիացավ ու ինձ շնորհակալութիւնն հայտնեց, որ աղջկան լավ եմ կրթել և ուսուցանել, ու հետո ասաց. «Հե՛յ, ծառա, թամբուսարքով մի ձի բեր, որ նա նստի և գնա, ու մի ջորի, որ նրա ունեցած-չունեցածը տանի: Ով Յունուս,— հետո ասաց նա,— հրք իմանաս, որ գործն անցել է իմ ձեռքը, արի ինձ մոտ, և, ալլահը վկա, ես քո ձեռքերը բարիքով կլցնեմ, կբարձրացնեմ քո աստիճանն ու մինչև կյանքիդ վերջը կհարստացնեմ քեզ»:

«Եվ ես փողը վերցրի ու մեկնեցի,— պատմել է Յունուսը,— և երբ խալիֆայութեան մեջ իշխանութիւնն անցավ ալ Վալիդի ձեռքը, ես գնացի նրա մոտ, ու, ալլահը վկա, նա կատարեց այն, ինչ խոստացել էր, և ինձ էլ ավելի մեծ հարգանք ցույց տվեց, ու ես դանվում էի ամենաբերկրալի վիճակում, ամենաբարձր դիրքը գրավելով նրա մոտ, և ընդլայնվեցին իմ հանդամանքները, և բազմապատկվեց իմ փողը, ու ես այնքան կալվածքներ ունեցա, որ դրանք մինչև մահ հերիք են ինձ, և իձանից հետո հերիք են իմ ժառանգներին: Եվ ես ալ Ջալիդի մոտ մնացի, մինչև որ նրան սպանեցին, թող մեծագոր ալլահը ողորմի նրան»:

ԱԼ ԱՍՄԱԻԻ ԵՎ ԵՐԵՔ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում են նաև, որ ուղղահավատների տիրակալ Հարուն ալ Ռաշիդը մի անգամ գիշերը սաստիկ տանջվու մ էր անքնութիւնից: Եվ նա անկողնուց վեր կացավ ու սկսեց սենյակից սենյակ անցնել, բայց չէր դադարում հոգու խորքում մեծապես տաղնապելուց, իսկ առավոտյան ասաց. «Ալ Ասմարիին* բերեք ինձ մոտ»: Եվ ներքինին գնաց դռնապանների մոտ ու նրանց ասաց. «Ուղղահավատների տիրակալը ձեզ ասում է. «Մարդ ուղարկեք ալ Ասմաիի հետևից»: Եվ երբ ալ Ասմաին ներկայացավ ու այդ մասին տեղեկացրին ուղղահավատների տիրակալին, սա կարգադրեց ներս բերել նրան, նստեցրեց իր կողքին ու ասաց. «Բարով եկար,— իսկ հետո այսպես խոսեց.— Ով Ասմաի, ուզում եմ, որ ինձ պատմես կանանց ու նրանց հորինած բեյթերի մասին քո լսած պատմութիւններից ամենալավը»:— «Լսում եմ և հնազանդվում,— պատասխանեց ալ Ասմաին:— Ծս շատ բան եմ լսել, բայց ոչ մի ոտանավոր ինձ այնքան դուր չի եկել, որքան երեք աղջիկների արտասանած երեք բեյթերը»: «Պատմիր ինձ նրանց պատմութիւնը»,— ասաց խա-

* Ալ Ասմաի (740—825 / կամ 831)— արաբ անվանի բանասեր և հին արաբական տվանդութիւնների գիտակ:

լիֆր: Եվ ալ Ասմաին սկսեց պատմել այդ պատմութիւնն ու ասաց. «Իմացած եղիր, ով ուղղահասակների տիրակալ, որ ես մի ժամանակ ապրում էի Քասրայում, և մի անգամ շոգը նեղեց ինձ ու ես սկսեցի մի տեղ փնտրել, որ հանգստանամ, սակայն չգտա: Եվ ես աջ ու ահլակ էի նայում, և հանկարծ երկու տների արանքում ծածկած, ավլած ու ջրողած անցարան տեսա, և այգ անցարանում փայտե նստարան էր դրված, իսկ նստարանի վերևում բաց պատուհան կար: Ու ես նստեցի նստարանին և ուզում էի մի քիչ թեք ընկնել, ու լսեցի քնքուշ խոսքերը մի ազգկա, որն ասում էր. «Ովքույրիկներ, մենք այսօր հավաքվել ենք, որ զվարճանանք: Եկեք երեք հարյուր դինար դնենք և թող մեզանից յուրաքանչյուրը ոռանավորից մի բեյթ արտասանի, և ով արտասանի ամենաքնքուշ ու գեղեցիկ բեյթը, այս երեք հարյուր դինարը նրան: Եվ աղջիկները պատասխանեցին. «Միրով ու հաճույքով»:

Եվ սկսեց ավադը, ու նրա բեյթն այսպիսին էր.

Կզարմանայի անսահմանորեն, եթե հրազում նա ինձ այցելեր,
Բայց էլ ավելի կզարմանայի, եթե արթմնի նույնը պատահեր:

Եվ միջնեկը մի բեյթ արտասանեց, ու նրա բեյթն այսպիսին էր.

Երազում նրա ուրվականը լոկ եկավ ինձ այցի, և ասացի ես, «Այնարձակութուն,
անկաշկանդութուն, հոգեկան հանգիստ ու ապաստան քեզ»:

Ու կրտսերը մի բեյթ արտասանեց, և նրա բեյթն այսպիսին էր.

Նրան իմ հոգով ու ընտանիքով կիրկագնեմ, ով իմ կողքին է,
Ինձ հետ միասին միևնույն մահճում, և որի շունչը մուշկից էլ լավ է:

«Եթե այդ կերպարն օժտված է գեղեցկութեամբ, ապա գործն ավարտված է բոլոր հանգամանքներում», — ասացի մտքումս և, ոտքի կանգնելով, ուզում էի հեռանալ: Ու հանկարծ դուռը բացվեց և մի աղջիկ դուրս եկավ ու ասաց. «Նստիր, ո՞վ շեյխ»: Եվ ես երկրորդ անգամ բարձրացա նստարանի վրա ու ծալապատիկ նստեցի: Եվ աղջիկն ինձ երկտողի բովանդակութունն այսպիսին էր. «Մենք տեղեկացնում ենք ուղիղ «ալիֆներով», դողավոր «խա»-երով և կլոր «հա»-երով*, իսկ մի թուղթ տվեց, ու ես թղթի վրա անշափ գեղեցիկ ձեռագիր տեսա շեյխին, թող ալլահը երկարացնի նրա կյանքը, որ մենք երեք աղջիկ ենք, երեք քույր, ու հավաքվել ենք զվարճանալու և երեք հարյուր դինար ենք դրել ու պայմանավորվել, որ մեզանից ով հորինի ամենաքնքուշ և գեղեցիկ բեյթը, այդ երեք հարյուր դինարը կհասնի նրան: Մենք

* «Ալիֆ», «խա», «հա» — արաբական այբուբենի տառեր:

այդ գործում քեզ դատավոր ենք կարգել, ուրեմն մեր դատը կտրիր, ինչպես որ գիտես, և վերջ»։— «Թանաքաման ու թուղթ տուր ինձ»,— ասացի ես։ Եվ աղջիկը կարճ ժամանակով անհետացավ ու ինձ համար բերեց արծաթազօծ թանաքաման և եղեգնյա ոսկեզօծ գրիչներ, ու ես այսպիսի ոտանավոր գրեցի.

Ես աղջիկների մատին կպատմեմ, թե ինչպես էին նրանք զրուցում,
Ու այդ զրույցը հմուտ, բազմափորձ այրերին եմ ես վայել համարում։

Երեք հոգի են, և առավոտյան լույսի պես պարզ ու չքնաղ դեմք ունեն
Ու սիրահարի տառապած սրտեր, որ հուսաբեկին կյանք կպարզեհեն։

Ու դիտավորյալ շեն քնել նրանք (իսկ մարդիկ վաղուց քուն էին մտել),
Որ զվարճանան, երբ իրենց ոչ ոք՝ ծանոթ, անծանոթ, չի կարող տեսնել։

Պատմեցին նրանք, ինչ որ կար-չկար իրենց խանդավառ հոգու խորքերում,
Ու այդ բոլորը հենց զվարճութուն շարադրեցին կուռ, գողտրիկ բեյթերում։

Եվ առաջինը մեծը սկսեց, որ համարձակ էր, հպարտ, պարծենկոտ,
Բացելով հրաշք ատամնաշարը, նա արտասանեց բեյթն այս կրակոտ.

«Կզարմանալի անսահմանորեն, եթե երազում նա ինձ այցելեր,
Բայց է՛լ ավելի կզարմանալի, եթե արթմնի նույնը պատահեր»։

Երբ նա վերջացրեց, քաղցր ժպիտով զարդարելով իր խոսքը հոգեթով,
Խոսեց միջնեկը, և սաստիկ հուղված նա արտասանեց հոգոց հանելով.

«Երազում նրա ուրվականը լուկ եկավ ինձ այցի, ու ասացի ես.
«Լայնարձակություն, անկաշկանդություն, հոգեկան հանդիստ և ապաստան քեզ»։

Բայց բոլորից լավ կրտսերը ասաց, պատասխանելով նրանց բեյթերին
Խոսքերով ընտիր ու քաղցրահնչյուն, որ ցանկալի են ամեն լսողին.

«Նրան իմ հոգով և ընտանիքով կփրկադենեմ, ով իմ կողքին է,
Ինձ հետ միասին միևնույն մահճում, և որի շունչը մաշկից էլ լավ է։

Երբ հորկ եղավ, որ դատավոր լինեմ, կշռադատեցի խոսքերը նրանց,
Եվ դա ինձ համար ոչ խաղ ու պար էր, ոչ էլ խելոքի մի պարապ ժամանց։

Ու ոտանավոր հորինելու մեջ առաջնությունը փոքրին տվեցի,
Համարելով, որ նրա խոսքերը ճշմարտությունը մոտ են ավելի։

Եվ հետո թուղթը տվեցի աղջկան,— ասաց ալ Ասմաին,— ու նա վերցրեց և վերադարձավ տուն, և ես լսեցի, որ այնտեղ սկսեցին պար գալ ու ծափ զարկել, մեռածները հարություն առան, ու այդ ժամանակ ինքս ինձ ասացի. «Այլևս չպետք է այստեղ մնամ»։ Ու, իջնելով նստարանից, ուզում էի հեռանալ, և հանկարծ աղջիկը րդավեց. «Նստի՛ր, ով Ասմաի»։— Ու ես հարցրի. «Իսկ քեզ ո՞վ տեղեկացրեց, որ ես Ասմաին եմ»։ Եվ նա պատասխանեց. «Ով ծերունի, եթե քո անունը մեզ հայտնի չէ, ապա քո ոտանավորները հայտնի են մեզ»։

Եվ ես նստեցի, ու մեկ էլ դարպասը բացվեց, և գուրս եկավ առաջին աղջիկը ու նրա ձեռքերին մի աման միրգ կար և մի աման քաղցրավենիք: Ու ես քաղցրավենիք և միրգ կերա և աղջկան շնորհակալություն հայտնեցի նրա լավության համար և ուզում էի հեռանալ, ու հանկարծ աղջիկներից մեկը բղավեց. «Նստի՛ր, ով Ասմաի»: Եվ աչքերս վեր բարձրացնելով, դեղին թևքի մեջ մի ձեռք տեսա ու կարծեցի, թե դա լուսինն է, որ փայլում է ամպերի տակից: Եվ աղջիկը մի քսակ գցեց ինձ, որի մեջ երեքհարյուր դինար կար, ու ասաց. «Սա իմ փողն է, և սա ինձանից քեզ նվեր՝ քո վճռի համար»:

«Իսկ դու ինչո՞ւ դատ կտրեցիր հօգուտ կրտսերի», — հարցրեց ուղղահավատների տիրակալը: Եվ ալ Ասմաին ասաց. «Ով ուղղահավատների տիրակալ, թող ալլահը երկարացնի քո կյանքը, ավագն ասաց. «Ես կզարմանամ, եթե երազում նա մտնի իմ մահիձը», — և սա անորոշ բան է ու կապված է մի պայմանի հետ՝ կարող է այդպես լինել, կարող է և այդպես չլինել: Ինչ վերաբերում է միջնեկին, ապա երազում նրա մոտով անցել է երևակայական ուրվականը, և աղջիկը ողջունել է նրան: Իսկ եթե կրտսերից հարցնես, ապա նա իր բեյթով ասաց, որ պառկել է սիրածի հետ, ինչպես իրականում են պառկում, ու ներծծել է նրա շունչը, որը մուշկից դուրեկան է, և իր հոգով ու ընտանիքով կփրկագնի նրան: Իսկ հոգով փրկագնում են միայն նրան, ով աշխարհում թանկ է, ամեն ինչից»: — «Ինչ աչքի ընկար, ո՞վ Ասմաի, — գոչեց խալիֆը և նույնպես նրան երեք հարյուր դինար տվեց՝ նրա պատմության համար:

ՋԱՄԻԼԻ ԵՎ ՆՐԱ ՀՈՐԵՂՔՈՐ ՏՂԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԸ

Պատմում են նաև, որ ներքինի Մասրուրն ասել է. «Մի անգամ գիշերը ուղղահավատների տիրակալ Հարուն ալ Ռաշիդը սաստիկ տառաւյում էր անքնությունից: Եվ նա հարցրեց ինձ. «Ով Մասրուր, բանաստեղծներից ո՞վ կա դարպասի մոտ»: Ու ես գուրս եկա միջանցք և տեսա Ջամիլ իրն Մամար ալ Ուզրիին* ու նրան ասացի. «Պատասխանիր ուղղահավատների տիրակալին»: Եվ Ջամիլն ասաց. «Լսո՞ւմ եմ ու հնազանդվում»: Եվ ես ներս մտա, ու նա էլ ինձ հետ ներս մտավ և կանգնեց Հարուն ալ Ռաշիդի ձեռքերի արանքում ու ողջունեց նրան, ինչպես որ խալիֆներին են ողջունում: Եվ ալ Ռաշիդը ողջույնով պա-

* Ջամիլ իրն Մամար ալ Ուզրի (մեռ. մոտ 700 թ.) — օմեյյանների դարաշրջանի անվանի բանաստեղծ ուզրա ցեղից, հորինել է սիրային թախտոտ բանաստեղծություններ: Նրան Հարուն ալ Ռաշիդի գրուցակից ներկայացնելը ժամանակավորություն է:

տասխանեց նրա ողջույնին ու պատվիրեց նստել, իսկ հետո ասաց. «Ով Ջամիլ, կարո՞ղ ես մի գարմանալի պատմութիւն պատմել»:— «Այո՛, սվ ուղղահավատների տիրակալ,— պատասխանեց Ջամիլը,— որն է առավել քո սրտովը՝ այն, ինչ տեսե՞լ եմ ու աչքս է կտրել, թե այն, ինչ լսել եմ ու ականջել»:— «Ինձ պատմիր այն, ինչ որ տեսել ես ու աչքդ է կտրել»,— ասաց խալիֆը: Եվ Ջամիլն այսպես խոսեց. «Լավ, ով ուղղահավատների տիրակալ: Քո ամբողջ էութեամբ պատրաստ եղիր և համակ ուշադրութեամբ ականջ դիր իմ պատմածին»:

Եվ ալ Ռաշիդը վերցրեց ոսկե թելերով ասեղնագործած ջալամի փետուրներով լցված կարմիր դիպակե բարձը և դրեց իր ազդրերի տակ, իսկ հետո արմունկներով հենվեց բարձին ու ասաց. «Դե, սկսիր քո պատմութիւնը, Ջամիլ»:

«Իմացիր, ով ուղղահավատների տիրակալ,— ասաց Ջամիլը,— որ ես հմայվել եմ մի աղջկանով ու սիրում էի նրան և հաճախ այցելում, քանզի նա իմ ցանկութիւնների առարկան էր, այն, ինչ որ խնդրել էի կյանքից: Իսկ հետո արոտավայրերի աղքատիկութեան պատճառով նրա հարազատները նրա հետ մեկնեցին, ու ես որոշ ժամանակ, անցկացրի, շտեսնելով նրան, բայց հետո կարոտն ալեկոծեց ինձ և մղեց դեպի այդ աղջիկը, ու հոգիս խոսեց այն մասին, որ գնամ նրա մոտ: Եվ երբ գիշերներին մի գիշեր աղջկա կարոտն սկսեց ցնցել ինձ, ես վեր կացա ու թամբելով ուղտը, կապեցի շալմաս, հագա ցնցոտիներս, սուրբ կապեցի մեջքիս և վերցրի նիզակս: Իսկ հետո ուղտ նստեցի ու ճամփա ընկա, գնալով աղջկա մոտ, և գնացի արագ ընթացքով: Եվ ես դուրս եկա մի գիշեր, ու դա մութ, ականակուշտ գիշեր էր, և, բացի այդ, ստիպված էի հաղթահարել վայրէջքները դեպի հովիտներն ու վերելքները, դեպի սարերը: Եվ ես բոլոր կողմերից լսում էի աւշուծների մուրնայուններ, գայլերի ոռնոցներ ու գազանների ձայներ, և մտքերս խառնվեցին ու սիրտս ալեկոծվեց, և լեզուս անդուլ-անդադար հիշատակում էր մեծագոր ալլահին:

Եվ երբ այդպես գնում էի, հանկարծ քունը հաղթեց ինձ, ու ինձ հետ ուղտը գնաց ոչ այն ճանապարհով, որով պիտի գնայի, և ես քնեցի: Ու հանկարծ գլխիս մի բան դիպավ, և ես վախեցած, ահարեկված արթնացա ու ծառեր և անվակներ տեսա: Եվ ճյուղերին իջած թռչունները դայլայլում ու ճլվլում էին տարբեր ձայներով ու եղանակներով, իսկ մարգագետնում ծառերի ճյուղերը միահյուսվել էին իրար: Եվ ես ուղտից իջա ու սանձափոկը բռնեցի ու զգուշորեն այնքան ժամանակ առաջ գնացի, մինչև որ նրան այդ ծառերի միջից գուրս բերեցի հարթավայր:

Եվ այդժամ ես ուղղեցի նրա թամբն ու հեծա և նստեցի ուղիղ ու չգիտեի, թե դեպի ուր գնամ, և ուր կտանի ինձ բախտը: Եվ ես հայացքով խորացա այդ անապատի մեջ, ու դրա մեջտեղում մի կրակ երևաց: Եվ այդ ժամանակ ես կրնկով խթանեցի ուղտին ու գնացի կրակի ուղղութեամբ, մինչև որ մոտեցա: Եվ ես մոտեցա կրակին ու լավ զննեցի, և հանկարծ ինչ տեսնեմ՝ վրան, գետին խրված նիզակ, բարձրացված դրոշ, ձիեր ու ազատ արածող ուղտեր: Եվ ինքս ինձ ասացի, «Այս վրանի հետ մի մեծ բան է կապված, որովհետև այս անապատում ես ուրիշ ոչինչ չեմ տեսնում»: Եվ ես գնացի վրանի կողմն ու ասացի. «Խաղաղություն ձեզ, վրանի բնակիչներ, և ալլահի ողորմածությունն ու օրհնությունը»: Եվ վրանից մի տասնիննամյա պատանի դուրս եկավ, նման լուսնի, երբ սա փայլում է, ու նրա աչքերի արանքում քաջություն էր երևում: «Քեզ էլ խաղաղություն ու քեզ էլ ալլահի ողորմածությունը և օրհնությունը, ով արաբների եղբայր,— ասաց նա:— Ես կարծում եմ, որ դու շեղվել ես ճանապարհից»:— «Այդպես է, որ կա,— պատասխանեցի ես:— Ինձ ճանապարհ դուրս բեր, ալլահը քեզ թողություն կտա»:— «Ով արաբների եղբայր,— ասաց պատանին,— մեր տեղանքում առյուծներ շատ կան, իսկ հիմա խավարամած, շատ մութ ու ցուրտ գիշեր է, և ես վախենում եմ, որ գազանները հոշոտեն քեզ: Կանգ առ ինձ մոտ. իմ վրանը հարմարավետ է և ընդարձակ, իսկ երբ գա վազվա օրը, ես քեզ ճանապարհ դուրս կբերեմ»:

Եվ ես իշա ուղտից ու երկար սանձափոկով կապեցի նրա ոտքերը, իսկ հետո հանեցի թիկնոցս և նստեցի: Եվ պատանին մի ոչխար վերցրեց ու մորթեց և, մոտենալով կրակին, բորբեց այն ու ստիպեց, որ թեժանա: Իսկ այնուհետև մտավ վրան ու այնտեղից մանրած համեմունքներ և լավ աղ դուրս բերեց, սկսեց միսը կտրատել ու խորովել կրակի վրա: Եվ նա կերակրեց ինձ, իսկ ինքը մերթ հառաչում էր, մերթ լաց լինում: Ու նա մի գիւ ձիւ արձակեց և դառնորեն լաց եղավ ու այսպիսի ոտանավոր արտասանեց.

Մնացել է լոկ մի սիրտ՝ վերքերով,
նաև մի գույգ աչք՝ անշարժ բրեքով:

Մարմնի վրա մի հող շմնաց,
Որը շիների ախտով բռնված:

Արցունք է թափում, իսկ սիրտը նրա
Վառվում է, և լուռ տառապում է նա:

Թշնամիները արցունք են թափում.
Վա՛յ նրան, ում որ ոտին է խղճում:

Եվ այդժամ, ով ուղղահավատների տիրակալ,— ասաց Ջամիլը,— ես հասկացա, որ պատանին սիրահարված է ու սիրուց ալեկոծված, իսկ թն ինչ բան է սերը, միայն նա գիտի, ով սիրել է: Եվ մտքումս ասացի. «Չհարցնե՞մ նրան»: Բայց հետո հոգիս հետ պահեցի դրանից և ինձուինձ ասացի. «Ես ինչպե՞ս նրան հարցախեղդ անեմ, երբ գտնվում եմ իր կացարանում»: Եվ ես ինձ զսպեցի, որ հարցուփորձ չանեմ, ու այնքան միս կերա, ինչքան պետք էր ինձ, և երբ կերանք-վերջացրինք, պատանին վեր կացավ ու, մտնելով վրան, դուրս բերեց մի մաքուր կոնք, գեղնցիկ սափոր ու եզրերը ոսկե թելերով ասեղնագործած մետաքսե թաշկինակ և մշկախառն վարդաշրով լցված մի շիշ, ու ես զարմացա նրա նրբաճաշակության և սիրալիրության վրա, ու ինքս ինձ ասացի. «Անպատում այսպիսի նրբաճաշակություն ես տեսած չկամ»:

Ու մենք լվացինք մեր ձեռքերը և մի քիչ խոսեցինք, իսկ հետո պատանին մտավ վրան, կարմիր դիպակե վարադույրով ինձ առանձնացրեց իրենից ու ասաց. «Ներս մտի՛ր, ով արաբների դիմք, և պառկիր մահճում. այս գիշեր քեզ հոգնածություն է բաժին ընկել և ճանապարհորդության ժամանակ գու մեծ դժվարություններ ես կրել»:

Եվ ես մտա ներս ու հանկարծ ինչ տեսնեմ՝ կանաչ դիպակե անկողին, և այդ ժամանակ հանեցի հագիս շտերն ու մի գիշեր անցկացրի, որի նմանը կյանքումս չէի անցկացրել, և շարունակ մտածում էի այդ պատանու մասին: Ու երբ գիշերը պարուրեց երկիրը և աչքերս փակվեցին, հանկարծ մի թույլ ձայն լսեցի, որից մեղմ ու քնքուշը չէի լսել, և, բարձրացնելով իմ ու պատանու միջև կախված վարագույրը, մի աղջիկ տեսա, որից գեղեցկադեմին ես տեսած չկայի: Նա նստել էր պատանու կողքին, ու նրանք լալիս էին և տրտնջում կրքի, սիրո տառապանքներից ու հուզմունքից և միմյանց մերձենալու սաստիկ ցանկությունից: «Օ՛, ալլահի հրաշք,— ասացի մտքումս,— ո՞վ է այս երկրորդ արարածը: Երբ ես վրան էի մտնում, միայն այս պատանուն տեսա ու նրա մոտ ոչ ոք չկար»:

Եվ ապա ինձուինձ ասացի. «Կասկած չկա, որ նա ջինների աղջիկ է, որը սիրում է այս պատանուն, և պատանին նրա հետ առանձնացել է այս տեղում, ու նա էլ է առանձնացել պատանու հետ»: Սակայն ես ականապիշ զննեցի աղջկան, ու պարզվեց, որ նա մարդկանցից է, արարուհի, և, բացելով երեսը, նա շփոթեցնում էր շողացող արևին, ու վրանը լուսավորվում էր նրա դեմքի լույսով: Եվ, համոզվեով, որ այդ աղջիկը պատանու սիրուհին է, ես հիշեցի մեկ ուրիշ սիրահարի ու, վարագույրն իջեցնելով, ծածկեցի երեսս ու քնեցի:

Իսկ երբ լույսը բացվեց, շորերս հազա և աղոթելու համար լվացվելով, արեցի այն աղոթքները, որ պարտադիր էին ինձ համար, ու հետո պատանուն ասացի. «Ով արաբների եղբայր, չես ուզո՞ւմ ինձ ճանապարհ դուրս բերել, դու ինձ լավություն ես արել»։ Եվ պատանին նայեց ինձ ու ասաց. «Մի շտապիր, ով արաբների դեմք։ Հյուրընկալությունը տևում է երեք օր, և ես այնպիսի մարդ չեմ, որ քեզ ավելի շուտ քան թողնեմ, քան երեք օր հետո»։

Եվ ես երեք օր անցկացրի նրա մոտ, — ասել է Ջամիլը, — իսկ երբ վրա հասավ շորերդ օրը, մենք նստեցինք զրուցելու, ու ես խոսեցի պատանու հետ և հարցրի, թե ինչ է նրա անունը և ինչ ծագում ունի նա։ «Ինչ վերաբերվում է իմ ծագմանը, ապա ես Բանու Ուզրա ցեղից եմ, իսկ անունս այսինչի տղա այսինչ է, իսկ հորեղբայրս այսինչն է»։ Եվ պարզվեց, որ ուղղահավատների տիրակալ, որ նա իմ հորեղբոր տղան է ու սերում է Բանու Ուզրա ցեղի ազնվագույն ընտանիքից։ «Ով հորեղբորս որդի, — հարցրի ես նրան, — ի՞նչն է քեզ մղել առանձնանալու այս անապատում։ Դու ինչպես ես կարողացել քամահրել քո կարողությունն ու քո ապուպայերի կարողությունը և ինչպե՞ս ես լքել քո ստրուկներին ու ստրկուհիներին և մենակ մնացել այս վայրում»։

Եվ երբ պատանին լսեց իմ խոսքերը, ով ուղղահավատների տիրակալ, նրա աչքերը լցվեցին արցունքով, ու նա ասաց. «Ով հորեղբորս որդի, ես սիրում էի հորեղբորս աղջկան և հմայված էի նրանով, խելագարվել էի սիրուց ու համակվել նրա նկատմամբ կրքով, այնպես որ չէի կարողանում նրանից բաժանվել։ Եվ երբ նրա նկատմամբ իմ սերն ավելի սաստկացավ, ես նրան կնության ուղեցի, բայց հորեղբայրս մերժեց ինձ ու նրան ամուսնացրեց ուզրաներից մի մարդու հետ, որը մտավ նրա ծոցը և նրան տարավ այնտեղ, որտեղ էլ անցյալ տարվանից գտնվում է աղջիկը։ Ու երբ աղջիկն ինձնից հեռացավ և նրան թաքցրին իմ հայացքից, սիրո տվայտանքները և սաստիկ կարոտն ու կիրքը ինձ մղեցին լքել հարազատներին, բաժանվել բարեկամներից ու մտերիմներից և թողնել ամբողջ կարողությունս։ Ու ես առանձնացա այս վրանում, այստեղ՝ անապատում, և մտերմացա մենության հետ»։ — «Իսկ որտե՞ղ են նրանց վրանները», — հարցրի ես, ու պատանին ասաց. «Դրանք մոտ են՝ այն սարի գագաթին, և ամեն գիշեր, երբ մարդիկ քուն են մտնում ու շուրջընդոքը խաղաղվում է, աղջիկը ծածուկ դուրս է գալիս քոչատեղից, այնպես որ ոչ ոք այդ մասին չի իմանում, և ես իմ ցանկությունը րավարարում եմ նրա հետ զրուցելով, ու նա նույնպես բավարարում է իր ցանկությունը։ Եվ ահա ապրում եմ այս վիճակում, գի-

շերը մի ժամ մխիթարվելով նրանով, և թող ալլահն անի այն գործը, ինչ վճռված է. կամ այդ գործում հաջողության կհասնեմ ի հեճուկս նախանձորդների, կամ իմ փոխարենն ալլահը դատ կկտրի, իսկ նա դատավորներից լավագույնն է»:

Եվ երբ, ով ուղղահավատների տիրակալ, պատանին ինձ պատմեց այդ ամենը,— ասել է Ջամիլը,— նրա գործը մտահոգեց ինձ, ու ես շգիտեի, թե ինչ մտածեմ, որովհետև նրա համար խանդը համակել էր ինձ: «Ով հորեղբորս որդի,— ասացի ես նրան,— չես ուզո՞ւմ, որ մի խորամանկութունը կարգավորման աղբյուր կլինի ու դեպի անխուսափելի հաջողութուն տանող ուղի, և ալլահը դրանով քեզ կազատի այն բանից, ինչից որ դու վախենում ես»:— «Խոսիր, ով հորեղբորս որդի»,— ասաց պատանին: Եվ ես ասացի. «Երբ գիշերը վրա հասնի ու աղջիկը գա, նրան գցիր ուղտիս վրա, ուղտս շատ արագավազ է, իսկ ինքդ նըստիր ձիդ, ես էլ կհեծնեմ այս ուղտերից մեկն ու մի գիշեր կգամ ձեզ հետ: Եվ լույսը դեռ բացված չի լինի, երբ մենք կկտրենք տափաստաններ ու անապատներ, և դու կհասնես ցանկացածիդ ու կտիրանաս սիրուդ սիրածին: Ալլայի երկրի հարթավայրերը լայնածավալ են, իսկ ես, ալլահը վկա, քանի դեռ ողջ կլինեմ, քեզ կօգնեմ, թե հոգով, թե ունեցվածքով, թե սրով»: Եվ պատանին, լսելով այդ ասաց. «Ով հորեղբորս որդի, ես նախ նրա հետ խորհուրդ կանեմ: Նա խելոք է. ողջամիտ և խորաթափանց՝ գործերում»:

Եվ գիշերը պարուրեց երկիրը,— ասել է Ջամիլը,— ու աղջկա գալու ժամանակը եկավ, և պատանին նշանակված ժամին սպասում էր նրան, բայց նա ուշանում էր հակառակ իր սովորության: Եվ ես տեսա, որ պատանին դուրս եկավ վրանից ու, ծածկելով բերանը, սկսեց ներծծել աղջկա կողմից փչող քամու շունչը, և նա շնչում էր աղջկա բույրն ու այսպիսի ոտանավոր արտասանում.

Արեւիքից ես, օ՛, քամի, փչում,
Այն երկրից, ուր իմ սիրածն է ապրում:
Բերում ես քեզ հետ բուրմունքը նրա,
Չգիտե՞ս, արդյոք, թե երբ կգա նա:

Եվ ապա նա վրան մտավ ու առժամանակ նստեց այնտեղ և լաց եղավ, իսկ հետո ասաց. «Ով հորեղբորս որդի, այսօր իմ հորեղբոր աղջկան անպայման մի բան է պատահել ու մի դեպք է տեղի ունեցել և ինչ-որ խոչընդոտ նրան հետ է պահել: Տեղում եղիր, մինչև որ լուր բերեմ քեզ»,— հետո ասաց նա և, վերցնելով սուրն ու վահանը անհե-

տացավ ու բացակայեց գիշերվա մի մասը: Իսկ հետո վերադարձավ ինձ մոտ, ձեռքերում ինչ-որ բան բռնած: Եվ նա ձայն տվեց, ու ես շտապեցի նրա մոտ, և նա հարցրեց. «Ով հորեղբորս որդի, գիտե՞ս, թե ինչ է պատահել»:— «Ոչ, ալլահը վկա»,— պատասխանեցի ես: Ու նա ասաց. «Այս գիշեր դժբախտությունը խոցել է ինձ, ինձանից խլելով իմ հորեղբոր աղջկան: Նա եկել է մեզ մոտ և ճանապարհին առյուծը հարձակվել է նրա վրա ու հոշոտել, և նրանից լոկ այն է մնացել, ինչ տեսնում ես»:

Եվ նա ձեռքերում բռնածը պցեց ցած, ու դրանք աղջկա կռճիկներն էին և այն, ինչ մնացել էր նրա ոսկորներից: Ու պատանին աղիոզորմ լաց եղավ և մի կողմ նետելով իր աղեղը, մի տոպրակ վերցրեց ու ինձ ասաց. «Տեղիցդ շարժվես, մինչև որ չգամ քեզ մոտ, եթե մեծ ալլահը կամենա»:

Եվ նա գնաց ու առժամանակ բացակայեց, իսկ հետո վերադարձավ՝ ձեռքին առյուծի գլուխ բռնած: Եվ նա մի կողմ նետեց այն ու ջուր ուղեց, և երբ ես ջուրը բերեցի, նա լվաց առյուծի բերանն ու սկսեց համբուրել և լաց լինել, և սաստկացավ նրա վիշտը աղջկա համար, ու նա այսպիսի բեյթեր արտասանեց.

Ինքդ քեզ, առյուծ ամենի, փորձանքի մեջ պցեցիր,
Կորձանվեցիր, բայց սիրածիս մահով սիրտս խոցեցիր:
Ինձ մեն-մ'նակ թողեցիր դու, ինձնից խլելով նրան,
Եվ խավար ընդերքը երկրի, դարձրիր նրան գերեզման:
Ասում եմ ինձ իմ սիրածից բաժանած բախտին դժնի.

«Նրա փոխարեն էլ ոչ ոք ինձ սիրելի չի լինի»:

«Ով հորեղբորս որդի,— հետո նա ասաց ինձ,— խնդրում եմ քեզ ի սեր ալլահի ու մեր միջև հղած մերձավորության և հարազատության, կատարիր իմ կտակը: Ինչ հիմա ինձ մեռած կտեսնես քո առջև, և երբ այդ պատահի, ինձ լողացրու ու հորեղբորս աղջկա ոսկորների մնացորդների հետ փաթաթիր այս շապկի մեջ և մեզ միասին թաղիր մի գերեզմանում: Իսկ մեր տապանաքարին այսպիսի բեյթեր գրիր.

Նա մոտ էր ինձ, իսկ ես՝ նրան, ապրում էինք ու սիրում:
Ապրում էինք երկրագնդի լեռնապարիսպ մեկում,

Բայց շար բախտը անպթորեն մեզ իրարից բաժանեց,
Ու հիմա նույն պատրանքն է, որ ինձ ու նրան մերձեցրեց:

Եվ նա սաստիկ լաց եղավ ու, մտնելով վրան, առժամանակ մնաց այնտեղ, իսկ հետո դուրս եկավ և սկսեց օնքալ ու բղավել, և ասա

մի ճիշ արձակեց ու հրաժեշտ տվեց կյանքին: Եվ երբ ես տեսա այդ, սրտիս ծանրութունն իջավ, ու դա ինձ այնքան մեծ բան թվաց, որ ուժեղ վշտից քիչ էր մնում հետևեմ նրան: Եվ ես մոտեցա պատանուն ու պառկեցրի նրան, և կատարեցի այն ամենը, ինչ նա պատվիրել էր ինձ, ու նրանց երկուսին փաթաթեցի պատանքի մեջ և թաղեցի միասին՝ մի գերեզմանոցում: Ու երեք օր ես անցկացրի նրանց գերեզմանի մոտ, իսկ հետո մեկնեցի, և երկու տարի գնում ու այցելում էի նրանց գերեզմանին, և ահա թե ինչպիսին էր նրանց պատմությունը, ով ուղղահասակատների տիրակալ»:

Եվ երբ ալ Ռաշիդը լսեց Ջամիլի խոսքերը, դրանք հիանալի համարեց և Ջամիլին շնորհներ արեց ու պարգև տվեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| «Հազար ու մեկ գիշեր» Մ. Սայլե | 3 |
| Շահրիար արքայի ու նրա եղբոր պատմությունը.— թարգմ. է. Աղայան | 7 |
| Վաճառականի և ոգու հեքիաթը.— թարգմ. է. Աղայան | 19 |
| Զկնորսի հեքիաթը.— թարգմ. է. Աղայան | 33 |
| Երեք խնձորի պատմությունը.— թարգմ. է. Աղայան | 73 |
| Կուզիկի հեքիաթը.— թարգմ. է. Աղայան | 135 |
| Ալա էգ-դին Աբու-շ-Շամաթի պատմությունը.— թարգմ. է. Աղայան | 219 |
| Սիրահարի ու սիրեցյալի հեքիաթը.— թարգմ. է. Աղայան | 285 |
| Սևափայտի ձիու հեքիաթը.— թարգմ. է. Աղայան | 327 |
| Սինդիթադ-ձովազնացի հեքիաթը.— թարգմ. Վ. Տալյան | 353 |
| Դալիլա-հորամանկի և կահիրեցի Ալի Զեյթակի հեքիաթը.— թարգմ. Վ. Տալյան | 427 |
| Աբու Քիրի և Աբու Սիրի հեքիաթը.— թարգմ. Վ. Տալյան | 495 |
| Մաշակար Մարուֆի հեքիաթը.— թարգմ. Վ. Տալյան | 529 |
| Իբրիմայի և Խուզեյմայի պատմությունը.— թարգմ. Ս. Հայրապետյան | 588 |
| Յունուաի և անձանոթի պատմությունը.— թարգմ. Ս. Հայրապետյան | 593 |
| Ալ Ասմաիի և երեք աղջիկների պատմությունը.— թարգմ. Ս. Հայրապետյան | 597 |
| Ջամիլի և նրա հորեղբոր տղայի պատմությունը.— թարգմ. Ս. Հայրապետյան | 600 |

Հազար ու մեկ գիշեր
Ընտիր ճեփարճեր

ТЫСЯЧА И ОДНА НОЧЬ

Избранные сказки
(На армянском языке)
Ереван «Айастан» 1990

Հրատ. խմբագիր՝ Ա. Ս. Սարգսյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սուսոյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Խանապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Գ. Ալեքսանյան

ИБ—6877

Հանձնված է շարվածքի՝ 6.10.1989 թ.: Ստորագրված է տպագրության՝ 18.06.1990 թ.:
Ֆորմատ՝ 60×84¹/₁₆: Քուղթ ապ. № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրու-
թյուն՝ բարձր: 35,34 պայմ. տպագր. մամ., 33,23 հրատ. մամ.: Պատվեր՝ 2196: Տպա-
քանակ՝ 100.000: Գինը՝ 5 ա.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀեՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կո-
միտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарты Госкомитета Арм. ССР по делам из-
дательств, полиграфин и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.

56



Uzest hys nu dimhms

